ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՈՒՄԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑ-ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՏՈՐ 1

ԵՐԵՎԱՆ 2016

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ, ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Սույն տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցության շնորհիվ «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ծրագրի շրջանակներում: Գրքի հետագա վերահրատարակումը կարող է կատարվել Եվրոպայի խորհրդի համաձայնությամբ: Եվրոպական միությունը և/կամ Եվրոպայի խորհուրդը պատասխանատվություն չեն կրում գրքում հրապարակվող տեղեկատվության համար:

Եվրոպական միությունը և/կամ Եվրոպայի խորհուրդը գրքի բովանդակության անմիջական կամ ենթադրյալ տրամադրողը չեն և չեն կարող երաշխիք տրամադրել գրքի բովանդակության վերաբերյալ: Որևէ պարագայում Եվրոպական միությունը և/կամ Եվրոպայի խորհուրդը չեն կարող պատասխանատվություն կրել գրքի բովանդակության օգտագործման կամ դրանից օգտվելու արդյունքում առաջացած ցանկացած հատուկ, անուղղակի, անզգույշ կամ հետևանքային վնասների համար:

© Եվրոպայի խորհուրդ
© ՀՀ Սահմանադրական դատարան

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՈՒՄԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑ-ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՏՈՐ 1

ԵՐԵՎԱՆ 2016

Ընդհանուր խմբագրությամբ՝

Գ.Դանիելյանի – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, «Սահմանադրական իրավունքի կենտրոն» ՀԿ խորհրդի նախագահ

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը (ուղեցույց–ձեռնարկ), Գ. Դանիելյան, Ա. Գյուլումյան, Հ. Նազարյան, Վ. Այվազյան և Հ. Ենգոյան, ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի, Երևան, 2016

«Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը» ուղեցույց–ձեռնարկը պատրաստվել է Սահմանադրական դատարանի և Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի ջանքերով: Մշակման աշխատանքներն իրականացվել են Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» համատեղ ծրագրի շրջանակներում: Սույն ուղեցույց–ձեռնարկն ընդգրկում է մինչև 2016 թ. հոկտեմբերի 31–ն ընկած ժամանակահատվածում Սահմանադրական դատարանի կայացրած որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վերոհիշյալ կառույցների մասնագետների կատարած ուսումնասիրությունների ու ամփոփումների արդյունքում առաջին անգամ կոնկրետ իրավական հարցադրումներով դասակարգված՝ հրատարակության են ներկայացվել Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացման գործընթացը: Բնականաբար, 2015 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում սահմանադրական նորմերի մի զգալի հատված ևս կրել է որոշակի փոփոխություններ, սակայն հիշյալ իրավական դիրքորոշումների իրավական արժեքը դրանից ոչ միայն չի նվազել, այլև էլ ավելի ընդգծվել, քանզի դրանք հնարավորություն են տալիս լիարժեք ընկալելու սահմանադրական նորամուծությունների բովանդակությունն ու իրացման եղանակները:

Սույն ուղեցույց–ձեռնարկը նախատեսված է ոչ միայն դատավորների, այդ թվում՝ իրավագետի մասնագիտությամբ զբաղվող պաշտոնյաների ու մասնագետների, իրավագիտության հարցադրումներով հետազոտություններ իրականացնող տեսաբանների, այլև հանրության լայն շրջանակների համար, քանզի իրենց իրավունքների պաշտպանության համար սահմանադրական արդարադատությանը դիմելու անհրաժեշտությունն ակնհայտ է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 12
Ներածություն 13

1. Սահմանադրական կարգը, ժողովրդաիշխանությունը, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը
– Ժողովրդաիշխանության և պետական իշխանության սահմանադրական հիմքերը 16
– Իշխանության լեգիտիմությունը..20
– Իշխանությունների բաժանում և հավասարակշռում.................................. 21
– Իրավական, ժողովրդավարական պետություն 23
– Պետական ինքնիշխանությունը 30
– Պետական իշխանության իրականացման օրինականությունը 30
– Պետական մարմինների լիազորությունները, լիազորությունների վերազանցումը .32
– Պետական մարմինների փոխհարաբերությունները.......................................33
– Սահմանադրական կարգը..33
– Սոցիալական պետություն, սոցիալական արդարություն և սոցիալական օրենսդրություն..37
– Քաղաքական համակարգը, քաղաքական պատասխանատվությունը...................39
– Քաղաքացիական հասարակությունը, հասարակական վերահսկողությունը 40

2. Մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխիքներն ու հիմնարար կառուցակարգերը
– Խախտված իրավունքների վերականգնման հիմքերը......................................43
– Բարոյական վնասի փոխհատուցումը...49
– Իրավական որոշակիություն, լեգիտիմ ակնկալիք և կանխատեսելիություն 52
– Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք.......................... 60
– Իրավունքի գերակայությունը... 61
– Իրավունքի իրականացումը և իրացումը.. 66
– Մարդու իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանությունը 67
– Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները.................................. 68
– Միջազգային ատյաններ դիմելու իրավունքը 69
– Սահմանադրական իրավունքների ապահովումը, պաշտպանության երաշխիքները ... 70
– Սահմանադրական իրավունքների սահմանափակման հիմքերը 75
– Սահմանադրական նորմի անմիջական կիրառությունը....................................85
– Օրենքի միատեսակ կիրառումը...85

3. Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանադրական հիմքերը
– «Res judicata» (իրավական որոշակիության) սկզբունքը..................................... 86
– Անհատական և կենսաչափական տվյալները 87
– Անձնական ազատությունը.. 90
– Անձնական կյանքի անձեռնմխելիությունը..97
– Կարծիքի արտահայտման ազատությունը 97
– Բժշկական օգնության և սպասարկման իրավունքը 103
– Բուհերի ինքնավարությունը և ակադեմիական ազատությունը.........................103
– Գործադուլի իրավունքը 104
– Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի նպատակը..106

– Երեխայի իրավունքները 106
– Իրավունքների և պարտականությունների փոխադարձությունը 108
– Իրավունքների և պարտականությունների փոխհարաբերությունը.....................109
– Իրավունքների չարաշահման արգելքը 110
– Խղճի, կրոնի և դավանանքի ազատությունը 111
– Կենսաթոշակի իրավունքը 112
– Կուսակցությունների կարգավիճակը 122
– Կրթության իրավունքը.. 125
– Հասարակական կազմակերպությունների կարգավիճակը 127
– Մարդու իրավունքների կարգավորման առանձնահատկությունները 128
– Մարդու օրգաններ և հյուսվածքներ փոխպատվաստելը................................. 128
– Միավորվելու ազատությունը..131
– Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը 132
– Ներման իրավունքը... 134
– Նույնականացման քարտ.. 135
– Նվազագույն աշխատավարձը..139
– Պարտականությունների և պարտավորությունների սահմանազատումը 140
– Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմելու իրավունքը..142
– Սահմանադրական պարտականություն..142
– Սոցիալական ապահովության իրավունքը 146
– Վնաս կրած անձի փոխհատուցման իրավունքը..150
– Տեղեկատվություն ստանալու ազատությունը 155
– Փախստականը, բռնագաղթվածը, ապաստանի իրավունքը............................158
– Քաղաքացիաիրավական իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը և դադարումը...158
– Քաղաքացիությունը, երկքաղաքացիությունը, ապաքաղաքացիությունը 159
– Օրենքի առջև բոլորի հավասարությունը, խտրականության արգելքը 161
4. Արդար դատաքննության իրավունքի իրացման սկզբունքները, հիմնարար ընթացակարգերը և դատավարության մասնակիցների կարգավիճակը
– «Actio popularis» (գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելը) սկզբունքը 169
– «Non bis in idem» (նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու) սկզբունքը...169
– Ամբաստանյալի իրավական կարգավիճակը.. 175
– Անձին ճանաչման ներկայացնելը 178
– Անմեղության կանխավարկածը... 179
– Կրկին անգամ չդատվելը 184
– Հրապարակային դատաքննություն, գրավոր և բանավոր ընթացակարգ 186
5. Արդար դատաքննության իրավական երաշխիքները
– Ապացույցները, ապացուցման պարտականությունը 190
– Առաջադրված մեղադրանքը փոփոխելը, լրացնելը, նոր մեղադրանք առաջադրելը 196
– Արդարացված անձը և նրան պատճառված վնասի փոխհատուցման հիմքերն ու պայմանները... 201
– Բացարկն և ինքնաբացարկը դատավարությունում.....................................203
– Գործը դատաքննության նախապատրաստելը..206
– Գործի նորոգումը, նոր երևան եկած հանգամանքները և նոր հանգամանքները 208
– Գործի վարույթի կասեցումը և վերսկսումը 233

– Դատական ակտերի հարկադիր կատարումը 235
– Դատական ակտերի վերանայումը...235
– Ներկայացուցչությունը դատավարությունում 267
– Դատական որոշումների հասկացությունը 272
– Դատական որոշումների պատճառաբանությունը 273
– Դատական սխալը...278
– Դատապարտյալների փոխանցումը և դատավճիռների կատարումը..................284
– Դատավարական ժամկետներ 285
– Դատավարական հարկադրանքի միջոցները..289
– Դատավորի կարգադրությունը...290
– Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը...................................... 291
– Արագացված դատաքննություն..293
– Դատաքննության ողջամիտ ժամկետը 295
– Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ուշենիշ վճիռները.................. 301
– Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների կատարումը 302
– Իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը...304
– Խափանման միջոցը 306
– Կատարողական թերթը..307
– Հակընդդեմ հայց 308
– Համաներումը 310
– Հայցադիմում 310
– Հանցագործությունից տուժած անձանց պաշտպանությունը.............................. 314
– Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանությունը..... 315
– Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը.............. 317
– Միջանկյալ դատական ակտ 320
– Նյութական և դատավարական նորմերի կիրառումը...325
– Նյութական իրավունքի խախտումը..328
– Պետական մարմինների գործողությունների (անգործության) դեմ բերված բողոքների քննարկումը...329
– Վարչաիրավական և քաղաքացիաիրավական պահանջների դատավարական համադրումը...333
– Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը......................335
– Վարչական դատավարություն, վարչական գործերով վճռաբեկ վարույթ............340
– Վերաքննիչ վարույթը 345
– Վերջնական դատական ակտը 350
– Վճռաբեկ բողոքը 351
– Վճռի շրջադարձը..365
– Ցուցմունք տալու պարտականությունը 367
– Քրեադատավարական օրենքի էական խախտումը...368
– Քրեական գործի նախաքննությունը և հետաքննությունը 370
– Քրեական դատավարության օրենսդրության խնդիրները 375
– Քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրները...............................375
– Քրեական հետապնդման դադարեցումը 376
– Քրեական մեղադրանքը և դրա փոփոխությունը 378
– Քրեական գործը դատարանի կողմից լրացուցիչ նախաքննության ուղարկելը 379
– Օտարերկրյա արբիտրաժային դատարանների որոշումների կատարումը 383

6. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի սահմանադրական երաշխիքները
– Դատական պաշտպանությունը, արդար դատաքննության իրավունք 386
– Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը 431
– Պաշտպանի մասնակցությունը մինչդատական վարույթին 436
– Փաստաբանության կարգավիճակը 437
7. Պատշաճ վարչարարության սահմանադրական երաշխիքները
– Էլեկտրոնային թվային ստորագրություն, էլեկտրոնային կրիչ.......................... 451
– Կամայականություն դրսևորելը 454
– Կատարողական վարույթը...456
– Համաչափության սկզբունքը..456
– Հայեցողական իրավասությունը...462
– Հանրային իշխանության մարմիններին դիմելու իրավունքը...............................464
– ՃԵԿ-ի պահպանման ոլորտում վարորդի պարտականությունները 466
– Ոչ իրավաչափ պարտավորությունը...467
– Պատշաճ ծանուցումը 468
– Վարչաիրավական ստուգումների իրավաչափությունը.......................................468
– Վարչական ակտի հասկացությունը և բողոքարկելիությունը 469
– Վարչարարությունը և վարչական վարույթը...475
– Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի ճանաչումը 481
8. Հարկային և մաքսային քաղաքականության սահմանադրական հիմքերը
– Բնապահպանական վճարը և բնօգտագործման վճարը......................................484
– Հարկային իրավահարաբերություններ...487
– Հարկային քաղաքականություն... 491
– Հսկողությունը և վերահսկողությունը հարկային ոլորտում................................. 491
– Մաքսային կանոնների խախտումները...493
– Շահութահարկի իրավական հիմքերը 498
– Պետական տուրքը 501
9. Ընտրական իրավունքի և ընտրական համակարգի սահմանադրական հիմքերն ու հիմնական ընթացակարգերը
– Բնակչության հաշվառումը, ընտրողների ցուցակների կազմման և շրջանառության իրավական հիմքերը 506
– Ընտրագրավ...511
– Ընտրական հանձնաժողովների կարգավիճակը 514
– Ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակը.. 515
– Ընտրական իրավունք, ընտրական իրավունքի պաշտպանությունը.................... 516
– Ընտրությունների վերաբերյալ օրենսդրությունը 520
– Համամասնական և մեծամասնական ընտրակարգ.. 521
– Ստորագրված ընտրացուցակների մատչելիությունը 522
– Քաղաքացիություն չունեցող անձանց ընտրական իրավունքը 524
10. Սոցիալական ապահովության, կենսաթոշակային իրավունքի իրացման ու երաշխավորման սահմանադրական հիմնադրույթները
– Զինծառայողների կենսաթոշակային իրավունքը..527
– Կուտակային կենսաթոշակը, կենսաթոշակային ֆոնդը.......................................529
– Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական պաշտպանությունը..... 535
11. Քաղաքացիաիրավական իրավունքների իրացման սահմանադրական հիմնադրույթները
– Գնորդի իրավունքները...537
– Քաղաքացիաիրավական գործունակությունը 537

– Գրավը 538
– Զրպարտությունը և վիրավորանքը որպես պատասխանատվության հիմքեր 542
– Ժառանգական իրավունք 553
– Իրավաբանական անձանց կարգավիճակը 556
– Լիազորագիրը 558
– Կտակ, ժառանգություն և նվիրատվություն 558
– Ձեռքբերման վաղեմություն 560
– Ճանաչման հայցը 561
– Մարդու պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը 562
– Պայմանագրերի իրավական հիմքերը 565
– Պետությունը որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ 569
– Սերվիտուտը 570
– Սնանկությունը 572
– Քաղաքացիական պատասխանատվություն 578

12. Սեփականության իրավունքի, ինչպես նաև ազատ ձեռնարկատիրության իրավունքի իրացման և պաշտպանության հիմքերն ու հիմնարար ընթացակարգերը

– Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը 580
– Բաժնետիրական ընկերությունների իրավական կարգավիճակը 586
– Գույքային իրավունքները և դրանց պետական գրանցումը 592
– Շահերի հավասարակշռումը 595
– Պետական սեփականություն հանդիսացող հողամաս 599
– Սեփականության իրավունքը 600
– Սեփականության օտարումը գերակա շահերի համար 621
– Տնտեսական գործունեության ազատությունը, ազատ մրցակցությունը, ձեռնարկատիրական գործունեությունը 633
– Ցեսիայի պայմանագիրը 639

13. Աշխատանքային հարաբերությունների սահմանադրական հիմքերը

– Աշխատանքային հարաբերությունները 642
– Ապահովագրական ստաժը 661

14. Ազգային ժողովի կազմավորման և գործունեության սահմանադրական հիմքերը

– Ազգային ժողովի գործունեության սահմանադրական հիմքերը 664
– Պատգամավորի մանդատ, պատգամավորի լիազորությունների դադարում և դադարեցում 677

15. Կառավարության և գործադիր իշխանության մյուս մարմինների կազմավորման ու գործունեության սահմանադրական հիմքերը

– Կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը 682
– Կենտրոնական բանկի կարգավիճակը 685
– Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի կարգավիճակը 686
– Հանրային հեռուստաընկերություն 688
– Հեռուսառադիոընկերությունների եթերավճարների պարտականությունը 690

16. Առանձին ոլորտներում պետական կառավարման սահմանադրական հիմքերը

– Արժութային կարգավորում և արժութային վերահսկողություն 693
– Բազմաբնակարան շենքերի կառավարումը 694
– Միջազգային պարտավորությունների կատարումը 703
– Նոտարները և նոտարական գրասենյակները 705
– Պետության ֆինանսական վերահսկողության գործառույթը 706
– Ֆինանսական համակարգի հաշտարարը 707

17. Հանրապետության Նախագահի կարգավիճակը
– ՀՀ Նախագահի կարգավիճակը 710
18. Իրավաստեղծ գործունեության և օրենսդրական բացի հաղթահարման սահմանադրական հիմքերը
– Իրավաբանական տեխնիկա........ 711
– Իրավական ակտի գործողությունը ժամանակի մեջ 712
– Իրավական անվտանգություն 715
– Իրավական վակուում 718
– Իրավունքի բաց, օրենսդրական բաց 719
– Իրավունքը սկզբունքի իրավական արժեքը........ 722
– Միջազգային պայմանագրերի իրավաբանական բնույթը........723
– Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցությունը........ 724
– Նորմի իրավական մեկնաբանությունը........725
– Սահմանադրության գերակայությունը........726
– Օրենսդրական գործընթացը, օրենսդրության փոփոխությունները 730
– Օրենքի ուժի մեջ մտնելը........ 731
– Օրենքներում օգտագործվող հասկացությունները........732
19. Դատական իշխանության մարմինների կարգավիճակի սահմանադրական հիմքերը
– Արդարադատության խորհուրդի սահմանադրական կարգավիճակը........734
– Գործադիր մարմինների գործունեության նկատմամբ դատական վերահսկողությունը.739
– Դատական իշխանության սկզբունքները և դատավորի կարգավիճակը........739
– Դատավորների իրավական կարգավիճակը 755
– Դատարանակազմություն 768
– Դատավորի սահմանադրական կարգավիճակը........ 774
– Դատավորների ընդհանուր ժողովը, դատարանների նախագահների խորհուրդը......774
– Կարգապահական վարույթը, որոշումների բողոքարկելիությունը 775
– Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունները 777
– Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը 779
20. Սահմանադրական արդարադատություն և սահմանադրական դատավարություն
– Սահմանադրական դատարանի կարգավիճակը........788
– Սահմանադրական գանգատը, Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը .. 790
– Սահմանադրական դատարանի դիմումի ապահովման միջոցը 800
– Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավական նշանակությունը........801
– Սահմանադրական դատարանի կողմից իրավական ակտը կամ դրա նորմը ուժը կորցնելու տարաժամկետումը........810
– Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթն ու հետևանքները........ 813
– Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը........822
– Վերացական և կոնկրետ սահմանադրական վերահսկողություն 825
21. Դատախազության սահմանադրական կարգավիճակը
– Դատախազության սահմանադրական կարգավիճակը 830
– Մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը........ 850
22. Տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմքերը
– Տեղական ինքնակառավարումը, տեղական հանրաքվեն 856
– Տեղական իքնակառավարման մարմինների ընտրությունները........ 861

23. Իրավաբանական պատասխանատվության, հանցագործության առանձին տեսակների իրավաչափության սահմանադրական հիմքերը
– Ինքնիրավչություն 866
– Իրավաբանական պատասխանատվություն 866
– Հանցագործության հատուկ սուբյեկտ 871
– Հանցակազմի հասկացությունը և տարրերը 872
– Պատժատեսակի փոխարինումը 873
– Պատժից ազատելը 876
– Վաշխառությունը 879
– Վարչական պատասխանատվությունը, վարչական զանցանքը 880
– Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները 889
– Տուժողի հասկացությունը, տուժողի և նրա ներկայացուցչի իրավունքների պաշտպանությունը 889
– Քրեական պատասխանատվությունը և պատիժ նշանակելը 890
24. Սահմանադրական դատարանի որոշումների կատարման ընթացքը 894

ԱՌԱՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր իրավական համակարգի կենսունակությունը պայմանավորված է տվյալ համակարգին բնորոշ սահմանադրական դոկտրինայի բնույթով և վերջինս կյանքի կոչելու իրական երաշխիքներով: Անշուշտ, պետության Հիմնական օրենքն ընկալվում է որպես իրավունքի զարգացման ուղենիշ, ողջ իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության հիմնարար չափանիշ: Միաժամանակ, իրավական մշակույթն ի զորու է ամբողջական տեսք ընդունել և հուսալիորեն ծառայել հասարակության առջև ծառացած մարտահրավերների համալիր լուծմանը միայն այն դեպքում, երբ հուսալիորեն երաշխավորված է Սահմանադրության գերակայությունը, առկա է սահմանադրական արդարադատության կենսունակ համակարգ:

Սահմանադրական դատարանի որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները ողջամտորեն ձեռք են բերել իրավական գործընթացներն ուղղորդող իրավական նշանակություն, ինչը, մասնավորապես, նոր որակ ստացավ 2011 թ. հոկտեմբերի 26-ին ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

Իր գործունեության երկու տասնամյակների ընթացքում Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել իրավունքի բազմաթիվ առանցքային սահմանադրական հիմնադրույթների առնչությամբ: Դրանք մատչելի դարձնելու նկատառումով՝ համապատասխան որոշումները հրապարակվել են ոչ միայն պաշտոնական տեղեկագրերում, այլև ամբողջական ժողովածուների տեսքով, որոնք ունեն իրենց լայն «լսարանը»:

Սույն մեթոդական ուղեցույցի հեղինակները հանդես են եկել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների մատչելիության «նշաձողը բարձրացնելու»օգտակար նախաձեռնությամբ: Մասնավորապես փորձել են նշված նյութից առանձնացնել իրավական դիրքորոշումները՝ համակարգված փոխկապակցելով դրանք որոշակի սահմանադրական հիմնադրույթների հետ, ներկայացրել են տեղեկատվություն դրանց իրացման առնչությամբ և տվել պարզաբանումներ դրանց իրավական նշանակության վերաբերյալ:Եվ ինչպես նկատում են հեղինակները, վերը նշված ուղղությամբ աշխատանքները լինելու են շարունակական, և հաջորդ փուլում կունենանք Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերում արտացոլված իրավական դիրքորոշումների, ինչպես նաև սահմանադրական արդարադատության միջազգային լավագույն փորձի համադրված ու համակարգված ամփոփ նյութերը:

Այս բնույթի նախաձեռնությունները, որպես կանոն, առաջին հերթին ունեն գործնական ուղղվածություն, ինչը, վերջին հաշվով, արտահայտվում է առավել բարձր որակի արդարադատություն ունենալու ձգտումով, սակայն չպետք է անտեսել, որ անհրաժեշտ իրազեկվածություն երաշխավորելու գործընթացի յուրաքանչյուր բաղադրիչ ինքնին սահմանադրական ցանկալի մշակույթ ձևավորելու - կարևոր գործոն է:

Կարող ենք հուսալ, որ այս ուղեցույցը կնպաստի, որպեսզի Սահմանադրական դատարան դիմելիս անհատ անձինք, նրանց արհեստավարժ ներկայացուցիչները, դատարանները և հանրային իշխանության իրավասու մարմինները հնարավորություն կունենան սեղմ ժամկետում համարժեք ուսումնասիրել իրենց հետաքրքրող հարցադրումների առնչությամբ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները և ներկայացնել առավել հիմնավորված պահանջներ ու դրանց առնչվող փաստարկներ: Այս նկատառումով ողջունելի է սույն մեթոդական ուղեցույցի հեղինակներ՝ Սահմանադրական դատարանի առանձին դատավորների և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոսների համատեղ հետազոտական գործունեությունը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գ. Հարությունյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտագործնական արդի չափանիշներով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների ընդունելի դասակարգման, դրանցում արտացոլված իրավական դիրքորոշումների իրացման արդյունքներն ամփոփ ներկայացնելու խնդիրները ներկայումս ձեռք են բերել խիստ հրատապություն, դրանց անհրաժեշտությունը նկատվում է ոչ միայն իրավակիրառ ու իրավաստեղծ գործընթացներում, այլև իրենց սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության հարցադրումներով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքն իրացնելիս:

Ներկայումս ՀՀ սահմանադրական դատարանների որոշումները ամփոփ տեսքով հրատարակվել են երկու հատորով, համապատասխանաբար՝ 2011 թ. (ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն օրենքների և այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ (1996–2010 թթ.), Եր., «Նժար», 2011, 996 էջ) և 2015 թ. (ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն օրենքների և այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ (2011 թ. — 2015 թ. հունվար–մարտ), Եր., «Նժար», 2015, 928 էջ): Ինչ խոսք, այդ հրատարակություններն ունեն որոշակի իրավակիրառ նշանակություն, սակայն գործնականում դրանք համեմատաբար մատչելի են դառնում սակավաթիվ այն արհեստավարժների համար, որոնք որոշակի իրազեկվածություն ունեն արդեն իսկ ընդունված որոշումների, ինչպես նաև դրանցում արտացոլված իրավական դիրքորոշումների իրացման արդյունքների մասին: Համապատասխան ուղեցույց–ձեռնարկի առկայությունը, որը միտված կլինի այդ որոշումների դասակարգմանն ու իրացման արդյունքների պարզաբանմանը, կբարձրացնի նաև նշված հրատարակությունների կիրառական արժեքը:

Խնդիրն այն է, որ բոլոր այն դեպքերում, երբ հարց է ծագում կոնկրետ այս կամ այն իրավական ակտի որևէ դրույթի սահմանադրականության առնչությամբ, հարկ է լինում ամբողջ հրատարակությունն ընթերցել և, ըստ վերնագրերի, փորձել փնտրել այն որոշումները, որոնք վերաբերում են վիճարկվող օրենսդրական ակտին: Էլ ավելի է բարդանում վիճակը, երբ հարկ է լինում անհրաժեշտ չափով ծանոթանալու տվյալ իրավական ակտի կամ նորմի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի բոլոր որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումների հետ, մանավանդ որ այդ դեպքում միշտ չէ, որ որոշումների պատճառաբանական մասում արտացոլված իրավական դիրքորոշումներն անմիջականորեն վերաբերում են վիճարկվող հոդվածներին: Բացի այդ՝ Սահմանադրական դատարանի որոշումների կատարման շրջանակներում միշտ չէ, որ դրանցում արտացոլված իրավական դիրքորոշումներն սպառիչ ու համարժեք իրենց ամրագրումն են ստանում ընթացիկ օրենսդրությունում:

Իրավակիրառ տեսանկյունից բարվոք ազդեցություն կունենա նաև այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համադրումն ու թիրախավորված մեկնաբանությունը, ինչին սույն ուղեցույց–ձեռնարկի հեղինակները պատրաստվում են անդրադառնալ ծրագրի հաջորդ փուլում:

Այս ուղեցույց–ձեռնարկում ամփոփված նյութը նախ միտված է Սահմանադրական դատարանի որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումների դասակարգմանը՝ հիմքում ունենալով ոչ թե ժամանակագրությունը, այլ որոշակի իրավական ակտը, ինչը հնարավորություն է տալիս անհամեմատ արագ գտնելու տվյալ իրավիճակում վիճահարույց թվացող իրավական դրույթի իրավաչափության առնչությամբ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը, իսկ հաճախ էլ՝ որոշումները, որովհետև միևնույն հիմնադրույթի առանձին հարցադրումներին անդրադարձ է արված Սահմանադրական դատարանի տարբեր

որոշումներով: Միաժամանակ, յուրաքանչյուր որոշակի դեպքում հարկ կլինի առանձնացնել տվյալ իրավական նորմին կամ դրույթին առնչվող Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք որ որոշման տեքստում են արտացոլված (հաճախ որոշումներում իրավական դիրքորոշումներ են արտահայտված ոչ միայն վիճարկվող, այլև դրանց առնչվող այլ իրավական նորմերի առնչությամբ): Այսպիսով՝ հնարավոր է դառնում հնարավորինս մատչելի եղանակներով ու սեղմ ժամկետում ձեռքի տակ ունենալ բոլոր այն որոշումները (դրանց համապատասխան հատվածների ընդգծմամբ), որոնցում այս կամ այն չափով անդրադարձ կա տվյալ իրավիճակում քննարկման նյութ հանդիսացող իրավական նորմին:

Սահմանադրական դատարանի գործունեության սկզբնական փուլերում այս բնույթի ժողովածուների անհրաժեշտությունն այդքան չի զգացվել, քանի որ նշված որոշումները, մեծ հաշվով, մեծ քանակ չեն կազմել, ինչը հնարավորություն է տվել ոչ տևական ժամանակ ուսումնասիրելուց հետո գտնել խնդրին առնչվող դատական ակտերը, մինչդեռ ներկա փուլում, երբ նշված որոշումները զգալի քանակ են կազմում, պարզապես խիստ հրատապ է դարձել համակարգված ու սպառիչ կերպով առանձնացնել բոլոր այն որոշումները, որոնք եզրափակիչ կամ պատճառաբանական հատվածներով առնչվում են իրենց հետաքրքրող իրավական նորմերի իրավաչափությանը:

Նկատենք, որ Սահմանադրական դատարանն իր տարեկան հաղորդումներում անդրադառնում է որոշումների կատարման ընթացքին, սակայն հասկանալի պատճառներով դրանք ակնհայտ ընդհանրացված բնույթ ունեն, դրանցում համակարգված կերպով արտացոլված չեն բոլոր որոշումները: Բացի այդ՝ ընդունված կարգի համաձայն՝ Սահմանադրական դատարանն անդրադառնում է հիմնականում անցած տարվա ընթացքում կայացած որոշումներին:

Միաժամանակ, սույն ուղեցույց-ձեռնարկի հեղինակային կազմը մտադիր է հետագայում յուրաքանչյուր առանցքային իրավական դիրքորոշման առնչությամբ անդրադառնալ և արտացոլել ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերի, ինչպես նաև նմանաբնույթ միջազգային իրավական փաստաթղթերի համապատասխան դրույթները, ինչը հնարավորություն կտա էապես բարելավելու նաև տվյալ միջազգային դատական ատյանի որոշումների կատարման և կիրառման պրակտիկան, ինչպես նաև իրազեկվածության աստիճանը:

Հաշվի առնելով տպագիր նյութի սահմանափակվածությունը՝ այն նաև շրջանառության մեջ է դրվել էլեկտրոնային տարբերակով (այն զետեղված է նաև «Սահմանադրական իրավունքի կենտրոն» ՀԿ էլեկտրոնային կայքէջում), որը հնարավորություն կտա առնվազն համակարգչային որոնման ընդհանուր եղանակներով մատչելի դարձնելու փնտրվող նյութը:

«ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը» վերտառությամբ **գիտագործնական ուղեցույց-ձեռնարկը** կարևոր քայլ է երկրում պատշաճ սահմանադրական մշակույթի ձևավորման ու սահմանադրականության ամրապնդման խնդիրները լուծելու բարդ ճանապարհին:

Սահմանադրական դատարանի որոշումները զետեղված են ոչ թե ամբողջ ծավալով, այլ միայն պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումների և եզրափակիչ հատվածի մասով:

Ուղեցույց ձեռնարկում Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները դասակարգված են թվով 23 հատվածների, որոնք էլ իրենց հերթին ներառում են ենթահատվածներ: Այդպիսի դասակարգումը հնարավորություն է տալիս հնարավորինս մատչելի դարձնելու Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների որոնման գործընթացը: Առանձին դեպքերում, հաշվի առնելով նյութի մեծ ծավալը, նախապատվությունը տրվել է առավել առանցքային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներին, սակայն դրանց ուսումնասիրության

արդյունքներով փոխկապակցված նյութին հանգամանորեն ծանոթանալու կարիքն առաջանալու դեպքում ընթերցողը կարող է արդեն վերը նշված հրատարակություններում կամ էլեկտրոնային կայքերում արագ գտնել իրեն հետաքրքրող որոշումը և ծանոթանալ ողջ տեքստին: Կրկնությունները խիստ հազվադեպ են, իսկ առանձին դեպքերում դրանց դիմելը սույն թելադրված է եղել այն նկատառումով, որ միևնույն իրավական դիրքորոշումը միաժամանակ իրավական զգալի արժեք ունի տարբեր իրավական ինստիտուտների առնչությամբ:

Ինչ խոսք, տվյալ դեպքում սույն ուղեցույց–ձեռնարկում առավելապես զետեղված են մինչև 2015 թ. սահմանադրական փոփոխությունները, Սահմանադրական դատարանի ընդունած որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, սակայն դա բնավ չի նվազեցնում այս նյութի գիտագործնական նշանակությունը, քանզի նախ՝ իրավական դիրքորոշումների մի զգալի հատված հավասարապես վերաբերում է նաև գործող Սահմանադրության համանման հիմնադրույթներին, բացի այդ՝ դրանք կարող են մասնակի կիրառելի լինել նաև փոփոխված նորմերի առնչությամբ, ինչին անդրադարձ է արվել սույն ուղեցույց–ձեռնարկի եզրափակիչ հատվածում:

Որոշումների տեքստերից զատ՝ սույն ուղեցույց–ձեռնարկի եզրափակիչ հատվածում շարադրված է համապատասխան նյութ՝ դրանց իրացման ու կիրառման մասին հղում անելով կոնկրետ օրենսդրական աղբյուրների վրա: Միաժամանակ, տրված է պարզաբանում այն առնչությամբ, թե համապատասխան օրենսդրական ակտի բացակայության դեպքում ինչպես պետք է իրացվի իրավակիրառ պրակտիկան: Դա խիստ անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր դեպքում, երբ հարկ է լինում կոնկրետ գործով կիրառել Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, միաժամանակ ծագում է անհրաժեշտություն՝ ղեկավարվելու նաև դրանց իրացման արդյունքում ընդունված օրենսդրական ակտերով: Համապատասխան օրենսդրական ակտեր չընդունելու դեպքում ընդհանուր կանոնն այն է, որ հարկ է ղեկավարվել բացառապես Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով:

Աշխատանքների համակարգումը վերապահվել է Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյանին: Հանձնախմբում ներգրավված են եղել Սահմանադրական դատարանի դատավորներ Ալվինա Գյուլումյանը և Հրանտ Նազարյանը, ինչպես նաև ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ Վարդան Այվազյանն ու Համիկ Ենգոյանը:

Ծրագրի հեղինակների անունից շնորհակալություն եմ հայտնում Եվրոպական միության Երևանյան գրասենյակին, կազմակերպական և նյութական աջակցության և ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանին արժեքավոր խորհուրդների համար:

Երախտապարտ կլինենք, եթե ընթերցողը իր նկատառումներով և գործնական առաջարկություններով արձագանքի հիշյալ նյութին, քանզի այս բնույթի աշխատանքները շարունակական բնույթ են կրելու և ներառելու են նորանոր հարցադրումներ:

ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
«Սահմանադրական իրավունքի կենտրոն» ՀԿ խորհրդի
նախագահ **Գևորգ Դանիելյան**

1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԴՈ–673, 16 հունվարի, 2007 թ.

6. .... Հանձնաժողովին օրենքի ուժով այդպիսի կարգավիճակ տրամադրելու առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ իշխանությունների բաժանման հիման վրա պետական իշխանության կազմակերպման սահմանադրաիրավական սկզբունքն ունենալով հիմնարար նշանակություն, միաժամանակ չի բացառում տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության պայմաններում կառավարման այնպիսի գործառույթի առկայությունը պետական իշխանության բնագավառում, ինչպիսին անկախ կարգավորումն է, որը բխում է ՀՀ Սահմանադրության ինչպես 83.2, 83.3 հոդվածների, այնպես էլ 83.5 հոդվածի 1–ին, 2–րդ և 3–րդ կետերի իրավական բովանդակությունից: Որպես պետական կառավարման գործառույթ, ՀՀ Սահմանադրության 5 հոդվածին համապատասխան, այն ենթակա է հավասարակշռման պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների շրջանակներում: Սահմանադրաիրավական այդ սկզբունքն իր որոշակիությունն է ստացել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 13, 14, 16 և 19 հոդվածներում, որոնցում նախատեսված են օրենսդիր և գործադիր մարմինների հետ հանձնաժողովի գործառնական փոխհարաբերությունների, իսկ 12 հոդվածում՝ գործունեության դատական վերահսկողության շրջանակները:

ՍԴՈ–723, 15 հունվարի, 2008 թ.

4. ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3–րդ մասն ամրագրում է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքը: Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով:

ՍԴՈ–766, 14 հոկտեմբերի, 2008 թ.

6. .... Սահմանադրական իրավունքի տեսանկյունից իշխանությունը կամքը պարտադրելու իրավունք և կարողություն է: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական իշխանությունը, որպես ժողովրդի կամքը միջնորդավորված կերպով պարտադրելու իրավունք և կարողություն, պետության գործառնական կարևոր բաղադրատարրերից է, որն արտահայտվում է պետության կողմից իր առաքելությունը հրապարակային և ինքնիշխան ձևով իրականացնելու կարողունակությամբ՝ համապարտադիր վարքագծի կանոններ սահմանելու և դրանց կիրառումն ապահովելու միջոցով:

.... Վերոշարադրյալ մոտեցումները հաշվի առնելով՝ «պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր» և «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչեր» հասկացությունները ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի սահմանադրաիրավական իմաստով պետք է հասկանալ **օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության մարմինների պետաիշխանական գործառույթներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ բռնությամբ կամ դրա գործադրման անմիջական և իրական սպառնալիքով տիրանալու համար գործողություն պլանավորելու, կազմակերպելու, նախապատրաստելու կամ իրականացնելու նպատակով այլ անձանց մասնակից դարձնելու դիմում կամ հրավեր**: Իրավակիրառական պրակտիկան և ցանկացած գործի փաստական հանգամանքների գնահատումը պետք է ելնի տվյալ հասկացությունների սահմանադրաիրավական այդ բովանդակությունից, **առաջին հերթին նկատի ունենալով հակաիրավական (բռնի) գործողությունների միջոցով պետաիշխանական գործառույթի նկատմամբ ոտնձգություն իրականացնելու նշված հանգամանքը**: Բռնության կոչերի նպատակը մեկն է՝ համախմբել մարդկանց, ուղղություն տալ նրանց բռնի գործողություններին: Քննարկվող հանցակազմի իմաստով բռնության կոչեր չեն կարող համարվել իշխանության քննադատությունը, իշխանությունների հրաժարականի անհրաժեշտության հիմնավորումը, հրաժարականի պահանջը, ցույցեր, երթեր, հանրահավաքներ անցկացնելու կոչը կամ կազմակերպումը, փոխաբերական իմաստով արված արտահայտությունները:

Հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամատեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Հանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ և ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման:

Վերոշարադրյալ մեկնաբանությունից բխում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի իմաստով՝ «պետական իշխանություն» հասկացությունը չի կարող նույնականացվել «պաշտոնատար անձ» հասկացության հետ, և դա չի կարող արվել նաև իրավակիրառական պրակտիկայում:

ՍԴՈ–810, 30 հունիսի, 2009 թ.

7. .... ժողովուրդը՝ ընտրությունների միջոցով որոշելով, թե խորհրդարանը քաղաքական ուժերի ինչպիսի հարաբերակցությամբ պետք է աշխատի, դրանով իսկ օրենսդիր մարմնին պատվիրակում է իրականացնել օրենսդրական գործունեություն՝ իր իսկ նախընտրած քաղաքական կողմնորոշումներին համապատասխան: Որևէ կոնկրետ կուսակցության օգտին քվեարկելիս ժողովուրդն ակնկալում է որոշակի ուղղվածություն ունեցող քաղաքականության կյանքի կոչում: Իսկ ընտրությունների պարբերականությունը նպատակ է հետապնդում հնարավորություն տալ ժողովրդին որոշակի ժամանակահատված հետո գնահատել քաղաքական ուժերի գործունեությունը՝ եղածին հավանություն տալու կամ նախապատվությունը այլ քաղաքական ուժի տալու համար:

Չորրորդ՝ ընտրողների կողմից իրենց պետաիշխանական իրավունքի պատվիրակման ժամանակ այն սուբյեկտի ճիշտ ընտրությունը, որին պատվիրակվում է այդ իրավունքի իրացումը.

այն, որ ինչպես մեծամասնական ընտրակարգով ընտրությունների, այնպես էլ համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում մանդատի աղբյուրը ժողովուրդն է, անվիճելի է: Սակայն հիմնախնդրի բուն էությունը և դրա իրավաչափությունը բացահայտելու համար հարկ է դրան մոտենալ ոչ միայն այն տեսանկյունից, թե ո՞րն է մանդատի աղբյուրը,

այլ նաև՝ թայդ աղբյուրը՝ ժողովուրդը, ու՞մ է պատվիրակել պետաիշխանական իր իրավունքի իրացումը և ի՞նչ նպատակով է պատվիրակել: Պատգամավորների լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքի իրավաչափությունը կարող է գնահատվել միայն վերոնշյալ երեք հարցերի պատասխանների եռամիասնության շրջանակներում: Այդ հարցերի պատասխանների արդյունքում պարզ կդառնա, որ պատգամավորի մանդատի գործողության դադարեցման խնդրո առարկա հիմքը պատգամավորի՝ ոչ թե կուսակցությանը հաշվետու լինելու, այլ հենց իր մանդատի աղբյուրին՝ ժողովրդին հաշվետու լինելու դրսևորում է: Նման միջոցով ապահովվում է այն պատգամավորի քաղաքական պատասխանատվությունը ժողովրդի առջև, ով շեղվել է այն քաղաքական ուղեգծից, որի իրացման համար ժողովուրդը պատվիրակել էր նրան պետաիշխանական իր իրավունքի իրացումը: Կուսակցության կողմից ծրագրային ուղեգծից շեղվելու հանգամանքի վերաբերյալ ժողովուրդն իր դիրքորոշումն արտահայտում է հերթական ընտրությունների ժամանակ: Այս առումով սկզբունքային նշանակություն ունի նաև ընտրությունների պարբերականության ժամկետային սահմանների ճիշտ որոշումը:

Հինգերորդ՝ հատկապես անցումային երկրներում ժողովրդի քաղաքական կամքի ազատ դրսևորման արդյունքում ձևավորված պառլամենտական քաղաքական հարաբերակցության վրա իշխանական ազդեցության հետագա բացառումը և իշխանությանը հաճո արտաընտրական նոր հարաբերակցության կանխումը.

ՀՀ սահմանադրական դատարանը ելնում է այն սկզբունքային դիրքորոշումից, որ ամեն դեպքում ընտրողների կամքի արտահայտումը չպետք է խաթարվի: Սահմանադրական դատարանը գտնում է, որ խորհրդարանական խմբակցությունը լքելն արգելող նորմերը միտված են հենց նման հնարավորության կանխարգելմանը և ապահովում են այդ խնդրի լուծումը:

Անհրաժեշտ է համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների տեղը թափուր մնալու ընթացակարգը և խմբակցությունը լքելուն վերաբերող նորմերը դիտարկել համակարգային փոխկապակցվածության մեջ: Համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների տեղը թափուր մնալու դեպքում այն լրացվում է նույն ցուցակի հաջորդ թեկնածուի կողմից: Ինչպես պատգամավորի թափուր տեղը լրացնելու այս կարգը, այնպես էլ կուսակցական պատկանելությունը փոխելու հիմքով մանդատի գործողության դադարեցումն այն հիմնական իրավական միջոցներն են, որոնք ապահովում են մինչև հաջորդ խորհրդարանական ընտրությունները խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցության պահպանումը, որն սկզբնապես ձևավորվել է ընտրություններում ժողովրդի կամքի արտահայտման արդյունքում: Խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցությունը, որը սահմանվում է ըստ ժողովրդի կամաարտահայտության, չի կարող փոփոխություն կրել տվյալ գումարման խորհրդարանի գործունեության ընթացքում: **Հետևաբար, պատգամավորի լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքն իրավաչափ միջոց է այդ նպատակն ապահովելու համար:** Այլապես նման հիմքի բացակայության պայմաններում կստացվի, որ քաղաքական կուսակցությունների գոյությունը, որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման միջոց, միանգամայն շինծու երևույթ է, քանի որ հենց ընտրություններից հետո կարող են տեղի ունենալ պատգամավորական խմբերի ու խմբակցությունների այնպիսի վերադասավորումներ, որ ընտրությունների արդյունքում ձևավորված օրենսդիր մարմինը չարտահայտի ժողովրդի կամքը: Այսինքն՝ ժողովրդի կամքի արտահայտությունը լինի որոշակի խորհրդարանական քաղաքական հարաբերակցություն, որը, սակայն, հակառակ ժողովրդի կամքի, վերածվի մեկ այլ հարաբերակցության, ինչի արդյունքում ձևավորվի օրենսդիր մարմին, որը չի արտացոլի ընտրությունների իրական արդյունքները: Մինչդեռ ընտրական համակարգի գլխավոր առաքելություններից մեկն այն է, որ կարողանա

ապահովել ընտրովի մարմիններում քաղաքական ուժերի հարաբերակցությունը՝ ընտրողների իրական աջակցությանը համամասնորեն:

ՍԴՈ–880, 23 ապրիլի, 2010 թ.

4. .... ՀՀ Սահմանադրության 2–րդ անփոփոխելի հոդվածի 2–րդ մասը սահմանում է ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման ձևերը: Այսինքն՝ 2–րդ հոդվածի 2–րդ մասի կարգավորման առարկան 1–ին մասում հռչակված ժողովրդաիշխանության սկզբունքի կոնկրետացումն է դրա իրականացման ձևերի առնչությամբ:

.... Ժողովրդաիշխանության սահմանադրական իմաստից, մասնավորապես, բխում են ժողովրդի հետևյալ հիմնական իրավունքները. 1) լինել գերագույն իշխանության աղբյուր և կրող, 2) ձևավորել իշխանության ներկայացուցչական մարմիններ, 3) պատվիրակել սեփական լիազորություններն իշխանության ներկայացուցչական մարմիններին, 4) ունենալ իր այդ իրավունքների սահմանադրորեն ամրագրված կարգավիճակ:

Ժողովուրդն իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելու դեպքում իր կամքն արտահայտում է ոչ թե ուղղակիորեն, այլ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով (խորհրդարան, Նախագահ, տեղական ինքնակառավարման մարմիններ), որոնց հանձնարարում է իր լիազորությունների իրականացումը որոշակի ժամկետով: Ներկայացուցչական մարմինները պետք է արտահայտեն ժողովրդի կամքը և շահերը, հաշվետու լինեն ժողովրդի, ընտրողների առջև: Մնացած պետական մարմիններն ու պաշտոնատար անձինքածանցված են ներկայացուցչական մարմիններից և կազմավորվում են նրանց միջոցով՝ **Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված կարգով:**

Միաժամանակ, դա չի նշանակում, որ պետական ողջ մեխանիզմն ուղղակի կախվածության մեջ է ներկայացուցչական մարմիններից: Պետական իշխանության որոշակի հատուկ գործառույթների և խնդիրների առկայությունը պահանջում են ներկայացուցչական կամ առաջնային մանդատով օժտված մարմինների կողմից կազմավորված առանձին պետական մարմինների գործառնական ու կառուցակարգային որոշակի անկախություն և ինքնավարություն՝ Սահմանադրությամբ և/կամ օրենքով նախատեսված գործառույթ իրականացնելու համար: Դա բխում է հենց ժողովրդի և ժողովրդավարության շահերից: Այդպիսի մարմիններ են նաև ընտրական հանձնաժողովները: Ընդ որում, ինչպես եվրոպական երկրների մեծ մասում, Հայաստանում նույնպես Սահմանադրությունն ի սկզբանե այդ անկախությունը և ինքնուրույնությունը երաշխավորում է ոչ թե ժողովրդի կամքի արտահայտման իրավազորությամբ, այլ իրավունքով, Սահմանադրությամբ և օրենքով:

Սահմանադրության 2–րդ հոդվածի 2–րդ մասի այնպիսի սուբյեկտիվ մեկնաբանությունը, համաձայն որի բոլոր պետական մարմինները պետք է նախատեսվեն Սահմանադրությամբ, աղավաղում է սահմանադրական այդ նորմի բուն էությունը: Այդպիսի մոտեցմամբ ընդհուպ նույնացվում են «ժողովրդաիշխանություն» և «պետական իշխանություն» հասկացությունները: Սահմանադրություններում հստակ սահմանազատելով «ժողովրդի իշխանությունը» «պետական իշխանությունից»՝ հիմնական շեշտադրումն արվում է այն առնչությամբ, որ պետական իշխանությունն ածանցվում է ժողովրդաիշխանությունից և այն իրականացվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա:

ՍԴՈ–924, 16 նոյեմբերի, 2010 թ.

6. .... Ազգային արժույթի առկայությունը պետական ինքնիշխանության հատկանիշներից մեկն է, իսկ ազգային արժույթի կայունության ապահովվածությունը՝ պետական իշխանության արդյունավետության չափանիշներից մեկը: Հիշյալ նպատակին պետությունը հասնում է իրականացվող դրամավարկային քաղաքականության և դրա շրջանակներում իրականացվող արժութային կարգավորման, այսինքն՝ արժույթով կատարվող գործարքների

պայմանների և կարգի սահմանմամբ և այդ կարգի պահպանման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու միջոցով: Արժութային կարգավորման նպատակն է ապահովել ոչ միայն տնտեսական աճ, այլև պետության տնտեսական անվտանգությունը:

ՍԴՈ–934, 4 փետրվարի, 2011 թ.

7. .... **Երկրորդ՝** ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ քրեական գործով վարույթի շրջանակներում մեղադրանքի առաջադրման (փոփոխման, լրացման), ինչպես նաև մեղադրական եզրակացության կազմման (փոփոխման, լրացման) և հաստատման դատավարական ընթացակարգերում, մի կողմից, քննիչի, մյուս կողմից՝ դատախազի լիազորությունների (իրավունքների ու պարտականությունների) օրենսդրական վերոհիշյալ տարանջատումը բխում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի իրավակարգավորման ընդհանուր խնդիրներից ու նպատակներից, հիմք ընդունելով պետական իշխանության իրականացման օրինականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված սկզբունքը, համաձայն որի՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու չեն կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետևաբար, դատախազն իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որպիսիք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով: Մյուս կողմից, դատաքննության փուլում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման, լրացման, ամբաստանյալին նոր մեղադրանք առաջադրելու դեպքերում, դատարանի գործառույթը պետք է հիմնվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածում ամրագրված մրցակցային արդարադատության այն սկզբունքի վրա, համաձայն որի. «դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը»:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–810, 30 հունիսի, 2009 թ.

5. .... Ներկայացուցչական ազատ մանդատի անհրաժեշտության գաղափարն ազատական ժողովրդավարական իրավական համակարգերում արմատավորվեց աստիճանաբար և դարձավ կարևոր երաշխիք երկրում սահմանադրական ժողովրդավարություն հաստատելու համար, որտեղ իշխանության լեգիտիմության աղբյուրը ժողովուրդն է: **Ներկայացուցչական ազատ մանդատի էությունն այն է, որ պատգամավորները ներկայացնում են ոչ թե ու ոչ միայն իրենց ընտրողներին, այլ ընդհանրական սուբյեկտ՝ ժողովրդին, ում կամքը գերակա է տեղական ընտրազանգվածի կամքի նկատմամբ:**

6. Միջազգային սահմանադրաիրավական պրակտիկան վկայում է, որ ընտրական օրենսդրությամբ նախատեսված համամասնական ընտրակարգը կարող է լինել նաև այնպիսին, որ ընտրողը ձայնը տալիս է որևէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնորոշումների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մոտեցումների հիման վրա՝ առանձին դիրքորոշում չարտահայտելով կուսակցության համամասնական ընտրական ցուցակներում ներկայացված անձանց վերաբերյալ: **Նման պարագայում քաղաքական ուժն է ժողովրդի կողմից պատվիրակված քաղաքական իշխանության կրողը՝ առանձին կամ քաղաքական կոալիցիա կազմելու ճանապարհով: Նման ընտրակարգում ժողովրդի վստահությունը ոչ թե անձի, այլ քաղաքական ուժի ու նրա կողմից ներկայացված ծրագրային մոտեցումների նկատմամբ է:** Այդ վստահությամբ է պայմանավորված նաև ընտրությունների ու դրա արդյունքում ձևավորվող իշխանության լեգիտիմությունը: Քաղաքական մշակույթն այն մակարդակին պետք է լինի, որ ընտրողը կարողանա կողմնորոշվել հենց նման ծրագրային մոտեցումներով: Նման ընտրակարգի պայմաններում համամասնական կարգով թեկնածու են

գրանցվում կուսակցությունները կամ նրանց դաշինքները, որոնք նախընտրական քարոզչությունը վարում են այնպիսի ծրագրային մոտեցումների հիման վրա, որոնք ընտրողին պետք է կողմնորոշեն օրենսդիր պետաիշխանական գործառույթը տվյալ կուսակցությանը վստահելու կամ չվստահելու հարցում: Դրանով է նաև որոշվում քաղաքական ուժի իրական տեղն ու դերն օրենսդիր իշխանության համակարգում:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒՄ

ՍԴՈ–563, 6 մայիսի, 2005 թ.

5. .... Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան նմանատիպ հարցերի առնչությամբ մասնավորապես վկայում է, որ «անկախ դատական համակարգը սահմանադրորեն պաշտպանված է ընդդեմ ցանկացած արտաքին միջամտության, ուստի և Օմբուդսմենին դատարաններին վերահսկելու որևէ գործառույթի վերապահումը անհամատեղելի է իշխանությունների տարանջատման և դատարանների անկախության սկզբունքի հետ»: Նման իրավական դիրքորոշում է արտահայտվել Հունգարիայի սահմանադրական դատարանի 29.03.1994 թ. որոշման մեջ:

ՍԴՈ–665, 16 նոյեմբերի, 2006 թ.

7. .... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1–ին կետի 2–րդ պարբերության բովանդակության նման ձևակերպումը, ինչպես նաև դրա կիրառման վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանների առկա դիրքորոշումը չեն երաշխավորում իշխանությունների հավասարակշռումը, լուրջ բաց են առաջացրել իրավական ակտերի դատական վերահսկողության առումով և վտանգում են ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված՝ անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Իրավական պետության անհարիր է այն իրավիճակը, երբ օրենքով ու իրավակիրառական պրակտիկայի կողմից բացառվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը:

ՍԴՈ–673, 16 հունվարի, 2007 թ.

6. ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի համաձայն պետական իշխանությունն իրականացվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա, պետական մարմինների՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների շրջանակում:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով հստակեցված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավական կարգավիճակը, ըստ որի՝ հանձնաժողովն անկախ է իր իրավասության շրջանակներում և օժտված հանրային ծառայությունների սակագներ սահմանելու (կարգավորելու) բացառիկ լիազորությամբ:

Հանձնաժողովին օրենքի ուժով այդպիսի կարգավիճակ տրամադրելու առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ իշխանությունների բաժանման հիման վրա պետական իշխանության կազմակերպման սահմանադրաիրավական սկզբունքն ունենալով հիմնարար նշանակություն, միաժամանակ չի բացառում տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության պայմաններում կառավարման այնպիսի գործառույթի առկայությունը պետական իշխանության բնագավառում, ինչպիսին անկախ կարգավորումն է, որը բխում է ՀՀ Սահմանադրության ինչպես 83.2, 83.3 հոդվածների, այն-

պես էլ 83.5 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի իրավական բովանդակությունից: Որպես պետական կառավարման գործառույթ, ՀՀ Սահմանադրության 5 հոդվածին համապատասխան, այն ենթակա է հավասարակշռման պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների շրջանակներում: Սահմանադրաիրավական այդ սկզբունքն իր որոշակիությունն է ստացել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 13, 14, 16 և 19 հոդվածներում, որոնցում նախատեսված են օրենսդիր և գործադիր մարմինների հետ հանձնաժողովի գործառնական փոխհարաբերությունների, իսկ 12 հոդվածում՝ գործունեության դատական վերահսկողության շրջանակները:

ՍԴՈ-816, 18 հուլիսի, 2009 թ.

8. ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին պարբերության դրույթների իրացմանն են ուղղված, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 83.5 և 89 հոդվածները, որոնցով տարանջատված են օրենսդիր և գործադիր մարմինների գործառույթները: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում .... իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն (այդ թվում՝ ստուգում, ուսումնասիրություն, տեսչական ստուգում) իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը»: ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ կետի համաձայն. «Կառավարությունը .... իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականությունը»:

ՍԴՈ-864, 5 փետրվարի, 2010 թ.

6. .... Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործուն կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնատար և այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ:

ՍԴՈ-872, 2 ապրիլի, 2010 թ.

9. .... **Երկրորդ՝** այդ մասով օրենսդրական լրացման ընդհանուր տրամաբանության մեջ նկատելի է դատարանի՝ մեղադրական գործառույթից ձերբազատված չլինելու հանգաման-

քը: Վերջինս չի բխում մրցակցային դատավարության եվրոպական արդի զարգացումների հիմնական միտումներից: Մասնավորապես, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն իր՝ 2010 թ. մարտի 12–13-ի 82-րդ լիագումար նիստում հաստատեց «Դատական համակարգի անկախության մասին» չափորոշիչները, որում հատուկ շեշտվում է, որ դատական իշխանության անկախությունը չի կարող դիտարկվել միայն զուտ իշխանությունների տարանջատման տեսանկյունից: Այդ անկախությունն առաջին հերթին միջոց ու հնարավորություն է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար, որը և հանդիսանում է դատական իշխանության հիմնական առաքելությունը: Այս տրամաբանությանն ամենևին համահունչ չէ օրենսդրական այն դրույթը, համաձայն որի՝ դատավորը մեղադրողի վերադասի կարծիքը լրացուցիչ ճշտելուց հետո միայն կարող է իրավունքի պաշտպանություն երաշխավորել: Այն չի բխում նաև 1985 թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքների պահանջներից:

ՍԴՈ-1063, 18 դեկտեմբերի, 2012 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ թե՛ դիմողների և թե՛ պատասխանողի մոտ քննության առարկա հիմնահարցին առնչվող որոշ անհստակություններ պայմանավորված են իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական մակարդակում իրացման խնդիրներով, ՀՀ Սահմանադրության կառուցվածքը միասնական մոտեցում չի դրսևորել իշխանությունների գործառնական կամ կառուցակարգային տարանջատման հարցում: Այն դեպքում, երբ օրենսդիր և գործադիր իշխանությունները ներկայացված են որպես կառուցակարգային ինստիտուտներ, ապա դատական իշխանությունն առանձնացվել է իր գործառնական դերով: Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում ՀՀ արդարադատության խորհուրդը դիտվում է որպես այդ համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ:

ԻՐԱՎԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ-389, 1 հոկտեմբերի, 2002 թ.

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված ժողովրդավարական պետության հիմնական բնութագրիչներից են իրական ներկայացուցչական ժողովրդավարությունը՝ ժողովրդի կողմից ընտրված մարմինների միջոցով իշխանության իրականացումը և մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանվածությունը:

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածն ըստ էության ամրագրում է ժողովրդավարական պետության գոյության համար անհրաժեշտ սահմանադրական երաշխիքները, այն է՝ որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է նաև ազատ ընտրությունների, հանրաքվեների միջոցով:

ՍԴՈ-563, 6 մայիսի, 2005 թ.

7. Իրավական, ժողովրդավարական պետության համար միաժամանակ կարևոր է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերն իրավունքի գերակայության երաշխավորման, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքները և հիմնարար ազատություններն ինքնուրույն և անկախաբար պաշտպանելու հարցում: Այս սկզբունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածում:

ՍԴՈ–673, 16 հունվարի, 2007 թ.

8. .... Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է:

9. .... Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական, ժողովրդավարական պետության, Սահմանադրությունն անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորման վերաբերյալ պարունակում է բազմաթիվ նորմեր, որոնց իրականացումն ապահովվում է նորմատիվ իրավական ակտերի միջոցով: Դրանք կիրառելի են ՀՀ Սահմանադրության 6 հոդվածից բխող իրավական գերակայության սկզբունքով:

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1–ին մաս):

.... Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

ՍԴՈ–720, 11 դեկտեմբերի, 2007 թ.

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես իրավական պետություն, ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով հստակ նախատեսում և երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ իր խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու իրավունքը՝ օրենքով սահմանված ձևերով ու ծավալով: Սահմանադրության 19 հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ՍԴՈ–721, 18 դեկտեմբերի, 2007 թ.

10. .... Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ համայնքի բնակչության անմիջական նախաձեռնությամբ (հանրաքվեով) համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (հետկանչման) ինստիտուտի բացակայությամբ ամենևին չի սահմա-

նափակվում մարդու և քաղաքացու (համայնքի անդամների)՝ համայնքի գործերի կառավարմանը մասնակցելու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը: Բացի դրանից, անմիջական ժողովրդավարության դրսևորման ձևերից բացի, գործող օրենսդրությամբ նախատեսված է համայնքի ղեկավարի գործունեության երաշխավորված վերահսկման (համայնքի գործերի կառավարմանը բնակչության մասնակցության) այլ միջոցներ, մասնավորապես՝ համայնքի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու միջոցով («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11, 16, 17, 19, 20 և այլ հոդվածներ), ընդհուպ նաև ավագանու միջոցով համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկության նախաձեռնումը ՀՀ կառավարման համապատասխան մարմնի (մարզպետի, Երևանի քաղաքապետի) առջև:

ՍԴՈ–723, 15 հունվարի, 2008 թ.

4. ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3–րդ մասն ամրագրում է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքը: Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա:

ՍԴՈ–753, 13 մայիսի, 2008 թ.

9. .... Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

12. .... Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

14. .... Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաև խախտում է իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության 1–ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստազրկվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու և դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

ՍԴՈ–792, 24 փետրվարի, 2009 թ.

9. ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2–րդ մասի համաձայն պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Անդրադառնալով աշխատանքի ազատ, անխտրական ընտրության և այդ իրավունքի իրացման միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ներպետական իրավակիրառական պրակտիկայում աշխատանքի նկատմամբ որևէ (այդ թվում՝ տարիքային) խտրականությունը, զբաղվածության ազատության ոչ իրավաչափ սահմանափակումները համատեղելի չեն իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության հիմնարար սկզբունքների հետ:

ՍԴՈ–810, 26 հունիսի, 2009 թ.

7. .... Կուսակցությունների մասին ցանկացած դասական սահմանում ելնում է այն ակնհայտ ճշմարտությունից, որ տվյալ միավորման գործունեության նպատակը հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցելն է, քաղաքական իշխանության մաս կազմելը, քաղաքական պատասխանատվություն ստանձնելն ու այն իրականացնելը: Անառարկելի է, որ չի կարող լինել ժողովրդավարական պետական համակարգ՝ առանց անհրաժեշտ քաղաքական կառուցակարգերի: Չի կարող լինել նաև հասարակական կայունություն՝ առանց կարողունակ քաղաքական ուժերի կողմից երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պատասխանատվություն ստանձնելու: Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ ոչ միայն ծրագրային ցանկություն, այլև անհրաժեշտ ու բավարար կարողունակություն ունի քաղաքական պատասխանատվություն ստանձնելու համար, և դա տեսանելի ու գնահատելի է ընտրողի կողմից: Համամասնական ընտրակարգով իրականացվող ընտրությունները կոչված են ոչ միայն ձևավորելու կայուն ու գործունակ օրենսդիր իշխանություն, այլև վճռորոշ դեր ունենալու երկրի քաղաքական կառուցակարգի կայացման ու ամրապնդման գործում:

ՍԴՈ–816, 18 հուլիսի, 2009 թ.

8. .... ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 8, 14, 14.1, 18, 19, 42, 42.1 և «պետություն – անձ» սահմանադրաիրավական հարաբերություններ կարգավորող այլ հոդվածների, ինչպես նաև սույն գործով վիճարկվող, դրանց հետ փոխկապակցված օրենսդրության այլ ակտերի, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր վերլուծությունը վկայում է, որ հսկողությունը (վերահսկողությունը) պետության (վերջինիս անունից հանդես եկող մարմինների, պաշտոնատար անձանց) կարևորագույն գործառույթներից է, որի նպատակը պետք է լինի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում (այդ թվում՝ տնտեսավարման) օրինականության ապահովումը: Դա հավասարապես պետք է վերաբերի ինչպես ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության իրականացմանը, այնպես էլ այդ գործունեության արդյունքում իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Հասարակական հարաբերությունների այդ բնագավառները կարգավորող օրենսդրության խնդիրը՝ կապված ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերում ամրագրված սկզբունքների ու պահանջների իրացման հետ, տնտեսավարման բնագավառում վարքագծի միասնական կանոնների կատարումն ապահովելն է, որը ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության սահմանադրական պարտականությունն է:

ՍԴՈ–827, 12 սեպտեմբերի, 2009 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես իրավական պետություն, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով հստակ նախատեսում և երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Սահմանադրության այս հոդվածը, վերարտադրելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3 հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9 հոդվածի դրույթները, սպառիչ կերպով սահմանում է անձին ազատությունից զրկելու դեպքերը՝ կանխորոշելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներ:

ՍԴՈ–882, 11 մայիսի, 2010 թ.

5. .... Ինչպես շատ պետություններ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունն իրեն հռչակելով որպես իրավական պետություն, իր Սահմանադրությունում հստակ սահմանել է հետևյալ դրույթը. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են» (3–րդ հոդվածի 1–ին մաս): Սրանից էլ բխում են Սահմանադրության նույն հոդվածի 2–րդ և 3–րդ մասերով ամրագրված նորմերը. «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

ՍԴՈ–896, 15 հունիսի, 2010 թ.

7. .... Այլ է վիճակը «....կամ պատճառաբանված չէ» բառակապակցության առնչությամբ: Նման ձևակերպման առկայությունն ինքնաբերաբար ենթադրում է չպատճառաբանված դատական ակտի գոյություն: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 9 ապրիլի 2007 թ. ՍԴՈ–690 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել դատական ակտի պատճառաբանված լինելու սահմանադրաիրավական անհրաժեշտության վերաբերյալ, և այդ դիրքորոշումներն ամբողջությամբ վերաբերելի են նաև քննության առարկա գործին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:

ՍԴՈ–924, 16 նոյեմբերի, 2010 թ.

5. Սահմանադրական դատարանն իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքի բովանդակությանն անդրադարձել է իր՝ 2010 թ. հոկտեմբերի 12–ի ՍԴՈ–920 որոշման մեջ: Մասնավորապես, անդրադառնալով պատասխանատվության տեսակները, չափերն ու հարկադրանքի միջոցները սահմանելու՝ ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 2–րդ կետով նախատեսված լիազորությունն իրականացնելիս օրենսդրի հայեցողության շրջանակներին՝ սահմանադրական դատարանը նշել է, որ՝ օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1–ին, 3–րդ և 43–րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց,

հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ հասարակական հարաբերությունների կարգավորման համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է նաև իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը....: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նաև նշել է, որ «համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև»:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

7. .... Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի՝ վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքները ևս վերաբերում են իրավապայմանագրային պարտավորություններով չպայմանավորված վնասի փոխհատուցմանը, սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքի տեսանկյունից իրավաչափ չի համարում այն իրողությունը, երբ հետևողականություն չի դրսևորվում տվյալ իրավակարգավորման հարցում և պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն չի նախատեսվում արդարացված անձի համար, որը դատարան է դիմում իրեն պատճառված վնասի հատուցման պահանջով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարագայում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22–րդ հոդվածի առաջին մասն առկա իրավակարգավորման շրջանակներում լիարժեք չի երաշխավորում ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 5–րդ մասի նորմատիվ կիրառումը՝ խոչընդոտելով տուժող հանդիսացող անձի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը:

ՍԴՈ–1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

6. .... Սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակները, երբ անձը, որի նկատմամբ նշանակված է վարչական տույժ՝ տուգանք, տարբեր օբյեկտիվ պատճառներով, ներառյալ՝ անհաղթահարելի ուժի առկայությունը, չկարողանա օրենքով սահմանված ժամկետներում վճարել տուգանքը: Այս դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով, այսինքն՝ իրավունքի ուժով, նշանակված տուգանքի չափն ինքնաբերաբար բազմապատկվում է, որպիսի պայմաններում անձին չի տրվում հնարավորություն ապացուցելու իր պարտավորությունների չկատարման պատճառների՝ իր կամքից անկախ լինելը:

ՍԴՈ–1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված** և **համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

Տվյալ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ

գործողության մեջ դնելու հստակ կանոնների պահպանումը՝ նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմանների երաշխավորման նպատակով: Դա առավել ևս կարևոր է այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների խստացմանը:

ՍԴՈ–1099, 31 մայիսի, 2013 թ.

6. .... Ներկա պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում **ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ:** Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաև այլ հոդվածներում (մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8–րդ հոդվածի 4–րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38–րդ հոդվածի 2–րդ մաս), ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին:

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

11. .... Փաստ է նաև, որ ձևավորված իրավակիրառական պրակտիկան **հիմնականում շրջանցում է վեճի առարկա հոդվածի պահանջը**: Արդյունքում՝ նոր հանգամանքների իրավական ինստիտուտի կիրառման դատական պրակտիկան մեծ թվով գործերի առնչությամբ ներդաշնակ չէ մարդկանց իրավունքների ապահովման ու պաշտպանության սահմանադրական պահանջներին: Նման իրավիճակում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայության երաշխավորման, իրավական պետության սահմանադրական սկզբունքին հավատարիմ լինելու և ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածի պահանջներն անշեղ կատարելու համար առանցքային նշանակություն ունի ՀՀ դատական պրակտիկայում իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացմամբ թելադրված՝ իրավամտածողության լուրջ բարեփոխումը և ՀՀ սահմանադրական դատարանի արձանագրած վերոնշյալ իրավիճակի հաղթահարումը: Միայն այդ ճանապարհով է հնարավոր նաև երաշխավորել ՀՀ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը:

ՍԴՈ–1137, 4 փետրվարի, 2014 թ.

7. .... Սահմանադրության 1–ին հոդվածով հռչակված իրավական պետության կարևորագույն տարրերից է օրինականության սկզբունքը, որը ենթադրում է նաև, որ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին և գործողության մեջ դրվեն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում՝ իրավունքի բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց կողմից այդ ակտերի պահանջների պարտադիր կատարման պայմանով:

ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–924, 16 նոյեմբերի, 2010 թ.

6. .... Ազգային արժույթի առկայությունը պետական ինքնիշխանության հատկանիշներից մեկն է, իսկ ազգային արժույթի կայունության ապահովվածությունը՝ պետական իշխանության արդյունավետության չափանիշներից մեկը: Հիշյալ նպատակին պետությունը հասնում է իրականացվող դրամավարկային քաղաքականության և դրա շրջանակներում իրականացվող արժութային կարգավորման, այսինքն՝ արժույթով կատարվող գործարքների պայմանների և կարգի սահմանմամբ և այդ կարգի պահպանման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու միջոցով: Արժութային կարգավորման նպատակն է ապահովել ոչ միայն տնտեսական աճ, այլև պետության տնտեսական անվտանգությունը:

ՍԴՈ–1262, 22 մարտի, 2016 թ.

7. .... ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ ՀՀ ինքնիշխանության սկզբունքից բխում է, որ օտարերկրյա կամ միջազգային արբիտրաժների որոշումները, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների ուժով, Հայաստանի Հանրապետությունում օրինական ուժ կարող են ստանալ միայն ՀՀ դատական մարմինների ակտերով դրանց ճանաչման պարագայում:

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–934, 4 փետրվարի, 2011 թ.

7. .... **Երկրորդ՝** ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ քրեական գործով վարույթի շրջանակներում մեղադրանքի առաջադրման (փոփոխման, լրացման), ինչպես նաև մեղադրական եզրակացության կազմման (փոփոխման, լրացման) և հաստատման դատավարական ընթացակարգերում, մի կողմից, քննիչի, մյուս կողմից՝ դատախազի լիազորությունների (իրավունքների ու պարտականությունների) օրենսդրական վերոհիշյալ տարանջատումը բխում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի իրավակարգավորման ընդհանուր խնդիրներից ու նպատակներից, հիմք ընդունելով պետական իշխանության իրականացման օրինականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված սկզբունքը, համաձայն որի՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու չեն կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետևաբար, դատախազն իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որպիսիք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով: Մյուս կողմից, դատաքննության փուլում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման, լրացման, ամբաստանյալին նոր մեղադրանք առաջադրելու դեպքերում, դատարանի գործառույթը պետք է հիմնվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածում ամրագրված մրցակցային արդարադատության այն սկզբունքի վրա, համաձայն որի. «դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը»:

ՍԴՈ–1291, 8 հուլիսի, 2016 թ.

6. .... Պետաիշխանական լիազորություններով օժտված յուրաքանչյուր մարմին, յուրաքանչյուր պաշտոնատար անձ պետք է գործի ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում: Հիշյալ սուբյեկտների հանրային-իրավական վարքագծի իրավական հիմք հանդես են գալիս ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, ՀՀ օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով)՝ «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Սահմանադրական հիշյալ իրավակարգավորման համատեքստում անդրադառնալով վիճարկվող հոդվածում ամրագրված «օրինական պահանջ» եզրույթի բովանդակային ծավալին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն, մասնավորապես, ընդգրկում է փոխկապակցված հետևյալ բաղադրատարրերը.

ա) պահանջը պետք է ներկայացվի իրավասու սուբյեկտի, կոնկրետ դեպքում՝ ոստիկանության զորքերի զինծառայողի, ոստիկանության ծառայողի կողմից,

բ) իրավասու սուբյեկտի կողմից ներկայացվող պահանջը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, այսինքն՝ իրավասու սուբյեկտի հանրային-իրավական վարքագիծը պետք է բխի իր լիազորություններից, կոնկրետ դեպքում՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության ոստիկանության զորքերի զինծառայողի, ոստիկանության ծառայողի լիազորություններից:

....

7. .... ՀՀ սահմանադրական դատարանը՝ արձանագրելով, որ օրենսդրի իրավասության շրջանակներում է, մասնավորապես, որոշել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, սահմանել վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների, վարչական պատասխանատվության միջոցների ու չափերի շրջանակը, միաժամանակ անհրաժեշտ է համարում նշել, որ հիշյալ հարցերում օրենսդրի հայեցողությունն ունի իր սահմանադրական շրջանակները: Նշված լիազորություններն իրացնելիս օրենսդիրը պետք է ղեկավարվի սահմանադրական սկզբունքներով: Հանրային իշխանության իրականացումը, նախևառաջ, սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով, որը հանդիսանում է իրավական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության, հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 71-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին:

.... Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի բնույթը, տվյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակը և նախատեսված տուգանքի չափը, գտնում է, որ վիճարկվող նորմում սահմանված վարչական իրավախախտման հետևանք հանդիսացող իրավական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում, այն է՝ապահովել հասարակական կարգի պահպանությունը, հասարակական անվտանգությունը և օբյեկտների պահպանությունը: Ինչ վերաբերում է նախատեսված սանկցիային, ապա իրավակարգավորման առանձնահատկություններից ելնելով վերջինիս ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակներում է: Տվյալ իրավակարգավորմամբ օրենսդիրը գտել է, որ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջի հանրային նշանակությունը, պահանջի չկատարման զանցանքի հանրային վտանգավորության աստիճանը և հետևանքներն այնպիսին են, որ վիճարկվող դրույթով նախատեսված զանցանքի համար պատասխանատվությունն անհատականացնելու և տուգանքի չափի տարբերակման ան-

հրաժեշտություն առկա չէ: Տվյալ պարագայում արարքը, դրա հանրային վտանգավորության աստիճանը, զանցանքի ու պատճառած վնասի բնույթը, մեղքի աստիճանը և այլ էական հանգամանքները որևէ ձևով չեն պայմանավորվում զանցանք կատարողի սոցիալական դրությամբ կամ հանրային դիրքով, **զանցանքի բնույթը միանշանակ է ու պայմանավորված է կոնկրետ փաստով և ոչ որևէ այլ հանգամանքներով:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԶԱՆՑՈՒՄԸ

ՍԴՈ–690, 9 ապրիլի, 2007 թ.

11. .... ՀՀ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ լիազորությունների պարտադիր և հայեցողական բնույթի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, այդ թվում՝ նաև ՀՀ վճռաբեկ դատարանին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ:

.... Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրորեն նախատեսված պետաիշխանական ցանկացած բնույթի լիազորություն (այդ թվում՝ հայեցողական) անհրաժեշտ նպատակ հետապնդելու հետ մեկտեղ, պետք է ուղեկցվի վերջինիս հասնելու հասարակական հարաբերությունների կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված իրավական, չափավոր միջոցներով, տվյալ դեպքում՝ պարտադիր հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 3 հոդվածում, 47 հոդվածի առաջին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների անխախտելիությունը:

ՍԴՈ–714, 11 սեպտեմբերի, 2007 թ.

6. .... «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածը բովանդակում է մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմնի հիմնական իրավասությունների ցանկը, որոնք իրենց բովանդակությամբ չեն բացառում կամ սահմանափակում ՀՀ Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով սահմանված այլ լիազորությունների իրականացման հնարավորությունը, չեն հակասում Սահմանադրությամբ նախատեսված իշխանությունների բաժանման, ինչպես նաև պետական մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները միայն Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրելու սկզբունքներին, չեն առաջացնում օրենսդրական բաց, և այդ լիազորություններն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 5 հոդվածով սահմանված նորմատիվ իրավական ակտով՝ օրենքով:

ՍԴՈ–753, 13 մայիսի, 2008 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հարցը կանոնակարգելիս օրենսդրությունը տարբերակված մոտեցում չի դրսևորել նաև առանձին ոլորտները կարգավորող անկախ հանձնաժողովների ու կոնկրետ նախարարության պետաիրավական կարգավիճակների հարցում՝ գործնականում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը վերապահելով անկախ հանձնաժողովի իրավասություն:

ՍԴՈ–836, 27 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Արձանագրելով, որ քրեական գործի նախաքննության շրջանակներում ինչպես քննչական ցանկացած այլ գործողության, այնպես էլ վերստուգումների, գույքագրումների և

այլ ստուգողական գործողությունների կատարումն օբյեկտիվորեն կարող է առնչվել անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդրին, սահմանադրական դատարանը գտնում է, որ լրացուցիչ օրենսդրական կարգավորման են ենթակա այդպիսի գործողությունների կատարման պայմանները (հիմքերը, համապատասխան որոշման կայացման կարգն ու պայմանները) և կարգը (այդ թվում՝ արդյունքների արձանագրման), և այս առումով հիմնավոր են դիմողի հարցադրումները:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ–678, 16 փետրվարի, 2007 թ.

5. .... Միանշանակ է, որ որպես հիմնական նպատակ է դիտվում մարդու՝ ազատորեն տեղեկատվություն ստանալու իրավունքը, իսկ միջոցը՝ հատուկ կարգավիճակ ունեցող հեռուստառադիոընկերության առկայությունն է: Այսուհանդերձ, տվյալ օրենքն ընդունվել է 2000 թ. հոկտեմբերի 9–ին և դրա դրույթները դեռևս ՀՀ Ազգային ժողովի կողմից չեն համապատասխանեցվել ՀՀ սահմանադրական փոփոխությունների նոր պահանջներին: Այդ պահանջներին չեն համապատասխանեցվել նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 35 հոդվածի 3–րդ և 4–րդ կետերի վերջին նախադասություններով, 49 հոդվածի «ե» կետով, 112 հոդվածի 2–րդ կետով, 4–րդ կետի վերջին նախադասությամբ և 5–րդ կետով նախատեսված դրույթները, որոնցով չեն երաշխավորվում սահմանադրաիրավական անկախ կարգավիճակ ստացած մարմնի՝ Հանրային հեռուստառադիոընկերության, գործառնական անկախությունը և կառուցակարգային ինքնուրույնությունը: Ազգային ժողովը ցանկացած որոշում կարող է ընդունել իր նիստերի կամ առանձին հարցերի քննարկման հեռարձակման անհրաժեշտության մասին: Սակայն վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդիրը կապված է ոչ թե իրավակարգավորման առարկայի հանրային նշանակության կամ հեռարձակման նպատակահարմարության հարցի հետ, որի կարևորությունը չի վիճարկվում, այլ տարբեր սուբյեկտների միջև իրավահարաբերությունների կանոնակարգման իրավաչափության հետ: Փաստորեն, օրենքի վիճարկվող դրույթները, մասնավորապես, օրենքի 49 հոդվածի «ե» կետի իրավական բովանդակության շրջանակներում, ՀՀ Ազգային ժողովի գործունեության կազմակերպման առարկա են դարձրել նաև այլ մարմինների հետ փոխհարաբերությունների միակողմանի իրավակարգավորման հարցը, կամ ստեղծում են դրանց գործունեությանը միջամտելու հնարավորություն, որը չի բխում ՀՀ Սահմանադրության 27 և 62 հոդվածների պահանջներից: Ելակետն այն է, որ տվյալ դեպքում օրենսդիրն օրենքի նորմի միջոցով մեկնաբանել է Սահմանադրության 62 հոդվածի 1–ին մասում ամրագրված՝ «իր գործունեության կազմակերպման հարցերով» հասկացության բովանդակությունը: Դիտարկելով այս մեկնաբանությունը Սահմանադրության 5 հոդվածի, 6 հոդվածի 2–րդ մասի, 62 հոդվածի ողջ բովանդակության իմաստով, հարկ է նկատել, որ մեկնաբանությունը ոչ իրավաչափ է, քանի որ այլ մարմինների հետ իրավահարաբերությունների շրջանակներում Ազգային ժողովի՝ որոշումներ ընդունելու լիազորությունն սպառիչ կերպով սահմանված է Սահմանադրությամբ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ՍԴՈ–669, 22 դեկտեմբերի, 2006 թ.

6. .... Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման, կուսակցությունների գործունեության դադարեցումը կամ արգելումը պետք է բացառիկ դեպք լինի, երբ վտանգվում են մարդկանց հիմնարար իրավունքները, երկրի սահմանադրական կարգը, կամ անհրաժեշտ է բացառել բռնությունները: Միջամտությունը կուսակ-

ցությունների գործունեությանը պետք է համարժեք լինի հետապնդվող նպատակին: Պետք է ապահովված լինեն միջամտության ընթացակարգային երաշխիքներն այն հաշվով, որ կուսակցությունների արգելումը կամ գործունեության հարկադրանքով կասեցումն իրականացվի դատական կարգով՝ սահմանադրական երաշխիքների շրջանակներում:

ՍԴՈ–721, 18 դեկտեմբերի, 2007 թ.

8. .... Այսպիսով, համայնքային (տեղական) նշանակության հարցերի, հավասարապես՝ նաև տեղական հանրաքվեի դրվող հարցերի, առարկայական շրջանակը սահմանադրորեն չկանխորոշելու, և տեղական հանրաքվեների, դրանց կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման օրենսդրական պարտադիր կանոնակարգումը որպես սահմանադրական սկզբունք հաստատագրելու պայմաններում (ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 7–րդ կետ), տեղական հանրաքվեի դրվող հարցերի **սահմանափակումն** իրավաչափ է և բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերից, այնպես էլ ՀՀ–ում սահմանադրական կարգի հաստատագրված այն սկզբունքից, համաձայն որի՝ հանրաքվեն, ազատ ընտրությունները և ընտրովի մարմինների միջոցով տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության իրականացման ինքնուրույն ձևեր են (ՀՀ Սահմանադրության 2 հոդված):

ՍԴՈ–722, 21 դեկտեմբերի, 2007 թ.

6. ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածում ամրագրված՝ անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին (հանրային իշխանության մարմիններին) ու պաշտոնատար անձանց դիմումներ, առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու անձի իրավունքը ժողովրդավարության դրսևորումներից մեկն է և կարևոր նախապայման՝ անձի հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 և մի շարք այլ հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքների անխախտելիությունը երաշխավորելու համար:

ՍԴՈ–766, 14 հոկտեմբերի, 2008 թ.

6. .... Սահմանադրական իրավունքի տեսանկյունից իշխանությունը կամքը պարտադրելու իրավունք և կարողություն է: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական իշխանությունը, որպես ժողովրդի կամքը միջնորդավորված կերպով պարտադրելու իրավունք և կարողություն, պետության գործառնական կարևոր բաղադրատարրերից է, որն արտահայտվում է պետության կողմից իր առաքելությունը հրապարակային և ինքնիշխան ձևով իրականացնելու կարողունակությամբ՝ համապարտադիր վարքագծի կանոններ սահմանելու և դրանց կիրառումն ապահովելու միջոցով:

Սահմանադրական մակարդակում հստակ տարբերակվում են «ժողովրդի իշխանություն» և «պետական իշխանություն» հասկացությունները: Ժողովրդավարական երկրներում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որը հանդիսանում է այդ իշխանության միակ կրողը և աղբյուրը: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 2 հոդվածը սահմանում է, որ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5 հոդվածների համալիր վերլուծությունից բխում է, որ **պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետականորեն կազմակերպված ժողովրդի հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենս-**

դիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է իշխանության գործառնական բնույթից ելնելով, որին համապատասխան ձևավորվում են անհրաժեշտ կառուցակարգեր՝ իշխանության մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտվում են համարժեք լիազորություններով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Պետական իշխանությունն իրականացվում է գործառույթ – ինստիտուտ – իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրորեն նախատեսված սահմանափակումների շրջանակներում: Այդ եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթն իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում է պետության ողջ տարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը: Դրանցից դուրս իրականացվող գործողությունները ճանաչվում են որպես հակաիրավական: Նման հակաիրավական գործողությունների թվին են դասվում նաև Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանադրական ինստիտուտին վերապահված պետաիշխանական գործառույթին և դրա իրականացման միջոցներին բռնությամբ տիրանալը, իրեն ենթարկելը կամ այլ կերպ՝ զավթելը: ՀՀ Սահմանադրության 47 հոդվածը միանշանակ պահանջ է առաջադրում, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը, ինչպես նաև նույն հոդվածն արգելում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այս համատեքստում սահմանադրական կարգը բռնի տապալելու նպատակով իրավունքների և ազատությունների օգտագործման արգելումն ունի այն սահմանադրաիրավական իմաստը, որ իրավունքների չարաշահման արգելք է նախատեսվում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են սահմանադրորեն նախատեսված իրավակարգավորումը բռնության գործադրմամբ ձախողելուն (կործանելուն, քայքայելուն, ավերելուն և այլն), անիրագործելի դարձնելուն:

.... Պետությունը պարտավոր է իրավական երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ պահանջն իրականացնելու և երկրի սահմանադրական կարգի կայունությունն ապահովելու ուղղությամբ:

Վերոշարադրյալ մոտեցումները հաշվի առնելով՝ «պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր» և «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչեր» հասկացությունները ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի սահմանադրաիրավական իմաստով պետք է հասկանալ **օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության մարմինների պետաիշխանական գործառույթներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ բռնությամբ կամ դրա գործադրման անմիջական և իրական սպառնալիքով տիրանալու համար գործողություն պլանավորելու, կազմակերպելու, նախապատրաստելու կամ իրականացնելու նպատակով այլ անձանց մասնակից դարձնելու դիմում կամ հրավեր**: Իրավակիրառական պրակտիկան և ցանկացած գործի փաստական հանգամանքների գնահատումը պետք է ելնի տվյալ հասկացությունների սահմանադրաիրավական այդ բովանդակությունից, **առաջին հերթին նկատի ունենալով հակաիրավական (բռնի) գործողությունների միջոցով պետաիշխանական գործառույթի նկատմամբ ոտնձգություն իրականացնելու նշված հանգամանքը**: Բռնության կոչերի

նպատակը մեկն է՝ համախմբել մարդկանց, ուղղություն տալ նրանց բռնի գործողություններին: Քննարկվող հանցակազմի իմաստով բռնության կոչեր չեն կարող համարվել իշխանության քննադատությունը, իշխանությունների հրաժարականի անհրաժեշտության հիմնավորումը, հրաժարականի պահանջը, ցույցեր, երթեր, հանրահավաքներ անցկացնելու կոչը կամ կազմակերպումը, փոխաբերական իմաստով արված արտահայտությունները:

Հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամատեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Հանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ և ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման:

ՍԴՈ–803, 8 մայիսի, 2009 թ.

11. .... Այս համադրումից հետևում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեն 18 տարին լրացած, տվյալ համայնքում հաշվառված **ՀՀ քաղաքացի հանդիսացող բնակիչները**, ինչպես նաև տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և **փաստացի բնակվող**, սակայն ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք:

ՍԴՈ–902, 7 հուլիսի, 2010 թ.

5. ....ՀՀ Սահմանադրության 8–րդ հոդվածով որպես սահմանադրական կարգի հիմունք հռչակված՝ տնտեսական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ենթադրում է գործատուին այնպիսի իրավազորությունների տրամադրում, որոնք նրան թույլ կտան տնտեսական գործունեության արդյունավետության և իր գույքի ռացիոնալ օգտագործման նպատակներից ելնելով ինքնուրույնաբար և իր ռիսկով ընդունել կազմակերպչական և կադրային քաղաքականությանն ուղղված որոշումներ:

ՍԴՈ–943, 25 փետրվարի, 2011 թ.

8. .... – առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքներով՝ սահմանադրական դատարանն իր որոշումներով և իր իրավասության շրջանակներում ապահովում է ինչպես անձանց (ֆիզիկական, իրավաբանական) խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը, այդ իրավունքներով պետության սահմանափակումը (ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդված), այնպես էլ սահմանադրական կարգի հիմունքների կայունությունը (սահմանադրական օրինականությունը), որով պարտավորեցնում է հանրային իշխանության բոլոր մարմիններին ու պաշտոնատար անձանց ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ կատարելու սահմանադրական դատարանի որոշումների պահանջները, այդ թվում ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններին՝ մեկնաբանելու և կիրառելու օրենքներն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան, ինչպես նաև նոր հանգամանքների հիմքով վերանայելու անձանց նկատմամբ կայացված դատական ակտերը:

....

11. .... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր են դիմող կողմի այն պնդումները, համաձայն որի՝ իրավական դիրքորոշումների շրջանակում **սահմանադրական ճանաչված նորմը չի կարող կիրառվել սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունից տարբերվող բովանդակությամբ**: Հակառակ դեպքում ի-

րավասու պետական մարմնի, այդ թվում՝ դատարանի, գործողություններն ու ակտերն ակնհայտ կհակասեն ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ և մի շարք այլ հոդվածներով երաշխավորված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներին: ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանները պարտավոր են ըստ էության գործի քննության, ինչպես նաև դատական բողոքարկման շրջանակներում նորմատիվ իրավական ակտերը կիրառելիս հաշվի առնել դրանց վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, գործող դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով **դատական սխալի փաստը գնահատելիս**, եթե կոնկրետ գործով անձանց նկատմամբ կիրառված նյութական կամ դատավարական այս կամ այն նորմի սահմանադրաիրավաընկալման վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը: Այդպիսի հիմնավորմամբ դատական ակտերը վերանայելու պահանջով շահագրգիռ անձանց դիմումները պետք է քննության առնվեն իրավասու դատարանների կողմից, իսկ առանց հիմնավոր պատճառաբանման այդպիսի դիմումի քննությունը մերժելն անձին հնարավորություն կընձեռի իր իրավունքների և ազատությունների միջազգային-արդարադատական պաշտպանության համար: Իսկ այդպիսի շարունակական պրակտիկան կհակասի ոչ միայն ՀՀ սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներին, այլև՝ ՀՀ ստանձնած միջազգային մի շարք պարտավորությունների:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ-649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

7. .... 4. Նկատի ունենալով, որ օրենքի 11 հոդվածի հատկապես 2-րդ մասի գործողության հետևանքով նյութական դժվարին վիճակում հայտնվածների զգալի մասը թոշակառուներ են, այդ նորմերը խոչընդոտում են Սահմանադրության 48 հոդվածի 12-րդ կետի պահանջի կատարումը, որով սոցիալական պետության հիմնական խնդիրներից է հռչակվել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը:

ՍԴՈ-716, 23 հոկտեմբերի, 2007 թ.

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես սոցիալական պետություն, ՀՀ Սահմանադրության 37 հոդվածով նախատեսում և երաշխավորում է յուրաքանչյուր անձի սոցիալական ապահովության իրավունքը, որն իր բովանդակության մեջ ընդգրկում է նաև կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ օրենքով սահմանված ձևերով ու ծավալով: Սահմանադրության 37 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

ՍԴՈ-792, 24 փետրվարի, 2009 թ.

5. ՀՀ Սահմանադրության 1, 3 և 14.1 հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհատի և պետության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը և, առաջին հերթին՝ պետության պարտականությունը՝ կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ և արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում: Այն երաշխավորված է նաև աշխատանքի բնագավառում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 32 հոդվածում (1-ին մաս), համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 48 հոդվածում որպես պետության հիմնական խնդիրներ են նախատեսված բնակչության զբաղվածությանը նպաստելը (2-րդ կետ), տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակ ապահովելը:

....

9. ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի համաձայն պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

ՍԴՈ-816, 18 հուլիսի, 2009 թ.

8. .... ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 8, 14, 14.1, 18, 19, 42, 42.1 և «պետություն – անձ» սահմանադրաիրավական հարաբերություններ կարգավորող այլ հոդվածների, ինչպես նաև սույն գործով վիճարկվող, դրանց հետ փոխկապակցված օրենսդրության այլ ակտերի, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր վերլուծությունը վկայում է, որ հսկողությունը (վերահսկողությունը) պետության (վերջինիս անունից հանդես եկող մարմինների, պաշտոնատար անձանց) կարևորագույն գործառույթներից է, որի նպատակը պետք է լինի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում (այդ թվում՝ տնտեսավարման) օրինականության ապահովումը: Դա հավասարապես պետք է վերաբերի ինչպես ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության իրականացմանը, այնպես էլ այդ գործունեության արդյունքում իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Հասարակական հարաբերությունների այդ բնագավառները կարգավորող օրենսդրության խնդիրը՝ կապված ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերում ամրագրված սկզբունքների ու պահանջների իրացման հետ, տնտեսավարման բնագավառում վարքագծի միասնական կանոնների կատարումն ապահովելն է, որը ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության սահմանադրական պարտականությունն է:

ՍԴՈ- 1082, 23 ապրիլի, 2013 թ.

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որոշակի հստակ իրավապայման է նախատեսված հանրային աշխատանքները՝ որպես պատժատեսակ, հարկադրանքի այլ միջոցներով փոխարինելու դեպքում: Մասնավորապես, օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ, երբ **դատապարտյալը հանրային աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափում է:** Այսինքն, չարամտությունը՝ որպես քրեորեն դատապարտելի սուբյեկտիվ գործոն և հասարակական առավել վտանգավոր երևույթ, օբյեկտիվորեն հանգեցնում է փոխարինվող պատժի խստացմանը (ազատազրկման հետ կապված պատժի փոխարինմանն ու կիրառմանը), հետևաբար՝ նաև իրավակարգավորման արդյունավետ միջոցի գործադրմանը: Դրանով նպատակ է հետապնդվում վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները, այսինքն՝ երաշխավորել սահմանադրական կարգի հիմունքների պահպանումը:

ՍԴՈ–1142, 2 ապրիլի, 2014 թ.

դ) Հայաստանի Հանրապետությունը նույնպես պարտավոր է այս հիմնախնդրին լուծում տալ, քանի որ ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության պարտքն է ոչ միայն ներկա աշխատունակ բնակչության, այլև սերունդների ընդհանուր բարեկեցության և քաղաքացիական համերաշխության ապահովման նախադրյալների ստեղծումը: Դա Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված նորմ–նպատակ է, ինչը, սակայն, պահանջում է վերջինիս երաշխավորման համար պետության գործառույթների նպատակային, հետևողական ու արդյունավետ իրականացում՝ հիմքում ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հիմնարար արժեքներն ու սկզբունքները, խորությամբ հաշվի առնելով երկրում առկա իրավական, տնտեսական, սոցիալական, ընդհանուր ժողովրդագրական կոնկրետ առանձնահատկությունները: Միայն այս ճանապարհով է հնարավոր տասնամյակների ընդգրկումով երաշխավորել նաև մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի արդյունավետ իրացումը: ....

ՍԴՈ–1224, 7 հուլիսի, 2015 թ.

6 .... Բացի դրանից, ցանկացած իրավունքի իրացում պետք է դիտարկել իրավունքների ու պարտականությունների միասնության ժողովրդավարական սկզբունքի տեսանկյունից, համաձայն որի՝ Սահմանադրությամբ և օրենքներով անձանց համար երաշխավորված իրավունքներն ու դրանց համարժեք պարտականությունները ենթադրում են, որ պետությունը միաժամանակ ստանձնում է դրանց իրացումն ապահովելուն կոչված մի շարք պարտականություններ, այդ թվում՝ իրավական, սոցիալական և այլ պայմանների ապահովման բնագավառում: Անձանց, պետության իրավունքներն ու պարտականությունները փոխկապակցված են, միասնական, պայմանավորված՝ հասարակական տվյալ հարաբերության բովանդակությամբ ու առանձնահատկությամբ: Այդպիսի միասնությունն արդյունավետ իրավակարգավորման ոչ միայն պայման է, այլև էական երաշխիք: Տվյալ դեպքում, Սահմանադրության 37–րդ հոդվածով սահմանված սոցիալական ապահովության իրավունքը տվյալ իրավունքն ապահովելու համար պետության պոզիտիվ պարտականությունից զատ տվյալ իրավունքի հասցեատիրոջ համար պարտադիր ենթադրում է նաև համապատասխան պարտականություն, այն է՝ նպատակային սոցիալական վճար վճարելու պարտականություն, որի արդյունքում ձևավորվում է այն գումարը, որը որպես լրացուցիչ կենսաթոշակային գումար տրամադրվելու է սոցիալական ապահովության իրավունքի սուբյեկտին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–810, 30 հունիսի, 2009 թ.

7. .... Կուսակցությունների մասին ցանկացած դասական սահմանում ելնում է այն ակնհայտ ճշմարտությունից, որ տվյալ միավորման գործունեության նպատակը հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցելն է, քաղաքական իշխանության մաս կազմելը, քաղաքական պատասխանատվություն ստանձնելն ու այն իրականացնելը: Անառարկելի է, որ չի կարող լինել ժողովրդավարական պետական համակարգ՝ առանց անհրաժեշտ քաղաքական կառուցակարգերի: Չի կարող լինել նաև հասարակական կայունություն՝ առանց **կարողունակ քաղաքական ուժերի կողմից** երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պատասխանատվություն ստանձնելու: **Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ ոչ միայն ծրագրային ցանկություն, այլև անհրաժեշտ ու բավարար կարողունակություն ունի քաղաքական պատասխանատվություն ստանձնելու համար, և դա տեսանելի ու գնահատելի է ընտրողի կողմից:** Համամասնական ընտրակարգով իրականաց-

վող ընտրությունները կոչված են ոչ միայն ձևավորելու կայուն ու գործունակ օրենսդիր իշխանություն, այլև վճռորոշ դեր ունենալու երկրի քաղաքական կառուցակարգի կայացման ու ամրապնդման գործում:

....

Երկրորդ՝ հաշվի առնել մեծամասնական և համամասնական ընտրակարգերի ոչ միայն տեխնոլոգիական (տեխնիկակազմակերպական) առանձնահատկությունները, այլև դրանց դերը քաղաքական իշխանության ձևավորման և քաղաքական պատասխանատվություն ստանձնելու և իրացնելու գործում:

....

Չորրորդ՝ ընտրողների կողմից իրենց պետաիշխանական իրավունքի պատվիրակման ժամանակ այն սուբյեկտի ճիշտ ընտրությունը, որին պատվիրակվում է այդ իրավունքի իրացումը.

այն, որ ինչպես մեծամասնական ընտրակարգով ընտրությունների, այնպես էլ համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում մանդատի աղբյուրը ժողովուրդն է, անվիճելի է: Սակայն հիմնախնդրի բուն էությունը և դրա իրավաչափությունը բացահայտելու համար հարկ է դրան մոտենալ ոչ միայն այն տեսանկյունից, թե ո՞րն է մանդատի աղբյուրը, այլ նաև՝ թե այդ աղբյուրը՝ ժողովուրդը, ու՞մ է պատվիրակել պետաիշխանական իր իրավունքի իրացումը և ի՞նչ նպատակով է պատվիրակել: Պատգամավորների լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքի իրավաչափությունը կարող է գնահատվել միայն վերոնշյալ երեք հարցերի պատասխանների եռամիասնության շրջանակներում: Այդ հարցերի պատասխանների արդյունքում պարզ կդառնա, որ պատգամավորի մանդատի գործողության դադարեցման խնդրո առարկա հիմքը պատգամավորի՝ ոչ թե կուսակցությանը հաշվետու լինելու, այլ հենց իր մանդատի աղբյուրին՝ ժողովրդին հաշվետու լինելու դրսևորում է: Նման միջոցով ապահովվում է այն պատգամավորի քաղաքական պատասխանատվությունը ժողովրդի առջև, ով շեղվել է այն քաղաքական ուղեգծից, որի իրացման համար ժողովուրդը պատվիրակել էր նրան պետաիշխանական իր իրավունքի իրացումը: Կուսակցության կողմից ծրագրային ուղեգծից շեղվելու հանգամանքի վերաբերյալ ժողովուրդն իր դիրքորոշումն արտահայտում է հերթական ընտրությունների ժամանակ: Այս առումով սկզբունքային նշանակություն ունի նաև ընտրությունների պարբերականության ժամկետային սահմանների ճիշտ որոշումը:

8. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության ցանկացած փոփոխություն, որն ընթացիկ շահեր է հետապնդում և փոխում է ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձևավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում, անհամատեղելի է ժողովրդաիշխանության հիմնարար սկզբունքների հետ և իրավաչափ համարվել չի կարող**:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–678, 16 փետրվարի, 2007 թ.

6. Քննության առարկա հարցի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիր մարմինն առանձնահատուկ դեր ունի յուրաքանչյուր երկրի ժողովրդավարական զարգացման համար: Պառլամենտարիզմի մշակույթը քաղաքակիրթ բազմակարծության և երկխոսության մշակույթ է: Այն առաջին հերթին դրսևորվում է ժողովրդի կողմից իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելիս: Հասարակական հարաբերությունների կանոնակարգման նկատմամբ դրսևորվող մոտեցումները և օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների թափանցիկ ու հրապա-

րակային իրականացումը քաղաքացիական հասարակության ձևավորման կարևորագույն երաշխիքներից են:

ՍԴՈ–721, 18 դեկտեմբերի, 2007 թ.

10. .... Ուստի տեղական հանրաքվեն օրենքով թույլատրելի քննարկման հարցերի շրջանակով, և որպես համայնքային նշանակության հարցերի լուծման միջոց, տեղական ինքնակառավարման գործունեության վերահսկման ապահովման նույնքան կարևոր երաշխիք է, որքան պետական և հասարակական վերահսկողության՝ օրենքով նախատեսված մյուս ձևերը, որոնք ամբողջությամբ կոչված են համայնքներում ապահովելու մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների անխախտելիությունը: Բացի դրանից, ՀՀ սահմանադրական փոփոխություններով պայմանավորված (ՀՀ Սահմ. 108.1 հոդված)՝ օրենքով հստակեցվել են՝ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ իրավական (վարչական) հսկողություն իրականացնելու, ինչպես նաև այդ մարմինների գործողությունները (անգործությունը) դատական կարգով բողոքարկելու կարգն ու ձևերը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7.1 գլուխ), իսկ ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 8–րդ կետի, 101 հոդվածի 4–րդ կետի շրջանակներում՝ նաև սահմանադրական վերահսկողության իրականացման երաշխիքները: Ուստի իրավական կարգավորման հիմնական խնդիրն է ելնել համայնքի արդյունավետ կառավարման նպատակով պետական և հասարակական վերահսկողության բոլոր ձևերի ու միջոցների ներդաշնակ և ամբողջական գործադրման անհրաժեշտությունից, որը համահունչ է ինչպես ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 և 5 հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի սկզբունքներին և Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության հետագա զարգացման նպատակներին, այնպես էլ Եվրոպայի խորհրդի շրջանակներում հաստատված իրավակիրառական պրակտիկային:

ՍԴՈ–906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

7. .... Քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների բավարարման համար: Քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ, **նախ՝** միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, **երկրորդ՝** հասարակական կազմակերպություններն ունեն կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, **երրորդ՝** հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն և վերահսկողություն սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում:

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որ-

պես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:** Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, **դատարանում,** պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

8. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

2. ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԴՈ–705, 3 հուլիսի, 2007 թ.

5. .... Գործարքները քաղաքացիների կամ իրավաբանական անձանց այն գործողությունններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցմանը: Քաղաքացիական օրենսդրության կարևոր սկզբունքներից մեկն իրավահարաբերության մասնակիցների կամքի ազատ իրականացման սկզբունքն է:

ՍԴՈ–733, 5 փետրվարի, 2008 թ.

9. .... Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից զրկելը հակասում է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին՝ խախտելով դատարանի մատչելիության իրավունքը, ապա հարկ է նշել, որ նշված հարցով դատարան դիմելու ոչ անմիջական հնարավորությունը չի առնչվում դատարանի մատչելիության իրավունքին: ՀՀ Սահմանադրության 19 հոդվածը երաշխավորում է դատարանի մատչելիության իրավունքը, երբ առկա է կամ **խախտված իրավունքները վերականգնելու, կամ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու** անհրաժեշտություն: Մինչդեռ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար դիմելու դեպքում հարցը չի առնչվում ո՛չ խախտված իրավունքների վերականգնմանը, ո՛չ էլ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտությանը: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ օրենքով նախատեսված կարգի խախտման, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման հարցում օրենքով սահմանված կարգով որոշակի լիազորություն իրականացնող հանձնաժողովների գործողությունների կամ անգործության բողոքարկման առնչությամբ, որի բողոքարկման կարգը նույնպես սահմանվում է օրենքով:

ՍԴՈ–751, 15 ապրիլի, 2008 թ.

10. .... Սահմանադրական դատարանը նման օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը կարևորում է նաև այն տեսանկյունից, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204^{20} հոդվածի 2–րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման և պաշտպանության, հետևաբար՝ նաև Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

11. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակ-

տի վերանայման միջոցով անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է բացառապես վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների ակտերի վերանայում:

....

12. .... Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման առկա իրավակարգավորումն առանձին դեպքերում ոչ միայն հնարավորություն չի տա վերականգնելու անձի խախտված իրավունքը, այլ նաև կխոչընդոտի Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորության լիարժեք կատարմանը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը տվյալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգատներից ընտրում է մեկ առավել տիպային օրինակ և ըստ էության քննում և վճիռ է կայացնում միայն այդ գանգատի կապակցությամբ. մնացած գանգատների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է ներպետական մակարդակում՝ այդ «ուղենիշ վճռի» հիման վրա: Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները և ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում՝ Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի:

....

14. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներն անձին զրկում են նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միջոցով իր խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունից՝ խաթարելով երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, մեծացնելով կոռուպցիոն ռիսկը, թույլ չտալով Հայաստանի Հանրապետությանը լիարժեք և բարեխղճորեն կատարելու ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

6. Նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու հիմքերի, ինչպես նաև այդ հանգամանքների հիմքով վարույթ հարուցելու գործող օրենսդրական կարգի ուսումնասիրությունը վկայում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի նպատակը, ինչպես արձանագրվել է նաև սահմանադրական դատարանի վերոհիշյալ համապատասխան որոշումներում, հակասահմանադրական ճանաչված օրենքի կիրառման հետևանքով անձանց խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների վերականգնումն է: Այսինքն՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն անձանց խախտված իրավունքների վերականգնման իրավական կարևոր միջոց է:

ՍԴՈ–864, 5 փետրվարի, 2010 թ.

5. .... Այս կապակցությամբ հարկ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածները դիտարկել վարչական պատասխանատվության նպատակի, օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, ինչպես նաև «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակության համատեքստում:

Նման համադրումը վկայում է, որ վարչական պատասխանատվությունը՝ ընդհանրապես, և վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող վարչական տույժը՝ մասնավորապես, հետապնդում են այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դատական կարգով վերականգնումն է: Վարչական պատասխանատվության նպատակն առավելապես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պատասխանատվություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջև, վարչական պատասխանատվությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին: Իսկ հանրային իրավահարաբերությունների ոլորտում մասնավոր շահերի պաշտպանության նպատակով սահմանված է այլ կարգ՝ հաշվի առնելով վարչադատավարական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վարչաիրավական հարաբերությունների հետևանքով խախտված իրավունքների վերականգնման կարգի առանձնահատկությունները, խախտված իրավունքների փաստացի վերականգնելիության հնարավորությունն ու աստիճանը:

.... Ինչ վերաբերում է «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակությանը, ապա անձի խախտված իրավունքը վերականգնված է համարվում այն դեպքում, երբ վերականգնվում է մինչև իրավախախտման պահը գոյություն ունեցող իրավիճակը կամ վերացվում է իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքը: Տվյալ դեպքում պաշտոնատար անձի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և նրան տեղեկատվություն տրամադրելու արդյունքում դիմողը հնարավորություն է ստացել իրացնել տեղեկատվություն ստանալու իր իրավունքը:

ՍԴՈ–866, 23 փետրվարի, 2010 թ.

3. .... – սահմանադրական դատարանի ՍԴՈ–758 որոշմանը շահագրգիռ անձանց դիմումների հիման վրա պետք է հաջորդեին իրավական հետևանքներ (նոր հանգամանքներ)՝ հանգեցնելով օրենքով սահմանված կարգով դատական այն ակտերը վերանայելուն, որոնցով կիրառվել են Սահմանադրությանը հակասող ճանաչված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28–րդ հոդվածի դրույթները, ընդ որում՝ պարտադիր հաշվի առնելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի ապրիլի 15–ի ՍԴՈ–751 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ կապված նոր հանգամանքներով այն անձանց խախտված իրավունքները վերականգնելու անհրաժեշտության հետ, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

7. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 4–րդ մասում և 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված՝ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության բովանդակությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունը հղում կատարելով օրենքին՝ միաժամանակ առաջադրում է տուժողին փոխհատուցելու այնպիսի կարգ սահմանելու պահանջ, որը պետք է երաշխավորի գործուն մեխանիզմ խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացման համար: Նման մեխանիզմի գոյությունը կարող է ապահովվել նաև այն դեպքում, երբ հատուցման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված դատական կարգը պետական տուրքի վճարումից ազատելու արտոնության ձևով արդարացի պայմաններ ստեղծի այդ իրավունքի իրացման համար, և այնպիսի դեպքերում, երբ փոխհատուցման իրավունքն անվիճելի է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով նախօրոք հաստատված է պետական իրավասու մարմնի, պաշտոնատար անձի այն գործողության

(անգործության) փաստը, որի արդյունքում անձին պատճառվել է վնաս: Հետևաբար, օրենսդիրը պետք է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում և 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով **սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ և գործուն համակարգ:**

.... Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը:

ՍԴՈ-947, 5 ապրիլի, 2011 թ.

6. .... ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլուծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջև դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետևանքով իրավունքների և ազատությունների **խախտումների կանխման** խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրության դեպքում օրենսդիրն իր առջև դրել է **խախտված իրավունքների վերականգնման** ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքացիական դատավարության կարգով նշված իրավունքների վերականգնման համար նախադրյալներ հանդիսացող նորմեր: Այդպիսիք են, մասնավորապես, դիմողի կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 և 313-րդ հոդվածները, որոնք նախադրյալներ են հանդիսանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքի կամ ստրկացուցիչ գործարքի հետևանքով խախտված իրավունքները քաղաքացիական դատավարության կարգով վերականգնելու համար:

Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունքների վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականխիչ նշանակություն և քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները: Այդ է պատճառը նաև, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտը, որի միջոցով գործնականում ապահովվում է հանցագործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնումը:

ՍԴՈ-984, 15 հուլիսի, 2011 թ.

7. .... Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության

պայմաններում: Այսինքն՝ խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու դեպքում: Հետևաբար, դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման միջոց, պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի իրավաբանական ուժը կորցնելուն:

.... Անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման, որպես անձի խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ իր նախորդ մի շարք որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին և վերահաստատելով դրանք՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ.

– նոր հանգամանքների առկայության պարագայում, այսինքն, երբ առկա է իրավունքի կիրառման օբյեկտիվ անհրաժեշտություն՝ պայմանավորված հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կիրառման իրավաբանորեն հավաստված փաստով, ապա «դատական ակտի վերանայման վարույթի» հարուցումը, դատական ակտը վերանայելու գործընթաց նախաձեռնելն իրավասու դատարանի կողմից իրավաբանական անհրաժեշտություն է, այդ դատարանի սահմանադրական պարտականությունը, որի նպատակն անձի խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումն է,

– օրինական ուժի մեջ մտած դատական համապատասխան ակտը **նոր հանգամանքների հիմքով վերանայելու ծավալը, շրջանակները պայմանավորված են հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կարգավորման առարկայով, հարաբերությունների բնույթով ու առանձնահատկություններով, կիրառման շրջանակներով և դրանցով պայմանավորված՝ նաև անձի կոնկրետ իրավունքների խախտման փաստով:**

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ պատահական չէ, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1–րդ գլուխը վերնագրված է «Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով» և գլխի դրույթներում հիմնականում կիրառվում է **«դատական ակտի վերանայում»** ձևակերպումը, այնուամենայնիվ, նշված գլխի 426.4–րդ հոդվածը վերնագրված է «**Գործերի վերանայման** հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով»:

Հիմք ընդունելով խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունը, ինչպես նաև restitutio in integrum սկզբունքի բովանդակությունն ու այդ սկզբունքի երաշխավորմանն ուղղված՝ Նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի վերլուծությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ ըստ էության համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, և «դատական ակտի վերանայում» հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, ծավալը, շրջանակները, խնդիրները և դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը: Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտության դեպքում կապահովեն նաև գործի վերաքննություն այն ծավալով, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանման և անձի խախտված իրավունքով պայմանավորված՝ դատական ակտի՝ համապատասխան մասով (կամ ամբողջությամբ) վերանայման պայմաններում: Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նորոգում՝ կիրառված կոնկրետ նորմի հակասահմանադրականության կոնկրետ փաստի ճանաչման պայմաններում և շրջանակներում: Հաշվի առնելով միջազգային իրավական մոտեցումները՝ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ չնայած գործի նորոգման ինստիտուտը քրեական և քաղաքացիական վարույթներում ունի իր առանձնահատկությունները, այսուհանդերձ, դրանց սահմանադրաիրավական

բովանդակությունը մեկ նպատակ է հետապնդում՝ անձի սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության երաշխավորում:

.... 8. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդրո առարկա սահմանադրաիրավական վեճը դիտարկել նաև գործառույթ – ինստիտուտ – իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության ապահովման տեսանկյունից:

Այսպես, նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի շրջանակներում իրականացվում է օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում խախտված իրավունքի վերականգնման գործառույթ, որն ունի իր ուրույն խնդիրներն ու նպատակները: Այս գործառույթի արդյունավետ իրականացումը կարող է ապահովվել հաշվի առնելով դրա բովանդակությամբ, խնդիրներով ու նպատակներով պայմանավորված առանձնահատկությունները, բացառելով հակասահմանադրական նորմ բովանդակող վերանայվող դատական ակտն ուժի մեջ թողնելու հնարավորությունը:

....

11. Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական դատարանն իր մի քանի որոշումներում արձանագրել է Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման անարդյունավետությունը, այնուամենայնիվ, այդ ինստիտուտը շարունակում է մնալ անկատար: Նշված հանգամանքը նկատի ունենալով՝ սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում ընդգծել նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ողջ մեթոդաբանության հիմնավոր վերարժևորման անհրաժեշտությունը՝ գտնելով, որ այդ ինստիտուտի իրավակարգավորման մեթոդաբանությունը պետք է խարսխվի պետության՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան պաշտպանելու պարտավորության հենքի վրա:

Անհատական սահմանադրական գանգատի հիմքում ընկած են անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գաղափարն ու նպատակը: Այս նպատակի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանավորված անհատական սահմանադրական գանգատի այս կամ այն մոդելի ընտրությամբ և առանձնահատկություններով՝ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների հիման վրա՝ խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման մեխանիզմները տարբեր են: ....

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի վերանայման արդյունավետ ինստիտուտի գոյությունը ևս պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ պետությունը պետք է ապահովի խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: Պետության նման պարտավորության կատարումն ապահովելու բավականին արդյունավետ միջոց է դատական ակտերի վերանայումն իրավունքի ուժով: Այս մեթոդաբանությունն է ընկած, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման հիմքում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան նշված մեթոդաբանությունը հաշվի առնելու ուղղությամբ:

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական պրակտիկայում անհրաժեշտ տարբերակում պետք է դրվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 և 204.33–րդ հոդվածներով նախատեսված իրավապայմանների միջև: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32–րդ հոդվածը նոր երևան եկած հանգամանքների դեպքում դատական ակտի վերանայման հիմքերի մեջ պարտադիր իրավապայման է դիտարկում նաև այն, որ բողոք ներկայացրած անձը պարտավոր է ապացուցել, որ «....այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն»: 204.33–րդ հոդվածը, սակայն, նոր հանգամանքի առկայության հիմնավորման որևէ իրավապայման չի առաջադրում, բացի ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան ակտերի առկայությունից: Դա անհրաժեշտ ու բավարար պայման է գործի նորոգման համար: Այլ հարց է, որ նորոգումից հետո ըստ էության **նորոգված գործի քննության շրջանակներում իրավասու դատարանը պետք է որոշի, թե որքանով է Սահմանադրությանը հակասող նորմի կիրառումն ազդել քննության առարկա գործի ելքի վրա և ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները:** Դրա փոխարեն պարզապես արգելափակվում է անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքը:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

11. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, մասնավորապես, 14–րդ հոդվածի 10–րդ կետը, 17, 18, 19, 1058, 1063, 1064, 1075–րդ հոդվածները սահմանում են քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները և այդ եղանակների դրսևորման ձևերը, ինչպես նաև պետության պատասխանատվությունը: Նշված հոդվածների ուսումնասիրությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, որի խնդիրն է, ի թիվս այլնի, սահմանել քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները, ինչպես նաև պատճառված վնասի դիմաց հատուցման եղանակներն ու միջոցները, բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտ չի նախատեսել: Քրեական դատավարության օրենսգրքի 67–րդ հոդվածի վիճարկվող 3–րդ մասի խնդիրը չէ նախատեսել արդարացվածին պատճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտ: Այն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի խնդիրն է, հետևաբար՝ դուրս է տվյալ գործով քննության առարկայի շրջանակից:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

6. .... ՄԱԿ–ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29–ին ընդունված՝ «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձևի «Ա» բաժնի 2–րդ կետում բացահայտված է «տուժող»–ի, որպես հանցագործության զոհի, հասկացության միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործության զոհ է (են) համարվում այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով: Այդպիսով, անօրինական գործողությունների՝ հանցագործության և իշխանության չարաշահման արդյունքում

վնաս կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են և նրանց նկատմամբ պահանջվում է համարժեք վերաբերմունք:

ՍԴՈ–1121, 5 նոյեմբերի, 2013 թ.

6. Վերը նշված հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը վկայում է այն մասին, որ բարոյական վնասը և բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը բխում են մարդու իրավունքների պաշտպանության հարցում որդեգրված սահմանադրաիրավական մոտեցումներից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը: Սահմանադրության 16-րդ հոդվածը, իր հերթին, երաշխավորում է անձի անձնական ազատությունն ու անձեռնմխելիությունը: Նշված հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման»: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ ազատությունից ապօրինի զրկելու կամ ապօրինի խուզարկության դեպքում անձին պատճառված վնասը չի կարող մեխանիկորեն հանգեցվել սոսկ կրած ֆիզիկական կամ նյութական վնասի փոխհատուցմանը, քանզի տվյալ դեպքում տուժած անձին տրամադրված փոխհատուցումը համարժեք չի լինի վերջինիս կրած հոգեկան տառապանքներին: Տվյալ համատեքստում անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի կանոնակարգումներին, որով սահմանվում է, որ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի», սահմանադրական դատարանը գտնում է, որ խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը չեն կարող չուղեկցվել հոգեկան և բարոյական տառապանքների պատճառմամբ, որոնք կարող են նույնիսկ ավելին լինել, քան դրանց հետևանքով պատճառված հնարավոր ֆիզիկական (մարմնական) կամ նյութական վնասը, և առանց որոնց ողջամիտ և արդարացի փոխհատուցման հնարավոր չէ ամբողջությամբ հատուցել անձին և նրա արժանապատվությանը պատճառված վնասը: Հակառակ դեպքում հնարավոր չի լինի երաշխավորել Սահմանադրությամբ որպես բարձրագույն արժեքներ հռչակված մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

7. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության մի շարք նորմատիվ իրավական ակտերով նախատեսված են համապատասխան դրույթներ՝ պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման վերաբերյալ: Այսպես, ՀՀ տարբեր նորմատիվ իրավական ակտերում առկա է «բարոյական վնաս» եզրույթը: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 268-րդ հոդվածով սահմանված է, որ «Տուժող համարվում է այն անձը, որին վարչական իրավախախտման հետևանքով բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս է պատճառվել»: «Բարոյական վնաս» եզրույթն ամրագրված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներում, մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 45-րդ կետում, որում «վնաս» եզրույթը դիտարկվում է որպես «դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնաս»: Նույն օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով «տուժող» եզրույթի հասկացությունը, ամրագրում է, որ «Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմի-

ջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը»: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը և կարգը» վերտառությամբ 104-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով»:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող 17-րդ հոդվածի 2-րդ մասը վնասների շարքին չի դասում բարոյական վնասը, այդուհանդերձ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին և 8-րդ կետերում նախատեսվում է անձի արժանապատվությանը, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի դրամական հատուցման հնարավորությունը. համապատասխանաբար՝ վիրավորանքի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի, իսկ զրպարտության դեպքում՝ 2000-ապատիկի չափով: Ընդ որում, նույն հոդվածի 11-րդ կետով նախատեսված է, որ վիրավորանքի և զրպարտության դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը: Այն հանգամանքը, որ դատարանն անձի արժանապատվության, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցման չափը որոշելիս հաշվի չի առնում պատճառված գույքային վնասը, ուղղակիորեն վկայում է այն մասին, որ դիտարկվող կանոնակարգման նպատակը գույքային վնասը հատուցելը չէ: Ընդհակառակը, այն կոչված է կանոնակարգելու անձին պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման հնարավորությունները:

.... Ելնելով վերը նշվածից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են բարոյական վնասի նյութական փոխհատուցման բազմաթիվ դեպքեր, սակայն նշված ինստիտուտն ամբողջական կանոնակարգման ենթարկված չէ, ինչը թույլ չի տալիս օրենսդրական ներդաշնակություն ապահովել նման վնասի նյութական փոխհատուցման դեպքերի, հիմքերի և կարգի կանոնակարգման հարցում, ինչը, իր հերթին, խոչընդոտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությանը: Ավելին, նշված իրավիճակը չի կարող համահունչ համարվել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթին, ըստ որի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

8. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է Հայաստանի Հանրապետության պարտավորությունը՝ ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Իսկ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Խնդրո առարկա հարցին անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ մասերի տեսանկյունից՝ սահմանադրական դատարանն արձանագ-

րում է, որ Հայաստանի Հանրապետությունում անձին պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման ոչ ներդաշնակ կանոնակարգումները խոչընդոտում են Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ իրականացմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման իրավունքը բխում է թե՛ ՀՀ Սահմանադրության և ՀՀ մի շարք օրենսդրական ակտերի դրույթների բովանդակությունից և թե՛ ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից արձանագրություններով) դրույթներից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայից:

.... Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ օրենսդրությամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտի թերի կանոնակարգումը համահունչ չէ նաև ՀՀ կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին:

9. Միաժամանակ, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և դրանցով պայմանավորված՝ բարոյական վնասի ինստիտուտին առնչվող կանոնակարգումների լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ընդհանուր չափանիշներն ու կարգը պետք է օրենսդրորեն հստակ ամրագրվեն, որպեսզի երաշխավորվի համապատասխան դեպքերում և կարգով անձին պատճառված բարոյական վնասի ողջամիտ և արդարացի փոխհատուցումը, ապահովվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը և չխոչընդոտվի Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Սահմանադրական դատարանն ընդունում է ի գիտություն, որ նշված հանգամանքները հաշվի առնելով՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախապատրաստվում է ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու և, մասնավորապես, Հայաստանի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոնշյալ վճիռների կատարումը երաշխավորելու համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅՈՒՆ, ԼԵԳԻՏԻՄ ԱԿՆԿԱԼԻՔ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–630, 18 ապրիլի, 2006 թ.

11. .... Տվյալ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը:

ՍԴՈ–723, 15 հունվարի, 2008 թ.

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք

ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը: Մինչդեռ, օրենքի վիճարկվող նորմն առնչվել է բազմաթիվ մարդկանց իրավունքներին:

ՍԴՈ–731, 29 հունվարի, 2008 թ.

10. ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:

ՍԴՈ–753, 13 մայիսի, 2008 թ.

9. .... Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը:

Հաշվի առնելով միևնույն սահմանափակ ռեսուրսի, այն է՝ ռադիոհաճախականությունների օգտագործման իրավակարգավորման հակասականությունը, օրենքի վիճարկվող դրույթի անորոշությունը, այդ անորոշությունից բխող՝ օրենքի դրույթի սխալ մեկնաբանության վրա հիմնված իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը տնտեսավարող սուբյեկտի համար հստակ կանխատեսելի չի դարձնում եթերավճարի գանձման նպատակը, իրավական մեխանիզմները, եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, այդ եթերավճարը վճարելու՝ տնտեսավարող սուբյեկտի պարտականության իրավաչափությունը:

ՍԴՈ-780, 25 նոյեմբերի, 2008 թ.

7. .... Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաքննիչ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի անչությամբ այն նույն հիմքերի և ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչական դատարանի ակտը վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ՝ վճռաբեկ բողոքի թույլատրելիության հիմքերը, ինչպես նաև վճռաբեկ վարույթի կարգն այդ գործերով, պետք է սահմանվեն վարչական դատավարության օրենսգրքով՝ հղումներ պարունակելով այլ օրենքներին միայն այն դեպքերում, երբ դրանք դուրս չեն գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից: Նման մոտեցումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաև խախտում է իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստազրկվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու և դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

ՍԴՈ-832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

8. .... Վիճարկվող իրավադրույթը որևէ հակասության մեջ չի մտնում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի հետ, քանի որ այն որպես ընդհանուր օրենքի նորմ չի կարող կիրառվել ինքնուրույն՝ առանց առանձին հարկատեսակներին վերաբերող օրենքների և հարկային արտոնություններից օգտվելու կարգը կոնկրետացնող ենթաօրենսդրական նորմերի: Իսկ այդ ակտերի համատեքստում օրենքի այդ դրույթը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին: Չի կարող ընդհանուր օրենքը բոլոր բնագավառների և բոլոր հարկատեսակների համար սահմանել այն փաստաթղթերի տեսակները և ցանկը, որոնք անհրաժեշտ է ներկայացնել՝ բավարար է, որ այն նախատեսում է նման պարտականություն, որը պետք է կատարվի այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգով: Իսկ հատուկ օրենքների դրույթներ սահմանադրական դատարան ներկայացված դիմումում չեն վիճարկվում և սույն գործի շրջանակներում քննության առարկա չեն կարող դառնալ:

ՍԴՈ-834, 20 հոկտեմբերի, 2009 թ.

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենքի 25 հոդվածի նպատակը չէր սահմանել փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաների իրավական կարգավիճակը: Օրենսդրական նման քաղաքականությունն իրավաչափ է, քանի որ փախստականի կարգավիճակ ստացած անձանցից սերված լինելը, Հայաստանի Հանրապետությունում ծնվելու պարագայում, ինքնին չի

կարող առաջացնել փախստականի կարգավիճակ ստանալու պարտադիր պայման, քանի որ նման պայմանը չի տեղավորվում «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի Ժնևի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա. բաժնով և «Փախստականների մասին» ՀՕ-288 ՀՀ օրենքով սահմանված՝ «փախստական» հասկացության շրջանակներում:

.... Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 25 հոդվածը չի առաջացնում իրավական անորոշություն, այլ, ընդհակառակն, դրա բացակայությունն անարդյունավետ կդարձներ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթված անձանց կարգավիճակի հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը:

ՍԴՈ-851, 14 հունվարի, 2010 թ.

7. .... Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախախտումների և վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջև էական տարբերությունների բացակայության պայմաններում անձը զրկվում է իր վարքագծի իրավական հետևանքները կանխատեսելու հնարավորությունից, ինչը չի բխում օրենքի կանխատեսելիության և որոշակիության սկզբունքներից:

.... Անդրադառնալով դիմողի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձևակերպման անորոշության վերաբերյալ փաստարկին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ՝ անհրաժեշտ է պարզաբանել վիճարկվող նորմում նշված կարգադրության բնույթը՝ քրեադատավարական մյուս նորմերի համադրությամբ:

ՍԴՈ-864, 5 փետրվարի, 2010 թ.

6. .... Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործուն կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնատար և այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ:

ՍԴՈ–866, 23 փետրվարի, 2010 թ.

3. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ, ինչպես վկայում է դատական պրակտիկան, հաճախ օրենքի այս կամ այն դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներից կամ իրավակարգավորման ընդհանուր անհրաժեշտությունից բխող օրենսդրական փոփոխությունների և լրացումների հետ կապված իրավատեխնիկական խնդիրների (այդ փոփոխությունները, լրացումները օրենքում ներառելու (ինկորպորացնելու)) ոչ լիարժեք լուծումը հանգեցնում է ոչ թե փոփոխված (լրացված) օրենքի, այլ դրանում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ օրենքի կիրառմանը, որը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից և իրավակիրառական պրակտիկայում առաջացնում է անհստակություն:

ՍԴՈ–896, 15 հունիսի, 2010 թ.

7. .... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի առաջին մասի 1–ին կետով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394–րդ հոդվածի առաջին մասի 1–ին կետով նախատեսված լիազորության համադրված վերլուծությունը վկայում է, որ վերաքննիչ ատյանի դատարաններին նման լիազորություն վերապահելը նպատակ է հետապնդել անհրաժեշտության դեպքում երաշխավորել առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի պատճառաբանվածությունը և դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաև ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

5. Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված վերոհիշյալ մոտեցումներից է նաև ելնում՝ գնահատելու համար դիմող կողմի փաստարկները վիճարկվող նորմերի **իրավական անորոշության** առնչությամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների առանձնահատկություններով (գնահատման ենթակա հանգամանքների բազմազանությամբ) է պայմանավորված հայեցողական որոշակի այն ազատությունը, որն օրենսդիրը տրամադրել է դատարաններին՝ վիճարկվող հոդվածի նորմերի կիրառմամբ որոշումներ կայացնելիս: Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ դատական հայեցողությունը՝ մանավանդ այնպիսի դեպքերում, երբ քննության առարկա է ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության սահմանափակման հարցը, **պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի նորմերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան մեկնաբանությամբ կիրառելու պահանջով, այլև միջազգային պրակտիկայով, և հատկապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով:**

ՍԴՈ–1000, 29 նոյեմբերի, 2011 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ քննության առարկա իրավադրույթների սահմանադրականության վերաբերյալ վեճը՝ որպես այդպիսին, բացակայում է դիմող և պատասխանող կողմերի միջև, որոնք գրեթե նույն փաստարկներով արձանագրում են օրենքի նշված դրույթների անհամապատասխանությունը Սահմանադրությանը: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործի քննությունը ոչ միայն էական նշանակություն կունենա ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու իրավական հստակության ապահովման տեսանկյունից, այլև դատական պրակտիկայի համար առավել մատչելի կդարձնի սահմանադրական նորմերի անմիջական կիրառման ինստիտուտի էությունը:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-6-րդ մասերի, ինչպես նաև 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն **ընդհանուր կանոն է,** իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ **բացառություն ընդհանուր կանոնից**: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից: Նշված ընդհանուր կանոնին համապատասխան՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն արգելում են արարքի պատժելիություն սահմանող և պատիժը խստացնող օրենքի հետադարձ ուժով գործողությունը: Նույն հոդվածի 6-րդ մասն արգելում է պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքի հետադարձ ուժով գործողությունը: Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հետադարձ ուժ չունեն նաև անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներն ու այլ իրավական ակտերը:

ՍԴՈ-1099, 31 մայիսի, 2013 թ.

6. .... Ներկա պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում **ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ:** Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաև այլ հոդվածներում (մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մաս), ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին:

ՍԴՈ-1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

10. .... Սահմանադրական նորմը վերաբերում է վերջնական դատական ակտին, այլ ոչ թե բողոքարկման ընթացքում վերջին ատյանի դատարանի կողմից ընդունված ցանկացած ակտի: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածը սահմանում է, որ **«Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից»:** Սահմանադրաիրավական բովանդակությամբ դատարանի վերջնական ակտն այն ակտն է, որը գործն ըստ էության լուծել է, օրինական ձևով ուժի մեջ է մտել և անձի համար առաջացրել է համարժեք իրավական հետևանք: Նման մոտեցումից է բխում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.11-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի. «Սույն օրենսգրքի իմաստով՝ **վերջնական** դատական ակտ է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ

քաղաքացիական դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը և շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ դատական պրակտիկայում առկա շփոթը հաղթահարելու համար համանման ակտերին ներկայացվող պահանջներն առավել հստակ պետք է շարադրվեն օրենսդրության մեջ՝ լիովին համապատասխանեցնելով իրավական որոշակիության սկզբունքին:

ՍԴՈ–1142, 2 ապրիլի, 2014 թ.

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32–րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ նվազագույն աշխատավարձի դեպքում պարտադիր կուտակային կենսաթոշակի վճարման խնդիրն օրենսդրական համարժեք լուծում չի ստացել: Հաշվի չի առնվել նաև «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, որի 4–րդ հոդվածը հստակ սահմանում է, որ կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի սահմանումը նպատակ ունի, մասնավորապես, հիմնավորել սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը, որոշել չհարկվող եկամտի չափը: Սակայն վերջինս, ինչպես փաստվեց, համաձայն «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ այլևս գոյություն չունի:

13. .... Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ ելնելով քննության առարկա իրավահարաբերությունների բնույթից ու առանձնահատկություններից, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ պահանջներն ու սահմանափակումները՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան, նույնպես պետք է քննության առարկա օրենքի կանոնակարգման առարկա լինեն: Ուստի վերանայման անհրաժեշտություն ունի նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25–րդ հոդվածը:

ՍԴՈ–1148, 18 ապրիլի, 2014 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6–րդ հոդվածի 1–ին մասում՝ ընդհուպ անհրաժեշտ կրեդիտների առկայության պարագայում, իրավակիրառ պրակտիկայի կողմից տրվող մեկնաբանությամբ, գործնականում արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական որակավորում ունեցող անձի (մագիստրոսի)՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում առկա՝ վերոշարադրյալ իրավական թերի ու համակարգային առումով անկատար լուծումներով: Դրա հետևանքով, մասնավորապես, պետական միասնական չափորոշիչների տեսանկյունից չի որոշակիացվել կապը բարձրագույն մասնագիտական համարժեք որակավորման ու դրա իրավական փաստը վկայող պետական նմուշի հավաստագրի (դիպլոմի) միջև: Նման վիճակը, իր հերթին, հան-

գեցրել է նրան, որ, ինչպես նշվեց, վեճի առարկա իրավադրույթը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է, չի համապատասխանում իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին, ինչպես նաև չի ապահովում իրավունքի էության անձեռնմխելիության սահմանադրաիրավական երաշխիքի իրացումը:

ՍԴՈ– 1234, 20 հոկտեմբերի, 2015 թ.

7. .... Հետևաբար, **տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է համարվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր հանցագործությունը կանխելու կամ ծանր հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար:**

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, խոսքի ազատության իրավունքին անմիջականորեն առնչվող՝ տեղեկատվության միջոցների ազատության սահմանափակման համաչափության հիմքը, որը կարող է հանգեցնել տեղեկատվության աղբյուրի բացահայտմանը, գլխավորապես վերոնշյալ երեք իրավապայմաններն են (դրանցից առնվազն մեկի առկայությունը), ու դրանցից ցանկացած էական շեղում իրավաչափ համարվել չի կարող:

.... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության և մարդու հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքների պահանջներից չի բխում դատարանի այնպիսի եզրահանգումը, համաձայն որի՝ «Աղբյուրի բացահայտման իրավաչափ նպատակը գերակշռում է հասարակական շահին», նկատի ունենալով, որ հրապարակումները վերաբերում են հանրային ճանաչում ունեցող մարդկանց և նպատակը հասարակության մոտ առկա կասկածների փարատումն է (ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 26.06.2014 թ. ԵԿԴ/0032/08/14 որոշում, էջ 5, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22 սեպտեմբերի 2014 թ. որոշում, էջեր 20–21):

ՍԴՈ–1265, 19 ապրիլի, 2016 թ.

6. .... Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի լույսի ներքո վեճի առարկա դրույթը, այն է՝ «սահմանված կարգով հայց հարուցելը»՝ որպես հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման պայման, իր բովանդակությամբ որոշակի է, հնարավորություն է տալիս անձին հստակ ընկալել օրենսդրի կողմից սահմանված պահանջը և կանխատեսել սահմանված կարգով հայց չհարուցելու հետևանքները հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման առնչությամբ:

ՍԴՈ–1270, 3 մայիսի, 2016 թ.

7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների**՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՈ–630, ՍԴՈ–1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես ի-

րենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԴՈ–1119, 8 հոկտեմբերի, 2013 թ.

5. .... Սահմանադրության 18–րդ հոդվածը յուրաքանչյուրին տալիս է, մասնավորապես, պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, որին ուղղակիորեն համապատասխանում է պետության պարտականությունն ինչպես օրենսդրական մակարդակում ամրագրել, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների առկայությունը: Այսինքն՝ օրենսդրական մակարդակում չպետք է սահմանվեն այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք առաջին հայացքից հանդես են գալիս որպես երաշխիքներ տվյալ իրավական կառուցակարգի իրացման համար, սակայն կարգավորումների մանրամասներում փաստացիորեն իմաստազրկում են կամ սահմանափակում այդ իրավական կառուցակարգերը:

.... Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ նշված իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձևական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

.... Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունն այդպիսի մասնակցության վերաբերյալ կասկածյալի կամ մեղադրյալի պահանջի առկայությամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթը ևս, ի խախտումն Սահմանադրության 43–րդ հոդվածի 1–ին մասի դրույթների, հանդես է գալիս որպես պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող և դրա արդյունքում՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթ: Ավելին, այդպիսի սահմանափակումը ևս չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

ՍԴՈ–1176, 2 դեկտեմբերի, 2014 թ.

6. .... Սահմանադրական դատարանը միաժամանակ փաստում է, որ, առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով, մաքսային մարմինը, հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ կապված անհամաձայնության դեպքում, պարտավոր է օրենսգրքով սահմանված ժամկետներում դրա վերաբերյալ կայացնել պատճառաբանված եզրակացություն և/կամ որոշում, **և անկախ հայտարարատուի գրավոր կամ բանավոր պահանջից՝** պետք է հայտարարատուին տրամադրի նշյալ եզրակացությունը և/կամ որոշումը՝ վերջինիս կողմից Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու համար: **Իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրաիրավական առումով իրավաչափ նման մոտեցմամբ:**

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–563, 6 մայիսի, 2005 թ.

7. Իրավական, ժողովրդավարական պետության համար միաժամանակ կարևոր է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերն իրավունքի գերակայության երաշխավորման, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունններն ինքնուրույն և անկախաբար պաշտպանելու հարցում: Այս սկզբունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածում:

ՍԴՈ–690, 9 ապրիլի, 2007 թ.

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 2–րդ կետի դրույթը՝ 10–օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 2–րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

ՍԴՈ–731, 29 հունվարի, 2008 թ.

10. ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:

ՍԴՈ–752, 22 ապրիլի, 2008 թ.

7. .... Ելնելով դիմողի առաջադրած հարցադրումներից, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի հիման վրա ի պաշտոնե պարզելով գործի հանգամանքները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությունը նախատեսել է բոլոր հնարավոր լուծումները քննության առարկա հարցով դիմողի սահմանադրական իրավունքների պաշտպանության համար: Խնդիրը կայանում է նրանում, թե այդ հնարավորություններն ինչպես են իրացվել դատական պրակտիկայում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործով դա չի արվել հօգուտ իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման, միաժամանակ արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրությամբ դատական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսանալ չեն կարող:

ՍԴՈ–943, 25 փետրվարի, 2011 թ.

11. .... Այդուհանդերձ, անվերապահորեն ընդունելով, որ եթե օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից **որևէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**, ապա սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով խնդիրն այլ լուծում ունի:

ՍԴՈ–984, 15 հուլիսի, 2011 թ.

8. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտը վերանայման արդյունքում ուժի մեջ թողնելը չի երաշխավորում դատական ակտերի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորություն՝ թույլ չտալով նաև դատական ակտերի վերանայման նպատակի ու խնդիրների իրացում, և միաժամանակ արգելափակելով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Տվյալ իրավիճակում չի ապահովվում նաև իրավունքի գերակայության, հետևաբար՝ և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը:

ՍԴՈ–1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված** և **համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

Տվյալ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու հստակ կանոնների պահպանումը՝ նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմանների երաշխավորման նպատակով: Դա առավել ևս կարևոր է այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների խստացմանը:

ՍԴՈ–1099, 31 մայիսի, 2013 թ.

6. .... Ներկա պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում **ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ:** Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաև այլ հոդվածներում (մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մաս), ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին:

ՍԴՈ–1102, 28 հունիսի, 2013 թ.

9. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա խնդրի օրենսդրական կարգավորման մակարդակում պետք է հաշվի առնվեն նաև միջազգային պրակտիկայում հաստատագրված վերոհիշյալ հայեցակարգային մոտեցումները՝ որպես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի դրույթներից անմիջականորեն բխող պահանջներ:

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

7. Նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանը, ինչպես նշվեց, բազմիցս անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով գործի քննության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը, կարևոր է համարում նաև 2005 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո մեր երկրում անհատական դիմումների ներդրման իրավական պրակտիկային անդրադարձը՝ սույն գործով առաջ քաշված խնդիրներին ամբողջական ու հստակ պատասխան տալու համար: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի ընդունած վերջին տարիների թվով շուրջ 150 որոշումների համակողմանի ուսումնասիրությունից հետևում է, որ քննած գործերի 92.3 տոկոսի դեպքում պարզապես մերժվել է նոր հանգամանքների հիմքով գործի քննությունը և բողոքները վերադարձվել են: Միայն 7.7 տոկոսի դեպքում է նոր հանգամանքների հիմքով բողոքները բավարարվել՝ դրանց քննության ընդունումը մերժելու վերաբերյալ նախկինում կայացված դատական ակտերը վերանայելու գործընթաց սկսելու առումով: Սակայն բոլոր դեպքերում որևէ գործով վերջնական դատական ակտը չի վերանայվել: Դա այն դեպքում, երբ սույն գործով վեճի առարկա հոդվածով (2-րդ մաս) հստակ սահմանված է, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում միայն ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ դատարանը կարող է **վերանայված դատական ակտի** եզրափակիչ մասը չփոփոխել: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ համատեքստում խոսքը վերաբերում է միայն **վերանայված դատական ակտին, ինչին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում դատական պրակտիկայում:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ուսումնասիրված որոշումների կեսից ավելին Սահմանադրության գերակայության երաշխավորման առումով խնդրահարույց է և ձևավորել է իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքին ոչ համարժեք իրավակիրառական պրակտիկա, ուստի դրանց՝ իրավակիրառական պրակտիկայի գնահատման տեսանկյունից, առանձին անդրադարձ է անհրաժեշտ: ....

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլև պարտականություն: Առանց դրա, մի կողմից՝ նորմի սահմանադրականության վերաբերյալ մտահոգությունը չի կարող փարատվել հայեցողական մոտեցմամբ, որովհետև այն պահանջում է «գնահատման» դատավարական համապատասխան ընթացակարգ և դրա իրականացման սահմանադրական լիազորություն, մյուս կողմից՝ մարդկանց իրավունքները պաշտպանելու փոխարեն հնարավոր հակասահմանադրական նորմի կիրառմամբ կխախտվեն այդ իրավունքները: Դատական պրակտիկան նաև ցույց է տալիս, որ դրանց հետագա վերականգնումը դառնում է ավելի դժվար ու հաճախ անհնարին՝ հանգեցնելով արդարադատության նկատմամբ վստահության կորստի: Ուստի խնդիրը ոչ միայն նոր հանգամանքների ինստիտուտի գործունակության ու արդյունավետության հետագա բարձրացումն է, այլև, առաջնորդվելով իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի անշեղ իրացման պահանջով, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետով ՀՀ դատարաններին վերապահված հնարավորության խելամիտ իրացումը: Իսկ դա կարող է երաշխավորվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք: Այնինչ «գնահատումը» ենթադրում է համապատասխան դատավարական ընթացակարգ ու դրա իրականացման համարժեք լիազորություն: ....

ՍԴՈ-1148, 18 ապրիլի, 2014 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասում՝ ընդհուպ անհրաժեշտ կրեդիտների առկայության պարագայում, իրավակիրառ պրակտիկայի կողմից տրվող մեկնաբանությամբ, գործնականում արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական որակավորում ունեցող անձի (մագիստրոսի)՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում առկա՝ վերոշարադրյալ իրավական թերի ու համակարգային առումով անկատար լուծումներով: Դրա հետևանքով, մասնավորապես, պետական միասնական չափորոշիչների տեսանկյունից չի որոշակիացվել կապը բարձրագույն մասնագիտական համարժեք որակավորման ու դրա իրավական փաստը վկայող պետական նմուշի հավաստագրի (դիպլոմի) միջև: Նման վիճակը, իր հերթին, հանգեցրել է նրան, որ, ինչպես նշվեց, վեճի առարկա իրավադրույթը մարդու իրավունքների

պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է, չի համապատասխանում իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին, ինչպես նաև չի ապահովում իրավունքի էության անձեռնմխելիության սահմանադրաիրավական երաշխիքի իրացումը:

ՍԴՈ–1176, 2 դեկտեմբերի, 2014 թ.

6. .... Սահմանադրական դատարանը միաժամանակ փաստում է, որ, առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով, մաքսային մարմինը, հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ կապված անհամաձայնության դեպքում, պարտավոր է օրենսգրքով սահմանված ժամկետներում դրա վերաբերյալ կայացնել պատճառաբանված եզրակացություն և/կամ որոշում, **և անկախ հայտարարատուի գրավոր կամ բանավոր պահանջից՝** պետք է հայտարարատուին տրամադրի նշյալ եզրակացությունը և/կամ որոշումը՝ վերջինիս կողմից Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու համար: **Իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրաիրավական առումով իրավաչափ նման մոտեցմամբ:**

ՍԴՈ–1220, 16 հունիսի, 2015 թ.

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հաշվի առնելով ՍԴՈ–1192 և ՍԴՈ–1196 որոշումներում քննության առարկա դարձած դրույթների (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414[1]–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ կետի) և սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող դրույթների բովանդակային համարժեքությունը, հիմք է ընդունվում նաև հիշյալ որոշումներում քննության առարկա դարձած դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած մյուս իրավական դիրքորոշումները: Դա վերաբերում է հատկապես այն սկզբունքային մոտեցմանը, համաձայն որի՝ առաջադրված իրավաչափ նպատակը պետք է իրացվի իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման շրջանակներում, ինչը ենթադրում է, որ օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից՝ դրա արդյունքում չապահովվելով անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը: Այս համատեքստում անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածը միանշանակ ճանաչում է յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, ինչն օրենքով նախատեսված դեպքերում ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականն անդամ երկրներին նույնպես առաջարկում է բացառել «տնտեսապես վատ վիճակում գտնվող անձանց» դատարանի մատչելիության իրավունքի հնարավոր արգելափակումը:

ՍԴՈ– 1224, 7 հուլիսի, 2015 թ.

16. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության և իրավունքի գերակայության սահմանադրաիրավական սկզբունքները ոչ միայն չեն բացառում, այլև ենթադրում են, որ որոշակի իրավունքների իրացման համար օրենսդիրը նախատեսի առանձին իրավապայմաններ, տվյալ դեպքում՝ ժամկետներ: Իրավունքի իրացման համար որոշակի ժամկետ նախատեսելու, այդ իրավունքից օգտվելու կարգ սահմանելու նպատակահարմարությունը գտնվում է օրենսդրի իրավասության շրջանակներում, և բարձրացված հիմնահարցը որևէ առնչություն չունի վիճարկվող դրույթների սահմանադրականության հետ:

ՍԴՈ-1270, 3 մայիսի, 2016 թ.

7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի **գերակայությունը**, որի ապահովման գլխավոր պահանջներից են **իրավական որոշակիության սկզբունքը**, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի **օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների**՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՑՈՒՄԸ

ՍԴՈ- 980, 21 հունիսի, 2011 թ.

5. Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասը դիտարկել օրենսգրքի 11-րդ, 289-291-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1227-րդ հոդվածների հետ համադրության մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը վերաբերում է քաղաքացիական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու իրավական հնարավորությանը: Այս կապակցությամբ, հաշվի առնելով այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, հասարակական հարաբերությունների կայունության ապահովման անհրաժեշտությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավունքների իրականացման հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը, վտանգի տակ դրվի հասարակական հարաբերությունների կայունությունը: Հետևաբար՝ իրավունքների իրականացման հայեցողությունը չի ենթադրում իրավունքների չկարգավորված, անկանոն իրականացում: Այն ենթադրում է տվյալ իրավունքն իրականացնելու կամ չիրականացնելու իրավական հնարավորությունների միջև ընտրություն կատարելու իրավունք, որի իրականացումը կարող է տեղի ունենալ բացառապես օրենքով սահմանված կարգի շրջանակներում: Ընդհակառակը, իրավունքների՝ օրենքով սահմանված կարգից դուրս ցանկացած իրականացման հնարավորություն կխաթարի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը՝ միաժամանակ վտանգի տակ դնելով հասարակական հարաբերությունների կայունությունը: Այդ է պատճառը, որ, առաջնորդվելով վերը նշված իրավաչափ նպատակներով, այն է՝ այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի երաշխավորումը, հասարակական հարաբերությունների կայունության ապահովումը, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել է բացառություն՝ թույլատրելով սուբյեկտիվ իրավունքներից հրաժարվելու հետևանքով օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքների **դադարում:** Տվյալ դեպքում, ի թիվս այլնի, որպես վերը նշված դեպք է հանդիսանում օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված դեպքը՝ ժառանգությունից հրաժարվելը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ժառանգության ընդունումը կամ ժառանգությունից հրաժարվելն առնչվում են մյուս ժառանգների կամ ժառանգություն ստանալու իրավունքի օրինական ակնկալիք ունեցող այլ անձանց իրավունքներին և պարտականություններին, հետևաբար, վերը նշված իրավաչափ նպատակներից ելնելով, օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ, օրենսգրքի 1230-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել է բացառություն՝ արգելելով ժառանգությունից հրաժարվելը վերացնելու կամ հետ կանչելու հնարավորությունը՝ միաժամանակ **դադարած** համարելով տվյալ անձի՝ ժառանգություն ստանալու սուբյեկտիվ իրավունքը:

ՍԴՈ–1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված** և **համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

10. ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Սահմանադրության 18–րդ հոդվածի 1–ին մասի ուժով թե՛ դատական, թե՛ արտադատարանական կարգով իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանությունը պետք է լինի արդյունավետ:

.... Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարացվածին պատճառված վնասի հատուցման արտադատարանական կարգ չնախատեսելն այն դեպքում, երբ տվյալ իրավունքի իրացման և պաշտպանության համար նախատեսված է դատական կարգ, սահմանադրականության տեսանկյունից իրավաչափ է:

ՍԴՈ–1038, 18 հուլիսի, 2012 թ.

7. .... **ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքերի վերաբերելի նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը, որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման միակ հիմք սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականությունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի, արդյունավետ պաշտպանության հնարավորությունը:** Տվյալ դեպքում առկա է իրավունքի պաշտպանության խնդիր և հարցի նկատմամբ չի կարող ձևական մոտեցում դրսևորվել: ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ **յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աշխատանքային պարտականությունների կատարման առկայության՝ հիմնավոր ապացույցներով փաստումը հիմք է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձին իր իրավունքների, այդ թվում՝ համարժեք հատուցման պահանջի իրավունքի պաշտպանություն տրամադրելու համար:** Սույն իրավական դիրքորոշումից շեղումը կհանգեցնի գործատուի պատասխանատվության անտեսման և աշխատողի իրավունքների ոտնահարման, քանի որ կատարած **փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հատուցում վճարելուց հրաժարվելը նաև անձի սեփականության իրավունքի ոտնահարում է:**

ՍԴՈ–1148, 18 ապրիլի, 2014 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

ՍԴՈ–1271, 10 մայիսի, 2016 թ.

7. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Սահմանադրական հիշյալ դրույթը հանրային իշխանությունների վրա դնում է երկու հստակ պարտականություն՝ **հարգել**, մասնավորապես, ձեռնպահ մնալ որևէ անհարկի միջամտությունից, և **պաշտպանել**, այսինքն՝ որոշակի գործողությունների ամբողջության միջոցով երաշխավորել, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չխախտվեն կամ խախտվելու դեպքում՝ վերականգնվեն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գնահատելու համար, թե արդյոք հանրային իշխանությունը կատարել է նշված պարտականությունները, անհրաժեշտ է անդրադառնալ համապատասխան հիմնական իրավունքին կամ ազատությանն առնչվող սահմանադրական դրույթներին:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ–563, 6 մայիսի, 2005 թ.

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ըստ դիմող և պատասխանող կողմերի, վիճարկվող օրենսդրական դրույթի և օրենքի 10 հոդվածի 1-ին կետի և 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի միջև առկա հակասությունները ոչ միայն տեղիք են տալիս Պաշտպանի իրավասության տարաբնույթ մեկնաբանությանը, այլև չեն կանխորոշում վիճարկվող օրենսդրական դրույթում օգտագործվող «տեղեկություններ» եզրույթի բովանդակությունը: Սակայն վիճարկվող դրույթի և օրենքի 10 հոդվածի 1-ին կետի և 12 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համադրված վերլուծությունը հնարավորություն է տալիս հստակեցնելու և ճշգրտելու այդ եզրույթի բովանդակությունը և, հետևաբար, նաև դատարաններից տեղեկություններ պահանջելու՝ Մարդու իրավունքների պաշտպանի իրավասության շրջանակը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան»:

12. Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով եվրոպական երկրների մեծ մասի օրենսդրության մեջ ամրագրված Մարդու իրավունքների պաշտպանի՝ պետական մարմիններից տեղեկություններ պահանջելու և առաջարկներ ներկայացնելու իրավունքի իրացման պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները, արձանագրում է, որ առկա են հետևյալ ընդհանուր մոտեցումները.

Մարդու իրավունքների պաշտպանը քննության չի առնում այն գործերի հանգամանքները, որոնք դատավարության առարկա են հանդիսանում,

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը կանոնակարգող օրենքներն ուղղակիորեն չեն ամրագրում դատարաններից քննության մեջ գտնվող գործի հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու և առաջարկներ ներկայացնելու իրավունք,

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը կանոնակարգող օրենքները՝ ամրագրելով պաշտպանի՝ պետական մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքը, միաժամանակ հստակեցնում են դատարաններից տեղեկություններ պահանջելու սահմանները:

ՍԴՈ-906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

6. Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը: Ընդ որում, ՀՀ օրենսդրությունը սահմանում է այդ հնարավորության դրսևորման տարբեր ձևեր: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի չորրորդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Տվյալ դեպքում վկայակոչված գործառույթի միջոցով դատախազը ոչ միայն հանդես է գալիս հանրային շահերի, այլ նաև հանցագործության հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված նաև սահմանադրական արդարադատության բնագավառում, որտեղ, կոնկրետ վերահսկողությունից զատ, նախատեսված է նաև վերացական վերահսկողության ինստիտուտը, որի շրջանակներում ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, առավել ևս՝ առաջին մասի 8-րդ կետերում նշված սուբյեկտները, իրավական նորմերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելիս հանդես են գալիս ոչ միայն հանրային շահերի, այլ նաև տվյալ իրավանորմի կիրառման արդյունքում տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանը՝ «Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով»: Միաժամանակ, սահմանադրական արդարադատության բնագավառում գործում է նաև կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նկատառումներով այլ սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, որն իրացվում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ և 8-րդ կետերին համապատասխան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ-833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Հետևաբար, վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու միջոցով վերականգնման հնարավորությունը՝ վտանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի և թե՛ իր խախտված իրավունքները միջազգային ատյաններում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը:

11. .... ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 4-րդ մասում ամրագրված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու անձի սուբյեկտիվ իրավունքը՝ որպես այդ իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային-իրավական կարևոր միջոց: ՀՀ քրեական դատավարության վիճարկվող նորմի համատեքստում, անձի սահմանադրական այդ իրավունքն իրացվում է արդարադատական եղանակով, այսինքն՝ դատարան դիմելու միջոցով՝ հանդիսանալով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով երաշխավորված անձի իրավունքի դրսևորման առանձնահատուկ ձև և իրականացվում է Կոնվենցիայում (կից համապատասխան արձանագրություններով) սահմանված ընթացակարգով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ՍԴՈ-664, 7 նոյեմբերի, 2006 թ.

7. .... Նկատի ունենալով Հայաստանում դատավորների սահմանափակ թվաքանակը, ընտրական հանձնաժողովներում ընդգրկվող և չընդգրկվող դատավորների հարաբերակցության՝ ընտրական օրենսգրքով նախատեսվող տարբեր իրավիճակները, ընտրական վեճերի լուծման առանձնահատկություններն ու ժամկետային սահմանափակումները, ակնհայտ է դառնում, որ անխուսափելի է հակադրությունը, մի կողմից՝ անկախ ընտրական հանձնաժողովների ձևավորման և, մյուս կողմից՝ արդյունավետ ու անկողմնակալ արդարադատության իրականացման շահերի միջև: Այս առումով է, որ վտանգվում է նաև Սահմանադրության 19 հոդվածով ամրագրված իրավունքների ապահովումը:

ՍԴՈ-665, 16 նոյեմբերի, 2006 թ.

4. .... Երկրորդն ընդհանուր իրավասության դատարանների միջոցով ՀՀ իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության ստուգումն է, որն իրականացնում են ընդհանուր իրավասության դատարանները՝ որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ:

ՍԴՈ-673, 16 հունվարի, 2007 թ.

8. .... Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է:

ՍԴՈ-674, 30 հունվարի, 2007 թ.

5. .... Լիազորված չլինելով գնահատելու ընդհանուր իրավասության դատարանի ակտերի սահմանադրականությունը, միաժամանակ կոչված լինելով ապահովելու ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հարցն ուղղակիորեն առնչվում է մարդկանց սահմանադրական իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանը, միայն դատական սխալի հաղթահարման և գործի հանգամանքների համակողմանի քննության արդյունքում է հնարավոր ստեղծել անհրաժեշտ արդարադատական նախադեպ և երաշխա-

վորել Սահմանադրության 1, 3, 5, 6, 14 և մի շարք այլ հոդվածների պահանջների հետևողական կատարումը:

ՍԴՈ–701, 11 մայիսի, 2007 թ.

6. .... Այս համատեքստում, հակասահմանադրական ճանաչված իրավական ակտը կամ դրա դրույթը շարունակում է գործել սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության 102 հոդվածի հիմքով դրանց գործողությունը հիմնավորված կերպով տարաժամկետելու շնորհիվ: Ուստի, վիճարկվող դրույթի իրավական բովանդակությունն ածանցյալ է և անհրաժեշտաբար բխում է Սահմանադրության 102 հոդվածի 3–րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15–րդ մասի առաջին պարբերության դրույթներից: Հետևաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15–րդ մասի երկրորդ պարբերության դրույթի ձևակերպումն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի Սահմանադրության 102 հոդվածի 3–րդ մասի համատեքստում, որ Սահմանադրությունը հնարավոր է դարձնում սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ժամանակավորապես կիրառումը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով:

ՍԴՈ–751, 15 ապրիլի, 2008 թ.

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածն ունի այն բնորոշ առանձնահատկությունը, որ դրանով կանոնակարգվում են իրավական նորմերի վերացական սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները: Անհատական դիմումների քննությանը կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգվում են օրենքի 69 հոդվածով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ 69 հոդվածի 11–րդ մասի հղումն օրենքի 68 հոդվածի 6–17–րդ մասերին խորությամբ հաշվի չի առել վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, դա վերաբերում է սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտի առանձնահատկություններին՝ վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության պարագաներում: Եթե նախնական և հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Հետևաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջները հաշվի առնելով, սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել միայն անձի նյութական և դատավարական իրավունքների պաշտպանության տեսանկյունից վիճարկվող դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11 և 12–րդ մասերի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3^2 բաժնի (մասնավորապես՝ 204^{20} հոդվածի) դրույթների հետ համադրության մեջ դիտարկելով միայն:

ՍԴՈ–767, 21 հոկտեմբերի, 2008 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն առավել ապահովված կլինեն այն դեպքում, երբ նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու վարույթը հարուցում է այն դատարանը, որը վերջնական դատական ակտ է կայացրել տվյալ քրեական գործով:

ՍԴՈ–792, 24 հոկտեմբերի, 2009 թ.

5. ՀՀ Սահմանադրության 1, 3 և 14.1 հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհատի և պետության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը և, առաջին հերթին՝ պետության պարտականությունը՝ կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ և արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում: Այն երաշխավորված է նաև աշխատանքի բնագավառում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 32 հոդվածում (1–ին մաս), համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 48 հոդվածում որպես պետության հիմնական խնդիրներ են նախատեսված բնակչության զբաղվածությանը նպաստելը (2–րդ կետ), տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակ ապահովելը:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. հոկտեմբերի 8–ի ՍԴՈ–765 որոշմամբ բացահայտելով իրավաբանական օգնության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ընդգծել է, որ «ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1–ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է նախ, որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորություն, և երկրորդ, պետության պարտականությունը՝ ապահովելու այդպիսի անվճար օգնություն՝ կարիք ունեցող անձանց համար»: Պետության նշված պարտականությունը նաև ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատավարության համապատասխան (այդ թվում՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման) փուլում անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն, կամ այն բխում է դատավարության շահերից, ապա յուրաքանչյուր կարիքավոր անձ պետք է իրավունք և երաշխավորված հնարավորություն ունենա ստանալու այդպիսի օգնություն: Ընդ որում, որպես այդպիսի կարիքի գնահատման չափանիշ առաջին հերթին կարևորվում է անձի վճարունակության մակարդակը:

.... Հետևաբար, վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու միջոցով վերականգնման հնարավորությունը՝ վտանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի և թե՛ իր խախտված իրավունքները միջազգային ատյաններում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը:

ՍԴՈ–836, 27 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Արձանագրելով, որ քրեական գործի նախաքննության շրջանակներում ինչպես քննչական ցանկացած այլ գործողության, այնպես էլ վերստուգումների, գույքագրումների և այլ ստուգողական գործողությունների կատարումն օբյեկտիվորեն կարող է առնչվել անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդրին, սահմանադրական դատարանը գտնում է, որ լրացուցիչ օրենսդրական կարգավորման են ենթակա այդպիսի գործողությունների կատարման պայմանները (հիմքերը, համապատասխան որոշման կայացման կարգն ու պայմանները) և կարգը (այդ թվում՝ արդյունքների արձանագրման), և այս առումով հիմնավոր են դիմողի հարցադրումները: Սակայն չի կարող ստուգումների՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգը մեխանիկորեն տարածվել քրեադատավարական գործընթացների վրա՝ առանց հաշվի առնելու դրանց առանձնահատկությունները, անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության երաշխիքների ապահովումը, մյուս կողմից՝ խոչընդոտներ ստեղծել պետական իշխանության մարմինների գործառույթների լիարժեք իրականացման համար: Այս խնդիրը, ինչպես նշվեց, լրացուցիչ իրավակարգավորման առարկա է, այլ ոչ թե Սահմանադրության 101 հոդվածի 1–ին մասի 7–րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի հիմքով օրենքի տվյալ կոնկրետ վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդիր:

ՍԴՈ–844, 7 դեկտեմբերի, 2009 թ.

8 . .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի **պարտադիր** պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի **անգործությամբ** խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է:

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

10. ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի իրավակարգավորման ուղղվածության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վերջիններս մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության եղանակների առնչությամբ նախապատվությունը տալիս են իրավունքների և ազատությունների պաշտպանության դատական կարգին՝ որպես առավել արդյունավետ միջոցի, որոշ դեպքերում չբացառելով իրավունքների և ազատությունների պաշտպանության արտադատարանական կարգը:

Սահմանադրության 18–րդ հոդվածի 1–ին մասի ուժով թե՛ դատական, թե՛ արտադատարանական կարգով իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանությունը պետք է լինի արդյունավետ:

ՍԴՈ–882, 11 մայիսի, 2010 թ.

5. .... Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներից է նաև Սահմանադրության 22–րդ հոդվածի 7–րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, և որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ ենթակա չէ սահմանափակման (անգամ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում): ....

9. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան այն ուղղությամբ, որ շեշտը դնելով ոչ թե հանցանքի որակման, այլ պատժի տարրերի վրա՝ կատարելագործվեն ռեցիդիվի ինստիտուտը կանոնակարգող իրավանորմերը՝ իրենցում ներառելով նաև նախկին դատվածությանն առնչվող քրեաիրավական հետևանքները:

ՍԴՈ–906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

5. .... Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասը, ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի առաջին մասով ամրագրված դրույթների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 04.04.2008 թվականի ՍԴՈ–747 որոշման 7–րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասին համահունչ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, **որոնց իրավունքները խախտվել են:** Այս առումով սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածը նախատեսում է դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ավելի լայն շրջանակ:

ՍԴՈ–984, 15 հուլիսի, 2011 թ.

11. Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական դատարանն իր մի քանի որոշումներում արձանագրել է Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման անարդյունավետությունը, այնուամենայնիվ, այդ ինստիտուտը շարունակում է մնալ անկատար: Նշված հանգամանքը նկատի ունենալով՝ սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում ընդգծել նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ողջ մեթոդաբանության հիմնավոր վերարժևորման անհրաժեշտությունը՝ գտնելով, որ այդ ինստիտուտի իրավակարգավորման մեթոդաբանությունը պետք է խարսխվի պետության՝ ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածով սահմանված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան պաշտպանելու պարտավորության հենքի վրա:

Անհատական սահմանադրական գանգատի հիմքում ընկած են անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գաղափարն ու նպատակը: Այս նպատակի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանավորված անհատական սահմանադրական գանգատի այս կամ

այն մոդելի ընտրությամբ և առանձնահատկություններով՝ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների հիման վրա՝ խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման մեխանիզմները տարբեր են: Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտ ունեցող երկրներում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումն իրականացվում է հենց սահմանադրական դատարանի կողմից, որը, հակասահմանադրական ճանաչելով վիճարկվող նորմը կամ նորմի կիրառումը, միաժամանակ վերացնում է նաև հակասահմանադրական նորմ կիրառած կամ անձի սահմանադրական իրավունքը խախտած դատական ակտը: Նման մեխանիզմի դեպքում պետությունն ինքն է ապահովում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումը սահմանադրական արդարադատության շրջանակներում՝ կատարելով քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության իր պարտավորությունը: Այն երկրներում, որտեղ սահմանադրական վերահսկողության օբյեկտ են հանդիսանում միայն դատական ակտերով կիրառված օրինադրույթները, խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը երաշխավորվում է սահմանադրական դատարանների որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի վերանայման արդյունավետ ինստիտուտի գոյությունը ևս պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ պետությունը պետք է ապահովի խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: Պետության նման պարտավորության կատարումն ապահովելու բավականին արդյունավետ միջոց է դատական ակտերի վերանայումն իրավունքի ուժով: Այս մեթոդաբանությունն է ընկած, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման հիմքում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան նշված մեթոդաբանությունը հաշվի առնելու ուղղությամբ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԴՈ–649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

X. .... Քննության առարկայի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ հիշյալ նորմերի պահանջները երաշխավորելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ սահմանադրորեն տարբեր իրավունքների սահմանափակման առանձնահատկություններն ու բնույթը: Որքան էլ որ այլոց իրավունքների երաշխավորումն է դառնում անհատի հասարակական վարքագծի կանոնակարգման սահմանը, միևնույն է, Սահմանադրությունը, ինչպես նշվեց, չի նախատեսում որոշակի իրավունքների սահմանափակում: Իսկ այդ իրավունքների ապահովման կարգը չի կարող դրանց իրականացման արգելանք դառնալ, այլ պետք է երաշխավորի այն: Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):

ՍԴՈ–677, 7 փետրվարի, 2007 թ.

5. .... Երկրորդ՝ Սահմանադրության 43 հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23–25, 27, 28–30, 30.1 հոդվածներով, 32 հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»: Նույն հոդվածի 2–րդ մասը սահմանում է մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումների դեմ լրացուցիչ և կարևոր երաշխիք. այդ սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

Սահմանադրության 43 հոդվածի 1–ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

6. .... Հայաստանի Հանրապետությունն ստանձնելով նման պարտավորություն և նկատի ունենալով Խարտիայի հավելվածում տվյալ նորմի վերաբերյալ արված պարզաբանումը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 43 հոդվածի 2–րդ մասի պահանջը, գործադուլի իրավունքի ապահովման օրենսդրական կարգավորման ժամանակ հաշվի պետք է առնի, որ.

ա) գործադուլի իրավունքի իրականացումը դիտարկվում է աշխատողների և գործատուների համատեղ գործողությունների անցկացման իրավունքի շրջանակներում և անմիջականորեն առնչվում է կոլեկտիվ աշխատանքային վեճերի առաջացման և դրանք կոլեկտիվ պայմանագրերի միջոցով լուծելու անհնարինության խնդրին,

բ) գործադուլի իրավունքը ճանաչվում է «....այն **պարտավորություններին ենթարկվելու պայմանով**, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»,

գ) բացի բ) կետում նշված պայմանից և օրենքով նախատեսված այնպիսի սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության և հասարակական շահերի, ազգային անվտանգության, հասարակության առողջության և բարոյականության պաշտպանության համար (Խարտիայի 5–րդ մաս, հոդված «Է»), գործադուլի իրավունքի այլ սահմանափակումներ չեն կարող լինել, առավել ևս, եթե դրանք անհնարին են դարձնում նման պայմանի ու սահմանափակումների պայմաններում գործադուլի իրավունքի իրականացումը:

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

7. .... ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006 թ. հոկտեմբերի 18–ի ՍԴՈ–652, 2006 թ. նոյեմբերի 16–ի ՍԴՈ–665, 2007 թ. ապրիլի 9–ի ՍԴՈ–690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես

միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական վերջին զարգացումները մասնակիորեն են լուծում քննության առարկա խնդիրը (հանձին նաև կարգապահական վարույթի ինստիտուտի (համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 155 հոդվածի)): Բացի դրանից, դատարանի բնականոն գործունեության ապահովման տեսանկյունից օրենքը որոշակի պարտավորություններ է դնում նաև դատարանների նախագահների խորհրդի վրա (մասնավորապես, ՀՀ դատական օրենսգիրք, հոդվ. 72): Այսուհանդերձ, հաշվի առնելով նաև ձևավորված իրավակիրառական պրակտիկան, ելնելով ՀՀ քաղ. դատ. օր. 91 հոդվածի 2-րդ կետի իմպերատիվ պահանջից՝ հայցադիմումն ստանալու պահից դրա մերժման վերաբերյալ եռօրյա ժամկետում որոշում կայացնելու վերաբերյալ, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական իշխանության մարմիններում անգործության պարագան անձի արդարադատության մատչելիության իրավունքի սահմանափակման պատճառ է դառնում, սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ. ՀՀ վճռաբեկ դատարանը կարող էր, օրենսդրության տարակերպ ընկալման ու մեկնաբանման պայմաններում, երաշխավորել մարդու արդարադատության մատչելիության իրավունքը՝ օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու միջոցով: Սակայն խնդիրը միայն օրենքի մեկնաբանման ճանապարհով արդյունավետ չի կարող լուծվել: ՀՀ Ազգային ժողովն առավել հստակ պետք է սահմանի դատարանների, նրանց պաշտոնատար անձանց անգործության հետևանքով անձի խախտված իրավունքները դատավարական ողջամիտ ժամկետում վերականգնելու և պատճառված վնասը փոխհատուցելու արդյունավետ ընթացակարգեր, որոնց բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել նաև արդարադատության մատչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի իմաստից: Իսկ այդ խնդիրը դուրս է ՀՀ քաղ. դատ. օր. 26-րդ գլխի գործող նորմերի իրավակարգավորման շրջանակներից:

ՍԴՈ-741, 18 մարտի, 2008 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5 հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1 հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

16. Սահմանադրական դատարանը՝ հաշվի առնելով, որ հավատարմագրված փաստաբանների և մյուս փաստաբանների միջև մասնագիտական պատրաստվածության և փորձառության հարցում չկա որևէ տարբերություն, որ օրենսդրությունը վճռաբեկ դատարան դիմելիս հստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, որ նույնիսկ հավատարմագրված փաստաբանների կողմից կազմված բողոքների գերակշիռ մեծամասնությունը քննության չի ընդունվում վճռաբեկ դատարանում, ինչպես նաև նկատի ունենալով հավատարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկատիրական բնույթով պայմանավորված՝ վճռաբեկ բողոք կազմելուց հրաժարվելու ազատությունը, գտնում է, որ արդարացի հավասարակշռությունը ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի և դրանով հետապնդվող նպատակի միջև, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի էությունը:

Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջով վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը համաչափ չէ իր նպատակին, քանի որ նման սահմանափակումը թույլ չի տալիս արդյունավետորեն և անարգել իրացնել անձի արդար դատաքննության իրավունքը:

ՍԴՈ–827, 12 սեպտեմբերի, 2009 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես իրավական պետություն, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով հստակ նախատեսում և երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Սահմանադրության այս հոդվածը, վերարտադրելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3 հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9 հոդվածի դրույթները, սպառիչ կերպով սահմանում է անձին ազատությունից զրկելու դեպքերը՝ կանխորոշելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներ:

ՀՀ Սահմանադրության 43 հոդվածն անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշը, սահմանները և դեպքերը՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը:

ՍԴՈ–865, 10 փետրվարի, 2010 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի սահմանադրական իրավունքն է պահանջել ու ստանալ իր հասանելիք երկարամյա ծառայության կենսաթոշակը՝ իր իսկ կողմից ընտրված համակարգից՝ նաև իր որոշումը վերանայելու հիմքով: ՀՀ որևէ օրենքով տվյալ հարցով անձի որոշումը փոխելու իրավունքը սահմանափակված չէ: ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ մի շարք միջազգային իրավական պարտավորություններով միանշանակ պահանջ է առաջադրված, որ իրավունքի սահմանափակումը պետք է նախատեսված լինի միայն օրենքով, լինի համաչափ, չաղավաղի իրավունքի էությունը:

ՍԴՈ–901, 29 հունիսի, 2010 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սերվիտուտի նման իրավակարգավորումն ապահովում է ՀՀ Սահմանադրության 8 և 31–րդ հոդվածներով նախատեսված՝ անձի սեփականության իրավունքն ազատ և հայեցողաբար իրացնելու սահմանադրաիրավական սկզբունքի իրականացումը՝ այն սահմանափակումներով, որոնք իրավաչափ են ու պայմանավորված են այլ անձանց, հանրության և պետության իրավունքների ու օրինական շահերի հաշվառման անհրաժեշտությամբ:

ՍԴՈ–917, 18 սեպտեմբերի, 2010 թ.

8. .... Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն իրավասու է հաշվի առնելով հարազատ և համահայր կամ համամայր քույրերի և եղբայրների միջև առկա օբյեկտիվ տարբերությունը՝ համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին դասել մեկ այլ՝ հաջորդ հերթի ժառանգների թվին (ինչն ընդունված է մի շարք երկրների ժառանգական իրավունքում): Սակայն օրենսդիրն իրավասու չէ այդ տարբերությունն օգտագործել համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին ժառանգությունից օրենքի ուժով ընդհանրապես բացառելու համար: Այդչափ լայն սահմանափակումն օրենսգրքի՝ ըստ օրենքի ժառանգությանը վերաբերող գլխում բավարար չափով հիմնավորված չէ առարկայական չափանիշներով: Այն ժառանգություն ստանալու սահմանադրական իրավունքի ոչ համաչափ սահմանափակում է՝ Սահմանադրության 1–ին հոդվածից (իրավական պետության սկզբունք) բխող համաչափության սկզբունքի և իրավահավասարության սկզբունքի (Սահմանադրության 14.1–րդ հոդվ.) տեսանկյունից:

ՍԴՈ–926, 23 նոյեմբերի, 2010 թ.

5. Դատարանի որոշման առկայության՝ որպես ՀՀ Սահմանադրության 23–րդ հոդվածի 5–րդ մասով երաշխավորված իրավունքի սահմանափակման համար նախատեսված նախապայմանի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս հետապնդում է հետևյալ իրավաչափ նպատակները.

նախ, այն նպատակ ունի պաշտպանել անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական և ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից,

երկրորդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսգրքի 121–րդ հոդվածի համաձայն՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու և հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում կազմված արձանագրությունները քրեական դատավարության ընթացքում օգտագործվում են որպես ապացույց և արդյունքում կարող են կիրառվել հաղորդակցվող անձի կամ նրա ընդդիմախոսի դեմ, սահմանադիրն առանձնակի կարևորություն է տվել հիշյալ միջոցառումների իրականացման օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը,

երրորդ, որպես կանոն, նշված միջոցառումները կրում են գաղտնի բնույթ, ինչը (ինչպես դա շեշտում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը) որոշ դեպքերում կարող է հանգեցնել դրանց չարաշահումների, որոնց կանխման արդյունավետ միջոցներից է նաև դրանց օրինականության նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 23–րդ հոդվածի 5–րդ մասով ամրագրված իրավունքը ենթակա է սահմանափակման ոչ միայն Սահմանադրության 23–րդ հոդվածի 5–րդ մասի հիմքով, այլ նաև Սահմանադրության 43–րդ հոդվածի 1–ին մասի հիմքով, ինչը փաստարկում է պատասխանողը, սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ սահմանափակում նախատեսող սահմանադրական այս երկու նորմերի հարաբերակցության հարցին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը հղում է կատարում օրենքին և չի բացառում, որ օրենքով նախատեսվի ոչ միայն կոնկրետ իրավունքի սահմանափակման թույլատրելիությունը, այլ նաև՝ սահմանափակման դեպքերը և կարգը: Ընդ որում, չի բացառվում, որ օրենքը կոնկրետ իրավունքի սահմանափակման համար որպես պարտադիր նախապայման սահմանի դատարանի որոշման առկայությունը: Այս վերջին պայմանի սահմանումը, տարբեր հնարավոր սահմանափակումների առնչությամբ, սահմանադիրը թողել է օրենսդրի հայեցողությանը: Սակայն ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավունքի սահմանափակման պարագայում դատարանի որոշման առկայության պարտադիր նախապայմանը չի թողնվել օրենսդրի հայեցողությանը, այլ նախատեսվել է հենց Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով: Հետևաբար, Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված՝ իրավունքի սահմանափակմանը վերաբերող նորմն օրենսդրի կողմից պետք է ելակետ ընդունվի Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա իրականացվող հնարավոր իրավակարգավորման շրջանակներում:

ՍԴՈ-945, 15 մարտի, 2011 թ.

8. ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու իրավունքը: Այս իրավունքը պատկանում է այն սահմանադրական իրավունքների թվին, որոնք բացարձակ չեն և կարող են սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված պայմաններով ու հիմքերով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը վերարտադրելով ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավունքը, միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությանը համապատասխան և հաշվի առնելով տվյալ իրավունքը ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պայմաններով և հիմքերով սահմանափակելու թույլատրելիությունը, նախատեսում է նույն օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքը սահմանափակելու հնարավորությունը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանափակման դեպքերն ըստ էության նախատեսում է այդ օրենքի 24-րդ հոդվածում՝ սահմանելով ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժելու հիմքերը: Օրենքի 24-րդ հոդվածը, ամրագրելով Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացու՝ իր քաղաքացիությունը փոխելու, այն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու և այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը, միաժամանակ ամրագրում է ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժելու հիմքերը: Այդ հիմքերն են՝ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու փաստը, դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճռի կամ վճռի առկայությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու հակասությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին, ինչպես նաև պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորությունների առկայությունը:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ խնդրո առարկա իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, **եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:**

.... Սահմանադրական դատարանը գտնում է նաև. որպեսզի իրավակիրառական պրակտիկայում քաղաքացիությունը փոխելու կամ քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի իրավունքներն իրացվեն իրավաչափորեն, անհրաժեշտ է, որպեսզի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը նույնպես հստակ ներդաշնակեցվի ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների չափորոշիչներին:

ՍԴՈ-997, 15 նոյեմբերի, 2011 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ, մի կողմից, տեղեկատվություն տարածելու և խոսքի ազատության, մյուս կողմից՝ անձի՝ իր հեղինակության նկատմամբ հարգանքի իրավունքի միջև փոխհարաբերությունը պետք է քննության առնվի ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածով սահմանված՝ մարդու արժանապատվության հարգման ու պաշտպանության և Սահմանադրության 27-րդ հոդվածով սահմանված՝ ժողովրդավարական պետությունում քաղաքական բազմակարծության անքակտելի տարր հանդիսացող՝ խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի հետ հարաբերակցության լույսի ներքո:

.... ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածների, ինչպես նաև 43-րդ և 47-րդ (1-ին մաս) հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ մարդու արժանապատվությունից՝ ներառյալ պատիվը, բարի համբավը և մասնավոր կյանքը, բխող իրավունքները և ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են արդարացնել արտահայտվելու ազատության սահմանափակումը միայն **իրավաչափ շրջանակներում**:

Բերված մոտեցումների, ինչպես նաև եվրոպական երկրների տարբեր այլ դատարանների իրավական դիրքորոշումների համեմատական վերլուծությունը վկայում է, որ.

ա) սահմանադրական դատարանները խնդրին առաջին հերթին մոտենում են իրավունքների սահմանափակման թույլատրելիության տեսանկյունից: Այս առումով ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը, ի տարբերություն 27-րդ հոդվածի, Սահմանադրության 43-րդ հոդվածի հիմքով ենթակա չէ սահմանափակման,

բ) կարևորելով խոսքի ու արտահայտվելու ազատության իրավունքի երաշխավորումը ժողովրդավարական հասարակության համար, այն չի կարող անհամաչափորեն սահմանափակվել՝ վտանգելով սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ ու գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը,

գ) արտահայտվելու ազատության իրավունքը՝ այնքանով, որքանով կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով, կարող է պայմանավորվել օրենքով նախատեսված սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք, ի մասնավորի, անհրաժեշտ են այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու համար,

դ) գործնական խնդիրն առավելապես ոչ թե օրենքով իրավաչափ սահմանափակումների կամ պատասխանատվության միջոցների նախատեսման մեջ է, այլ վերաբերում է դրանց համաչափության ապահովմանն ու դատական պրակտիկայում դրա երաշխավորմանը՝ որպես պետության անմիջական պարտականություն: Վերջինս պետք է հենվի այն ելակետային սկզբունքի վրա, որ հանրային շահի գերակայության տեսանկյունից լրատվամիջոցի կանխարգելիչ ու հակակշռող նշանակությունն ավելին է, քան նյութական միջոցներով սխալն ուղղելու անհրաժեշտությունը: Այս հանգամանքը կոնկրետ իր արտացոլումն է գտել վեճի առարկա հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության և 5-րդ մասի 2-րդ կետի իրավակարգավորման շրջանակներում և պետք է համարժեք ձևով հաշվի առնվի դատական պրակտիկայում:

Սահմանադրաիրավական այս հիմնարար դրույթները քննության առարկա իրավահարաբերությունների շրջանակներում ունեն ելակետային ու բացարձակ նշանակություն ոչ միայն օրինաստեղծի, այլև իրավակիրառողի ու այդ հարաբերությունների մասնակիցների համար: Այդ դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում դրանք հիմնականում արտացոլված են համակարգային օրգանական կապի մեջ և ապահովում են իրավաչափ հավասարակշռություն իրավունքի ու դրա պաշտպանության երաշխիքների, հանրային ու անհատական շահերի, իրավական ու բարոյական չափորոշիչների միջև: Օրենքը սահմանադրական ճիշտ չափորոշիչներ է դրել տվյալ հիմնախնդրի իրավական կանոնակարգման հիմքում: **Դրանց համարժեք ընկալումը, իրավաչափ կիրառումը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ճշմարտության համակարգային բացահայտումը դատական պրակտիկայի խնդիրն է:**

Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը ելնում է նաև այն իրողությունից, որ Հայաստանի Հանրապետությունում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով: ....

Միաժամանակ, քննության առարկա դարձնելով վերոհիշյալ ազատությունների և օրենքով պաշտպանվող այլ շահերի միջև հավասարակշռության խնդիրը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ ազատությունները միշտ պետք է գերակայեն այն դեպքում, երբ տեղեկատվության բացահայտումն անհիմն չի եղել, հետապնդել է իրավաչափ նպատակ և տվյալ տեղեկատվությունը վերաբերում է հասարակական հետաքրքրություն ներկայացնող պետական գործերի և անձանց:

ՍԴՈ-1119, 8 հոկտեմբերի, 2013 թ.

6. .... Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում են այն հիմքերը,** որոնց առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չթույլատրել պաշտպանին մասնակցելու պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին, ինչն արձանագրում է նաև սույն գործով պատասխանող կողմը, և ինչը իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի սահմանափակման առումով կարող էր իրավաչափ համարվել Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմքերի համատեքստում: Էական է նաև այն, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե քրեական վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ, այլ հենց իր՝ պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթը, ի խախտումն Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների, հանդես է գալիս որպես պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող և դրա արդյունքում՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթ: Ավելին, այդպիսի սահմանափակումը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

ՍԴՈ-1137, 4 փետրվարի, 2014 թ.

5. .... ՀՀ Սահմանադրության՝ վերը նշված դրույթների ուսումնասիրությունից բխում է, որ բոլոր դեպքերում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքը կամ իրավունքի սահմանափակումը (խոսքը չի վերաբերում ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի հիմքով իրավունքի ժամանակավորապես սահմանափակմանը) կարող է նախատեսված լինել կամ Սահմանադրությամբ, կամ օրենքով, կամ միջազգային պայմանագրով, այլ ոչ թե այլ իրավական ակտով:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ նորմատիվ, ինչպես նաև անհատական իրավական ակտերով չեն կարող ամրագրվել կամ սահմանվել իրավունքներ կամ իրավունքի սահմանափակումներ, իսկ անհատական իրավական ակտերով, որպես իրավունքի կիրառման ակտեր, կարող են ընդամենը կիրառվել իրավունքի սահմանափակումները:

ՍԴՈ-1148, 18 ապրիլի, 2014 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասում՝ ընդհուպ անհրաժեշտ կրեդիտների առկայության պարագայում, իրավակիրառ պրակտիկայի կողմից տրվող մեկնաբանությամբ, գործնականում արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական որակավորում ունեցող անձի (մագիստրոսի)՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում առկա՝ վերոշարադրյալ իրավական թերի ու համակարգային առումով անկատար լուծումներով: Դրա հետևանքով, մասնավորապես, պետական միասնական չափորոշիչների տեսանկյունից չի որոշակիացվել կապը բարձրագույն մասնագիտական համարժեք որակավորման ու դրա իրավական փաստը վկայող պետական նմուշի հավաստագրի (դիպլոմի) միջև: Նման վիճակը, իր հերթին, հանգեցրել է նրան, որ, ինչպես նշվեց, վեճի առարկա իրավադրույթը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է, չի համապատասխանում իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին, ինչպես նաև չի ապահովվում իրավունքի էության անձեռնմխելիության սահմանադրաիրավական երաշխիքի իրացումը:

ՍԴՈ-1153, 3 հունիսի, 2014 թ.

6. .... Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապրանքներ վերցնելու ինստիտուտը կոչված է ապահովելու մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթի արդյունավետությունը, որը հնարավորություն է ընձեռում մաքսային մարմնին հայտնաբերելու և կանխելու մաքսային իրավախախտումները: Իսկ վերջինն այն հանրային շահն է, որն արդարացնում է ապրանքներ տեղափոխող անձանց իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը: ....

9. Անդրադառնալով վիճարկվող կանոնակարգման կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների հիմնահարցին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Մաքսային օրենսգրքում բացակայում են այն երաշխիքները, որոնց համադրության

լույսի ներքո է բացառապես ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչել սեփականության իրավունքի իրացման հնարավորության սահմանափակումը՝ որպես ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պարտավորության իրացման ապահովմանն ուղղված՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրաիրավական սկզբունքի դրսևորման ձև: ՍԴՈ-1073 որոշմամբ մատնանշված երաշխիքներն առավելապես հանգում են նրան, որ պարտավորությունների կատարումն ապահովելու համար գույքի նկատմամբ արգելանք/վերցնում կարող է կիրառվել պարտավորությունների կատարումն այլ միջոցներով ապահովելու բոլոր հնարավորություններն սպառելուց հետո: Մինչդեռ սույն գործով քննության առարկա իրավիճակում գույքը վերցվում է անմիջապես՝ անկախ սեփականության պատկանելությունից, հետևաբար՝ ոչ իրավաչափ եղանակով: Բացի դրանից, Մաքսային օրենսգրքում չկան գույքի վերցման այլընտրանքային կառուցակարգեր, մինչդեռ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում արգելանքի ինստիտուտի սահմանադրականության հարցը քննելիս սահմանադրական դատարանն այդպիսիների առկայությունը դիտարկել է որպես գործուն կառուցակարգ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու հարցում: Մաքսային օրենսգրքում բացակայում է նաև գույքի այն տեսակների ցանկը, որոնց պահումն արգելվում է: Մինչդեռ նման կանոնակարգման առկայությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքում ևս ՍԴՈ-1073 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է որպես արգելանքի իրացման ընթացքում կարևոր երաշխիք:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ Մաքսային օրենսգրքի վիճարկվող դրույթից պարզ չի դառնում, թե տուգանք նշանակելու պարագայում գույքի սեփականատերը կարող է վճարել տուգանքն իրավախախտում կատարած սուբյեկտի փոխարեն, թե՝ ոչ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման հնարավորության բացակայության պայմաններում մեծանում է անձի իրավունքների խախտման ռիսկը, քանի որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման վերացումը պայմանավորվում է մեկ այլ անձի վարքագծով, և գույքի սեփականատերը իրավախախտում կատարած սուբյեկտի կողմից երկարատև ժամանակահատվածում տուգանքը չվճարելու պարագայում կարող է կրել լուրջ ֆինանսական և այլ կորուստներ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեև սեփականության իրավունքի իրացումը կարող է ժամանակավորապես կասեցվել տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման նպատակով, սակայն այս հիմքով սեփականության իրավունքին միջամտության օրենսդրական կանոնակարգումը պետք է հնարավորություն ընձեռի անձին պաշտպանելու իր իրավունքը: Անձի սեփականության իրավունքին միջամտությունը պետք է բխի տվյալ անձի կողմից տուգանքի և մաքսային վճարի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է լինի բավարար և անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար, իրավասու մարմնի լիազորությունը և այդ լիազորության ընթացակարգը պետք է որոշակիորեն ամրագրված լինեն օրենսդրական մակարդակում՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտացոլված՝ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը:

ՍԴՈ- 1224, 7 հուլիսի, 2015 թ.

7. .... ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի և ՀՕ-244-Ն ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ և 13-րդ մասերի դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ **վերջիններիս բովանդակությունն ամբողջությամբ համատեղելի է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի բովանդակության հետ:**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–1000, 29 նոյեմբերի, 2011 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ քննության առարկա իրավադրույթների սահմանադրականության վերաբերյալ վեճը՝ որպես այդպիսին, բացակայում է դիմող և պատասխանող կողմերի միջև, որոնք գրեթե նույն փաստարկներով արձանագրում են օրենքի նշված դրույթների անհամապատասխանությունը Սահմանադրությանը: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործի քննությունը ոչ միայն էական նշանակություն կունենա ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու իրավական հստակության ապահովման տեսանկյունից, այլև դատական պրակտիկայի համար առավել մատչելի կդարձնի սահմանադրական նորմերի անմիջական կիրառման ինստիտուտի էությունը:

....

6. .... Հետևաբար, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78–րդ հոդվածի 2–րդ մասը պետք է համահունչ ու ներդաշնակ լինի Սահմանադրության 42–րդ հոդվածի 4–րդ մասի իրավական տրամաբանությանը:

Միաժամանակ, անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը կանոնակարգող՝ ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի 4–րդ մասում ամրագրված նորմն ունի անմիջական գործողություն և, ըստ այդմ, եթե ճյուղային օրենսդրությունը չի նախատեսում համապատասխան նորմ, որը սահմանում է տվյալ օրենսդրության՝ ժամանակի մեջ գործողության կանոնները կամ բովանդակում է նշված սահմանադրական նորմին հակասող նորմեր, ապա **կիրառվում է նշված սահմանադրական նորմը՝ իր անմիջական գործողության ուժով՝** համաձայն ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի:

.... Սահմանադրական դատարանը միևնույն իրավահարաբերությունը կանոնակարգող սահմանադրական նորմի և օրենքի վիճարկվող նորմի համեմատական վերլուծության արդյունքներով գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78–րդ հոդվածի 2–րդ մասում ամրագրված նորմը, շեղվելով ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի 4–րդ մասի իրավակարգավորման հիմքում ընկած՝ խնդրո առարկա իրավական ակտերի **հետադարձ ուժի բացակայության կանխավարկածից**, ամրագրել է այդ իրավական ակտերի **հետադարձ ուժի առկայության կանխավարկածը՝ բացառությունը դարձնելով ընդհանուր կանոն:**

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ մինչև սույն հակասության օրենսդրորեն հաղթահարումն իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի Սահմանադրության 42–րդ հոդվածի 4–րդ մասի պահանջով՝ որպես Սահմանադրության 6–րդ հոդվածի 1–ին մասի ուժով անմիջականորեն գործող նորմ:

ՕՐԵՆՔԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՍԴՈ–1254, 9 փետրվարի, 2016

8. .... Գործի նյութերը վկայում են, որ այս նորմի կիրառման հարցում դատական պրակտիկայում տեղ են գտել տարակերպ մոտեցումներ և չի երաշխավորված օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական պահանջը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ տվյալ գործի քննության շրջանակներում հետևողականորեն հաշվի չեն առնվել նաև հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի վերոնշյալ՝ ՍԴՈ–1052 և ՍԴՈ–1062 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները:

3. ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«RES JUDICATA» (ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ) ՍԿԶԲՈՒՆՔԸ

ՍԴՈ–630, 18 ապրիլի, 2006 թ.

11. .... Տվյալ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը:

ՍԴՈ–709, 20 հուլիսի, 2007 թ.

6. .... Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ոչ միայն 407 հոդվածի 4–րդ մասում, այլ նաև այլ բնույթի իրավահարաբերություններին առնչվող հոդվածներում նախատեսված է իրավունքի սուբյեկտի բողոքը կամ միջնորդությունն առանց քննության թողնելու իրավունքը (102 հոդվ. 2–րդ մաս, 103 հոդվ. 6–րդ մաս, 155 հոդվ. 3–րդ մաս, 381 հոդվ. 2–րդ մաս, 375.4 հոդվ. և այլն):

ՍԴՈ–754, 27 մայիսի, 2008 թ.

9. Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի: Նշված սկզբունքն իր ամբողջական և տրամաբանական դրսևորումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4–րդ մասում, որի համաձայն՝ բողոքը թողնվում է առանց քննության այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն այդ բողոքում **նշված հիմքով նույն գործով** արդեն իսկ որոշում է կայացրել: Սահմանադրական դատարանն իր 2007 թ. հուլիսի 20–ի ՍԴՈ–709 որոշման մեջ նշված դրույթը գնահատել է որպես իրավազոր պահանջ, «.... քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ»: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ նշված դրույթում օգտագործվող՝ «բողոքում նշված հիմքով» և «նույն գործով» ձևակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միևնույն առարկայի վերաբերյալ նույն պատճառաբանություններով ներկայացված բողոքի հիման վրա ձգտում է հասնել նպաստավոր որոշման:

ՍԴՈ-984, 15 հուլիսի, 2011 թ.

7. .... Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայումն այն բացառիկ դեպքերից է, երբ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու և սահմանադրական դատարանի որոշումների ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարման նպատակները գերակայում են res judicata դոկտրինայի հիմքում ընկած սկզբունքների, մասնավորապես՝ իրավական որոշակիության սկզբունքի, նկատմամբ: Այս հագամանքը շեշտադրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում: Մասնավորապես, այս խնդրի առնչությամբ Եվրոպական դատարանը նշում է, որ «....իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ: Քրեական գործի վարույթը նորոգելու հնարավորությունն ինքնին համատեղելի է Կոնվենցիայի հետ, ներառյալ՝ 6-րդ հոդվածի երաշխիքները: 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը հստակորեն թույլատրում է նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարյութը» (Քսերաժն ընդդեմ Ալբանիայի Xheraj v. Albania գործով 2008 թ. հուլիսի 29-ի վճռի 52-53-րդ կետեր):

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման պահանջի մերժումը չի կարող հիմնավորվել res judiacata դոկտրինայի, մասնավորապես, դրա հիմքում ընկած իրավական որոշակիության սկզբունքի պահպանման նկատառումներով և անհրաժեշտությամբ:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՍԴՈ-923, 9 նոյեմբերի, 2010 թ.

7. ....«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ օրենսդրությունը, ի մասնավորի՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի նորմերը դիմողի կողմից վկայակոչված օրենսդրական բացի պայմաններում ապահովում են այն իրավական երաշխիքների առկայությունը, որոնք թույլ են տալիս խնդրո առարկա քննչական գործողությունը կատարելու գործընթացում ապահովել հարգանքը ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հանդեպ:

Միաժամանակ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ օրենսդրությամբ երաշխավորված է նաև անձի իրավական պաշտպանության, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը բոլոր այն դեպքերում, երբ լուսանկարներն ստացվել են առանց դրանցում պատկերված անձանց համաձայնության:

ՍԴՈ-1244, 8 դեկտեմբերի, 2015 թ.

5. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի վեճի առարկա դրույթի սահմանադրականության հարցը էապես պայմանավորված է պատասխանողի կողմից մատնանշված՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2015 թ. հուլիսի 1-ից) իրավակարգավորումների բնույթով, ինչը, սակայն, սահմանադրական դատարանում դիմողի կողմից չի վիճարկվել և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով սույն գործի շրջանակներում քննության առարկա լինել չի կարող: Ընդ որում, այդ օրենքով են սահմանվում կենսաչափական տվյալների մշակման առանձնահատկությունները, որոնց համաձայն՝

կենսաչափական անձնական տվյալներ մշակվում են միայն տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և եթե օրենքով հետապնդվող նպատակը հնարավոր է իրականացնել միայն այդ կենսաչափական տվյալները մշակելու միջոցով: Նման բացառություն նախատեսված է «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, որը կենսաչափական տվյալներից առանձնացնում է աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները: **Մնացած բոլոր կենսաչափական տվյալները կարող են մշակվել բացառապես կամավորության սկզբունքով՝ տվյալ սուբյեկտի համաձայնությամբ:**

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կենսաչափական տվյալների մշակման և պահպանության հարցերը սույն գործով քննության առարկա կարող են հանդիսանալ միայն դիմումի առարկայի շրջանակներում՝ պայմանավորված մատնադրոշմներ վերցնելու և պահպանելու հանգամանքով:

6. Անհատական, այդ թվում՝ կենսաչափական, տվյալների հավաքման, օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման եվրոպական փորձի ուսումնասիրությունը վկայում է որոշակի հստակ չափորոշիչների կիրառման անհրաժեշտության մասին, մասնավորապես.

– այդ տվյալները պետք է հավաքվեն և մշակվեն արդար և օրինական ճանապարհով,

– պահպանվեն հատուկ և իրավաչափ նպատակների համար և չօգտագործվեն այդ նպատակներին չհամապատասխանող ձևով,

– լինեն համարժեք, համապատասխան և համաչափ հավաքման համար հիմք ծառայած նպատակներին,

– լինեն ճշգրիտ և անհրաժեշտության դեպքում թարմացվեն,

– պահպանվեն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտին այնպիսի ժամանակահատվածում, որը չի գերազանցում տվյալների հավաքման համար հիմք հանդիսացած նպատակի համար պահանջված ժամանակահատվածը,

– անվտանգության համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն ավտոմատացված տվյալների բազաներում պահպանվող անհատական տվյալների պաշտպանության համար՝ ընդդեմ պատահական կամ չթույլատրված ոչնչացման կամ կորստի, ինչպես նաև չթույլատրված մուտքի, փոփոխության կամ տարածման (Եվրոպայի խորհուրդ, Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիա, 1981, վավերացվել է 09.05.2012 թ.):

.... Սահմանադրական դատարանն անհատական, այդ թվում՝ կենսաչափական, տվյալների հավաքման, օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման եվրոպական փորձի ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ է համարում կարևորել նաև սահմանադրական վերահսկողության փորձը: Մասնավորապես, Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդն իր FRA–2012–1–004 որոշման շրջանակներում անհատական տվյալների համակարգի ստեղծումը, մի կողմից, համարում է նույնականացման քարտեր և ճանապարհորդական փաստաթղթեր տրամադրելու համար պահանջվող տվյալների պահպանմանը և այդպիսի փաստաթղթերի տրամադրման երաշխավորմանն ու դրանց կեղծման դեմ գործողությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթաց: Մյուս կողմից՝ Սահմանադրական խորհուրդը դիտարկել է տեղեկատվական բազայի բնութագիրը և գտել, որ բնակչության վերաբերյալ տվյալների բազայում ներառված ողջ տեղեկատվությունից կենսաչափական տվյալները, մասնավորապես, մատնահետքերը, համարվում են հատուկ վերաբերմունք պահանջող և համարժեք իրավակարգավորման առարկա:

Միաժամանակ, անձնագրերի (նույնականացման քարտերի) տրամադրման և դրա հետ կապված անհատական (կենսաչափական) տվյալների հավաքման, օգտագործման և պահ-

պանման հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է դրա տարաբնույթ բովանդակության մասին: Որոշ պետություններում կենսաչափական տվյալների հավաքումն ունի երկակի նպատակ՝ անձի նույնականացման և հանցավորության դեմ պայքարի (Արգենտինա, Ավստրալիա, Բրազիլիա, Իսրայել, Շվեդիա, ԱՄՆ և այլն):

7. .... Վիճելի իրավակարգավորում նախատեսող նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, նախ՝ որ դրանցում սուբյեկտիվ բնույթի պարտականությունների սահմանումն ինքնանպատակ չէ և պայմանավորված չէ ձևական անհրաժեշտությամբ, այլ ծառայեցվում է ինչպես մասնավոր, այնպես էլ՝ հանրային շահերին: Մասնավորապես, պետության կողմից անձին տրվող պաշտոնական փաստաթղթում (նույնականացման քարտում) անձնական տվյալների արտացոլումն իրավական անհրաժեշտություն է, առանց որի սկզբունքորեն անհնարին է իրականացնել անձի նույնականացում՝ որոշելու համար նրա ինքնությունը, քաղաքացիությունը և այլն: Նման տվյալների ներկայացման պարտականություն նախատեսված էր նաև ՀՀ կառավարության 25.12.1998 թվականի թիվ 821 որոշմամբ (կից հավելվածի 2-րդ բաժին) սահմանված անձնագրի (նախկին նմուշի) տրամադրման դեպքում: Ընդ որում, եթե «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քարտ ստանալը քաղաքացու իրավունքն է, ապա ՀՀ կառավարության հիշյալ որոշմամբ այն **պարտականություն էր**, որի կատարումն էլ պայմանավորված էր մի շարք այլ պարտականությունների կատարմամբ: Բացի դրանից, անձի նույնականացումը, ելնելով նաև ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված պահանջներից ու իրողություններից, օբյեկտիվորեն անհրաժեշտ է իրականացնել իրավական և առաջավոր տեխնիկական այնպիսի եղանակներով ու միջոցներով (այդ թվում և՝ մատնադրոշմներ վերցնելու միջոցով), որոնց գործադրման պայմաններում հնարավորինս երաշխավորվի անձի նույնականացման **ճշգրտությունը, օբյեկտիվությունը** և այդ գործընթացների արդյունքում ձեռք բերված **անձնական տվյալների պաշտպանվածությունը**, որը նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված պետության բացառիկ իրավազորությունն է, ինչպես նաև սահմանադրական պարտականությունը, որը բխում է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի պահանջներից: Իր հերթին, նույնականացումը միտված է երաշխավորելու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում անձի՝ որպես իրավասուբյեկտի լիարժեք գործունեությունը (քաղաքացիաիրավական գործունակությունը): Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող իրավակարգավորման ընդհանուր բովանդակությունից անմիջականորեն հետևում է, որ ինչպես նույնականացման քարտի տեխնիկական մասում ամփոփված անձնական տվյալները, այնպես էլ հանձնված մատնադրոշմները **բացառապես անհրաժեշտ են անձի՝ որպես ՀՀ քաղաքացու նույնականացումն ապահովելու համար**, որն անհրաժեշտ է տարբեր իրավահարաբերություններում նրա՝ որպես ՀՀ քաղաքացու սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների իրացման նպատակով: Միաժամանակ, Սահմանադրության 23-րդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված իրավական պահանջի համաձայն «....արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով»: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական նման համարժեք պայմանների ստեղծումը, երբ հստակեցված է անձնական (կենսաչափական) տվյալների հավաքման իրավական նպատակը, **օրենքով չնախատեսված այլ նպատակներով (պայմաններով) օգտագործման բացառումը պետության սահմանադրաիրավական պարտականությունն է:** Այն միտված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով, 11.3-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված և մի շարք այլ սահմանադրաիրավական նպատակներով պայմանավորված խնդիրների լուծմանը: **Իրավակարգավորման այս-**

պիսի սկզբունքի ընկալման և կիրառման պայմաններում սույն գործով վիճարկվող նորմերը սահմանադրականության խնդիր չեն հարուցի:

ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–827, 12 սեպտեմբերի, 2009 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հռչակելով իրեն որպես իրավական պետություն, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով հստակ նախատեսում և երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Սահմանադրության այս հոդվածը, վերարտադրելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3 հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9 հոդվածի դրույթները, սպառիչ կերպով սահմանում է անձին ազատությունից զրկելու դեպքերը՝ կանխորոշելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափ նպատակներ:

ՀՀ Սահմանադրության 43 հոդվածն անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշը, սահմանները և դեպքերը՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1–ին մասում ամրագրելով անձին ազատությունից զրկելու դեպքերը, սահմանադիրը միևնույն ժամանակ դրանցում արտացոլված նպատակներով և հիմքերով անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որևէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1–ին մասին համահունչ, որպես դրանցում ամրագրված՝ առանձին իրավաչափ նպատակներին հասնելու դատավարական միջոցներ, նախատեսել է ձերբակալումը և կալանավորումը, միաժամանակ որոշակիացնելով դրանցից յուրաքանչյուրի գործառույթը, նպատակը և հիմքերը:

ՀՀ Սահմանադրության 16 հոդվածը՝ հետապնդելով անձին կամայականորեն ազատությունից զրկելը բացառելու նպատակ, իր 2–րդ, 3–րդ և 4–րդ մասերում ամրագրում է այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են անձին պաշտպանելու ազատությունից անօրինական զրկվելուց:

16 հոդվածի 3–րդ մասը բովանդակում է հետևյալ կարևորագույն երաշխիքները.

1. անձը չի կարող ձերբակալված վիճակում անազատության մեջ պահվել 72 ժամից ավելի,

2. կալանավորումը կարող է տեղի ունենալ բացառապես դատարանի որոշմամբ: Այս երաշխիքը պայմանավորված է նրանով, որ դատարանը, լինելով անկախ և անկողմնակալ՝ կոչված լինելով ներկայացնելու բացառապես իրավունքի շահը, կարող է օբյեկտիվ և անաչառ գնահատական տալ անձին ազատությունից զրկելու հիմնավորվածությանը,

3. նշված ժամկետում ձերբակալված անձի առնչությամբ կալանավորման որոշում չկայացվելու դեպքում անձը ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Այսպիսով, 16 հոդվածի 3–րդ մասում ամրագրված դրույթի նպատակն է բացառել արդեն իսկ ձերբակալված անձին կամայականորեն անազատության մեջ պահելն այն դեպքում, եթե այդ դրույթով սահմանված ժամկետում նրան կալանավորելու որոշում չի կայացվում: Համա-

պատասխանաբար՝ այդ նորմի իրավակարգավորման առարկան ձերբակալված անձի առնչությամբ այդ նորմով սահմանված ժամկետում կալանավորման որոշում չկայացնելու իրավական հետևանքներն են: 16 հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմի իրավակարգավորման առարկայից և նպատակից բխում է, որ այն սահմանում է ձերբակալման ինստիտուտի կիրառման դեպքում Սահմանադրությամբ սահմանված ժամկետում կալանավորման որոշում չկայացնելու իրավական հետևանքները:

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը, այդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման առարկան և նպատակը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 16 հոդվածը, այդ թվում՝ նաև դրա 3-րդ մասում ամրագրված դրույթը, չի սահմանում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտների կիրառման, ձերբակալման կամ կալանավորման մասին իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ որոշումներ կայացնելու հաջորդականությունը, ձերբակալումը չի դիտարկում որպես կալանավորման պարտադիր նախապայման և, հետևաբար, ձերբակալված լինելու փաստի բացակայությունը՝ որպես կալանավորումը բացառող հանգամանք: Միաժամանակ, քրեական գործի մինչդատական վարույթի փուլում վերահսկողական իր գործառույթն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատապարտող ակտ է, այլ արդյունավետ ու անաչառ արդարադատություն իրականացնելու, Սահմանադրության 16 հոդվածի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի պահանջների կատարումն ապահովող նախապայման:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների կիրառման պարտադիր հաջորդականության հնարավորությունը բացառվում է նաև այդ ինստիտուտների էության, նպատակների և կիրառման հիմքերի համատեքստում:

«Ձերբակալման» ինստիտուտի էությունն ու նպատակները բացահայտված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128 հոդվածի 1-ին մասում: Ձերբակալումը դատավարական հարկադրանքի միջոց է, որի պարտադիր հատկանիշ է կարճաժամկետ լինելը, և նպատակաուղղված է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելուն: Ձերբակալմամբ հետապնդվող նպատակները համահունչ են ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում մատնանշված նպատակներին: Այսինքն՝ օրենսդիրը որպես նշված սահմանադրական նորմում ամրագրված նպատակներին հասնելու դատավարական միջոց նախատեսել է ձերբակալումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի Գլուխ 17-ը, ձերբակալման նպատակներից ելնելով, սահմանում է ձերբակալման հիմքերը և կարգը:

«Կալանավորման» ինստիտուտի՝ որպես խափանման միջոցի տեսակի, էությունը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134 հոդվածում: Վերջինիս համաձայն՝ կալանավորումը միայն մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոց է, որի նպատակն է քրեական գործով վարույթի ընթացքում անձի ոչ պատշաճ վարքագծի կանխումը: Ի տարբերություն ձերբակալման, կալանավորումը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք և խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել խափանման միջոցի հենց այդ տեսակը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135 հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր հանգամանքները: Օրենսգրքի 135 հոդվածը, ամրագրելով կալանավորման հիմքերը, ըստ էության մատնանշում է ոչ պատշաճ վարքագծի այն հնարավոր դրսևորումները, որոնք կանխելու նպատակով որպես խափանման միջոց կիրառվում է կալանավորումը: Կալանավորման նպատակի և հիմքերի ուսումնասիրությունը վկայում է, որ կալանավորմամբ հետապնդվող

նպատակներն ըստ էության համահունչ են ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասի, մասնավորապես 3-րդ կետում մատնանշված նպատակին, այն է՝ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակին, ինչպես նաև 4-րդ կետում մատնանշված՝ հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակին: Այսինքն, օրենսդիրը՝ որպես նշված սահմանադրական նորմում ամրագրված նպատակներին հասնելու դատավարական միջոց նախատեսել է կալանավորումը:

«Ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների և հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության տարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես տարբերվող հիմքեր: Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի 1-ին մասում մատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատավարական միջոց, և կիրառվում է տարբեր հիմքերի առկայությամբ: Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրը, առանց որևէ փոխպայմանավորվածության, փոխկապակցվածության և հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ առկա են դրանով հետապնդվող նպատակները և դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պարագայում, երբ կալանավորման հիմքերն առավել ակնհայտ են և ոչ վիճահարույց, կալանավորումն ըստ էության այն համարժեք իրավաչափ միջոցն է, որն անհրաժեշտ է կալանավորմամբ հետապնդվող նպատակի համար:

7. .... Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավորի մոտ տարվելու և լսվելու իրավունքի իրացումն անմիջականորեն և անխզելիորեն կապված է անձին փաստացիորեն ազատության մեջ պահելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու փաստի հետ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ իրավունքի իրացման երաշխավորման պարտականությունը պետության համար ծագում է անձին ազատությունից փաստացիորեն զրկելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու պահից: Այսինքն՝ ինչպես ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով, այնպես էլ Կոնվենցիայի 5 հոդվածով նախատեսված բոլոր երաշխիքները, այդ թվում՝ նաև դատարանի առջև լսվելու իրավունքը, սկսում են գործել միայն այն պահից սկսած, երբ անձը պետության կողմից փաստացիորեն զրկվում է ազատությունից: Հետևաբար, նկատի ունենալով, որ հետախուզման մեջ գտնվող անձը փաստացիորեն ազատությունից զրկված չէ, նրա բացակայության պայմաններում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության քննարկման ժամանակ այդ անձը չի օգտվում վերոհիշյալ երաշխիքներից, այդ թվում՝ դատարանում լսվելու իրավունքից: Ուստի նման իրավիճակում մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշման կայացումը չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 16 հոդվածով և Կոնվենցիայի 5 հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման: Ընդ որում, քրեական հետապնդման մարմինների պարտականությունն ազատությունից զրկված անձի ներկայության ապահովումն է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման նպատակով հրավիրված դատական նիստին:

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ հետախուզման մեջ գտնվող անձի վերաբերյալ կալանքի որոշում կայացնելու ընթացակարգը կիրառվում է նաև քրեական գործերով իրավական օգնության և հանձնման մասին միջազգային փաստաթղթերում՝ ԱՊՀ շրջանակներում 1993 թ. հունվարի 22-ին Մինսկում և 2002 թ. հոկտեմբերի 7-ին Քիշնևում կնքված՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիաներում, Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքված՝ «Հանձնման մասին» կոնվենցիայում և այլն: Վերոհիշյալ կոնվենցիաների ուսումնասիրությունը վկայում է՝ հաշվի առնելով, որ հանձնման գործընթա-

ցը, որպես կանոն, երկարատև պրոցես է, նշված միջազգային պայմանագրերը մինչև հայցող պետության իշխանություններին հանձնման ենթակա անձին հանձնելը, որպես կանոն, թույլ են տալիս նրան ազատությունից զրկել մինչև 30-40 օր ժամկետով: Ըստ այդմ, նշված միջազգային փաստաթղթերը հայցող պետությունից պահանջում են որպես ազատությունից զրկելու իրավական հիմք ներկայացնել այնպիսի դատավարական ակտ, որը հնարավորություն կտա տվյալ անձին անազատության մեջ պահել որոշակի երկարատև ժամանակահատվածի ընթացքում: Մասնավորապես, Մինսկի կոնվենցիայի 58 և Քիշնևի կոնվենցիայի 67 հոդվածների 2-րդ մասերը սահմանում են, որ քրեական հետապնդում իրականացնելու կամ պատասխանատվության ենթարկելու համար հանձնելու վերաբերյալ հարցմանը պետք է կցված լինեն կալանքի վերցնելու և որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների հաստատված պատճենները, համապատասխանաբար 60 և 68 հոդվածները նախատեսում են հանձնման մասին հաղորդում ստանալուց հետո անձին կալանքի վերցնելու հնարավորություն, իսկ 61 և 70 հոդվածները նախատեսում են նաև հանձնվող անձին կալանքի վերցնելը կամ ձերբակալելը նաև միջնորդության հիման վրա, այսինքն՝ եթե հանձնման մասին հաղորդում դեռ չկա, սակայն առկա է հայցող կողմի միջնորդությունը, որը պարունակում է հղում այն դատական որոշմանը, որով անձի նկատմամբ հայցող պետությունում կալանք է կիրառվել, և որը պետք է ներկայացվի հանձնման մասին հաղորդման հետ, ապա հայցվող պետությունը կարող է առանց դատարանի որոշման կալանավորել անձին:

Հաշվի առնելով, որ ձերբակալումը հարկադրանքի կարճաժամկետ միջոց է, իսկ հանձնման գործընթացը պահանջում է շատ ավելի երկար ժամանակ, հանձնման ենթակա անձին ավելի երկար ժամկետով անազատության մեջ պահելու օրինական հիմք, հետևաբար, հետախուզվող անձի հանձնումը Հայաստանի Հանրապետությանը հնարավոր է դառնում միայն տվյալ անձի վերաբերյալ կալանքի որոշման առկայության դեպքում: ....

9. Անձին ազատությունից զրկելը նրա մեկուսացումն է հասարակությունից, ընտանիքից, ինչը ենթադրում է, ի թիվս այլոց, ծառայողական պարտականությունների կատարման, իր հայեցողությամբ տեղաշարժվելու և անսահմանափակ թվով անձանց հետ շփվելու անհնարինություն: Այսինքն՝ ձերբակալման կամ կալանավորման միջոցով ազատությունից զրկումը, որպես պարտադիր հատկանիշ, ի թիվս այլոց, ներառում է ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե որևէ իրավական ինստիտուտի կիրառում անհրաժեշտաբար և անխուսափելիորեն ենթադրում է այս կամ այն իրավունքի իրավաչափ սահմանափակում, ապա նման ինստիտուտի կիրառումը չի կարող ենթադրել նաև տվյալ իրավունքի խախտում: Այս հիմքով սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 16 հոդվածի հիման վրա ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման շրջանակներում Սահմանադրության 25 հոդվածով սահմանված՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի ենթադրյալ խախտումը չի կարող սահմանադրական դատարանում դառնալ քննության առարկա:

.... Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի պնդումն առ այն, որ հետախուզման մեջ գտնվող անձի բացակայության պայմաններում նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու որոշումը խախտում է ազատ տեղաշարժվելու նրա սահմանադրական իրավունքը:

ՍԴՈ-913, 14 սեպտեմբերի, 2010 թ.

4. .... ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, որը ենթադրում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործունեություն միայն

այդ իրավունքի և դրա անխախտելիության ապահովման շրջանակներում: ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք (ՀՀ Սահմ. 15, 38-րդ հոդվածներ): Սահմանադրորեն երաշխավորված է նաև մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքը (ՀՀ Սահմ. 16-րդ հոդված), որի իրավական բովանդակությունից է բխում անձի նկատմամբ անօրինական ամեն տեսակ ֆիզիկական և հոգեբանական ներգործության արգելքը՝ ինչպես մարդու կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո՝ նրա դիակի նկատմամբ, այդ արգելքին համարժեք իրավական պաշտպանություն ապահովելու առումով, որպես նաև մարդու արժանապատվության իրավունքի առանձնահատուկ դրսևորում: Այդ իրավունքն օրենքով ենթակա է երաշխավորված պաշտպանության նաև ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:

ՍԴՈ-1059, 23 նոյեմբերի, 2012 թ.

4. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է հիմնականում երկու հիմնախնդիր, այն է՝ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ այդ մասին անհապաղ իր կողմից ընտրված անձին տեղեկացնելու իրավունքի երաշխավորումը վարչական ձերբակալման գործող ընթացակարգի շրջանակներում և նույն շրջանակներում վարչական ձերբակալման ժամկետների, այդ ժամկետները երկարացնելու լիազորություն ունեցող սուբյեկտների վերաբերյալ դրույթների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության պահանջներին:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանմամբ օրենսդիրը ժամանակին նպատակ է հետապնդել ապահովելու վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի՝ իր ձերբակալման մասին այլ անձանց տեղեկացնելու իրավունքը, որի իրացումը, ըստ այդ նորմի տառացի իմաստի՝ պայմանավորվում է իրավասու մարմնի կամահայտ վերաբերմունքով, բացառությամբ վարչական իրավախախտում կատարած անչափահաս անձի ձերբակալման դեպքերի, երբ վերոհիշյալ իրավունքի իրացումը պարտադիր է: Սակայն տվյալ օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Սահմանադրության ընդունումից և Հայաստանի անկախացումից առաջ, իսկ հետագայում, նաև ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները նկատի ունենալով, օրենսգրքի 260-րդ հոդվածը, ինչպես նաև 262-րդ հոդվածի գործող խմբագրությամբ տեքստի 2-րդ մասը ՀՀ օրենսդիր մարմնի կողմից որևէ փոփոխության չեն ենթարկվել: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է. «.... Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին»:

Օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վերը նշված դրույթի համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասը, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման, վարչական իրավախախտման համար ձերբակալված անձի՝ այդ մասին այլ անձանց տեղյակ պահելու իրավունքի իրացման պարագայում նախատեսել է միջնորդավորված կառուցակարգ, ըստ որի՝ նախ, ձերբակալվածի իրավունքի իրականացման համար որպես նախապայման է հանդիսանում վերջինիս **խնդրանքը՝** ուղղված իրավասու պաշտոնատար անձին: Երկրորդ, դիտարկվող իրավակարգավորմամբ այլ անձանց տեղյակ պահելու գործընթացի անմիջական իրականացման իրավասությունը վերա-

պահված է ոչ թե ձերբակալված անձին, այլ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործով վարույթն իրականացնող մարմնի իրավասու պաշտոնատար անձին: Երրորդ, օ-րենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսել է անձանց առավել սահմանափակ շր-ջանակ, որոնք կարող են տեղեկացվել տվյալ անձի ձերբակալման մասին:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ ազատությունից զրկված յու-րաքանչյուր անձի՝ հիշատակված իրավունքի իրացումը չի կրում միջնորդավորված բնույթ, կախվածության մեջ չի դրվում որևէ պաշտոնատար անձի հայեցողությունից, ուղղակիորեն վերապահված է ձերբակալվածին: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ազա-տությունից զրկված անձի համար ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկ-րորդ նախադասությամբ ամրագրված իրավունքն անձն իրականացնում է **անձամբ և անմի-ջականորեն,** իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործով վարույթն իրակա-նացնող մարմինը պարտավոր է ազատությունից զրկված անձին ապահովել քաղաքացիա-կան շրջանառության մեջ գտնվող բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, որոնք նա-խատեսված են անձանց հաղորդակցման համար: Միևնույն ժամանակ, պաշտպանին՝ իր ձերբակալման մասին տեղեկացնելը, հանդիսանում է Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու և պաշտպան ունենալու իրավունքների բաղադրատարր, որի նպատակն այլ է, քան Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված՝ իր ձերբակալման մա-սին իր կողմից ընտրված անձին տեղեկացնելու իրավունքի իրավական բովանդակությունը:

5. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 16 և 103-րդ հոդվածներով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով ձերբակալ-ման առավելագույն ժամկետը 72 ժամ է, այլ ոչ թե 3 օր, և դատախազը չունի վարչական ձերբակալման ժամկետը երկարաձգելու իրավասություն: Միևնույն ժամանակ, սահմանադ-րական դատարանն արձանագրում է, որ դատախազությունն իրավասու է իրականացնելու հսկողություն վարչական ձերբակալման օրինականության նկատմամբ, ներառյալ՝ վարչա-կան ձերբակալման ենթարկված անձանց՝ անազատության մեջ մնալու ժամկետների պահ-պանման նկատմամբ հսկողությունը, որի իրավական բովանդակային ծավալը չի կարող նե-րառել ձերբակալման ժամկետների երկարաձգումը:

.... Օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Վարչական ձերբակալման ժամկետը հաշվվում է արձանագրություն կազմելու համար խախտողին բերելու պահից, իսկ հարբած վիճակում գտնվող անձին՝ նրա սթափվելու ժամանակից»: Մինչդեռ Սահմանադրու-թյան 16-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ ձերբակալման ժամկետի հաշվարկն սկսվում է **ձեր-բակալման պահից**: Ընդ որում, Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասը տարբերա-կում չի դնում այն հանգամանքների միջև, թե ձերբակալված անձը հարբած է, թե՝ ոչ: Հարկ է նաև արձանագրել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-32-Ն օրենքով վարչական կալանքի ինստիտուտն ուժը կորցրած է ճանաչ-վել, որպիսի պարագայում առավել քան կարևորվում է ձերբակալման պահից 72 ժամը լրա-նալուց հետո վարչական կարգով ձերբակալված անձին ազատ արձակելու հանգամանքը:

ՍԴՈ-1295, 2 սեպտեմբերի, 2016 թ.

6. .... ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 4-րդ և 5-րդ մա-սերի համաձայն՝ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան Սահմա-նադրությամբ նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով, մասնավորա-պես՝ անձին իրավասու մարմնին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրա-ժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով: Միաժամանակ, Սահմանադրության վերոհիշյալ նորմերի համաձայն՝ դատա-

րանն է որոշում ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամից ավել անազատության մեջ անձի հետագա պահելը թույլատրելու հարցը (ՀՀ Սահմ. 27-րդ հոդվածի 4-րդ մաս), իսկ անձնական ազատությունից զրկված անձն իրավունք ունի դատական ստուգման կարգով վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է (ՀՀ Սահմ. 27-րդ հոդվածի 5-րդ մաս):

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի իրավական բովանդակությունից անմիջականորեն բխում է, որ.

– անձնական ազատությունից զրկելու իրավական չափանիշները սահմանվում են Սահմանադրությամբ,

– անձնական ազատությունից զրկելու կարգը սահմանվում է օրենքով,

– ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամից ավել անազատության մեջ գտնվող անձի հետագա պահելու հարցը որոշում է դատարանը,

– անձն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը,

– ազատությունից զրկելու իրավաչափության հարցը դատարանը որոշում է սեղմ ժամկետում:

Համադրելով անձնական ազատության իրավունքի պաշտպանության վերոշարադրյալ, ինչպես նաև Սահմանադրական դատարանի որոշումներով բացահայտված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման չափորոշիչները՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները նախատեսող նորմերի հետ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

– ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով են (այսուհետ՝ օրենսգիրք) նախատեսված անձին ազատությունից զրկելու կարգն ու պայմանները, երբ առկա է անձին իրավասու մարմնին ներկայացնելու նպատակ, նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է՝ կանխելու համար հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի հնարավոր փախուստը (285-րդ հոդված), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության ընդհանուր պահանջներին,

– օրենսգրքով է նախատեսված՝ ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամից ավել անազատության մեջ գտնվող անձին հետագա պահելու հարցի քննության դատավարական ընթացակարգը (283-րդ հոդված), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության և 4-րդ մասի ընդհանուր պահանջներին,

– օրենսգրքով նախատեսված է անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու և սեղմ ժամկետում (երեք օր) համապատասխան որոշում կայացնելու ընթացակարգ (278-րդ հոդվածի 3-րդ մաս, 288-րդ հոդված), ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին,

– անձին դատական կարգով ազատությունից զրկելու բոլոր ընթացակարգերում երաշխավորված է հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք (285-րդ և 288-րդ հոդվածներ), ինչը համահունչ է դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Անդրադառնալով անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու ընթացակարգում նաև տվյալ անձի կողմից անձամբ պաշտպանվելու իրավունքի երաշխավորման վերաբերյալ դիմող կողմի հարցադրմանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ մեղադրանքից, հավասարապես՝ նաև ազատությունից զրկելու հետ

կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ չի կարող բացառել անձի՝ անձամբ պաշտպանվելու իրավունքը, եթե առկա է վերջինիս կողմից հստակ արտահայտված համապատասխան ցանկություն (դատավարական միջնորդություն): Անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, հետևաբար՝ պարտադիր է ապահովման իրավակիրառական պրակտիկայում: **Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ անձի՝ լսվելու (անձամբ պաշտպանվելու) իրավունքի իրացումն ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ դատական բողոքարկման (ստուգման) հետագա ընթացակարգերում:**

ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-923, 9 նոյեմբերի, 2010 թ.

7. .... «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ օրենսդրությունը, ի մասնավորի՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի նորմերը դիմողի կողմից վկայակոչված օրենսդրական բացի պայմաններում ապահովում են այն իրավական երաշխիքների առկայությունը, որոնք թույլ են տալիս խնդրո առարկա քննչական գործողությունը կատարելու գործընթացում ապահովել հարգանքը ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հանդեպ:

ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-278, 11 հունվարի, 2001 թ.

6. .... Երկրորդ՝ քննության առարկա դրույթների առումով Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դաշնագիրը և միջազգային մյուս համապատասխան փաստաթղթերը, յուրաքանչյուրի՝ ազատորեն արտահայտվելու, այդ թվում սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունն ամրագրելով, դրա իրականացման կարևոր երաշխիք են դիտում պետական մարմինների միջամտության բացառումը: Սակայն, դա չի խոչընդոտում այս ոլորտում լիցենզավորման համակարգի կիրառումը, ինչպես նաև հասարակության և պետության օրինական շահերից ելնելով՝ օրենքով որոշ սահմանափակումներ նախատեսելը:

Տվյալ դեպքում, նման սահմանափակում նախատեսող օրենքներում պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները.

ա) հարաբերությունների սահմանման և կարգավորման առումով օրենքը պետք է լինի առավելապես ընդհանուր և վերացական, քան կոնկրետ հասցեագրված,

բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից,

գ) սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնք վտանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը:

Հետևաբար, հարցը պետք է վերաբերի ոչ թե անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելուն, այլ անկախ գործելու օրենսդրական ապահովմանը՝ վերոնշյալ հանգամանքները

հաշվի առնելով: Այս սկզբունքը պետք է գերակայող նշանակություն ունենար տվյալ օրենքի համար:

ՍԴՈ–766, 14 հոկտեմբերի, 2008 թ.

6. .... Հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամատեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Հանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ և ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման:

7. ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

Սահմանադրության 27 հոդվածի վերլուծությունից բխում է, որ անհատին անմիջականորեն վերաբերում են հոդվածի առաջին և երկրորդ մասերով սահմանված իրավունքները: Հոդվածի երրորդ և չորրորդ մասերով սահմանված դրույթները վերաբերում են լրատվամիջոցներին, երաշխավորում են համապատասխան ինստիտուցիոնալ և կազմակերպչական միջոցների առկայությունը՝ ապահովելու համար Սահմանադրության 27 հոդվածի առաջին և երկրորդ մասերով սահմանված իրավունքների արդյունավետ իրացումը: Այդ կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածը հարկ է գնահատել ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի առաջին և երկրորդ մասերով սահմանված իրավունքների և դրանց սահմանափակումների տեսանկյունից:

Սահմանադրության 27 հոդվածի առաջին և երկրորդ մասերում ամրագրված՝ կարծիքն ազատ արտահայտելու և խոսքի ազատության իրավունքները կարող են սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 43 հոդվածում ամրագրված հիմքերով:

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ, մի կողմից, տեղեկատվություն տարածելու և խոսքի ազատության, մյուս կողմից՝ անձի՝ իր հեղինակության նկատմամբ հարգանքի իրավունքի միջև փոխհարաբերությունը պետք է քննության առնվի ՀՀ Սահմանադրության 14–րդ հոդվածով սահմանված՝ մարդու արժանապատվության հարգման ու պաշտպանության և Սահմանադրության 27–րդ հոդվածով սահմանված՝ ժողովրդավարական պետությունում քաղաքական բազմակարծության անքակտելի տարր հանդիսացող՝ խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի հետ հարաբերակցության լույսի ներքո:

.... ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածների, ինչպես նաև 43–րդ և 47–րդ (1–ին մաս) հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ մարդու արժանապատվությունից՝ ներառյալ պատիվը, բարի համբավը և մասնավոր կյանքը, բխող իրավունքները և ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են արդարացնել արտա-

հայտնվելու ազատության սահմանափակումը միայն **իրավաչափ շրջանակներում**: Այդ մոտեցումն է դրված նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10.2-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17 և 19.3-րդ, Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածների հիմքում:

.... Սահմանադրաիրավական այս հիմնարար դրույթները քննության առարկա իրավահարաբերությունների շրջանակներում ունեն ելակետային ու բացարձակ նշանակություն ոչ միայն օրինաստեղծի, այլև իրավակիրառողի ու այդ հարաբերությունների մասնակիցների համար: Այդ դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում դրանք հիմնականում արտացոլված են համակարգային օրգանական կապի մեջ և ապահովում են իրավաչափ հավասարակշռություն իրավունքի ու դրա պաշտպանության երաշխիքների, հանրային ու անհատական շահերի, իրավական ու բարոյական չափորոշիչների միջև: Օրենքը սահմանադրական ճիշտ չափորոշիչներ է դրել տվյալ հիմնախնդրի իրավական կանոնակարգման հիմքում: **Դրանց համարժեք ընկալումը, իրավաչափ կիրառումը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ճշմարտության համակարգային բացահայտումը դատական պրակտիկայի խնդիրն է:**

....

9. Վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունը՝ անկախ դրա բնույթից ու չափից, **հանդիսանում է միջամտություն անձի արտահայտվելու ազատությանը:** Նման ձևով արտահայտվելու ազատությանը միջամտության և այդ միջամտությամբ հետապնդվող իրավաչափ նպատակի (տվյալ դեպքում՝ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակի) միջև արդարացի հավասարակշռությունը պայմանավորող գործոն է, ի թիվս այլնի, վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող պատասխանատվության համաչափությունն անձի պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասին: Այս առնչությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պահանջում է, որպեսզի վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող փոխհատուցումը համաչափության ողջամիտ հարաբերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնասի հետ: **Արատավորող արտահայտության համար նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձին պատճառված գույքային վնասից**: Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել որպես հիմնավորված անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում:

....

11. .... նկատի ունենալով, որ զրպարտությանն առնչվող գործերով առաջանում է արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելը գնահատելու խնդիր, իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ **արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար,**

....

– չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար և նպաստել հասարակության համար կարևոր հարցերի շուրջ քննարկումներին,

....

– պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից,

– նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը,

– արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար,

– վնասի փոխհատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն, հաշվի առնվի պատասխանողի եկամուտների չափը, չսահմանվի պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար,

– ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում պահանջող հայցվորը պետք է ապացուցի այդ վնասի առկայության փաստը,

– փոխհատուցման՝ օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելի է միայն առավել լուրջ ու ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերում,

– լոկ փաստերի քննադատական գնահատականը, որը չի պարունակում փաստական ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր է ապացուցել, չի կարող փոխհատուցման պահանջի հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը եղել է գնահատողական դատողություն, կարող է սահմանվել ոչ նյութական վնասի փոխհատուցում,

– փոխհատուցում սահմանելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են զգացմունքներին հասցված վնասը, ներողություն հայցելու պատրաստակամության բացակայությունը,

– լրագրողի՝ հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության գաղտնի աղբյուրները չբացահայտելու իրավունքից օգտվելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել և օգտագործվել են արտադատական հատուցման ձևերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները,

– պետք է պարտադիր կերպով կողմերին առաջարկվի հաշտության գալ և աջակցություն ցուցաբերվի այդ հարցում: Վնասը գնահատելիս հաշտեցման առաջարկը պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք,

– պետք է բացահայտ կերպով ճանաչվեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը և այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

ՍԴՈ–1010, 6 մարտի, 2012 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածի համաձայն՝ խոսքի ազատության իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը: Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը:

Սահմանադրական այս իրավունքը, սակայն, բացարձակ իրավունք չէ և ենթակա է սահմանափակման ՀՀ Սահմանադրության 43–րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով: Այս սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, պետական անվտանգության հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը: ՀՀ Սահմանադրության 43–րդ հոդվածում նշված՝ պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի համար տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության սահմանափակման հնարավորությունը թույլ է տալիս պետական իշխանությանը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասել և ըստ այդմ սահմանափակել այն տեղեկությունների մատչելիությունը, որոնց տարածումը կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը: ՀՀ Սահմանադրության 43–րդ հոդվածին համապատասխան՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ «Տեղեկատվության ազատության սահմանափակումները» վերտառությամբ 8–րդ հոդվածը սահմանափակում է այն տեղեկատվության մատչելիությունը, որը պարունակում է պետական, ծառայողական, բանկային կամ առևտրային գաղտնիք:

ՍԴՈ– 1234, 20 հոկտեմբերի, 2015 թ.

6. .... Որպես ընդհանուր սկզբունք՝ ազատ արտահայտվելու իրավունքի ցանկացած սահմանափակման «անհրաժեշտություն» պետք է համոզիչ կերպով հիմնավորվի: Առաջին հերթին ազգային իշխանություններն են գնահատում սահմանափակումների համար «ճնշող սոցիալական պահանջ» առկայությունը, և նման գնահատական տալիս նրանք օժտված են որոշակի հայեցողությամբ:

Մյուս կողմից՝ հաշվի է առնվում, որ ազգային հայեցողության շրջանակները սահմանափակված են ժողովրդավարական հասարակության՝ ազատ մամուլը երաշխավորելու և պահպանելու շահով: Այդ շահը մեծ դեր է կատարում հավասարակշռման գործում, որով որոշվում է, թե արդյոք սահմանափակումները համաչափ են հետապնդվող իրավաչափ նպատակին: Բացահայտման պահանջը կարող է բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն աղբյուրի վրա, որի ինքնությունը կարող է պարզվել, այլ նաև լրատվամիջոցի վրա, որի հեղինակությունը կարող է խաթարվել ապագա հնարավոր աղբյուրների և հասարակության անդամների շրջանակում, որոնք շահագրգռված են ստանալ տեղեկատվություն անանուն աղբյուրից, և որոնք, իրենց հերթին, կարող են դառնալ աղբյուր:

7. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունք-

ների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, խոսքի ազատության իրավունքին անմիջականորեն առնչվող՝ տեղեկատվության միջոցների ազատության սահմանափակման համաչափության հիմքը, որը կարող է հանգեցնել տեղեկատվության աղբյուրի բացահայտմանը, գլխավորապես վերոնշյալ երեք իրավապայմաններն են (դրանցից առնվազն մեկի առկայությունը), ու դրանցից ցանկացած էական շեղում իրավաչափ համարվել չի կարող:

Այս մոտեցումն է նաև դրված եվրոպական բազմաթիվ երկրներում տվյալ հիմնախնդրի իրավակարգավորման հիմքում (Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա և այլն), ինչը շեշտվում է նաև պատասխանողի բացատրության մեջ:

Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև 42.1-րդ հոդվածով՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նշված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

.... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության և մարդու հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքների պահանջներից չի բխում դատարանի այնպիսի եզրահանգումը, համաձայն որի՝ «Աղբյուրի բացահայտման իրավաչափ նպատակը գերակշռում է հասարակական շահին», նկատի ունենալով, որ հրապարակումները վերաբերում են հանրային ճանաչում ունեցող մարդկանց և նպատակը հասարակության մոտ առկա կասկածների փարատումն է (ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 26.06.2014 թ. ԵԿԴ/0032/08/14 որոշում, էջ 5, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22 սեպտեմբերի 2014 թ. որոշում, էջեր 20-21):

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով սահմանված են քրեադատավարական կոնկրետ փուլում դատարանի լիազորությունները և քննչական այն գործողությունները, որոնք առանց նախնական դատական վերահսկողության իրականացվել չեն կարող: Այդ նորմերն ինքնին սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Վերոշարադրյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում վեճի առարկա դրույթների առնչությամբ դատական պրակտիկայի կողմից տրված այն մեկնաբանությունը, համաձայն որի՝ «այլ հաղորդումների» գաղտնիության սահմանափակման մեջ օրենսդրի կողմից ընդգրկվել է նաև տեղեկատվության աղբյուրի բացահայտումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վեճի առարկա հոդվածներում «այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման» արտահայտությունը կարող է մեկնաբանվել բացառապես յուրաքանչյուրի անձնական կյանքի հարգման սահմանադրական իրավունքի տեսանկյունից և չի կարող իր բովանդակության մեջ ներառել լրատվական գործունեություն իրականացնողի, ինչպես նաև լրագրողի «տեղեկատվության աղբյուրի բացահայտումը», ինչպես շեշտվում է դատական ակտում:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «եթե դատարանի որոշմամբ լրատվական գործունեություն իրականացնողին կամ լրագրողին պարտադրվում է բացահայտել տեղեկատվության աղբյուրը, ապա լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի միջնորդությամբ դատական քննությունն իրականացվում է դռնփակ», այսուամենայնիվ, օրենսգիրքը չի նախատեսում տեղեկատվության աղբյուրի բացահայտման հստակ ընթացակարգ, ինչին անդրադարձել է նաև պատասխանողը: Իրավակարգավորման այս բացն իրավակիրառական պրակտիկայում չի կարող լրացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում:

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–913, 14 սեպտեմբերի, 2010 թ.

7. .... ՀՀ–ում փոխպատվաստման պրակտիկայի ուսումնասիրությունը նաև վկայում է, որ այդ բնագավառի իրավակարգավորումը, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2007 թ. ապրիլի 26–ի թիվ 502–Ն որոշմամբ հաստատված ցանկը, անհրաժեշտ է համապատասխանեցնել բժշկական կոնկրետ հաստատություններում փոխպատվաստման իրական գիտատեխնոլոգիական հնարավորություններին՝ ապահովելով այդ բնագավառում բնակչության բժշկական երաշխավորված սպասարկման կազմակերպումն այն ընդհանուր սկզբունքներով, որպիսիք, ի կատարումն ՀՀ Սահմանադրության 38–րդ, 48–րդ (4–րդ կետ) հոդվածների դրույթների, ամրագրված են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում: Կառավարության հիշյալ որոշումը համահունչ չէ քննության առարկա օրենքի պահանջին: Այն դեպքում, երբ օրենքով արգելվում է Հայաստանից դոնորական օրգանների ու հյուսվածքների արտահանումը, կառավարությունն իր այդ որոշմամբ սահմանել է թվով տասնչորս օրգանների ցանկ, երբ դրանցից միայն երկուսի գծով է Հայաստանում փոխպատվաստում իրականացվում: Այս առումով ՀՀ կառավարության 2007 թ. ապրիլի 26–ի թիվ 502–Ն որոշմամբ հաստատված ցանկն օրենքի իրավակարգավորման սկզբունքներից չի բխում:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա օրենքի և դրա կիրարկումն ապահովող իրավակարգավորման վերոհիշյալ պարտադիր պայմանների բացակայությամբ լիարժեք չեն կարող երաշխավորվել մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու և դրա հետ կապված բժշկական օգնության ու սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի (ՀՀ Սահմ. 38–րդ հոդված) իրացման **մատչելիությունը**, հետևաբար՝ բնակչության առողջության պահպանման պետական ծրագրերի արդյունավետությունը:

ԲՈՒՀԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–1136, 24 հունվարի, 2014 թ.

5. Անդրադառնալով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5–րդ հոդվածի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետի դրույթներին, սույն գործով դիմումների, դրանցով վիճարկվող իրավական նորմերի, դիմումներին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը սահմանադրական դատարանի առջև ըստ էության բարձրացնում է այն հարցը, թե ինչու՞ է ինքնավար բուհերի փոխարեն ընդունելության քննությունները կազմակերպում և անցկացնում «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ–ը:

.... Սահմանադրական դատարանը համամիտ է այն մոտեցմանը, որ բուհերի ողջամիտ ինքնավարությունը չի ենթադրում բուհերի բացարձակ անկախություն: Բուհերի ողջամիտ ինքնավարության շրջանակները պայմանավորված են որակյալ կրթություն ապահովելու նպատակով կրթության բնագավառում պետության՝ օրենքի հիման վրա իրականացվող քաղաքականության շրջանակներով: Ուստի սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5–րդ հոդվածի դրույթներում առկա է իրավական անորոշություն: Միաժամանակ, ՀՀ **սահմանադրական դատարանը կիսում է դիմողի մտահոգությունն այն մասին, որ վեճի առարկա օրենքներում ձևակերպումներն առավել մեծ չափով կարող էին համապատասխանել իրավական որոշակիության սկզբունքին և**

երկիմաստություն չառաջացնեին: Սակայն այդ երկիմաստությունը դեռևս փորձ չի արվել հաղթահարել օրենքի միատեսակ կիրառման շրջանակներում, իսկ մեկնաբանությունները հայեցողական բնույթ ունեն: Այդուհանդերձ, օրենքի նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ դիմողի մտահոգության շրջանակներում, օրենսդրական բարեփոխումների խնդրի առկայությամբ հանդերձ, առկա չէ սահմանադրականության խնդիր:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված՝ «ուսումնական գործընթացի կազմակերպում» հասկացության իրավական անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկներն այն պատճառաբանությամբ, որ նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում բուհերի դիմորդների ընդունելությունը տարանջատված է ուսումնական գործընթացի կազմակերպումից:

Բացի նշվածից, սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ «ընդունելության կազմակերպում» և «ընդունելության քննությունների կազմակերպում» արտահայտությունները չեն կարող ունենալ միևնույն բովանդակությունը, իսկ միասնական, կենտրոնացված և ներբուհական ընդունելության քննությունների կազմակերպումը և անցկացումն այլ կառույցների կողմից՝ կոչված է սոսկ նախատեսելու թե՛ պետական, թե՛ ոչ պետական բուհերում ըստ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության քննությունների կազմակերպման, անցկացման ներդաշնակ չափանիշներ՝ սահմանելով որակի այն նվազագույն շեմը, որից ցածր հնարավոր չէ երաշխավորել համապատասխան մասնագիտություններով բարձրագույն կրթություն տրամադրելու անհրաժեշտ նախադրյալները: «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բուհերի համար չեն առաջացնում ընդունելության համար հավելյալ չափանիշներ կամ պահանջներ սահմանելու որևիցե խոչընդոտ՝ դրանով իսկ երաշխավորելով համապատասխան բուհի ինքնավարության անքակտելիությունը:

ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ-677, 7 փետրվարի, 2007 թ.

6. Մի շարք միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով (6 հոդվածի 4-րդ կետ) և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (8 հոդված), Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորելու մարդկանց գործադուլի իրավունքը և այդ իրավունքի հնարավոր սահմանափակումների հիմքում դնել միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործադուլի իրավունքը, որպես կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման միջոց, որպես իրավական ինստիտուտ, ունի հանրային-իրավական բնույթ, քանի որ առնչվում է ոչ միայն «աշխատողներ – գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ – երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ – պետական մարմիններ», «գործատու – պետական մարմիններ» փոխհարաբերություններին: Միջազգային իրավական փաստաթղթերով այդ իրավունքի երաշխավորումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատավորական կոլեկտիվների ընդհանուր շահերի իրացումով: Մասնավորապես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (16.12.1966 թ.) 8 հոդվածում գործադուլի իրավունքի իրականացումը կապվում է արհեստակցական միությունների կազմավորման ու գործունեության երաշխավորման հետ: Հայաստանի Հանրապետության համար 2004 թ. մարտի 1-ից ուժի

մեջ մտած՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ մասի 6 հոդվածը, որը վերնագրված է «Կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքը», սահմանում է, որ Կողմերը, կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով, շահերի բախման դեպքում ճանաչում են **աշխատողների և գործատուների համատեղ գործողությունների անցկացման իրավունքը՝ ներառյալ գործադուլների իրավունքը:** Միաժամանակ, նույն հոդվածում շեշտվում է, որ այդ իրավունքը ճանաչվում է այնպիսի պայմանով, երբ կողմերը կենթարկվեն նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից բխող պարտավորություններին:

Հայաստանի Հանրապետությունն ստանձնելով նման պարտավորություն և նկատի ունենալով Խարտիայի հավելվածում տվյալ նորմի վերաբերյալ արված պարզաբանումը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 43 հոդվածի 2-րդ մասի պահանջը, գործադուլի իրավունքի ապահովման օրենսդրական կարգավորման ժամանակ հաշվի պետք է առնի, որ.

ա) գործադուլի իրավունքի իրականացումը դիտարկվում է աշխատողների և գործատուների համատեղ գործողությունների անցկացման իրավունքի շրջանակներում և անմիջականորեն առնչվում է կոլեկտիվ աշխատանքային վեճերի առաջացման և դրանք կոլեկտիվ պայմանագրերի միջոցով լուծելու անհնարինության խնդրին,

բ) գործադուլի իրավունքը ճանաչվում է «....այն **պարտավորություններին ենթարկվելու պայմանով**, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»,

գ) բացի բ) կետում նշված պայմանից և օրենքով նախատեսված այնպիսի սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության և հասարակական շահերի, ազգային անվտանգության, հասարակության առողջության և բարոյականության պաշտպանության համար (Խարտիայի 5-րդ մաս, հոդված «Է»), գործադուլի իրավունքի այլ սահմանափակումներ չեն կարող լինել, առավել ևս, եթե դրանք անհնարին են դարձնում նման պայմանի ու սահմանափակումների պայմաններում գործադուլի իրավունքի իրականացումը:

Այս տեսանկյունից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածը ոչ թե բացահայտում է գործադուլի հասկացության իրավական բովանդակությունը՝ այն կապելով գործադուլի սահմանադրական իրավունքի ապահովման հետ, այլ առաջին պլան է մղում և շեշտադրում կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքը: Օրենսգրքի 73 հոդվածի տրամաբանությամբ՝ գործադուլը կարող է օրինական համարվել միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու, այսինքն՝ նախապայմանագրային վեճը չլուծվելու դեպքում: Իսկ կոլեկտիվ պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում գործադուլն արգելվում է, եթե նույնիսկ նոր վեճի առարկան դուրս է արդեն իսկ կնքված կոլեկտիվ պայմանագրի շրջանակներից: Նման ձևակերպումն է, որ հիմք է հանդիսացել օրենսգրքի 60 հոդվածի 2-րդ մասով և 75 հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործադուլի իրավունքի սահմանափակումների համար:

7. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 60 և 75 հոդվածների բովանդակությունն այն է, որ կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամանակամիջոցում գործադուլ հայտարարելն արգելվում է: Դրան հակառակ, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ մասի 6 հոդվածով Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել շահերի բախման դեպքում առանց վերապահության ճանաչել գործադուլի իրավունքը՝ «....այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»: Այս առումով սահմանադրականության խնդիր է առաջանում օրենսգրքի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «....իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթի և 75 հոդվածի 3-րդ մասի առնչությամբ: Այդ նորմերը չեն կարող արգելափակել գործադուլի իրավունքը, եթե նախօրոք կնքված կոլեկտիվ պայմանագրի պարտավորությունները հարգվում են, իսկ վեճն առաջացել է ՀՀ աշխատանքային օրենսգր-

քով նախատեսված կոլեկտիվ պայմանագրի կարգավորման առարկայի շրջանակներում, սակայն այդ մասով այն նախապես երկկողմ համաձայնությամբ չի կարգավորվել:

Ինչ վերաբերում է դիմող կողմի հարցադրումներին՝ կապված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 74 հոդվածի 1-ին մասի հետ, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման մեխանիզմն անմիջական սահմանադրականության խնդիր չառաջացնելով հանդերձ, իրավակիրառական պրակտիկայում կարող է դժվարություններ առաջացնել գործադուլի իրավունքի իրացման առումով, և օրենսդրական բարելավման կարիք ունի:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

11. .... Կոնվենցիայի նպատակն է մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդավարական հասարակության գաղափարների և արժեքների պահպանումը: Կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը սահմանադրական դատարանը գնահատել է իր ՍԴՈ–350 որոշմամբ և նշել, որ Կոնվենցիայի նշված նպատակին համապատասխան մասնակից պետությունները, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունը, պարտավոր են ապահովել Կոնվենցիայի I բաժնում սահմանված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար: Կոնվենցիայի 19 հոդվածի համաձայն՝ Եվրոպական դատարանը հիմնվել է Կոնվենցիայով և կից արձանագրություններով անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Այդ գործառույթը Եվրոպական դատարանը կատարում է միջպետական գանգատների, անհատական գանգատների և Կոնվենցիայի մեկնաբանության հետ կապված խորհրդատվական եզրակացություններ տալու միջոցով:

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՍԴՈ–649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

VIII. Քանի որ օրենքի 11 հոդվածն անդրադառնում է նաև նպաստի ինստիտուտին, որի ձևերից մեկն է երեխայի համար նախատեսված նպաստը, իսկ օրենքի 7 հոդվածը նախատեսում է սոցիալական քարտի անհրաժեշտությունը նաև այս դեպքում, 11 հոդվածի հետ համակարգային կապի մեջ պետք է դիտել նաև օրենքի 7 հոդվածը: Այստեղ թվարկվում են տվյալներն ու փաստաթղթերը, որոնք ներկայացվելու են քարտ ստանալու համար: Ի թիվս դրանց, 7 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է ծննդյան վկայականներ՝ 16 տարին չլրացած քաղաքացիների համար: Երեխան ո՛չ աշխատանքային հարաբերությունների սուբյեկտ է (համենայնդեպս, մինչև որոշակի տարիքը), ո՛չ թոշակառու, ո՛չ հարկատու: Օրենքի այս դրույթի և 11 հոդվածի 2-րդ մասի ուժով, ծնողի համոզմունքի հետևանքով իրեն հասանելիք նպաստից զրկվում է երեխան:

ՍԴՈ–834, 20 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 25 հոդվածը չի առաջացնում իրավական անորոշություն, այլ, ընդհակառակն, դրա բացակայությունն անարդյունավետ կդարձներ 1988–1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթված անձանց կարգավիճակի հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը:

Անդրադառնալով փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաների իրավական կարգավիճակին և հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության վերլուծության արդյունքները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաներն ինքնաբերաբար չեն կարող ՀՀ-ում ստանալ փախստականի կարգավիճակ:

ՍԴՈ-919, 5 հոկտեմբերի, 2010 թ.

6. ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի համաձայն երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման համար հոգ տանելը ծնողների իրավունքն ու պարտականությունն է: Սահմանադրաիրավական այս պահանջի իրացմանն է ուղղված ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների վերլուծությունից ելնելով, մասնավորապես, հիմք ընդունելով վիճարկվող դրույթներում «ընդ որում» և «և այլն» բառակապակցությունների առկայությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներում «ընդ որում» բառակապակցությունից հետո ամրագրված պայմանները, այն է՝ «երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունն)» այն նվազագույն պայմաններն են, որոնք ճշգրտում և բացահայտում են վիճարկվող դրույթներում «երեխաների շահերից» հասկացության բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը: Ընդ որում, վերը նշված պայմանները սպառիչ չեն, և երեխայի շահը գնահատելիս օրենսդիրը դատարանների հայեցողությանն է վերապահում նաև այլ պայմաններ հաշվի առնելը:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր ՍԴՈ-747 և ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով ևս ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությանը և դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Դատարանների այդպիսի պարտականության մասին իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.03.2007 թ. թիվ 3-432 (ՏԴ) որոշման մեջ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարտականությունը միաժամանակ ապահովում է դատական ակտի պատճառաբանվածությունը, որի վերաբերյալ սահմանադրական դատարանն իր, մասնավորապես, 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690, 2007

թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-691 և մի շարք այլ որոշումներում բազմիցս արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ:

....

7. Արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի բնակության վայրի, խնամքն ու դաստիարակությունը ծնողներից որևէ մեկին հանձնելու հետ կապված վեճի լուծման իրավասությունը բոլոր դեպքերում վերապահվում է դատարանին՝ վերջինիս վերապահելով հայեցողական ազատություն: Ընդ որում, հիմնականում օրենսդիրը չի օգտագործում «երեխաների շահեր» հասկացությունը, իսկ այդ հասկացությունն օգտագործելու դեպքում, այնուամենայնիվ, չի սահմանում նշված հասկացության նվազագույն չափորոշիչները, և երեխաների շահերի գնահատման իրավասությունը վերապահում է դատարանների հայեցողությանը:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վերջինս նույնպես օգտագործում է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը՝ առանց սահմանելու նշված հասկացության նվազագույն չափորոշիչները:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից քննարկվող հարցին է բազմիցս անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճը լուծելիս դատարանները պետք է առաջնորդվեն երեխայի լավագույն շահերով (C. v. Finland գործով 2006 թ. մայիսի 9-ի վճիռը, Olsson v. Sweden գործով 1988 թ. մարտի 24-ի վճիռը):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն առավել մանրակրկիտ է կարգավորում ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխայի խնամքն ու դաստիարակությունը ծնողներից որևէ մեկին հանձնելու հետ կապված հարաբերությունները՝ օգտագործելով «երեխաների շահեր» հասկացությունը և սահմանելով նշված հասկացության նվազագույն չափորոշիչները:

Վերոգրյալի, ինչպես նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների տրամաբանության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-1244, 8 դեկտեմբերի, 2015 թ.

5. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության քաղաքացուն՝ իր ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տրամադրման հետ կապված հարաբերություններն է, որոնք օբյեկտիվորեն, ՀՀ Սահմանադրության և քաղաքացիության ինստիտուտը կարգավորող օրենսդրության այլ ակտերի հիմքով ծագում են, մի կողմից, պետության, մյուս կողմից՝ ֆիզիկական անձի միջև, հաստատագրելով Հայաստանի Հանրապետության և քաղաքացու միջև իրավաբանական կապը, որը հիմք է հասարակական կյանքում փոխադարձ իրավունքների և պարտականությունների ստանձնման ու կատարման համար: Այդպիսի փաստաթուղթը, ըստ հիշյալ օրենքի 2-րդ հոդվածի, նույնականացման քարտն է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար: Այ-

սինքն, ըստ իր իրավական բովանդակության՝ նույնականացման քարտը նախ և առաջ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատող և պետության կողմից տրվող պաշտոնական փաստաթուղթ է, առանց որի քաղաքացին անկարող է իրավահարաբերությունների լիարժեք (գործունակ) սուբյեկտ լինել, իրացնել Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքները և կատարել (ստանձնել) պարտականություններ:

....

7. .... Մյուս կողմից, սահմանադրական դատարանը գտնում է, որ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների կատարմանն ուղղված օրենսդրական այս կամ այն կարգավորմամբ չպետք է վտանգվի (արգելափակվի) քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների ազատ իրականացումը: Սահմանադրությունն իրավական միասնական փաստաթուղթ է, որում սահմանված նորմերը գործում են անմիջականորեն և ենթակա են անվերապահ կատարման: Օրենքով են սահմանվում դրանց կատարման կարգն ու պայմանները (Սահմ. 6-րդ հոդված): Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, **որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով**: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի նորմերի՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման համատեքստում վերլուծությունը վկայում է, որ նախատեսելով սուբյեկտիվ բնույթի որոշակի իրավունքներ՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է պարտականություններ, որոնք թեև միտված են հիշյալ օրենքով հետապնդվող իրավական նպատակի իրագործմանը, այն է՝ ՀՀ քաղաքացիների նույնականացումն ապահովելուն, այնուհանդերձ, որոշակի քաղաքացիների նկատմամբ, որոնք իրենց կրոնական համոզմունքներից ելնելով ի վիճակի չեն կատարելու մատնադրոշմներ հանձնելու վերաբերյալ նույն օրենքի պահանջը, քանի որ կրոնական համոզմունքներ ունեցող անձանց համար այդ պարտականության կատարման անհնարինության հետևանքով, երբ սահմանված չեն իրավական այլընտրանքային պայմաններ, այդ անձինք զրկվում են նույնականացման քարտ ստանալու իրավունքի իրացման, հետևաբար՝ նաև իրավահարաբերություններին լիարժեք մասնակցելու հնարավորությունից:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-652, 18 հոկտեմբերի, 2006 թ.

6. .... Ինչ վերաբերում է այդ սահմանափակման մասին իրազեկման խնդրին, ապա տվյալ հոդվածում խոսքը վերաբերում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների՝ դատարան բողոքարկմանը: Ակնհայտ է, որ նշված իրավասու անձանց կամ մարմինների որոշումների բողոքարկման արդյունքում միայն դրանք կարող են ճանաչվել անօրինական կամ անհիմն: Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ իրենց իրավունքների և պարտականությունների պարզաբանումը, դրանց իրականացման հնարավորության ապահովումն այդ որոշումների կայացման փուլում պետք է երաշխավորվի, և դա նման որոշումներ կայացնող մարմինների ու անձանց պարտականությունն է, և օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասում իրավունքների պարզաբանման լրացուցիչ դրույթի ամրագրման պահանջը

հիմնավոր չէ: Այս հարցը, մասնավորապես, կանոնակարգված է օրենսգրքի 101 հոդվածով: Այդ հոդվածի 2-րդ մասի դրույթը սահմանում է, որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը»: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 30-րդ կետի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմին է համարվում դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը: Նույն հոդվածի 31-րդ կետը սահմանում է, որ դատավարության մասնակիցներն են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը:

Մինչդեռ, սահմանադրական դատարանը փաստում է, որ այդպիսի երաշխիքներ (իրավասու մարմնի, պաշտոնատար անձի կողմից դիմողին՝ իր դատավարական իրավունքները բացատրելը) դիմողի կարգավիճակով հանդես եկող անձի մասով օրենսգրքի որևէ նորմով հստակ նախատեսված չէ: Քրեական դատավարության օրենսգրքում նման դրույթի ոչ հստակ ձևակերպված լինելը կարող է նաև այդ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության առումով ոչ համաչափ իրավիճակի առաջացման պատճառ դառնալ: Այս խնդիրն օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտություն ունի և ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

ՍԴՈ-766, 14 հոկտեմբերի, 2008 թ.

6. .... Սահմանադրական իրավունքի տեսանկյունից իշխանությունը կամքը պարտադրելու իրավունք և կարողություն է: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական իշխանությունը, որպես ժողովրդի կամքը միջնորդավորված կերպով պարտադրելու իրավունք և կարողություն, պետության գործառնական կարևոր բաղադրատարրերից է, որն արտահայտվում է պետության կողմից իր առաքելությունը հրապարակային և ինքնիշխան ձևով իրականացնելու կարողունակությամբ՝ համապարտադիր վարքագծի կանոններ սահմանելու և դրանց կիրառումն ապահովելու միջոցով:

.... Պետական իշխանությունն իրականացվում է գործառույթ – ինստիտուտ – իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրորեն նախատեսված սահմանափակումների շրջանակներում: Այդ եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթն իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում է պետության ողջ տարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը: Դրանցից դուրս իրականացվող գործողությունները ճանաչվում են որպես հակաիրավական: Նման հակաիրավական գործողությունների թվին են դասվում նաև Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանադրական ինստիտուտին վերապահված պետաիշխանական գործառույթին և դրա իրականացման միջոցներին բռնությամբ տիրանալը, իրեն ենթարկելը կամ այլ կերպ՝ զավթելը: ՀՀ Սահմանադրության 47 հոդվածը միանշանակ պահանջ է առաջադրում, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը, ինչպես նաև նույն հոդվածն արգելում է իրավունքների և ազատությունների

օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այս համատեքստում սահմանադրական կարգը բռնի տապալելու նպատակով իրավունքների և ազատությունների օգտագործման արգելումն ունի այն սահմանադրաիրավական իմաստը, որ իրավունքների չարաշահման արգելք է նախատեսվում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են սահմանադրորեն նախատեսված իրավակարգավորումը բռնության գործադրմամբ ձախողելուն (կործանելուն, քայքայելուն, ավերելուն և այլն), անիրագործելի դարձնելուն:

Իրավունքների չարաշահման արգելքը նախատեսված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 17 հոդվածով:

Պետությունը պարտավոր է իրավական երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ պահանջն իրականացնելու և երկրի սահմանադրական կարգի կայունությունն ապահովելու ուղղությամբ:

Վերոշարադրյալ մոտեցումները հաշվի առնելով՝ «պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր» և «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչեր» հասկացությունները ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի սահմանադրաիրավական իմաստով պետք է հասկանալ **օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության մարմինների պետաիշխանական գործառույթներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ բռնությամբ կամ դրա գործադրման անմիջական և իրական սպառնալիքով տիրանալու համար գործողություն պլանավորելու, կազմակերպելու, նախապատրաստելու կամ իրականացնելու նպատակով այլ անձանց մասնակից դարձնելու դիմում կամ հրավեր:** Իրավակիրառական պրակտիկան և ցանկացած գործի փաստական հանգամանքների գնահատումը պետք է ելնի տվյալ հասկացությունների սահմանադրաիրավական այդ բովանդակությունից, **առաջին հերթին նկատի ունենալով հակաիրավական (բռնի) գործողությունների միջոցով պետաիշխանական գործառույթի նկատմամբ ոտնձգություն իրականացնելու <u>նշված հանգամանքը</u>**: Բռնության կոչերի նպատակը մեկն է՝ համախմբել մարդկանց, ուղղություն տալ նրանց բռնի գործողություններին: Քննարկվող հանցակազմի իմաստով բռնության կոչեր չեն կարող համարվել իշխանության քննադատությունը, իշխանությունների հրաժարականի անհրաժեշտության հիմնավորումը, հրաժարականի պահանջը, ցույցեր, երթեր, հանրահավաքներ անցկացնելու կոչը կամ կազմակերպումը, փոխաբերական իմաստով արված արտահայտությունները:

Հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամատեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Հանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ և ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման:

ԽՂՃԻ, ԿՐՈՆԻ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–1244, 8 դեկտեմբերի, 2015 թ.

8. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորման սահմանադրականությունը մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի և դրա իրացման թույլատրելի շրջանակների, ինչպես նաև այդ իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշների համատեքս-

տում գնահատելու խնդրին՝ պարզելու համար հանրային շահերով և պետության պոզիտիվ պարտականության կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված անձի սահմանադրական կոնկրետ իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 26–րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իրավունքը նույն հոդվածի երկրորդ մասի հիմքերով կարող է սահմանափակվել միայն օրենքով, «եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար», որից, ինչպես և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումներից հետևում է, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացումն օրենքով ենթակա է սահմանափակման, եթե.

– եկեղեցական արարողությունները, պաշտամունքի այլ ծիսակատարությունները խախտում են կամ կարող են խախտել հասարակական անվտանգությունը,

– այդ արարողությունները, ծիսակատարություններն սպառնում են մարդկանց առողջությանը, խախտում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

.... Կրոնական համոզմունքների (մտքի, խղճի և կրոնի) ազատությունը, որպես մարդու հիմնական սուբյեկտիվ իրավունք, երաշխավորված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերով:

....

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում օրենսդրական լուծումներ գտնելը, ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 25.12.1998 թվականի թիվ 821 որոշման համապատասխան փոփոխությունները կարող են կրոնական համոզմունքներ ունեցող անձանց նախկին նմուշի անձնագրերի վավերականության ժամկետի երկարացման պայմաններում ժամանակավոր երաշխիք հանդիսանալ այդ անձանց՝ որպես ՀՀ քաղաքացու՝ իրենց իրավունքների ու ազատությունների իրացման համար:

Սահմանադրական դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարում ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության ուշադրությունը հրավիրել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի գործող այն իրավակարգավորման վրա, համաձայն որի՝ «Քաղաքացիական պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ» (19–րդ հոդված): Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավական մոտեցումը պետք է իրացվելի լինի նաև նույնականացման քարտերի տրամադրման հետ կապված հարաբերությունների կարգավորման շրջանակներում:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–647, 20 սեպտեմբերի, 2006 թ.

8. .... Այնուամենայնիվ, վիճարկվող օրենքի և դատավորի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության համեմատական վերլուծությունից բխում է, որ վիճարկվող օրենքը, ի տարբերություն «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախկին խմբագրությամբ 18 հոդվածի, նվազեցնում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կենսաթոշակի անցնող դատավորի սոցիալական

պաշտպանության երաշխիքները, քանի որ խախտվում է դատավորի՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ստացած աշխատավարձին՝ կենսաթոշակի չափը հնարավորինս մոտ սահմանելու միջազգայնորեն ընդունված սկզբունքը, մեծանում է դրանց միջև խզումը:

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկայի տեսանկյունից կարևոր է միջազգային պրակտիկայի կողմից ճանաչված և 1998 թ. ընդունված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայում հատուկ կարևորված՝ դատավորի անկախության սոցիալական երաշխիքների ապահովման մասին 6.4. կետում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Կարգավիճակը, մասնավորապես, դատավորներին ապահովում է .... ծերության թոշակով, որի չափը պետք է հնարավորինս մոտ լինի դատական համակարգում ստացած նրա վերջին աշխատավարձին»: Նշված պահանջին լիովին համահունչ էր «Դատավորի կարգավիճակի մասին» 1998 թ. հունիսի 6-ին ընդունված ՀՀ օրենքի 18 հոդվածի դրույթը, համաձայն որի՝ դատավորն իրավունք ուներ ստանալ աշխատանքային կենսաթոշակ «....իր վերջին զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի 75 տոկոսի չափով»: 2004 թ. մարտի 31-ին ընդունված՝ ««Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությունը, համաձայն որի կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարի որոշման համար հիմք է հանդիսանում ոչ թե ամբողջ աշխատավարձի, այլ պաշտոնային դրույքաչափի 75 տոկոսը, չի բխում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների էությունից և չի նպաստում դատավորի անկախության երաշխիքների ամրապնդմանը:

Պետությունը, թերևս, կարող է իր հնարավորությունների սահմանափակման որոշակի իրավիճակների պայմաններում նման քայլ կատարել, երբ պետության մեջ հատուկ իրավիճակ է ծագում կամ անհրաժեշտ է պաշտպանել այլ սահմանադրական արժեքներ: Սակայն 2004 թվականին և հետագայում Հայաստանը շարունակել է երկնիշ թվերով տնտեսական աճ արձանագրել, հարաճուն մեծացել է երկրի պետական բյուջեն և օբյեկտիվ նախադրյալներ չեն եղել դատավորի աշխատավարձի ու կենսաթոշակի միջև խզումը մեծացնելու համար:

Դատավորի անկախության սոցիալական երաշխիքների թուլացման հիմք չէր կարող հանդիսանալ նաև 2002 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով դատավորների աշխատավարձի բարձրացման հանգամանքը, քանի որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի և դատարանների անկախության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլ այն ամրապնդելու առումով: Միաժամանակ աշխատավարձի տվյալ բարձրացումը ներառել է պետական իշխանության ամբողջ համակարգը և չի վերաբերել միայն դատավորներին: Այն դեպքում, երբ դատավորի աշխատավարձը և աշխատանքային կենսաթոշակը, բացի նրա համար որոշակի կենսապայմաններ ապահովելու գործառույթից, նաև, ինչպես նշվեց, դատավորի կողմից անկախ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման ստեղծելու հատուկ գործառույթ ունեն: Դրա համար էլ, մասնավորապես, «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով նախատեսվում է, բացի պետական ընդհանուր կենսաթոշակից, պետական բյուջեի միջոցների հաշվին դատավորի կենսաթոշակին հավելավճար սահմանել:

ՍԴՈ-649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

VII. 1. Սոցիալական քարտի առկայությունը դարձնելով պարտադիր պայման օրենքի 11 հոդվածում թվարկված բոլոր գործառույթներում, ներառյալ կենսապահովման այնպիսի միջոցներ, որպիսիք են աշխատավարձը, կենսաթոշակը, նպաստը, հատուցումը, դրամական

փոխանցման ստացումը, օրենքը մի շարք քաղաքացիների դրել է երկընտրանքի առջև. կամ զրկվել իրենց սոցիալական իրավունքների իրականացումից, կամ համոզմունք ունենալու և դրան հավատարիմ մնալու իրավունքից: Երկու դեպքում էլ դա առնչվում է մարդու արժանապատվությանը:

....

2. Օրենքի 11 հոդվածի 2-րդ մասով սոցիալական քարտի բացակայությունը հիմք է դառնում, մասնավորապես, սահմանափակելու Սահմանադրության 37 հոդվածով ամրագրված սոցիալական ապահովության իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 32 հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ աշխատանքի վարձատրության իրավունքի իրականացումը: Կենսաթոշակը, ինչպես նաև աշխատավարձը՝ քաղաքացու վաստակած միջոցներ են և նրա սեփականությունը: Մասնավորապես, դիմողները կենսաթոշակի են անցել 1991 և 1994 թվականներին և մինչև 2005 թ. հունվար ստացել են իրենց կենսաթոշակը, որից հետո դրանց վճարումը կասեցվել է:

....

3. .... Սահմանադրության 42 հոդվածի հետ օրենքը համադրելիս՝ կարևորվում է նաև այդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»: Կատարված աշխատանքի վարձատրությունից զրկելը, նախկինում սոցիալական ապահովության պարտադիր վճարների կատարումով վաստակած կենսաթոշակի վճարման կասեցումը, ինչպես նաև մինչ օրենքի ընդունումը կայացած աշխատանքային պայմանագրերով չնախատեսված նոր պայման ավելացնելու պարտադրանքը նշանակում է՝ հակառակ սահմանադրական այս պահանջին, հետադարձ ուժ տալ օրենքին: Օրենքի հետադարձ գործողությունն առավել ցայտուն է այն բազմաթիվ դեպքերում, երբ աշխատավարձի կամ թոշակի վճարումների ուշացման հետևանքով քաղաքացին զրկվել է օրենքի ուժի մեջ մտնելուն նախորդող տարվա կենսաթոշակից կամ աշխատավարձից:

ՍԴՈ-716, 23 հոկտեմբերի, 2007 թ.

7. ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված պահանջները «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում իրացվել են հետևյալ կարգով: Օրենքի 11 հոդվածով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները՝ ապահովագրական և սոցիալական: Դրանցից առաջինը նշանակվում է անձի աշխատանքային գործունեության և դրա ընթացքում արված պարտադիր սոցիալական ապահովության վճարների հիման վրա, իսկ երկրորդը՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում:

....

8. ՀՀ Սահմանադրության 37 հոդվածի 2-րդ նախադասության համաձայն. «Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կենսաթոշակ կարող է ստացվել միայն դրա նշանակվելուց հետո, ինչպես և կենսաթոշակ վճարելու մասին դիմում կարելի է գրել միայն արդեն իսկ նշանակված, սակայն զանազան պատճառներով չստացված կենսաթոշակի համար: Ընդ որում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը չի սահմանափակում անձի՝ ՀՀ Սահմանադրության 37 հոդվածով նախատեսված իրավունքի լրիվ ծավալով իրացումը, հետևաբար, դիմողի փաստարկները հիմք չեն հանդիսանում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածը ՀՀ Սահմանադրության 37 հոդվածի պահանջներին հակասող ճանաչելու համար:

ՍԴՈ–723, 15 հունվարի, 2008 թ.

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի 73 հոդվածով նախատեսված կարգավորման արդյունքում կարող է առաջանալ նաև օրենքի առջև հավասարության սկզբունքի ապահովման հետ կապված խնդիր: Սահմանելով վերահաշվարկման կարգը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու և չներկայացնելու պարագայում, օրենքի վիճարկվող նորմը տարբերակված մոտեցում է ցուցաբերում նույն ժամանակահատվածում նույն պայմաններում ձեռք բերված աշխատանքային ստաժի հաշվարկման կարգի նկատմամբ: Օրենքի 73 հոդվածի 2–րդ մասի կիրառման արդյունքում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ միևնույն ժամանակահատվածում միևնույն պայմաններում աշխատած անձանց համար սահմանվեն կենսաթոշակի տարբեր չափեր: Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է, եթե առկա չէ օբյեկտիվ և պատճառաբանված արդարացում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարբերակված մոտեցման հիմքում ընկած այնպիսի ձևական հանգամանքը, ինչպիսին, ի հիմնավորումն աշխատանքային ստաժի, լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու հանգամանքն է, չի կարող դիտվել որպես օբյեկտիվ, իրավաչափ և ողջամիտ արդարացում:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը: Մինչդեռ, օրենքի վիճարկվող նորմն առնչվել է բազմաթիվ մարդկանց իրավունքներին:

ՍԴՈ–731, 29 հունվարի, 2008 թ.

10. ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:

ՍԴՈ-865, 10 փետրվարի, 2010 թ.

5. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ զինծառայողների համար սահմանված պետական կենսաթոշակների նշված երկու տեսակները, ի տարբերություն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական կենսաթոշակի «ապահովագրական» և «սոցիալական» անվանումը կրող տեսակների, ունեն նաև ընդհանրություններ: Բոլոր դեպքերում, նշված ընդհանրության հիմքում դրված են միայն աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները: Տվյալ դեպքում օրենսդիրը հաշվի է առել միայն ծառայողական պարտականությունների ոչ ստանդարտ, արտակարգ, կյանքի համար վտանգավոր պայմաններում կատարման հանգամանքը՝ այս առումով հավասար և միասնական մոտեցում ցուցաբերելով նմանատիպ ծառայություններ իրականացնող Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, Հայաստանի փրկարար ծառայության համակարգերին: Այսինքն՝ թե՛ երկարամյա ծառայության համար, թե՛ հաշմանդամության համար կենսաթոշակի իրավունքը պայմանավորված է միայն կենսաթոշակառուի աշխատանքային (ապահովագրական) ստաժով, կամ, հաշմանդամության համար կենսաթոշակի դեպքում՝ ծառայության ընթացքում ձեռք բերված խեղմամբ կամ հիվանդությամբ կամ դրանց հետևանքով կերակրողին կորցնելով:

Նկատի ունենալով տարբեր համակարգերում երկարամյա ծառայության համար կենսաթոշակի բնույթի, նշանակման ու վճարման կարգի համասեռությունը, օրենսդիրն առանձին-առանձին՝ ըստ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, Հայաստանի փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմինների համակարգի, չի տարբերակել երկարամյա ծառայության համար կենսաթոշակի ենթատեսակներ:

7. Կենսաթոշակային ապահովության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը քաղաքացիներին վերապահելով կենսաթոշակի ընտրության իրավունք, միաժամանակ վերջիններիս վերապահել է նաև կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք: Այդ իրավունքը սահմանված է, մասնավորապես, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներով: Օրենսդրության մեջ նշված երկու ինստիտուտների տարբերակումն ինքնանպատակ չէ: «Կենսաթոշակի տեսակ փոխել» հասկացության մեջ «փոխել» բառի առկայությունից բխում է, որ կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունքն անձի մոտ ծագում է այն ժամանակ, երբ տվյալ անձի նկատմամբ արդեն իսկ նշանակվել է կենսաթոշակ:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ կառավարության տվյալ որոշումը լիարժեք չի իրացրել օրենքի պահանջը, քանի որ գործնականում հստակ չէ կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը: Նման վիճակը հետևանք է նաև այն բանի, որ օրենքով հստակ սահմանված չեն «կենսաթոշակի ընտրության իրավունք», «կենսաթոշակի տեսակը փոխելու իրավունք», «կենսաթոշակի տեսակ», «կենսաթոշակի ենթատեսակ» հասկացությունները:

ՍԴՈ-881, 4 մայիսի, 2010 թ.

6. Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև կենսաթոշակային հարաբերությունների բնագավառում Սահմանադրության 34-րդ հոդվածի կիրառելիության հարցին:

Կենսաթոշակային ապահովության իրավունքը՝ սահմանված Սահմանադրության 37-րդ հոդվածով, և բավարար կենսամակարդակի իրավունքը՝ սահմանված Սահմանադրության 34-րդ հոդվածով, թեպետև իրենց բնույթով դասվում են սոցիալական իրավունքների շարքին, այնուամենայնիվ, դրանք տարբեր իրավունքներ են, վերաբերում են տարբեր կատեգորիայի անձանց, և այդ իրավունքները Սահմանադրությամբ տարանջատված են: Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ կենսաթոշակային ապահովության իրավուն-

քը վերապահված է հասարակության՝ սոցիալապես առավել խոցելի խմբերին: Օրենսդիրն այդ խմբերի ներկայացուցիչներին դիտարկում է որպես աշխատունակության լրիվ կամ մասնակի կորուստ ունեցողներ, որոնք դրա հետևանքով չեն կարող սեփական աշխատանքով իրենց և իրենց ընտանիքների համար ապահովել բավարար կենսամակարդակ: Դրա հետևանքով պետությունն իր սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով նշված խմբերի համար սահմանել է կենսաթոշակային ապահովության իրավունք: Կենսաթոշակային իրավունքի նպատակն անձի համար **ոչ թե բավարար, այլ նվազագույն կենսամակարդակ** ապահովելն է:

Հետևաբար, Սահմանադրության 34-րդ հոդվածով սահմանված՝ բավարար կենսամակարդակի իրավունքն ապահովելու՝ պետության պարտականությունը, **նախ՝** չի վերաբերում սոցիալապես խոցելի խմբերին, և, **երկրորդ՝** այն հանդես է գալիս որպես նորմ-սկզբունք, որը յուրաքանչյուր պետություն, ելնելով իր տնտեսական հնարավորություններից, այնպես, ինչպես սահմանված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասում, պարտավոր է ապահովել **աշխատունակ, այլ ոչ թե աշխատունակության լրիվ կամ մասնակի կորուստ** ունեցող քաղաքացիների համար:

7. Հիմք ընդունելով դիմումում բարձրացված հարցադրումները՝ կապված օրենքի հետադարձ ուժի արգելման սկզբունքի հետ, սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի 2008 թ. հունվարի 15-ի ՍԴՈ-723 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են սույն գործի նկատմամբ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. հունվարի 15-ի ՍԴՈ-723 որոշման 8-րդ կետում գտել է, որ՝ «....օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լրիվին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ **լեգիտիմ ակնկալիքների** հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:....»:

Սույն գործի քննության շրջանակներում զարգացնելով իր՝ 2008 թ. հունվարի 15-ի ՍԴՈ-723 որոշման 8-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքի տեսանկյունից սահմանադրական դատարանի վերը նշված որոշման մեջ ամրագրված հինգ պայմաններից չորսը՝ կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի չափը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակային իրավունքի պարտադիր տարրեր են: Ընդ որում, ՍԴՈ-723 որոշման 8-րդ կետում ամրագրված՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանների ներքո սահմանադրական դատարանը նկատի է ունեցել կենսաթոշակի ձեռքբերման արտոնյալ պայմանները: Ինչ վերաբերում է վերջին տարրին՝ կենսաթոշակի վճարման պայմաններին, ապա այն ֆակուլտատիվ տարր է և կախված է կենսաթոշակի նախկինում սահմանված կամ նշանակված չափից: Այսինքն՝ այդ տարրը կարող է դառնալ պարտադիր տարր միայն այն դեպքում, երբ կենսաթոշակային իրավահարաբերությունների նոր համակարգ սահմանելիս նվազեցվում է նախկինում սահմանված կամ նշանակված կենսաթոշակի չափը:

ՍԴՈ-991, 11 հոկտեմբերի, 2011 թ.

7. .... Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ կենսաթոշակը և աշխատանքը միտված են միևնույն նպատակին՝ գոյության միջոցների ապահովմանը, աշխատանքը՝ որպես կենսապահովման միջոց, գործում է անձի լրիվ աշխատունակության պայմաններում, իսկ կենսաթոշակը՝ աշխատունակության սահմանափակման կամ կորստի պայմաններում: Հետևաբար, կենսաթոշակի իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձը, որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այլևս չի կարող այդ նպատակն իրացնել աշխատանքի միջոցով: Կենսաթոշակի իրավունքի ծագումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների կրճատմամբ: Այսպիսով, կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ անձի հետ աշխատանքային հարաբերություններն օբյեկտիվորեն ենթակա են կարգավորման այլ սկզբունքներով և առաջնահերթ կարևորվում են նրա սոցիալական ապահովման խնդրի լուծումն ու որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված՝ աշխատանքի իրավունքի և կենսաթոշակի իրավունքի նման փոխհարաբերակցությունը, պայմանավորված լինելով դրանց սոցիալական բովանդակությամբ և առաքելությամբ, իր հիմքում ունի օբյեկտիվ արդարացում: Հետևաբար, աշխատանքային հարաբերությունների **դադարման** հնարավորությունը կենսաթոշակի իրավունքի ծագմամբ պայմանավորելն իրավաչափ է, քանի որ աշխատանքային հարաբերությունների դադարման հնարավորությունը հիմնվում է այնպիսի օբյեկտիվ չափանիշի վրա, ինչպիսին մարդու տարիքի փաստով պայմանավորված աշխատունակության չափանիշն է:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ կենսաթոշակային տարիքի հասած անձի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիրը լուծելիս և (կամ) որոշակի ժամկետով պայմանագիր կնքելիս ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսելի կարգով անհրաժեշտաբար պետք է երաշխավորվեն ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված նրա սոցիալական ապահովության իրավունքի իրացման բավարար պայմաններ՝ **կապված սոցիալական ապահովության հնարավոր ծավալի և ձևերի հետ**: Սահմանադրական դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ օրենքով աշխատողի համար սահմանային տարիք նախատեսելը նախ և առաջ հետապնդում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ անձի սոցիալական ապահովության իրավունքը իրացնելու հնարավորությունը երաշխավորելու իրավաչափ նպատակ՝ կապված նրա աշխատունակության աստիճանի օբյեկտիվ փոփոխության հետ:

ՍԴՈ-1050, 2 հոկտեմբերի, 2012 թ.

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում չեն բացառվում այնպիսի իրավիճակներ, երբ ՀՀ քաղաքացին օտարերկրյա պետությունում անձնական շարժառիթների (օր.՝ երկարատև բուժման և այլն) կապակցությամբ վեց ամսից ավելի ժամկետով բնակվի տվյալ պետությունում: Այս առումով ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նշված դեպքն ինքնաբերաբար չի առաջացնում տվյալ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության բնակության վայրում հաշվառման դադարեցում կամ կենսաթոշակի գործը տվյալ պետություն ուղարկելու պարտավորություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր և իրավաչափ չի համարում օրենքի դրույթների այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին կորցնում է կենսաթոշակ ստանալու իրավունքը:

.... **Սահմանադրական դատարանը կարևորում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անվերապահ կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումը:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ պահանջների կատարումը խնդրո առարկա իրավիճակում կբացառի, մի կողմից, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում բնակվող կենսաթոշակառուների, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին 1961 թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի, ինչպես նաև օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից պետություններում բնակվող կենսաթոշակառուների միջև փաստացիորեն ստեղծված տարբերակված մոտեցումը՝ կապված վերջիններիս՝ կենսաթոշակը ստանալու համար Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտության հետ:

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված տարբերակված մոտեցումը չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով սահմանված՝ խտրականության արգելման սկզբունքին, քանի որ դիտարկվող մոտեցումն առաջացել է **բացառապես իրավակիրառ պրակտիկայում համապատասխան իրավասու մարմինների կողմից ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջների չկատարման հետևանքով ....:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած խնդիրը պայմանավորված է ոչ թե օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, այլ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անտեսմամբ:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացի հանդիսացող այն կենսաթոշակառուներին, որոնք բնակվում են կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր չկնքած պետությունում, կամ Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի 1961 թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունում, կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից չհանդիսացող պետություններում, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի դրույթներով պահանջվող փաստաթղթերի շրջանակը միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթղթերով սահմանափակելը վերը նշված կենսաթոշակառուների համար, ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունում բնակվող կենսաթոշակառուների, առաջացնում է Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտություն, այդուհանդերձ, գտնում է, որ նշված հանգամանքը որևէ կերպ չի հանգեցնում Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված՝ խտրականության արգելման սկզբունքի խախտման, քանի որ, **նախ՝** նշված փաստաթղթերը ներկայացնելու պարտականությունը սահմանված է բոլոր կենսաթոշակառուների համար, **երկրորդ՝** դրանց համապատասխանաբար հաստատումը կամ վավերացումը սահմանափակված է միևնույն սուբյեկտով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարով, **երրորդ՝**

ցանկացած իրավունքի իրացմանն ուղղված իրավակարգավորումների արդյունքում առաջացող **փաստացի իրավիճակը, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտությունը,** եթե այդ իրավիճակը կապված չէ միևնույն կատեգորիայի անձանց համար իրավունքների և պարտականությունների տարբեր ծավալներ սահմանելու հետ, չի կարող հանգեցնել անխտրականության սկզբունքի խախտման: Նշված փաստացի իրավիճակը չի կարող հանգեցնել նաև տվյալ իրավունքի ոչ ողջամիտ սահմանափակման, եթե սահմանված իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում օրենքով սահմանված իրավակարգավորման նպատակի իրավաչափությունը պայմանավորված է նրանով, որ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր չկնքած պետությունում կամ Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի 1961 թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունում, կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից չհանդիսացող պետություններում բնակվող կենսաթոշակառուների առնչությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հավելյալ բեռ՝ ստուգելու այդ պետություններում տրված՝ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի 1-ին պարբերություններով նախատեսված փաստաթղթերի իսկությունը և այն էլ՝ համապատասխան միջազգային իրավական հիմքերի բացակայության պայմաններում: Տվյալ պարագայում օրենքով սահմանված իրավակարգավորման իրավաչափությունը՝ վերը նշված կենսաթոշակառուների առնչությամբ, պայմանավորված է նաև կենսաթոշակ վճարելու բնագավառում հնարավոր իրավախախտումների կանխման, դրա արդյունքում՝ կենսաթոշակառուի իրավունքների երաշխավորման և բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությամբ:

ՍԴՈ-1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

8. Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս, այդ թվում՝ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող նորմերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով, արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը, կարևորելով, որ «.... անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը», և որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «.... հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով»:

.... Ըստ կենսաթոշակային հարաբերությունների իրավակարգավորման բնագավառում ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ «.... օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ ար-

տոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, **պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը»** (ՍԴՈ–723):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավական դիրքորոշումները (ելնելով նաև միջազգային իրավական փորձից) անվերապահորեն կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորման նկատմամբ, և իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այդ ուղղությամբ: Իսկ օրենսդիր մարմնի խնդիրն ու սահմանադրաիրավական պարտականությունն է օրինաստեղծ գործունեությունն իրականացնել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նորմերի ու սկզբունքների, այդ թվում՝ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված իրավապայմանի համալիր հաշվառմամբ: Քննության առարկա օրենքի և ՀՀ օրենսդրական մի շարք այլ ակտերի իրավանորմերի պատշաճ կատարումը երաշխավորելու համար **ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է նաև բնակչության պետական ռեգիստրի վարման իրավակարգավորման հետագա բարելավման խնդիրը և ՀՀ օրենսդրական զարգացումների ներկա վիճակին դրա ներդաշնակելու անհրաժեշտությունը:**

ՍԴՈ–1167, 14 հոկտեմբերի, 2014 թ.

5. .... Ինչ վերաբերում է սույն գործով վիճարկվող իրավադրույթով կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման իրավունքի իրականացման իրավակարգավորմանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը 19.03.2012 թ. ՀՕ–100–Ն օրենքով սահմանում է նոր իրավապայման, որով ժառանգման իրավունքի իրականացումը պայմանավորվում է կենսաթոշակառուի մահվանից հետո՝ **տասներկու ամսվա ընթացքում** դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելով: Իսկ ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման: Տվյալ իրավակարգավորման պարագայում նոր՝ տասներկու ամսվա ժամկետային սահմանափակման, իրավապայմանը բացառում է այդ ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարն ստանալը: Օրենսդիրը նոր իրավապայման սահմանելով չի ամրագրում տասներկու ամսվա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հնարավորություն, այդ թվում՝ դատական կարգով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **նման իրավակարգավորման բացակայությունը խոչընդոտում է սեփականության սահմանադրական իրավունքի լիարժեք իրականացմանը, մասնավորապես, այդ իրավունքի՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով սահմանված պաշտպանությանը՝ ժառանգության ընդունման ժամկետի հետ կապված հարաբերություններում:**

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով սեփականության իրավունքի, դրա սահմանափակման, իրականացման և պաշտպանության վերաբերյալ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի գրավոր բացատրության ուսումնասիրության արդյունքները, սահմանադրական դատարանը գտնում է, որ **վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված տասներկու ամսվա ժամկետային սահմանափակումը չի պայմանավորվում հանրային արժեքների պահպանման պահանջով և արդյունքում նպատակաուղղված չէ**

սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովմանը: Նման սահմանափակման հիմնավորում կարող է լինել ժառանգության զանգվածի ճակատագրի հստակեցումը, որի իրավական կարգավորումը, սակայն, նախատեսվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–669, 22 դեկտեմբերի, 2006 թ.

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությունը կուսակցությունների գործունեության ապահովման մի շարք երաշխիքներ է ամրագրել: Նախ՝ Սահմանադրության 7 հոդվածը սահմանում է, որ կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին: Սահմանադրության 28 հոդվածը նախատեսում է, որ. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ»: Միաժամանակ նույն հոդվածով ամրագրված է, որ. «Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով»: Ակնհայտ է, որ Սահմանադրությամբ նախատեսված է կուսակցությունների գործունեությանը դատական կարգով միջամտելու երկու ինստիտուտ՝ կասեցնել կամ արգելել նրանց գործունեությունը:

6. Սահմանադրական դրույթների և օրենքի դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենքում որևէ անդրադարձ չի կատարվել կուսակցությունների գործունեության կասեցման ինստիտուտին, այն դեպքում, երբ Սահմանադրության պահանջն է օրենքով նախատեսել այն դեպքերը, որոնք կուսակցությունների գործունեության կասեցման կամ արգելման հիմք կարող են դառնալ: Դրա փոխարեն օրենքը նախատեսել է Սահմանադրությամբ չամրագրված մեկ այլ ինստիտուտ՝ կուսակցությունների լուծարման ինստիտուտը:

.... Հետևաբար, քաղաքական կյանքին շարունակական մասնակցության պայմաններում էլ կուսակցության իրավունքների մասնակի չիրացման արդյունքում (Ազգային ժողովի միայն համամասնական ընտրակարգով ընտրություններին չմասնակցելը կամ մեկ տոկոսից պակաս ձայն ստանալը) օրենքով (31 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր) իրավական բացասական հետևանքների նախատեսումը (լուծարումը) հանգեցնում է ոչ միայն իրավահարաբերության կարգավորման իրարամերժ սկզբունքների և միջոցների կիրառմանը, որն օրենքին հաղորդում է իրավական անհամաչափություն, այլև՝ վտանգում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված միավորումներ կազմելու անձանց իրավունքի անխախտելիությունը:

ՍԴՈ–700, 8 մայիսի, 2007 թ.

5. .... ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի ընձեռում է իր խախտված իրավունքները վերականգնելու համար դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող գլխի կանոնները, սահմանելով նման բնույթի գործերի քննու-

թյան սեղմ ժամկետներ և բացառելով վճռի բողոքարկումը, դատարանին հնարավորություն են տալիս ողջամիտ ժամկետում վերականգնել յուրաքանչյուր քաղաքացու, կուսակցության (կուսակցությունների միավորումների) ընտրական խախտված իրավունքները:

ՍԴՈ–810, 30 հունիսի, 2009 թ.

7. Միջազգային պրակտիկայի վերլուծությունը վկայում է նաև, որ այնպիսի ընտրական համակարգերի պարագայում, ինչպիսին առկա է Հայաստանում, համամասնական ընտրակարգով մանդատն ստանալուց հետո իրենց կուսակցությունները լքելու կամ կուսակցական պատկանելությունը փոխելու հանգամանքը **պառլամենտական կայունության և ընտրողների կատարած ընտրությանը հավատարիմ մնալու տեսանկյունից** դառնում է ժամանակակից ժողովրդավարությունների առջև ծառացած լուրջ հիմնախնդիր: Նման պրակտիկան հանգեցնում է նրան, որ **ընտրողների կայացրած որոշումը հաճախ զանգվածաբար փոփոխության է ենթարկվում**: Այդ խնդրի լուծման եղանակների ընտրությունը, բնականաբար, մեծապես պայմանավորված է ընտրական համակարգերի առանձնահատկություններով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տարբեր երկրներ տարբեր միջոցներ են գտել տվյալ հիմնախնդիրը լուծելու համար: Եթե Իսպանիայում դա արվում է կուսակցությունների փոխհամաձայնությամբ ստորագրված դաշնագրի հիման վրա, ապա մի շարք այլ երկրներում փորձ է արվում հարցի լուծումը գտնել օրենսդրական կարգավորումների մակարդակով:

9. .... Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության մակարդակով ամրագրվում է կուսակցությունների սահմանադրական գործառույթը, այն է՝ **ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը** (Սահմ. 7 հոդվածի 2–րդ մաս): Այլ կերպ, Սահմանադրությունն ամրագրում է Հայաստանի Հանրապետությանը՝ որպես ժողովրդավարական պետության, բնորոշ ևս մեկ սկզբունք, այն է՝ **կուսակցական ժողովրդավարության** սկզբունքը:

Այս սկզբունքը պայմանավորում է կուսակցությունների էական դերակատարությունը ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման հարցում, այդ թվում՝ նաև ընտրական համակարգին առավել ներկայացուցչականություն հաղորդելու համար կուսակցական ցուցակներով (համամասնական ընտրակարգով) ընտրությունների հնարավորությունը, չբացառելով, սակայն, մեծամասնական ընտրակարգի կիրառումը, իսկ այդ երկու եղանակների միջև համամասնությունների որոշումը վերապահելով օրենսդրի հայեցողությանը:

Դրա արդյունքում որևէ կուսակցության ընտրական ցուցակով ընտրված պատգամավորը որոշակիորեն կաշկանդված է լինում իր կուսակցական պատկանելությամբ այն առումով, որ այդ կուսակցության խմբակցությունից նրա կամովի դուրս գալը կամ այդ կուսակցությունում նրա անդամության դադարեցումը առաջացնում են բախում կուսակցական պատկանելության և միայն իր խղճով և համոզմունքներով առաջնորդվելու նրա ազատության միջև, այլ խոսքերով, ազատ մանդատի սկզբունքի և կուսակցական ժողովրդավարության սկզբունքի միջև:

ՍԴՈ–1076, 5 մարտի, 2013 թ.

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ երկրում համապետական ընտրություններն առաջին հերթին հենվում են հասարակության քաղաքական կառուցակարգերի վրա: .... Անառարկելի է, որ չի կարող լինել ժողովրդավարական պետական համակարգ՝ առանց անհրաժեշտ քաղաքական կառուցակարգերի: Չի կարող լինել նաև հասարակական կայունություն՝ առանց **կարողունակ քաղաքական ուժերի կողմից** երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պատասխանատվություն ստանձնելու: **Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրա-**

կանացնել միայն այն դեպքում, երբ ոչ միայն ծրագրային ցանկություն, այլև անհրաժեշտ ու բավարար կարողունակություն ունի քաղաքական պատասխանատվություն ստանձնելու համար, և դա տեսանելի ու գնահատելի է ընտրողի կողմից»:

ՀՀ Սահմանադրության մակարդակով է ամրագրված կուսակցությունների սահմանադրական գործառույթը, այն է՝ **ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը** (7-րդ հոդվածի 2-րդ մաս): Իրենց այդ առաքելությունը կատարելու համար կուսակցությունները ժողովրդի կողմից վստահության քվե ստանում են բոլոր կարգի ընտրությունների ժամանակ: Առավել ևս՝ Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ, եթե կուսակցությունները նախորդ ընտրությունների արդյունքներով ու իրենց գաղափարախոսական-ծրագրային կողմնորոշումներով նախապես վաստակել են ժողովրդի վստահության համապատասխան աստիճան, ապա ժողովրդից պետության գլխի մանդատ ակնկալող ինքնաառաջադրվող անհատը չի կարող միայն իր պասիվ ընտրական իրավունքի ուժով կուսակցությունների կողմից առաջադրված ու երաշխավորված թեկնածուների հետ ընթացակարգային միևնույն պայմաններում գրանցվել որպես նախագահի թեկնածու: Այս հանգամանքը հաշվի առնելով է, որ պետությունների մեծ մասում, որտեղ առկա է ինքնաառաջադրման ինստիտուտը, նման հայտ ներկայացնող անձը նախապես ձևավորում է որոշակի թվով **ընտրողների խումբ** կամ **առաջադրող կոմիտե** (Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Բուլղարիա, Լեհաստան և այլն) թեկնածությանն աջակցելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **տարբերակների ընտրությունը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է**, սակայն պետության ժողովրդավարական կառուցակարգերի բնականոն զարգացման շահերից ելնելով կարող է ընդհուպ տարբերակային մոտեցում դրսևորվել ընտրագրավի ու ստորագրահավաքի ինստիտուտների առանձին-առանձին կամ **համակցված կիրառման** հարցում (ինչպես, օրինակ, Բուլղարիայում)՝ պառլամենտական խմբակցություններ ունեցող, այդպիսին չունեցող կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման ու ինքնաառաջադրումների դեպքերում: Ի դեպ, ԱՄՆ գերագույն դատարանը 1972 թվականին ըստ էության իրավական դիրքորոշում է արտահայտել, որ նույնիսկ **անհրաժեշտ է** ստորագրահավաքի ու ընտրագրավի համակցված կիրառումը: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես գտնում է, որ համադրելի չէ այն իրողությունը, երբ առանձին կուսակցություններ, որոնք արդեն իսկ ունեն ընտրողների 5 տոկոսից ավելիի վստահությունը և **ժողովրդավարական ընթացակարգերով ու իրենց երաշխավորությամբ** թեկնածու են առաջադրում, հայտնվում են հավասար վիճակում մեկ առանձին՝ հաճախ հանրությանը բացարձակապես անհայտ ու առաջադրող խումբ, կոմիտե կամ այլ մարմին չունեցող անհատի հետ: Միայն ընտրագրավն այս պարագայում կարող է նաև ոչ իր իրավական բնույթին համարժեք դերակատարություն ունենալ, քանի որ այն համեմատաբար քիչ թափանցիկ է ու որոշակի իրավական ու քաղաքական մշակույթի պակասի պայմաններում կարող է առանձին ուժերի կողմից քաղաքական պատվերի ու ոչ իրավաչափ գործընթացների տեղիք տալ:

Մյուս կողմից՝ ինչպես բազմիցս նշել են Եվրախորհրդի դիտորդները (օրինակ՝ 2012 թ. մարտին Ռուսաստանի Դաշնության նախագահական ընտրությունների արդյունքներով ներկայացված զեկույցում) միայն ստորագրահավաքը նույնպես խնդիրներ է բովանդակում, երբ այդ հարցում հատկապես ընդդիմադիր թեկնածուների համար արհեստական դժվարություններ են ստեղծվում: Ժամանակին այս հանգամանքը շեշտադրվում էր նաև Հայաստանի քաղաքական ընդդիմադիր դաշտի կողմից: Այս ամենը հաշվի առնելով՝ հատկապես նոր ժողովրդավարության երկրների համար ցանկալի տարբերակն այդ երկու ձևերի համակցումը կարող է լինել, երբ ինքնաառաջադրման դեպքում կամ ընտրողների առնվազն 5 տոկոսի քվեն չստացած կուսակցությունների կողմից թեկնածու առաջադրելու դեպքում նախապես հավաքվելիք ստորագրությունների՝ օրենքով սահմանված պահանջը չի գերազանցում ընտ-

րողների թվի 1 տոկոսը, իսկ ընտրագրավ սահմանվում է այն հաշվով, որ այն ոչ միայն կաշկանդի թեկնածության «հետաքրքրությունից դրդված» առաջադրումը, այլև ընտրողներն ունենան դրա ձևավորմանը որոշակի մասնակցություն՝ որպես ինքնաառաջադրվողի նկատմամբ հանրային վստահության արտահայտություն: Հօգուտ այդ տարբերակի է, մասնավորապես, վկայում նաև այն փաստը, որ 2013 թ. ՀՀ Նախագահի ընտրության հրապարակված արդյունքներով թեկնածուների կեսը չհավաքեցին ընտրողների ձայների նույնիսկ 1 տոկոսը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–1075, 22 փետրվարի, 2013 թ.

5. .... Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ ՀՀ Սահմանադրության 39–րդ հոդվածի 6–րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրելով մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը՝ սահմանադիրը միևնույն ժամանակ դիտարկվող իրավունքի իրացումը երաշխավորելու համար նույն հոդվածի 6–րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանել է պետության պարտականության բնույթը՝ ֆինանսական և այլ աջակցություն ցուցաբերել բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին: Ընդ որում, նույն երկրորդ նախադասությամբ սահմանադիրը պետության դիտարկվող պարտականության իրականացման **դեպքերի և կարգի** սահմանումը վերապահել է օրենսդրին՝ դրանով իսկ կանխատեսելով օրենքի միջոցով մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի **սահմանափակման հնարավորությունը,** քանի որ իրավական ակտի շարադրանքի տեսանկյունից ակնհայտ է, որ օրենսդրին ֆինանսավորման կոնկրետ դեպքերը սահմանելու իրավասություն վերապահելով՝ սահմանադիրը հնարավոր է համարել բացառելու ֆինանսավորման մյուս բոլոր հնարավոր դեպքերը, այլապես սահմանադիրը Սահմանադրության 39–րդ հոդվածի 6–րդ մասի երկրորդ նախադասությամբ օրենսդրին կվերապահեր միայն ֆինանսավորման **կարգը,** այլ ոչ թե ֆինանսավորման **դեպքերը և կարգը** սահմանելու իրավասություն: Միաժամանակ, Սահմանադրության 39–րդ հոդվածի 6–րդ մասի երկրորդ նախադասությամբ սահմանադիրը չի բացառում, որպեսզի օրենսդիրը հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց ընդլայնի ֆինանսավորման դեպքերի շրջանակը: Վերոգրյալը թույլ է տալիս պնդել, որ Սահմանադրության 39–րդ հոդվածի 6–րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններով ամրագրված դրույթները գտնվում են միմյանց հետ տրամաբանական փոխկապվածության մեջ. Սահմանադրության 39–րդ հոդվածի 6–րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի մեկնումը, երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթից կտրված վերլուծության դեպքում ստեղծվում է այն թյուր կարծիքը, որ պետությունը բոլոր դեպքերում և ցանկացած մասնագիտության համար պարտավոր է երաշխավորել մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը: Իրականում դա այդպես չէ, քանի որ Սահմանադրության 39–րդ հոդվածի 6–րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի համատեքստում դիտարկելու և ըստ այդմ՝ վերլուծելու դեպքում է միայն հնարավոր դառնում պարզելու մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն է՝ պետությունը չի կարող ունենալ այնպիսի սահմանադրական պարտականություն, որ պարտավոր լինի երաշխավորել առանց բացառության բոլոր ու ցանկացած մասնագիտության գծով մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 43–րդ հոդվածը կրթության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է, սակայն, իրավունքների իրացման այն առանձ-

նահատուկ դեպքը, երբ Սահմանադրության հենց տվյալ հոդվածն է նախատեսում բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրացման կարգի, ինչպես նաև պետության կողմից իրականացվելիք ֆինանսական և այլ աջակցություն ցուցաբերելու դեպքերի ու կարգի սահմանումն օրենսդրին վերապահելը:

Անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքին է առնչվում նաև ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 8-րդ կետը, որը որպես պետության խնդիր է դիտարկում անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը նպաստելը: Այս կետի դրույթը հանդիսանում է նորմ-խնդիր, որն էլ ենթադրում է պետության նպատակային քաղաքականություն, և որի իրացումը պահանջում է որոշակի ժամանակահատված՝ հաշվի առնելով նաև պետության ֆինանսական հնարավորությունները, քանի որ անվճար տեղեր սահմանելիս պետությունը պարտավորվում է ֆինանսավորել ուսումնական հաստատության տվյալ տեղերում սովորողների ուսումնառությունը:

.... Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի և 48-րդ հոդվածի 8-րդ կետի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը չի կարող բացարձականացվել և տարածվել բարձրագույն կրթություն պահանջող անսահմանափակ թվով մասնագիտությունների վրա:

6. Անդրադառնալով Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված և օրենքով սահմանման ենթակա՝ բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին ֆինանսական և այլ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ պետության պարտականության կատարման դեպքերին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ դեպքերը սահմանված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրները» վերտառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են .... պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում .... մասնագետների պատրաստմանն աջակցելը»: Սահմանադրական դատարանը, վերլուծելով դիտարկվող դրույթը, արձանագրում է, որ նշված դրույթում «պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում» բառակապակցությունը նշանակում է աջակցություն ցուցաբերելուց առաջ պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառները որոշելու՝ պետության պարտականության իրականացում: Իսկ նույն դրույթում «մասնագետների պատրաստմանն աջակցելը» բառակապակցությունը ներառում է նաև Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ անվճար բարձրագույն կրթության իրավունքը երաշխավորելու համար պետության կողմից ցուցաբերվելիք ֆինանսական աջակցությունը: Այսինքն՝ Սահմանադրության 39-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ ֆինանսական աջակցություն ցուցաբերելուց առաջ պետությունը պարտավոր է, նախևառաջ, որոշել իր համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառները:

....

8. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ուսանողական նպաստի միջոցով ուսման վարձի **մասնակի փոխհատուցման** վերաբերյալ սահմանված իրավակարգավորումներին:

ՍԴՈ-1148, 18 ապրիլի, 2014 թ.

5. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Բոլոնյան գործընթացի արդյունքում ներդրված կրեդիտային համակարգը որոշակի կրթական ծրագրով համապատասխան մասնագիտական որակավորում ստանալու համար պահանջում է համապատասխան քանակությամբ կրեդիտների կուտակում: Ուստիև մագիստրոսի որակավորման աստիճանը պետք է համարել տվյալ մասնագիտությամբ առավել բարձր կրթական աստիճան միայն այն պարագայում, երբ առկա է այդ մասնագիտության համար նախատեսված անհրաժեշտ կրեդիտների կուտակումը: Միայն տվյալ պարագայում անձը կարող է համարվել համապատասխան կրթական ծրագրով **տվյալ մասնագիտությամբ երկրորդ աստիճանի՝ մագիստրոսի որակավորման կրող:**

Սակայն այս հիմնախնդիրը հստակ կանոնակարգված չէ ՀՀ օրենսդրությամբ, ինչը լայն հայեցողական մոտեցումների և մարդկանց իրավունքների խախտման մեծ ռիսկ է բովանդակում: ....

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական անհստակությունները հանգեցրել են նրան, երբ, մի կողմից, անձն իրավաչափ ակնկալիքներով հանձնում է սահմանված քննությունները, ուսանում է մագիստրատուրայում, ստանում է պետական նմուշի դիպլոմ, սակայն հետագայում պարզվում է, որ տարբեր իրավական ակտերով նախատեսված սահմանափակումներով ինքը տվյալ մասնագիտությամբ աշխատել չի կարող, մյուս կողմից՝ նա մեկ կամ երկու տարում կարող է մագիստրատուրայի բարձրագույն մասնագիտական ծրագրով այլ մասնագիտություն ձեռք բերել, ստանալ պետության կողմից սահմանված նմուշի համապատասխան դիպլոմ՝ առանց անհրաժեշտ կրեդիտների կուտակման:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ-906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

7. .... Քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ, **նախ**՝ միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, **երկրորդ**՝ հասարակական կազմակերպություններն ունեն կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, **երրորդ**՝ հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն և վերահսկողություն սահմանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում:

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության

արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:** Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, **դատարանում,** պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Բոլոր դեպքերում հիմնական մոտեցումն այն է, որ առանց իրավական շահի actio popularis-ը պետք է բացառվի:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ-966, 3 հունիսի, 2011 թ.

5. .... ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմատիվ դրույթի բովանդակությունից ոչ միայն բխում է անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության հետ կապված հարաբերությունները հատկապես օրենքով կարգավորելու, այլև այդ հարաբերությունները լիարժեք և, առաջին հերթին՝ **իրավունքի սկզբունքներին համապատասխան կարգավորելու** սահմանադրաիրավական պահանջ:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն հիշյալ իրավակարգավորումը սահմանափակման ենթակա չէ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավունքներից և ազատություններից (այդ թվում՝ արտոնություններից) օգտվելը նույնպես անձի իրավունք է, որը ենթակա է երաշխավորման ու պաշտպանության ներպետական օրենսդրությամբ: **Միաժամանակ, օրենքով և իրավական այլ ակտերով չեն կարող բացառվել միջազգային որևէ պայմանագրով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (այդ թվում՝ արտոնություններ) կամ սահմանափակվել այդպիսիք:**

ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼԸ

ՍԴՈ-913, 14 սեպտեմբերի, 2010 թ.

5. .... Փոխպատվաստման հետ կապված հարաբերությունների կարգավորման վերոհիշյալ սկզբունքների ու միջոցների իրավական բովանդակությունից հետևում է, որ փոխպատ-

վաստումն անձի կյանքի, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքների երաշխավորման բացառիկ միջոց է: Այն կոչված է ոչ թե մարդուն ենթարկելու գիտական, բժշկական և այլ փորձերի, այլ վերականգնելու ռեցիպիենտի առողջությունը, փրկել կյանքը՝ նրա (կամ նրա օրինական ներկայացուցչի) կամքի հիման վրա, միաժամանակ ապահովելով այդ անձի անձեռնմխելիությունը, ազատ կամաարտահայտության նրա իրավունքը: Հետևաբար, փոխպատվաստման հարաբերությունները կարգավորող վերոնշյալ օրենքի նշված նորմերով սահմանված միջոցներն իրավակարգավորման նպատակի առումով համաչափ են և հետապնդում են սոցիալապես արդարացի, հետևաբար՝ սահմանադրաիրավական նպատակ: Հիմնական խնդիրն այն է, թե ինչպիսի իրավական երաշխիքներ են ստեղծվում այդ սկզբունքային մոտեցումները կյանքի կոչելու համար:

Դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հետ կապված հարաբերությունները վիճարկվող նորմում կարգավորվում են օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու վերաբերյալ դոնորի՝ իր կենդանության օրոք արտահայտած կամահայտնության՝ գրավոր արտահայտած անհամաձայնության, սկզբունքով: Մասնավորապես, օրենքի վիճարկվող 7-րդ հոդվածի առաջին մասում օրենսդիրն ամրագրել է, այսպես կոչված՝ «ենթադրյալ համաձայնության» սկզբունքը, համաձայն որի անձի օրգաններն ու հյուսվածքները նրա մահից հետո կարող են վերցվել փոխպատվաստման նպատակով, քանի դեռ կենդանության օրոք նա չի հայտնել իր անհամաձայնությունը: Իսկ նույն հոդվածի երկրորդ մասում, որոշակի սահմանափակմամբ, ամրագրված է, այսպես կոչված՝ «պոզիտիվ համաձայնության» սկզբունքը, համաձայն որի դիակի՝ որպես դոնոր հանդես գալը պայմանավորված է նրա հարազատների կամահայտնությամբ, եթե անձը կենդանության օրոք չի հստակեցրել մահից հետո դոնոր հանդես գալու իր որոշումը:

Այսպիսով, եթե մինչև օրենսդրական փոփոխությունը փոխպատվաստման նպատակով դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ կարող էին վերցվել բացառապես նրա նախապես տված գրավոր համաձայնության պայմաններում, ապա օրենսդրական փոփոխություններից հետո նախատեսվում են երկու պայմաններ. դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ կարող են վերցվել՝

1) եթե անձն իր կենդանության օրոք գրավոր անհամաձայնություն չի հայտնել,

2) և եթե տվյալ անձի հարազատները (ազգականները) փոխպատվաստման վերաբերյալ որոշման բացակայության պայմաններում այդ անձի մահից հետո համաձայնություն են հայտնել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր կարգը մինչև օրենսդրական փոփոխությունը գործող կարգի համեմատությամբ ավելի ռիսկային է և հնարավոր բացասական դրսևորումների կանխարգելման լրացուցիչ երաշխիքներ է պահանջում: Այդ նպատակով է, որ օրենսդիրը, ի փոփոխումն օրենքի երկրորդ հոդվածի նախկին շարադրանքի, հստակ նորմ է սահմանել, որ «Արգելվում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների և հյուսվածքների առուվաճառքը»:

Սակայն խնդիրն այն է, թե արդյո՞ք միայն առկա փոփոխությունները բավարար են փոփոխված սկզբունքի հիման վրա օրենքի գործողությունը ՀՀ Սահմանադրության արժեբանական մոտեցումներին համապատասխան երաշխավորելու համար:

6. .... Հաշվի առնելով միջազգային առկա փորձը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի ներկա իրավակարգավորման պայմաններում Հայաստանում նույնպես անձը երաշխավորված հնարավորություն ունի անարգել արտահայտել իր կամքը՝ կապված իր մահից հետո դիակային դոնոր հանդես գալու խնդրի վերաբերյալ, որով երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 3, 14, 16 և 17-րդ հոդվածներով նախատեսված նրա իրավունքների ու ազատությունների իրացվելիությունը, իսկ եթե այդպիսի որոշումը որևէ պատճառով առկա

(հստակ) չէ, ապա օրենքի վիճարկվող նորմերն արգելում են դիակի օրգանների, հյուսվածքների փոխպատվաստում՝ առանց նրա հարազատների (ազգականների) համաձայնության, որը նույնպես հետապնդում է սոցիալապես արդարացի նպատակ:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մեր երկրում օրենքով նախատեսված առկա լուծումները և ենթաօրենսդրական իրավակարգավորումները, որպես մեկ միասնական համակարգ, թերի են ու ոչ լիարժեք:

7. Անդրադառնալով վիճարկվող նորմի և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի իրավակարգավորման շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի (ՀՀ Սահմ. 38-րդ հոդված) իրացման ապահովման, ինչպես նաև բնակչության առողջության պահպանման ծրագրեր և արդյունավետ ու **մատչելի բժշկական սպասարկման պայմաններ** ապահովելու պետության պարտականության՝ որպես սահմանադրաիրավական նպատակի իրացվելիության խնդրին և գնահատելով այդ նորմերի կիրառման պրակտիկան՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

ա) չի ձևավորվել այդ հարաբերությունների իրավակարգավորման այնպիսի ամբողջական համակարգ (օրենքի և ենթաօրենսդրական ակտերի միջոցով), որը կերաշխավորի՝ առաջադրված նպատակի անթերի իրացումը և մարդու արժանապատվության և հիմնական իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, կբացառի կոռուպցիոն ռիսկը,

բ) օրենքն ուժի մեջ է մտել առանց դրա գործողության անհրաժեշտ ու բավարար իրավական երաշխիքների ապահովման,

գ) առողջապահական պետական նպատակային ծրագրերում մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ պատվաստելը չներառելու պարագայում շարունակում է առկա մնալ կոռուպցիոն մեծ ռիսկի գործոնը,

դ) դիակային դոնորներից փոխպատվաստման ենթակա օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հստակ կանոնների բացակայությունը, այդ գործողությունների թափանցիկ ու վերահսկելի կազմակերպման կառուցակարգերի բացակայությունը հասարակական անվստահության ու արդարացված մտահոգությունների պատճառ են դառնում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ կառավարությունը չկատարելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2004 թ. ապրիլի 8-ի՝ «Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 541-Ն որոշման պահանջները, 2002 թվականի ապրիլի 16-ից մինչ օրս չի ընդունել քննության առարկա օրենքով իրեն պատվիրակված բոլոր որոշումները՝ օրենքի կիրարկումն ապահովելու համար: ....

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա օրենքի և դրա կիրարկումն ապահովող իրավակարգավորման վերոհիշյալ պարտադիր պայմանների բացակայությամբ լիարժեք չեն կարող երաշխավորվել մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու և դրա հետ կապված բժշկական օգնության ու սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի (ՀՀ Սահմ. 38-րդ հոդված) իրացման **մատչելիությունը**, հետևաբար՝ բնակչության առողջության պահպանման պետական ծրագրերի արդյունավետությունը:

Բացի դրանից, նկատի ունենալով, որ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքն հրապարակումից հարյուր ութսուն օր հետո այն պաշտոնական ուժի մեջ մտնելու մասին դրույթը գործնականում որևէ իրավական հետևանք չի ունեցել և չի երաշխավորել օրենքի գործողության համար անհրաժեշտ իրավակարգավորում, ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ Սահմա-

նադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, գտնում է, որ սույն օրենքը չի կարող կիրարկվել առանց դրանով իսկ նախատեսված ենթաօրենսդրական ակտերի ամբողջ փաթեթը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին ու սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան մշակելու, նախկինում ընդունված որոշումները վերանայելու և գործողության մեջ դնելու:

ՄԻԱՎՈՐՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-669, 22 դեկտեմբերի, 2006 թ.

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությունը կուսակցությունների գործունեության ապահովման մի շարք երաշխիքներ է ամրագրել: Նախ՝ Սահմանադրության 7 հոդվածը սահմանում է, որ կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին: Սահմանադրության 28 հոդվածը նախատեսում է, որ. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ»: Միաժամանակ նույն հոդվածով ամրագրված է, որ. «Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով»: Ակնհայտ է, որ Սահմանադրությամբ նախատեսված է կուսակցությունների գործունեությանը դատական կարգով միջամտելու երկու ինստիտուտ՝ կասեցնել կամ արգելել նրանց գործունեությունը:

Երկրորդ՝ Սահմանադրության 43 հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32 հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է նաև, որ. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»: Մի շարք միջազգային պայմանագրերով, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (հոդվ. 11) ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (հոդվ. 22), Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է պարտավորություններ՝ երաշխավորել մարդկանց միավորվելու ազատության իրավունքը, այդ իրավունքների սահմանափակումների հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–926, 23 նոյեմբերի, 2010 թ.

4. .... ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունը վկայում է, որ վերջինս սահմանում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման երեք **համաժամանակյա նախապայման**.

ա) օրենքով սահմանված դեպքերում,

բ) օրենքով սահմանված կարգով,

գ) դատարանի որոշմամբ:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում նշված նախապայմաններից շեղվելու որևէ իրավական հնարավորություն:

.... 5. Դատարանի որոշման առկայության՝ որպես ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով երաշխավորված իրավունքի սահմանափակման համար նախատեսված նախապայմանի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս հետապնդում է հետևյալ իրավաչափ նպատակները.

նախ, այն նպատակ ունի պաշտպանել անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական և ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից,

երկրորդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու և հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում կազմված արձանագրությունները քրեական դատավարության ընթացքում օգտագործվում են որպես ապացույց և արդյունքում կարող են կիրառվել հաղորդակցվող անձի կամ նրա ընդդիմախոսի դեմ, սահմանադիրն առանձնակի կարևորություն է տվել հիշյալ միջոցառումների իրականացման օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը,

երրորդ, որպես կանոն, նշված միջոցառումները կրում են գաղտնի բնույթ, ինչը (ինչպես դա շեշտում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը) որոշ դեպքերում կարող է հանգեցնել դրանց չարաշահումների, որոնց կանխման արդյունավետ միջոցներից է նաև դրանց օրինականության նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը:

6. Անդրադառնալով օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքին, այն է՝ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն առանց դատարանի որոշման լսելու կամ վերահսկելու հնարավորությանը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում օրենսդիրը ղեկավարվել է այն տրամաբանությամբ, որ անձը կամովին է հրաժարվում իր՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից: Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված դեպքը նախատեսելիս օրենսդիրը հաշվի չի առել մի շարք հանգամանքներ:

Նախ, նկատի ունենալով, որ ՀՀ օրենսդրությամբ անձի համաձայնությամբ նրա հեռախոսային և այլ հաղորդումները լսելն իրականացվում է միայն պաշտպանվող անձի պարագայում, չի բացառվում, որ հիշյալ միջոցառումների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունն օգտագործվելու է համաձայնություն տված անձի ընդդիմախոսի դեմ, որի՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով սահմանված իրավունքներն այս պարագայում կարող են խախտվել: Արդյունքում, միևնույն իրավական գործիքը կարող է մի դեպքում օգտագործվել որպես իրավական պաշտպանության միջոց, մեկ այլ դեպքում հանդես գալ որպես մարդու իրավունքների խախտման կամ ոչ իրավաչափ սահմանափակման միջոց:

Երկրորդ, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «….4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»: Այս նորմը ենթադրում է, որ հիշյալ միջոցառումները պետք է կիրառվեն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և միայն այն պարագայում, երբ պետական իշխանության մարմինների համար անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու այլընտրանքային տարբերակը բացակայում է: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում նշված երկու նախապայմանների առկայության կամ բացակայության հարցը ենթակա է գնահատման, ինչը կարող է կատարվել միայն դատական վերահսկողության շրջանակներում:

Երրորդ, ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների սահմանափակման համար անհրաժեշտ երեք նախապայմաններից, այն է՝ «օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ», ՀՀ Սահմանադրությամբ որևէ բացառություն չի նախատեսվում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ վիճարկվող 284-րդ հոդվածի 1-ին մասը՝ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկի համաձայնությամբ նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն առանց դատարանի որոշման լսելու կամ վերահսկելու իրավական հնարավորություն վերապահելու մասով, ներքին հակասության մեջ է գտնվում նույն օրենսգրքի 14, 241 և 281-րդ հոդվածների դրույթների հետ:

Չորրորդ, վիճարկվող նորմը դուրս է տվյալ հոդվածի իրավակարգավորման շրջանակներից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննարկման կարգը: Խոսքը վերաբերում է ներկայացված միջնորդության քննարկմանը, և տվյալ հոդվածի 2-7-րդ մասերով նախատեսվում է դատարանում դրա քննության կարգը, իսկ 8-րդ մասը սահմանում է հատուկ իրավիճակներում հրատապ գործողությունների կատարման և դրանց հետ կապված դատական վերահսկողության առանձնահատկությունները: Հոդվածի 1-ին մասը բացարձակապես չի առնչվում միջնորդության քննարկման կարգին և չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջներից:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իրավունքը ենթակա է սահմանափակման ոչ միայն Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով, այլ նաև Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, ինչը փաստարկում է պատասխանողը, սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ սահմանափակում նախատեսող սահմանադրական այս երկու նորմերի հարաբերակցության հարցին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը հղում է կատարում օրենքին և չի բացառում, որ օրենքով նախատեսվի ոչ միայն կոնկրետ իրավունքի սահմանափակման թույլատրելիությունը, այլ նաև՝ սահմանափակման դեպքերը և կարգը: Ընդ որում, չի բացառվում, որ օրենքը կոնկրետ իրավունքի սահմանափակման համար որպես պարտադիր նախապայման սահմանի դատարանի որոշման առկայությունը: Այս վերջին պայմանի սահմանումը, տարբեր հնարավոր սահմանափակումների առնչությամբ, սահմանադիրը թողել է օրենսդրի հայեցողությանը: Սակայն ՀՀ Սահմանադ-

րության 23-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավունքի սահմանափակման պարագայում դատարանի որոշման առկայության պարտադիր նախապայմանը չի թողնվել օրենսդրի հայեցողությանը, այլ նախատեսվել է հենց Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով: Հետևաբար, Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված՝ իրավունքի սահմանափակմանը վերաբերող նորմն օրենսդրի կողմից պետք է ելակետ ընդունվի Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա իրականացվող հնարավոր իրավակարգավորման շրջանակներում:

ՆԵՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ-733, 5 փետրվարի, 2008 թ.

4. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է յուրաքանչյուր դատապարտյալի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը: Համաձայն այդ հոդվածի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը վերապահված է **յուրաքանչյուր դատապարտյալի**: Սահմանադրության 43 հոդվածը 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: ՀՀ Սահմանադրության 44 հոդվածին համապատասխան՝ այդ իրավունքը չի կարող նույնիսկ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Ներման ինստիտուտն իրենից ներկայացնում է հանցագործություն կատարած անձի նկատմամբ՝ մարդու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, արդարության սահմանադրական սկզբունքների անմիջական գործողության դրսևորում: Ըստ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 17-րդ կետի՝ ներում շնորհելը ՀՀ Նախագահի բացառիկ իրավասությունն է:

Ներման ինստիտուտի կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման ուսումնասիրությունը վկայում է, որ ներում հայցելու իրավունքի իրացման համար որևէ նախապայման սահմանված չէ, ներում կարող է հայցել յուրաքանչյուր դատապարտյալ, ներումը կարող է շնորհվել յուրաքանչյուր դատապարտյալի՝ անկախ կատարված հանցագործության բնույթից, ծանրությունից ու այլ հանգամանքներից (մասնավորապես, պատժաչափից, պատժի կրած մասից): Ներում շնորհելու համար որևէ պարտադիր չափանիշ նախատեսված չէ, այն ամբողջությամբ թողնված է ՀՀ Նախագահի հայեցողությանը. Նախագահի՝ ներում շնորհելու իրավունքը սահմանափակված չէ ո՛չ դատապարտյալների շրջանակով, ո՛չ հանցագործությունների բնույթով, ո՛չ պատժատեսակներով ու պատժաչափերով:

Ներման ինստիտուտի օրենսդրական կարգավորումը վկայում է այն մասին, որ ներման խնդրանքի իրավունքի իրացման համար որևէ սահմանափակում նախատեսված չէ, հետևաբար, ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի դրույթին համահունչ, **ներում հայցելու իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դատապարտյալ, և ՀՀ Նախագահը ներում կարող է շնորհել յուրաքանչյուր դատապարտյալի**:

6. .... Ելնելով վերոշարադրյալից, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում կիրառված՝ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթի այնպիսի մեկնաբանությունը, որի դեպքում այդ եզրույթը ներառում է նաև պատժից ազատելու ինստիտուտը, անհամատեղելի է այդ դրույթի բովանդակության հետ և դուրս է այդ դրույթի տրամաբանության շրջանակներից: Պատժից ազատելու ինստիտուտի ողջ տրամաբանությունը հանգում է նրան, որ այն գործում է միայն որոշակի պայմանների և հիմքերի առկայության դեպքում, հետևաբար՝ նաև դատապարտյալների որոշակի շրջանակի

համար: Ուստի պատժից ազատելու ինստիտուտի և դրա առանձին դրսևորումների տրամաբանությունն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթի հետ, որտեղ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթն օգտագործված է և ենթակա է ընկալման **մասնակի (պատիժը մեղմացնող) ներում իմաստով**, ինչպես այն ներկայացված է ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածում:

Ավելին, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում օրենքը նախատեսում է նաև այն վերացնելու հնարավորություն: Պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը ենթադրում է, որ այդ խնդրանքի բավարարումը պետք է լինի վերացման ոչ ենթակա: Ուստի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտն այս առումով ևս անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ներման և պատժից ազատելու ինստիտուտների, դրանց բովանդակության, էության, սոցիալական նշանակության և նպատակների միջև առկա սկզբունքային և անհամատեղելի առանձնահատկություններն ու տարբերությունները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում խոսքը վերաբերում է ոչ թե ներման և պատժից ազատելու տարաբնույթ երկու առանձին ինստիտուտներին, այլ ներման ինստիտուտի գործադրման երկու տարատեսակներին՝ **ներման լրիվ և մասնակի ձևերին**:

ՍԴՈ-921, 19 հոկտեմբերի, 2010 թ.

5. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաներումը չկիրառելով և՛ նախկինում նախաքննության փուլում համաներման հիմքով պատասխանատվությունից ազատված անձանց նկատմամբ, և՛ համաներման կամ ներման հիմքով պատժից մասամբ կամ ամբողջությամբ ազատված դատապարտյալների նկատմամբ՝ օրենսդիրը գործել է օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելման սկզբունքին համահունչ՝ ապահովելով նույնական վերաբերմունք համանման իրավիճակում գտնվող անձանց առնչությամբ: Մինչդեռ նույն հետևողականությունը չի դրսևորվել համաներումը չկիրառելու վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառությունը նման ձևով սահմանելիս և «....որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել» դրույթը սույն իրավակարգավորման համատեքստում ներկայացնելիս:

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ

ՍԴՈ-1244, 8 դեկտեմբերի, 2015 թ.

6. Անհատական, այդ թվում՝ կենսաչափական, տվյալների հավաքման, օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման եվրոպական փորձի ուսումնասիրությունը վկայում է որոշակի հստակ չափորոշիչների կիրառման անհրաժեշտության մասին, մասնավորապես.

– այդ տվյալները պետք է հավաքվեն և մշակվեն արդար և օրինական ճանապարհով,

– պահպանվեն հատուկ և իրավաչափ նպատակների համար և չօգտագործվեն այդ նպատակներին չհամապատասխանող ձևով,

– լինեն համարժեք, համապատասխան և համաչափ հավաքման համար հիմք ծառայած նպատակներին,

– լինեն ճշգրիտ և անհրաժեշտության դեպքում թարմացվեն,

– պահպանվեն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտին այնպիսի ժամանակահատվածում, որը չի գերազանցում տվյալների հավաքման համար հիմք հանդիսացած նպատակի համար պահանջված ժամանակահատվածը,

– անվտանգության համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն ավտոմատացված տվյալների բազաներում պահպանվող անհատական տվյալների պաշտպանության համար՝ ընդդեմ պատահական կամ չթույլատրված ոչնչացման կամ կորստի, ինչպես նաև չթույլատրված մուտքի, փոփոխության կամ տարածման (Եվրոպայի խորհուրդ, Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիա, 1981, վավերացվել է 09.05.2012 թ.): ....

7. Անդրադառնալով վեճի առարկա իրավակարգավորումներում «իրավունքների» ու «պարտականությունների» փոխադարձության և համարժեքության ապահովումը երաշխավորելու խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր մի շարք որոշումներում (ՍԴՈ–792, ՍԴՈ–833, ՍԴՈ–844, ՍԴՈ–934 և այլն) իրավունքի տարբեր բնագավառներում իրավասուբյեկտների **իրավունքների ու պարտականությունների փոխադարձության, համարժեքության** և դրանց արդյունավետ իրացման խնդիրների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելով՝ ընդգծել է դրանց կարևորությունը ոչ միայն տվյալ իրավակարգավորման արդյունավետության, այլև սահմանադրական օրինականության ապահովման տեսանկյունից: Վերահաստատելով իր հիշյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև պարզել, թե վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում «իրավունքի» և «պարտականության» փոխադարձության ապահովմամբ իրավական ինչպիսի՞ հետևանքներ կարող են առաջանալ հասարակական այլ հարաբերությունների կարգավորման շրջանակներում և, մասնավորապես՝ սահմանադրական այլ իրավունքների ու ազատությունների ազատ իրականացման առնչությամբ, ինչպես նաև, փոխադարձությամբ հանդերձ՝ վիճելի նորմերում ապահովվա՞ծ է, արդյոք, «իրավունքի» և «պարտականության» **համարժեքությունը**՝ որպես իրավակարգավորման ժողովրդավարական սկզբունք, այն դիտարկելով նաև ՀՀ Սահմանադրության 14.1–րդ հոդվածի պահանջների համատեքստում:

Այդ տեսանկյունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

– իրավաչա՞փ է, արդյոք, քաղաքացուն նույնականացման քարտ տրամադրելիս ոստիկանության մարմնում նրա աջ և ձախ ձեռքերի ցուցամատների կամ՝ աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմները վերցնելը,

– իրավաչա՞փ է, արդյոք, քաղաքացու կենսաչափական տվյալների կենտրոնացված մշակումը,

– անձի մատնադրոշմները վերցնելը, կենսաչափական տվյալների մշակումն առնչվու՞մ են, արդյոք, ՀՀ Սահմանադրության 26–րդ հոդվածով երաշխավորված անձի իրավունքների ու ազատությունների իրացման հետ, և որպես իրավական հետևանք՝ անձի սահմանադրական ի՞նչ այլ իրավունքներ ու ազատություններ կարող են սահմանափակվել, հետևաբար՝ անձանց, այդ թվում հասարակության կրոնական համոզմունքներ ունեցող անդամների նկատմամբ երաշխավորվու՞մ է, արդյոք, իրավահավասար մոտեցում:

Վիճելի իրավակարգավորում նախատեսող նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, նախ՝ որ դրանցում սուբյեկտիվ բնույթի պարտականությունների սահմանումն ինքնանպատակ չէ և պայմանավորված չէ ձևական անհրաժեշտությամբ, այլ ծառայեցվում է ինչպես մասնավոր, այնպես էլ՝ հանրային շահերին: Մասնավորապես, պետության կողմից անձին տրվող պաշտոնական փաստաթղթում (նույնականացման քարտում) անձնական տվյալների արտացոլումն իրավական անհրաժեշտություն է, առանց որի սկզբունքորեն անհնարին է իրականացնել անձի նույնականացում՝ որոշելու համար նրա ինքնությունը, քաղաքացիությունը և այլն: ....

Մյուս կողմից, սահմանադրական դատարանը գտնում է, որ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների կատարմանն ուղղված օրենսդրական այս կամ այն կարգավորմամբ չպետք է վտանգվի (արգելափակվի) քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների ազատ իրականացումը: Սահմանադրությունն իրավական միասնական փաստաթուղթ է, որում սահմանված նորմերը գործում են անմիջականորեն և ենթակա են անվերապահ կատարման: Օրենքով են սահմանվում դրանց կատարման կարգն ու պայմանները (Սահմ. 6-րդ հոդված): Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, **որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով**: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար:

.... **Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին:**

8. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորման սահմանադրականությունը մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի և դրա իրացման թույլատրելի շրջանակների, ինչպես նաև այդ իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշների համատեքստում գնահատելու խնդրին՝ պարզելու համար հանրային շահերով և պետության պոզիտիվ պարտականության կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված անձի սահմանադրական կոնկրետ իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իրավունքը նույն հոդվածի երկրորդ մասի հիմքերով կարող է սահմանափակվել միայն օրենքով, «եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար», որից, ինչպես և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումներից հետևում է, որ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացումն օրենքով ենթակա է սահմանափակման, եթե.

– եկեղեցական արարողությունները, պաշտամունքի այլ ծիսակատարությունները խախտում են կամ կարող են խախտել հասարակական անվտանգությունը,

– այդ արարողությունները, ծիսակատարություններն սպառնում են մարդկանց առողջությանը, խախտում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Համադրելով «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրական վերոհիշյալ չափանիշների հետ՝ ակնհայտ է, որ վիճելի իրավակարգավորումները չեն պարունակում ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հանգամանքներով պայմանավորված որևէ նորմատիվ պահանջ (պայման):

Կրոնական համոզմունքների (մտքի, խղճի և կրոնի) ազատությունը, որպես մարդու հիմնական սուբյեկտիվ իրավունք, երաշխավորված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերով:

ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (կից՝ կամընտիր արձանագրություններով) 18-րդ հոդվածի, Կրոնի կամ համոզմունքների հիմքի վրա ամեն տեսակ անհանդուրժողականության և խտրականության չեզոքացման մասին հռչակագրի (1981 թ.), Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության վերաբերյալ կոնֆերանսի Եզրափակիչ ակտի (Գլուխ 1, ա), սկզբունք VII), ինչպես նաև Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոնֆերանսի մասնակից պետությունների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթի (1989 թ.), ԵԱՀԿ մարդկային չափանիշի մասնակից պետությունների ներկայացուցիչների խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթի (1990 թ.), «ԱՊՀ երկրներում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների միջազգային պարտավորությունների մասին» հռչակագրի (1994 թ.), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԱՊՀ կոնվենցիայի (1995 թ.) իրավակարգավորումների շրջանակներում նույնպես երաշխավորված է կրոնական համոզմունքների և դրանց անմիջականորեն առնչվող սուբյեկտիվ այլ իրավունքների ազատությունը և դրա իրավական պաշտպանությունը, որը վերոհիշյալ միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների շրջանակներում ներպետական օրենսդրության մակարդակում պարտադիր են ապահովման անդամ պետությունների կողմից: Հայաստանի Հանրապետությունում այդ իրավունքի իրացման երաշխավորման նպատակին է ծառայում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը և կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունն ու բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար»: Միաժամանակ, օրենսդիրը հստակեցրել է կրոնական համոզմունքների ազատության իրավունքի իրացման շրջանակներում պետության միջամտության սահմանները (օրենքի 17-րդ, 18-րդ հոդվածներ):

9. Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-649 որոշմամբ անդրադառնալով օրենքով նախատեսված անձի սուբյեկտիվ պարտականության և Սահմանադրությամբ երաշխավորված խղճի, կրոնի, համոզմունքների ազատության իրավունքի հարաբերակցության, դրանց հավասարակշռման սահմանադրաիրավական գնահատման խնդրին՝ ընդգծել է, որ «.... Սահմանադրական դատարանի խնդիրը չէ պարզել այդ համոզմունքների դավանաբանական էությունը, սակայն օրենքի կիրառման առաջին իսկ պահից ծագած այս խնդիրները մղել են և՛ օրենսդրին, և՛ գործադիր իշխանությանը տվյալ անձանց համար գտնելու այլընտրանքային լուծումներ»: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառման նույնպիսի խնդիր առկա է սույն գործով վեճի առարկա նորմեր պարունակող օրենքներում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի խնդիրն է սույն գործով վիճելի իրավակարգավորումների շրջանակներում նախատեսել այնպիսի այլընտրանքային ընթացակարգեր, որոնց պարագայում անձը կամընտրական հնարավորություն ունենա իր կրոնական համոզմունքներին համահունչ համապատասխանեցնելու իր վարքագիծը: Այս առումով, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանող կողմի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «.... հասարակական կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավունքների անխոչընդոտ իրականացումն ապահովելու նպատակով, երբ այդպիսի իրավունքների իրականացումը պայմանավորված է անձը հաստատող փաստաթղթերի պարտադիր առկայությամբ, պետք է նախատեսվեն համապատասխան իրավական միջոցներ, որոնք ընդունելի կլինեն կրոնական համոզմունքների տեսանկյունից և անձանց չեն կանգնեց-

նի կրոնական համոզմունքների և հիմնական իրավունքների իրականացման միջև ընտրություն կատարելու փաստի առջև»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում օրենսդրական լուծումներ գտնելը, ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 25.12.1998 թվականի թիվ 821 որոշման համապատասխան փոփոխությունները կարող են կրոնական համոզմունքներ ունեցող անձանց նախկին նմուշի անձնագրերի վավերականության ժամկետի երկարացման պայմաններում ժամանակավոր երաշխիք հանդիսանալ այդ անձանց՝ որպես ՀՀ քաղաքացու՝ իրենց իրավունքների ու ազատությունների իրացման համար:

Սահմանադրական դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարում ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության ուշադրությունը հրավիրել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի գործող այն իրավակարգավորման վրա, համաձայն որի՝ «Քաղաքացիական պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ» (19-րդ հոդված): Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավական մոտեցումը պետք է իրացվելի լինի նաև նույնականացման քարտերի տրամադրման հետ կապված հարաբերությունների կարգավորման շրջանակներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա է իրավակարգավորման բաց, որի հաղթահարումն ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է, ինչի մասին է վկայում նաև սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բացատրության մեջ բերված՝ սույն որոշման 3-րդ կետում նշված եզրահանգումը:

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

ՍԴՈ-1142, 2 ապրիլի, 2014 թ.

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ նվազագույն աշխատավարձի դեպքում պարտադիր կուտակային կենսաթոշակի վճարման խնդիրն օրենսդրական համարժեք լուծում չի ստացել: Հաշվի չի առնվել նաև «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, որի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի սահմանումը նպատակ ունի, մասնավորապես, հիմնավորել սահմանվող նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերը, որոշել չհարկվող եկամտի չափը: Սակայն վերջինս, ինչպես փաստվեց, համաձայն «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ այլևս գոյություն չունի:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք: «Նվազագույն աշխատավարձ» սահմանադրական եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է, որ աշխատողի փաստացի աշխատավարձն օրենքով նախատեսված նվազագույնից պակաս լինել չի կարող, որովհետև

դա պետք է կենսական նվազագույն որոշակի խնդիրների լուծում ապահովի: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանադրաիրավական այս մոտեցումը չի դրել տվյալ հիմնախնդրի օրենսդրական կանոնակարգման հիմքում և փաստացի իրավակարգավորումը ներդաշնակ չէ Սահմանադրության 32-րդ հոդվածի պահանջներին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ

ՍԴՈ-753, 13 մայիսի, 2008 թ.

5. Քննության առարկա դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված «պարտադիր վճար» հասկացության բովանդակությանը, ինչպես նաև օրենքի վիճարկվող դրույթում օգտագործված «եթերավճար» հասկացության բովանդակությանն ու էությանը:

Սահմանադրության 45 հոդվածում «այլ» բառի առկայությունից բխում է, որ հիշյալ հոդվածում նշված հարկերը և տուրքերը ևս պարտադիր վճարումներ են, և, հետևաբար, հիշյալ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները, հարկերից և տուրքերից տարբերվելով հանդերձ, վերջիններիս հետ պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ:

Հարկային օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված պարտադիր վճարները.

ա) կրում են հանրային իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում և վճարվում են հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում,

բ) նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար:

ՍԴՈ-804, 26 մայիսի, 2009 թ.

9. Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրության մեջ հետևողականություն չի դրսևորվել «պարտադիր վճարներ» և «պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարներ» հասկացությունների օգտագործման հարցում՝ մի դեպքում միևնույն վճարը հիշատակելով որպես պարտադիր վճար, մեկ այլ դեպքում՝ որպես պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճար: Այսպես, օրենքի 9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատեր պարտավոր է իր բաժնին համաչափորեն մասնակցել պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին, հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման և շահագործման այլ ծախսերին: Օրենքի 10 հոդվածի 3-րդ մասում ամրագրված է. «Շինության բոլոր սեփականատերերը պարտավոր են, շինության սեփականատերերի ժողովի կողմից սույն օրենքով սահմանված կարգով հաստատված նորմերից ելնելով, կատարել համապատասխան վճարումներ կամ իրենց ուժերով ու միջոցներով իրականացնել պարտադիր նորմերի պահանջները»:

ՍԴՈ-920, 12 հոկտեմբերի, 2010 թ.

7. Վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթը դիտարկել այդ նորմի իրավակարգավորման առարկայի և օրենսգրքի 200-202-րդ և 204-րդ հոդվածների ընդհանուր տրամաբանության լույսի ներքո:

Այդ նորմերի վերլուծությունը վկայում է, որ դրանցում նշված բոլոր իրավախախտումների դեպքում փաստացիորեն տեղի է ունենում ապրանքների կամ դրանց որոշակի խմբաքա-

նակի չհայտարարագրում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 200–202-րդ և 204-րդ հոդվածների իմաստով «չհայտարարագրել» հասկացության ներքո օրենսդիրը նկատի է ունեցել ոչ միայն ապրանքները և տրանսպորտային միջոցներն ընդհանրապես չհայտարարագրելը (օրենսգրքի 200 և 201-րդ հոդվածներ), այլ նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների այնպիսի **հայտարարագրումը,** որը զուգորդվում է մաքսային մարմին մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման համար կեղծ, անօրինական ճանապարհով ստացված, անվավեր համարված կամ այլ ապրանքներին և տրանսպորտային միջոցներին վերաբերող փաստաթղթեր ներկայացնելով, կեղծ մաքսային ապահովման միջոցներ օգտագործելով, ինչպես նաև առանց մաքսային մարմինների թույլտվության՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքների և տրանսպորտային միջոցների օգտագործմամբ, տնօրինմամբ և այդ արտոնություններով չպայմանավորված նպատակներով այլ անձանց հանձնելով (օրենսգրքի 202 և 204-րդ հոդվածներ): Վերջին դեպքերում ևս փաստացիորեն տեղի է ունենում կոնկրետ ապրանքների և տրանսպորտային միջոցների կամ դրանց կոնկրետ խմբաքանակի **չհայտարարագրում:** Ընդ որում, նշված իրավախախտումներն իրենց իրավական հետևանքներով այնպիսին են, որ դրանց կատարման դեպքում այդ չափով չեն ապահովվում տվյալ ապրանքների և տրանսպորտային միջոցների կամ դրանց առանձին խմբաքանակի մասով մաքսատուրքերի, օրենքով սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պետական բյուջեի մուտքերը:

.... Միաժամանակ, նկատի ունենալով, որ վիճարկվող նորմում՝ «այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը» արտահայտությունը կարող է թույլ տալ նորմի այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վիճարկվող նորմով նախատեսված պատասխանատվությունը կարող է կիրառվել նաև հայտարարագրման սահմանված կարգից ցանկացած շեղման դեպքում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով նախատեսված արարքի համար անձի վարչական պատասխանատվությունն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ այդ պատասխանատվությունը նպատակաուղղված է մաքսային պարտավորությունների կատարումն ապահովելու՝ վերը նշված իրավաչափ նպատակին հասնելուն: Հետևաբար, այն դեպքում, երբ տեղափոխվող ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելը չի հանգեցրել ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի նվազեցմանը և ըստ այդմ չի հանգեցրել օրենքով սահմանված կարգով և չափով մաքսատուրք վճարելու սահմանադրական պարտականության ոչ պատշաճ կատարմանը, նշված արարքի համար պատասխանատվությունը՝ վիճարկվող նորմով սահմանված չափով, դառնում է ինքնանպատակ և չի բխում վիճարկվող նորմի ընդհանուր իրավակարգավորման առարկայից:

ՍԴՈ-1142, 2 ապրիլի, 2014 թ.

9. .... Այս ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ եթե պարտադիր կուտակային վճարները հանդես գային որպես սոցիալական վճարներ, խելամիտ հարաբերակցության մեջ դրվեին ոչ սոցիալական ապահովության նպատակ հետապնդող հարկային այլ վճարների հետ, փոխանցվեին պետական բյուջեի հատուկ հաշվին և պայմանագրային հիմունքներով կամ օրենքով նախատեսված հստակ երաշխիքներով ու պետության պատասխանատվությամբ տրվեին կառավարման, ապա.

ա) համակարգը, բյուջետային վերահսկողության շրջանակներում, կհայտնվեր նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ուղղակի վերահսկողության դաշտում, ինչը կմեծացներ միջոցների խելամիտ կառավարման և վերադարձնելիության երաշխավորման հուսալիությունը,

բ) առարկայական կլիներ Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունը՝ արդյունավետ վերահսկողության և հանրային-իրավական պատասխանատվության առումով,

գ) զգալի չափով կմեծանար հանրային վստահությունը համակարգի հուսա-լիության նկատմամբ,

դ) նման համակարգը հնարավորություն կտար օրենքով խրախուսման լրա-ցուցիչ մեխանիզմներ նախատեսել նաև կամավոր կուտակային բաղադրիչի մաս-նակիցների համար:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–1063, 18 դեկտեմբերի 2012 թ.

5. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ, **նախ՝** ինքնին խնդրահարույց է ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը: Այն չունի պատշաճ իրավական հիմնավորվածություն՝ այդ մասի համատեքստում վարույթի հարուցումը մերժելիս դրա պատճառների մասին հիմնավորումներ չտալու դրույթ նախատեսելու առումով: **Երկրորդ՝** երբ օրենսգիրքը նախատեսել է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթը նաև անձի դիմումն է, և այս առիթն ընդհուպ չի ներառել հիշյալ հոդվածի 7-րդ մասում, ապա այդ դիմումը չի կարող մնալ անպատասխան կամ այն մերժելու դեպքում չտրվի մերժման համապատասխան հիմնավորում: Հակառակ դեպքում խախտվում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածով նախատեսված իրավունքը, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»: **Իրավական պրակտիկան պետք է անվերապահորեն հիմք ընդունի անձի՝ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու սահմանադրական իրավունքի ապահովման անհրաժեշտությունը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:** Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրորեն ամրագրված «պատշաճ պատասխան» եզրույթը չի ենթադրում միայն պատասխանի ձևը կամ առկայությունն ընդհանրապես: Այն բովանդակային առումով նշանակում է, որ պատասխանը պետք է լինի իրավաչափ ու անհրաժեշտ հիմնավորումներով: Իրավական պետությունում այս պահանջը չի կարող շրջանցել որևէ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմին կամ պաշտոնատար անձ, այդ թվում՝ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–731, 29 հունվարի, 2008 թ.

10. ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողու-

թյունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:

ՍԴՈ–766, 14 հոկտեմբերի, 2008 թ.

6. .... Վերոշարադրյալ մոտեցումները հաշվի առնելով՝ «պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր» և «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչեր» հասկացությունները ՀՀ քրեական օրենսգրքի 301 հոդվածի սահմանադրաիրավական իմաստով պետք է հասկանալ **օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության մարմինների պետաիշխանական գործառույթներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ բռնությամբ կամ դրա գործադրման անմիջական և իրական սպառնալիքով տիրանալու համար գործողություն պլանավորելու, կազմակերպելու, նախապատրաստելու կամ իրականացնելու նպատակով այլ անձանց մասնակից դարձնելու դիմում կամ հրավեր**: Իրավակիրառական պրակտիկան և ցանկացած գործի փաստական հանգամանքների գնահատումը պետք է ելնի տվյալ հասկացությունների սահմանադրաիրավական այդ բովանդակությունից, **առաջին հերթին նկատի ունենալով հակաիրավական (բռնի) գործողությունների միջոցով պետաիշխանական գործառույթի նկատմամբ ոտնձգություն իրականացնելու նշված <u>հանգամանքը</u>**: Բռնության կոչերի նպատակը մեկն է՝ համախմբել մարդկանց, ուղղություն տալ նրանց բռնի գործողություններին: Քննարկվող հանցակազմի իմաստով բռնության կոչեր չեն կարող համարվել իշխանության քննադատությունը, իշխանությունների հրաժարականի անհրաժեշտության հիմնավորումը, հրաժարականի պահանջը, ցույցեր, երթեր, հանրահավաքներ անցկացնելու կոչը կամ կազմակերպումը, փոխաբերական իմաստով արված արտահայտությունները:

Հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամատեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Հանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ և ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման:

ՍԴՈ–816, 18 հուլիսի, 2009 թ.

8. .... ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 8, 14, 14.1., 18, 19, 42, 42.1 և «պետություն – անձ» սահմանադրաիրավական հարաբերություններ կարգավորող այլ հոդվածների, ինչպես նաև սույն գործով վիճարկվող, դրանց հետ փոխկապակցված օրենսդրության այլ ակտերի, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր վերլուծությունը վկայում է, որ հսկողությունը (վերահսկողությունը) պետության (վերջինիս անունից հանդես եկող մարմինների, պաշտոնատար անձանց) կարևորագույն գործառույթներից է, որի նպատակը պետք է լինի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում (այդ թվում՝ տնտեսավարման) օրինականության ապահովումը: Դա հավասարապես պետք է վերաբերի ինչպես ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության իրականացմանը, այնպես էլ այդ գործունեության արդյունքում իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների պայմանագրային պարտավորություննե-

րի կատարմանը: Հասարակական հարաբերությունների այդ բնագավառները կարգավորող օրենսդրության խնդիրը՝ կապված ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերում ամրագրված սկզբունքների ու պահանջների իրացման հետ, տնտեսավարման բնագավառում վարքագծի միասնական կանոնների կատարումն ապահովելն է, որը ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության սահմանադրական պարտականությունն է:

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

6. .... Սահմանադրությամբ օրենսդիր իշխանությունն է օժտված հարկերի վճարման կարգը որոշելու իրավասությամբ: Ինչպես ցանկացած իրավունքի և պարտականության իրականացում, տվյալ դեպքում հարկային արտոնություններից օգտվելու իրավունքի և հարկեր վճարելու պարտականության իրականացումը ենթադրում է գործընթաց, որը ներառում է հիմնական իրավունքի կամ հիմնական պարտականության իրականացմանն ուղղված լրացուցիչ այլ իրավունքների և պարտականությունների առկայություն: Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ օրենսդիրն է սահմանում, թե ինչ գործողություններով է դրսևորվում հարկեր վճարելու սահմանադրական պարտականության կատարումը: Այս իրավասության շրջանակներում օրենսդիրն օժտված է նաև այդ պարտականության կատարումն ապահովող արդյունավետ մեխանիզմի սահմանման լիազորությամբ, որը կապահովի, մի կողմից, տվյալ իրավունքի կամ պարտականության արդյունավետ իրականացումը, մյուս կողմից՝ հարկային արտոնությունից օգտվելու նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը, հարկերի վճարման սահմանադրական պարտականության կատարման բնագավառում հնարավոր չարաշահումների նկատմամբ հակազդումը, ինչպես նաև բյուջե հարկերի փոխանցման ու վճարման բազմափուլ գործընթացի մասնակից սուբյեկտների իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային արտոնությունից օգտվելու իրավունքի իրականացումն ըստ էության հարկեր վճարելու պարտականության կատարումն է և Սահմանադրության 45 հոդվածով սահմանված հարկեր վճարելու պարտականության կատարումն ապահովող արդյունավետ մեխանիզմի տարրը:

Սահմանադրության 45 հոդվածով սահմանված նորմին փոխլրացնում են Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված նորմերը: Վերջիններիս վերլուծությունից բխում է, որ սուբյեկտիվ իրավունքների և հարկերի վճարման սուբյեկտիվ պարտականության իրականացումը չի կարող տեղի ունենալ կամայական ձևով: Նման մոտեցումն ինքնանպատակ չէ, քանի որ ցանկացած սուբյեկտիվ իրավունք, այդ թվում՝ հարկերի վճարման սուբյեկտիվ պարտականություն առնչվում է այլոց իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև սահմանադրորեն պահպանվող այլ արժեքներին և կարող է խոչընդոտել դրանց իրականացումը կամ խախտել դրանք: Այդ հիմնավորմամբ է, որ Սահմանադրությունը պարտավորեցնում է սուբյեկտիվ իրավունքները և պարտականություններն իրականացնել որոշակի պայմաններում և կարգով:

ՍԴՈ–890, 25 մայիսի, 2010 թ.

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով,

մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

ՍԴՈ–934, 4 փետրվարի, 2011 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը՝ ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետի ընդհանուր տրամաբանության շրջանակներում, առաջին հերթին վերաբերում է մինչդատական վարույթի փուլին, քանի որ այս փուլում իրականացվող գործողությունների օրինականության ապահովումն ամբողջությամբ ՀՀ դատախազության սահմանադրական պարտականությունն է:

ՍԴՈ–975, 14 հունիսի, 2011 թ.

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63–րդ հոդվածի 1–ին մասի պահանջներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում գնահատել նաև «պարտականություն» և «պարտավորություն» հասկացությունների մեկնաբանման ու կիրառման պրակտիկան, բացահայտել դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է. ՀՀ Սահմանադրության 16, 22, 30.1, 42, 55, 60, 81, 83.5, 88 և 98–րդ հոդվածներում սահմանադիրը **«պարտականություն»** հասկացությունն օգտագործում է **օրենքով սահմանվող** պարտականության կամ միջազգային պայմանագրով սահմանվող՝ **ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականության** առնչությամբ:

ՀՀ Սահմանադրության 43, 44, 81 և 100–րդ հոդվածներում սահմանադիրը **«պարտավորություն»** հասկացությունն օգտագործում է միջազգային պայմանագրով պետության համար **պարտավորության** առնչությամբ և մեկ դեպքում՝ Սահմանադրության 16–րդ հոդվածի 5–րդ մասում՝ **քաղաքացիաիրավական հարաբերությունների** առնչությամբ:

ՀՀ Սահմանադրության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերը նշված հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի 2–րդ մասի և 83.5–րդ հոդվածի 2–րդ կետի իմաստով, **«պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն: «Պարտավորություն» հասկացությունն իր հերթին ենթադրում է իրավունքի սուբյեկտի կողմից իրավունքի ուժով կամ իր ազատ կամահայտնությամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնված համապատասխան վարքագիծ**: Ընդ որում, քաղաքացիաիրավական պայմանագրով սահմանված պարտավորությունը կարող է կա՛մ վերարտադրել արդեն իսկ Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված պարտականության բովանդակությունը, կա՛մ ամրագրել քաղաքացիաիրավական պայմանագրերի առնչությամբ օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված պարտավորություն, այն վերապահումով, որ կողմերը չեն կարող հայեցողություն դրսևորել պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով, ինչպես նաև սահմանել օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանին հակասող պայման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված **պարտավորությունների** առնչությամբ կիրառելի չէ ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 2–րդ կետը, որի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց **պարտականությունները:** Հետևաբար՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված **պարտավորությունների** առնչությամբ կիրառելի չէ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9–րդ հոդվածի 4–րդ մասի 2–րդ կետը, որը վերարտադրում է ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 2–րդ կետի դրույթները, ինչի բովանդակությանը սույն գործով հղում են կատարել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–1050, 2 հոկտեմբերի, 2012 թ.

7. .... Միաժամանակ, հիմք ընդունելով նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36–րդ հոդվածը, 41–րդ հոդվածի 4–րդ մասը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած խնդիրը չի առնչվում նաև ՀՀ Սահմանադրության 37–րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակումների թույլատրելիությանը, քանի որ բոլոր դեպքերում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36–րդ հոդվածը և 41–րդ հոդվածի 4–րդ մասը հնարավորություն են ընձեռում ստանալու չվճարված կենսաթոշակի գումարները՝ կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարիների համար (ըստ սահմանադրական դատարան դիմելու պահին գործող իրավակարգավորման), իսկ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքի առկայության պարագայում՝ անցած ամբողջ ժամանակահատվածի համար:

ՍԴՈ–1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ–243–Ն) 36–րդ հոդվածի փոփոխությամբ նախատեսված իրավակարգավորման բովանդակությունը ենթադրում է փոխադարձ իրավունքների ու պարտականությունների միասնության հիմքով կարգավորվող կենսաթոշակային իրավահարաբերություններ, որի շրջանակներում է պետությունը երաշխավորում ապահովել անձին (ՀՀ քաղաքացուն, ՀՀ երկքաղաքացուն, քաղաքացիություն չունեցող անձին, օտարերկրյա քաղաքացուն) չվճարված կենսաթոշակի գումարի վճարումը՝ որոշակի իրավապայմանների առկայության (կենսաթոշակառուի կողմից օրենքով նախատեսված պարտականությունների կատարման) դեպքում: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենքը սահմանազատում է **«կենսաթոշակի իրավունք»** և **«կենսաթոշակ ստանալու իրավունք**» հասկացությունները: Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7–րդ հոդվածի՝ «Սույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում **կենսաթոշակի իրավունք ունեն** Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, եթե սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ»: Ընդ որում, կենսաթոշակի իրավունքի իրավաճանաչման համար օրենքի նույն հոդվածը նախատեսում է, որ առկա պետք է լինեն հետևյալ պայմանները.

– անձը պետք է կենսաթոշակ ստանալու իրավունք ունենա,

– օրենսդրությամբ սահմանված կարգով դիմի իրավասու պետական մարմնին,

– Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենա և բնակվի Հայաստանի Հանրապետությունում (օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը),

– կենսաթոշակ չստանա այն պետությունից, որի քաղաքացին է (ՀՀ-ում փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացին),

– ՀՀ բնակչության պետական ռեգիստրում ՀՀ բնակության վայրի հասցեում հաշվառված լինի (ՀՀ երկքաղաքացին),

– կամավոր սկզբունքով չիրացնի պետական բյուջեից ֆինանսավորվող մեկ այլ կենսաթոշակի իրավունք:

Միաժամանակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը **կենսաթոշակ ստանալու իրավունք ունի,** եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում .... և նրան նշանակվել է կենսաթոշակ....»: Ակնհայտ է, որ իրավունքի իրացումը ենթադրում է նաև պարտականությունների պատշաճ կատարում:

Վերոհիշյալ համապատասխան իրավապայմանների բավարարման դեպքում է պետությունը պարտավոր մեկ տարվա ժամկետային սահմանափակմամբ կենսաթոշակի իրավունք ունեցող անձին վճարել չվճարված կենսաթոշակի գումարը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է կենսաթոշակային հարաբերությունների բաղադրիչ տարր հանդիսացող վերոհիշյալ իրավակարգավորման ընդհանուր օրինաչափ անհրաժեշտությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ անձի սոցիալական ապահովության իրավունքի իրացումը երաշխավորելու, ինչպես նաև այդ ապահովության ծավալի ու ձևի՝ օրենքով սահմանված ողջամիտ դրսևորման տեսանկյունից: Վերջինիս իրավակարգավորման բացառիկ իրավասությունը վերապահված է օրենսդիր մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին, որը կոչված է իրականացնելու այդ բնագավառի օրենսդրական քաղաքականությունը՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և 83.5-րդ հոդվածի պահանջներով:

ՍԴՈ-1142, 2 ապրիլի, 2014 թ.

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «կենսաթոշակ» հասկացությունը որևէ ձևով ամրագրված չէ: Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ (հոդվ.1), խտրականությունը բացառող հանգամանք (հոդվ. 14.1), աշխատողի շահի դրսևորում (հոդվ. 32), սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ (հոդվ. 37), պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ (հոդվ. 48), կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ (հոդվ. 89): Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հռչակած պետությունը սահմանադրորեն ոդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

.... Գործնականում 2006-2010 թվականներին սոցիալական վճարի միջոցով սոցիալական ապահովության խնդրի լուծման միջազգայնորեն համընդհանուր ճանաչում ստացած հայեցակարգն աստիճանաբար փոխարինվեց աշխատավարձից լրացուցիչ մասհանումների միջոցով կենսաթոշակի պարտադիր կուտակային բաղադրիչ ձևավորելու հայեցակարգով: Արդյունքում՝ գործատուն, որպես իր իսկ աշխատողների սոցիալական ապահովության խնդիրների լուծման անմիջական մասնակից, դուրս մղվեց այս իրավահարաբերություններից,

պետությունը հարկատուների հաշվին ստանձնեց լրացուցիչ պարտավորություններ, անհստակություն մտցվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման և 45-րդ հոդվածով նախատեսված՝ այդ իրավունքի իրացման նախադրյալների ու երաշխիքների ապահովման սահմանադրաիրավական մոտեցումները կյանքի կոչելու հարցերում:

....

8. .... Գործնականում Հայաստանը սոցիալական-իրավական պետության սահմանադրական սկզբունքն ամրագրած եզակի երկրներից է, որտեղ կենսաթոշակային ֆոնդի նպատակային անհատական վճարները չեն ձևավորվում սոցիալական ապահովության վճարներից, այլ կազմավորվում են աշխատավարձից լրացուցիչ պարտադիր մասհանումների ու հարկերի հաշվին:

.... Սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ սոցիալական ապահովության վճարը հարկով փոխարինելը՝ դրա օգտագործման հարցում էապես ընդլայնում է իշխանության հայեցողության սահմանները: Սոցիալական ապահովության վճարները ոչ միայն ունեն նպատակային հասցեագրում, այլև ընդհուպ գործատուի կողմից կատարվում են անհատականացման սկզբունքով՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար: ....

9 Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական պրակտիկայում հստակ չէ նաև պատկերացումը «սոցիալական ապահովություն» սահմանադրական եզրույթի առնչությամբ: Սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է, քանի որ ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, ովքեր իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող: Առավել լայն հասկացություն է սոցիալական պաշտպանությունը, որը ներառում է ոչ միայն սոցիալական ապահովությունը, այլև սոցիալական ապահովագրությունը և պետության ու հասարակության կողմից իրականացվող սոցիալական օգնությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածը ճանաչում և ամրագրում է յուրաքանչյուրի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքը: Նույն հոդվածը պարտավորեցնում է նաև օրենքով սահմանել սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը: Ակնհայտ է, որ սոցիալական ապահովության խնդիրներին տարբերակված լուծում պետք է տրվի, և դրանք չեն կարող տարրալուծվել սոցիալական ապահովագրության ու սոցիալական աջակցության խնդիրներում:

Անառարկելի է նաև, որ սոցիալական ապահովության համակարգը պետք է խորությամբ հաշվի առնի տվյալ սոցիալական հանրության առջև կանգնած խնդիրների ու դրանց լուծման մոտեցումների ու հնարավորությունների առանձնահատկությունները: Այսուհանդերձ, կան հարցեր, որոնք միջազգային պրակտիկայում ընդհանրական լուծում են ստացել և այդ հարցերում սեփական սխալի ուղղման ճանապարհով ընթանալը ճիշտ մոտեցումը չէ: Մասնավորապես, ամբողջ աշխարհում սոցիալական ապահովության ձևերի թվում առաջնահերթ տեղ են զբաղեցնում կենսաթոշակները: Իսկ, օրինակ, համաեվրոպական պրակտիկան այնպիսին է, որ եթե անգամ կենսաթոշակային անհատական հաշիվներ են բացվում՝ կամավոր կամ պարտադիր, ապա դրանց փոխանցումները կատարվում են սոցիալական ապահովության վճարներից: Կայուն սոցիալական վճարների վրա խարսխված սոցիալական ապահովության համակարգն առավել հուսալի է և մարդկանց սոցիալական սպասելիքների տեսակետից՝ ավելի ապահով: Այս մոդելն առավել բնորոշ է սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական տնտեսական հարաբերություններին, ինչպես նաև սահմանադրորեն իրենց որպես սոցիալական հռչակած պետություններին: Ի տարբերություն սոցիալական-իրավական

պետությունների, որոշ մեթոդաբանական առանձնահատկություններ են առկա ազատական-իրավական պետության մոդելն ընտրած երկրներում: Եվրոպական միությունը, մասնավորապես, լիսաբոնյան համաձայնագրի շրջանակներում որդեգրեց սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգը, և պատահական չէ, որ Եվրամիության անդամ երկրների համար տիպական է սոցիալական ապահովության վճարների հաշվին թե՛ բաշխողական և թե՛ կուտակային կենսաթոշակային համատեղ ու փոխլրացնող համակարգերի ներդրումը:

Հետևությունն այն է, որ սոցիալական ապահովության համար կատարած վճարն ի սկզբանե նպատակային բնույթ ունի, և այն օրենքով սահմանելը սոցիալական հեռանկարը դարձնում է առավել կանխատեսելի: Որոշակի են նաև այդ վճարը կատարելու պարտավորությամբ օժտված սուբյեկտները՝ գործատուն և ինքը՝ աշխատողը: Պետության պարտավորությունն է՝ օրենսդրական կանոնակարգման ճանապարհով այդ հարաբերություններին կայուն և երաշխավորված բնույթ հաղորդել, միջոցներ ձեռնարկել սոցիալական ապահովության խնդիրների արդյունավետ ու նպատակային լուծման համար: ....

10. Հայաստանի Հանրապետությունում ներդրված պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին բնորոշ է և այն, որ աշխատողն աշխատավարձից նախ վճարում է եկամտային հարկ, այնուհետև անվանական (այլ ոչ թե փաստացի) աշխատավարձից վճարում է կուտակային վճար: Գործնականում վճարված հարկից նույնպես պարտադիր կուտակային վճար է հաշվարկվում: Միջազգային պրակտիկայում առավել տարածված է այն մոտեցումը, որ կուտակային վճարներն ազատվում են բոլոր տեսակի հարկերից:

.... Կարևոր է նաև կուտակային ֆոնդեր կատարվող վճարումների տոկոսադրույքի ընտրության խնդիրը, ինչն ինքնանպատակ չի կարող լինել: Այն առաջին հերթին պետք է համապատասխանի իրավական համաչափության սկզբունքին: Տվյալ պարագայում խնդիրը հանգում է անձի ընթացիկ և հեռանկարային կենսաապահովման միջև խելամիտ հարաբերակցության սահմանմանը: Որպես դրա հավասարակշռման կարևոր գործոն կարող է հանդես գալ գործատուի համարժեք մասնակցությունը: Ուստի, դարձյալ միջազգային փորձը վկայում է, առավել հավասարակշռված լուծում կարող է գտնվել աշխատողի, պետություն գործատուի և ոչ պետական ձեռնարկություն-կազմակերպություն գործատուների համատեղ մասնակցությամբ սոցիալական ապահովության այնպիսի հնարավորությունների ստեղծման ճանապարհով, երբ, մի կողմից, կենսաթոշակային, այդ թվում՝ կուտակային, ֆոնդերի ձևավորման հարցում աշխատողը մասնակցում է սոցիալական ապահովության այնպիսի վճարներով, ինչը ներդաշնակեցված է թե՛ ժամանակի մեջ իր կենսաապահովման և թե՛ հարկային ծանրաբեռնվածության հետ, մյուս կողմից՝ ոչ թե պետական բյուջեն, այլ բոլոր գործատուներն են հանդես գալիս համարժեք ֆոնդերի ձևավորման մասնակիցն ու դրանց նպատակային օգտագործման երաշխավորը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իրավասու չէ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանը կենսաթոշակային ֆոնդերի ձևավորման քանակական հարաբերակցության կոնկրետ լուծումներ առաջարկել, ինչը նրանց հայեցողության սահմաններում է: Սակայն միջազգային փորձը և մեր երկրի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ առանձնահատկությունները վկայում են, որ հնարավոր է սոցիալական ապահովության համակարգի բարեփոխումների գործընթացին օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում մասնակից դարձնելով բոլոր գործատուներին՝ գտնել այդ հարաբերակցությունը՝ թեթևացնելով աշխատողների անհատական մասնակցության բեռը: ....

14. Կենսաթոշակային ֆոնդերի համար սկզբունքային նշանակություն ունի ֆոնդում առկա փայերի ինդեքսավորման կամ տարեկան գնաճով ճշգրտման խնդիրը: Միջազգային պրակտիկայում ի սկզբանե թոշակային համակարգի առանցքային խնդիր է համարվել այն, որ կենսաթոշակները չպետք է կորցնեն իրենց գնողունակությունը: Հարցն այն է, որ կենսա-

թոշակի համար անհրաժեշտ միջոցի ձևավորման և սոցիալական ապահովության իրավունքի իրացման միջև առկա է ժամանակի գործոնի ազդեցությունը: Այն հաշվի չառնելու դեպքում անհնարին կլինի համարժեք միջոցներ կուտակել և երաշխավորել մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի իրացումը: Բացի դրանից, կուտակային վճարների ամբողջ գումարի տարեկան գնաճով ճշգրտումն այդ գումարներն ամբողջությամբ հետ ստանալու իրավունքի պաշտպանության նպատակ է հետապնդում և օրենքի կարգավորման առարկա է: Միաժամանակ, այս հարցում օրենքով նախատեսված երաշխիքների առկայությունը համակարգի հուսալիության կարևորագույն գրավականներից է:

ՎՆԱՍ ԿՐԱԾ ԱՆՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ թե՛ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22–րդ հոդվածի վերոնշյալ առաջին մասի հատկապես «ե» կետի դրույթը և թե՛ սույն գործով դիմող կողմի վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքներն առնչվում են նյութական վնաս կրած անձին, կամ որ նույնն է՝ տուժողին, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 4–րդ մասն ամրագրում է անձի իրավունքը՝ ազատությունից ապօրինի զրկման դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու պատճառված վնասի հատուցում: Դատարանը, միաժամանակ, հարկ է համարում պարզել Սահմանադրության 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված՝ «տուժող» հասկացության և «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունը:

.... Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև միջազգային իրավունքում առկա նման մոտեցումը, գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունն ունի ընդգրկուն բովանդակություն և ներառում է ոչ միայն քրեական, այլև քրեադատավարական, վարչական, քաղաքացիաիրավական ու այլ հարաբերություններից և իրենց կամքից անկախ տուժած ֆիզիկական և իրավաբանական անձանց: Ուստի ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունը նշանակում է նաև **հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողություններից (անգործությունից) վնաս կրած անձ**: ....

7. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 4–րդ մասում և 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված՝ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության բովանդակությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունը հղում կատարելով օրենքին՝ միաժամանակ առաջադրում է տուժողին փոխհատուցելու այնպիսի կարգ սահմանելու պահանջ, որը պետք է երաշխավորի գործուն մեխանիզմ խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացման համար: Նման մեխանիզմի գոյությունը կարող է ապահովվել նաև այն դեպքում, երբ հատուցման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված դատական կարգը պետական տուրքի վճարումից ազատելու արտոնության ձևով արդարացի պայմաններ ստեղծի այդ իրավունքի իրացման համար, և այնպիսի դեպքերում, երբ փոխհատուցման իրավունքն անվիճելի է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով նախօրոք հաստատված է պետական իրավասու մարմնի, պաշտոնատար անձի այն գործողության (անգործության) փաստը, որի արդյունքում անձին պատճառվել է վնաս: Հետևաբար, օրենսդիրը պետք է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 4–րդ մասում և 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով **սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ և գործուն համակարգ:**

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

9. .... Վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող փոխհատուցման չափի և անձի համբավին ու արժանապատվությանը պատճառված վնասի միջև համաչափության պահանջը հավասարապես ուղղված է և' օրենսդրին, և' իրավակիրառողին: Օրենսդրին այս պահանջն առաջադրում է համաչափության ապահովմանն ուղղված համապատասխան օրենսդրական երաշխիքներ սահմանելու խնդիր: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող հոդվածում նշված խնդրի լուծմանն են ուղղված առանձին դրույթներ: Մասնավորապես, օրենսդիրը բոլորովին այլ իրավահարաբերության հարթություն է տեղափոխել զրպարտության կամ վիրավորանքի հետևանքով պատճառված **գույքային վնասի** խնդիրը և դատարաններին իմպերատիվ պահանջ է ներկայացնում՝ **այն հաշվի չառնել վիճարկվող հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս (մաս 11):** Իրավակարգավորման հստակ տրամաբանությունն է, որ, մի կողմից, մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումն իրավակիրառական պրակտիկայում **չպետք է շփոթել գույքային վնասի հետ**, մյուս կողմից՝ **այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձևով սահմանվող պատիժ:** Հակառակ պարագայում, ինչպես նշվեց, կիմաստազրկվի զրպարտության ապաքրեականացման ամբողջ գաղափարը:

.... Այդ նպատակով է, որ օրենսդրի կողմից ոչ թե փոխհատուցման որևէ որոշակի չափ է սահմանվել, այլ նախատեսվել է **մինչև** որոշակի մեծություն, որպեսզի գործի հանգամանքներից ելնելով դատարանը կոնկրետացնի փոխհատուցում կիրառելու ենթակա չափը:

Այսպիսով, անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի դիմաց քաղաքացիաիրավական պատասխանատվություն նախատեսելիս օրենսդիրը հստակ տարանջատել է «փոխհատուցման» և «գույքային վնասի» ինստիտուտները: Այն ունի սկզբունքային նշանակություն վիճարկվող իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից՝ ելնելով նաև դիմող կողմի համապատասխան փաստարկներից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող 1087.1-րդ հոդվածում փոխհատուցման և գույքային վնասի հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ

– **փոխհատուցման** պահանջն անձի՝ իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող գործողություններից դատական կարգով պաշտպանվելու՝ օրենքով նախատեսված միջոց է,

– **գույքային վնասը**՝ վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով անձի կրած նյութական բնույթի զրկանքներն են, կորուստը, այդ թվում՝ դատական ծախսերը, խախտված իրավունքների վերականգնման համար կատարված ողջամիտ ծախսերը, որոնք համապատասխան փաստերով դատարանում ենթակա են հիմնավորման և վերականգնման,

– **փոխհատուցման չափը** որոշում է դատարանը՝ ելնելով կոնկրետ գործի առանձնահատկություններից, այդ թվում՝ վիրավորանքի կամ զրպարտության եղանակից և տարածման շրջանակից, ինչպես նաև վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունից,

– **փոխհատուցման**, ինչպես և՝ **գույքային վնասի** հատուցման հարց դատարանը քննում է բացառապես այն անձի պահանջով, ում պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորվել է,

– **փոխհատուցման** չափը որոշելիս դատարանը հաշվի չի առնում վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով անձին պատճառված գույքային վնասը:

Այսպիսով, տարբեր են փոխհատուցման և գույքային վնասի հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման առարկան, սկզբունքներն ու նպատակները: Դրանք որոշակի են և իրենց իրավական բովանդակությամբ հետապնդում են իրավաչափ և սահմա-

նադրորեն արդարացի նպատակներ՝ պաշտպանելու ՀՀ Սահմանադրության 14-րդ, 27-րդ և 47-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձի իրավունքներն ու ազատությունները ոչ իրավաչափ ոտնձգություններից և վերականգնելու դրանք:

Սահմանադրական դատարանը փոխհատուցման չափի համաչափությունն ապահովելու կարևոր երաշխիք է համարում նաև վիճարկվող հոդվածում փոխհատուցման նվազագույն չափի օրենսդրական ամրագրման բացակայության և առավելագույն չափի ամրագրման առկայության հանգամանքը: Առանձնապես կարևորվում է նաև այն հանգամանքը, որ վիճարկվող հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը, ի լրումն փոխհատուցման նյութական ձևի, նախատեսում են նաև փոխհատուցման ոչ նյութական ձևեր:

....

11. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 14, 27, 43 և 47-րդ (1-ին մաս) հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիշյալ և մի շարք այլ վճիռների հիման վրա ձևավորված նախադեպային իրավունքի, այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1-րդ հոդվածների, «Զանգվածային լրատվության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների նորմերի համադրված վերլուծությունից հետևում է. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1-րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառումը երաշխավորելու համար անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնել միջազգային իրավական հետևյալ սկզբունքային մոտեցումները.

– նկատի ունենալով, որ զրպարտությանն առնչվող գործերով առաջանում է արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելը գնահատելու խնդիր, իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ **արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար,**

– վեճի առարկա հոդվածի իմաստով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, և «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,

– «զրպարտություն» և «վիրավորանք» եզրույթները պետք է դիտարկել դիտավորության, անձին անվանարկելու մտադրության առկայության համատեքստում,

– չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար և նպաստել հասարակության համար կարևոր հարցերի շուրջ քննարկումներին,

– մամուլի ներկայացուցիչների՝ պատասխանողի դերում հանդես գալու հանգամանքը չի կարող դիտվել որպես գործոն՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար,

– ներպետական մարմինների որոշումը պետք է հիմնված լինի գործի համար նշանակություն ունեցող փաստերի ընդունելի գնահատման վրա,

– պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհա-

նուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, ո-րոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից,

– նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի ար-տահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչ-պես նաև մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարա-վորությունը,

– արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառ-ված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխ-հատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար,

– վնասի փոխհատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանա-փակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն, հաշվի առնվի պատասխանողի եկամուտ-ների չափը, չսահմանվի պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության հա-մար,

– ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում պահանջող հայցվորը պետք է ապացուցի այդ վնասի առկայության փաստը,

– փոխհատուցման՝ օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելի է միայն առա-վել լուրջ ու ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերում,

– լոկ փաստերի քննադատական գնահատականը, որը չի պարունակում փաստական ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր է ապացուցել, չի կարող փոխհատուցման պահան-ջի հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը եղել է գնահատողական դատողություն, կարող է սահմանվել ոչ նյութական վնասի փոխհատուցում,

– փոխհատուցում սահմանելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են զգացմունքներին հասցված վնասը, ներողություն հայցելու պատրաստակամության բա-ցակայությունը,

– լրագրողի՝ հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության գաղտնի աղբյուրնե-րը չբացահայտելու իրավունքից օգտվելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերա-բերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը ո-րոշելիս,

– անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել և օգտագործվել են արտադատական հատուցման ձևերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները,

– պետք է պարտադիր կերպով կողմերին առաջարկվի հաշտության գալ և աջակցություն ցուցաբերվի այդ հարցում: Վնասը գնահատելիս հաշտեցման առաջարկը պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք,

– պետք է բացահայտ կերպով ճանաչվեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը և այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

ՍԴՈ–1102, 28 հունիսի, 2013 թ.

5. .... Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարևոր երաշխիք է ՀՀ Սահմանադրության ինչպես 8–րդ, 18–րդ և 19–րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով, և սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել, եթե օրենսդրությամբ նախատեսված է դրա իրացման արդյունավետ ընթացակարգ, մասնավորապես՝ անիրավաչափ դատական ակտի ի կատար ածման հետևանքով անձանց խախտված իրավունքների ու ազատությունների **արագ, լիարժեք ու արդյունավետ** վերականգնման հնարավորություն: Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և, մասնավորապես՝ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն գործով վեճի առարկայի վերաբերյալ դիմողների հարցադրումներն իրենց բովանդակությամբ պարունակում են **հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման** այդպիսի ընթացակարգերի երաշխավորման անհրաժեշտության փաստացի պահանջ, որը, ինչպես հետևում է գործում առկա դատավարական նախապատմությունից, չնայած անմիջականորեն կապված չի եղել քաղաքացիական գործով ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրի հետ, սակայն իրավակարգավորման ընդհանուր նպատակներով միտված է նաև այդ խնդրի լուծմանը: Հետևաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19–րդ հոդվածի պահանջներով, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հանցագործությամբ անձանց պատճառված նյութական (գույքային) վնասի վերականգնման սահմանադրաիրավական սկզբունքների երաշխավորման, և հատկապես՝ իր նախորդ որոշումներով այդ հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության խնդրին:

6. Սույն գործով քննության առարկա հարցադրումների շրջանակներում դատավարական հարաբերություններ կարգավորող օրենսդրական ակտերի համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ օրենքի կարգավորման մակարդակում բավարար չափով դեռևս առկա չեն իրավախախտմամբ անձին պատճառված նյութական վնասի հատուցման արդյունավետ ընթացակարգեր: Մասնավորապես, սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական կարգավորման մակարդակում հայեցակարգային այնպիսի մոտեցման հետևողական կիրառման անհրաժեշտությունը, որի դեպքում կերաշխավորվի **մեկ գործի շրջանակներում արդարադատական միասնական ընթացակարգով, հնարավորինս պարզեցված կարգով** այդ վնասի արագ, լիարժեք ու արդյունավետ (արդարացի) վերականգնումը (հատուցումը): Այդպիսի իրավապայմանների՝ օրենքով երաշխավորման անհրաժեշտությունը սահմանադրաիրավական պահանջ է, բխում է ՀՀ Սահմանադրության 1–ին, 3–րդ, 14–րդ, 14.1–րդ, 18–րդ, 19–րդ և բազմաթիվ այլ հոդվածներից: Այդ երաշխիքների ապահովմամբ արդարադատության իրականացման անհրաժեշտությունը կարևորվել է նաև սահմանադրական դատարանի որոշումներով (ՍԴՈ–929, ՍԴՈ–983):

ՍԴՈ–1271, 10 մայիսի, 2016 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի նշված դրույթները, որոնք կարգավորում են նոտարի պատասխանատվության վերաբերյալ հարցերը, հաշվի չեն առնում հնարավոր իրավիճակների ամբողջ բազմազանությունը և բավարար կառուցակարգեր և ընթացակարգեր չեն սահմանում անձի խախտված սեփականության իրավունքի պաշտպանության համար, որպիսի պարտականություն ՀՀ Սահմանադրության 3–րդ և 75–րդ հոդվածների համաձայն կրում է պետությունը:

.... Ինչ վերաբերում է պատճառված վնասի համար պետության պատասխանատվությանը, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն որևէ կերպ չի նշանակում, որ վնասի հատուցումը պարտադիր պետք է տեղի ունենա բացառապես պետական միջոցների հաշվին: Տվյալ դեպքում պետության գույքային պատասխանատվությունը կարող է բացառվել, եթե **պետության կողմից ստեղծված կառուցակարգերը և ընթացակարգերը երաշխավորեն Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի ամբողջական հատուցում:**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–678, 16 փետրվարի, 2007 թ.

5. Հայաստանի Հանրապետությունում հանրային հեռուստատեսության իրավական կարգավիճակը սահմանված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածով, որում, մասնավորապես, ամրագրված է, որ «Հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Հանրային հեռուստառադիոընկերությունն ստեղծում է պետությունը՝ ապահովելու համար մարդու սահմանադրական իրավունքը, այսինքն՝ ազատորեն ստանալ քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության, մարզական, զվարճալի և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվություն, և գործում է սույն օրենքին, իր կանոնակարգին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան»: Միանշանակ է, որ որպես հիմնական նպատակ է դիտվում մարդու՝ ազատորեն տեղեկատվություն ստանալու իրավունքը, իսկ միջոցը՝ հատուկ կարգավիճակ ունեցող հեռուստառադիոընկերության առկայությունն է:

ՍԴՈ–864, 5 փետրվարի, 2010 թ.

5. .... Ինչ վերաբերում է «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակությանը, ապա անձի խախտված իրավունքը վերականգնված է համարվում այն դեպքում, երբ վերականգնվում է մինչև իրավախախտման պահը գոյություն ունեցող իրավիճակը կամ վերացվում է իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքը: Տվյալ դեպքում պաշտոնատար անձի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և նրան տեղեկատվություն տրամադրելու արդյունքում դիմողը հնարավորություն է ստացել իրացնել տեղեկատվություն ստանալու իր իրավունքը:

ՍԴՈ–1008, 24 հունվարի, 2012 թ.

8. .... Սահմանադրական դատարանը, արձանագրելով, որ իրավակիրառական պրակտիկան ևս զարգացել է նշված ուղղությամբ, միաժամանակ կարևորում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59–րդ հոդվածի 1–ին մասի 9–րդ կետում «նախաքննության ավարտման պահից» ձևակերպման մեկնաբանումը և կիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196–րդ, 265–րդ և 266–րդ հոդվածների տրամաբանությանը համապատասխան:

.... Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները, հաշվի առնելով քրեական դատավարության առանձնահատկությունները, չեն կարող որակվել որպես անձի՝ տեղեկություններ ստանալու՝ ՀՀ Սահմանադրության 27–րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու՝ ՀՀ Սահմանադրության 23–րդ հոդվածով նախատեսված իրա-

վունքների սահմանափակում: Վեճի առարկա հոդվածներով նախատեսված իրավակարգավորումներն իրենց համակարգային ամբողջականության մեջ հետապնդում են իրավաչափ նպատակ, և դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումները պայմանավորված չեն տվյալ իրավանորմերի սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որով դրանք ամրագրված են ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում:

ՍԴՈ–1010, 6 մարտի, 2012 թ.

7. .... Վերոնշյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ.

ա) սահմանված կարգով կազմված պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների գերատեսչական մանրամասնված ցանկերն ինքնին չեն կարող հանգեցնել տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակման: Այդ իրավունքի սահմանափակումները նախատեսված են օրենքով, և օրենսդիրը վիճարկվող նորմերով նախատեսված լիազորության սահմանմամբ ոչ թե իրավունքի սահմանափակումներ սահմանելու իր բացառիկ լիազորությունը պատվիրակել է գործադիր իշխանության մարմիններին, այլ իրականացնելով սահմանափակումներ սահմանելու իր սահմանադրական լիազորությունը՝ **այդ մարմիններին լիազորել է իրացնել օրենքով սահմանված սահմանափակումը**,

բ) ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումները, որոնց իրավաչափությունը խնդիր չի հարուցում, ՀՀ Նախագահի կողմից վավերացվել են ՀՀ Սահմանադրության 2005 թ. փոփոխություններից առաջ՝ գործող կարգի պահանջներին համապատասխան: Հաշվի առնելով սահմանադրական փոփոխություններից հետո ՀՀ կառավարության որոշումների ընդունման և գործողության մեջ դնելու նոր կարգը՝ օրենսդիրը պարտավոր էր ՀՀ Սահմանադրության 117–րդ հոդվածի 1–ին մասի պահանջներից ելնելով անհրաժեշտ փոփոխություններ կատարել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12–րդ հոդվածի 5–րդ մասում, նկատի ունենալով, որ պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկի նոր փոփոխությունների անհրաժեշտության դեպքում ՀՀ Նախագահն այդ փոփոխություններն այլևս նախկինում գործող ընթացակարգով չի կարող վավերացնել:

8. Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև անդրադարձը գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերի ոչ հրապարակային բնույթի իրավաչափության հարցին: Այն անհրաժեշտ է քննության առնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի՝ տեղեկությունների գաղտնագրման գործընթացի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության, ինչպես նաև պետական գաղտնիքի բացահայտման ու տարածման համար քրեական պատասխանատվություն սահմանելու իրավակարգավորումների լույսի ներքո՝ հաշվի առնելով նաև ՀՀ միջազգային պարտավորությունները:

.... Ելնելով վերոշարադրյալից, հաշվի առնելով նաև տարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկան՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ներկա ընթացակարգով **գերատեսչական ցանկերի գաղտնագրումը** դուրս է **տեղեկությունների գաղտնագրման**՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության շրջանակից, և դրանց ոչ հրապարակային բնույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, չի հետապնդում պետական անվտանգության շահերի պաշտպանության իրավաչափ նպատակ և խնդիրներ է հարուցում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:

ՍԴՈ– 1234, 20 հոկտեմբերի, 2015 թ.

7. .... Հարկ է նշել նաև, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների համակարգի տեսանկյունից անձի՝ տե-

ղեկություններ և գաղափարներ փնտրելու իրավունքի սահմանափակումը կարող է արդարացված լինել սահմանադրական այնպիսի կարևոր իրավունքների երաշխավորմամբ, ինչպիսիք են կյանքի իրավունքը (հոդվ. 15), ազատության և անձեռնմխելիության իրավունքը (հոդվ.16), դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև արդյունավետ միջոցներով իրավական պաշտպանության իրավունքը (հոդվ. 18), խախտված իրավունքները վերականգնելու իրավունքը (հոդվ. 19):

Հետևաբար, **տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է համարվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր հանցագործությունը կանխելու կամ ծանր հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար:**

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, խոսքի ազատության իրավունքին անմիջականորեն առնչվող՝ տեղեկատվության միջոցների ազատության սահմանափակման համաչափության հիմքը, որը կարող է հանգեցնել տեղեկատվության աղբյուրի բացահայտմանը, գլխավորապես վերոնշյալ երեք իրավապայմաններն են (դրանցից առնվազն մեկի առկայությունը), ու դրանցից ցանկացած էական շեղում իրավաչափ համարվել չի կարող:

ՍԴՈ-1256, 23 փետրվարի, 2016 թ.

6. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվություն ստանալու՝ անձի իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության (2015 թ. փոփոխություններով) 51-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»: Սահմանադրական այս իրավունքն օրենքով կարող է սահմանափակվել երկու դեպքում՝

1) երբ անհրաժեշտ է պաշտպանել հանրային շահերը,

2) երբ անհրաժեշտ է պաշտպանել այլոց հիմնական իրավունքները և ազատությունները:

....

7. .... Ամփոփելով վերոհիշյալ պահանջները և համադրելով վեճի առարկա օրենքի իրավակարգավորումների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովելու համապատասխան իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը: Օրենսդիրը՝ կարգավորելով անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար վճար վճարելու հետ կապված իրավահարաբերությունները, կաշկանդված է տեղեկատվության մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է իրականացվել տարբեր եղանակներով:

Մասնավորապես՝ կախված տեղեկության բովանդակությունից և նշանակությունից, այն կարող է հասու լինել կամ որպես պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվություն, կամ որպես օրենքով նախատեսված կարգով տրամադրվող տեղեկություն:

.... Տեղեկատվության մատչելիությանն առնչվող տեղեկատվության վճարովիությունը, եթե խոսքը չի վերաբերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցված ծառայությունների կամ տեղեկությունների տրամադրման համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կատարված փաստացի և ողջամիտ ծախսերին, կարող է խոչընդոտ հանդիսանալ տեղեկություններ ստանալու իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ տեղեկատվության վճարի սահմանման չափը թեև գտնվում է օրենսդրի լիազորությունների շրջանակներում, այնուամենայնիվ, այն պետք է համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

ՓԱԽՍՏԱԿԱՆԸ, ԲՌՆԱԳԱՂԹՎԱԾԸ, ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ-834, 20 հոկտեմբերի, 2009 թ.

5. .... Անձի իրավունքների դեմ անթույլատրելի ոտնձգությունը դեռևս բավարար չէ հետապնդման մասին խոսելու համար: Ավելի շուտ պահանջվում է իրավունքների խախտման այնպիսի սպառնալիք, որն իր ձևով ու ծանրությամբ կառաջացնի մարդու արժանապատվության ոտնահարում և տուժողին կդնի անելանելի դրության մեջ: Այն կարող է վնասել կյանքի բոլոր ոլորտները՝ կրոնական, մշակութային կամ տնտեսական: Նման իրավիճակն առկա է միշտ այն դեպքում, երբ վտանգված են, այսպես կոչված, հիմնարար արժեքները: Դրանց թվին են պատկանում կյանքի իրավունքը, ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, անձնական ու կրոնական ազատությունը, ինչպես նաև կեցության տնտեսական հիմքը:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենքի 25 հոդվածի նպատակը չէր սահմանել փախստականի կարգավիճակ ստացած անձանցից Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխաների իրավական կարգավիճակը: Օրենսդրական նման քաղաքականությունն իրավաչափ է, քանի որ փախստականի կարգավիճակ ստացած անձանցից սերված լինելը, Հայաստանի Հանրապետությունում ծնվելու պարագայում, ինքնին չի կարող առաջացնել փախստականի կարգավիճակ ստանալու պարտադիր պայման, քանի որ նման պայմանը չի տեղավորվում «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի Ժնևի կոնվենցիայի 1-ին հոդվածի Ա. բաժնով և «Փախստականների մասին» ՀՕ-288 ՀՀ օրենքով սահմանված՝ «փախստական» հասկացության շրջանակներում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

ՍԴՈ-702, 15 մայիսի, 2007 թ.

7. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10 և 289 հոդվածների համաձայն՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք են օրենքով նախատեսված պայմանագրերը և այլ գործարքներ, կամ այն գործողությունները, որոնք ուղղված են այդպիսի իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն: Օրենսդիրը հստակեցրել է քաղաքացիական իրավունքների ազատ իրացման շրջանակը (թույլատրելի սահմանները), համաձայն որի՝ անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ, պայմանով, որ այդ իրավունքների իրականացումը չպետք է վնաս պատճառի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներին ու օրինական շահերին:

Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացիական հարաբերություններում անձի հայեցողական այդպիսի ազատ գործողությունների արդյունքում են ծագում, փոփոխվում և դադարում քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ, ինչը, քննության առարկայի շրջանակներում բխում է ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1–ին մասի և 42 հոդվածի 2–րդ մասի դրույթներից, հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի սահմանադրականության վիճարկումը հիմնավոր չէ:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–834, 20 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Ավելին, փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից ծնված երեխաների կարգավիճակին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ միջազգային իրավունքը խրախուսում է այդ կատեգորիայի անձանց ընդունող պետության քաղաքացիություն տրամադրելու գործընթացը: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Փախստականների կողմից ընդունող պետության քաղաքացիության ձեռքբերման մասին անդամ պետություններին ուղղված R(84) 21 հանձնարարականում Նախարարների կոմիտեն հանձնարարում է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար ընդունող պետությունում կամ այլուր ծնված՝ փախստականների երեխաների՝ ընդունող պետության քաղաքացիության ձեռքբերումը:

ՍԴՈ–945, 15 մարտի, 2011 թ.

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005 թ. նոյեմբերի 27–ի փոփոխությունների արդյունքում վերացվեց 1995 թ. հուլիսի 5–ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14–րդ հոդվածում սահմանված՝ ՀՀ քաղաքացու՝ միաժամանակ այլ երկրի քաղաքացի լինելու արգելքը և Հայաստանի Հանրապետությունում ճանաչվեց երկքաղաքացիության ինստիտուտը: ....

6. .... Որպես կանոն, քաղաքացիությունը բնութագրվում է որպես անձի և պետության միջև առկա իրավական կայուն կապ, ինչն արտահայտվում է փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության համակցության մեջ: Քաղաքացիության ինստիտուտի նման բովանդակությունը ենթադրում է, որ քաղաքացի–պետություն հարաբերություններում, ուր նշված սուբյեկտները միմյանց նկատմամբ ունեն փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ, այդ հարաբերություններն ընդհատելու կապակցությամբ կողմերից որևէ մեկի միակողմանի կամաարտահայտությունը դեռևս բավարար հիմք չէ անձի քաղաքացիության դադարման համար: Քաղաքացիության ինստիտուտի նշված բովանդակությունից է բխում նաև ՀՀ Սահմանադրության 30.1–րդ հոդվածով պետությանը հասցեագրված այն արգելքը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից: Նման արգելք նախատեսված է նաև միջազգային իրավական փաստաթղթերով: ....

7. .... Բացահայտելով ՀՀ քաղաքացիությունը փոխելու իրավունքի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 30.1–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքը ներառում է նաև այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու մտադրությամբ և այլ պետության քաղաքացիության ձեռքբերման երաշխիքների առկայությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելը, որը ենթակա է իրացման քաղաքացիությունը փոխելու վերաբերյալ առկա իրավակարգավորումներին համապատասխան:

8. ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու իրավունքը: Այս իրավունքը պատկանում է այն սահմանադրական իրավունքների թվին, որոնք բացարձակ չեն և կարող են սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված պայմաններով ու հիմքերով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը վերարտադրելով ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավունքը, միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ նախադասությանը համապատասխան և հաշվի առնելով տվյալ իրավունքը ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պայմաններով և հիմքերով սահմանափակելու թույլատրելիությունը, նախատեսում է նույն օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքը սահմանափակելու հնարավորությունը: ....

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ խնդրո առարկա իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, **եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:**

Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

Սահմանադրական դատարանը, հետազոտելով ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժելու հիմքերը, գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ քաղաքացիությունը փոխելու իրավունքի սահմանափակումները բխում են Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներից: ....

9. Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում առաջադրված իրավական խնդիրը դիտարկել նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած համապատասխան միջազգային պարտավորությունների, ինչպես նաև քաղաքացիության հետ կապված հարցերին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների ու նորմերի համատեքստում: ....

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները՝ ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու իրավական հետևանքների մասով, դիտարկելով վերոհիշյալ միջազգային իրավակարգավորման և դրանով հետապնդվող նպատակի լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված վիճարկվող դրույթը համահունչ է միջազգային իրավակարգավորմանը, բխում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից և նախևառաջ հետապնդում է քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում ապաքաղաքացիության վիճակի առաջացումը կանխելու իրավաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու ուժով քաղաքացիության դադարմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս առնչությամբ միջազգային իրավունքում առկա մոտեցումները Բազմաքաղաքացիության դեպքերի

կրճատման և բազմաքաղաքացիության դեպքերում զինվորական պարտավորությունների մասին 1963 թ. կոնվենցիայի ընդունումից ի վեր որոշակի զարգացում են ապրել: Նշված կոնվենցիան հիմնվում էր այն գաղափարի վրա, որ երկքաղաքացիությունը կամ բազմաքաղաքացիությունն անցանկալի երևույթ է, և ըստ այդմ իր 1-ին հոդվածում ամրագրում է, որ իր կամքով այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձը կորցնում է իր նախկին քաղաքացիությունը: Սակայն նշված կոնվենցիայի ընդունումից ի վեր Եվրոպայում տեղի ունեցած որոշակի փոփոխությունների ազդեցությամբ Եվրոպայի խորհուրդը վերանայեց երկքաղաքացիությունից խուսափելու հարցում իր մոտեցումը՝ ըստ էության հրաժարվելով երկքաղաքացիությունից խուսափելու սկզբունքի խիստ կիրառումից: Նշված հարցում որդեգրված նոր մոտեցումն իր կոնվենցիոնալ ամրագրումն ստացավ Քաղաքացիության մասին 1997 թ. եվրոպական կոնվենցիայի 15–րդ հոդվածում, որի համաձայն՝ կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում անդամ պետությունների իրավունքը՝ իր ներպետական օրենսդրությամբ որոշելու՝ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերած անձը պահպանում է իր քաղաքացիությունը, թե՝ ոչ: Այսինքն՝ միջազգային իրավունքը պետություններին չի պարտավորեցնում որոշակի կոնկրետ վերաբերմունք դրսևորել իր քաղաքացիների կողմից այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հետևանքների առնչությամբ՝ այդ հարցում ճանաչելով պետությունների հայեցողության ազատությունը:

Ելնելով վերոհիշյալից, հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած համապատասխան միջազգային պարտավորությունները և խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի կամաարտահայտության դեպքում ՀՀ քաղաքացիության կորուստը ՀՀ Սահմանադրության 43–րդ հոդվածով նախատեսված սահմանադրական արժեքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորելը:

ՕՐԵՆՔԻ ԱՌՋԵՎ ԲՈԼՈՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ

ՍԴՈ–723, 15 հունվարի, 2008 թ.

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի 73 հոդվածով նախատեսված կարգավորման արդյունքում կարող է առաջանալ նաև օրենքի առջև հավասարության սկզբունքի ապահովման հետ կապված խնդիր: Սահմանելով վերահաշվարկման կարգը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու և չներկայացնելու պարագայում, օրենքի վիճարկվող նորմը տարբերակված մոտեցում է ցուցաբերում նույն ժամանակահատվածում նույն պայմաններում ձեռք բերված աշխատանքային ստաժի հաշվարկման կարգի նկատմամբ: Օրենքի 73 հոդվածի 2–րդ մասի կիրառման արդյունքում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ միևնույն ժամանակահատվածում միևնույն պայմաններում աշխատած անձանց համար սահմանվեն կենսաթոշակի տարբեր չափեր: Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է, եթե առկա չէ օբյեկտիվ և պատճառաբանված արդարացում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարբերակված մոտեցման հիմքում ընկած այնպիսի ձևական հանգամանքը, ինչպիսին, ի հիմնավորումն աշխատանքային ստաժի, լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու հանգամանքն է, չի կարող դիտվել որպես օբյեկտիվ, իրավաչափ և ողջամիտ արդարացում:

ՍԴՈ–731, 29 հունվարի, 2008 թ.

10. ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

17. ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը հարկ է դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության՝ օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականությունն արգելելու սկզբունքներն ամրագրող 14.1 հոդվածի համատեքստում: Ընդ որում, այս սկզբունքներին խնդրո առարկան առնչվում է երկու տեսանկյունից՝ և՛ փաստաբանների շահերի տեսանկյունից, և՛ դատավարության մասնակիցների տեսանկյունից:

.... Ինչ վերաբերում է դատավարության մասնակիցների համար օրենքի առջև հավասարության սկզբունքի նկատմամբ հարգանքն ապահովելուն, ապա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը վճռաբեկ բողոք կազմելու առնչությամբ չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնության տրամադրում, ինչպես նաև հիմք ընդունելով այն վիճակագրությունը, որ վճռաբեկ դատարան դիմելու միջնորդավորված կարգ սահմանելուց ի վեր կրկնակի կրճատվել է վճռաբեկ բողոքների քանակը, սահմանադրական դատարանը գտնում է, որ հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ խախտվում է նաև հավասարությունը դատավարության մասնակիցների միջև՝ պայմանավորված նրանց գույքային վիճակով:

ՍԴՈ–792, 24 փետրվարի, 2009 թ.

9. ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2–րդ մասի համաձայն պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Անդրադառնալով աշխատանքի ազատ, անխտրական ընտրության և այդ իրավունքի իրացման միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ներպետական իրավակիրառական պրակտիկայում աշխատանքի նկատմամբ որևէ (այդ թվում՝ տարիքային) խտրականությունը, զբաղվածության ազատության ոչ իրավաչափ սահմանափակումները համատեղելի չեն իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության հիմնարար սկզբունքների հետ:

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

8. .... Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթի հակասությանը Սահմանադրության 33.1 հոդվածին, ապա հարկ է նշել, որ այն նպատակ ունի, ընդհակառակն, խթանելու ձեռնարկատիրական գործունեության իրականացումը և ազատ մրցակցության համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելուն՝ հարկային արտոնությունների կիրառման ընդհանուր

կարգ սահմանելու միջոցով տնտեսապես ավելի հզոր սուբյեկտներին հակակշռելու միտումով: Իսկ որևէ արտոնությունից օգտվելու համար իրավահավասարության սկզբունքի ուժով անհրաժեշտ է կատարել որոշակի ձևական բնույթի պարտականություններ: Հարկերի մասին օրենքի վիճարկվող դրույթը մասնավոր անձանց չի ծանրաբեռնում այնպիսի պարտականություններով, որոնք համարժեք հարաբերակցության մեջ չեն հարկային արտոնություններից օգտվելու հետ:

ՍԴՈ–851, 14 հունվարի, 2010 թ.

4. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորմամբ ըստ էության ոչ համաչափ վերաբերմունք է դրսևորվում դատավարության մասնակիցների նկատմամբ:

Սահմանադրական դատարանն ընդունում է, որ, ինչպես նշվեց, օրենսդրի հայեցողության շրջանակներում է այս կամ այն արարքի քրեականացումը: Այդուամենայնիվ, եթե օրենսդիրն այս կամ այն արարքը՝ դրա հանրորեն վտանգավորության ուժով, նախատեսել է քրեական օրենսգրքում որպես քրեորեն դատապարտելի արարք, ապա այդ արարքը կատարելու արգելքը պետք է սահմանվի բոլոր այն հնարավոր սուբյեկտների համար, ովքեր գործնականում կարող են կատարել տվյալ հանցագործությունը: Հակառակ դեպքում, միևնույն օբյեկտի նկատմամբ ոտնձգող, համեմատելի վիճակում գտնվող անձանց հանդեպ պետության կողմից կդրսևորվի ոչ հիմնավոր տարբերակված վերաբերմունք՝ ի խախտումն օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ հանցագործության սուբյեկտների կազմի չհիմնավորված սահմանափակումը թույլ չի տալիս նաև լուծել ՀՀ քրեական օրենսգրքի, մասնավորապես՝ վերջինիս 2-րդ հոդվածում ամրագրված, խնդիրները: Բացառելով վիճարկվող նորմում նշված արարքը թույլ տված առանձին անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ չի ապահովվում այդ արարքով ոտնձգվող արժեքները լիարժեք պաշտպանելու և այդ արարքը կանխելու՝ քրեական օրենսգրքով սահմանված խնդրի լուծումը: Մյուս կողմից՝ խախտվում են դատավարության մասնակիցների, մասնավորապես՝ կողմերի, իրավահավասարության, դատավարության մրցակցության, հետևապես՝ նաև Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության սկզբունքները, քանի որ կողմերի համար դատավարական գործընթացին մասնակցելու հավասար պայմաններ ու հնարավորություններ չեն երաշխավորվում: Դրանից չի բխում, որ վիճարկվող դրույթում նշված սուբյեկտների առնչությամբ դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի դրսևորումը քրեորեն պատժելի արարք դիտելն ինքնին իրավաչափ ու սահմանադրական չէ: Խնդրահարույցը դատավարության այլ մասնակիցների համարժեք գործողություններն այդպիսին չդիտարկելն է:

ՍԴՈ–881, 4 մայիսի, 2010 թ.

5. Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից:

.... Իսկ ինչ վերաբերում է դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ դատախազի, դատավորի և դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիներից ելնելով հավելավճարի սահմանմանը, ապա դա հենց այս պաշտոնների համար նախատեսված սո-

ցիալական անկախության երաշխիք է և որևէ առնչություն չունի Սահմանադրության 14.1-րդ հոդվածի առաջին մասով սահմանված՝ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն:

ՍԴՈ-882, 11 մայիսի, 2010 թ.

9. .... Այսպիսով, **չհանված կամ չմարված դատվածություն ունեցող անձի կողմից** նոր նույնաբնույթ հանցագործություն կատարելը որպես արարքը որակյալ դարձնող կամ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դիտելը չի կարող համարվել նախկինում կատարած արարքի համար «կրկին անգամ դատվել», ինչպես նաև օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում: Առավել ևս, կրկնակիությանն առնչվող բոլոր այն դեպքերը, որոնք կապված չեն դատվածության հետ, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

ՍԴՈ-921, 19 հոկտեմբերի, 2010 թ.

5. .... Միաժամանակ, ակնհայտ է, որ համաներման ակտն ընդունողի հայեցողական լիազորությունը կարող է իրացվել միայն իրավաչափ լուծումների ու ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքների շրջանակներում՝ բացառելով նաև խտրականության որևէ դրսևորում:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաներումը չկիրառելով և՛ նախկինում նախաքննության փուլում համաներման հիմքով պատասխանատվությունից ազատված անձանց նկատմամբ, և՛ համաներման կամ ներման հիմքով պատժից մասամբ կամ ամբողջությամբ ազատված դատապարտյալների նկատմամբ՝ օրենսդիրը գործել է օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելման սկզբունքին համահունչ՝ ապահովելով նույնական վերաբերմունք համանման իրավիճակում գտնվող անձանց առնչությամբ: Մինչդեռ նույն հետևողականությունը չի դրսևորվել համաներումը չկիրառելու վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառությունը նման ձևով սահմանելիս և «....որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել» դրույթը սույն իրավակարգավորման համատեքստում ներկայացնելիս:

ՍԴՈ-967, 7 հունիսի, 2011 թ.

7. Անդրադառնալով վիճարկվող իրավանորմը խտրական վերաբերմունքի բացահայտման տեսանկյունից դիտարկելու խնդրին՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ՝ պարզել, թե արդյո՞ք հարկային գործակալի առկայությունը կամ բացակայությունը հանդիսանում էր բավարար հիմք ոչ ռեզիդենտների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու կամ վերջիններիս որպես տարբեր իրավական կարգավիճակ ունեցող սուբյեկտներ դիտարկելու համար:

Նշված հանգամանքների բացահայտումը կարևորվում է նրանով, որ օրենքի՝ դիմողի կողմից շահութահարկ վճարելու պարտականության ծագման պահին գործող տեքստի 57, 61 և 33-րդ հոդվածների համաձայն, պայմանավորված հարկային գործակալի առկայությամբ կամ բացակայությամբ, ոչ ռեզիդենտների համար սահմանված էին շահութահարկի տարբեր դրույքաչափեր: Մասնավորապես, կախված եկամտի տեսակից՝ հարկային գործա-

կալի առկայության դեպքում ոչ ռեզիդենտների համար որպես շահութահարկի դրույքաչափ սահմանված էր 5 կամ 10 տոկոս, իսկ հարկային գործակալի բացակայության դեպքում ոչ ռեզիդենտների համար, անկախ եկամտի տեսակից՝ 20 տոկոս:

Հարկային քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս պետությունն օժտված է որոշակի հայեցողությամբ: Հարկային իրավահարաբերությունները կարող են ունենալ բազմաթիվ առանձնահատկություններ, դրանց բովանդակությունը կարող է հաճախակի փոփոխությունների ենթարկվել, իսկ այդ փոփոխությունները պայմանավորված լինեն պետության ֆինանսատնտեսական քաղաքականությամբ, զարգացման առաջնահերթություններով, ռազմավարական խնդիրները լուծելու պահանջով, տնտեսական հարաբերությունները կատարելագործելու, տնտեսության որոշակի ոլորտների զարգացումը խրախուսելու, ինչպես նաև հարկային վարչարարությունը կատարելագործելու նպատակով: Նշված այս հանգամանքների կամ դրանցից որևէ մեկի առկայությունը կարող է հիմք ծառայել հարկային քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնելու, հարկային իրավահարաբերություններում արտոնություններ կամ առավել բարենպաստ պայմաններ սահմանելու համար: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ այս ամենի իմացությամբ և իր ազատ կամաարտահայտմամբ է մտնում տնտեսական հարաբերությունների մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է: Մինչդեռ տվյալ դեպքում նման իրավիճակ առկա չէ: ....

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտները Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս կարող էին և պետք է տեղյակ լինեին օրենսդրությամբ սահմանված այլընտրանքային հնարավորությունների մասին՝ կապված հարկային գործակալի առկայության կամ բացակայության դեպքում ոչ ռեզիդենտներին ցուցաբերվող տարբերակված մոտեցման մասին, և հնարավորություն ունեին ընտրություն կատարել իրենց ընձեռված հնարավորությունների սահմաններում:

ՍԴՈ–1050, 2 հոկտեմբերի, 2012 թ.

7. .... **Սահմանադրական դատարանը կարևորում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անվերապահ կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումը:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ պահանջների կատարումը խնդրո առարկա իրավիճակում կբացառի, մի կողմից, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում բնակվող կենսաթոշակառուների, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին 1961 թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի, ինչպես նաև օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից պետություններում բնակվող կենսաթոշակառուների միջև փաստացիորեն ստեղծված տարբերակված մոտեցումը՝ կապված վերջիններիս՝ կենսաթոշակը ստանալու համար Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտության հետ:

.... **Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած խնդիրը պայմանավորված է ոչ թե օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, այլ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անտեսմամբ:**

ՍԴՈ-1134, 24 դեկտեմբերի, 2013 թ.

6. .... Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ դատապարտյալին պատժի կատարման (հետագա կրման) համար իր քաղաքացիության երկիր փոխանցելու նպատակով դատավճռի կայացման և դատավճռի կատարման պետությունների միջև փոխանցման և պատժի կատարման (հետագա կրման) բոլոր պայմանների վերաբերյալ փոխհամաձայնության ձեռքբերումը հնարավորություն կընձեռի նաև խուսափել օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի ապահովման հետ կապված խնդիրներից: Մասնավորապես, սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակի առաջացման հնարավորությունը, երբ փոխանցման ենթակա են մեկից ավելի դատապարտյալներ, որոնք դատավճռի կայացման պետության կողմից դատապարտվել են նույն քրեական գործի շրջանակներում, օրինակ՝ խմբակային հանցագործության համար, և նրանց բոլորին դատավճռի կատարման պետություն փոխանցելու վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերվել պետությունների միջև, սակայն դատապարտյալների փաստացի փոխանցումը միաժամանակ չի կատարվել. դատապարտյալներից մեկը փոխանցվել է դատավճռի կատարման պետություն այն ժամանակ, երբ գործում էր ավելի խիստ պատիժ նախատեսող քրեական օրենսդրություն, իսկ մյուս դատապարտյալը (դատապարտյալները) փոխանցվել է (են) ավելի մեղմ պատիժ նախատեսող քրեական օրենսդրության գործողության ժամանակ. հանգամանքներ, որոնց վրա սահմանադրական դատարանը հարկ է համարում հրավիրել իրավակիրառողի ուշադրությունը:

ՍԴՈ-1189, 27 հունվարի, 2015 թ.

6. .... Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում նաև սնանկության գործընթացի շրջանակներում առողջ ճանաչված պարտապանին ընտրողաբար պարտավորություններից ազատելը, քանի որ վիճարկվող իրավակարգավորումը տարբերակված մոտեցում է նախատեսում հարկային պարտավորությունների պարտատեր հանդիսացող պետության և այլ տեսակի պարտավորությունների պարտատերեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև:

ՍԴՈ-1192, 3 մարտի, 2015 թ.

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վճռաբեկ բողոք բերելու՝ տվյալ դեպքում միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրն անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ զարգացնելու առումով: Մասնավորապես, օրենսդրորեն համարժեքորեն չեն լուծվել գույքային խտրականության հետ կապված հարցերը, ընդ որում՝ խնդիրն առկա է ինչպես վարչական դատավարության, այնպես էլ վճռաբեկ բողոք ներկայացնելու նախապայմանների օրենսդրական միասնական քաղաքականության շրջանակներում, ինչն ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դրսևորումնե-

րի համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով: Այս հանգամանքը փաստվում է ելնելով նրանից, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9–րդ հոդվածի 2–րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են **իրավունքի աղբյուր** իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենսդրական զարգացումների համար կարևոր աղբյուր են:**

Քննության առարկա հիմնահարցը վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով՝ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ վիճարկվող դրույթով՝ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի ամրագրումը, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացմանը նպաստելու իրավաչափ նպատակ հետապնդելով հանդերձ, փաստացի հանգեցրել է հենց այդ իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակմանը, անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորության և դատարանի մատչելիության իրավունքի ոչ համարժեք սահմանափակմանը:

ՍԴՈ–1224, 7 հուլիսի, 2015 թ.

16. .... Սոցիալական վճարներից հրաժարվելու իրավունքի իրացման հնարավորությունն ընտրաբար, տարբերակված կերպով տրամադրելու հետ կապված հիմնահարցի առնչությամբ դիմողը տարբերակված մոտեցման երկու առանձին իրավիճակ է դիտարկում.

1. տարբերակված մոտեցում սոցիալական վճարներից հրաժարվելու համար նախատեսված ժամկետը լրանալուց հետո աշխատաշուկա մտած անձանց և վերոնշյալ ժամկետի ընթացքում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց նկատմամբ,

2. տարբերակված մոտեցում հանրային ծառայողների, պետական կառավարչական հիմնարկների և համայնքային կառավարչական հիմնարկների, դրանց կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վարձու աշխատողների և կուտակային կենսաթոշակային համակարգի մնացած մասնակիցների նկատմամբ:

Վերոնշյալ հարցադրումներն անհրաժեշտ է դիտարկել ՀՀ Սահմանադրության 14.1–րդ հոդվածի, խտրական վերաբերմունքի մասին սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Այսպես. անձի նկատմամբ տարբերակված, խտրական վերաբերմունքի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) ՀՀ Սահմանադրության 14.1–րդ հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց **հավասար հնարավորություն կտան իրացնելու**, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (ՍԴՈ–731, 29 հունվարի 2008 թ.),

բ) սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշա-

նակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՍԴՈ–881, 4 մայիսի 2010 թ.):

....

22. .... Ինչ վերաբերում է տարիքային խտրականության վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ ընդհանրապես, ապա հարկ է նշել, որ խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ: Խնդրո առարկա իրավիճակում չի կարող արձանագրվել նման վիճակ, քանզի խոսքը վերաբերում է ոչ թե նույն իրավական կարգավիճակի շրջանակներում՝ տարիքով պայմանավորված խտրականությանը, այլ տարբեր իրավական կարգավիճակ ունենալու հիմքով անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքներին և պարտականություններին, այսինքն՝ իրավական հիմնավորում ունեցող օբյեկտիվ պայմաններին:

ՍԴՈ–1262, 22 մարտի, 2016 թ.

8. Օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների խախտման վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 04.05.2010 թ. ՍԴՈ–881 որոշման 5-րդ կետում ամրագրած իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի. «....օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝.... սահմանելուն»:

Խտրականության արգելքի խախտման վերաբերյալ դիմողի փաստարկները դիտարկելով վերը նշված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում համապատասխան արբիտրաժային տրիբունալի վճիռը կատարման ներկայացնելու ժամկետների առումով ներպետական արբիտրաժային տրիբունալին դիմած կողմերի և օտարերկրյա կամ միջազգային արբիտրաժային տրիբունալին դիմած կողմերի կարգավիճակները և դրանցից բխող իրավունքների և պարտականությունների ծավալը չեն կարող նույնական լինել:

ՍԴՈ–1263, 5 ապրիլի, 2016 թ.

8. .... Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև այն փաստարկը, որ վիճարկվող նորմերը հակասում են խտրականության արգելման սկզբունքին, քանի որ տվյալ դեպքում տարբերակումը վերաբերում է տարբեր կատեգորիայի անձանց՝ փաստաբաններին, իրավաբաններին և այդպիսիք չհանդիսացող անձանց: Խտրականությունն առկա կլիներ այն դեպքում, երբ օրենսդրորեն տարբերակում նախատեսվեր այս երեք խմբերից որևէ մեկում: Դատավարական տարբեր գործընթացներում ներկայացուցչության ապահովումն ու վերջինիս իրավակարգավորումն իրականացվում է այդ գործընթացների առանձնահատկությունները հաշվի առնելով:

4. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՀԻՄՆԱՐԱՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

«ACTIO POPULARIS» (ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ Ի ՊԱՇՏՈՆԵ ՊԱՐԶԵԼԸ) ՍԿԶԲՈՒՆՔԸ

ՍԴՈ– 906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

7. ....Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:** ....

8. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

«NON BIS IN IDEM» (ՆՈՒՅՆ ԱՐԱՐՔԻ ՀԱՄԱՐ ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ՉԴԱՏՎԵԼՈՒ) ՍԿԶԲՈՒՆՔԸ

ՍԴՈ– 767, 21 հոկտեմբերի, 2008 թ.

8. .... Դիմողը սահմանադրական դատարան ներկայացված իր դիմումում, ինչպես նշվեց, մասնավորապես նշում է. «14.03.2008 թ. տեղի ունեցած դատական նիստի ժամանակ նախագահող դատավորը, պարզաբանելով կողմերի իրավունքները, հայտարարել է, որ վերաքննիչ դատարանի կողմից Միշա Հարությունյանի նկատմամբ 01.04.2003 թ. դատավճիռը, ինչպես նաև՝ այդ դատավճռի դեմ բերված վճռաբեկ բողոքները մերժելու և դատավճիռն անփոփոխ թողնելու մասին վճռաբեկ դատարանի 08.05.2003 թ. որոշումը գտնվում են ուժի մեջ»:

Վերոհիշյալից բխում է, որ դիմողի դիմումի հիման վրա Հարավային քրեական դատարանում հարուցված վարույթի շրջանակներում վերանայվում է ոչ թե վճռաբեկ դատարանի որոշումը, այլ առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քանզի վճռաբեկ դատարանի որո-

շումը վերանայելու իրավասությամբ առաջին ատյանի դատարանն օժտված չէ. այլապես կառաջանար մեկ այլ անընդունելի իրավիճակ, երբ ստորին ատյանի դատարանը վերանայում է վերադաս դատարանի ակտը:

ՍԴՈ–882, 11 մայիսի, 2010 թ.

5. .... Ինչպես շատ պետություններ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունն իրեն հռչակելով որպես իրավական պետություն, իր Սահմանադրությունում հստակ սահմանել է հետևյալ դրույթը. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են» (3–րդ հոդվածի 1–ին մաս): Սրանից էլ բխում են Սահմանադրության նույն հոդվածի 2–րդ և 3–րդ մասերով ամրագրված նորմերը. «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Քրեական պատասխանատվության միջոցների կիրառումն արդարացված է Սահմանադրության 43–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներից է նաև Սահմանադրության 22–րդ հոդվածի 7–րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, և որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ ենթակա չէ սահմանափակման (անգամ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում):

....

6. ՀՀ Սահմանադրության 22–րդ հոդվածի 7–րդ մասում ամրագրված վերոհիշյալ նորմն իր արտացոլումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21–րդ հոդվածում, որի 2–րդ մասը սահմանում է. «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կբերի անձի վիճակի վատթարացում»:

Նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու սահմանադրական սկզբունքն օրենսդիրն իրավացիորեն տարածել է ոչ միայն դատական, այլև քրեական հետապնդման մարմինների գործունեության նկատմամբ: Քր. դատ. օր. 21–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման:

....

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգիրքը հանցակազմի ընդհանուր սուբյեկտներից առանձնացնում է **հատուկ սուբյեկտներին**: Սուբյեկտի այս տեսակը, բացի երեք պարտադիր հատկանիշներից (ֆիզիկական անձ, մեղսունակություն և քրեական պատասխանատվության ենթարկելու տարիք), բնութագրվում է նաև ոչ պարտադիր հատկանիշներով, որոնք նախատեսված են օրենսգրքի Հատուկ մասի նորմերով: Սուբյեկտի ոչ պարտադիր հատկանիշները կամ ուղղակի նախատեսված են համապատասխան հանցակազմի դիսպոզիցիայում, կամ սահմանվում են մեկնաբանության միջոցով (օր.՝ պաշտոնատար անձի հասկացությունը՝ 308–րդ հոդվածի 3–րդ մասում): Հատուկ սուբյեկտն իր պաշ-

տոնեական, ծառայողական կամ մասնագիտական գործունեության բերումով հանրորեն վտանգավոր այնպիսի գործողություն (անգործություն) կատարող անձն է (օր.՝ պաշտոնատար անձը, զինծառայողը, բժիշկը, դատավորը, դատախազը և այլն), որպիսին չեն կարող կատարել այլ անձինք: Այդպիսի անձանց հատուկ սուբյեկտներ ճանաչելը բխում է ոչ թե նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից, որը կհակասեր օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մաս և օրենսգրքի 6-րդ հոդված), այլ, որովհետև հանրորեն վտանգավոր նման արարքները կարող են կատարվել միայն այդ անձանց կողմից:

Քրեական իրավունքի տեսությունը հատուկ սուբյեկտների շարքին է դասում նաև կրկնահանցագործներին և ռեցիդիվիստներին, քանի որ նրանք իրենց իրավական կարգավիճակով առանձնանում են առաջին անգամ հանցանք կատարած անձանցից: Նման տեսական հետևությունից բխեցվում է օրենսդրական համարժեք կարգավորում: Հանցագործությունների կրկնակիության և ռեցիդիվի հասկացությունները տրված են օրենսգրքի 21 և 22-րդ հոդվածներում: Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների կրկնակիություն է համարվում օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը կրկնակի է համարվում միայն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում:

Հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունն իր օրենսդրական ձևակերպումն է ստացել օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար: Հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում տրված են վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի բնորոշումները: Հոդվածի 4-րդ մասը **բացառում է ռեցիդիվի առկայությունն այն դեպքերում, երբ նախկինում կատարած հանցանքների համար դատվածությունը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով,** ինչպես նաև, երբ անձը հանցանքներ է կատարել մինչև 18 տարին լրանալը: Նույն կերպ **կրկնակիությունը բացակայում է, եթե նախկինում կատարած հանցանքի համար անձը քրեական պատասխանատվությունից ազատվել է օրենքով սահմանված հիմքերով, կամ այդ հանցանքի համար դատվածությունը մարվել կամ հանվել է** (օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մաս):

8. .... Ինչպես նշվեց, ռեցիդիվը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է, որը հանցավորի անձը բնութագրում է որպես հանրորեն վտանգավոր և հանցավոր հակումներ ունեցող: Սակայն, եթե որևէ ծանրացնող հանգամանք օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածում նախատեսված է որպես հանցակազմի հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

Օրենսդիրը՝ սահմանելով չմարված կամ չհանված դատվածության քրեաիրավական հետևանքները, տարբերակում է դրանք կախված այն բանից, թե ինչպես է դատվածությունն անդրադառնում այս կամ այն բնույթի հանցագործությունների հասարակական վտանգավորության աստիճանի վրա: Եթե նախկինում դատվածություն ունեցող անձի կողմից կատարված հանցագործությունը, անկախ դրա բնույթից, մեծացնում է այդ հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, ապա դա նախատեսվում է օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերում որպես պատիժը ծանրացնող հանգամանք: Իսկ եթե նախկին դատվածության ազդեցությունը նոր հանցագործության հասարակական վտանգավորու-

թյան աստիճանի վրա օրենսդրի կողմից գնահատվում է որպես սովորականի շրջանակներից դուրս եկող, ապա դատվածությունը գնահատվում է որպես որակյալ հանցակազմի սուբյեկտին բնորոշ հատկանիշ, որի հակասոցիալական բնույթը մեծ մասամբ որոշվում է անձի հանցավոր վարքագծի պարբերականությամբ:

Դատվածության ինստիտուտը՝ և՛ որպես որակյալ հանցակազմի տարր, և՛ որպես պատժի նշանակման ժամանակ հաշվի առնվող հանգամանք, իրավաչափ նպատակ է հետապնդում, և դրա տարբեր ձևերի կիրառումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նույն արարքի համար կրկին անգամ դատվելը բացառելու սկզբունքն այն ձևով, ինչպես սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ և կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքով, բացառում է անձին կրկնակի դատապարտելն ու պատժելը միևնույն հանցագործության համար, ինչպես նաև միևնույն հանցավոր արարքի որակումն օրենսգրքի մի քանի հոդվածով, եթե դրանցում պարունակվող նորմերը հարաբերակցվում են որպես Ընդհանուր և Հատուկ մասերի նորմեր կամ մաս և ամբողջություն:

9. Նույն արարքի համար անձին կրկին անգամ դատելու սահմանադրական արգելքին և նույն արգելքն ամրագրած՝ ՀՀ ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող համապատասխան միջազգային պայմանագրերին համահունչ է օրենսգրքում ամրագրված այն սկզբունքը, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար (հոդված 10):

Դա նշանակում է, որ հիշյալ սկզբունքը չի արգելում ինչպես օրենսդրին՝ ՀՀ քրեական օրենսդրությունում ամրագրել դատվածության և դրա հետ կապված կրկնակիության ու ռեցիդիվի ինստիտուտները՝ քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքներով հանդերձ, այնպես էլ դատարանին՝ հանցանք կատարած անձի պատժի տեսակն ու չափը սահմանված ձևով որոշելու գործընթացում հաշվի առնել հանցագործության բնույթը, դրա հասարակական վտանգավորությունը, հաճախականությունը, դրդապատճառները և այլ հանգամանքները, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները:

Այսպիսով, **չհանված կամ չմարված դատվածություն ունեցող անձի կողմից** նոր նույնաբնույթ հանցագործություն կատարելը որպես արարքը որակյալ դարձնող կամ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դիտելը չի կարող համարվել նախկինում կատարած արարքի համար «կրկին անգամ դատվել», ինչպես նաև օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում: Առավել ևս, կրկնակիությանն առնչվող բոլոր այն դեպքերը, որոնք կապված չեն դատվածության հետ, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

.... Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան այն ուղղությամբ, որ շեշտը դնելով ոչ թե հանցանքի որակման, այլ պատժի տարրերի վրա՝ կատարելագործվեն ռեցիդիվի ինստիտուտը կանոնակարգող իրավանորմերը՝ իրենցում ներառելով նաև նախկին դատվածությանն առնչվող քրեաիրավական հետևանքները:

ՍԴՈ–1139, 18 փետրվարի, 2014 թ.

7. Անդրադառնալով «նույն արարքի համար կրկին անգամ չդատվելու» (non bis in idem) սահմանադրական և միջազգային իրավական սկզբունքին սույն գործով վիճարկվող նորմերի համադրելիության խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ՝

ա) բացահայտել այդ սկզբունքի իրավական բովանդակությունն ու հարկային և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունում դրա կիրառելիության թույլատրելի շրջանակները,

բ) գնահատել վիճարկվող և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի համադրելիությունը ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին:

Կրկին դատվելու անթույլատրելիության պահանջը (սկզբունքը), որը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում, սահմանված է մի շարք միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածով: Այդ սկզբունքն իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելը, դատելը և քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրաիրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեաիրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել: Այդ սկզբունքը նաև բացառում է միևնույն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, արգելում է նաև միևնույն հանգամանքը հաշվի առնել ինչպես հանցանքը որակելիս, այնպես էլ պատժի տեսակն ու չափն ընտրելիս (ՀՀ քր. օր. 10, 63, 104-րդ հոդվածներ): Այսպիսով, նախկինում հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն դատվել է, չի կարող նրա հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ, «բացառությամբ այն դեպքերի», ինչպես վճռել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել արդյունքի վրա» (Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի գործով 2004 թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ, գանգատ թիվ 50178/99):

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային, ինչպես նաև վարչաիրավական հարաբերություններում իրավասու սուբյեկտները, ելնելով այդ հարաբերությունների բովանդակությունից ու առանձնահատկություններից, անհրաժեշտաբար (օբյեկտիվորեն) կարող են հանդես գալ իրավական մի քանի կարգավիճակներով՝ միաժամանակ հանդես գալով թե՛ որպես հարկային և թե՛ վարչաիրավական հարաբերության սուբյեկտներ, և որոնց նկատմամբ միաժամանակ հարկային և վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը կարող է մեկնաբանվել որպես միևնույն արարքի համար իրավական կրկնակի պատասխանատվություն: Մասնավորապես, եթե անհատ ձեռնարկատերն իր գործունեությունից բխող հարկերը հաշվարկելու և պետբյուջե փոխանցելու իր պարտականությունն օրենսդրությամբ նախատեսված կարգով պատվիրակել է պատասխանատու այլ անձի, ապա այդ ձեռնարկատերը վարչական պատասխանատվություն կարող է կրել միայն որպես իրավաբանական անձին հավասարեցված իրավունքի սուբյեկտ, մինչդեռ այլ իրավական կարգավորում է նախատեսված այն դեպքերում, երբ անհատ ձեռնարկատերը միաժամանակ ստանձնել է իր գործունեությամբ պայմանավորված հարկերը հաշվարկելու և վճարելու պարտականությունը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3-րդ հոդվածի իմաստով պատասխանատվության ենթակա սուբյեկտ կարող է լինել միայն այն անհատ ձեռնարկատերը, որն օրենքով սահմանված կարգով անձամբ է իրականացնում հարկերը հաշվարկելու և փոխանցելու պարտականություն, հակառակ դեպքում, երբ այդ պարտականությունը վերապահված է այլ անձի, պատասխանատվություն կկրի միայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի հիման վրա:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ չնայած սույն գործով վեճի առարկա նորմերն ինքնին անմիջական սահմանադրականության խնդիր չեն հարուցում, այ-

նուամենայնիվ, հիմնավոր է դիմողի դիրքորոշումն առ այն, որ քննության առարկա իրավական ակտերում պատասխանատվության միջոցներ սահմանելիս օրենսդիրը պետք է առավել հստակ իրավակարգավորումներ նախատեսի՝ բացառելու համար հարկային և վարչական պատասխանատվության ենթակա որևէ իրավասուբյեկտի՝ իր իրավական կարգավիճակով պայմանավորված հանգամանքներով կրկնակի պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը: Ներկա իրավակարգավորումների շրջանակներում նույնպես այս մոտեցումը պետք է դրվի իրավակիրառական պրակտիկայի հիմքում:

ՍԴՈ–1203, 28 ապրիլի, 2015 թ.

7. «Հարկերի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքների համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ շահութահարկով հարկվող օբյեկտը հարկվող շահույթն է, այլ ոչ թե հարկային վնասը, և հարկային վնասն ավել ցույց տալը նշանակում է ավել նվազեցումների կամ պակաս եկամուտների հայտարարագրում:

....

8. Դիմողը թեև նշում է, որ իրավակիրառ պրակտիկայում նորմին տրվում է այլ մեկնաբանություն, որը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներով նախատեսված իրավակարգավորումների տեսանկյունից, այնուամենայնիվ, չի վկայակոչում որևէ դատական ակտ, որի շրջանակներում վիճարկվող նորմին կտրվեր այդպիսի մեկնաբանություն: Դիմողը միայն ներկայացնում է մեկ դատական գործի դատավարական նախապատմությունը, որն իր փաստական հանգամանքներով էապես տարբերվում է դիմողի կողմից ներկայացված **non bis in idem** սկզբունքի ենթադրյալ խախտման հակասահմանադրական իրավիճակներից:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–1139 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հասարակության և պետության համար իրենց ոչ բարենպաստ հետևանքներ առաջացնելու ծանրությամբ, պահպանվող հասարակական հարաբերություններին պատճառվելիք վնասով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ հարկային իրավախախտումներ սահմանող նորմերն իրենց ամրագրումն են գտել ոչ միայն հարկային օրենսդրության մեջ, այլև վարչական իրավախախտումների վերաբերյալ, ինչպես նաև քրեական օրենսգրքերում: Բացի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված վարչական պատասխանատվությունից, ՀՀ քրեական օրենսգրքի 189–րդ, 205–րդ և 328–րդ հոդվածներով նախատեսված են կոնկրետ հանցակազմեր և համապատասխան պատժամիջոցներ՝ հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերում: Այսպիսով, նպատակ ունենալով երաշխավորել հարկեր և տուրքեր վճարելու՝ անձանց սահմանադրական պարտականության կատարումը, օրենսդիրը նախատեսել է իրավական պատասխանատվության կոնկրետ տեսակներ (հարկային, վարչական, քրեական), որոնց խստությունը, կիրառման իրավական հետևանքներն անմիջականորեն պայմանավորված են հարկային այս կամ այն պարտավորության չկատարման (ոչ պատշաճ կատարման) հասարակական վտանգավորության աստիճանով: Մասնավորապես, եթե «Հարկերի մասին» ՀՀ օրենքով կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հարկային պարտավորության չկատարումը (ոչ պատշաճ կատարումը) առաջացնում է նյութական պատասխանատվություն (համապատասխանաբար՝ հարկային և վարչական պատասխանատվություն), ապա նույն արարքը, ըստ սուբյեկտիվ հատկանիշի, քրեորեն պատժելի է չարամտության դրսևորման կամ ծանրացուցիչ այլ հանգամանքների առկայության դեպքերում: Հետևաբար, իր բնույթով ու բովանդակությամբ հարկային պարտավորությունից խուսափելն անհարիր է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 45–րդ հոդվածում, այլ, նախ և առաջ՝ Սահմանադրության 1–ին, 3–րդ և այլ հոդվածներում ամրագրված ի-

րավական, ժողովրդավարական պետության սկզբունքներին, ուստի այդ արարքի՝ օրենքով նախատեսված պատժելիությունը հետապնդում է իրավաչափ նպատակ»:

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–872, 2 ապրիլի, 2010 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական գործի դատաքննության փուլում ի հայտ եկած նոր փաստերի հիմքով օբյեկտիվորեն կարող են փոփոխվել գործի հանգամանքների և ամբաստանյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը կամ հանցակազմի հատկանիշների բովանդակությունը: Սակայն, բոլոր դեպքերում, էական հանգամանքն այն է, որ գործը շարունակում է գտնվել դատաքննության փուլում, չի փոխվում ամբաստանյալի իրավական կարգավիճակը, իսկ մրցակցային դատավարության սկզբունքի պահանջներին համապատասխան երաշխավորվում է ամբաստանյալի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասով սահմանված իրավունքների պաշտպանությունը:

7. .... Վերլուծելով ՀՀ քր. դատ. օրենսգրքի 309.1–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատաքննության շրջանակներում լրացուցիչ ապացույցների ձեռքբերման և այլ դատավարական գործողությունների կատարմամբ մեղադրանքը փոխելու դեպքում օրենսգրքի 309.1–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերն իրավակարգավորման առումով դատարանին մեղադրական թեքումից ձերբազատվելու և անկողմնակալ արդարադատություն իրականացնելու բավարար երաշխիքներ պարունակում են՝ դրանց սահմանադրաիրավական իրենց բովանդակությանը համապատասխան ընկալման ու իրացման պարագաներում, համաձայն որի.

.... **Երրորդ՝** դատարանը պետք է հանգի այն համոզման, որ այդ գործողությունները կատարվում են դատաքննության շրջանակներում՝ առանց ամբաստանյալի կարգավիճակի փոփոխության, երաշխավորելով նաև պաշտպանական կողմի դատավարական իրավունքները:

8. Սահմանադրական դատարանը կարևորում է նաև առկա իրավակարգավորման դիտարկումը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հիմնադրույթների տեսանկյունից: Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասի «բ» կետի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք պետք է ունենա «բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար»: ....

9. .... **Երրորդ՝** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1–րդ հոդվածի 3–րդ մասով ամրագրված նորմի համաձայն. «Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է»: Հիշյալ դրույթը գրեթե նույնությամբ ամրագրված է մի շարք այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում (Էստոնիա՝ հոդվ. 215, Լեհաստան՝ 398, Լատվիա՝ 461–462, Սերբիա՝ 341, Ուկրաինա՝ 277, Ղազախստան՝ 320, Մոլդովա՝ 326, Բուլղարիա՝ 287 և այլն): Սակայն որն է էական տարբերությունը Հայաստանի համեմատությամբ: Դա առաջին հերթին վերաբերում է դատավարության կողմերի, մասնավորապես՝ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությանը: Այս երկրներում դատախազությունը ոչ միայն հարուցում, այլև իրականացնում է քրեական հետապնդում: Հայաստանի Հանրապետության դատախազությանը, որը ՀՀ Սահմանադրության վեցերորդ գլխում ներկայաց-

ված է որպես դատական իշխանության մարմին, քրեական գործի նախաքննության փուլում վերապահելով միայն վերահսկողական գործառույթ գործադիր իշխանության ինստիտուտների քննություն իրականացնելու գործառույթի նկատմամբ, նույն կարգավիճակի մեջ է դրվել նաև դատաքննության փուլում: Դրանից բխեցվում է, որ եթե նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով պետք է քննչական և այլ բնույթի գործողություններ իրականացվեն, ապա ամբաստանյալը կրկին պետք է հայտնվի մեղադրյալի կարգավիճակում, որպեսզի համարժեք գործողությունների դեպքում ի վիճակի լինի պաշտպանել իր իրավունքները: Սակայն օրենսդրությունը կարգավիճակի նման փոփոխության ինստիտուտ չի նախատեսել, և դա նաև կհակասեր սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմանը: Արդյունքում՝ քննարկված ձևով գործադրվում է գործը լրացուցիչ քննության վերադարձնելու պրակտիկան, որը չի բխում նաև ՀՀ քր. դատ. օր. վիճարկվող նորմերի դրույթներից, սակայն հարուցել է դիմողի ներկայացուցիչների արդարացի դժգոհությունը: Ուստի սահմանադրական դատարանը վիճարկվող հոդվածի սահմանադրականությունը գնահատում է դրանում բովանդակվող բոլոր մասերի համակարգային ամբողջականության մեջ՝ նաև դրանից բխող իրավական հետևանքների առումով:

.... վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական ռեժիմներով մեղադրանքը փոփոխելու համար հիմք է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունը, որի հետևանքով փոխվում է արարքի իրավաբանական որակումը կամ երբ նման փոփոխման դեպքում արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոխվում է հանցակազմի հատկանիշների բովանդակությունը, օրինակ՝ փոփոխվում է միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, իր կարևորությամբ հանդերձ, հիշյալ նախադեպային որոշումն իրավակիրառական պրակտիկան լիարժեք չի կարող ուղղորդել այնպես, որ մեղադրողը, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի հիմքերով՝ դատարանում մեղադրանքը պաշտպանելու իրավասության շրջանակներում, առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ հիմնավոր միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում, անհրաժեշտ գործողություններ կատարի այն պայմանով, որ բացառվի ամբաստանյալի դատավարական կարգավիճակի որևէ փոփոխություն և նրա շահերի ու իրավունքների ցանկացած ոտնահարում, որի գնահատողն ու երաշխավորողը տվյալ գործը քննող դատարանն է: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավապայմանների ապահովման դեպքում է հնարավոր դատաքննության փուլում երաշխավորել անձանց սահմանադրական իրավունքները:

ՍԴՈ-931, 28 դեկտեմբերի, 2010 թ.

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9.1-րդ բաժնի դրույթներով սահմանված՝ դատական քննության արագացված ընթացակարգի հիմնական հատկանիշներն են.

– դատական քննության արագացված կարգ կիրառելու համար բավարար չէ կողմերից միայն մեկի՝ ամբաստանյալի կամ մեղադրողի համաձայնությունը, պահանջվում է նաև այդ կարգը կիրառելու դեմ մյուս կողմի առարկության բացակայությունը, այսինքն՝ եթե դատախազը մեղադրական եզրակացությունում առարկել է արագացված կարգ կիրառելու դեմ, ապա այդ կարգն ամբաստանյալի միջնորդության պարագայում չի կարող կիրառվել, և, հակառակը, դատախազի առարկության բացակայության դեպքում դատական քննության արագացված կարգը չի կարող կիրառվել առանց ամբաստանյալի համապատասխան միջնորդության, ...

– դատարանը պետք է համոզվի, որ ամբաստանյալը գիտակցում է իր ներկայացրած միջնորդության բնույթը և հետևանքները, միջնորդությունը ներկայացված է կամավոր և պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո:

8. Արագացված կարգով դատական քննությունը քրեական դատավարության ձև է, որն օրենքով սահմանված կարգով միտված է գործն առավել սեղմ ժամկետում և պարզեցված կանոններով լուծելուն: Այս ինստիտուտի առանցքում «գործարքն» է քրեական դատավարության երկու կողմերի՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, որի շրջանակներում մեղադրյալը համաձայնում է առաջադրված մեղադրանքին, ինչի դիմաց նրա համար երաշխավորվում է պատժի այնպիսի չափ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժ, ինչպես նաև ամբաստանյալն ազատվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերից: Համաձայնելով արագացված դատաքննությանը՝ ամբաստանյալը նաև կամովին հրաժարվում է մի շարք սահմանադրաիրավական երաշխիքներից, այն է՝ անմեղության կանխավարկածի սկզբունք, գործի հրապարակային քննության և այլ իրավունքներ: Մյուս կողմից՝ մեղադրողը հրաժարվում է մեղադրանքը պաշտպանելու իր գործառույթը լրիվ ծավալով իրականացնելուց՝ դրանով հնարավորություն ստանալով տնտեսել իր միջոցները, ինչպես նաև մեղադրյալին (ամբաստանյալին) խրախուսել համագործակցելու քրեական հետապնդման մարմինների հետ:

11. .... Դատարանի դատավարական անկախությունը դատավորի անկողմնակալ և օբյեկտիվ վերաբերմունքն է կողմերի նկատմամբ, ինչպես նաև նրա կողմից ապացույցների անկողմնակալ և օբյեկտիվ գնահատականը՝ ելնելով միայն իր ներքին համոզմունքից: Դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցի լուծման, ամբաստանյալի միջնորդության առնչությամբ որոշում կայացնելու գործընթացում դատարանի դատավարական անկախությունը դրսևորվում է **նման կարգ կիրառելու վերաբերյալ դատավարության երկու կողմերի փոխադարձ համաձայնության պայմաններում** դատական քննության արագացված կարգ կիրառելու՝ **օրենքով նախատեսված պայմանների առկայությունը գնահատելիս:** Այսինքն՝ դատարանն ամբաստանյալի միջնորդության քննարկմանը ձեռնամուխ է լինում միայն դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ դատավարության կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում և անկախության սկզբունքի հիման վրա լուծում է ամբաստանյալի միջնորդությունը բավարարելու հարցը՝ պարզելով դատական քննության արագացված կարգ կիրառելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածով նախատեսված պայմանների առկայությունը:

ՍԴՈ-934, 4 փետրվարի, 2011 թ.

7. Հաշվի առնելով, որ առկա իրավական վեճն առնչվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 02.04.2010 թ. ՍԴՈ-872 որոշման շրջանակներում արտահայտած իրավական դիրքորոշումներին և, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության մեկնաբանմանը, ինչպես նաև նկատի ունենալով, որ տվյալ հիմնախնդիրը կարևոր նշանակություն ունի քրեական դատավարության հայեցակարգային զարգացումների հստակեցման առումով, ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները, անհրաժեշտ է համարում արձանագրել.

.... **Երկրորդ՝** ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ քրեական գործով վարույթի շրջանակներում մեղադրանքի առաջադրման (փոփոխման, լրացման), ինչպես նաև մեղադրական եզրակացության կազմման (փոփոխման, լրացման) և հաստատման դա-

տավարական ընթացակարգերում, մի կողմից, քննիչի, մյուս կողմից՝ դատախազի լիազորությունների (իրավունքների ու պարտականությունների) օրենսդրական վերոհիշյալ տարանջատումը բխում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի իրավակարգավորման ընդհանուր խնդիրներից ու նպատակներից, հիմք ընդունելով պետական իշխանության իրականացման օրինականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված սկզբունքը, համաձայն որի՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու չեն կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետևաբար, դատախազն իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որպիսիք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով: Մյուս կողմից, դատաքննության փուլում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման, լրացման, ամբաստանյալին նոր մեղադրանք առաջադրելու դեպքերում, դատարանի գործառույթը պետք է հիմնվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածում ամրագրված մրցակցային արդարադատության այն սկզբունքի վրա, համաձայն որի. «դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը»:

.... **Երրորդ՝** ՀՀ Սահմանադրության 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ հոդվածներում ամրագրված են հանցավոր արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներ: Միաժամանակ, Սահմանադրության 3-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան պետության պարտականությունն է ապահովել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու անձեռնմխելիությունը: Քրեական գործի վարույթում մեղադրական եզրակացությունը ոչ միայն դատավարական փաստաթուղթ է, որով ամփոփվում են նախաքննության արդյունքները, ներկայացվում են անձին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը և այն հիմնավորող ապացույցները, այլև հնարավորություն է ընձեռվում ամբաստանյալին (նրա օրինական ներկայացուցչին) կազմակերպելու և իրականացնելու առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ կոնկրետ մեղադրանքի և այն հիմնավորող ապացույցների շրջանակում: Մեղադրական եզրակացությունն իրավական հնարավորություն է ստեղծում նաև գործով շահագրգիռ այլ անձանց՝ ապահովելու իրենց խախտված իրավունքների պաշտպանությունը: ....

Չորրորդ՝ սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և կայացված որոշումները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, այդուհանդերձ, մինչդատական վարույթի արդյունքները կանխորոշում են դատական քննության սահմանները, այսինքն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որը նրան առաջադրվել է մինչդատական վարույթում:

ԱՆՁԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

ՍԴՈ-923, 9 նոյեմբերի, 2010 թ.

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի կողմից վիճարկվող իրավանորմով սահմանված՝ **«անձին լուսանկարներով ճանաչման ներկայացնելը»** քննչական գործողությունը հանդիսանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ **«անձին ճանաչման ներկայացնելը»** քննչական գործողության տարատեսակ՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավանորմը դիտարկել օրենսգրքի՝ «անձին ճանաչման ներկայացնելը» քննչական գործողության իրավական կարգավորմանն առնչվող դատավարական նորմերի համատեքստում:

.... Վերոհիշյալ իրավանորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ խնդրո առարկա քննչական գործողության իրականացման ամենակարևոր և իր բնույթով **պարտադիր** պայմանը՝ համապատասխան դատավարական կարգավիճակ ունեցող՝ քրեադատավարական հարաբերությունների **մասնակցի առկայությունն է՝ որպես ճանաչվող:** Այսինքն՝ անձին ճանաչման ներկայացնելը հանդիսանում է հստակ **անձնավորված և հասցեավորված քննչական գործողություն,** որը կարող է իրականացվել միայն համապատասխան դատավարական կարգավիճակ ունեցող սուբյեկտի առկայության դեպքում և վերջինիս պարտադիր մասնակցությամբ:

5. Օրենսդիրը հնարավոր է համարում անձին ճանաչման ներկայացնել նաև **լուսանկարներով**, որոնցում պատկերված անձինք պետք է իրենց արտաքին հատկանիշներով հնարավորին չափ նման լինեն ճանաչման ենթակա սուբյեկտին: Միաժամանակ, անձին լուսանկարներով ճանաչման ներկայացնելու համար օրենսդիրը որպես նախապայման է դիտարկում համապատասխան **«անհրաժեշտության»** առկայությունը: ....

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավանորմում ամրագրված՝ «անհրաժեշտության դեպքում» բառակապակցության իրավական բովանդակությունն իրավակիրառողի կողմից **պետք է մեկնաբանվի՝ ելակետ ընդունելով քրեական գործի քննության ընթացքում տարբեր փաստական հանգամանքների ուժով համապատասխան անձին ընդհանուր կարգով ճանաչման ներկայացնելու անհնարինության պայմաններում վերջինիս վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաստիությունն ստուգելու անհրաժեշտությունը:** Վերջինս պետք է պատշաճ ձևով հիմնավորվի՝ կամայականությունների տեղիք չտալու համար:

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ

ՍԴՈ–710, 24 հուլիսի, 2007 թ.

8. ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը և քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի են միմյանց հետ: Քրեական գործը նման կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում ըստ էության շրջանցվում է նշված հոդվածում ամրագրված չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը:

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

8. .... ՀՀ Սահմանադրության 21 հոդվածն ամրագրում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ սահմանելով ապացուցման պարտականության բաշխման հիմնական կանոնը, որի համաձայն՝ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքը սերտորեն առնչվում է Սահմանադրության 22 հոդվածի 1–ին մասում ամրագրված՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու պարտականությունից ազատ լինելու սկզբունքին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ անձի դատական պաշտպանության իրավական երաշխիքներն ամրագրող 6–րդ հոդվածը՝ ընդհանրապես, և դրա 2–րդ կետում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի են ոչ միայն ներպետական օրենսդրությանը համապատասխան որպես քրեական հանցանք որակված արարքների առնչությամբ հարուցված վարույթների նկատմամբ, այլև, պայմանավորված տվյալ արարքի բնույթով և նախատեսված

պատասխանատվության տեսակներով ու խստությամբ, կարող են կիրառվել նաև վարչական և կարգապահական պատասխանատվության վարույթների նկատմամբ: Սակայն վարչական կամ կարգապահական պատասխանատվության վարույթների առնչությամբ անմեղության կանխավարկածի և դրա հետ փոխկապակցված «լռելու իրավունքի» կիրառելիության հանգամանքը դեռևս բավարար պայման չէ վիճարկվող նորմը նշված սկզբունքի և իրավունքի ենթադրյալ խախտման տեսանկյունից քննության առարկա դարձնելու համար: Այս առնչությամբ էական նշանակություն ունի «մեղադրանք», «մեղադրվող», «մեղադրվում է» հասկացությունների բովանդակությունը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ «մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես «իրավասու մարմինների կողմից շահագրգիռ անձին ուղղված պաշտոնական ծանուցում առ այն, որ տվյալ անձը ենթադրաբար կատարել է տվյալ իրավախախտումը»: Մեղադրանքը որոշ դեպքերում կարող է դրսևորվել նաև այլ ձևերով, սակայն, էականն այն է, որ այն **պետք է վկայի իրավախախտում կատարած լինելու ենթադրության մասին** (տե՛ս, Օզթուրքն ընդդեմ Գերմանիայի գործով 1984 թ. փետրվարի 21-ի վճիռը, Ozturk v. Germany):

Ըստ վերոգրյալի մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում և 22 հոդվածի 1-ին մասում ամրագրված սահմանադրական սկզբունքների բովանդակությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձն այդ սկզբունքների պաշտպանությունից սկսում է օգտվել միայն այն պահից սկսած, երբ նա տեղեկացվում է, որ իրավասու մարմինները հիմք ունեն ենթադրելու, որ նա կատարել է դատապարտելի արարք: Հետևաբար, անձը չի կարող օգտվել նշված սկզբունքների պաշտպանությունից, քանի դեռ իրավասու մարմինների մոտ չի ծագել ենթադրություն իր կողմից դատապարտելի արարք կատարած լինելու վերաբերյալ, և ինքը չի տեղեկացվել այդ ենթադրության առկայության մասին:

Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի և «քրեական մեղադրանք» հասկացության նշված բովանդակությունից և հաշվի առնելով, որ իրավասու մարմինների կողմից տնտեսավարող սուբյեկտին՝ վիճարկվող նորմում ամրագրված պարտականության կատարման պահանջ ներկայացնելու դեպքում որևէ իրավախախտում կատարած լինելու ենթադրություն դեռևս առկա չէ՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 21 հոդվածով սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքը և դրա հետ փոխկապակցված՝ 22 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու պարտավորություն չկրելու սկզբունքը խնդրո առարկա իրավիճակում կիրառելի չեն:

ՍԴՈ-871, 30 մարտի, 2010 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է հանցագործության կատարման մեջ մեղադրվողին համարել անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքի էությունն անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դատավարության արդյունքում և միայն դատական ակտով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է նաև, որ անձի նկատմամբ կիրառվող դատավարական միջոցները պատժի տարրեր չպետք է պարունակեն, իսկ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բարբերան, Մեսեգեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի գործով (Barbera, Messegue and Jabardo v. Spain 10590/83, կետ 77) 1988 թ. դեկտեմբերի 6-ի 10590/83 վճռում անմեղության կանխավարկածին հաղորդել է հետևյալ բովանդակությունը. «.... 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Այն պահանջում է, ի թիվս այլոց, որ իրենց պարտականությունները կա-

տարելիս դատարանի անդամները չպետք է ունենան կանխակալ կարծիք առ այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի»:

Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի իրավաբանական բովանդակությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել:

6. Անմեղության կանխավարկածի առանձին դրսևորում է «չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու» պահանջը (ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն): ....

Քրեական հետապնդումը դադարեցնելու վիճարկվող հիմքը նույնպես կոչված է իրացնելու անմեղության կանխավարկածի սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ «չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու» սկզբունքը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նշված տեսանկյունից խնդիր կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե իրավական հետևանքի առումով տարբերություն դրվի՝ ապացույցների բացակայության հիմքով, և անձի անմեղությունը հաստատված լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու միջև: Այս առնչությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը նման տարբերակում չի կատարել: Ավելին, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված՝ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման, երբ մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդատական կամ դատական վարույթներում ապացուցված է, և ըստ այդմ, օրենսդիրը մեղադրյալին արդարացվածի կարգավիճակ չի տրամադրում, վիճարկվող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անձին վերապահվում է արդարացվածի կարգավիճակ:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած՝ «....**կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում....»** դրույթը կարող է մեկնաբանվել երկու առումով, առաջին՝ «**չմասնակցությունը, դա չապացուցված մասնակցությունն է»** կամ «**հանցագործության կատարմանը անձի ապացուցված չմասնակցությունն է**», սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առնվող 35-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը պետք է գնահատվի հենց երկրորդ մեկնաբանման տեսանկյունից, քանի որ, ի թիվս այլնի, ՀՀ քր. դատ. օր. 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ արդարացվածն այն անձն է, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կամ որի նկատմամբ **քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով:**

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ անմեղության կանխավարկածն անձին պաշտպանում է ոչ թե քրեական հետապնդման այն հիմքից, որը կասկած է թողնում անձի՝ տվյալ հանցագործությանը մասնակցության առնչությամբ, այլ այնպիսի որոշումներից կամ դրանցում այնպիսի ձևակերպումներից, որոնք կարող են կասկածի ենթարկել տվյալ անձի արդարացումը կամ անմեղությունը: Նշված հանգամանքը գործնականում կարող է ավելի մեծ չափով իրավաբանական նշանակություն ունենալ արդարացված անձին պատճառված վնասի հատուցման իրավունքի կապակցությամբ ընդունվող որոշումների համար: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը վիճարկվող հիմքով արդարացվածին ոչ միայն պաշտպանում է նման հետա-

գա ոչ իրավաչափ որոշումներից, այլ պաշտպանում է նաև հենց քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ այնպիսի ձևակերպումներ նախատեսելուց, որոնք կարող են կասկածի ենթարկել անձի արդարացումը կամ անմեղությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս չի թույլատրվում որոշման մեջ տալ ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կդնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Հաշվի առնելով, որ վիճարկվող հիմքով քրեական հետապնդման դադարեցման և քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված արդարացնող այլ հիմքերով քրեական հետապնդման դադարեցման միջև իրավունքի տեսանկյունից որևէ որակական տարբերություն օրենսդրությունը չի նախատեսում, ինչպես նաև նկատի ունենալով, որ օրենսդրությունը նախատեսում է պաշտպանություն ընդդեմ այն ակտերի, որոնք կարող են կասկածի ենթարկել վիճարկվող հիմքով անձի արդարացումը կամ նրա անմեղությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով վիճարկվող հիմքն իրավակիրառական պրակտիկայում համարժեք իրացման դեպքում չի կարող վտանգել անձի անմեղության կանխավարկածը:

8. .... Վկայակոչված դրույթների և քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր հասկացությունների (մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 42-րդ կետ) համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, ինչը հավասարազոր է անձի անմեղության փաստի հաստատման, իսկ դատաքննության փուլում ապացույցների անբավարարության հանգամանքը նաև արդարացման դատավճիռ կայացնելու հիմք է:

ՍԴՈ-931, 28 սեպտեմբերի, 2010 թ.

8. .... Համաձայնելով արագացված դատաքննությանը՝ ամբաստանյալը նաև կամովին հրաժարվում է մի շարք սահմանադրաիրավական երաշխիքներից, այն է՝ անմեղության կանխավարկածի սկզբունք, գործի հրապարակային քննության և այլ իրավունքներ: Մյուս կողմից՝ մեղադրողը հրաժարվում է մեղադրանքը պաշտպանելու իր գործառույթը լրիվ ծավալով իրականացնելուց՝ դրանով հնարավորություն ստանալով տնտեսել իր միջոցները, ինչպես նաև մեղադրյալին (ամբաստանյալին) խրախուսել համագործակցելու քրեական հետապնդման մարմինների հետ:

ՍԴՈ- 1252, 26 հունվարի, 2016

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի իրավունքները սահմանված են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 65-րդ և 66-րդ հոդվածներով:

ՀՀ Սահմանադրության՝ «Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը» վերտառությամբ 65-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»:

ՀՀ Սահմանադրության՝ «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 66-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքները համանման կարգավորմամբ ամրագրված էին նաև 2005 թվականի նոյեմբերի 27–ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 21–րդ և 22–րդ հոդվածներով:

.... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքներն օրենսդիրն ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, մասնավորապես՝ «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 18–րդ հոդվածով և «Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը» վերտառությամբ 20–րդ հոդվածով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում են վերոհիշյալ իրավունքների իրացման ապահովման այլ երաշխիքներ ևս: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ցուցմունքներ տալը կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելը, բացատրություններ տալը կամ բացատրություններ տալուց հրաժարվելն ամրագրվել են որպես կասկածյալի (63–րդ հոդվածի 2–րդ մասի 7–րդ և 8–րդ կետեր) և մեղադրյալի (65–րդ հոդվածի 2–րդ մասի 6–րդ և 7–րդ կետեր) իրավունքներ: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է կասկածյալին (211–րդ հոդվածի 3–րդ մաս) և մեղադրյալին (212–րդ հոդվածի 8–րդ մաս) նրանց իրավունքները՝ ներառյալ ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը, հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչի կողմից բացատրելու, ինչպես նաև վկային իր, ամուսնու կամ իր մերձավոր ազգականների դեմ չվկայելու իր իրավունքի մասին առերեսման սկզբում քննիչի կողմից նախազգուշացնելու (216–րդ հոդվածի 2–րդ մաս) և իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ վկայելուց հրաժարվելու նրա իրավունքը հարցաքննությունից առաջ նախագահողի կողմից պարզաբանելու (339–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետ) իրավական պահանջները:

Պետք է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Ցուցմունք տալուց հրաժարվելը» վերտառությամբ 339–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանվում է, որ՝ «Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից»:

Համադրելով վերոգրյալը սույն գործով դիմողի այն եզրահանգման հետ, համաձայն որի՝ **ՀՀ քրեական օրենսգրքի** սույն գործով վիճարկվող **244–րդ հոդվածն «առաջացնում է սահմանադրականության խնդիր,** այնքանով որքանով այն հակասում է անձի՝ իր դեմ ցուցմունք չտալու սկզբունքին, ինչպես նաև անմեղության կանխավարկածին», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխավորվածության և ապահովման անմիջական կարգավորումը դուրս է ՀՀ քրեական օրենսդրության և, բնականաբար, նաև սույն գործով վիճարկվող իրավակարգավորման առարկայի շրջանակից: Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքները՝ համակարգային ամբողջականության մեջ ապահովվում են ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ:

ՍԴՈ–1270, 3 մայիսի, 2016 թ.

8. Անդրադառնալով դիմողների այն դիրքորոշմանը, որ վիճարկվող իրավադրույթը հակասության մեջ է մտնում **անմեղության կանխավարկածի** հետ, ՀՀ սահմանադրական դատարանը նշում է, որ ՀՀ Սահմանադրության 66–րդ հոդվածի համաձայն հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով

սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով և, հետևաբար, առավելապես վերաբերում է քրեական դատավարությանը:

ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ՉԴԱՏՎԵԼԸ

ՍԴՈ–733, 5 փետրվարի, 2008 թ.

5. .... Պատժից ազատելու պայմանական բնույթը պայմանավորում է մեկ այլ առանձնահատկություն ևս (այս առանձնահատկությունը վերաբերում է նաև ՔՕ 78 հոդվածով նախատեսված՝ պատժից ազատելու ձևին), այն է՝ եթե պատժից ազատելու մյուս ձևերի կիրառման արդյունքում վերացվում են կատարված հանցագործության բոլոր հետևանքները, ապա պատժից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալը մինչև դատարանի կողմից նշանակված պատժաժամկետի ավարտը շարունակում է համարվել դատվածություն ունեցող, ինչը հաշվի է առնվում փորձաշրջանում հանցագործություն կատարելու դեպքում պատիժ նշանակելիս (պատիժ նշանակվում է դատավճիռների համակցությամբ (ՔՕ հոդված 67)):

ՍԴՈ–882, 11 մայիսի, 2010 թ.

5. .... Ինչպես շատ պետություններ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունն իրեն հռչակելով որպես իրավական պետություն, իր Սահմանադրությունում հստակ սահմանել է հետևյալ դրույթը. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են» (3–րդ հոդվածի 1–ին մաս): Սրանից էլ բխում են Սահմանադրության նույն հոդվածի 2–րդ և 3–րդ մասերով ամրագրված նորմերը. «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Քրեական պատասխանատվության միջոցների կիրառումն արդարացված է Սահմանադրության 43–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված՝ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներից է նաև Սահմանադրության 22–րդ հոդվածի 7–րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար, և որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ ենթակա չէ սահմանափակման (անգամ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում): ....

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգիրքը հանցակազմի ընդհանուր սուբյեկտներից առանձնացնում է **հատուկ սուբյեկտներին**: Սուբյեկտի այս տեսակը, բացի երեք պարտադիր հատկանիշներից (ֆիզիկական անձ, մեղսունակություն և քրեական պատասխանատվության ենթարկելու տարիք), բնութագրվում է նաև ոչ պարտադիր հատկանիշներով, որոնք նախատեսված են օրենսգրքի Հատուկ մասի նորմերով: Սուբյեկտի ոչ պարտադիր հատկանիշները կամ ուղղակի նախատեսված են համապատասխան հանցակազմի դիսպոզիցիայում, կամ սահմանվում են մեկնաբանության միջոցով (օր.՝ պաշտոնատար անձի հասկացությունը՝ 308–րդ հոդվածի 3–րդ մասում): Հատուկ սուբյեկտն իր պաշտոնեական, ծառայողական կամ մասնագիտական գործունեության բերումով հանրորեն վտանգավոր այնպիսի գործողություն (անգործություն) կատարող անձն է (օր.՝ պաշտոնատար անձը, զինծառայողը, բժիշկը, դատավորը, դատախազը և այլն), որպիսին չեն կարող

կատարել այլ անձինք: Այդպիսի անձանց հատուկ սուբյեկտներ ճանաչելը բխում է ոչ թե նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից, որը կհակասեր օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 1-ին մաս և օրենսգրքի 6-րդ հոդված), այլ, որովհետև հանրորեն վտանգավոր նման արարքները կարող են կատարվել միայն այդ անձանց կողմից:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ նույն արարքի համար կրկին անգամ դատվելը բացառելու սկզբունքն այն ձևով, ինչպես սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ և կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքով, բացառում է անձին կրկնակի դատապարտելն ու պատժելը միևնույն հանցագործության համար, ինչպես նաև միևնույն հանցավոր արարքի որակումն օրենսգրքի մի քանի հոդվածով, եթե դրանցում պարունակվող նորմերը հարաբերակցվում են որպես Ընդհանուր և Հատուկ մասերի նորմեր կամ մաս և ամբողջություն:

9. Նույն արարքի համար անձին կրկին անգամ դատելու սահմանադրական արգելքին և նույն արգելքն ամրագրած՝ ՀՀ ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող համապատասխան միջազգային պայմանագրերին համահունչ է օրենսգրքում ամրագրված այն սկզբունքը, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար (հոդված 10):

Դա նշանակում է, որ հիշյալ սկզբունքը չի արգելում ինչպես օրենսդրին՝ ՀՀ քրեական օրենսդրությունում ամրագրել դատվածության և դրա հետ կապված կրկնակիության ու ռեցիդիվի ինստիտուտները՝ քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքներով հանդերձ, այնպես էլ դատարանին՝ հանցանք կատարած անձի պատժի տեսակն ու չափը սահմանված ձևով որոշելու գործընթացում հաշվի առնել հանցագործության բնույթը, դրա հասարակական վտանգավորությունը, հաճախականությունը, դրդապատճառները և այլ հանգամանքները, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները:

Այսպիսով, **չհանված կամ չմարված դատվածություն ունեցող անձի կողմից** նոր նույնաբնույթ հանցագործություն կատարելը որպես արարքը որակյալ դարձնող կամ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դիտելը չի կարող համարվել նախկինում կատարած արարքի համար «կրկին անգամ դատվել», ինչպես նաև օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում: Առավել ևս, կրկնակիությանն առնչվող բոլոր այն դեպքերը, որոնք կապված չեն դատվածության հետ, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում: ....

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան այն ուղղությամբ, որ շեշտը դնելով ոչ թե հանցանքի որակման, այլ պատժի տարրերի վրա՝ կատարելագործվեն ռեցիդիվի ինստիտուտը կանոնակարգող իրավանորմերը՝ իրենցում ներառելով նաև նախկին դատվածությանն առնչվող քրեաիրավական հետևանքները:

ՍԴՈ-1236, 17 նոյեմբերի, 2015 թ.

7. Անդրադառնալով վիճարկվող նորմերի իրավակարգավորման շրջանակներում կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել իր՝ ՍԴՈ-1139 որոշմամբ այդ սկզբունքի սահմանադրաիրավական բո-

վանդակության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «....Այդ սկզբունքն իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելը, դատելը և քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրաիրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեաիրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել: Այդ սկզբունքը նաև բացառում է միևնույն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, արգելում է նաև միևնույն հանգամանքը հաշվի առնել ինչպես հանցանքը որակելիս, այնպես էլ պատժի տեսակն ու չափն ընտրելիս (ՀՀ քր. օր. 10, 63, 104-րդ հոդվածներ): Այսպիսով, նախկինում հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն դատվել է, չի կարող նրա հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ, «բացառությամբ այն դեպքերի», ինչպես վճռել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել արդյունքի վրա» (Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի գործով 2004 թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ, գանգատ թիվ 50178/99)»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ իրավահարաբերության շրջանակներում գործի նյութերի վերաբերյալ պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ**՝ չխոչընդոտելով դատախազական հսկողության իրականացմանը, ինչպես նաև մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների արագ և արդյունավետ պաշտպանությանը:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազին բացառիկ իրավունք է վերապահված վերոհիշյալ որոշումների օրինականության վերաբերյալ կայացնելու **վերջնական որոշում,** որն իրավական լուրջ երաշխիք է մինչդատական վարույթի շրջանակներում թե՛ այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու, ծագած իրավական այս կամ այն խնդիրը վերջնական հանգուցալուծելու և թե՛անձանց իրավունքները ողջամիտ ժամկետներում պաշտպանելու ուղղությամբ: Հետևաբար, վիճարկվող նորմերը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում ընկալվելու, մեկնաբանվելու և կիրառվելու դեպքում չեն կարող հանգեցնել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտմանը և դատախազական հսկողության խոչընդոտմանը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՍԴՈ-1020, 11 ապրիլի, 2012 թ.

6. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Այդ իրավունքը երաշխավորված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա), որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Ընդ որում, այդ իրավունքի իրացման նվազագույն և կարևոր երաշխիքներն են՝ **հրապարակային դատաքննությունը** (մասնավորապես՝ գործը քննող դատարանի, քննության առարկա գործի, քննության վայրի, ժամանակի, դատաքննության կարգի և այլնի մասին հրապարակային տեղեկությունները), ինչպես նաև **դատական ակտի պարտադիր հրապարակումը**:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում պետության խնդիրն է օրենսդրությամբ ապահովել արդարադատության իրականացումն ընթացակարգային այնպիսի կանոններով, որոնցով երաշխավորվեն հրապարակային դատաքննության իրավունքի իրացման անհրաժեշտ իրավական պայմաններ, այդ թվում՝ նաև դատարանում գործերի քննության դատավարական ձևերի բազմազանության կիրառմամբ, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից և դրանց արդար, արագ ու արդյունավետ լուծման անհրաժեշտությունից: Վերջինիս նպատակով է պայմանավորված գործերի դատաքննության ընթացակարգային այնպիսի ձևերի առկայությունը, ինչպիսիք են դատաքննության **բանավոր և գրավոր ընթացակարգերը** կամ բանավորության և գրավոր քննության սկզբունքները: Գրավոր ընթացակարգի պայմաններում գործի քննությունն իրականացվում է առանց «բանավոր լսումների»՝ առանց կողմերի ուղղակի մասնակցության, որը պայմանավորված է դատավարական մի շարք առանձնահատկություններով:

7. Դատաքննության գրավոր ընթացակարգի ինստիտուտը ՀՀ իրավահամակարգում ներդրված է սահմանադրական, ինչպես նաև վարչական արդարադատության բնագավառներում և կոչված է երաշխավորելու արդար, հրապարակային դատաքննություն որոշակի առանձնահատուկ գործերով և հանգամանքներում: Վարչական դատավարության շրջանակներում գրավոր ընթացակարգով քննություն կարող է կազմակերպվել գործով կողմերի կամաարտահայտմամբ կամ դատարանի նախաձեռնությամբ՝ որոշակի հիմքերի առկայության դեպքերում: Այդ ընթացակարգը վարչադատական գործերով կիրառվում է արագացված դատաքննություն իրականացնելիս (ՀՀ վարչ. դատ. օր. 108-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), վարչական դատարանի ակտերի դեմ (այդ թվում՝ միջանկյալ) բերված վերաքննիչ բողոքներ քննելիս (ՀՀ վարչ. դատ. օր. 117.10-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր), վերաքննիչ դատարանի կողմից վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները վճռաբեկության կարգով վերանայելիս (ՀՀ վարչ. դատ. օր. 118-րդ հոդվածի 3-րդ մաս), նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործեր քննելիս (այդ թվում՝ ՀՀ վարչ. դատ. օր. 147-րդ հոդվածում նախատեսված գործերով), բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը (ՀՀ վարչ. դատ. օր. 138-րդ հոդված), ինչպես նաև վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցադիմում քննելիս (ՀՀ վարչ. դատ. օր. 158-րդ հոդվածի 1-ին մաս):

Հարկ է նշել, որ ի տարբերություն օրենսգրքի վերը հիշատակված հոդվածներում ամփոփված գրավոր քննության կանոնների, բանավոր քննության կանոնները կամ վարչական դատարաններում դատաքննության ընդհանուր կարգը (համակարգված նորմերի ձևով) նախատեսված է օրենսգրքի 16-րդ գլխում:

8. .... Պետք է նկատի ունենալ նաև, որ նույնիսկ բանավոր քննության դեպքերում էլ գործի հանգամանքների պարզումը դատարանում ընթանում է ոչ միայն «բանավոր լսումների» կազմակերպման, այլև **գրավոր ապացույցների ուսումնասիրման միջոցով**: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում **բանավոր քննության սկզբունքը բացարձակ չէ**:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով առաջադրված հարցերը, ըստ դիմող կողմի արտահայտած դիրքորոշումների ընդհանուր բովանդակության, պահանջում են բացահայտել նաև գրավոր դատաքննության և բանավորության սկզբունքների, ինչպես նաև հասարակության համար արդարադատության մատչելիության սկզբունքի կիրառելիության փոխառնչությունների իրավական բովանդակությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ դատաքննության գրավոր ընթացակարգի և դատաքննության հրապարակայնության սկզբունքների «կարծեցյալ բախումը» հատկապես ակներև է այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում նախատեսված հրապարակային քննության երաշխիքի համատեքստում բանավորության սկզբունքը բացառող ցանկացած իրավադրույթ միայն առերևույթ կարող է վիճահարույց թվալ: Սակայն դատաքննության գրավոր ընթացակարգի կիրառումն արդարադատության հիմնարար սկզբունքների իրականացման երաշխիքների խախտում չի կարող դիտվել՝ կողմերի համաձայնությամբ այն իրականացվելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այն դեպքերում, երբ անհրաժեշտ չէ լսել փորձագետին, հարցաքննել վկաներին, կատարել զննում, տալ դատական հանձնարարություններ (ՀՀ վարչ. դատ. օր. 108-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 117.10-րդ հոդվածի 5-րդ մաս): Մյուս կողմից՝ գրավոր քննությունը բացառվում է, երբ բանավոր քննություն անցկացնելու վերաբերյալ առկա են օրենքով հստակ նախատեսված պարտադիր հանգամանքներ: Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ գրավոր ընթացակարգով դատաքննությունը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, չի կարող մեկնաբանվել որպես ոչ հրապարակային սկզբունքով արդարադատության իրականացում, առավել ևս՝ մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի նորմատիվ պայմանների անտեսման միջոց, եթե այն իրականացվում է հստակ սահմանված ընթացակարգով՝ երաշխավորելով դատաքննության մասնակիցների իրավունքների արդյունավետ իրացումը:

.... Այստեղից հետևում է, որ իրավունքի հարց քննելիս վարչական դատարանը պարտավոր լինելով պահպանել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված արդարադատության հրապարակայնության սկզբունքը, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, իրավասու է, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ պարտավոր է, մի դեպքում կիրառել (հասարակության համար գործի քննության հանգամանքներն առավել մատչելի դարձնելու նպատակով) կամ չկիրառել այդ սկզբունքի առավել լայն կիրառման միջոցներ, մյուս դեպքում՝ կազմակերպել առավել արագ ու արդյունավետ դատաքննություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոթվարկյալ բոլոր դեպքերում էլ օրենսդիրը վարչական դատարանին պարտավորեցրել է՝ անկախ քննվող գործի առանձնահատկությունից և գրավոր քննությամբ գործը լուծելու հիմք հանդիսացող այլ հանգամանքներից, **անվերապահ իրականացնել գործերի արդար, արդյունավետ և հրապարակային քննություն,** հետևաբար՝ այդպիսի իրավակարգավորումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

11. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև գրավոր սկզբունքով քննվող գործերով դատավարության մասնակիցների իրավունքների երաշխավորման խնդիրը դիտարկել այդ իրավունքների իրականացման առանձնահատկությունների և դատական հայեցողության շրջանակներում դրանց դրսևորման հնարավորությունների համատեքստում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ, ի տարբերություն բանավոր ընթացակարգի (օրենսգրքի 16-րդ գլուխ), ինչպես նաև ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկայի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում որոշակիացված և համակարգված չեն գրավոր քննության կանոնները: Դրանց բացակայությունը, թեև սահմանադրականության խնդիր անմիջականորեն չի առաջացնում, սակայն անձանց իրավունքների, ինչպես նաև արդար և հրապարակային դատաքննության երաշխավորմանն արգելք կարող է հանդիսանալ: Այդպիսի քննության շրջանակներում անձանց՝ օրենսգրքով երաշխավորված դատավարական իրավունքների իրականացման իրավական հնարավոր (հստակ կանխատեսելի) մի-

ջոցներն անորոշ են և կարող են ըստ էության լուծվել դատարանի բացարձակ հայեցողության շրջանակներում:

.... Հետևաբար, ելնելով վիճարկվող նորմերի և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունից, համադրելով ՀՀ վարչական արդարադատության բնագավառում գրավոր քննության ընթացակարգի ընդհանուր իրավակարգավորումն արդար և հրապարակային դատաքննության իրավունքի ու դրա երաշխավորման ընթացակարգային ձևերի կիրառման միջազգային իրավական պրակտիկայում ամրագրված սկզբունքներին ու մոտեցումներին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի նորմատիվ ընդհանուր բովանդակության հետ, միաժամանակ անհրաժեշտ համարելով օրենսդիր մարմնի կողմից ՀՀ վարչական դատավարությունում առկա բացի լուծումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

5. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ, ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

7. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 1–ին մասի 1–ին կետի ուժով օրենքի I բաժնի գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա: Օրենքի 1–ին բաժնի 10–րդ հոդվածը, որպես վարչարարության սկզբունք, սահմանում է «հավաստիության կանխավարկածի» սկզբունքը: Վերջինիս նպատակը վարչական մարմինների և անձանց միջև փոխվստահության ձևավորումն է, ինչպես նաև նրանց միջև իրավահավասարության ամրապնդումը: ....

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկատուի կողմից հարկերի վճարման իր սահմանադրական պարտականության բարեխիղճ կատարման նպատակով համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու փուլում գործում է հավաստիության կանխավարկածի սկզբունքը: Ներկայացված փաստաթղթերի կապակցությամբ վարչական մարմնի մոտ կասկած ծագելու դեպքում է միայն, որ ներկայացված տվյալների ոչ հավաստի լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Այսինքն՝ տվյալ դեպքում վարչական մարմնի կողմից ապացուցման բեռը կրելու պարտականություն կարող է ծագել միայն այն դեպքում, եթե հարկատուն փաստաթղթեր ներկայացնելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը կատարել է:

Ինչ վերաբերում է վարչական վարույթի ընթացքում ապացուցման բեռի բաշխմանը, ապա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածի 2–րդ մասի ուժով գործում է նույն օրենքի 43 հոդվածը: Վերջինս վարչական վարույթում ապացուցման պարտականության բաշխում է կատարում՝ ելնելով նրանից, թե վարույթի ընթացքում ընդունվող ակտը վերջինիս համար բարենպաստ, թե ոչ բարենպաստ փաստական հետևանքներ է ունենալու: Ըստ այդմ, վարչական վարույթում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ վերջինիս համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, և վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների դեպքում: Օրենսդրական նման կարգավորումը նկատի է առնում, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությունը հնարավոր չէ վերապահել վարչական մարմնին, քանի որ, որպես կանոն, շահագրգիռ անձն է տեղյակ իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայությանը, և նա է տիրապետում այդ հանգամանքներն ապացուցող տվյալների: Չնայած այն հանգամանքին, որ ստուգումը բարենպաստ ընթացակարգ չէ մասնավոր անձի համար, սակայն դրա շրջանակում իր հարկային արտոնությունները հիմնավորող փաստերը նրա դրությունը բարելավող, նրան արտոնող փաստական հանգամանքներ են, որոնց ապացուցման պարտականությունը կրում է ինքը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ համաձայն գործի նյութերի՝ իրավակիրառական պրակտիկայում հստակ չի տարանջատվում ապացուցման պարտականությունը վարչական վարույթում, և ապացուցման բեռը՝ վարչական դատավարությունում: Վարչական վարույթում ապացուցման պարտականությունը թեև ընդհանուր աղերսներ ունի վարչական դատավարությունում ապացուցման բեռի հետ, այն նույնական չէ վերջինիս հետ: Նմանությունն այն է, որ երկուսն էլ ունեն օբյեկտիվ բնույթ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, և երկուսն էլ վերաբերում են ապացուցման հարցի լուծմանը՝ ապացուցողական անորոշության առաջացման դեպքերում: Սակայն վարչական դա-

տավարությունում օրենսդրական լուծումներն այլ են՝ այստեղ խոսքը փաստական հանգամանքների բարենպաստ կամ ոչ բարենպաստ լինելու մասին չէ, այլ առավելապես վարչական մարմնի կարգավիճակ ունենալու մասին է, այն էլ ոչ բոլոր հայցատեսակների դեպքում (Վարչական դատավարության օրենսգրքի 26 հոդվածի 3-րդ մաս):

ՍԴՈ-845, 8 դեկտեմբերի, 2009 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն ըստ էության վիճարկում է ոչ թե օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի դրույթն ամբողջությամբ, այլ խնդրո առարկա դրույթում տեղ գտած՝ «գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը» բառակապակցությունը:

Օրենսգիրքն ապացուցման պարտականությանը և ապացուցման առարկային անդրադարձել է 48 հոդվածում, ըստ որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ինքն ապացուցի իր վկայակոչած փաստերը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Սակայն գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված ապացույցներն ինքնին չեն կազմում ապացուցման առարկա: Ապացուցման առարկա են կազմում միայն գործին մասնակցող անձանց կողմից ներկայացված այն ապացույցները, որոնք գործի լուծման համար էական նշանակություն ունեն:

Օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասով ըստ էության նախատեսվում է ապացուցման առարկայի շրջանակներն ուրվագծելու՝ դատարանի իրավասությունը: Ապացուցման առարկան այն իրավաբանական (հիմնականում նյութաիրավական բնույթի) փաստերի համակցությունն է, որոնք էական նշանակություն ունեն գործն ըստ էության լուծելու համար, և ենթակա են պարզելու դատական քննության ընթացքում: Յուրաքանչյուր գործով ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերի կազմը տարբեր է, այն կախված է կողմերի ներկայացրած պահանջներից ու առարկություններից:

Ապացուցման առարկայի մեջ մտնող նյութաիրավական փաստերը հանգամանքներ են, որոնց առկայության կամ բացակայության հետ նյութական իրավունքի նորմերը կապում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը, դադարումը, կամ որոնք արգելակում են իրավունքների և պարտականությունների առաջացմանը: Գործով այս փաստերը պարզելն անհրաժեշտ է տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման և գործն ըստ էության ճիշտ լուծելու համար: Դա էլ հաշվի առնելով որոշվում է ապացուցման առարկան, որն ապացուցողական գործունեության առաջին և ամենակարևոր դատավարական գործողությունն է: Դատարանի վճիռը չի բխի գործի փաստական հանգամանքներից, հետևաբար՝ օրինական ու հիմնավորված լինել չի կարող, եթե գործին մասնակցող անձինք և դատարանը ճիշտ չորոշեն ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքների շրջանակը և լրիվ չպարզեն դրանք:

Փաստական հանգամանքների այդ ամբողջությունը, որն անհրաժեշտ է նաև այլ իրավական հարցեր լուծելու համար, յուրաքանչյուր գործով ենթակա է պարտադիր պարզաբանման: Գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքների այդ ամբողջությունը կազմում է ապացուցման առարկայի հիմնական բովանդակությունը: Բայց դա դեռ բավարար չէ ամեն մի գործով քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար: Ապացուցման առարկան ավելի լայն հասկացություն է, դրա մեջ մտնում են նաև այն փաստական հանգամանքները, որոնց պարզաբանումն անհրաժեշտ է գործին ճիշտ լուծում տալու համար:

Յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքների ճիշտ սահմանումն անհրաժեշտ պայման է դատաքննության սահմանները որոշելու համար: Ապացուցման առարկայի շրջանակների անհիմն ընդարձակումը կարող է գործը ծանրաբեռնել ավելորդ նյութերով, որը պատճառ կհանդիսանա գործին չվերաբերող նյութերի կուտակմանը, դատավարության ձգձգմանը: Մյուս կողմից՝ ապացուցման առարկայի շրջանակների անհիմն սահմանափակումը կարող է պատճառ դառնալ գործի միակողմանի, ոչ լրիվ և ոչ օբյեկտիվ քննության համար:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապացուցման ինստիտուտը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48–53 հոդվածներով: Այն ոչ միայն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու նախապայման է, այլև դատաքննության մրցակցության սկզբունքի իրականացման կարևոր երաշխիք: Ապացույցները ներկայացնելու և պահանջելու կարգը նախատեսված է օրենսգրքի 49 հոդվածում, ըստ որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ինքը ներկայացնի ապացույցներ, որից հետևում է, որ կողմերից յուրաքանչյուրն իրավասու է հայցի առարկայի շրջանակներում դատարանին ներկայացնել իր դիրքորոշման ճշմարտացիությունը հիմնավորող փաստարկներ (ապացույցներ): Ընդ որում, եթե տվյալ անձը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան: Օրենսգրքի 51 հոդվածը վերաբերում է ապացույցների թույլատրելիությանը և վերաբերելիությանը, իսկ 52 հոդվածը սահմանում է ապացուցելուց ազատվելու հիմքերը:

Ըստ օրենսգրքի 53 հոդվածի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այն հարցը, թե ով պետք է դատարանին ներկայացնի որոնվող փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստական տվյալները, թե դատավարության մասնակիցներից ում վրա է ընկնում ապացուցման ծանրությունը և հաստատման պարտականությունը՝ կարևոր է ապացուցումը ճիշտ կազմակերպելու և ապացուցողական նյութի լրիվությունն ապահովելու համար: Օրենսգրքում դա լուծվել է դատավարության մրցակցային ձևի պայմաններում կողմերի իրավահավասարության, անմիջականության և դատավարության ընդհանուր սկզբունքներից ելնելով, հաշվի առնելով տվյալ փաստն ապացուցելու մեջ կողմերի շահագրգռության աստիճանը:

....

7. .... Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա է դատարանի կողմից որոշվում ապացուցման ենթակա հանգամանքների ծավալը: Ընդ որում, նման որոշումը կայացվում է ապացուցման գործընթացի առաջին՝ ապացույցների հավաքման փուլում և նպատակ է հետապնդում ապահովելու դատավարության արդյունավետությունը:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը դատարանի կողմից ամենևին էլ չի նշանակում կողմերի իրավահավասարության կամ մրցակցության սկզբունքների խախտում, առավել ևս կողմերի միջև ապացուցման պարտականության անհավասար բաշխում: Ընդհակառակը, դրանով դատարանը կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կհաստատեն իրենց պահանջներն ու առարկությունները, հետևաբար, փաստական հիմք կստեղծեն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու համար:

Վերոշարադրյալից հետևում է, որ.

– դատարանն ապացույցներ չի հավաքում (ներկայացնում), այլ դատավարական պայմաններ (հնարավորություններ) է ստեղծում դրանք ժամանակին և անկաշկանդ ներկայացնելու համար,

– կողմերը (գործին մասնակցող անձինք) իրենք են ապացուցում այն, ինչ պնդում կամ առարկում են,

– ապացուցման գործընթացը, որպես քաղաքացիական գործով ըստ էության օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու առանձնահատուկ երաշխիք, որպես կանոն, տեղի է ունենում առաջին ատյանի դատարանում,

– գործով ներկայացված ապացույցների գնահատման կամ գործով արդարացի, հիմնավոր վճիռ (որոշում) կայացնելու հիմքում այս կամ այն ապացույցի նշանակությունը գնահատելու բացառիկ լիազորությունը պատկանում է դատարանին,

– ապացուցման գործընթացը (այդ ինստիտուտի իրավակարգավորումը) առանձնահատուկ է հանրային-իրավական վեճերով, պայմանավորված՝ մասնավոր-իրավական շահերի նկատմամբ հանրային շահի գերակայությամբ, հետևաբար՝ մրցակցության սկզբունքի դրսևորման առանձնահատկությամբ:

8. Ապացույցները ներկայացվելուց հետո է միայն դատարանն անցնում դրանց գնահատմանը, որտեղ որոշվում է ձեռք բերված ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը: Օրենսգրքի 51 հոդվածը վերաբերում է ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության սկզբունքներին: Նշված երկու սկզբունքները բացառում են օրենքով սահմանված ապացույցներից դուրս այլ ապացույցներ դատարանին ներկայացնելու հնարավորությունը (թույլատրելիություն), ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերին չվերաբերող անհարկի և ավելորդ ապացույցներով դատարանին ծանրաբեռնելու հնարավորությունը (վերաբերելիություն): Միաժամանակ, նշված սկզբունքները կոչված են ապահովելու արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի իրացումը:

Ապացույցների վերաբերելիությունը ներկայացված փաստերում պարունակող այն տեղեկություններն են, որոնց հիման վրա հաստատվում կամ հերքվում է գործով ապացուցման ենթակա այս կամ այն հանգամանքը: Որոշել ապացույցների վերաբերելիությունը, նշանակում է պարզել ապացույցների բովանդակության և նրանցով հաստատվող փաստերի միջև եղած օբյեկտիվ կապը:

Ապացույցների թույլատրելիությունը՝ վերաբերելիության ընդհանուր կանոնի լրացումն է, ըստ որի գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Բոլոր այն դեպքերում, երբ դատարանն իր ներքին համոզմամբ գտնում է, որ **կողմերի ներկայացրած ապացույցներն անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար կամ դրանք ուղղված են այնպիսի փաստերի ապացուցմանը, որոնք շեղվում են գործից** և **առնչություն չունեն վերջինիս հետ, կամ ներկայացված են տվյալ գործի քննության համար օրենքով չնախատեսված ապացույցներ,** օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի վիճարկվող բառակապակցության ուժով դատարանին հնարավորություն է ընձեռվում դուրս թողնել դրանք ապացուցման առարկայի շրջանակներից: **Դատարանին վերապահված՝ վերը նշված իրավասությունն իրավաչափ է** և **բխում է արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի էությունից:**

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է հանցագործության կատարման մեջ մեղադրվողին համարել անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքի էությունն անձի մեղքը բացառապես դատական կարգով հաստատելու երաշխավորումն է, այսինքն՝ այս սկզբունքի ուժով անձի մեղքը կարող է հաստատվել բացառապես քրեական դատավարության արդյունքում և միայն դատական ակտով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը պահանջում է նաև, որ անձի նկատմամբ կիրառվող դատավարական միջոցները պատժի տարրեր չպետք է պարունակեն, իսկ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:

8. .... ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ինստիտուտի գոյությունն առավելապես իմաստավորվում է մրցակցային դատավարության սկզբունքի կիրառման շրջանակներում՝ անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ ապացուցման պարտականությունը կրողի կողմից հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցության չապացուցելը հավասարազոր է անձի անմեղության ճանաչմանը: Իսկ իրավակիրառական պրակտիկան հետևողականորեն պետք է իրացնի ՀՀ քր. դատ. օր. 261-րդ հոդվածի վերոհիշյալ պահանջը:

ՍԴՈ–872, 2 ապրիլի, 2010 թ.

7. .... ՀՀ քր. դատ. օր. 125-րդ հոդվածը նախատեսում է, որ ապացույցները ձեռք են բերվում հետաքննության, նախաքննության և **դատական քննության ընթացքում**՝ սույն օրենսգրքով նախատեսված **քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով:** Միաժամանակ, օրենսգրքի 310-րդ հոդվածը քրեական գործի քննությունը հետաձգելու հիմք է սահմանում նաև դատարանի նախաձեռնությամբ նոր ապացույցներ պահանջելու անհրաժեշտությունը: Իսկ օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «....-Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար»: Չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերափոխումների արդյունքում այս մոտեցումները նույնպես կարող են վերանայվել՝ մրցակցային դատավարության սկզբունքի առավել ամբողջական ու լիարժեք արմատավորման տեսանկյունից, այսուամենայնիվ, գործող իրավակարգավորման շրջանակներում ակնհայտ է, որ դատարանը կարող է իրականացնել ցանկացած դատավարական գործողություն ապացույցների ձեռքբերման նպատակով՝ առանց որևէ սահմանափակման:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև օրենսգրքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջն այն մասին, որ՝ «....Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ»: Հետևաբար, եթե քրեական գործի դատաքննության ընթացքում ի հայտ են եկել նոր հանգամանքներ, ապա դրանց գնահատումը դատարանի պարտականությունն է:

ՍԴՈ–891, 1 հունիսի, 2010 թ.

6. .... Բացի դրանից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակության որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք հանդես են գալիս որպես ստորադաս դատարանների և մյուս իրավակիրառողների կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների միատեսակ ընկալման և միատեսակ կիրառման երաշխիք: Նշված որոշումների մի մասով վճռաբեկ դա-

տարանը բեկանել է ստորադաս դատարանների դատական ակտերը՝ ապահովելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի հիմքով աշխատանքից ազատված անձանց իրավունքների վերականգնումը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 26.10.2006 թ. թիվ 3-1775 (ՎԴ), 26.10.2006 թ. թիվ 3-1880 (ՎԴ) և 26.01.2007 թ. թիվ 3-34 (ՎԴ) քաղաքացիական գործերով բացահայտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների կիրառման ոլորտում ստորադաս ատյանների հետևյալ դատական սխալները.

– գործատուի մոտ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանքի բացակայության վերաբերյալ գործատուի բացատրությունները և գրությունները չեն հանդիսանում թույլատրելի ապացույցներ,

– գործատուի մոտ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանքի բացակայության վերաբերյալ թույլատրելի ապացույցներ են հանդիսանում, օրինակ, կազմակերպության աշխատողների թվաքանակը և պաշտոնների անվանումները սահմանող փաստաթղթերն այն մասին, որ գործատուի մոտ առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանք,

– գործատուն կրում է անուղղակի ապացուցման պարտականություն աշխատողի հանդեպ նրան արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքից ազատելիս ապացուցելու, որ իր մոտ բացակայում է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

ՍԴՈ-902, 7 հուլիսի, 2010 թ.

7. .... Վիճարկվող դրույթի կիրառման պրակտիկայի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ այդ դրույթի իրավաչափ կիրառումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողից պահանջում է քննության առարկա դարձնել և ուսումնասիրել ազատման հիմքում ընկած տնտեսական, տեխնոլոգիական և կազմակերպչական պատճառները: Այս պահանջն է ներկայացնում իրավասու մարմիններին նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 25-րդ հոդվածին համապատասխան հիմնադրված Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն, ինչպես նաև ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը: Հարկ է ընդգծել նաև, որ որպես վիճարկվող դրույթի իրավաչափ կիրառման նախապայման նշված Կոնվենցիայի 9-րդ հոդվածն ամրագրում է նաև ազատման տնտեսական, տեխնոլոգիական և կազմակերպչական պատճառների առկայության ապացուցման բեռը գործատուին վերապահելը:

ՍԴՈ-1049, 28 սեպտեմբերի, 2012 թ.

7. .... Մասնավորապես, օրենսդիրը վիճարկվող նորմով կարևորել է այն իրավապայմանները, որոնց առկայությամբ միայն իրավասու անձանց կողմից դատարանին ներկայացված հանգամանքները (փաստերը, տեղեկությունները) իրավական իմաստով կարող են գնահատվել որպես «նոր երևան եկած», այդպիսիք են.

– այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց,

– այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան,

– և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Ընդ որում, որպես վերոհիշյալ իրավապայմանների գործադրման անհրաժեշտ ու պարտադիր պայման՝ օրենսդիրը դիտարկել է բողոք ներկայացրած անձի կողմից հիշյալ հանգամանքների իսկության **ապացուցման պարտականությունը**: Այսինքն՝ վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայման համար օրենսդիրն սկզբունքային ուշադրության է արժանացրել գործին մասնակցող անձի կողմից վկայակոչված փաստարկի (փաստերի, հանգամանքների, տեղեկությունների) ապացուցված լինելու հանգամանքը՝ այնպես, որպիսին առկա է քաղաքացիական գործերով ապացույցներ ներկայացնելու և դրանք հետազոտելու (գնահատելու) հետ կապված ընդհանուր իրավակարգավորման դեպքում (օրենսգրքի 8-րդ գլուխ): Այստեղից հետևում է՝ որպես նոր երևան եկած հանգամանքներ կարող են գնահատվել օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով (օրինական եղանակով) ձեռք բերված այն տեղեկությունները, որոնց հիման վրա իրավասու դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակության լիարժեք բացահայտման համար անհրաժեշտ է օրենսգրքի 204.32-րդ հոդվածը և օրենսգրքի 3-րդ բաժնի մյուս նորմերը համադրել նաև օրենսգրքի վերոհիշյալ գլխի (8-րդ) համապատասխան նորմերի հետ, որի արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթում.

մի կողմից, իրավասու անձը (գործին մասնակցող անձը, նրա իրավահաջորդը)՝

– իրավասու դատարանին պետք է ներկայացնի օրինական եղանակով ձեռք բերված և օրենքով նախատեսված պահանջները բավարարող ու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ,

– պետք է ապացուցի ներկայացված հանգամանքների նախկինում (մինչև գործով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը) անհայտ լինելը կամ դրանց նորահայտ լինելը, կամ նախապես հայտնի լինելը, բայց իրենից անկախ պատճառներով օրինական ուժի մեջ մտած ակտը կայացրած դատարանին չներկայացնելու պատճառները:

ՍԴՈ–1270, 3 մայիսի, 2016 թ.

8. .... Անհրաժեշտ է փաստել, որ քաղաքացիական գործերով ապացուցման բեռը և քրեական գործերով ապացուցման բեռը տարբերվում են իրարից՝ քաղաքացիական գործերով այն կրում են կողմերը, իսկ քրեական գործերով՝ պետությունը՝ հանձին մեղադրող կողմի:

ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՓՈՓՈԽԵԼԸ, ԼՐԱՑՆԵԼԸ, ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԱՌԱՋԱԴՐԵԼԸ

ՍԴՈ–710, 24 հուլիսի, 2007 թ.

11. Գործը դատարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ գործող քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգն անհամատեղելի է նաև մեր երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կատարվող դատաիրավական բարեփոխումների տրամաբանության հետ, բարեփոխումներ, որոնք ուղղված են դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազատմանը: Մասնավորապես, «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2007 թ. փետրվարի 22-ին, որում քննության առարկա խնդրի առնչությամբ հայեցակարգային նոր մոտեցում է որդեգրվել: Այդ օրենքի 26 հոդվածի 4-րդ մասում ամրագրված է. «Եթե առաջին ատյանի դատարանում մեղադրողը գտնում է, որ մեղադրանքը ենթակա է մեղմացման կամ խստացման, քանի որ դատական քննության ժամանակ

ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույթում, դատախազն իրավունք ունի միջնորդություն ներկայացնելու դատարան՝ արարքը վերաորակելու նպատակով դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար….»: Փաստորեն, օրենքի այս նոր դրույթը բացառում է դատարանի կողմից գործը լրացուցիչ քննության ուղարկելու գործող կարգը, և այս տրամաբանությունը կարող է դրվել նաև ՀՀ քր. դատ. օր. բարեփոխման հիմքում: Բոլոր դեպքերում, եթե գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում:

ՍԴՈ–872, 2 ապրիլի, 2010 թ.

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացված 309.1–րդ հոդվածը, որի իրավակարգավորման առարկան առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանների որոշումն է, նախատեսում է դատարանում մեղադրանքի փոփոխման երկու իրավական ռեժիմ՝ մեղադրանքը փոխելը. ա) քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և բ) առանց լրացուցիչ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու միջոցով:

Միաժամանակ, օրենսդիրը մեղադրողի՝ առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքի իրացման համար սահմանել է մի շարք պարտադիր նախապայմաններ, որոնք կոչված են երաշխավորելու քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և որոնք անվերապահորեն պետք է հաշվի առնվեն դատական պրակտիկայում: Դրանք են՝

ա) եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում,

բ) եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն չեն տալիս մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու առանց դատական քննությունը հետաձգելու,

գ) վերոհիշյալ հիմքերի առկայությունը պետք է գնահատի դատարանը,

դ) նիստը կարող է հետաձգվել բացառապես անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար,

ե) նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ ամսով, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու համար ողջամտորեն պահանջվում է ավելի երկար ժամկետ,

զ) հետաձգումը չի կարող նպատակ հետապնդել լրացնելու նախկինում կատարված թերի նախաքննությունը:

…. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական գործի դատաքննության փուլում ի հայտ եկած նոր փաստերի հիմքով օբյեկտիվորեն կարող են փոփոխվել գործի հանգամանքների և ամբաստանյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը կամ հանցակազմի հատկանիշների բովանդակությունը: Սակայն, բոլոր դեպքերում, էական հանգամանքն այն է, որ գործը շարունակում է գտնվել դատաքննության փուլում, չի փոխվում ամբաստանյալի իրավական կարգավիճակը, իսկ մրցակցային դատավարության սկզբունքի պահանջներին համապատասխան երաշխավորվում է ամբաստանյալի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի 3–րդ մասով սահմանված իրավունքների պաշտպանությունը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի տարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք անմիջականորեն ուղղված են դատարանում մեղադրանքը փոփոխելուն, այդպիսի նպատակով դատարանի նախաձեռ-

նության հնարավոր դրսևորումն ուղղակիորեն կարող է վերաբերել մեղադրական եզրակացությունը վերահաստատելու վերաբերյալ մեղադրողին առաջարկություն անելուն: Ընդ որում, ի տարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք վերաբերում են մեղադրանքի փոփոխմանը թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով, դատարանի նախաձեռնությունը կարող է վերաբերել մեղադրանքի փոփոխմանը միայն խստացման առումով, այսինքն՝ դատարանը «հուշում է» մեղադրողին կատարել մեղադրանքը **խստացման** առումով փոփոխելու համար անհրաժեշտ գործողություններ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս պարագայում լիարժեք հաշվի չի առնվել այն կարևոր սկզբունքի պահպանումը, համաձայն որի՝ դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդված)՝ սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության և անկողմնակալության, ինչպես նաև մրցակցային դատավարության և կողմերի հավասարության սկզբունքների ապահովմանը:

8. .... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով քննության առարկա նորմերի իրավակարգավորման շրջանակներում, մեղադրողի կողմից մեղադրանքը փոխելուց անմիջապես հետո, դատարանը հետաձգում է դատական նիստը և վիճարկվող հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին դատարանը նոր մեղադրանքին ծանոթանալու համար ժամանակ է տրամադրում նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբաստանյալին և նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածների տրամաբանությունից բխում է նաև, որ դատաքննության բոլոր փուլերում պետք է երաշխավորված լինեն կողմերի իրավունքների լիարժեք պաշտպանությունն ու դատաքննության մրցակցային սկզբունքի ամբողջական իրացումը:

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրի լուծումը պայմանավորված է առկա նորմերի ճիշտ կիրառմամբ և առաջադրված մեղադրանքը դատաքննության փուլում փոփոխելու ինստիտուտի համակարգային ամբողջականության ապահովմամբ: Մասնավորապես, մեղադրողն իր սահմանադրական իրավասությամբ դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթը պետք է իրականացնի ամբողջական ու արդյունավետ՝ երաշխավորելով դատական քննության շրջանակներում գործի վերջնական հանգուցալուծումը:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, իր կարևորությամբ հանդերձ, հիշյալ նախադեպային որոշումն իրավակիրառական պրակտիկան լիարժեք չի կարող ուղղորդել այնպես, որ մեղադրողը, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի հիմքերով՝ դատարանում մեղադրանքը պաշտպանելու իրավասության շրջանակներում, առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու համար դատական քննությունը հետաձգելու վերաբերյալ հիմնավոր միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում, անհրաժեշտ գործողություններ կատարի այն պայմանով, որ բացառվի ամբաստանյալի դատավարական կարգավիճակի որևէ փոփոխություն և նրա շահերի ու իրավունքների ցանկացած ոտնահարում, որի գնահատողն ու երաշխավորողը տվյալ գործը քննող դատարանն է: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավապայմանների ապահովման դեպքում է հնարավոր դատաքննության փուլում երաշխավորել անձանց սահմանադրական իրավունքները:

ՍԴՈ-934, 4 փետրվարի, 2011 թ.

7. .... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում մեղադրանքի ինստիտուտը կարգավորող նորմերի համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ անձի կողմից հանցավոր ա-

ռարքի կատարման հիմնավորումը մինչդատական, իսկ որոշ դեպքերում էլ՝ դատական վարույթներում ներկայացվում է պաշտոնական փաստաթղթերի՝ որոշման (մեղադրանք առաջադրելու, այն փոփոխելու, լրացնելու, նոր մեղադրանք առաջադրելու մասին) և մեղադրական եզրակացության ձևով: Ընդ որում, եթե մեղադրանք առաջադրելու (փոփոխելու, լրացնելու, նոր մեղադրանք առաջադրելու) վերաբերյալ որոշումը (իրենց լիազորությունների շրջանակներում՝ քննիչի, դատախազի կողմից) կարող է կայացվել մինչդատական, դատական վարույթներում, ապա մեղադրական եզրակացությունը՝ որպես քրեական գործով նախաքննության արդյունքներն ամփոփող, ձեռք բերված ապացույցների շրջանակներում անձի (կամ անձանց) մեղավորությունը հիմնավորող պաշտոնական փաստաթուղթ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ գլխի նորմերին համապատասխան, **առանց բացառության, կազմվում է քննիչի և հաստատվում՝ նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից՝ մինչդատական վարույթում,** որի հիման վրա էլ դատախազը դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Վերջինս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով կարող է լրացվել կամ փոփոխվել՝ նոր մեղադրանք առաջադրելու վերաբերյալ դատախազի պատճառաբանված որոշմամբ, որը ձեռք բերված նյութերի (ապացույցների) հետ ներկայացվում է դատարան (նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

Այսպիսով, մեղադրանքի ինստիտուտի գործող իրավակարգավորման, այդ թվում և՝ սույն գործով վիճարկվող նորմերի բովանդակությունից հետևում է, որ.

....

գ) դատախազն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պարտավոր է հաստատել մեղադրական եզրակացությունը, կամ՝ իր որոշմամբ մեղադրանքի ձևակերպումից հանել առանձին կետեր, վերաորակել հանցագործությունը և հաստատել մեղադրական եզրակացությունը, կամ՝ գործը վերադարձնել քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու, լրացուցիչ մեղադրանք առաջադրելու, մեղադրանքը փոխելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար,

....

Երկրորդ՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ քրեական գործով վարույթի շրջանակներում մեղադրանքի առաջադրման (փոփոխման, լրացման), ինչպես նաև մեղադրական եզրակացության կազմման (փոփոխման, լրացման) և հաստատման դատավարական ընթացակարգերում, մի կողմից, քննիչի, մյուս կողմից՝ դատախազի լիազորությունների (իրավունքների ու պարտականությունների) օրենսդրական վերոհիշյալ տարանջատումը բխում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի իրավակարգավորման ընդհանուր խնդիրներից ու նպատակներից, հիմք ընդունելով պետական իշխանության իրականացման օրինականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված սկզբունքը, համաձայն որի՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու չեն կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետևաբար, դատախազն իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որպիսիք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով: Մյուս կողմից, դատաքննության փուլում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման, լրացման, ամբաստանյալին նոր մեղադրանք առաջադրելու դեպքերում, դատարանի գործառույթը պետք է հիմնվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածում ամրագրված մրցակցային արդարադատության այն սկզբունքի վրա, համաձայն որի. «դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը»:

....

Հետևաբար, դատաքննության փուլում, երբ մեղադրողը գտնում է, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի նորմերի կիրառմամբ մինչդատական վարույթում առաջադրված մեղադրանքը լրացնել կամ փոփոխել, ապա խնդիրներ են առաջանում այդպիսի լրացման և փոփոխման բովանդակության (ծավալի) պատշաճ ձևակերպման, շահագրգիռ անձանց ներկայացնելու և վերջիններիս կողմից իրենց իրավունքների պաշտպանությունը կազմակերպելու համար: Այդ խնդիրների լուծման ընթացակարգերը նախատեսված են վիճարկվող հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում, համաձայն որոնց.

ա) մեղադրանքի լրացման կամ փոփոխման անհրաժեշտության դեպքում մեղադրողը դատական քննությունը հետաձգելու միջնորդություն է ներկայացնում (նույն հոդվածի 1-ին մաս),

բ) անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում դատարանը հետաձգում է նիստը՝ ոչ ավելի, քան մեկ ամսով (2-րդ մաս),

գ) առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու դեպքում մեղադրողը կազմում է առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու և նոր մեղադրանք առաջադրելու մասին **որոշում**, որը ձեռք բերված նյութերի (ապացույցների) հետ ներկայացնում է դատարան (2-րդ մաս),

դ) գործով շահագրգիռ անձանց (տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին) դատարանը **նոր մեղադրանքին ծանոթանալու համար** ժամանակ է տրամադրում՝ նրանց միջնորդության դեպքում, իսկ ամբաստանյալին և նրա պաշտպանին՝ անկախ միջնորդությունից (4-րդ մաս):

Վերոհիշյալ նորմատիվ դրույթների առկայության պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը նախատեսել է դատական վարույթի փուլում մեղադրանքը լրացնելու, փոփոխելու, այն դատավարական կարգով ձևակերպելու և անձանց ներկայացնելու հստակ ընթացակարգեր, որպիսի պայմաններում չի խոչընդոտվում նաև անձի պաշտպանության իրավունքի իրացման այն ծավալը, որը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով, նաև բացառվում է դատական քննության շրջանակներից դուրս մեղադրանք փոփոխելու հնարավորությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **դատական քննության ընթացքում մեղադրանքը նոր մեղադրանք առաջադրելու մասին որոշմամբ կարող է փոփոխվել բացառապես այն սուբյեկտի, տվյալ դեպքում՝ դատախազի կողմից, որն այդ մեղադրանքը պաշտոնապես ներկայացրել է դատարանին:** ....

Հինգերորդ՝ վերահաստատելով ՍԴՈ-872 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքի փոփոխումը ոչ թե պետք է հիմք կամ պատճառ հանդիսանա լրացուցիչ նախաքննության (ինչը կհակասի ՍԴՈ-710 որոշմանը), այլ պետք է դատարանում հետազոտված և գործում առկա այլ ապացույցների համալիր վերլուծության արդյունք (հետևանք) լինի: Սակայն, եթե որոշակի բացառիկ դեպքերում մեղադրանքի փոփոխությունը (լրացումը) պահանջի նոր ապացույցների ձեռքբերում, ապա դրա համար մեղադրողի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ (դատավարության բոլոր մասնակիցների կարծիքները լսելուց հետո) կարող են օգտագործվել բացառապես գործի դատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոցներ (նոր վկաների կանչ, փորձաքննությունների նշանակում, ապացույցների հետազոտում կամ փաստաթղթերի և այլ նյութերի պահանջում և այլն): Այսինքն՝ մեղադրանքի փոփոխությանը նախորդող գործընթացը պետք է լինի հրապարակային դատաքննության շրջանակներում և դուրս չգա դատական վերահսկողությունից: Հակառակ դեպքում կնսեմացվի անկախ, անկողմնակալ և մրցակցային դատարանի սահմանադրաիրավական դերը:

ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ԱՆՁԸ ԵՎ ՆՐԱՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

6. Անմեղության կանխավարկածի առանձին դրսևորում է «չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու» պահանջը (ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն):

.... Քրեական հետապնդումը դադարեցնելու վիճարկվող հիմքը նույնպես կոչված է իրացնելու անմեղության կանխավարկածի սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ «չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու» սկզբունքը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նշված տեսանկյունից խնդիր կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե իրավական հետևանքի առումով տարբերություն դրվի՝ ապացույցների բացակայության հիմքով, և անձի անմեղությունը հաստատված լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու միջև: Այս առնչությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը նման տարբերակում չի կատարել: Ավելին, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերում ամրագրված՝ ոչ արդարացնող հիմքերով քրեական գործի կարճման, երբ մեղադրյալի կողմից հանցանքի կատարումը, որպես կանոն, մինչդատական կամ դատական վարույթներում ապացուցված է, և ըստ այդմ, օրենսդիրը մեղադրյալին արդարացվածի կարգավիճակ չի տրամադրում, վիճարկվող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում անձին վերապահվում է արդարացվածի կարգավիճակ:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ անմեղության կանխավարկածն անձին պաշտպանում է ոչ թե քրեական հետապնդման այն հիմքից, որը կասկած է թողնում անձի՝ տվյալ հանցագործությանը մասնակցության առնչությամբ, այլ այնպիսի որոշումներից կամ դրանցում այնպիսի ձևակերպումներից, որոնք կարող են կասկածի ենթարկել տվյալ անձի արդարացումը կամ անմեղությունը: Նշված հանգամանքը գործնականում կարող է ավելի մեծ չափով իրավաբանական նշանակություն ունենալ արդարացված անձին պատճառված վնասի հատուցման իրավունքի կապակցությամբ ընդունվող որոշումների համար: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը վիճարկվող հիմքով արդարացվածին ոչ միայն պաշտպանում է նման հետագա ոչ իրավաչափ որոշումներից, այլ պաշտպանում է նաև հենց քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ այնպիսի ձևակերպումներ նախատեսելուց, որոնք կարող են կասկածի ենթարկել անձի արդարացումը կամ անմեղությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս չի թույլատրվում որոշման մեջ տալ ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կդնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է: ....

8. .... Վկայակոչված դրույթների և քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր հասկացությունների (մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 42-րդ կետ) համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, ինչը հավասարազոր է անձի անմեղության փաստի հաստատման, իսկ դատաքննության փուլում ապացույցների անբավարարության հանգամանքը նաև արդարացման դատավճիռ կայացնելու հիմք է:

9. Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողների ներկայացրած վերոհիշյալ

փաստարկները՝ սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում հարկ է համարում պարզել.

ա) որքանո՞վ է իրավաչափ արդարացվածի հատուցման պահանջի լուծումը միայն քաղաքացիական դատավարության կարգով,

բ) ՀՀ Սահմանադրության տեսանկյունից որքանո՞վ է իրավաչափ արդարացվածին պատճառված վնասի հատուցման արտադատարանական կարգ չնախատեսելը,

գ) արդյո՞ք վիճարկվող դրույթի խնդիրն է նախատեսել արդարացվածին պատճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտ:

Արդարացվածն ըստ քր. դատ. օր. 66–րդ հոդվածի՝ ունի փոխհատուցում ստանալու իրավունք:

Մինչդատական վարույթում անձն արդարացվածի կարգավիճակ ձեռք է բերում քր. դատ. օր.՝ 35–րդ հոդվածի 1–ին մասի 1–3–րդ կետերով և 2–րդ մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդման դադարեցման դեպքում, իսկ դատական քննության փուլում՝ օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճռի դեպքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64–րդ հոդվածի 3–րդ մաս): Մինչ այդ, կասկածյալին կամ մեղադրյալին պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունք գոյություն չունի, որովհետև դեռևս նա արդարացված չէ: Անձը կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66–րդ հոդվածի հիման վրա հատուցման պահանջով դատարան դիմել միայն դրանում նշված հիմքերով արդարացվածի կարգավիճակ ձեռք բերելուց հետո:

Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր՝ 2009 թ. փետրվարի 3–ի ՍԴՈ–787 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վերջիններս խնդրո առարկա դեպքի առնչությամբ կիրառելի չեն, չեն վերաբերում միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններով գործի քննության ընդդատությանը, չեն խոչընդոտում դատարանին գործի քննության շրջանակներում ճշմարտությունը բացահայտելուն, ինչպես նաև մինչդատական վարույթում արդարացվածի կողմից արդարացման հիմքերի վերաբերյալ ներկայացված բողոքը քննելիս արդար որոշում կայացնելուն:

.... Իսկ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության իրավահարաբերություններին վերաբերող առանձին հարցերի կարգավորումը նախատեսված է ՀՀ քր. դատ. օր. 20–րդ գլխում:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում առանձին քաղաքացիական գործի վարույթի շրջանակներում արդարացվածի հատուցման պահանջի քննության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործող կարգը:

10. .... Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարացվածին պատճառված վնասի հատուցման արտադատարանական կարգ չնախատեսելն այն դեպքում, երբ տվյալ իրավունքի իրացման և պաշտպանության համար նախատեսված է դատական կարգ, սահմանադրականության տեսանկյունից իրավաչափ է:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

7. .... Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի՝ վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքները ևս վերաբերում են իրավապայմանագրային պարտավորություններով չպայմանավորված վնասի փոխհատուցմանը, սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքի տեսանկյունից իրավաչափ չի համարում այն իրողությունը, երբ հետևողականություն չի դրսևորվում տվյալ իրավակարգավորման հարցում և պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն չի նախատեսվում արդարացված անձի համար, որը դատարան է դիմում իրեն պատճառված վնասի հատուցման պահանջով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարագայում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22–րդ հոդվածի առաջին

մասն առկա իրավակարգավորման շրջանակներում լիարժեք չի երաշխավորում ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի նորմատիվ կիրառումը՝ խոչընդոտելով տուժող հանդիսացող անձի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը:

Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը:

.... Ըստ գործի նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ միայն նման ընթացակարգ գոյություն չունի, այլև ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ առաջին ատյանի դատարանի որոշման առկայության դեպքում, որով անձը ճանաչվել է տուժած և նախատեսվել է պատճառված վնասի հատուցում, վերաքննիչ բողոքի դեպքում նույնպես անձը չի ազատվում պետական տուրքի վճարումից: Փաստորեն ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու դեպքերում հասցված վնասի հատուցում պահանջելու համար անձն ստիպված է վճարել պետական տուրք, որի չափը կարող է ընդհուպ գերազանցել հատուցվելիք գումարը:

Սույն խնդիրը համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն ունի, որը պետք է, մի կողմից, հաշվի առնի, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետևանքով: Մյուս կողմից՝ արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը և նրա խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի էությունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուպ արգելափակել այն:

ԲԱՑԱՐԿԸ ԵՎ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԸ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՍԴՈ-918, 28 սեպտեմբերի, 2010 թ.

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատել.

– ինքնաբացարկի, որպես սահմանադրաիրավական սկզբունքներին համապատասխան արդարադատության անկախությունը և անկողմնակալությունը, ինչպես նաև իրավունքի գերակայությունն ապահովող ինստիտուտի, օրենսդրական երաշխավորման տեսանկյունից,

– արդար և արդյունավետ դատաքննության իրավունքի, ինչպես նաև գործին մասնակցող անձանց դատավարական այլ իրավունքների երաշխավորված գործադրումը և պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից,

– ինքնաբացարկի ինստիտուտի՝ միջազգային իրավակիրառական պրակտիկայում հաստատված սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

Ինքնաբացարկը ՀՀ իրավահամակարգում հանդիսանում է այնպիսի ինստիտուտ, որը կոչված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ և անաչառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս, և կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը:

Քաղաքացիադատավարական հարաբերությունների կարգավորման բնագավառում ինքնաբացարկի ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 21, 22 և 23-րդ, ինչպես նաև 24-րդ հոդվածներում: Այդ հարաբերությունները նյութաիրավական առումով կարգավորվում են նաև ՀՀ դատական օ-

րենսգրքի 91-րդ հոդվածով, որով սահմանված են դատավորի կողմից՝ որպես նորմատիվ պարտավորություն, ինքնաբացարկ հայտնելու հիմքերը և կարգը: Այդ հոդվածների նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, որ.

– դատավորի ինքնաբացարկի հիմք կարող են լինել այնպիսի փաստերը և հանգամանքները, որոնք ողջամիտ կասկած կարող են հարուցել տվյալ գործով դատավորի անկողմնակալության հարցում (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերություն),

– նման հիմքերի առկայության դեպքում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել,

– ի թիվս այլոց, դատավորի ինքնաբացարկ հայտնելու կոնկրետ հիմքերը հստակեցված են ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում,

– ինքնաբացարկ հայտնելիս դատավորը պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, կարող է կողմերին առաջարկել իր բացակայությամբ քննել ինքնաբացարկի անտեսման հարցը (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 3-րդ մաս),

– դատավորի ինքնաբացարկը պետք է լինի պատճառաբանված,

– ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի հիմքերով դատավորի ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մաս):

Սույն գործով վիճարկվող նորմերի և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի, ինչպես նաև ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորմանն առնչվող այլ իրավական ակտերի համապատասխան դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, քաղաքացիադատավարական հարաբերություններում դատավորի ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում օրենսդրորեն ամրագրվել են հետևյալ մոտեցումները.

– ինքնաբացարկի վերաբերյալ որոշումը դիտարկվում է որպես գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտ,

– դատավորի ինքնաբացարկի մասին որոշման կայացումը ոչ թե դատավորի հայեցողական լիազորությունն է, այլ պարտականությունը,

– դատավորի՝ իր անմիջական պարտականության կատարումից հնարավոր խուսափելը բացառելու իրավական միջոց է հանդիսանում նրա կողմից կայացված ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորությունը,

– ինքնաբացարկի հանգամանքների օբյեկտիվ բացահայտման և դատարանի իրավազորության երաշխավորման կարևոր նախադրյալ է դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ գործին մասնակցող անձանց կողմից միջնորդություն ներկայացնելու ինստիտուտը,

– դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական դատական բողոքարկման կարգ ու պայմաններ (ժամկետներ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսել՝ չբացառելով նման բողոքի քննությունը գործով կայացրած դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Այդպիսով, վիճարկվող նորմերում ամրագրված է ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորման այն սկզբունքը, համաձայն որի տվյալ գործով քննություն իրականացնող դատավորի բացառիկ լիազորությունն ու պարտականությունն է դատաքննության շրջանակներում լուծել գործի հետ կապված ցանկացած, այդ թվում՝ նաև իր անաչառության վերաբերյալ կասկած հարուցող փաստերի և հանգամանքների առկայության հարցը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է այն սկզբունքային տարբերությունները, որպիսիք առկա են այդ ինստիտուտի նախկին (1998 թ. հունիսի 17-ի խմբագրությամբ) և ներկա իրավակարգավորումների միջև: Մասնավորապես, բացարկի հարցն ըստ նախկին իրավակարգավորման ենթակա էր լուծման ոչ թե գործը քննող դատավորի, այլ՝ համապատասխան դատարանի նախագահի կողմից, իսկ գործը վերջինիս վարույթում գտնվելու դեպ-

քում՝ մեկ այլ դատավորի կողմից: Բացի այդ, բացարկի (այն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ) և ինքնաբացարկի հարցի արդյունքներով կայացված որոշումը ենթակա չէր բողոքարկման (ՀՀ քաղ. դատ. օր. 1998 թ. հունիսի 17-ի խմբագրությամբ 25-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետեր): Ներկա իրավակարգավորմամբ գործը քննող դատավորին պարտավորեցնելով համապատասխան հիմքերի առկայության դեպքում կայացնելու ինքնաբացարկի վերաբերյալ որոշում՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է դատավորի նախաձեռնությամբ կայացված այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մաս), նախատեսելով լրացուցիչ իրավական երաշխիք՝ անաչառ որոշում կայացնելու և ինքնաբացարկի ինստիտուտը սահմանադրաիրավական նպատակներին ծառայեցնելու համար:

6. Գնահատելով սույն գործով վիճարկվող իրավակարգավորման ազդեցությունն արդար և անկողմնակալ դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա արդյունավետ իրականացման երաշխիքների վրա, նկատի ունենալով նաև ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ սահմանադրական դատարան ներկայացված դիմումներում առկա հարցադրումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե դատավորն իր անաչառության վրա ազդող հանգամանքներն իրավաչափորեն գնահատում է այն դեպքում, երբ ինքնաբացարկի նախաձեռնությունն իրենն է, ապա նույն տրամաբանությամբ նա կարող է և պարտավոր է իրավաչափորեն գնահատել նույն հանգամանքները, երբ դատավարության կողմն է հանդես եկել ինքնաբացարկի միջնորդությամբ: Հետևաբար, չկա որևէ տարբերություն՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ով է հանդես գալիս ինքնաբացարկի նախաձեռնությամբ՝ կողմը, թե՞ դատավորը: Ավելին, ինքնաբացարկի հիմքերի առկայության հարցի վերաբերյալ դատավորի ոչ անաչառ մոտեցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ընդհուպ հանգեցնել այդ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման (մասնավորապես՝ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի հիման վրա), քանի որ դատավորն է պարտավոր ապահովել դատարանի անաչառությունն ու այդ սկզբունքով արդարադատության իրականացումը: Կողմնակալ դատավորն անկախ չէ և ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ արդարադատություն իրականացնել չի կարող, իսկ այդպիսի պայմաններում կայացված դատական ակտը (որպես իրավական ակտ) ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով՝ գործադրվել չի կարող:

Խնդիրը, սակայն, այն է, թե դատավորի ինքնաբացարկի վերաբերյալ միջնորդության քննության և լուծման գործող կարգը որքանով է իրավաչափ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հայտնված ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով դատավորը **կամ ինքնաբացարկ է հայտնում, կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին**: Նկատի ունենալով, որ խոսքը վերաբերում է դատավորի ինքնաբացարկին, որը նա պարտավոր է իրականացնել օբյեկտիվ հիմքերի առկայության դեպքում, ինքնաբացարկի միջնորդության մերժումը չի կարող բողոքարկման առարկա չդառնալ: Հակառակ դեպքում հիմնավոր կլինի դիմող կողմի պնդումն այն մասին, որ վերջին հաշվով դատավորի անկողմնակալության մասին հանգամանքներն օբյեկտիվ գնահատման առարկա չեն դառնում:

.... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման ընտրությունն օրենսդրի իրավասության խնդիրն է, **սակայն պարտադիր պետք է երաշխավորված լինի դատական ակտի բողոքարկման շրջանակներում դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման հետ կապված հանգամանքների համակողմանի քննությունը:** ՀՀ գործող օրենսդրությունն այս հարցում որևէ արգելանք չի նախատեսում, և այս ուղղությամբ պետք է ընթանա նաև իրավակիրառական պրակտիկան: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման

հնարավորության բացակայությունը և, միաժամանակ՝ ՀՀ դատական օրենսգրքում դատավորի ինքնաբացարկի որոշման բողոքարկման իրավունքի առկայությունն իրավակիրառական պրակտիկայում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի այդպիսի որոշումների վիճարկման իրավունքը՝ **ինքնաբացարկի դեպքում՝ անմիջականորեն, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում:**

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի պահանջը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 և 23-րդ հոդվածների դրույթները՝ ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու մասով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ, չի երաշխավորում կողմերի իրավունքը հասնելու այն բանին, որ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկողմնակալ ու իրավազոր դատարանի կողմից իրականացվի գործի քննություն:

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

ՍԴՈ-1213, 9 հունիսի, 2015 թ.

8. .... Գնահատելով վիճարկվող դրույթներով **սահմանված իրավակարգավորումներով** դատավարության կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքների և երաշխիքների ապահովման սահմանադրականության հարցը՝ հարկ է նշել, որ և՛ սահմանադրական դատարանը (մասնավորապես, 2010 թվականի դեկտեմբերի 28-ի ՍԴՈ-931 որոշմամբ), և՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադարձել են հիշյալ սկզբունքներին, մասնավորապես, ամրագրելով հետևյալը.

– «Քրեական գործերով մրցակցային դատաքննության իրավունքը նշանակում է, որ և՛ մեղադրանքի կողմին, և՛ պաշտպանության կողմին պետք է տրվի հնարավորություն ծանոթանալու միմյանց ներկայացրած փաստարկներին և ներկայացնելու իրենց դիտողությունները միմյանց փաստարկների վերաբերյալ (տե՛ս, Ռովը և Դեվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 2000 թ. փետրվարի 16-ի վճիռը, Rowe and Davis v. the United Kingdom): Մրցակցային դատավարությունում դատարանը չի կարող ստանձնել ո՛չ մեղադրանքի, ո՛չ պաշտպանության գործառույթ: Դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում»:

– «Մրցակցային դատավարության կարևոր բաղադրատարրերից է նաև դատավարության կողմերի հավասարությունը: Կողմերի հավասարությունը, ըստ Եվրոպական դատարանի մեկնաբանության, նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմի պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ (տե՛ս, ի թիվս այլնի, Դոմբո Բեհիրն ընդդեմ Նիդեռլանդների գործով 1993 թ. սեպտեմբերի 22-ի վճիռը, Dombo Beheer v. Netherlands)»:

.... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի, ի թիվս այլ հոդվածների, 117-րդ և 118-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Այս և փոխկապակցված այլ դրույթների համադրված վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենսդրությունը, հանրային նվազ վտանգավորության հանգամանքով պայմանավորված, առանձնացնում և հստակ սահմանում է մասնավոր հետապնդման գործերի շրջանակը, որոնց համար նախատեսում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ:

.... Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով մրցակցային դատավարության այն հիմնական հատկանիշներից մեկը, ըստ որի՝ մրցակցային դատավարության պայմաններում կողմերն են տնօրինում իրենց դատավարական լիազորությունների ծավալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթների՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հետ հարաբերակցության շրջանակներում՝ փոխադարձ համաձայնությամբ պայմանավորված, **չեն խախտվում դատավարության կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները:** Բացի դրանից, դա հնարավորություն է տալիս զերծ մնալ քրեական գործերն անտեղի դատաքննության փուլ տեղափոխելուց:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել նաև, որ ինքնին սահմանադրականության խնդիր չի առաջացնում այն իրավիճակը, երբ **գործը դատական քննության նախապատրաստելիս,** առանց դատական քննության, օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքի առկայության դեպքում դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Միաժամանակ, կողմերի կամքն արտահայտող համաձայնության առկայության դեպքում, երբ դատարանը, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, գտնում է, որ առանց դատական քննության հնարավոր չէ որոշում կայացնել քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, ապա դատարանը պետք է **պատճառաբանված և հիմնավոր** որոշում կայացնի դատական քննություն նշանակելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին մասի՝ «....երբ դա հնարավոր է առանց դատաքննության....» դրույթի՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքի մասով, իրավական բովանդակությունից բխում է, որ այն պայմանավորված է կոնկրետ գործի հանգամանքներով, դրանք բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու հիմնավորված անհրաժեշտությամբ և յուրաքանչյուր դեպքում ենթակա է գնահատման դատարանի կողմից:

Հետևաբար, ընդհանուր կանոնն այն է, որ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքի առկայության դեպքում դատարանը պատճառաբանված որոշում է կայացնում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, իսկ երբ հիշյալ հիմքի առկայության դեպքում դատարանը դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացնում, ապա այն բացառություն է ընդհանուր կանոնից: Հաշվի առնելով հիշյալ հանգամանքը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ դեպքում չի խախտվում նաև քրեական դատավարության այն կարևոր սկզբունքը, ըստ որի՝ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը: Ավելին, այս համատեքստում էական նշանակություն է ձեռք բերում նաև այն հանգամանքը, որ **օրենսդրորեն առկա է դատարանի կողմից օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման բողոքարկման իրավական հնարավորություն (օրենսգրքի 376[1]-րդ հոդված), որը հանդես է գալիս որպես իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք: Այս ամենը վկայում է, որ ստեղծված են համապատասխան իրավական երաշխիքներ տվյալ իրավահարաբերության սուբյեկտների սահմանադրական իրավունքների պաշտպանության համար:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերից բխող կոնկրետ գործով պայմանավորված այն հանգամանքների պարագայում, երբ առկա չէ դատական քննություն նշանակելու օբյեկտիվ անհրաժեշտու-

թյուն, դատարանը պետք է որոշում կայացնի քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

9. .... Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն էական է համարում շեշտադրել, որ խնդիրը ո՛չ այնքան և ո՛չ միայն վերոնշյալի մեջ է, այլ նրա, որ **գործը դատական քննության նախապատրաստելիս** դատարանի խնդիրը չէ մինչդատական վարույթում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումներ բացահայտելը և հենց այդ փուլում գնահատելը: Նման մոտեցումն ինքնին կհակասեր քրեադատավարական տվյալ փուլի ողջ տրամաբանությանը և կպարունակեր ինչպես քրեադատավարական մի շարք սկզբունքներից բխող պահանջների, այնպես էլ արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե մինչդատական վարույթում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, ապա դրանք դատական քննության ժամանակ կարող են և պետք է դառնան համարժեք գնահատման առարկա:

.... Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քրեադատավարական օրենքի էական խախտում» **եզրույթը՝ գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից** քրեադատավարական օրենքի **էական խախտման գնահատման լիազորություն ունենալու տեսանկյունից իրավաչափ չէ:**

ԳՈՐԾԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ, ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

ՍԴՈ-701, 11 մայիսի, 2007 թ.

6. .... Այս համատեքստում, հակասահմանադրական ճանաչված իրավական ակտը կամ դրա դրույթը շարունակում է գործել սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության 102 հոդվածի հիմքով դրանց գործողությունը հիմնավորված կերպով տարաժամկետելու շնորհիվ: Ուստի, վիճարկվող դրույթի իրավական բովանդակությունն աճանցյալ է և անհրաժեշտաբար բխում է Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթներից: Հետևաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի ձևակերպումն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի համատեքստում, որ Սահմանադրությունը հնարավոր է դարձնում սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ժամանակավորապես կիրառումը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով:

ՍԴՈ-709, 20 հուլիսի, 2007 թ.

7. .... Նոր երևան եկած հանգամանքների ցանկն սպառիչ չէ: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով նորոգել գործը նաև այլ դեպքերում (հոդվ. 408, մաս 1-ին, կետ 4):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 406, 407 և 408 հոդվածների համատեքստում նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին դրույթը լուրջ երաշխիք է դատարանի դա-

տավճռի օրինականությունը և հիմնավորվածությունն ստուգելու, դատական սխալն ուղղելու և քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

ՍԴՈ–751, 15 ապրիլի, 2008 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարան դիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: Դա նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7–րդ մասի պահանջն է, քանի որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3^2 բաժնում սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը կերաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը: Անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3–րդ կամ 5–րդ մասերի ուժով: Այլապես, սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանության իրավունքը կդառնան անիրական և երևութական՝ զուրկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

7. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն ըստ էության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում իր ամրագրումն ստացավ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 18.02.04 թ. ՀՕ–39–Ն ՀՀ օրենքով: Վերջինս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը լրացրեց նոր՝ «Վճիռների և որոշումների վերանայումը նոր հանգամանքներով» վերտառությամբ 5.1 բաժնով, որով սահմանվեց նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ընթացակարգը: 2007 թ. փետրվարի 21–ին ՀՀ Ազգային

ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով լրացում է կատարվել նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման հիմքերը սահմանող 241.1 հոդվածում: Նշված օրենքի 22 հոդվածը, մասնավորապես, սահմանում էր. «Օրենսգրքի 241.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում» բառերով»:

8. Վիճարկվող և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթների վերլուծությունը, ինչպես նաև դրանց իրավակիրառական պրակտիկան վկայում են, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման օրենսդրական ներկա կարգավորման հիմնական տարրերը հետևյալներն են.

– նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերը,

– նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի միայն համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը,

– վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը նշված հիմքերով վերանայման ենթակա չեն,

– վերաքննիչ և վճռաբեկ դատարանները նշված հիմքերով դատական ակտերի վերանայման իրավասությամբ օժտված չեն,

– նոր հանգամանքների հիմքով վերանայման ենթակա են ոչ միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այն է՝ վճիռները, այլ նաև առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերը:

10. Սահմանադրական դատարանը նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5.1 նախկին բաժնով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնով սահմանված ներկա իրավակարգավորման համեմատական վերլուծության արդյունքում արձանագրում է, որ դրանց միջև առկա են էական սկզբունքային տարբերություններ, որոնք, մասնավորապես, դրսևորվում են նրանում, որ նախկին կարգավորմամբ.

– նոր հանգամանքներով վերանայման ենթակա էին ինչպես առաջին ատյանի դատարանի, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը,

– վերանայման ենթակա էին վերոհիշյալ դատարանների՝ ինչպես գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այնպես էլ նրանց կայացրած միջանկյալ ակտերը,

– վճիռները և որոշումները վերանայելու իրավասություն ունեին.

1) առաջին ատյանի դատարանը՝ իր օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը վերանայելու կապակցությամբ,

2) վերաքննիչ դատարանը՝ իր օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը վերանայելու կապակցությամբ,

3) վճռաբեկ դատարանը՝ իր ուժի մեջ մտած որոշումը վերանայելու կապակցությամբ, որը կայացվել է առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի կամ որոշման վերաբերյալ:

Ի տարբերություն նախկին կարգավորման, ինչպես նշվեց, ներկա իրավակարգավորման հիմնական առանձնահատկությունն այն է, որ նոր հանգամանքների հիմքով հնարավոր է միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերի վերանայումը նույն ատյանի դատարանի կողմից:

Բացի դրանից, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին 5.1 բաժնում օգտագործվում էր միայն «վճիռ և որոշում» հասկացությունը՝ պարզորոշ կերպով

մատնացույց անելով, որ վերանայման ենթակա են ինչպես գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այնպես էլ՝ միջանկյալ դատական ակտերը: Մինչդեռ օրենսգրքի գործող 3.2 բաժնում օգտագործվում է «դատական ակտ» հասկացությունը, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների բովանդակային մեկնաբանությունն է միայն հնարավորություն տալիս պարզելու, որ խոսքը վերաբերում է ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտին, այլ նաև միջանկյալ դատական ակտին:

Սահմանադրական դատարանը վերոհիշյալ համեմատական վերլուծության արդյունքում նշում է, որ նախկին իրավակարգավորումն ուներ հստակ, լիարժեք և ողջամիտ տրամաբանություն՝ քաղաքացիների իրավունքների վերականգնումն ապահովելու հնարավորության տեսանկյունից՝ երաշխավորելով նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ընթացակարգ՝ դատական բոլոր ատյաններում: Հետևաբար, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 17-րդ մասի պահանջները, սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ հարցի հետագա կանոնակարգումը, կարող է գործել նշված ինստիտուտի այն իրավակարգավորումը, որը սահմանվել էր 18.02.2004 թ. ՀՕ-39-Ն օրենքով:

11. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման միջոցով անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է բացառապես վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների ակտերի վերանայում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկվել **դատարանի վերջնական ակտով** կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհատական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի **վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը**, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում. օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը հնարավոր է համարում սահմանադրական դատարանում այնպիսի օրենքի դրույթի սահմանադրականության վիճարկում, որը կիրառվել է որպես վերջնական դատական ակտ հանդիսացող՝ վճռաբեկ դատարանի կամ վերաքննիչ դատարանի ակտով, սակայն չի կիրառվել առաջին ատյանի դատարանի ակտով: Նման իրավիճակում, այս կամ այն օրենքի դրույթը սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու դեպքում սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայումը դառնում է անիմաստ և անհնարին.

սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է միայն վերջնական դատական ակտի վերանայում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ անհատական դիմումների քննության ընդունման առնչությամբ սահմանադրական դատարանում արդեն ձևավորված է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի վերոհիշյալ մեկնաբանությանը համապատասխան իրավակիրառական պրակտիկա:

Բացի դրանից, սահմանադրական դատարանում կարող են վիճարկման առարկա դառնալ նաև այն դատավարական նորմերը, որոնք կանոնակարգում են վարույթի կոնկրետ ձևերը, այն է՝ վարույթն առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ դատարանում կամ վճռաբեկ դատարանում: Նման նորմերը կիրառելի են միայն տվյալ դատական ատյանի դատական ակտով:

Ավելին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ և՛ վերաքննիչ դատարանը, և՛ վճռաբեկ դատարանն ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանում է այդ ակտը, եթե գտնում է, որ այն թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ: Այս դեպքում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը կարող են կիրառել օրենքի դրույթներ, որոնք ստորին ատյանի դատարանի կողմից չեն կիրառվել:

Միաժամանակ, նոր հանգամանքների հիման վրա վերանայման են ենթակա ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը: Իսկ միջանկյալ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն իրավասու են կայացնելու նոր դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս դեպքում ավելի քան ակնհայտ է, որ միայն առաջին ատյանի դատարանի միջանկյալ ակտի՝ նոր հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը բացառում է վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից միջանկյալ դատական ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կայացված նոր դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման առկա իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպատակ և ոչ արդյունավետ:

12. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման հանգամանքը: Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-751 որոշման մեջ մտահոգություն է հայտնել առ այն, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման և պաշտպանության, հետևաբար՝ նաև Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար»:

.... Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հարկ է համարում վկայակոչել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000 թ. Նախարարների ներկա-

յացուցիչների 694 նստաշրջանում ընդունված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը: Վերջինս, մասնավորապես, ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն .... նկատի ունենալով, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը restitutio in integrum-ի հասնելու համար.

1. Առաջարկում է Պայմանավորվող պետություններին համոզվել, որ ներպետական մակարդակում գոյություն ունեն համարժեք հնարավորություններ restitutio in integrum-ի հասնելու համար....»:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման առկա իրավակարգավորումն առանձին դեպքերում ոչ միայն հնարավորություն չի տա վերականգնելու անձի խախտված իրավունքը, այլ նաև կխոչընդոտի Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորության լիարժեք կատարմանը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը տվյալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգատներից ընտրում է մեկ առավել տիպային օրինակ և ըստ էության քննում և վճիռ է կայացնում միայն այդ գանգատի կապակցությամբ. մնացած գանգատների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է ներպետական մակարդակում՝ այդ «ուղենիշ վճռի» հիման վրա: Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները և ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում՝ Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի:

14. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներկայումս սահմանված իրավակարգավորման արդյունք կարող է հանդիսանալ այն, որ անհնարին կդառնա վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելը: Նման իրավիճակում գործնականում դատական ակտի վերանայման ինստիտուտը դադարում է գործել ընդհանրապես՝ հնարավորություն չտալով վերականգնել անձի խախտված իրավունքը՝ ինչն առկա է սույն գործով դիմողի առնչությամբ:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներն անձին զրկում են նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միջոցով իր խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունից՝ խաթարելով երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, մեծացնելով կոռուպցիոն ռիսկը, թույլ չտալով Հայաստանի Հանրապետությանը լիարժեք և բարեխղճորեն կատարելու ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ատյանների ակտերի վերա-

նայման հնարավորությունը, բացառելով ստորադաս ատյանի դատարանի կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը:

15. Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 4–րդ և 5–րդ մասերով, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի, անձի իրավական վիճակը վատթարացնող իրավակարգավորմանը տրվել է հետադարձ ուժ, ապա այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, ելնելով խնդրո առարկա ինստիտուտի նախկին և ներկա իրավակարգավորման վերոհիշյալ համեմատական վերլուծության արդյունքներից և նախկին իրավակարգավորմանը տված իր վերոհիշյալ գնահատականից, գտնում է, որ իրոք նոր իրավակարգավորմամբ ստեղծվել է անձի համար ավելի անբարենպաստ վիճակ, քանի որ անձը զրկվել է նոր հանգամանքի հիմքով վերաքննիչ և վճռաբեկ դատարանների ակտերը վերանայելու հնարավորությունից: Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ նշյալ դրույթները, որոնց բովանդակությունը հանգում է վճռաբեկ բողոքները համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան փոխանցելուն, ինքնին չի ենթադրում, որ վերջինս պետք է մինչև օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված բողոքների առնչությամբ հետադարձ ուժով կիրառի անձի համար վատթարացնող հետևանք ունեցող նոր իրավակարգավորումը՝ նրան զրկելով դատական ակտի վերանայման հնարավորությունից: Սակայն, եթե նույնիսկ համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը, որին վիճարկվող դրույթի հիման վրա փոխանցվել է վճռաբեկ բողոքը, փորձի կիրառել նախկին իրավակարգավորումը, ապա այն կհանգեցնի մեկ այլ անընդունելի իրավիճակի, երբ վերադաս դատական ակտը կվերանայվի ստորադաս դատարանի կողմից:

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներն ստացել են այնպիսի մեկնաբանություն, որ այդ դրույթների հիման վրա վճռաբեկ բողոքն ստացած համապատասխան առաջին ատյանի դատարանը կիրառում է նոր իրավակարգավորումը՝ մերժելով վերադաս ատյանների դատական ակտերը վերանայելու խնդրանքը՝ դրանով իսկ, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի, հետադարձ ուժ տալով անձի վիճակը վատթարացնող օրենքին:

ՍԴՈ–767, 21 հոկտեմբերի, 2008 թ.

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. սեպտեմբերի 9–ի ՍԴՈ–758 որոշմամբ լուծել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող համապատասխան հոդվածների սահմանադրականության հարցը, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում համեմատական վերլուծություն կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սահմանադրական դատարանի նշված որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված այդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը սահմանող՝ խնդրո առարկա դրույթների միջև:

Համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավարական երկու օրենսգրքերում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորման մեջ ընդհանրությունները հանգում են հետևյալին.

– ինչպես քաղաքացիական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության շրջանակներում նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու իրավասություն ունի միայն համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը,

– վերաքննիչ և վճռաբեկ դատարանները նշված հիմքերով դատական ակտերի վերանայման իրավասությամբ օժտված չեն,

– ինչպես քաղաքացիական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության շրջանակներում նոր հանգամանքներով վերանայման ենթակա են միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերը,

– վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը նշված հիմքերով վերանայման ենթակա չեն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթների բովանդակային մեկնաբանությունը հնարավորություն էր տալիս պարզելու, որ նոր հանգամանքներով վերանայման ենթակա են ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պարագայում նման մեկնաբանության հնարավորությունը բացակայում է:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

5. .... Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն ըստ էության ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում իր ամրագրումն ստացավ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.12.2004 թ. ՀՕ–57–Ն ՀՀ օրենքով, համաձայն որի՝ այդ օրենսգիրքը լրացվեց 408.1, 410.1 հոդվածներով, որոնք համապատասխանաբար սահմանում էին նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու հիմքերը և վարույթ հարուցելու կարգը: ....

6. Նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու հիմքերի, ինչպես նաև այդ հանգամանքների հիմքով վարույթ հարուցելու գործող օրենսդրական կարգի ուսումնասիրությունը վկայում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի նպատակը, ինչպես արձանագրվել է նաև սահմանադրական դատարանի վերոհիշյալ համապատասխան որոշումներում, հակասահմանադրական ճանաչված օրենքի կիրառման հետևանքով անձանց խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների վերականգնումն է: Այսինքն՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտն անձանց խախտված իրավունքների վերականգնման իրավական կարևոր միջոց է: Վերջինիս իրավական բովանդակությունը, սույն գործի շրջանակներում, թույլ է տալիս հատկանշել քրեական և քաղաքացիական դատավարության շրջանակներում կարգավորման հետևյալ սկզբունքային առանձնահատկությունները.

– նոր հանգամանքներով վարույթ հարուցելու նախաձեռնության դրսևորման հարցում անձինք (շահագրգիռ անձը, վերջինիս ներկայացուցիչը) պետք է օժտված լինեն միևնույն կարգավիճակով (համարժեք իրավունքներով և պարտականություններով), որպիսի հանգամանքը վիճարկվող նորմերում հաշվի է առնված,

– նոր հանգամանքներով վարույթի իրավակարգավորումը, գլխավորապես, թելադրված կամ պայմանավորված չպետք է լինի քրեական կամ քաղաքացիական դատավարության առանձնահատկություններով, մասնավորապես՝ այդ վարույթի իրավակարգավորման առանձին տարրեր չեն կարող բացառապես հիմնավորվել կամ արդարացվել դատավարության այս կամ այն տեսակի էությամբ և առանձնահատկություններով,

– պայմանավորված վերոհիշյալ հանգամանքներով՝ ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման կարգը, ըստ էության, պետք է երաշխավորի անձանց խախտված իրավունքների և ազատությունների արդյունավետ վերականգնման համարժեք հնարավորություն:

7. Քրեական գործով վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ փաստաբանի մասնակցության անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես մրցակցային դատավարության շրջանակներում մեղադրանքը հերքող, ամբաստանյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքների բացահայտման և դատարանին ներկայացնելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի նպատակը անձանց խախտված իրավունքների (սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված) վերականգնման հնարավորության և ոչ թե քրեական մեղադրանքի հարցի լուծումն է:

.... Հետևաբար, վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու միջոցով վերականգնման հնարավորությունը՝ վտանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի և թե՛ իր խախտված իրավունքները միջազգային ատյաններում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է դատավարության մասնակից ճանաչելու պահանջի իրավունքի և այն խախտվելիս վերականգնելու երաշխիքների (մասնավորապես՝ դատական կարգով) վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100 հոդվածում ամրագրված նորմերի ընդհանուր իրավակարգավորիչ նշանակությունն ու դրանց տրամաբանական զարգացման անհրաժեշտությունը քրեական դատավարության բոլոր, այդ թվում նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլում (ներառյալ այն դեպքերը, երբ համապատասխան միջնորդությունը մերժվել է միջանկյալ դատական ակտով, հատկապես, երբ այդ ակտով ուղղակի շոշափվում են անձի սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները):

ՍԴՈ-935, 4 փետրվարի, 2011 թ.

5. .... Օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերի, որոնք սահմանում են համապատասխանաբար՝ «քրեական գործ», «գործով վարույթ», «քրեական գործով մինչդատական վարույթ» հասկացությունների բովանդակությունը, վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասում «քրեական գործը նորոգելը» բառակապակցությունը **հավասարապես կարող է վերաբերել** ինչպես դատարանի, այնպես էլ մինչդատական վարույթում գտնվող կամ նշված վարույթներից որևէ մեկի ընթացքում **ավարտված** քրեական գործերին:

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործնականում առաջին հերթին հանցագործության հետևանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության խախտում պետք է դիտարկվի այն, որ օրենսդրության մեջ բացակայում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշումների վերանայման մեխանիզմը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեական հետապնդման մարմնի վերջնական որոշման՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայման հնարավորության համակարգային իրավակարգա-

վորման բացակայությունը պայմանավորված է առաջին հերթին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի 1-ին մասի առկա ձևակերպմամբ, որի արդյունքում վտանգվում է անձի՝ իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

ՍԴՈ-943, 25 փետրվարի, 2011 թ.

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի սահմանադրականության որոշման վերաբերյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետևաբար՝ նաև սահմանադրաիրավական պահանջ:

Այդուհանդերձ, անվերապահորեն ընդունելով, որ եթե օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից **որևէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**, ապա սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով խնդիրն այլ լուծում ունի:

Նախ. փաստն այն է, որ դատական պրակտիկան, օրենսդրական առկա ձևակերպումներից ելնելով, նոր հանգամանք չճանաչելով սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում նորմը ճանաչվել է սահմանադրական, հնարավորություն չի ստեղծում անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման ու պաշտպանության համար: **Երկրորդ՝** փակուղի է մտնում իրավունքի գերակայության, հետևաբար՝ և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: **Երրորդ՝** նման իրավիճակը ոչ միայն դատավարական օրենսգրքերի, այլև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների անկատարությամբ է պայմանավորված:

Ակնհայտ է, որ առկա իրավակարգավորումն ու իրավակիրառական պրակտիկան հակասության մեջ են մտնում ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 6, 18, 19, 92, 93-րդ և մի շարք այլ հոդվածների պահանջների հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից որպես նոր հանգամանք ճանաչելու հարցը թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական և թե՛ վարչական դատավարությունում **համալիր ու անհետաձգելի** կարգավորման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ-984, 15 հուլիսի, 2011 թ.

6. .... Նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցման և վերանայման վարույթի առնչությամբ ձևավորված իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ընթացակարգային առումով այդ վարույթին բնորոշ են հետևյալ հիմնական տարրերը.

– վերանայման բողոքի հիման վրա, **առկա համարելով նոր հանգամանքի փաստը**, իրավասու դատարանը հարուցում է վերանայման վարույթ: Եթե դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը տվյալ անձի առնչությամբ չի հանդիսանում նոր հանգամանք, ապա վերանայման վարույթի հարուցման պահանջը մերժում է,

– հարուցված վերանայման վարույթի շրջանակներում համապատասխան դատական ակտը վերանայելիս ըստ էության գնահատվում է հակասահմանադրական ճանաչված նորմի կիրառման փաստի ազդեցությունն այդ նորմը կիրառած դատական ակտի և/կամ տվյալ գործի ելքի վրա,

– այն դեպքում, երբ հարուցված վերանայման վարույթի շրջանակներում վերոհիշյալ հանգամանքը գնահատելիս իրավասու դատարանը գտնում է, որ հակասահմանադրական ճանաչված նորմի կիրառման փաստը գործի ելքի և/կամ տվյալ դատական ակտի վրա ազդեցություն չի ունեցել, **օրինական ուժի մեջ է թողնում հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտը**: Դրա համար իրավական հիմք են ծառայում ՀՀ քրեական դատավարության և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխանաբար 426.9-րդ հոդվածի 1-ին մասի և 204.38-րդ հոդվածի վիճարկվող դրույթները, որոնցում ամրագրված «ընդհանուր կարգ» ձևակերպումը, ըստ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության, թույլ է տալիս դատական ակտը վերանայելիս ղեկավարվել համապատասխանաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածներով և, ըստ այդմ, օրինական ուժի մեջ թողնել համապատասխան դատական ակտը,

– որպես կանոն՝ վերանայման վարույթի հարուցումը մերժվում է բոլոր այն դեպքերում, երբ հակասահմանադրական ճանաչված իրավանորմի ուժը կորցնելը տարաժամկետվել է սահմանադրական դատարանի որոշմամբ,

– նոր հանգամանքի հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման գործառույթի իրականացման արդյունքում վճռաբեկ դատարանն իրացնում է այն նույն լիազորությունները, որոնք սահմանված են վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերանայման գործառույթի իրականացման արդյունքում:

.... Գնահատելով վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջին պարագայում հաշվի չի առնվել ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման 13-րդ կետում արտահայտված և 2010 թ. փետրվարի 23-ի ՍԴՈ-866 որոշման մեջ վերահաստատված այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ այն դեպքում, երբ դատական ակտի վերանայման համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը, **ապա գործնականում վերանայված ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետև արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմը:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման իրավակիրառական պրակտիկայի արդյունքում, վերանայման պահանջների բավարարման նույնիսկ վերոհիշյալ սակավաթիվ գործերի, առանձին դեպքերում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմերի կիրառմամբ ընդունված դատական ակտերը շարունակում են մնալ օրինական ուժի մեջ և դիմողների համար իրենց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից վերանայման արդյունքում որևէ իրավական հետևանք չի առաջանում: Ընդ որում, առկա են դեպքեր, երբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի կիրառմամբ ընդունված դատական ակտի վերանայման պահանջի առնչությամբ նույնիսկ մերժվում է վերանայման վարույթ հարուցելու պահանջը և կայացվում վերանայման վերաբերյալ բողոքը վերադարձնելու մասին որոշում: Ընդ որում, դեպքերի գերակշիռ մասում այդ պահանջը, ինչպես նշվեց, մերժվում է այն պատճառաբանությամբ, որ սահմանադրական դատարանը, դատարանների կողմից կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող ճանաչելով՝ տարաժամկետել է հակասահմանադրական ճանաչված նորմի ուժը կորցնելը, և բողոք բերող անձը նման պայմաններում չի ապացուցել և հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը: Ավե-

լին, այն դեպքում, երբ բողոքը ներկայացվում է տարաժամկետման ավարտից հետո, բողոքը վերադարձվում է այն պատճառաբանությամբ, որ բաց է թողնված բողոք բերելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը:

Այս առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական պրակտիկան զարգացել է հակառակ սահմանադրական դատարանի 2007 թ. մայիսի 11-ի ՍԴՈ-701 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների: ....

Այսուհանդերձ, ինչպես վկայում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճանաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի և ծանր հետևանքներ հանրության և պետության համար, ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները: Հետևաբար, հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում¦:

Սահմանադրական դատարանը վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով միաժամանակ գտնում է, որ այդ պրակտիկան արդյունք է «վերանայման վարույթ», «դատական ակտի վերանայում» հասկացությունների ոչ ճիշտ ընկալման ու կիրառման:

7. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում «վերանայման վարույթ», «դատական ակտերի վերանայում» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երրորդ բաժնի նորմերի համակարգային վերլուծության արդյունքում՝ **հիմք ընդունելով խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի իրավական բովանդակությունը**:

.... Անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման, որպես անձի խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ իր նախորդ մի շարք որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին և վերահաստատելով դրանք՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ.

– նոր հանգամանքների առկայության պարագայում, այսինքն, երբ առկա է իրավունքի կիրառման օբյեկտիվ անհրաժեշտություն՝ պայմանավորված հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կիրառման իրավաբանորեն հավաստված փաստով, ապա «դատական ակտի վերանայման վարույթի» հարուցումը, դատական ակտը վերանայելու գործընթաց նախաձեռնելն իրավասու դատարանի կողմից իրավաբանական անհրաժեշտություն է, այդ դատարանի սահմանադրական պարտականությունը, որի նպատակն անձի խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումն է,

– օրինական ուժի մեջ մտած դատական համապատասխան ակտը **նոր հանգամանքների հիմքով վերանայելու ծավալը, շրջանակները պայմանավորված են հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կարգավորման առարկայով, հարաբերությունների բնույթով ու առանձնահատկություններով, կիրառման շրջանակներով և դրանցով պայմանավորված՝ նաև անձի կոնկրետ իրավունքների խախտման փաստով:**

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ պատահական չէ, որ թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլուխը վերնագրված է «Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով» և գլխի դրույթներում հիմնականում կիրառվում է **«դատական ակտի վերանայում»** ձևակերպումը, այնուամենայնիվ, նշված գլխի 426.4-րդ հոդվածը վերնագրված է «**Գործերի վերանայման** հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով»:

.... Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ **տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը:**

8. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում խնդրո առարկա սահմանադրաիրավական վեճը դիտարկել նաև գործառույթ – ինստիտուտ – իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության ապահովման տեսանկյունից:

Այսպես. նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի շրջանակներում իրականացվում է օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում խախտված իրավունքի վերականգնման գործառույթ, որն ունի իր ուրույն խնդիրներն ու նպատակները: Այս գործառույթի արդյունավետ իրականացումը կարող է ապահովվել հաշվի առնելով դրա բովանդակությամբ, խնդիրներով ու նպատակներով պայմանավորված առանձնահատկությունները, բացառելով հակասահմանադրական նորմ բովանդակող վերանայվող դատական ակտն ուժի մեջ թողնելու հնարավորությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտը վերանայման արդյունքում ուժի մեջ թողնելը չի երաշխավորում դատական ակտերի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորություն՝ թույլ չտալով նաև դատական ակտերի վերանայման նպատակի ու խնդիրների իրացում, և միաժամանակ արգելափակելով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Տվյալ իրավիճակում չի ապահովվում նաև իրավունքի գերակայության, հետևաբար՝ և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմում «դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով» դրույթն առաջին հերթին վերաբերում է նոր հանգամանքի հիման վրա գործի նորոգման արդյունքում կազմակերպված **գործի քննությանը:** Գործի քննության ընդհանուր կարգը կարող է կիրառվել միայն հակասահմանադրական ճանաչված նորմ կիրառած համապատասխան դատական ակտերի բեկանմանը հաջորդող՝ գործի նոր քննության առնչությամբ:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրաիրավական նպատակի ու խնդիրների իրացումն այդ վարույթի հետևյալ սահմանադրաիրավական բովանդակության պարագայում.

ա) վերանայման բողոքում նոր հանգամանքի շարադրանքի և նոր հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի լրումն բողոքին ներակայացվող մյուս վավերապայմանների առկայության, բավարար հիմք է վերանայման վարույթ հարուցելու համար,

բ) վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե միայն հարուցված վերանայման վարույթի շրջանակներում բողոքի քննության արդյունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դատական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը տվյալ դեպքում նոր հանգամանք չի հանդիսանում. ընդ որում, այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը տվյալ նորմը հակասահմանադրական ճանաչելով՝ տարաժամկետել է այդ նորմի ուժը կորցնելը, սահմանադրական դատարանի 2007 թ. մայիսի 11-ի ՍԴՈ-701 որոշմանը համապատասխան, տարաժամկետման հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ սահմանադրական դատարանի որոշումը նոր հանգամանք չդիտարկելու համար: Այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի կողմից դրույթը հակասահմանադրական է ճանաչվել «այս կամ այն մասով», «այնքանով, որքանով», ապա տվյալ որոշումը դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք է հանդիսանում, եթե տվյալ նորմը տվյալ անձի նկատմամբ այդ մասով կիրառվել է Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ,

գ) եթե վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտերը:

11. Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական դատարանն իր մի քանի որոշումներում արձանագրել է Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման անարդյունավետությունը, այնուամենայնիվ, այդ ինստիտուտը շարունակում է մնալ անկատար: Նշված հանգամանքը նկատի ունենալով՝ սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է համարում ընդգծել նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ողջ մեթոդաբանության հիմնավոր վերարժեվորման անհրաժեշտությունը՝ գտնելով, որ այդ ինստիտուտի իրավակարգավորման մեթոդաբանությունը պետք է խարսխվի պետության՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան պաշտպանելու պարտավորության հենքի վրա:

Անհատական սահմանադրական գանգատի հիմքում ընկած են անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գաղափարն ու նպատակը: Այս նպատակի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանավորված անհատական սահմանադրական գանգատի այս կամ այն մոդելի ընտրությամբ և առանձնահատկություններով՝ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների հիման վրա՝ խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման մեխանիզմները տարբեր են: Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտ ունեցող երկրներում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումն իրականացվում է հենց սահմանադրական դատարանի կողմից, որը, հակասահմանադրական ճանաչելով վիճարկվող նորմը կամ նորմի կիրառումը, միաժամանակ վերացնում է նաև հակասահմանադրական նորմ կիրառած կամ անձի սահմանադրական իրավունքը խախտած դատական ակտը: Նման մեխանիզմի դեպքում պետությունն ինքն է ապահո-

վում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումը սահմանադրական արդարադատության շրջանակներում՝ կատարելով քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության իր պարտավորությունը: Այն երկրներում, որտեղ սահմանադրական վերահսկողության օբյեկտ են հանդիսանում միայն դատական ակտերով կիրառված օրինադրույթները, խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը երաշխավորվում է սահմանադրական դատարանների որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի վերանայման արդյունավետ ինստիտուտի գոյությունը ևս պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ պետությունը պետք է ապահովի խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: Պետության նման պարտավորության կատարումն ապահովելու բավականին արդյունավետ միջոց է դատական ակտերի վերանայումն իրավունքի ուժով: Այս մեթոդաբանությունն է ընկած, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման հիմքում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան նշված մեթոդաբանությունը հաշվի առնելու ուղղությամբ:

ՍԴՈ–1049, 28 սեպտեմբերի, 2012 թ.

6. Գնահատելու համար վիճարկվող իրավակարգավորման ազդեցությունը նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետության ու գործունակության վրա՝ սահմանադրական դատարանը կարևորում է «դատական ակտի վերանայման վարույթ», «դատական ակտի վերանայում» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակության, ինչպես նաև «դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու» և «դատական ակտը վերանայելու» դատավարական փուլերից յուրաքանչյուրի խնդրի ճշգրիտ ընկալումը, դրանց շրջանակներում առաջադրվող և լուծման ենթակա հարցերի շրջանակը՝ կարևորելով նաև դատական պրակտիկայում ոչ միայն «նոր երևան եկած հանգամանքներ» հասկացության, այլև այդ հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման, այսինքն՝ անձի խախտված իրավունքների վերականգնման ընթացակարգային կանոնների միակերպ ընկալման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–984 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում գնահատել է վերոհիշյալ հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը և դատավարական փուլերի իրավակարգավորիչ նշանակությունը՝ ելնելով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման դատավարական գործընթացների արդյունավետության և, հատկապես՝ մարդու սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման տեսանկյունից: Հետևաբար, հիմք ընդունելով նոր հանգամանքների և նոր երևան եկած հանգամանքների հիմքերով դատական ակտերի վերանայման ինստիտուտների սկզբունքային որոշ ընդհանրությունները՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու բացառիկ միջոցներ, և գնահատելով այդ ինստիտուտները որպես մարդու խախտված իրավունքները Սահմանադրության 18–րդ և 19–րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու կարևոր երաշխիք, սահմանադրական դատարանը գտնում է, որ 2011 թվականի ՍԴՈ–984 որոշմամբ, ինչպես նաև այդ հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի մի շարք այլ որոշումներով (ՍԴՈ–701, ՍԴՈ–709, ՍԴՈ–751,

ՍԴՈ–758, ՍԴՈ–765, ՍԴՈ–767, ՍԴՈ–833, ՍԴՈ–872 և այլն) արտահայտված իրավական դիրքորոշումներն այնքանով, որքանով առնչվում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման՝ սույն գործով քննության առարկա գործող իրավակարգավորումներին, կիրառելի են նաև սույն գործով:

7. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երրորդ 3. բաժնի (այդ թվում՝ և սույն գործով վիճարկվող) նորմերով սահմանված են վերոհիշյալ ընդհանուրի փոխլրացման և հատկապես նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման հատուկ կանոններ, որոնք կոչված են հստակեցնելու դատական ակտը վերանայող իրավասու դատարանների լիազորությունները, բողոք բերող անձանց օրինաչափ գործողությունները և բողոքի ներկայացմամբ լուծման ենթակա խնդիրները, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը և կանոնները, ինչպես նաև դատական ակտի վերանայման վարույթի հարուցումն ու ընթացքը:

Վերլուծելով վերոհիշյալ իրավակարգավորումները նախատեսող նորմերի սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք իրենց համակարգային ընդհանուր նշանակությամբ, իրավակարգավորիչ դերով և հետապնդվող նպատակներով սահմանադրականության խնդիր չեն հարուցում, քանի որ կոչված են երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 18–րդ և 19–րդ հոդվածներում ամրագրված դրույթների իրացումը՝ արդար և արդյունավետ դատաքննություն իրականացնելու և անձանց խախտված իրավունքները պաշտպանելու համար: Սակայն այս համատեքստում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում անդրադառնալ «նոր երևան եկած հանգամանքներ» արտահայտության իրավական բովանդակության առանձնահատկություններին՝ այնքանով, որքանով բխում է օրենսգրքի վիճարկվող հոդվածի նորմատիվ բովանդակությունից և դիմող կողմի հարցադրումներից՝ համադրելով այդ նորմը նույն օրենսգրքի իրակարգավորիչ ընդհանուր նշանակություն ունեցող այլ նորմերի հետ, պարզելու համար, թե վիճարկվող նորմը որքանո՞վ է համապատասխանում իրավահավասարության, իրավական որոշակիության սկզբունքներին, դատաքննության արդարության, արդյունավետության և մարդու իրավունքները պաշտպանելու՝ սահմանադրորեն որոշված այլ չափորոշիչներին:

Մասնավորապես, օրենսդիրը վիճարկվող նորմով կարևորել է այն իրավապայմանները, որոնց առկայությամբ միայն իրավասու անձանց կողմից դատարանին ներկայացված հանգամանքները (փաստերը, տեղեկությունները) իրավական իմաստով կարող են գնահատվել որպես «նոր երևան եկած», այդպիսիք են.

– այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց,

– այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան,

– և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Ընդ որում, որպես վերոհիշյալ իրավապայմանների գործադրման անհրաժեշտ ու պարտադիր պայման՝ օրենսդիրը դիտարկել է բողոք ներկայացրած անձի կողմից հիշյալ հանգամանքների իսկության **ապացուցման պարտականությունը**: Այսինքն՝ վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայման համար օրենսդիրն սկզբունքային ուշադրության է արժանացրել գործին մասնակցող անձի կողմից վկայակոչված փաստարկի (փաստերի, հանգամանքների, տեղեկությունների) ապացուցված լինելու հանգամանքը՝ այնպես, որպիսին առկա է քաղաքացիական գործերով ապացույցներ ներկայացնելու և դրանք հետազոտելու (գնահատելու) հետ կապված ընդհանուր իրավակարգավորման դեպքում (օրենսգրքի 8–րդ գլուխ): Այստեղից հետևում է՝ որպես նոր երևան եկած հանգամանքներ կարող են գնահատ-

վել օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով (օրինական եղանակով) ձեռք բերված այն տեղեկությունները, որոնց հիման վրա իրավասու դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակության լիարժեք բացահայտման համար անհրաժեշտ է օրենսգրքի 204.32-րդ հոդվածը և օրենսգրքի երրորդ 3. բաժնի մյուս նորմերը համադրել նաև օրենսգրքի վերոհիշյալ գլխի (8-րդ) համապատասխան նորմերի հետ, որի արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթում.

մի կողմից, իրավասու անձը (գործին մասնակցող անձը, նրա իրավահաջորդը)՝

– իրավասու դատարանին պետք է ներկայացնի օրինական եղանակով ձեռք բերված և օրենքով նախատեսված պահանջները բավարարող ու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ,

– պետք է ապացուցի ներկայացված հանգամանքների նախկինում (մինչև գործով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը) անհայտ լինելը կամ դրանց նորահայտ լինելը, կամ նախապես հայտնի լինելը, բայց իրենից անկախ պատճառներով օրինական ուժի մեջ մտած ակտը կայացրած դատարանին չներկայացնելու պատճառները:

Մյուս կողմից՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը՝

– պարտավոր է նոր երևան եկած հանգամանքների՝ օրենսգրքի 204.32-րդ հոդվածում սահմանված հատկանիշների առկայության, 204.34-րդ հոդվածում սահմանված ժամկետի և 204.36-րդ հոդվածի պահանջների պահպանման դեպքում հարուցել դատական ակտի վերանայման վարույթ կամ հիշյալ պայմանների անբավարարության դեպքում վերադարձնել բողոքը՝ **կայացնելով պատճառաբանված որոշում** (233-րդ հոդվածի 2-րդ մաս), ընդ որում՝ անվերապահորեն պահպանելով սահմանադրական դատարանի ՍԴՈ-690, ՍԴՈ-691, ՍԴՈ-752, ՍԴՈ-754, ՍԴՈ-896, ՍԴՈ-919 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ իրավապայմաններին չհամապատասխանող դատական ակտերը ենթակա են վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ վերոհիշյալ ընթացակարգերում կարևոր է երաշխավորել քաղաքացիաիրավական վեճի լուծման իրավական ընդհանուր այն սկզբունքները, որոնք անմիջականորեն բխում են վիճարկվող նորմի և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված օրենսգրքի այլ նորմերի իրավական բովանդակությունից, մասնավորապես՝ կապված ապացուցման գործընթացի, կողմերի իրավունքների ու պարտականությունների հետ, և այն ընդհանուր կանոնների պահպանմամբ, որպիսիք նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում: Միաժամանակ, **դատարանի խնդիրն ու պարտականությունն են ապահովել բողոքում բերված տեղեկությունների, հանգամանքների, փաստերի բազմակողմանի և անաչառ քննություն՝ դրա արդյունքում բավարար ու միակերպ ընկալելի որոշմամբ պատճառաբանելով ներկայացված փաստարկները որպես նոր երևան եկած հանգամանք գնահատելու կամ մերժելու իրավական շարժառիթներն ու հիմքերը:**

Նոր երևան եկած հանգամանքը նշված հանգամանքներին համապատասխան հաշվի չառնելը և դրա արդյունքում վերանայվող դատական ակտն ուժի մեջ թողնելը չեն երաշխավորում դատական ակտերի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորություն՝ թույլ չտալով նաև դատական ակտերի վերանայման նպատակի ու խնդիրնե-

րի իրացում և միաժամանակ արգելափակելով անձի՝ արդարադատության մատչելիության և արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը:

8. Վերոշարադրյալը նկատի ունենալով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրաիրավական նպատակի ու խնդիրների իրացումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ կետերի հետևյալ սահմանադրաիրավական բովանդակության պարագայում.

ա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետում «այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն» բառակապակցությունը նշանակում է, որ նոր երևան եկած հանգամանքները հաշվի առնելու դեպքում տվյալ գործով կկայացվեր այլ դատական ակտ, քան կայացված դատական ակտն է, կամ որ նույնն է՝ նոր երևան եկած հանգամանքները հաշվի չառնելու դեպքում տվյալ գործի հիմքում կդրվի ու կշարունակի մնալ այնպիսի փաստարկ, որը հայտնաբերված չէր կամ չէր կարող հայտնաբերված լինել ավելի վաղ,

բ) վերանայման բողոքում նոր երևան եկած հանգամանքի շարադրանքի և նոր երևան եկած հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի լրումն բողոքին ներկայացվող մյուս վավերապայմանների առկայության, բավարար հիմք է վերանայման վարույթ հարուցելու համար,

գ) վերանայման բողոք ներկայացնող անձը պարտավոր է ապացուցել նոր երևան եկած հանգամանքը գործին մասնակցած անձանց հայտնի չլինելը, կամ հայտնի լինելու դեպքում նոր երևան եկած հանգամանքը նրանցից անկախ պատճառներով դատարան չներկայացվելը և նոր երևան եկած հանգամանքի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալը բացառապես հարուցված վերանայման վարույթի շրջանակներում,

դ) վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե բողոքի քննության արդյունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դատական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը տվյալ դեպքում նոր երևան եկած հանգամանք չի հանդիսանում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները հաշվի չառնելու դեպքում,

ե) եթե **հարուցված վերանայման վարույթի շրջանակներում** հաստատվում է նոր երևան եկած հանգամանքի առկայության փաստը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները հաշվի առնելով, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն համապատասխան դատական ակտերը:

ՍԴՈ-1099, 31 մայիսի, 2013 թ.

Սահմանադրական դատարանը գտել է նաև, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը **պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը,** որոնց օրենսդրորեն հստակեցումը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

2008 թվականի հոկտեմբերի 21-ի ՍԴՈ-767 որոշման 9-րդ կետում սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել նաև, որ նոր հանգամանքներով դատական ակտերի

վերանայման լիարժեք և արդյունավետ համակարգի առկայությունն է՛լ ավելի է կարևորվում քրեական դատավարության շրջանակներում, քանզի քրեական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի իրավունքների և ազատությունների փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն, մասնավորապես՝ հաշվի առնելով անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու և դրանից բխող հետևանքների առկայության հանգամանքը:

.... Ելնելով մարդկանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով քննության առարկա իրավակարգավորումների բացառիկ կարևորությունից, ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ վճռաբեկ դատարանի ուշադրությունը հրավիրելով սահմանադրական դատարանի՝ 15.07.2011 թ. ՍԴՈ–984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, կրկին արձանագրում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը**: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս **վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum):** Այն դեպքում, երբ անձի սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն, խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը **հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու պարագայում**: Հետևաբար, նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքի վերականգնման միջոց, առաջին հերթին պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի վերացմանը (բեկանմանը), և սա օրենսդրորեն հստակ ամրագրման անհրաժեշտություն ունի:

.... Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտի արդյունավետ կիրառումը պահանջում է նաև իրավական մշակույթի անհրաժեշտ մակարդակ: Առաջին հերթին խնդիրն առնչվում է մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցում պետության պոզիտիվ պարտականության կատարմանը: Եթե հակասահմանադրական նորմի կիրառմամբ է անձի նկատմամբ դատական ակտ կայացվել, ապա ոչ միայն անխուսափելի պետք է լինի այդ ակտի բեկանումը, այլև արդարադատության խնդիրն է նոր հանգամանքներում դատական ճշմարտության բացահայտումը:

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ուսումնասիրված որոշումների կեսից ավելին Սահմանադրության գերակայության երաշխավորման առումով խնդրահարույց է և ձևավորել է իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքին ոչ համարժեք իրավակիրառական պրակտիկա, ուստի դրանց՝ իրավակիրառական պրակտիկայի գնահատման տեսանկյունից, առանձին անդրադարձ է անհրաժեշտ: Բանն այն է, որ կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտը համակարգային առումով փոխկապակցված է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտի հետ, որոնց էությունը կայանում է նրանում, որ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա կոնկրետ դատական ակտի վերանայման արդյունքում համապատասխան հիմքերի առկայության պարագայում տվյալ ֆիզիկական կամ իրավաբանա-

կան անձի գործով կայացվում է նոր դատական ակտ, որը տարբերվում է տվյալ գործով նախկինում՝ մինչև սահմանադրական դատարանի որոշումը կայացված դատական ակտից: Այս համատեքստում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկ է տարբերակել «նոր հանգամանքների հիմքով վերանայման վարույթի հարուցում» և «նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայում» եզրույթները: Այսպես. նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը տեղի է ունենում նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման բողոքի ընդունելիության հարցը լուծելիս, որի ընթացքում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33, 204.36 և 204.37–րդ հոդվածները, չի կարող գնահատվել դիմողին առնչվող գործով կիրառված հակասահմանադրական նորմի ազդեցությունը դատարանի եզրահանգման վրա: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ–984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների ուժով, եթե առկա չեն բողոքը վերադարձնելու հիմքեր, ապա դատական ակտը վերանայող դատարանը պարտավոր է **ոչ միայն հարուցել վերանայման վարույթ, այլև դրա արդյունքում բեկանել վերանայվող դատական ակտը,** այլապես դատական ակտի հիմքում կշարունակվի մնալ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված կամ սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայմանը, **ապա այն վերանայվող դատական ակտի բեկանումից հետո տեղի ունեցող ընթացակարգ է, որի ընթացքում միայն կարող է գնահատվել նոր հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա,** ինչով էլ պայմանավորված է վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը փոփոխելու կամ չփոփոխելու անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում կխաթարվի կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտների էությունը: Ընդ որում, ինչպես արձանագրված է ՍԴՈ–984 որոշման մեջ, դատական ակտը վերանայող՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրավասու են կա՛մ վերանայվող դատական ակտը բեկանել և գործն ուղարկել նոր քննության, կա՛մ վերանայվող դատական ակտը բեկանել և փոփոխել:

10. Սահմանադրական դատարանն էական է համարում նաև այն հանգամանքը, որ գործի քննության ընդունման փուլում վճռաբեկ դատարանը հաճախ իրականացնում է գործն ըստ էության լուծելու գործառույթ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությամբ առավել հստակ պետք է սահմանազատվեն վճռաբեկ դատարանի կողմից գործը քննության ընդունելու և գործով ըստ էության որոշում կայացնելու դատավարական ընթացակարգերն ու ընդունվող որոշումներին ներկայացվող պահանջները: Անհրաժեշտ հստակեցման կարիք ունի նաև «վերջնական դատական ակտ» հասկացությունը: Այն հաճախ շփոթում են վերադաս դատարանի կողմից կայացված ակտի հետ: Եթե քաղաքացին դիմել է վճռաբեկ դատարան և վերջինս մերժել է նրա դիմումը քննության ընդունել, դա չի նշանակում, որ այդ որոշումն է վերջնական դատական ակտ, ինչպիսի մեկնաբանության հանդիպում ենք ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի առանձին որոշումներում, ինչը փաստվեց նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցչի պարզաբանումներում:

Բողոքարկման ինստիտուտի ամբողջական իրացումն անհրաժեշտ է դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու համար: Եթե այդ միջոցներն սպառվում են, ապա ի հայտ է գալիս սահմանադրական դատարան կամ ՄԻԵԴ դիմելու հնարավորությունը: ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետը նախատեսում է յուրաքանչյուր անձի համար սահմանադրական դատարան դիմելու երեք իրավապայման.

– երբ առկա է դատարանի վերջնական ակտը,

– սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները,
– վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրական նորմը վերաբերում է վերջնական դատական ակտին, այլ ոչ թե բողոքարկման ընթացքում վերջին ատյանի դատարանի կողմից ընդունված ցանկացած ակտի: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածը սահմանում է, որ **«Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից»**: Սահմանադրաիրավական բովանդակությամբ դատարանի վերջնական ակտն այն ակտն է, որը գործն ըստ էության լուծել է, օրինական ձևով ուժի մեջ է մտել և անձի համար առաջացրել է համարժեք իրավական հետևանք: Նման մոտեցումից է բխում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.11-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի. «Սույն օրենսգրքի իմաստով՝ **վերջնական** դատական ակտ է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը և շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ դատական պրակտիկայում առկա շփոթը հաղթահարելու համար համանման ակտերին ներկայացվող պահանջներն առավել հստակ պետք է շարադրվեն օրենսդրության մեջ՝ լիովին համապատասխանեցնելով իրավական որոշակիության սկզբունքին:

ՍԴՈ-1222, 26 հունիսի, 2015 թ.

6. Ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով, որպես մարդու խախտված իրավունքները ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու բացառիկ արդարադատական միջոցի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա միակերպ ընկալման ու կիրառման խնդիրներին ՀՀ սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-701, ՍԴՈ-709, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-872, ՍԴՈ-935, ՍԴՈ-1049, ՍԴՈ-1114 և այլն): Դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով սույն գործով քննության առարկա իրավակարգավորման շրջանակներից, հանգեցնում են ելակետային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

– նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ,

– այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում (ՀՀ քաղ. դատ. օր. 204.32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ)՝ նորահայտ են,

– իրավասու անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանքներ դատարան ներկայացված հիմնավորումները (տեղեկությունները, փաստարկները) առիթ են ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը պատշաճ իրավական ընթացակարգով ուսումնասիրելու և իրավական անհրաժեշտ հիմնավորումների (ապացույցների)

առկայության (այդ հանգամանքները որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գնահատվելու) դեպքում հիմք են դատական ակտը վերանայելու (բեկանելու և գործն իրավասու դատարանի նոր քննությանն ուղարկելու) համար, այսինքն՝ այդպիսի քննության շրջանակներում իրավասու դատարանը նաև պետք է որոշի, թե որքանով են ներկայացված հանգամանքներն ազդել քննության առարկա գործի ելքի վրա և ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները,

– դատավարական (քրեական, քաղաքացիական) օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրության խնդիրն է չբացառել որպես «նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը,

– ուժի մեջ մտած դատական ակտը՝ վկայակոչված այս կամ այն (նախապես հայտնի կամ անհայտ) հանգամանքի հիմքով վերանայելու անհրաժեշտության իրավական հիմնավորման (ապացուցման) պարտականությունը կրում է այդպիսի վերանայում նախաձեռնած անձը,

– ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը՝ նոր երևան եկած հանգամանքներով, կատարվում է դատավարական համապատասխան ընթացակարգով, որի շրջանակներում իրավասու դատարանը կոչված է լուծելու արդարադատական հետևյալ հիմնական խնդիրները. գործով կայացված որոշման հիմքում չարտացոլված և նոր երևան եկած փաստական հանգամանքների (ապացույցների) ուսումնասիրում, իրավագնահատում և իրավական վեճի լուծման համար օրենսդրության համապատասխան նորմերի ընտրություն, դրանց մեկնաբանում ու կիրառում, որոնց հաջորդում են պարտադիր իրավական հետևանքներ, այդ թվում՝ անձի իրավունքների պաշտպանության հետ կապված:

7. Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականության գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հարցը դիտարկել ինչպես նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուցիոնալ առկա ընդհանուր լուծումների (քաղաքացիական և քրեադատավարական), այնպես էլ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված՝ անձի իրավունքների պաշտպանության (դատարանի մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների) երաշխավորման սահմանադրական իրավաչափության և վարչադատական, ինչպես նաև վարչական վարույթի ընթացակարգերի գոյություն ունեցող առանձնահատկությունների համատեքստում, ելնելով նաև սույն գործով կողմերի հարցադրումներից, կարևորելով, մասնավորապես՝

– թե որքանո՞վ են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի նորմերն իրավական իմաստով լիարժեք երաշխավորում գործի համար նշանակություն ունեցող այս կամ այն տեղեկատվության (ապացույցի) որպես «նոր երևան եկած հանգամանք» գնահատելու հնարավորությունը և, մասնավորապես՝ այն իմաստով, որ եթե դատավարության մասնակցի կողմից ներկայացված տվյալ հանգամանքը հայտնի լիներ դատարանին (հետազոտված լիներ դատարանի կողմից), ապա կկայացվե՞ր այլ որոշում, քան այն, որն այդ հանգամանքի երևան գալու հիմքով վիճարկվում է,

– սույն գործով վիճելի իրավակարգավորմամբ որքանո՞վ են երաշխավորվում «նոր երևան եկած հանգամանք» իրավական եզրույթի հատկանիշներ պարունակող (ՍԴՈ-935)

այս կամ այն տեղեկատվության (ապացույցի) հետազոտման ու գնահատման արդյունավետ արդարադատական գործընթացներ,

– քննության առարկա իրավակարգավորմամբ որքանո՞վ է երաշխավորված անձի իրավունքներն արդար, մատչելի ու արդյունավետ դատաքննությամբ պաշտպանելու՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում նախատեսված իրավունքի լիարժեք իրացումը,

– սահմանադրական օրինականության տեսանկյունից որքանո՞վ է իրավաչափ նոր երևան եկած հանգամանքների հիմքով ծագած իրավահարաբերությունները վարչական վարույթի շրջանակներում կարգավորելը:

Հաշվի առնելով վերոթվարկյալ հարցադրումները և նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուցիոնալ առկա ընդհանուր լուծումները, սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև վիճելի իրավակարգավորման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելը» վերտառությունը կրող 25-րդ գլխում ներառված նորմերի համատեքստում վերլուծությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

– ուժի մեջ մտած դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու ինստիտուտ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսելը այդ ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը, ինչպես նաև անձի խախտված իրավունքների պաշտպանությունն ապահովելու լրացուցիչ երաշխիք է,

– որպես «նոր երևան եկած» հանգամանք գնահատելի փաստարկներն ու տեղեկություններն ուսումնասիրելու և դրանց պատշաճ իրավական գնահատական տալու համար օրենսդիրը նախատեսել է համապատասխան ընթացակարգ, դատավարության մասնակիցների իրավական կարգավիճակ, որը թույլ է տալիս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածում նախատեսված հիմքերի քննության շրջանակներում իրականացնել որոշակի դատավարական իրավունքներ և կրել պարտականություններ, այդ թվում՝ ներկայացված հանգամանքների «նոր երևան գալը» դատարանում ապացուցելը,

– նոր երևան եկած հանգամանք հանդիսացող հիմքեր նախատեսելիս օրենսդիրն առաջնորդվել է այդպիսի հանգամանք հանդիսացող հնարավոր տեղեկությունների (փաստերի) անվանացանկը սահմանափակելու սկզբունքով, քանի որ որպես ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հնարավոր հիմք են դիտարկվել միայն տվյալ գործով դատավարության մասնակիցների (նրանց ներկայացուցիչների), դատավորի կողմից կատարված, ինչպես նաև դատական տվյալ ակտի կայացման հիմքում առկա և օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված հանցավոր գործողությունները, դրանով իսկ բացառելով տվյալ գործով դատական ակտի կայացման պահին օբյեկտիվորեն առկա և(կամ) դատավարության մասնակիցներին, դատարանին անհայտ այլ հիմքեր, որոնց պատշաճ հետազոտումն ու իրավական գնահատականն անխուսափելիորեն կհանգեցնեին դատական այլ որոշման, քան՝ կայացվել է:

Հարկ է նշել նաև, որ վիճարկվող նորմերում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանցավոր գործողությունները որպես նոր երևան եկած հանգամանք նախատեսելը քննության առարկա իրավակարգավորման շրջանակներում ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում: Այդպիսի հանգամանքի գոյությունն օբյեկտիվորեն կարող է որոշիչ նշանակություն ունենալ վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտերի վերանայման և արդար որոշումներ կայացնելու համար: Նման հանգամանքները, ի թիվս այլնի, համապատասխան հատկանիշների առկայությամբ որպես «նոր երևան եկած» գնահատելու իրավական հնարավորություն է նախատեսված նաև ՀՀ քրեական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում: Սակայն այդպիսի հանգամանքներում հատ-

կապես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին իրավական բացառիկ նշանակություն հաղորդելն էականորեն սահմանափակում է հանցավորության փաստը հաստատող այլ փաստական հանգամանքներ որպես նոր երևան եկած հանգամանք դիտարկելու և վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտը վերանայելու իրավական հնարավորությունը (օրինակ՝ համաներման և ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված այլ հիմքերով ու կարգով քրեական վարույթի կարճման, քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում), երբ օրենքով սահմանված կարգով հաստատված են հանցագործության փաստն ու այն կատարած անձը: Հետևաբար, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման իրավակարգավորումն ինքնին էապես սահմանափակում է վարչական դատավարության շրջանակներում վերոհիշյալ հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի կիրառման հնարավոր շրջանակները, հետևաբար՝ անձի իրավունքների լիարժեք պաշտպանության արդյունավետ միջոց չի կարող հանդիսանալ:

Վիճարկվող նորմերի իրավական բովանդակությունից նաև հետևում է, որ անձը զրկված է որպես «նոր երևան եկած» գնահատելի **այլ հանգամանքների** հիմքով վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտը վիճարկելու հնարավորությունից, մասնավորապես՝ իրավաբանորեն փաստագրված հանցագործության հետ չկապված նոր երևան եկած այնպիսի հանգամանքների հիմքով, որպիսիք տվյալ գործով դատական ակտի կայացման պահին գոյություն են ունեցել, գործի արդար լուծման համար ունեցել են էական նշանակություն, սակայն դատավարության մասնակիցների կամքից անկախ չեն ներկայացվել, դատարանին անհայտ են մնացել: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 181-րդ հոդվածում, ի տարբերություն ՀՀ քրեական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի համապատասխան իրավակարգավորումների, օրենսդիրը չի նախատեսել որպես «նոր երևան եկած» գնահատելի այլ հանգամանքների հիմքով վարչական դատարանի ուժի մեջ մտած ակտի վերանայման հնարավորություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման այնպիսի իրավակարգավորումը, համաձայն որի՝ էականորեն սահմանափակվում են ապացուցողական նշանակություն ունեցող փաստական այլ հանգամանքների իրավագնահատման պատշաճ դատավարական գործընթացներն այն դեպքերում, երբ այդպիսի հանգամանքների օբյեկտիվ գոյությունն անխուսափելիորեն հանգեցնում է (կհանգեցնի) դատական այլ որոշման, քան մինչ այդ հանգամանքների երևան գալը կայացվել է, կամ որ նույնն է՝ արդար, հիմնավոր, օրինական դատական ակտի կայացմանը, հետևաբար՝ նաև անձի խախտված իրավունքների վերականգնմանը, սահմանափակում է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձի արդյունավետ և մատչելի դատաքննության իրավունքը, հակասում է արդարադատության բուն նպատակներին ու ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներում և 6-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներին:

8. Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում պատասխանող կողմի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ օրենսդրի կողմից (ի տարբերություն նախորդ իրավակարգավորման (ՀՀ վարչ. դատ. օր. 134-րդ հոդված (28.11.2007 թ. խմբ.) վիճարկվող իրավակարգավորմամբ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող հիմքերի սպառիչ ցանկ նախատեսելը կամ այլ հնարավոր նման հիմքեր չնախատեսելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածում՝ դատարանի կողմից փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու վերաբերյալ արդարադատական սկզբունքի ամրագրմամբ:

Ակնհայտ է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու իրավական պահանջն ու ընթացակարգային սկզբունքը պայմանավորված են վարչադատավարական քննության առանձնահատկություններով և, մասնավորապես՝ դատարանի կողմից հան-

րային-իրավական վեճերի լուծման շրջանակներում լուծվող խնդիրներով, վարչական դատավարության մասնակիցների (կողմերի) միջև մրցակցային հարաբերություններում դատարանի ունեցած առանձնահատուկ դերով և այլն: Սակայն սահմանադրական դատարանը գտնում է, որ **դատավարական ընթացակարգի որևէ առանձնահատկություն չի կարող սահմանափակել տվյալ գործով ըստ էության կայացված դատական ակտի օրինականությունը, հիմնավորվածությունը կասկածահարույց դարձնող որևէ, այդ թվում՝ նոր երևան եկած, հանգամանքի արդար, արդյունավետ և մատչելի դատաքննությամբ հետազոտումն ու օրենքով անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում կայացված դատական ակտի վերանայումը:**

Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև ընդգծել, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատավարական սկզբունքի առկայության պայմաններում էլ (ինչին հղում է կատարում պատասխանող կողմը) որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանքները ներկայացնելու (ապացուցելու) իրավունքն ու պարտականությունը կրում է ոչ թե դատարանը, այլ՝ **դատավարության շահագրգիռ մասնակիցն իր կամահայտնությամբ և նախաձեռնությամբ**: Եվ վարչական դատավարության շրջանակներում մրցակցային քննության որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում:

9. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե անձն իր իրավունքների պաշտպանության նպատակով չի դիմել դատարան, այլ ընտրել է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ օրենքով նախատեսված արտադատական միջոց (տվյալ դեպքում՝ վարչական մարմնին), նման իրավակարգավորումն ինքնին չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների սահմանափակման:

ՍԴՈ-1275, 31 մայիսի, 2016 թ.

7. .... Այս կապակցությամբ արձանագրելով, որ դատական ակտի վերանայման բողոք կամ դիմում ներկայացնելու համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ, Սահմանադրական դատարանը միևնույն ժամանակ գտնում է, որ Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պետք է, ելնելով անձի՝ դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ երաշխիքներ նախատեսի դրանց ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք կամ դիմում ներկայացնելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե **որքանով է Սահմանադրական դատարանի որոշումը հասանելի շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:**

.... Սահմանադրական դատարանը նկատի է առնում, որ.

նախ՝ Սահմանադրական դատարանի որոշումն առնչվում է ոչ միայն Սահմանադրական դատարանում դատավարությանը մասնակից դարձած անձանց շահերին, այլ՝ նաև այդպիսիք չհանդիսացող անձանց շահերին,

երկրորդ՝ Սահմանադրական դատարանն իր որոշումները դատավարության մասնակից չհանդիսացած անձանց առաքելու պարտականություն չունի (բացառություն են կազմում Հանրապետության Նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, ՀՀ վճռաբեկ դատարանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և ՀՀ գլխավոր դատախազը),

երրորդ՝ Սահմանադրական դատարանի որոշումը համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելու համար սահմանված է առավել սեղմ ժամկետ (հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում), քան ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրում և «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» պաշտոնական պարբերականում հրապարակելու համար (որոշումները տպագրվում են ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրում եռամսյա ժամկետում, իսկ ՀՀ պաշտոնական տեղեկագրում՝ որոշման ընդունմանը հաջորդած եռօրյա ժամկետում որոշումն ուղարկելուց հետո ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում՝ չորեքշաբթի օրը):

Ելնելով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը երաշխավորելու նկատառումներից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ այն շահագրգիռ անձանց համար իրավական հետևանք է առաջացնում «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելուց հետո», երբ տվյալ որոշումը նոր հանգամանքների հիմք է հանդիսանում:

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ

ՍԴՈ-1251, 19 հունվարի, 2016

8. Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթին համանման իրավակարգավորում է նախատեսված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածներով:

Բոլոր դեպքերում դատարանի իրավասությանն է վերապահված գնահատելու, թե արդյոք հնարավոր է տվյալ գործի քննությունը մինչև այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Սակայն գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքի վերանալու հարցը պարզելիս բոլոր ատյանների դատարաններն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են ոչ միայն **ստուգել** սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշման կայացված կամ դեռևս չկայացված լինելը, այլ նաև այդ որոշման բացակայության պայմաններում գործի վարույթը վերսկսելու հնարավորության հարցը, ինչը կնպաստի անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքների երաշխավորմանը:

ՍԴՈ-1074, 5 փետրվարի, 2013 թ.

6. .... Հաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարաբնույթ օբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքն իրավաչափորեն երկարաձգող հնարավոր հանգամանքների առկայությունը և դրանով պայմանավորված՝ արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացման շահերից ելնելով նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը հակասության մեջ չի գտնվում Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու սկզբունքի հետ: ....

Վերոգրյալի հիման վրա՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի քննությունը վերսկսելու ինստիտուտի անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով ամրագրված՝ գործի փաստերն ի պաշտոնե («ex officio») պարզելու դատավարական սկզբունքի տրամաբանությունից:

9. Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում կարևորում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրականության գնահատման հարցը՝ դատական ակտերի պատճառաբանվածության տեսանկյունից:

.... Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ տվյալ դատական ակտը կայացնելու իրավասությունը **ենթադրում է իրավունքով սահմանափակված հայեցողություն և պատճառաբանված դատական ակտ կայացնելու պարտականություն:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ գործի քննությունը վերսկսելու մասին պատճառաբանված դատական ակտ կայացնելու որոշակի իրավական երաշխիք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի ուժով, ի թիվս այլնի, միջանկյալ դատական ակտին ներկայացվող պահանջների նկատմամբ տարածվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, մասնավորապես, այդ օրենսգրքի 144-րդ հոդվածը, պարտավորեցնում է դատարաններին դատական ակտ կայացնելիս այդ ակտում նշել նաև այն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է համապատասխան հետևությունների:

10. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև դիտարկվող հիմնահարցն ուսումնասիրել կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկությունների համատեքստում՝ հաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայում ստեղծված իրավիճակը:

Այս առումով սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ինքնին գործի քննությունը վերսկսելու ինստիտուտի նպատակը թեև իրավաչափ է, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն **կիրառելի է բացառապես միայն այն դեպքերում,** երբ առկա են գործով ապացույցները լրացուցիչ հետազոտելու կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու՝ իրապես օբյեկտիվ հիմքեր և պատճառներ: Հակառակ պարագայում, ինչպես վկայում են դիմողները, դատարանների կողմից դիտարկվող ինստիտուտի անհարկի և չհիմնավորված (առանց պատշաճորեն պատճառաբանելու) կիրառումը գործնականում կարող է հանգեցնել գործի դատական քննության ողջամիտ ժամկետների չարդարացված և անթույլատրելի խախտումների և, վերջին հաշվով, արդարադատության բուն նպատակների խաթարմանը:

.... Սահմանադրական դատարանը հանգում է այն եզրակացությանը, որ դիմողների իրավունքների հնարավոր խախտումները պայմանավորված չեն վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակությամբ կամ դրանց տրված որևէ կոնկրետ մեկնաբանությամբ: Վեճի առարկան, ըստ էության, օրենքի նորմի այնպիսի կիրառումն է, երբ խնդիրն առնչվում է դատական հայեցողության սահմանների ոչ համարժեք ընկալմանը:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՍԴՈ–1115, 24 սեպտեմբերի, 2013 թ.

5. .... Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման շրջանակներում պահանջատիրոջը վերապահված իրավունքներն իրենց էությամբ կիրառելի են նաև իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության, համայնքի, օտարերկրյա պետության նկատմամբ:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրության 42.1–րդ հոդվածին համահունչ՝ օրենսդիրը դիտարկվող օրենքով սահմանել է պահանջատեր հանդիսացող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով **ոչ միայն քաղաքացուն, այլև իրավաբանական անձին:** Հետևողական մոտեցում ցուցաբերելով դիտարկվող օրենքի տրամաբանությանը՝ օրենսդիրն օրենքի, մասնավորապես, 22–րդ և 25–րդ հոդվածներում նույնպես կիրառել է «պահանջատեր» եզրույթը՝ տարբերակում չդնելով պահանջատեր հանդիսացող սուբյեկտների միջև:

ՍԴՈ–1262, 22 մարտի, 2016 թ.

6. .... ՀՀ ԴԱՀԿ ծառայության իրավասությունն է կատարողական թերթի ժամանակին, լրիվ և ճիշտ կատարման համար միջոցներ ձեռնարկելը, այլ ոչ թե դատական ակտի և կիրառման ենթակա օրենքի մեկնաբանությունը: Դատական ակտի իրավաչափության քննությունն ու օրենքի միատեսակ կիրառության ապահովումը ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական իրավասության խնդիրն է:

Հարկ է նշել, որ անդրադառնալով կատարման ներկայացնելու ժամկետի հաշվարկի սկզբի հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.04.2015 թ. թիվ ԵԿԴ/0024/16/12 որոշմամբ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ իր սահմանադրաիրավական գործառույթին համապատասխան՝ վիճարկվող դրույթների կապակցությամբ իրավաչափորեն նշել է. «Այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը, այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել սկսած այն օրվանից, երբ կայացվել է արբիտրաժային տրիբունալի վճիռը: Մինչդեռ այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) վճիռները և որոշումները ճանաչելու վերաբերյալ դատական ակտը, ապա այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից»:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

ՍԴՈ–690, 9 ապրիլի, 2007 թ.

7. .... ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006 թ. հոկտեմբերի 18–ի ՍԴՈ–652 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ե-

ռաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: ....

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման օրենսդրական ընթացակարգով պետք է լիարժեք պաշտպանելի լինեն անձի՝ առանց բացառության բոլոր, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, որը, ըստ դիմող կողմի՝ բավարար երաշխավորված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերում:

Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաև կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, որն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունը նաև վճռաբեկ վարույթում գնահատելու առումով: ՀՀ Սահմանադրության փոփոխություններով, ինչպես նաև արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների դատական պաշտպանության լիարժեք երաշխավորման իրավաչափ նպատակներով պայմանավորված 2006 թվականի հուլիսի 7-ի (ՀՕ-153-Ն) օրենսդրական փոփոխությունները՝ կապված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված դատական բողոքարկման կարգի հետ, իրականացվել են միայն վճռաբեկ դատարանի գործառույթների շրջանակում, վերաքննիչ դատարանի գործող կարգավիճակի պայմաններում, առանց համապատասխան անցումային դրույթների: Դրա արդյունքում առանձին անձինք գործնականում զրկվել են դատական ակտերի բողոքարկման՝ օրենքով նախատեսված նախկին կարգով սկսված և դեռևս չավարտված գործընթացի պայմաններում իրենց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու լիարժեք հնարավորությունից: ....

9. Անդրադառնալով ՀՀ վճռաբեկ դատարանի կարգավիճակով պայմանավորված օրենսդրական լիազորությունների և դրանց իրացման ընթացակարգերի սահմանադրաիրավական գնահատմանը, սահմանադրական դատարանը կարևորում է սույն գործով վիճարկվող նորմերում ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի և դրա արդյունավետ իրացումն ապահովող ու, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով կարևորված՝ որոշակիության, մատչելիության և արդյունավետ միջոցների իրավական չափորոշիչների երաշխավորվածության հարցը, որով է նաև դիմող կողմը պայմանավորում վճռաբեկ վարույթում իր իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:

.... Հաշվի առնելով նաև վերոհիշյալ մոտեցումները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1. և 231.2. հոդվածների նորմերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը ելնում է ՀՀ վճռաբեկ դատարանում իրավասու անձանց վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոնների օրենսդրական այնպիսի կանոնակարգման անհրաժեշտությունից, որոնք, օրինական նպատակ հետապնդելով հանդերձ, լինեն միակերպ ընկալելի և մատչելի՝ ապահովելու համար այդ նպատակի և կիրառվող միջոցների միջև արդար հավասարակշռությունը: Միաժամանակ, վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգային կանոններն արդարացիորեն կարող են պարունակել միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք պայմանավորված են ՀՀ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթի բովանդակությամբ, կապված ոչ թե մասնավոր, այլ՝ «....ամբողջ հասարակության համար նշանակություն ունեցող իրավունքի հարցերի», «....օ-

րենքի միատեսակ մեկնաբանման», դատական գործերով փաստական առանձնահատուկ հանգամանքների, դրանց գնահատման խնդրի, նյութական և ընթացակարգային իրավանորմերի ճիշտ կիրառումն ապահովելու հետ:

10. .... Այսպիսով, օրենսդրորեն հստակեցված են իրավական այն պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն իրավասու սուբյեկտի (այդ թվում՝ քաղաքացու) դիմումը (վճռաբեկ բողոքը) ճանաչվում իրավաչափ, և այն սահմանված կարգով ներկայացվելու ձևով դրսևորված կամաարտահայտման արդյունքում է միայն ՀՀ վճռաբեկ դատարանն իրավասու գործադրել սահմանադրաիրավական կարգավիճակից բխող օրենսդրական իր լիազորությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի վերոհիշյալ նորմատիվ պայմանները սահմանադրական դատարանի գնահատմամբ նպատակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել ձևական պահանջներով, այլ պայմանավորված են վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթով:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան պարզել ու գնահատել բողոքատու անձանց փաստարկների բնույթը, իրավական նշանակությունը և կայացնել պատճառաբանված որոշում: Վճռաբեկ վարույթում բողոքատու անձանց առջև ՀՀ վճռաբեկ դատարանի կարգավիճակով պայմանավորված իրավական պահանջների առաջադրումը՝ կապված բողոքի բովանդակության, դրա հիմնավորման և ներկայացման կարգի հետ, իրենց հիմնական բովանդակությամբ տարբերվում են վերաքննիչ վարույթում գործող կարգից: Այդ պահանջներն առնչվում են իրավունքի, դրա մեկնաբանման ու իրացման, այլ ոչ թե փաստերի ձեռքբերման, նախնական հետազոտման ու գնահատման հետ: Ուստի վճռաբեկ դատարանի կողմից «էական նշանակություն», «ծանր հետևանք» և «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» արտահայտությունների՝ դատական գործերի հանգամանքներից բխող բովանդակային հստակեցումը, մեկնաբանումը, պատճառաբանումը պայման է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետում և 231.2. հոդվածի 1-ին կետում նախանշված հիմքերին համապատասխան՝ վճռաբեկ վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը կանխատեսելի դարձնելու համար:

11. .... Այսուհանդերձ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համակարգային բարեփոխումների ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև անցումային համակարգերին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են իրավագիտակցության դեռևս ցածր մակարդակը, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման անբավարար աստիճանը, համակարգային անկատարությունները, կոռուպցիոն ռիսկը և այլն: Հետևաբար, իրավակարգավորման առանցքային խնդիրներից են, մասնավորապես, Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական, իրավական պետության կայացման նախադրյալների ապահովումը, սահմանադրական ժողովրդավարության ամրապնդումը, Սահմանադրության հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքների ստեղծումը, դատական իշխանության անկախության ու անկողմնակալության նկատմամբ հասարակության անդամների վստահության ամրապնդումը և այլն: Պատահական չէ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասով սահմանադրական դատարանից պահանջվում է, որպեսզի նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս հաշվի առնվի նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրությամբ նախատեսված՝

իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովվածությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը և այլն: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրորեն նախատեսված պետաիշխանական ցանկացած բնույթի լիազորություն (այդ թվում՝ հայեցողական) անհրաժեշտ նպատակ հետապնդելու հետ մեկտեղ, պետք է ուղեկցվի վերջինիս հասնելու հասարակական հարաբերությունների կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված իրավական, չափավոր միջոցներով, տվյալ դեպքում՝ պարտադիր հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 3 հոդվածում, 47 հոդվածի առաջին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների անխախտելիությունը: Մասնավորապես, վճռաբեկ վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ միայն վճռաբեկ բողոքի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելը, այլև բողոքը վերադարձնելու պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Դրա բացակայության հետևանք է, որ գործով ուսումնասիրված՝ վճռաբեկ դատարանի թե՛ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և թե՛ վերադարձնելու մասին որոշումներում ըստ էության չեն տրվում պատճառաբանություններ:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթը՝ 10-օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

ՍԴՈ-709, 20 հուլիսի, 2007 թ.

6. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի՝ վիճարկվող 4-րդ մասում տեղ գտած դրույթը, համաձայն որի՝ բողոքը թողնվում է առանց քննության, եթե վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել, իրավազոր պահանջ է, քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշվում է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ «վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը»: Այս դրույթը վճռաբեկ դատարանի կողմից օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրականացման գործուն միջոցներից է: Այն հնարավորություն է տալիս վճռաբեկ դատարանին հետևողական լինել ստորադաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարման նկատմամբ: Վճռաբեկ դատարանի նշված լիա-

զորությունը կոչված է նաև որոշակիորեն ապահովելու արդարադատության ոլորտում իրավական կանխատեսելիության և անձի իրավունքների պաշտպանության սկզբունքները:

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

5. Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը: Գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկվում են վերաքննության և վճռաբեկության կարգով՝ քաղ. դատ. օր. 4–րդ և 5–րդ բաժինների կանոնների հիման վրա: Ինչ վերաբերում է գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատական ակտերի բողոքարկման կարգի կապակցությամբ կատարված փոփոխությունները ևս ելնում են նշված տրամաբանությունից և միտված են նրան, որ ապահովվի դատարանների և դրանց պաշտոնատար անձանց ակտերի դեմ բերված բողոքների կոլեգիալ կարգով քննությունը, ինչը կստեղծի արդյունավետության և օբյեկտիվության լրացուցիչ երաշխիք: Այսպես. ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004 թ. ընդունված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը սահմանում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման բողոքարկելիությունը՝ ամրագրելով, որ այդ որոշումը ենթակա է բողոքարկման վճռաբեկության կարգով: 21.02.2007 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված և 07.04.2007 թ. ուժի մեջ մտած՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվում է դատարանների առանձին որոշումների բողոքարկման նոր կարգ, որի համաձայն՝ մասնավորապես, տնտեսական դատարանի որոշումների դեմ բերված բողոքները տնտեսական դատարանում պետք է քննվեն կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումները ենթակա են բողոքարկման վերաքննիչ դատարան: Նույն տրամաբանությունն է արտահայտված նաև ՀՀ դատական օրենսգրքում:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

9. .... Սույն գործի շրջանակներում իրավասու չլինելով անդրադառնալու ՀՀ դատական օրենսգրքի՝ նշված տրամաբանության վրա հիմնված դրույթների սահմանադրականությանը, այնուամենայնիվ, սահմանադրական դատարանը նման մոտեցումը խնդրահարույց է համարում ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի տեսանկյունից: ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 1–ին մասն ամրագրում է Հայաստանի Հանրապետության դատարանակազմության հիմքում ընկած հետևյալ ընդհանուր կանոնը. «Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը....»: Սահմանելով այն ընդհանուր նորմը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության դատական համակարգի հիմնական բաղադրիչն ընդհանուր իրավասության դատարաններն են՝ միաժամանակ նույն դրույթով Սահմանադրությունն ամրագրել է ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան համակարգը, որը ներկայացված է առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի միջոցով: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի առնչությամբ քաղաքացիների համար գործում է դատական պաշտպանության եռաստիճան համակարգը. ընդհանուր իրավասության դատարանների բոլոր ակտերը ենթակա են բողոքարկման քաղաքացիական և քրեական վերաքննիչ դատարաններ,

իսկ այդ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանների ընդունած որոշումները ենթակա են բողոքարկման վճռաբեկ դատարան:

Տարբեր ատյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական ատյանի իրավասությունների և գործառույթների կրողը: Հետևաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում:

.... Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունների բնույթից բխում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերանայելիս, հատկապես այն դեպքում, երբ վերադաս դատական ատյանը փոփոխում է ստորադաս դատական ատյանի ակտը, վերադաս դատական ատյանների դատական ակտերը հանդես են գալիս որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նոր և ինքնուրույն արդյունք՝ ըստ էության ազդելով ստորադաս դատարանի դատական ակտի բովանդակության վրա և դատավարության կողմերի համար առաջացնելով նոր իրավական հետևանքներ:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը շեղվել է վերոհիշյալ տրամաբանությունից՝ աղճատելով ստորադասության վրա հիմնված դատական եռաստիճան համակարգի էությունն ու բովանդակությունը, դատական երեք ատյանների միջև ֆունկցիոնալ կապը՝ հաշվի չառնելով դատական երեք ատյանների գործառույթների առանձնահատկությունները:

11. .... Միաժամանակ, նոր հանգամանքների հիման վրա վերանայման են ենթակա ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը: Իսկ միջանկյալ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն իրավասու են կայացնելու նոր դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս դեպքում ավելի քան ակնհայտ է, որ միայն առաջին ատյանի դատարանի միջանկյալ ակտի՝ նոր հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը բացառում է վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից միջանկյալ դատական ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կայացված նոր դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

13. **ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի և վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանադրաիրավական բնույթը սահմանադրական դատարանը նախևառաջ հարկ է համարում գնահատել քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումների համատեքստում:**

Այսպես, մինչև վերջին օրենսդրական փոփոխությունները վճռաբեկության կարգով կարող էին բողոքարկվել և՛ առաջին ատյանի դատարանի, և՛ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Ընդ որում, ուժի մեջ մտած ակտերի բողոքարկման առնչությամբ գործում էր միջնորդավորված կարգը, իսկ անմիջականորեն կարող էին բողոքարկվել վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումն ընթացավ

այն ճանապարհով, որ ոչ միայն վերացվեց վճռաբեկ դատարան անմիջական դիմելու կարգը, այլ նաև վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա ակտերի շրջանակն ըստ էության սահմանափակվեց միայն վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով: Ավելին, ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 28.11.2007 թ. ՀՀ օրենքներով սահմանվեցին այնպիսի դրույթներ, որոնք ոչ միայն լուրջ խոչընդոտներ ստեղծեցին վճռաբեկ դատարան դիմելու խնդրում՝ էականորեն սահմանափակելով այդ դատարանի մատչելիությունը, այլ նաև սահմանափակեցին եռաստիճան դատական համակարգում իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունները:

.... Փաստորեն, քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության համապատասխան փոփոխությունների արդյունքում ոչ միայն դատավարության մասնակիցը զրկվել է առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները՝ թեկուզ միջնորդավորված կարգով, վճռաբեկ դատարանում բողոքարկելու հնարավորությունից, այլ նաև վերացվել է այն միակ ուղին, որով ապահովվում էր դատավարության մասնակիցների անմիջական մուտքը վճռաբեկ դատարան (վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերն անմիջականորեն վճռաբեկության կարգով բողոքարկելու հնարավորությունը), ինչի արդյունքում վճռաբեկ դատարանի մատչելիությունը դատավարության մասնակիցների համար հասցվել է նվազագույնի:

Օրենսդրական զարգացումների համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի գոյության ազդեցությունը վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս՝ հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով սահմանված վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, ինչպես նաև բողոքը քննության ընդունելու պայմաններն օրենսդրական փոփոխությունների արդյունքում բավականին սեղմվել են: Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նույնիսկ հավատարմագրված փաստաբանների կողմից կազմված վճռաբեկ բողոքների գերակշիռ մեծամասնությունը, չբավարարելով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու բավականին սեղմ պայմանները, վերադարձվում է, ինչի արդյունքում հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելն ինքնին իմաստազրկվում է: ....

21. .... Սահմանադրական դատարանը հատուկ կարևորում է **վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի** անխախտելիության ապահովումն ինչպես ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի վիճարկվող նորմում, այնպես էլ օրենսդրության՝ այլ, այդ թվում նաև քրեաիրավական նորմերում, դիտարկելով այն որպես ՀՀ Սահմանադրության 5, 94 և 97 հոդվածներում ամրագրված **դատական իշխանության անկախության սկզբունքի** իրականացման կարևոր երաշխիք: Դատական ակտի իրավական գնահատականը կարող է տրվել միմիայն արդարադատական ընթացակարգով այն քննության առարկա դարձնելու արդյունքում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սկզբունքը չի ենթադրում, որ դատավորը ենթակա չէ պատասխանատվության, այդ թվում քրեորեն պատժելի արարքի համար: Այդ իրավահարաբերություններն օրենսդրորեն պետք է կանոնակարգվեն ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթների շրջանակներում: Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետն իրավակիրառական պրակտիկայում չի կարող մեկնաբանվել այն բովանդակությամբ, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով անհնարին դարձնի դատական ակտերի բողոքարկումը դատախազության կողմից՝ ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով վերապահված լիազորության շրջանակներում:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

14. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի անարդյունավետությունը պայմանավորող գործոն է հանդիսանում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 115–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքն իրավական հիմք է հանդիսանում այդ ակտի կատարման, այդ թվում հարկադիր կատարման գործընթաց նախաձեռնելու համար: Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական թերթ տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում: Վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված է եռամսյա ժամկետ: Այսինքն՝ գործնականում հնարավոր է, որ մինչև վճռաբեկ բողոք բերելը վարչական դատարանի ակտն արդեն կատարված լինի: Նման պայմաններում վճռաբեկության կարգով բողոքարկումը կարող է դառնալ իմաստազուրկ և բացառել բողոքարկող կողմի համար անդառնալի բացասական հետևանքները կանխելու հնարավորությունը՝ դրանով իսկ պայմանավորելով վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ ատյանի, անարդյունավետությունը:

.... Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաև խախտում է իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության 1–ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստազրկվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու և դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

Սահմանադրական դատարանը որպես վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության և արդյունավետության վրա ազդող գործոն է դիտարկում նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի որոշման, վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշումը բողոքարկելու հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ: Այսինքն՝ այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, անձը զրկված լինելով այն բողոքարկելու հնարավորությունից, ըստ էության ոչ միայն զրկվում է նման որոշման դեմ պաշտպանության միջոցից, այլ նաև նրա գործի քննությունը փաստացիորեն սահմանափակվում է միայն առաջին ատյանի դատարանի շրջանակներում:

ՍԴՈ–849, 22 սեպտեմբերի, 2009 թ.

7. .... Արդարացման դատավճիռը բեկանելու և մեղադրական դատավճիռ կայացնելու, առաջադրված մեղադրանքի սահմաններում ավելի ծանր հանցագործության համար դատապարտելու կամ առաջին ատյանի դատարանի նշանակած պատժից ավելի խիստ պատիժ նշանակելու, ինչպես նաև հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով փոխելու, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության հա-

մար, առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու՝ գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաքննիչ դատարանի լիազորությունների պայմաններում օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասում նախատեսված պայմանի տառացի մեկնաբանությունը փաստորեն վճռաբեկ բողոք բերելու իրավունքից կարող է զրկել դատավարության բոլոր մասնակիցներին (դատապարտյալ, պաշտպան, մեղադրող, տուժող և այլն):

Վիճարկվող հոդվածի 2-րդ մասի նման կիրառումն ուղղակի հակասության մեջ կմտնի ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք»:

Բացի դրանից, նման մեկնաբանումը չի նպաստի արդարադատության լիարժեք իրականացմանը, դատական սխալները շտկելու և միասնական դատական պրակտիկա ձևավորելու գործին: **Վերաքննիչ դատարանի ըստ էության նոր դատավճռի բողոքարկումը վճռաբեկ դատարան պետք է մատչելի լինի դատավարության մասնակիցների համար:** Նորմի առկա ձևակերպումը ենթադրում է, որ դատավարության մասնակիցը չի կարող առանց վերաքննիչ բողոքի շրջանակներում առաջին ատյանի դատարանի ակտը բողոքարկելու այն բողոքարկել վճռաբեկ դատարան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի պահանջը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի գործառույթները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի վիճելի նորմի մեկնաբանությունը և կիրառումը պետք է ապահովի վճռաբեկ բողոքի պարտադիր ընդունումն ու քննությունը բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի շրջանակներում վերաքննիչ դատարանը շահագրգիռ կողմի բողոքի քննության արդյունքներով կայացրել է առաջին ատյանի դատարանի դատական ակտից տարբերվող՝ ըստ էության նոր, դատական ակտ: Նման մոտեցումը ոչ միայն կնպաստի դատական տվյալ ատյանի կողմից առավել ամբողջական նախադեպի ձևավորմանը, այլև էապես կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը:

ՍԴՈ-852, 19 հունվարի, 2010 թ.

6. .... ՀՀ եռաստիճան դատական համակարգում նախատեսված է նաև վերաքննիչ դատարանի ընդունած դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ դատարանի ակտերը՝ իր սահմանադրաիրավական կարգավիճակի ու դատական համակարգում ունեցած գործառնական դերի շրջանակներում և վերջիններիս համապատասխան՝ ՀՀ քրեադատավարական օրենսգրքում սահմանված՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայության պայմաններում:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավունքի իրացման հնարավորությունները պայմանավորված են դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկություններով և այդ համակարգում յուրաքանչյուր դատական ատյանի գործառնական դերով:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դատավճիռների վերանայման իրավունքը դիտարկելով ՀՀ եռաստիճան դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկությունների, ինչպես նաև ՀՀ ստանձնած վերոհիշյալ միջազգային պարտավորությունների հետ համադրության մեջ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ **քրեական մեղադրանքի որոշումը չի կարող սահմանափակվել միայն մեկ ատյանի դատարանի կողմից քրեական գործի քննության շրջանակներով:** Հետևաբար, հաշվի առնելով առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռները վերաքննիչ դատարան բողոքարկելու՝ օրենքով սահմանված կարգն ու վերաքննիչ դատարանի լիազորությունները՝ սահմանադրա-

կան դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռների՝ վերաքննիչ դատարան բողոքարկման միջոցով իրացվում է վերադաս դատարանի կողմից անձի նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունքը:

Ինչ վերաբերում է վճռաբեկության կարգով վերաքննիչ դատական ակտերի վերանայմանը, ապա վերջինս հանդես է գալիս որպես վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը շտկելու դատավարական երաշխիք, որի միջոցով վճռաբեկ դատարանն իրացնում է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթը, և վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման դեպքում վերանայման իրավունքի իրացման հնարավորությունն իրավաչափորեն սահմանափակվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և գործառնական դերով:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով 2009 թ. սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշման մեջ ամրագրված իր այն դիրքորոշումը, որ պետական ցանկացած մարմնի կարող է տրվել այս կամ այն լիազորությունը, որն անհրաժեշտ է նրա առջև դրված խնդիրները լիարժեք լուծելու համար, եթե դրանք համապատասխանում են տվյալ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակին և սահմանադրորեն ամրագրված ու երաշխավորված արժեքներին, ինչպես նաև հաշվի առնելով վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման առարկան և վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները, գտնում է, որ վերաքննիչ դատարանին սույն գործով վեճի առարկա լիազորության տրամադրումը վերաքննիչ վարույթի տրամաբանության շրջանակներում է և միտված է վերաքննիչ դատարանի կողմից արդյունավետ արդարադատության իրականացման ապահովմանը: Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վերաքննիչ դատարանին վիճարկվող լիազորությունը վերապահելը նպատակ է հետապնդել կանխելու դատական շրջապտույտը: Նման լիազորության միջոցով դատական շրջապտույտի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը:

ՍԴՈ-873, 13 ապրիլի, 2010 թ.

7. Վիճարկվող 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում տեղ են գտել քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգին բնորոշ իրավակարգավորումներ, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ներկայումս գործող **երկաստիճան համակարգում** վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն **վճռաբեկ դատարանի մատչելիության** և **արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման** երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի, կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ: Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով: Ուստի նրա որևէ կառուցակարգային կարգավիճակ չի կարող լիազորության լիարժեք կատարման խոչընդոտ հանդիսանալ: Միաժամանակ, սահմանադրական իրավակարգավորման առանցքային խնդիրներից մեկը հենց այն է, որպեսզի երաշխավորվի «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի օրգանական ամբողջականությունն ու լիարժեքությունը: Եթե օրենսդիրն անհրաժեշտ է համարել Հայաստանում ձևավորել մասնագիտացված վարչական դատարան՝ միայն դատական մեկ աստիճանով, իսկ վերջինիս ակտերի բողոքարկման իրավասությունը վերապահել վճռաբեկ դատարանին, ապա բողոքարկման համակարգի ամբողջականությունն ու ար-

դյունավետությունը նույնպես պետք է երաշխավորվի այս կառուցակարգային լուծումների շրջանակներում: Մասնավորապես, դա վերաբերում է նաև բողոքների ընդունման ու դրանց ըստ էության քննության առանձնահատկություններին:

Հետևաբար, վիճարկվող դրույթում վճռաբեկ դատարանի կարգավիճակի վկայակոչմամբ բողոքի ընդունելիության այնպիսի պայմաններ չեն կարող սահմանվել, ինչը կարող է արդյունավետ չդարձնել ու սահմանափակել անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակը, այդ հնարավորության ապահովման անհրաժեշտությունից թելադրված պետք է փնտրվեն ու գտնվեն դատարանակազմական լուծումները:

Մասնավորապես, վարչական դատարանի ակտերի վերաբերյալ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքում պետք է դրվի ոչ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի, այլև՝ 213-րդ հոդվածի իրավակարգավորման տրամաբանությունը՝ նախատեսելով դրա իրացման համապատասխան երաշխիքներ:

8. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցրած լինելու կամ չլինելու **փաստի հաստատումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Որպես վճռաբեկ բողոքի ընդունելիության պայման կարող է հանդես գալ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի **ենթադրության ներկայացված լինելու հանգամանքի ստուգումը,** այլ ոչ թե այն փաստի հաստատումը, որ դատական սխալը **հանգեցրել է կամ չի հանգեցրել** գործի սխալ լուծմանը:

Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով»: Այս նորմը ևս վկայում է այն մասին, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցնելու փաստի հաստատումը հանդիսանալով վճռի բեկանման հիմք՝ չի հանդիսանում և չի կարող հանդիսանալ բողոքի ընդունելիության պայման: Հետևաբար, **այդ հարցը ենթակա է լուծման դատաքննության փուլում**, այլ ոչ թե դիմումի ընդունելիության հարցի քննության փուլում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցի քննության փուլում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «առկա է» բառը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես բողոքի ընդունման փուլում նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը հաստատելու վճռաբեկ դատարանի պարտավորվածություն՝ դրանով իսկ ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից, սահմանափակելով վճռաբեկ դատարանի մատչելիությունը՝ դատական պաշտպանության միջոցը դարձնելով անարդյունավետ: Վճռաբեկ բողոք բերող անձի պնդումը գործի ելքի վրա ազդող դատական սխալի **ենթադրյալ առկայության** մասին, եթե այդ պնդումն ակնհայտ անհիմն չէ, թույլատրելիության այլ նախադրյալների հետ մեկտեղ (ժամկետներ, բողոքի ձևին ներկայացվող պահանջներ և այլն), բավարար է գործը քննության ընդունելու համար, և վճռաբեկ դատարանն իրավասու չէ այդ փուլում ստուգելու վճռաբեկ բողոքի **հիմնավորվածությունը**՝ այդպիսի սխալի իրական առկայությունը («առկա է», «հանգեցրել է գործի սխալ լուծմանը», «ազդել է գործի լուծման վրա»), քանի որ դրանով փոխարինվում կամ կանխորոշվում է դատաքննությունը, որը և պետք է ապահովի գործի արդարացի քննությունը՝ համապատասխան երաշխիքների պահպանմամբ:

9. Վարչական դատարանի վճռի դեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ գլխում կատարված փոփոխություններից և լրացումներից հետո էլ վճռաբեկ դատարանը շարունակում է վարչական գործերով վճռաբեկ վարույթի նկատմամբ կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, անկախ նրանից, դրանք **դուրս են գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից, թե՝ ոչ:** Ավելին, վճռաբեկ դատարանը՝ կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերը սահմանող 118.3–րդ հոդվածը և բողոքի ընդունելիության պայմանները սահմանող 118.6–րդ հոդվածը, զուգահեռաբար կիրառում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համարժեք 226 և 234–րդ հոդվածները, այդ թվում վճռաբեկ բողոքի ընդունելիության այն պայմանները, որոնք սահմանված են 234–րդ հոդվածի 1–ին մասում:

Նման իրավիճակի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրացված չէ սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118–րդ հոդվածում «**mutatis mutandis» վերապահումը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման նկատմամբ ամբողջությամբ կիրառվեն քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:**

Ավելին, սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118–րդ հոդվածը (նոր խմբագրությամբ) ընդհանրապես թույլ չի տալիս հղում կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն նորմերին, որոնք սահմանում են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:

Արդարադատության արդյունավետությունը ենթադրում է **թույլատրելի ճանաչված վճռաբեկ բողոքների ըստ էության քննություն** վճռաբեկ դատարանում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ և վարչական արդարադատության առանձնահատկությունների հաշվառմամբ: Թույլատրելիության հարցի լուծման ժամանակ բուն արդարադատության կանխորոշումն իմաստազրկում է դրա արդյունավետությունը, իսկ **բողոքի թույլատրելիության հիմքը շփոթվում է վարչական դատարանի ակտի բեկանման հիմքի հետ**: Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարադատության նման ձևականացումն անհամատեղելի է դրա սահմանադրական իմաստի հետ:

10. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման ինստիտուտի լիարժեքությունն օրենսդրորեն ապահովված չէ: Այս հարցում իրավական անորոշությունը հաղթահարելու և իրավակարգավորման բացը լրացնելու համար էական նշանակություն կարող է ունենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ գլխում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հստակ իրավակարգավորումը՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ–780 որոշման և սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով:

Առավել կարևոր է այն հանգամանքը, որ վարչական արդարադատության ներկա երկաստիճան համակարգի պահպանման պարագայում օրենսդրորեն պետք է գտնվեն կառուցակարգային այնպիսի լուծումներ, որ ՀՀ վճռաբեկ դատարանն ի վիճակի լինի արդյունավետ իրականացնել վարչական դատարանի ակտերի վերաբերյալ բողոքների ընդունման ու դրանց դատաքննության արդարադատական պահանջները:

ՍԴՈ–890, 25 մայիսի, 2010 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների այն հարցադրումը, համաձայն որի՝ մի պահանջի առնչությամբ պետական տուրքի վճարումը պետք է հիմք հանդի-

սանա վերաքննիչ բողոքն ամբողջությամբ քննության ընդունելու համար, անհիմն է, պայմանավորված չէ վերաքննիչ դատարանի գործառույթով ու անհրագործելի է:

ՍԴՈ–917, 28 սեպտեմբերի, 2010 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման ընտրությունն օրենսդրի իրավասության խնդիրն է, **սակայն պարտադիր պետք է երաշխավորված լինի դատական ակտի բողոքարկման շրջանակներում դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման հետ կապված հանգամանքների համակողմանի քննությունը:** ՀՀ գործող օրենսդրությունն այս հարցում որևէ արգելանք չի նախատեսում, և այս ուղղությամբ պետք է ընթանա նաև իրավակիրառական պրակտիկան: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ինքնաբացարկի վերաբերյալ կայացված որոշման բողոքարկման հնարավորության բացակայությունը և, միաժամանակ՝ ՀՀ դատական օրենսգրքում դատավորի ինքնաբացարկի որոշման բողոքարկման իրավունքի առկայությունն իրավակիրառական պրակտիկայում չեն կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի այդպիսի որոշումների վիճարկման իրավունքը՝ **ինքնաբացարկի դեպքում՝ անմիջականորեն, ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու դեպքում՝ ըստ էության գործով կայացված դատական ակտի բողոքարկման շրջանակներում:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դա բխում է նաև «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի ու դրանց գործառնության կատարելագործման մասին» ԵԽ նախարարների կոմիտեի թիվ R 95 (5) հանձնարարականի դրույթներից (հոդված 3):

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի պահանջը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 և 23–րդ հոդվածների դրույթները՝ ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնելու մասով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ, չի երաշխավորում կողմերի իրավունքը հասնելու այն բանին, որ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկողմնակալ ու իրավազոր դատարանի կողմից իրականացվի գործի քննություն:

ՍԴՈ–922, 2 նոյեմբերի, 2010 թ.

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման «հետաձգված բողոքարկման» հնարավորության միջոցով ապահովվում է այդ որոշումների իրավական վերահսկելիությունը, որ այդ որոշումների անմիջական բողոքարկման հնարավորություն չնախատեսելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ միջանկյալ ակտերի բողոքարկման հիմքում ընկած ընդհանուր տրամաբանության շրջանակներում է և հետապնդում է իրավաչափ նպատակ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշումն անմիջականորեն բողոքարկելու հնարավորության բացակայությունը չի խոչընդոտում անձին արդյունավետորեն իրացնել իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքն ըստ էության դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

ՍԴՈ–936, 8 փետրվարի, 2011 թ.

5. .... Միաժամանակ, սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20–րդ հոդվածի 3–րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման մի-

ջոցով արդարադատության նպատակների իրագործումը: Այդպիսի ընթացակարգեր ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված են ինչպես քրեական, քաղաքացիական, այնպես էլ վարչական գործերով արդարադատության բնագավառներում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ և 48-րդ գլուխների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ և 5-րդ բաժինների նորմերով են հիմնականում կարգավորվում քրեական և քաղաքացիական գործերով դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները: ....

Այսպիսով, սահմանելով դատական ակտերի բողոքարկման ընթացակարգեր՝ որպես այդ ակտերը վերանայելու նախապայման (բացառությամբ նոր և նոր ի հայտ եկած հանգամանքներով), օրենսդիրը նկատի է ունեցել նյութական, դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումները, որոնց դեպքերում դրանք **ազդել են գործի ելքի վրա** կամ **հանգեցրել են գործի սխալ լուծմանը**: Իսկ որոշ դեպքերում, ինչպես, օրինակ, քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքի հիմքով, օրենսդիրն արգելել է ձևական նկատառումներով բեկանել դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը: Այսինքն՝ վերոթվարկյալ դեպքերում իրավակարգավորման հիմքում դրված է այն սկզբունքը, համաձայն որի՝ նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով կարող է բեկանվել դատական այն ակտը, որը կայացվել է **դատական սխալի արդյունքում**:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարելով անդրադառնալ **«դատական սխալ»** եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, ինչպես նաև դրա՝ որպես դատական բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հիմքում իրավաբանական կարևոր նշանակություն ունեցող փաստի դրսևորման շրջանակներին, գտնում է, որ այն տարածական մեկնաբանման ենթակա չէ և չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից թույլ տրված ցանկացած սխալ (վրիպում): Դատական սխալ կարող է թույլ տրվել միայն գործով ըստ էության դատական ակտի կայացման արդյունքում, այսինքն՝ այնպիսի ակտի, որը կոչված է լինելու լուծել գործը (քրեական, քաղաքացիական, վարչական), վերացնել դրա վիճելիությունը՝ որոշել կողմերի (վիճելի իրավահարաբերության մասնակիցների) իրավական անվիճելի կարգավիճակը, անձանց համար հնարավորություն ստեղծել իրացնելու իրենց իրավունքներն ու պաշտպանել օրինական շահերը, հետևաբար՝ կոչված է իրականացնելու ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության կամ արդարադատության նպատակները: Այդ գործընթացում **դատարանը կիրառում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմեր**, որի արդյունքում է կայացվում դատական ակտը: Հետևաբար, այդ ակտի օրինականության վիճարկումը դատական բողոքարկման ընթացակարգով անհրաժեշտաբար կարող է լինել ինչպես **նյութական**, այնպես էլ **դատավարական** իրավունքի նորմի խախտման հիմքով: Իսկ դատական սխալը, կամ նյութական, դատավարական իրավունքի նորմերի խախտման փաստը, **որը հանգեցրել է տվյալ գործի սխալ լուծմանը,** հետևաբար՝ խախտվել են արդարադատության նպատակները, վտանգվել է արդարադատության և դատարանի հեղինակությունը, ենթակա է գնահատման և հաստատման իրավասու դատարանի կողմից՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում:

Այսպիսով, դատական ակտերի բողոքարկումը կարգավորելու ընթացակարգային վերոհիշյալ պայմանները նախատեսելու հիմքում պետք է ընդունվեն սկզբունքներ, որոնք կոչված են երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ (1-ին մաս), 18-րդ և 19-րդ հոդվածների նորմատիվ պահանջները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

– անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչ-

պես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

– դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Սահմ. 18, 19–րդ հոդվածներ),

– դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

– դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրաիրավական խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

7. .... Այդպիսով օրենսդիրը բացառել է դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով վերոհիշյալ գործերով վարչական դատարանի կայացրած դատական ակտերը բողոքարկելու, դրանց օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը՝ անձանց թույլ չտալով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ ակտերի վիճարկման վերաբերյալ գործերով լիարժեք և արդյունավետ կերպով իրացնելու դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՍԴՈ–652, ՍԴՈ–665, ՍԴՈ–673, ՍԴՈ–719, ՍԴՈ–758, ՍԴՈ–780 և այլն) կարևորել է դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովումը, այդ թվում՝ վարչական արդարադատության բնագավառում, խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության նպատակներին, այնպես էլ ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու և ապահովելու տեսանկյունից: Մասնավորապես ընդգծվել է դատական բողոքարկման իրավունքի, որպես դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչի, այնպիսի իրացման անհրաժեշտությունը, որով կապահովվի «....այդ իրավունքի արդյունավետ իրացումը և նվազագույնի հասցվի դատական սխալների հավանականությունը» (ՍԴՈ–780): Սահմանադրական դատարանը նաև կարևորել է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կատարելու, մասնավորապես՝ մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը ներպետական միջոցներով, այդ թվում՝ դատական, ապահովելու, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (2004) 20 հանձնարարականի հիման վրա վարչական ակտերի նկատմամբ դատական արդյունավետ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ «....ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները .... որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի պահանջներին»:

Վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141–րդ հոդվածի 1–ին մասի դրույթը, որով ամբողջությամբ բացառվում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով

վարչական դատարանի ակտերը դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու հնարավորությունը, չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, մարդու խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի իրացման սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին: Այն չի համապատասխանում նաև ՀՀ իրավական համակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած, ի կատարումն ՍԴՈ–780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ–ում վարչական արդարադատության համակարգը համալրվեց և ներդրվեց դատական բողոքարկման նոր համակարգ, այնուամենայնիվ, բողոքարկման գործող ընթացակարգը, մասնավորապես՝ հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, չենթարկվեց համապատասխան փոփոխությունների, որի արդյունքում սահմանափակվեց այդպիսի գործերով արդար, մատչելի և արդյունավետ դատական պաշտպանության՝ անձանց սահմանադրական իրավունքը: Սույն գործով պատասխանող կողմի դիրքորոշումն այն մասին, թե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական նորմերի նշանակությունն ու կարևորությունը դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանում է երկրորդական նշանակություն, չի բխում արդարադատության սահմանադրաիրավական բովանդակությունից, սահմանադրական դատարանի որոշումներից, ինչպես նաև ՀՀ իրավահամակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման ընդհանուր հայեցակարգից: Դատարանի՝ դատավարական կարգի խախտումով ընդունած որոշումը չի կարող համարվել լեգիտիմ ու արդարադատության պահանջներին համապատասխանող:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ վարույթի տեսակ (հատուկ վարույթ) չի կարող օրենքով մեկնաբանվել կամ կիրառվել այնպես, որ ամբողջովին իմաստազրկվեն ՀՀ Սահմանադրության 18–րդ և 19–րդ հոդվածներով երաշխավորված անձի հիմնական իրավունքները կամ դրանց իրացման արգելք հանդիսանա: Հետևաբար, դատական բողոքարկման բնագավառում ՀՀ դատավարական հարաբերությունների իրավակարգավորման այն սկզբունքները, որոնք կարևորված են սույն որոշման 6–րդ կետում, պետք է դրվեն այդ ինստիտուտը կարգավորող բոլոր, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով բողոքարկման ընթացակարգային նորմերում:

ՍԴՈ–1037, 18 հուլիսի, 2012 թ.

7. Սահմանադրական դատարանը միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ բոլոր այն երկրներում, որոնց օրենսդրությունը թույլ է տալիս «ոչ մեծ» հայցագնի դեպքում սահմանափակել դատական ակտի բողոքարկման իրավունքը, գործում են որոշակի չափանիշներ ու գործոններ, որոնց հետ ողջամիտ հարաբերակցության մեջ է օրենսդիրը որոշում համապատասխան հայցագնի չափը: Որպես նման չափանիշներ ծառայում են, մասնավորապես, նվազագույն աշխատավարձի չափը, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, բնակչության կենսամակարդակը: Ընդ որում, առանձին դեպքերում, օրինակ՝ Գերմանիայի Դաշնությունում, հայցագնի չափը, որի դեպքում բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ, իր չափով զգալիորեն զիջում է նվազագույն աշխատավարձի չափին:

.... Նկատի պետք է ունենալ, որ, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածի համաձայն՝ նվազագույն ամսական

աշխատավարձը 32.500 դրամ է: Միաժամանակ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 43.499.8 դրամ է: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հափշտակության **զգալի չափն** սկսվում է հաշվարկային նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից (30.000 դրամից): Բոլոր դեպքերում բողոքարկման ոչ ենթակա գումարային սահմանի որոշումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է, սակայն այն պետք է որոշվի նշված գործոնների հետ արդարացի և ողջամիտ հարաբերակցություն ապահովելու նպատակից ելնելով, միաժամանակ հաշվի առնելով արդարադատության սահմանադրաիրավական խնդիրները սոցիալական արդարության նպատակներին ծառայեցնելու անհրաժեշտությունը:

8. Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից: Հետևաբար, վիճարկվող իրավակարգավորումը դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցագնի չափով պայմանավորված՝ վերաքննության իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ չի խաթարվում արդար դատաքննության իրավունքի բուն էությունը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել այն ընդհանուր տրամաբանությունը, որն ընկած է բողոքարկման ինստիտուտին առնչվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի և 228-րդ հոդվածի, ինչպես նաև 204.32 հոդվածի հիմքում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է այն բացառիկ դեպքերը, երբ վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել նաև ընդդեմ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ: Այն է՝ երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, **որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը**:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմով օրենսդիրը սահմանելով դրանում նշված գործերով վերաքննության իրավունքի սահմանափակում, շեղվել է օրենսգրքում առկա վերոհիշյալ ընդհանուր տրամաբանությունից՝ չնախատեսելով բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման բացառություններ սահմանելու անհրաժեշտությունը բխում է 1995 թ. փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած թիվ R(95)5 հանձնարարականի՝ «Դատական վերահսկողության իրավունք» վերտառությամբ 1-ին հոդվածի b) կետի պահանջներից, որի համաձայն՝ բացառությունները դատական վերահսկողության իրավունքից թույլատրելի են միայն այն պայմանով, որ համապատասխանեն **արդարության ընդհանուր սկզբունքներին**: Նման մո-

տեցումը համահունչ է նաև Եվրոպական դատարանի այն մոտեցումներին, որոնք ձևավորվել են «էական վնասի» գնահատման պրակտիկայում:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ ի պատասխան սահմանադրական դատարանի հարցմանը՝ ՀՀ արդարադատության նախարարի 23.05.2012 թ. N01/3091-12 գրության մեջ որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում վիճարկվող դրույթի ամրագրումը հիմնավորող հանգամանք է մատնանշվում վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու անհրաժեշտությունը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման իրավակարգավորումը գործնականում ոչ միայն արդյունավետորեն չի ծառայում իր նպատակին, այլև, ստիպելով շահագրգիռ անձանց բողոքարկման վիճարկվող սահմանափակումը շրջանցելու նպատակով ներկայացնել 50.000 դրամը գերազանցող հայցապահանջ, հանգեցնում է դատարաններին 50.000 դրամը գերազանցող հայցագնի մասով անհիմն պահանջով ծանրաբեռնելուն:

ՍԴՈ-1052, 17 հոկտեմբերի, 2012 թ.

7. ՀՀ սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք, ի թիվս այլնի, առնչվում են նաև դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը: Դատարանն իր՝ 28.11.2007 թ. ՍԴՈ-719 որոշմամբ, մասնավորապես, ամրագրել է, որ. «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ **ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս**: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: .... Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ»:

Անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում **դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել**: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2006 թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006 թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007 թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Իր՝ 09.04.2007 թ. ՍԴՈ-690 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի բողոքարկման խնդրին, ամրագրել է, որ. «**նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ:** Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն: Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաև կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը»:

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրելով, որ ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորելու իրավական որոշակիությունը, միևնույն ժամանակ, հիմք ընդունելով, մասնավորապես, իր՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-690, ՍԴՈ-719 որոշումներում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:** Նման իրավական դիրքորոշման համար հիմք են ծառայում, մասնավորապես, օրենսգրքի 381-րդ հոդվածը, որը վերաբերում է վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 407-րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներին, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 414.1-րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքը վերադարձնելուն: Օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, իսկ նման հիմնավորման բացակայության դեպքում նույն հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ բողոքը թողնվում է առանց քննության: Օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, նույն մասի 6.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր

բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալը, ինչպես նաև այդ սխալի հետևանքով ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջանալու հնարավորությունը, իսկ վերը նշված պատճառաբանությունների և հիմնավորումների բացակայության դեպքում օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վճռաբեկ բողոքը վերադարձվում է:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը: Մինչդեռ օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով բողոքարկման ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով բողոքարկվող դատական ակտի հրապարակման պահը, օրենսդիրը ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնված ժամկետը հարգելի կամ անհարգելի համարելու առումով: Բանն այն է, որ դատական ակտը հրապարակելուց, այն հասցեատիրոջն ուղարկելուց մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, որը կարող է ավելի երկարաձգվել՝ պայմանավորված նաև սուբյեկտիվ գործոններով: Նման պայմաններում անձն իր տնօրինության ներքո հաճախ չի ունենում բողոքարկվող դատական ակտը, հնարավորություն չի ունենում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները կազմել օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ, ինչն իրավաչափորեն հիմք է հանդիսանում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները համապատասխանաբար՝ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու համար:

9. Օրենսդիրն ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համար որպես երաշխիք ամրագրել է նաև օրենսգրքի 380-րդ հոդվածը, որը վերաբերում է բողոքարկման համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելուն: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեքորեն ապահովում է անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Սույն գործով հաստատված համարելով, որ բողոքարկվող դատական ակտի հրապարակումից հետո մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն անցել է որոշակի ժամանակահատված, ՀՀ դատարանները, այնուամենայնիվ, հարգելի չեն համարել բաց թողնված ժամկետը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բողոքարկվող դատական ակտը փաստացիորեն ստանալուց հետո մինչև բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտը մնացել է 6 օր, ինչը, ըստ ՀՀ դատարանների, բավարար ժամանակ է փաստելու համար, որ բողոքաբերն իրական հնարավորություն է ունեցել սահմանված ժամկետում ներկայացնելու վերաքննիչ բողոք:

Վերոնշյալի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է լայն հայեցողական լիազորությամբ՝ հարգելի համարելու կամ չհամարելու ժամկետների բացթողումը: Այս կապակցությամբ, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ, հիմք ընդունելով իր՝ ՍԴՈ-690 որոշմամբ արտահայտած այն

իրավական դիրքորոշումը, որ «վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեք չի երաշխավորում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումն այն պատճառաբանությամբ, որ նշված հայեցողական լիազորությունների իրականացումը հանգեցնում է անորոշության: Օրինակ՝ պարզ չէ, թե կոնկրետ գործերով ինչ մոտեցում կցուցաբերեն դատարանները, եթե բողոքարկվող դատական ակտը փաստացիորեն ստանալուց հետո մինչև բողոքարկման ժամկետի ավարտը մնա ոչ թե 6 օր, ինչպես սույն գործով դիմողի դեպքում է, այլ 5 օր կամ դրանից պակաս: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ ստանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, կոնկրետ դեպքում՝ հնգօրյա և տասնօրյա ժամկետները, ապա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից, առավել ևս, որ օրենսդիրը մի շարք դեպքերում ոչ միայն չի բացառում, այլև որպես դատական ակտի բողոքարկման ժամկետի մեկնարկի սկիզբ ուղղակիորեն նախատեսում է տվյալ դատական ակտը հասցեատիրոջ կողմից ստանալու պահը:

Այս առումով, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև ՀՀ դատական պրակտիկայում ստեղծված ընդհանուր վիճակին անդրադարձը: Այդ առումով հատկանշական է հատկապես ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշմամբ ամրագրված այն իրողությունը, որ կան դեպքեր, երբ «....դատարանները օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ՝ ուշացումով են դատավճիռները, վճիռները և որոշումները հանձնում բողոքարկման իրավունք ունեցող անձանց, որպիսի հանգամանքը վերջիններիս զրկում է օրենքով նախատեսված ժամկետներում վերադաս դատարաններին բողոքներ ներկայացնելու հնարավորությունից»: Իրավիճակի՝ նման կերպ գնահատումից ելնելով դատարանների նախագահների խորհուրդը գտել է, որ բոլոր այն դեպքերում, **երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով,** դատարանների կողմից ժամկետի բացթողումը **պետք է ճանաչել հարգելի**: Մասնավորապես դա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենն օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ կողմին **հանձնելու** պատճառով:

Այսուհանդերձ, նման դիրքորոշման առկայության պայմաններում խնդիրը ոչ թե օրենսդրական կարգավորում է ստացել, այլ դարձյալ թողնվել է դատարանների հայեցողությանը: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

10. Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված երկրորդ հարցին, որն առնչվում է վիճարկվող 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, սահմանադրական դատարանը գտ-

նում է, որ հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձանց՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննելու լիազորությունը դատական ակտը կայացրած դատարանին վերապահելու իրավասությունն օրենսդրի հայեցողության շրջանակներում է: Այս իրավակարգավորման շրջանակներում էական երաշխիք է հանդիսանում վերը նշված միջնորդությունը մերժելու մասին որոշումը բողոքարկելու իրավունքը: Մասնավորապես, օրենսգրքի վիճարկվող 380-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ «Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382 հոդվածում և 383 հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները»:

Այլ խնդիր է, թե երբ է մեկնարկում օրենսգրքի վերը նշված նորմում սահմանված տասնհինգօրյա ժամկետը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասը պարունակում է իրավական անորոշություն. նորմում հստակ չի նշվում՝ դատական ակտի հրապարակման, թե դատական ակտի պատճենն ստանալու պահից սկսած տասնհինգօրյա ժամկետում կարող է տվյալ դատական ակտը բողոքարկվել վերաքննիչ դատարան: Հաշվի առնելով սույն որոշման 9-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ **սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տասնհինգօրյա ժամկետը մեկնարկում է համապատասխան դատական ակտը հասցեատիրոջ կողմից փաստացիորեն ստանալու կամ գործնականում օրենքով սահմանված կարգով նրան հասու լինելու պահից, և իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության այդպիսի ընկալմամբ:**

11. Ի՞նչ է վկայում սույն հիմնախնդրի միջազգային իրավական պրակտիկայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունը: Բազմաթիվ երկրների իրավական պրակտիկան վկայում է, որ հավասարապես ընդունելի են թե՛ այն իրավադրույթները, համաձայն որոնց՝ դատարանի վճռի դեմ բողոք կարող է բերվել դատավճռի հրապարակման կամ դրա պատճենի առաքման պահից (Սլովակիա, Ռումինիա, Ուկրաինա, Վրաստան, Մոլդովա և այլն) և թե՛ այն իրավակարգավորումը, երբ այդ ժամկետը սահմանվում է դատական ակտն ստանալու պահից (Լեհաստան, Մոնտենեգրո, Հունաստան, Իսպանիա, Գերմանիա, Խորվաթիա և այլն): Այստեղ էականն այն է, որ բոլոր այն երկրները, որտեղ բողոքարկման ժամկետի հաշվարկման համար հիմք է ընդունվում դատական ակտի հրապարակման պահը, ապա օրենսդրորեն սահմանվում են անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ, որ դատական ակտն **ամբողջությամբ** բողոք բերող կողմը կստանա ողջամիտ ժամկետում և ի վիճակի կլինի արդյունավետ իրացնել դատարանի մատչելիության և արդար դատաքննության իր իրավունքը:

Վերջին հանգամանքը պետք է առանցքային համարել այնպիսի իրավակարգավորումների պայմաններում, երբ բողոքարկման ժամկետը հաշվարկվում է ակտի հրապարակման պահից: Այսուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը նախ՝ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիշյալ վճռում (ինչը պաշտոնապես հայերենով հրապարակել է ՀՀ արդարադատության նախարարությունը) օգտագործվում է **«հանձնվի»** եզրույթը: Այս եզրույթն է տեղ գտել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի վերոնշյալ որոշման մեջ: Այնինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է **«ուղարկվում է»** եզրույթը: Ակնհայտ է, որ դրանք էապես տարբեր են, և **ուղարկելը** ժամանակի առումով բոլորովին համարժեք չէ **հանձնելուն,** կամ հայտնի չէ, թե ուղարկելու ձևից կախված՝ այն երբ կհասնի տվյալ իրավահարաբերությունների սուբյեկտին: Այդ հասկացությունները բովանդակային ա-

ռումով կարող են նույնական համարվել միայն այն դեպքերում, երբ դատական ակտի ամբողջական տեքստն այդ ժամկետում **տրամադրվում է** համապատասխան սուբյեկտներին կամ տեղակայվում է դատարանի պաշտոնական կայքում՝ նրանց անմիջապես հասանելի լինելու համար, ինչն արվում է բազմաթիվ երկրներում: Ուստի ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր նման դեպքերում կողմը պետք է ունենա ողջամիտ ժամկետ դատական ակտն **ստանալուց կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ ունենալուց, նրան պաշտոնապես հասանելի լինելուց** հետո հիմնավոր բողոք ներկայացնելու համար: Իսկ, ինչպես նշվեց, բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից անկախ պատճառներով, իրավունքի ուժով (ex jure) բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը: Միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունքն ունեցող անձի համար երաշխավորված կլինի ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքը:

ՍԴՈ–1062, 18 դեկտեմբերի, 2012 թ.

5. .... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412–րդ հոդվածի 1–ին մասը սահմանում է բողոքարկման ընդհանուր ժամկետները և վերաբերում է օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերին, մինչդեռ 2–րդ մասը վերաբերում է նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին և նախատեսում է բացառություն բողոքարկման ընդհանուր կանոններից, ներառյալ ժամկետները՝ ամրագրելով բողոքարկման հատուկ ժամկետներ միայն 21–րդ հոդվածի 6–րդ մասով նախատեսված դեպքերի համար: **Վերջին հաշվով, օրենսգրքի 412–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերը գտնվում են ընդհանուր և հատուկ կանոններ փոխհարաբերակցության մեջ:**

Ինչ վերաբերում է ժամկետների մեկնարկման պահերի միջև տարբերություններին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակարգավորման ոլորտում ցանկացած տարբերակված մոտեցում չէ, որ հանգեցնում է հակասության: Իրավակարգավորման ոլորտում տարբերակված մոտեցումները կարող են հանգեցնել հակասության միայն այն դեպքում, երբ տարբերակված մոտեցումը ցուցաբերվում է նույն օբյեկտի, նույն հանգամանքների նկատմամբ՝ անկախ նրանից, թե համապատասխան իրավակարգավորումները սահմանված են նույն, թե տարբեր իրավական ակտերում: Քննարկվող իրավիճակում տարբերակված մոտեցում է ցուցաբերված տարբեր օբյեկտների շուրջ ծագող հարաբերություններ կարգավորող դրույթների նկատմամբ. մի դեպքում իրավակարգավորումը վերաբերում է գործն ըստ էության լուծող, մյուս դեպքում՝ գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտերին: Իսկ նման տարբերակված մոտեցումն էլ ինքնին պայմանավորված է իրենց իսկ՝ անձանց շահերով, քանզի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բողոքարկման ժամկետն օրենսդրի կողմից որոշվում է՝ հաշվի առնելով նաև դատական ակտի բնույթը. ակնհայտ է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտին ծանոթանալու և վճռաբեկ բողոք պատրաստելու համար անձին անհրաժեշտ է ավելի երկար ժամանակահատված, քան գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտի պարագայում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի փաստարկները՝ կապված օրենսգրքի 412–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի, ինչպես նաև 412–րդ հոդվածի 1–ին մասի առաջին և երկրորդ նախադասությունների միջև ենթադրյալ ներքին հակասությունների հետ:

Այլ խնդիր է, թե Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների համատեքստում որքանով է երաշխավորված օրենքով նախատեսված բողոքարկման ժամ-

կետներից օգտվելու իրավական հնարավորությունը՝ հաշվի առնելով դատական ակտի հրապարակման և դատական ակտը հասցեատիրոջը փաստացիորեն հանձնելու պահերի միջև առկա ժամանակային գործոնը և դրանով պայմանավորված՝ դատական ակտը վիճարկելու իրական հնարավորության ապահովման անհրաժեշտությունը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործի քննության շրջանակներում վկայակոչել իր՝ 16.10.2012 թ. ՍԴՈ–1052 որոշումը, որով սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել նմանատիպ իրավահարաբերություններ կարգավորող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին: Մասնավորապես, սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշմամբ որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402–րդ հոդվածն այնքանով, որքանով 402–րդ հոդվածի «ուղարկվում է» եզրույթը «երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի տրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սուբյեկտներին»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վկայակոչված իրավական դիրքորոշման ուժով դատական ակտի բողոքարկման ժամկետը նույնիսկ **հրապարակման** պահից հաշվարկելու դեպքում օրենսգրքի 402–րդ հոդվածը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ–1052 որոշման մեջ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ, երաշխավորում է անձի բողոքարկման իրավունքի արդյունավետությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը դիմողի փաստարկները՝ կապված օրենսգրքի 412–րդ հոդվածի 1–ին մասի առաջին և երկրորդ նախադասությունների միջև ենթադրյալ ներքին հակասության հետ, հիմնավոր չի համարում նաև վերը նշված հիմնավորմամբ:

ՍԴՈ–1074, 5 փետրվարի, 2013 թ.

5. Հաշվի առնելով դիմողների փաստարկները՝ սահմանադրական դատարանը սույն գործով հարկ է համարում նախ բացահայտել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերով սահմանված իրավակարգավորման նպատակը և տրամաբանությունը՝ նշված նորմերը դիտարկելով օրենսգրքի 113–րդ հոդվածի մյուս նորմերի հետ համադրության մեջ:

Օրենսգրքի 113–րդ հոդվածը վերաբերում է գործով ըստ էության դատական ակտ կայացնելիս դատարանի գործողություններին: Վերջիններս այն անհրաժեշտ, պարտադիր և բավարար գործողություններն են, որոնք չկատարելու դեպքում կխաթարվեր արդարադատության էությունը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ակնհայտ է, որ արդարության պահանջները բավարարող դատական ակտ կայացնելու համար առնվազն հարկ է որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների և դրանք հիմնավորող վերաբերելի և թույլատրելի ապացույցների շրջանակը՝ այդ շրջանակից բացառելով ոչ վերաբերելի և ոչ թույլատրելի ապացույցները: Հարկ է նաև մրցակցային դատավարության սկզբունքի հիման վրա հնարավորություն ընձեռել կողմերին դատարանի կողմից հետազոտելու համար ներկայացնելու համապատասխան ապացույցները: Ինքնանպատակ չէ այն, որ մինչև բուն դատաքննության անցկացումը վարչադատավարական օրենսդրությամբ նախատեսված է նախնական դատական նիստեր անցկացնելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է դատական ակտի կայացմանը, որին նվիրված է օրենսգրքի 113–րդ հոդվածը, ապա այն ըստ էության հանդիսանում է նախնական դատական նիստերի և դատաքննության ամփոփումը, որի ժամանակ հարկ է ոչ միայն գնահատել գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցները և դրանց հիման վրա որոշել կիրառելի իրավունքը, այլ

դատական քննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու համար մեկ անգամ ևս ստուգել հնարավոր բացթողումների առկայությունը, այն է՝ որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզված լինելը: Ընդ որում, գործնականում չի բացառվում դատական քննության ընթացքում հնարավոր սխալների, թերությունների առկայությունը: Դրանց բացառմանն են ուղղված հենց օրենսգրքի վիճարկվող նորմերը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը գտնվում են նույն հոդվածի 1-ին մասի դրույթների հետ տրամաբանական փոխկապվածության մեջ: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը, նախատեսելով գործի քննությունը վերսկսելու ինստիտուտ, հետապնդում է, առաջին հերթին, հնարավոր դատական սխալից խուսափելու, գործի լրիվ և բազմակողմանի քննություն ապահովելու, արդարադատությունն ամբողջ ծավալով իրականացնելու նպատակ: Նման իրավակարգավորման բացակայությունն, ընդհակառակը, կարող է հանգեցնել դատական սխալի, արդար և բազմակողմանի դատաքննության պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն: Ընդ որում, օրենսգրքի վիճարկվող նորմերով սահմանված իրավակարգավորումը բնորոշ է սահմանադրական, քաղաքացիական և քրեական դատավարություններին և նախատեսված է ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ, այլ նաև բազմաթիվ այլ պետությունների օրենսդրություններով (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության և արբիտրաժային դատավարության օրենսգրքեր, Ուկրաինա, Լատվիա և այլն):

ՍԴՈ-1190, 10 փետրվարի, 2015 թ.

7. Գործի վարույթը կարճելու հետ կապված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթների վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է գործի վարույթը կարճելու հիմքերը, կարգը և հետևանքները: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանվում է գործի վարույթը կարճելու հիմքերը, այդ թվում՝ նաև եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը (1-ին մասի 10-րդ կետ): Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է **որոշում:** Համաձայն հիշյալ օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի և 125-րդ հոդվածի 6-րդ մասի՝ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը կայացնում է **վճիռ՝** գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին: Այսպիսով, գործի վարույթը կարճելու դեպքում դատարանը կայացնում է որոշում, բացառությամբ կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով գործի վարույթը կարճելու, որի դեպքում կայացնում է վճիռ:

Վերոշարադրյալին զուգահեռ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրորեն չի ամրագրվել, թե վարչական դատարանի ինչպիսի դատական ակտ է հանդիսանում գործի վարույթը կարճելու մասին որոշումը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի դատական ակտերի երկու տեսակ՝ գործն ըստ էության լուծող **դատական ակտ** և **գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ:** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «**Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները**» վերտառությամբ 125-րդ հոդվածում գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակ, սահմանված չէ: Միաժամանակ, հարկ է նշել, որ օրենսդիրը նույն հոդվածի 6-րդ մասով սահմանելով, որ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին կայացնում է վճիռ՝ այն դիտարկում է որպես գործն **ըստ էության լուծող դատական ակտ:**

Ինչ վերաբերում է գործի վարույթը կարճելու որոշման և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի հարաբերակցությանը, ապա օրենսդիրն ուղղակիորեն չի ամրագրել, որ գործի վարույթը կարճելու որոշումը հանդիսանում է գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ: Հարկ է նշել, որ հիշյալ իրավական անորոշությունը խնդիրներ է առաջացնում նաև իրավակիրառական պրակտիկայում, որը փաստվում է դիմող կողմի այն մոտեցմամբ, որ «....թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իմաստով վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշումը համարվում է միջանկյալ՝- գործն ըստ էության չլուծող դատական ակտ, սակայն այն իր իրավաբանական հետևանքների տեսանկյունից նմանվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին»: Ի դեպ, հարկ է նշել նաև, որ պատասխանող կողմը ևս փաստում է իրավակիրառական պրակտիկայում առաջացած խնդրի և այն լուծելու անհրաժեշտության մասին:

Հետևաբար, վերոնշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատավարության գործող իրավակարգավորումների պայմաններում հստակեցված չէ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի (բացառությամբ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում գործի վարույթը կարճելու մասին վճռի) **տեղը** գործն ըստ էության լուծող **դատական ակտերի** և **գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի համակարգում: Չնայած այն հանգամանքին, որ ըստ պատասխանող կողմի՝«Գործի վարույթի կարճումը վարույթն ավարտելու ինքնուրույն ձև է, որն իր դատավարական ձևակերպումն ստանում է որոշման տեսքով, ուստի կարճելու մասին որոշումը կարող է բնորոշվել որպես վարույթը եզրափակող դատական ակտ»**, **այն իր հստակ օրենսդրական ձևակերպումը չի ստացել: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է սահմանել գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական կարգավիճակը: Այն պարագայում, եթե գործի վարույթը կարճելու մասին դատական ակտն օրենսդիրն համարի լիովին այլ կատեգորիայի ակտ, ապա անհրաժեշտ կլինի նման մոտեցումը լիարժեքորեն ներմուծել առկա փոխկապակցված բոլոր իրավակարգավորումներում (այդ թվում՝ուժի մեջ մտնելու, բողոքարկման ժամկետների հետ կապված)՝ նպատակ ունենալով ապահովել այդ իրավակարգավորման համակարգային ամբողջականությունը և տրամաբանական փոխկապվածությունը: Միևնույն ժամանակ, անկախ գործի վարույթը կարճելու մասին որոշման իրավական կարգավիճակից, պետք է համապատասխան իրավակարգավորումներով սահմանվեն այդ ակտի բողոքարկման հնարավորությունը և դրա իրացումն ապահովող անհրաժեշտ այլ հարաբերությունները:**

8. **Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ** ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (131–րդ հոդված) սահմանում է այն միջանկյալ դատական ակտերի շրջանակը, որոնք ենթակա են բողոքարկման: Վերջինս այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ, մի կողմից, օբյեկտիվորեն հնարավոր չէ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման՝«հետաձգված բողոքարկման» շրջանակներում վիճարկումը, իսկ մյուս կողմից՝ գործող իրավակարգավորումների պայմաններում բացակայում է գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ անմիջական բողոքարկման շրջանակներում վերանայման հնարավորությունը: Այլ կերպ ասած, ամրագրելով գործի վարույթը կարճելու հետ կապված իրավահարաբերությունները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը՝ բացառելով նաև դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, **մինչդեռ վերջինիս** առկայությունն

անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում:

11. Սույն գործով քննության առարկա հարցը դիտարկելով, մի կողմից, ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումների, մյուս կողմից՝ կատարված իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է.

նախ՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի դատական ակտերի հետ կապված իրավահարաբերությունների՝ տվյալ դեպքում բողոքարկման ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրը բավարար հետևողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցի մասով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ զարգացնելու առումով, չի ապահովել իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, ճշգրտության և կանխատեսելիության որակները: Ավելին, իրավակիրառական պրակտիկայում ՀՀ վարչական դատավարության նախկին **(28.11.2007 թ.)** օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումները՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման մասով, ընդհանուր առմամբ խնդիրներ չեն հարուցել, սակայն Ազգային ժողովը ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքով այլ մոտեցում է որդեգրել, որով չեն իրացվել սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները,

երկրորդ՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման իրավական ամրագրման բացակայությունն արգելափակում է ոչ միայն դատարանի մատչելիության իրավունքը, այլև անձին ոչ իրավաչափորեն զրկում է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքից: Գործի վարույթը կարճելու մասին որոշման բողոքարկման իրավունքի նորմատիվ ամրագրումը կընդլայնի արդյունավետության և օբյեկտիվության նկատմամբ հանրային վստահությունը, կապահովի խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը, թույլ կտա վերադաս ատյանի դատարանին վերացնել ստորին ատյանի թույլ տված դատական սխալները, ուղղված կլինի վերադաս դատական ատյանների մատչելիության ապահովմանը և կնպաստի դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությանը: Դատական բողոքարկման իրավունքը վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է, որը հետևողականորեն պետք է իր արտացոլումը գտնի օրենսդրության մեջ՝ նախատեսելով գործի վարույթը կարճելու մասին որոշման վերանայման համապատասխան ընթացակարգեր:

12. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա իրավակարգավորումներով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումն անմիջականորեն ամրագրված չէ, ինչը չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին, նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին, սահմանադրական դատարանն էական է համարում այն հարցադրումը, թե գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը բողոքարկելիության տեսանկյունից առավել համահունչ է գործն ըստ էության լուծող **դատական ակտերին**, թե՞ **գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին բնորոշ իրավակարգավորումներին:** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 97–րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշմամբ դատավարությունը՝ որպես այդ-

պիսին, և վարույթը՝ որպես ընթացակարգ, ավարտվում են, որպիսի պայմանը բացառում է վարույթի հետագա վերսկսումը: Բացի դրանից, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր առաջացրած իրավական հետևանքների առումով առավել մոտ է գործն ըստ էության լուծող **դատական ակտերին: Հետևաբար,** մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման վերանայման համապատասխան իրավակարգավորումներ և ընթացակարգեր նախատեսելն իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այն մոտեցմամբ, որ **գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով՝** առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և դրա կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

ՍԴՈ–1191, 24 փետրվարի, 2015 թ.

7. Անդրադառնալով դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումների բողոքարկելիության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1–րդ հոդվածի 8–րդ մասում ամրագրված իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի իրացման սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին դրա համապատասխանության գնահատման համատեքստում:

Ինչպես հետևում է վերոհիշյալ նորմի բովանդակությունից, դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դրանք բողոքարկելի չեն, բացառությամբ՝ տուգանք կիրառելու մասին որոշման, որը կարող է բողոքարկվել եռօրյա ժամկետում:

.... Այսպիսով, քննության առարկա նորմով իրավաբանական առանձնահատուկ ուժ է հաղորդված քրեական գործերով դատական նիստի՝ օրենքով սահմանված կարգը պահպանելուն, այն խախտող անձանց պատասխանատվության ենթարկելուն կոչված դատական ակտերին: Այդ առանձնահատկությամբ են պայմանավորված թե՛ այդ ակտերի կայացման և թե՛ կատարման ապահովման գործող ընթացակարգերը: Միջանկյալ դատական այսպիսի ակտերի բողոքարկելիության իրավական սահմանափակ հնարավորությունը պայմանավորված է դատաքննության բնականոն ընթացքը խոչընդոտող ոչ իրավաչափ ու անկանխատեսելի հանգամանքների արագ վերացման և արդար, արդյունավետ, անկողմնակալ, բազմակողմանի ու օբյեկտիվ դատաքննություն իրականացնելու համար օրենքով նախատեսված պայմանների ստեղծման (ապահովման) անհրաժեշտությամբ, որը նաև երաշխիք է անձի իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ իրացնելու համար: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ և նման մեկնաբանման ու դրան համապատասխան կիրառման դեպքում սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

8. Անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և վերջինիս՝ իր սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան, օրենքով իրացումը երաշխավորելու, ինչպես նաև դատական ակտերի բողոքարկելիության արդյունավետությունը բարձրացնելու հիմնախնդիրներին սահմանադրական դատարանն անդրա-

դարձել է իր մի շարք որոշումներում (ՍԴՈ–665, ՍԴՈ–673, ՍԴՈ–690, ՍԴՈ–719, ՍԴՈ–720, ՍԴՈ–747, ՍԴՈ–752, ՍԴՈ–754, ՍԴՈ–758, ՍԴՈ–765, ՍԴՈ–780, ՍԴՈ–832, ՍԴՈ–922, ՍԴՈ–936 և այլն): Այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով հատկապես սույն գործով քննության առարկա հարցադրումներից, սկզբունքորեն հանգեցնում են իրավահամակարգային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

– դատական ակտերի բողոքարկումն անձի խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության երաշխավորման, ինչպես նաև արդար դատաքննության իրականացման խնդրում առանձնահատուկ ինստիտուտ է,

– բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով իրականացնել արդարադատության նպատակները,

– օրենքով նախատեսված կարգով բողոքարկման ենթակա են ինչպես օրինական ուժի մեջ չմտած, այնպես էլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը (գործով ըստ էության կայացված ակտերը, ինչպես նաև օրենքով թվարկված միջանկյալ ակտերը),

– բողոքարկելի են միջանկյալ դատական այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացումը, մինչդեռ բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը և վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը,

– սահմանված են դատական ակտերը վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների հիման վրա վերանայելու իրավասություն ունեցող դատարանները, ընթացակարգերը և արդյունքում կայացվող որոշումները,

– օրենքով սահմանված են դատական ակտերի բողոքարկման հիմքերը, այդ թվում՝ դատական սխալի հիմքով,

– գործով ըստ էության կայացված դատական ակտի բեկանման (վերանայման) հիմք կարող է հանդիսանալ ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումը, որն ազդել է գործի ելքի վրա (հանգեցրել է գործի սխալ լուծմանը), մասնավորապես՝ խոչընդոտել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, խախտել է կողմերի դատավարական իրավունքները, հանգեցրել է արդարադատության սկզբունքների խախտմանը:

Միաժամանակ, ընդհանրացնելով դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման միջազգային իրավական փորձը՝ սահմանադրական դատարանը կարևորել է իրավակարգային այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են.

– մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքներն ըստ էության քննության առնելու և դրանց լուծում տալու համար արդյունավետ ընթացակարգերի նախատեսումը, այդ թվում խելամիտ ժամկետներում դատաքննության ապահովումը,

– բողոքների ընդունման և քննության ընթացակարգերի դիտարկումն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում:

Վերոհիշյալ իրավաչափ նպատակների իրացման անհրաժեշտությունից ելնելով՝ սահմանադրական դատարանը նաև արձանագրել է միջազգային իրավակիրառական պրակտիկայի զարգացման այն միտումը, համաձայն որի՝ առկա է միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորությունը նվազագույնի հասցնելու և դրանց «հետաձգված բողոքարկման» կարգին նախապատվություն տալու ընդհանուր միտում: ....

9. Այսպիսով, վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները, գնահատելով սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում

օրենսդրական, այդ թվում՝ դատական բողոքարկման իրավունքի սահմանափակման սահմանադրական իրավաչափությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք համաչափ են հիշյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես փաստաբանի, այնպես էլ վերջինիս օգնականի կարգավիճակն իր իրավական բովանդակությամբ, իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի այդ կարգավիճակը բնորոշող իրավական ակտերի համակցության մեջ՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորման գերակա անհրաժեշտությունը: Սահմանադրաիրավական այսպիսի դիրքորոշմամբ և համարժեք կիրառման դեպքերում վեճի առարկա իրավակարգավորումն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցի:

ՍԴՈ-1192, 3 մարտի, 2015 թ.

7. Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: **Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները:** Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ:

ՀՀ վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի նախատեսումը լիարժեքորեն կայացած և գործուն փաստաբանական համակարգի պարագայում կոչված կլինի նպաստելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացմանը: Նման մոտեցման պարագայում ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյանում ևս՝ **ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող բողոքների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել անձի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների անտեսմամբ կամ անհամաչափ սահմանափակմամբ:** Այսինքն, նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Այս համատեքստում սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանն իր ՍԴՈ-1167 որոշման մեջ ամրագրել է. «.... ցանկացած, հատկա-

պես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման»: Նշվածի համատեքստում սահմանադրական դատարանն էական է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ, օրինակ, սահմանադրական արդարադատության մարմնում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կողմերը սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ և (կամ) ներկայացուցիչների միջոցով:

ՍԴՈ-1254, 9 փետրվարի, 2016

6. ՀՀ սահմանադրական դատարանը նույն հարցի առնչությամբ իր ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062 և ՍԴՈ-1249 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները հաշվի առնելով և դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հիմնախնդրին առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու առանձին երկրների իրավական պրակտիկայի վերլուծության արդյունքներով՝ սույն գործի քննության շրջանակներում վերահաստատում է նախկինում իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ **օրենսդրորեն պետք է սահմանվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ դատական ակտը բողոք բերողի կողմից ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու համար:**

Սահմանադրական դատարանը սույն գործի քննության առարկայի շրջանակներում կարևորում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ (2004)20 հանձնարարականը, որով սահմանվել են վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության առանձին իրավական չափորոշիչներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է՝ ա) վարչական ակտի բողոքարկման համար ողջամիտ ժամկետի տրամադրմանը (կետ 46), բ) վարչական ակտի օրինականության վիճարկման համար ողջամիտ ժամկետի սահմանմանը (կետ 47), գ) վարչական ակտի մասին անձին ծանուցելու պահի՝ որպես բողոքարկման ժամկետի հաշվարկման մեկնարկին (կետ 48):

.... Միաժամանակ, նույն հանձնարարականի 48-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն առաջարկում է մասնակից պետություններին հաշվի առնել այն, որ վարչական ակտի բողոքարկման ժամկետի ընթացքի սկիզբն ուղղակիորեն չպետք է կապել այն պահի հետ, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իմացել է կամ պետք է իմանար համապատասխան ակտի մասին, **ակնհայտ է համարում, որ այդ ժամկետի հաշվարկն սկսվում է այդ ակտի մասին անձին ծանուցելու պահից,** և, այդ հանգամանքով պայմանավորված, մասնակից պետություններին առաջարկում է նաև համապատասխան ակտի մասին անձին ծանուցելու պահը սահմանել որպես բողոքարկման ժամկետի հաշվարկի սկիզբ:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է՝ չնայած այն հանգամանքին, որ դատական ակտերի բողոքարկման ժամկետը, որպես կանոն, հաշվարկվում է հրապարակման պահից, այնուամենայնիվ, անհրաժեշտ են օրենսդրական բավարար երաշխիքներ, որոնք կապահովեն անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

7. .... Վերոնշյալ եզրահանգումների հիման վրա, հաշվի առնելով ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062 և ՍԴՈ-1249 որոշումներում քննության առարկա դարձած դրույթների և սույն գործով վիճարկվող դրույթների բովանդակային համարժեքությունը, փաստելով, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով **քննության առարկա** դրույթների առնչությամբ, սահմանադրական դատարանը հիմք է ընդունում հիշյալ

որոշումներում քննության առարկա դարձած դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես, իր ՍԴՈ–1249 որոշման մեջ սահմանադրական դատարանը նշել է. «....երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՍԴՈ–1052, ՍԴՈ–1062 և ՍԴՈ–1249 որոշումների ընդունումից հետո դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը համապատասխան օրենսդրական համալիր կանոնակարգումների չի ենթարկվել՝ դրանով իսկ չեն իրացվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումներն անհրաժեշտ են, մասնավորապես, քրեական դատավարական, քաղաքացիական դատավարական և վարչական դատավարական միասնական քաղաքականության շրջանակներում դատական ակտերի վերաբերյալ բողոք ներկայացնելու նախապայմանների մասով համարժեք լուծումներ գտնելու նպատակով:

Այս հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», ինչը ենթադրում է, որ սահմանադրական դատարանի որոշումներն իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են իրավունքի աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով նույն որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այս համատեքստում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև սույն գործի շրջանակում 2015 թվականի նոյեմբերի 30–ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված բացատրության շրջանակներում պատասխանող կողմի պաշտոնական ներկայացուցչի այն պնդումը, որ «.... ոչ միասնական կամ հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բաց թողնման հարգելիության այն չափանիշները կամ հիմքերի մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որը յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանա բաց թողնված ժամկետի հարգելիությունը գնահատելիս»:

ՍԴՈ–1268, 26 ապրիլի, 2016 թ.

7. Նկատի ունենալով դատական ակտերի բողոքարկման ժամկետների, և այդ ժամկետներից հետո բերված բողոքները վարույթ ընդունելու, դրանք վերադարձնելու կամ առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերի իրավակարգավորումների բովանդակային համարժեքությունը, այդ իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների միասնականությունը, սույն գործի շրջանակնե-

րում ևս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատական պրակտիկայի առկա վիճակի ուսումնասիրությանը: ....

8. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ իր ՍԴՈ–1052, ՍԴՈ–1062, ՍԴՈ–1249 և ՍԴՈ–1254 որոշումների ընդունումից հետո դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը դեռևս համապատասխան օրենսդրական համալիր և միասնական կանոնակարգումների չի ենթարկվել և այս հանգամանքը չի արտացոլվել պատասխանող կողմի ներկայացրած բացատրության մեջ:

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կրկին շեշտադրել իր որոշումներում արտահայտված, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «.... մի կողմից, օրենսդրորեն օբյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դատական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն ամրագրել» (ՍԴՈ–1249),

բ) «.... բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի տվյալ իրավահարաբերության արդյունավետության, ինչպես նաև դատարանների հանրային–իրավական վարքագծի կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը» (ՍԴՈ–1249),

գ) «.... քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումներն անհրաժեշտ են, մասնավորապես, քրեական դատավարական, քաղաքացիական դատավարական և վարչական դատավարական միասնական քաղաքականության շրջանակներում դատական ակտերի վերաբերյալ բողոք ներկայացնելու նախապայմանների մասով համարժեք լուծումներ գտնելու նպատակով» (ՍԴՈ–1254):

ՍԴՈ–1290, 28 հունիսի, 2016 թ.

9. .... Կարևորելով քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը, համապատասխան օրենսդրական համալիր կանոնակարգումը, բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունների համար պատշաճ իրավակարգավորված ընթացակարգ նախատեսելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213–րդ հոդվածի 3–րդ մասի իրավակարգավորման բացով պայմանավորված՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորության բացառումն իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել անձի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների խախտման:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՍԴՈ–1135,14 հունվարի, 2014 թ.

7. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

ա) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանադրական դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնելու համար սահմանված չէ փաստաբան լինելու իմպերատիվ պահանջ («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46–րդ հոդվածի 3–րդ մաս),

բ) ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2013 թ. հունվարի 29-ի թիվ 130 որոշման պատճառաբանական մասի 6-րդ պարբերության համաձայն՝ «Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը հանդիսանում է դատավարական նորմ և պետք է համապատասխանի դատավարական օրենսգրքերին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերում դատական ներկայացուցչության այլ կարգ է նախատեսված, քան Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, մինչև համապատասխան դատավարական օրենսգրքերում փոփոխություններ կատարելը, քրեական և վարչական դատավարությունների ընթացքում դատական ներկայացուցչության վրա չի տարածվում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը»:

Նույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «դատական ներկայացուցչությունը կարող է իրականացնել միայն փաստաբանը՝ բացառությամբ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի», իսկ «բ» ենթակետի համաձայն՝ «դատական ներկայացուցչության կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի»:

Նույն որոշման եզրափակիչ մասի 9-րդ կետի համաձայն՝ «Քրեական և վարչական դատավարությունների ընթացքում ներկայացուցչության վրա չի տարածվում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումը»:

Վերոգրյալից ուղղակիորեն բխում է, որ ի տարբերություն սահմանադրական, քրեական և վարչական դատավարություններում դատական ներկայացուցչության, որի իրականացման համար «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված չէ փաստաբան լինելու իմպերատիվ պահանջ, քաղաքացիական դատավարությունում դատական ներկայացուցչության իրականացման համար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (40-րդ հոդված) սահմանված է փաստաբան լինելու իմպերատիվ պահանջը: Ընդ որում, այդ պահանջը սահմանված է **անուղղակիորեն**, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածը, իր հերթին, հղում է կատարում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածին: Բացի դրանից, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է դատավարական օրենսդրության մեջ դատական ներկայացուցչության ինստիտուտի համարժեք կանոնակարգման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, **այնպես էլ անձամբ:** Այսինքն՝ ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ դատական ներկայացուցչության ոլորտի կարգավորման համադրված քաղաքականություն, ինչպես նաև նշված ոլորտը կարգավորող դրույթների, հասկացությունների հստակություն, ինչն առիթ է հանդիսացել, որպեսզի փորձ արվի հարցը կարգավորել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի մակարդակով:

ՍԴՈ-1196, 17 մարտի, 2015 թ.

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում շահագրգիռ անձինք են հանդիսանում, ի թիվս այլոց, տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը, նրա ներկայացուցիչը, ինչպես նաև դիմողը: Ընդ որում, կասկածյալն օրենքով նախատեսված դեպքերում օրենքի ուժով համարվում է արդարացված, իսկ մեղադրյալն օրենքով նախատեսված

դեպքերում օրենքի ուժով համարվում է ամբաստանյալ, դատապարտյալ կամ արդարացված, ինչից բխում է, որ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակում ներառված են նաև **ամբաստանյալը, դատապարտյալը և արդարացվածը:**

Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Օրենսգրքի՝ վերը ներկայացված դրույթների, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ուսումնասիրության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ քրեական դատավարությունում միայն փաստաբանի միջոցով անձանց օրինական շահերը ներկայացնելու և նրանց իրավաբանական օգնություն ցուցաբերելու պարտադիր պայմանը վերաբերում է բացառապես կասկածյալին և մեղադրյալին: Ընդ որում, վերջիններս, համաձայն օրենսգրքի, համապատասխանաբար՝ 63-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 65-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, ունեն ինչպես պաշտպանի միջոցով, այնպես էլ **ինքնուրույն պաշտպանվելու իրավունք՝ բացառությամբ պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի, երբ անվճար հիմունքներով տրամադրվում է իրավաբանական օգնություն:**

Օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչներ են հանդիսանում այն անձինք, որոնք դատավարության նշված մասնակիցների կողմից լիազորված են քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնելու նրանց օրինական շահերը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսգիրքը **«պաշտպան»** եզրույթն օգտագործելով բացառապես կասկածյալի, մեղադրյալի, ներառյալ՝ ամբաստանյալի, դատապարտյալի և արդարացվածի համար, **«ներկայացուցիչ»** եզրույթն օգտագործելով դատավարության մյուս մասնակիցների և դիմողների համար, 404-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսելով միայն **փաստաբանի** միջոցով վճռաբեկ բողոք բերելու իրավունքը՝ 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում վճռաբեկ բողոքի ստորագրմանը և վճռաբեկ բողոքին կցվող փաստաթղթերին վերաբերող դրույթներում օգտագործում է **«ներկայացուցիչ»** եզրույթը: Հնարավոր տարընկալումներից զերծ մնալու նկատառումներից ելնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում **ներկայացուցչին** առնչվող դրույթները վերաբերելի են **փաստաբանին:**

ՍԴՈ–1263, 5 ապրիլի, 2016 թ.

6. .... Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միայն փաստաբանի կողմից պարբերաբար կամ վճարովի հիմունքներով ծառայություն մատուցելու օրենսդրական պահանջը բխում է փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթից, «ծառայություն» եզրույթի բովանդակությունից, որոնց համար հատկանշական են պարբերականությունը և վճարովիությունը, ինչպես նաև նման ծառայություն մատուցողի հանդեպ համարժեք պատասխանատվության երաշխիքների ապահովման անհրաժեշտությունից:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ միայն փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման օրենսդրական պահանջն ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է **որակյալ** իրավաբանական օգնություն՝ դրանով իսկ երաշխավորելով իրավական պետությանը հարիր՝ **արդյունավետ** դատական

պաշտպանության իրավունքը՝ ամրագրված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում: Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը: Այդ նպատակն է հետապնդում նաև օրենքով նախատեսված՝ փաստաբանական դպրոցի ստեղծումը, որը կազմակերպում և անցկացնում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը, կազմակերպում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունը, կազմակերպում և անցկացնում է փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը:

7. Ինչ վերաբերում է վճարովիության հիմունքներով պարբերաբար դատական ներկայացուցչության՝ միայն փաստաբանի միջոցով իրականացման օրենսդրական պահանջի և դատարանի մատչելիության իրավունքի միջև հարաբերակցությանը, ապա, հաշվի առնելով փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հարաբերակցությունը կարող է պայմանավորված լինել բացառապես դատական ներկայացուցչություն հայցող անձի ֆինանսական հնարավորություններով:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է որոշակի երաշխիքներ դատական ներկայացուցչություն հայցող, սակայն համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունեցող անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման համար: Մասնավորապես, օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի և օրենքի 5-րդ հոդվածի վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, **նախ՝** դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը չի կրում **պարբերական բնույթ կամ վճարովի չէ:**

Երկրորդ՝ անվճար, սակայն պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար:

Երրորդ՝ վճարովի կամ պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում այն իրավաբանական անձի համար, որի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանում են ներկայացուցչի մերձավոր ազգականին (ազգականներին):

.... Միաժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի ապահովման նկատառումներից ելնելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները պար-

տավորեցնում են դատարաններին յուրաքանչյուր կոնկրետ քաղաքացիական գործով ստուգելու հետևյալ հանգամանքների առկայությունը.

– ներկայացուցչի փաստաբան լինելը,

– ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա կողմից դատական ներկայացուցչությունը պարբերաբար կամ վճարովի հիմունքներով իրականացնելը,

– ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա՝ վստահորդի մերձավոր ազգական հանդիսանալը և դատական ներկայացուցչությունն անվճար իրականացնելը,

– իրավաբանական անձի ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա մերձավոր ազգական հանդիսանալն այն անձի կամ անձանց նկատմամբ, որոնց պատկանում են տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը:

8. Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում այն փաստարկները, որ վիճարկվող նորմերը հակասում են արդար դատաքննության, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներին, անձնական կյանքի հարգման իրավունքին, դրա բաղադրատարր հանդիսացող՝ ինքնարտահայտման իրավունքին, այլ անձանց շահերը պաշտպանելու նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու և սեփականության իրավունքներին: **Նախ՝** առկա չէ որևէ պատճառահետևանքային կապ վիճարկվող նորմերի և արդար դատաքննության, անձնական կյանքի հարգման և սեփականության իրավունքների միջև: **Երկրորդ՝** ինքնարտահայտման իրավունքը, որը դիմողների ընկալմամբ ներառում է նաև դատական ներկայացուցչությունը, և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը մնացած բոլոր իրավունքների նմանությամբ կարող են իրացվել միայն **օրենքով նախատեսված կարգով,** այլ ոչ թե սեփական հայեցողությամբ: Բացի դրանից, ինքնարտահայտման իրավունքը, որը դիմողների ընկալմամբ ներառում է նաև դատական ներկայացուցչությունը, վերաբերելի է դատական ներկայացուցչություն իրականացնողին, մինչդեռ տվյալ դեպքում դիմողները դատարաններում հանդես են եկել որպես հայցվորներ, այլ ոչ թե ներկայացուցիչներ: **Երրորդ՝** այլ անձանց շահերը պաշտպանելու նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու իրավունքն ուղղակիորեն չի վերաբերում հայցադիմումին, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներին, դրանց պատասխաններին, քաղաքացիական գործով ներկայացվող գրավոր բացատրություններին և առարկություններին, գրավոր միջնորդություններին, հատուկ և հատուկ հայցային վարույթներով ներկայացվող դիմումներին:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև այն փաստարկը, որ վիճարկվող նորմերը հակասում են խտրականության արգելման սկզբունքին, քանի որ տվյալ դեպքում տարբերակումը վերաբերում է տարբեր կատեգորիայի անձանց՝ փաստաբաններին, իրավաբաններին և այդպիսիք չհանդիսացող անձանց: Խտրականությունն առկա կլիներ այն դեպքում, երբ օրենսդրորեն տարբերակում նախատեսվեր այս երեք խմբերից որևէ մեկում: Դատավարական տարբեր գործընթացներում ներկայացուցչության ապահովումն ու վերջինիս իրավակարգավորումն իրականացվում է այդ գործընթացների առանձնահատկությունները հաշվի առնելով:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՍԴՈ–1135 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վեճի առարկա հիմնախնդրի առկա իրավակարգավորման հիմնական նպատակը քաղաքացիական արդարադատության ոլորտում մարդկանց վճարովի իրավաբանական ծառայություն մատուցելու ինստիտուտի հստակ կանոնակարգումն է՝ արգելելով անձանց պարբերաբար և վճարովի հիմունքներով հանդես գալ որպես ներկայացուցիչ դատարանում՝ չունենալով համապատասխան գործունեությամբ զբաղվելու արտոնագիր: Նման իրավակարգավորում առկա է բազմաթիվ երկրներում և բխում է իրավական պետությունում իրավունքի գերակայության երաշխավորման սահմա-

նադրական սկզբունքի էությունից: Այլ խնդիր է, որ արդարադատական պրակտիկայում չպետք է այն աստիճան նեղացվի քաղաքացիական գործերով իրավաբանական օգնություն ցույց տալու շրջանակները, որ բացառվեն ոչ վճարովի հիմունքներով և ոչ պարբերաբար մատուցվող իրավական օգնության հնարավորությունները: Իր հերթին, դատական պրակտիկայում տարակերպ մեկնաբանություններից խուսափելու համար, հետագա օրենսդրական հստակեցումներն առավել որոշակի պետք է դարձնեն «պարբերաբար» և/կամ «վճարովի հիմունքներով» եզրույթները, ինչպես նաև երաշխավորեն դատավարական իրավակարգավորումների միասնականությունը:

ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–933, 25 հունվարի, 2011 թ.

5. .... Միաժամանակ, առկա է հասկացութային որոշ անհստակություն: Մասնավորապես, եթե դատական ակտերի ուժի մեջ մտնելու հետ կապված հարցերը լուծելիս օրենսդիրն օրենսգրքի նույն 427–րդ հոդվածի 1–ին մասում կիրառում է «դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ», «դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտ», «վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի դատական ակտեր» եզրույթները (որոնց մեկնաբանությունն ըստ էության տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6–րդ հոդվածում), ապա օրենսգրքի 427–րդ հոդվածի՝ վիճարկվող 2–րդ մասում, կարգավորելով դատական ակտերի ի կատար ածման հետ կապված հարաբերությունները՝ օրենսդիրը կիրառում է **«դատական որոշում»** եզրույթը (այն տեղ է գտել նաև օրենսգրքի 52, 54, 289, 428, 429, 430, 431, 437, 499.15–րդ հոդվածներում):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427–րդ հոդվածի 2–րդ մասի վերնագրում նախկինում տեղ է գտել «դատարանի որոշման» բառակապակցությունը, որը հետագայում՝ 28.11.2007 թ. ՀՕ–270–Ն օրենքով փոխարինվել է «դատական ակտերի» բառակապակցությամբ, նույնն էլ վերաբերում է նույն օրենքի հիման վրա վերոհիշյալ հոդվածի 1–ին մասում կատարված փոփոխությանը, որտեղ նույնպես «դատարանի որոշում» բառակապակցությունը փոխարինվել է «դատական ակտեր» բառակապակցությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները» վերտառությամբ 6–րդ հոդվածի 9) ենթակետում սահմանվում է **«որոշում»** եզրույթը՝ «որոշում՝ քրեական գործով դատարանի որոշումները, բացի դատավճռից, ինչպես նաև մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կայացրած որոշումները», իսկ 7) ենթակետում տրվում է **«դատավարական որոշումներ»** եզրույթի սահմանումը, այն է՝ «դատավարական որոշումներ՝ քրեական դատավարության ընթացքում իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունվող՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումներ՝ դատավճիռներ, որոշումներ»: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում «դատական որոշում» եզրույթի որևէ մեկնաբանություն առկա չէ, որը հանգեցնում է հասկացութային անհստակության:

Սահմանադրական դատարանը միևնույն ժամանակ արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427–րդ հոդվածի 2–րդ մասում տեղ գտած «դատական որոշում» եզրույթը մեկնաբանվում է որպես օրինական ուժի մեջ մտած և կիրառման ենթակա ցանկացած դատական ակտ, ինչը բխում է օրենսդրության տրամաբանությունից: Այսինքն՝ օրենսգրքի վերոհիշյալ դրույթներում տեղ գտած՝ վերը նշված հասկացություններն իրավակիրառական պրակտիկայում առկա մեկնաբանության շրջանակներում չեն առաջացնում իրավական անորոշություն և դրա արդյունքում՝ անձանց սահմանադրական իրավունքների խախտման վտանգ:

ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–690, 9 ապրիլի, 2007 թ.

11. .... սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրորեն նախատեսված պետաիշխանական ցանկացած բնույթի լիազորություն (այդ թվում՝ հայեցողական) անհրաժեշտ նպատակ հետապնդելու հետ մեկտեղ, պետք է ուղեկցվի վերջինիս հասնելու հասարակական հարաբերությունների կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված իրավական, չափավոր միջոցներով, տվյալ դեպքում՝ պարտադիր հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 3 հոդվածում, 47 հոդվածի առաջին մասում ամրագրված հիմնարար սկզբունքների անխախտելիությունը: Մասնավորապես, վճռաբեկ վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ միայն վճռաբեկ բողոքի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելը, այլև բողոքը վերադարձնելու պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Դրա բացակայության հետևանք է, որ գործով ուսումնասիրված՝ վճռաբեկ դատարանի թե՛ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և թե՛ վերադարձնելու մասին որոշումներում ըստ էության չեն տրվում պատճառաբանություններ .....

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթը՝ 10-օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը»:

ՍԴՈ–691, 11 ապրիլի, 2007 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ 09.04.2007 թ. ՍԴՈ-690 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես վերաբերում են նաև քրեական դատավարության օրենսգրքի 414.1. հոդվածի 2-րդ մասին:

Սահմանադրական դատարանն ընդունում է, որ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք: Սակայն օրենքը պետք է հաշվի առնի, որ ելնելով վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից, նա իր լիազորություններն առավել ամբողջական կկատարի, եթե վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանմանն օրենսդրական պահանջ ներկայացվի: Նման մոտեցումը ոչ միայն լուրջ ներդրում կլինի դատական տվյալ ատյանի կողմից առավել ամբողջական նախադեպի ձևավորման հարցում, այլ նաև էապես կնվազեցնի չհիմնավորված բողոքների քանակը և կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը»:

ՍԴՈ–754, 27 մայիսի, 2008 թ.

7. .... Իրավակիրառական պրակտիկայի նման դրսևորումների պայմաններում, հաշվի առնելով, որ ի կատարումն սահմանադրական դատարանի ՍԴՈ–690 որոշման՝ չեն ստեղծվել վճռաբեկ դատարանի խնդրո առարկա հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումն ապահովող օրենսդրական լիարժեք երաշխիքներ, ինչպես նաև նկատի ունենալով, որ բացակայում է որևէ արդյունավետ պաշտպանության միջոց ընդդեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթն իրավական արգելք է հանդիսանում վճռաբեկ դատարանի միջոցով իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համար:

ՍԴՈ–896, 15 հունիսի, 2010 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող լիազորությունը վերապահված է նաև ՀՀ վճռաբեկ դատարանին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 6–րդ կետերով: Բացի դրանից, համանման նորմեր տեղ են գտել նաև ՀՀ դատական օրենսգրքի 48–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետում, 60–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 6–րդ կետերում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի առաջին մասի 1–ին կետով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394–րդ հոդվածի առաջին մասի 1–ին կետով նախատեսված լիազորության համադրված վերլուծությունը վկայում է, որ վերաքննիչ ատյանի դատարաններին նման լիազորություն վերապահելը նպատակ է հետապնդել անհրաժեշտության դեպքում երաշխավորել առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի պատճառաբանվածությունը և դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաև ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի առաջին մասի 1–ին կետը, նախատեսելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ խնդրո առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք, ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչներ: Այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի առաջին մասի 1–ին կետով նախատեսված լիազորությունը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն **ըստ էության ճիշտ լուծող** դատական ակտ, սակայն այն «....թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ»: Նման գործը վերաքննության կարգով վերանայելիս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը **պարտավոր է** առաջին ատյանի դատական ակտի պատճառաբանությունները լրացնել նոր պատճառաբանություններով, եթե այդ ակտը թերի է պատճառաբանված, ճիշտ պատճառաբանել, եթե այդ ակտը սխալ է պատճառաբանված, կամ պատճառաբանել, եթե այդ ակտն ընդհանրապես պատճառաբանված չէ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին նշված լիազորությունը վերապահելիս օրենսդիրը նկատի է ունեցել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված՝ ըստ էության ճիշտ վճռի՝ ձևական նկատառումներով բեկանման արգելքի հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի առաջին մասի 1–ին կետի՝ «.... թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված» բառակապակցությունը սահմանադրականության խնդիր չի առաջացնում և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին վերապահված՝ քննարկվող լիազորությունը համահունչ է ՀՀ Սահմանադրու-

թյամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ արդար դատաքննության և ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքներին: Հիշյալ լիազորության բացակայությունը, ընդհակառակը, կարող է վտանգել արդար դատաքննության, ինչպես նաև ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքները:

Այլ է վիճակը «.... կամ պատճառաբանված չէ» բառակապակցության առնչությամբ: Նման ձևակերպման առկայությունն ինքնաբերաբար ենթադրում է չպատճառաբանված դատական ակտի գոյություն: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 9 ապրիլի 2007 թ. ՍԴՈ–690 որոշման մեջ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել դատական ակտի պատճառաբանված լինելու սահմանադրաիրավական անհրաժեշտության վերաբերյալ, և այդ դիրքորոշումներն ամբողջությամբ վերաբերելի են նաև քննության առարկա գործին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:

Այդ նկատառումներից ելնելով է, որ, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հոդված 132) պարտադիր նորմատիվ պահանջ է սահմանում դատական վճռի բովանդակության վերաբերյալ, նախատեսելով, որ «դատարանի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, **պատճառաբանական** և եզրափակիչ մասերից»: Միաժամանակ, նույն հոդվածի 1–ին մասում սահմանվում է, որ «Վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս»:

ՍԴՈ–919, 5 հոկտեմբերի, 2010 թ.

6. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53–րդ հոդվածի 3–րդ մասում «ընդ որում» բառակապակցությունից հետո թվարկված պայմանները պարտավորեցնում են դատարաններին երեխայի շահը գնահատելիս հիմք ընդունել այդ պայմանները, ինչպես նաև, առաջնորդվելով իրենց հայեցողական լիազորությամբ, հիմք ընդունել նաև այլ պայմաններ, եթե դատարանի գնահատմամբ այդպիսիք կան: Դատարանների այդպիսի պարտականության մասին իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.03.2007 թ. թիվ 3–432 (ՏԴ) որոշման մեջ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարտականությունը միաժամանակ ապահովում է դատական ակտի պատճառաբանվածությունը, որի վերաբերյալ սահմանադրական դատարանն իր, մասնավորապես, 2007 թվականի ապրիլի 9–ի ՍԴՈ–690, 2007 թվականի ապրիլի 11–ի ՍԴՈ–691 և մի շարք այլ որոշումներում բազմիցս արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ:

ՍԴՈ–1049, 28 սեպտեմբերի, 2012 թ.

7. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմով կարգավորման ենթակա հարաբերությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման ընդհանուր կարգը նախատեսող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5–րդ բաժնում ներառված նորմերի համա-

ձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմք են նաև նոր երևան եկած հանգամանքները (226-րդ հոդվածի 2-րդ կետ, 231-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ), որպիսիք, ի թիվս իրավասու այլ սուբյեկտների, ՀՀ վճռաբեկ դատարանին ներկայացնելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք (223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Վճռաբեկ բողոքը, ի թիվս այլ իրավապայմանների, ընդունվում է քննության, եթե բողոքում հիմնավորված է, որ առկա է նոր երևան եկած հանգամանք (234-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ), կամ՝ վերադարձվում է, եթե, ի թիվս այլ իրավապայմանների, չի համապատասխանում օրենսգրքի 231-րդ հոդվածի և 234-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, որի դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը կայացնում է **պատճառաբանված** որոշում (233-րդ հոդվածի 2-րդ մաս): Օրենսգրքի վերոհիշյալ բաժնի այլ հոդվածներով սահմանված են վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման կանոնները (այդ թվում՝ և նոր երևան եկած հանգամանքների հիմքով), մասնավորապես՝ գործի քննության սահմանները, դատարանի լիազորությունները, որոշում կայացնելու կարգը (238-րդ, 239-րդ, 240-րդ, 241-րդ, 241.1-րդ հոդվածներ և այլն): Այսինքն՝ վերոթվարկյալ նորմերով օրենսդիրն ընդհանուր իրավակարգավորման է ենթարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի՝ վճռաբեկության կարգով վերանայման հետ կապված (այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով (204.38-րդ հոդվածի 1-ին մաս) հարաբերությունները՝ նպատակ ունենալով այդ իրավակարգավորումների շրջանակներում հստակեցնել նաև օրենքի միատեսակ կիրառմանը, ճիշտ մեկնաբանմանը և իրավունքի զարգացմանը նպաստելուն միտված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական լիազորությունները:

.... Մյուս կողմից՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը՝

– պարտավոր է նոր երևան եկած հանգամանքների՝ օրենսգրքի 204.32-րդ հոդվածում սահմանված հատկանիշների առկայության, 204.34-րդ հոդվածում սահմանված ժամկետի և 204.36-րդ հոդվածի պահանջների պահպանման դեպքում հարուցել դատական ակտի վերանայման վարույթ կամ հիշյալ պայմանների անբավարարության դեպքում վերադարձնել բողոքը՝ **կայացնելով պատճառաբանված որոշում** (233-րդ հոդվածի 2-րդ մաս), ընդ որում՝ անվերապահորեն պահպանելով սահմանադրական դատարանի ՍԴՈ-690, ՍԴՈ-691, ՍԴՈ-752, ՍԴՈ-754, ՍԴՈ-896, ՍԴՈ-919 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ իրավապայմաններին չհամապատասխանող դատական ակտերը ենթակա են վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ վերոհիշյալ ընթացակարգերում կարևոր է երաշխավորել քաղաքացիաիրավական վեճի լուծման իրավական ընդհանուր այն սկզբունքները, որոնք անմիջականորեն բխում են վիճարկվող նորմի և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված օրենսգրքի այլ նորմերի իրավական բովանդակությունից, մասնավորապես՝ կապված ապացուցման գործընթացի, կողմերի իրավունքների ու պարտականությունների հետ, և այն ընդհանուր կանոնների պահպանմամբ, որպիսիք նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում: Միաժամանակ, **դատարանի խնդիրն ու պարտականությունն են ապահովել բողոքում բերված տեղեկությունների, հանգամանքների, փաստերի բազմակողմանի և անաչառ քննություն՝ դրա արդյունքում բավարար ու միակերպ ընկալելի որոշմամբ պատճառաբանելով ներկայացված փաստարկները որպես նոր երևան եկած հանգամանք գնահատելու կամ մերժելու իրավական շարժառիթներն ու հիմքերը:**

ՍԴՈ–1074, 5 փետրվարի, 2013 թ.

5. Հաշվի առնելով դիմողների փաստարկները՝ սահմանադրական դատարանը սույն գործով հարկ է համարում նախ բացահայտել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերով սահմանված իրավակարգավորման նպատակը և տրամաբանությունը՝ նշված նորմերը դիտարկելով օրենսգրքի 113-րդ հոդվածի մյուս նորմերի հետ համադրության մեջ:

Օրենսգրքի 113-րդ հոդվածը վերաբերում է գործով ըստ էության դատական ակտ կայացնելիս դատարանի գործողություններին: Վերջիններս այն անհրաժեշտ, պարտադիր և բավարար գործողություններն են, որոնք չկատարելու դեպքում կխաթարվեր արդարադատության էությունը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ակնհայտ է, որ արդարության պահանջները բավարարող դատական ակտ կայացնելու համար առնվազն հարկ է որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների և դրանք հիմնավորող վերաբերելի և թույլատրելի ապացույցների շրջանակը՝ այդ շրջանակից բացառելով ոչ վերաբերելի և ոչ թույլատրելի ապացույցները: Հարկ է նաև մրցակցային դատավարության սկզբունքի հիման վրա հնարավորություն ընձեռել կողմերին դատարանի կողմից հետազոտելու համար ներկայացնելու համապատասխան ապացույցները: Ինքնանպատակ չէ այն, որ մինչև բուն դատաքննության անցկացումը վարչադատավարական օրենսդրությամբ նախատեսված է նախնական դատական նիստեր անցկացնելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է դատական ակտի կայացմանը, որին նվիրված է օրենսգրքի 113-րդ հոդվածը, ապա այն ըստ էության հանդիսանում է նախնական դատական նիստերի և դատաքննության ամփոփումը, որի ժամանակ հարկ է ոչ միայն գնահատել գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցները և դրանց հիման վրա որոշել կիրառելի իրավունքը, այլ դատական քննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու համար մեկ անգամ ևս ստուգել հնարավոր բացթողումների առկայությունը, այն է՝ որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզված լինելը: Ընդ որում, գործնականում չի բացառվում դատական քննության ընթացքում հնարավոր սխալների, թերությունների առկայությունը: Դրանց բացառմանն են ուղղված հենց օրենսգրքի վիճարկվող նորմերը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը գտնվում են նույն հոդվածի 1-ին մասի դրույթների հետ տրամաբանական փոխկապվածության մեջ: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը, նախատեսելով գործի քննությունը վերսկսելու ինստիտուտ, հետապնդում է, առաջին հերթին, հնարավոր դատական սխալից խուսափելու, գործի լրիվ և բազմակողմանի քննություն ապահովելու, արդարադատությունն ամբողջ ծավալով իրականացնելու նպատակ: Նման իրավակարգավորման բացակայությունն, ընդհակառակը, կարող է հանգեցնել դատական սխալի, արդար և բազմակողմանի դատաքննության պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն: Ընդ որում, օրենսգրքի վիճարկվող նորմերով սահմանված իրավակարգավորումը բնորոշ է սահմանադրական, քաղաքացիական և քրեական դատավարություններին և նախատեսված է ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ, այլ նաև բազմաթիվ այլ պետությունների օրենսդրություններով (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության և արբիտրաժային դատավարության օրենսգրքեր, Ուկրաինա, Լատվիա և այլն): .....

9. Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում կարևորում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրականության գնահատման հարցը՝ դատական ակտերի պատճառաբանվածության տեսանկյունից:

.... Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ տվյալ դա-

տական ակտը կայացնելու իրավասությունը **ենթադրում է իրավունքով սահմանափակված հայեցողություն և պատճառաբանված դատական ակտ կայացնելու պարտականություն:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ գործի քննությունը վերսկսելու մասին պատճառաբանված դատական ակտ կայացնելու որոշակի իրավական երաշխիք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144–րդ հոդվածը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112–րդ հոդվածի ուժով, ի թիվս այլնի, միջանկյալ դատական ակտին ներկայացվող պահանջների նկատմամբ տարածվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, մասնավորապես, այդ օրենսգրքի 144–րդ հոդվածը, պարտավորեցնում է դատարաններին դատական ակտ կայացնելիս այդ ակտում նշել նաև այն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է համապատասխան հետևությունների:

ԴԱՏԱԿԱՆ ՍԽԱԼԸ

ՍԴՈ–674, 30 հունվարի, 2007 թ.

5. .... Առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջներով՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը Սահմանադրությամբ և օրենքով լիազորված չլինելով մեկ դատավորի կազմով կայացնելու որոշում բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ, 03.05.2006 թ. կայացրել է նման որոշում: Մյուս կողմից, այդ պահին գործել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին կամ վերաքննիչ դատարան»: Տվյալ դեպքում բողոքը ներկայացնելու համար օրենքով ժամկետային որևէ սահմանափակում չի նախատեսվել, որը փաստեց նաև պատասխանող կողմը: Լիազորված չլինելով գնահատելու ընդհանուր իրավասության դատարանի ակտերի սահմանադրականությունը, միաժամանակ կոչված լինելով ապահովելու ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հարցն ուղղակիորեն առնչվում է մարդկանց սահմանադրական իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանը, միայն դատական սխալի հաղթահարման և գործի հանգամանքների համակողմանի քննության արդյունքում է հնարավոր ստեղծել անհրաժեշտ արդարադատական նախադեպ և երաշխավորել Սահմանադրության 1, 3, 5, 6, 14 և մի շարք այլ հոդվածների պահանջների հետևողական կատարումը:

ՍԴՈ–709, 20 հուլիսի, 2007 թ.

7. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 406, 407 և 408 հոդվածների համատեքստում նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին դրույթը լուրջ երաշխիք է դատարանի դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունն ստուգելու, դատական սխալն ուղղելու և քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

16. Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադա-

տության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետևաբար, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում:

ՍԴՈ–849, 22 դեկտեմբերի, 2009 թ.

7. .... Բացի դրանից, նման մեկնաբանումը չի նպաստի արդարադատության լիարժեք իրականացմանը, դատական սխալները շտկելու և միասնական դատական պրակտիկա ձևավորելու գործին: **Վերաքննիչ դատարանի ըստ էության նոր դատավճռի բողոքարկումը վճռաբեկ դատարան պետք է մատչելի լինի դատավարության մասնակիցների համար:** Նորմի առկա ձևակերպումը ենթադրում է, որ դատավարության մասնակիցը չի կարող առանց վերաքննիչ բողոքի շրջանակներում առաջին ատյանի դատարանի ակտը բողոքարկելու այն բողոքարկել վճռաբեկ դատարան:

ՍԴՈ–852, 19 հունվարի, 2010 թ.

7. .... Ինչ վերաբերում է վճռաբեկության կարգով վերաքննիչ դատական ակտերի վերանայմանը, ապա վերջինս հանդես է գալիս որպես վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը շտկելու դատավարական երաշխիք, որի միջոցով վճռաբեկ դատարանն իրացնում է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթը, և վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման դեպքում վերանայման իրավունքի իրացման հնարավորությունն իրավաչափորեն սահմանափակվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և գործառնական դերով:

ՍԴՈ–873, 13 ապրիլի, 2010 թ.

8. .... Նման տարբերությունը բովանդակային առումով նշանակում է, որ եթե վճռաբեկ բողոք բերող անձն իր բողոքում պարտավոր է հիմնավորել դատական սխալի՝ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ իր ենթադրությունը, ապա վճռաբեկ դատարանը **դիմումի ընդունելիության հարցի քննության փուլում** պարտավոր է ոչ թե ստուգել դատական սխալի՝ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի ենթադրության հիմնավորված լինելու հանգամանքը, այլ հաստատել այն փաստը, որ դատական սխալը հանգեցրել է կամ չի հանգեցրել գործի սխալ լուծմանը: Իրավակիրառական պրակտիկան ևս ձևավորվել է օրենսգրքի 118.6–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետում ամրագրված նորմի նման ընկալմամբ: Մասնավորապես, այդ մասին է վկայում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումներում, այդ թվում՝ դիմողի գործով կայացրած որոշման մեջ վճռաբեկ դատարանի հետևյալ ձևակերպումը. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113–րդ հոդվածի 1–ին մասի պահանջներին համապատասխան, գնահատելով գործում առկա ապացույցները, պարզելով գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները և կիրառելով սույն գործով կիրառման ենթակա օրենքները, իրավացիորեն հայցը մերժել է»:

ՍԴՈ–890, 25 մայիսի, 2010 թ.

9. ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության շրջանակներում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերը վերանայող դատարան է, հետևաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ դատարանում բողոքարկման օբյեկտն առաջին ատյանի դատարանի դատական ակտն է: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա վերահսկողություն է իրականացնում առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության նկատմամբ՝ դրանում տեղ գտած հնարավոր դատական սխալը վերացնելու նպատակով: Ուստի, եթե առաջին ատյանի դատարանում քննության առարկան մեկ կամ մի քանի պահանջ ներառող հայցապահանջն է, ապա վերաքննիչ դատարանում քննության առարկան ոչ թե առաջին ատյանի դատարան ներկայացված հայցապահանջում ներառված առանձին պահանջներն են, այլ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ դատական սխալը: Հետևաբար, գույքային և ոչ գույքային պահանջների առնչությամբ կայացված՝ առաջին ատյանի դատական ակտը կարող է քննության առարկա դառնալ միաժամանակ գույքային և ոչ գույքային պահանջների առնչությամբ՝ իր ամբողջության մեջ:

ՍԴՈ–936, 8 փետրվարի, 2011 թ.

5. .... Այսպիսով, սահմանելով դատական ակտերի բողոքարկման ընթացակարգեր՝ որպես այդ ակտերը վերանայելու նախապայման (բացառությամբ նոր և նոր ի հայտ եկած հանգամանքներով), օրենսդիրը նկատի է ունեցել նյութական, դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումները, որոնց դեպքերում դրանք **ազդել են գործի ելքի վրա** կամ **հանգեցրել են գործի սխալ լուծմանը**: Իսկ որոշ դեպքերում, ինչպես, օրինակ, քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքի հիմքով, օրենսդիրն արգելել է ձևական նկատառումներով բեկանել դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը: Այսինքն՝ վերոթվարկյալ դեպքերում իրավակարգավորման հիմքում դրված է այն սկզբունքը, համաձայն որի՝ նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով կարող է բեկանվել դատական այն ակտը, որը կայացվել է **դատական սխալի արդյունքում**:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարելով անդրադառնալ **«դատական սխալ»** եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, ինչպես նաև դրա՝ որպես դատական բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հիմքում իրավաբանական կարևոր նշանակություն ունեցող փաստի դրսևորման շրջանակներին, գտնում է, որ այն տարածական մեկնաբանման ենթակա չէ և չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից թույլ տրված ցանկացած սխալ (վրիպում): Դատական սխալ կարող է թույլ տրվել միայն գործով ըստ էության դատական ակտի կայացման արդյունքում, այսինքն՝ այնպիսի ակտի, որը կոչված է լինելու լուծել գործը (քրեական, քաղաքացիական, վարչական), վերացնել դրա վիճելիությունը՝ որոշել կողմերի (վիճելի իրավահարաբերության մասնակիցների) իրավական անվիճելի կարգավիճակը, անձանց համար հնարավորություն ստեղծել իրացնելու իրենց իրավունքներն ու պաշտպանել օրինական շահերը, հետևաբար՝ կոչված է իրականացնելու ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության կամ արդարադատության նպատակները: Այդ գործընթացում **դատարանը կիրառում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմեր**, որի արդյունքում է կայացվում դատական ակտը: Հետևաբար, այդ ակտի օրինականության վիճարկումը դատական բողոքարկման ընթացակարգով անհրաժեշտաբար կարող է լինել ինչպես **նյութական**, այնպես էլ **դատավարական** իրավունքի նորմի խախտման հիմքով: Իսկ դատական սխալը, կամ նյութական, դատավարական իրավունքի նորմերի խախտման փաստը, **որը հանգեցրել է տվյալ գործի սխալ լուծմանը,** հետևաբար՝ խախտվել են արդարադատության

նպատակները, վտանգվել է արդարադատության և դատարանի հեղինակությունը, ենթակա է գնահատման և հաստատման իրավասու դատարանի կողմից՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցրած լինելու կամ չլինելու **փաստի հաստատումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Որպես վճռաբեկ բողոքի ընդունելիության պայման կարող է հանդես գալ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի **ենթադրության ներկայացված լինելու հանգամանքի ստուգումը,** այլ ոչ թե այն փաստի հաստատումը, որ դատական սխալը **հանգեցրել է կամ չի հանգեցրել** գործի սխալ լուծմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցի քննության փուլում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «առկա է» բառը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես բողոքի ընդունման փուլում նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը հաստատելու վճռաբեկ դատարանի պարտավորվածություն՝ դրանով իսկ ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից, սահմանափակելով վճռաբեկ դատարանի մատչելիությունը՝ դատական պաշտպանության միջոցը դարձնելով անարդյունավետ: Վճռաբեկ բողոք բերող անձի պնդումը գործի ելքի վրա ազդող դատական սխալի **ենթադրյալ առկայության** մասին, եթե այդ պնդումն ակնհայտ անհիմն չէ, թույլատրելիության այլ նախադրյալների հետ մեկտեղ (ժամկետներ, բողոքի ձևին ներկայացվող պահանջներ և այլն), բավարար է գործը քննության ընդունելու համար, և վճռաբեկ դատարանն իրավասու չէ այդ փուլում ստուգելու վճռաբեկ բողոքի **հիմնավորվածությունը**՝ այդպիսի սխալի իրական առկայությունը («առկա է», «հանգեցրել է գործի սխալ լուծմանը», «ազդել է գործի լուծման վրա»), քանի որ դրանով փոխարինվում կամ կանխորոշվում է դատաքննությունը, որը և պետք է ապահովի գործի արդարացի քննությունը՝ համապատասխան երաշխիքների պահպանմամբ:

ՍԴՈ-943, 25 փետրվարի, 2011 թ.

11. .... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր են դիմող կողմի այն պնդումները, համաձայն որի՝ իրավական դիրքորոշումների շրջանակում **սահմանադրական ճանաչված նորմը չի կարող կիրառվել սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունից տարբերվող բովանդակությամբ**: Հակառակ դեպքում իրավասու պետական մարմնի, այդ թվում՝ դատարանի, գործողություններն ու ակտերն ակնհայտ կհակասեն ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ և մի շարք այլ հոդվածներով երաշխավորված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներին: ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանները պարտավոր են ըստ էության գործի քննության, ինչպես նաև դատական բողոքարկման շրջանակներում նորմատիվ իրավական ակտերը կիրառելիս հաշվի առնել դրանց վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, գործող դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով **դատական սխալի փաստը գնահատելիս**, եթե կոնկրետ գործով անձանց նկատմամբ կիրառված նյութական կամ դատավարական այս կամ այն նորմի սահմանադրաիրավաընկալման վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը: Այդպիսի հիմնավորմամբ դատական ակտերը վերանայելու պահանջով շահագրգիռ անձանց դիմումները պետք է քննության առնվեն իրավասու դատարանների կողմից, իսկ առանց հիմնավոր պատճառաբանման այդպիսի դիմումի քննությունը մերժելն անձին հնարավորություն կընձեռի իր իրավունքների և

ազատությունների միջազգային-արդարադատական պաշտպանության համար: Իսկ այդ-պիսի շարունակական պրակտիկան կհակասի ոչ միայն ՀՀ սահմանադրական կարգի հիմ-նական սկզբունքներին, այլև՝ ՀՀ ստանձնած միջազգային մի շարք պարտավորությունների:

ՍԴՈ–1004, 6 դեկտեմբերի, 2011 թ.

6. Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիա-կան դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը դիտարկել նույն օրենսգրքով սահմանված՝ կողմերի դատավարական պարտականությունների, ինչպես նաև վերաքննիչ բողոքի հիմքերի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտ-ման և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված՝ «նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում» հասկացության համա-տեքստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համա-ձայն՝ հայցվորը պարտավոր է, ի թիվս այլնի, հայցադիմումում նշել իր պահանջները, այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները, ինչպես նաև հայցապա-հանջները հաստատող ապացույցները: Օրենսգրքի 95-րդ հոդվածը սահմանում է հայցադի-մումի պատասխանին ներկայացվող պահանջները, այն է՝ հայցադիմումի պատասխանը, ի թիվս այլնի, պետք է պարունակի հայցում ներկայացված յուրաքանչյուր պահանջն ընդունե-լու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին պատասխանողի դիրքո-րոշումը: Ընդ որում, առարկելու դեպքում պատասխանում, մասնավորապես, պետք է ան-դրադարձ կատարվի հայցի հիմքում ընկած փաստերին, որոնք նա չի ընդունում, այն փաս-տերին, որոնք ընկած են առարկությունների հիմքում, և այն ապացույցներին, որոնք հաս-տատում են այդ փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված, ինչպես նաև պետք է անդրադարձ կատարվի այն հարցին, թե արդյոք հայցվորի ներկայացրած փաստերն էական նշանակություն ունեն գործի լուծման համար:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունում մրցակցության սկզբունքին համապատասխան հայցվորն ու պատասխանողը կրում են ի-րենց վկայակոչած փաստերն ապացուցելու պարտականություն: Մրցակցության սկզբունքի համատեքստում նշված դատավարական նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ կողմերը կրում են **հայցի առարկայի և դրա փաստական հիմքերի վերաբերյալ դիրքո-րոշում արտահայտելու պարտականություն:** Ինչ վերաբերում է հայցի իրավական հիմքին, վիճելի իրավահարաբերության որակմանը և դրա նկատմամբ կիրառելի նորմերի ընտրու-թյանը, ապա դատավարության կողմերի համար՝ հայցի իրավական հիմքը մատնանշելու և այդ կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու պարտականություն օրենսգրքով սահ-մանված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ դատա-րանը վճիռ կայացնելիս, ի թիվս այլնի, գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, **որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը:** Վճ-ռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված՝ գործի հան-գամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս: Օրենսդիրը դատարանից պահանջում է կա-յացնել օրինական և հիմնավորված վճիռ, իսկ դրա համար դատարանին անհրաժեշտ է ճիշտ ընտրել և կիրառել օրենքը՝ անկախ նրանից, թե կողմերն ինչ դիրքորոշում են արտա-հայտել կիրառելի նորմերի վերաբերյալ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի՝ վիճելի իրա-

վահարաբերության որակման և դրա նկատմամբ կիրառելի նորմերի վերաբերյալ դիրքորոշումներով: Հայցվորի դատավարական պարտականությունն է հստակ ներկայացնել իր պահանջները, իր պահանջի հիմքում ընկած փաստերը, այդ փաստերը հիմնավորող ապացույցները, պատասխանողի պարտականությունն է հստակ դիրքորոշում արտահայտել հայցվորի ներկայացրած պահանջներից յուրաքանչյուրի, հայցապահանջի/ների հիմքում ընկած փաստերի վերաբերյալ, այդ փաստերի դեմ առարկելու դեպքում ներկայացնել դրանք հերքող ապացույցներ: Մինչդեռ դատարանի խնդիրն ու գործառույթն է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ ապացուցման ենթակա փաստերը, կողմերի ներկայացրած ապացույցների հիման վրա հաստատված կամ չհաստատված համարել այս կամ այն փաստը և ըստ այդմ որոշել վիճելի իրավահարաբերության բնույթը և դրա նկատմամբ կիրառելի իրավանորմը:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածով հստակեցված են վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող նորմատիվ պահանջները, որոնք համահունչ են դատավարության կողմի դատավարական իրավունքներին ու պարտականություններին: Իսկ 219-րդ հոդվածը հստակ սահմանում է վերաքննության սահմանները և կողմերի համար որոշակի ու կանխատեսելի է դարձնում իրենց իրավունքների իրացման հնարավորությունները:

Բացի դրանից, «նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում» հասկացության բովանդակությունը բացահայտող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածը որպես նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում է դիտում դատարանի կողմից այն օրենքը կամ ՀՀ միջազգային պայմանագիրը կամ այլ իրավական ակտ չկիրառելը, որը պետք է կիրառեր, կամ այն օրենքի կամ ՀՀ միջազգային պայմանագրի կամ այլ իրավական ակտի կիրառումը, որը չպետք է կիրառեր, կամ օրենքի կամ ՀՀ միջազգային պայմանագրի կամ այլ իրավական ակտի սխալ մեկնաբանումը:

Օրենսդրական նման իրավակարգավորման պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմը որևէ կերպ չի խոչընդոտում դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը՝ գործի նկատմամբ կիրառելի իրավանորմի սխալ ընտրությունը, վերաքննիչ դատարանում օրենքով սահմանված կարգով և սահմաններում վիճարկելուն՝ երաշխավորելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացումը:

ՍԴՈ-1074, 5 փետրվարի, 2013 թ.

5. Հաշվի առնելով դիմողների փաստարկները՝ սահմանադրական դատարանը սույն գործով հարկ է համարում նախ բացահայտել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերով սահմանված իրավակարգավորման նպատակը և տրամաբանությունը՝ նշված նորմերը դիտարկելով օրենսգրքի 113-րդ հոդվածի մյուս նորմերի հետ համադրության մեջ:

Օրենսգրքի 113-րդ հոդվածը վերաբերում է գործով ըստ էության դատական ակտ կայացնելիս դատարանի գործողություններին: Վերջիններս այն անհրաժեշտ, պարտադիր և բավարար գործողություններն են, որոնք չկատարելու դեպքում կխաթարվեր արդարադատության էությունը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ակնհայտ է, որ արդարության պահանջները բավարարող դատական ակտ կայացնելու համար առնվազն հարկ է որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների և դրանք հիմնավորող վերաբերելի և թույլատրելի ապացույցների շրջանակը՝ այդ շրջանակից բացառելով ոչ վերաբերելի և ոչ թույլատրելի ապացույցները: Հարկ է նաև մրցակցային դատավարության սկզբունքի հիման վրա հնարավորություն ընձեռել կողմերին դատարանի կողմից

հետազոտելու համար ներկայացնելու համապատասխան ապացույցները: Ինքնանպատակ չէ այն, որ մինչև բուն դատաքննության անցկացումը վարչադատավարական օրենսդրությամբ նախատեսված է նախնական դատական նիստեր անցկացնելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է դատական ակտի կայացմանը, որին նվիրված է օրենսգրքի 113-րդ հոդվածը, ապա այն ըստ էության հանդիսանում է նախնական դատական նիստերի և դատաքննության ամփոփումը, որի ժամանակ հարկ է ոչ միայն գնահատել գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցները և դրանց հիման վրա որոշել կիրառելի իրավունքը, այլ դատական քննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու համար մեկ անգամ ևս ստուգել հնարավոր բացթողումների առկայությունը, այն է՝ որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզված լինելը: Ընդ որում, գործնականում չի բացառվում դատական քննության ընթացքում հնարավոր սխալների, թերությունների առկայությունը: Դրանց բացառմանն են ուղղված հենց օրենսգրքի վիճարկվող նորմերը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը գտնվում են նույն հոդվածի 1-ին մասի դրույթների հետ տրամաբանական փոխկապվածության մեջ: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը, նախատեսելով գործի քննությունը վերսկսելու ինստիտուտ, հետապնդում է, առաջին հերթին, հնարավոր դատական սխալից խուսափելու, գործի լրիվ և բազմակողմանի քննություն ապահովելու, արդարադատությունն ամբողջ ծավալով իրականացնելու նպատակ: Նման իրավակարգավորման բացակայությունն, ընդհակառակը, կարող է հանգեցնել դատական սխալի, արդար և բազմակողմանի դատաքննության պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն: Ընդ որում, օրենսգրքի վիճարկվող նորմերով սահմանված իրավակարգավորումը բնորոշ է սահմանադրական, քաղաքացիական և քրեական դատավարություններին և նախատեսված է ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ, այլ նաև բազմաթիվ այլ պետությունների օրենսդրություններով (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության և արբիտրաժային դատավարության օրենսգրքեր, Ուկրաինա, Լատվիա և այլն):

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՍԴՈ-1134, 24 դեկտեմբերի, 2013 թ.

6. .... Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումի, դիմումին կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության՝ ի պատասխան 27.11.2013 թ. ՍԴԱ-29 գրության տրամադրած՝ դատապարտյալ Գ. Հովսեփյանի՝ ՌԴ-ից հետագա պատիժը կրելու համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու վերաբերյալ պահանջված փաստաթղթերի պատճենների ուսումնասիրությունից պարզ չի դառնում, թե Գ. Հովսեփյանին Հայաստանի Հանրապետություն փոխանցելուց հետո վերը նշված կոնվենցիայի որ հոդվածն է կիրառվել՝ **ՀՀ առաջին ատյանի դատարանն ապահովել է ՌԴ դատարանի դատավճռի կատարման շարունակությունը, թե կատարել է ՌԴ դատարանի դատավճռի փոխարկում:** ....

7. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ օտարերկրյա պետությունում դատապարտված անձի փոխանցման ժամանակ կատարող պետության իրավասու մարմինների գործառույթները, այդ թվում՝ դատավճռի համապատասխանեցումը ներպետական օրենսդրությանը, կանոնակարգված են միջազգային պայմանագրերով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի փաստարկները, ըստ էության, առնչվում են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից **միջազգային պայմանագրերի կիրառման իրավաչափության հարցին:**

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ պահանջների կատարումը խնդրո առարկա իրավիճակում կբացառի օրենսգրքի 499.9-րդ հոդվածի կիրառման ոլորտում շահագրգիռ անձանց կարծիքով առաջացող անորոշությունը՝ կապված արարքի կատարման պահին գործող օրենքը կիրառելու և իրավական ակտի հետադարձության վերաբերյալ սկզբունքների կիրառման հետ:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

ՍԴՈ-752, 22 ապրիլի, 2008 թ.

6. ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի (1-ին մաս) և 19 հոդվածի (1-ին մաս) համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, ինչպես նաև դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք, որն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6 հոդվածում: Դատավարական ժամկետների ինստիտուտն ընդհանրապես կոչված է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության սահմանադրական վերոհիշյալ իրավունքի արդյունավետ իրացումը: Այն օրենքով կամ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում դատարանը, կողմերը և գործի մյուս մասնակիցներն իրավունք ունեն (պարտավոր են) կատարելու օրենքով նախատեսված դատավարական գործողություններ: Միաժամանակ, որոշակի ժամկետով այդպիսի գործողությունների կատարման սահմանափակումը դատավարական հարաբերությունների կայունությունը, որոշակիությունը, հստակությունը, դատավարական սկզբունքների պահպանումը, գործով բազմակողմանի և օբյեկտիվ քննությունը, ի վերջո, արդարադատության արդյունավետությունն ապահովող և անձանց խախտված իրավունքները ողջամիտ ժամկետում վերականգնելու կարևոր երաշխիք է:

ՍԴՈ-1052, 17 հոկտեմբերի, 2012 թ.

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրելով, որ ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորելու իրավական որոշակիությունը, միևնույն ժամանակ, հիմք ընդունելով, մասնավորապես, իր՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-690, ՍԴՈ-719 որոշումներում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:** Նման իրավական դիրքորոշման համար հիմք են ծառայում, մասնավորապես, օրենսգրքի 381-րդ հոդվածը, որը վերաբերում

է վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 407-րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներին, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 414.1-րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքը վերադարձնելուն: Օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, իսկ նման հիմնավորման բացակայության դեպքում նույն հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ բողոքը թողնվում է առանց քննության: Օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, նույն մասի 6.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալը, ինչպես նաև այդ սխալի հետևանքով ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջանալու հնարավորությունը, իսկ վերը նշված պատճառաբանությունների և հիմնավորումների բացակայության դեպքում օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վճռաբեկ բողոքը վերադարձվում է:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը: Մինչդեռ օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով բողոքարկման ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով բողոքարկվող դատական ակտի հրապարակման պահը, օրենսդիրը ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնված ժամկետը հարգելի կամ անհարգելի համարելու առումով: Բանն այն է, որ դատական ակտը հրապարակելուց, այն հասցեատիրոջն ուղարկելուց մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, որը կարող է ավելի երկարաձգվել՝ պայմանավորված նաև սուբյեկտիվ գործոններով: Նման պայմաններում անձն իր տնօրինության ներքո հաճախ չի ունենում բողոքարկվող դատական ակտը, հնարավորություն չի ունենում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները կազմել օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ, ինչն իրավաչափորեն հիմք է հանդիսանում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները համապատասխանաբար՝ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու համար:

ՍԴՈ-1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

6. .... Սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակները, երբ անձը, որի նկատմամբ նշանակված է վարչական տույժ՝ տուգանք, տարբեր օբյեկտիվ պատճառներով, ներառյալ՝ անհաղթահարելի ուժի առկայությունը, չկարողանա օրենքով սահմանված ժամկետներում վճարել տուգանքը: Այս դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով, այսինքն՝ իրավունքի ուժով, նշանակված տուգանքի չափն ինքնաբերաբար բազմապատկվում է, որպիսի պայմաններում ան-

ձին չի տրվում հնարավորություն ապացուցելու իր պարտավորությունների չկատարման պատճառների՝ իր կամքից անկախ լինելը:

Մասնավորապես, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ բոլոր այն դեպքերում, երբ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժվում է, լսվելու հնարավորություն է տրվում վարչական դատարան դիմողին (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156–րդ հոդված): Ինչ վերաբերում է տվյալ վարչական գործով պատասխանողին, ապա նշված վարույթի շրջանակներում պատասխանողը հնարավորություն ունի ներկայացնելու հակընդդեմ հայց միայն վարչական ակտը, տվյալ դեպքում՝ տուգանք նշանակելու մասին որոշումը (այլ ոչ թե տուգանքի չափի եռապատկումը կամ հնգապատկումը) վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ, եթե պատասխանողը վարչական ակտը համարում է ապօրինի: Որևէ այլ պարագայում և որևէ այլ կերպ պատասխանողը վճարման կարգադրություն արձակելու մասին հայցադիմումի քննության վարույթի շրջանակներում տուգանքը ժամանակին չվճարելու օբյեկտիվ պատճառների մասին նույնիսկ հակընդդեմ հայցի միջոցով հիմնավորումներ ներկայացնելու և այդ հարցով լսվելու իրավական հնարավորություն չունի:

Ելնելով ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման, ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանն իրավական պետությանն անհարիր է համարում վերը նշված իրավիճակը և գտնում, որ դրա պատճառն իրավական բացն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարաններում օրենսգրքի վիճարկվող նորմերով նախատեսված տուգանքի հնգապատիկի չափը բռնագանձելու մասին հայցի քննության ժամանակ անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պետք է քննարկման առարկա դարձնի և գնահատի նրա ներկայացրած հիմնավորումներն այն մասին, թե արդյոք առկա են եղել արտակարգ և անհաղթահարելի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են անձին ժամանակին կատարելու իր պարտավորությունները պետության առջև, կամ արդյոք անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը կատարելու համար և այդպիսի հանգամանքների առկայությունը հաստատելու պարագայում հարգելի համարի բաց թողնված ժամկետները: **Ընդ որում, նման իրավակարգավորում նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ:**

ՍԴՈ–1249, 22 դեկտեմբերի, 2015 թ.

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունն անմիջականորեն փոխկապակցված է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ՝ ՍԴՈ–1052 և ՍԴՈ–1062 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների հետ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործի քննությունն անհրաժեշտ է իրականացնել այդ դիրքորոշումների լույսի ներքո: ՍԴՈ–1062 որոշման եզրափակիչ մասում սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412–րդ հոդվածի 1–ին մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ–1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի: Այսինքն, սահմանադրական դատարանը որպես դրույթի սահմանադրականության պայման նշել է այն, որ նախ պետք է երաշխավորվի օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, ինչպես նաև այն, որ

բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) պետք է ճանաչվի հարգելի:

Վերոնշյալի հաշվառմամբ, ելնելով նաև անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների առավել արդյունավետ իրացման երաշխավորվածությունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ, որպես ընդհանուր կանոն, այն պարագայում, երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին **միջնորդությունն օբյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն** է, հետապնդում է իրաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը: Միևնույն ժամանակ, որպես հատուկ կանոն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշակի դեպքերում դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը բաց թողնելը պայմանավորված չէ անձի կամքով, առաջացել է անձից անկախ պատճառներով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշյալ դեպքերում ներկայացված միջնորդությունը բավարարելը համապատասխան դատական ատյանի պարտականությունն է հանդիսանում:

Ըստ այդմ, սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով:

9. Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ, մի կողմից, օրենսդրորեն օբյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դատական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն ամրագրել: Այս համատեքստում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչը՝ նշելով, որ «.... ոչ միասնական կամ հնարավոր հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար անհրաժեշտ այն չափանիշները կամ դատավարական ժամկետի վերականգնման հիմքերի այն մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որոնք յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանան ժամկետի բացթողնման հարգելիությունը գնահատելիս»:

Հետևաբար, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի տվյալ իրավահարաբերության արդյունավետության, ինչպես նաև դատարանների հանրային-իրավական վարքագծի կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը:

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՍԴՈ–1191, 24 փետրվարի, 2015 թ.

6. .... Այսպիսով, վիճարկվող իրավակարգավորման վերլուծությունից հետևում է, որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառելիության հարցում օրենսդիրն առաջնորդվել է անձանց (դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց) **տարբերակման սկզբունքով**, բացառելով դատավարությանը մասնակցող և դատավարական (իրավական) առանձնահատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտների՝ դատախազի, պաշտպանի (փաստաբանի, կողմի ներկայացուցչի) նկատմամբ դատական նիստերի դահլիճից հեռացնելը որպես սանկցիա կիրառելը: Այն ունի իրավական հիմնավորում: Ինչպես դատախազը (գործով պետական մեղադրողը), այնպես էլ պաշտպանը (փաստաբանը, կողմի ներկայացուցիչը) ՀՀ Սահմանադրության 103-րդ, 20-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների, ՀՀ օրենսդրության այլ ակտերի հիմքերով կատարում են սահմանադրաիրավական գործառույթներ՝ կապված համապատասխանաբար՝ դատարանում մեղադրանքի պաշտպանման և անձանց իրավաբանական օգնության տրամադրման հետ, որպիսիք միտված են ինչպես անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման, այնպես էլ վերջինիս հետ շաղկապված՝ անկախ, արդար, անկողմնակալ, մրցակցային արդարադատության իրականացման՝ Սահմանադրությամբ հաստատագրված նպատակների իրագործմանը: Այսպիսով, դատավարության մասնակից հանդիսացող վերոհիշյալ սուբյեկտների իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությունը, համաձայն որի՝ նրանք ենթակա չեն դատարանի կողմից անմիջականորեն կիրառման ենթակա որոշ սանկցիաների (նիստերի դահլիճից հեռացում, դատական տուգանք), ուղղակիորեն պայմանավորված է քրեադատավարական հարաբերություններում օրենքով նրանց ունեցած իրավունքների ու պարտականությունների բնույթով: ....

7. .... Այսպիսով, քննության առարկա նորմով իրավաբանական առանձնահատուկ ուժ է հաղորդված քրեական գործերով դատական նիստի՝ օրենքով սահմանված կարգը պահպանելուն, այն խախտող անձանց պատասխանատվության ենթարկելուն կոչված դատական ակտերին: Այդ առանձնահատկությամբ են պայմանավորված թե՛ այդ ակտերի կայացման և թե՛ կատարման ապահովման գործող ընթացակարգերը: Միջանկյալ դատական այսպիսի ակտերի բողոքարկելիության իրավական սահմանափակ հնարավորությունը պայմանավորված է դատաքննության բնականոն ընթացքը խոչընդոտող ոչ իրավաչափ ու անկանխատեսելի հանգամանքների արագ վերացման և արդար, արդյունավետ, անկողմնակալ, բազմակողմանի ու օբյեկտիվ դատաքննություն իրականացնելու համար օրենքով նախատեսված պայմանների ստեղծման (ապահովման) անհրաժեշտությամբ, որը նաև երաշխիք է անձի իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ իրացնելու համար: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ և նման մեկնաբանման ու դրան համապատասխան կիրառման դեպքում սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

8. .... Միաժամանակ, ընդհանրացնելով դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման միջազգային իրավական փորձը՝ սահմանադրական դատարանը կարևորել է իրավակարգային այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են.

– մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքներն ըստ էության քննության առնելու և դրանց լուծում տալու համար արդյունավետ ընթացակարգերի նախատեսումը, այդ թվում խելամիտ ժամկետներում դատաքննության ապահովումը,

– բողոքների ընդունման և քննության ընթացակարգերի դիտարկումն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում:

Վերոհիշյալ իրավաչափ նպատակների իրացման անհրաժեշտությունից ելնելով՝ սահմանադրական դատարանը նաև արձանագրել է միջազգային իրավակիրառական պրակտիկայի զարգացման այն միտումը, համաձայն որի՝ առկա է միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորությունը նվազագույնի հասցնելու և դրանց «հետաձգված բողոքարկման» կարգին նախապատվություն տալու ընդհանուր միտում:

Եվրոպական միության շրջանակներում հաստատագրված իրավական պրակտիկան վկայում է, որ դատական նիստի կարգը խախտելու հիմքով փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառման հարցը լուծում է ոչ թե դատարանն իր հայեցողությամբ, այլ վերջինիս ներկայացմամբ՝ փաստաբանական կառավարման համապատասխան մարմինը:

9. Այսպիսով, վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները, գնահատելով սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում օրենսդրական, այդ թվում՝ դատական բողոքարկման իրավունքի սահմանափակման սահմանադրական իրավաչափությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք համաչափ են հիշյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես փաստաբանի, այնպես էլ վերջինիս օգնականի կարգավիճակն իր իրավական բովանդակությամբ, իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի այդ կարգավիճակը բնորոշող իրավական ակտերի համակցության մեջ՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորման գերակա անհրաժեշտությունը: Սահմանադրաիրավական այսպիսի դիրքորոշմամբ և համարժեք կիրառման դեպքերում վեճի առարկա իրավակարգավորումն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցի:

Այլ է խնդիրը, ինչպես վկայում են գործում առկա նյութերը, թե ինչպե՞ս են մեկնաբանվել ու կիրառվել վիճարկվող և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերը կոնկրետ գործով, տվյալ անձի (փաստաբանի օգնականի) նկատմամբ և փաստական ինչպիսի՞ հանգամանքների առկայությամբ: Դրանց ըստ էության քննությունն ու իրավագնահատումն ընդհանուր իրավասության դատարանների և, մասնավորապես, վճռաբեկ բողոքի շրջանակներում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական իրավասության խնդիրն է:

ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-851, 14 հունվարի, 2010 թ.

7. .... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը որպես պաշտպանի դատավարական պարտականություն է նախատեսում ոչ թե պարզապես դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի կարգադրություններին, այլ **օրինական կարգադրություններին** ենթարկվելը:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը որպես անձին ազատությունից զրկելու հիմք է դիտարկում ոչ թե պարզապես դատարանի կարգադրությանը, այլ դատարանի **օրինական կարգադրությանը** չենթարկվելը կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակը:

Ներպետական և միջազգային իրավական վերոհիշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձևակերպման մեջ «կարգադրություն» եզրույթի ներքո ընկալվում է դատավորի օրինական կարգադրությունը,

այսինքն՝ դատավորի այնպիսի կարգադրություն, որն ուղղված է դատավարության մասնակցի կողմից՝ վերջինիս համար օրենքով սահմանված իր պարտականության կատարման ապահովմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառողը պետք է ելնի վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձևակերպման նշված ընկալումից: Այսինքն՝ դատավորի կարգադրությանը չենթարկվելու հիմքով վիճարկվող նորմում նշված սուբյեկտները կարող են պատասխանատվության ենթարկվել, եթե չեն կատարում դատավորի այն կարգադրությունը, որն օրինական է և ուղղված այդ սուբյեկտների կողմից՝ օրենքով սահմանված իրենց դատավարական պարտականությունները կատարելու ապահովմանը: Այսուհանդերձ, «օրինական կարգադրություն» եզրույթն առավել հստակ է և խնդիր չի առաջացնում նաև կարգադրության օրինականությունը սահմանված կարգով վիճարկելու հնարավորության առումով:

Անդրադառնալով դիմողի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «այլ գործողություն կատարելով» ձևակերպման անորոշությանը՝ սահմանադրական դատարանը կարևորում է այդ գործողությունների բնույթի պարզաբանման հարցը: Այդ նպատակով սահմանադրական դատարանը հարկ է համարում խնդրո առարկա ձևակերպումը դիտարկել վիճարկվող նորմում «վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին» ձևակերպման համատեքստում: Նման մոտեցման պարագայում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

1) ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի խնդիրը չէ «այլ գործողություն» հասկացության բովանդակության մեջ ներառվող բոլոր հնարավոր դեպքերի թվարկումը: Այդ հոդվածի առարկան է քրեական պատասխանատվություն սահմանելը բացառապես այնպիսի գործողությունների համար, որոնք վկայում են դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին,

2) որպես իրավակիրառողի կամայական մոտեցումը բացառող երաշխիք է հանդիսանում այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սահմանազատված են տարբեր բնույթի գործողություններն այն գործողություններից, որոնք պարունակում են բացահայտ արհամարհանք դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ,

3) «դատական նիստի կարգ» հասկացության բովանդակությունը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Վիճարկվող նորմի կիրառման գործընթացում «դատական նիստի կարգ» հասկացության ներքո պետք է ընկալել բացառապես այն կարգը, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Ինչ վերաբերում է «արհամարհանք» հասկացության բովանդակությանը, ապա ինչպես քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում օգտագործված «վիրավորանք» հասկացությունը, այս հասկացությունը ևս յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողի կողմից գնահատման ենթակա հասկացություն է:

ԴԱՏԱՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՀԱՐԳԱԼԻՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

ՍԴՈ-851, 14 հունվարի, 2010 թ.

4. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորմամբ ըստ էության ոչ համաչափ վերաբերմունք է դրսևորվում դատավարության մասնակիցների նկատմամբ:

Սահմանադրական դատարանն ընդունում է, որ, ինչպես նշվեց, օրենսդրի հայեցողության շրջանակներում է այս կամ այն արարքի քրեականացումը: Այդուամենայնիվ, եթե օրենսդիրն այս կամ այն արարքը՝ դրա հանրորեն վտանգավորության ուժով, նախատեսել է քրեական օրենսգրքում որպես քրեորեն դատապարտելի արարք, ապա այդ արարքը կատարելու արգելքը պետք է սահմանվի բոլոր այն հնարավոր սուբյեկտների համար, ովքեր գործ-

նականում կարող են կատարել տվյալ հանցագործությունը: Հակառակ դեպքում, միևնույն օբյեկտի նկատմամբ ոտնձգող, համեմատելի վիճակում գտնվող անձանց հանդեպ պետության կողմից կդրսևորվի ոչ հիմնավոր տարբերակված վերաբերմունք՝ ի խախտումն օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ հանցագործության սուբյեկտների կազմի չհիմնավորված սահմանափակումը թույլ չի տալիս նաև լուծել ՀՀ քրեական օրենսգրքի, մասնավորապես՝ վերջինիս 2-րդ հոդվածում ամրագրված, խնդիրները: Բացառելով վիճարկվող նորմում նշված արարքը թույլ տված առանձին անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ չի ապահովվում այդ արարքով ոտնձգվող արժեքները լիարժեք պաշտպանելու և այդ արարքը կանխելու՝ քրեական օրենսգրքով սահմանված խնդրի լուծումը: Մյուս կողմից՝ խախտվում են դատավարության մասնակիցների, մասնավորապես՝ կողմերի, իրավահավասարության, դատավարության մրցակցության, հետևապես՝ նաև Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության սկզբունքները, քանի որ կողմերի համար դատավարական գործընթացին մասնակցելու հավասար պայմաններ ու հնարավորություններ չեն երաշխավորվում: Դրանից չի բխում, որ վիճարկվող դրույթում նշված սուբյեկտների առնչությամբ դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի դրսևորումը քրեորեն պատժելի արարք դիտելն ինքնին իրավաչափ ու սահմանադրական չէ: Խնդրահարույցը դատավարության այլ մասնակիցների համարժեք գործողություններն այդպիսին չդիտարկելն է:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականության հարցը քննարկել նաև ՀՀ քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարված փոփոխությունների համատեքստում: ....

7. .... Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախախտումների և վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջև էական տարբերությունների բացակայության պայմաններում անձը զրկվում է իր վարքագծի իրավական հետևանքները կանխատեսելու հնարավորությունից, ինչը չի բխում օրենքի կանխատեսելիության և որոշակիության սկզբունքներից:

Անդրադառնալով դիմողի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «այլ գործողություն կատարելով» ձևակերպման անորոշությանը՝ սահմանադրական դատարանը կարևորում է այդ գործողությունների բնույթի պարզաբանման հարցը: Այդ նպատակով սահմանադրական դատարանը հարկ է համարում խնդրո առարկա ձևակերպումը դիտարկել վիճարկվող նորմում «վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին» ձևակերպման համատեքստում: Նման մոտեցման պարագայում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

1) ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի խնդիրը չէ «այլ գործողություն» հասկացության բովանդակության մեջ ներառվող բոլոր հնարավոր դեպքերի թվարկումը: Այդ հոդվածի առարկան է քրեական պատասխանատվություն սահմանելը բացառապես այնպիսի գործողությունների համար, որոնք վկայում են դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին,

2) որպես իրավակիրառողի կամայական մոտեցումը բացառող երաշխիք է հանդիսանում այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սահմանազատված են տարբեր բնույթի գործողություններն այն գործողություններից, որոնք պարունակում են բացահայտ արհամարհանք դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ,

3) «դատական նիստի կարգ» հասկացության բովանդակությունը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Վիճարկվող նորմի կիրառման

գործընթացում «դատական նիստի կարգ» հասկացության ներքո պետք է ընկալել բացառապես այն կարգը, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314–րդ հոդվածում: Ինչ վերաբերում է «արհամարհանք» հասկացության բովանդակությանը, ապա ինչպես քրեական օրենսգրքի 343–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերում օգտագործված «վիրավորանք» հասկացությունը, այս հասկացությունը ևս յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողի կողմից գնահատման ենթակա հասկացություն է:

ԱՐԱԳԱՑՎԱԾ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–931, 28 դեկտեմբերի, 2010 թ.

6. Դատական քննության արագացված կարգը՝ որպես նոր դատավարական ինստիտուտ, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրություն է ներմուծվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 21.02.2007 թ. ՀՕ–93–Ն ՀՀ օրենքով: Այն, որպես նոր դատավարական ինստիտուտ, նպատակ ունի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով քննությունն իրականացնել պարզեցված ընթացակարգերով:

Դատական քննության արագացված կարգի կիրառումը՝ որպես տարբերակված վարույթ, միջազգային պրակտիկայում արմատավորված դատավարական գործելաձև է: Արագացված դատաքննությունը նպատակ ունի լուծել կազմակերպաիրավական որոշակի խնդիրներ, որոնցից են, մասնավորապես՝ ա) դատավարական տնտեսումը, այսինքն՝ առանձին քրեական գործերով ժամանակի, միջոցների և ջանքերի կրճատումը՝ դրանք ավելի բարդ գործերի վարույթի համար օգտագործելու նպատակով, բ) հանցագործության կատարման և պատժի նշանակման միջև ընկած ժամանակահատվածի կրճատումը, նպատակ ունենալով ուժեղացնել դատավարության և քրեական պատժի նախազգուշական ազդեցությունը, գ) կողմերին հաշտեցնելը և այլն:

Արագացված դատական քննության ընթացքում մեղադրանքը պետք է ներկայացվի ամբողջովին, բանավոր և անմիջականորեն պետք է քննվեն գործով ձեռք բերված ապացույցները: Արագացված դատաքննության ընթացակարգը դատավարության մասնակիցներին տրամադրում է ոչ պակաս, իսկ երբեմն՝ նույնիսկ ավելի շահավետ երաշխիքներ նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առումով, քան դատավարության ընդհանուր կարգը: Հարկ է ընդգծել, որ արագացված դատաքննության նպատակներից ելնելով, որևէ կերպ չի կարելի հրաժարվել մրցակցային դատավարության այնպիսի հիմնարար սկզբունքներից, ինչպիսիք են կողմերի հավասարությունը և մեղադրյալի պաշտպանության իրավունքը: ....

8. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա ինստիտուտի գործող իրավակարգավորումը՝ դատական քննության ընդհանուր կարգից բացառություն հանդիսացող արագացված կարգի կիրառումը միայն դատավարության երկու կողմերի միաժամանակյա համաձայնության պայմաններում է ապահովում իրավաչափ հավասարակշռություն մեղադրանքի և պաշտպանության կողմերի իրավունքների և օրինական շահերի միջև: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ արագացված կարգ կիրառելու դեմ դատախազության (մեղադրող կողմի) առարկությունը չի կարող դիտվել որպես «բացարձակ վետոյի» իրավունք, այդ առարկությունը պետք է լինի փաստարկված:....

10. .... Ելնելով մրցակցության սկզբունքի նշված բովանդակությունից՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցի լուծման առնչությամբ մրցակցության սկզբունքի իրացումն արդեն իսկ ապահովվում է՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերին հնարավորություն տալով արտահայտելու ի-

րենց տեսակետներն արագացված կարգով դատական քննության կազմակերպման հարցի վերաբերյալ: Ավելին, այն դեպքում, երբ արագացված կարգով դատական քննության կազմակերպման հարցում դատարանին իրավասություն վերապահվի կիրառել արագացված դատական քննության կարգ՝ որպես ընդհանուր կարգից բացառություն, առանց կողմերից մեկի համաձայնության, տվյալ դեպքում՝ առանց մեղադրանքի կողմի համաձայնության, դրանով ոչ միայն կխաթարվեն արագացված կարգով դատական քննության ինստիտուտի ողջ էությունն ու բովանդակությունը, այլ նաև տվյալ հարցի լուծման շրջանակներում դատարանն ըստ էության հանդես կգա պաշտպանության կողմում՝ ի խախտումն մրցակցության սկզբունքի:

Հաշվի առնելով մրցակցային դատավարության այն հիմնական հատկանիշներից մեկը, ըստ որի՝ մրցակցային դատավարության պայմաններում կողմերն են տնօրինում իրենց դատավարական լիազորությունների ծավալը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական քննության արագացված կարգի կիրառումը երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանավորելը ոչ միայն չի խախտում մրցակցության սկզբունքը, այլև նման մոտեցումն արդարացված է հենց մրցակցային դատավարության տեսանկյունից:

11. .... Քրեական դատավարությունում դատարանին պատկանում է գործի լուծման գործառույթը, որի շրջանակներում էլ իրացվում է դատավորի անկախության սկզբունքը: Դատարանի անկախության սկզբունքը չի կարող դրսևորվել դատավարության կողմերի՝ մեղադրանքի կամ պաշտպանության կողմի գործառույթի տիրույթում: Դատական քննության արագացված կարգի՝ որպես տարբերակված դատավարական ձևի ինստիտուտի բովանդակությունից բխում է, որ նման կարգի կիրառման շուրջ համաձայնության կայացումը մեղադրանքի և պաշտպանության գործառույթների շրջանակում է, հետևաբար, դատարանը կաշկանդված է այդ կարգը կիրառելու դեմ կողմերից յուրաքանչյուրի առարկությամբ:

Դատարանի դատավարական անկախությունը դատավորի անկողմնակալ և օբյեկտիվ վերաբերմունքն է կողմերի նկատմամբ, ինչպես նաև նրա կողմից ապացույցների անկողմնակալ և օբյեկտիվ գնահատականը՝ ելնելով միայն իր ներքին համոզմունքից: Դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցի լուծման, ամբաստանյալի միջնորդության առնչությամբ որոշում կայացնելու գործընթացում դատարանի դատավարական անկախությունը դրսևորվում է **նման կարգ կիրառելու վերաբերյալ դատավարության երկու կողմերի փոխադարձ համաձայնության պայմաններում** դատական քննության արագացված կարգ կիրառելու՝ **օրենքով նախատեսված պայմանների առկայությունը գնահատելիս:** Այսինքն՝ դատարանն ամբաստանյալի միջնորդության քննարկմանը ձեռնամուխ է լինում միայն դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ դատավարության կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում և անկախության սկզբունքի հիման վրա լուծում է ամբաստանյալի միջնորդությունը բավարարելու հարցը՝ պարզելով դատական քննության արագացված կարգ կիրառելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածով նախատեսված պայմանների առկայությունը:

Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ դատական քննության արագացված կարգ կիրառելու հնարավորությունը դատախազի կամքից կախվածության մեջ դնելը խախտում է անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ապա սահմանադրական դատարանը նման փաստարկն անհիմն է համարում, քանի որ նման կարգ կիրառելու դեմ դատախազի առարկության դեպքում դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով: Ի տարբերություն արագացված դատաքննության, ընդհանուր կարգով իրականացվող դատական քննության ընթացքում իրենց ողջ ծավալով գործում են ինչպես ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր դատավարական երաշխիքները:

Ելնելով դատական քննության արագացված կարգի՝ որպես դատավարական ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունից ու էությունից, մրցակցային դատավարության հիմնական հատկանիշներից, ինչպես նաև հաշվի առնելով դատավարական սուբյեկտների գործառույթների տարանջատման սկզբունքը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում դատական քննության արագացված կարգի կիրառման հնարավորությունը մեղադրանքի և պաշտպանության կողմերի փոխադարձ համաձայնության առկայությամբ պայմանավորելն իրավաչափ է, բխում է խնդրո առարկա ինստիտուտի բովանդակությունից ու էությունից և համահունչ է մրցակցային դատավարության պահանջներին:

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏԸ

ՍԴՈ–700, 8 մայիսի, 2007 թ.

5. .... ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1–ին մասը յուրաքանչյուր անձի ընձեռում է իր խախտված իրավունքները վերականգնելու համար դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող գլխի կանոնները, սահմանելով նման բնույթի գործերի քննության սեղմ ժամկետներ և բացառելով վճռի բողոքարկումը, դատարանին հնարավորություն են տալիս ողջամիտ ժամկետում վերականգնել յուրաքանչյուր քաղաքացու, կուսակցության (կուսակցությունների միավորումների) ընտրական խախտված իրավունքները:

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

4. .... Դատական ակտերի, դատարանների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) նկատմամբ բողոքարկման այն նույն կարգի կիրառումը, որը գործում է այլ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերը վիճարկելու համար, կդանդաղեցնի դատական քննության գործընթացը՝ դրանով ստեղծելով դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու՝ արդարադատության իրականացման երաշխիքի խախտման վտանգ: Դատական իշխանության ներսում դատարանների և դրանց պաշտոնատար անձանց ակտերի բողոքարկումը պետք է իրականացվի հատուկ դատավարական կարգով՝ այն հաշվով, որ վերջինս չխոչընդոտի դատաքննության բնականոն ընթացքը, չվտանգի դրա արդյունավետությունը:

7. .... ՀՀ Ազգային ժողովն առավել հստակ պետք է սահմանի դատարանների, նրանց պաշտոնատար անձանց անգործության հետևանքով անձի խախտված իրավունքները դատավարական ողջամիտ ժամկետում վերականգնելու և պատճառված վնասը փոխհատուցելու արդյունավետ ընթացակարգեր, որոնց բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել նաև արդարադատության մատչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի իմաստից: Իսկ այդ խնդիրը դուրս է ՀՀ քաղ. դատ. օր. 26–րդ գլխի գործող նորմերի իրավակարգավորման շրջանակներից:

ՍԴՈ–720, 11 նոյեմբերի, 2007 թ.

5. ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և դատական համակարգում նրա դերով են պայմանավորված դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում 2006 թվականի հուլիսի 7–ի օրենսդրական փոփոխությունները, որի արդյունքում վճռաբեկ դատարանին, ի լրումն այլ լիազորությունների, իրավունք է վերապահվում օրինական ուժ տալ ստորադաս դատարանների դատական ակ-

տերից մեկին, որը հիմնավոր կհամարվի՝ դրանով իսկ եզրափակելով տվյալ գործով քննությունն ընդհանուր իրավասության դատարաններում:

ՍԴՈ–752, 22 ապրիլի, 2008 թ.

6. .... Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ դատավարական ժամկետը բաց թողնելու հնարավոր պատճառներն օրենքով օբյեկտիվորեն կանխորոշված չեն, որի պայմաններում դրանք գնահատելու և արդյունքում այդ ժամկետի բացթողումը հարգելի կամ անհարգելի ճանաչելու (գնահատման չափանիշներ ընտրելու) դատարանի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ: Սակայն, ի տարբերություն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 4–րդ մասում ամրագրված կանոնի, դատավարական գործողության կատարման բաց թողնված ժամկետը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 77 հոդվածի հիմքով վերականգնելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման, հետևաբար՝ այդ ակտի հիմնավորվածությունը (օրինականությունը) վիճարկելու իրավական հնարավորություն նախատեսված չէ, որի սահմանադրականությունը սույն գործի շրջանակներում չի վիճարկվում:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

7. .... Անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգն ի սկզբանե վերաբերում էր միայն վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին, իսկ միջնորդավորված կարգը՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին: Նշված երկու կարգերի զուգահեռաբար գործելու իմաստը կայանում էր նրանում, որ բարձրացվեր դատավարության մասնակիցների դատավարական կարգապահությունը, երաշխավորվեր գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը, ինչպես նաև, որպեսզի վճռաբեկ դատարանը զերծ մնար անհիմն վճռաբեկ բողոքներ ներկայացվելու հետևանքով ավելորդ ծանրաբեռնվածությունից:

ՍԴՈ–782, 2 դեկտեմբերի, 2008 թ.

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ բացառված չեն այնպիսի իրավիճակները, երբ անհրաժեշտություն առաջանա կառուցակարգային և գործառնական նույնաբնույթ որևէ ատյանի դատարանի դատավորի գործուղումը նույն ատյանի մեկ այլ դատարան՝ ողջամիտ ժամկետներում և արդյունավետ արդարադատություն իրականացնելու նպատակով: Ինչպես նշվեց, գործուղման ինստիտուտի գոյությունն ինքնին իրավաչափ է: Սակայն, մյուս կողմից, այդպիսի գործուղումները պետք է լինեն բացառություն և ոչ թե դառնան ընդհանուր կանոն կամ իրականացվեն գործառնական տարբեր իրավազորություն ունեցող դատարանների միջև:

ՍԴՈ–787, 3 փետրվարի, 2009 թ.

8. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ածանցյալ իրավահարաբերությունից ծագող, այսինքն՝ հիմնական իրավահարաբերության իրավական հետևանքների վերացմանն ուղղված պահանջը դատարան առանձին ներկայացնելու դեպքում դատարանը գործնականում զրկվում է տվյալ գործի վերաբերյալ արդարացի որոշում կայացնելու հնարավորությունից, խախտվում է անձի արդար դատաքննության իրավունքը, քանի որ արդար որոշում կայացնելու համար դատարանն ստիպված է իրականացնել գործի հանգամանքների լիարժեք, օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրություն, իսկ այդպիսի ուսումնասիրության համար դատարանը պետք է անդրադառնա հիմնական իրավահարաբերությանը, սակայն գործող իրավակարգավորումը

դա թույլ չի տալիս, քանի որ տվյալ իրավահարաբերությունից ծագող գործն ընդդատյա է ոչ թե տվյալ դատարանին, այլ մեկ այլ դատարանի: Սահմանադրական դատարանը նման իրավակարգավորումը համարում է ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ դատարանի կողմից գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման հիմք և դատական պաշտպանության ոչ արդյունավետ միջոց:

ՍԴՈ-845, 8 դեկտեմբերի, 2009 թ.

8. Ապացույցները ներկայացվելուց հետո է միայն դատարանն անցնում դրանց գնահատմանը, որտեղ որոշվում է ձեռք բերված ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը: Օրենսգրքի 51 հոդվածը վերաբերում է ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության սկզբունքներին: Նշված երկու սկզբունքները բացառում են օրենքով սահմանված ապացույցներից դուրս այլ ապացույցներ դատարանին ներկայացնելու հնարավորությունը (թույլատրելիություն), ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերին չվերաբերող անհարկի և ավելորդ ապացույցներով դատարանին ծանրաբեռնելու հնարավորությունը (վերաբերելիություն): Միաժամանակ, նշված սկզբունքները կոչված են ապահովելու արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի իրացումը:

.... Բոլոր այն դեպքերում, երբ դատարանն իր ներքին համոզմամբ գտնում է, որ **կողմերի ներկայացրած ապացույցներն անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար կամ դրանք ուղղված են այնպիսի փաստերի ապացուցմանը, որոնք շեղվում են գործից** և **առնչություն չունեն վերջինիս հետ, կամ ներկայացված են տվյալ գործի քննության համար օրենքով չնախատեսված ապացույցներ,** օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի վիճարկվող բառակապակցության ուժով դատարանին հնարավորություն է ընձեռվում դուրս թողնել դրանք ապացուցման առարկայի շրջանակներից: **Դատարանին վերապահված՝ վերը նշված իրավասությունն իրավաչափ է** և **բխում է արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի էությունից:**

ՍԴՈ-896, 15 հունիսի, 2010 թ.

7. .... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված լիազորության համադրված վերլուծությունը վկայում է, որ վերաքննիչ ատյանի դատարաններին նման լիազորություն վերապահելը նպատակ է հետապնդել անհրաժեշտության դեպքում երաշխավորել առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի պատճառաբանվածությունը և դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաև ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը: ....

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի՝ «....թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված» բառակապակցությունը սահմանադրականության խնդիր չի առաջացնում և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին վերապահված՝ քննարկվող լիազորությունը համահունչ է ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ արդար դատաքննության և ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքներին: Հիշյալ լիազորության բացակայությունը, ընդհակառակը, կարող է վտանգել արդար դատաքննության, ինչպես նաև ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքները:

ՍԴՈ–918, 28 սեպտեմբերի, 2010 թ.

6. .... Միջազգային փորձի և տարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս հարցում գոյություն ունի հստակ դիրքորոշում՝ **ինքնաբացարկի որոշումը պարտադիր ենթակա է բողոքարկման, սակայն դրա կարգի և ժամկետների որոշումն օրենսդրի հայեցողության հարցն է:** Որպես կանոն, օրենսդրական կարգավորման պրակտիկայում գերապատվությունը տրվում է ոչ թե ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկմանը, որը լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման հարցում, այլ, այսպես կոչված, «հետաձգված բողոքարկմանը»՝ գործով կայացրած որոշման բողոքարկման շրջանակներում դրա քննությանը, որը նույնպես ապահովում է դատարանի իրավազորության երաշխավորման հարցում կողմերի իրավունքների իրացումը:

ՍԴՈ–922, 2 նոյեմբերի, 2010 թ.

7. Սահմանադրական դատարանը գործի վարույթը վերսկսելու մասին որոշման անմիջականորեն բողոքարկման հնարավորության բացակայության իրավաչափությունը հարկ է համարում գնահատել նաև վիճարկվող իրավակարգավորմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի լույսի ներքո: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջանկյալ դատական ակտերի «հետաձգված բողոքարկման», այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում բողոքարկելու կարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու, դատաքննությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու պահանջի երաշխավորումը, ինչպես նաև դատավարական գործընթացի արդյունավետության իրավաչափ նպատակ:

ՍԴՈ–936, 8 փետրվարի, 2011 թ.

6. .... Այսպիսով, դատական ակտերի բողոքարկումը կարգավորելու ընթացակարգային վերոհիշյալ պայմանները նախատեսելու հիմքում պետք է ընդունվեն սկզբունքներ, որոնք կոչված են երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 3–րդ, 5–րդ (1–ին մաս), 18–րդ և 19–րդ հոդվածների նորմատիվ պահանջները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

– անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

– դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Սահմ. 18, 19–րդ հոդվածներ),

– դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և իրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

– դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրաիրավա-

կան խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

ՍԴՈ–1004, 6 դեկտեմբերի, 2011 թ.

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208–րդ հոդվածի 3–րդ մասի սահմանադրականությունը գնահատել սահմանափակ վերաքննության ինստիտուտին բնորոշ առանձնահատկությունների համատեքստում:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.2007 թ. ՀՕ–277–Ն ՀՀ օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 28.11.2011 թ. ՀՕ–281–Ն ՀՀ օրենքով՝ 1999 թ. հունվարի 1–ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում ներդրված լրիվ վերաքննության ինստիտուտը փոխարինվեց սահմանափակ կամ ոչ լրիվ վերաքննության ինստիտուտով՝ նախատեսելով, որ վերաքննիչ դատարանը գործը քննում է համապատասխան բողոքի առկայության դեպքում և սահմանափակված է բողոքում ներկայացված հարցերով: Վերջինիս ներդրումը բխում է ՀՀ Սահմանադրության 92–րդ հոդվածով սահմանված կառուցակարգային ու գործառնական իրավակարգավորման տրամաբանությունից, պայմանավորված է արդարադատության արդյունավետության բարձրացման, գործի քննությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու և այդպիսով՝ նաև գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու անհրաժեշտությամբ:

ՍԴՈ–1074, 5 փետրվարի, 2013 թ.

6. .... Հաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 19–րդ հոդվածում ամրագրված՝ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարաբնույթ օբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքն իրավաչափորեն երկարաձգող հնարավոր հանգամանքների առկայությունը և դրանով պայմանավորված՝ արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացման շահերից ելնելով նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը հակասության մեջ չի գտնվում Սահմանադրության 19–րդ հոդվածում ամրագրված՝ դատական քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու սկզբունքի հետ:

7. Գործի քննության «ողջամիտ ժամկետ» հասկացության բովանդակության բացահայտմանն է անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Դատարանը իրազեկ է այն դժվարությունների մասին, որոնք երբեմն դանդաղեցնում են .... վեճերի քննությունը, ինչը ծանոթ է ազգային դատարաններին, և որոնք բխում են տարբեր գործոններից: Մնում է միայն, որ 6–րդ հոդվածի 1–ին կետին համապատասխան՝ գործերը պետք է քննվեն ողջամիտ ժամկետում. Կոնվենցիան նշանակու-

թյուն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը» (H. c. France, 58): «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված՝ դատական քննության տևողության ողջամիտ բնույթը պետք է գնահատվի յուրաքանչյուր դեպքում՝ գործի հանգամանքներին համապատասխան (Konig v. Germany, 99; Buchholz v. Germany, 49)», «և հաշվի առնելով դատարանի պրակտիկայում ամրագրված չափանիշները» (Wiesinger v. Austria, 54), «մասնավորապես, գործի բարդությունը, հայցվորի վարքագիծը, իրավասու մարմինների վարքագիծը: Այս վերջին կետով հաշվի է առնվում նաև հայցվորի համար դատական քննության առարկայի կարևորությունը» (Zimmermann et Steiner v. Switzerland, 24; X. c. France, 32; Karakaya v. France, 30; տես նաև՝ Erkner et Hofauer c. Autriche, 66; Poiss v. Austria, 55; H. c. Royaume-Uni, 71; Allenet de Ribemont v. France, 47; Duclos V. France, 55; Ceteroni v. Italy, 22): «Հայցվորների վարքագիծը հանդիսանում է օբյեկտիվ հանգամանք, որը չի մեղսագրվում Պատասխանող պետությանը, և որը հաշվի է առնվում որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված՝ ողջամիտ ժամկետի սահմանազանցում» (Wiesinger v. Austria, 57; Erkner et Hofauer c. Autriche, 68; Poiss v. Austria, 57): «Ստուգելու համար ժամանակահատվածի ողջամիտ բնույթը, պետք է հաշվի առնել այն վիճակը, որում տվյալ պահին գտնվել է գործը» (Raffineries grecques Stran et Stratis Andreadis c. GrՈce, 52; Baggetta v. Italy, 20):

Վերոգրյալը դիտարկելով սույն որոշման 6-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողների այն տեսակետը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթներով դատարաններին տրված՝ գործի քննությունը վերսկսելու հնարավորությունն իրավական հիմք է գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման համար: .....

10. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև դիտարկվող հիմնահարցն ուսումնասիրել կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկությունների համատեքստում՝ հաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայում ստեղծված իրավիճակը:

Այս առումով սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ինքնին գործի քննությունը վերսկսելու ինստիտուտի նպատակը թեև իրավաչափ է, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն **կիրառելի է բացառապես միայն այն դեպքերում,** երբ առկա են գործով ապացույցները լրացուցիչ հետազոտելու կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու՝ իրապես օբյեկտիվ հիմքեր և պատճառներ: Հակառակ պարագայում, ինչպես վկայում են դիմողները, դատարանների կողմից դիտարկվող ինստիտուտի անհարկի և չհիմնավորված (առանց պատշաճորեն պատճառաբանելու) կիրառումը գործնականում կարող է հանգեցնել գործի դատական քննության ողջամիտ ժամկետների չարդարացված և անթույլատրելի խախտումների և, վերջին հաշվով, արդարադատության բուն նպատակների խաթարմանը:

Սահմանադրական դատարանը չի կարող արդարացված համարել բոլոր այն դեպքերը, երբ, ինչպես վկայում են գործի նյութերը, 5-7 անգամ դատարանն անցկացնում է նախնական դատական նիստեր և ապա դատաքննության արդյունքում կրկին որոշում է կայացնում վերսկսել (ընդ որում՝ ոչ մեկ անգամ) գործի դատաքննությունը: Սա վկայում է արդարադատության որակի ու դատական վերահսկողական համակարգերի հնարավոր բացերի մասին: Նման պրակտիկայի առկայությունը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա ինստիտուտի առկայությամբ, այլ վերջինիս ոչ համարժեք կիրառման, դատաքննության ոչ պատշաճ իրականացման հանգամանքներով, ինչը բողոքարկման ինստիտուտի շրջանակներում պետք է անհրաժեշտ վերաբերմունքի արժանանա՝ նման դատական ակտերի գնահատման ու նա-

խադեպային պրակտիկայի ձևավորման իրավասությամբ օժտված դատական ատյանների կողմից:

Խնդրո առարկա ինստիտուտի ձևական կիրառումը դատարանների գերծանրաբեռնվածության կամ այլ պատճառաբանությամբ, որոնք որևէ անմիջական առնչություն չունեն օրենսգրքի 113–րդ հոդվածում ամրագրված հիմքերի հետ, սահմանադրաիրավական առումով իրավաչափ չէ:

Սահմանադրական դատարանը հանգում է այն եզրակացությանը, որ դիմողների իրավունքների հնարավոր խախտումները պայմանավորված չեն վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակությամբ կամ դրանց տրված որևէ կոնկրետ մեկնաբանությամբ: Վեճի առարկան, ըստ էության, օրենքի նորմի այնպիսի կիրառումն է, երբ խնդիրն առնչվում է դատական հայեցողության սահմանների ոչ համարժեք ընկալմանը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՒՂԵՆԻՇ ՎՃԻՌՆԵՐԸ

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

12. .... Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ «ուղենիշ (ղեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը տվյալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգատներից ընտրում է մեկ առավել տիպային օրինակ և ըստ էության քննում և վճիռ է կայացնում միայն այդ գանգատի կապակցությամբ. մնացած գանգատների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է ներպետական մակարդակում՝ այդ «ուղենիշ վճռի» հիման վրա: Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները և ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում՝ Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

11. .... Վերահաստատելով ՍԴՈ–758 որոշմամբ արտահայտած իր վերոհիշյալ դիրքորոշումները, հաշվի առնելով Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների բովանդակությունը, դրանցով հետապնդվող հանրային–իրավական նպատակն ու կարևորությունը՝ կատարելագործելու մարդու իրավունքների պաշտպանության ներպետական իրավական համակարգը, նաև հաշվի առնելով Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական իրավահամակարգի կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (2004)3 հանձնարարականի դրույթները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է նախատեսել օրենսդրական կարգավորման այնպիսի միջոցներ, որոնց առկայությամբ կերաշխավորվի ոչ միայն Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավահամակարգային բնույթի բարեփոխումների իրականացումը, այլև այն անձանց՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների դատական կարգով արդյունավետ պաշտպանության ապահովումը, ովքեր **Եվրոպական դատարանի կողմից համապատասխան վճռի կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դատաքննությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդ իրավունքը Կոնվենցիայով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն:**

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՍԴՈ–756, 15 ապրիլի, 2008 թ.

10. .... Սահմանադրական դատարանը նման օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը կարևորում է նաև այն տեսանկյունից, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204[20] հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման և պաշտպանության, հետևաբար՝ նաև Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

12. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ դատական ակտի վերանայման համար նոր հանգամանք է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման հանգամանքը: Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-751 որոշման մեջ մտահոգություն է հայտնել առ այն, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.20 հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն իրավակիրառական պրակտիկայում կարող է լուրջ խոչընդոտներ հարուցել ոչ միայն սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների վերականգնման կամ պաշտպանության համար, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման և պաշտպանության, հետևաբար՝ նաև Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման համար»:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

11. Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական մակարդակում, ի լրումն տվյալ վճռի կոնկրետ հասցեատիրոջ, նաև համանման իրավախախտման արդյունքում տուժած այլ անձանց վերաբերյալ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վերաբերյալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նախատեսված դրույթի սահմանադրականությանը, ապա սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) նպատակի, Կոնվենցիայի առաջին հոդվածին համապատասխան մասնակից պետությունների ստանձնած ընդհանուր պարտավորության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) առաքելության ու գործառույթների համատեքստում՝ համադրելով այն ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 4-րդ մասում և 19 հոդվածում ամրագրված իրավունքների սահմանադրաիրավական բովանդակության հետ:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 4-րդ մասում ամրագրված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների ու ազա-

տությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու անձի սուբյեկտիվ իրավունքը՝ որպես այդ իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային-իրավական կարևոր միջոց: ՀՀ քրեական դատավարության վիճարկվող նորմի համատեքստում, անձի սահմանադրական այդ իրավունքն իրացվում է արդարադատական եղանակով, այսինքն՝ դատարան դիմելու միջոցով՝ հանդիսանալով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով երաշխավորված անձի իրավունքի դրսևորման առանձնահատուկ ձև և իրականացվում է Կոնվենցիայում (կից համապատասխան արձանագրություններով) սահմանված ընթացակարգով:

Կոնվենցիայի նպատակն է մարդու իրավունքների պաշտպանությունը և ժողովրդավարական հասարակության գաղափարների և արժեքների պահպանումը: Կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը սահմանադրական դատարանը գնահատել է իր ՍԴՈ-350 որոշմամբ և նշել, որ Կոնվենցիայի նշված նպատակին համապատասխան մասնակից պետությունները, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունը, պարտավոր են ապահովել Կոնվենցիայի I բաժնում սահմանված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար: Կոնվենցիայի 19 հոդվածի համաձայն՝ Եվրոպական դատարանը հիմնվել է Կոնվենցիայով և կից արձանագրություններով անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Այդ գործառույթը Եվրոպական դատարանը կատարում է միջպետական գանգատների, անհատական գանգատների և Կոնվենցիայի մեկնաբանության հետ կապված խորհրդատվական եզրակացություններ տալու միջոցով:

Եվրոպական դատարանի՝ կոնկրետ անհատական գանգատի վերաբերյալ կայացրած յուրաքանչյուր վճիռ ուղղված է ոչ միայն տվյալ անձի իրավունքների պաշտպանությանը, այլև՝ պատասխանող պետության կողմից Կոնվենցիայով ստանձնված այս կամ այն պարտավորության կատարումն ապահովելուն: Տվյալ պարտավորության կատարումը պատշաճ երաշխավորելու համար հաճախ բավարար չէ միայն անհատական գանգատ ներկայացրած անձի իրավունքների վերականգնումը, եթե խնդիրն առնչվում է ներպետական իրավական համակարգի այնպիսի բարեփոխումների իրականացման անհրաժեշտությանը, որոնք կոչված լինեն ապահովելու մարդու՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանություն: Հետևաբար, անհատական գանգատները և Եվրոպական դատարանի կողմից դրանք քննության ընդունելու արդյունքում կայացված որոշումները հաճախ իրավական այն միջոցներն են, որոնք մատնանշում են ներպետական համակարգում իրավակարգավորման, իրավակիրառական (այդ թվում՝ դատական) պրակտիկայի կատարելագործման կոնկրետ ուղիներ:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-758 որոշմամբ արձանագրել է, որ «.... Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ ուղենիշ (ղեկավար) վճիռների ինստիտուտը .... Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները և ելնելով ուղենիշ վճիռների հիման վրա ներպետական մակարդակում Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի»: ....

Վերահաստատելով ՍԴՈ-758 որոշմամբ արտահայտած իր վերոհիշյալ դիրքորոշումները, հաշվի առնելով Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների բովանդակությունը, դրանցով հետապնդվող հանրային-իրավական նպատակն ու կարևորությունը՝ կատարելագործելու մարդու իրավունքների պաշտպանության ներպետական իրավական համակարգը, նաև հաշվի առնելով Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական իրավահամակարգի կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախա-

րարների կոմիտեի (2004)3 հանձնարարականի դրույթները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է նախատեսել օրենսդրական կարգավորման այնպիսի միջոցներ, որոնց առկայությամբ կերաշխավորվի ոչ միայն Եվրոպական դատարանի ուղենիշ վճիռների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավահամակարգային բնույթի բարեփոխումների իրականացումը, այլև այն անձանց՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների դատական կարգով արդյունավետ պաշտպանության ապահովումը, ովքեր **Եվրոպական դատարանի կողմից համապատասխան վճռի կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դատաքննությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդ իրավունքը Կոնվենցիայով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն:**

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

10. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ ընկալման ու դրանում ամրագրված նորմերի՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ կիրառումն ապահովելու նպատակով ՀՀ դատական պրակտիկայում պետք է առաջնորդվել նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով, համաձայն որի՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Այս հարցում սկզբունքային նշանակություն ունեն նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 46-րդ հոդվածի պահանջներից բխող ՀՀ միջազգային պարտավորությունները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորության ճանաչման վերաբերյալ:

Նկատի ունենալով վերոնշյալը և կրկին կարևորելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ծանրակշիռ պրակտիկան քննության առարկա հիմնախնդրի առնչությամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանն սկզբունքային է համարում այդ դատարանի, մասնավորապես, ներքոհիշյալ նախադեպային դիրքորոշումները, որոնք իրավակիրառական պրակտիկայում հետևողականորեն հաշվի առնելու դեպքում կապահովվի վեճի առարկա հոդվածի դրույթների կիրառումը՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–665, 16 նոյեմբերի, 2006 թ.

4. ՀՀ օրենսդրությունը նախատեսում է իրավական ակտերի նկատմամբ դատական հսկողության երկու տարատեսակ: Առաջինը սահմանադրական արդարադատությունն է, որն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի հիման վրա որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխա-

նությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է նշված ակտերը ճանաչել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Երկրորդն ընդհանուր իրավասության դատարանների միջոցով ՀՀ իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության ստուգումն է, որն իրականացնում են ընդհանուր իրավասության դատարանները՝ որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության բովանդակության նման ձևակերպումը, ինչպես նաև դրա կիրառման վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանների առկա դիրքորոշումը չեն երաշխավորում իշխանությունների հավասարակշռումը, լուրջ բաց են առաջացրել իրավական ակտերի դատական վերահսկողության առումով և վտանգում են ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված՝ անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Իրավական պետությանն անհարիր է այն իրավիճակը, երբ օրենքով ու իրավակիրառական պրակտիկայի կողմից բացառվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը:

ՍԴՈ–673, 16 հունվարի, 2007 թ.

8. .... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանձնաժողովի որոշման բողոքարկման հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենքով սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումն է, մասնավորապես՝ հանրային ծառայությունների սակագների դրույքաչափ սահմանելու, փոփոխելու միջոցով, կամ անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելը, այլ՝ հիմնվելով հանրային ծառայությունների բնագավառում հանձնաժողովի սակագնային և լիցենզավորման (գործունեության թույլտվություն տրամադրող) գործունեության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական և օրենսդրական չափանիշների վրա, այդ մարմնի որոշումների՝ այդ թվում նաև սակագների սահմանման վերաբերյալ, օրինականությունը վերահսկելը: Այդ է վկայում նաև այլ պետությունների պրակտիկայի ուսումնասիրությունը, համաձայն որի՝ սակագնային գործունեություն իրականացնող անկախ մարմինների որոշումները կարող են բողոքարկվել վարչաարդարադատական կարգով և այն էլ՝ օրենքին կամ իրավասությանը վերաբերող առարկայական հարցերի շրջանակներում: ....

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում միաժամանակ արձանագրել, որ օրենքը պետք է ոչ թե արգելափակի անձանց սահմանադրական իրավունքը՝ դատական կարգով բողոքարկելու հանձնաժողովի որոշումները, այլ հստակեցնի այդ ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության չափանիշները՝ պարտադիր ապահովելով ինչպես անձի իրավունքների դատական պաշտպանության լիարժեք մատչելիությունը, այնպես էլ պետական այդ մարմնի՝ օրենքով երաշխավորված անկախությունն ու գործառույթների բացառիկությունը: Խնդիրն այս հարցում ողջամիտ հավասարակշռության ապահովումն է: ....

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որևէ դատարան չի կարող սահմանել հանրային ծառայության սակագին կամ փոփոխել հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությունը, այլ վերոհիշյալ ընդհանուր խնդրի շրջանակներում կարող է պարզել հանձնաժողովի կողմից կարգավորման օրենսդրական կարգի ու սկզբունքների պահպանումը:

ՍԴՈ–1020, 11 ապրիլի, 2012 թ.

8. Անդրադառնալով սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականությանը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում ներառված նորմերի, այդ թվում՝ 138-րդ հոդվածի համաձայն, նորմատիվ իրավական ակտերի (օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված) իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը, որպես կանոն, վարչական դատարանն իրականացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը: Ինչպես հետևում է հիշյալ իրավակարգավորման բովանդակությունից՝ օրենսդիրը գրավոր ընթացակարգով դատաքննությունը պարտադիր է համարել այն գործերով, երբ օբյեկտիվորեն դատարանի առջև դրված է նորմատիվ ակտով նախատեսված **իրավունքի բովանդակության (իրավադրույթի իրավաչափության), դրա միատեսակ և ճշգրիտ ընկալման ու մեկնաբանման հարց**, որի լուծումը պահանջում է, նախևառաջ, վարչական դատարանի կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուսումնասիրում, դրա իրավահամեմատական վերլուծություն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտի դրույթների հետ և այլն: Այսինքն՝ այսպիսի գործերով (հանրային-իրավական վեճերից բխող) դատարանը, որպես կանոն, դատաքննական գործողությունների հրապարակային-բանավոր, կողմերի անմիջական մասնակցությամբ կատարելու անհրաժեշտություն չունի, որը թելադրված է արդյունավետ դատաքննություն կազմակերպելու նպատակով: Միաժամանակ, նկատի ունենալով կոնկրետ և իրավաբանորեն փաստված հանգամանքները, ելնելով տվյալ գործի քննությանը հասարակության առավել լայն մասնակցություն կամ դատաքննության նկատմամբ հասարակական առավել անմիջական հսկողություն ապահովելու, ինչպես նաև առավել արագ քննություն կազմակերպելու անհրաժեշտությունից, դատարանն իրավասու է պատճառաբանված որոշմամբ գործի քննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով: Բացի դրանից, ելնելով կոնկրետ հանգամանքներից, ինչպես նաև վերոհիշյալ այլ նկատառումներից, վարչական դատարանն իրավասու է իր հայեցողությամբ կամ կողմերի պատճառաբանված միջնորդությամբ միևնույն գործի քննության շրջանակներում համատեղել ընթացակարգային՝ բանավոր և գրավոր ձևերը (օրինակ՝ ՀՀ վարչ. դատ. օր. 108-րդ, 111-րդ և 138-րդ հոդվածներում նախատեսված հիմքերով)՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ ու արագ ապահովել գործի հանգամանքների պարզումը:

Պետք է նկատի ունենալ նաև, որ նույնիսկ բանավոր քննության դեպքերում էլ գործի հանգամանքների պարզումը դատարանում ընթանում է ոչ միայն «բանավոր լսումների» կազմակերպման, այլև **գրավոր ապացույցների ուսումնասիրման միջոցով**: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում **բանավոր քննության սկզբունքը բացարձակ չէ**:

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ

ՍԴՈ–1255, 16 փետրվարի, 2016 թ.

6. .... Սահմանադրական դատարանը նաև ընդունում է ի գիտություն, որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի պահանջներին համապատասխան՝ արգելվում է Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացու ելքը, եթե օրենքով սահմանված կարգով հարուցված քրեական գործով նրա նկատմամբ կիրառվել է խափանման միջոց, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդման մարմինը տվյալ անձին Հայաստանի Հանրապետությունից ելքի գրավոր թույլտվություն է տվել:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԸ

ՍԴՈ–1115, 24 սեպտեմբերի, 2013 թ.

6. Միևնույն ժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք դատարանի իրավունքն է ոչ միայն կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքի հաստատումը, այլև բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու պարագայում նաև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Այսպես. օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավունքը տվել է դատարանին, ինչն իրավաչափ է: Դատարանը, քննելով դիմումը, անդրադառնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչելու նպատակով պահանջատիրոջ ներկայացրած պատճառների հիմնավորվածությանը: Այսինքն՝ դատական նիստ հրավիրելու մասին օրենքի պահանջի տրամաբանությունը պահանջատիրոջ կողմից դատարան ներկայացված պատճառները հարգելի լինելու հանգամանքի մասին դատարանի կողմից պատճառաբանված գնահատական տալն է: Հետևաբար, այն պարագայում, երբ դատարանը հարգելի է համարում ներկայացված պատճառները, ապա վերականգնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը: Մինչդեռ վիճարկվող նորմում օրենսդիրն օգտագործել է «դատարանը կարող է» հասկացությունը, այսինքն՝ դատարանի հայեցողությանն է թողել դատարանի կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու հիմքում ընկած պատճառները հարգելի ճանաչելուց հետո բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Վերը նշվածից բխում է, որ վիճարկվող հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է հայեցողական լիազորությամբ՝ ժամկետների բացթողումը հարգելի ճանաչելուց բացի, **վերականգնել կամ չվերականգնել** ժամկետների բացթողումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դրվում դատական հայեցողությունից՝ ներկայացված պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքից զատ նաև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծման առումով, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված դատական հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը կամ անհարկի սահմանափակվի դրանց իրացումը:

Դատական հայեցողության վերաբերյալ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ (ՍԴՈ–996, ՍԴՈ–997): Մասնավորապես, 18.10.2011 թ. ՍԴՈ–996 որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝ «.... Ինչ վերաբերում է դատական հայեցողությանը, ապա այն ունի իր սահմանները և չի կարող փոխել իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել դրա նպատակահարմարության խնդիրը: Դատական հայեցողությունն ընտրություն կատարելու իրավասություն է՝ այնպիսի հնարավոր տարբերակների միջև, որոնք բոլորն էլ օրինական են»: Սույն գործով սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավանորմի դեպքում պետք է ապահովվի հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումը, այն պետք է լինի հստակ, միակերպ ընկալելի իրավահարաբերության կողմերի համար:

Միաժամանակ սահմանադրական դատարանն ընդունում է ի գիտություն, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ 2013 թ. հուլիսի 3-ին շրջանառության մեջ է դրվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով առաջարկվել է օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը

շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**Պահանջատիրոջ** կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում **դատարանը վերականգնում է այն**»:

ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՅՑ

ՍԴՈ–1315, 18 հոկտեմբերի, 2016 թ.

6. «.... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորության սահմանափակումներն ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում անձի դատական պաշտպանության հնարավորությունը, քանի որ ցանկացած պարագայում նա իրավասու է վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ինքնուրույն հայց ներկայացնել դատարան, այնուամենայնիվ, նման սահմանափակումները կոնկրետ իրավահարաբերության շրջանակներում համաչափության սկզբունքին չհամապատասխանելու պարագայում կարող են համահունչ չլինել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և **ողջամիտ ժամկետում** քննության իրավունք»:

8. «.... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այլ է խնդիրը, երբ դատական ակտը բեկանվում է նիստի ժամանակի և վայրի մասին պատասխանողի՝ պատշաճ ծանուցված չլինելու արդյունքում դատավարությանը չմասնակցելու պատճառով, ինչի հետևանքով նա փաստացի զրկված է լինում արդյունավետ դատական պաշտպանության իր իրավունքների իրականացման, այդ թվում՝ հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու հնարավորություններից»:

«ՀՀ սահմանադրական դատարանը, կոնկրետ վերահսկողության շրջանակներում չանդրադառնալով բեկանման հիմքերի կիրառման իրավաչափության հարցերին, գտնում է, որ տվյալ պարագայում գործի նոր քննության կարևորագույն նպատակներից է հնարավորություն ընձեռել պատասխանողին մասնակցելու դատավարությանը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով օրենքով նախատեսված դատավարական պաշտպանության միջոցները, այդ թվում՝ հակընդդեմ հայցադիմում ներկայացնելը: Դրանով իսկ ապահովվում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով նախատեսված՝ կողմերի իրավահավասարության սկզբունքը, համաձայն որի՝ յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու **լիարժեք** հնարավորություն»:

9. «....Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ հակընդդեմ հայցի ինստիտուտը հնարավորություն է տալիս մեկ դատավարության ընթացքում մեկ դատական ակտով լուծել կողմերի փոխադարձ պահանջները և դատավարական նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ դատական գործընթացն իրականացնել առավել արդյունավետությամբ:

Այն փաստարկը, որ հակընդդեմ հայցի մերժման դեպքում պատասխանողն իրավունք ունի ինքնուրույն հայցադիմում ներկայացնելով իրացնել իր դատական պաշտպանության իրավունքը, չի կարող լիարժեք հիմնավոր համարվել պատասխանողի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության տեսանկյունից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

նախ՝ ՀՀ դատական օրենսգրքի՝ «Առաջին ատյանի դատարանում գործերի բաշխման կարգը» վերտառությամբ 21.2-րդ հոդվածը կանոնակարգում է դատարաններում, այդ թվում՝ վարչական դատարանում գործերի բաշխման գործընթացը: Ի տարբերություն հակընդդեմ հայցադիմումի, պատասխանողի կողմից ինքնուրույն հայցադիմում ներկայացվելու դեպքում

վերոհիշյալ կանոնակարգումը չի երաշխավորում այդ հայցի քննումը վարչական դատարանի նույն նստավայրում,

երկրորդ՝ ինքնուրույն հայց ներկայացնելու դեպքում ակնհայտորեն ավելանում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58 և 59-րդ հոդվածներով նախատեսված դատական ծախսերը,

երրորդ՝ հակընդդեմ հայցը հիմնական հայցի հետ քննելու արդյունքում կայացվում է մեկ դատական ակտ, ինչն առավել մատչելի և արդյունավետ է այդ ակտի բողոքարկման, ինչպես նաև կատարման տեսանկյուններից»:

10. «.... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված սահմանափակումը՝ կապված գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելը ցանկացած պարագայում բացառելու հետ, թերի իրավակարգավորման արդյունքում ոչ իրավաչափորեն սահմանափակում է արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, այն դեպքերում, երբ չի ապահովվում իրենից անկախ պատճառներով հակընդդեմ հայց չներկայացրած անձի կողմից գործի նոր քննության ժամանակ հակընդդեմ հայց ներկայացնելու և այն ամբողջ ծավալով քննության առարկա դարձնելու հնարավորություն»:

ՍԴՈ-1289, 23 հունիսի, 2016 թ.

9. .... Դատավարական ժամկետների և հակընդդեմ հայցի ինստիտուտները փոխկապակցված են, և հակընդդեմ հայց ներկայացնելը նույնպես պետք է նախատեսվի այնպիսի փուլում, որպեսզի կողմերին տրամադրվի ողջամիտ ժամկետ իրենց իրավական դիրքորոշումը ձևավորելու համար:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վարչական դատավարությունում գործը դատաքննության նշանակելու հստակ ժամկետ օրենսդիրը չի սահմանում: Վարչական դատարանը գործը դատաքննության նշանակելու մասին որոշում է կայացնում, երբ համարում է գործը դատաքննությանը նախապատրաստված (ՎԴՕ 90-րդ հոդված):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հակընդդեմ հայցը ներկայացվում է հայց ներկայացնելու ընդհանուր կանոններով: Հակընդդեմ հայցը վարույթ ընդունելը, վերադարձնելը կամ հակընդդեմ հայցի վարույթ ընդունումը մերժելը կատարվում է նույն օրենսգրքի 78-80-րդ հոդվածներով սահմանված կարգով: Հակընդդեմ հայցի վարույթ ընդունումը մերժվում է նաև, եթե այն չի համապատասխանում նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին, **այն է՝ ներկայացվել է գործը դատաքննության նշանակելուց հետո կամ փոխկապակցված չէ սկզբնական հայցի հետ**:

Նման իրավակարգավորումը դատական պրակտիկայում կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ, քանի որ օրենսդիրը մի դեպքում ժամկետի բաց թողումն ուղղակիորեն հայցադիմումը մերժելու հիմք է համարել, բայց նույն հոդվածում հղում է կատարել օրենսգրքի 79-րդ հոդվածին, որի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ հայցադիմում ներկայացնելու ժամկետը բաց է թողնվել և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին, ոչ թե մերժվում է հայցադիմումի ընդունումը, այլ այն վերադարձվում է:

ՀԱՄԱՆԵՐՈՒՄԸ

ՍԴՈ–921, 19 հոկտեմբերի, 2010 թ.

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի մտահոգությունը «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թ. հունիսի 19–ի որոշման 8–րդ կետի 2–րդ ենթակետի առկա ձևակերպման, հատկապես բացառության մասի, առնչությամբ՝ հիմնավոր է, և նման ձևով այն կիրառելու պարագայում կարող է խտրական իրավիճակ ստեղծվել: Այս հարցում, ըստ գործի նյութերի, տարակարծություն չի արտահայտել նաև ՀՀ դատախազությունը: Վերջինիս հարցադրումն այն է, որ իրավական ակտով նախատեսված սահմանափակումները հաշվի չեն առնվել:

Միաժամանակ, ակնհայտ է, որ համաներման ակտն ընդունողի հայեցողական լիազորությունը կարող է իրացվել միայն իրավաչափ լուծումների ու ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքների շրջանակներում՝ բացառելով նաև խտրականության որևէ դրսևորում: Վիճարկվող նորմն ունի հասցեատերերի հիմնականում երկու խումբ, այն է՝ անձինք, ում նկատմամբ համաներումը նախկինում կիրառվել է նախաքննության փուլում, և անձինք, ում նկատմամբ համաներումը կիրառվել կամ ներում է շնորհվել մեղադրական դատավճռի կայացումից հետո: Վիճարկվող նորմի կարգավորման առարկայի տեսանկյունից այս երկու խումբ անձինք համանման իրավիճակում են, քանի որ նրանց համար ընդհանուր է այն իրավակարգավորումը, որը հիմք է հանդիսանում նրանց նկատմամբ համաներումը չկիրառելու համար՝ ելնելով արդեն մեկ անգամ պետության մարդասիրական վերաբերմունքից օգտված լինելու փաստից:

Սակայն նշյալ անձանց քրեական պատասխանատվությունից ազատելուն առնչվող հարցերի իրավակարգավորման շրջանակներում նրանց նկատմամբ կարող է տարբերակված մոտեցում դրսևորվել միայն օբյեկտիվ և ողջամիտ արդարացման դեպքում:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաներումը չկիրառելով և՛ նախկինում նախաքննության փուլում համաներման հիմքով պատասխանատվությունից ազատված անձանց նկատմամբ, և՛ համաներման կամ ներման հիմքով պատժից մասամբ կամ ամբողջությամբ ազատված դատապարտյալների նկատմամբ՝ օրենսդիրը գործել է օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելման սկզբունքին համահունչ՝ ապահովելով նույնական վերաբերմունք համանման իրավիճակում գտնվող անձանց առնչությամբ: Մինչդեռ նույն հետևողականությունը չի դրսևորվել համաներումը չկիրառելու վերաբերյալ ընդհանուր կանոնից բացառությունը նման ձևով սահմանելիս և «....որոնց նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար քրեական հետապնդում չի հարուցվել» դրույթը սույն իրավակարգավորման համատեքստում ներկայացնելիս:

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

ՍԴՈ–1004, 6 դեկտեմբերի, 2011 թ.

6. Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208–րդ հոդվածի 3–րդ մասի պահանջը դիտարկել նույն օրենսգրքով սահմանված՝ կողմերի դատավարական պարտականությունների, ինչպես նաև վերաքննիչ բողոքի հիմքերի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227–րդ հոդվածով սահմանված՝ «նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում» հասկացության համատեքստում:

ՍԴՈ–1022, 18 ապրիլի, 2012 թ.

5. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքով նախատեսված է կոնկրետ իրավական կառուցակարգ, որի շրջանակներում դատարանն իրավասու է գնահատել հայցադիմումի ընդունելիությանն առնչվող պահանջների և պայմանների պահպանվածությունը: ....

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը վարչական դատարանի վերոնշյալ լիազորությունը սահմանելով, **ըստ էության, չի բացառում վերջինիս կողմից մատնանշված առերևույթ թերությունների վերացման դեպքում նույն հայցադիմումը կրկին անգամ ներկայացնելու իրավական հնարավորությունը:**

7. Դիտարկելով վերոհիշյալ իրավական կարգավորման կառուցակարգը՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսդիրը վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ընդունելիության հարցի լուծման առնչությամբ սահմանել է դատարանի լիազորությունների սպառիչ ցանկը, որոնց իրականացմամբ՝ դատարանը վարչական դատավարության հիշյալ փուլում պետք է իրավական գնահատական տա, թե արդյո՞ք հայցվորն իրավասու է դիմել դատարան, արդյո՞ք առկա է նրա մոտ դատարան դիմելու իրավական պահանջ, արդյո՞ք հայցվորը կարող է հանդիսանալ խախտման օբյեկտ հանդիսացող իրավունքի կրող: Սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում **բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը:** Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը,** այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը:

ՍԴՈ–1127, 10 դեկտեմբերի, 2013 թ.

6. .... Անդրադառնալով հայցադիմումը վերադարձնելու իրավական հիմքերին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 78–րդ հոդվածի 1–ին մասում որպես հիմք ամրագրված է օրենսգրքի 72–րդ հոդվածով սահմանված հայցադիմումին առաջադրվող պահանջները չպահպանելը, իսկ օրենսգրքի 73–րդ հոդվածի մասով ամրագրված է միայն հիշյալ հոդվածի 1–ին մասի 1–ին կետով նախատեսված պահանջը չպահպանելը: Սահմանադրական դատարանը վերահաստատում է 2010 թվականի նոյեմբերի 30–ի ՍԴՈ–927 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ օրենսգրքի 73–րդ հոդվածի **պահանջները** չպահպանելու իրավական հետևանքը վարչական դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելն է, և գտնում է, որ հետագա իրավական կանոնակարգումների շրջանակներում հիշյալ դիրքորոշումն անհրաժեշտ է ամրագրել օրենսգրքում, մասնավորապես՝ հայցադիմումը վերադարձնելու իրավական հիմք նախատեսելով օրենսգր-

քի 73-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պարտադիր կատարման ենթակա պահանջները չպահպանելու բոլոր դեպքերը: Հիշյալ կանոնակարգման անհրաժեշտությունը բխում է նաև իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության սկզբունքների պահանջներից, նպատակաուղղված է սահմանելու դատարանի լիազորությունների կոնկրետ շրջանակը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19-րդ և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով՝ վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դատավարական փաստաթղթերի ստանալը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու ընթացակարգի շրջանակներում կողմերի դատավարական իրավունքները և պարտականությունները համաչափ բաշխված չեն: Մասնավորապես, ի տարբերություն վիճարկվող դրույթի, օրենսգրքի 83-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատասխանողը ներկայացնում է նաև՝ հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերը հայցվորին և գործին մասնակցող այլ անձանց՝ փաստաթղթերի հատուկ առաքման կարգին համապատասխան **ուղարկելը** հավաստող ապացույցները: Այսինքն՝ օրենսդիրը պատասխանողի համար չի սահմանել հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերը **ստանալը** հավաստող փաստաթուղթ ներկայացնելու պարտականությունն:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքների և վարչական դատավարությունում կողմերի հավասար հնարավորությունների իրացումը կարող է երաշխավորված լինել հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված **պատշաճ կարգով ուղարկելու** պահանջի կատարմամբ, ինչպես նաև գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու օրենսդրական համարժեք երաշխիքների իրացմամբ: Այդ պահանջի և երաշխիքների հստակ և համակարգված կանոնակարգումը, ելնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունից, օրենսդիր մարմնի պարտականությունն է:

ՍԴՈ-1265, 19 ապրիլի, 2016 թ.

7. Ինչ վերաբերում է առանց տուրքի վճարման հայց ներկայացնելուն և, հետևաբար, սահմանված կարգով հայց չհարուցելու պարագայում հայցային վաղեմության ժամկետի ընթացքի չընդհատվելուն, ապա անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման տեսանկյունից անհրաժեշտ է նշել հետևյալը.

նախ՝ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Սահմանված կարգով հայց հարուցելու ֆինանսական բաղադրատարրի առնչությամբ՝ որպես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի նշանակությանը համարժեք սահմանափակում, պետք է ընդգծել, որ ՀՀ սահմանադրական դատարանն այս հարցի առնչությամբ արտահայտել է իր դիրքորոշումը: Մասնավորապես, իր՝ 25.05.2010 թվականի ՍԴՈ-890 ո-

րոշման 6-րդ կետում Սահմանադրական դատարանը նշել է. «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ»:

Երկրորդ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից: Այս դրույթը դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորություն է երաշխավորում ոչ բավարար ֆինանսական միջոցներ ունեցող անձանց համար: Ընդ որում, վերոհիշյալ արտոնությունները, ի թիվս այլնի, ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունից անձն ազատվում է օրենքի ուժով, որով բացառվում է այդ պարտականությունից անձին ազատելու հայեցողական մոտեցումը: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասը՝ ելնելով այն սկզբունքից, որ դատական ծախսերը վճարում է դատավարության պարտվող կողմը, սահմանում է, որ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Երրորդ՝ հայց հարուցելը միակ հիմքը չէ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման համար: Ինչպես արդեն նշվել է, օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է նաև պարտապան անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելով: Այս իրավակարգավորումը լրացուցիչ հիմք է անձի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման և դատական պաշտպանության մատչելիության ապահովման համար:

Չորրորդ՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը միանշանակ չի ենթադրում անձի կողմից իր իրավունքների դատական պաշտպանության հնարավորության սպառում: Օրենսգրքի 335-րդ հոդվածին համապատասխան դատարանն իրավունքի պաշտպանության մասին պահանջը քննության է առնում անկախ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հանգամանքից, և վիճող կողմի՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողման մասին դիմումի բացակայության պարագայում տեղի է ունենում անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Ավելին, դատարանի կողմից հարգելի ճանաչված բացառիկ դեպքերում օրենսգիրքը նախատեսում է հայցային վաղեմության ժամկետի վերականգնման հնարավորություն, ինչը ևս կարող է երաշխավորել անձի դատական պաշտպանությունը:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-983, 12 հուլիսի, 2011 թ.

7. .... Հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության խնդիրը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականության անձեռնմխելիության սկզբունքը ոչ միայն նշանակում է, որ սեփականատերը՝ որպես սուբյեկտիվ իրավունքների կրող, իրավասու է պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև ենթադրում է պետության պարտականությունը՝ անձի սեփականությունը պաշտպանելու անօրինական ոտնձգություններից: Պետության այս պարտականությունը խնդրո առարկա իրավիճակում պահանջում է ապահովել արդյունավետ կառուցակարգ հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության և կրած վնասի վերականգնման համար:

....

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, որպես պայման չի նախատեսում տուժողի սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան: Նման իրավիճակում ոչ միայն առաջացել են ներհամակարգային հակասություններ, այլև նույնացվել են դատապարտյալի գույքի բռնագրավման՝ որպես պատժատեսակի, և հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտները: Վիճարկվող իրավակարգավորումն իրավակիրառական պրակտիկայում ստացել է այնպիսի մեկնաբանություն, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման դեպքում այդ գույքն ամբողջությամբ անհատույց անցնում է ի սեփականություն պետության՝ առանց տուժողի (օրինական տիրապետողի) գույքային շահերի ու սեփականության իրավունքի պաշտպանության:

ՍԴՈ-1102, 28 հունիսի, 2013 թ.

5. .... Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարևոր երաշխիք է ՀՀ Սահմանադրության ինչպես 8-րդ, 18-րդ և 19-րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով, և սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել, եթե օրենսդրությամբ նախատեսված է դրա իրացման արդյունավետ ընթացակարգ, մասնավորապես՝ անիրավաչափ դատական ակտի ի կատար ածման հետևանքով անձանց խախտված իրավունքների ու ազատությունների **արագ, լիարժեք ու արդյունավետ** վերականգնման հնարավորություն: Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և, մասնավորապես՝ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն գործով վեճի առարկայի վերաբերյալ դիմողների հարցադրումներն իրենց բովանդակությամբ պարունակում են **հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման** այդպիսի ընթացակարգերի երաշխավորման անհրաժեշտության փաստացի պահանջ, որը, ինչպես հետևում է գործում առկա դատավարական նախապատմությունից, չնայած անմիջականորեն կապված չի եղել քաղաքացիական գործով ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրի հետ, սակայն իրավակարգա-

վորման ընդհանուր նպատակներով միտված է նաև այդ խնդրի լուծմանը: Հետևաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հանցագործությամբ անձանց պատճառված նյութական (գույքային) վնասի վերականգնման սահմանադրաիրավական սկզբունքների երաշխավորման, և հատկապես՝ իր նախորդ որոշումներով այդ հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության խնդրին:

6. .... Այսպիսով, սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշմամբ կարևորելով հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի իրավաչափ կիրառման երաշխավորումն իրավակիրառական պրակտիկայում՝ նախանշել էր վերջինիս օրենսդրական կարգավորումն ապահովելու սահմանադրաիրավական սկզբունքներ, որոնք երաշխիք կհանդիսանան նաև սույն գործով վեճի առարկա խնդրի համալիր և արդյունավետ իրավակարգավորման, ինչպես նաև դատական հետագա միասնական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, նկատի ունենալով ձևավորված իրավակիրառական պրակտիկան, հաշվի պետք է առնվեն նաև ՀՀ դատախազության կողմից՝ իր իրավասության շրջանակներում տուժողների խախտված իրավունքների վերականգնումն երաշխավորելու առումով:

Միաժամանակ, ՀՀ Ազգային ժողովի խնդիրն ու սահմանադրական պարտականությունն է՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներից, հաղթահարել իրավակարգավորման բացը, սահմանել հստակ դրույթներ քննության առարկա հիմնախնդրի շրջանակներում ապահովելու անձանց խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը:

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-1197, 7 ապրիլի, 2015 թ.

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմերն անմիջականորեն առնչվում են ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքին, արդար դատաքննության սկզբունքներին, ինչպես նաև նշված իրավունքների թույլատրելի սահմանափակումներին:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա են հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությանն առնչվող մի շարք միջազգային փաստաթղթեր: ....

6. Հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ վերը նշված միջազգային փաստաթղթերից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից բխում է, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությունը **պետք է ներառի, մասնավորապես, հետևյալ իրավունքները. դատարանում լսվելու իրավունքը, դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը:** Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է պարզել, թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հոգեկան խանգարում ունեցող անձանց համար որքա-

նով են հստակ երաշխավորված վերը նշված իրավունքները: Խնդրո առարկա հանգամանքը պարզելը էական է նաև նրանով, որ.

– անձի գործունակության սահմանափակումն անխուսափելիորեն հանգեցնում է կյանքի տարբեր ոլորտներում տվյալ անձի իրավունքների և ազատությունների հնարավոր սահմանափակման,

– ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների արդյունքում անձը, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, դատական քննության ընթացքում պետք է հանդես գա **ոչ միայն որպես դատաքննության օբյեկտ, այլ նաև՝ որպես շահագրգիռ անձ:**

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոնշյալ կարգավորումներով՝ այն անձանց համար, ում գործունակությունը քննվում է դատարանում, հստակ չեն ապահովվում իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքները: Երաշխավորված չէ նաև հոգեկան խանգարում ունեցողների իրավական պաշտպանության վերաբերյալ միջազգային հիշյալ փաստաթղթերով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով ամրագրված՝ դատարանում լսվելու իրավունքը: Նշված հիմնարար իրավունքների ուժով ցանկացած անձ, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է օժտված լինի համապատասխան դատավարական կարգավիճակով, կրի դատավարական պարտականություններ, ինչպես նաև օգտվի դատավարության մասնակցի կարգավիճակից բխող դատավարական իրավունքներից, ներառյալ՝դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող հիմնահարցերի առնչությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում **առկա է իրավակարգավորման բաց, ինչը համակարգային լուծում է պահանջում և կարող է հաղթահարվել միայն ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ օրենսդրական համարժեք փոփոխություններ կատարելու միջոցով:**

.... Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 173–րդ հոդվածի 1–ին մասի կարգավորումը, չնախատեսելով գործունակության ճանաչման համար տվյալ անձի լսվելու և դատաքննությանը մասնակցելու հնարավորություն, փաստացիորեն զրկում է այդ անձին ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների իրականացման հնարավորությունից:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կիրառվող «գործունակություն», «անգործունակություն» և «սահմանափակ գործունակություն» հասկացություններին:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հասկացությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածներում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24–րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է. «իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից»:

Նույն օրենսգրքի 31–րդ հոդվածը բացահայտում է անգործունակության հատկանիշները՝ ամրագրելով, որ «Քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածը, իր հերթին, անդրադարձ է կատարում «սահմանափակ գործունակություն» հասկացության սահմանմանը, մասնավորապես նշելով, որ «ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

.... Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում **արձանագրել, որ հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում համապատասխան անդրադարձ պետք է լինի նաև այս խնդրին, ինչը թույլ կտա բացառել անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները՝ առավել ամբողջական դարձնելով անձին «անգործունակ» կամ «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը**:

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-674, 30 հունվարի, 2007 թ.

6. .... Մինչդեռ քրեական դատավարությունը բաղկացած է մի քանի փուլերից՝ հետաքննություն, նախաքննություն և այլն, որոնցով վարույթն իրականացնող մարմինները տարբեր են, և դատարանը քրեական գործն իր վարույթ է ընդունում միայն դատաքննության փուլում: Դատավարական մյուս փուլերի, մասնավորապես՝ մինչդատական վարույթի նկատմամբ, օրենսդիրը սահմանել է դատական վերահսկողության առանձնակի կարգ, որը բխում է այդ հարաբերություններում անձի իրավական կարգավիճակի առանձնահատկություններից:

ՍԴՈ-844, 7 դեկտեմբերի, 2009 թ.

8. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նախատեսված դատական բողոքարկման կարգին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում.

– եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,

– եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Վերջինիս դեպքում հետևում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պետք է դիմի նաև վերադաս դատախազին: Իսկ իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդոտ չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ էության քննելու համար:

Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մատչելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665 և ՍԴՈ-690, բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, կարևորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարևորել է միջազգային պարտավորություննե-

րից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ձևական), կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի **պարտադիր** պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի **անգործությամբ** խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է:

ՀՀ Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան ՀՀ-ում դատական իշխանությունն ու դատախազությունը սահմանադրաիրավական ինստիտուցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, և գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

ՀՀ դատական իշխանության սահմանադրաիրավական դերի և բովանդակության բացահայտման ու գնահատման խնդիրներին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում:

ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Քրեական գործերով մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի ապահովումն սահմանադրական վերոհիշյալ պարտականության կատարման, մինչդատական վարույթում հսկողություն իրականացնելիս դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են ղեկավարելու (ուղղորդելու) հետաքննության մարմնի, քննիչի **դատավարական գործունեությունը**, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, «**բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին**» (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ): Վերոթվարկյալ գործառույթները դատախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախատեսված իր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինախախտումները վերացնելու նպատակով ղեկավար ցուցումներ և այլ հանձնարարություններ տալով հետաքննության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում **վերացնելով նաև վերջիններիս որոշումները**:

.... Այսպիսով, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերություննե-

րը կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների **ընդհանուր նպատակի** (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարբեր առանձնահատկությունների մասին, հետևաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «....և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից և այդ գործառույթների սահմանադրաիրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրաիրավական բովանդակությամբ և երաշխիք է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

ՍԴՈ–930, 21 դեկտեմբերի, 2010 թ.

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ տվյալ հիմնախնդրին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ոչ միայն դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 16.12.2009 թ. որոշման շրջանակներում, որով իրավաչափ է նկատել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածի 2–րդ մասի կիրառումը վերաքննիչ դատարանի կողմից: 2010 թվականի ԵԱԴԴ/0014/11/09 գործով ըստ էության կայացրած իր որոշման մեջ՝ քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի և 185–րդ հոդվածի 3–րդ մասի (վերաբերում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը բողոքարկելուն, որով 21.02.2007 թ. ՀՕ–93–Ն օրենքով օրենսգրքի 263–րդ հոդվածի 2–րդ մասին բնորոշ ժամկետային կարգավորում է նախատեսվել) հարաբերակցության հարցը, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «....դրանցում առկա է ուղղակի հակասություն», ուստի «....քննության առարկա հարաբերությունների նկատմամբ պետք է գործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի կանոնը՝ որպես ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտ»:

ՍԴՈ–1234, 20 հոկտեմբերի, 2015 թ.

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թ. սեպտեմբերի 22–ի որոշման մեջ, անդրադառնալով սույն գործով վեճի առարկա իրավադրույթներին, տրվում է նաև այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ «....օրենսդրի կողմից սահմանված «այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման» արտահայտության մեջ է ընդգրկվում տեղեկատվության աղբյուրի բացահայտումը, որը կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ....»:

Նման եզրահանգում արվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14–րդ հոդվածի 2–րդ մասի, 41–րդ հոդվածի 2–րդ մասի 1–ին կետի, ինչպես նաև 279–րդ հոդվածի դրույթների առնչությամբ: ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, կարևոր է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39–րդ գլուխը նվիրված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը, որը սահմանում է դատավարական երաշխիքներ անձի ազատության և անձեռնմխելիության, բնակարանի անձեռնմխելիության, ինչպես նաև խախտված իրավունքների դատական պաշտպանության համար: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակը սահմանափակ է, այսինքն՝ դատական պաշտպանության երաշխիքները տարածվում են անձի իրավունքների պաշտպանության վրա: Դրանից ելնելով՝ ՀՀ քրեական դատավա-

րության օրենսգրքի 278-րդ հոդվածում թվարկված են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտները: Այսինքն՝ դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները, ինչպես նաև նշված մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները: Իր հերթին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածում թվարկված են այն քննչական գործողությունները, որոնք կարող են իրականացվել դատարանի որոշմամբ, այսինքն՝ դատարանը **միայն նախնական հսկողություն է** իրականացնում քրեական հետապնդման մարմինների կողմից համապատասխան գործողությունների կատարման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ:

Էական է այն շեշտադրումը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածում թվարկված են **նախնական դատական վերահսկողության ենթակա քննչական գործողությունները:** Դրանք են՝ բնակարանի խուզարկությունը, բանկային և նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը և առգրավումը, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակումը:

Տվյալ պարագայում դատական պաշտպանությունը վերաբերում է ՀՀ Սահմանադրության 23-24-րդ հոդվածներով և Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների պաշտպանությանը:

Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող իրավունքները, մասնավորապես՝ խոսքի ազատությունը և լրատվության միջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը (հոդվ. 27), չեն կարող ապահովվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 279-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում, որովհետև պաշտպանության ենթակա օբյեկտները տարբեր են:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 179, 239 և 279-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ «այլ հաղորդումներ» բառակապակցությունը **բացառապես վերաբերում է** որոշակի ձևի մեջ **տեղեկատվության հաղորդմանը** (ինչը հիշյալ 239-րդ հոդվածում ընդհանրացվում է և դիտարկվում որպես նամակագրություն):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով սահմանված են քրեադատավարական կոնկրետ փուլում դատարանի լիազորությունները և քննչական այն գործողությունները, որոնք առանց նախնական դատական վերահսկողության իրականացվել չեն կարող: Այդ նորմերն ինքնին սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏ

ՍԴՈ-758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

11. .... Միաժամանակ, նոր հանգամանքների հիման վրա վերանայման են ենթակա ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը: Իսկ միջանկյալ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն իրավասու են կայացնելու նոր դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս դեպքում ավելի քան ակնհայտ է, որ միայն առաջին ատյանի դատարանի միջանկյալ ակտի՝ նոր հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը բացառում է վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից միջանկյալ դատա-

կան ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կայացված նոր դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

ՍԴՈ–922, 2 նոյեմբերի, 2010 թ.

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատել միջանկյալ դատական ակտերի բողոքարկման իրավակարգավորմանն առնչվող իր՝ 2007 թ. նոյեմբերի 28–ի ՍԴՈ–719 և 2010 թ. սեպտեմբերի 28–ի ՍԴՈ–918 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հաշվի առնելով օրենսդրի կողմից միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հիմքում դրված ընդհանուր տրամաբանությունը:

.... Հիմք ընդունելով վերոհիշյալը և հաշվի առնելով գործի քննությունը վերսկսելու մասին որոշումը՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու շրջանակներում վիճարկելու օբյեկտիվ հնարավորությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այս որոշման անմիջական բողոքարկման կարգ չսահմանելն օրենսդրի հայեցողության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ անհիմն է դիմողի այն պնդումը, որ վարույթը կասեցնելու որոշման անմիջական բողոքարկման հնարավորությունը պետք է ենթադրի նաև վարույթը վերսկսելու մասին որոշման բողոքարկման նույն կարգի սահմանում: Նշված երկու որոշումները վարույթի ընթացքի շարունակականության ապահովման վրա ազդեցության առումով ունեն միմյանցից էապես տարբերվող բնույթ և օբյեկտիվորեն պայմանավորում են օրենսդրի ոչ նույնական մոտեցումը դրանց բողոքարկման կարգի առնչությամբ:

7. Սահմանադրական դատարանը գործի վարույթը վերսկսելու մասին որոշման անմիջականորեն բողոքարկման հնարավորության բացակայության իրավաչափությունը հարկ է համարում գնահատել նաև վիճարկվող իրավակարգավորմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի լույսի ներքո: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջանկյալ դատական ակտերի «հետաձգված բողոքարկման», այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում բողոքարկելու կարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու, դատաքննությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու պահանջի երաշխավորումը, ինչպես նաև դատավարական գործընթացի արդյունավետության իրավաչափ նպատակ:

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման «հետաձգված բողոքարկման» հնարավորության միջոցով ապահովվում է այդ որոշումների իրավական վերահսկելիությունը, որ այդ որոշումների անմիջական բողոքարկման հնարավորություն չնախատեսելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ միջանկյալ ակտերի բողոքարկման հիմքում ընկած ընդհանուր տրամաբանության շրջանակներում է և հետապնդում է իրավաչափ նպատակ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշումն անմիջականորեն բողոքարկելու հնարավորության բացակայությունը չի խոչընդոտում անձին արդյունավետորեն իրացնել իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքն ըստ էության դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման անմիջական բողոքարկման հնարավորության բացակայությամբ:

ՍԴՈ–932, 11 հունվարի, 2011 թ.

9. Արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի տեսանկյունից հարկ է վեճի առարկա իրավունքների պաշտպանության երաշխիքները դիտարկել

սնանկության վարույթին վերաբերող դատավարական այլ երաշխիքների համատեքստում, որոնք պետք է ուղղված լինեն սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը:

ՍԴՈ–936, 8 փետրվարի, 2011 թ.

5 . .... Ուսումնասիրելով ՀՀ իրավական համակարգում դատական բողոքարկման (վերաքննիչ և վճռաբեկ վարույթների կարգով) հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերը, դրանց առանձնահատկությունները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է.

– օրենքով նախատեսված կարգով բողոքարկման ենթակա են ինչպես օրինական ուժի մեջ չմտած, այնպես էլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը (գործով ըստ էության կայացված ակտերը, ինչպես նաև օրենքով թվարկված միջանկյալ ակտեր)....

ՍԴՈ–1022, 18 ապրիլի, 2012 թ.

7. Դիտարկելով վերոհիշյալ իրավական կարգավորման կառուցակարգը՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսդիրը վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ընդունելիության հարցի լուծման առնչությամբ սահմանել է դատարանի լիազորությունների սպառիչ ցանկը, որոնց իրականացմամբ՝ դատարանը վարչական դատավարության հիշյալ փուլում պետք է իրավական գնահատական տա, թե արդյո՞ք հայցվորն իրավասու է դիմել դատարան, արդյո՞ք առկա է նրա մոտ դատարան դիմելու իրավական պահանջ, արդյո՞ք հայցվորը կարող է հանդիսանալ խախտման օբյեկտ հանդիսացող իրավունքի կրող: Սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում **բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը:** Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը,** այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը:

.... Միանգամայն տեղին է ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ դատական դեպարտամենտի դիքորոշումներում կատարված այն շեշտադրումը, համաձայն որի՝ «....սույն նորմում տեղ գտած ձևակերպումը կարող է վերաբերել միայն չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ, և, իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական և մանրակրկիտ ուսումնասի-

րության, մասնավորապես, նյութական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ դիրքորոշման»:

Ինչ վերաբերում է «շահագրգիռ անձ» հասկացությանը, ապա դրա սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտված է սահմանադրական դատարանի 04.04.2008 թ. ՍԴՈ–747 որոշման 7–րդ կետում, որը կիրառելի է նաև սույն գործով:

ՍԴՈ–1190, 10 փետրվարի, 2015 թ.

7. .... Վերոշարադրյալին զուգահեռ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրորեն չի ամրագրվել, թե վարչական դատարանի ինչպիսի դատական ակտ է հանդիսանում գործի վարույթը կարճելու մասին որոշումը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի դատական ակտերի երկու տեսակ՝ գործն ըստ էության լուծող **դատական ակտ** և **գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ: ՀՀ** վարչական դատավարության օրենսգրքի՝ **«Գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակները»** վերտառությամբ 125–րդ հոդվածում գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակ, սահմանված չէ: Միաժամանակ, հարկ է նշել, որ օրենսդիրը նույն հոդվածի 6–րդ մասով սահմանելով, որ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում վարչական դատարանը գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին կայացնում է վճիռ՝ այն դիտարկում է որպես գործն **ըստ էության լուծող դատական ակտ:**

Ինչ վերաբերում է գործի վարույթը կարճելու որոշման և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտի հարաբերակցությանը, ապա օրենսդիրն ուղղակիորեն չի ամրագրել, որ գործի վարույթը կարճելու որոշումը հանդիսանում է գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ: Հարկ է նշել, որ հիշյալ իրավական անորոշությունը խնդիրներ է առաջացնում նաև իրավակիրառական պրակտիկայում, որը փաստվում է դիմող կողմի այն մոտեցմամբ, որ «....թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իմաստով վարչական գործի վարույթը կարճելու մասին որոշումը համարվում է միջանկյալ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտ, սակայն այն իր իրավաբանական հետևանքների տեսանկյունից նմանվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերին»: Ի դեպ, հարկ է նշել նաև, որ պատասխանող կողմը ևս փաստում է իրավակիրառական պրակտիկայում առաջացած խնդրի և այն լուծելու անհրաժեշտության մասին:

Հետևաբար, վերոնշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատավարության գործող իրավակարգավորումների պայմաններում հստակեցված չէ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի (բացառությամբ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում գործի վարույթը կարճելու մասին վճռի) **տեղը** գործն ըստ էության լուծող **դատական ակտերի** և **գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի համակարգում: Չնայած այն հանգամանքին, որ ըստ պատասխանող կողմի՝«Գործի վարույթի կարճումը վարույթն ավարտելու ինքնուրույն ձև է, որն իր դատավարական ձևակերպումն ստանում է որոշման տեսքով, ուստի կարճելու մասին որոշումը կարող է բնորոշվել որպես վարույթը եզրափակող դատական ակտ»**, **այն իր հստակ օրենսդրական ձևակերպումը չի ստացել: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է սահմանել գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման իրավական կարգավիճակը: Այն պարագայում, եթե գործի վարույթը կարճելու մասին դատական ակտն օրենսդիրն համարի լիովին այլ կատեգորիայի ակտ, ապա անհրաժեշտ կլինի նման մոտեցումը լիարժեքորեն ներմուծել առկա փոխկապակցված բոլոր իրավակարգավորումներում (այդ թվում՝ուժի մեջ մտնելու, բողոքարկման ժամկետների հետ կապված)՝ նպատակ ունենալով ապահովել այդ իրավակարգավորման համակարգային ամբողջականությունը և**

տրամաբանական փոխկապվածությունը: Միևնույն ժամանակ, անկախ գործի վարույթը կարճելու մասին որոշման իրավական կարգավիճակից, պետք է համապատասխան իրավակարգավորումներով սահմանվեն այդ ակտի բողոքարկման հնարավորությունը և դրա իրացումն ապահովող անհրաժեշտ այլ հարաբերությունները:

8. **Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ** ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (131-րդ հոդված) սահմանում է այն միջանկյալ դատական ակտերի շրջանակը, որոնք ենթակա են բողոքարկման: Վերջինս այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկելու վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը բողոքարկելու մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է: ՀՀ սահմանադրական դատարանն իր 02.11.2010 թ. ՍԴՈ-922 որոշմամբ ամրագրել է, որ «....օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ, մի կողմից, օբյեկտիվորեն հնարավոր չէ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման՝«հետաձգված բողոքարկման» շրջանակներում վիճարկումը, իսկ մյուս կողմից՝ գործող իրավակարգավորումների պայմաններում բացակայում է գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ անմիջական բողոքարկման շրջանակներում վերանայման հնարավորությունը: Այլ կերպ ասած, ամրագրելով գործի վարույթը կարճելու հետ կապված իրավահարաբերությունները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը՝ բացառելով նաև դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, **մինչդեռ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում:**

ՍԴՈ-1231, 6 հոկտեմբերի, 2015 թ.

6. **Անդրադարձ կատարելով դատարանի մատչելիության երաշխիքն ապահովելու պետության պարտականությանը՝ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-765 որոշմամբ վկայակոչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետևյալ մոտեցումը. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:** ....

7. Սահմանադրական դատարանը կարևորում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դա-

տական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները նույն դատարանի կողմից քննելու պարագայում դատարանի անկողմնակալության գնահատման խնդիրը: Գործի քննությունն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հանդիսանում է Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքի հիմնարար երաշխիքներից մեկը:

.... Անդրադառնալով սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրագործման խնդրահարույց լինելու հարցին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խախտված լինելու դեպքում այդ իրավունքների վերականգնումը **որոշակի կառուցակարգի և ընթացակարգերի հաստատման միջոցով պետության պարտականությունն է**: Պետությունն է պարտավոր նաև ապահովել ստեղծված կառուցակարգի կողմից խախտումների արդյունավետորեն կանխումը և վերացումը:

Իրավիճակը, երբ գործող օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան անհնարին են դարձնում ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը, անհամատեղելի է իրավական պետության կողմից որդեգրված սկզբունքներին և մոտեցումներին:

8. Անդրադառնալով դիմողի այն փաստարկներին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում իրավակարգավորման ենթարկված չեն նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերով միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննության կարգը և դրա արդյունքում ընդունվելիք ակտերի բնույթը, քննության իրականացման եղանակը և քննության արդյունքում՝ վարչական դատարանի լիազորությունները, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի վերոնշյալ փաստարկներն ըստ էության հանգում են **օրենսդրական բացի** առկայության և դրանով պայմանավորված՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների երաշխավորման գործընթացի խաթարման հարցերին: Դա իր հերթին խոչընդոտ է ստեղծում դատարանի մատչելիության իրավունքն իրագործելու հարցում և դատական ակտը բողոքարկելու իրական հնարավորության տեսանկյունից:

.... Հայաստանի Հանրապետությունում սահմանված դատական համակարգի յուրաքանչյուր ատյանում գործերի հարուցումը, նախապատրաստումը, քննությունը, գործի լուծման փուլերի հաջորդականությունը, և այլն, պետք է հստակորեն կարգավորված լինեն համապատասխան դատավարական օրենսգրքերով և օրենքներով:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՍԴՈ-665, 16 նոյեմբերի, 2006 թ.

5. ՀՀ քաղ. օր. 14 և 15 հոդվածների համապատասխան դրույթների և ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1-ին կետի բովանդակության համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը փորձելով ՀՀ քաղ. օր. 14 և 15 հոդվածներում նշված դրույթների պահանջներին համարժեք ձևավորել դրանց դատավարական լուծման ընթացակարգը, ստեղծել է, սակայն, այնպիսի իրավիճակ, երբ դատավարական իրավունքի նորմն արգելք է դարձել նյութական իրավունքի նորմի իրականացմանը: Օրենսդիրը՝ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1-ին կետի առաջին մասում ամրագրելով քաղաքացիական և տնտեսական գործեր քննող դատարանների պարտավորությունը՝ ընդունել և քննել պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումը, երկրորդ պարբերությամբ առանձնացնում է իրավական ակտերի խումբ, որոնց՝ օրենքին համապատասխանության հարցի քննությունը գործնականում դուրս է բերվել դատական վերահսկողության ոլորտից:

ՍԴՈ–690, 9 ապրիլի, 2007 թ.

10. Ելնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումներից, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230, 231.1., 231.2. հոդվածների վիճարկվող նորմերը կոչված են կարգավորելու վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց և ՀՀ վճռաբեկ դատարանի միջև ծագող իրավահարաբերությունները՝ կապված վճռաբեկ բողոքի բովանդակության, այդ բողոքն ընդունելու կամ վերադարձնելու հետ: Հիշյալ նորմերը բնույթով դատավարական նորմեր են և իրենց ընդհանուր բովանդակությամբ պայմանավորված են ՀՀ վճռաբեկ դատարանի՝ սահմանադրաիրավական կարգավիճակով և անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման անհրաժեշտությամբ: Դրանցից էլ բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224 հոդվածին համապատասխան՝ ստորադաս դատարանների վճիռների դեմ բերված վճռաբեկ բողոքներով գործերը քննելու և օրենսգրքի 226, 227 հոդվածներում նախանշված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների արդյունքում դատական սխալն ուղղելու՝ վճռաբեկ դատարանի իրավասությունը:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

11. .... Բացի դրանից, սահմանադրական դատարանում կարող են վիճարկման առարկա դառնալ նաև այն դատավարական նորմերը, որոնք կանոնակարգում են վարույթի կոնկրետ ձևերը, այն է՝ վարույթն առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ դատարանում կամ վճռաբեկ դատարանում: Նման նորմերը կիրառելի են միայն տվյալ դատական ատյանի դատական ակտով:

ՍԴՈ–936, 8 փետրվարի, 2011 թ.

5. .... Այսպիսով, սահմանելով դատական ակտերի բողոքարկման ընթացակարգեր՝ որպես այդ ակտերը վերանայելու նախապայման (բացառությամբ նոր և նոր ի հայտ եկած հանգամանքներով), օրենսդիրը նկատի է ունեցել նյութական, դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումները, որոնց դեպքերում դրանք **ազդել են գործի ելքի վրա** կամ **հանգեցրել են գործի սխալ լուծմանը**: Իսկ որոշ դեպքերում, ինչպես, օրինակ, քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքի հիմքով, օրենսդիրն արգելել է ձևական նկատառումներով բեկանել դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը: Այսինքն՝ վերոթվարկյալ դեպքերում իրավակարգավորման հիմքում դրված է այն սկզբունքը, համաձայն որի՝ նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով կարող է բեկանվել դատական այն ակտը, որը կայացվել է **դատական սխալի արդյունքում**:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարելով անդրադառնալ **«դատական սխալ»** եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, ինչպես նաև դրա՝ որպես դատական բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հիմքում իրավաբանական կարևոր նշանակություն ունեցող փաստի դրսևորման շրջանակներին, գտնում է, որ այն տարածական մեկնաբանման ենթակա չէ և չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից թույլ տրված ցանկացած սխալ (վրիպում): Դատական սխալ կարող է թույլ տրվել միայն գործով ըստ էության դատական ակտի կայացման արդյունքում, այսինքն՝ այնպիսի ակտի, որը կոչված է լինելու լուծել գործը (քրեական, քաղաքացիական, վարչական), վերացնել դրա վիճելիությունը՝ որոշել կողմերի (վիճելի իրավահարաբերության մասնակիցների) իրավական անվիճելի կարգավիճակը, անձանց համար հնարավորություն ստեղծել իրացնելու իրենց իրավունքներն ու պաշտպանել օրինական շահերը, հետևաբար՝ կոչված է իրականացնելու ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության կամ արդարադատության նպատակները: Այդ գործընթացում **դատարանը կիրառում**

է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմեր, որի արդյունքում է կայացվում դատական ակտը: Հետևաբար, այդ ակտի օրինականության վիճարկումը դատական բողոքարկման ընթացակարգով անհրաժեշտաբար կարող է լինել ինչպես **նյութական**, այնպես էլ **դատավարական** իրավունքի նորմի խախտման հիմքով: Իսկ դատական սխալը, կամ նյութական, դատավարական իրավունքի նորմերի խախտման փաստը, **որը հանգեցրել է տվյալ գործի սխալ լուծմանը,** հետևաբար՝ խախտվել են արդարադատության նպատակները, վտանգվել է արդարադատության և դատարանի հեղինակությունը, ենթակա է գնահատման և հաստատման իրավասու դատարանի կողմից՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում:

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած, ի կատարումն ՍԴՈ–780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ–ում վարչական արդարադատության համակարգը համալրվեց և ներդրվեց դատական բողոքարկման նոր համակարգ, այնուամենայնիվ, բողոքարկման գործող ընթացակարգը, մասնավորապես՝ հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, չենթարկվեց համապատասխան փոփոխությունների, որի արդյունքում սահմանափակվեց այդպիսի գործերով արդար, մատչելի և արդյունավետ դատական պաշտպանության՝ անձանց սահմանադրական իրավունքը: Սույն գործով պատասխանող կողմի դիրքորոշումն այն մասին, թե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական նորմերի նշանակությունն ու կարևորությունը դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանում է երկրորդական նշանակություն, չի բխում արդարադատության սահմանադրաիրավական բովանդակությունից, սահմանադրական դատարանի որոշումներից, ինչպես նաև ՀՀ իրավահամակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման ընդհանուր հայեցակարգից: Դատարանի՝ դատավարական կարգի խախտումով ընդունած որոշումը չի կարող համարվել լեգիտիմ ու արդարադատության պահանջներին համապատասխանող:

ՍԴՈ–1004, 6 դեկտեմբերի, 2011 թ.

6. Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208–րդ հոդվածի 3–րդ մասի պահանջը դիտարկել նույն օրենսգրքով սահմանված՝ կողմերի դատավարական պարտականությունների, ինչպես նաև վերաքննիչ բողոքի հիմքերի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227–րդ հոդվածով սահմանված՝ «նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում» հասկացության համատեքստում:

ՍԴՈ–1099, 31 մայիսի, 2013 թ.

6. .... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9–րդ հոդվածի առաջին մասը միանշանակ սահմանում է, որ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով»: Դրանից բխում է, որ դատարանին լիարժեք հնարավորություն է ընձեռվում վերականգնել անձի խախտված իրավունքը և կայացնել հիմնավոր ու իրավունքի գերակայության պահանջներից բխող դատական ակտ:

Նույն հոդվածի 2–րդ մասում շարադրված՝ սույն գործով վեճի առարկա դրույթն առաջին հայացքից վերոնշյալ ընդհանուր մոտեցումից բացառություն է ենթադրում, նկատի ունենալով, որ «Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաս-

տարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա»: Նման ձևակերպումն իրականում իրավունքների պաշտպանության երաշխիքի դեր է կատարում: Առանց այդ դրույթի հնարավոր է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը հանգի նույնաբովանդակ եզրակացության: Խնդիրն այն է, թե նախորդ և վերաքննված դատական ակտով դատարանն **ինչ իրավական բովանդակություն է դրել «նորմի կիրառում» եզրույթի հիմքում:** Դատական պրակտիկայի ուսումնասիրումը վկայում է, որ հաճախ օրենքների տարբեր հոդվածների թվարկումը բովանդակային անհրաժեշտ հիմնավորում չունի, այդ նորմերի իրավական բովանդակության և եզրահանգման միջև տրամաբանական ու օրգանական կապը թույլ է: **Այն դեպքում, երբ դատարանները կխուսափեն օրենքի նորմերի պարզապես ձևական թվարկումից և օրենքի նորմի կիրառումն իրական բովանդակություն կունենա, անխուսափելի կլինի գործն ամբողջությամբ վերանայելու արդյունքում նաև եզրափակիչ մասի բովանդակային վերանայումը**:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄԸ

ՍԴՈ-1022, 18 ապրիլի, 2012 թ.

7. Դիտարկելով վերոհիշյալ իրավական կարգավորման կառուցակարգը՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսդիրը վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ընդունելիության հարցի լուծման առնչությամբ սահմանել է դատարանի լիազորությունների սպառիչ ցանկը, որոնց իրականացմամբ՝ դատարանը վարչական դատավարության հիշյալ փուլում պետք է իրավական գնահատական տա, թե արդյո՞ք հայցվորն իրավասու է դիմել դատարան, արդյո՞ք առկա է նրա մոտ դատարան դիմելու իրավական պահանջ, արդյո՞ք հայցվորը կարող է հանդիսանալ խախտման օբյեկտ հանդիսացող իրավունքի կրող: Սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում **բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը:** Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը,** այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը:

....

8. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.04.2010 թ. ՍԴՈ-873 որոշմամբ անդրադարձել է վարչական դատավարության համակարգում վճռաբեկ բողոքների **ընդունելիու-**

թյան հարցին: Հաշվի առնելով վերոհիշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելության փուլում **նյութական իրավունքի խախտման փաստի առկայության պարզումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կամ հերքումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների ու կողմերի իրավունքների պահպանմամբ, հակառակ դեպքում արդարացի դատաքննության իրավունքը կիմաստազրկվի:

Հետևաբար, վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես **նյութական իրավունքի խախտման առկայությունն ստուգելու՝** վարչական դատարանի պարտավորվածություն՝ դրանով **իսկ ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից**, սահմանափակելով վարչական դատարանի մատչելիությունը՝ դատական պաշտպանության սահմանադրաիրավական միջոցը դարձնելով անարդյունավետ: Այս փուլում, ինչպես նշվեց, դատարանի խնդիրն է ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը՝ տվյալ անձին ակնհայտորեն պատկանելու կամ չպատկանելու հանգամանքը:**

Նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստին դատարանը պարտավոր է անդրադառնալ դատաքննության փուլում: Հակառակ պարագայում տեղ կգտնի արդարադատության մերժման իրողությունը, ինչը կհակասի ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածների, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասի պահանջներին:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

4. .... Հաշվի առնելով պետական իշխանության համակարգում գործադիր և դատական մարմինների դերը և նշանակությունը, արդարադատության և կառավարման գործառույթների էությունը, դրանց առանձնահատկությունները, չի կարող իրավակարգավորման միևնույն ձևը կիրառվել դատական իշխանության կողմից ներհամակարգային վերահսկողության և գործադիր մարմինների գործունեության դատական վերահսկողության պարագաներում: ....

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1–ին մաս):

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բա-

ցառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

7. .... Նկատի ունենալով, որ դատական իշխանության համակարգում արդարադատական գործընթացի բոլոր փուլերն օրենքով կանոնակարգված են, որոշակիացված են բողոքարկման ընթացակարգերը, նախատեսված են դատական իշխանության բնականոն գործունեության որոշակի երաշխիքներ, այսուհանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական իշխանության պաշտոնատար անձանց անգործության վերացման արդյունավետ ձևերի հարցն օրենսդրական լրացուցիչ կանոնակարգման խնդիր ունի:

.... ՀՀ Ազգային ժողովն առավել հստակ պետք է սահմանի դատարանների, նրանց պաշտոնատար անձանց անգործության հետևանքով անձի խախտված իրավունքները դատավարական ողջամիտ ժամկետում վերականգնելու և պատճառված վնասը փոխհատուցելու արդյունավետ ընթացակարգեր, որոնց բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել նաև արդարադատության մատչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդ-

վածների, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի իմաստից:

ՍԴՈ–721, 18 դեկտեմբերի, 2007 թ.

10. Ուստի տեղական հանրաքվեն օրենքով թույլատրելի քննարկման հարցերի շրջանակով, և որպես համայնքային նշանակության հարցերի լուծման միջոց, տեղական ինքնակառավարման գործունեության վերահսկման ապահովման նույնքան կարևոր երաշխիք է, որքան պետական և հասարակական վերահսկողության՝ օրենքով նախատեսված մյուս ձևերը, որոնք ամբողջությամբ կոչված են համայնքներում ապահովելու մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների անխախտելիությունը:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

17. .... Իր հերթին, վարչական արդարադատության մասնագիտացված մարմինը կոչված է ապահովելու վարչական մարմինների գործունեության օրինականությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության միջոցով:

ՍԴՈ–844, 7 դեկտեմբերի, 2009 թ.

8 . .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի **պարտադիր** պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի **անգործությամբ** խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է:

....

Այսպիսով, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների **ընդհանուր նպատակի** (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարբեր առանձնահատկությունների մասին, հետևաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «....և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից և այդ գործառույթների սահմանադրաիրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբող-

ջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրաիրավական բովանդակությամբ և երաշխիք է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

ՍԴՈ–822, 11 մայիսի, 2010 թ.

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգիրքը հանցակազմի ընդհանուր սուբյեկտներից առանձնացնում է **հատուկ սուբյեկտներին**: Սուբյեկտի այս տեսակը, բացի երեք պարտադիր հատկանիշներից (ֆիզիկական անձ, մեղսունակություն և քրեական պատասխանատվության ենթարկելու տարիք), բնութագրվում է նաև ոչ պարտադիր հատկանիշներով, որոնք նախատեսված են օրենսգրքի Հատուկ մասի նորմերով: Սուբյեկտի ոչ պարտադիր հատկանիշները կամ ուղղակի նախատեսված են համապատասխան հանցակազմի դիսպոզիցիայում, կամ սահմանվում են մեկնաբանության միջոցով (օր.՝ պաշտոնատար անձի հասկացությունը՝ 308–րդ հոդվածի 3–րդ մասում): Հատուկ սուբյեկտն իր պաշտոնեական, ծառայողական կամ մասնագիտական գործունեության բերումով հանրորեն վտանգավոր այնպիսի գործողություն (անգործություն) կատարող անձն է (օր.՝ պաշտոնատար անձը, զինծառայողը, բժիշկը, դատավորը, դատախազը և այլն), որպիսին չեն կարող կատարել այլ անձինք: Այդպիսի անձանց հատուկ սուբյեկտներ ճանաչելը բխում է ոչ թե նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծնունդից, գույքային կամ այլ դրությունից, որը կհակասեր օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 14.1–րդ հոդվածի 1–ին մաս և օրենսգրքի 6–րդ հոդված), այլ, որովհետև հանրորեն վտանգավոր նման արարքները կարող են կատարվել միայն այդ անձանց կողմից:

ՍԴՈ–896, 15 հունիսի, 2010 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221–րդ հոդվածի երկրորդ մասի 3–րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսևորելը» բառակապակցությունը մեկնաբանել է **որպես ցանկացած գործողություն կամ անգործություն՝ կատարված պաշտոնատար անձի կողմից, որը նախատեսված չէ օրենքով և կատարվել է դրա պահանջների խախտմամբ:** Այսինքն՝ վերաքննիչ դատարանը «կամայականություն» եզրույթի նման մեկնաբանությամբ կամայական գործողության բովանդակությունն ըստ էության նույնացրել է ապօրինի գործողության բովանդակության հետ:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

7. .... Սույն խնդիրը համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն ունի, որը պետք է, մի կողմից, հաշվի առնի, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետևանքով: Մյուս կողմից՝ արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը և նրա խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի էությունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուպ արգելափակել այն:

ՍԴՈ–942, 22 փետրվարի, 2011 թ.

5. .... Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ–719, ՍԴՈ–721, ՍԴՈ–780, ՍԴՈ–844, ՍԴՈ–882 որոշումներում կարևորել է վարչական մարմինների **անգործության** դեմ դատական պաշտպանության անհրաժեշտությունը, առանց որի լիարժեք չի լինի իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգը:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի տարբերություն օրենսգրքի 1–ին, 3–րդ և 70–րդ հոդվածների, օրենսգրքի 68–րդ հոդվածի 3–րդ մասում դրսևորվել է անհետևողական մոտեցում՝ «վարչական ակտ» և «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ չի շեշտվել «անգործություն» եզրույթը: Սակայն օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանությունից բխում է, որ այն իրավակիրառական պրակտիկայի կողմից չպետք է մեկնաբանվի ի վնաս մարդկանց իրավունքների պաշտպանության:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68–րդ հոդվածի 3–րդ մասն օրենսգրքի այլ նորմերի համակարգային վերլուծության տրամաբանությամբ ենթադրում է նաև վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության դեպքերը,** և իրավակիրառողը պետք է ելնի օրենսգրքի 68–րդ հոդվածի 3–րդ մասում ամրագրված իրավանորմի նման մեկնաբանությունից, հաշվի առնելով, որ.

ա) օրենսգրքի 1–ին և 3–րդ հոդվածներով սահմանված՝ օրենսդրի նպատակից և իրավակարգավորման ուղղվածությունից բխում է, որ նշված հոդվածները դատական պաշտպանության հնարավորություն են նախատեսում նաև վարչական մարմնի **անգործության** պարագայում,

բ) օրենսդիրն օրենսգրքի 70–րդ հոդվածում «վարչական ակտ» և «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ **ճանաչման հայցին է հավասարապես վերագրում նաև «անգործություն»** եզրույթը:

ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ

ՍԴՈ–787, 3 փետրվարի, 2009 թ.

6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին խմբագրությամբ 15 հոդվածի 2–րդ կետի 2–րդ ենթակետի վերլուծությունից բխում է, որ վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթ ունեցող տարբեր, սակայն միմյանց հետ փոխկապակցված իրավահարաբերություններից ծագող գործերն օրենսդիրը դիտարկում էր որպես մեկ գործ, որը ենթակա էր քննության միևնույն դատարանի կողմից, և որի ընթացքում դատարանին դատավարական հնարավորություն էր ընձեռվում հիմնական հայցապահանջը բավարարելիս, այն է՝ վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունից ծագող վեճը հայցվորի օգտին լուծելիս անդրադառնալ նաև հիմնական հայցապահանջի իրավական հետևանքները վերացնելու հարցին, այսինքն՝ վարչաիրավական հարաբերության հետ փոխկապակցված քաղաքացիաիրավական հարաբերությունից կամ, ընդհակառակն, քաղաքացիաիրավական հարաբերության հետ փոխկապակցված վարչաիրավական հարաբերությունից ծագող վեճի ողջամիտ ժամկետում ամբողջական լուծմանը: Այդպիսին է եղել նաև դատական պրակտիկան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ո՛չ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ո՛չ էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չեն սահմանում տարբեր, մասնավորապես, վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների ընդդատության կանոնները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

ընդունմամբ առաջացել է մի իրավիճակ, երբ դատական պաշտպանության իրավունքն իրականացվում է միաժամանակ տարբեր դատական մարմիններում և որի ընթացքում գործում են երկու տարբեր դատավարական օրենսգրքեր: Այսինքն, ի տարբերություն նախորդ իրավակարգավորումների, ներկա իրավակարգավորումների պարագայում վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններից ծագող գործն օրենսդիրն արդեն դիտարկում է որպես առնվազն երկու գործ, որոնք ենթակա են քննության տարբեր դատարանների կողմից, և որի ընթացքում համապատասխան դատարաններին այլևս դատավարական հնարավորություն չի ընձեռվում հայցապահանջը բավարարելիս, այն է՝ վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունից ծագող վեճը հայցվորի օգտին լուծելիս անդրադառնալ նաև տվյալ հայցապահանջի իրավական հետևանքների վերացման հարցին, այսինքն՝ վարչաիրավական հարաբերության հետ փոխկապակցված քաղաքացիաիրավական հարաբերությունից կամ, ընդհակառակն, քաղաքացիաիրավական հարաբերության հետ փոխկապակցված վարչաիրավական հարաբերությունից ծագող վեճի լուծմանը:

7. .... Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների առկայության հնարավորությունը հաշվի չառնելու համատեքստում այդ թերությունն առկա է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որի սահմանադրականության հարցի լուծումը սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանի իրավասությունը չէ, ուստի անհրաժեշտ է Ազգային ժողովի ուշադրությունը հրավիրել օրենսգրքի նշված բացի լրացման անհրաժեշտության վրա:

8. ՀՀ Սահմանադրության 19 հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածը սահմանում են անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները: Վերջիններս իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը:

Խնդրո առարկա իրավակարգավորումը՝ անձի դատական պաշտպանության արդյունավետության ապահովման և դատավարական սահմանադրական ու օրենսդրական երաշխիքների պահպանման տեսանկյունից գնահատելու նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածում «.... իր խախտված իրավունքները վերականգնելու համար .... իր գործի .... քննության իրավունք» ձևակերպման սահմանադրաիրավական բովանդակությունը:

Նշված սահմանադրական դրույթում «իր խախտված իրավունքները վերականգնելու» և «իր գործի» ձևակերպումների համադրված վերլուծությունը վկայում է, որ «իր գործի քննություն» հասկացությունը ներառում է բոլոր այն փոխկապակցված հայցապահանջների համակցված քննությունը, որոնք նպատակաուղղված են մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ այդ գործի շրջանակներում անձի խախտված իրավունքի վերականգնմանը:

Վերոնշյալը նշանակում է, որ ինչպես ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով և ներպետական դատավարական օրենսդրությամբ սահմանված երաշխիքները պետք է ապահովվեն ոչ միայն այս կամ այն կոնկրետ հայցապահանջի քննության շրջանակում և համատեքստում, այլ նաև տվյալ խախտված իրավունքի վերականգնմանը միտված՝ տարաբնույթ փոխկապակցված հայցապահանջների քննության շրջանակում և համատեքստում, քանզի այդ հայցապահանջների վերջնական նպատակը մեկն է՝ միևնույն խախտված իրավունքի ամբողջական վերականգնումը: Հետևաբար, անձի միևնույն խախտված իրավունքի վերականգնմանն ուղղված փոխկապակցված հայցապահանջների դիտարկումը որպես միմյանցից տարանջատված առանձին և ինքնուրույն գործե-

րի հարուցման հիմքեր, կարող է հանգեցնել անձի գործի արդյունավետ, ամբողջական և բազմակողմանի քննության ապահովման դատավարական երաշխիքների խախտման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով աճանցյալ իրավահարաբերությունից ծագող, այսինքն՝ հիմնական իրավահարաբերության իրավական հետևանքների վերացմանն ուղղված պահանջը դատարան առանձին ներկայացնելու դեպքում դատարանը գործնականում զրկվում է տվյալ գործի վերաբերյալ արդարացի որոշում կայացնելու հնարավորությունից, խախտվում է անձի արդար դատաքննության իրավունքը, քանի որ արդար որոշում կայացնելու համար դատարանն ստիպված է իրականացնել գործի հանգամանքների լիարժեք, օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրություն, իսկ այդպիսի ուսումնասիրության համար դատարանը պետք է անդրադառնա հիմնական իրավահարաբերությանը, սակայն գործող իրավակարգավորումը դա թույլ չի տալիս, քանի որ տվյալ իրավահարաբերությունից ծագող գործն ընդդատյա է ոչ թե տվյալ դատարանին, այլ մեկ այլ դատարանի: Սահմանադրական դատարանը նման իրավակարգավորումը համարում է ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ դատարանի կողմից գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման հիմք և դատական պաշտպանության ոչ արդյունավետ միջոց:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-780, 25 նոյեմբերի, 2008 թ.

12. ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածին, մասնավորապես նշել է, որ օրենսդիրն ազատ է մասնագիտացված դատարանների պարագայում սահմանելու վերաքննիչ ատյան: Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում Սահմանադրության 92 հոդվածի նշված մեկնաբանությունը դիտարկել ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներում ամրագրված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների համատեքստում: Այս սահմանադրական դրույթների համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդրի հայեցողությանն է թողնված վարչական արդարադատության շրջանակներում վերաքննիչ ատյանի ստեղծման հարցի լուծումը, այնուամենայնիվ, օրենսդիրն իր այս հայեցողությունն իրացնելիս պետք է առաջնորդվի մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ պաշտպանության և այդ իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի՝ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև նշված հանձնարարականը չի ճշգրտում երկաստիճան վարույթի բաղկացուցիչ տարրերը՝ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանների միջև ընտրության հարցի լուծումը թողնելով անդամ պետությունների հայեցողությանը, այնուամենայնիվ, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հետևողականորեն կիրառվող՝ իրավունքների արդյունավետ մեկնաբանության սկզբունքը, այնպես էլ հանձնարարականի նպատակն ու առարկան ուղղված են նրան, որ վարչական արդարադատության ոլորտում դատական երկաստիճան համակարգը լինի այնքան կենսունակ և արդյունավետ, որ կարողանա ապահովել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը և նվազագույնի հասցնի դատական սխալների հավանականությունը:

ՍԴՈ–936, 8 փետրվարի, 2011 թ.

7. .... Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՍԴՈ–652, ՍԴՈ–665, ՍԴՈ–673, ՍԴՈ–719, ՍԴՈ–758, ՍԴՈ–780 և այլն) կարևորել է դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովումը, այդ թվում՝ վարչական արդարադատության բնագավառում, խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության նպատակներին, այնպես էլ ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու և ապահովելու տեսանկյունից: Մասնավորապես ընդգծվել է դատական բողոքարկման իրավունքի, որպես դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչի, այնպիսի իրացման անհրաժեշտությունը, որով կապահովվի «....այդ իրավունքի արդյունավետ իրացումը և նվազագույնի հասցվի դատական սխալների հավանականությունը» (ՍԴՈ–780): Սահմանադրական դատարանը նաև կարևորել է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կատարելու, մասնավորապես՝ մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը ներպետական միջոցներով, այդ թվում՝ դատական, ապահովելու, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (2004) 20 հանձնարարականի հիման վրա վարչական ակտերի նկատմամբ դատական արդյունավետ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ «....ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները .... որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի պահանջներին»:

Վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141–րդ հոդվածի 1–ին մասի դրույթը, որով ամբողջությամբ բացառվում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի ակտերը դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու հնարավորությունը, չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, մարդու խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի իրացման սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին: Այն չի համապատասխանում նաև ՀՀ իրավական համակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած, ի կատարումն ՍԴՈ–780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ–ում վարչական արդարադատության համակարգը համալրվեց և ներդրվեց դատական բողոքարկման նոր համակարգ, այնուամենայնիվ, բողոքարկման գործող ընթացակարգը, մասնավորապես՝ հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, չենթարկվեց համապատասխան փոփոխությունների, որի արդյունքում սահմանափակվեց այդպիսի գործերով արդար, մատչելի և արդյունավետ դատական պաշտպանության՝ անձանց սահմանադրական իրավունքը: Սույն գործով պատասխանող կողմի դիրքորոշումն այն մասին, թե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական նորմերի նշանակությունն ու կարևորությունը դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանում է երկրորդական նշանակություն, չի բխում արդարադատության սահմանադրաիրավական բովանդակությունից, սահմանադրական դատարանի որոշումներից, ինչպես նաև ՀՀ իրավահամակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման ընդհանուր հայեցակարգից: Դատարանի՝ դատավարական կարգի խախտումով ընդունած

որոշումը չի կարող համարվել լեգիտիմ ու արդարադատության պահանջներին համապատասխանող:

ՍԴՈ–1210, 26 մայիսի, 2015 թ.

5. .... Հիմնական եզրահանգումն այն է, որ **օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ոտնահարում կամ սեփականությունից զրկում: Էականը՝ վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցի երաշխավորումն է:**

ՍԴՈ–1222, 26 հունիսի, 2015 թ.

9. Սահմանադրական դատարանն իր՝ տարբեր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներին չհամապատասխանող և ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից անթույլատրելի է համարում նաև պատասխանող կողմի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ ուժի մեջ մտած դատական ակտի վիճարկելիությունը նոր երևան եկած հանգամանքով հիմնավորող այս կամ այն ապացույցի առկայության դեպքում «ոչ թե պետք է դատարանի կողմից վերանայվի նախկինում կայացված դատական ակտը, այլ համապատասխան փաստական հանգամանքի շրջանակում վարչական մարմնի կողմից վերանայվի նախկինում կայացրած վարչական ակտը»: Այսինքն, ուժի մեջ մտած դատական ակտը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու հետ կապված իրավահարաբերության կարգավորման, և, ի վերջո՝ դատական տվյալ ակտի օրինականության վիճարկման, նոր երևան եկած հանգամանքի ուժով առաջացած դատական սխալն ուղղելու և գործին արդար լուծում տալու խնդրում առաջնային նշանակություն է տրվում արտադատական միջոցին:

Չանդրադառնալով վարչական դատավարության և վարչական վարույթի՝ օրենքով սահմանված նպատակների ու խնդիրների, ինչպես նաև իրավական այդ գործընթացների, դրանց իրավակարգավորիչ ընդհանուր դերի սահմանադրական բովանդակության մեկնաբանմանը՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ իր՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-954 և մի շարք այլ որոշումներում, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին, սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից **ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն է նաև իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումը**: Սահմանադրական դատարանը գտել է, որ **այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ**: Հետևաբար, սույն գործով, ելնելով նաև պատասխանող կողմի պնդումներից, սահմանադրական դատարանը վերահաստատում է իր վերոհիշյալ դիրքորոշումը: Եթե որպես «նոր երևան եկած» հանգամանք գնահատելի այլ փաստարկների (ապացույցների) հիմքերով դատական ակտի օրինականությունը կասկածահարույց է, ապա օրենսդիրը պարտավոր է սույն գործով վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում ոչ թե սահմանափակել նման ակտի վիճարկման իրավական հնարավորությունը, որն ուղղակի սահմանափակում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի իրավունքներն ու դրանց դատական պաշտպանության հնարավորությունը, այլ ընդլայնել որպես «նոր երևան եկած» գնահատելի այլ հանգամանքները դատավարական համապատասխան գործընթացների շրջանակներում քննելու և դրանց իրավագնահատման արդյունքում գործին արդար լուծում տալու միջոցները՝ ապահովելով անձի իրավունքների պաշտպանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ

հոդվածների և 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 18-րդ և 19-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե անձն իր իրավունքների պաշտպանության նպատակով չի դիմել դատարան, այլ ընտրել է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ օրենքով նախատեսված արտադատական միջոց (տվյալ դեպքում՝ վարչական մարմնին), նման իրավակարգավորումն ինքնին չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների սահմանափակման:

ՍԴՈ-1238, 1 դեկտեմբերի, 2015 թ.

.... Վերը նշված դրույթից բխում է, որ վարչական դատարանում կոնկրետ դեպքում՝ **անհատական վարչական ակտի** վիճարկման վերաբերյալ գործի քննության ժամանակ դատարանը որոշում է այն նորմատիվ իրավական ակտերի շրջանակը, որոնց հիման վրա ընդունվել է **անհատական վարչական ակտը,** ինչպես նաև պարզում է **անհատական վարչական ակտի** ընդունման պահին վերը նշված նորմատիվ իրավական ակտերի՝ ուժի մեջ գտնվելու հանգամանքը: Այսինքն՝ վարչական դատարանը պարզում է, ի թիվս այլնի, համապատասխան նորմատիվ իրավական ակտի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի համապատասխան որոշումների առկայությունը: Այստեղից էլ բխում է, որ եթե վարչական դատարանում **անհատական վարչական ակտի** վիճարկման վերաբերյալ գործի քննության ժամանակ առկա է սահմանադրական դատարանի համապատասխան որոշում, որով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել **անհատական վարչական ակտի** ընդունման համար հիմք հանդիսացած նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը), կամ տվյալ նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը) ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ, կամ առկա է վարչական դատարանի համապատասխան որոշում, որով տվյալ նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը) ճանաչվել է անվավեր, և **անհատական վարչական ակտն** ընդունվել է վերը նշված նորմատիվ իրավական ակտի հիման վրա, ապա վարչական դատարանում վիճարկվող **անհատական վարչական ակտը** համարվում է օրենքին, մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին հակասող: Այստեղից էլ բխում է, որ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում, որպես **կոնկրետ դեպքում, անհատական վարչական ակտի** անվավերության հիմք նշված՝ օրենքին հակասելու վերաբերյալ դրույթը միաժամանակ ներառում է նաև **անհատական վարչական ակտի**՝ այլ նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին հակասելու հանգամանքը, և բացակայում է **անհատական վարչական ակտի** անվավերության հիմքերի շարքում այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի համապատասխան որոշումների վերաբերյալ դրույթներ ամրագրելու անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի որոշումները համապատասխանաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում **պարտադիր են** բոլորի համար:

Բացի դրանից, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, ի թիվս իրավակիրառողների համար իրավասություն սահմանող

այլ իրավական ակտերի, անուղղակիորեն սահմանում է պարտականություն՝ վարչական ակտ ընդունելիս կանխատեսել դրա անվավերության հիմքերը, այն է՝ տվյալ վարչական ակտի **ոչ միայն ընդունման կարգին, այլ բովանդակությանը** վերաբերող օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի, այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ վարչական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների և վճիռների պահանջների պահպանվածությունը և վարչական ակտն ընդունել միայն այդ պահանջների պահպանվածության հանգամանքի մասին հավաստիանալուց հետո: Այսինքն՝ ի թիվս այլնի, հիմք ընդունել **ոչ միայն տվյալ վարչական ակտն ընդունելու իրավասություն սահմանող օրենքը և այլ նորմատիվ իրավական ակտ (նրա համապատասխան դրույթները), այլ նաև հաշվի առնել տվյալ վարչական ակտի բովանդակությանն առնչվող այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի և, մասնավորապես,** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 66-րդ հոդվածներով սահմանված իրավակարգավորումները, տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացող նորմատիվ իրավական ակտի վերաբերյալ սահմանադրական դատարանի և վարչական դատարանի որոշումները, ինչպես նաև վարչական ակտի հասցեատիրոջ՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը:

Անդրադառնալով դիմողի երկրորդ փաստարկին՝ կապված վարչական դատարանի լիազորության հետ՝ **ի պաշտոնե ստուգելու կիրառման ենթակա անհատական վարչական ակտի** համապատասխանությունը ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վճռի պատճառաբանական մասը բովանդակում է՝ .... 3) եզրահանգում՝ կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք դատարանը վերաբերելի է համարում»: Օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ վերը նշված դրույթներից բխում է, որ վարչական դատարանում կոնկրետ գործի քննության ընթացքում կիրառելի իրավունքի շրջանակներում ընդգրկվում են կամ կիրառման ենթակա իրավական ակտեր են համարվում բացառապես միջազգային պայմանագրերը, օրենքները, նորմատիվ իրավական ակտերը, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Հետևաբար, վարչական դատարանում կոնկրետ գործի քննության շրջանակներում **անհատական վարչական ակտերը** չեն հանդիսանում տվյալ գործով կիրառման ենթակա ակտեր և չեն ներառվում տվյալ գործով կիրառելի իրավունքի շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսգիրքը չի պարունակում որևէ նորմ, որը վարչական դատարանին հնարավորություն կընձեռեր մեկ այլ գործի քննության շրջանակներում քննության առարկա դարձնելու տվյալ գործի լուծման համար էական նշանակություն, սակայն **տվյալ գործով հայցի առարկա չհանդիսացող** մեկ այլ անհատական վարչական ակտի իրավաչափության հարցը: Այսինքն՝ օրենսդրի տրամաբանությունը հիմն-

ված է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի, այդ թվում՝ նաև անհատական վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի վրա, ինչը բացառում է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի իրավաչափությունը մեկ այլ գործի քննության ընթացքում գնահատելու հնարավորությունը՝ ելնելով վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎՃՌԱԲԵԿ ՎԱՐՈՒՅԹ

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

9. ՀՀ դատական օրենսգրքի հիման վրա վարչական դատարանի ստեղծմամբ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում 2008 թ. հունվարի 1–ից ներդրվեց մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտը: Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 3–րդ հոդվածի՝ վարչական դատարանը հանդիսանում է մասնագիտացված առաջին ատյանի դատարան, որն ըստ էության քննում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը: Ի տարբերություն ՀՀ դատական օրենսգրքով ստեղծված մյուս, այսպես կոչված, մասնագիտացված՝ քրեական և քաղաքացիական առաջին ատյանի դատարանների, վարչական դատարանի ակտերի բողոքարկման վերաքննիչ ատյան նախատեսված չէ. վարչական դատարանի ակտերը կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով: ....

14. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի անարդյունավետությունը պայմանավորող գործոն է հանդիսանում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 115–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքն իրավական հիմք է հանդիսանում այդ ակտի կատարման, այդ թվում հարկադիր կատարման գործընթաց նախաձեռնելու համար: Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական թերթ տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում: Վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված է եռամսյա ժամկետ: Այսինքն՝ գործնականում հնարավոր է, որ մինչև վճռաբեկ բողոք բերելը վարչական դատարանի ակտն արդեն կատարված լինի: Նման պայմաններում վճռաբեկության կարգով բողոքարկումը կարող է դառնալ իմաստազուրկ և բացառել բողոքարկող կողմի համար անդառնալի բացասական հետևանքները կանխելու հնարավորությունը՝ դրանով իսկ պայմանավորելով վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ ատյանի, անարդյունավետությունը: ....

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաև խախտում է իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության 1–ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստազրկվում է դատական ակտի օ-

րինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու և դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

Սահմանադրական դատարանը որպես վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության և արդյունավետության վրա ազդող գործոն է դիտարկում նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին վերաքննիչ դատարանի որոշման, վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշումը բողոքարկելու հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ: Այսինքն՝ այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, անձը զրկված լինելով այն բողոքարկելու հնարավորությունից, ըստ էության ոչ միայն զրկվում է նման որոշման դեմ պաշտպանության միջոցից, այլ նաև նրա գործի քննությունը փաստացիորեն սահմանափակվում է միայն առաջին ատյանի դատարանի շրջանակներում: ....

15. Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008 թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներին հակասող է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն դրույթները, որոնք թույլ էին տալիս վճռաբեկ բողոք ներկայացնել միայն վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված որոշման եզրափակիչ մասի 7-րդ կետի ուժով այդ դրույթները ժամանակավորապես պահպանում են իրենց ուժը, սահմանադրական դատարանը որպես վարչական գործերով վճռաբեկ ատյանի մատչելիությունը պայմանավորող գործոն է համարում նաև վարչական արդարադատության երկաստիճան համակարգում բողոքարկման միակ ատյան դիմելու համար հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելու պարտադիր պահանջը: Նման պահանջի առկայությունը երկաստիճան դատական համակարգում է՛լ ավելի է խաթարում դատական պաշտպանության արդյունավետ իրավունքի էությունը, քանզի, եթե եռաստիճան համակարգում անձը վերաքննիչ ատյանում օգտվում է անմիջական բողոքարկման հնարավորությունից, ապա վարչական արդարադատության ոլորտում անմիջական բողոքարկման հնարավորությունն ամբողջովին բացակայում է:

16. Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետևաբար, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ դատարանի մատչելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսևորումը: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ դատարանում կարող է ունենալ երկու հիմնական դրսևորում, այն է՝ գործերի քն-

նությունը մասնագիտացված առանձին միավորի կողմից, և երկրորդ՝ գործերի քննության կազմակերպումը վարչական արդարադատության առանձնահատկություններին համապատասխան: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության կապակցությամբ մասնագիտացման գործոնի նշված երկու դրսևորումներն էլ որևէ կերպ արտահայտված չեն:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածը, մատնանշելով ՀՀ վճռաբեկ դատարանի պալատները և ընդհանուր գծերով սահմանելով ՀՀ վճռաբեկ դատարանի ներքին կառուցվածքը, կատարել է ոչ միայն կառուցվածքային, այլ նաև գործառութային տարանջատում: Վճռաբեկ դատարանի ներքին կառուցվածքի կանխորոշումը սահմանադրի կողմից՝ այդ դատարանի պալատների առանձնացումը, նշանակում է այդ պալատներից յուրաքանչյուրին արդարադատություն իրականացնելու հատուկ լիազորության տրամադրում: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգիրքը (հոդվածներ 18 և 53), հաշվի չառնելով այդ հանգամանքը, վճռաբեկ դատարանի պալատների լիազորություններն ու գործառույթը սահմանափակել է միայն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցի լուծմամբ: Վճռաբեկ դատարանը բողոքի կապակցությամբ ըստ էության որոշում է կայացնում լիագումար կազմով, որտեղ պալատը հանդես չի գալիս որպես մասնագիտացված միավոր. վարչական դատարանի ակտերի դեմ բերված բողոքների առնչությամբ ըստ էության որոշումներն ընդունվում են քրեական պալատի և քաղաքացիական ու վարչական պալատների դատավորների մասնակցությամբ: Նման պայմաններում, վճռաբեկ դատարանում վարչական գործերով արդարադատությունը զրկվում է իր առարկայական բնույթից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ: Սահմանադրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն ունենա լիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող և լուծող մասնագիտացված համապատասխան պալատ: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ վարույթում բացակայելու արդյունքում վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետևաբար նաև՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ խաթարվում է և զրկվում արդյունավետությունից:

17. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտի անկատարությունը կայանում է ոչ միայն նրանում, որ մասնագիտացման գործոնը որևէ դրսևորում չի ունեցել վարչական դատարանի ակտերի բողոքարկման ատյանում: Համակարգային անկատարությունը դրսևորվում է նաև օրենսգրքի 135-րդ հոդվածում:

ՀՀ Սահմանադրությունը տարբերակում է սահմանադրական և ընդհանուր արդարադատության գործառույթները՝ սահմանադրական արդարադատության գործառույթը 93-րդ հոդվածով ուղղակիորեն վերապահելով սահմանադրական դատարանին: Սահմանադրությամբ նախանշված նման տարանջատումը սահմանադրական և ընդհանուր արդարադատության գործառույթների միջև ապահովում է արդարադատության ողջ համակարգի գործառնական դինամիկ հավասարակշռությունը: Ընդ որում, սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված սահմանադրական արդարադատության միջոցով ապահովել ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը: Իր հերթին, վարչական արդարադատության մասնագիտացված մարմինը կոչված է ապահովելու վարչական մարմինների գործունեության օրինականությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբա-

նական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության միջոցով:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական և սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 և 94-րդ հոդվածների պահանջներից և երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում:

Սահմանադրական դատարանը՝ նկատի ունենալով, որ այս պարագայում կիրառելի չէ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասը, ուստի կարևոր է համարում, որպեսզի ՀՀ Ազգային ժողովն ուշադրություն դարձնի այս հիմնախնդրին:

ՍԴՈ-873, 13 ապրիլի, 2010 թ.

7. Վիճարկվող 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում տեղ են գտել քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգին բնորոշ իրավակարգավորումներ, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ներկայումս գործող **երկաստիճան համակարգում** վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն **վճռաբեկ դատարանի մատչելիության** և **արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման** երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի, կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ: Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով: Ուստի նրա որևէ կառուցակարգային կարգավիճակ չի կարող լիազորության լիարժեք կատարման խոչընդոտ հանդիսանալ: Միաժամանակ, սահմանադրական իրավակարգավորման առանցքային խնդիրներից մեկը հենց այն է, որպեսզի երաշխավորվի «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի օրգանական ամբողջականությունն ու լիարժեքությունը: Եթե օրենսդիրն անհրաժեշտ է համարել Հայաստանում ձևավորել մասնագիտացված վարչական դատարան՝ միայն դատական մեկ աստիճանով, իսկ վերջինիս ակտերի բողոքարկման իրավասությունը վերապահել վճռաբեկ դատարանին, ապա բողոքարկման համակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը նույնպես պետք է երաշխավորվի այս կառուցակարգային լուծումների շրջանակներում: Մասնավորապես, դա վերաբերում է նաև բողոքների ընդունման ու դրանց ըստ էության քննության առանձնահատկություններին:

Հետևաբար, վիճարկվող դրույթում վճռաբեկ դատարանի կարգավիճակի վկայակոչմամբ բողոքի ընդունելիության այնպիսի պայմաններ չեն կարող սահմանվել, ինչը կարող է արդյունավետ չդարձնել ու սահմանափակել անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակը, այդ հնարավորության ապահովման անհրաժեշտությունից թելադրված պետք է փնտրվեն ու գտնվեն դատարանակազմական լուծումները:

Մասնավորապես, վարչական դատարանի ակտերի վերաբերյալ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքում պետք է դրվի ոչ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233–րդ հոդվածի, այլև՝ 213–րդ հոդվածի իրավակարգավորման տրամաբանությունը՝ նախատեսելով դրա իրացման համապատասխան երաշխիքներ: ....

9. .... Ավելին, սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118–րդ հոդվածը (նոր խմբագրությամբ) ընդհանրապես թույլ չի տալիս հղում կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն նորմերին, որոնք սահմանում են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:

Արդարադատության արդյունավետությունը ենթադրում է **թույլատրելի ճանաչված վճռաբեկ բողոքների ըստ էության քննություն** վճռաբեկ դատարանում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ և վարչական արդարադատության առանձնահատկությունների հաշվառմամբ: Թույլատրելիության հարցի լուծման ժամանակ բուն արդարադատության կանխորոշումն իմաստազրկում է դրա արդյունավետությունը, իսկ **բողոքի թույլատրելիության հիմքը շփոթվում է վարչական դատարանի ակտի բեկանման հիմքի հետ**: Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարադատության նման ձևականացումն անհամատեղելի է դրա սահմանադրական իմաստի հետ:

ՍԴՈ–943, 25 փետրվարի, 2011 թ.

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից որպես նոր հանգամանք ճանաչելու հարցը թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական և թե՛ վարչական դատավարությունում **համալիր ու անհետաձգելի** կարգավորման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ–1007, 22 դեկտեմբերի, 2011 թ.

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև օրենքի վիճարկվող դրույթը դիտարկել վարչական մարմինների հնարավոր կամայականությունների տեսանկյունից՝ հիմք ընդունելով վարչական ակտի օրինականության իրավաբանորեն հերքելիության կանխավարկածը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 1–ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ անհիմն կերպով պատասխանատվության չենթարկվելու սկզբունքը: Այս կապակցությամբ, հիմք ընդունելով դիմողի դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ վարչական ակտերի **դատական կարգով** բողոքարկման դեպքում հարկային իրավահարաբերությունների շրջանակներում վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորմանը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման դեպքում օրենսդիրը հստակորեն հայեցողություն է վերապահում վարչական բողոքը քննող վարչական մարմնին՝ վարչական մարմնի գործողությունը կասեցնելու հարցում, ապա վարչական ակտերի դատական բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորությունը կարող է ապահովվել հայցի ապահովման միջոցի ինստիտուտի կիրառմամբ:

.... Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով բողոքարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում անձի խախտված իրավունքները վերականգնելուն ուղղված վերոհիշյալ համապատասխան օրենսդրական երաշխիքների առկայությունը, ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով բողոքարկման դեպքում վարչական ակտի

կատարումը կասեցնելու հնարավորությունը՝ գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ և համապատասխան երաշխիքների միջոցով ապահովում է հավասարակշռություն հարկային պարտավորության բարեխիղճ կատարումն ապահովելու նպատակի և անձի իրավական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման միջև:

ՍԴՈ–1190, 10 փետրվարի, 2015 թ.

9. .... Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Սակայն դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացմանն արգելք հանդիսանալ:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՈՒՅԹԸ

ՍԴՈ–852, 19 հունվարի, 2010 թ.

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 3–րդ մասում ամրագրված իրավունքի իրացման հնարավորությունները պայմանավորված են դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկություններով և այդ համակարգում յուրաքանչյուր դատական ատյանի գործառնական դերով:

ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 3–րդ մասում ամրագրված դատավճիռների վերանայման իրավունքը դիտարկելով ՀՀ եռաստիճան դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկությունների, ինչպես նաև ՀՀ ստանձնած վերոհիշյալ միջազգային պարտավորությունների հետ համադրության մեջ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ **քրեական մեղադրանքի որոշումը չի կարող սահմանափակվել միայն մեկ ատյանի դատարանի կողմից քրեական գործի քննության շրջանակներով:** Հետևաբար, հաշվի առնելով առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռները վերաքննիչ դատարան բողոքարկելու՝ օրենքով սահմանված կարգն ու վերաքննիչ դատարանի լիազորությունները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռների՝ վերաքննիչ դատարան բողոքարկման միջոցով իրացվում է վերադաս դատարանի կողմից անձի նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունքը :

Ինչ վերաբերում է վճռաբեկության կարգով վերաքննիչ դատական ակտերի վերանայմանը, ապա վերջինս հանդես է գալիս որպես վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը շտկելու դատավարական երաշխիք, որի միջոցով վճռաբեկ դատարանն իրացնում է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթը, և վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման դեպքում վերանայման իրավունքի իրացման հնարավորությունն իրավաչափորեն սահմանափակվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և գործառնական դերով:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով 2009 թ. սեպտեմբերի 22–ի ՍԴՈ–832 որոշման մեջ ամրագրված իր այն դիրքորոշումը, որ պետական ցանկացած մարմնի կարող է տրվել այս կամ այն լիազորությունը, որն անհրաժեշտ է նրա առջև դրված խնդիր-

ները լիարժեք լուծելու համար, եթե դրանք համապատասխանում են տվյալ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակին և սահմանադրորեն ամրագրված ու երաշխավորված արժեքներին, ինչպես նաև հաշվի առնելով վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայման առարկան և վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները, գտնում է, որ վերաքննիչ դատարանին սույն գործով վեճի առարկա լիազորության տրամադրումը վերաքննիչ վարույթի տրամաբանության շրջանակներում է և միտված է վերաքննիչ դատարանի կողմից արդյունավետ արդարադատության իրականացման ապահովմանը: Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վերաքննիչ դատարանին վիճարկվող լիազորությունը վերապահելը նպատակ է հետապնդել կանխելու դատական շրջապտույտը: Նման լիազորության միջոցով դատական շրջապտույտի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը:

ՍԴՈ–890, 25 մայիսի, 2010 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների այն հարցադրումը, համաձայն որի՝ մի պահանջի առնչությամբ պետական տուրքի վճարումը պետք է հիմք հանդիսանա վերաքննիչ բողոքն ամբողջությամբ քննության ընդունելու համար, անհիմն է, պայմանավորված չէ վերաքննիչ դատարանի գործառույթով ու անիրագործելի է:

ՍԴՈ–896, 15 հունիսի, 2010 թ.

7. .... Վերաքննիչ ատյանի դատարանների՝ դատական համակարգում ունեցած դերով են պայմանավորված դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքում համապատասխանաբար ՀՀ վերաքննիչ քրեական և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարաններին, ի լրումն այլ լիազորությունների, իրավունք է վերապահվում վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել անփոփոխ թողնված դատական ակտը, եթե դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ՝ դրանով իսկ երաշխավորելով առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի ինչպես հիմնավորվածությունը, այնպես էլ հնարավորինս լիարժեք ընկալումն ու մատչելիությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող լիազորությունը վերապահված է նաև ՀՀ վճռաբեկ դատարանին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով: Բացի դրանից, համանման նորմեր տեղ են գտել նաև ՀՀ դատական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերում:

.... Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը, նախատեսելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ խնդրո առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք, ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչներ: Այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն **ըստ էության ճիշտ լուծող** դատական ակտ, սակայն այն «....թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ»: Նման գործը վերաքննության կարգով վերանայելիս ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը **պարտավոր է** առաջին ատյանի դատական ակտի պատճառաբանությունները լրացնել նոր պատճառաբանություններով, եթե այդ ակտը թերի է պատճառաբան-

ված, ճիշտ պատճառաբանել, եթե այդ ակտը սխալ է պատճառաբանված, կամ պատճառաբանել, եթե այդ ակտն ընդհանրապես պատճառաբանված չէ:

ՍԴՈ–1004, 6 դեկտեմբերի, 2011 թ.

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208–րդ հոդվածի 3–րդ մասի սահմանադրականությունը գնահատել սահմանափակ վերաքննության ինստիտուտին բնորոշ առանձնահատկությունների համատեքստում:

.... Սահմանափակ վերաքննության ինստիտուտի հիմնական առանձնահատուկ բաղադրիչն այն է, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և, ըստ այդմ, դատական ակտը վերանայվում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Սահմանափակ վերաքննության բաղադրիչներից է նաև վերաքննիչ դատարանի կողմից նոր ապացույցներ ընդունելու և հետազոտելու հնարավորության բացակայությունը: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219–րդ հոդվածի 2–րդ մասի՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին:

....

6. Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208–րդ հոդվածի 3–րդ մասի պահանջը դիտարկել նույն օրենսգրքով սահմանված՝ կողմերի դատավարական պարտականությունների, ինչպես նաև վերաքննիչ բողոքի հիմքերի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227–րդ հոդվածով սահմանված՝ «նյութական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում» հասկացության համատեքստում:

.... Օրենսդրական նման իրավակարգավորման պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմը որևէ կերպ չի խոչընդոտում դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը՝ գործի նկատմամբ կիրառելի իրավանորմի սխալ ընտրությունը, վերաքննիչ դատարանում օրենքով սահմանված կարգով և սահմաններում վիճարկելուն՝ երաշխավորելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացումը:

ՍԴՈ–1037, 18 հուլիսի, 2012 թ.

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է հետևյալ իրավական հարցադրումները.

– իրավաչա՞փ է, արդյոք, վերաքննության իրավունքի իրացման հնարավորության սահմանափակումը՝ պայմանավորված հայցագնի չափով,

– ի՞նչ չափանիշներ պետք է հիմք ընդունվեն այն հայցագնի չափը սահմանելիս, որի դեպքում վերաքննության իրավունքը սահմանափակվում է,

– անհրաժեշտ ու իրավաչա՞փ են, արդյոք, որոշակի բացառությունները նման սահմանափակման առնչությամբ:

Սույն հարցադրումները սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ հաշվի առնելով խնդրո առարկա հարցի վերաբերյալ միջազգային իրավական փորձն ու մոտեցումները:

Խնդրո առարկայի առնչությամբ միջազգային իրավական մոտեցումների և միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ քաղաքացիական գործերով վերաքննության ի-

րավունքը բացարձակ չէ և արդարացված որոշակի հանգամանքներով՝ առանձին գործերով վերաքննության հնարավորությունը կարող է չնախատեսվել: Այսպես.

Արդարադատության մատչելիության ուղիների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1981 թ. մայիսի 14-ի թիվ R (81) 7 հանձնարարականի 15-րդ կետի համաձայն՝ ոչ խոշոր չափի հայցային պահանջներով վեճերի համար պետք է նախատեսվի հատուկ ընթացակարգ, որը հնարավորություն կտա կողմերին դիմել դատարան՝ չկրելով վեճի առարկա հանդիսացող գումարի համեմատ անհամաչափ ծախսեր: Այս նպատակներով հնարավոր է նախատեսել հեշտացված (պարզեցված) դատական վարույթ, զերծ մնալ անհարկի դատական լսումներից և **սահմանափակել բողոքարկման իրավունքը**:

Դատական համակարգի կատարելագործմանն ուղղված քաղաքացիական դատավարության սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1984 թ. փետրվարի 28-ի թիվ R (84) 5 հանձնարարականի 8-րդ սկզբունքի 1-ին մասի b) կետի համաձայն՝ պետք է նախատեսվեն որոշակի կանոններ կամ կանոնների ամբողջություն՝ ուղղված վեճի լուծման արագացմանը՝ անվիճելի իրավունքի, նախապես գնահատված վնասի, ինչպես նաև **ոչ մեծ գումարներով հայցերի հետ կապված դեպքերում**:

Դատարանների աշխատանքի չափազանց ծանրաբեռնվածության անթույլատրելիության և սահմանափակման միջոցառումների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1986 թ. սեպտեմբերի 16-ի թիվ R (86) 12 հանձնարարականի 3-րդ կետում անդամ պետություններին խորհուրդ է տրվում դատական ատյանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար ստեղծել **արտադատական** այնպիսի մարմիններ, որոնց կողմերը կարող են դիմել **ոչ մեծ գումարի հայցապահանջներով,** ինչպես նաև իրավունքի կոնկրետ ոլորտների խնդիրներով վեճերի լուծման համար:

.... Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաձայն Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(84)5 և R(95)5 հանձնարարականների՝ **չբացառելով քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքի իրացման հնարավորությունը,** այնուամենայնիվ, ի տարբերություն քրեական գործերով վերաքննության իրավունքի, երկրորդ ատյանի դատարանում (վերաքննիչ դատարանում) քաղաքացիական գործերով բողոքարկումները կարող են ենթարկվել որոշակի սահմանափակումների, մասնավորապես՝ ոչ մեծ գումարի հայցապահանջներով:

6. ՀՀ Սահմանադրության 18, 19 և 20-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Սահմանադրությունը, ինչպես և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և կից արձանագրությունները, բողոքարկման իրավունք նախատեսել է քրեական գործերով դատավճիռների առնչությամբ:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը վերաբերում է յուրաքանչյուր կոնկրետ ատյանի դատարանում տվյալ գործի քննության համապատասխան ընթացակարգերին և, մասնավորապես, արդարության պահանջներին համապատասխանող ընթացակարգերին: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ արդար դատաքննության վերաբերյալ դրույթը կիրառելի է միայն վերաքննության կամ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի իրացումից հետո, եթե տվյալ կատեգորիայի գործերով նախատեսված է վերաքննության կամ վճռաբեկ բողոք բերելու իրավունք: ....

Անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների տեսանկյունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման կամ վերաքննության իրավունքը թեև վերաքննիչ և վճռաբեկ ատյանի դատարաններ ստեղծված լինելու պարագայում հանդիսանում է դատարանի մատչելիության և դատական պաշտպանության ար-

դյունավետ միջոցների իրավունքների բաղադրատարր, այնուամենայնիվ, նշված իրավունքները բացարձակ չեն և ենթակա են որոշակի սահմանափակման, որոնցից մեկն էլ հանդիսանում է օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված որոշակի կատեգորիայի քաղաքացիական գործերով վերաքննության սահմանափակման դեպքը: Այս առումով սահմանադրական դատարանն ինքնին իրավաչափ է համարում հայցագնի չափով պայմանավորված՝ քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքի սահմանափակումը: Այլ խնդիր է օրենսգրքի վիճարկվող նորմում ամրագրված գումարի չափի արդարացված լինելը, ինչպես նաև նման սահմանափակման՝ որպես ընդհանուր կանոնից բացառության նախատեսման, համապատասխանությունն արդարադատության ընդհանուր սկզբունքներին: ....

8. Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից: Հետևաբար, վիճարկվող իրավակարգավորումը դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցագնի չափով պայմանավորված՝ վերաքննության իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ չի խաթարվում արդար դատաքննության իրավունքի բուն էությունը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել այն ընդհանուր տրամաբանությունը, որն ընկած է բողոքարկման ինստիտուտին առնչվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի և 228-րդ հոդվածի, ինչպես նաև 204.32 հոդվածի հիմքում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է այն բացառիկ դեպքերը, երբ վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել նաև ընդդեմ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ: Այն է՝ երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, **որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը**: ....

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմով օրենսդիրը սահմանելով դրանում նշված գործերով վերաքննության իրավունքի սահմանափակում, շեղվել է օրենսգրքում առկա վերոհիշյալ ընդհանուր տրամաբանությունից՝ չնախատեսելով բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման բացառություններ սահմանելու անհրաժեշտությունը բխում է 1995 թ. փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած թիվ R(95)5 հանձնարարականի՝ «Դատական վերահսկողության իրավունքը» վերտառությամբ 1-ին հոդվածի b) կետի պահանջներից, որի համաձայն՝ բացառությունները դատական վերահսկողության իրավունքից թույլատրելի են միայն այն պայմանով, որ համապատասխանեն **արդարության ընդհանուր սկզբունքներին**: Նման մո-

տեցումը համահունչ է նաև Եվրոպական դատարանի այն մոտեցումներին, որոնք ձևավորվել են «էական վնասի» գնահատման պրակտիկայում:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ ի պատասխան սահմանադրական դատարանի հարցմանը՝ ՀՀ արդարադատության նախարարի 23.05.2012 թ. N01/3091–12 գրության մեջ որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում վիճարկվող դրույթի ամրագրումը հիմնավորող հանգամանք է մատնանշվում վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու անհրաժեշտությունը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման իրավակարգավորումը գործնականում ոչ միայն արդյունավետորեն չի ծառայում իր նպատակին, այլև, ստիպելով շահագրգիռ անձանց բողոքարկման վիճարկվող սահմանափակումը շրջանցելու նպատակով ներկայացնել 50.000 դրամը գերազանցող հայցապահանջ, հանգեցնում է դատարաններին 50.000 դրամը գերազանցող հայցագնի մասով անհիմն պահանջով ծանրաբեռնելուն:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

10. .... Բողոքարկման ինստիտուտի ամբողջական իրացումն անհրաժեշտ է դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելու համար: Եթե այդ միջոցներն սպառվում են, ապա ի հայտ է գալիս սահմանադրական դատարան կամ ՄԻԵԴ դիմելու հնարավորությունը: ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետը նախատեսում է յուրաքանչյուր անձի համար սահմանադրական դատարան դիմելու երեք իրավապայման.

– երբ առկա է դատարանի վերջնական ակտը,

– սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները,

– վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրական նորմը վերաբերում է վերջնական դատական ակտին, այլ ոչ թե բողոքարկման ընթացքում վերջին ատյանի դատարանի կողմից ընդունված ցանկացած ակտի: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 91–րդ հոդվածը սահմանում է, որ **«Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից»**: Սահմանադրաիրավական բովանդակությամբ դատարանի վերջնական ակտն այն ակտն է, որը գործն ըստ էության լուծել է, օրինական ձևով ուժի մեջ է մտել և անձի համար առաջացրել է համարժեք իրավական հետևանք: Նման մոտեցումից է բխում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.11–րդ հոդվածի 2–րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի. «Սույն օրենսգրքի իմաստով՝ **վերջնական** դատական ակտ է համարվում սույն օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը և շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ դատական պրակտիկայում առկա շփոթը հաղթահարելու համար համանման ակտերին ներկայացվող պահանջներն առավել հստակ պետք է շարադրվեն օրենսդրության մեջ՝ լիովին համապատասխանեցնելով իրավական որոշակիության սկզբունքին:

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ

ՍԴՈ–674, 30 հունվարի, 2007 թ.

6. .... Մինչդեռ քրեական դատավարությունը բաղկացած է մի քանի փուլերից՝ հետաքննություն, նախաքննություն և այլն, որոնցով վարույթն իրականացնող մարմինները տարբեր են, և դատարանը քրեական գործն իր վարույթ է ընդունում միայն դատաքննության փուլում: Դատավարական մյուս փուլերի, մասնավորապես՝ մինչդատական վարույթի նկատմամբ, օրենսդիրը սահմանել է դատական վերահսկողության առանձնակի կարգ, որը բխում է այդ հարաբերություններում անձի իրավական կարգավիճակի առանձնահատկություններից:

ՍԴՈ–754, 27 մայիսի, 2008 թ.

5. .... Սահմանադրական դատարանը իր՝ 2007 թ. ապրիլի 9–ի ՍԴՈ–690 որոշմամբ առանձնակիորեն կարևորել է այն իրավական երաշխիքներն օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտությունը, որոնք կոչված են ապահովելու վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայցեղական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումը: ....

Սահմանադրական դատարանն իր նշված որոշման եզրափակիչ մասի 3–րդ կետում ամրագրել է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2–րդ կետը (2006 թ. հուլիսի 7–ի խմբագրությամբ) .... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման **պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու**, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1–ին և 2–րդ մասեր), 18 (1–ին մաս) և 19 (1–ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»: Այսինքն՝ վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայցեղական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումն ապահովող կարևոր իրավական երաշխիք պետք է հանդիսանար նաև վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պարտադիր պայմանն օրենքով հստակ սահմանելը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական դատարանի նշված որոշման ընդունումից ի վեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում վերոհիշյալ իրավական երաշխիքները լիարժեքորեն չեն ապահովվել:

Այսպես՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թ. նոյեմբերի 28–ի օրենքի 75 հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233 հոդվածի 2–րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1–ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի»: Նույնաբովանդակ դրույթ է ըստ էության ամրագրված նաև ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4–րդ մասում. վերջինս ևս վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չի տարածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նման բացառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կատարումը: ....

Փաստորեն, մի կողմից՝ չեն ստեղծվել վերոհիշյալ հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ, մյուս կողմից՝ վիճարկվող դրույթով բացառվել է կրկին վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը չի սահմանում բողոքի թերությունները շտկելու համար ժամկետ: Այսինքն՝ բացակայում են ինչպես հայեցողական լիազորության կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այնպես էլ այդ հայեցողական լիազորության ոչ իրավաչափ իրականացումը հաղթահարելու միջոցը:

6. .... Մինչդեռ վճռաբեկ բողոքի պարագայում՝ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու հնարավորության օգտագործումը կախվածության մեջ է դրված վճռաբեկ դատարանի հայեցողությունից, և այդ հայեցողության կամայական դրսևորման դեմ բացակայում է արդյունավետ պաշտպանության որևէ միջոց: Նման պայմաններում, ի խախտումն վերոհիշյալ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, վիճարկվող դրույթի կիրառումը թույլ է տալիս այնպիսի վիճակի առաջացման հնարավորություն, երբ բողոքի թերությունները կարող են խոչընդոտել անձին իրացնելու դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը և, հետևաբար՝ նաև դատարանի մատչելիության իրավունքը: ....

9. .... Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226 հոդվածը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու երկու հիմք, դրանք են՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումները, որոնք կարող էին ազդել գործի ելքի վրա: Այն դեպքում, երբ նշված հիմքերից մեկով ներկայացված վճռաբեկ բողոքը չի ընդունվում քննության կամ մերժվում է, օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը թույլ չի տալիս անձին նույն դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնել նաև մյուս հիմքով:

Նշված դրույթը ոչ միայն խոչընդոտում է անձին լիարժեք կերպով իրացնելու օրենքով նախատեսված հիմքերով վճռաբեկ բողոք բերելու իր իրավունքը, այլ նաև բացառում է վիճարկվող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումը վճռաբեկության կարգով լրիվ ծավալով իրականացնելու հնարավորությունը, քանզի օրենսգրքի 239 հոդվածի ուժով վճռաբեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերով և հիմնավորումներով:

Բացի դրանից, վիճարկվող դրույթը վերացնելու դեպքում օրենսգրքի 224 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը կշարունակի իրավական խոչընդոտ հանդիսանալ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու և վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետում կրկին ներկայացնելու համար:

ՍԴՈ-765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

19. .... Սահմանադրական դատարանի նշված որոշման հիմքում ընկած է այն ընդհանուր իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ քանի դեռ չի լրացել օրենքով վճռաբեկ դատարան դիմելու համար սահմանված եռամսյա ժամկետը, անձը կարող է, անկախ թերությունները շտկելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ մատնանշելու փաստից, կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել: Այսինքն՝ սահմանադրական դատարանի նշված որոշման իրավական հետևանքն այն է, որ եթե վճռաբեկ դատարանը թերությունների պատճառաբանությամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելիս դրանք շտկելու համար համապատասխան ժամկետ չի սահմանում, ապա անձը կարող է մինչև եռամսյա ժամկետի լրանալը կրկին վճռաբեկ բողոք ներկայացնել: Մինչդեռ, վիճարկվող դրույթի ուժով, բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ դատարանը սահմանում է վճռաբեկ բողոքը ներկայացնելու ժամկետ, որն ավելի սեղմ է, քան օրենքով սահմանված եռամսյա ժամկետը, տվյալ անձն անհավասար վիճակում

է հայտնվում այն անձանց համեմատությամբ, որոնց բողոքը կրկին ներկայացնելու համար ժամկետ չի սահմանվել. վիճարկվող հոդվածի 4-րդ մասի անվավերության պայմաններում հնարավոր է դառնում մի իրավիճակ, երբ վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ չսահմանելու դեպքում անձը կարող է լիարժեք օգտվել եռամյա ժամկետից, իսկ ժամկետ սահմանելու դեպքում՝ ոչ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված ժամկետի խախտումը չպետք է խոչընդոտ լինի վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելուն, եթե, այնուամենայնիվ, այն ներկայացվում է օրենքով սահմանված եռամյա ժամկետում:

20. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-690 որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետի բ) ենթակետում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի (2006 թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) սահմանադրականությանը, ամրագրել է. վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել այն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական դատարանի նշված որոշման ընդունումից ի վեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում վերոհիշյալ իրավական երաշխիքները լիարժեքորեն չեն ապահովվել:

Այսպես՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թ. նոյեմբերի 28-ի օրենքի 75 հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233 հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի»: Նույնաբովանդակ դրույթ է ըստ էության ամրագրված նաև ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4-րդ մասում. վերջինս ևս վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չի տարածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նման բացառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կատարումը՝ խախտելով նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Իր ՍԴՈ-690 որոշման մեջ սահմանադրական դատարանը պատճառաբանվածության պարտադիր պահանջը կապում է ոչ թե վճռաբեկ բողոքի ընդունելիության այս կամ այն կոնկրետ հիմքի հետ, այլ՝ բացառապես բոլոր հիմքերի հետ: Նման պահանջն ինքնանպատակ չէ, և դրա նպատակն է ապահովել վճռաբեկ բողոքը վերադարձնելիս դատարանի հայեցողական լիազորության իրավաչափ և օրինական իրականացումը, ինչպես նաև դատական ակտի նկատմամբ անձի վստահության ապահովումը:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի նման որոշման առկայության պայմաններում ՀՀ Ազգային ժողովն օժտված չէ

վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որևէ մեկը «արտոնյալ» վիճակում դնելու հայտ-ցողությամբ, և չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է» ու դրա առ-կայության հիմնավորման կարիք չկա: Ուստի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճռաբեկ բո-ղոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը և յուրաքանչյուրը ենթակա են պատճառաբանման:

ՍԴՈ-780, 25 նոյեմբերի, 2008 թ.

13. Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի վերոհիշյալ իրավական չափորոշիչները՝ քննու-թյան առարկա գործի շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչա-կան արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքի իրաց-ման արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ վարչական արդարա-դատության երկաստիճան համակարգի մատչելիությամբ և դրա արդյունավետությամբ, մասնավորապես, վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման միակ ատյա-նի՝ վճռաբեկ ատյանի մատչելիությամբ և արդյունավետությամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում վարչական արդարադատության ո-լորտում վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ ատյանի մատչելիությունն ու արդյունավետությունն առաջին հերթին գնահատել վարչական դատարանի ակտերի դեմ վճ-ռաբեկ բողոք բերելու հիմքերի և վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանների հա-մատեքստում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատու-թյան երկաստիճան համակարգի պարագայում, երբ վերաքննիչ վարույթը բացակայում է, այս գործոնն է՛լ ավելի որոշիչ և էական դերակատարում է ձեռք բերում ոչ միայն վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի, այլ նաև մասնագիտացված վարչական արդարա-դատության երկաստիճան համակարգի մատչելիության և արդյունավետության ապահով-ման տեսանկյունից:

.... Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաքննիչ վարույթի բա-ցակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առն-չությամբ այն նույն հիմքերի և ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառ-վում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Սահմանադրա-կան դատարանը գտնում է, որ վարչական դատավարության մասնակիցների կողմից վար-չական դատարանի ակտը վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ՝ վճռաբեկ բողոքի թույլատրելիության հիմքերը, ինչպես նաև վճռաբեկ վարույթի կարգն այդ գործերով, պետք է սահմանվեն վարչական դատավարության օրենսգրքով՝ հղումներ պարունակելով այլ օրենքներին միայն այն դեպքերում, երբ դրանք դուրս չեն գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից: Նման մոտեցումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մա-սի պահանջներից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դա-տավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը ոչ միայն սահմանափակում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, այլ նաև չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող հստակության, ճշգրտության և կանխա-տեսելիության որակները:

Միաժամանակ, ընդունելով, որ ՀՀ դատական օրենսգրքով ստեղծված տարբեր մասնա-գիտացված առաջին ատյանի դատարանների միջև՝ վարչական դատարանի ակտերի վե-րաքննության կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելու առումով տարբե-րակված մոտեցումն իր հիմքում ունի որոշակի օբյեկտիվ արդարացում, այն է՝ վարչական դատարանի քննությանը ենթակա գործերի բնույթը, սահմանադրական դատարանն արձա-նագրում է, որ նման տարբերակված մոտեցումը պահանջում է նաև տարբերակված մոտե-

ցում վարչական ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավակարգավորումը սահմանելիս:

ՍԴՈ–817, 21 հուլիսի, 2009 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007 թ. ապրիլի 9–ի ՍԴՈ–690 որոշմամբ, ի թիվս այլոց, լուծել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 231.1. հոդվածի (2006 թ. հուլիսի 7–ի խմբագրությամբ) սահմանադրականության հարցը՝ նշված հոդվածի 2–րդ կետը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով ճանաչելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1–ին և 2–րդ մասեր), 18 (1–ին մաս) և 19 (1–ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ի կատարումն սահմանադրական դատարանի նշված որոշման և հաշվի առնելով այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2008 թ. դեկտեմբերի 26–ի օրենքի 17 հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 233 հոդվածի 2–րդ մասում խնդրո առարկա դրույթը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված»: Այսինքն՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ–690 և ՍԴՈ–765 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ օրենսդրորեն ամրագրվել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը՝ առանց որևէ բացառության, պատճառաբանելու պահանջը՝ որպես դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիք:

ՍԴՈ–818, 28 հուլիսի, 2009 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթին համարժեք և նույնաբովանդակ դրույթ էր ամրագրված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2–րդ մասում: Ինչպես վիճարկվող դրույթում, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված դրույթում օրենսդիրը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չէր տարածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. հոկտեմբերի 8–ի ՍԴՈ–765 որոշմամբ, քննության առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2–րդ մասի սահմանադրականության հարցը՝ այն ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին հակասող և անվավեր՝ «բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1–ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի» բառակապակցության մասով:

Նշված որոշման պատճառաբանական մասում սահմանադրական դատարանը, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Իր ՍԴՈ–690 որոշման մեջ սահմանադրական դատարանը պատճառաբանվածության պարտադիր պահանջը կապում է ոչ թե վճռաբեկ բողոքի ընդունելիության այս կամ այն կոնկրետ հիմքի հետ, այլ՝ բացառապես բոլոր հիմքերի հետ: Նման պահանջն ինքնանպատակ չէ, և դրա նպատակն է ապահովել վճռաբեկ բողոքը վերադարձնելիս դատարանի հայեցողական լիազորության իրա-

վաչափ և օրինական իրականացումը, ինչպես նաև դատական ակտի նկատմամբ անձի վստահության ապահովումը:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի նման որոշման առկայության պայմաններում ՀՀ Ազգային ժողովն օժտված չէ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որևէ մեկը «արտոնյալ» վիճակում դնելու հայեցողությամբ, և չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է» ու դրա առկայության հիմնավորման կարիք չկա: Ուստի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճռաբեկ բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը և յուրաքանչյուրը ենթակա են պատճառաբանման»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի լրացումը 2.1-րդ մասով, որում միայն նախատեսում է, որ օրենսգրքի 414.2 հոդվածի առաջին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, չի ապահովել սահմանադրական դատարանի ՍԴՈ-691 որոշման ամբողջական կատարումը՝ գործնականում բացառություն անելով օրենսգրքի 414.2 հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման առնչությամբ:

ՍԴՈ-849, 22 դեկտեմբերի, 2009 թ.

6. ՀՀ սահմանադրական դատարանն օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի հետ կապված առանձին հոդվածների սահմանադրականությունը որոշելու շրջանակներում արտահայտել է իր իրավական դիրքորոշումները 11.04.2007 թ. ՍԴՈ-691 որոշման մեջ:

Սույն գործով վիճարկվող օրենքի նորմը ներառված է օրենսգրքի 11-րդ բաժնում, որը վերնագրված է՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում»: Դրանում նախատեսված են վճռաբեկության կարգով դատավճիռների ու որոշումների վերանայման դեպքերը, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, սահմանված են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, վճռաբեկ բողոքի բովանդակությունը և դատավարական բոլոր այն ընթացակարգերը, որոնք կազմում են վճռաբեկ դատարանի վարույթի բովանդակությունը: Նշված բաժնում տեղ գտած նորմերը և դրույթները փոխկապակցված են և լրացնում են միմյանց:

Հաշվի առնելով այն խնդրի առանձնահատկությունը, որի լուծման համար է կոչված վճռաբեկ դատարանը, օրենսդիրը սահմանել է ինչպես այդ մարմնին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, այնպես էլ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը:

.... Նշված իրավակարգավորման իրավաչափությունը հարկ է գնահատել ՀՀ եռաստիճան դատական համակարգում դատական ակտերի բողոքարկման, վերաքննության և վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման վարույթների առանձնահատկությունների, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն օրենքով քրեադատավարական օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների համատեքստում: Վերջիններիս համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել **միայն վերաքննության կարգով**, և վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ դատարանի դատական ակտը: Կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385 հոդվածի 1-ին մասում ամրագրվեց նաև դրույթ, որի համաձայն վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է **վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:**

Բացի դրանից, վերաքննիչ դատարանում և վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները համապատասխանաբար նախատեսող 385 և 415 հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ, պայմանավորված այդ դատարանների գործառույթով, վերաքննիչ ու վճռաբեկ վարույթների սահմաններն էապես տարբեր են:

Վերոհիշյալ դրույթները դիտարկելով համակարգային փոխկապակցության մեջ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը նպատակ է հետապնդում վերաքննության կարգով դատական ակտի բողոքարկումը՝ որպես վճռաբեկության կարգով դատական ակտը բողոքարկելու պարտադիր նախապայման, ապահովել ոչ միայն ձևական, այլև բովանդակային առումով՝ հնարավորություն տալով վճռաբեկ դատարանին անդրադառնալու այն հանգամանքներին, որոնք վերաքննության կարգով հետազոտվել և գնահատվել են, որոնց վերաբերյալ վերաքննիչ դատարանն արտահայտել է իր դիրքորոշումը:

7. Օրենսգրքի վիճարկվող հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունից բխում է, որ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության քննող դատարան չէ, այլ ստուգում է դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, հետևաբար՝ անձը չի կարող վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե դատական ակտը նույն հիմքերով չի բողոքարկել վերաքննիչ դատարանում: Այսինքն՝ բողոքում նշված հիմքի (հիմքերի) վերաբերյալ ստորադաս դատական ատյաններում քննություն չի կատարվել, ապացույցներ չեն հավաքվել, հետազոտվել ու գնահատվել, որը վճռաբեկ դատարանին հնարավորություն կտար ստուգելու տվյալ դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Որքան էլ ընդունելի է նման մոտեցումը, այնուամենայնիվ, օրենքով հստակ չի նախատեսվել իրավակարգավորումն այնպիսի դեպքում, երբ դատապարտյալը, համաձայն լինելով առաջին ատյանի դատարանի դատավճռին՝ այն չի բողոքարկել վերաքննության կարգով, մինչդեռ մեղադրանքի կողմի (դատախազի, տուժողի) բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը կայացրել է նոր դատական ակտ, որով բեկանել է առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը և կայացրել է մեղադրական դատավճիռ կամ առաջադրված մեղադրանքի սահմաններում կիրառել է ավելի ծանր հանցագործության համար օրենք կամ նշանակել է ավելի խիստ պատիժ: Օրենսգրքի 394, 395, 397-400 հոդվածներով նախատեսված վերոհիշյալ լիազորություններն իրականացնելով՝ վերաքննիչ դատարանը կայացնում է դատավճիռ, որն ըստ էության դառնում է նոր, առաջին անգամ ընդունված դատական ակտ և որն օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասի համաձայն չի կարող բողոքարկվել վճռաբեկ դատարանում:

Արդարացման դատավճիռը բեկանելու և մեղադրական դատավճիռ կայացնելու, առաջադրված մեղադրանքի սահմաններում ավելի ծանր հանցագործության համար դատապարտելու կամ առաջին ատյանի դատարանի նշանակած պատժից ավելի խիստ պատիժ նշանակելու, ինչպես նաև հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով փոխելու, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության համար, առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու՝ գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաքննիչ դատարանի լիազորությունների պայմաններում օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասում նախատեսված պայմանի տառացի մեկնաբանությունը փաստորեն վճռաբեկ բողոք բերելու իրավունքից կարող է զրկել դատավարության բոլոր մասնակիցներին (դատապարտյալ, պաշտպան, մեղադրող, տուժող և այլն):

Վիճարկվող հոդվածի 2-րդ մասի նման կիրառումն ուղղակի հակասության մեջ կմտնի ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք»:

Բացի դրանից, նման մեկնաբանումը չի նպաստի արդարադատության լիարժեք իրականացմանը, դատական սխալները շտկելու և միասնական դատական պրակտիկա ձևավորելու գործին: **Վերաքննիչ դատարանի ըստ էության նոր դատավճռի բողոքարկումը վճռաբեկ դատարան պետք է մատչելի լինի դատավարության մասնակիցների համար:** Նորմի առկա ձևակերպումը ենթադրում է, որ դատավարության մասնակիցը չի կարող առանց վերաքննիչ բողոքի շրջանակներում առաջին ատյանի դատարանի ակտը բողոքարկելու այն բողոքարկել վճռաբեկ դատարան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 3-րդ մասի պահանջը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի գործառույթները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 հոդվածի վիճելի նորմի մեկնաբանությունը և կիրառումը պետք է ապահովի վճռաբեկ բողոքի պարտադիր ընդունումն ու քննությունը բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի շրջանակներում վերաքննիչ դատարանը շահագրգիռ կողմի բողոքի քննության արդյունքներով կայացրել է առաջին ատյանի դատարանի դատական ակտից տարբերվող՝ ըստ էության նոր, դատական ակտ: Նման մոտեցումը ոչ միայն կնպաստի դատական տվյալ ատյանի կողմից առավել ամբողջական նախադեպի ձևավորմանը, այլև էապես կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը:

ՍԴՈ-873, 13 ապրիլի, 2010 թ.

8. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցրած լինելու կամ չլինելու **փաստի հաստատումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Որպես վճռաբեկ բողոքի ընդունելիության պայման կարող է հանդես գալ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի **ենթադրության ներկայացված լինելու հանգամանքի ստուգումը,** այլ ոչ թե այն փաստի հաստատումը, որ դատական սխալը **հանգեցրել է կամ չի հանգեցրել** գործի սխալ լուծմանը:

Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով»: Այս նորմը ևս վկայում է այն մասին, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցնելու փաստի հաստատումը հանդիսանալով վճռի բեկանման հիմք՝ չի հանդիսանում և չի կարող հանդիսանալ բողոքի ընդունելիության պայման: Հետևաբար, **այդ հարցը ենթակա է լուծման դատաքննության փուլում**, այլ ոչ թե դիմումի ընդունելիության հարցի քննության փուլում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցի քննության փուլում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «առկա է» բառը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես բողոքի ընդունման փուլում նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը հաստատելու վճռաբեկ դատարանի պարտավորվածություն՝ դրանով իսկ ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից, սահմանափակելով վճռաբեկ դատարանի մատչելիությունը՝ դատական պաշտպանության միջոցը դարձնելով անարդյունավետ: Վճռաբեկ բողոք բերող անձի պնդումը գործի ելքի վրա ազդող դատական սխալի **ենթադրյալ առկայության** մասին, եթե այդ պնդումն ակնհայտ անհիմն չէ, թույլատրելիության այլ նախադրյալների հետ մեկտեղ (ժամկետներ, բողոքի ձևին ներկայացվող պահանջներ և այլն), բավարար է գործը քննության ընդունելու համար, և վճռաբեկ դատարանն իրավասու չէ այդ փուլում ստուգելու վճռաբեկ բողոքի **հիմնա-**

վորվածությունը՝ այդպիսի սխալի իրական առկայությունը («առկա է», «հանգեցրել է գործի սխալ լուծմանը», «ազդել է գործի լուծման վրա»), քանի որ դրանով փոխարինվում կամ կանխորոշվում է դատաքննությունը, որը և պետք է ապահովի գործի արդարացի քննությունը՝ համապատասխան երաշխիքների պահպանմամբ:

9. Վարչական դատարանի վճռի դեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում կատարված փոփոխություններից և լրացումներից հետո էլ վճռաբեկ դատարանը շարունակում է վարչական գործերով վճռաբեկ վարույթի նկատմամբ կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, անկախ նրանից, դրանք **դուրս են գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից, թե՝ ոչ:** Ավելին, վճռաբեկ դատարանը՝ կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերը սահմանող 118.3-րդ հոդվածը և բողոքի ընդունելիության պայմանները սահմանող 118.6-րդ հոդվածը, զուգահեռաբար կիրառում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համարժեք 226 և 234-րդ հոդվածները, այդ թվում վճռաբեկ բողոքի ընդունելիության այն պայմանները, որոնք սահմանված են 234-րդ հոդվածի 1-ին մասում:

Նման իրավիճակի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրացված չէ սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածում «**mutatis mutandis» վերապահումը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման նկատմամբ ամբողջությամբ կիրառվեն քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:**

Ավելին, սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածը (նոր խմբագրությամբ) ընդհանրապես թույլ չի տալիս հղում կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն նորմերին, որոնք սահմանում են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:

Արդարադատության արդյունավետությունը ենթադրում է **թույլատրելի ճանաչված վճռաբեկ բողոքների ըստ էության քննություն** վճռաբեկ դատարանում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ և վարչական արդարադատության առանձնահատկությունների հաշվառմամբ: Թույլատրելիության հարցի լուծման ժամանակ բուն արդարադատության կանխորոշումն իմաստազրկում է դրա արդյունավետությունը, իսկ **բողոքի թույլատրելիության հիմքը շփոթվում է վարչական դատարանի ակտի բեկանման հիմքի հետ**: Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարադատության նման ձևականացումն անհամատեղելի է դրա սահմանադրական իմաստի հետ:

10. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման ինստիտուտի լիարժեքությունն օրենսդրորեն ապահովված չէ: Այս հարցում իրավական անորոշությունը հաղթահարելու և իրավակարգավորման բացը լրացնելու համար էական նշանակություն կարող է ունենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հստակ իրավակարգավորումը՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-780 որոշման և սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով:

Առավել կարևոր է այն հանգամանքը, որ վարչական արդարադատության ներկա երկաստիճան համակարգի պահպանման պարագայում օրենսդրորեն պետք է գտնվեն կառուցակարգային այնպիսի լուծումներ, որ ՀՀ վճռաբեկ դատարանն ի վիճակի լինի արդյունավետ իրականացնել վարչական դատարանի ակտերի վերաբերյալ բողոքների ընդունման ու դրանց դատաքննության արդարադատական պահանջները:

ՍԴՈ–1052, 17 հոկտեմբերի, 2012 թ.

7. ՀՀ սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք, ի թիվս այլնի, առնչվում են նաև դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը: Դատարանն իր՝ 28.11.2007 թ. ՍԴՈ–719 որոշմամբ, մասնավորապես, ամրագրել է, որ. «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ **ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս**: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: .... Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ»:

Անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում **դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել**: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2006 թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ–652, 2006 թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ–665, 2007 թ. ապրիլի 9-ի ՍԴՈ–690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Իր՝ 09.04.2007 թ. ՍԴՈ–690 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի բողոքարկման խնդրին, ամրագրել է, որ. «**նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ:** Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողա-

կան անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն: Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաև կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը»:

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրելով, որ ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորելու իրավական որոշակիությունը, միևնույն ժամանակ, հիմք ընդունելով, մասնավորապես, իր՝ ՍԴՈ–652, ՍԴՈ–665, ՍԴՈ–690, ՍԴՈ–719 որոշումներում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:** Նման իրավական դիրքորոշման համար հիմք են ծառայում, մասնավորապես, օրենսգրքի 381–րդ հոդվածը, որը վերաբերում է վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 407–րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներին, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 414.1–րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքը վերադարձնելուն: Օրենսգրքի 381–րդ հոդվածի 1–ին մասի 5.1–րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, իսկ նման հիմնավորման բացակայության դեպքում նույն հոդվածի 2–րդ մասի ուժով վերաքննիչ բողոքը թողնվում է առանց քննության: Օրենսգրքի 407–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, նույն մասի 6.1–րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալը, ինչպես նաև այդ սխալի հետևանքով ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջանալու հնարավորությունը, իսկ վերը նշված պատճառաբանությունների և հիմնավորումների բացակայության դեպքում օրենսգրքի 414.1–րդ հոդվածի 1–ին մասի ուժով վճռաբեկ բողոքը վերադարձվում է:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման

հնարավորությունը: Մինչդեռ օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով բողոքարկման ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով բողոքարկվող դատական ակտի հրապարակման պահը, օրենսդիրը ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնված ժամկետը հարգելի կամ անհարգելի համարելու առումով: Բանն այն է, որ դատական ակտը հրապարակելուց, այն հասցեատիրոջն ուղարկելուց մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, որը կարող է ավելի երկարաձգվել՝ պայմանավորված նաև սուբյեկտիվ գործոններով: Նման պայմաններում անձն իր տնօրինության ներքո հաճախ չի ունենում բողոքարկվող դատական ակտը, հնարավորություն չի ունենում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները կազմել օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ, ինչն իրավաչափորեն հիմք է հանդիսանում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները համապատասխանաբար՝ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու համար:

ՍԴՈ-1192, 3 մարտի, 2015 թ.

7. Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: **Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները:** Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ:

ՀՀ վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի նախատեսումը լիարժեքորեն կայացած և գործուն փաստաբանական համակարգի պարագայում կոչված կլինի նպաստելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացմանը: Նման մոտեցման պարագայում ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյանում ևս՝ **ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող բողոքների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել անձի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների անտեսմամբ կամ անհամաչափ սահմանափակմամբ:** Այսինքն, նախապայմանների խստացումը

չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Այս համատեքստում սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանն իր ՍԴՈ-1167 որոշման մեջ ամրագրել է. «.... ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման»: Նշվածի համատեքստում սահմանադրական դատարանն էական է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ, օրինակ, սահմանադրական արդարադատության մարմնում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կողմերը սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ և (կամ) ներկայացուցիչների միջոցով:

8. Վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդրին սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել նաև վարչադատավարական օրենսդրության զարգացման համատեքստում: Մինչև ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի ընդունումը ՀՀ վարչական դատավարության նախկին օրենսգրքով ՀՀ վճռաբեկ դատարան վճռաբեկ բողոքը միայն փաստաբանի միջոցով բերելու պարտադիր պահանջ առկա չէր, այսինքն՝ նախատեսված էր վճռաբեկ բողոքն անմիջականորեն ներկայացնելու կարգ: Մինչդեռ վիճարկվող դրույթը ոչ միայն սահմանում է վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգ, այլև բացառում է վճռաբեկ բողոքն անմիջականորեն բերելու հնարավորությունը: Փաստորեն, ներկայումս գործում է միայն միջնորդավորված և այն էլ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու կարգը: Այսինքն՝ վերացվել է այն միակ անհրաժեշտ ուղին, որով ապահովվում էր վճռաբեկ դատարան անմիջականորեն դիմելու հնարավորությունը: Նման իրավակարգավորման արդյունքում վճռաբեկ դատարանի մատչելիությունը էապես սահմանափակվել է:

Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է իրավաբանորեն գրագետ, հիմնավորված և օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանվածությամբ վճռաբեկ բողոք ներկայացնելու աստիճանով և հանգամանքով: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պարագայում վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելու, առանց քննության թողնելու, վարույթ ընդունելը մերժելու հանգամանքի հավանականությունը պահպանվում է: Այսինքն, ինչպես նախկինում, երբ առկա էր վճռաբեկ բողոք բերելու անմիջական կարգը, այնպես էլ ներկայումս, երբ վճռաբեկ բողոք կարող է բերվել միայն փաստաբանի միջոցով, վճռաբեկ դատարանը վարույթ չէր (չի) ընդունում վճռաբեկ այն բողոքները, որոնք չեն համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված և սույն գործով չվիճարկվող իրավական նորմերով սահմանվող այլ պահանջներին՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելով, առանց քննության թողնելով կամ վարույթ ընդունելը մերժելով: Այդ մասին է վկայում նաև ՀՀ դատական դեպարտամենտին ուղղված գրությանն ի պատասխան ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից 16.02.2015 թ. թիվ ԴԴ-1 Ե-693 պատասխան գրության մեջ արտացոլված փաստացի վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը, որի համաձայն, մասնավորապես, 2013 թ. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ մակագրված 820 վճռաբեկ բողոքներից վարույթ է ընդունվել 43-ը, որը կազմում է մակագրված վճռաբեկ բողոքների 5.24 տոկոսը, իսկ 2014 թ. ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ մակագրված 1006 վճռաբեկ բողոքներից վարույթ է ընդունվել 50-ը, որը կազմում է մակագրված վճռաբեկ բողոքների 4.97 տոկոսը: Նշված տվյալները փաստում են, որ նույնիսկ այն պարագայում, երբ վճռաբեկ բողոք միայն փաստաբանի միջոցով է բերվել, էական և շոշափելի փոփոխություններ չեն առաջացել՝ կապված վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հետ:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վճռաբեկ բողոք բերելու՝ տվյալ դեպքում միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրն անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ զարգացնելու առումով: Մասնավորապես, օրենսդրորեն համարժեքորեն չեն լուծվել գույքային խտրականության հետ կապված հարցերը, ընդ որում՝ խնդիրն առկա է ինչպես վարչական դատավարության, այնպես էլ վճռաբեկ բողոք ներկայացնելու նախապայմանների օրենսդրական միասնական քաղաքականության շրջանակներում, ինչն ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դրսևորումների համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով: Այս հանգամանքը փաստվում է ելնելով նրանից, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են **իրավունքի աղբյուր** իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենսդրական զարգացումների համար կարևոր աղբյուր են:**

Քննության առարկա հիմնահարցը վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով՝ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ վիճարկվող դրույթով՝ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի ամրագրումը, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացմանը նպաստելու իրավաչափ նպատակ հետապնդելով հանդերձ, փաստացի հանգեցրել է հենց այդ իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակմանը, անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորության և դատարանի մատչելիության իրավունքի ոչ համարժեք սահմանափակմանը:

Ի դեպ, նման եզրահանգում է կատարել նաև ՀՀ փաստաբանների պալատը (ըստ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարանին 27.02.2015 թ. թիվ Ն/202 նամակով հասցեագրված մեկնաբանությունների):

10. .... Սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ նաև արձանագրում է, որ թեպետ սույն հոդվածով «էլեկտրոնային տարբերակը» հասկացությունը փակագծերի մեջ բացահայտված է որպես «էլեկտրոնային կրիչ», սակայն այս եզրույթները նույնական չեն. առաջինը վերաբերում է վճռաբեկ բողոքի տեքստը պարունակող համակարգչային նիշքին (ֆայլին), որը մատչելի է համակարգչային որևէ ծրագրի, իսկ երկրորդը՝ այդ տեքստը պահպանելու և փոխանցելու համար պիտանի տեխնիկական սարքին: Սահմանադրական դատարանը կարևորում է այս տարբերակումը, քանի որ բողոքի էլեկտրոնային տարբերակը հնարավոր է ներկայացնել ոչ միայն էլեկտրոնային կրիչի, այլև՝ էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ պատասխանողն էլ սույն գործով ներկայացրած իր բացատրության մեջ նշում է. «Փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը, եթե այն չի ներկայացվում էլեկտրոնային փոստի միջոցով, կարող է հասանելի դառնալ փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը կրելու ունակ որևէ կրիչի միջոցով»: Ուստիև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված պահանջը չի վերաբերում բացառապես բողոքի փաստաթղթային տարբերակին կից էլեկտրոնային կրիչով բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելուն, այլ թույլ է տալիս

անձին ներկայացնել բողոքի էլեկտրոնային տարբերակը նաև էլեկտրոնային փոստի միջոցով:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պահանջի իրացման միատեսակության ապահովման համար համապատասխան միասնական չափանիշները պետք է ստանան իրավական ամրագրում: Այս հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ այն դեպքերում, երբ անձի վրա դրվում է պարտականություն փաստաթղթերի հետ մեկտեղ ներկայացնել նաև փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը կամ ուղղակիորեն դիմել համապատասխան մարմին էլեկտրոնային եղանակով, մանրամասնորեն սահմանվում են փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներին ներկայացվող պահանջները և հասանելի են լինում համապատասխան մարմնի պաշտոնական էլեկտրոնային կայքէջում (Կանադա, Մեծ Բրիտանիա և այլն):

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու միասնական չափանիշների բացակայությունը ենթադրում է դիմողի իրավունքը ներկայացնելու բողոքի էլեկտրոնային տարբերակը ցանկացած ձևաչափով և փաստաթղթի ցանկացած ձևավորմամբ թե՛ ցանկացած տեսակի էլեկտրոնային կրիչով, թե՛ էլեկտրոնային փոստով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու միասնական չափանիշները պետք է իրավաբանորեն ամրագրվեն, իսկ մինչ այդ իրավակիրառական պրակտիկան պետք է զարգանա սույն որոշման մեջ խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՎՃՌԻ ՇՐՋԱԴԱՐՁԸ

ՍԴՈ-1102, 28 հունիսի, 2013 թ.

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս անդրադառնալ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին այնքանով, որքանով քննության առարկա խնդիրն առնչվում է պետության՝ մասնավոր անձանց սեփականությունն այլոց ապօրինի գործողություններից պաշտպանելու պոզիտիվ պարտականությանը, ինչպես նաև այդ պարտականության կատարման շրջանակներում գույքային վնաս կրած անձանց իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը: Այս առումով վիճարկվող նորմն անմիջականորեն սահմանում է ի կատար ածված վճռի կատարման որոշակի կոնկրետ հիմքերով շրջադարձի կարգն ու պայմանները քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում, որը, ընդհանուր առմամբ, երաշխիք է իրավախախտման հետևանքով տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության, ինչպես նաև Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության, արդարադատության մատչելիության իրավունքի իրացման համար:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ **դատավարական իմաստով** դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել, եթե՝

– առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, և

– դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից բեկանվել է և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Վերոհիշյալ իրավապայմանների առկայության դեպքում իրավասու դատարանը կայացնում է դատական ակտ, այսինքն՝ վճիռ կամ որոշում, **գույքը** (շարժական, անշարժ) շահագրգիռ կողմին՝ պարտապանին (այսինքն՝ դատական նախկին ակտին համապատասխան շահագրգիռ մյուս կողմի հանդեպ պարտականություն կրած անձին) լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան: Այսինքն, միանշանակ է, որ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը **կոչված է կարգավորելու քաղաքացիաիրավական հարաբերություններ՝** կապված դատական սխալի (նոր կամ նոր ի հայտ եկած կամ այլ հանգամանքների) արդյունքում կայացված դատական ակտի կատարմամբ անձին (անձանց) պատճառված նյութական վնասի վերականգնման (հատուցման) հետ:

Վերոհիշյալ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված են դատական այն ակտի կատարման շրջադարձի պայմանները, որը դեռևս ի կատար չի ածվել:

Նյութական-իրավական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել մասնավոր այնպիսի դեպքերում, երբ առկա են դատարանի կայացրած ակտի բեկանման (լրիվ կամ մասնակի), գործի վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, հետևաբար՝ նաև այդ ակտն ի կատար ածելու արդյունքում առաջացած իրավական հետևանքները վերացնելու (այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը, գործի հանգամանքներով պայմանավորված շահագրգիռ կողմի (տուժողի) նախկին իրավունքներն ու պարտականությունները վերականգնելու) իրավական անհրաժեշտություն: Այսինքն՝ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն արդար և արդյունավետ արդարադատության իրականացման (արդարադատության նպատակների իրականացման) ապահովումն է, իսկ օբյեկտը՝ **գույքային իրավունքն** է և դրանով պայմանավորված կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման իրավաչափությունը՝ քաղաքացիաիրավական տվյալ վեճի շրջանակներում: Այսինքն՝ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառմամբ պետությունը, ի դեմս իրավասու դատարանի, նպատակ ունի կատարելու անձանց սեփականությունը պաշտպանելու (այդ թվում՝ այլոց ապօրինի գործողություններից) իր պոզիտիվ պարտականությունը, որը նաև արդարադատության իրականացման հիմնական խնդիրներից է:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարևոր երաշխիք է ՀՀ Սահմանադրության ինչպես 8-րդ, 18-րդ և 19-րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով, և սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել, եթե օրենսդրությամբ նախատեսված է դրա իրացման արդյունավետ ընթացակարգ, մասնավորապես՝ անիրավաչափ դատական ակտի ի կատար ածման հետևանքով անձանց խախտված իրավունքների ու ազատությունների **արագ, լիարժեք ու արդյունավետ** վերականգնման հնարավորություն: Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և, մասնավորապես՝ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն գործով վեճի առարկայի վերաբերյալ դիմողների հարցադրումներն իրենց բովանդակությամբ պարունակում են **հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման** այդպիսի ընթացակարգերի երաշխավորման անհրաժեշտության փաստացի պահանջ, որը, ինչպես հետևում է գործում առկա դատավարական նախապատմությունից, չնայած անմիջականորեն կապված չի եղել քաղաքացիական գործով ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրի հետ, սակայն իրավակարգա-

վորման ընդհանուր նպատակներով միտված է նաև այդ խնդրի լուծմանը: Հետևաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հանցագործությամբ անձանց պատճառված նյութական (գույքային) վնասի վերականգնման սահմանադրաիրավական սկզբունքների երաշխավորման, և հատկապես՝ իր նախորդ որոշումներով այդ հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության խնդրին:

ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-1252, 26 հունվարի, 2016 թ.

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի իրավունքները սահմանված են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 65-րդ և 66-րդ հոդվածներով:

ՀՀ Սահմանադրության՝ «Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը» վերտառությամբ 65-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»:

ՀՀ Սահմանադրության՝ «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 66-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքները համանման կարգավորմամբ ամրագրված էին նաև 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 21-րդ և 22-րդ հոդվածներով:

.... ՀՀ սահմանադրական դատարանը ևս իր որոշումներում անդրադարձել է ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածության և ապահովման խնդիրներին: Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել իր՝ 2010 թվականի մարտի 30-ի ՍԴՈ-871 որոշման մեջ արտահայտած, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումը.

«.... անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքներն օրենսդիրն ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, մասնավորապես՝ «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 18-րդ հոդվածով և «Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը» վերտառությամբ 20-րդ հոդվածով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում են վերոհիշյալ իրավունքների իրացման ապահովման այլ երաշխիքներ ևս: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ցուցմունքներ տալը կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելը, բացատրություններ տալը կամ բացատրություններ տալուց հրաժարվելն ամրագրվել են որպես կասկածյալի (63-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետեր) և մեղադրյալի (65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետեր) իրավունքներ: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է կասկածյալին (211-րդ հոդվածի 3-րդ մաս) և մեղադրյալին (212-րդ հոդվածի 8-րդ մաս) նրանց իրավունքները՝ ներառյալ ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը, հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչի կողմից բացատրելու, ինչպես նաև վկային իր, ամուսնու կամ իր մերձավոր ազգականների դեմ չվկայելու իր իրավունքի մասին առերեսման սկզբում քննիչի կողմից նախազգուշացնելու (216-րդ հոդվածի 2-րդ մաս) և իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ վկայելուց հրաժարվելու նրա իրավունքը հարցաքննությունից առաջ նախագահողի կողմից պարզաբանելու (339-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) իրավական պահանջները:

Պետք է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Ցուցմունք տալուց հրաժարվելը» վերտառությամբ 339-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ՝ «Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից»:

Համադրելով վերոգրյալը սույն գործով դիմողի այն եզրահանգման հետ, համաձայն որի՝ **ՀՀ քրեական օրենսգրքի** սույն գործով վիճարկվող **244-րդ հոդվածն «առաջացնում է սահմանադրականության խնդիր,** այնքանով որքանով այն հակասում է անձի՝ իր դեմ ցուցմունք չտալու սկզբունքին, ինչպես նաև անմեղության կանխավարկածին», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխավորվածության և ապահովման անմիջական կարգավորումը դուրս է ՀՀ քրեական օրենսդրության և, բնականաբար, նաև սույն գործով վիճարկվող իրավակարգավորման առարկայի շրջանակից: Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքները՝ համակարգային ամբողջականության մեջ ապահովվում են ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ:

ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԷԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ

ՍԴՈ-1213, 9 հունիսի, 2015 թ.

9. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անդրադառնալով «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթին՝ արձանագրում է, որ վերջինիս բովանդակությունը բացահայտված է օրենսգրքի 398-րդ հոդվածում, որը կրում է հենց «Քրեադատավարական օրենքի էական խախտումը» վերտառությունը: Հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»: Սույն գործի շրջանակներում քննության առարկա՝ օրենսգրքի **293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված** «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթի և օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ դրանք գործում են տարբեր իրավահարաբերու-

թյունների շրջանակներում: Այսպես, օրենսգրքի 398–րդ հոդվածով սահմանված դրույթները, ի թիվս այլնի, կոչված են կարգավորելու նախ՝ ոչ թե մինչդատական վարույթի, այլ դատական քննության ժամանակ թույլ տրված խախտումները, երկրորդ՝ դրանք վերաբերում են վերաքննիչ դատարանում գործի քննությանը: «Քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթի՝ օրենսգրքի 293–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրումը փոխկապակցված էր քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի հետ, որի իրացման հիմքում ընկած իրավակարգավորումները ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր: Սահմանադրական դատարանը 2007 թվականի հուլիսի 24–ի ՍԴՈ–710 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը՝ արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ, որոնք էական նշանակություն ունեն նաև սույն գործի առնչությամբ և, մասնավորապես, հանգում են հետևյալին.

– երբ դատարանը հայտնաբերելով, որ գործով ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի էական խախտումներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105–րդ հոդվածի հիմքով, որը համահունչ է ՀՀ Սահմանադրության 22–րդ հոդվածին, դրանք որպես ապացույց չօգտագործելու և մյուս ապացույցների գնահատմամբ գործի ելքը լուծելու փոխարեն գործը վերադարձնում է լրացուցիչ նախաքննության: Դրանով իսկ դատարանը նախաքննության մարմնին հնարավորություն է տալիս «վերակենդանացնել» ձախողված մեղադրանքը: Մյուս կողմից, խախտվում է քրեական դատավարության կարևոր մի սկզբունք, համաձայն որի՝ դատարանը չպետք է հանդես գա մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այլ արտահայտի միայն իրավունքի շահերը (օրենսգրքի 23–րդ հոդված), սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը,

– ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ դատարանի կողմից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից և ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը խախտում է նաև կողմերի միջև հավասարության սկզբունքն ի շահ մեղադրանքի կողմի՝ դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված՝ անձի դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը,

– ՀՀ Սահմանադրության 21–րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը և քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի են միմյանց հետ: ....

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն էական է համարում շեշտադրել, որ խնդիրը ո՛չ այնքան և ո՛չ միայն վերոնշյալի մեջ է, այլ նրա, որ **գործը դատական քննության նախապատրաստելիս** դատարանի խնդիրը չէ մինչդատական վարույթում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումներ բացահայտելը և հենց այդ փուլում գնահատելը: Նման մոտեցումն ինքնին կհակասեր քրեադատավարական տվյալ փուլի ողջ տրամաբանությանը և կպարունակեր ինչպես քրեադատավարական մի շարք սկզբունքներից բխող պահանջների, այնպես էլ արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ: Սահմանադ-

րական դատարանը գտնում է, որ եթե մինչդատական վարույթում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, ապա դրանք դատական քննության ժամանակ կարող են և պետք է դառնան համարժեք գնահատման առարկա:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–674, 30 հունվարի, 2007 թ.

6. .... Մինչդեռ քրեական դատավարությունը բաղկացած է մի քանի փուլերից՝ հետաքննություն, նախաքննություն և այլն, որոնցով վարույթն իրականացնող մարմինները տարբեր են, և դատարանը քրեական գործն իր վարույթ է ընդունում միայն դատաքննության փուլում: Դատավարական մյուս փուլերի, մասնավորապես՝ մինչդատական վարույթի նկատմամբ, օրենսդիրը սահմանել է դատական վերահսկողության առանձնակի կարգ, որը բխում է այդ հարաբերություններում անձի իրավական կարգավիճակի առանձնահատկություններից:

ՍԴՈ–836, 27 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի փաստարկները չեն վկայում վիճարկվող դրույթի անորոշության կամ ոչ իրավաչափ լինելու մասին: Տվյալ դրույթը կոչված է կարգավորելու քննիչի՝ որպես քրեական դատավարության մասնակցի և քրեական գործի նախաքննության շրջանակներում դրա բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված և պատասխանատու պաշտոնատար անձի լիազորությունը՝ **վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողությունների** կատարում պահանջելու վերաբերյալ, որպիսիք քննիչի գնահատմամբ կոնկրետ գործով կարող են անհրաժեշտ քննչական գործողություններ հանդիսանալ՝ քրեական գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմամբ պայմանավորված խնդիրներ լուծելու համար (ապացուցման ենթակա հանգամանքների պարզում, ապացույցների ձեռքբերում, դրանց գնահատում և այլն): Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննիչին օրենքով և վիճարկվող վերոհիշյալ նորմով այդպիսի լիազորություն վերապահելն իրավաչափ է, համապատասխանում է նրա գործառույթներին և ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում:

ՍԴՈ–934, 4 փետրվարի, 2011 թ.

7. .... **Երկրորդ**՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ քրեական գործով վարույթի շրջանակներում մեղադրանքի առաջադրման (փոփոխման, լրացման), ինչպես նաև մեղադրական եզրակացության կազմման (փոփոխման, լրացման) և հաստատման դատավարական ընթացակարգերում, մի կողմից, քննիչի, մյուս կողմից՝ դատախազի լիազորությունների (իրավունքների ու պարտականությունների) օրենսդրական վերոհիշյալ տարանջատումը բխում է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրության 103–րդ հոդվածի իրավակարգավորման ընդհանուր խնդիրներից ու նպատակներից, հիմք ընդունելով պետական իշխանության իրականացման օրինականության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 5–րդ հոդվածում ամրագրված սկզբունքը, համաձայն որի՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու չեն կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով: Հետևաբար, դատախազն իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որպիսիք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով: Մյուս կողմից, դատաքննության փուլում դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման, լրացման, ամբաստանյալին նոր մեղադրանք առաջադրելու դեպքերում, դատարանի գործառույթը պետք է հիմնվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23–րդ հոդվածում ամրագրված մրցակցային արդարա-

դատության այն սկզբունքի վրա, համաձայն որի. «դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը»:

Երրորդ՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ հոդվածներում ամրագրված են հանցավոր արարքի կատարման մեջ մեղադրվող անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներ: Միաժամանակ, Սահմանադրության 3-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան պետության պարտականությունն է ապահովել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ու անձեռնմխելիությունը: Քրեական գործի վարույթում մեղադրական եզրակացությունը ոչ միայն դատավարական փաստաթուղթ է, որով ամփոփվում են նախաքննության արդյունքները, ներկայացվում են անձին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը և այն հիմնավորող ապացույցները, այլև հնարավորություն է ընձեռվում ամբաստանյալին (նրա օրինական ներկայացուցչին) կազմակերպելու և իրականացնելու առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ կոնկրետ մեղադրանքի և այն հիմնավորող ապացույցների շրջանակում: Մեղադրական եզրակացությունն իրավական հնարավորություն է ստեղծում նաև գործով շահագրգիռ այլ անձանց՝ ապահովելու իրենց խախտված իրավունքների պաշտպանությունը:

Չորրորդ՝ սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև արձանագրել, որ թեև մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և կայացված որոշումները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, այդուհանդերձ, մինչդատական վարույթի արդյունքները կանխորոշում են դատական քննության սահմանները, այսինքն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որը նրան առաջադրվել է մինչդատական վարույթում:

ՍԴՈ-935, 4 փետրվարի, 2011 թ.

5. .... Հիմք ընդունելով այն, որ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չէին կարող հայտնի լինել հետաքննության կամ նախաքննության մարմնին տվյալ գործով վարույթն իրականացնելիս՝ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազը օբյեկտիվորեն չի կարող նոր կամ նոր երևան եկած հանգամանքը հաշվի չառնելը դիտարկել որպես հետաքննության կամ նախաքննության մարմնի կողմից տվյալ գործով վարույթն իրականացնելիս թույլ տրված դատավարական սխալ:

ՍԴՈ-1008, 24 հունվարի, 2012 թ.

6. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Սահմանադրաիրավական այդ դրույթն ունի սկզբունքային նշանակություն՝ օրենքով երաշխավորելու իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք անհրաժեշտ են անձի իրավունքները և ազատություններն անիրավաչափ գործողություններից պաշտպանելու, հասցված վնասը վերականգնելու համար: Այդ նորմատիվ պահանջն անվերապահ կիրառելի է հավասարապես իրավական ցանկացած, այդ թվում՝ նաև քրեադատավարական գործընթացում և, մասնավորապես՝ քրեական գործի նախնական քննության փուլում: Օրենքով սահմանված կարգով այդ փուլի շրջանակներում են ձեռք բերվում և հետազոտվում հանցագործության կատարման փաստի հետ կապված բոլոր հանգամանքները, որպիսիք ապացուցողական հիմք կարող են հանդիսանալ քրեական դատավարության հետագա փուլերում դրանց վերջնական իրավական գնահատական տալու և անհրաժեշտության դեպքում պետական հարկադրանք կիրառելու համար: Հետևաբար, իրավական այդ

գործընթացների նախնական փուլի շրջանակներում անձի՝ իր իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքի երաշխավորումը նույնքան կարևոր է, որքան հետագա փուլերում: Սակայն, ելնելով քրեական դատավարության ողջ գործընթացում և վերջինիս առանձին փուլերում լուծվող խնդիրների և առաջադրված նպատակների, դրանց լուծման իրավական միջոցների ու մեթոդների առանձնահատկություններից, միաժամանակ նաև՝ այդ գործընթացներում ներգրավված բոլոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, օբյեկտիվորեն կարող են նախատեսվել իրավական պաշտպանության առանձնահատուկ համապատասխան միջոցներ և ձևեր, որպիսիք միտված լինեն նաև քրեական հետապնդում իրականացնող իրավասու մարմինների առջև օրենքով դրված խնդիրների արդյունավետ իրականացմանը, անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնմանը: Այդպիսի միջոց է քրեական գործով նախաքննության գաղտնիության ապահովումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 201-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը, այն է՝ նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնը: Նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնից, ի թիվս այլնի, բխում է օրենսգրքի վիճարկվող մյուս նորմը՝ 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, որը տուժողին թույլատրում է գործի նյութերին ամբողջությամբ ծանոթանալ նախաքննության ավարտից հետո:

Նախնական քննության գաղտնիության սկզբունքն ինքնանպատակ չէ: Նախնական քննության մարմիններին ուղղված՝ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման օրենսդրական պահանջը չի կարող արդյունավետ կատարվել, նախնական քննության խնդիրները չեն կարող արդյունավետ լուծում ստանալ նախնական քննության տվյալների գաղտնիության բացառման պայմաններում: ....

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նախնական քննության փուլում՝ մինչև նախաքննության ավարտը տուժողի համար մատչելի՝ քրեական գործի վերոհիշյալ նյութերը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածին համապատասխան, հավասարապես մատչելի են նաև տուժողի իրավահաջորդի համար:

.... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն առանձնացնում է մինչև նախնական քննության ավարտը (գործով մեղադրական եզրակացություն կազմելը) տուժողի և/կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև տուժողի իրավահաջորդի համար մատչելի՝ գործի նյութերի որոշակի ողջամիտ շրջանակ, որոնց վերաբերյալ տուժողի տեղեկացվածությունը նախնական քննության փուլում ապահովում է տուժողի՝ բացարկներ հայտնելու, միջնորդություններ հարուցելու, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի գործողություններն ու որոշումները բողոքարկելու իրավունքներն իրացնելու հնարավորությունը և այդպիսով երաշխավորում է նաև տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը մինչդատական վարույթի ընթացքում:

Ինչ վերաբերում է նախնական քննության այն տվյալներին, որոնք մինչև դրա ավարտը կարող են հրապարակվել միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ և կարող են մատչելի դառնալ տուժողին միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից իր հայեցողության իրացման արդյունքում, ապա այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, ինչպես դա նախատեսված է ՀՀ քր. դատ. օր. 102-րդ հոդվածով: **Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ կապակցությամբ կա-**

յացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ: Այս առնչությամբ հատկանշական է, որ եվրոպական մի շարք երկրների (Էստոնիա, Սերբիա և այլն) քրեական դատավարության օրենսգրքերը հստակ սահմանում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում քրեական գործի նյութի հրապարակումը: Մասնավորապես, դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտրային գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելուն կամ անձի պատիվը ոտնահարելուն, անչափահասի շահերին վնաս պատճառելուն և այլն: Այս ուղղությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության զարգացումը լրացուցիչ երաշխիքներ կստեղծի տուժողի շահերի պաշտպանության և նախաքննության նկատմամբ վստահության ամրապնդման գործում:

8. Վիճարկվող դրույթների սահմանադրականությունը՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխավորման տեսանկյունից գնահատելու նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ճշգրտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու՝ տուժողի իրավունքի իրացման պահը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Նախնական քննության ավարտը» վերտառությամբ 196-րդ հոդվածը սահմանում է նախնական քննության ավարտման պահը, այն է՝ նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ գործի նյութերին ծանոթացնելը» վերտառությամբ 265-րդ հոդվածը և «Քրեական գործի նյութերին ծանոթանալու կարգը» վերտառությամբ 266-րդ հոդվածը կարգավորում են մեղադրական եզրակացությունը կազմելուց առաջ, այն է՝ նախնական քննության ավարտից առաջ, գործի նյութերին՝ շահագրգիռ սուբյեկտներին, այդ թվում՝ տուժողին, ծանոթացնելու հետ կապված հարաբերությունները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված դրույթների համադրված վերլուծությունը վկայում է, որ գործի նյութերին՝ շահագրգիռ սուբյեկտների, այդ թվում՝ տուժողի կողմից ծանոթանալու ժամանակահատվածը կազմում է նախաքննության ինքնուրույն մաս, նախորդում է նախաքննության ավարտին, և, հետևաբար, տուժողը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածով սահմանված՝ գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքն իրացնում է մինչև նախաքննության ավարտը:

Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 267-րդ հոդվածն ամրագրում է գործի նյութերին ծանոթանալուց հետո՝ լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու կամ նոր դատավարական որոշումներ կայացնելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունը: Ընդ որում, նույն հոդվածը հստակորեն սահմանում է միջնորդությունը բավարարելուց հրաժարվելու դեպքում հրաժարվելու մասին որոշման բողոքարկման կարգը:

Սահմանադրական դատարանը, արձանագրելով, որ իրավակիրառական պրակտիկան ևս զարգացել է նշված ուղղությամբ, միաժամանակ կարևորում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «նախաքննության ավարտման պահից» ձևակերպման մեկնաբանումը և կիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ, 265-րդ և 266-րդ հոդվածների տրամաբանությանը համապատասխան:

Նախնական քննության փուլում տուժողի վերոհիշյալ իրավունքների, նախաքննություն իրականացնող մարմինների համապատասխան պարտականությունների համադրված վերլուծության հիման վրա, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տուժողի՝ գործի նյութե-

րին ծանոթանալու իրավունքն իրացվում է **մինչև մեղադրական եզրակացություն կազմելը,** այն է՝ նախաքննության ինքնուրույն մաս կազմող և դրա ավարտին նախորդող ժամանակահատվածում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն խոչընդոտում տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը: Ըստ այդմ, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական մակարդակում ապահովված է արդարացի հավասարակշռություն, մի կողմից, նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնով հետապնդվող իրավաչափ նպատակի, մյուս կողմից՝ մինչդատական վարույթում տուժողի իրավունքների իրացումը և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակի միջև: Բացի դրանից, անհրաժեշտ է քրեական դատավարությունը դիտարկել համակարգային ամբողջականության մեջ և իրավունքների իրացման որևէ փուլում օրենքի հիման վրա նախատեսված ընթացակարգային իրավաչափ սահմանափակումը չի կարող դիտարկվել որպես Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված իրավունքների ոտնահարում:

ՍԴՈ-1253, 2 փետրվարի, 2016 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ օրենսդրության մեջ, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, առկա են «և» շաղկապով տարանջատված տարաբնույթ իրավական նորմեր, որոնցից ոչ բոլորն են ամրագրում տվյալ նորմի կիրառման միաժամանակյա անհրաժեշտ պայմանները: Դրանք կարող են, ի թիվս այլնի, լինել նորմ-սկզբունքներ, նորմ-նպատակներ, նորմ-խնդիրներ, ինչպես նաև կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող այնպիսի նորմեր, որոնք չեն ամրագրում որևէ պայման, կամ որ նույնն է՝ տվյալ նորմի կիրառումը չեն պայմանավորում պայմանների համակցությամբ: Այդպիսի կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող նորմերից է, օրինակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի նորմը, որը, ի թիվս այլնի, պարունակում է հետևյալ դրույթները. «հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ», «բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները»:

Վերը նշված առաջին դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կոնկրետ հանցագործության դեպքի առիթով ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը հնարավոր չի համարում միաժամանակ իրականացնել հետաքննություն և նախաքննություն, քանի որ, որպես կանոն, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության՝ հետաքննությունը նախորդում է նախաքննությանը:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա դրույթներն իրավակիրառական պրակտիկայում սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա մեկնաբանելու և կիրառելու պայմաններում կարող են ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածին համահունչ լիարժեք երաշխավորել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին հետաքննության մարմնի կողմից օրենքի պահանջների կատարման ստուգման ՝ դատախազի լիազորությունների բնականոն և արդյունավետ իրականացումը, և նման պարագայում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍԴՈ-1191, 24 փետրվարի, 2015 թ.

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ինչպես սահմանված է վերջինիս 2-րդ և այլ հոդվածներում, ի թիվս այլ խնդիրների, կոչված է երաշխավորելու անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանրորեն առավել վտանգավոր (հանցավոր) արարքներից: Այդ օրենսգրքի համապատասխան նորմերը կոչված են սահմանելու իրավասու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից քրեական գործերով վարույթի իրականացման կարգը, որպեսզի քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի, ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման:

Այսպիսով, քննության առարկա օրենսգիրքը կոչված է երաշխիք հանդիսանալու հանրային-իրավական այնպիսի կարևորություն ունեցող խնդիրների լուծման համար, որպիսիք անմիջականորեն բխում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 14.1-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և բազմաթիվ այլ հոդվածների պահանջներից: Հիշյալ խնդիրների լուծումը ենթադրում է ոչ միայն դրանց նորմատիվ հաստատագրում, այլև իրավական համապատասխան ընթացակարգերի և վերջիններիս իրականացման բավարար ու անհրաժեշտ պայմանների երաշխավորում, այդ թվում՝ արդարադատության իրականացման բնագավառում: Այսինքն՝ քրեական վարույթի իրականացման այնպիսի փուլում, որի շրջանակներում իրավական վերջնական գնահատական է տրվելու անձի՝ քննության առարկա վարքագծին, և անհրաժեշտության դեպքում կիրառվելու է քրեական օրենքով սահմանված պետական հարկադրանքի այս կամ այն միջոցը:

ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍԴՈ-947, 5 ապրիլի, 2011 թ.

6. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև դիմողի հարցադրումները, հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրների համատեքստում:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրները» վերտառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են, ի թիվս այլնի, հանցավոր ոտնձգություններից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, հանցագործությունների կանխումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության խնդիրները: ՀՀ քաղաքացիական օրենսդրության խնդիրներն են, ի թիվս այլնի, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացումը, խախտված իրավունքների վերականգնման և դրանց դատական պաշտպանության ապահովումը:

ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլուծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջև դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետևանքով իրավունքների և ազատությունների **խախտումների կանխման** խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրու-

թյան դեպքում օրենսդիրն իր առջև դրել է **խախտված իրավունքների վերականգնման** ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքացիական դատավարության կարգով նշված իրավունքների վերականգնման համար նախադրյալներ հանդիսացող նորմեր: Այդպիսիք են, մասնավորապես, դիմողի կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 և 313-րդ հոդվածները, որոնք նախադրյալներ են հանդիսանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքի կամ ստրկացուցիչ գործարքի հետևանքով խախտված իրավունքները քաղաքացիական դատավարության կարգով վերականգնելու համար:

Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունքների վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականխիչ նշանակություն և քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները: Այդ է պատճառը նաև, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտը, որի միջոցով գործնականում ապահովվում է հանցագործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնումը:

Վերոգրյալից բխում է, որ կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական և քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, և դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ. քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը:

ՍԴՈ-1252, 26 հունվարի, 2016 թ.

5. ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Այդ խնդիրների իրականացման համար ՀՀ քրեական օրենսգիրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներ ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդված): ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասով սահմանվում է նաև պատժի նպատակը, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

ՍԴՈ-871, 30 մարտի, 2010 թ.

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ անմեղության կանխավարկածն անձին պաշտպանում է ոչ թե քրեական հետապնդման այն հիմքից, որը կասկած է թողնում անձի՝ տվյալ հանցագործությանը մասնակցության առնչությամբ, այլ այնպիսի որոշումներից կամ

դրանցում այնպիսի ձևակերպումներից, որոնք կարող են կասկածի ենթարկել տվյալ անձի արդարացումը կամ անմեղությունը: Նշված հանգամանքը գործնականում կարող է ավելի մեծ չափով իրավաբանական նշանակություն ունենալ արդարացված անձին պատճառված վնասի հատուցման իրավունքի կապակցությամբ ընդունվող որոշումների համար: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը վիճարկվող հիմքով արդարացվածին ոչ միայն պաշտպանում է նման հետագա ոչ իրավաչափ որոշումներից, այլ պաշտպանում է նաև հենց քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ այնպիսի ձևակերպումներ նախատեսելուց, որոնք կարող են կասկածի ենթարկել անձի արդարացումը կամ անմեղությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս չի թույլատրվում որոշման մեջ տալ ձևակերպումներ, որոնք կասկածի տակ կդնեն այն անձի անմեղությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Հաշվի առնելով, որ վիճարկվող հիմքով քրեական հետապնդման դադարեցման և քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված արդարացնող այլ հիմքերով քրեական հետապնդման դադարեցման միջև իրավունքի տեսանկյունից որևէ որակական տարբերություն օրենսդրությունը չի նախատեսում, ինչպես նաև նկատի ունենալով, որ օրենսդրությունը նախատեսում է պաշտպանություն ընդդեմ այն ակտերի, որոնք կարող են կասկածի ենթարկել վիճարկվող հիմքով անձի արդարացումը կամ նրա անմեղությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու մասով վիճարկվող հիմքն իրավակիրառական պրակտիկայում համարժեք իրացման դեպքում չի կարող վտանգել անձի անմեղության կանխավարկածը:

8. .... ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ինստիտուտի գոյությունն առավելապես իմաստավորվում է մրցակցային դատավարության սկզբունքի կիրառման շրջանակներում՝ անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ ապացուցման պարտականությունը կրողի կողմից հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցության չապացուցելը հավասարազոր է անձի անմեղության ճանաչմանը: Իսկ իրավակիրառական պրակտիկան հետևողականորեն պետք է իրացնի ՀՀ քր. դատ. օր. 261-րդ հոդվածի վերոհիշյալ պահանջը:

Մեղավորությունը հիմնավորելու համար ապացույցների բավարար համակցության բացակայության դեպքում է միայն դադարեցվում քրեական հետապնդումը՝ 35-րդ հոդվածի երկրորդ մասի հիմքով: Մինչդեռ ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածի 2-րդ մասի «....իսկ գործի վարույթը ենթակա է կարճման» դրույթը կարող է հանգեցնել իրավական կարգավորման ներքին հակասականության ու իրավական անորոշության: Ըստ էության նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում հստակ չեն առանձնացված գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման կամ այդ երկու ինստիտուտների համատեղ կիրառման հիմքերը: Հոդվածի երկու մասերի համադրված վերլուծությունը, ինչպես նաև միջազգային պրակտիկան վկայում են, որ ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածի 2-րդ մասն սկզբունքորեն վերաբերում է քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերին:

Միաժամանակ, ՀՀ քր. դատ. օր. 306-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ, «Մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ եթե դատախազը հրաժարվում է առանձին մեղադրյալի մասով՝ **դադարեցնում է քրեական հետապնդումն այդ մեղադրյալի նկատմամբ**»: Իսկ համաձայն նույն օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի՝ «2. Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կե-

տերով և երկրորդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ:

3. Եթե արդարացման դատավճիռ կայացնելիս անհայտ է մնում այդ հանցանքը կատարած անձը, դատարանը, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, գործն ուղարկում է դատախազին՝ լուծելու նոր անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հարցը: 4. Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ»:

Վկայակոչված դրույթների և քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր հասկացությունների (մասնավորապես՝ 6-րդ հոդվածի 42-րդ կետ) համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ քր. դատ. օր. 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, ինչը հավասարազոր է անձի անմեղության փաստի հաստատման, իսկ դատաքննության փուլում ապացույցների անբավարարության հանգամանքը նաև արդարացման դատավճիռ կայացնելու հիմք է:

ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

8. .... Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ անձի դատական պաշտպանության իրավական երաշխիքներն ամրագրող 6-րդ հոդվածը՝ ընդհանրապես, և դրա 2-րդ կետում ամրագրված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը կիրառելի են ոչ միայն ներպետական օրենսդրությանը համապատասխան որպես քրեական հանցանք որակված արարքների առնչությամբ հարուցված վարույթների նկատմամբ, այլև, պայմանավորված տվյալ արարքի բնույթով և նախատեսված պատասխանատվության տեսակներով ու խստությամբ, կարող են կիրառվել նաև վարչական և կարգապահական պատասխանատվության վարույթների նկատմամբ: Սակայն վարչական կամ կարգապահական պատասխանատվության վարույթների առնչությամբ անմեղության կանխավարկածի և դրա հետ փոխկապակցված «լռելու իրավունքի» կիրառելիության հանգամանքը դեռևս բավարար պայման չէ վիճարկվող նորմը նշված սկզբունքի և իրավունքի ենթադրյալ խախտման տեսանկյունից քննության առարկա դարձնելու համար: Այս առնչությամբ էական նշանակություն ունի «մեղադրանք», «մեղադրվող», «մեղադրվում է» հասկացությունների բովանդակությունը: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ «մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես «իրավասու մարմինների կողմից շահագրգիռ անձին ուղղված պաշտոնական ծանուցում առ այն, որ տվյալ անձը ենթադրաբար կատարել է տվյալ իրավախախտումը»: Մեղադրանքը որոշ դեպքերում կարող է դրսևորվել նաև այլ ձևերով, սակայն, էականն այն է, որ այն **պետք է վկայի իրավախախտում կատարած լինելու ենթադրության մասին** (տե՛ս, Օզթուրքն ընդդեմ Գերմանիայի գործով 1984 թ. փետրվարի 21-ի վճիռը, Ozturk v. Germany):

.... Ելնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի և «քրեական մեղադրանք» հասկացության նշված բովանդակությունից և հաշվի առնելով, որ իրավասու մարմինների կողմից տնտեսավարող սուբյեկտին՝ վիճարկվող նորմում ամրագրված պարտականության կատարման պահանջ ներկայացնելու դեպքում որևէ իրավախախտում կատարած լինելու ենթադրություն դեռևս առկա չէ՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 21 հոդվածով սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքը և դրա հետ փոխկապակցված՝ 22 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու պարտավորություն չկրելու սկզբունքը խնդրո առարկա իրավիճակում կիրառելի չեն:

ՍԴՈ-833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

7. Քրեական գործով վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ փաստաբանի մասնակցության անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես մրցակցային դատավարության շրջանակներում մեղադրանքը հերքող, ամբաստանյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքների բացահայտման և դատարանին ներկայացնելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի նպատակը անձանց խախտված իրավունքների (սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված) վերականգնման հնարավորության և ոչ թե քրեական մեղադրանքի հարցի լուծումն է:

ՍԴՈ-852, 19 հունվարի, 2010 թ.

7. .... ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դատավճիռների վերանայման իրավունքը դիտարկելով ՀՀ եռաստիճան դատական համակարգի կառուցվածքի առանձնահատկությունների, ինչպես նաև ՀՀ ստանձնած վերոհիշյալ միջազգային պարտավորությունների հետ համադրության մեջ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ **քրեական մեղադրանքի որոշումը չի կարող սահմանափակվել միայն մեկ ատյանի դատարանի կողմից քրեական գործի քննության շրջանակներով:** Հետևաբար, հաշվի առնելով առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռները վերաքննիչ դատարան բողոքարկելու՝ օրենքով սահմանված կարգն ու վերաքննիչ դատարանի լիազորությունները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճիռների՝ վերաքննիչ դատարան բողոքարկման միջոցով իրացվում է վերադաս դատարանի կողմից անձի նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունքը :

ՍԴՈ-1174, 4 նոյեմբերի, 2014 թ.

6. Անդրադառնալով ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասում ամրագրված դրույթին՝ սահմանադրական դատարանը նշում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի թե՛ առաջին և թե՛ երկրորդ նախադասություններով սահմանվում է մեղադրանքը փոփոխելու հնարավորություն՝ մեղադրանքը փոփոխելու կարգի սահմանումը վերապահելով օրենսդրին:

.... Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ ամրագրված՝ եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը՝ անհրաժեշտ օրենսդրական երաշխիք է հանդիսանում մեղադրանքի փոփոխության պարագայում ամբաստանյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՔՐԵԿԱՆ ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ

ՍԴՈ-710, 24 հուլիսի, 2007 թ.

6. .... ՀՀ քր.դատ.օր.-ը դատարանի կողմից քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու նորմեր է նախատեսում սկսած առաջին ատյանի դատարանում գործը դատական քննության նախապատրաստելու փուլից մինչև վերաքննիչ և վճռաբեկ վարույթները: ՀՀ քր.դատ.օր.-ի 297 հոդվածը սահմանում է, որ գործը դատական քննության նախապատրաստելիս անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու համար քրեական

գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում, երբ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում: Նույն հիմքով քրեական գործը դատական քննության փուլից լրացուցիչ նախաքննության ուղարկելու դրույթ է պարունակում ՀՀ քր.դատ.օր.-ի 311 հոդվածի 1-ին կետը: ....

7. ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ դատարանի կողմից: ՀՀ քր.դատ.օր.-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալ իր դերի շրջանակներից և ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը նաև կողմերի միջև հավասարության նժարը խախտում է ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի նման ձևով կիրառումը պարունակում է նաև արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ:

Քրեական գործի լուծման ձգձգումն ընդհանրապես բացասաբար է անդրադառնում մեղադրյալի, ինչպես նաև տուժողի վրա: Սակայն մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ավելի վտանգավոր է գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումն այն դեպքում, երբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը: ՀՀ քր.դատ.օր.-ի 138 հոդվածը սահմանում է, որ քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին: Նույն հոդվածն ամրագրում է նաև, որ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան: Այսինքն, գործը դատարանում գտնվելու ժամանակամիջոցում անձի՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը չի հաշվվում մինչդատական վարույթում օրենքով սահմանված առավելագույն ժամկետի՝ մեկ տարվա մեջ: Ստացվում է, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հետևանքով անձն անազատության մեջ կարող է պահվել մեկ տարուց շատ ավելի երկար ժամանակ:

8. ՀՀ Սահմանադրության 21 հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը և քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի են միմյանց հետ: Քրեական գործը նման կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում ըստ էության շրջանցվում է նշված հոդվածում ամրագրված չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը:

10. Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելն անհամատեղելի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են դատաքննությունն անկողմնակալ դատարանի կողմից և այն հավասարության ու մրցակցության սկզբունքների հիման վրա իրականացնելու պահանջները: Չնայած նրան, որ դատաքննության հավասարության և մրցակցության սկզբունքները հստակ ամրագրված չեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կող-

միջ՝ 6-րդ հոդվածում նշված «արդարացի լսումներ» հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձևավորվել է հստակ նախադեպ, համաձայն որի՝ լսումների արդարացիության տարրերից են դատավարության կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության և հավասարության սկզբունքներ, միաժամանակ հետևողականորեն իր վճիռներում բացահայտել է այդ սկզբունքների բովանդակությունը, որոնց համաձայն՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ:

11. Գործը դատարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ գործող քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգն անհամատեղելի է նաև մեր երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կատարվող դատաիրավական բարեփոխումների տրամաբանության հետ, բարեփոխումներ, որոնք ուղղված են դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազատմանը: Մասնավորապես, «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքը ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 2007 թ. փետրվարի 22-ին, որում քննության առարկա խնդրի առնչությամբ հայեցակարգային նոր մոտեցում է որդեգրվել: Այդ օրենքի 26 հոդվածի 4-րդ մասում ամրագրված է. «Եթե առաջին ատյանի դատարանում մեղադրողը գտնում է, որ մեղադրանքը ենթակա է մեղմացման կամ խստացման, քանի որ դատական քննության ժամանակ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույթում, դատախազն իրավունք ունի միջնորդություն ներկայացնելու դատարան՝ արարքը վերաորակելու նպատակով դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար….»: Փաստորեն, օրենքի այս նոր դրույթը բացառում է դատարանի կողմից գործը լրացուցիչ քննության ուղարկելու գործող կարգը, և այս տրամաբանությունը կարող է դրվել նաև ՀՀ քր.դատ.օր.-ի բարեփոխման հիմքում: Բոլոր դեպքերում, եթե գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է հանգուցալուծվի դատական նիստում:

ՍԴՈ-872, 2 ապրիլի, 2010 թ.

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու վերաբերյալ նախկինում գործող և օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված ներկա օրենսդրական կարգավորման ինստիտուտների համադրված վերլուծության արդյունքներով դատարանի մեղադրական թեքումից ձերբազատվելու երաշխիքների, դատարանի անկախության և անկողմնակալության, դատավարության կողմերի հավասարության ու մրցակցության սկզբունքների ու երաշխիքների ապահովման սահմանադրաիրավական գնահատումը:

Սահմանադրական դատարանը՝ իր ՍԴՈ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելով քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորող նորմերը, արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ, որոնք էական նշանակություն ունեն նաև սույն գործի առնչությամբ, և որոնք, մասնավորապես, հանգել են հետևյալին.

նախ. երբ դատարանը հայտնաբերելով, որ գործով ապացույցները ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի էական խախտումներով, փոխանակ ՀՀ քր.դատ.օր-ի 105-րդ հոդվածի հիմքով, որը համահունչ է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածին, որպես ապացույց չօգտագործի դրանք և մյուս ապացույցների գնահատմամբ լուծի գործի ելքը, գործը վե-

ռադարձնում է լրացուցիչ նախաքննության: Դրանով իսկ դատարանը նախաքննության մարմնին հնարավորություն է տալիս «վերակենդանացնել» ձախողված մեղադրանքը: Մյուս կողմից, խախտվում է քրեական դատավարության կարևոր մի սկզբունք, ըստ որի՝ դատարանը չպետք է հանդես գա մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, այլ արտահայտի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր.դատ.օր-ի 23-րդ հոդված), սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը:

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ դատարանի կողմից: ՀՀ քր.դատ.օր-ով նախատեսված կարգով գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելով՝ դատարանը դուրս է գալիս դատավարությունում անկողմնակալության սկզբունքի շրջանակներից և ուղղորդում է լրացուցիչ նախաքննության ընթացքը՝ իրականացնելով արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ: Դատարանը խախտում է նաև կողմերի միջև հավասարության սկզբունքն ի շահ մեղադրանքի կողմի, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ անձի դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Երրորդ՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտի կիրառումը պարունակում էր նաև արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ, որի պարագայում սահմանադրական դատարանն արձանագրեց, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու հետևանքով անձն անազատության մեջ կարող է պահվել մեկ տարուց ավելի երկար ժամկետով:

Չորրորդ՝ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևոր բաղադրատարրերից է չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու պահանջը: Նշված պահանջի կատարումը և քրեական գործը դատարանի որոշմամբ լրացուցիչ նախաքննության ուղարկելը գործնականում անհամատեղելի էին միմյանց հետ: Քրեական գործը նախկինում նախատեսված կարգով լրացուցիչ նախաքննության ուղարկելու դեպքում ըստ էության շրջանցվում էր նշված հոդվածում ամրագրված՝ չփարատված կասկածները հօգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական պահանջը:

Հինգերորդ՝ սահմանադրական դատարանը գտել է նաև, որ դատարանի որոշմամբ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելն անհամատեղելի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են դատաքննությունն անկողմնակալ դատարանի կողմից և այն հավասարության ու մրցակցության սկզբունքների հիման վրա իրականացնելու պահանջները:

Վեցերորդ՝ գործը դատարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված նախկին կարգն անհամատեղելի էր նաև երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կատարվող դատաիրավական բարեփոխումների տրամաբանության հետ, որոնք ուղղված են դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազատմանը:

Թվարկված իրավական դիրքորոշումների շրջանակներում սահմանադրական դատարանը նկատի էր ունեցել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերափոխումները համահունչ կլինեն սահմանադրական բարեփոխումների ընդհանուր

տրամաբանությանը և քրեական գործի դատաքննության հիմքում կդրվի այն ելակետային սկզբունքի լիարժեք արմատավորումը, ըստ որի, երբ գործն ընդունվել է դատարանի վարույթ, ապա այն պետք է սկզբունքորեն լուծվի դատաքննության արդյունքում մեղադրանքի իրավական գնահատման վերաբերյալ դատարանի վերջնական որոշմամբ: ....

9. .... **Երրորդ՝** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի համաձայն. «Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է»: Հիշյալ դրույթը գրեթե նույնությամբ ամրագրված է մի շարք այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում (Էստոնիա՝ հոդվ. 215, Լեհաստան՝ 398, Լատվիա՝ 461-462, Սերբիա՝ 341, Ուկրաինա՝ 277, Ղազախստան՝ 320, Մոլդովա՝ 326, Բուլղարիա՝ 287 և այլն): Սակայն որն է էական տարբերությունը Հայաստանի համեմատությամբ: Դա առաջին հերթին վերաբերում է դատավարության կողմերի, մասնավորապես՝ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությանը: Այս երկրներում դատախազությունը ոչ միայն հարուցում, այլև իրականացնում է քրեական հետապնդում: Հայաստանի Հանրապետության դատախազությանը, որը ՀՀ Սահմանադրության վեցերորդ գլխում ներկայացված է որպես դատական իշխանության մարմին, քրեական գործի նախաքննության փուլում վերապահելով միայն վերահսկողական գործառույթ գործադիր իշխանության ինստիտուտների քննություն իրականացնելու գործառույթի նկատմամբ, նույն կարգավիճակի մեջ է դրվել նաև դատաքննության փուլում: Դրանից բխեցվում է, որ եթե նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով պետք է քննչական և այլ բնույթի գործողություններ իրականացվեն, ապա ամբաստանյալը կրկին պետք է հայտնվի մեղադրյալի կարգավիճակում, որպեսզի համարժեք գործողությունների դեպքում ի վիճակի լինի պաշտպանել իր իրավունքները: Սակայն օրենսդրությունը կարգավիճակի նման փոփոխության ինստիտուտ չի նախատեսել, և դա նաև կհակասեր սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմանը: Արդյունքում՝ քողարկված ձևով գործադրվում է գործը լրացուցիչ քննության վերադարձնելու պրակտիկան, որը չի բխում նաև ՀՀ քր. դատ. օր. վիճարկվող նորմերի դրույթներից, սակայն հարուցել է դիմողի ներկայացուցիչների արդարացի դժգոհությունը: Ուստի սահմանադրական դատարանը վիճարկվող հոդվածի սահմանադրականությունը գնահատում է դրանում բովանդակվող բոլոր մասերի համակարգային ամբողջականության մեջ՝ նաև դրանից բխող իրավական հետևանքների առումով:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՍԴՈ-1262, 22 մարտի, 2016 թ.

6. Սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

– արդյոք վիճարկվող դրույթները համակարգային ամբողջականության մեջ ձևակերպված են այնքան որոշակի և հստակ, որ հնարավորություն տան իրավունքի սուբյեկտներին միանշանակ ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել այդ պահանջներին,

– օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքների ապահովվածությունը՝ հաշվի առնելով անձի թե ընդհանուր իրավական և թե դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները,

– ֆիզիկական կամ իրավաբանական անձանց արդար դատաքննության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունը:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առևտրի, արդյունաբերության, ներդրումային գործունեության ոլորտում միջազգային կապերի զարգացումը, արտաքին առևտրի շրջանառության աճն անխուսափելիորեն հանգեցնում են տարբեր ազգային իրավական համակարգերի տնտեսվարող սուբյեկտների միջև վեճերի և տարաձայնությունների թվի մեծացմանը: Դրանք գրեթե միշտ ընդդատյա են արբիտրաժային մարմիններին, որոնց վճիռները, որպես կանոն, այլ պետության տարածքում իրավաբանական ուժ են ստանում միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն այդ առթիվ տալիս է իր համաձայնությունը: Ճանաչման դեպքում այլ պետության տարածքում այդ վճիռները ձեռք են բերում որոշակի հատկանիշներ՝ դրանք են՝ անհերքելիությունը, բացառիկությունը, ինչպես նաև կատարելիությունը:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ ՀՀ ինքնիշխանության սկզբունքից բխում է, որ օտարերկրյա կամ միջազգային արբիտրաժների որոշումները, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների ուժով, Հայաստանի Հանրապետությունում օրինական ուժ կարող են ստանալ միայն ՀՀ դատական մարմինների ակտերով դրանց ճանաչման պայմանով: Նույնը բխում է նաև «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիայի 3-րդ հոդվածի ձևակերպումից, որից հետևում է, որ այլ երկրի կամ միջազգային արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչումն է այն դարձնում պարտադիր, հետևաբար՝ նաև կատարման ենթակա: Նշված կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 29-ից (կոնվենցիայում ամրագրված դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-67 որոշմամբ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247^7-րդ հոդվածի 2-րդ կետը հստակ սահմանում է, որ ոչ թե միջազգային կամ օտարերկրյա արբիտրաժային մարմնի վճիռն ինքնին, այլ այն ճանաչելու վերաբերյալ ՀՀ իրավասու դատարանի որոշումն է կատարվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում գործածվող «դատական ակտ» հասկացությունը ներառում է նաև օտարերկրյա և միջազգային արբիտրաժային մարմինների ակտերը ճանաչող ներպետական դատական ակտը, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում գործածվող «արբիտրաժային տրիբունալ» եզրույթը վերաբերելի է բացառապես ներպետական արբիտրաժային մարմիններին և, հետևաբար, կիրառելի է բացառապես վերջիններիս նկատմամբ: Ինչ վերաբերում է քննության առարկա օրենքներում գործածվող «միջազգային արբիտրաժի որոշում», «դատական ակտ» և «արբիտրաժային տրիբունալի վճիռ» հասկացությունների առումով **իրավական որոշակիության** հարցին, ապա հարկ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում սպառիչ թվարկված են հարկադիր կատարման ենթակա **դատական ակտերը** և համապատասխանաբար դրանք կայացնող մարմինները: Նշված հոդվածի 3-րդ կետով հստակ ձևակերպված են և տարանջատված են **«արբիտրաժային տրիբունալ»**, 4-րդ կետով՝ **«օտարերկրյա դատարան»** և **«արբիտրաժային տրիբունալ»**, 5-րդ կետով՝ **«միջազգային դատարան»** և **«միջազգային արբիտրաժ»** հասկացությունները և, հետևաբար, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ չեն կարող:

Այդ մասին վկայում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ իրավական ակտերը մեկնաբանվում են դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.05.2008 թ. ՍԴՈ–753 որոշմամբ ամրագրել է, որ. «Օրենքի **կանխատեսելիությունը** գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը»:

Տվյալ դեպքում ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը հղում է կատարում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, իսկ նշված օրենքի 23–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերը, ինչպես նշվեց, չեն պարունակում իրավական անորոշություն: Այսինքն՝ բացակայում են տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունները, և իրավական անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկներն այս տեսանկյունից ևս հիմնավոր չեն:

8. **Օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների** խախտման վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 04.05.2010 թ. ՍԴՈ–881 որոշման 5–րդ կետում ամրագրած իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի. «....օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝.... սահմանելուն»:

Խտրականության արգելքի խախտման վերաբերյալ դիմողի փաստարկները դիտարկելով վերը նշված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում համապատասխան արբիտրաժային տրիբունալի վճիռը կատարման ներկայացնելու ժամկետների առումով ներպետական արբիտրաժային տրիբունալին դիմած կողմերի և օտարերկրյա կամ միջազգային արբիտրաժային տրիբունալին դիմած կողմերի կարգավիճակները և դրանցից բխող իրավունքների և պարտականությունների ծավալը չեն կարող նույնական լինել:

Հիմնավորված չէ նաև դիմողի այն փաստարկը, որ «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958 թ. կոնվենցիայի 3–րդ հոդվածի 2–րդ պարբերության և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի դրույթների ուժով Հայաստանի Հանրապետությունում ճանաչման ենթակա են ինչպես օտարերկրյա և միջազգային, այնպես էլ ներպետական արբիտրաժային տրիբունալների որոշումները: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը նշված կոնվենցիային միացել է հայտարարությամբ՝ այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան կկիրառի միայն մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ընդունված արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման նկատմամբ:

6. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԴՈ–1310, 4 հոկտեմբերի, 2016 թ.

7. «....Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ օրենսգրքի 223–րդ հոդվածի 1–ին մասի և 229–րդ հոդվածի 3–րդ մասի դրույթների միջև առկա չէ որևէ ներքին հակասություն, քանի որ 229–րդ հոդվածի 3–րդ մասը, ի լրումն 223–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված սուբյեկտների, նախատեսում է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող ևս մեկ սուբյեկտի՝ գործին մասնակից չդարձված անձանց, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտ է կայացվել: Հետևաբար, օրենսգրքի 229–րդ հոդվածի 3–րդ մասի առկայության պարագայում օրենսգրքի 223–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոք բերող սուբյեկտների ցանկն սպառիչ չէ, և օրենսգրքի 229–րդ հոդվածի 3–րդ մասը պետք է կիրառվի նույն օրենսգրքի 223–րդ հոդվածի 1–ին մասի հետ համադրված»:

ՍԴՈ–1314, 11 հոկտեմբերի, 2016 թ.

5. «....Սահմանադրական դատարանը գտնում է, որ հավաքների ազատության իրավունքի դատական պաշտպանությանը նախորդող իրավակարգավորումները (իրազեկում, լսումներ և անհրաժեշտության դեպքում՝ լիազոր մարմնի որոշման կայացում) անհրաժեշտ իրավական նախադրյալներ են պարունակում հավաքների ազատության իրավունքի իրացման սահմանադրաիրավական կարգավորման ընդհանուր սկզբունքների երաշխավորման առումով»:

6. «....Վարչական դատավարության հատուկ վարույթի շրջանակներում, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից (այդ թվում՝ հավաքի անցկացման վերաբերյալ գործերով), օրենսդիրը տարբերակված մոտեցում է դրսևորել՝ հիմք ընդունելով հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով վարչական դատարանի առջև դրված կոնկրետ խնդիրները և այն լուծելու իրավական արդյունավետ միջոցի ընտրության առաջնահերթությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հատուկ վարույթի շրջանակներում վարչաարդարադատական ընդհանուր կանոններից տարբեր՝ առանձնահատուկ իրավակարգավորումներ նախատեսելը, այդ թվում՝ հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների կամ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված (61–րդ հոդվածի 1–ին մաս, 75–րդ հոդված)՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացման կազմակերպական և ընթացակարգային ընդհանուր սկզբունքների իրացումը, միտված է արագ, արդյունավետ արդարադատության իրականացմանը, հանրային իրավական նշանակության հրատապ հարցերի լուծմանն ու անձանց Սահմանադրությամբ ու օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես, հավաքի անցկացման գործերով օրենսդիրը վարչական դատարանին առաջադրել է արագ (դատաքննության սեղմ ժամկետներում), մինչև իրազեկմամբ նախատեսվող միջոցառման իրականացումը կոլեգիալ կազմով իրականացնել գործի հանգամանքների ամբողջական, բազմակողմ և արդյունավետ այնպիսի քննություն իրականացնելու սահմանադրաիրավական խնդիր, որի արդյունքում գործով ըստ էության կայացված ակտն իրավաբանական ուժի տեսանկյունից լինի անշրջելի: Որպես հիշյալ խնդրի արդյունավետ իրականացման երաշխիք օրենսդիրը դիտարկել է **վար-**

չական դատարանի կոլեգիալ կազմը (երեք դատավորի կազմով) ՀՀ վարչ. դատ. օր. 203-րդ հոդված), դատարան դիմելու իրավունք ունեցող **սուբյեկտների սահմանափակ կազմը** (հավաքի կազմակերպիչ, համապատասխան տարածքի սեփականատեր կամ վարձակալ) ՀՀ վարչ. դատ. օր. 202-րդ հոդված), դատարան դիմելու և դատաքննության՝ ընդհանուր կանոնակարգումից տարբեր առավել **սեղմ ժամկետները** (ՀՀ վարչ. դատ. օր. 204-րդ հոդված)»:

7. «....Սահմանադրական դատարանը գտնում է, որ, հատուկ վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների շրջանակներում հավաքի անցկացման մասին լիազոր մարմնի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական համապատասխան երաշխիքներ նախատեսելով՝ օրենսդիրն ապահովել է **նյութական իրավունքի** նորմերի արդյունավետ իրացումը: Մինչդեռ **դատավարական իրավունքի** նորմերի խախտմամբ դատական ակտ կայացնելու հավանականությունը բացառելու համար (օրենսգրքի 152-րդ հոդվածում թվարկված կամ համանման ակնհայտ որոշ այլ դեպքերում) օրենսդիրը գործով ըստ էության ակտի բողոքարկման հնարավորություն նախատեսելով լրացուցիչ երաշխիքներ կապահովեր հավաքների անցկացման ազատության իրավունքի դատական պաշտպանության նկատմամբ հանրային առավել բարձր վստահություն ապահովելու և ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում ամրագրված սկզբունքների իրացման առավել ամբողջական նախադրյալներ նախատեսելու ուղղությամբ: Նման դիրքորոշումը բխում է նաև օրենսգրքի վերոթվարկյալ հոդվածներում ամրագրված դրույթների իրավական բովանդակությունից, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող վարչադատական ակտերի բողոքարկելիության կարգ սահմանելիս օրենսդիրն առավել իմպերատիվ է՝ ընթացակարգային իրավունքի նորմերի հնարավոր խախտումներով դատական սխալը վերահսկողության կարգով ուղղելու անհրաժեշտության հարցում (օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերություն): Սակայն նման իրավակարգավորումը հայեցակարգային նոր մոտեցում է պահանջում և լուծելի է միայն օրենսդրական հետագա համակարգային բարեփոխումների շրջանակներում»:

ՍԴՈ-389, 1 հոկտեմբերի, 2002 թ.

13. .... Եթե ընտրական ցուցակներում անճշտությունները վարչական կարգով վիճարկելու հնարավորության սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել ընտրությունների պատշաճ կազմակերպման նկատառումներից ելնելով, ապա այդ անճշտությունները դատական կարգով վիճարկելու հնարավորության սահմանափակումն անընդունելի է, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքին:

ՍԴՈ-664, 7 նոյեմբերի, 2006 թ.

VI. .... Հայաստանի Հանրապետությունում, ի տարբերություն շատ երկրների, ընտրական իրավունքի դատական պաշտպանությունն իրականացվում է ինչպես ընդհանուր իրավասության դատարանների, այնպես էլ սահմանադրական դատարանի կողմից: Ընդ որում, եթե Սահմանադրությամբ սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված լուծել Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, ապա ընդհանուր իրավասության դատարանները, մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 14, 17.1., 18, 20, 25, 26, 40, 75, 79, 102, 108 հոդվածներով նախատեսված դեպքերում, քննության են առնում ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղ գտած, ինչպես նաև ընտրական օրենսգրքի 139 հոդվածով նախատեսված բոլոր տիպի ընտրախախտումները, և դրանց վերաբերյալ ընդունում են վերջնական որոշում: Իսկ տեղական ինքնակառավարման մարմին-

ների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունքի դատական պաշտպանության իրավասությամբ օժտված են միայն ընդհանուր իրավասության դատարանները: Նման պայմաններում դատավորի՝ արդարադատություն իրականացնելու գործառույթն անհամատեղելի է դառնում ընտրությունների կազմակերպման և իրականացման գործառույթի հետ: Դա առավել ևս տեղի կունենա այն դեպքերում, երբ դատավորներն ընտրվեն ընտրական հանձնաժողովների նախագահներ, նախագահի տեղակալներ կամ քարտուղարներ, ինչն ընտրական օրենսգիրքը չի բացառում:

ՍԴՈ–665, 16 նոյեմբերի, 2006 թ.

7. .... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1–ին կետի 2–րդ պարբերության բովանդակության նման ձևակերպումը, ինչպես նաև դրա կիրառման վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանների առկա դիրքորոշումը չեն երաշխավորում իշխանությունների հավասարակշռումը, լուրջ բաց են առաջացրել իրավական ակտերի դատական վերահսկողության առումով և վտանգում են ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված՝ անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Իրավական պետությանն անհարիր է այն իրավիճակը, երբ օրենքով ու իրավակիրառական պրակտիկայի կողմից բացառվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը:

ՍԴՈ–673, 16 հունվարի, 2007 թ.

8. ....Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18 հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում միաժամանակ արձանագրել, որ օրենքը պետք է ոչ թե արգելափակի անձանց սահմանադրական իրավունքը՝ դատական կարգով բողոքարկելու հանձնաժողովի որոշումները, այլ հստակեցնի այդ ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության չափանիշները՝ պարտադիր ապահովելով ինչպես անձի իրավունքների դատական պաշտպանության լիարժեք մատչելիությունը, այնպես էլ պետական այդ մարմնի՝ օրենքով երաշխավորված անկախությունն ու գործառույթների բացառիկությունը: Խնդիրն այս հարցում ողջամիտ հավասարակշռության ապահովումն է:

....

9. ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարևորել նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմի սահմանադրականությունը նաև պետական կառավարման բնագավառում նորմատիվ ակտերի դատական բողոքարկման արդյունավետության ապահովման տեսանկյունից՝ շեշտելով նյութական և ընթացակարգային նորմատիվ իրարամերժ կարգավորման արդյունքում՝ անձի իրավունքների պաշտպանության իրավական միջոցների սահմանափակման անթույլատրելիությունը՝ վերահաստատելով իր՝ 2006 թ. նոյեմբերի 16–ի ՍԴՈ–665 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը:

Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական, ժողովրդավարական պետության, Սահմանադրությունն անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխա-

վորման վերաբերյալ պարունակում է բազմաթիվ նորմեր, որոնց իրականացումն ապահովվում է նորմատիվ իրավական ակտերի միջոցով: Դրանք կիրառելի են ՀՀ Սահմանադրության 6 հոդվածից բխող իրավական գերակայության սկզբունքով: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2–րդ մասում, 9 հոդվածի 4–րդ մասի 2–րդ պարբերությունում, 24 հոդվածում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1, 3, 6 և 8 հոդվածներում մանրամասնված է սահմանադրաիրավական այդ սկզբունքի կիրառման բովանդակությունը քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման բնագավառում, որից բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերի գերակայող նշանակությունը, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության բնագավառում:

ՍԴՈ–700, 8 մայիսի, 2007 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի (հոդվ. հոդվ. 153–155) դրույթները մեծ կարևորություն ունեն ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության և Սահմանադրության 4 հոդվածում ամրագրված հիմնարար սկզբունքների ու 30 հոդվածում ամրագրված իրավունքների երաշխավորման համար: Ընտրական իրավունքի պաշտպանության առումով այդ դրույթները հավասարապես վերաբերում են ինչպես պասիվ, այնպես էլ ակտիվ ընտրական իրավունքին: Նյութական իրավունքի ապահովումը երաշխավորող դատավարական այս նորմերն իրենց բնույթով ու առկա խմբագրությամբ չեն խոչընդոտում հատուկ հայցային վարույթի կարգով ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությանը՝ ընտրական գործընթացի ցանկացած փուլում:

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1–ին մաս):

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատա– րաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք

խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

ՍԴՈ–722, 21 դեկտեմբերի, 2007 թ.

6. ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված՝ անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին (հանրային իշխանության մարմիններին) ու պաշտոնատար անձանց դիմումներ, առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու անձի իրավունքը ժողովրդավարության դրսևորումներից մեկն է և կարևոր նախապայման՝ անձի հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 և մի շարք այլ հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքների անխախտելիությունը երաշխավորելու համար:

ՍԴՈ–731, 29 հունվարի, 2008 թ.

8. .... Սակայն, նույնիսկ ապահովագրական ստաժի վերոհիշյալ վարչական կարգով հաստատման հնարավորության առկայությունը չպետք է անձանց զրկի իրավաբանական փաստերի հաստատման խնդրով դատարան դիմելու իրավունքից, քանզի ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը երաշխավորում է քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության չսահմանափակվող հնարավորություն:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ, ի տարբերություն ապահովագրական ստաժի դատական կարգով հաստատման, ապահովագրական ստաժի՝ վարչական կարգով հաստատման դեպքում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ապահովագրական ստաժի որևէ ժամկետային սահմանափակում, ինչը ոչ միայն չի ապահո-

վում միևնույն հասարակական հարաբերության կարգավորման միասնականությունը, այլև անձի շահերի տեսանկյունից անիմաստ է դարձնում արտակարգ իրավիճակների հետևանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի կորստի դեպքում դատական պաշտպանության իրավունքից օգտվելը:

ՍԴՈ–747, 4 ապրիլի, 2008 թ.

7. Համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

ՍԴՈ–751, 15 ապրիլի, 2008 թ.

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ օրենքի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը, այդ հոդվածին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի սահմանադրականության հարցին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս դրույթի հիման վրա դատարանների կողմից վերանայվում են միայն այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա սահմանադրական դատարանն ընդունել է օրենքի կիրառված դրույթի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում:

Նշված իրավակիրառական պրակտիկայի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև 32 հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ այն անձինք, որոնց համար դեռևս չի լրացել սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը, զրկվում են սահմանադրական դատարան դիմելու միջոցով իրենց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից:

Վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկան արդյունք է նաև նրա, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասում օգտագործված՝ «դիմող» եզրույթի բովանդակությանը տրվել է սահմանափակ մեկնաբանություն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցները» վերտառությամբ 44 հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Սահմանադրական դատավարության մասնակիցներն են դատավարության կողմերը՝ դիմո-

ղը՝ սույն օրենքի 25-րդ հոդվածին համապատասխան՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող մարմինները և անձինք»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել Սահմանադրության 101-րդ հոդվածով նախատեսված մարմինները և անձինք, ընդ որում, Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետում նշված դեպքում սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան»:

Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ դրույթներից բխում է, որ այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով կոնկրետ գործով իրավասու են վիճարկել այդ ակտով իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, համարվում են սահմանադրական դատարան դիմելու իրավունքի սուբյեկտներ: Տվյալ դեպքում «դիմող» հասկացությունը պետք է մեկնաբանվի լայն իմաստով և անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը պետք է օրենսդրորեն երաշխավորված լինի:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը երաշխավորում է անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, օրենքով այդ իրավունքն իրացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, սակայն, գործնականում ստեղծվում է մի այնպիսի իրավիճակ, երբ մեկ այլ անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելը խոչընդոտում է անձին իրացնելու իր՝ սահմանադրական դատարան դիմելու սահմանադրական իրավունքը: Այսինքն՝ մի անձի իրավունքի իրացումը կանխվում է մեկ այլ անձի կողմից իր իրավունքի իրացման փաստով, ինչի արդյունքում նրանց միջև ստեղծվում է նաև անհավասար վիճակ:

Սահմանադրական իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելու՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի այդ իրավունքի իրացումը կախվածության մեջ չդրվի տվյալ անձի կամքից անկախ առաջացած որևէ հանգամանքից: Հետևաբար, յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում օգտվելու սահմանադրական դատարանի միջոցով տրամադրվող իրավական պաշտպանությունից: Նման հնարավորությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաև այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարան դիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավո-

րություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: Դա նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7–րդ մասի պահանջն է, քանի որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3[2] բաժնում սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը կերաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը: Անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3–րդ կամ 5–րդ մասերի ուժով: Այլապես, սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանության իրավունքը կդառնան անիրական և երևութական՝ զուրկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից:

ՍԴՈ–752, 22 ապրիլի, 2008 թ.

6. ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի (1–ին մաս) և 19 հոդվածի (1–ին մաս) համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, ինչպես նաև դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք, որն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6 հոդվածում: Դատավարական ժամկետների ինստիտուտն ընդհանրապես կոչված է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության սահմանադրական վերոհիշյալ իրավունքի արդյունավետ իրացումը: Այն օրենքով կամ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում դատարանը, կողմերը և գործի մյուս մասնակիցներն իրավունք ունեն (պարտավոր են) կատարելու օրենքով նախատեսված դատավարական գործողություններ: Միաժամանակ, որոշակի ժամկետով այդպիսի գործողությունների կատարման սահմանափակումը դատավարական հարաբերությունների կայունությունը, որոշակիությունը, հստակությունը, դատավարական սկզբունքների պահպանումը, գործով բազմակողմանի և օբյեկտիվ քննությունը, ի վերջո, արդարադատության արդյունա-

վետությունն ապահովող և անձանց խախտված իրավունքները ողջամիտ ժամկետում վերականգնելու կարևոր երաշխիք է:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

9. .... Տարբեր ատյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական ատյանի իրավասությունների և գործառույթների կրողը: Հետևաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

13. **ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի և վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանադրաիրավական բնույթը սահմանադրական դատարանը նախևառաջ հարկ է համարում գնահատել քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումների համատեքստում:**

Այսպես, մինչև վերջին օրենսդրական փոփոխությունները վճռաբեկության կարգով կարող էին բողոքարկվել և՛ առաջին ատյանի դատարանի, և՛ վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Ընդ որում, ուժի մեջ մտած ակտերի բողոքարկման առնչությամբ գործում էր միջնորդավորված կարգը, իսկ անմիջականորեն կարող էին բողոքարկվել վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումն ընթացավ այն ճանապարհով, որ ոչ միայն վերացվեց վճռաբեկ դատարան անմիջական դիմելու կարգը, այլ նաև վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա ակտերի շրջանակն ըստ էության սահմանափակվեց միայն վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով:

....

14. Հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջի ազդեցությունը վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն խնդիրը, թե արդյո՞ք գործող օրենսդրությունն ապահովում է վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման իրավական հնարավորությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ո՛չ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ո՛չ էլ ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը չեն նախատեսում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրում, այն է՝ վճռաբեկ բողոք կազմելու իրավական հնարավորություն:

....

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու

հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաև իրավաբանների և իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՄԱԿ–ի շրջանակներում ընդունված սկզբունքներից:

15. Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակող գործոն է նաև վճռաբեկ դատարանում փաստաբանների հավատարմագրման գործող կարգը: Մասնավորապես, վերջինս այնպիսին է, որ չի բացառվում այնպիսի իրավիճակը, երբ մի փաստաբանը չկարողանա հավաքել համապատասխան թվով ձայներ, ինչի արդյունքում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների թիվը կարող է սեղմ լինել՝ կրճատելով և՛ անձի ընտրության հնարավորությունը, և՛ ընդհանրապես վճռաբեկ դատարանի պաշտպանությունից օգտվելու հնարավորությունը: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ 2007 թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ՀՀ վճռաբեկ դատարան է դիմել և հավատարմագրվել ընդամենը 4 փաստաբան: Բացի դրանից, հարկ է հաշվի առնել, որ հավատարմագրված փաստաբանն իրականացնելով ձեռնարկատիրական գործունեություն, ըստ էության ազատ է հրաժարվելու այս կամ այն գործով վճռաբեկ բողոք կազմելուց, ինչի արդյունքում դատավարության մասնակցի՝ վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունն է՛լ ավելի է նվազում՝ սահմանափակելով վճռաբեկ դատարանի մատչելիությունը: Նման իրավիճակում, փաստորեն, դատարանի մատչելիության իրավունքի իրացումը պայմանավորվում է որոշակի նախապայմանով, այն է՝ փաստաբանի համաձայնությամբ, ինչի արդյունքում հնարավոր է մարդու իրավունքների և ազատությունների ազատ իրացման սահմանափակում:

16. Սահմանադրական դատարանը՝ հաշվի առնելով, որ հավատարմագրված փաստաբանների և մյուս փաստաբանների միջև մասնագիտական պատրաստվածության և փորձառության հարցում չկա որևէ տարբերություն, որ օրենսդրությունը վճռաբեկ դատարան դիմելիս հստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, որ նույնիսկ հավատարմագրված փաստաբանների կողմից կազմված բողոքների գերակշիռ մեծամասնությունը քննության չի ընդունվում վճռաբեկ դատարանում, ինչպես նաև նկատի ունենալով հավատարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկատիրական բնույթով պայմանավորված՝ վճռաբեկ բողոք կազմելուց հրաժարվելու ազատությունը, գտնում է, որ արդարացի հավասարակշռությունը ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի և դրանով հետապնդվող նպատակի միջև, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի էությունը:

Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջով վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը համաչափ չէ իր նպատակին, քանի որ նման սահմանափակումը թույլ չի տալիս արդյունավետորեն և անարգել իրացնել անձի արդար դատաքննության իրավունքը:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

15. Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008 թ. հոկտեմբերի 8–ի ՍԴՈ–765 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներին հակասող է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն դրույթները, որոնք թույլ

էին տալիս վճռաբեկ բողոք ներկայացնել միայն վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված որոշման եզրափակիչ մասի 7-րդ կետի ուժով այդ դրույթները ժամանակավորապես պահպանում են իրենց ուժը, սահմանադրական դատարանը որպես վարչական գործերով վճռաբեկ ատյանի մատչելիությունը պայմանավորող գործոն է համարում նաև վարչական արդարադատության երկաստիճան համակարգում բողոքարկման միակ ատյան դիմելու համար հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելու պարտադիր պահանջը: Նման պահանջի առկայությունը երկաստիճան դատական համակարգում է՛լ ավելի է խաթարում դատական պաշտպանության արդյունավետ իրավունքի էությունը, քանզի, եթե եռաստիճան համակարգում անձը վերաքննիչ ատյանում օգտվում է անմիջական բողոքարկման հնարավորությունից, ապա վարչական արդարադատության ոլորտում անմիջական բողոքարկման հնարավորությունն ամբողջովին բացակայում է:

16. Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետևաբար, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ դատարանի մատչելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսևորումը: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ դատարանում կարող է ունենալ երկու հիմնական դրսևորում, այն է՝ գործերի քննությունը մասնագիտացված առանձին միավորի կողմից, և երկրորդ՝ գործերի քննության կազմակերպումը վարչական արդարադատության առանձնահատկություններին համապատասխան: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության կապակցությամբ մասնագիտացման գործոնի նշված երկու դրսևորումներն էլ որևէ կերպ արտահայտված չեն:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածը, մատնանշելով ՀՀ վճռաբեկ դատարանի պալատները և ընդհանուր գծերով սահմանելով ՀՀ վճռաբեկ դատարանի ներքին կառուցվածքը, կատարել է ոչ միայն կառուցվածքային, այլ նաև գործառութային տարանջատում: Վճռաբեկ դատարանի ներքին կառուցվածքի կանխորոշումը սահմանադրի կողմից՝ այդ դատարանի պալատների առանձնացումը, նշանակում է այդ պալատներից յուրաքանչյուրին արդարադատություն իրականացնելու հատուկ լիազորության տրամադրում: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգիրքը (հոդվածներ 18 և 53), հաշվի չառնելով այդ հանգամանքը, վճռաբեկ դատարանի պալատների լիազորություններն ու գործառույթը սահմանափակել է միայն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցի լուծմամբ: Վճռաբեկ դատարանը բողոքի կապակցությամբ ըստ էության որոշում է կայացնում լիագումար կազմով, որտեղ պալատը

հանդես չի գալիս որպես մասնագիտացված միավոր. վարչական դատարանի ակտերի դեմ բերված բողոքների առնչությամբ ըստ էության որոշումներն ընդունվում են քրեական պալատի և քաղաքացիական ու վարչական պալատների դատավորների մասնակցությամբ: Նման պայմաններում, վճռաբեկ դատարանում վարչական գործերով արդարադատությունը զրկվում է իր առարկայական բնույթից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ: Սահմանադրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանն ունենա լիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող և լուծող մասնագիտացված համապատասխան պալատ: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ վարույթում բացակայելու արդյունքում վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետևաբար նաև՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ խաթարվում է և զրկվում արդյունավետությունից:

ՍԴՈ–782, 2 դեկտեմբերի, 2008 թ.

7. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դատավորի գործուղման վերաբերյալ վիճարկվող իրավակարգավորումը դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով սահմանված՝ դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները նախատեսված են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 և 13 հոդվածներով:

Պետությունը պարտավոր է համապատասխան իրավական, կազմակերպչական, ինստիտուցիոնալ երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ իրավունքներն իրականացնելու ուղղությամբ:

....

8. .... Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղծելու՝ սահմանադրական նորմի տված հնարավորության իմաստը ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է տարբեր դատարանների միջև, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որտեղ գործերի բաշխումը տարբեր իրավասությամբ օժտված դատարանների միջև կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն:

ՍԴՈ–827, 12 սեպտեմբերի, 2009 թ.

5. .... Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը, այդ հոդվածի 3–րդ մասի իրավակարգավորման առարկան և նպատակը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 16 հոդվածը, այդ թվում՝ նաև դրա 3–րդ մասում ամրագրված դրույթը, չի սահմանում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտների կիրառման, ձերբակալման կամ կալանավորման մասին իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ որոշումներ կայացնելու հաջորդականությունը, ձերբակալումը չի դիտարկում որպես կալանավորման պարտադիր նախապայման և, հետևաբար, ձերբակալված լինելու փաստի բացակայությունը՝ որպես կալանավորումը բացառող հանգամանք: Միաժամանակ, քրեական գործի մինչդատական վարույթի փուլում վերահսկողական իր գործառույթն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կալանավորման վերաբերյալ ընդունված որոշումը ոչ թե անձին դատապարտող ակտ է, այլ արդյունավետ ու անաչառ արդարադատություն իրականացնելու, Սահմանադրության 16 հոդվածի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5 հոդվածի պահանջների կատարումն ապահովող նախապայման:

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

9. .... Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ 240 հոդվածի 1–ին մասի 4–րդ կետը, նախատեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի խնդրո առարկա լիազորությունը, միաժամանակ, որպես այդ լիազորության կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիք ամրագրում է դրանից օգտվելու չափորոշիչները: Այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածի 1–ին մասի 4–րդ կետով նախատեսված լիազորությունը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները թույլ են տալիս վճռաբեկ դատարանին ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ կայացնելու, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Հաշվի առնելով նշված իրավակարգավորման առկայությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը կարող է տեղի ունենալ բացառապես հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ, որոնք, մի կողմից, վճռաբեկ դատարանին պահում են իր սահմանադրաիրավական կարգավիճակում, մյուս կողմից՝ երաշխավորում են արդար դատաքննության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները: Դրանք են.

ա) ՀՀ վճռաբեկ դատարանը հետազոտության առարկա չի դարձնում որևէ փաստական հանգամանք, այլ իր սահմանադրաիրավական կարգավիճակին համահունչ անդրադառնում է միայն իրավունքի հարցերին,

բ) ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները պետք է հնարավորություն տան վճռաբեկ դատարանին կայացնելու ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ,

գ) վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը պետք է բխի արդարադատության արդյունավետության շահերից,

դ) այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն ստորադաս դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

Նման գործերի քննության ժամանակ պետք է հաշվի առնվեն նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227 հոդվածով նախատեսված դատավարության սկզբունքները:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

8. .... Հետևաբար, սահմանադրական դատարանն ընդգծել է օրենսդրի պարտականությունը՝ սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը երաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը:

....

Հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայումը՝ որպես անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության միջոց, սահմանադրական դատարան դիմելու (ՀՀ Սահմ. 101 հոդվածի 6–րդ կետ) միջոցով անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության իրավունքի բաղադրատարրն է, սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձինք իրենց նկատմամբ կայացված դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու իրավունքից կարող են օգտվել, **եթե իրացրել են սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը (այսինքն՝ առկա է սահմանադրական դատարանի որոշումը՝ անձանց նկատմամբ կիրառված օրենքը Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ) կամ սահմանադրական դատարանի նոր հանգամանք հանդիսացող որոշման կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դատաքննությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդպիսի իրավունքն օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու պոտենցիալ հնարավորություն:**

ՍԴՈ–844, 7 դեկտեմբերի, 2009 թ.

8. .... Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մատչելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՍԴՈ–652, ՍԴՈ–665 և ՍԴՈ–690, բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, կարևորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարևորել է միջազգային պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ձևական), կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի **պարտադիր** պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի **անգործությամբ** խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունք-

ների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է:

ՍԴՈ–873, 13 ապրիլի, 2010 թ.

9. Վարչական դատարանի վճռի դեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20–րդ գլխում կատարված փոփոխություններից և լրացումներից հետո էլ վճռաբեկ դատարանը շարունակում է վարչական գործերով վճռաբեկ վարույթի նկատմամբ կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, անկախ նրանից, դրանք **դուրս են գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից, թե՝ ոչ:** Ավելին, վճռաբեկ դատարանը՝ կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերը սահմանող 118.3–րդ հոդվածը և բողոքի ընդունելիության պայմանները սահմանող 118.6–րդ հոդվածը, զուգահեռաբար կիրառում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համարժեք 226 և 234–րդ հոդվածները, այդ թվում վճռաբեկ բողոքի ընդունելիության այն պայմանները, որոնք սահմանված են 234–րդ հոդվածի 1–ին մասում:

Նման իրավիճակի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրացված չէ սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118–րդ հոդվածում «**mutatis mutandis» վերապահումը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման նկատմամբ ամբողջությամբ կիրառվեն քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:**

Ավելին, սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118–րդ հոդվածը (նոր խմբագրությամբ) ընդհանրապես թույլ չի տալիս հղում կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն նորմերին, որոնք սահմանում են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:

Արդարադատության արդյունավետությունը ենթադրում է **թույլատրելի ճանաչված վճռաբեկ բողոքների ըստ էության քննություն** վճռաբեկ դատարանում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ և վարչական արդարադատության առանձնահատկությունների հաշվառմամբ: Թույլատրելիության հարցի լուծման ժամանակ բուն արդարադատության կանխորոշումն իմաստազրկում է դրա արդյունավետությունը, իսկ **բողոքի թույլատրելիության հիմքը շփոթվում է վարչական դատարանի ակտի բեկանման հիմքի հետ**: Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդարադատության նման ձևականացումն անհամատեղելի է դրա սահմանադրական իմաստի հետ:

ՍԴՈ–890, 25 մայիսի, 2010 թ.

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականու-

թյամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

ՍԴՈ–902, 7 հուլիսի, 2010 թ.

6. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010 թ. հունիսի 24–ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով փոփոխություններ են կատարվել նաև վիճարկվող 265–րդ հոդվածում: Մասնավորապես, հոդվածի 2–րդ մասում հանվել են «կամ այլ» բառերը և «աշխատավարձ» բառից հետո լրացվել է «ոչ պակաս քան կրկնապատիկի, բայց ոչ ավելի քան տասներկուապատիկի» բառերով: Այս փոփոխության միջոցով ըստ էության փորձ է արվում հաղթահարել հնարավոր անորոշությունը և լուծել խախտված իրավունքի՝ փոխհատուցման միջոցով արդյունավետ իրավական պաշտպանության հարցը:

ՍԴՈ–906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

7. .... Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:** Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, **դատարանում,** պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

ՍԴՈ–917, 28 սեպտեմբերի, 2010 թ.

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատել.

– ինքնաբացարկի, որպես սահմանադրաիրավական սկզբունքներին համապատասխան արդարադատության անկախությունը և անկողմնակալությունը, ինչպես նաև իրավունքի գերակայությունն ապահովող ինստիտուտի, օրենսդրական երաշխավորման տեսանկյունից,

– արդար և արդյունավետ դատաքննության իրավունքի, ինչպես նաև գործին մասնակցող անձանց դատավարական այլ իրավունքների երաշխավորված գործադրումը և պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից,

– ինքնաբացարկի ինստիտուտի՝ միջազգային իրավակիրառական պրակտիկայում հաստատված սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

Ինքնաբացարկը ՀՀ իրավահամակարգում հանդիսանում է այնպիսի ինստիտուտ, որը կոչված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ և անաչառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս, և կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը:

.... Այդպիսով, վիճարկվող նորմերում ամրագրված է ինքնաբացարկի ինստիտուտի իրավակարգավորման այն սկզբունքը, համաձայն որի տվյալ գործով քննություն իրականացնող դատավորի բացառիկ լիազորությունն ու պարտականությունն է դատաքննության շրջանակներում լուծել գործի հետ կապված ցանկացած, այդ թվում՝ նաև իր անաչառության վերաբերյալ կասկած հարուցող փաստերի և հանգամանքների առկայության հարցը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է այն սկզբունքային տարբերությունները, որպիսիք առկա են այդ ինստիտուտի նախկին (1998 թ. հունիսի 17-ի խմբագրությամբ) և ներկա իրավակարգավորումների միջև: Մասնավորապես, բացարկի հարցն ըստ նախկին իրավակարգավորման ենթակա էր լուծման ոչ թե գործը քննող դատավորի, այլ՝ համապատասխան դատարանի նախագահի կողմից, իսկ գործը վերջինիս վարույթում գտնվելու դեպքում՝ մեկ այլ դատավորի կողմից: Բացի այդ, բացարկի (այն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ) և ինքնաբացարկի հարցի արդյունքներով կայացված որոշումը ենթակա չէր բողոքարկման (ՀՀ քաղ. դատ. օր. 1998 թ. հունիսի 17-ի խմբագրությամբ 25-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետեր): Ներկա իրավակարգավորմամբ գործը քննող դատավորին պարտավորեցնելով համապատասխան հիմքերի առկայության դեպքում կայացնելու ինքնաբացարկի վերաբերյալ որոշում՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է դատավորի նախաձեռնությամբ կայացված այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն (ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մաս), նախատեսելով լրացուցիչ իրավական երաշխիք՝ անաչառ որոշում կայացնելու և ինքնաբացարկի ինստիտուտը սահմանադրաիրավական նպատակներին ծառայեցնելու համար:

ՍԴՈ-922, 2 նոյեմբերի, 2010 թ.

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման «հետաձգված բողոքարկման» հնարավորության միջոցով ապահովվում է այդ որոշումների իրավական վերահսկելիությունը, որ այդ որոշումների անմիջական բողոքարկման հնարավորություն չնախատեսելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված՝ միջանկյալ ակտերի բողոքարկման հիմքում ընկած ընդհանուր տրամաբանության շրջանակներում է և հետապնդում է իրավաչափ նպատակ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշումն անմիջականորեն բողոքարկելու հնարավորության բացակայությունը չի խոչընդոտում անձին արդյունավետորեն իրացնել իր իրավունքների դատական պաշտպանության իրավունքն ըստ էության դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

ՍԴՈ–923, 9 նոյեմբերի, 2010 թ.

7. .... Միաժամանակ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ օրենսդրությամբ երաշխավորված է նաև անձի իրավական պաշտպանության, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը բոլոր այն դեպքերում, երբ լուսանկարներն ստացվել են առանց դրանցում պատկերված անձանց համաձայնության:

ՍԴՈ–930, 14 դեկտեմբերի, 2010 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածի 2–րդ մասի և 290–րդ հոդվածի 3–րդ մասի դրույթները՝ որպես մասնակիի և ընդհանուրի հարաբերակցում, հստակ չեն փոխհամաձայնեցված, ինչպես նաև դատական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290–րդ հոդվածի 3–րդ մասի, 185–րդ հոդվածի 3–րդ մասի և 263–րդ հոդվածի 2–րդ մասի՝ համակարգային ամբողջականության մեջ մեկնաբանման այնպիսի նախադեպ չի ձևավորվել, որպեսզի անձի համար գործնականում ապահովվի ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածով երաշխավորված՝ դատարանի մատչելիության և իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի լիարժեք իրականացումը:

ՍԴՈ–932, 11 հունվարի, 2011 թ.

9. Արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի տեսանկյունից հարկ է վեճի առարկա իրավունքների պաշտպանության երաշխիքները դիտարկել սնանկության վարույթին վերաբերող դատավարական այլ երաշխիքների համատեքստում, որոնք պետք է ուղղված լինեն սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը:

Այս առումով, սահմանադրական դատարանի 2007 թ. նոյեմբերի 28–ի ՍԴՈ–719 որոշման լույսի ներքո գնահատելով պարտատերերի ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պարտատերերի ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող որոշումներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում սնանկության գործի քննության հնարավորությունը, չեն խոչընդոտում դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, հետևաբար, ապահովում են նաև սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությունը:

Ինքնանպատակ չէ այն, որ օրենսդիրը սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող մի շարք միջանկյալ դատական ակտեր, ի տարբերություն մյուսների, համարում է բողոքարկելի դատական ակտեր: Դրանք իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոտել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը, այն է՝ դիմումի ընդունումը մերժելու (օրենքի 14–րդ հոդված), դիմումը վերադարձնելու (օրենքի 15–րդ հոդված), պարտապանի մոտ ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու (օրենքի 19–րդ հոդված), պահանջների վերջնական ցուցակը հաստատելու (օրենքի 20–րդ հոդված), պահանջի, պահանջի փոփոխության դեմ առարկությունները քննարկելու արդյունքում պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը որոշելու (օրենքի 46–րդ հոդված), սնանկ ճանաչված անձի գույքն օտարելու թույլտվություն տալու (օրենքի 50–րդ հոդված), պահանջը սահմանված

ժամկետում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու մասին (օրենքի 85-րդ հոդված) որոշումները:

Այսպիսի իրավակարգավորման պարագայում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ մոտեցում է ցուցաբերված օրենսդրի կողմից, երբ բողոքարկելի են համարվում սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը, քանի որ հակառակ մոտեցումը, երբ սկզբունքորեն բողոքարկելի կարող են դիտարկվել սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող առանց բացառության բոլոր միջանկյալ դատական ակտերը, այդ թվում՝ նաև ժողովի որոշումները և կառավարչի գործողությունները վիճարկելու վարույթով կայացված որոշումները, կարող է վտանգել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել արդարադատության արդյունավետ իրականացումը՝ զերծ պահելով այն անհարկի ձգձգումներից:

Այն հանգամանքը, որ քաղաքացիական վեճերի լուծման ժամանակ, երբ առկա է նաև ժամանակի գործոնի ազդեցությունը, միջանկյալ ակտերով վերաքննություն չնախատեսելն ինքնին չի նշանակում, որ հնարավոր չէ ապահովել արդյունավետ դատավարություն միայն դատական մեկ ատյանում գործի քննության պայմաններում: Տվյալ կոնկրետ դեպքում կողմի իրավունքների դատական պաշտպանության խնդիրը կարող է վերաքննության առարկա դառնալ նաև **սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթի շրջանակներում**:

ՍԴՈ-936, 8 փետրվարի, 2011 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է.

– անձի (այդ թվում՝ իրավաբանական) իրավունքները և ազատությունները դատարանում պաշտպանելու իրավունքը,

– դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը,

– դատական պաշտպանության իրավունքը՝ հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ,

– խախտված իրավունքներն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում և հրապարակային քննության միջոցով վերականգնելու իրավունքը:

Միաժամանակ, սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականությունն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը: Այդպիսի ընթացակարգեր ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված են ինչպես քրեական, քաղաքացիական, այնպես էլ վարչական գործերով արդարադատության բնագավառներում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ և 48-րդ գլուխների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ և 5-րդ բաժինների նորմերով են հիմնականում կարգավորվում քրեական և քաղաքացիական գործերով դատական բողոքարկման հետ կապված հարաբերությունները: Վարչական գործերով այդ հարաբերությունները հիմնականում կարգավորվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19.1-րդ, 20-րդ գլուխներում, ինչպես նաև 4-րդ և 5-րդ բաժիններում ամրագրված, մասամբ էլ 24-րդ գլխի՝ սույն գործով վիճարկվող 141-րդ հոդվածի նորմերով:

ՍԴՈ-954, 12 ապրիլի, 2011 թ.

7. .... Վերոնշյալ իրավական դիրքորոշման հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության՝ «օրենքով և պարտապանի կանոնադրությամբ սահմանված **այն լիազորությունները, որոնք պայմանավորված են այդ մասնակցությամբ**» բառակապակցությունը **չի ներառում դատական պաշտպանության իրավունքն ընդհանրապես, և իրավակիրառական պրակտիկայում տվյալ բառակապակցությանը պետք է տալ սահմանափակ մեկնաբանություն, որպեսզի չխաթարվի այդ իրավունքի բուն էությունը:**

Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում նաև հետևյալ հանգամանքները.

ա) ընկերության մասնակցի՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտի կարգավիճակը չի բացառում նույն անձի՝ որպես իրավունքի ընդհանուր սուբյեկտի կարգավիճակը, հետևաբար և՝ տվյալ սուբյեկտի սահմանադրական իրավունքները և պարտականությունները, ներառյալ՝ դատական պաշտպանության իրավունքը՝ հաշվի առնելով նշված իրավունքների սահմանափակումները և դրանց թույլատրելի շրջանակները,

բ) Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասը դատական պաշտպանության իրավունքը չի դիտարկում որպես սահմանափակման ենթակա իրավունք:

Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719 և մի շարք այլ որոշումներում անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, մասնավորապես, իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: **Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ,** և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է:

ՍԴՈ-1007, 22 դեկտեմբերի, 2011 թ.

6. .... Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ գործող իրավակարգավորման պայմաններում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման կարևոր երաշխիքներ են սահմանված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95, 96 և 97-րդ հոդվածներով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով: Վերջիններս վերաբերում են վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցմանը: Այսինքն՝ բոլոր դեպքերում պետությունը երաշխավորում է անօրինական վարչական ակտի հետևանքներով անձին պատճառված բացասական հետևանքների ամբողջական վերացման հնարավորությունը: Նույնը վերաբերում է նաև վարչական ակտի՝ դատական կարգով բողոքարկման ոլորտին՝ հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մաս հանդիսացող 1-ին հավելվածը:

....

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իրավախախտի նկատմամբ տուգանքի նշանակումը և նշանակված տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում համապատասխան տուգանքի նշանակումը գտնվում են փոխկապակցվածության մեջ, արձանագրելով, որ՝ ա) **օրենսդրությամբ տվյալ դեպքի համար նախատեսված է դատական պաշտպանության իրավունք,** բ) օրենսդրությամբ նախատեսված է տուգանք նշանակելու վերաբերյալ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկելիս և տվյալ անձի համար ցանկալի արդյունքի հասնելիս (երբ վարչական ակտը ճանաչվում է ոչ իրավաչափ) տվյալ անձի՝ տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու համար նախատեսված **կրկնա-**

պատկված տուգանքը վճարելու պարտականությունից ազատվելու իրավական հնարավորությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթով **անմիջականորեն** տուգանքի չափ սահմանելը՝ առանց հատուկ ընթացակարգ նախատեսելու, չի խոչընդոտում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրականացմանը:

ՍԴՈ–1008, 24 հունվարի, 2012 թ.

6. ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Սահմանադրաիրավական այդ դրույթն ունի սկզբունքային նշանակություն՝ օրենքով երաշխավորելու իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք անհրաժեշտ են անձի իրավունքները և ազատություններն անիրավաչափ գործողություններից պաշտպանելու, հասցված վնասը վերականգնելու համար: Այդ նորմատիվ պահանջն անվերապահ կիրառելի է հավասարապես իրավական ցանկացած, այդ թվում՝ նաև քրեադատավարական գործընթացում և, մասնավորապես՝ քրեական գործի նախնական քննության փուլում:

ՍԴՈ–1020, 11 ապրիլի, 2012 թ.

6. ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Այդ իրավունքը երաշխավորված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա), որի 6–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Ընդ որում, այդ իրավունքի իրացման նվազագույն և կարևոր երաշխիքներն են՝ **հրապարակային դատաքննությունը** (մասնավորապես՝ գործը քննող դատարանի, քննության առարկա գործի, քննության վայրի, ժամանակի, դատաքննության կարգի և այլնի մասին հրապարակային տեղեկությունները), ինչպես նաև **դատական ակտի պարտադիր հրապարակումը**:

ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում պետության խնդիրն է օրենսդրությամբ ապահովել արդարադատության իրականացումն ընթացակարգային այնպիսի կանոններով, որոնցով երաշխավորվեն հրապարակային դատաքննության իրավունքի իրացման անհրաժեշտ իրավական պայմաններ, այդ թվում՝ նաև դատարանում գործերի քննության դատավարական ձևերի բազմազանության կիրառմամբ, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից և դրանց արդար, արագ ու արդյունավետ լուծման անհրաժեշտությունից: Վերջինիս նպատակով է պայմանավորված գործերի դատաքննության ընթացակարգային այնպիսի ձևերի առկայությունը, ինչպիսիք են դատաքննության **բանավոր և գրավոր ընթացակարգերը** կամ բանավորության և գրավոր քննության սկզբունքները: Գրավոր ընթացակարգի պայմաններում գործի քննությունն իրականացվում է առանց «բանավոր լսումների»՝ առանց կողմերի ուղղակի մասնակցության, որը պայմանավորված է դատավարական մի շարք առանձնահատկություններով:

ՍԴՈ–1027, 5 մայիսի, 2012 թ.

6. Նշված մոտեցումներն իրավաչափ, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին ու ՀՀ Սահմանադրությանը համահունչ համարելով հանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք չեն կարող դիտվել որպես ընտրական իրավունքների ար-

դյունավետ պաշտպանության ու անմիջական ժողովրդավարության սահմանադրական սկզբունքի իրացման արգելք: Առավել ևս դա վերաբերում է ընտրական իրավունքի դատական պաշտպանությանը, ինչի առնչությամբ մտահոգություն են արտահայտել սահմանադրական դատարան դիմած պատգամավորները: Արդարադատության իրականացումը դատարաններին պարտավորեցնում է դատական ընդդատության շրջանակներում քննության առարկա դարձնել ցանկացած տեղեկատվություն, ինչն ունի ապացուցողական նշանակություն իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական առումով «հրապարակման ենթակա չեն» կամ «չպետք է հրապարակվի» արտահայտություններին իրավակիրառական պրակտիկայում չի կարող այնպիսի տարածական մեկնաբանություն տրվել, ինչը կխոչընդոտի ազատ ընտրությունը կամ կարգելափակի ընտրողների ստորագրած ցուցակների ուսումնասիրության հնարավորությունը՝ ընտրական իրավունքի պաշտպանության համատեքստում, ինչպես նաև դրանց չհրապարակման սահմանափակումը որևէ կերպ տարածվի նման տեղեկությունները դատարաններին տրամադրելու վրա: Տվյալ արտահայտությունները վերաբերում են հրապարակային տպագրությանը՝ քվեարկության գաղտնիության երաշխավորման և ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների համատեքստում: Սակայն որևէ սահմանափակում չի կարող խոչընդոտել ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով սահմանված կարգով մասնակցող իրավասուբյեկտների գործունեությունը, ինչի արդյունավետ իրականացմամբ է մեծապես պայմանավորված հանրային վստահությունն ընտրական գործընթացի հանդեպ: Խնդիրն այն է, թե նրանք ինչպիսի իրավագիտակցությամբ ու արդյունավետությամբ են իրականացնում այդ առաքելությունը: Պրակտիկան վկայում է, որ հաճախ անվստահության պատճառը վերահսկողական գործառույթի ոչ պատշաճ կատարումն է, ինչին կոնկրետ օրինակներով անդրադարձել է սահմանադրական դատարանն իր նախորդ որոշումներում:

ՍԴՈ-1037, 18 հուլիսի, 2012 թ.

8. Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից: Հետևաբար, վիճարկվող իրավակարգավորումը դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցագնի չափով պայմանավորված՝ վերաքննության իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ չի խաթարվում արդար դատաքննության իրավունքի բուն էությունը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել այն ընդհանուր տրամաբանությունը, որն ընկած է բողոքարկման ինստիտուտին առնչվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի և 228-րդ հոդվածի, ինչպես նաև 204.32 հոդվածի հիմքում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է այն բացառիկ դեպքերը, երբ վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել նաև ընդդեմ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի

մեջ մտած ակտի դեմ: Այն է՝ երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, **որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը**:

ՍԴՈ–1051, 9 հոկտեմբերի, 2012 թ.

8. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ հարցով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներն ուղղակի նախատեսում են Հաճախորդի ազատ կամահայտնությունը: Օրենքում առկա չէ որևէ դրույթ, որն ուղղակիորեն կվերաբերի Հաշտարարի որոշումը Կազմակերպության կողմից «հատուկ ընդունելուն», սակայն օրենքը նախատեսում է դրույթ, համաձայն որի՝ Կազմակերպությունը կարող է Հաշտարարի գրասենյակի հետ կնքել գրավոր համաձայնագիր Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ (մասնավորապես՝ հոդվածներ 7 և 16): Վերջինս, հանդիսանալով Կազմակերպության ազատ կամահայտնության արդյունք, ըստ էության հավասարազոր է Հաճախորդի կողմից անվերապահորեն և գրավոր ձևով Հաշտարարի որոշումներին համաձայնելուն, այսինքն՝ այդ դեպքում **կողմերը կամավոր սահմանափակում են ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով սահմանված իրենց իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունը:**

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ **իր ազատ կամահայտնությամբ,** հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը: Իսկ մարդու և քաղաքացու հիշյալ իրավունքներն ու ազատությունները, ինչպես և սահմանված է ՀՀ Սահմանադրության 42.1–րդ հոդվածով, տարածվում են իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ: Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևոր է համարում շեշտել, որ այդ իրավունքների ու ազատությունների՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի լինելու իրավակարգավորիչ դերը երաշխավորում է ոչ միայն իրավաբանական անձանց, այլև դրանցում միավորված ֆիզիկական անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության իրավական հնարավորություն:

ՍԴՈ–1052, 17 հոկտեմբերի, 2012 թ.

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրելով, որ ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորելու իրավական որոշակիությունը, միևնույն ժամանակ, հիմք ընդունելով, մասնավորապես, իր՝ ՍԴՈ–652, ՍԴՈ–665, ՍԴՈ–690, ՍԴՈ–719 որոշումներում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից,

օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:** Նման իրավական դիրքորոշման համար հիմք են ծառայում, մասնավորապես, օրենսգրքի 381-րդ հոդվածը, որը վերաբերում է վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 407-րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներին, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 414.1-րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքը վերադարձնելուն: Օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, իսկ նման հիմնավորման բացակայության դեպքում նույն հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ բողոքը թողնվում է առանց քննության: Օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, նույն մասի 6.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալը, ինչպես նաև այդ սխալի հետևանքով ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջանալու հնարավորությունը, իսկ վերը նշված պատճառաբանությունների և հիմնավորումների բացակայության դեպքում օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վճռաբեկ բողոքը վերադարձվում է:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը: Մինչդեռ օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով բողոքարկման ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով բողոքարկվող դատական ակտի հրապարակման պահը, օրենսդիրը ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնված ժամկետը հարգելի կամ անհարգելի համարելու առումով: Բանն այն է, որ դատական ակտը հրապարակելուց, այն հասցեատիրոջն ուղարկելուց մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, որը կարող է ավելի երկարաձգվել՝ պայմանավորված նաև սուբյեկտիվ գործոններով: Նման պայմաններում անձն իր տնօրինության ներքո հաճախ չի ունենում բողոքարկվող դատական ակտը, հնարավորություն չի ունենում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները կազմել օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ, ինչն իրավաչափորեն հիմք է հանդիսանում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները համապատասխանաբար՝ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու համար:

ՍԴՈ–1054, 30 հոկտեմբերի, 2012 թ.

6. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է օրենքի վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորման տրամաբանության բացահայտումը՝ ելնելով նաև ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից:

Օրենքի վիճարկվող, ինչպես նաև այլ դրույթների համադրված վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները հետապնդում են իրավաչափ նպատակ, ուղղված են վարչական վարույթը սեղմ ժամկետում շուտ ավարտելուն, այն անտեղի չձգձգելուն և չեն բացառում ու չեն կարող բացառել վարչական վարույթի՝ օրենքով նախատեսված սկզբունքների կիրառումը, վարչական մարմնի ընթացակարգային պարտականությունների և հատկապես՝ գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման պարտականության, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու պարտականության կատարումը կամ վարչական վարույթի մասնակիցների իրավունքների և հատկապես՝ ծանուցված լինելու, լսվելու և ապացույցներ ներկայացնելու իրավունքների իրացման հնարավորությունը՝ **բոլոր այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի ընդունումը չի սահմանափակվում միայն եզրափակիչ փուլով և այդ ակտի ընդունումն օրենքով կանխորոշված չէ:** Հետևաբար, օրենքի 36-րդ հոդվածի դրույթները պետք է կիրառվեն այս համատեքստում, օրենքի այլ նորմերի հետ համակարգային ամբողջականության մեջ՝ անհրաժեշտ հիմնավորմամբ, պատճառաբանված, հետևաբար՝ հետապնդելով օրենքով կանխորոշված նպատակ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ իրավակիրառողը պետք է առաջնորդվի օրենքի վիճարկվող դրույթների՝ վերը նշված տրամաբանությամբ, այլապես կխախտվի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրված՝ պետական մարմինների առջև անձի իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

ՍԴՈ–1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

6. .... Սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակները, երբ անձը, որի նկատմամբ նշանակված է վարչական տույժ՝ տուգանք, տարբեր օբյեկտիվ պատճառներով, ներառյալ՝ անհաղթահարելի ուժի առկայությունը, չկարողանա օրենքով սահմանված ժամկետներում վճարել տուգանքը: Այս դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով, այսինքն՝ իրավունքի ուժով, նշանակված տուգանքի չափն ինքնաբերաբար բազմապատկվում է, որպիսի պայմաններում անձին չի տրվում հնարավորություն ապացուցելու իր պարտավորությունների չկատարման պատճառների՝ իր կամքից անկախ լինելը:

Մասնավորապես, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ բոլոր այն դեպքերում, երբ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժվում է, լսվելու հնարավորություն է տրվում վարչական դատարան դիմողին (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդված): Ինչ վերաբերում է տվյալ վարչական գործով պատասխանողին, ապա նշված վարույթի շրջանակներում պատասխանողը հնարավորություն ունի ներկայացնելու հակընդդեմ հայց միայն վարչական ակտը, տվյալ դեպքում՝ տուգանք նշանակելու մասին որոշումը (այլ ոչ թե տուգանքի չափի եռապատկումը կամ հնգապատկումը) վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ, եթե պատասխանողը վարչական ակտը համարում է ապօրինի: Որևէ այլ պարագայում և որևէ այլ կերպ պատասխանողը վճարման կարգադրություն

արձակելու մասին հայցադիմումի քննության վարույթի շրջանակներում տուգանքը ժամանակին չվճարելու օբյեկտիվ պատճառների մասին նույնիսկ հակընդդեմ հայցի միջոցով հիմնավորումներ ներկայացնելու և այդ հարցով լսվելու իրավական հնարավորություն չունի:

Ելնելով ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման, ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանն իրավական պետությանն անհարիր է համարում վերը նշված իրավիճակը և գտնում, որ դրա պատճառն իրավական բացն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարաններում օրենսգրքի վիճարկվող նորմերով նախատեսված տուգանքի հնգապատիկի չափը բռնագանձելու մասին հայցի քննության ժամանակ անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պետք է քննարկման առարկա դարձնի և գնահատի նրա ներկայացրած հիմնավորումներն այն մասին, թե արդյոք առկա են եղել արտակարգ և անհաղթահարելի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են անձին ժամանակին կատարելու իր պարտավորությունները պետության առջև, կամ արդյոք անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը կատարելու համար և այդպիսի հանգամանքների առկայությունը հաստատելու պարագայում հարգելի համարի բաց թողնված ժամկետները: **Ընդ որում, նման իրավակարգավորում նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ:**

ՍԴՈ-1063, 18 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... **դ) ընթացակարգերի իմաստով արդարադատության խորհուրդն իրականացնում է գործի արդար, հրապարակային և ողջամիտ ժամկետներում քննություն:** Ինչպես արդեն վերը նշվեց՝ ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում ՀՀ դատական օրենսգրքի նորմերին: **Նման կանոնակարգմամբ, ըստ էության, օրենսդիրն արդարադատության խորհրդի գործունեության հիմքում դնում է արդար քննության համար անհրաժեշտ երաշխիքներ՝ ուղղված ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը:** Արդար քննության շրջանակներում, մրցակցային գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննելիս տվյալ դատավորը, ՀՀ դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, իրավունք ունի՝ ծանոթանալու արդարադատության խորհրդում հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները, հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ անելու, ապացույցներ ներկայացնելու և մասնակցելու դրանց հետազոտմանը, մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ կամ փաստաբանի միջոցով: Օրենսդիրը նախատեսել է մեկ կարևոր երաշխիք ևս. ՀՀ դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 19-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից»: Արդար քննության շրջանակներում հիշյալ օրենսգրքով ամրագրված է նաև, որ արդարադատության խորհրդի որոշումները պետք է պատճառաբանված լինեն: ՀՀ դատական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով

արդարադատության խորհրդի որոշումը պետք է պարունակի նաև արդարադատության խորհրդի պատճառաբանված եզրակացությունը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ: Հրապարակային քննության շրջանակներում ևս օրենսդիրն ամրագրել է մի շարք պահանջներ: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջով իր գործի քննությունն անցկացվում է հրապարակային: Նույն օրենսգրքի 111-րդ և 163-րդ հոդվածների համաձայն՝ արդարադատության խորհրդի որոշումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Ինչ վերաբերում է ողջամիտ քննությանը, ապա ՀՀ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կարգապահական վարույթի տևողությունը չի կարող 6 շաբաթից ավելի լինել, բացառությամբ դատավորի բացակայության դեպքերի, իսկ նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով արդարադատության խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը քննում է ողջամիտ ժամկետում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված երաշխիքների առկայության պայմաններում և արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդարադատության խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման արգելքն իրավաչափ է:

ՍԴՈ-1074, 5 փետրվարի, 2013 թ.

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ տարաբնույթ օբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքն իրավաչափորեն երկարաձգող հնարավոր հանգամանքների առկայությունը և դրանով պայմանավորված՝ արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացման շահերից ելնելով նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը հակասության մեջ չի գտնվում Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու սկզբունքի հետ:

ՍԴՈ-1102, 28 հունիսի, 2013 թ.

5. .... Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարևոր երաշխիք է ՀՀ Սահմանադրության ինչպես 8-րդ, 18-րդ և 19-րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով, և սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել, եթե օրենսդրությամբ նախատեսված է դրա իրացման արդյունավետ ընթացակարգ, մասնավորապես՝ անիրավաչափ դատական ակտի ի կատար ածման հետևանքով անձանց խախտված իրավունքների ու ազատությունների **արագ, լիարժեք ու արդյունավետ** վերականգնման հնարավորություն: Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և, մասնավորապես՝ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն գործով վեճի առարկայի վերաբերյալ դիմողների հարցադրումներն իրենց բովանդակությամբ պարունակում են **հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման** այդպիսի ընթացակարգերի երաշխավորման անհրաժեշտության փաստացի պահանջ, որը, ինչպես հետևում է գործում առկա դատավարական նախապատմությունից, չնայած անմիջականորեն կապված չի եղել քաղաքացիական գործով ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրի հետ, սակայն իրավակարգա-

վորման ընդհանուր նպատակներով միտված է նաև այդ խնդրի լուծմանը: Հետևաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հանցագործությամբ անձանց պատճառված նյութական (գույքային) վնասի վերականգնման սահմանադրաիրավական սկզբունքների երաշխավորման, և հատկապես՝ իր նախորդ որոշումներով այդ հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության խնդրին:

ՍԴՈ-1120, 11 հոկտեմբերի, 2013 թ.

6. .... ՀՀ օրենսդրության և, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ օրենսդիրը դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացումն ապահովելու նպատակով սահմանել է դատական ակտերի բողոքարկման ժամկետների հաշվարկման կարգ. դատական ակտերը բողոքարկվում են կա՛մ դրանց կայացման պահից, կա՛մ դրանք ստանալու պահից: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1052 և ՍԴՈ-1062 որոշումներում, անդրադառնալով դատական ակտերի բողոքարկման ժամկետներին, ամրագրել է իրավական դիրքորոշումներ, որոնցից բխում է, որ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ, այն է՝ երբ բողոքարկվող դատական ակտը տրամադրվի (հասանելի դարձվի) անձին:

7. Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով սահմանված իրավակարգավորումն ինքնին չի առաջացնում հակասահմանադրական իրավիճակներ. այն կոչված է իր ամբողջության մեջ պաշտպանելու սեփականատիրոջ իրավունքները՝ առանց շոշափելու երրորդ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այլ խնդիր է իրավակիրառական պրակտիկայում օրենքի վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը: Այս կապակցությամբ դիմողի գործով դատական ակտերի ուսումնասիրության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանի կողմից օրենքի վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը, **այն է՝ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ իրազեկվածության կանխավարկածից դրա հիմքում ընկած դատական ակտի գոյության մասին իրազեկվածության <u>կանխավարկած բխեցնելը</u>** ոչ միայն չի արտացոլում օրենսդրի կամքը, այլև չի բխում դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների սահմանադրաիրավական տրամաբանությունից՝ խաթարելով անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Իր հերթին, ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձնելով դիմողի վճռաբեկ բողոքը և **վերահաստատելով** տվյալ գործով ՀՀ վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումները՝ անուղղակիորեն արտահայտվել է նման իրավական մեկնաբանության իրավաչափության օգտին՝ կանխորոշելով վիճարկվող նորմի նման մեկնաբանությամբ կիրառման հնարավոր իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը:

ՍԴՈ-1127, 10 դեկտեմբերի, 2013 թ.

7. ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՀՀ

Սահմանադրության 1, 3, 14, 18, 19-րդ և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով՝ վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ, ի տարբերություն վերոգրյալի, վիճարկվող դրույթով «**ստանալը** հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջ սահմանելն ավելորդ ծանրաբեռնում է հայցվորի դատավարական պարտականությունների շրջանակը, քանի որ հայցվորից, ըստ էության, պահանջվում է ապացույց առ այն, որ, մասնավորապես, փոստային կապի ազգային օպերատորը պատշաճ կատարել է օրենքով իր վրա դրված պարտականությունը: Ուստիև, վիճարկվող դրույթը՝ «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի մասով իրավաչափ նպատակ չի հետապնդում, արդյունքում՝ դժվար հասանելի է դարձնում դատարանի մատչելիության իրավունքը, ստեղծում է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման վտանգ:

....

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքների և վարչական դատավարությունում կողմերի հավասար հնարավորությունների իրացումը կարող է երաշխավորված լինել հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված **պատշաճ կարգով ուղարկելու** պահանջի կատարմամբ, ինչպես նաև գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու օրենսդրական համարժեք երաշխիքների իրացմամբ: Այդ պահանջի և երաշխիքների հստակ և համակարգված կանոնակարգումը, ելնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունից, օրենսդիր մարմնի պարտականությունն է:

ՍԴՈ-1176, 2 դեկտեմբերի, 2014 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը չպետք է որևիցե կերպ ոտնահարվի օրենսդրական տեխնիկայի նման թերությունների և բացթողումների պատճառով: Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վերադասության կամ դատական կարգով պետք է բողոքարկելի լինեն և **«մերժման եզրակացությունը»** (նման դատական բողոքարկման հնարավորություն նախատեսված է օրենսգրքի քննարկվող հոդվածի 3-րդ մասում), և **«վերջնական որոշումը»** կամ **«մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ որոշումը»,** որոնք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 53-ի համաձայն՝ դիտվում են որպես վարչական ակտեր: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքները:

ՍԴՈ-1189, 27 հունվարի, 2015 թ.

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը ոչ միայն պարտատերերի իրավունքների ոտնահարման իրական վտանգ է պարունակում, այլև մեծ են նաև կոռուպցիոն ռիսկերը: Առաջին հերթին սնանկացման հայտ ներկայացնելիս

պարտապանն է պարտավոր հստակ ներկայացնել իր պարտավորությունների իրական պատկերը: Դա կբացառի նաև պարտատերերի կողմից գույքի թաքցնումը կամ անհիմն նվազեցումը, ինչի մասին շեշտվում է նաև Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում սնանկության խնդրի լուծման վերաբերյալ 2014 թ. ներկայացված զեկույցի համառոտագրի 9-րդ և հիմնական զեկույցի 36-րդ կետերում:

ՍԴՈ-1190, 10 փետրվարի, 2015 թ.

8. .... Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ, մի կողմից, օբյեկտիվորեն հնարավոր չէ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման՝«հետաձգված բողոքարկման» շրջանակներում վիճարկումը, իսկ մյուս կողմից՝ գործող իրավակարգավորումների պայմաններում բացակայում է գործի վարույթը կարճելու մասին որոշման՝ անմիջական բողոքարկման շրջանակներում վերանայման հնարավորությունը: Այլ կերպ ասած, ամրագրելով գործի վարույթը կարճելու հետ կապված իրավահարաբերությունները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը՝ բացառելով նաև դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, **մինչդեռ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում:**

9. .... Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Սակայն դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացմանն արգելք հանդիսանալ:

12. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա իրավակարգավորումներով գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկումն անմիջականորեն ամրագրված չէ, ինչը չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին, նաև ՀՀ իրավական համակարգում ներդրված դատական բողոքարկման, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին, սահմանադրական դատարանն էական է համարում այն հարցադրումը, թե գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը բողոքարկելիության տեսանկյունից առավել համահունչ է գործն ըստ էության լուծող **դատական ակտերին,** թե **գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերին բնորոշ իրավակարգավորումներին:** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշմամբ դատավարությունը՝ որպես այդպիսին, և վարույթը՝ որպես ընթացակարգ, ավարտվում են, որպիսի պայմանը բացառում է վարույթի հետագա վերսկսումը: Բացի դրանից, գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումն իր առաջացրած իրավական հետևանքների առումով առավել մոտ է գործն ըստ էության լուծող **դատական ակտերին: Հետևաբար,** մինչև ՀՀ Ազգային

ժողովի կողմից գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման վերանայման համապատասխան իրավակարգավորումներ և ընթացակարգեր նախատեսելն իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այն մոտեցմամբ, որ **գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման կանոններով**՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և դրա կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

ՍԴՈ–1191, 24 փետրվարի, 2015 թ.

7. Անդրադառնալով դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումների բողոքարկելիության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1–րդ հոդվածի 8–րդ մասում ամրագրված իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական բողոքարկման իրավունքի իրացման սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին դրա համապատասխանության գնահատման համատեքստում:

Ինչպես հետևում է վերոհիշյալ նորմի բովանդակությունից, դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դրանք բողոքարկելի չեն, բացառությամբ՝ տուգանք կիրառելու մասին որոշման, որը կարող է բողոքարկվել եռօրյա ժամկետում:

.... Այսպիսով, քննության առարկա նորմով իրավաբանական առանձնահատուկ ուժ է հաղորդված քրեական գործերով դատական նիստի՝ օրենքով սահմանված կարգը պահպանելուն, այն խախտող անձանց պատասխանատվության ենթարկելուն կոչված դատական ակտերին: Այդ առանձնահատկությամբ են պայմանավորված թե՛ այդ ակտերի կայացման և թե՛ կատարման ապահովման գործող ընթացակարգերը: Միջանկյալ դատական այսպիսի ակտերի բողոքարկելիության իրավական սահմանափակ հնարավորությունը պայմանավորված է դատաքննության բնականոն ընթացքը խոչընդոտող ոչ իրավաչափ ու անկանխատեսելի հանգամանքների արագ վերացման և արդար, արդյունավետ, անկողմնակալ, բազմակողմանի ու օբյեկտիվ դատաքննություն իրականացնելու համար օրենքով նախատեսված պայմանների ստեղծման (ապահովման) անհրաժեշտությամբ, որը նաև երաշխիք է անձի իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ իրացնելու համար: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ և նման մեկնաբանման ու դրան համապատասխան կիրառման դեպքում սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

ՍԴՈ–1192, 3 մարտի, 2015 թ.

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վճռաբեկ բողոք բերելու՝ տվյալ դեպքում միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրն անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումները սահմա-

նադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ զարգացնելու առումով: Մասնավորապես, օրենսդրորեն համարժեքորեն չեն լուծվել գույքային խտրականության հետ կապված հարցերը, ընդ որում՝ խնդիրն առկա է ինչպես վարչական դատավարության, այնպես էլ վճռաբեկ բողոք ներկայացնելու նախապայմանների օրենսդրական միասնական քաղաքականության շրջանակներում, ինչն ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դրսևորումների համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով: Այս հանգամանքը փաստվում է ելնելով նրանից, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են **իրավունքի աղբյուր** իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենսդրական զարգացումների համար կարևոր աղբյուր են:**

Քննության առարկա հիմնահարցը վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով՝ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ վիճարկվող դրույթով՝ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի ամրագրումը, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացմանը նպաստելու իրավաչափ նպատակ հետապնդելով հանդերձ, փաստացի հանգեցրել է հենց այդ իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակմանը, անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորության և դատարանի մատչելիության իրավունքի ոչ համարժեք սահմանափակմանը:

Ի դեպ, նման եզրահանգում է կատարել նաև ՀՀ փաստաբանների պալատը (ըստ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարանին 27.02.2015 թ. թիվ Ն/202 նամակով հասցեագրված մեկնաբանությունների):

.... Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ո՛չ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, ո՛չ որևէ այլ իրավական ակտով նախատեսված չեն բողոքի էլեկտրոնային տարբերակին ներկայացվող պահանջները (էլեկտրոնային փաստաթղթի ձևավորման չափանիշները, վավերապայմանները, ձևաչափը և այլն): Նման պահանջների բացակայությունը պետք է մեկնաբանվի որպես բողոքաբերի իրավունք՝ ընտրելու էլեկտրոնային եղանակով փաստաթղթեր ներկայացնելու ցանկացած ձևաչափ և ցանկացած չափանիշի ընտրության հնարավորություն: Ընդ որում, որևէ պահանջ նախատեսված չէ նաև էլեկտրոնային թվային ստորագրության վերաբերյալ, հետևաբար՝ անձը չի կրում նման ստորագրություն ունենալու և այն օգտագործելու պարտականություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջն իրացնելիս:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «էլեկտրոնային կրիչ»-ին ներկայացված պահանջները որևէ իրավական ակտով ևս նախատեսված չեն: «Էլեկտրոնային կրիչ» հասկացությունը բացահայտված է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է. «էլեկտրոնային կրիչ՝ մագնիսական սկավառակ, մագնիսական ժապավեն, լազերային սկավառակ, կիսահաղորդչային և այլ նյութական կրիչներ, որոնք օգտագործվում են էլեկտրոնային կամ այլ տեխնիկական միջոցներով տեղեկատվության գրանցման և պահպանման համար»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է «էլեկտրոնային կրիչ» եզրույթը և ինքնին՝ կրիչին ներկայացվող այլ պահանջ չի նախատեսում (կրիչի տեսակը), ուստիև անձի

կողմից ցանկացած էլեկտրոնային կրիչով բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պարագայում նշված պահանջը համարվում է կատարված:

.... Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու միասնական չափանիշների բացակայությունը ենթադրում է դիմողի իրավունքը ներկայացնելու բողոքի էլեկտրոնային տարբերակը ցանկացած ձևաչափով և փաստաթղթի ցանկացած ձևավորմամբ թե՛ ցանկացած տեսակի էլեկտրոնային կրիչով, թե՛ էլեկտրոնային փոստով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու միասնական չափանիշները պետք է իրավաբանորեն ամրագրվեն, իսկ մինչ այդ իրավակիրառական պրակտիկան պետք է զարգանա սույն որոշման մեջ խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1196, 17 մարտի, 2015 թ.

7. Անդրադառնալով սույն որոշման 5-րդ կետում նշված հանգամանքները պարզելու և գնահատելու խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանը սույն գործով ևս վերահաստատում է իր ՍԴՈ-765, ՍԴՈ-833 և ՍԴՈ-1192 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ արձանագրելով, որ, մասնավորապես, ՍԴՈ-765 և ՍԴՈ-833 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները լիարժեք չեն իրացվել հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում, գտնում է, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի և 407-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների առնչությամբ: Դա վերաբերում է հատկապես այն սկզբունքային մոտեցմանը, երբ առաջադրված իրավաչափ նպատակը պետք է իրացվի իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման շրջանակներում: Այս պարագայում վերջինս ենթադրում է, որ օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, և դրա արդյունքում չապահովելով անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը միանշանակ ճանաչում է յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ ինչն օրենքով նախատեսված դեպքերում ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

ՍԴՈ-1197, 7 ապրիլի, 2015 թ.

6. Հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ վերը նշված միջազգային փաստաթղթերից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից բխում է, որ հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանությունը **պետք է ներառի, մասնավորապես, հետևյալ իրավունքները. դատարանում լսվելու իրավունքը, դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը:** Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է պարզել, թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հոգեկան խանգարում ունեցող անձանց համար որքանով են հստակ երաշխավորված վերը նշված իրավունքները: Խնդրո առարկա հանգամանքը պարզելը էական է նաև նրանով, որ.

– անձի գործունակության սահմանափակումն անխուսափելիորեն հանգեցնում է կյանքի տարբեր ոլորտներում տվյալ անձի իրավունքների և ազատությունների հնարավոր սահմանափակման,

– ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների արդյունքում անձը, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, դատական քննության ընթացքում պետք է հանդես գա **ոչ միայն որպես դատաքննության օբյեկտ, այլ նաև՝ որպես շահագրգիռ անձ:**

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոնշյալ կարգավորումներով՝ այն անձանց համար, ում գործունակությունը քննվում է դատարանում, հստակ չեն ապահովվում իրավահավասարության, դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, արդար դատաքննության և դատական ակտերը բողոքարկելու իրավունքները: Երաշխավորված չէ նաև հոգեկան խանգարում ունեցողների իրավական պաշտպանության վերաբերյալ միջազգային հիշյալ փաստաթղթերով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով ամրագրված՝ դատարանում լսվելու իրավունքը: Նշված հիմնարար իրավունքների ուժով ցանկացած անձ, ում գործունակության հարցը քննվում է դատարանում, պետք է օժտված լինի համապատասխան դատավարական կարգավիճակով, կրի դատավարական պարտականություններ, ինչպես նաև օգտվի դատավարության մասնակցի կարգավիճակից բխող դատավարական իրավունքներից, ներառյալ՝դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող հիմնահարցերի առնչությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում **առկա է իրավակարգավորման բաց, ինչը համակարգային լուծում է պահանջում և կարող է հաղթահարվել միայն ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ օրենսդրական համարժեք փոփոխություններ կատարելու միջոցով:**

Այդ հիմնախնդիրը չի կարող որևէ հիմնավոր ու ամբողջական լուծում ստանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171–րդ հոդվածի վիճարկվող դրույթի շրջանակներում: Խնդիրը չի վերաբերում զուտ դատավորի հայեցողությանը: Սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից վիճարկվող դրույթն ըստ էության միայն սահմանափակող բնույթ ունի: Այսինքն, օրենսդրական իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության շրջանակներում տվյալ դրույթը ըստ էության պետք է մեկնաբանել և կիրառել այնպես, որ **քաղաքացին չի կարող կանչվել դատական նիստի բացառապես այն դեպքում, եթե իր առողջական վիճակը դա թույլ չի տալիս:** Սակայն այս հարցում նույնպես իրավական կանոնակարգումներն ամբողջական ու հստակ չեն: Ավելին, նույնիսկ որոշակի իրավապայմանների առկայությամբ դատական նիստին կանչվելը՝ վեճի առարկա դրույթի սահմանադրաիրավական վերոնշյալ բովանդակության շրջանակներում, իրավունքների պաշտպանության տեսանկյունից էական դեր չի կարող ունենալ, եթե տվյալ անձն օրենքով սահմանված կարգով չունի հստակ դատավարական կարգավիճակ: Այս խնդիրն է, որ պետք է ՀՀ Ազգային ժողովի կողմից իր համալիր լուծումն ստանա:

Խնդիրը դիտարկելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ–1135 որոշման լույսի ներքո, առաջնորդվելով իրավահավասարության սահմանադրական սկզբունքի խախտումը բացառելու նկատառումներով և հաշվի առնելով խտրականության արգելման սկզբունքի, դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, ներառյալ դատական ակտե-

րը բողոքարկելու՝ անձի իրավունքները պետք է հավասարապես վերաբերելի լինեն նաև այն անձանց, ում գործունակության հարցը քննվում է դատարանում:

ՍԴՈ–1213, 9 հունիսի, 2015 թ.

9. .... Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանն իր՝ 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, ամրագրել է, որ «....օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթը հանդես է գալիս որպես հակասահմանադրական ճանաչված դրույթների ամբողջականության բաղադրատարր, որն օրենսդրի կողմից համապատասխան օրենսդրական փոփոխությամբ չի շտկվել:

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն էական է համարում շեշտադրել, որ խնդիրը ո՛չ այնքան և ո՛չ միայն վերոնշյալի մեջ է, այլ նրա, որ **գործը դատական քննության նախապատրաստելիս** դատարանի խնդիրը չէ մինչդատական վարույթում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումներ բացահայտելը և հենց այդ փուլում գնահատելը: Նման մոտեցումն ինքնին կհակասեր քրեադատավարական տվյալ փուլի ողջ տրամաբանությանը և կպարունակեր ինչպես քրեադատավարական մի շարք սկզբունքներից բխող պահանջների, այնպես էլ արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե մինչդատական վարույթում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, ապա դրանք դատական քննության ժամանակ կարող են և պետք է դառնան համարժեք գնահատման առարկա:

ՍԴՈ–1220, 16 հունիսի, 2015 թ.

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հաշվի առնելով ՍԴՈ-1192 և ՍԴՈ-1196 որոշումներում քննության առարկա դարձած դրույթների (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414^1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի) և սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող դրույթների բովանդակային համարժեքությունը, հիմք է ընդունվում նաև հիշյալ որոշումներում քննության առարկա դարձած դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած մյուս իրավական դիրքորոշումները: Դա վերաբերում է հատկապես այն սկզբունքային մոտեցմանը, համաձայն որի՝ առաջադրված իրավաչափ նպատակը պետք է իրացվի իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման շրջանակներում, ինչը ենթադրում է, որ օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածու-

թյուն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից՝ դրա արդյունքում չապահովելով անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը: Այս համատեքստում անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը միանշանակ ճանաչում է յուրաքանչյուրի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, ինչն օրենքով նախատեսված դեպքերում ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականն անդամ երկրներին նույնպես առաջարկում է բացառել «տնտեսապես վատ վիճակում գտնվող անձանց» դատարանի մատչելիության իրավունքի հնարավոր արգելափակումը:

ՍԴՈ-1222, 26 հունիսի, 2015 թ.

6. Ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման ինստիտուտի, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով, որպես մարդու խախտված իրավունքները ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու բացառիկ արդարադատական միջոցի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա միակերպ ընկալման ու կիրառման խնդիրներին ՀՀ սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-701, ՍԴՈ-709, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-872, ՍԴՈ-935, ՍԴՈ-1049, ՍԴՈ-1114 և այլն): Դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով սույն գործով քննության առարկա իրավակարգավորման շրջանակներից, հանգեցնում են ելակետային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

– նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն իրավական լուրջ երաշխիք է անձի խախտված իրավունքները վերականգնելու, դատական սխալներն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ,

– այդ հանգամանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ չնայած օբյեկտիվորեն գոյություն են ունեցել գործով վերջնական դատական ակտի կայացման պահին, սակայն հայտնի չէին և(կամ) չէին կարող հայտնի լինել թե՛ գործին մասնակցող անձանց և թե՛ դատարանին, կամ հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կամ որոշ դեպքերում (ՀՀ քաղ. դատ. օր. 204.32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ)՝ նորահայտ են,

– իրավասու անձի կողմից որպես նոր երևան եկած հանգամանքներ դատարան ներկայացված հիմնավորումները (տեղեկությունները, փաստարկները) առիթ են ուժի մեջ մտած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը պատշաճ իրավական ընթացակարգով ուսումնասիրելու և իրավական անհրաժեշտ հիմնավորումների (ապացույցների) առկայության (այդ հանգամանքները որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող գնահատվելու) դեպքում հիմք են դատական ակտը վերանայելու (բեկանելու և գործն իրավասու դատարանի նոր քննությանն ուղարկելու) համար, այսինքն՝ այդպիսի քննության շրջանակներում իրավասու դատարանը նաև պետք է որոշի, թե որքանով են ներկայացված հանգամանքներն ազդել քննության առարկա գործի ելքի վրա և ինչպես պետք է վերականգնվեն անձի հնարավոր խախտված իրավունքները,

– դատավարական (քրեական, քաղաքացիական) օրենսդրությամբ օբյեկտիվորեն սահմանված չէ որպես «նոր երևան եկած» գնահատելի հանգամանք հանդիսացող փաստարկների, տեղեկությունների, ապացույցների սպառիչ անվանական ցանկը, ինչը յուրաքանչյուր գործով շահագրգիռ անձի կողմից այդպիսիք ներկայացվելու դեպքում դատարանի գնահատման (որոշման) խնդիրն է, միաժամանակ, օրենսդրության խնդիրն է չբացառել որպես

«նոր երևան եկած» իրավաբանորեն գնահատելի որևէ հանգամանքի՝ իրավասու դատարանում քննության հնարավորությունը, եթե դրա՝ դատական ակտի հիմքում օբյեկտիվորեն հաշվի չառնելը հանգեցրել է անիրավաչափ, անհիմն որոշման կայացմանը, հետևաբար՝ նաև անձի իրավունքների խախտմանը,

– ուժի մեջ մտած դատական ակտը՝ վկայակոչված այս կամ այն (նախապես հայտնի կամ անհայտ) հանգամանքի հիմքով վերանայելու անհրաժեշտության իրավական հիմնավորման (ապացուցման) պարտականությունը կրում է այդպիսի վերանայում նախաձեռնած անձը,

– ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը՝ նոր երևան եկած հանգամանքներով, կատարվում է դատավարական համապատասխան ընթացակարգով, որի շրջանակներում իրավասու դատարանը կոչված է լուծելու արդարադատական հետևյալ հիմնական խնդիրները. գործով կայացված որոշման հիմքում չարտացոլված և նոր երևան եկած փաստական հանգամանքների (ապացույցների) ուսումնասիրում, իրավագնահատում և իրավական վեճի լուծման համար օրենսդրության համապատասխան նորմերի ընտրություն, դրանց մեկնաբանում ու կիրառում, որոնց հաջորդում են պարտադիր իրավական հետևանքներ, այդ թվում՝ անձի իրավունքների պաշտպանության հետ կապված:

ՍԴՈ–1225, 28 հուլիսի, 2015 թ.

6. Սահմանադրության 103–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ:

ՍԴՈ–1231, 6 հոկտեմբերի, 2015 թ.

7. Սահմանադրական դատարանը կարևորում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները նույն դատարանի կողմից քննելու պարագայում դատարանի անկողմնակալության գնահատման խնդիրը: Գործի քննությունն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հանդիսանում է Սահմանադրության 19–րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքի հիմնարար երաշխիքներից մեկը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը տարբերակում է **անկողմնակալության սուբյեկտիվ չափորոշիչ**՝ դատավորի անձնական առնչությունը տվյալ գործին, և **օբյեկտիվ չափորոշիչ**՝ այդ հարցում ողջամիտ կասկածները բացառող բավարար երաշխիքների առկայությունը (Gautrin and others v. France, ՄԻԵԴ–ի 1998 թ. մայիսի 20–ի գործը):

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը վիճահարույց է համարում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196–րդ հոդվածով ամրագրված իրավադրույթը դատարանի կողմնակալությունը գնահատելու տեսանկյունից՝ արդյո՞ք կարող է անկողմնակալ լինել դատարանն իր իսկ կայացրած դատական ակտի վերանայման հարցում:

Քննության առարկա գործով առաջադրված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ վարչական դատավարության նախկին օրենսգրքի (28.11.2007 թ.) և ՀՀ վարչական դատավարության գործող օրենսգրքի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա. 2010 թվականի հոկտեմբերի 29–ի՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն 2010 թվականի դեկտեմբերի 1–ից Հայաստանի Հանրապետությունում գործում է ՀՀ վարչա-

կան վերաքննիչ դատարանը և վարչական արդարադատությունն իրականացվում է եռաստիճան համակարգի շրջանակներում, նախկինում գործող երկաստիճանի փոխարեն,

բ. սույն գործով վիճարկվող իրավադրույթը, որը նախատեսում է վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայումը նույն դատարանի կողմից, փաստորեն շարունակել է գործել նաև ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի ստեղծումից հետո:

Ինչ վերաբերում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրագործման հարցին, ապա հարկ է մատնանշել, որ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները հաճախ դիտարկում է որպես մեկ միասնական իրավական երևույթ և բազմիցս դրանց անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-719, ՍԴՈ-780, ՍԴՈ-936, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1190 և այլն):

ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները երաշխավորում են յուրաքանչյուրի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Դատական օրենսգրքի 7-րդ հոդվածը նույնպես ամրագրում է դրույթ, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

.... Վիճարկվող դրույթի հիման վրա նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների՝ վարչական դատարանի կողմից վարույթ ընդունվելու հնարավորության նորմատիվ առկայությունը վերոնշյալ գործերով միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի շրջանակներում **անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումն ապահովելու համար բավարար չէ**:

Հայաստանի Հանրապետությունում սահմանված դատական համակարգի յուրաքանչյուր ատյանում գործերի հարուցումը, նախապատրաստումը, քննությունը, գործի լուծման փուլերի հաջորդականությունը, և այլն, պետք է հստակորեն կարգավորված լինեն համապատասխան դատավարական օրենսգրքերով և օրենքներով:

.... Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածը խնդրահարույց է ինչպես օրենսդրորեն ամրագրված դատական աստիճանակարգության համապատասխանության տեսանկյունից, այնպես էլ օրենքի հստակության առումով, և, հետևաբար, բավարար չափով չի ապահովում դատական պաշտպանության ու արդար դատաքննության սահմանադրական իրավունքների լիարժեք իրագործման հնարավորությունը:

ՍԴՈ-1251, 19 հունվարի, 2016

8. Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթին համանման իրավակարգավորում է նախատեսված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածներով:

Բոլոր դեպքերում դատարանի իրավասությանն է վերապահված գնահատելու, թե արդյոք հնարավոր է տվյալ գործի քննությունը մինչև այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Սակայն գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքի վերանալու հարցը պարզելիս բոլոր ատյանների դատարաններն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են ոչ միայն **ստուգել** սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշման կայացված կամ դեռևս չկայացված լինելը, այլ նաև այդ որոշման բացակայության պայմաննե-

րում գործի վարույթը վերսկսելու հնարավորության հարցը, ինչը կնպաստի անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքների երաշխավորմանը:

ՍԴՈ–1257, 10 մարտի, 2016 թ.

6. Անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության (2015 թ. փոփոխություններով) 61–րդ և 63–րդ հոդվածներով, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

.... Այսպիսով, օրենսդիրը հստակեցրել է այն հիմնական, պարտադիր (ոչ հայեցողական) իրավապայմանները, որոնց առկայության պայմաններում անձը հնարավորություն է ստանում վարչական դատարանից հայցել իր իրավունքների ու ազատությունների պաշտպանություն, այսինքն՝ իրացնել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իր իրավունքը: Այս առումով, վարչական դատարանը (վարչական արդարադատությունը) անձին մատչելի է այնքանով, որքանով վերջինս պատշաճ պահպանել է դատարան դիմելու՝ օրենսգրքով սահմանված իրավապայմանները:

Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում վերոհիշյալ իրավապայմանների և դրանք նախատեսող նորմերի վերլուծությունը վկայում է, որ վիճելի իրավակարգավորման շրջանակում օրենսդիրը.

– վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման (հայցադիմում ներկայացնելու) համար նախատեսել է մի շարք ձևական և բովանդակային պահանջներ, որպիսիք անհրաժեշտ են դիմողի անձը (ներկայացուցչին) նույնականացնելու, դատարան ներկայացվող հայցադիմումը, այդ անձի իրավունքների ու ազատությունների խախտման փաստը, հանգամանքները, պատասխանողին ուղղված իրավական պահանջը մասնագիտորեն ձևակերպելու, առկա վեճի բնույթն ու բովանդակությունը դատարանի կողմից պարզելու և դրան իրավական գնահատական ու լուծում տալու նպատակով,

– պարտադիր է համարել դիմող անձի կողմից իր հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և երրորդ անձանց ուղարկելը և այն հավաստող ապացույցները դատարան ներկայացնելը, որն անհրաժեշտ է դատավարության շահագրգիռ մասնակիցների իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու, նրանց կողմից՝ իրավունքից բխող իրենց գործողությունները (պաշտպանական և այլն) նախապես պլանավորելու և իրացնելու տեսանկյունից,

– առանձնահատուկ կարևորել է հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին և շահագրգիռ այլ անձանց երաշխավորված ուղարկելու հանգամանքը՝ սահմանելով այն պարտադիր փոստային հասցեները, որոնցով հիշյալ փաստաթղթերի առաքման փաստն ինքնին գնահատելի է որպես իրավական բավարար պայման՝ դատավարության մասնակիցների իրավունքների ու շահերի պաշտպանությունն իրացնելի համարելու տեսանկյունից: Մասնավորապես, վարչական մարմնին կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողին հայցադիմումը և կից փաստաթղթերը հատկապես նրանց պաշտոնական փոստային հասցեով ուղարկելու վերաբերյալ նորմատիվ պահանջը, որը սույն գործով վեճի առարկա է, պայմանավորված է իրավական այն արդարացի հանգամանքով, որ հիշյալ մարմինը կամ պաշտոնատար անձը վարչական դատավարությունում հանդես է գալու Սահմանադրությամբ, օրենքով կամ իրավական այլ ակտով նախատեսված իր իրավական կարգավիճակից բխող իրավունքների ու պարտականությունների շրջանակներում, և ոչ որպես մասնավոր կամ վարչական մարմին չհանդիսացող անձ: Այսինքն, վարչական դա-

տարան դիմելու ընթացակարգի շրջանակներում օրենսդիրը հնարավոր և ողջամիտ է համարել փոստային առաքման եղանակի ընտրությունը, վարչական մարմնի կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողի առնչությամբ նախատեսելով պարտադիր համարվող փոստային հասցե, որպիսի հանգամանքը, սահմանադրական դատարանի գնահատմամբ, մատչելի, հասանելի եղանակ է այս կամ այն վարչական մարմնին կամ պաշտոնատար անձին՝ վերջիններիս նկատմամբ վարչական դատարանում հայց հարուցելու անձի մտադրության, ներկայացվող իրավական պահանջների բնույթի և բովանդակության մասին տեղեկացնելու, ինչպես նաև իրավական երաշխիք է վարչական դատարանում կոնկրետ գործի քննություն նախաձեռնելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ միաժամանակ էլեկտրոնային հասցեով վերոհիշյալ փաստաթղթերը դատարան, պատասխանողին և դատավարության այլ մասնակիցներին ուղարկելու իրավական պայմանի բացակայությունը խոչընդոտ չէ դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը և չի կարող մեկնաբանվել որպես այդ իրավունքի էության խաթարում: Հետևաբար, այս հարցում դիմող կողմի փաստարկները հիմնավոր չեն:

11. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում օրենսդիրը նախատեսել է ողջամիտ պահանջներ, որոնք դատարան դիմող անձին ոչ թե ծանրաբեռնում են ձևական, ավելորդ պահանջներով, այլ նախատեսում են առաջնահերթ, իրավական տեսակետից անհրաժեշտ ու իրագործելի գործողություններ, որոնց կատարումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակներ, չի առաջացնում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն և միտված է դիմող անձի, դատարանի և գործով շահագրգիռ այլ անձանց, այդ թվում՝ պատասխանողի համար, Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված իրենց իրավունքների ու պարտականությունների արդյունավետ իրացման համար նախադրյալներ ստեղծելուն: Այսինքն՝ քննության առարկա նորմատիվ կարգավորմամբ հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցի միջև առկա է համաչափություն: Հետևաբար, օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումը դատարանի մատչելիության իրավունքի էությունը բնորոշող սահմանադրաիրավական և միջազգային իրավական չափանիշների շրջանակներում սահմանադրականության խնդիր չի հարուցում:

ՍԴՈ–1262, 22 մարտի, 2016 թ.

9. .... Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով ՀՀ ԴԱՀԿ ծառայության կողմից ձևավորված իրավակիրառական պրակտիկան չի բխում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման պահանջներից, ինչը նպաստել է վճռի կատարման անհիմն ձգձգմանը:

ՀՀ ԴԱՀԿ ծառայության իրավասությունն է կատարողական թերթի ժամանակին, լրիվ և ճիշտ կատարման համար միջոցներ ձեռնարկելը, այլ ոչ թե դատական ակտի և կիրառման ենթակա օրենքի մեկնաբանությունը: Դատական ակտի իրավաչափության քննությունն ու օրենքի միատեսակ կիրառության ապահովումը ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական իրավասության խնդիրն է:

Հարկ է նշել, որ անդրադառնալով կատարման ներկայացնելու ժամկետի հաշվարկի սկզբի հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.04.2015 թ. թիվ ԵԿԴ/0024/16/12 որոշմամբ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ իր սահմանադրաիրավական գործառույթին համապատասխան՝ վիճարկվող դրույթների կապակցությամբ իրավաչափորեն նշել է. «Այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը, այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել սկսած այն օրվանից, երբ կայացվել է արբիտրաժային տրիբունալի վճիռը: Մինչդեռ այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության

արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) վճիռները և որոշումները ճանաչելու վերաբերյալ դատական ակտը, ապա այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից»:

ՍԴՈ–1263, 5 ապրիլի, 2016 թ.

6. .... Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միայն փաստաբանի կողմից պարբերաբար կամ վճարովի հիմունքներով ծառայություն մատուցելու օրենսդրական պահանջը բխում է փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթից, «ծառայություն» եզրույթի բովանդակությունից, որոնց համար հատկանշական են պարբերականությունը և վճարովիությունը, ինչպես նաև նման ծառայություն մատուցողի հանդեպ համարժեք պատասխանատվության երաշխիքների ապահովման անհրաժեշտությունից:

7. Ինչ վերաբերում է վճարովիության հիմունքներով պարբերաբար դատական ներկայացուցչության՝ միայն փաստաբանի միջոցով իրականացման օրենսդրական պահանջի և դատարանի մատչելիության իրավունքի միջև հարաբերակցությանը, ապա, հաշվի առնելով փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հարաբերակցությունը կարող է պայմանավորված լինել բացառապես դատական ներկայացուցչություն հայցող անձի ֆինանսական հնարավորություններով:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է որոշակի երաշխիքներ դատական ներկայացուցչություն հայցող, սակայն համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունեցող անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման համար: Մասնավորապես, օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի և օրենքի 5-րդ հոդվածի վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, **նախ՝** դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը չի կրում **պարբերական բնույթ կամ վճարովի չէ:**

Երկրորդ՝ անվճար, սակայն պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար:

Երրորդ՝ վճարովի կամ պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում այն իրավաբանական անձի համար, որի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանում են ներկայացուցչի մերձավոր ազգականին (ազգականներին):

Բացի դրանից, օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը թվարկել է հասարակության խոցելի խմբերին պատկանող 16 կատեգորիայի անձանց, որոնց իրավաբանական օգնությունը տրամադրվում է անվճար՝ ուղղակիորեն չնախատեսելով տվյալ կատեգորիայի անձանց՝ համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունենալու հանգամանքը, և միայն մեկ դեպքում, որը սահմանված է օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետում (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ), օրենսդիրն անվճար իրավաբանական օգնության տրամադրման համար ուղղակիորեն նախատեսել է տվյալ կատեգորի-

այի անձանց՝ համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունենալու հանգամանքը:

Միաժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի ապահովման նկատառումներից ելնելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները պարտավորեցնում են դատարաններին յուրաքանչյուր կոնկրետ քաղաքացիական գործով ստուգելու հետևյալ հանգամանքների առկայությունը.

– ներկայացուցչի փաստաբան լինելը,

– ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա կողմից դատական ներկայացուցչությունը պարբերաբար կամ վճարովի հիմունքներով իրականացնելը,

– ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա՝ վստահորդի մերձավոր ազգական հանդիսանալը և դատական ներկայացուցչությունն անվճար իրականացնելը,

– իրավաբանական անձի ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա մերձավոր ազգական հանդիսանալն այն անձի կամ անձանց նկատմամբ, որոնց պատկանում են տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը:

8. Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում այն փաստարկները, որ վիճարկվող նորմերը հակասում են արդար դատաքննության, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներին, անձնական կյանքի հարգման իրավունքին, դրա բաղադրատարր հանդիսացող՝ ինքնաարտահայտման իրավունքին, այլ անձանց շահերը պաշտպանելու նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու և սեփականության իրավունքներին: **Նախ՝** առկա չէ որևէ պատճառահետևանքային կապ վիճարկվող նորմերի և արդար դատաքննության, անձնական կյանքի հարգման և սեփականության իրավունքների միջև: **Երկրորդ՝** ինքնաարտահայտման իրավունքը, որը դիմողների ընկալմամբ ներառում է նաև դատական ներկայացուցչությունը, և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը մնացած բոլոր իրավունքների նմանությամբ կարող են իրացվել միայն **օրենքով նախատեսված կարգով,** այլ ոչ թե սեփական հայեցողությամբ: Բացի դրանից, ինքնաարտահայտման իրավունքը, որը դիմողների ընկալմամբ ներառում է նաև դատական ներկայացուցչությունը, վերաբերելի է դատական ներկայացուցչություն իրականացնողին, մինչդեռ տվյալ դեպքում դիմողները դատարաններում հանդես են եկել որպես հայցվորներ, այլ ոչ թե ներկայացուցիչներ: **Երրորդ՝** այլ անձանց շահերը պաշտպանելու նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու իրավունքն ուղղակիորեն չի վերաբերում հայցադիմումին, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներին, դրանց պատասխաններին, քաղաքացիական գործով ներկայացվող գրավոր բացատրություններին և առարկություններին, գրավոր միջնորդություններին, հատուկ և հատուկ հայցային վարույթներով ներկայացվող դիմումներին:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև այն փաստարկը, որ վիճարկվող նորմերը հակասում են խտրականության արգելման սկզբունքին, քանի որ տվյալ դեպքում տարբերակումը վերաբերում է տարբեր կատեգորիայի անձանց՝ փաստաբաններին, իրավաբաններին և այդպիսիք չհանդիսացող անձանց: Խտրականությունն առկա կլիներ այն դեպքում, երբ օրենսդրորեն տարբերակում նախատեսվեր այս երեք խմբերից որևէ մեկում: Դատավարական տարբեր գործընթացներում ներկայացուցչության ապահովումն ու վերջինիս իրավակարգավորումն իրականացվում է այդ գործընթացների առանձնահատկությունները հաշվի առնելով:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՍԴՈ–1135 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վեճի առարկա հիմնախնդրի առկա իրավակարգավորման հիմնական նպատակը քաղաքացիական արդարադատության ոլորտում մարդկանց վճարովի իրավաբանական ծառայություն մատուցելու ինստիտուտի հստակ

կանոնակարգումն է՝ արգելելով անձանց պարբերաբար և վճարովի հիմունքներով հանդես գալ որպես ներկայացուցիչ դատարանում՝ չունենալով համապատասխան գործունեությամբ զբաղվելու արտոնագիր: Նման իրավակարգավորում առկա է բազմաթիվ երկրներում և բխում է իրավական պետությունում իրավունքի գերակայության երաշխավորման սահմանադրական սկզբունքի էությունից: Այլ խնդիր է, որ արդարադատական պրակտիկայում չպետք է այն աստիճան նեղացվի քաղաքացիական գործերով իրավաբանական օգնություն ցույց տալու շրջանակները, որ բացառվեն ոչ վճարովի հիմունքներով և ոչ պարբերաբար մատուցվող իրավական օգնության հնարավորությունները: Իր հերթին, դատական պրակտիկայում տարակերպ մեկնաբանություններից խուսափելու համար, հետագա օրենսդրական հստակեցումներն առավել որոշակի պետք է դարձնեն «պարբերաբար» և/կամ «վճարովի հիմունքներով» եզրույթները, ինչպես նաև երաշխավորեն դատավարական իրավակարգավորումների միասնականությունը:

ՍԴՈ–1265, 19 ապրիլի, 2016 թ.

7. Ինչ վերաբերում է առանց տուրքի վճարման հայց ներկայացնելուն և, հետևաբար, սահմանված կարգով հայց չհարուցելու պարագայում հայցային վաղեմության ժամկետի ընթացքի չընդհատվելուն, ապա անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման տեսանկյունից անհրաժեշտ է նշել հետևյալը.

նախ՝ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Սահմանված կարգով հայց հարուցելու ֆինանսական բաղադրատարրի առնչությամբ՝ որպես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի նշանակությանը համարժեք սահմանափակում, պետք է ընդգծել, որ ՀՀ սահմանադրական դատարանն այս հարցի առնչությամբ արտահայտել է իր դիրքորոշումը: Մասնավորապես, իր՝ 25.05.2010 թվականի ՍԴՈ-890 որոշման 6-րդ կետում Սահմանադրական դատարանը նշել է. «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ»:

Երկրորդ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից: Այս դրույթը դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորություն է երաշխավորում ոչ բավարար ֆինանսական միջոցներ ունեցող անձանց հա-

մար: Ընդ որում, վերոհիշյալ արտոնությունները, ի թիվս այլնի, ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունից անձն ազատվում է օրենքի ուժով, որով բացառվում է այդ պարտականությունից անձին ազատելու հայեցողական մոտեցումը: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասը՝ ելնելով այն սկզբունքից, որ դատական ծախսերը վճարում է դատավարության պարտվող կողմը, սահմանում է, որ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Երրորդ՝ հայց հարուցելը միակ հիմքը չէ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման համար: Ինչպես արդեն նշվել է, օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է նաև պարտապան անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելով: Այս իրավակարգավորումը լրացուցիչ հիմք է անձի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման և դատական պաշտպանության մատչելիության ապահովման համար:

Չորրորդ՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը միանշանակ չի ենթադրում անձի կողմից իր իրավունքների դատական պաշտպանության հնարավորության սպառում: Օրենսգրքի 335-րդ հոդվածին համապատասխան դատարանն իրավունքի պաշտպանության մասին պահանջը քննության է առնում անկախ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հանգամանքից, և վիճող կողմի՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողման մասին դիմումի բացակայության պարագայում տեղի է ունենում անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Ավելին, դատարանի կողմից հարգելի ճանաչված բացառիկ դեպքերում օրենսգիրքը նախատեսում է հայցային վաղեմության ժամկետի վերականգնման հնարավորություն, ինչը ևս կարող է երաշխավորել անձի դատական պաշտպանությունը:

ՍԴՈ-1293, 12 հուլիսի, 2016 թ.

8. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու պահանջն իրավաչափ է, քանզի այն ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են բողոքարկվող դատական ակտի՝ վկայակոչվող դատական ակտին հակասող մասերը մեջբերելը, բողոքարկվող դատական ակտի և վկայակոչվող դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծություն կատարելը:

Հիշյալ համատեքստում հիմնավորում ներկայացնելու իրավական պահանջն ինքնին չի արգելափակում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն, որ նման պահանջով անձի վրա չի դրվում օբյեկտիվ իրականության մեջ առկա հնարավորությունների հաշվառմամբ անիրագործելի պարտականություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն չի հանգեցնում նաև իրավունքի էության խախտման: Ավելին, հիմնավորում ներկայացնելու պահանջներ սահմանելու նպատակը ոչ թե բողոք բերած անձին ավելորդ պարտականություններով ծանրաբեռնելն է, այլ տվյալ բողոքարկվող գործով ներկայացված հանգամանքների իրավաչափությունը փաստարկելը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու իրավապահանջը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և որոշումների, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների իրացումը և նպաստել միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը, քանզի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի

կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հանդիսանում են իրավակիրառ պրակտիկայի և, ընդհանրապես, իրավական համակարգի կայուն դինամիկ զարգացման առանցքային ուղենիշներ:

Այդպիսով, վճռաբեկ բողոք բերողի կողմից վկայակոչվող իրավական դիրքորոշումների և համապատասխան դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների համեմատական վերլուծության պահանջն իրավաչափ է: Ընդ որում, վերջինս կարող է ապահովվել միայն այն պարագայում, երբ վկայակոչվում է ոչ միայն համապատասխան իրավական դիրքորոշումը, այլև մատնանշվում են այն դատական ակտի նույնականացման, բնութագրական, բնորոշիչ տվյալները, որտեղ տեղ են գտել վկայակոչվող իրավական դիրքորոշումները (մասնավորապես, վկայակոչվող դատական ակտն ընդունած մարմնի անվանումը, դատական ակտի անվանումը, ընդունման ամսաթիվը, գործի համարը):

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա իրավանորմի շրջանակներում վկայակոչվող դատական ակտերը բողոքին կցելու պահանջը ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում է բողոքաբերին: Ավելին, նման պահանջը ոչ միայն ոչ համարժեք սահմանափակում է դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացումը, այլև Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրաիրավական գործառույթի արդյունավետ և ամբողջական իրացման առումով խոչընդոտ է հանդիսանում՝ հնարավորություն չտալով Վճռաբեկ դատարանին օրենքով սահմանված այլ հիմքերի բավարարման պարագայում վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ և իրականացնել արդարադատություն:

Վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջ նախատեսելն այն պարագայում, երբ դրանք հասանելի են դատավարության կողմերին և ՀՀ վճռաբեկ դատարանին (այդ թվում՝ համացանցի համապատասխան պաշտոնական կայքէջերից օգտվելու միջոցով), հիմնավոր չէ: Պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների, Սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների, ինչպես նաև ստորադաս դատարանի դատական ակտերի հասանելիությունը: Ընդ որում, դա պետք է ապահովվի հավաստի և իրավաբանական առումով համարժեք թարգմանված և կոնկրետ պետական մարմնի կողմից հաստատված տեքստերի միջոցով: Օրենքի պահանջը՝ մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը վկայակոչող բոլոր ակտերը բողոքին կցելու վերաբերյալ, երբ, մի կողմից՝ դրանք մի քանի տասնյակ էջեր են կազմում ու համաձայն իրավակիրառ պրակտիկայի՝ պետք է թարգմանաբար ներկայացվեն (նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերենով), մյուս կողմից՝ սահմանափակ է բողոք ներկայացնելու ժամկետը կամ դրա ձգձգումը կարող է դիմողի համար ունենալ անշրջելի բացասական հետևանքներ, իրական վտանգ է ստեղծում արգելափակելու անձի արդար դատաքննության իրավունքի իրացումը (մասնավորապես, տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թ. ապրիլի 27-ի քաղաքացիական գործով թիվ ԵԱՔԴ/0229/02/16 որոշումը):

ՍԴՈ-1296, 6 սեպտեմբերի 2016 թ.

7. .... Արձանագրելով, որ դատարանը հանդես է գալիս որպես արդարադատություն իրականացնող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական հայեցողությամբ իրականացնելու արգելքով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի կողմից դատավարական ակնկալվող գործողության կատարման, այն է՝ բաց թողնված դատավարական ժամկետն իրավունքի ուժով (ex jure) վերականգնելու համար անհրաժեշտ է, որպեսզի բողոք բերած անձը գրավոր միջնորդի համապատասխան գործողության կատարումը: Հետևաբար, համապատասխան միջնորդության առկայությունն այն անհրաժեշտ նախապայմանն է, որը վկայում է բողոք բերած անձի կողմից ակնկալվող

գործողությունը հայցելու մասին, ինչն էլ բավարար հիմքերի առկայության դեպքում դատարանի համար առաջացնում է բաց թողնված դատավարական ժամկետն իրավունքի ուժով (ex jure) վերականգնելու պարտականություն:

Քննության առարկա գործը դիտարկելով վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խնդիրը ոչ միայն «ծանոթագրություն» բառն է, այլև այն հանգամանքը, թե շարադրանքի բովանդակությունը որքանով է հնարավորություն ընձեռում այն դատարանի կողմից որպես միջնորդություն ընկալվելու համար: Իսկ այդպիսին ընկալվելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է, որպեսզի բողոք բերած անձը հստակորեն ներկայացնի իր միջնորդությունը: Այս առումով հատկանշական է այն, որ երկու գործերի դեպքում էլ, երբ վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել վճռաբեկ բողոքները, կրկին անգամ ներկայացված վճռաբեկ բողոքներում բողոք բերած անձինք արդեն իրենց խնդրանքը շարադրել են այնպես (ինչպես ձևական, այնպես էլ բովանդակային առումով), որ վճռաբեկ դատարանի կողմից այն ընկալվել և գնահատվել է արդեն որպես միջնորդություն:

.... Ի տարբերություն բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու հատվածի, որը ներկայացված է որպես «ծանոթագրություն», պետական տուրքի գծով խնդրանքը ներկայացված է որպես միջնորդություն՝ «միջնորդում եմ» ձևակերպմամբ: Հետևաբար, օրենքով սահմանված միջնորդելու պարտականության բարեխիղճ կատարման փոխարեն այն չկատարելը չի կարող դիտարկվել որպես դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացման խոչընդոտ:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ-765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

14. Հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջի ազդեցությունը վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն խնդիրը, թե արդյո՞ք գործող օրենսդրությունն ապահովում է վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման իրավական հնարավորությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ո՛չ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ո՛չ էլ ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը չեն նախատեսում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրում, այն է՝ վճռաբեկ բողոք կազմելու իրավական հնարավորություն:

.... Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաև իրավաբանների և իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից:

....

16. Սահմանադրական դատարանը՝ հաշվի առնելով, որ հավատարմագրված փաստաբանների և մյուս փաստաբանների միջև մասնագիտական պատրաստվածության և փորձառության հարցում չկա որևէ տարբերություն, որ օրենսդրությունը վճռաբեկ դատարան դիմելիս հստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, որ նույնիսկ հավատարմագրված փաստաբանների կողմից կազմված բողոքների գերակշիռ մեծամասնությունը քննության չի ընդունվում վճռաբեկ դատարանում, ինչպես նաև նկատի ունենալով հավատարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկատիրական բնույթով պայմանավորված՝ վճռաբեկ բողոք կազմելուց հրաժարվելու ազատությունը, գտնում է, որ արդարացի հավասարակշռությունը ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի և դրանով հետապնդվող նպատակի միջև, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի էությունը:

....

17. .... Ինչ վերաբերում է դատավարության մասնակիցների համար օրենքի առջև հավասարության սկզբունքի նկատմամբ հարգանքն ապահովելուն, ապա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը վճռաբեկ բողոք կազմելու առնչությամբ չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնության տրամադրում, ինչպես նաև հիմք ընդունելով այն վիճակագրությունը, որ վճռաբեկ դատարան դիմելու միջնորդավորված կարգ սահմանելուց ի վեր կրկնակի կրճատվել է վճռաբեկ բողոքների քանակը, սահմանադրական դատարանը գտնում է, որ հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությամբ խախտվում է նաև հավասարությունը դատավարության մասնակիցների միջև՝ պայմանավորված նրանց գույքային վիճակով:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ անհրաժեշտության դեպքում պետության հաշվին անձին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես ընդհանուր կանոնից բացառություն՝ արդյունքում գործով շահագրգիռ կարիքավոր անձանց առնչությամբ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու օրենքով խիստ մասնավոր դեպքեր նախատեսելու համար:

Հետևաբար, վիճարկվող նորմում փաստաբանի միջոցով ներկայացուցչության վերաբերյալ պարտադիր պահանջը, փաստաբանների կողմից՝ դատական ակտերի վերանայման վերաբերյալ բողոք ներկայացնելու կապակցությամբ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հնարավորություն չնախատեսելու պայմաններում, անհամաչափորեն սահմանափակում է անձի խախտված սահմանադրական և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու միջոցով վերականգնման հնարավորությունը՝ վտանգելով անձի թե՛ սահմանադրական արդարադատության իրավունքի և թե՛ իր խախտված իրավունքները միջազգային ատյաններում դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է դատավարության մասնակից ճանաչելու պահանջի իրավունքի և այն խախտվելիս վերականգնելու երաշխիքների (մասնավորապես՝ դատական կարգով) վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100 հոդվածում ամրագրված նորմերի ընդհանուր իրավակարգավորիչ նշանակությունն ու դրանց տրամաբանական զարգացման անհրաժեշտությունը քրեական դատավարության բոլոր, այդ թվում նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլում (ներառյալ այն դեպքերը, երբ համապատասխան միջնորդությունը մերժվել է միջանկյալ դատա-

կան ակտով, հատկապես, երբ այդ ակտով ուղղակի շոշափվում են անձի սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները):

ՍԴՈ–1119, 8 հոկտեմբերի, 2013 թ.

5. .... Անդրադառնալով Սահմանադրության 20–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին նախադասությամբ ամրագրված, ի թիվս այլնի, պաշտպանի միջոցով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված իրավունքը վերջին հաշվով ուղղված է դատարանների և պետական այլ մարմինների առջև իրավունքի սուբյեկտի օրինական շահերի իրավական պաշտպանությանը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիտարկվող իրավունքը ենթադրում է իրավաբանական օգնության **լիարժեքություն**, ինչը պայմանավորված է պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության իրականացման **արդյունավետությամբ՝ հաշվի առնելով տվյալ իրավունքի՝ Սահմանադրության 43–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված հիմքերով սահմանափակման հնարավորությունը:** Ըստ այդմ էլ, Սահմանադրության 20–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին նախադասությամբ ամրագրված՝ դիտարկվող իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ իրավակիրառ պրակտիկայում երաշխավորել պաշտպանի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականության արդյունավետ իրականացումը, իսկ որևէ խոչընդոտ առաջանալու դեպքում քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ:

Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացմանն օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ նշված իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձևական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

6. .... Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունն այդպիսի մասնակցության վերաբերյալ կասկածյալի կամ մեղադրյալի պահանջի առկայությամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթը ևս, ի խախտումն Սահմանադրության 43–րդ հոդվածի 1–ին մասի դրույթների, հանդես է գալիս որպես պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող և դրա արդյունքում՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթ: Ավելին, այդպիսի սահմանափակումը ևս չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

.... Այս կապակցությամբ, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **պաշտպանյալի մասնակցությամբ** իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողությանը պաշտպանի մասնակցության ժամանակային սահմանափակման և մասնակցության համար պաշտպանի միջնորդության պարտադիրության վերաբերյալ դրույթները ևս, ի խախտումն Սահմանադրության 43–րդ հոդվածի, հանդես են գալիս որպես պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող և դրա արդյունքում՝ պետական մարմինների առջև իրավական

պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթներ և չեն հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

.... Այս կապակցությամբ, հիմք ընդունելով սույն կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **պաշտպանյալի մասնակցությամբ** իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողությանը պաշտպանի մասնակցության ժամանակային սահմանափակման և մասնակցության համար պաշտպանի միջնորդության պարտադիրության վերաբերյալ դրույթները ևս, ի խախտումն Սահմանադրության 43-րդ հոդվածի, հանդես են գալիս որպես պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող և դրա արդյունքում՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթներ և չեն հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

ՍԴՈ-1191, 24 փետրվարի, 2015 թ.

9. Այսպիսով, վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները, գնահատելով սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում օրենսդրական, այդ թվում՝ դատական բողոքարկման իրավունքի սահմանափակման սահմանադրական իրավաչափությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք համաչափ են հիշյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես փաստաբանի, այնպես էլ վերջինիս օգնականի կարգավիճակն իր իրավական բովանդակությամբ, իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի այդ կարգավիճակը բնորոշող իրավական ակտերի համակցության մեջ՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորման գերակա անհրաժեշտությունը: Սահմանադրաիրավական այսպիսի դիրքորոշմամբ և համարժեք կիրառման դեպքերում վեճի առարկա իրավակարգավորումն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցի:

ՍԴՈ-1263, 5 ապրիլի, 2016 թ.

6. .... Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ միայն փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման օրենսդրական պահանջն ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է **որակյալ** իրավաբանական օգնություն՝ դրանով իսկ երաշխավորելով իրավական պետությանը հարիր՝ **արդյունավետ** դատական պաշտպանության իրավունքը՝ ամրագրված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում: Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որա-

կյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը: Այդ նպատակն է հետապնդում նաև օրենքով նախատեսված՝ փաստաբանական դպրոցի ստեղծումը, որը կազմակերպում և անցկացնում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը, կազմակերպում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունը, կազմակերպում և անցկացնում է փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը:

7. Ինչ վերաբերում է վճարովիության հիմունքներով պարբերաբար դատական ներկայացուցչության՝ միայն փաստաբանի միջոցով իրականացման օրենսդրական պահանջի և դատարանի մատչելիության իրավունքի միջև հարաբերակցությանը, ապա, հաշվի առնելով փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հարաբերակցությունը կարող է պայմանավորված լինել բացառապես դատական ներկայացուցչություն հայցող անձի ֆինանսական հնարավորություններով:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է որոշակի երաշխիքներ դատական ներկայացուցչություն հայցող, սակայն համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունեցող անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման համար: Մասնավորապես, օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի և օրենքի 5-րդ հոդվածի վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, **նախ**՝ դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը չի կրում **պարբերական բնույթ կամ վճարովի չէ:**

Երկրորդ՝ անվճար, սակայն պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար:

Երրորդ՝ վճարովի կամ պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում այն իրավաբանական անձի համար, որի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանում են ներկայացուցչի մերձավոր ազգականին (ազգականներին):

8. Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում այն փաստարկները, որ վիճարկվող նորմերը հակասում են արդար դատաքննության, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներին, անձնական կյանքի հարգման իրավունքին, դրա բաղադրատարր հանդիսացող՝ ինքնաարտահայտման իրավունքին, այլ անձանց շահերը պաշտպանելու նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու և սեփականության իրավունքներին: **Նախ**՝ առկա չէ որևէ պատճառահետևանքային կապ վիճարկվող նորմերի և արդար դատաքննության, անձնական կյանքի հարգման և սեփականության իրավունքների միջև: **Երկրորդ**՝ ինքնաարտահայտման իրավունքը, որը դիմողների ընկալմամբ ներառում է նաև դատական ներկայացուցչությունը, և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը մնացած բոլոր իրավունքների նմանությամբ կարող են իրացվել միայն **օրենքով նախատեսված կարգով,** այլ ոչ թե սեփական հայեցողությամբ: Բացի դրանից, ինքնաարտահայտման իրավունքը, որը դիմողների ընկալմամբ ներառում է նաև դատական ներկայացուցչությունը, վերաբերելի է դատական ներկայացուցչություն իրականացնողին, մինչդեռ տվյալ դեպքում դիմողները դատարաններում

հանդես են եկել որպես հայցվորներ, այլ ոչ թե ներկայացուցիչներ: **Երրորդ՝** այլ անձանց շահերը պաշտպանելու նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու իրավունքն ուղղակիորեն չի վերաբերում հայցադիմումին, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներին, դրանց պատասխաններին, քաղաքացիական գործով ներկայացվող գրավոր բացատրություններին և առարկություններին, գրավոր միջնորդություններին, հատուկ և հատուկ հայցային վարույթներով ներկայացվող դիմումներին:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև այն փաստարկը, որ վիճարկվող նորմերը հակասում են խտրականության արգելման սկզբունքին, քանի որ տվյալ դեպքում տարբերակումը վերաբերում է տարբեր կատեգորիայի անձանց՝ փաստաբաններին, իրավաբաններին և այդպիսիք չհանդիսացող անձանց: Խտրականությունն առկա կլիներ այն դեպքում, երբ օրենսդրորեն տարբերակում նախատեսվեր այս երեք խմբերից որևէ մեկում: Դատավարական տարբեր գործընթացներում ներկայացուցչության ապահովումն ու վերջինիս իրավակարգավորումն իրականացվում է այդ գործընթացների առանձնահատկությունները հաշվի առնելով:

ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ

ՍԴՈ–1119, 8 հոկտեմբերի, 2013 թ.

6. .... Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում բացակայում են այն հիմքերը,** որոնց առկայության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չթույլատրել պաշտպանին մասնակցելու պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին, ինչն արձանագրում է նաև սույն գործով պատասխանող կողմը, և ինչն իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի սահմանափակման առումով կարող էր իրավաչափ համարվել Սահմանադրության 43–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված հիմքերի համատեքստում: Էական է նաև այն, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե քրեական վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ, այլ հենց իր՝ պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմում պաշտպանի միջնորդությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ պայմանավորելու վերաբերյալ դրույթը, ի խախտումն Սահմանադրության 43–րդ հոդվածի 1–ին մասի դրույթների, հանդես է գալիս որպես պետական մարմինների առջև իրավական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքները սահմանափակող և դրա արդյունքում՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքը սահմանափակող դրույթ: Ավելին, այդպիսի սահմանափակումը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

7. Խնդրո առարկայի առնչությամբ առանձին երկրների համապատասխան օրենսդրությունների վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքը քննչական կամ այլ դատավարական գործողություններին պաշտպանի մասնակցությունը չի պայմանավորում քրեական հետապնդման մարմնի կամքի դրսևորմամբ և չի նախատեսում քրեական վարույթին պաշտպանի մասնակցության որևէ ժամանակային սահմանափակում՝ պաշտպանին հնարավորություն տալով օգտվել այն իրավունքներից, ինչ իրավունքներով օժտված է պաշտպանյալը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի

6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի առնչությամբ որոշակի իրավական դիրքորոշումներ արտահայտել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ John Murray v. The United Kingdom գործով 1996 թ. փետրվարի 8-ին կայացված վճռում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«62. .... Նախաքննության ընթացքում 6-րդ հոդվածի 3-րդ մասի (c) կետի կիրառման առանձնահատկությունները կախված են դատավարության առանձնահատկություններից և գործի հանգամանքներից:

63. .... 6-րդ հոդվածը նորմալ պայմաններում պահանջում է, որպեսզի մեղադրյալին հնարավորություն տրվի օգտվելու իրավաբանի օգնությունից ոստիկանական հետաքննության հենց սկզբնական փուլից: Այնուամենայնիվ, այս իրավունքը, որ հստակ նախատեսված չէ Կոնվենցիայով, կարող է սահմանափակվել իրավաչափ նպատակով: Յանկացած գործում հարցն այն է, թե արդյոք ողջ դատավարության լույսի ներքո սահմանափակումը մեղադրյալին չի զրկել արդար դատաքննությունից»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով վիճարկվող նորմը՝ համադրելով այն այլ պետություններում համանման իրավահարաբերությունները կարգավորող նորմերի հետ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանցով սահմանված իրավակարգավորումներն իրավունքների ոչ համաչափ սահմանափակման իրական վտանգ են բովանդակում:

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ-765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

7. ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի նախատիպն է հանդիսանում հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների ինստիտուտը: Վերջինս նախատեսված էր ՀՀ Սահմանադրության՝ 1995 թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ տեքստի 93 հոդվածով, որի համաձայն՝ «Օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները վճռաբեկ դատարանում վերանայվում են գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող և վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների բողոքների հիման վրա»: Այսինքն՝ հատուկ արտոնագիր ունեցող և վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի ինստիտուտն ուներ սահմանադրաիրավական կարգավորում:

.... Անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգն ի սկզբանե վերաբերում էր միայն վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին, իսկ միջնորդավորված կարգը՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ բերվող վճռաբեկ բողոքներին: Նշված երկու կարգերի զուգահեռաբար գործելու իմաստը կայանում էր նրանում, որ բարձրացվեր դատավարության մասնակիցների դատավարական կարգապահությունը, երաշխավորվեր գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը, ինչպես նաև, որպեսզի վճռաբեկ դատարանը զերծ մնար անհիմն վճռաբեկ բողոքներ ներկայացվելու հետևանքով ավելորդ ծանրաբեռնվածությունից:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում հիշատակել «Անձանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404 և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի իրագործումն ապահովելու մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թ. հունիսի 13-ի որոշումը, որն ընդունվել է մինչև 01.06.06 թ. ՀՕ-107-Ն և ՀՕ-108-Ն օրենքների ուժի մեջ մտնելը և ըստ էության հանդիսացել է Սահմանադրության տեքստից (մինչև 2005 թ. փոփոխություն-

ները) հատուկ արտոնագիր ունեցող և վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի վերաբերյալ դրույթը վերացնելու իրավական արձագանք: Նախագահների խորհուրդը, մասնավորապես, հաշվի է առել, որ «ՀՀ Սահմանադրության (2005 թ. խմբագրությամբ) դատական իշխանությանը նվիրված 6-րդ գլխում հատուկ արտոնագիր ունեցող և վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանի ինստիտուտ նախատեսված չէ: Բացի դրանից, լրացել է նաև նշված փաստաբանների հատուկ արտոնագրերի՝ օրենքով սահմանված ժամկետը: Իսկ հատուկ արտոնագրեր օրենքով սահմանված կարգով այլ փաստաբանի տրված չեն»:.... Նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրության (2005 թ. խմբագրությամբ) 6-րդ հոդվածի համաձայն «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և նրա նորմերը գործում են անմիջականորեն», **հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման անթույլատրելիությունը**, մասնավորապես, որոշվել է, որ 1. Վճռաբեկ դատարանի կողմից քննության են ենթակա՝ 1.1. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ **գործին մասնակցող անձանց, գործին մասնակից չդարձած անձանց, վճռաբեկ բողոքները,** որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ:

.... Փաստորեն, վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում գործում է վճռաբեկ դատարան դիմելու միայն միջնորդավորված կարգը և միայն վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի առնչությամբ:

8. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել.

– բխու՞մ է, արդյոք, **փաստաբանների հավատարմագրման** ինստիտուտը փաստաբանության վերաբերյալ միջազգային իրավական, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով հաստատագրված իրավակարգավորման ընդհանուր սկզբունքներից (մասնավորապես՝ ինքնակառավարման և իրավահավասարության սկզբունքներ),

– ապահովվա՞ծ են, արդյոք, վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների՝ ՀՀ վճռաբեկ դատարանից անկախությունն ու ինքնուրույնությունը,

– ապահովվա՞ծ են, արդյոք, վիճարկվող ինստիտուտի ներկա իրավակարգավորման պայմաններում անձի իրավունքների դատական պաշտպանության մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները:

9. Փաստաբանության ինստիտուտի կարգավիճակը սահմանված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդ օրենքի՝ փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, դուրս է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգից (օրենքի հոդված 3-ի 1-ին պարբերություն): Փաստաբանությունը գործում է **անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:**

Իր հերթին, փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: Որպես կանոն, փաստաբանական գործունեությունը կրում է ձեռնարկատիրական բնույթ:

....

10. ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի նախատիպը հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի ինստիտուտն էր: ՀՀ վճռաբեկ դատարանում փաստաբանների հավատարմագրման կարգի և վճռաբեկ դատարանում փաստա-

բանական գործունեության համար հատուկ արտոնագիր տրամադրելու կարգի համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է այդ երկու ինստիտուտների ձևավորման կարգերի միջև հետևյալ առանցքային և հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի անկախության ու ինքնուրույնության ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող տարբերությունները.

ա) **հատուկ արտոնագիր տրամադրելու գործընթացն սկսվում և ավարտվում էր փաստաբանների պալատի շրջանակներում, վճռաբեկ դատարանի նախագահն այդ գործընթացին որևէ մասնակցություն չուներ. հատուկ արտոնագիրը տրամադրում էր փաստաբանների պալատի նախագահը և այն էլ կոլեգիալ մարմնի՝ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի փակ գաղտնի քվեարկության արդյունքներով ընդունված որոշման հիման վրա: Մինչդեռ հավատարմագրված փաստաբանների դեպքում հավատարմագիրը տրամադրում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ՀՀ փաստաբանների պալատի մարմիններն ըստ էության այդ գործընթացում որևէ դերակատարում չունեն,**

բ) **հատուկ արտոնագրի տրամադրման հիմքում ընկած էր փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների և հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների տարբերակման ծանրակշիռ չափանիշ, այն է՝ մասնագիտական պատրաստվածության աստիճանը և մասնագիտական գիտելիքների որակը: Եթե փաստաբանական գործունեություն իրականացնելու համար արտոնագիրը տրամադրվում էր որակավորման քննության արդյունքներով, ապա հատուկ արտոնագիրը տրվում էր հատուկ ծրագրով հանձնված որակավորման քննության արդյունքներով: Ընդ որում, հատուկ ծրագրով որակավորման քննություն հանձնած փաստաբաններից հատուկ արտոնագիր տրամադրվում էր այն թվով յոթ փաստաբաններին, ովքեր փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի փակ գաղտնի քվեարկության արդյունքներով ստացել են առավելագույն ձայներ: Մինչդեռ, հավատարմագրի տրամադրման հիմքում դրվեցին այլ պայմաններ: Եթե հատուկ արտոնագրի տրամադրումը պայմանավորված էր այնպիսի գործոնով, ինչպիսին տվյալ փաստաբանի մասնագիտական պատրաստվածությունն է, ապա հավատարմագրի տրամադրումը հիմնականում պայմանավորված է այնպիսի սուբյեկտիվ գործոնով, ինչպիսին տասը փաստաբանների համաձայնությունն է,**

գ) **հատուկ արտոնագիր տրամադրելու կարգն այնպիսին էր, որ առաջին տարում երաշխավորվում էր թվով 7 հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների առկայությունը, իսկ հինգերորդ տարում՝ նույնիսկ թվով 35 հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների առկայությունը (արտոնագիրը տրվում էր հինգ տարի ժամկետով, և տվյալ տարվա ընթացքում կարող էր տրվել առավելագույնը 7 հատուկ արտոնագիր): Մինչդեռ հավատարմագիր տրամադրելու կարգն այնպիսին է, որ չի բացառվում այնպիսի իրավիճակ, երբ հավատարմագիր ունեցող փաստաբանների թիվը լինի նվազ, քան նույնիսկ 7-ը, քանզի հնարավոր է, որ տվյալ տարում տասը փաստաբանների համաձայնություն կարողանան ապահովել 7-ից պակաս թվով փաստաբան, որոնց գործունեության ժամկետն էլ ընդամենը 13 ամիս է: Իսկ հավատարմագիր ունեցող փաստաբանների նվազ թվաքանակը սահմանափակում է վճռաբեկ դատարան դիմող՝ դատավարության կողմերի ընտրության հնարավորությունը, ինչը կարող է լրացուցիչ գործոն հանդիսանալ վճռաբեկ դատարանի մատչելիությունը սահմանափակելու հարցում:**

13. **ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի և վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանադրաիրավական բնույթը սահմանադրական դատարանը նախևառաջ հարկ է համարում գնահատել քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության զարգացումների համատեքստում:**

.... Փաստորեն, քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրության համապատասխան փոփոխությունների արդյունքում ոչ միայն դատավարության մասնակիցը զրկվել է առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները՝ թեկուզ միջնորդավորված կարգով, վճռաբեկ դատարանում բողոքարկելու հնարավորությունից, այլ նաև վերացվել է այն միակ ուղին, որով ապահովվում էր դատավարության մասնակիցների անմիջական մուտքը վճռաբեկ դատարան (վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերն անմիջականորեն վճռաբեկության կարգով բողոքարկելու հնարավորությունը), ինչի արդյունքում վճռաբեկ դատարանի մատչելիությունը դատավարության մասնակիցների համար հասցվել է նվազագույնի:

Օրենսդրական զարգացումների համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի գոյության ազդեցությունը վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս՝ հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով սահմանված վճռաբեկ բողոք բերելու հիմքերը, ինչպես նաև բողոքը քննության ընդունելու պայմաններն օրենսդրական փոփոխությունների արդյունքում բավականին սեղմվել են: Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նույնիսկ հավատարմագրված փաստաբանների կողմից կազմված վճռաբեկ բողոքների գերակշիռ մեծամասնությունը, չբավարարելով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու բավականին սեղմ պայմանները, վերադարձվում է, ինչի արդյունքում հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելն ինքնին իմաստազրկվում է:

14. Հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջի ազդեցությունը վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն խնդիրը, թե արդյո՞ք գործող օրենսդրությունն ապահովում է վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման իրավական հնարավորությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ո՛չ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ո՛չ էլ ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը չեն նախատեսում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրում, այն է՝ վճռաբեկ բողոք կազմելու իրավական հնարավորություն:

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ Հանրային պաշտպանի գրասենյակի 4 հավատարմագիր ունեցող հանրային պաշտպաններից երկուսի կողմից 16 դեպքում վճռաբեկ բողոքը կազմվել է անվճար հիմունքներով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ դատարաններում քննվող քրեական և քաղաքացիական բազմաթիվ գործերի պայմաններում խիստ աննշան է հավատարմագրված փաստաբանի կողմից անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու երաշխավորումը՝ այդպիսի կարգի և դեպքերի օրենսդրական հստակ ամրագրման բացակայության պայմաններում, և կախված է պարզապես հանրային պաշտպանի գրասենյակի «բարի կամքի» դրսևորումից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման կարգ և վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման որևէ մեխանիզմ չնախատեսելու պայմաններում՝ հավատարմագրված փաստաբանների գոյությունն անհամաչափորեն սահմանափակում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը՝ այդ դատարանում իրավունքների պաշտպանությունից օգտվելու դատավարության մասնակցի հնարավորությունը գործնականում պայմանավորելով նրա ֆինանսական հնարավորություններով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաև իրավաբանների և իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից:

15. Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակող գործոն է նաև վճռաբեկ դատարանում փաստաբանների հավատարմագրման գործող կարգը: Մասնավորապես, վերջինս այնպիսին է, որ չի բացառվում այնպիսի իրավիճակը, երբ մի փաստաբանը չկարողանա հավաքել համապատասխան թվով ձայներ, ինչի արդյունքում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների թիվը կարող է սեղմ լինել՝ կրճատելով և՛ անձի ընտրության հնարավորությունը, և՛ ընդհանրապես վճռաբեկ դատարանի պաշտպանությունից օգտվելու հնարավորությունը: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ 2007 թ. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ՀՀ վճռաբեկ դատարան է դիմել և հավատարմագրվել ընդամենը 4 փաստաբան: Բացի դրանից, հարկ է հաշվի առնել, որ հավատարմագրված փաստաբանն իրականացնելով ձեռնարկատիրական գործունեություն, ըստ էության ազատ է հրաժարվելու այս կամ այն գործով վճռաբեկ բողոք կազմելուց, ինչի արդյունքում դատավարության մասնակցի՝ վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունն է՛լ ավելի է նվազում՝ սահմանափակելով վճռաբեկ դատարանի մատչելիությունը: Նման իրավիճակում, փաստորեն, դատարանի մատչելիության իրավունքի իրացումը պայմանավորվում է որոշակի նախապայմանով, այն է՝ փաստաբանի համաձայնությամբ, ինչի արդյունքում հնարավոր է մարդու իրավունքների և ազատությունների ազատ իրացման սահմանափակում:

....

18. Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի և հավատարմագիր չունեցող փաստաբանի միջև մասնագիտական ունակություններով և փորձառությամբ պայմանավորված իրավաչափ տարբերության բացակայության հանգամանքը, վճռաբեկ դատարանում փաստաբանի հավատարմագրման կարգը, հավատարմագրված փաստաբանի կողմից իրականացվող փաստաբանական գործունեության խիստ սահմանափակ լինելու հանգամանքը, հավատարմագրված փաստաբանի և վճռաբեկ դատարանի փոխգործակցության բնույթը միանգամայն ավելորդ են դարձնում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի գոյությունը: Ավելին, հաշվի առնելով նշված ինստիտուտի գործունեության ձեռնարկատիրական, մենաշնորհային բնույթը, դրա վրա հիմնված՝ հավատարմագրված փաստաբանների կողմից ընդամենը վճռաբեկ բողոք կազմելու համար պահանջվող համեմատաբար բարձր վճարները, սահմանադրական դատարան, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու համար պաշտպանության միջոցներն սպառելու պարտադիր պահանջը, կարելի է փաստել, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտն իր գոյությամբ սահմանափակում է ոչ միայն վճռաբեկ դատարանի, այլ նաև սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մատչելիության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, ըստ էության նպաստավոր պայ-

մաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դեպքերի համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պայմանավորված վճռաբեկ դատարանի գործառնական առանձնահատկություններով՝ **փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել,** եթե բխում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

15. Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008 թ. հոկտեմբերի 8–ի ՍԴՈ–765 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներին հակասող է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն դրույթները, որոնք թույլ էին տալիս վճռաբեկ բողոք ներկայացնել միայն վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված որոշման եզրափակիչ մասի 7–րդ կետի ուժով այդ դրույթները ժամանակավորապես պահպանում են իրենց ուժը, սահմանադրական դատարանը որպես վարչական գործերով վճռաբեկ ատյանի մատչելիությունը պայմանավորող գործոն է համարում նաև վարչական արդարադատության երկաստիճան համակարգում բողոքարկման միակ ատյան դիմելու համար հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելու պարտադիր պահանջը: Նման պահանջի առկայությունը երկաստիճան դատական համակարգում է՛լ ավելի է խաթարում դատական պաշտպանության արդյունավետ իրավունքի էությունը, քանզի, եթե եռաստիճան համակարգում անձը վերաքննիչ ատյանում օգտվում է անմիջական բողոքարկման հնարավորությունից, ապա վարչական արդարադատության ոլորտում անմիջական բողոքարկման հնարավորությունն ամբողջովին բացակայում է:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

7. Քրեական գործով վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ փաստաբանի մասնակցության անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես մրցակցային դատավարության շրջանակներում մեղադրանքը հերքող, ամբաստանյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքների բացահայտման և դատարանին ներկայացնելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի նպատակը անձանց խախտված իրավունքների (սահմանադրական կամ Կոնվենցիայով երաշխավորված) վերականգնման հնարավորության և ոչ թե քրեական մեղադրանքի հարցի լուծումն է:

Օրենսդրի տարբերակված մոտեցումը՝ քրեական վարույթում շահագրգիռ անձանց ներկայացուցչության ինստիտուտի իրավակարգավորման և բացառապես փաստաբանին որպես լիազորված անձ նախատեսելու հարցում, պայմանավորված է նաև սահմանադրական դատարանի կամ միջազգային դատարանի համապատասխան ակտի հիման վրա անձանց շահերը ներկայացնելու խնդրում մասնագիտական պատշաճ մակարդակ ապահովելու անհրաժեշտությամբ, որն անհրաժեշտ և իրավաչափ պայման է՝ այդ վարույթում անձանց իրավունքների արդարադատական արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

....

Հետևաբար, անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 426.7 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության խնդրին, դատարանը դիմող կողմի փաստարկները համարում է հիմնավոր, միաժամանակ հաստատագրում, որ խնդրի լուծումը պահանջում է համալիր իրավակարգավորում՝ կապված նաև դատավարության մյուս փուլերում երաշխավորված անվճար իրավաբանական օգնության տրամադրման՝ օրենքով նախատեսված հիմքերի ընդարձակման հետ: Դատարանը վերահաստատում է իր ՍԴՈ-765 որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի. «.... փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, եթե բխում է ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերից՝ ներկայացուցչությունն իրականացնելով արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով .... միաժամանակ հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձանց փաստաբանական ծառայությամբ ապահովելու իրավակարգավորման համանման սկզբունքի կիրառումն անհրաժեշտ է քրեական վարույթի բոլոր՝ այդ թվում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերը վերանայելու փուլում: Այս համատեքստում էլ ՀՀ Ազգային ժողովի իրավասության խնդիրն է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ դատավարական օրենսգրքերում և համապատասխան այլ օրենքներում նախատեսել գործով շահագրգիռ և կարիքավոր անձանց իրավաբանական (փաստաբանական) անվճար օգնություն տրամադրելու առավել լայն երաշխիքներ:

ՍԴՈ-851, 14 հունվարի, 2010 թ.

7. Ինչպես նշվեց, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար պատասխանատվության միջոցներ են սահմանված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածում, ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածում: Վերջիններիս համաձայն՝ դատարանն իրավասու է պատասխանատվության ենթարկելու դատավարության մասնակիցներին, գործին մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, իրենց դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում: Այդպիսիք են՝ նախազգուշացումը, նիստերի դահլիճից հեռացնելը, դատական տուգանքը, դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար՝ գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը, իր հերթին, որպես փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր է նախատեսում այդ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների խախտումը, մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը որպես դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է սահմանում ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելը, իր լիազորություններն իրականացնելիս օրենքը կոպիտ կամ պարբերաբար խախտելը, «Դատախազի վարքագծի կանոնագրքի» պահանջների էական խախտումները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված վերոհիշյալ

գործողությունները, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող նորմում նշված գործողություններն ըստ էության համարժեք գործողություններ են, դրանք կարող են կատարվել ուղղակի դիտավորությամբ, և վիճարկվող նորմում բացակայում է հանցակազմի որևէ հատկանիշ, որը հնարավորություն կտա դրանով նախատեսված հակաիրավական արարքը տարանջատել ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված համարժեք իրավախախտումներից:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախախտումների և վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջև էական տարբերությունների բացակայության պայմաններում անձը զրկվում է իր վարքագծի իրավական հետևանքները կանխատեսելու հնարավորությունից, ինչը չի բխում օրենքի կանխատեսելիության և որոշակիության սկզբունքներից:

Ավելին, նման պայմաններում իրավակիրառողի կողմից դատական սանկցիաների և քրեաիրավական ներգործության միջոցի միջև ընտրության հարցում կամայական մոտեցման նախադրյալներ են ստեղծվում: Վերլուծությունը վկայում է, որ, մի կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 և 153-րդ (բերման ենթարկելը), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ (ինչպես նաև, օրինակ, 44-րդ հոդվածի 5-րդ մաս), ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածների, մյուս կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի առկայությունն իրավական առումով առնվազն խնդրահարույց են դարձնում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ներկայիս ձևակերպման գոյությունն ընդհանրապես:

Ընդհանրապես տվյալ հիմնախնդրի իրավակարգավորման հարցում չկա հստակ համակարգային մոտեցում ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի, ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի, ինչպես նաև տվյալ հարցով վարչական ու սահմանադրական դատավարության իրավակարգավորումների միջև:

Անդրադառնալով դիմողի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձևակերպման անորոշության վերաբերյալ փաստարկին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ՝ անհրաժեշտ է պարզաբանել վիճարկվող նորմում նշված կարգադրության բնույթը՝ քրեադատավարական մյուս նորմերի համադրությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը որպես պաշտպանի դատավարական պարտականություն է նախատեսում ոչ թե պարզապես դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի կարգադրություններին, այլ **օրինական կարգադրություններին** ենթարկվելը:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը որպես անձին ազատությունից զրկելու հիմք է դիտարկում ոչ թե պարզապես դատարանի կարգադրությանը, այլ դատարանի **օրինական կարգադրությանը** չենթարկվելը կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակը:

Ներպետական և միջազգային իրավական վերոհիշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձևակերպման մեջ «կարգադրություն» եզրույթի ներքո ընկալվում է դատավորի օրինական կարգադրությունը, այսինքն՝ դատավորի այնպիսի կարգադրություն, որն ուղղված է դատավարության մասնակցի կողմից՝ վերջինիս համար օրենքով սահմանված իր պարտականության կատարման ապահովմանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառողը պետք է ելնի վիճարկվող նորմում «դատավորի կարգադրությանը չենթարկվելով» ձևակերպման նշված ընկալումից: Այսինքն՝ դատավորի կարգադրությանը չենթարկվելու հիմքով վիճարկվող նոր-

մում նշված սուբյեկտները կարող են պատասխանատվության ենթարկվել, եթե չեն կատարում դատավորի այն կարգադրությունը, որն օրինական է և ուղղված այդ սուբյեկտների կողմից՝ օրենքով սահմանված իրենց դատավարական պարտականությունները կատարելու ապահովմանը: Այսուհանդերձ, «օրինական կարգադրություն» եզրույթն առավել հստակ է և խնդիր չի առաջացնում նաև կարգադրության օրինականությունը սահմանված կարգով վիճարկելու հնարավորության առումով:

Անդրադառնալով դիմողի կողմից մատնանշված՝ վիճարկվող նորմում «այլ գործողություն կատարելով» ձևակերպման անորոշությանը՝ սահմանադրական դատարանը կարևորում է այդ գործողությունների բնույթի պարզաբանման հարցը: Այդ նպատակով սահմանադրական դատարանը հարկ է համարում խնդրո առարկա ձևակերպումը դիտարկել վիճարկվող նորմում «վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին» ձևակերպման համատեքստում: Նման մոտեցման պարագայում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

1) ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի խնդիրը չէ «այլ գործողություն» հասկացության բովանդակության մեջ ներառվող բոլոր հնարավոր դեպքերի թվարկումը: Այդ հոդվածի առարկան է քրեական պատասխանատվություն սահմանելը բացառապես այնպիսի գործողությունների համար, որոնք վկայում են դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին,

2) որպես իրավակիրառողի կամայական մոտեցումը բացառող երաշխիք է հանդիսանում այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի ուժով սահմանազատված են տարբեր բնույթի գործողություններն այն գործողություններից, որոնք պարունակում են բացահայտ արհամարհանք դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ,

3) «դատական նիստի կարգ» հասկացության բովանդակությունը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Վիճարկվող նորմի կիրառման գործընթացում «դատական նիստի կարգ» հասկացության ներքո պետք է ընկալել բացառապես այն կարգը, որը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածում: Ինչ վերաբերում է «արհամարհանք» հասկացության բովանդակությանը, ապա ինչպես քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում օգտագործված «վիրավորանք» հասկացությունը, այս հասկացությունը ևս յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողի կողմից գնահատման ենթակա հասկացություն է:

ՍԴՈ-1191, 24 փետրվարի, 2015 թ.

6. .... Այսպիսով, վիճարկվող իրավակարգավորման վերլուծությունից հետևում է, որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառելիության հարցում օրենսդիրն առաջնորդվել է անձանց (դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց) **տարբերակման սկզբունքով**, բացառելով դատավարությանը մասնակցող և դատավարական (իրավական) առանձնահատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտների՝ դատախազի, պաշտպանի (փաստաբանի, կողմի ներկայացուցչի) նկատմամբ դատական նիստերի դահլիճից հեռացնելը որպես սանկցիա կիրառելը: Այն ունի իրավական հիմնավորում: Ինչպես դատախազը (գործով պետական մեղադրողը), այնպես էլ պաշտպանը (փաստաբանը, կողմի ներկայացուցիչը) ՀՀ Սահմանադրության 103-րդ, 20-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների, ՀՀ օրենսդրության այլ ակտերի հիմքերով կատարում են սահմանադրաիրավական գործառույթներ՝ կապված համապատասխանաբար՝ դատարանում մեղադրանքի պաշտպանման և անձանց իրավաբանական օգնության տրամադրման հետ, որպիսիք միտված են ինչպես անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման, այնպես էլ վերջինիս հետ շաղկապված՝ անկախ, արդար, անկողմնակալ, մրցակցային արդարադատության իրականացման՝ Սահմանադրու-

թյամբ հաստատագրված նպատակների իրագործմանը: Այսպիսով, դատավարության մասնակից հանդիսացող վերոհիշյալ սուբյեկտների իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությունը, համաձայն որի՝ նրանք ենթակա չեն դատարանի կողմից անմիջականորեն կիրառման ենթակա որոշ սանկցիաների (նիստերի դահլիճից հեռացում, դատական տուգանք), ուղղակիորեն պայմանավորված է քրեադատավարական հարաբերություններում օրենքով նրանց ունեցած իրավունքների ու պարտականությունների բնույթով:

Ինչ վերաբերում է վիճելի իրավակարգավորման սուբյեկտ հանդիսացող փաստաբանի օգնականի իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությանը, ապա այն մանրամասնված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում: Վերջինիս 23-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ օրենքի իմաստով փաստաբանի օգնականի կարգավիճակը հավասարեցվում է փաստաբանի կարգավիճակին, որի ինքնությունը հաստատվում է փաստաբանի օգնականի վկայականով՝ տրված ՀՀ փաստաբանների պալատի կողմից («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասեր): Փաստաբանի օգնականը «օգտվում է փաստաբանի բոլոր իրավունքներից» այն բացառություններով, որպիսիք հիմնականում թվարկված են վերոհիշյալ հոդվածի 3-րդ մասի 1-ից 3-րդ կետերում և միաժամանակ, որոշ բացառություններով, «կրում է բոլոր պարտականությունները», որոնք այդ օրենքով վերապահված են փաստաբանին, այդ թվում՝ փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոններով նախատեսված (23-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասեր): Մասնավորապես, համաձայն տվյալ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ փաստաբանի օգնականը չունի դատավարական բնույթի այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են. «....ստորագրելու և ներկայացնելու հայցադիմումներ, միջնորդություններ, առարկություններ, հայտարարություններ, պատասխաններ, բացարկներ, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև հարցեր տալու քննչական կամ դատավարական գործողություններին մասնակցելիս»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի քննության առարկա վիճելի իրավակարգավորումը նախատեսող նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ փաստաբանի օգնականը **քրեադատավարական հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ չէ,** այսինքն՝ իրավասու չէ առանց փաստաբանի (պաշտպանի) ինքնուրույնաբար իրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով փաստաբանին (պաշտպանին) վերագրված դատավարական բնույթի հիմնական գործառույթները: Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ օրենսգիրքը (6-րդ հոդվածի 31-րդ կետ) հստակ տարանջատել է «դատավարության մասնակցին» (դատախազ (մեղադրող), քննիչ, հետաքննության մարմին, տուժող, քաղաքացիական հայցվոր, նրանց օրինական ներկայացուցիչներ և ներկայացուցիչներ, կասկածյալ, մեղադրյալ, նրանց օրինական ներկայացուցիչներ, պաշտպան, քաղաքացիական պատասխանող և նրա ներկայացուցիչը)՝ դատավարական հարաբերություններում այդ սուբյեկտին օժտելով որոշակի իրավունքներով ու պարտականություններով:

9. Այսպիսով, վերահաստատելով վերոհիշյալ որոշումներով արտահայտած իր իրավական դիրքորոշումները, միջազգային իրավական պրակտիկայի ամփոփման արդյունքում արված եզրահանգումները, գնահատելով սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում օրենսդրական, այդ թվում՝ դատական բողոքարկման իրավունքի սահմանափակման սահմանադրական իրավաչափությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք համաչափ են հիշյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ինչպես փաստաբանի, այնպես էլ վերջինիս օգնականի կարգավիճակն իր իրավական բովանդակությամբ, իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի այդ կարգավիճակը բնորոշող իրավական ակտերի համակցության մեջ՝ նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական

օգնություն ստանալու անձի իրավունքի իրացման օրենսդրական երաշխավորման գերակա անհրաժեշտությունը: Սահմանադրաիրավական այսպիսի դիրքորոշմամբ և համարժեք կիրառման դեպքերում վեճի առարկա իրավակարգավորումն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցի:

ՍԴՈ–1192, 3 մարտի, 2015 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: **Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները:** Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ:

ՀՀ վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի նախատեսումը լիարժեքորեն կայացած և գործուն փաստաբանական համակարգի պարագայում կոչված կլինի նպաստելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացմանը: Նման մոտեցման պարագայում ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյանում ևս՝ **ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող բողոքների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել անձի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների անտեսմամբ կամ անհամաչափ սահմանափակմամբ:** Այսինքն, նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Այս համատեքստում սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանն իր ՍԴՈ–1167 որոշման մեջ ամրագրել է. «.... ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման»: Նշվածի համատեքստում սահմանադրական դատարանն էական է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ, օրինակ, սահմանադրական արդարադատության մարմնում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն կողմերը սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ և (կամ) ներկայացուցիչների միջոցով:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վճռաբեկ բողոք բերելու՝ տվյալ դեպքում միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրն անհրաժեշտ հետևողականություն չի ցուցաբերել քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ զարգացնելու առումով: Մասնավորապես, օրենսդրորեն համարժեքորեն չեն լուծվել գույքային խտրականության հետ կապված հարցերը, ընդ որում՝ խնդիրն առկա է ինչպես վարչական դատավարության, այնպես էլ վճռաբեկ բողոք ներկայացնելու նախապայմանների օրենսդրական միասնական քաղաքականության շրջանակներում, ինչն ըստ էության նպաստավոր

պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դրսևորումների համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով: Այս հանգամանքը փաստվում է ելնելով նրանից, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են **իրավունքի աղբյուր** իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենսդրական զարգացումների համար կարևոր աղբյուր են:**

Քննության առարկա հիմնահարցը վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով՝ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ վիճարկվող դրույթով՝ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի ամրագրումը, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացմանը նպաստելու իրավաչափ նպատակ հետապնդելով հանդերձ, փաստացի հանգեցրել է հենց այդ իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակմանը, անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորության և դատարանի մատչելիության իրավունքի ոչ համարժեք սահմանափակմանը:

Ի դեպ, նման եզրահանգում է կատարել նաև ՀՀ փաստաբանների պալատը (ըստ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարանին 27.02.2015 թ. թիվ Ն/202 նամակով հասցեագրված մեկնաբանությունների):

ՍԴՈ-1263, 5 ապրիլի, 2016 թ.

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթը սահմանում է դատական ներկայացուցչության իրականացման ընդհանուր կանոնը, այն է՝ **դատարանում ներկայացուցիչ կարող է լինել դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի:** Օրենսդիրն այս ընդհանուր կանոնից բացառություն է նախատեսում՝ օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ ամրագրելով «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը և օրենքի 5-րդ հոդվածում շարադրելով դատական ներկայացուցչության իրականացման՝ ընդհանուր կանոնից տարբերվող դրույթները:

.... Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ միայն փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման օրենսդրական պահանջն ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է **որակյալ** իրավաբանական օգնություն՝ դրանով իսկ երաշխավորելով իրավական պետությանը հարիր՝ **արդյունավետ** դատական պաշտպանության իրավունքը՝ ամրագրված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում: Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված

փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը: Այդ նպատակն է հետապնդում նաև օրենքով նախատեսված՝ փաստաբանական դպրոցի ստեղծումը, որը կազմակերպում և անցկացնում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը, կազմակերպում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունը, կազմակերպում և անցկացնում է փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը:

7. Ինչ վերաբերում է վճարովիության հիմունքներով պարբերաբար դատական ներկայացուցչության՝ միայն փաստաբանի միջոցով իրականացման օրենսդրական պահանջի և դատարանի մատչելիության իրավունքի միջև հարաբերակցությանը, ապա, հաշվի առնելով փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հարաբերակցությունը կարող է պայմանավորված լինել բացառապես դատական ներկայացուցչություն հայցող անձի ֆինանսական հնարավորություններով:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է որոշակի երաշխիքներ դատական ներկայացուցչություն հայցող, սակայն համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունեցող անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման համար: Մասնավորապես, օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի և օրենքի 5-րդ հոդվածի վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, **նախ՝** դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը չի կրում **պարբերական բնույթ կամ վճարովի չէ:**

Երկրորդ՝ անվճար, սակայն պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար:

Երրորդ՝ վճարովի կամ պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում այն իրավաբանական անձի համար, որի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանում են ներկայացուցչի մերձավոր ազգականին (ազգականներին):

Բացի դրանից, օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը թվարկել է հասարակության խոցելի խմբերին պատկանող 16 կատեգորիայի անձանց, որոնց իրավաբանական օգնությունը տրամադրվում է անվճար՝ ուղղակիորեն չնախատեսելով տվյալ կատեգորիայի անձանց՝ համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունենալու հանգամանքը, և միայն մեկ դեպքում, որը սահմանված է օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետում (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ), օրենսդիրն անվճար իրավաբանական օգնության տրամադրման համար ուղղակիորեն նախատեսել է տվյալ կատեգորիայի անձանց՝ համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունենալու հանգամանքը:

Միաժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի ապահովման նկատառումներից ելնելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները պարտավորեցնում են դատարաններին յուրաքանչյուր կոնկրետ քաղաքացիական գործով ստուգելու հետևյալ հանգամանքների առկայությունը.

– ներկայացուցչի փաստաբան լինելը,

– ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա կողմից դատական ներկայացուցչությունը պարբերաբար կամ վճարովի հիմունքներով իրականացնելը,

– ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա՝ վստահորդի մերձավոր ազգական հանդիսանալը և դատական ներկայացուցչությունն անվճար իրականացնելը,

– իրավաբանական անձի ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա մերձավոր ազգական հանդիսանալն այն անձի կամ անձանց նկատմամբ, որոնց պատկանում են տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը:

8. .... Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև այն փաստարկը, որ վիճարկվող նորմերը հակասում են խտրականության արգելման սկզբունքին, քանի որ տվյալ դեպքում տարբերակումը վերաբերում է տարբեր կատեգորիայի անձանց՝ փաստաբաններին, իրավաբաններին և այդպիսիք չհանդիսացող անձանց: Խտրականությունն առկա կլիներ այն դեպքում, երբ օրենսդրորեն տարբերակում նախատեսվեր այս երեք խմբերից որևէ մեկում: Դատավարական տարբեր գործընթացներում ներկայացուցչության ապահովումն ու վերջինիս իրավակարգավորումն իրականացվում է այդ գործընթացների առանձնահատկությունները հաշվի առնելով:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՍԴՈ–1135 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վեճի առարկա հիմնախնդրի առկա իրավակարգավորման հիմնական նպատակը քաղաքացիական արդարադատության ոլորտում մարդկանց վճարովի իրավաբանական ծառայություն մատուցելու ինստիտուտի հստակ կանոնակարգումն է՝ արգելելով անձանց պարբերաբար և վճարովի հիմունքներով հանդես գալ որպես ներկայացուցիչ դատարանում՝ չունենալով համապատասխան գործունեությամբ զբաղվելու արտոնագիր: Նման իրավակարգավորում առկա է բազմաթիվ երկրներում և բխում է իրավական պետությունում իրավունքի գերակայության երաշխավորման սահմանադրական սկզբունքի էությունից: Այլ խնդիր է, որ արդարադատական պրակտիկայում չպետք է այն աստիճան նեղացվի քաղաքացիական գործերով իրավաբանական օգնություն ցույց տալու շրջանակները, որ բացառվեն ոչ վճարովի հիմունքներով և ոչ պարբերաբար մատուցվող իրավական օգնության հնարավորությունները: Իր հերթին, դատական պրակտիկայում տարակերպ մեկնաբանություններից խուսափելու համար, հետագա օրենսդրական հստակեցումներն առավել որոշակի պետք է դարձնեն «պարբերաբար» և/կամ «վճարովի հիմունքներով» եզրույթները, ինչպես նաև երաշխավորեն դատավարական իրավակարգավորումների միասնականությունը:

7. ՊԱՏՃԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՐԻՉ

ՍԴՈ–722, 21 դեկտեմբերի, 2007 թ.

8. .... «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան էլեկտրոնային թվային ստորագրության և դրանով պայմանավորված՝ ՀՀ հանրային իշխանության մարմինների միասնական էլեկտրոնային փաստաթղթաշարժի (այդ թվում՝ անձանց կողմից այդ մարմիններին էլեկտրոնային փոստով հասցեագրվող դիմումների) կազմակերպման իրավական հիմքերի սահմանումն է, որը կոչված է նպաստելու անձանց և հանրային իշխանության մարմինների միջև հարաբերությունների իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանը: Այդ օրենքի գործողությունը ՀՀ գործադիր մարմինների (մասնավորապես՝ գանձապետարանի) տեղեկատվական համակարգում ապահովելու նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի մի շարք որոշումներ և գերատեսչական ակտեր:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած վերոհիշյալ օրենքի գործողությունը պետական իշխանության այլ մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում կրում է հայեցողական բնույթ, այնուամենայնիվ, այդ օրենքի դրույթների կիրառումն ապահովող անհրաժեշտ պայմանների ստեղծումը (մասնավորապես, էլեկտրոնային փաստաթղթերի ու էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման հստակ համակարգ նախատեսելու, և հավաստագրման գործընթացի պատշաճ կազմակերպման բնագավառներում) կնպաստեր անձանց և հանրային իշխանության մարմինների միջև ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված նորմով պայմանավորված հարաբերությունների (այդ թվում՝ ընտրական գործընթացների հետ կապված) առավել արդյունավետ կարգավորմանը: Այսպես, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից սույն գործով ներկայացված տեղեկատվությունը, «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում են, որ բացի ՀՀ բանկային համակարգից և մասամբ մի քանի այլ ոլորտներից, էլեկտրոնային թվային ստորագրության համակարգը հիմնականում չի գործում:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ մարդու իրավունքների իրականացումը չպետք է խաթարվի վարչակազմակերպչական բնույթի խոչընդոտների պատճառով: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը....»:

Հիշյալ օրենքի և, մասնավորապես, դրա 4–րդ հոդվածի նշված նորմի գործողության պայմաններում, ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված իր իրավունքի իրացմամբ, անձը պետք է ընտրի իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու ձևը (ձեռագիր կամ էլեկտրոնային ստորագրությամբ): Բոլոր այն դեպքերում, երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի (դիմումի) ստորագրված լինելու պայման է առաջադրված և պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, ապա որևէ տարբերակում չպետք է դրվի

անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջև:

ՍԴՈ-1192, 3 մարտի, 2015 թ.

10. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «էլեկտրոնային կրիչ»-ին ներկայացված պահանջները որևէ իրավական ակտով ևս նախատեսված չեն: «Էլեկտրոնային կրիչ» հասկացությունը բացահայտված է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է. «էլեկտրոնային կրիչ՝ մագնիսական սկավառակ, մագնիսական ժապավեն, լազերային սկավառակ, կիսահաղորդչային և այլ նյութական կրիչներ, որոնք օգտագործվում են էլեկտրոնային կամ այլ տեխնիկական միջոցներով տեղեկատվության գրանցման և պահպանման համար»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է «էլեկտրոնային կրիչ» եզրույթը և ինքնին՝ կրիչին ներկայացվող այլ պահանջ չի նախատեսում (կրիչի տեսակը), ուստիև անձի կողմից ցանկացած էլեկտրոնային կրիչով բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պարագայում նշված պահանջը համարվում է կատարված:

.... Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու պահանջի իրացման միատեսակության ապահովման համար համապատասխան միասնական չափանիշները պետք է ստանան իրավական ամրագրում: Այս հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ այն դեպքերում, երբ անձի վրա դրվում է պարտականություն փաստաթղթերի հետ մեկտեղ ներկայացնել նաև փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը կամ ուղղակիորեն դիմել համապատասխան մարմին էլեկտրոնային եղանակով, մանրամասնորեն սահմանվում են փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներին ներկայացվող պահանջները և հասանելի են լինում համապատասխան մարմնի պաշտոնական էլեկտրոնային կայքէջում (Կանադա, Մեծ Բրիտանիա և այլն):

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու միասնական չափանիշների բացակայությունը ենթադրում է դիմողի իրավունքը ներկայացնելու բողոքի էլեկտրոնային տարբերակը ցանկացած ձևաչափով և փաստաթղթի ցանկացած ձևավորմամբ թե՛ ցանկացած տեսակի էլեկտրոնային կրիչով, թե՛ էլեկտրոնային փոստով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքին կից բողոքի էլեկտրոնային տարբերակը ներկայացնելու միասնական չափանիշները պետք է իրավաբանորեն ամրագրվեն, իսկ մինչ այդ իրավակիրառական պրակտիկան պետք է զարգանա սույն որոշման մեջ խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1251, 19 հունվարի, 2016 թ.

8. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ միաժամանակ էլեկտրոնային հասցեով վերոհիշյալ փաստաթղթերը դատարան, պատասխանողին և դատավարության այլ մասնակիցներին ուղարկելու իրավական պայմանի բացակայությունը խոչընդոտ չէ դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը և չի կարող մեկնաբանվել որպես այդ իրավունքի էության խաթարում: Հետևաբար, այս հարցում դիմող կողմի փաստարկները հիմնավոր չեն:

Անդրադառնալով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության հետ կապված հանրային բնույթի հասարակական հարաբերությունները կարգավորող օրենսդրության այլ ակտերի նորմերի կիրառման վերաբերյալ դիմող կողմի փաստարկներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ ակտերի նորմերը կիրառելի են օրենքով նախատեսված դեպքերում («Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս): Հետևաբար, նկատի ունենալով վեճի առարկա նորմատիվ կարգավորման շրջանակներում էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կիրառման իրավական հնարավորության բացակայությունը՝ սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի և վերոհիշյալ ակտերի նորմերի համադրված վերլուծությանը և դրանց սահմանադրաիրավական գնահատմանը չի անդրադառնում:

9. Անդրադառնալով նաև դիմող կողմի այն պնդմանը, համաձայն որի՝ դատարան էլեկտրոնային եղանակով դիմելն ավելի «հուսալի», «էժան» և «մատչելի» միջոց է, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից «էժան արդարադատությունը», կամ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ դատարան դիմելու գործընթացներն առավել հուսալի կամ մատչելի համարելն ինքնին չեն կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիությունն ապահովող անհրաժեշտ երաշխիքներ: Դատարանի մատչելիության մակարդակը կամ այդ իրավունքի էությունն սկզբունքորեն բնորոշվում է որպես մի քանի բաղադրիչների ամբողջություն: Սահմանադրական դատարանն արդարադատության մատչելիության սահմանադրաիրավական չափանիշների վերաբերյալ վերը թվարկված իր բազմաթիվ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներում, ելնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատագրված չափանիշներից, հատկանշել է հետևյալ առաջնահերթ տարրերը.

– հայցադիմում ներկայացնելու, վնասի հատուցում պահանջելու և դատարանի որոշումն ստանալու իրավական հնարավորություն,

– ընթացակարգային այնպիսի սահմանափակումների (ձևական, ժամկետային (այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման հետ կապված և այլն) սահմանում, որպիսիք չպետք է խաթարեն մատչելիության իրավունքի բուն էությունը,

– իրավաբանական օգնություն ստանալու կամ սեփական շահերի պաշտպանությունն անձամբ իրականացնելու անձի իրավունքի ապահովումը,

– գործով ըստ էության կայացված դատական ակտի վերջնականություն,

– դատարանի վերջնական ակտի ողջամիտ ժամկետում կատարման երաշխավորում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վեճի առարկայի շրջանակներում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ և 13-րդ գլուխների նորմերով երաշխավորվում են վերոթվարկյալ իրավապայմաններին համապատասխան կարգավորումներ:

Ինչ վերաբերում է հայցադիմումը և կից փաստաթղթերը դատարան և շահագրգիռ այլ անձանց ներկայացնելու (ուղարկելու) եղանակին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ առձեռն ներկայացնելը կամ փոստով առաքելը պարզ ու մատչելի այնպիսի միջոցներ են, որոնց գործադրմամբ դատական պաշտպանության իրավունքը չի սահմանափակվում, անձից չի պահանջվում լրացուցիչ գիտելիքներ ու հմտություններ, ինչն անհրաժեշտ կլիներ հաղորդակցության ժամանակակից էլեկտրոնային միջոցների գործադրման պարագայում:

Արդարադատության «էժանացումը», որպես արդարադատության մատչելիության (դատարան դիմելու) իրավունքի իրացման արդյունավետության բարձրացման միջոց, ինչպես

վկայում է միջազգային պրակտիկան, ենթադրում է պետության կողմից ոչ այնքան իրավական, որքան տեխնիկական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի համալիր ու տևական միջոցառումների իրականացում: Դատաընթացակարգային հարաբերությունների կարգավորման շրջանակներում հաղորդակցության էլեկտրոնային ժամանակակից միջոցների առավել լայն գործադրման հնարավորության նախատեսումն օրենսդրի բացառիկ լիազորությունն է, որն անձին իրավական այլընտրանքային հնարավորություն կընձեռի դատարան դիմելիս կամ հայցադիմումը (կից փաստաթղթերով) դատավարության մասնակիցներին ուղարկելիս ընտրություն կատարելու հարցում: Բոլոր դեպքերում, այդպիսի միջոցների օրենքով իրացման սկզբունքները, եղանակները պետք է համադրելի լինեն արդարադատության մատչելիության սահմանադրաիրավական չափանիշներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առանց վերոհիշյալ նախադրյալների ստեղծման (այդ թվում՝ իրավական), դատական պաշտպանության և, մասնավորապես՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից երաշխավորելի չէր լինի: Իսկ միայն հաղորդակցության էլեկտրոնային միջոցների կիրառման նախատեսումը՝ ներկայումս գործող առձեռն կամ փոստային առաքման եղանակների բացառման պայմաններում, գնահատելի կլիներ որպես արդարադատության մատչելիության սահմանափակում:

ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴՐՍԵՎՈՐԵԼԸ

ՍԴՈ-845, 8 դեկտեմբերի, 2009 թ.

9. Սահմանադրական դատարանը նշում է, որ այլ խնդիր է, թե որքանով է օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասը երաշխավորում մրցակցության սկզբունքի իրացումը և այս տեսանկյունից որքանով են գործին մասնակցող անձինք ապահովված դատարանի հնարավոր կամայականություններից: Այս հարցը պարզելու նպատակով հարկ է օրենսգրքի վիճարկվող բառակապակցությունը դիտարկել օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի ողջ բովանդակության համատեքստում: Օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի «գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա» բառակապակցության առկայության պայմաններում դատարանը չի կարող առաջ քաշել ապացուցման ենթակա այնպիսի նոր հանգամանք կամ փաստ, որն ընկած չէ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում: Օրենսգրքի վիճարկվող դրույթն իր վերոհիշյալ բառակապակցությամբ կաշկանդում է դատարանին գործին մասնակցող անձանց ներկայացրած պահանջների և առարկությունների շրջանակով, ինչի արդյունքում երաշխավորվում է մրցակցության սկզբունքի պահպանումը և բացառվում այս տեսանկյունից դատարանի հնարավոր կամայականությունները:

ՍԴՈ-896, 15 հունիսի, 2010 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսևորելը» բառակապակցությունը մեկնաբանել է **որպես ցանկացած գործողություն կամ անգործություն՝ կատարված պաշտոնատար անձի կողմից, որը նախատեսված չէ օրենքով և կատարվել է դրա պահանջների խախտմամբ:** Այսինքն՝ վերաքննիչ դատարանը «կամայականություն» եզրույթի նման մեկնաբանությամբ կամայական գործողության բովանդակությունն ըստ էության նույնացրել է ապօրինի գործողության բովանդակության հետ:

«Կամայականություն» եզրույթը ՀՀ օրենսդրության մեջ հստակ բնորոշված չէ, այն սահմանափակ կիրառում ունի և գործող օրենսդրության, մասնավորապես, «Երեխայի իրա-

վունքների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի երկրորդ պարբերության, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև դատական պրակտիկայի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 3-2497 (ՎԴ), 2006 թ. դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-341/06, 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 3-1 (ՏԴ), 2007 թվականի մարտի 2-ի թիվ 3-295 (ՎԴ), 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3-1832 (ՎԴ), 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԼԴ/0162/06/08 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ՀՀ օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում «կամայականություն» եզրույթը մեկնաբանվում է որպես ապօրինություն, օրինականության սկզբունքի խախտում:

.... Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը կամայականություն դրսևորելը համարում է աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում, որը հիմք է հանդիսանում աշխատողին առանց կարգապահական առավել մեղմ տույժերի ենթարկելու աշխատանքից անհապաղ ազատելու համար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսևորելը» բառակապակցությունն ապօրինի վարքագծի սուբյեկտիվ ընկալման ու տարածական մեկնաբանության և դրա արդյունքում՝ աշխատողին անհապաղ աշխատանքից ազատելու իրավականորեն չհիմնավորված հնարավորություն է ստեղծում:

ՍԴՈ-902, 7 հուլիսի, 2010 թ.

7. .... Ելնելով իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության վերոհիշյալ արդյունքներից, ինչպես նաև հաշվի առնելով Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլոց, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (տե՛ս, մասնավորապես, Հիլդա Հաֆստեյնսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի գործով, Hilda Hafsteinsdottir v. Iceland, վճիռը, կետ 56)՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատանքում վերականգնելու անհնարինության պատճառներն օրենքով սպառիչ կերպով չսահմանելը և վիճարկվող դրույթում՝ «այլ պատճառներ» ձևակերպման առկայությունն ու դրան տրված լայն մեկնաբանությունը գործնականում ստեղծում են միևնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման և կամայական մոտեցման վտանգ:

ՍԴՈ-903, 13 հուլիսի, 2010 թ.

9. .... Իրավական պետության կողմից ազատ տնտեսական գործունեության կարգավորումը, ի թիվս այլոց, պետք է նպատակ հետապնդի ապահովելու արդարացի հավասարակշռություն տնտեսական գործունեության մասնակիցների, տվյալ դեպքում՝ բաժնետիրական ընկերության խոշոր և մանր բաժնետերերի շահերի միջև: Այս նպատակն օրենսդրից պահանջում է նախատեսել պաշտպանության այնպիսի մեխանիզմ, որը կապահովի իրավական երաշխիքներ՝ բաժնետոմսերի համախմբման գործընթացում խոշոր բաժնետերերի կողմից կամայականության դրսևորումների դեմ:

ՍԴՈ-923, 9 նոյեմբերի, 2010 թ.

5. Օրենսդիրը հնարավոր է համարում անձին ճանաչման ներկայացնել նաև **լուսանկարներով**, որոնցում պատկերված անձինք պետք է իրենց արտաքին հատկանիշներով հնարավորին չափ նման լինեն ճանաչման ենթակա սուբյեկտին: Միաժամանակ, անձին լուսանկարներով ճանաչման ներկայացնելու համար օրենսդիրը որպես նախապայման է դիտարկում համապատասխան **«անհրաժեշտության»** առկայությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–747, ՍԴՈ–780 և ՍԴՈ–919 որոշումներում իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող լինել ինքնաբավ: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Վերահաստատելով այդ իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «անհրաժեշտության դեպքում» հասկացությունը ենթակա է գնահատման՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ելնելով կոնկրետ հանգամանքներից, վարույթն իրականացնող մարմինը գնահատում է անհրաժեշտության առկայությունը: Այն պետք է լինի իրավաչափ և համաչափ հետապնդվող օրինական նպատակին:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավանորմում ամրագրված՝ «անհրաժեշտության դեպքում» բառակապակցության իրավական բովանդակությունն իրավակիրառողի կողմից **պետք է մեկնաբանվի՝ ելակետ ընդունելով քրեական գործի քննության ընթացքում տարբեր փաստական հանգամանքների ուժով համապատասխան անձին ընդհանուր կարգով ճանաչման ներկայացնելու անհնարինության պայմաններում վերջինիս վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաստիությունն ստուգելու անհրաժեշտությունը:** Վերջինս պետք է պատշաճ ձևով հիմնավորվի՝ կամայականությունների տեղիք չտալու համար:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

ՍԴՈ–839, 24 նոյեմբերի, 2009 թ.

5. .... Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտը, որն անվավեր ճանաչելու պահանջը մերժվել է պաշտպանության արժանի վստահության իրավունքի առկայության հիմնավորմամբ, ընդունվել է ի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի: Կատարողական վարույթը, որի նպատակը դատական ակտի կատարումն է, ըստ էության հանդիսանում է անձի խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ փուլ: Այս մոտեցումն է ամրագրված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Հետևաբար, կատարողական վարույթում ընդունված՝ կատարողական թերթի պահանջի իրացմանն ուղղված վարչական ակտի իրավական հետևանքներն ածանցյալ են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետևանքներից, նման վարչական ակտն ինքնուրույն իրավական հետևանքներ չի առաջացնում: Անկախ խնդրո առարկա վարչական ակտն օրենքի ձևական պահանջների խախտմամբ կամ պահպանմամբ ընդունվելու հանգամանքից՝ այն դիմողի համար առաջացնելու էր միևնույն իրավական հետևանքները: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանության արժանի վստահության իրավունքը տվյալ դեպքում կարող էր ծագել ոչ թե վարչական ակտի, այլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առնչությամբ:

ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ՍԴՈ–649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

10. .... Քննության առարկայի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ հիշյալ նորմերի պահանջները երաշխավորելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ սահմանադրորեն տարբեր իրավունքների սահմանափակման առանձնահատկություններն ու բնույթը: Որքան էլ որ այլոց իրավունքների երաշխավորումն է դառնում անհատի հասարակական վարքագծի կանոնակարգման սահմանը, միևնույն է, Սահմանադրությունը, ինչպես նշվեց, չի նախատեսում որոշակի իրավունքնե-

րի սահմանափակում: Իսկ այդ իրավունքների ապահովման կարգը չի կարող դրանց իրականացման արգելանք դառնալ, այլ պետք է երաշխավորի այն: Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):

ՍԴՈ–669, 22 դեկտեմբերի, 2006 թ.

6. .... Հետևաբար, քաղաքական կյանքին շարունակական մասնակցության պայմաններում էլ կուսակցության իրավունքների մասնակի չիրացման արդյունքում (Ազգային ժողովի միայն համամասնական ընտրակարգով ընտրություններին չմասնակցելը կամ մեկ տոկոսից պակաս ձայն ստանալը) օրենքով (31 հոդվածի 2–րդ մասի 1–ին, 2–րդ և 3–րդ կետեր) իրավական բացասական հետևանքների նախատեսումը (լուծարումը) հանգեցնում է ոչ միայն իրավահարաբերության կարգավորման իրարամերժ սկզբունքների և միջոցների կիրառմանը, որն օրենքին հաղորդում է իրավական անհամաչափություն, այլև՝ վտանգում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված միավորումներ կազմելու անձանց իրավունքի անխախտելիությունը:

ՍԴՈ–677, 7 փետրվարի, 2007 թ.

5. .... Սահմանադրության 43 հոդվածի 1–ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

ՍԴՈ–917, 18 սեպտեմբերի, 2010 թ.

8. .... Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն իրավասու է հաշվի առնելով հարազատ և համահայր կամ համամայր քույրերի և եղբայրների միջև առկա օբյեկտիվ տարբերությունը՝ համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին դասել մեկ այլ՝ հաջորդ հերթի ժառանգների թվին (ինչն ընդունված է մի շարք երկրների ժառանգական իրավունքում): Սակայն օրենսդիրն իրավասու չէ այդ տարբերությունն օգտագործել համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին ժառանգությունից օրենքի ուժով ընդհանրապես բացառելու համար: Այդչափ լայն սահմանափակումն օրենսգրքի՝ ըստ օրենքի ժառանգությանը վերաբերող գլխում **բավարար չափով** հիմնավորված չէ առարկայական չափանիշներով: Այն ժառանգություն ստանալու սահմանադրական իրավունքի **ոչ համաչափ** սահմանափակում է՝ Սահմանադրության 1–ին հոդվածից (իրավական պետության սկզբունք) բխող համաչափության սկզբունքի և իրավահավասարության սկզբունքի (Սահմանադրության 14.1–րդ հոդվ.) տեսանկյունից:

ՍԴՈ–920, 12 հոկտեմբերի, 2010 թ.

5. ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ օրենսդրի բացառիկ իրավասությանն է վերապահված ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանումը: Իր այդ լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթ-

ների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պատասխանատվության միջոցներն ու չափերը: Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով: Օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ և 43-րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես իրավաբանական պատասխանատվության և, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը, որի ապահովման տեսանկյունից էլ նախևառաջ անհրաժեշտ է գնահատել վիճարկվող նորմի սահմանադրականությունը:

ՍԴՈ–924, 16 նոյեմբերի, 2010 թ.

6. .... Հաշվի առնելով վերոշարադրյալը և ելնելով պաշտպանվող հանրային շահի կարևորությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի նվազագույն չափի և դրանով հետապնդվող իրավաչափ նպատակի միջև օրենսդրի հայեցողական լիազորությունների շրջանակներում սահմանված համաչափությունը սահմանադրականության խնդիր չի առաջացնում:

....

7. Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից: Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն ընձեռի որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

7. .... Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը:

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

9. Վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունը՝ անկախ դրա բնույթից ու չափից, **հանդիսանում է միջամտություն անձի արտահայտվելու ազատությանը:** Նման ձևով արտահայտվելու ազատությանը միջամտության և այդ միջամտությամբ հետապնդվող իրավաչափ նպատակի (տվյալ դեպքում՝ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակի) միջև արդարացի հավասարակշռությունը պայմանավորող գործոն է, ի թիվս այլնի, վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող պատասխանատվության համաչափությունն անձի պատվին ու արժանապատվությանը պատ-

ճառված վնասին: Այս առնչությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պահանջում է, որպեսզի վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող փոխհատուցումը համաչափության ողջամիտ հարաբերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնասի հետ: **Արատավորող արտահայտության համար նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձին պատճառված գույքային վնասից**: Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել որպես հիմնավորված անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում:

Սահմանադրական դատարանը փոխհատուցման չափի համաչափությունն ապահովելու կարևոր երաշխիք է համարում նաև վիճարկվող հոդվածում փոխհատուցման նվազագույն չափի օրենսդրական ամրագրման բացակայության և առավելագույն չափի ամրագրման առկայության հանգամանքը: Առանձնապես կարևորվում է նաև այն հանգամանքը, որ վիճարկվող հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը, ի լրումն փոխհատուցման նյութական ձևի, նախատեսում են նաև փոխհատուցման ոչ նյութական ձևեր:

....

11. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 14, 27, 43 և 47-րդ (1-ին մաս) հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիշյալ և մի շարք այլ վճիռների հիման վրա ձևավորված նախադեպային իրավունքի, այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1-րդ հոդվածների, «Զանգվածային լրատվության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների նորմերի համադրված վերլուծությունից հետևում է. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1-րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառումը երաշխավորելու համար անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնել միջազգային իրավական հետևյալ սկզբունքային մոտեցումները.

....

– չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար և նպաստել հասարակության համար կարևոր հարցերի շուրջ քննարկումներին,

ՍԴՈ-1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... **Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վերոհիշյալ օրենքով չի պահպանվել իրավակարգավորման համաչափության սկզբունքը նշված կատեգորիայի անձանց նկատմամբ՝ հաշվի չի առնվել նրանց լեգիտիմ ակնկալիքների իրացման հնարավորությունը:**

ՍԴՈ-1073, 30 հունվարի, 2013

5. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով առաջադրված հարցադրումների շրջանակներում գույքի արգելադրումն իր իրավակարգավորիչ բովանդակությամբ ու նշանակությամբ օրենսդրի կողմից՝ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների իրացման նպատակով սահմանված **իրավապայման է**՝ արտադատական (կամ՝ մինչդատական) կարգով ապահովելու հարկատու անձի սահմանադրական պարտականության կատարումը, որի շրջանակներում երաշխավորված է նաև ՀՀ Սահմանադ-

րության 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների՝ օրենքով սահմանված կարգով իրացումը: Այդ իրավապայմանը հետապնդում է սահմանադրորեն արդարացի, հետևաբար՝ նաև իրավաչափ նպատակ, որի կիրառմանն ուղղված միջոցների և հետապնդվող նպատակի միջև օրենսդիրը պահպանել է ողջամիտ համաչափություն:

ՍԴՈ-1082, 23 ապրիլի, 2013 թ.

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որոշակի հստակ իրավապայման է նախատեսված հանրային աշխատանքները՝ որպես պատժատեսակ, հարկադրանքի այլ միջոցներով փոխարինելու դեպքում: Մասնավորապես, օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ, երբ **դատապարտյալը հանրային աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափում է:** Այսինքն, չարամտությունը՝ որպես քրեորեն դատապարտելի սուբյեկտիվ գործոն և հասարակական առավել վտանգավոր երևույթ, օբյեկտիվորեն հանգեցնում է փոխարինվող պատժի խստացմանը (ազատազրկման հետ կապված պատժի փոխարինմանն ու կիրառմանը), հետևաբար՝ նաև իրավակարգավորման արդյունավետ միջոցի գործադրմանը: Դրանով նպատակ է հետապնդվում վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները, այսինքն՝ երաշխավորել սահմանադրական կարգի հիմունքների պահպանումը:

Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական հետևանքի առումով օրենսդիրը վերոհիշյալ դեպքում պահպանել է հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցների համարժեքության սկզբունքը:

ՍԴՈ-1130, 17 դեկտեմբերի, 2013 թ.

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի փաստարկները վերաբերում են ոչ թե ինքնին իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած՝ պատասխանատվության համաչափության սկզբունքին, այլ նշված սկզբունքի հիմքում ընկած՝ պատժաչափի տարբերակման սկզբունքին, սահմանադրական դատարանը հարկ է համարում հենց այդ սկզբունքի տեսանկյունից գնահատել օրենսգրքի վիճարկվող նորմի սահմանադրականությունը՝ հաշվի առնելով նաև իր ՍԴՈ-924 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Տվյալ դեպքում առանձնակի կարևորություն է ստանում այդպիսի զանցանքների համար պատժաչափի համաչափության սկզբունքի պահպանումը: Այս կապակցությամբ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված արարքի բնույթը և լրջությունը, դրանով հետապնդվող նպատակը, նախատեսված տուգանքի չափը, գտնում է, որ տվյալ դեպքում օրենսգրքի վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում՝ ապահովել այդ նորմով կարգավորվող հասարակական հարաբերությունները՝ երաշխավորելով մարդկանց անվտանգությունը, և համապատասխանում է համաչափության սկզբունքին:

ՍԴՈ-1148, 18 ապրիլի, 2014 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզ-

բունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասում՝ ընդհուպ անհրաժեշտ կրեդիտների առկայության պարագայում, իրավակիրառ պրակտիկայի կողմից տրվող մեկնաբանությամբ, գործնականում արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական որակավորում ունեցող անձի (մագիստրոսի)՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում առկա՝ վերոշարադրյալ իրավական թերի ու համակարգային առումով անկատար լուծումներով: Դրա հետևանքով, մասնավորապես, պետական միասնական չափորոշիչների տեսանկյունից չի որոշակիացվել կապը բարձրագույն մասնագիտական համարժեք որակավորման ու դրա իրավական փաստը վկայող պետական նմուշի հավաստագրի (դիպլոմի) միջև: Նման վիճակը, իր հերթին, հանգեցրել է նրան, որ, ինչպես նշվեց, վեճի առարկա իրավադրույթը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է, չի համապատասխանում իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին, ինչպես նաև չի ապահովվում իրավունքի էության անձեռնմխելիության սահմանադրաիրավական երաշխիքի իրացումը:

ՍԴՈ-1142, 2 ապրիլի, 2014 թ.

10. .... Կարևոր է նաև կուտակային ֆոնդեր կատարվող վճարումների տոկոսադրույքի ընտրության խնդիրը, ինչն ինքնանպատակ չի կարող լինել: Այն առաջին հերթին պետք է համապատասխանի իրավական համաչափության սկզբունքին: Տվյալ պարագայում խնդիրը հանգում է անձի ընթացիկ և հեռանկարային կենսաապահովման միջև խելամիտ հարաբերակցության սահմանմանը: Որպես դրա հավասարակշռման կարևոր գործոն կարող է հանդես գալ գործատուի համարժեք մասնակցությունը: Ուստի, դարձյալ միջազգային փորձը վկայում է, առավել հավասարակշռված լուծում կարող է գտնվել աշխատողի, պետություն գործատուի և ոչ պետական ձեռնարկություն-կազմակերպություն գործատուների համատեղ մասնակցությամբ սոցիալական ապահովության այնպիսի հնարավորությունների ստեղծման ճանապարհով, երբ, մի կողմից, կենսաթոշակային, այդ թվում՝ կուտակային, ֆոնդերի ձևավորման հարցում աշխատողը մասնակցում է սոցիալական ապահովության այնպիսի վճարներով, ինչը ներդաշնակեցված է թե՛ ժամանակի մեջ իր կենսաապահովման և թե՛ հարկային ծանրաբեռնվածության հետ, մյուս կողմից՝ ոչ թե պետական բյուջեն, այլ բոլոր գործատուներն են հանդես գալիս համարժեք ֆոնդերի ձևավորման մասնակիցն ու դրանց նպատակային օգտագործման երաշխավորը:

15. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքների և պարտականությունների հավասարակշռումը, պարտականությունների հարցում թերացման համար համարժեք պատասխանատվության սահմանումն իրավակարգավորման և օրինաստեղծ գործունեության կարևորագույն պայմաններից են և հետևողական իրացում են պահանջում:

ՍԴՈ-1189, 27 հունվարի, 2015 թ.

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը ոչ միայն պարտատերերի իրավունքների ոտնահարման իրական վտանգ է պարունակում, այլև մեծ են նաև կոռուպցիոն ռիսկերը: Առաջին հերթին սնանկացման հայտ ներկայացնելիս պարտապանն է պարտավոր հստակ ներկայացնել իր պարտավորությունների իրական պատկերը: Դա կբացառի նաև պարտատերերի կողմից գույքի թաքցնումը կամ անհիմն նվազեցումը, ինչի մասին շեշտվում է նաև Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի

Հանրապետությունում սնանկության խնդրի լուծման վերաբերյալ 2014 թ. ներկայացված զեկույցի համառոտագրի 9–րդ և հիմնական զեկույցի 36–րդ կետերում:

ՍԴՈ–1224, 7 հուլիսի, 2015 թ.

8. .... Իրավական որոշակիության և/կամ համաչափության սկզբունքի տեսանկյունից վիճարկվում է նաև օրենքի 46–րդ հոդվածի 7–րդ մասի այն դրույթը, ըստ որի՝ պարբերական երաշխիքային վճարների գումարի չափը հաշվարկվում է կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.02 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ դրույթը ձևակերպված է բավարար հստակությամբ և չի զրկում քաղաքացուն իր վարքագիծը վիճարկվող նորմի հետ համատեղելու հնարավորությունից:

ՍԴՈ–1234, 20 հոկտեմբերի, 2015 թ.

7. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության և մարդու հիմնական իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքների պահանջներից չի բխում դատարանի այնպիսի եզրահանգումը, համաձայն որի՝ «Աղբյուրի բացահայտման իրավաչափ նպատակը գերակշռում է հասարակական շահին», նկատի ունենալով, որ հրապարակումները վերաբերում են հանրային ճանաչում ունեցող մարդկանց և նպատակը հասարակության մոտ առկա կասկածների փարատումն է (ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 26.06.2014 թ. ԵԿԴ/0032/08/14 որոշում, էջ 5, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22 սեպտեմբերի 2014 թ. որոշում, էջեր 20–21):

ՍԴՈ–1251, 19 հունվարի, 2016

11. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում օրենսդիրը նախատեսել է ողջամիտ պահանջներ, որոնք դատարան դիմող անձին ոչ թե ծանրաբեռնում են ձևական, ավելորդ պահանջներով, այլ նախատեսում են առաջնահերթ, իրավական տեսակետից անհրաժեշտ ու իրագործելի գործողություններ, որոնց կատարումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակներ, չի առաջացնում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն և միտված է դիմող անձի, դատարանի և գործով շահագրգիռ այլ անձանց, այդ թվում՝ պատասխանողի համար, Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված իրենց իրավունքների ու պարտականությունների արդյունավետ իրացման համար նախադրյալներ ստեղծելուն: Այսինքն՝ քննության առարկա նորմատիվ կարգավորմամբ հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցի միջև առկա է համաչափություն: Հետևաբար, օրենսգրքի 76–րդ հոդվածի 6–րդ մասի իրավակարգավորումը դատարանի մատչելիության իրավունքի էությունը բնորոշող սահմանադրաիրավական և միջազգային իրավական չափանիշների շրջանակներում սահմանադրականության խնդիր չի հարուցում:

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև պատասխանող կողմի բացատրություններում տեղ գտած առանձին փաստարկների, քանի որ պատասխանող կողմը, **չբացառելով նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում անձի մեղավորության բացահայտման, ներառյալ՝ նշված տուգանքը չվճարելու պատճառները հաշվի առնելու անհրաժեշտությունը,** գտնում է, որ, ինչ-

պես արդեն արձանագրվել է, դիմողի բարձրացրած հիմնախնդրի լուծումն առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասում, որով նախատեսված է նշանակված տուգանքի վճարումը տարաժամկետելու ինստիտուտ: **Պատասխանողի** կարծիքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթները բավարար են տուգանքի չվճարման անբարենպաստ հետևանքներից խուսափելու համար:

Պատասխանողի՝ վերը նշված բացատրությունների առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումն ամբողջությամբ չի կարող լուծել դիմողի կողմից բարձրացված՝ վերը նշված հիմնախնդիրը, քանի որ, **նախ՝** նշանակված տուգանքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ դիմում ներկայացնելու համար սահմանված է 10-օրյա ժամկետ, մինչդեռ հնարավոր են իրավիճակներ, երբ տուգանքի վճարումն անհնարին դարձնող պատճառները վրա հասնեն մինչև վճարման համար նախատեսված 30-օրյա ժամկետի ավարտը՝ ցանկացած այլ պահի: Ավելին, նման օբյեկտիվ պատճառներ կարող են ի հայտ գալ տուգանքի եռապատկումից հետո՝ մինչև հնգապատկումը: **Երկրորդ՝** դիտարկվող իրավակարգավորմամբ օրենսդիրը տուգանքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ որոշում կայացնելիս հայեցողական իրավասություն է վերապահել վարչական մարմնին, տվյալ դեպքում՝ ՀՀ ճանապարհային ոստիկանությանն այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված չէ հիմքերի այն նվազագույն շրջանակը, որոնց պարագայում ՀՀ ճանապարհային ոստիկանությունը պետք է կամ կարող է տարաժամկետել տուգանքի վճարումը: Այս հիմնախնդրի լուծումը վերապահված է օրենսդիր մարմնին:

ՍԴՈ-1115, 24 սեպտեմբերի, 2013 թ.

6. Միևնույն ժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք դատարանի իրավունքն է ոչ միայն կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքի հաստատումը, այլև բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու պարագայում նաև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Այսպես. օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավունքը տվել է դատարանին, ինչն իրավաչափ է: Դատարանը, քննելով դիմումը, անդրադառնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչելու նպատակով պահանջատիրոջ ներկայացրած պատճառների հիմնավորվածությանը: Այսինքն՝ դատական նիստ հրավիրելու մասին օրենքի պահանջի տրամաբանությունը պահանջատիրոջ կողմից դատարան ներկայացված պատճառները հարգելի լինելու հանգամանքի մասին դատարանի կողմից պատճառաբանված գնահատական տալն է: Հետևաբար, այն պարագայում, երբ դատարանը հարգելի է համարում ներկայացված պատճառները, ապա վերականգնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը: Մինչդեռ վիճարկվող նորմում օրենսդիրն օգտագործել է «դատարանը կարող է» հասկացությունը, այսինքն՝ դատարանի հայեցողությանն է թողել դատարանի կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու հիմքում ընկած պատճառները հարգելի ճանաչելուց հետո բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Վերը նշվածից բխում է, որ վիճարկվող հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է հայեցողական լիազորությամբ՝ ժամկետների բացթողումը հարգելի ճանաչելուց բացի, **վերականգնել կամ չվերականգնել** ժամկետների բացթողումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դրվում դատական հայեցողությունից՝ ներկայացված պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքից զատ նաև բաց թողնված ժամկետի վերականգն-

ման հարցի լուծման առումով, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված դատական հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը կամ անհարկի սահմանափակվի դրանց իրացումը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–722, 21 դեկտեմբերի, 2007 թ.

6. ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված՝ անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին (հանրային իշխանության մարմիններին) ու պաշտոնատար անձանց դիմումներ, առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու անձի իրավունքը ժողովրդավարության դրսևորումներից մեկն է և կարևոր նախապայման՝ անձի հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 և մի շարք այլ հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքների անխախտելիությունը երաշխավորելու համար:

ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը սահմանվում են օրենքներով: Սահմանադրական այդ նորմի բովանդակությունից հետևում է, որ անձի ցանկացած, այդ թվում հանրային իշխանության մարմիններին դիմելու նրա իրավունքի իրացման խնդիրը ենթակա է օրենքով կարգավորման:

ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածի դրույթների իրացումը՝ կապված անձանց և հանրային իշխանության մարմինների, պաշտոնատար անձանց միջև ծագած հարաբերությունների հետ, կարգավորվում են մի շարք օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնց վերլուծությունը վկայում է, որ.

ա) անձնական, պետական և հասարակական կյանքի բնագավառներին վերաբերող տեղեկատվություն պարունակող (իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան լուծում պահանջող) անձանց դիմումները պետք է հասցեագրվեն հանրային իշխանության իրավասու մարմիններին (պաշտոնատար անձանց),

բ) անձանց դիմումները պետք է համապատասխանեն իրավական ակտով նախատեսված ձևական պահանջներին (գրավոր ձև, հասցեագրված մարմնի անվանում, տեղեկություններ դիմողի վերաբերյալ, անձնական (էլեկտրոնային) ստորագրություն, դիմումի բովանդակության շարադրանք և այլն),

գ) հանրային իշխանության իրավասու մարմինը (պաշտոնատար անձը) դիմումում բարձրացված հարցի առնչությամբ պետք է ձեռնարկի այն գործողությունները (սահմանված ժամկետում ու կարգով), որպիսիք նախատեսված են նորմատիվ իրավական համապատասխան ակտում:

Այլ կերպ, դիմումներին ներկայացված ձևական պահանջները նպատակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել պարտականություններով, այլ նույնականացնել դիմումատուին, ապահովել դիմումների բովանդակության խսկությունը, հարցադրումների առարկայացումը, որպիսիք դիմումներում առաջադրված խնդիրների արագ, օբյեկտիվ և արդյունավետ լուծման երաշխիք են:

Այսպիսով, անձանց և հանրային իշխանության մարմինների միջև ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածի դրույթներից բխող հարաբերությունների օրենսդրական կարգավորման հիմքում ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների փոխադարձության և դրանց ներդաշնակեցման միասնական իրա-

վական սկզբունքի կիրառման առկայությունը՝ որպես սահմանադրական վերոհիշյալ նորմերի արդյունավետ իրացման նախապայման: ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ հանրային իրավական (սահմանադրաիրավական) հարաբերություններում այդ սկզբունքի արդյունավետ գործադրման գրավականը ոչ միայն սուբյեկտիվ իրավունքների իրականացման պայմանների իրավական կարգավորումն է, այլև իրավունքի նորմերին համապատասխան սուբյեկտիվ վարքագիծ դրսևորելը:

8. .... Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ մարդու իրավունքների իրականացումը չպետք է խաթարվի վարչակազմակերպչական բնույթի խոչընդոտների պատճառով: «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը....»:

Հիշյալ օրենքի և, մասնավորապես, դրա 4-րդ հոդվածի նշված նորմի գործողության պայմաններում, ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածում ամրագրված իր իրավունքի իրացմամբ, անձը պետք է ընտրի իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու ձևը (ձեռագիր կամ էլեկտրոնային ստորագրությամբ): Բոլոր այն դեպքերում, երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի (դիմումի) ստորագրված լինելու պայման է առաջադրված և պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, ապա որևէ տարբերակում չպետք է դրվի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջև:

ՍԴՈ-906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

7. .... Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության և քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները: Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը և կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:** Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, **դատարանում,** պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:

ՃԵԿ-Ի ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՈՐԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ-1252, 26 հունվարի, 2016

5. .... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի, մասնավորապես, «Տրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարորդների հիմնական պարտականությունները» վերտառությամբ 24-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է.

«դ) ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում՝

1) անմիջապես կանգնեցնել տրանսպորտային միջոցը, ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված կարգով միացնել վթարային լուսային ազդանշանը և չտեղաշարժել ինչպես տրանսպորտային միջոցը, այնպես էլ վթարի հետ կապված առարկաները (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում հետվթարային անվտանգությունն ապահովելու նպատակով պետք է միացված լինեն նաև օգնության համար դեպքի վայրին անմիջապես մոտ կանգնեցված տրանսպորտային միջոցների վթարային լուսային ազդանշանները).

2) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու, «Շտապ բժշկական օգնություն» կամ մասնագիտացված այլ ծառայություն կանչելու համար, իսկ ծայրահեղ դեպքերում՝ համընթաց շարժվող կամ իր տրանսպորտային միջոցով տուժածներին մոտակա բուժհիմնարկ տեղափոխել, այնտեղ հայտնել իր ազգանունը, տրանսպորտային միջոցի գրանցման համարանիշը (ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ կամ վարորդական իրավունքի վկայական և տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր), որից հետո վերադառնալ պատահարի վայր.

3) սույն հոդվածի չորրորդ մասով սահմանված կարգով ազատել երթևեկելի մասը, եթե մյուս տրանսպորտային միջոցների երթևեկությունը խոչընդոտված է.

4) պատահարի մասին հայտնել ոստիկանություն և սպասել ոստիկանության ծառայողների ներկայանալուն»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժողներ չկան, ապա վարորդները, պատահարի իրավիճակի գնահատման փոխհամաձայնությամբ, կարող են նախօրոք կազմել ու ստորագրել վթարի սխեման, ներկայանալ մոտակա ճանապարհապարեկային ծառայության պահակետ կամ ոստիկանության տարածքային մարմին՝ պատահարը սահմանված կարգով ձևակերպելու համար»:

Վերոհիշյալի վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելը պայմանավորված է ճանապարհային երթևեկության մասնակիցների, մասնավորապես, տուժած անձանց շահերի պաշտպանության, ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն սահմանելով՝ պետությունն իրացնում է, մասնավորապես, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության իր սահմանադրական պարտականությունը:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից, հետագա օրենսդրական զարգացումների ընթացքում, սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի քրեականացման քաղաքականության պահպանման դեպքում, տարաբնույթ մեկնաբանությունները բացառելու համար անհրաժեշտ կլինի է՛լ ավելի բարձրացնել իրավակարգավորման իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության

մակարդակը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–787, 3 փետրվարի, 2009 թ.

9. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6 հոդվածն ամրագրում է վարչական դատարանի կողմից գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Վերջինիս տրամաբանությունը կայանում է նրանում, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վարչաիրավական հարաբերություններից ծագող վեճում քաղաքացին հանդես է գալիս ընդդեմ վարչական մարմնի, քաղաքացու համար պետք է ստեղծվի որոշակի բարենպաստ վիճակ: Վերջինս ենթադրում է, որ վարչաիրավահարաբերություններից ծագող վեճի կարգավորման գործընթացում քաղաքացին չպետք է ծանրաբեռնվի անհամաչափ պարտավորություններով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրավակարգավորումը ոչ միայն թույլ չի տալիս ապահովել արդյունավետ դատական պաշտպանության իրացումը, այլ նաև հայցվորին ծանրաբեռնում է անհամաչափ պարտավորությամբ: Վերջինս դրսևորվում է նրանում, որ, բացառելով վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ներկա իրավակարգավորումը պարտավորեցնում է, որպեսզի քաղաքացին, իր հիմնական պահանջին վերաբերող դատական ակտի առկայության պարագայում, որը կանխորոշում է հետևանք ներկայացնող պահանջների լուծումը, պարտադրված ձևով դիմի տարբեր դատարաններ, ինչը դժվարացնում է նրա իրավունքների պաշտպանության գործընթացը:

Բացի դրանից, նման իրավակարգավորումը կարող է ավելորդ ծանրաբեռնվածություն ստեղծել նաև դատարանների համար:

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «գ» կետով սահմանված պարտականությունը, որպես հարկային արտոնությունից օգտվելու սուբյեկտիվ իրավունք, հետևաբար՝ հարկերի վճարման պարտականության իրականացման կարգի տարր, ապահովելով պետության ֆինանսական վերահսկողության գործառույթի արդյունավետ իրականացումը՝ հետապնդում է իրավաչափ նպատակ և չի կարող դիտարկվել որպես հարկատուի վրա դրված անիրավաչափ պարտականություն:

....

8. .... Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթի հակասությանը Սահմանադրության 33.1. հոդվածին, ապա հարկ է նշել, որ այն նպատակ ունի, ընդհակառակն, խթանելու ձեռնարկատիրական գործունեության իրականացումը և ազատ մրցակցության համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելուն՝ հարկային արտոնությունների կիրառման ընդհանուր կարգ սահմանելու միջոցով տնտեսապես ավելի հզոր սուբյեկտներին հակակշռելու միտումով: Իսկ որևէ արտոնությունից օգտվելու համար իրավահավասարության սկզբունքի ուժով անհրաժեշտ է կատարել որոշակի ձևական բնույթի պարտականություններ: Հարկերի մասին օրենքի վիճարկվող դրույթը մասնավոր անձանց չի ծանրաբեռնում այնպիսի պարտականություններով, որոնք համարժեք հարաբերակցության մեջ չեն հարկային արտոնություններից օգտվելու հետ:

ՊԱՏՇԱՃ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

ՍԴՈ–1189, 27 հունվարի, 2015 թ.

6. .... Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ շահագրգիռ սուբյեկտների կողմից սնանկության գործընթացի մասին պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության conditio sine qua non (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստիև ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն սնանկության գործընթացում գտնվող սուբյեկտի (պարտապանի) բոլոր պարտատերերի հայտնաբերմանը և վերջիններիս՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի պարտապանի **արդյունավետ ծանուցման և պարտավորությունների գրանցման ընթացակարգ**, որը գործնականում կբացառի սնանկության գործընթացի մասին շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները: Խնդիրն այն է, որ պարտատերը պատշաճ ծանուցում պետք է ստանա սնանկության վարույթի բացման և պահանջներ ներկայացնելու անհրաժեշտության մասին: Իսկ պարտապանը պետք է օրենքով սահմանված կարգով հստակ ու ամբողջական տեղեկատվություն ներկայացնի իր պարտավորությունների վերաբերյալ:

ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–816, 18 հուլիսի, 2009 թ.

8. .... Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետի և հարկային օրենսդրության համադրված վերլուծությունից բխում է, որ Սահմանադրությունը «հսկողություն» և «վերահսկողություն» հասկացությունների բովանդակային ծավալը չի սահմանափակում միայն ստուգմամբ, ուսումնասիրությամբ և տեսչական ստուգմամբ: ՀՀ օրենքներով «հսկողություն» և «վերահսկողություն» հասկացությունների բովանդակային ծավալում կարող են ներառվել նաև այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են հսկողության և վերահսկողության իրականացման համար և կազմում են հսկողական և վերահսկողական գործառույթների իրականացման գործընթացի փուլեր: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետի 12-րդ պարբերության, նույն օրենքի 2-րդ հավելվածով սահմանված կարգի 1.1. կետի, նույն օրենքի 4-րդ հավելվածով սահմանված կարգի 1-ին կետի, 9-րդ կետի 2-րդ պարբերության, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության, 14 հոդվածի «ա» կետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 2-րդ մասի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22.1 հոդվածի 3-րդ պարբերության, 25 հոդվածի 2-րդ պարբերության, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի ուսումնասիրությունից բխում է, որ այդպիսի գործողություններ են վերստուգումը, չափագրումը, հսկիչ գնումը, հարկվող օբյեկտների հաշվարկը և վերահաշվարկը (գնահատումը և վերագնահատումը), հարկային պարտավորությունների հաշվարկը և վերահաշվարկը (գնահատումը և վերագնահատումը), հարկային հաշվարկների ճշտումը, հարկային պարտավորությունների ճշգրտումը:

ՍԴՈ–836, 27 հոկտեմբերի, 2009 թ.

7. .... Արձանագրելով, որ քրեական գործի նախաքննության շրջանակներում ինչպես քննչական ցանկացած այլ գործողության, այնպես էլ վերստուգումների, գույքագրումների և

այլ ստուգողական գործողությունների կատարումն օբյեկտիվորեն կարող է առնչվել անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդրին, սահմանադրական դատարանը գտնում է, որ լրացուցիչ օրենսդրական կարգավորման են ենթակա այդպիսի գործողությունների կատարման պայմանները (հիմքերը, համապատասխան որոշման կայացման կարգն ու պայմանները) և կարգը (այդ թվում՝ արդյունքների արձանագրման), և այս առումով հիմնավոր են դիմողի հարցադրումները: Սակայն չի կարող ստուգումների՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգը մեխանիկորեն տարածվել քրեադատավարական գործընթացների վրա՝ առանց հաշվի առնելու դրանց առանձնահատկությունները, անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության երաշխիքների ապահովումը, մյուս կողմից՝ խոչընդոտներ ստեղծել պետական իշխանության մարմինների գործառույթների լիարժեք իրականացման համար: Այս խնդիրը, ինչպես նշվեց, լրացուցիչ իրավակարգավորման առարկա է, այլ ոչ թե Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի հիմքով օրենքի տվյալ կոնկրետ վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդիր:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

10. Միաժամանակ, ելնելով սույն գործով դիմող և պատասխանող կողմերի դիրքորոշումներից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության՝ սահմանադրական դատարանի որոշումները, որպես կանոն, չունեն հետադարձ ուժ և չեն տարածվում մինչ սահմանադրական դատարանի որոշման ընդունումը ծագած և դատական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա: Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ և 13-րդ մասերը նախատեսում են վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություններ՝ տարբերակված մոտեցում դրսևորելով քաղաքացիաիրավական և քրեաիրավական հարաբերությունների անչությամբ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 13-րդ մասում նախատեսված բացառության համաձայն քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա, առանց որևէ ժամկետային սահմանափակման, վերանայման են ենթակա այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված բոլոր դատական և վարչական ակտերը:

ՍԴՈ-942, 22 փետրվարի, 2011 թ.

5. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասն օրենսգրքի այլ նորմերի համակարգային վերլուծության տրամաբանությամբ ենթադրում է նաև վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության դեպքերը,** և իրավակիրառողը պետք է ելնի օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմի նման մեկնաբանությունից, հաշվի առնելով, որ.

ա) օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածներով սահմանված՝ օրենսդրի նպատակից և իրավակարգավորման ուղղվածությունից բխում է, որ նշված հոդվածները դատական պաշտպանության հնարավորություն են նախատեսում նաև վարչական մարմնի **անգործության** պարագայում,

բ) օրենսդիրն օրենսգրքի 70-րդ հոդվածում «վարչական ակտ» և «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ **ճանաչման հայցին է հավասարապես վերագրում նաև «անգործություն»** եզրույթը:

7. ՀՀ սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ նաև վիճարկվող նորմի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի սահմանադրականության հարցին:

ՍԴՈ-1007, 22 սեպտեմբերի, 2011 թ.

6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր դիմումում հիմնական շեշտադրումը կատարում է հարկային իրավահարաբերությունների շրջանակներում վարչական ակտերի կատարման կասեցման խնդրի վրա, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում օրենքի 28-րդ հոդվածի վիճարկվող դրույթը դիտարկել օրենքի նույն հոդվածի մյուս դրույթների համատեքստում՝ հաշվի առնելով հարկային իրավահարաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները:

Հարկային իրավահարաբերությունների հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ դիտարկվող իրավահարաբերությունները գտնվում են հանրային շահերի տիրույթում այնքանով, որքանով որ հարկերը, առանձին բացառություններով, ընդգրկված են պետական բյուջեի եկամուտների մասում և ուղղված են պետության գործառույթների բնականոն իրականացմանը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը հանդիսանում է օրենսդրական երաշխիք ապօրինի ձեռնարկատիրական գործունեության կանխման, հարկային արդյունավետ վարչարարության իրականացման, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների բարեխիղճ կատարումն ապահովելու համար: Ընդ որում, հարկային պարտավորությունները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածին համապատասխան, ներառում են ինչպես հարկերի, այնպես էլ հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված **տույժերի և տուգանքների գումարների վճարումը**:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե օրենսդիրը վարչական ակտերի կատարումը կասեցնելու ինչպիսի ինստիտուտ է նախատեսել՝ պարտադիր, թե հայցեղական կասեցման ինստիտուտ, ոչ օրենքի վիճարկվող դրույթը, ոչ էլ օրենքի ողջ 28-րդ հոդվածը չեն խոչընդոտում և չեն կարող խոչընդոտել անձին վարչական ակտի իրավաչափության վիճարկման կապակցությամբ դիմել դատական պաշտպանության, և որևէ անմիջական առնչություն չունեն դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների հետ, քանի որ վերջիններս վերաբերում են դատավարական գործընթացներին, այլ ոչ թե անձին տուգանելու գործընթացին, իսկ օրենքի 28-րդ հոդվածը, ընդհակառակը, ամբողջությամբ վերաբերում է արարքը որպես հարկային իրավախախտում որակելուն և դրա հետևանքով տուգանք սահմանելուն: Օրենքի վիճարկվող դրույթի և դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների միջև պատճառահետևանքային կապի բացակայության մասին է վկայում նաև այն, որ դիմողը փաստացիորեն իրացրել է իր դատական պաշտպանության իրավունքը: Ի դեպ, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալներով վերջին երկու տարում գրանցվել է 2 հազարից ավելի նման իրավախախտում, որից մոտ երկու տոկոսի դեպքում խախտումն արձանագրող

ստուգման ակտերը վարչական կամ դատական կարգով բողոքարկվել են, իսկ դրանց արդյունքում՝ անվավեր է ճանաչվել բողոքարկված ստուգման ակտերի ավելի քան 51 տոկոսը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ գործող իրավակարգավորման պայմաններում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման կարևոր երաշխիքներ են սահմանված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95, 96 և 97-րդ հոդվածներով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով: Վերջիններս վերաբերում են վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցմանը: Այսինքն՝ բոլոր դեպքերում պետությունը երաշխավորում է անօրինական վարչական ակտի հետևանքներով անձին պատճառված բացասական հետևանքների ամբողջական վերացման հնարավորությունը: Նույնը վերաբերում է նաև վարչական ակտի՝ դատական կարգով բողոքարկման ոլորտին՝ հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մաս հանդիսացող 1-ին հավելվածը:

.... Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև դիմողի դիրքորոշումը՝ կապված օրենքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության հետ, քանի որ, նախ՝ օրենքը հստակ սահմանել է տուգանքի գումարը երեսնօրյա ժամկետում չմուծելու դեպքում նշված գումարի կրկնապատկման կարգը, երկրորդ՝ նշված կարգը սահմանված է օրենքով, որպես համապատասխան վիճակը վրա հասնելու դեպքում ինքնաբերաբար, իրավունքի ուժով գործող կանոն և դրա համար լրացուցիչ չի պահանջվում համապատասխան վարչական ակտի ընդունում:

....

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև օրենքի վիճարկվող դրույթը դիտարկել վարչական մարմինների հնարավոր կամայականությունների տեսանկյունից՝ հիմք ընդունելով վարչական ակտի օրինականության իրավաբանորեն հերքելիության կանխավարկածը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ անհիմն կերպով պատասխանատվության չենթարկվելու սկզբունքը: Այս կապակցությամբ, հիմք ընդունելով դիմողի դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ վարչական ակտերի **դատական կարգով** բողոքարկման դեպքում հարկային իրավահարաբերությունների շրջանակներում վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորմանը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման դեպքում օրենսդիրը հստակորեն հայեցողություն է վերապահում վարչական բողոքը քննող վարչական մարմնին՝ վարչական մարմնի գործողությունը կասեցնելու հարցում, ապա վարչական ակտերի դատական բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորությունը կարող է ապահովվել հայցի ապահովման միջոցի ինստիտուտի կիրառմամբ:

....

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով բողոքարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում անձի խախտված իրավունքները վերականգնելուն ուղղված վերոհիշյալ համապատասխան օրենսդրական երաշխիքների առկայությունը, ինչպես արտադատական, այնպես էլ դատական կարգով բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորությունը՝ գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ և համապատասխան երաշխիքների միջոցով ապահովում է հավասարակշռություն հարկային պարտավորության բարեխիղճ կատարումն ապահովելու նպատակի և անձի իրավական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման միջև:

ՍԴՈ–1137, 4 փետրվարի, 2014 թ.

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև գույքի նկատմամբ իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտերի և դրանց բողոքարկման կարգի և հետևանքների վերաբերյալ գործող իրավակարգավորման ուղղվածությանն ու տրամաբանությանը:

.... Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող դրույթները նախատեսում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու երկու առանձին հիմքեր.

ա) իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, ինչը հանդիսանում է տվյալ վարչական ակտն առ ոչինչ համարելու հիմք,

բ) իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին, ինչը հանդիսանում է տվյալ վարչական ակտի անվավերության հիմք:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործընթացում Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից պետական գրանցման ենթակա իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքի ստուգումը և գնահատումը ոչ միայն իրավաչափ է, այլ նաև անհրաժեշտ և պարտադիր՝ պայմանավորված այլոց իրավունքներով և ազատություններով, ինչպես նաև առ ոչինչ վարչական ակտի կատարման կամ կիրառման համար օրենքով սահմանված պատասխանատվության չենթարկվելու հանգամանքով:

ՍԴՈ–1238, 1 դեկտեմբերի, 2015 թ.

6. Անդրադառնալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը նշված դրույթի վերաբերյալ իր փաստարկները կառուցել է հետևյալ երկու դիրքորոշումների հիման վրա.

առաջին՝ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում նշված՝ **անհատական վարչական ակտի** անվավերության հիմքերի շարքում բացակայում են այնպիսի հիմքերը, ինչպիսիք են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումները,

երկրորդ՝ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթը վարչական դատարանին վերապահում է լիազորություն՝ ի պաշտոնե ստուգելու **կիրառման ենթակա անհատական վարչական ակտի** համապատասխանությունն օրենքներին՝ բացառելով դրանց՝ նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին համապատասխանությունն **ի պաշտոնե ստուգելու** հնարավորությունը:

Դիմողի՝ վերը նշված առաջին փաստարկի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ անհատական իրավական ակտն ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրա սահմանած շրջանակում: Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական

ակտը **չպետք է հակասի** հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին:

Վերը նշված դրույթից բխում է, որ վարչական դատարանում կոնկրետ դեպքում՝ **անհատական վարչական ակտի** վիճարկման վերաբերյալ գործի քննության ժամանակ դատարանը որոշում է այն նորմատիվ իրավական ակտերի շրջանակը, որոնց հիման վրա ընդունվել է **անհատական վարչական ակտը,** ինչպես նաև պարզում է **անհատական վարչական ակտի** ընդունման պահին վերը նշված նորմատիվ իրավական ակտերի՝ ուժի մեջ գտնվելու հանգամանքը: Այսինքն՝ վարչական դատարանը պարզում է, ի թիվս այլնի, համապատասխան նորմատիվ իրավական ակտի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի համապատասխան որոշումների առկայությունը: Այստեղից էլ բխում է, որ եթե վարչական դատարանում **անհատական վարչական ակտի** վիճարկման վերաբերյալ գործի քննության ժամանակ առկա է սահմանադրական դատարանի համապատասխան որոշում, որով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել **անհատական վարչական ակտի** ընդունման համար հիմք հանդիսացած նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը), կամ տվյալ նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը) ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ, կամ առկա է վարչական դատարանի համապատասխան որոշում, որով տվյալ նորմատիվ իրավական ակտը (կամ նրա համապատասխան դրույթը) ճանաչվել է անվավեր, և **անհատական վարչական ակտն** ընդունվել է վերը նշված նորմատիվ իրավական ակտի հիման վրա, ապա վարչական դատարանում վիճարկվող **անհատական վարչական ակտը** համարվում է օրենքին, մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին հակասող: Այստեղից էլ բխում է, որ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում, որպես **կոնկրետ դեպքում, անհատական վարչական ակտի** անվավերության հիմք նշված՝ օրենքին հակասելու վերաբերյալ դրույթը միաժամանակ ներառում է նաև **անհատական վարչական ակտի**՝ այլ նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին հակասելու հանգամանքը, և բացակայում է **անհատական վարչական ակտի** անվավերության հիմքերի շարքում այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի համապատասխան որոշումների վերաբերյալ դրույթներ ամրագրելու անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վարչական դատարանի որոշումները համապատասխանաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում **պարտադիր են** բոլորի համար:

Բացի դրանից, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, ի թիվս իրավակիրառողների համար իրավասություն սահմանող այլ իրավական ակտերի, անուղղակիորեն սահմանում է պարտականություն՝ վարչական ակտ ընդունելիս կանխատեսել դրա անվավերության հիմքերը, այն է՝ տվյալ վարչական ակտի **ոչ միայն ընդունման կարգին, այլ բովանդակությանը** վերաբերող օրենքների, ՀՀ միջազգային պայմանագրերի, այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ վարչական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների և վճիռների պահանջների պահպանվածությունը և վարչական ակտն ընդունել միայն այդ պահանջների պահպանվածության հանգամանքի մասին հավաստիանալուց հետո: Այսինքն՝ ի թիվս այլնի, հիմք ընդունել **ոչ միայն**

տվյալ վարչական ակտն ընդունելու իրավասություն սահմանող օրենքը և այլ նորմատիվ իրավական ակտ (նրա համապատասխան դրույթները), այլ նաև հաշվի առնել տվյալ վարչական ակտի բովանդակությանն առնչվող այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի և, մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 66-րդ հոդվածներով սահմանված իրավակարգավորումները, տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացող նորմատիվ իրավական ակտի վերաբերյալ սահմանադրական դատարանի և վարչական դատարանի որոշումները, ինչպես նաև վարչական ակտի հասցեատիրոջ՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը:

Անդրադառնալով դիմողի երկրորդ փաստարկին՝ կապված վարչական դատարանի լիազորության հետ՝ **ի պաշտոնե ստուգելու կիրառման ենթակա անհատական վարչական ակտի** համապատասխանությունը ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին և ՀՀ վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով կայացված որոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վճռի պատճառաբանական մասը բովանդակում է՝ .... 3) եզրահանգում՝ կիրառելի իրավունքի վերաբերյալ՝ միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերի, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչմամբ, որոնք դատարանը վերաբերելի է համարում»: Օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի՝ վերը նշված դրույթներից բխում է, որ վարչական դատարանում կոնկրետ գործի քննության ընթացքում կիրառելի իրավունքի շրջանակներում ընդգրկվում են կամ կիրառման ենթակա իրավական ակտեր են համարվում բացառապես միջազգային պայմանագրերը, օրենքները, նորմատիվ իրավական ակտերը, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Հետևաբար, վարչական դատարանում կոնկրետ գործի քննության շրջանակներում **անհատական վարչական ակտերը** չեն հանդիսանում տվյալ գործով կիրառման ենթակա ակտեր և չեն ներառվում տվյալ գործով կիրառելի իրավունքի շրջանակներում:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսգիրքը չի պարունակում որևէ նորմ, որը վարչական դատարանին հնարավորություն կընձեռեր մեկ այլ գործի քննության շրջանակներում քննության առարկա դարձնելու տվյալ գործի լուծման համար էական նշանակություն, սակայն **տվյալ գործով հայցի առարկա չհանդիսացող** մեկ այլ անհատական վարչական ակտի իրավաչափության հարցը: Այսինքն՝ օրենսդրի տրամաբանությունը հիմնված է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի, այդ թվում՝ նաև անհատական վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի վրա, ինչը բացառում է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի իրավաչափությունը մեկ այլ գործի քննության ընթացքում գնահատելու հնարավորությունը՝ ելնելով վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից:

ՍԴՈ–1254, 9 փետրվարի, 2016

6. ՀՀ սահմանադրական դատարանը նույն հարցի առնչությամբ իր ՍԴՈ–1052, ՍԴՈ–1062 և ՍԴՈ–1249 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները հաշվի առնելով և դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հիմնախնդրին առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու առանձին երկրների իրավական պրակտիկայի վերլուծության արդյունքներով՝ սույն գործի քննության շրջանակներում վերահաստատում է նախկինում իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ **օրենսդրորեն պետք է սահմանվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ դատական ակտը բողոք բերողի կողմից ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու համար:**

Սահմանադրական դատարանը սույն գործի քննության առարկայի շրջանակներում կարևորում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15–ի՝ «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ(2004)20 հանձնարարականը, որով սահմանվել են վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության առանձին իրավական չափորոշիչներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է՝ ա) վարչական ակտի բողոքարկման համար ողջամիտ ժամկետի տրամադրմանը (կետ 46), բ) վարչական ակտի օրինականության վիճարկման համար ողջամիտ ժամկետի սահմանմանը (կետ 47), գ) վարչական ակտի մասին անձին ծանուցելու պահի՝ որպես բողոքարկման ժամկետի հաշվարկման մեկնարկին (կետ 48):

Այսպես, հիշատակված հանձնարարականի 46–րդ կետով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մասնակից պետություններին առաջարկվում է «.... երաշխավորել ողջամիտ ժամկետի տրամադրում կողմերին դատարանում գործեր հարուցելու համար», ընդ որում, պարտադիր հաշվի առնելով այն հանգամանքը, որ «եթե հայցադիմումներ ներկայացնելու ժամկետը շատ կարճ լինի, ապա կողմերը զրկված կլինեն վարչական ակտը բողոքարկելու հնարավորությունից»: Նույն հանձնարարականի 47–րդ կետով մասնակից պետություններին պարտավորեցվում է սահմանել ողջամիտ ժամկետ դատարանում վարչական ակտի օրինականության վիճարկման համար՝ դատական վերանայման մատչելիության արդյունավետությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ ազգային օրենսդրությամբ հստակեցնելով «ողջամիտ ժամկետ» եզրույթը:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է՝ չնայած այն հանգամանքին, որ դատական ակտերի բողոքարկման ժամկետը, որպես կանոն, հաշվարկվում է հրապարակման պահից, այնուամենայնիվ, անհրաժեշտ են օրենսդրական բավարար երաշխիքներ, որոնք կապահովեն անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

7. .... Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկատուի կողմից հարկերի վճարման իր սահմանադրական պարտականության բարեխիղճ կատարման նպատակով համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու փուլում գործում է հավաստիության կանխավարկածի սկզբունքը: Ներկայացված փաստաթղթերի կապակցությամբ վարչական մարմնի մոտ կասկած ծագելու դեպքում է միայն, որ ներկայացված տվյալների ոչ հավաստի լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Այսինքն՝ տվյալ դեպքում վարչական մարմնի կողմից ապացուցման բեռը կրելու պարտականություն կարող է ծագել միայն այն դեպքում, եթե հարկատուն փաստաթղթեր ներկայացնելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը կատարել է:

.... Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ համաձայն գործի նյութերի՝ իրավակիրառական պրակտիկայում հստակ չի տարանջատվում ապացուցման պարտականությունը վարչական վարույթում, և ապացուցման բեռը՝ վարչական դատավարությունում: Վարչական վարույթում ապացուցման պարտականությունը թեև ընդհանուր աղերսներ ունի վարչական դատավարությունում ապացուցման բեռի հետ, այն նույնական չէ վերջինիս հետ: Նմանությունն այն է, որ երկուսն էլ ունեն օբյեկտիվ բնույթ, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, և երկուսն էլ վերաբերում են ապացուցման հարցի լուծմանը՝ ապացուցողական անորոշության առաջացման դեպքերում: Սակայն վարչական դատավարությունում օրենսդրական լուծումներն այլ են՝ այստեղ խոսքը փաստական հանգամանքների բարենպաստ կամ ոչ բարենպաստ լինելու մասին չէ, այլ առավելապես վարչական մարմնի կարգավիճակ ունենալու մասին է, այն էլ ոչ բոլոր հայցատեսակների դեպքում (Վարչական դատավարության օրենսգրքի 26 հոդվածի 3-րդ մաս): Մասնավորապես, պարտավորեցման հայցի դեպքում, երբ խոսքն անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին է, ապա ապացուցման բեռը կրում է հայցվորը (ՎԴՕ 26 հոդվածի 2-րդ մաս՝ զուգակցված ՎԴՕ 25 հոդվածի 1-ին մասի հետ): Սակայն տվյալ դեպքում վարչական դատարանը վճիռ է կայացրել վիճարկման հայցի հիման վրա:

ՍԴՈ-845, 8 դեկտեմբերի, 2009 թ.

6. .... Միաժամանակ, անդրադառնալով վարչական վարույթում մրցակցության սկզբունքի դրսևորման առանձնահատկության վերաբերյալ դիմող և պատասխանող կողմերի դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սկզբունքն իր միակերպ դրսևորումը չի կարող ունենալ արդարադատության տարբեր բնագավառներում (քաղաքացիական, քրեական, վարչական, սահմանադրական): Այդ առանձնահատկությունները մանրամասնված են օրենսդրության համապատասխան ակտերում և դրանց համեմատական վերլուծությունը դուրս է սույն գործի քննության առարկայից: Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատաքննության մրցակցության սկզբունքի այս կամ այն դրսևորումները պայմանավորված են վիճելի իրավահարաբերության բնույթով, սուբյեկտների կազմով, դատարանի առջև դրված կոնկրետ խնդիրների շրջանակով և այլն:

ՍԴՈ-1007, 22 դեկտեմբերի, 2011 թ.

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև օրենքի վիճարկվող դրույթը դիտարկել վարչական մարմինների հնարավոր կամայականությունների տեսանկյունից՝ հիմք ընդունելով վարչական ակտի օրինականության իրավաբանորեն հերքելիության կանխավարկածը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ անհիմն կերպով պատասխանատվության չենթարկվելու սկզբունքը: Այս կապակցությամբ, հիմք ընդունելով դիմողի դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ վարչական ակտերի **դատական կարգով** բողոքարկման դեպքում հարկային իրավահարաբերությունների շրջանակներում վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորմանը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման դեպքում օրենսդիրը հստակորեն հայեցողություն է վերապահում վարչական բողոքը քննող վարչական մարմնին՝ վարչական մարմնի գործողությունը կասեցնելու հարցում, ապա վարչական ակտերի դատական բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորությունը կարող է ապահովվել հայցի ապահովման միջոցի ինստիտուտի կիրառմամբ:

ՍԴՈ–1054, 30 հոկտեմբերի, 2012 թ.

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը ելակետային է համարում առաջին հերթին վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով սահմանափակելու առանձնահատկությունների բացահայտումը: Գործի հանգամանքները վկայում են, որ դիմողի բոլոր փաստարկները վերաբերում են այն դեպքին, երբ վարչական մարմինը վարույթ է հարուցել դատական ակտի կատարումը երաշխավորելու շրջանակներում և սահմանափակվել է վարույթի իրականացման եզրափակիչ փուլով:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ վեճի առարկա 36-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ վարչական մարմնին պարտավորեցնելով գործադրելու **իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ** (գործել սեղմ և ողջամիտ ժամկետում, առանց վարույթի բարդացման և լրացուցիչ գործողությունների կատարման), հանգում է հենց օրենքի վերոթվարկյալ հոդվածների պահանջների կատարման երաշխավորմանը, երբ գործի փաստական հանգամանքների պարզաբանումն իրավունքի ուժով արդեն առկա է, և դրանց գնահատումը թողնված չէ վարչական մարմնի հայեցողությանը, այսինքն՝ **տվյալ վարչական ակտի ընդունումն օրենքով կանխորոշված է**: Այդ հոդվածի կիրառմամբ վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ելակետ ունենալ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունը, հիմք ընդունել նրանց իրավահավասարության, ինչպես նաև վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքները, այսինքն՝ **հետապնդել օրենքով կանխորոշված պարտադիր նպատակ:**

Իր հերթին, դատարանը վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս պարտավոր է ոչ թե պարզապես հղում կատարել 36-րդ հոդվածի ընձեռած հնարավորությանը, **այլ պարզել դրա կիրառման հիմնավորվածությունը**, վարչական մարմնի հայեցողության շրջանակները, դրա համապատասխանությունը օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին, օրենքով կանխորոշված նպատակի հետապնդման առկայությունը:

....

7. Օրենքի վիճարկվող դրույթները դիտարկելով օրենքի այլ դրույթների համադրության մեջ՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանված են որոշակի երաշխիքներ վարչական մարմնի հնարավոր սխալի բացառման և, հետևաբար, վարույթի մասնակիցների՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացման համար: Որոշակի են նաև վարչական ակտերի բողոքարկման ընթացակարգերը: Նման պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական մարմնի կողմից դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ օրենքի վիճարկվող դրույթներում «եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ» և «բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները» բառակապակցությունների իրավական անորոշությամբ, ինչպես գտնում է դիմողը: Այդ իրավապայմաններն ինքնին որևէ խտրականություն չեն բովանդակում: ....

ՍԴՈ–1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

7. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի խնդիրը չէ սահմանելու համապատասխան ընթացակարգեր, քանի որ օրենսգիրքը կոչված է պահպանելու նյութաիրավական հարաբերությունները՝ քաղաքացիների իրավունքներ, բնակչության առողջություն, սեփականություն և այլն, իսկ վարչական իրավունքի շրջանակներում առաջացող հարաբերությունները կարգավորող, տվյալ դեպքում՝ պահպանող նյութաիրավական նորմերի իրացման ընթացա-

կարգերը սահմանվում են ընթացակարգային օրենքներով, այն է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով:

Վերոշարադրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթները սահմանադրականության խնդիր չեն առաջացնում, իսկ դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը՝ կապված նշանակված տուգանքը պարտավոր անձից անկախ պատճառներով օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետ, պայմանավորված է ոչ թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, **այլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան իրավակարգավորման բացակայության հետ, որի քննությունը դուրս է ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակից:**

ՍԴՈ– 1210, 26 մայիսի, 2015 թ.

5.... Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, որը նույնպես **տարբերակում է «սեփականությունից զրկում» և «սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն» հասկացությունները:** Հոդվածի 2-րդ մասում շեշտվում է, որ անձին իր սեփականությունից անարգել օգտվելու և նրան իր ունեցվածքից միայն ի շահ հասարակության, օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով զրկելու վերաբերյալ դրույթները «.... չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, **սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար**»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում հարկերի, այլ վճարների, տույժերի և տուգանքների վճարումն ապահովող միջոցները քննության է առել միայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասի առումով, գտնելով, իհարկե, որ այդ միջոցները պետք է լինեն իրավաչափ և համապատասխանեն համաչափության սկզբունքին:

.... Հիմնական եզրահանգումն այն է, որ **օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ոտնահարում կամ սեփականությունից զրկում: Էականը՝ վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցի երաշխավորումն է:**

6. Անդրադառնալով տուգանքի բռնագանձման ինստիտուտի սահմանադրաիրավական բնույթին՝ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումների և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համադրության արդյունքում գտնում է, որ տուգանքի նշանակումը, ինքնին, որպես պատասխանատվության միջոց, հանդես չի գալիս որպես սեփականազրկում: Տուգանքի նշանակումից հետո անձն օրենքով սահմանված ժամկետում հնարավորություն ունի կամովին վճարել տուգանքը՝ **որպես օրենքով նախատեսված պարտականության կատարում**, կամ բողոքարկել վարչական մարմնի որոշումը: Տուգանքի վերաբերյալ վարչական ակտի բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցվում է, այսինքն՝ տուգանքի բռնագանձումն անվիճելի կարգով անձի կամքին հակառակ չի կատարվում:

.... Ինչ վերաբերում է տուգանքի արտադատական կարգով բռնագանձմանը, ապա այն, նպատակ ունենալով ապահովել տուգանքի վճարումը, հանդիսանում է վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ:

Դիմողի կողմից բարձրացված հիմնախնդրի համատեքստում հարց կարող է ծագել՝ արդյո՞ք տուգանքի բռնագանձումը վարչական մարմնի որոշման հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից կատարելը կարող է մեխանիկորեն հանգեցնել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սեփականությունից բացառապես դատական կարգով զրկելու սահմանադրական պահանջի խախտման:

....

7. Դիմողը բարձրացնում է նաև անձի գույքի վրա արգելանք դնելու ինստիտուտի վերաբերյալ հիմնախնդիրը: Մասնավորապես, ինչպես նշվեց, դիմողը մատնանշում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասը թույլ է տալիս անձի գույքի վրա դնել արգելանք արտադատական կարգով: Բացի դրանից, դիմողը գտնում է, որ օրենքով իրավասու անձի համար չի նախատեսվում արգելանքը տուգանքի չափով դնելու պարտավորություն, ինչի հետևանքով, ըստ դիմողի՝ «....իրավակիրառ պրակտիկայում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ արգելանքը դրվում է ամբողջ գույքի վրա՝ առանց հաշվի առնելու հանրային իրավական դրամական պահանջի չափը, ինչը վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշության հետևանք է....»:

Առաջին հիմնախնդրի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1073 որոշմամբ, քննության առնելով նույն հիմնահարցը, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի շրջանակներում արգելանքն արտադատական կարգով իրականացնելու վերաբերյալ դրույթը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն ամբողջությամբ կիրառելի են նաև սույն գործի նկատմամբ:

Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված երկրորդ հիմնախնդրին, ապա պետք է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի երկրորդ մասում 2014 թվականի դեկտեմբերին կատարվել է փոփոխություն: Մասնավորապես, ամրագրվել է՝ «Արգելանքը դրվում է անհապաղ՝ պարտավոր անձի պարտավորությանը համարժեք գույքի վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» դրույթը: Դիմողը, սակայն, վերաբերելի դրույթը բարձրացված հիմնախնդրի մասով վիճարկում է մինչև նշված հոդվածում փոփոխությունների կատարումը գործած կանոնակարգումների համատեքստում: Այս առումով հարկ է նշել, որ, իրոք, իրավակիրառ պրակտիկայում առկա է եղել հիմնախնդիր, ինչի մասին վկայում է դեռևս 2014 թվականի հունիսի 26-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումը, որում այս հարցը ևս բարձրացված էր: ՀՀ սահմանադրական դատարանում նշված դիմումի հիման վրա գործն ընդունվել էր քննության, և այդ կապակցությամբ ՀՀ կենտրոնական բանկի նախագահը 23.07.2014 թվականին պարզաբանում էր ուղարկել սահմանադրական դատարան, որում նշված էր հետևյալը. «....Վերջին շրջանում խնդիրներ են առաջացել՝ կապված հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու հետ: Կենտրոնական բանկը իրականացրել է ստեղծված իրավիճակի ուսումնասիրություն...., որի արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ տարածքում գործող **որոշ** բանկերի մոտ խնդիրներ էին առաջացել՝ կապված բանկի հաճախորդ հանդիսացող պարտապանի **քարտային հաշիվների** վրա հարկադիր կատարողի որոշմամբ սահմանված չափով արգելանք դնելու հետ»: Հի-

շատակված պարզաբանման մեջ նշվում է նաև, որ «....ՀՀ տարածքում գործող **որոշ** առևտրային բանկեր, ՀՀ գործող օրենսդրությամբ ունենալով հարկադիր կատարողի որոշումները կատարելու ուղղակի պարտավորություն և չկարողանալով քարտային հաշիվները արգելադրել հարկադիր կատարողի որոշմամբ նախատեսված գումարի չափով, հարկադրված կերպով արգելադրում էին պարտապանի **քարտային հաշիվներում** առկա ամբողջ դրամական միջոցները»: Կենտրոնական բանկի կողմից ներկայացված իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնախնդիրը պայմանավորված չի եղել դիմողի կողմից վիճարկվող՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասում այս կամ այն կանոնակարգման բացակայությամբ: Ի լուծումն առաջ եկած հիմնախնդրի՝ 29.09.2014 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-145-Ն ՀՀ օրենքով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը լրացվել է 2.1-րդ մասով, որով սահմանվում է հետևյալը. «Պարտապանի մոտ դրամական միջոցների առկայության դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավոր է պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնել միայն այն չափով, որը նշված է հարկադիր կատարողի որոշման մեջ: Սույն մասի պահանջների չպահպանման դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը ավել պահած գումարի համար պարտավոր է յուրաքանչյուր օրվա համար վճարել տույժ՝ նշված գումարի 0.1 տոկոսի չափով: Պարտապանը կարող է պահանջել պատճառված վնասի փոխհատուցում, եթե ապացուցում է, որ պատճառված վնասը գերազանցում է սույն մասով սահմանված տույժի չափը»:

8. Դիմողը վիճարկում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասը՝ դիմումին կցելով հոդվածի տեքստ, որը բովանդակային առումով չի առնչվում բարձրացվող հիմնախնդրին, ինչպես նաև որևէ հիմնավորում չի բերում նշված հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության այս կամ այն հոդվածին չհամապատասխանելու վերաբերյալ:

Ավելին, եթե ենթադրվի, որ որևէ պատճառով դիմողը ճիշտ չի նշել համապատասխան հոդվածի մասը, և ներկայացված սահմանադրաիրավական վեճի ընդհանուր տրամաբանությունից ելնելով խոսքը պետք է վերաբերեր վերոհիշյալ հոդվածով կարգավորվող պատշաճ ծանուցումների ինստիտուտին, ապա անհրաժեշտ է նշել, որ դիմումում բերված փաստարկները ևս առնչություն չունեն վերոհիշյալ հոդվածի դրույթների հետ: Դիմումում վկայակոչվում են մինչև 2014 թ. սեպտեմբերի 29-ի ՀՕ-146-Ն օրենքով փոփոխված օրենսգրքի համապատասխան հոդվածի դրույթները, որոնք վերաբերում են ծանուցումների ինստիտուտին:

Վերոշարադրյալի կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

.... Միաժամանակ, կարևորելով պատշաճ ծանուցումների հիմնախնդիրը՝ սահմանադրական դատարանը սույն որոշման շրջանակներում հարկ է համարում անդրադարձ կատարել պատշաճ ծանուցումների ինստիտուտի վերլուծությանը և գնահատմանը՝ հաշվի առնելով, որ պատշաճ ծանուցման ինստիտուտը, որը հնարավորություն է տալիս փաստացի իրազեկված լինել վարչական տուգանքների նշանակման մասին, հանդիսանում է կարևոր երաշխիք անձի իրավունքների պաշտպանության հարցում, այդ թվում՝ ինչպես դատական, այնպես էլ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության հարցերում: Սահ-

մանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հիմնախնդրի առնչությամբ, մասնավորապես, անհրաժեշտ է հիմք ընդունել ՍԴՈ–630, ՍԴՈ–815, ՍԴՈ–832, ՍԴՈ–1052 և ՍԴՈ–1189 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, տուգանքի որոշման մասին անձին պատշաճ կարգով ծանուցելու խնդրահարույց իրավիճակն առավելապես պայմանավորված է եղել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283–րդ հոդվածի կանոնակարգումներով, որոնցով անձը համարվում էր ծանուցված նույնիսկ այն դեպքում, երբ նա «....չի եղել տրանսպորտային միջոցի գրանցման (հաշվառման) կամ վարորդական վկայական ստանալու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու ժամանակ իր կողմից նշված հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրում կամ ճիշտ չի նշել հասցեն կամ հրաժարվել է ստանալ ուղարկված (հանձնվող) որոշումը»:

.... Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ 2012 թ. նոյեմբերի 13–ի ՍԴՈ–1056 որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին, այն է՝ «Ելնելով .... ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանն իրավական պետությանն անհարիր է համարում վերը նշված իրավիճակը և գտնում, որ դրա պատճառն իրավական բացն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարաններում օրենսգրքի վիճարկվող նորմերով նախատեսված տուգանքի հնգապատիկի չափը բռնագանձելու մասին հայցի քննության ժամանակ անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պետք է քննարկման առարկա դարձնի և գնահատի նրա ներկայացրած հիմնավորումներն այն մասին, թե արդյոք առկա են եղել արտակարգ և անհաղթահարելի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են անձին ժամանակին կատարելու իր պարտավորությունները պետության առջև, կամ արդյոք անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը կատարելու համար և այդպիսի հանգամանքների առկայությունը հաստատելու պարագայում հարգելի համարի բաց թողնված ժամկետները»:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի դրույթները չեն կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ սահմանափակվեն անձի՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները տուգանքի ավելացված գումարը գանգատարկելու կամ բողոքարկելու համար:

ՍԴՈ–1271, 10 մայիսի, 2016 թ.

8. .... ՀՀ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում նաև, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է գտնվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ–902–24.11.2015–ՊԻ–010/0) օրենսդրական նախաձեռնություն:

.... Սահմանադրական դատարանը կարևորում է այնպիսի իրավակարգավորումների անհրաժեշտությունը, որոնց շրջանակներում իր որոշ վարչական լիազորություններ մասնավոր անձանց փոխանցելու միջոցով պետությունը չի կարող հրաժարվել այդ լիազորությունների ոչ արդյունավետ իրականացման համար պատասխանատվությունից:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ

ՍԴՈ–1050, 2 հոկտեմբերի, 2012 թ.

7. Հարցին անհրաժեշտ է անդրադառնալ նաև խնդրո առարկա իրավահարաբերությունների նկատմամբ համապատասխան ՀՀ միջազգային պայմանագրերում ամրագրված նորմերի կիրառելիության շրջանակի համատեքստում և այն դիտարկել «կենսաթոշակային ա-

պահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում բնակվող կենսաթոշակառու և «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաագայի 1961 թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի մասնակից պետությունում կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից պետություններում բնակվող կենսաթոշակառու» փոխհարաբերությունների տեսանկյունից: Այդ առումով սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-966 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի բովանդակությանը, մասնավորապես նշել է. «.... ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սուբյեկտների համար վարքագծի պարտադիր կանոններ, ունեն ՀՀ օրենքներից և իրավական այլ ակտերից առավել բարձր իրավաբանական ուժ, ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ ողջ տարածքում»:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի **վերոհիշյալ նորմերին տրվել է սահմանափակ մեկնաբանություն**, և օրենքի վիճարկվող դրույթների կիրառման գործընթացում իրավակիրառ սուբյեկտները կիրառելի են համարել միայն այն միջազգային պայմանագրերը, որոնք վերաբերում են բացառապես սոցիալական ապահովության ոլորտին: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է առանձին միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերի, որոնք կանոնակարգում են օտարերկրյա իրավասու հիմնարկների և լիազորված անձանց կողմից տրված փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները, և որոնք կիրառելի են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ սոցիալական ապահովության:

.... **Սահմանադրական դատարանը կարևորում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անվերապահ կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումը:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ պահանջների կատարումը խնդրո առարկա իրավիճակում կբացառի, մի կողմից, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում բնակվող կենսաթոշակառուների, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին 1961 թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի, ինչպես նաև օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից պետություններում բնակվող կենսաթոշակառուների միջև փաստացիորեն ստեղծված տարբերակված մոտեցումը՝ կապված վերջիններիս՝ կենսաթոշակը ստանալու համար Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտության հետ:

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված տարբերակված մոտեցումը չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով

սահմանված՝ խտրականության արգելման սկզբունքին, քանի որ դիտարկվող մոտեցումն առաջացել է **բացառապես իրավակիրառ պրակտիկայում համապատասխան իրավասու մարմինների կողմից ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջների չկատարման հետևանքով,** որպիսի հանգամանքը փաստվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ վերը հիշատակված թիվ ԱԳԳ/ՍՍ-1-1/1013-12 17.02.2012 թ. գրությամբ, որով հավաստվում է, որ, մասնավորապես, Քիշնևի և Հաագայի՝ վերը հիշատակված կոնվենցիաների անդամ պետությունների վավերացրած լիազորագրի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի գումար **չի վճարվում:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած խնդիրը պայմանավորված է ոչ թե օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, այլ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անտեսմամբ:

8. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԸ

ՍԴՈ–816, 18 հուլիսի, 2009 թ.

6. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի սահմանադրականության առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել օրենքի վիճարկվող դրույթում օգտագործված «բնապահպանական վճարներ» և «բնօգտագործման վճարներ» հասկացությունների բովանդակությունն ու էությունը: «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 1–ին մասի համաձայն բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ համայնքի բյուջե վճարվող **պարտադիր** վճարն է: Իսկ նույն հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ բնօգտագործման վճարը սահմանված է որպես՝ «.... պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց սույն օրենքին համապատասխան պետական բյուջե վճարվող վճար»: Փաստորեն, վերոհիշյալ օրենքի 2 հոդվածում կանխորոշված է այդ վճարների առանձնահատուկ իրավական բնույթը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թվականի մայիսի 13–ի ՍԴՈ–753 որոշմամբ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված «պարտադիր վճար» հասկացության բովանդակությանը, առանձնացրել է այդ հասկացությանը բնորոշ հատկանիշները, այն է՝ դա կրում է հանրային բնույթ և նախատեսված է պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար, ինչպես նաև որոշակի դիրքորոշումներ է արտահայտել պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի օգտագործման դիմաց գանձվող վճարի բովանդակության վերաբերյալ: Ինչպես հետևում է վերոհիշյալ օրենքի 2–րդ հոդվածի ձևակերպումներից, ի տարբերություն բնօգտագործման վճարի, պետության կողմից բնապահպանական վճարի հավաքագրումը նպատակաուղղված է բնապահպանական միջոցառումների իրականացմանը, որում էլ դրսևորվում է վճարի այդ ձևի հանրային, այսինքն՝ պարտադիր բնույթը: Վերջինս իր հերթին բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 10 հոդվածում ամրագրված՝ պետության, այնպես էլ՝ 89 հոդվածի 5–րդ կետում ամրագրված՝ ՀՀ կառավարության պարտականությունների բովանդակությունից:

Հաշվի առնելով 2008 թվականի մայիսի 13–ի ՍԴՈ–753 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավակարգավորման համատեքստում բնօգտագործման վճարը, հանդիսանալով գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր, և որպես այդպիսին նման գումարի գանձման համար իրավական հիմք է հանդիսանում ընդերքի սեփականատիրոջ, այն է՝ պետության, որն այդ իրավահարաբերություններում գործում է լիազորված մարմնի միջոցով, և ընդերքն օգտագործողի միջև կնքված համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիրը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ 21.02.2005 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ–ին տրվել է «Ստորերկրյա ջրերի հանքարդյունահանման»

թիվ 32 հատուկ լիցենզիան, որի հիման վրա էլ ՀՀ բնապահպանության նախարարության և ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի միջև 19.04.2005 թ. կնքվել է թիվ 003 լիցենզային պայմանագիրը:

Սահմանադրական դատարանը՝ հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև իր 2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, արձանագրում է նաև, որ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում բնապահպանական և բնօգտագործման վճարների տարանջատումը, և, ըստ այդմ էլ, տարբեր վճարատեսակների դրույքաչափերի սահմանումը երկու տարբեր սուբյեկտներին (օրենսդիր մարմնին և ՀՀ կառավարությանը) վերապահելն ինքնանպատակ չէ: Օրենսդիրը բնօգտագործման վճար սահմանելիս՝ այն դիտարկել է որպես պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ընդերքի օգտագործման դիմաց տրվող վարձավճար, և վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերություններին տվել է քաղաքացիաիրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում, որտեղ խնդրո առարկա վճարը դիտարկել է որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր: Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող հոդվածում նշված բնօգտագործման վճարները չեն հանդիսանում պարտադիր վճարներ և, հետևաբար, ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածում ամրագրված՝ պարտադիր վճարների տեսակները, չափը և վճարման կարգը միայն օրենքով սահմանելու պահանջը չի կարող վերագրվել բնօգտագործման վճարներին:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ բնօգտագործման վճարի իրավական բովանդակությունը վերոհիշյալից էականորեն տարբերվող ընկալում է ստացել տարբեր մարմինների ու դրանց ստորաբաժանումների կողմից:

Մասնավորապես, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի՝ 25.07.2003 թ. թիվ 03/20-Ն հրամանի ուսումնասիրությունը վկայում է, որ գործադիր իշխանությունը «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բնօգտագործման վճարը դիտարկել է որպես պարտադիր վճար: Մյուս կողմից, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողովն իր՝ 22.02.2008 թ. թիվ 4/1 որոշմամբ, հղում կատարելով ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 4, 5 և 6 հոդվածներին՝ իրավամբ բնօգտագործման վճարը դիտարկել է որպես ընդերքն օգտագործման տրամադրելու համար օգտագործողների կողմից վճարվող ընդերքօգտագործման վճար:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի՝ «Ընդերքաօգտագործման վճարների որոշումը և վճարման կարգը» վերտառությամբ 46 հոդվածը սահմանում է, որ այդ օրենսգրքի 44 հոդվածով նախատեսված վճարները սահմանվում են ՀՀ օրենքով, իսկ 44 հոդվածը ընդերքն օգտագործելիս կատարվող վճար է համարում ընդերքի օգտագործման (բնավճար, ռոյալթի) վճարը: Մինչդեռ ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 6 հոդվածի 12-րդ կետը նախատեսում է, որ ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում ՀՀ կառավարության իրավասություններն են՝ 12) իր իրավասության սահմանում ընդերքօգտագործման վճարների դրույքաչափերի սահմանումը:

Թերևս նման հակասական մոտեցումների համար կարող էր հիմք հանդիսանալ այն հանգամանքը, որ օրենսդիրը ևս տարբեր օրենքներում հետևողականություն չի դրսևորել բնօգտագործման վճարի բնույթը հստակ արտահայտելու հարցում: Չնայած նրան, որ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում այդ վճարի իրավական բովանդակությունը հստակ է, սակայն 2000 թվականի մայիսի 17-ին ընդունված և 2000 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ «....Թեմատիկ են հարկային, մաքսային, պարտադիր սոցիալական ապահովության,

բնօգտագործման, բնապահպանական և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները ....»: Միաժամանակ, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 2-րդ կետի «թ» ենթակետը բնօգտագործման վճարը դիտում է որպես **հարկային եկամուտ**: Նման իրավիճակի բացառման և օրենսդրական հստակ կանոնակարգման խնդիրը պետք է լուծվի ՀՀ Ազգային ժողովի օրենսդրական քաղաքականության շրջանակներում:

8. .... ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ կետի դրույթներից բխում է, որ կառավարությունը ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրեն վերապահված գործառույթն իրականացնելիս կարող է՝ բացառապես Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, սահմանել իրավակարգավորման ընթացակարգեր: Բնապահպանության և բնօգտագործման բնագավառում ՀՀ կառավարության, ինչպես նաև պետական կառավարման մյուս մարմինների (այդ թվում՝ հարկային) ընդհանուր լիազորությունները սահմանված են ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 5-6 հոդվածներում՝ այնքանով, որքանով այդ օրենսգրքով են սահմանվում ՀՀ տարածքում ընդերքից օգտվելու **սկզբունքները**, կարգը, ընդերքօգտագործման հետ կապված հարաբերությունները:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 19 հոդվածը վերաբերում է բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողի կողմից բնապահպանական և բնօգտագործման վճարների **հաշվարկման և վճարման** նկատմամբ վերահսկողությանը: Ընդ որում, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի ուժով բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարները հաշվարկելու և վճարելու պարտականությունը դրված է բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների վրա:

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին պարբերության, 83.5. հոդվածի 3-րդ կետի, 89 հոդվածի 4-րդ կետի դրույթների բովանդակությունը, ինչպես նաև սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարները հաշվարկելուն ուղղված գործունեությունն իրենից ներկայացնում է **սեփականատիրոջ՝ պետության առջև տնտեսավարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովող գործունեություն,** որը չի ներառվում տնտեսավարող սուբյեկտի «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակային ծավալներում: Հետևաբար, բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունը, այն է՝ գույքի օգտագործման, ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ընթացքը և դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, այլ վերջինիս կողմից սեփականատիրոջ առջև ստանձնված **պայմանագրային պարտավորությունների կատարումը:** Բստ այդմ էլ, Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետը չի պարտադրում, որ պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության և դրանց իրականացման համար անհրաժեշտ մյուս գործողությունների իրականացման կարգերը սահմանվեն օրենքով: Դրանք կարող են սահմանվել նաև կառավարության որոշմամբ:

9. .... Միևնույն ժամանակ, ՀՀ օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ «հարկվող օբյեկտ» և «հարկային պարտավորություն» հասկացությունները վերաբերում են բացառապես հարկերին և պարտադիր այլ վճարներին: Այս առնչությամբ գնահատելով իրավակիրառական պրակտիկան և հաշվի առ-

նելով սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ- 753 և սույն որոշումներով պարտադիր վճարների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ելնելով հարկվող օբյեկտի, հարկային պարտավորության բնույթից, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածը կիրառելի չէ բնօգտագործման վճարների նկատմամբ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԴՈ-816, 18 հուլիսի, 2009 թ.

5. .... Պետության ֆինանսական վերահսկողության գործառույթը փոխկապակցված է պետության տնտեսական և սոցիալական գործառույթների հետ և վերջիններիս հետ մեկտեղ ուղղված է պետության խնդիրների լուծմանն ու պետության առջև Սահմանադրությամբ առաջադրված նպատակներին հասնելուն: Վերջիններս ներառում են համընդհանուր բարօրությունը, անհատի բարոյական, նյութական, ֆիզիկական բարեկեցությունը, սոցիալական առավելագույն պաշտպանվածությունը: Հարկային իրավահարաբերությունների՝ որպես հանրային բնույթի իրավահարաբերությունների, նկատմամբ մասնավորապես պետական վերահսկողության գործառույթի միջոցով է, որ պետությանը հնարավորություն է ընձեռվում առավել արդյունավետ կերպով հասնելու վերը նշված նպատակներին: Հարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետական վերահսկողության գործառույթի միջոցով ապահովվում է հարկերի հավաքագրման և բյուջեի մուտքերի ապահովման արդյունավետությունը և թափանցիկությունը, պետության տնտեսական կայունությունը:

Հարկային իրավահարաբերությունների կանոնակարգումն իրականացվում է հարկային իրավահարաբերությունների մասնակիցների համար փոխադարձ իրավունքների և պարտականությունների սահմանմամբ, որոնք ուղղված են ոչ միայն անհատական, այլ նաև հանրային շահերի երաշխավորմանը: Վերջինս դրսևորվում է հարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետության ֆինանսական վերահսկողության գործառույթի իրականացման արդյունավետության ապահովմամբ, որն էլ, իր հերթին, ի թիվս այլոց, կարող է դրսևորվել հարկատուների նկատմամբ որոշակի պարտականությունների սահմանմամբ: Տվյալ դեպքում ՀՀ սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե հարկատուի համար որոշակի պարտականություն սահմանելիս արդյոք ապահովվել է տվյալ պարտականության իրավաչափությունը, ինչպես նաև ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների և հարկատուների պարտականությունների միջև հավասարակշռությունը՝ բացառելու հարկատուների համար անիրավաչափ պարտականություններ սահմանելը:

.... Սահմանադրությամբ օրենսդիր իշխանությունն է օժտված հարկերի վճարման կարգը որոշելու իրավասությամբ: Ինչպես ցանկացած իրավունքի և պարտականության իրականացում, տվյալ դեպքում հարկային արտոնություններից օգտվելու իրավունքի և հարկեր վճարելու պարտականության իրականացումը ենթադրում է գործընթաց, որը ներառում է հիմնական իրավունքի կամ հիմնական պարտականության իրականացմանն ուղղված լրացուցիչ այլ իրավունքների և պարտականությունների առկայություն: Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ օրենսդիրն է սահմանում, թե ինչ գործողություններով է դրսևորվում հարկեր վճարելու սահմանադրական պարտականության կատարումը: Այս իրավասության շրջանակներում օրենսդիրն օժտված է նաև այդ պարտականության կատարումն ապահովող արդյունավետ մեխանիզմի սահմանման լիազորությամբ, որը կապահովի, մի կողմից, տվյալ իրավունքի կամ պարտականության արդյունավետ իրականացումը, մյուս կողմից՝ հարկային արտոնությունից օգտվելու նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը, հարկերի վճարման սահմանադրական պարտականության կատարման բնագավառում հնարավոր չարաշահումների նկատմամբ հակազդումը, ինչպես նաև բյուջե հարկերի փոխանցման ու վճարման բազմա-

փուլ գործընթացի մասնակից սուբյեկտների իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային արտոնությունից օգտվելու իրավունքի իրականացումն ըստ էության հարկեր վճարելու պարտականության կատարումն է և Սահմանադրության 45 հոդվածով սահմանված հարկեր վճարելու պարտականության կատարումն ապահովող արդյունավետ մեխանիզմի տարրը:

Սահմանադրության 45 հոդվածով սահմանված նորմին փոխլրացնում են Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված նորմերը: Վերջիններիս վերլուծությունից բխում է, որ սուբյեկտիվ իրավունքների և հարկերի վճարման սուբյեկտիվ պարտականության իրականացումը չի կարող տեղի ունենալ կամայական ձևով: Նման մոտեցումն ինքնանպատակ չէ, քանի որ ցանկացած սուբյեկտիվ իրավունք, այդ թվում՝ հարկերի վճարման սուբյեկտիվ պարտականություն առնչվում է այլոց իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև սահմանադրորեն պահպանվող այլ արժեքներին և կարող է խոչընդոտել դրանց իրականացումը կամ խախտել դրանք: Այդ հիմնավորմամբ է, որ Սահմանադրությունը պարտավորեցնում է սուբյեկտիվ իրավունքները և պարտականություններն իրականացնել որոշակի պայմաններում և կարգով: Տվյալ դեպքում «կարգ» հասկացությունը ներառում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «գ» կետով հարկատուի վրա դրված պարտականությունը, որն էլ ուղղված է անձի կողմից հարկային արտոնության իր սուբյեկտիվ իրավունքի, ինչպես նաև հարկերի վճարման պարտականության իրականացմանը:

.... Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկատուի կողմից հարկերի վճարման իր սահմանադրական պարտականության բարեխիղճ կատարման նպատակով համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու փուլում գործում է հավաստիության կանխավարկածի սկզբունքը: Ներկայացված փաստաթղթերի կապակցությամբ վարչական մարմնի մոտ կասկած ծագելու դեպքում է միայն, որ ներկայացված տվյալների ոչ հավաստի լինելու հանգամանքի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Այսինքն՝ տվյալ դեպքում վարչական մարմնի կողմից ապացուցման բեռը կրելու պարտականություն կարող է ծագել միայն այն դեպքում, եթե հարկատուն փաստաթղթեր ներկայացնելու՝ օրենքով սահմանված իր պարտականությունը կատարել է:

8. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային արտոնությունների իրավունքը, ինչպես նաև առհասարակ հարկային պարտավորությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունն ամբողջությամբ բխում է հարկ մուծելու սահմանադրական պարտականությունից և ուղղված է այդ պարտականության բարեխիղճ կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

ՍԴՈ–1007, 22 դեկտեմբերի, 2011 թ.

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև օրենքի վիճարկվող դրույթը դիտարկել վարչական մարմինների հնարավոր կամայականությունների տեսանկյունից՝ հիմք ընդունելով վարչական ակտի օրինականության իրավաբանորեն հերքելիության կանխավարկածը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող՝ անհիմն կերպով պատասխանատվության չենթարկվելու սկզբունքը: Այս կապակցությամբ, հիմք ընդունելով դիմողի դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ վարչական ակտերի **դատական կարգով** բողոքարկման դեպքում հարկային իրավահարաբերությունների շրջանակներում վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորմանը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման դեպքում օրենսդիրը հստակորեն

հայեցողություն է վերապահում վարչական բողոքը քննող վարչական մարմնին՝ վարչական մարմնի գործողությունը կասեցնելու հարցում, ապա վարչական ակտերի դատական բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորությունը կարող է ապահովվել հայցի ապահովման միջոցի ինստիտուտի կիրառմամբ:

ՍԴՈ–1106, 10 սեպտեմբերի, 2013 թ.

6. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկային իրավահարաբերություններում ցեսիայի պայմանագրի և դրա իրավական հետևանքների առանձնահատկություններն ի հայտ են գալիս հետևյալ հարցադրման շրջանակներում. արդյո՞ք ցեսիայի պայմանագրի կնքմամբ դադարում է ցեդենտի/հարկատուի հարկային պարտավորությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ հարկատուն հանդես է գալիս մի կողմից՝ որպես հարկատու՝ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում, և որպես ցեդենտ/սկզբնական պարտատեր՝ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում հարկատուն/ցեդենտը պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից նոր պարտատիրոջ/ցեսիոնարի նկատմամբ ցեսիայի պայմանագրով պարտավորության կատարման համար, սակայն հարկային իրավահարաբերություններում շարունակում է կրել համապատասխան պարտավորությունները:

ՍԴՈ–1139, 18 փետրվարի, 2014 թ.

5. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Այն իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն է ապահովում անձանց (տնտեսավարող սուբյեկտների) համար՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Միաժամանակ, այդ ազատության սկզբունքը բացարձակ չէ և ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների առջև դնում է կոնկրետ պարտականություններ: Այսպես, պետության հիմնական գործառույթն է ապահովել այդ ազատության երաշխավորման անհրաժեշտ իրավական և տնտեսական պայմաններ: Սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմի բովանդակությունից ուղղակիորեն բխում է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտաբար պետք է ստեղծվեն տնտեսական ողջ համակարգի կենսագործունեության առավել բարենպաստ պայմաններ՝ հիմնված ազատ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների կազմակերպման ու գործունեության ազատության, իրավահավասարության, այդ գործընթացում պետության դերի առավելագույնս հստակեցման սկզբունքների վրա: Մյուս կողմից, տնտեսավարող սուբյեկտների պարտականությունն է իրենց գործունեությունը ծավալել օրենսդրությամբ սահմանված կարգով ու շրջանակներում, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով ու չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Այն սահմանադրա-իրավական պարտականություն է (ՀՀ Սահմ. 45-րդ հոդված), որը պայմանավորված է հասարակության ու պետության համար դրա կենսական կարևորությամբ ու նշանակությամբ: Այդ պարտականության պատշաճ կատարման ապահովմանն է անմիջականորեն ուղղված ՀՀ հարկային օրենսդրությունը և, մասնավորապես՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, որի կարգավորման առարկան է նաև հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվություն սահմանելը: Մասնավորապես, հիշյալ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված է, որ հարկային օրենսդրության խախտումն (այսինքն՝ հարկերը ճիշտ չհաշվարկելը, ժամանակին չվճարելը և հարկային օ-

րենսդրության մյուս պահանջները չպահպանելը) առաջացնում է պատասխանատվություն, որը կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

7. .... Վերոհիշյալ սկզբունքի և սույն գործով վիճարկվող նորմերի իրավական բովանդակության համադրված վերլուծությունը, ինչպես նաև դիմող կողմի հարցադրումները վկայում են, որ, այնուամենայնիվ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ դեռևս գործող օրենսգրքի նորմատիվ համապատասխան կարգավորումները թույլ չեն տալիս միանշանակ (թեկուզ՝ տեսականորեն) բացառել հարկային պարտավորությունների բնագավառում միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության (հարկային և վարչական) ենթարկվելու հնարավորությունը (հատկապես անհատ ձեռնարկատեր հանդիսացող սուբյեկտի օրինակով), չնայած այն հանգամանքին, որ դիմող կողմը չի ներկայացրել դիմումում բերված իրավական ակտերում ու դատական պրակտիկայում ամրագրված չափանիշներով կրկնակի պատասխանատվության որևէ փաստ և իր հիմնավորումները կառուցել է հնարավոր «ռիսկերի» շրջանակներում:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային, ինչպես նաև վարչաիրավական հարաբերություններում իրավասու սուբյեկտները, ելնելով այդ հարաբերությունների բովանդակությունից ու առանձնահատկություններից, անհրաժեշտաբար (օբյեկտիվորեն) կարող են հանդես գալ իրավական մի քանի կարգավիճակներով՝ միաժամանակ հանդես գալով թե՛ որպես հարկային և թե՛ վարչաիրավական հարաբերության սուբյեկտներ, և որոնց նկատմամբ միաժամանակ հարկային և վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը կարող է մեկնաբանվել որպես միևնույն արարքի համար իրավական կրկնակի պատասխանատվություն: Մասնավորապես, եթե անհատ ձեռնարկատերն իր գործունեությունից բխող հարկերը հաշվարկելու և պետբյուջե փոխանցելու իր պարտականությունն օրենսդրությամբ նախատեսված կարգով պատվիրակել է պատասխանատու այլ անձի, ապա այդ ձեռնարկատերը վարչական պատասխանատվություն կարող է կրել միայն որպես իրավաբանական անձին հավասարեցված իրավունքի սուբյեկտ, մինչդեռ այլ իրավական կարգավորում է նախատեսված այն դեպքերում, երբ անհատ ձեռնարկատերը միաժամանակ ստանձնել է իր գործունեությամբ պայմանավորված հարկերը հաշվարկելու և վճարելու պարտականությունը:

ՍԴՈ– 1210, 26 մայիսի, 2015 թ.

5. .... Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածին, որը նույնպես **տարբերակում է «սեփականությունից զրկում» և «սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն» հասկացությունները:** Հոդվածի 2–րդ մասում շեշտվում է, որ անձին իր սեփականությունից անարգել օգտվելու և նրան իր ունեցվածքից միայն ի շահ հասարակության, օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով զրկելու վերաբերյալ դրույթները «.... չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, **սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար**»:

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–967, 7 հունիսի, 2011 թ.

7. .... Հարկային քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս պետությունն օժտված է որոշակի հայեցողությամբ: Հարկային իրավահարաբերությունները կարող են ունենալ բազմաթիվ առանձնահատկություններ, դրանց բովանդակությունը կարող է հաճախակի փոփոխությունների ենթարկվել, իսկ այդ փոփոխությունները պայմանավորված լինեն պետության ֆինանսատնտեսական քաղաքականությամբ, զարգացման առաջնահերթություններով, ռազմավարական խնդիրները լուծելու պահանջով, տնտեսական հարաբերությունները կատարելագործելու, տնտեսության որոշակի ոլորտների զարգացումը խրախուսելու, ինչպես նաև հարկային վարչարարությունը կատարելագործելու նպատակով: Նշված այս հանգամանքների կամ դրանցից որևէ մեկի առկայությունը կարող է հիմք ծառայել հարկային քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնելու, հարկային իրավահարաբերություններում արտոնություններ կամ առավել բարենպաստ պայմաններ սահմանելու համար: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ այս ամենի իմացությամբ և իր ազատ կամաարտահայտմամբ է մտնում տնտեսական հարաբերությունների մեջ:

ՍԴՈ–1065, 22 հունվարի, 2013 թ.

6. Սահմանադրական դատարանը, ելնելով պետության և հասարակության զարգացման համար հարկային քաղաքականության իրականացման բացառիկ կարևորությունից, արձանագրում է, որ այնպես, ինչպես ցանկացած հարկատեսակի մասին օրենքի ինքնին ընդունումը, այնպես էլ 2000 թ. հունիսի 5-ին «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումը Սահմանադրության տեսանկյունից եղել է իրավաչափ: Ավելին, Սահմանադրության 45-րդ հոդվածի, 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի, 89-րդ հոդվածի 4-րդ կետի, 106-րդ հոդվածի 5-րդ մասի, 107-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներից բխում է, որ հենց Սահմանադրությամբ է նախատեսված հանրապետական և տեղական մակարդակով հարկային քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը:

ՍԴՈ–1142, 2 ապրիլի, 2014 թ.

7. .... Գործնականում 2006-2010 թվականներին սոցիալական վճարի միջոցով սոցիալական ապահովության խնդրի լուծման միջազգայնորեն համընդհանուր ճանաչում ստացած հայեցակարգն աստիճանաբար փոխարինվեց աշխատավարձից լրացուցիչ մասհանումների միջոցով կենսաթոշակի պարտադիր կուտակային բաղադրիչ ձևավորելու հայեցակարգով: Արդյունքում՝ գործատուն, որպես իր իսկ աշխատողների սոցիալական ապահովության խնդիրների լուծման անմիջական մասնակից, դուրս մղվեց այս իրավահարաբերություններից, պետությունը հարկատուների հաշվին ստանձնեց լրացուցիչ պարտավորություններ, անհստակություն մտցվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման և 45-րդ հոդվածով նախատեսված՝ այդ իրավունքի իրացման նախադրյալների ու երաշխիքների ապահովման սահմանադրաիրավական մոտեցումները կյանքի կոչելու հարցերում:

ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՍԴՈ–816, 18 հուլիսի, 2009 թ.

8. .... Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետի և հարկային օրենսդրության համադրված վերլուծությունից բխում է, որ Սահմանադրությունը «հսկողություն» և «վերահսկողություն» հասկացությունների բովանդակային ծավալը չի սահմանափակում միայն ստուգ-

մամբ, ուսումնասիրությամբ և տեսչական ստուգմամբ: ՀՀ օրենքներով «հսկողություն» և «վերահսկողություն» հասկացությունների բովանդակային ծավալում կարող են ներառվել նաև այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են հսկողության և վերահսկողության իրականացման համար և կազմում են հսկողական և վերահսկողական գործառույթների իրականացման գործընթացի փուլեր:

.... Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին պարբերության, 83.5. հոդվածի 3-րդ կետի, 89 հոդվածի 4-րդ կետի դրույթների բովանդակությունը, ինչպես նաև սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարները հաշվարկելուն ուղղված գործունեությունն իրենից ներկայացնում է **սեփականատիրոջ՝ պետության առջև տնտեսավարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովող գործունեություն,** որը չի ներառվում տնտեսավարող սուբյեկտի «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակային ծավալներում: Հետևաբար, բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունը, այն է՝ գույքի օգտագործման, ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ընթացքը և դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, այլ վերջինիս կողմից սեփականատիրոջ առջև ստանձնված **պայմանագրային պարտավորությունների կատարումը:** Ըստ այդմ էլ, Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետը չի պարտադրում, որ պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության և դրանց իրականացման համար անհրաժեշտ մյուս գործողությունների իրականացման կարգերը սահմանվեն օրենքով: Դրանք կարող են սահմանվել նաև կառավարության որոշմամբ:

Ինքնանպատակ չէ այն, որ ի տարբերություն հսկողական և վերահսկողական գործառույթների իրականացման գործընթացի փուլեր հանդիսացող վերստուգման, չափագրման, հսկիչ գնման, հարկվող օբյեկտների հաշվարկի և վերահաշվարկի (գնահատման և վերագնահատման) կարգերի, որոնք անմիջականորեն առնչվում են տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությանը և սահմանված են օրենքով, հսկողական և վերահսկողական գործառույթների իրականացման գործընթացի փուլեր հանդիսացող **հարկային պարտավորությունների** հաշվարկի և վերահաշվարկի (գնահատման և վերագնահատման), հարկային հաշվարկների ճշտման և հարկային պարտավորությունների ճշգրտման կարգերը, որոնք անմիջականորեն առնչվում են տնտեսավարող սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում պարտավորությունների կատարմանը, օրենքի հիման վրա սահմանված են կառավարության որոշմամբ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ պետական մարմինների (պաշտոնատար անձանց) հսկողության (վերահսկողության) և դրանով պայմանավորված՝ անձի իրավունքների և ազատությունների իրացման հնարավոր շրջանակների օրենսդրական կարգավորման խնդրին:

ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 6, 8, 14, 14.1., 18, 19, 42, 42.1. և «պետություն – անձ» սահմանադրաիրավական հարաբերություններ կարգավորող այլ հոդվածների, ինչպես նաև սույն գործով վիճարկվող, դրանց հետ փոխկապակցված օրենսդրության այլ ակտերի, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր վերլուծությունը վկայում է, որ հսկողությունը (վե-

րահսկողությունը) պետության (վերջինիս անունից հանդես եկող մարմինների, պաշտոնատար անձանց) կարևորագույն գործառույթներից է, որի նպատակը պետք է լինի հասարակական կյանքի բոլոր բնագավառներում (այդ թվում՝ տնտեսավարման) օրինականության ապահովումը: Դա հավասարապես պետք է վերաբերի ինչպես ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության իրականացմանը, այնպես էլ այդ գործունեության արդյունքում իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների պայմանագրային պարտավորությունների կատարմանը: Հասարակական հարաբերությունների այդ բնագավառները կարգավորող օրենսդրության խնդիրը՝ կապված ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերում ամրագրված սկզբունքների ու պահանջների իրացման հետ, տնտեսավարման բնագավառում վարքագծի միասնական կանոնների կատարումն ապահովելն է, որը ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության սահմանադրական պարտականությունն է:

ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

ՍԴՈ–920, 12 հոկտեմբերի, 2010 թ.

6. .... **Միայն վիճարկվող նորմի նման ընկալումը կարող է համապատասխանել սույն հոդվածի իրավակարգավորման տրամաբանությանն ու նպատակին:**

Միաժամանակ, նկատի ունենալով, որ վիճարկվող նորմում՝ «այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը» արտահայտությունը կարող է թույլ տալ նորմի այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վիճարկվող նորմով նախատեսված պատասխանատվությունը կարող է կիրառվել նաև հայտարարագրման սահմանված կարգից ցանկացած շեղման դեպքում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով նախատեսված արարքի համար անձի վարչական պատասխանատվությունն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ այդ պատասխանատվությունը նպատակաուղղված է մաքսային պարտավորությունների կատարումն ապահովելու՝ վերը նշված իրավաչափ նպատակին հասնելուն: Հետևաբար, այն դեպքում, երբ տեղափոխվող ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելը չի հանգեցրել ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի նվազեցմանը և ըստ այդմ չի հանգեցրել օրենքով սահմանված կարգով և չափով մաքսատուրք վճարելու սահմանադրական պարտականության ոչ պատշաճ կատարմանը, նշված արարքի համար պատասխանատվությունը՝ վիճարկվող նորմով սահմանված չափով, դառնում է ինքնանպատակ և չի բխում վիճարկվող նորմի ընդհանուր իրավակարգավորման առարկայից:

8. .... Հետևաբար՝ **մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր,** հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի և տեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պատասխանատու սուբյեկտին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորված անձը գործում է տեղափոխողի անունից և ի շահ վերջինիս՝ համապատասխան ակտի հիման վրա տրամադրված լիազորությունների շրջանակներում, և հայտարարագրումն իրականացնում է տեղափոխողի տրամադրած տեղեկատվության հիման վրա՝ այդ լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության

համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա տեղափոխողը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձևավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատասխանատվությունը և բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ որևէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, թույլ չի տալիս արդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը, այն է՝ ապահովել տնտեսավարող սուբյեկտի կողմից՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը:

Այս խնդրի իրավակարգավորումը հետագա համակարգային բարեփոխման անհրաժեշտություն ունի:

ՍԴՈ-1153, 3 հունիսի, 2014 թ.

6. .... Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապրանքներ վերցնելու ինստիտուտը կոչված է ապահովելու մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթի արդյունավետությունը, որը հնարավորություն է ընձեռում մաքսային մարմնին հայտնաբերելու և կանխելու մաքսային իրավախախտումները: Իսկ վերջինն այն հանրային շահն է, որն արդարացնում է ապրանքներ տեղափոխող անձանց իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը: ....

7. .... Սեփականությունից զրկելու տեսանկյունից վիճարկվող դրույթի գնահատման համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթն ուսումնասիրել դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթների հետ, այդ թվում բացահայտել վիճարկվող դրույթը ներառող իրավանորմի հետապնդած նպատակը: Այսպես, Մաքսային օրենսգրքի՝ վիճարկվող խմբագրությամբ 224-րդ հոդվածը սահմանում է՝ անձը, որից սույն օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով կամ տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով վերցվել են ապրանքներ՝ անկախ սեփականության պատկանելությունից, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների և պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Վիճարկվող կանոնակարգման համատեքստում ապրանքների վերցման նպատակն ուղղակիորեն բխում է նույն այդ կանոնակարգումից, մասնավորապես՝ ապրանքները վերցվում են տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով: Նշված բնորոշումից ակնհայտ է, որ այն հանդես չի գալիս որպես պատասխանատվության միջոց, չնայած որ իրականացվում է անձի կամքին հակառակ՝ որպես հարկադիր գործողություն (այսինքն՝ պետության կողմից կիրառվող հարկադրանքի միջոց է), քանզի տարբեր են սեփականությունից զրկելու և քննարկվող ինստիտուտի նպատակները: Սեփականությունից զրկելը դիտվում է որպես պատասխանատվության միջոց, որն առաջացնում է անբարենպաստ հետևանքներ սեփականատեր անձի համար օրենքի պահանջներին չհամապատասխանող վարքագիծ դրսևորելու պարագայում, իսկ խնդրո առարկա իրավակարգավորումը պատասխանատվության միջոց չէ, այլ միտված է ապահովելու անձի կողմից օրենքով նախատեսված պարտավորության կատարումը: Բացի դրանից, այն հանգամանքը, որ ապրանքների վերցնումն իրականացվում է պարտավորության կատարումն ապահովելու նպատակով, վկայում է, որ պարտավորության կատարման արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակումները վերանալու են, այսինքն՝ ապրանքների վերցման պարագայում երաշխավորվում է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնումը, մինչդեռ սեփականությունից զրկելն անվերապահ է: Այս մասին է վկայում նաև Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ «....կարող է դրանք ստանալ տու-

գանքի վճարումից, մաքսային վճարների և պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում»:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքին՝ խնդրո առարկա միջամտությունն իր բնույթով չի հանդիսանում սեփականությունից զրկում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի իմաստով:

8. .... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև վիճարկվող դրույթի ուժով սեփականության զրկում տեղի չի ունենում, այնուհանդերձ, ի հայտ է գալիս անձի սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորություններից օգտվելու հնարավորությունների բացակայություն, քանի որ ակնհայտ է, որ վերցման ենթարկված գույքը, որոշակի ժամանակահատվածում որպես սեփականություն հանդիսացող օբյեկտ, սեփականատիրոջ կողմից տնօրինվել, օգտագործվել կամ կառավարվել չի կարող: Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել քննության առարկա կանոնակարգումը ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունքը շրջակա միջավայրի պաշտպանության, այլ անձանց, հանրության, պետության իրավունքների և օրինական շահերի հետ ներդաշնակ իրականացնելու սահմանադրաիրավական սկզբունքի տրամաբանության լույսի ներքո: Ինչպես նշվեց, վիճարկվող կանոնակարգումը նպատակ է հետապնդում ապահովել մաքսային իրավահարաբերությունների շրջանակներում տուգանքի, մաքսային վճարների գանձումը, այսինքն՝ կոչված է ապահովելու համապատասխանաբար տուգանք վճարելու, մաքսային վճար կատարելու համար պատասխանատու անձի կողմից իր պարտավորության կատարումը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1073 որոշմամբ, քննության առնելով հարկային իրավահարաբերությունների շրջանակներում կիրառվող արգելանքի ինստիտուտը, որը կոչված է ապահովելու անձի կողմից իր հարկային պարտավորությունների կատարումը, որոշակի իրավապայմանների առկայության պայմաններում իրավաչափ է համարել սեփականության իրավունքի սահմանափակումը՝ ի կատարումն ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված՝ անձի պարտավորության: Այդուհանդերձ, սույն գործով վիճարկվող դրույթը, նախատեսելով սեփականության իրավունքի սահմանափակում՝ առանց վերոնշյալ որոշման մեջ արձանագրված իրավապայմանների, միաժամանակ տարբերակում չի դնում իրավախախտում կատարած սուբյեկտի և այլ սուբյեկտների սեփականության հարցում: Եթե ՍԴՈ-1073 որոշմամբ քննության առնված սեփականության իրավունքի սահմանափակումն իրացվում է ի ապահովումն անձի կողմից իր պարտավորությունների կատարման՝ իր իսկ գույքի հաշվին, այն էլ ոչ ամբողջ, այլ միայն չկատարված պարտավորության չափով, ապա Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված կանոնակարգման պայմաններում ոչ միշտ է, որ անձի մեղքով օրենքի խախտման հետևանքով իր սեփականության իրավունքն է սահմանափակվում՝ որպես երաշխիք ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների կատարման: Քննարկվող կանոնակարգման պայմաններում հնարավոր է երկու իրավիճակ՝ առաջինը, երբ անձը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, երկրորդ դեպքում՝ այլ անձի կամ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքը: Մասնավորապես, նման իրավիճակ է առաջանում, երբ ապրանք տեղափոխողն օգտվում է մաքսային բրոքերի (միջնորդ) ծառայություններից՝ քաղաքացիաիրավական պարտավորությունների շրջանակներում: Եթե առաջին դեպքում սեփականության իրավունքին միջամտությունը կարող է իրավաչափ համարվել, քանզի անձն իր իսկ մեղքով թույլ տրված խախտման համար ենթարկվում է վարչական տույժի, և որպես դրա կատարման երաշխիք՝ իր գույքի նկատմամբ նրա սեփականության իրավունքն է սահմանափակվում, ապա երկրորդ դեպքում անձը կրում է բացասական հետևանքներ՝ անկախ իր մեղքից, մեկ այլ անձի վարքագծի (գործողությունների կամ ան-

գործության)՝ այսինքն, վերջինիս կողմից ստանձնված քաղաքացիաիրավական պարտականությունների ոչ պատշաճ կատարման պատճառով:

.... Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ անձի ոչ իրավաչափ վարքագծով (գործողությունով կամ անգործությամբ) պայմանավորված անձի սեփականության իրավունքի սահմանափակումը՝ ապահովելու համար խախտումը թույլ տված անձի կողմից իր պարտավորության կատարումը, հանդես է գալիս որպես ոչ իրավաչափ միջամտություն իրավախախտում թույլ չտված անձի սեփականության իրավունքի նկատմամբ և աղերսներ չունի մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի բնականոն ընթացքի երաշխավորման անհրաժեշտության հետ:

9. Անդրադառնալով վիճարկվող կանոնակարգման կիրառման համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների հիմնահարցին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Մաքսային օրենսգրքում բացակայում են այն երաշխիքները, որոնց համադրության լույսի ներքո է բացառապես ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչել սեփականության իրավունքի իրացման հնարավորության սահմանափակումը՝ որպես ՀՀ Սահմանադրության 45–րդ հոդվածով նախատեսված պարտավորության իրացման ապահովմանն ուղղված՝ ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրաիրավական սկզբունքի դրսևորման ձև: ՍԴՈ–1073 որոշմամբ մատնանշված երաշխիքներն առավելապես հանգում են նրան, որ պարտավորությունների կատարումն ապահովելու համար գույքի նկատմամբ արգելանք/վերցնում կարող է կիրառվել պարտավորությունների կատարումն այլ միջոցներով ապահովելու բոլոր հնարավորություններն սպառելուց հետո: Մինչդեռ սույն գործով քննության առարկա իրավիճակում գույքը վերցվում է անմիջապես՝ անկախ սեփականության պատկանելությունից, հետևաբար՝ ոչ իրավաչափ եղանակով: Բացի դրանից, Մաքսային օրենսգրքում չկան գույքի վերցման այլընտրանքային կառուցակարգեր, մինչդեռ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում արգելանքի ինստիտուտի սահմանադրականության հարցը քննելիս սահմանադրական դատարանն այդպիսիների առկայությունը դիտարկել է որպես գործուն կառուցակարգ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու հարցում: Մաքսային օրենսգրքում բացակայում է նաև գույքի այն տեսակների ցանկը, որոնց պահումն արգելվում է: Մինչդեռ նման կանոնակարգման առկայությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքում ևս ՍԴՈ–1073 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է որպես արգելանքի իրացման ընթացքում կարևոր երաշխիք:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ Մաքսային օրենսգրքի վիճարկվող դրույթից պարզ չի դառնում, թե տուգանք նշանակելու պարագայում գույքի սեփականատերը կարող է վճարել տուգանքն իրավախախտում կատարած սուբյեկտի փոխարեն, թե՝ ոչ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման հնարավորության բացակայության պայմաններում մեծանում է անձի իրավունքների խախտման ռիսկը, քանի որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման վերացումը պայմանավորվում է մեկ այլ անձի վարքագծով, և գույքի սեփականատերը իրավախախտում կատարած սուբյեկտի կողմից երկարատև ժամանակահատվածում տուգանքը չվճարելու պարագայում կարող է կրել լուրջ ֆինանսական և այլ կորուստներ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեև սեփականության իրավունքի իրացումը կարող է ժամանակավորապես կասեցվել տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման նպատակով, սակայն այս հիմքով սեփականության իրավունքին միջամտության օրենսդրական կանոնակարգումը պետք է հնարավորություն ընձեռի անձին պաշտպանելու իր իրավունքը: Անձի սեփականության իրավունքին միջամտությունը պետք է բխի տվյալ անձի կողմից տուգանքի և մաքսային վճարի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է լինի բավարար և անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար, իրա-

վասու մարմնի լիազորությունը և այդ լիազորության ընթացակարգը պետք է որոշակիորեն ամրագրված լինեն օրենսդրական մակարդակում՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտացոլված՝ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալին.

նախ՝ վեճի առարկա իրավակարգավորումը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (մասնավորապես՝ 41–րդ հոդվածի 1–ին մաս, 36–րդ հոդվածի 4–րդ մաս) պահանջներին,

երկրորդ՝ Մաքսային օրենսգրքով սահմանված չէ մաքսային տուգանքների և պարտավորությունների կատարման նպատակով ապրանքներ վերցնելու ընթացակարգ, իսկ 224–րդ հոդվածում «վերցնել» եզրույթը, ի տարբերություն 212–րդ հոդվածով նախատեսված՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտների առնչությամբ գործողության, վերաբերում է ոչ թե մաքսային իրավախախտումների բացահայտմանն ու կանխարգելմանը, այլ տուգանքի, մաքսային վճարների և պարտավորությունների կատարման ապահովմանը,

երրորդ՝ վեճի առարկա իրավադրույթի կիրառման պայմաններում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ վերցված ապրանքը հետագայում չի կարող դառնալ բռնագանձման առարկա, որի պարագայում այդ ապրանքը վերցնելը չի կարող նպատակ ունենալ ապահովելու մաքսային տուգանքների և վճարների կատարման պարտականությունը,

չորրորդ՝ վիճարկվող դրույթն այնքանով, որքանով տարբերակում չի դնում տարբեր սեփականատերերի գույքի միջև և առաջացնում է անբարենպաստ իրավական հետևանքներ այն սուբյեկտների համար, որոնց վարքագծով պայմանավորված չէ իրավախախտման փաստը, հանգեցնում է վերջիններիս սեփականության իրավունքի իրացման ոչ իրավաչափ միջամտության:

ՍԴՈ–1176, 2 դեկտեմբերի, 2014 թ.

5. Սահմանադրական դատարանն անդրադառնալով օրենսգրքի՝ դիմողի կողմից սույն գործով վիճարկվող 95–րդ հոդվածի 1–ին մասի սահմանադրականության հարցին, հարկ է համարում արձանագրել, որ օրենսգրքի՝ դիմողի մասնակցությամբ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ տեքստի 86 և 87–րդ հոդվածների, 88–րդ հոդվածի 1–ին մասի «ա» կետի, 95–րդ հոդվածի 5–րդ մասի, 96–րդ հոդվածի 1–ին մասի, 128–134–րդ հոդվածների վերլուծությունից բխում է, որ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխողը պարտավոր էր հայտարարագրել մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը, **և առկա չէր որևէ խոչընդոտ, որպեսզի վերջինս մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հաշվարկեր գործարքի գնի մեթոդով կամ ինքնուրույնաբար ընտրեր մաքսային արժեքի որոշման եղանակը՝** առանց ՀՀ մաքսային օրենսգրքի նախորդ խմբագրությամբ տեքստի 95–րդ հոդվածի 1–ին մասին համապատասխան՝ մաքսային արժեքի չափի և դրա որոշման եղանակի մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ մաքսային մարմիններին դիմում ներկայացնելու:

Այլ խնդիր է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների հնարավոր անհամաձայնությունը, որպիսի իրավահարաբերությունը կարգավորված էր և ներկա պահին կարգավորվում է ՀՀ մաքսային օրենսգրքի 96–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերի դրույթներով:

Ավելին, ավտոմեքենան երբևէ հայտարարագրված չլինելու և դիմողի՝ 20.07.2012 թվականի դիմումը ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 95–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն ներկայացված լինելու հանգամանքն ընդունել է նաև դիմողը, ինչը հաստատված է դիմողի գործով ընդունված վերջնական դատական ակտով,

այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 26.12.2013 թվականի թիվ ՎԴ/5445/05/12 վարչական գործով կայացրած որոշմամբ:

Վերոգրյալը համադրելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի, 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 7-րդ մասի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման մեջ անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումների հետ, սահմանադրական դատարանն ակնհայտ անհիմն է համարում օրենսգրքի նախորդ խմբագրությամբ տեքստի՝ դիմողի կողմից վիճարկվող 95-րդ հոդվածի 1-ին մասի հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները:

.... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը չպետք է որևիցե կերպ ոտնահարվի օրենսդրական տեխնիկայի նման թերությունների և բացթողումների պատճառով: Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ վերադասության կամ դատական կարգով պետք է բողոքարկելի լինեն և **«մերժման եզրակացությունը»** (նման դատական բողոքարկման հնարավորություն նախատեսված է օրենսգրքի քննարկվող հոդվածի 3-րդ մասում), և **«վերջնական որոշումը»** կամ **«մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ որոշումը»,** որոնք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 53-ի համաձայն՝ դիտվում են որպես վարչական ակտեր: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքները:

Սահմանադրական դատարանը միաժամանակ փաստում է, որ, առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով, մաքսային մարմինը, հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ կապված անհամաձայնության դեպքում, պարտավոր է օրենսգրքով սահմանված ժամկետներում դրա վերաբերյալ կայացնել պատճառաբանված եզրակացություն և/կամ որոշում, **և անկախ հայտարարատուի գրավոր կամ բանավոր պահանջից՝** պետք է հայտարարատուին տրամադրի նշյալ եզրակացությունը և/կամ որոշումը՝ վերջինիս կողմից Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու համար: **Իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրաիրավական առումով իրավաչափ նման մոտեցմամբ:**

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԴՈ-967, 7 հունիսի, 2011 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանը չի ընդունում պատասխանող կողմի միջնորդությունը՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ, գտնելով, որ գործի ըստ էության քննությունը կարևոր է վեճի առարկա իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից:

6. ....

Նման պայմաններում, չբացառելով այն հանգամանքը, որ, ինչպես պնդում է դիմողը, շահութահարկի վճարման կարգը չի ներառում շահութահարկի դրույքաչափը, և վերջինս չի կարող դիտարկվել որպես վճարման կարգի բաղադրատարր, սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի դիրքորոշումները՝ կապված այն հանգամանքների հետ, որ օրենքի վիճարկվող նորմում առկա էր իրավական անորոշություն, կամ օրենքը (մինչև 09.01.2009 թ. խմբագրությամբ) չէր սահմանում Հայաստանի Հանրապետությունում ստո-

ռաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտի շահութահարկի վճարման կարգը և շահութահարկի դրույքաչափը՝ հարկային գործակալի բացակայության դեպքում, կամ օրենքի (մինչև 09.01.2009 թ. խմբագրությամբ) 61-րդ հոդվածը սահմանում էր շահութահարկի դրույքաչափ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենքի առանձին հասկացությունների բովանդակությունը չի կարող ինքնաբավ լինել: Դրանք պետք է դիտարկել ընդհանուր իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ:

Ինչ վերաբերում է իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ դիմողի պնդումներին, ապա փաստն այն է, որ վեճի առարկա իրավանորմի առնչությամբ առկա չէ հակասական իրավակիրառական պրակտիկա, և դատական պրակտիկան հստակ առաջնորդվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի պահանջներով:

7. Անդրադառնալով վիճարկվող իրավանորմը խտրական վերաբերմունքի բացահայտման տեսանկյունից դիտարկելու խնդրին՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ՝ պարզել, թե արդյո՞ք հարկային գործակալի առկայությունը կամ բացակայությունը հանդիսանում էր բավարար հիմք ոչ ռեզիդենտների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու կամ վերջիններիս որպես տարբեր իրավական կարգավիճակ ունեցող սուբյեկտներ դիտարկելու համար:

Նշված հանգամանքների բացահայտումը կարևորվում է նրանով, որ օրենքի՝ դիմողի կողմից շահութահարկ վճարելու պարտականության ծագման պահին գործող տեքստի 57, 61 և 33-րդ հոդվածների համաձայն, պայմանավորված հարկային գործակալի առկայությամբ կամ բացակայությամբ, ոչ ռեզիդենտների համար սահմանված էին շահութահարկի տարբեր դրույքաչափեր: Մասնավորապես, կախված եկամտի տեսակից՝ հարկային գործակալի առկայության դեպքում ոչ ռեզիդենտների համար որպես շահութահարկի դրույքաչափ սահմանված էր 5 կամ 10 տոկոս, իսկ հարկային գործակալի բացակայության դեպքում ոչ ռեզիդենտների համար, անկախ եկամտի տեսակից՝ 20 տոկոս:

Հարկային քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս պետությունն օժտված է որոշակի հայեցողությամբ: Հարկային իրավահարաբերությունները կարող են ունենալ բազմաթիվ առանձնահատկություններ, դրանց բովանդակությունը կարող է հաճախակի փոփոխությունների ենթարկվել, իսկ այդ փոփոխությունները պայմանավորված լինեն պետության ֆինանսատնտեսական քաղաքականությամբ, զարգացման առաջնահերթություններով, ռազմավարական խնդիրները լուծելու պահանջով, տնտեսական հարաբերությունները կատարելագործելու, տնտեսության որոշակի ոլորտների զարգացումը խրախուսելու, ինչպես նաև հարկային վարչարարությունը կատարելագործելու նպատակով: Նշված այս հանգամանքների կամ դրանցից որևէ մեկի առկայությունը կարող է հիմք ծառայել հարկային քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնելու, հարկային իրավահարաբերություններում արտոնություններ կամ առավել բարենպաստ պայմաններ սահմանելու համար: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ այս ամենի իմացությամբ և իր ազատ կամաարտահայտմամբ է մտնում տնտեսական հարաբերությունների մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է: Մինչդեռ տվյալ դեպքում նման իրավիճակ առկա չէ: Օրենքի (մինչև 09.01.2009 թ. խմբագրությամբ) վերլուծությունը վկայում է, որ, ելնելով վերոգրյալ նպատակներից, օրենսդիրը սահմանել էր որոշակի հարկային քաղաքականություն՝ իրավաչափորեն տարբերակում դնելով ոչ ռեզիդենտ հարկատուների եկամուտների հարկման միջև՝ հիմք ընդունելով հարկային գործակալի առկայության կամ բացակայության հստակ չափանիշը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ

դեպքում վերը նշված նպատակներով պայմանավորված՝ հարկային գործակալի առկայության կամ բացակայության հիմքով ոչ ռեզիդենտների միջև տարբերակումը, որը սահմանված էր մինչև 09.01.2009 թ. խմբագրությամբ օրենքի տեքստում, բացառել է, որպեսզի հարկային գործակալի առկայության և բացակայության պայմաններում հարկվող ոչ ռեզիդենտները դիտարկվեն որպես նույն իրավիճակում գործող սուբյեկտներ: Դրանք, օրենքով սահմանված որոշակի կարգի առկայության պայմաններում, տնտեսական հարաբերությունների մեջ են մտել միանգամայն կանխատեսելի վարքագծով և տարբեր իրավիճակներում գործող սուբյեկտներ են: Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհիմն է համարում նաև դիմողի այն դիրքորոշումը, որը կապված է վիճարկվող իրավանորմի գործողության հետևանքով իրավահավասարության սկզբունքի խախտման հետ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտները Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս կարող էին և պետք է տեղյակ լինեին օրենսդրությամբ սահմանված այլընտրանքային հնարավորությունների մասին՝ կապված հարկային գործակալի առկայության կամ բացակայության դեպքում ոչ ռեզիդենտներին ցուցաբերվող տարբերակված մոտեցման մասին, և հնարավորություն ունեին ընտրություն կատարել իրենց ընձեռված հնարավորությունների սահմաններում:

ՍԴՈ–1203, 28 ապրիլի, 2015 թ.

8. .... Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–1139 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հասարակության և պետության համար իրենց ոչ բարենպաստ հետևանքներ առաջացնելու ծանրությամբ, պահպանվող հասարակական հարաբերություններին պատճառվելիք վնասով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ հարկային իրավախախտումներ սահմանող նորմերն իրենց ամրագրումն են գտել ոչ միայն հարկային օրենսդրության մեջ, այլև վարչական իրավախախտումների վերաբերյալ, ինչպես նաև քրեական օրենսգրքերում: Բացի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված վարչական պատասխանատվությունից, ՀՀ քրեական օրենսգրքի 189–րդ, 205–րդ և 328–րդ հոդվածներով նախատեսված են կոնկրետ հանցակազմեր և համապատասխան պատժամիջոցներ՝ հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերում: Այսպիսով, նպատակ ունենալով երաշխավորել հարկեր և տուրքեր վճարելու՝ անձանց սահմանադրական պարտականության կատարումը, օրենսդիրը նախատեսել է իրավական պատասխանատվության կոնկրետ տեսակներ (հարկային, վարչական, քրեական), որոնց խստությունը, կիրառման իրավական հետևանքներն անմիջականորեն պայմանավորված են հարկային այս կամ այն պարտավորության չկատարման (ոչ պատշաճ կատարման) հասարակական վտանգավորության աստիճանով: Մասնավորապես, եթե «Հարկերի մասին» ՀՀ օրենքով կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հարկային պարտավորության չկատարումը (ոչ պատշաճ կատարումը) առաջացնում է նյութական պատասխանատվություն (համապատասխանաբար՝ հարկային և վարչական պատասխանատվություն), ապա նույն արարքը, ըստ սուբյեկտիվ հատկանիշի, քրեորեն պատժելի է չարամտության դրսևորման կամ ծանրացուցիչ այլ հանգամանքների առկայության դեպքերում: Հետևաբար, իր բնույթով ու բովանդակությամբ հարկային պարտավորությունից խուսափելն անհարիր է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 45–րդ հոդվածում, այլ, նախ և առաջ՝ Սահմանադրության 1–ին, 3–րդ և այլ հոդվածներում ամրագրված իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքներին, ուստի այդ արարքի՝ օրենքով նախատեսված պատժելիությունը հետապնդում է իրավաչափ նպատակ»:

.... Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ իր ՍԴՈ–1139 որոշման մեջ մանրամասն անդրադարձել է հարկային և վարչական պատասխանատվությունների

տարանջատման հիմնահարցերին, մասնավորապես, հայտնել է այն դիրքորոշումը, որ հարկային պարտավորությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) բնութագրիչներ պարունակող արարքի որակման և իրավագնահատման հարցում (եթե բացակայում են հանցակազմի հատկանիշները) օրենսդիրն ըստ էության **տարանջատել է վարչական և հարկային պատասխանատվության տեսակները**:

ՀՀ սահմանադրական դատարանն իր վերոնշյալ որոշմամբ արձանագրել է, որ «օրենսդիրը, առաջնորդվելով իր հայեցողական լիազորություններով, տարանջատել է հարկային և վարչական պատասխանատվության բնագավառները՝ նկատի ունենալով հարկային հարաբերությունների կարգավորման սահմանադրաիրավական առանձնահատուկ կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ սահմանադրական կարգի ու օրինականության պահպանման համատեքստում: Այդ տարանջատումն ինքնին հետապնդում է իրավական որոշակի նպատակ և սահմանադրականության խնդիր չի հարուցում»:

9. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորման կիրառման ժամանակ պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, թե արդյոք շահույթի հաշվարկում վնասի պակաս ցույց տալը հանգեցրել է հարկի նվազեցման, թե՝ ոչ, այսինքն՝ արդյոք պետությանը հասցվել է գույքային վնաս, թե՝ ոչ: Հակառակ պարագայում վիճարկվող դրույթը հանդես կգա որպես վարչական պատասխանատվությանը բնորոշ կանխարգելիչ, դաստիարակչական իրավակարգավորիչ գործառույթից բխող պատասխանատվության ինստիտուտ նախատեսող դրույթ:

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված՝ վեճի առարկա դրույթը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ վնասի ոչ ճիշտ հաշվարկը հանգեցնում է շահութահարկի գծով պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման: Իրավակիրառ պրակտիկայում տվյալ դրույթը չի կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ.

ա) նույն արարքի համար առաջանա կրկնակի պատասխանատվություն,

բ) տուգանք նշանակվի և գանձվի այն պարագայում, երբ տարբեր պատճառներով ավելի մեծ ցույց տրված վնասը չի հանգեցրել հարկային պարտավորությունների չկատարման:

Այս մոտեցումը պետք է որդեգրվի նաև հինգ տարվա ընթացքում փոխանցվող վնասի հաշվարկման դեպքում: Իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներից չի բխում այն մոտեցումը, երբ նախապես տուգանք կարող է սահմանվել և հաշվարկվել ենթադրյալ (հնարավոր) խախտումների համար:

Սահմանադրական դատարանի սույն իրավական դիրքորոշումները համակարգային ձևով իրենց իրացումը պետք է գտնեն ինչպես «Շահութահարկի մասին», այնպես էլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքներում:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ

ՍԴՈ-753, 13 մայիսի, 2008 թ.

6. .... Այսպիսով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ լիցենզավորված գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն ունեն երկու տեսակի պետական տուրք վճարելու պարտականություն, այն է՝ միանվագ վճարվող պետական տուրք, որը վճարվում է լիցենզիա տալու դիմաց, և տարեկան տուրք, որը վճարվում է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար: Հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակող ընկերությունների դեպքում՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրեն-

քի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին համապատասխան որպես լիցենզիա տալու դիմաց պետական տուրք հանդիսացող միանվագ վճար հանդես է գալիս «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 53 հոդվածով նախատեսված արտոնագրային վճարը, իսկ **լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար տարեկան պետական տուրքը** նախատեսված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.1. հոդվածի 9-րդ կետով:

ՍԴՈ-890, 25 մայիսի, 2010 թ.

5. .... Դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքն առանձնացնում է գույքային պահանջի և ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքերը՝ դրանց համար սահմանելով հաշվարկման միմյանցից էապես տարբերվող կարգ, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է այդ պահանջների բնույթով և առանձնահատկություններով: Գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքը համամասնական տուրք է, և հաշվարկվում է հայցագնի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, իսկ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող տուրքը պարզ տուրք է, և գանձվում է հաստատագրված գումարի չափով: Եթե հայցադիմումը ներառում է գույքային և ոչ գույքային պահանջներ, ապա օրենքը՝ այդ պահանջներից յուրաքանչյուրի քննությունը դիտարկելով որպես օրենքի իմաստով ինքնուրույն և առանձին գործողություն, պահանջում է, որ պետական տուրք վճարվի միաժամանակ և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջների առնչությամբ (հոդվ. 32, մաս 4)՝ այդպիսով հետապնդելով իրավաբանորեն հիմնավոր փաստարկված նպատակ:

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

....

7. Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում: Սույն գործի շրջանակներում զարգացնելով նշված իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատա-

րանը գտնում է, որ վերադաս դատարանի ակտի հիման վրա նոր քննության արդյունքում ստորադաս դատարանի կողմից ընդունված ակտը ևս հետապնդում է ինքնուրույն նպատակ՝ տվյալ գործի քննության գործընթացում կողմերի համար առաջացնելով իրավական նոր հետևանքներ: Հետևաբար, դատական նման ակտի արդյունքում առաջանում են նաև տվյալ ակտի բողոքարկման հետ կապված նոր իրավահարաբերություններ, որոնց պայմաններում դատաքննության արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վերադաս դատարանի կողմից վերահսկողության նոր օբյեկտ: Դրանով պայմանավորված՝ վերադաս դատարանը, վերահսկողություն իրականացնելով դատական ենթադրյալ սխալ պարունակող՝ ստորադաս ատյանի ինքնուրույն դատական ակտի նկատմամբ, կատարում է գործողություն, որն օրենքի իմաստով հանդիսանում է պետական տուրքի գանձման ինքնուրույն օբյեկտ: Ընդ որում, խնդրո առարկա իրավիճակում գանձվող պետական տուրքը ծառայում է այն նույն նպատակներին, ինչն այդ ինստիտուտն ունի ընդհանրապես, այն է՝ փոխհատուցել վերադաս դատարանի կողմից գործի քննության ծախսերը և ապահովել կողմերի դատավարական կարգապահությունը:

Բացի դրանից, հաշվի առնելով նաև, որ դիմողների մատնանշած իրավիճակում բողոք բերող կողմը շարունակում է օգտվել օրենսդրական այն երաշխիքներից, որոնք միտված են բացառելու դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը պետական տուրք վճարելու պարտականությամբ խոչընդոտելու հնարավորությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ պետական տուրք գանձվում է նաև նոր քննության արդյունքում ընդունված դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելիս, դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ խախտման առումով սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Այլ է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 09.11.2007 թ. թիվ 3-1400(ՎԴ) որոշման առկայության դեպքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 21.01.2008 թ. ընդունված թիվ 07-4326 քաղաքացիական գործով վերոնշյալ որոշման հիմնավորվածության ու իրավաչափության հարցը, որը, սակայն, առնչվում է օրենքի կիրառման ոլորտին և դուրս է օրենքի նորմի սահմանադրականության հարցով վեճի առարկայի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից այն քննության առնելու իրավասության շրջանակներից:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թ. սեպտեմբերի 30-ի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումն ընդունելիս ընդհանրապես չի անդրադարձել 03.09.2009 թ. ներկայացված վճռաբեկ բողոքում պետական տուրքի չվճարված մասով վճարումը հետաձգելու և հարցը վեճն ըստ էության լուծող դատական ակտով լուծելու միջնորդությանը:

9. ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության շրջանակներում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերը վերանայող դատարան է, հետևաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ դատարանում բողոքարկման օբյեկտն առաջին ատյանի դատարանի դատական ակտն է: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիման վրա վերահսկողություն է իրականացնում առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության նկատմամբ՝ դրանում տեղ գտած հնարավոր դատական սխալը վերացնելու նպատակով: Ուստի, եթե առաջին ատյանի դատարանում քննության առարկան մեկ կամ մի քանի պահանջ ներառող հայցապահանջն է, ապա վերաքննիչ դատարանում քննության առարկան ոչ թե առաջին ատյանի դատարան ներկայացված հայցապահանջում ներառված առանձին պահանջներն են, այլ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված ենթադրյալ դատական սխալը: Հետևաբար, գույքային և ոչ գույքային պահանջների առնչությամբ կայացված՝ առաջին ատյանի դատական ակտը կարող է

քննության առարկա դառնալ միաժամանակ գույքային և ոչ գույքային պահանջների առնչությամբ՝ իր ամբողջության մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների այն հարցադրումը, համաձայն որի՝ մի պահանջի առնչությամբ պետական տուրքի վճարումը պետք է հիմք հանդիսանա վերաքննիչ բողոքն ամբողջությամբ քննության ընդունելու համար, անհիմն է, պայմանավորված չէ վերաքննիչ դատարանի գործառույթով ու անիրագործելի է:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

5. .... «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22–րդ հոդվածի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ վերոհիշյալ դեպքերում հայցվորին պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն տրամադրելու հիմքում ընկած է այն ընդհանուր օրինաչափությունը, համաձայն որի՝ հատկապես հաշվի են առնվում նման արտոնություն տրամադրելու անհրաժեշտությունը պայմանավորող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են վնաս կրելու հետևանքով արդարացի փոխհատուցում պահանջող անձանց՝ սոցիալապես առավել անապահով վիճակում գտնվելը, կրած վնասի հնարավոր չափերը, հետևաբար՝ նաև գույքային բնույթի հայցապահանջներով պայմանավորված պետական տուրքի չափը:

7. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 4–րդ մասում և 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված՝ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության բովանդակությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունը հղում կատարելով օրենքին՝ միաժամանակ առաջադրում է տուժողին փոխհատուցելու այնպիսի կարգ սահմանելու պահանջ, որը պետք է երաշխավորի գործուն մեխանիզմ խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացման համար: Նման մեխանիզմի գոյությունը կարող է ապահովվել նաև այն դեպքում, երբ հատուցման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված դատական կարգը պետական տուրքի վճարումից ազատելու արտոնության ձևով արդարացի պայմաններ ստեղծի այդ իրավունքի իրացման համար, և այնպիսի դեպքերում, երբ փոխհատուցման իրավունքն անվիճելի է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով նախօրոք հաստատված է պետական իրավասու մարմնի, պաշտոնատար անձի այն գործողության (անգործության) փաստը, որի արդյունքում անձին պատճառվել է վնաս: Հետևաբար, օրենսդիրը պետք է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 4–րդ մասում և 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով **սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ և գործուն համակարգ:**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծության արդյունքում՝ սահմանադրական դատարանը, չբացառելով պետական տուրքի գծով արտոնություններ տրամադրելու՝ օրենսդրի հայեցողական ազատությունը, արձանագրում է, որ օրենքի 22–րդ հոդվածի 1–ին մասի դրույթները վերաբերում են ինչպես իրավապայմանագրային պարտավորություններով պայմանավորված, այնպես էլ՝ չպայմանավորված դեպքերին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի՝ վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքները ևս վերաբերում են իրավապայմանագրային պարտավորություններով չպայմանավորված վնասի փոխհատուցմանը, սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքի տեսանկյունից իրավաչափ չի համարում այն իրողությունը, երբ հետևողականություն չի դրսևորվում տվյալ իրավակարգավորման հարցում և պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն չի նախատեսվում արդարացված անձի համար, որը դատարան է դիմում իրեն պատճառված վնասի հատուցման պահանջով: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարագայում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22–րդ հոդվածի առաջին մասն առկա իրավակարգավորման շրջանակներում լիարժեք չի երաշխավորում ՀՀ Սահմանադրության

20-րդ հոդվածի 5-րդ մասի նորմատիվ կիրառումը՝ խոչընդոտելով տուժող հանդիսացող անձի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը:

Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը:

Նման վիճակից խուսափելու նպատակով է, որ բազմաթիվ երկրների (Սլովենիա, Էստոնիա, Ռուսաստանի Դաշնություն, Լատվիա, Լիտվա և այլն) նույնաբնույթ օրենքներում հստակ նորմ է սահմանվում, որ ապօրինի դատապարտման, ապօրինի քրեական պատասխանատվության ենթարկելու հետևանքով պատճառված վնասի հատուցման գործերով կողմերն ազատվում են պետական տուրքի վճարումից: Նախատեսվում է նաև արդարացվածի համար առավել մատչելի՝ վնասի հատուցման արտադատական ընթացակարգ:

Ըստ գործի նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ միայն նման ընթացակարգ գոյություն չունի, այլև ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ առաջին ատյանի դատարանի որոշման առկայության դեպքում, որով անձը ճանաչվել է տուժած և նախատեսվել է պատճառված վնասի հատուցում, վերաքննիչ բողոքի դեպքում նույնպես անձը չի ազատվում պետական տուրքի վճարումից: Փաստորեն ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու դեպքերում հասցված վնասի հատուցում պահանջելու համար անձն ստիպված է վճարել պետական տուրք, որի չափը կարող է ընդհուպ գերազանցել հատուցվելիք գումարը:

Սույն խնդիրը համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն ունի, որը պետք է, մի կողմից, հաշվի առնի, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետևանքով: Մյուս կողմից՝ արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը և նրա խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի էությունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուպ արգելափակել այն:

9. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԴՈ–803, 8 մայիսի, 2009 թ.

7. .... ՀՀ ընտրական օրենսգրքի 9 հոդվածի 1–ին մասը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը կազմում և վարում է քաղաքացիների՝ **ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող** Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)»: Ակնհայտ է, որ ընտրական իրավահարաբերությունների շրջանակներում **բնակչի հաշվառումն իրականացվում է ըստ նրա բնակության վայրի**: Նույն օրենսգրքի 10 հոդվածի 2–րդ մասի պահանջն է, որ «Նույն անձը կարող է ընդգրկվել **միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում** և **միայն մեկ անգամ**»:

Միաժամանակ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2002 թ. սեպտեմբերի 24–ին) 3 հոդվածը սահմանում է, որ «Ռեգիստրը բնակչության վերաբերյալ օրենքով սահմանված անհատական հաշվառման տվյալների տեղեկատվական համակարգ է, որն ստեղծվում է **Հայաստանի Հանրապետությունում բնակվող անձանց (անկախ քաղաքացիությունից),** ինչպես նաև օտարերկրյա պետություններում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ բնակիչների)՝ **ըստ բնակության վայրի հաշվառման նպատակով**»: Նույն օրենքի 7 հոդվածի 1–ին մասը սահմանում է, որ «Ռեգիստրում ընդգրկվելու համար Հայաստանի Հանրապետության **բնակիչը** պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին տրամադրել իր **մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն**, ինչպես նաև սույն օրենքի 5–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված անհատական տվյալները: **Մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան:** Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ռեգիստրին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը: **Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում**»: Այս դրույթներից նույնպես հետևում է, որ բնակիչը տեղական ռեգիստրում հաշվառվելու համար կարող է ունենալ միայն մշտական բնակության վայրի (կացարանի) մեկ հասցե և **պարտավոր է** այդ հասցեում օրենքով սահմանված ժամկետում հաշվառվել: Օրենքի 12 հոդվածի 3–րդ մասը սահմանել է, որ Հայաստանի Հանրապետությունում բնակվող այն անձինք, ովքեր հաշվառված չեն, **պարտավոր են** մինչև 2006 թ. հուլիսի մեկը հաշվառվել համապատասխան տեղական ռեգիստրներում: Ընդ որում, նույն հոդվածի 5–րդ մասի համաձայն բնակչության պետական ռեգիստրը գործում է 2006 թ. հուլիսի 1–ից:

Օրենքը ՀՀ կառավարությանն է լիազորել սահմանելու բնակչության հաշվառման կարգը: ՀՀ կառավարությունը 2005 թ. հուլիսի 14–ին ընդունել է թիվ 1231–Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին»: Այդ որոշմամբ ՀՀ կառավարությունը կանոնակարգել է բնակչության բոլոր խավերի,

այդ թվում՝ բնակության վայր չունեցող անձի, հաշվառման, ինչպես նաև սահմանված ժամկետներում չհաշվառվելու դեպքում պատասխանատվության կարգը և պարտավորեցրել է պետական կառավարման լիազոր մարմնին իրականացնել այն:

Օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառման համակարգի ներդրմամբ միաժամանակ սահմանվել է հաշվառման այնպիսի ընթացակարգ, որն ապահովում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր անձի հաշվառումը՝ միտում ունենալով բացառել հաշվառում չունեցող անձանց առկայությունը Հայաստանի Հանրապետությունում: Չհաշվառված անձի առկայությունը գործնականում հնարավոր է միայն տվյալ անձի կողմից՝ նշված օրենքով սահմանված իր պարտավորությունը չկատարելու դեպքում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ իրավակիրառական պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար, մասնավորապես, կարևոր է տարբեր օրենսդրական ակտերով «բնակչության հաշվառում» հասկացության առնչությամբ միասնական մոտեցման ապահովումը, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների համակարգված իրականացումը:

8. ՀՀ օրենսդրության վերոհիշյալ դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ **համայնքի ընտրողների ցուցակում** կարող են ընդգրկվել միայն տվյալ համայնքի՝ 18 տարին լրացած **ընտրական իրավունք ունեցող բնակիչները**, այսինքն՝ այն անձինք, որոնց մշտական բնակության վայրը տվյալ համայնքն է, և որոնք օրենքով նախատեսված ու ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հաշվառված են այդ համայնքում: Համապետական ընտրությունների ժամանակ այդ ցուցակներում կարող են ընդգրկվել նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասում նախատեսված ընտրական իրավունք ունեցող՝ տվյալ համայնքում չհաշվառված քաղաքացիները: Պատահական չէ, որ հիշյալ 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության մեջ չհաշվառված անձանց առումով խոսքը վերաբերում է ոչ թե «յուրաքանչյուր ոք»-ին, այլ «**քաղաքացիներ»-**ին, որոնք համապետական ընտրությունների ժամանակ ընտրական իրավահարաբերությունների միակ սուբյեկտն են: Իսկ Հայաստանի Հանրապետության **քաղաքացի** են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք:

Այս տրամաբանությունից է բխում նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 4-րդ մասի իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում ընդհանուր հիմունքներով ընդգրկվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ **ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք**»:

9. ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերությունը, ինչպես նշվեց, սահմանում է, որ «**Համայնքի ընտրողների ցուցակում** ընդգրկվում են սույն օրենսգրքի 2 հոդվածի համաձայն ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, ինչպես նաև այդ համայնքում բնակվող և որևէ համայնքում հաշվառում չունեցող, իսկ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նաև այլ համայնքում հաշվառված **քաղաքացիները**: Ընտրելու իրավունք ունեցող և հաշվառում չունեցող քաղաքացիները քվեարկության օրվանից մինչև 21 օր առաջ իրենց համայնքի ղեկավարին, իսկ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան մինչև 15 օր առաջ՝ նաև լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով

ներկայացնում են ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ հայտ: Հաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրողների ցուցակում ընդգրկվում են բնակության վայրի մասին տեղեկանքի հիման վրա»:

Այս պարբերության մեջ «.... իսկ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նաև այլ համայնքում հաշվառված քաղաքացիները» արտահայտությունն ակնհայտորեն վերաբերում է համապետական ընտրություններին, ուստի քննարկվող հարցի համատեքստում դատարանը դրան չի անդրադառնում: Միաժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի վերոհիշյալ պարբերությունը պարունակում է դրույթ, որը դուրս է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների իրավակարգավորման ընդհանուր տրամաբանությունից: Համայնքի ընտրողների ցուցակում ընդգրկվում են նաև «....այդ համայնքում բնակվող և որևէ համայնքում հաշվառում չունեցող.... քաղաքացիները»: Ինչպես նշվեց, ՀՀ Սահմանադրությունը համայնք է դիտարկում մեկ կամ մի քանի բնակավայրերի **բնակչության** հանրությունը (հոդվ. 104.1.): Իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի համաձայն՝ «**Համայնքի բնակիչ է այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքում**»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «այդ համայնքում բնակվող և որևէ համայնքում հաշվառում չունեցող» քաղաքացուն համայնքի ընտրողների ցուցակում ընդգրկելու դրույթը, ինչպես նաև այլ համայնքում հաշվառված և մեկ այլ համայնքի (քվեարկության օրը գտնվելու վայրի) ընտրողների ցուցակում ընդգրկելու իրավակարգավորումը հավասարապես վերաբերում են **համապետական ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների** կազմմանը, որը նույնպես իրականացվում է ըստ համայնքների, և այդ պատճառով ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ մասը սահմանում է ընդհանուր դրույթ, որ «Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում և միայն մեկ անգամ»: Ընդ որում, հաշվառման կարգի սահմանման իրավասությունը, ինչպես նշվեց, օրենքով վերապահված է ՀՀ կառավարությանը, որը 2005 թ. հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշմամբ սահմանել է բնակչության հաշվառման տարբերակված կարգ, ինչը և պետք է դրվի բնակչության հաշվառման գործի կազմակերպման ու հաշվառման փաստի հավաստման հիմքում:

ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 4-րդ մասի իրավական բովանդակությունը («**Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում** ընդհանուր հիմունքներով ընդգրկվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք») հստակ է ու որոշակի, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, ըստ վերոշարադրյալ իրավադրույթների, իրենց ընտրական իրավունքը կարող են իրացնել միայն տվյալ համայնքի **բնակիչները** կամ, ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի՝ **այն անձինք, ովքեր հաշվառված են տվյալ համայնքում և ունեն ընտրական իրավունք**:

Հետևաբար, դիմողների այն հարցադրումը, որ ընդհանրապես հաշվառում չունեցող անձը չի կարող ընդգրկվել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում, հիմնավոր է:

10. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի օրենսդրական կարգավորման փոփոխությունների ընդհանուր տրամաբանության վերլուծությանը: Ինչպես նշվեց, 1999 թ. փետրվարի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ ընտրական օրենսգիրքն ընդունվելուց հետո դրա 10-րդ հոդվածը

փոփոխվել է վեց անգամ (13.10.1999 թ. ՀՕ-2, 05.04.2000 թ. ՀՕ-47, 03.07.2002 թ. ՀՕ-406-Ն, 19.05.2005 թ. ՀՕ-101-Ն, 22.12.2006 թ. ՀՕ-1-Ն, 16.11.2007 թ. ՀՕ-219-Ն օրենքներ): Մինչև 2000 թվականի ապրիլի 5-ի փոփոխությունները տվյալ հոդվածում առանձին դրույթ նախատեսված չի եղել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներ կազմելու առանձնահատկության վերաբերյալ:

ՀՀ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 1999 թ. ՍԴՈ-179 որոշման պահանջներից ելնելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000 թ. ապրիլի 5-ին ընդունված՝ «ՀՀ ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքով սահմանվեց, որ.

«ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2 հոդվածի առաջին կետում «քաղաքացիները» բառից հետո լրացնել հետևյալ բառերը.», իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նաև Հայաստանի Հանրապետությունում **փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտանիքի վկայականում նշված՝ 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ:**

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտանիքի վկայականում նշված՝ ընտրական իրավունքով օժտված անձանց վրա»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենսգրքի 10 հոդվածի առաջին կետի 2-րդ մասում «ընդհանուր հիմունքներով ընդգրկվում են նաև» բառերից հետո լրացնել «**Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտանիքի վկայականում նշված, տվյալ համայնքում առնվազն վերջին մեկ տարում բնակվող՝ 18 տարին լրացած անձինք» բառերը**»:

2002 թ. հուլիսի 3-ի օրենսդրական փոփոխության արդյունքում 10 հոդվածի 1-ին կետի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներում ընդհանուր հիմունքներով ընդգրկվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք»:

2005 թ. մայիսի 19-ի ՀՕ-101-Ն օրենքով կատարված փոփոխությունների ժամանակ է, որ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների կազմման վերաբերյալ առանձնացվում է 4-րդ մաս, որը հետագայում փոփոխության չի ենթարկվել: Իսկ 2006 թ. դեկտեմբերի 22-ի ՀՕ-1-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում է օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մասին տրվել ներկայիս ձևակերպումը:

Այսպիսով, ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի բոլոր փոփոխությունների համադրված վերլուծությունը նույնպես վկայում է, որ 10 հոդվածի 3-րդ մասի դրույթներն ըստ էության բովանդակում են ընդհանուր դրույթներ և կանոնակարգում են համապետական ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների կազմման հետ կապված իրավահարաբերությունները:

11. ՀՀ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների

ժամանակ նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ընտրական իրավունքով օժտված անձանց վրա»:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության մեջ, ինչպես նաև օրենսդրական ակտերում «**յուրաքանչյուր ոք**» եզրույթը չի նշանակում «**քաղաքացիություն չունեցող անձ**»: Այն միաժամանակ ենթադրում է թե՛ քաղաքացիներին և թե՛ քաղաքացիություն չունեցող անձանց: Ուստի, մի կողմից՝ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1–ին մասի առաջին դրույթը չի կարելի մեկնաբանել այնպես, որ դրա առաջին մասը վերաբերում է ՀՀ քաղաքացիներին, իսկ երկրորդ մասը՝ ոչ քաղաքացիներին: Սակայն, մյուս կողմից, օգտագործվում է «նաև» եզրույթը, որը տվյալ համատեքստում ենթադրում է. «բացի սահմանվածից՝ մյուսը»: Եթե դա համադրում ենք հոդվածի նույն մասի երկրորդ նախադասության մեջ օգտագործված «քաղաքացիություն չունեցող **ընտրական իրավունքով օժտված....»** արտահայտության հետ, ապա ակնհայտ է դառնում, որ տվյալ հոդվածում նկատի է առնվում, այսպես կոչված, «յուրաքանչյուր այլ ոք» հասկացությունը: Այս հարցում տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար ելակետ պետք է ընդունել ընտրական իրավունքի և դրա սահմանափակման վերաբերյալ սահմանադրական մոտեցումները:

ՀՀ Սահմանադրությունը ճանաչելով 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիների **ընտրական իրավունքը** (հոդվ. 30), միաժամանակ, ինչպես նշել ենք, նախատեսել է, որ «Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը»: Օրենսդիրը, Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորության շրջանակներում, նախատեսել է, որ բացի 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներից՝ «....տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նման իրավունք ունի նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք» (ՀՀ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1–ին մաս):

Այս համադրումից հետևում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեն 18 տարին լրացած, տվյալ համայնքում հաշվառված **ՀՀ քաղաքացի հանդիսացող բնակիչները**, ինչպես նաև տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և **փաստացի բնակվող**, սակայն ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք: Նման իրավակարգավորումը բխում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 1999 թ. ՍԴՈ–179 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների տրամաբանությունից, որում, մասնավորապես, շեշտվեց, որ օրենսդրին վերապահելով «ընտրության կարգը» սահմանելու իրավասությունը, Սահմանադրության ընդհանուր պահանջը նաև այն է, որ այն իրականացվի ՀՀ սահմանադրական կարգի հիմունքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, և ՀՀ Ազգային ժողովի իրավասությունն է սահմանելու այդ իրավունքի իրացման կարգն ու պայմանները, մասնավորապես՝ հստակեցնելով մոտեցումը բնակության ցենզի վերաբերյալ:

Սահմանադրական դատարանի այդ որոշման հիման վրա փոփոխություններ կատարվեցին ՀՀ օրենսդրության մեջ և ընտրակարգում՝ թույլատրելով առնվազն մեկ տարի տվյալ

համայնքում հաշվառված և բնակվող, սակայն ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

2005 թ. սահմանադրական փոփոխություններն այս հարցում ամրագրել են այնպիսի մոտեցում, որը սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից համահունչ է սահմանադրական դատարանի՝ տվյալ հարցի վերաբերյալ վերոհիշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

12. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությանը տրվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում կարող են ընդգրկվել նաև տվյալ համայնքի բնակիչ չհանդիսացող անձինք: Սա չի բխում տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական բովանդակությունից: Հիշյալ նորմը կիրառելի է միայն համապետական ընտրությունների ժամանակ ըստ համայնքների ընտրողների ցուցակներ կազմելիս, և վերջինիս առումով սահմանադրականության որևէ խնդիր չի առաջացնում:

ՀՀ քաղաքացու, հավասարապես նաև ՀՀ-ում կեցության այլ կարգավիճակ ունեցող անձանց ընտրական իրավունքի օրինաչափ իրացման կարևորագույն նախապայմաններից է **«մեկ ընտրող՝ մեկ ձայն»** սկզբունքը, որից հետևում է նաև անձանց՝ **տեղամասային միայն մեկ ցուցակում ընդգրկվելու միակ հնարավորությունը** (ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ մաս), որը որպես իրավաբանորեն ամրագրված պարտականություն հստակ և հետևողականորեն պետք է երաշխավորվի ինչպես ՀՀ ընտրական օրենսգրքում, այնպես էլ՝ իրավակիրառական պրակտիկայում, որպեսզի մեկ անձն ընտրողների մեկից ավելի ցուցակներում չընդգրկվի: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ երաշխիքի առկայությամբ է նաև մեծապես պայմանավորված ՀՀ-ում ընտրությունների (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների) և հանրաքվեների հետագա ժողովրդավարացումը: Իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում համայնքների ընտրողների ցուցակների կազմման (վարման) գլխավոր խնդիրը տվյալ համայնքի ընտրական իրավունք ունեցող բնակիչների ընտրական իրավունքի իրացման երաշխավորումն է: Այդ խնդրի արդյունավետ լուծմանը կարող էր նպաստել ոչ միայն իրավասու պետական մարմինների կողմից «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2005 թ. հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշման պահանջների հստակ կատարումը, այլև համայնքների բնակիչների հաշվառման ու ընտրացուցակների կազմման առանձնահատկությունների հետ կապված իրավակարգավորման մանրամասները ՀՀ ընտրական օրենսգրքում նախատեսելը՝ ելնելով այդ օրենսգրքի կառուցվածքային ընդհանուր տրամաբանությունից:

ԸՆՏՐԱԳՐԱՎ

ՍԴՈ-1076, 5 մարտի, 2013 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրաիրավական վեճի առարկան առաջին հերթին ընտրական գրավի ինստիտուտի սահմանադրականության հարցն է և ընտրական գրավի մեծության համաչափությունն իրավաչափ նպատակին: Մնացած բոլոր հարցադրումները, ինչպես վկայում է նաև դիմողը, ածանցյալ բնույթ ունեն այս հիմնահարցերից: Ուստի անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել ընտրագրավի ի-

նստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը և օրենքի հիման վրա դրա կիրառման իրավաչափությունը:

7. ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է նաև նույն փաստաթղթում բերված բացատրություններն ընտրագրավի ինստիտուտի վերաբերյալ: Այսպես, բացատրական զեկույցի 8-րդ մասում նախ շեշտվում է, որ «Ընտրություններին առաջադրվելու համար ստորագրությունների որոշակի քանակ հավաքագրելու պարտավորությունը տեսականորեն **համատեղելի է համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի հետ**»: Իսկ 9-րդ մասում հետևություն է արվում, որ «Գոյություն ունի մեկ այլ **ընթացակարգ,** երբ թեկնածուները կամ կուսակցությունները պետք է կանխավճար ներդնեն, որը կփոխհատուցվի միայն, եթե տվյալ թեկնածուն կամ կուսակցությունը հավաքի ձայների նախատեսված տոկոսից ավելին: **Այդօրինակ գործընթացներն ավելի արդյունավետ են, քան ստորագրությունների հավաքագրումը**»:

Կատարված ընդգծումները հստակեցնում են երկու կարևոր հանգամանք: Նախ՝ ստորագրահավաքը և ընտրական գրավը ոչ այլ ինչ են, քան **ընտրությունների ընթացակարգի բաղադրատարր:** Երկրորդ՝ **նախապատվությունը տրվում է ընտրական գրավի ինստիտուտին:**

Այս մոտեցումներն են հիմք հանդիսացել Հայաստանում ընտրողների ստորագրահավաքի ինստիտուտից հրաժարվելու համար: Դրա մասին են վկայում նաև ՀՀ ընտրական օրենսգրքի բարեփոխումների վերաբերյալ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի CDL(2011)020 և CDL(2011)081 փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Ընտրագրավի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունն աղճատվում է, երբ այն չի դիտարկվում իրավակարգավորման ամբողջականության մեջ: Այդ ինստիտուտի և ընտրողների **երաշխավորական վստահության** միջև փոխկապվածությունը, որպես ժողովրդաիշխանության իրականացման կարևոր բաղադրատարր, դրսևորվում է նաև այդ **գրավի վերադարձնելիության հատուկ կարգի սահմանման միջոցով:** Օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված է, որ ընտրական գրավը վերադարձվում է թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 5 կամ 5-ից ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու դեպքում: **Ակնհայտ է, որ ընտրագրավը ոչ թե թեկնածուի ունեցվածքի գնահատման միջոց է կամ պասիվ ընտրական իրավունքի ճանաչման ցենզ, այլ որոշակի թվով ընտրողների վստահության երաշխիք է՝ նրանցից պետական իշխանության կրողի մանդատ հայցելու ու այդ նվազագույն վստահությունն ու անհրաժեշտ պատասխանատվությունը նախապես ունեցող կամ ակնկալող այլ թեկնածուների հետ ընտրական մրցակցությանը մասնակցելու համար:** Յուրաքանչյուր թեկնածու, ով օբյեկտիվորեն է գնահատում իր հնարավորությունները, չի չարաշահում իր պասիվ ընտրական իրավունքը, պատասխանատվությամբ է վերաբերում համապետական ընտրություններին և ունի ընտրողների գոնե ավելի քան 5 տոկոսի կողմից ակնկալվող մանդատն ստանալու վստահություն, նույն կերպ պետք է վստահ լինի, որ ընտրագրավը վերադարձվելու է և իր նյութական վիճակի վրա այն որևէ ազդեցություն ունենալ չի կարող:

....

8. .... ՀՀ Սահմանադրության մակարդակով է ամրագրված կուսակցությունների սահմանադրական գործառույթը, այն է՝ **ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը** (7-րդ հոդվածի 2-րդ մաս): Իրենց այդ առաքելությունը կատարելու համար կուսակցությունները ժողովրդի կողմից վստահության քվե ստանում են բոլոր կարգի

ընտրությունների ժամանակ: Առավել ևս՝ Հանրապետության Նախագահի ընտրությունների ժամանակ, եթե կուսակցությունները նախորդ ընտրությունների արդյունքներով ու իրենց գաղափարախոսական-ծրագրային կողմնորոշումներով նախապես վաստակել են ժողովրդի վստահության համապատասխան աստիճան, ապա ժողովրդից պետության գլխի մանդատ ակնկալող ինքնաառաջադրվող անհատը չի կարող միայն իր պասիվ ընտրական իրավունքի ուժով կուսակցությունների կողմից առաջադրված ու երաշխավորված թեկնածուների հետ ընթացակարգային միևնույն պայմաններում գրանցվել որպես նախագահի թեկնածու: Այս հանգամանքը հաշվի առնելով է, որ պետությունների մեծ մասում, որտեղ առկա է ինքնաառաջադրման ինստիտուտը, նման հայտ ներկայացնող անձը նախապես ձևավորում է որոշակի թվով **ընտրողների խումբ** կամ **առաջադրող կոմիտե** (Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Բուլղարիա, Լեհաստան և այլն) թեկնածությանն աջակցելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **տարբերակների ընտրությունը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է**, սակայն պետության ժողովրդավարական կառուցակարգերի բնականոն զարգացման շահերից ելնելով կարող է ընդհուպ տարբերակային մոտեցում դրսևորվել ընտրագրավի ու ստորագրահավաքի ինստիտուտների առանձին-առանձին կամ **համակցված կիրառման** հարցում (ինչպես, օրինակ, Բուլղարիայում)՝ պառլամենտական խմբակցություններ ունեցող, այդպիսին չունեցող կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման ու ինքնաառաջադրումների դեպքերում: Ի դեպ, ԱՄՆ գերագույն դատարանը 1972 թվականին ըստ էության իրավական դիրքորոշում է արտահայտել, որ նույնիսկ **անհրաժեշտ է** ստորագրահավաքի ու ընտրագրավի համակցված կիրառումը: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես գտնում է, որ համադրելի չէ այն իրողությունը, երբ առանձին կուսակցություններ, որոնք արդեն իսկ ունեն ընտրողների 5 տոկոսից ավելիի վստահությունը և **ժողովրդավարական ընթացակարգերով ու իրենց երաշխավորությամբ** թեկնածու են առաջադրում, հայտնվում են հավասար վիճակում մեկ առանձին՝ հաճախ հանրությանը բացարձակապես անհայտ ու առաջադրող խումբ, կոմիտե կամ այլ մարմին չունեցող անհատի հետ: Միայն ընտրագրավն այս պարագայում կարող է նաև ոչ իր իրավական բնույթին համարժեք դերակատարություն ունենալ, քանի որ այն համեմատաբար քիչ թափանցիկ է ու որոշակի իրավական ու քաղաքական մշակույթի պակասի պայմաններում կարող է առանձին ուժերի կողմից քաղաքական պատվերի ու ոչ իրավաչափ գործընթացների տեղիք տալ:

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում դիմողի հղումները Սահմանադրության 6, 14.1, 43, 50 և 51-րդ հոդվածներին կամ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին՝ ակնհայտ անհիմն են: ՀՀ ընտրական օրենսգրքի ողջ 15-րդ գլուխը, որով սահմանվում են Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրման իրավունքը և դրա իրացման կարգը, ընտրական գրավը, թեկնածուի գրանցման ու դրա ուժը կորցնելու կարգը, օրենսգրքի մյուս բոլոր դրույթների հետ մեկ միասնականության մեջ ներկայացնում է ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջի հիմքով նախագահի ընտրության՝ **օրենքով սահմանված կարգը**: Ի դեպ, երկրների գերակշիռ մասում սահմանադրաիրավական համանման իրավակարգավորումների պայմաններում նույն օրենքով սահմանված կարգի շրջանակներում, այսպես կոչված, «զուտ անձնական ցանկության վրա հիմնված» ինքնաառաջադրում չի նախատեսվում: Սահմանվում է, որ պասիվ ընտրական իրավունքն իրացնելի է

միայն կուսակցությունների, որոշակի թվով ընտրողների կամ պատգամավորների կողմից թեկնածու առաջադրվելու պայմանով:

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–664, 7 նոյեմբերի, 2006 թ.

IV. ՀՀ ընտրական օրենսգրքի 31 հոդվածի 1–ին մասով սահմանվում է, որ «Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Հանրապետությունում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տեղամասային ընտրական հանձնաժողով», իսկ 32 հոդվածի 1–ին մասով սահմանվում է. «Ընտրական հանձնաժողովներն ապահովում են քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը: Ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից»: Տվյալ նորմերը հստակեցնում են ընտրական հանձնաժողովների ստեղծման նպատակը և տարանջատումը պետական ու տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններից՝ անկախ որոշակի գործառույթ իրականացնելու համար: Վերջինիս բովանդակությունը ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների ձևավորման ապահովումն է քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման և պաշտպանության միջոցով: Ուստի այս գործառույթը, իր հերթին, չի կարող անմիջականորեն դասվել իշխանության այլ մարմինների գործառույթների շարքին: Այս առումով ընտրական հանձնաժողովների ձևավորմանը պետական իշխանության բոլոր թևերի մասնակցությունն արդարացվում է, որի պարագայում այդ հանձնաժողովների անկախության երաշխիքներն առավել ամուր կարող են լինել: Սակայն դա չի նշանակում, որ առանձին–առանձին այդ իշխանության մարմինները կարող են օժտվել այնպիսի լիազորություններով, որոնք կվտանգեն իրենց գործառույթների արդյունավետ ու անկողմնակալ իրականացումը կամ կվտանգեն զսպումների ու հակակշիռների սահմանադրական հաշվեկշիռը:

V. Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ընտրական հանձնաժողովներն իրենց պետաիրավական կարգավիճակով ակնհայտորեն պետական մարմիններ են, որոնք ապահովում են Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված՝ պետության պարտավորությունների իրականացումը քաղաքացիների ընտրական իրավունքի երաշխավորման և անկախ ու անկողմնակալ մարմնի միջոցով ընտրությունների կազմակերպման հարցերում: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 41 հոդվածի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունները կազմակերպող և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, որը գործում է մշտական հիմունքներով՝ իր ընդունած կանոնակարգի համաձայն»: Օրենսգրքի 42 հոդվածը սահմանում է, որ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած կանոնակարգի համաձայն, մշտական հիմունքներով գործող պետական մարմին է....»: Չնայած այն բանին, որ օրենսգրքի 33 հոդվածը նախատեսում է, որ ընտրական հանձնաժողովների կազմում ընդհանուր իրավասության դատարանների դատավորները գործում են հասարակական հիմունքներով, այդուամենայնիվ, պետական մարմնում նրանք իրենց գործառույթների բնույթով զբաղեցնում են պետական պաշտոն: Ի դեպ, նույն 33 հոդվածի 3–րդ մասը

սահմանում է, որ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը և անդամներն աշխատում են մշտական հիմունքներով և իրավունք չունեն կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից»: Նման պահանջները ոչ միայն շեշտում են տվյալ պաշտոնի առանձնահատուկ բնույթը, այլև կարևոր են հանձնաժողովի անդամների հավասար կարգավիճակի երաշխավորման տեսակետից:

....

VII. .... Նկատի ունենալով Հայաստանում դատավորների սահմանափակ թվաքանակը, ընտրական հանձնաժողովներում ընդգրկվող և չընդգրկվող դատավորների հարաբերակցության՝ ընտրական օրենսգրքով նախատեսվող տարբեր իրավիճակները, ընտրական վեճերի լուծման առանձնահատկություններն ու ժամկետային սահմանափակումները, ակնհայտ է դառնում, որ անխուսափելի է հակադրությունը, մի կողմից՝ անկախ ընտրական հանձնաժողովների ձևավորման և, մյուս կողմից՝ արդյունավետ ու անկողմնակալ արդարադատության իրականացման շահերի միջև: Այս առումով է, որ վտանգվում է նաև Սահմանադրության 19 հոդվածով ամրագրված իրավունքների ապահովումը:

Չափազանց կարևորելով անկախ ու անկողմնակալ ընտրական հանձնաժողովների դերը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անցումային երկրներում նույնքան կարևոր է նաև անկախ դատական իշխանության կայացումը, որի շահերից ելնելով է, որ ՀՀ Սահմանադրության 98 հոդվածն անթույլատրելի է համարում դատավորի կողմից իր պարտականությունների հետ չկապված որևէ պաշտոն զբաղեցնելը: Դատավորներին՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով ու ծավալով ընտրական հանձնաժողովներում ընդգրկելը չի բխում դատական իշխանության անկախության ապահովման և արդարադատության իրականացման շահերից, մեծանում է արդարադատության և այլ շահերի բախման հնարավորությունը, վտանգվում է դատարանների և դատավորների անաչառությունն ընտրական վեճեր լուծելիս:

ՍԴՈ–880, 23 ապրիլի, 2010 թ.

4. .... Հաշվի առնելով նաև իր՝ 2006 թ. նոյեմբերի 7–ի ՍԴՈ–664 և 2007 թ. հունիսի 10–ի ՍԴՈ–703 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ընտրական հանձնաժողովները ոչ թե ՀՀ Սահմանադրության 2–րդ հոդվածի իմաստով ներկայացուցչական ժողովրդաիշխանություն իրականացնող մարմիններ են, այլ իրենց պետաիշխանական իրավասության շրջանակներում կոչված են Սահմանադրությամբ ու օրենքով սահմանված կարգի համաձայն՝ իրավունքի ուժով ապահովել ներկայացուցչական ժողովրդաիշխանության մարմինների կազմավորումը:

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–664, 7 նոյեմբերի, 2006 թ.

V. Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ընտրական հանձնաժողովներն իրենց պետաիրավական կարգավիճակով ակնհայտորեն պետական մարմիններ են, որոնք ապահովում են Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված՝ պետության պարտավորությունների իրականացումը քաղաքացիների ընտրական իրավունքի երաշխավորման և անկախ ու անկողմնակալ մարմնի միջոցով ընտ-

րությունների կազմակերպման հարցերում: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 41 հոդվածի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունները կազմակերպող և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, որը գործում է մշտական հիմունքներով՝ իր ընդունած կանոնակարգի համաձայն»: Օրենսգրքի 42 հոդվածը սահմանում է, որ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած կանոնակարգի համաձայն, մշտական հիմունքներով գործող պետական մարմին է....»: Չնայած այն բանին, որ օրենսգրքի 33 հոդվածը նախատեսում է, որ ընտրական հանձնաժողովների կազմում ընդհանուր իրավասության դատարանների դատավորները գործում են հասարակական հիմունքներով, այդուամենայնիվ, պետական մարմնում նրանք իրենց գործառույթների բնույթով զբաղեցնում են պետական պաշտոն: Ի դեպ, նույն 33 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը և անդամներն աշխատում են մշտական հիմունքներով և իրավունք չունեն կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից»: Նման պահանջները ոչ միայն շեշտում են տվյալ պաշտոնի առանձնահատուկ բնույթը, այլև կարևոր են հանձնաժողովի անդամների հավասար կարգավիճակի երաշխավորման տեսակետից:

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-389, 1 հոկտեմբերի, 2002 թ.

10. Ընտրական օրենսգրքի 55 և 56-րդ հոդվածներից բխում է, որ քվեարկությանը մասնակցել, այսինքն՝ ընտրելու իրավունքն իրացնել կարող են միայն ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիները: Հետևաբար, ընտրական ցուցակներում ընդգրկվելու՝ քաղաքացու իրավունքի ճանաչումն ունի սահմանադրական նշանակություն, քանի որ այն անհրաժեշտ է ազատ ընտրությունների միջոցով ժողովրդաիշխանության իրականացման, ընդհանուր ընտրությունների անցկացման և ընտրական իրավունքի իրացման համար, բացի դրանից, Սահմանադրության 16-րդ հոդվածը, որը սահմանում է, որ բոլորը հավասար են օրենքի առջև, վերաբերում է նաև ընտրական իրավունքին:

Համաձայն ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի՝ ընտրական ցուցակներում «պարտադիր կարգով ընդգրկվում են ընտրելու իրավունք ունեցող, տվյալ համայնքում հաշվառված բոլոր քաղաքացիները....»: Այսինքն՝ տվյալ համայնքից կամ ՀՀ տարածքից դուրս գտնվող ցանկացած ընտրող, որը հաշվառված է այդ համայնքում, իրավունք ունի ակնկալելու, մինչև ընտրությունների օրը կամ ընտրությունների օրը վերադառնալով իր հաշվառման վայրի ընտրական տեղամաս՝ անարգել իրականացնելու իր ընտրական իրավունքը:

Ընտրական ցուցակներում մինչև քվեարկությանը նախորդող երկու օրը ընդգրկված չլինելու հիմքով քաղաքացու ընտրելու իրավունքի իրացմանը խոչընդոտելը և այդ կարգով ակտիվ ընտրական իրավունքը սահմանափակելն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի հետ, որն սպառիչ կերպով սահմանում է այն անձանց շրջանակը, ում ընտրելու իրավունքը կարող է սահմանափակվել: Տվյալ դեպքում առկա չեն նաև Սահմանադրության 44-րդ հոդվածում թվարկված այն արժեքները, որոնց պաշտպանության նկատառումներով մարդու և քաղաքացու իրավունքը կարող է սահմանափակվել, նկատի ունենալով, որ

նման սահմանափակման պարագայում ոչ թե կբացառվեն հնարավոր ընտրախախտումները, այլև դրանք կարող են առավել ծավալվել:

ՍԴՈ–700, 8 մայիսի, 2007 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի դրույթները կարգավորում են ընտրություններին, հանրաքվեներին մասնակցող քաղաքացիների և կուսակցությունների (կուսակցությունների միավորումների) ընտրական իրավունքների պաշտպանության և տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի վերաբերյալ դիմումների քննության վարույթը: Նկատի ունենալով, որ ընտրությունները ժամկետային գործընթաց են, օրենսդիրը սահմանել է այդ բնույթի դիմումների քննության հնարավոր կրճատ ժամկետներ: Մասնավորապես, օրենսգրքի 154 հոդվածը դատարանին պարտավորեցնում է ընտրական վեճերի վերաբերյալ գործերը քննության առնել դիմումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան ընտրությունների օրը, իսկ ընտրությունների օրն ստացված դիմումը՝ անհապաղ: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի 155 հոդվածն ամրագրում է, որ ընտրական իրավունքի պաշտպանության վեճերով դատարանի վճիռը վերջնական է, ենթակա չէ բողոքարկման և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Օրենքի այս պահանջը նպատակ է հետապնդում վերացնել ընտրական իրավունքի խախտումները մինչև ընտրությունների ավարտը, այլապես խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դատարանի վճիռը կկորցնի իր իմաստը՝ դիմողը չի կարող մասնակցել ընտրություններին, ընտրել կամ ընտրվել: Հենց այս առանձնահատկությունը նկատի առնելով է, որ օրենսդիրն օրենսգրքի վիճարկվող գլուխը զետեղել է «Առանձին տեսակի գործերով վարույթների առանձնահատկությունները» բաժնի «Հատուկ հայցային վարույթներ» ենթաբաժնում:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի ընձեռում է իր խախտված իրավունքները վերականգնելու համար դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող գլխի կանոնները, սահմանելով նման բնույթի գործերի քննության սեղմ ժամկետներ և բացառելով վճռի բողոքարկումը, դատարանին հնարավորություն են տալիս ողջամիտ ժամկետում վերականգնել յուրաքանչյուր քաղաքացու, կուսակցության (կուսակցությունների միավորումների) ընտրական խախտված իրավունքները:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի (հոդվ. հոդվ. 153–155) դրույթները մեծ կարևորություն ունեն ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության և Սահմանադրության 4 հոդվածում ամրագրված հիմնարար սկզբունքների ու 30 հոդվածում ամրագրված իրավունքների երաշխավորման համար: Ընտրական իրավունքի պաշտպանության առումով այդ դրույթները հավասարապես վերաբերում են ինչպես պասիվ, այնպես էլ ակտիվ ընտրական իրավունքին: Նյութական իրավունքի ապահովումը երաշխավորող դատավարական այս նորմերն իրենց բնույթով ու առկա խմբագրությամբ չեն խոչընդոտում հատուկ հայցային վարույթի կարգով ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությանը՝ ընտրական գործընթացի ցանկացած փուլում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 24 գլուխը միայն ընդհանուր գծերով է կարգավորում տվյալ իրավահարաբերությունները՝ առանց

հստակեցնելու հատուկ հայցային վարույթի ընթացակարգով ընտրական վեճերի լուծման կոնկրետ առանձնահատկությունները: Դրա հետևանքով իրավակիրառական պրակտիկայում տեղ են գտել տարաբնույթ մոտեցումներ, թե՛ դիմումի քննության ենթակայության և թե՛ դատական ակտի բողոքարկման կարգի առնչությամբ: Առկա է նաև անհամապատասխանություն ՀՀ ընտրական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի դրույթների (մասնավորապես՝ համապատասխանաբար՝ 40 և 153 հոդվածներ) միջև, որը դժվարություններ է առաջացնում ընտրական իրավունքի դատական պաշտպանության՝ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի իրացման հարցում: Նման իրավիճակը կարող է հաղթահարվել օրենսդրական հստակեցումներ կատարելու, իսկ մինչ այդ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի նորմերի մեկնաբանման և միասնական իրավակիրառական պրակտիկա ապահովելու ճանապարհով՝ երաշխավորելու համար ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը: Ինչ վերաբերում է վեճի առարկա դրույթների սահմանադրաիրավական բնույթին, ապա այդ դրույթները դիմումատուի հարցադրումների շրջանակներում՝ իրենց իրավական բովանդակության և իրավակարգավորման առարկայի առումով, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում և դրանց բացակայությունը կամ կասեցումը, ընդհակառակը, կվտանգի ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը:

ՍԴՈ–810, 30 հունիսի, 2009 թ.

7. Միջազգային պրակտիկայի վերլուծությունը վկայում է նաև, որ այնպիսի ընտրական համակարգերի պարագայում, ինչպիսին առկա է Հայաստանում, համամասնական ընտրակարգով մանդատն ստանալուց հետո իրենց կուսակցությունները լքելու կամ կուսակցական պատկանելությունը փոխելու հանգամանքը **պառլամենտական կայունության և ընտրողների կատարած ընտրությանը հավատարիմ մնալու տեսանկյունից** դառնում է ժամանակակից ժողովրդավարությունների առջև ծառացած լուրջ հիմնախնդիր: Նման պրակտիկան հանգեցնում է նրան, որ **ընտրողների կայացրած որոշումը հաճախ զանգվածաբար փոփոխության է ենթարկվում**: Այդ խնդրի լուծման եղանակների ընտրությունը, բնականաբար, մեծապես պայմանավորված է ընտրական համակարգերի առանձնահատկություններով:

ՍԴՈ–1027, 5 մայիսի, 2012 թ.

6. Նշված մոտեցումներն իրավաչափ, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին ու ՀՀ Սահմանադրությանը համահունչ համարելով հանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք չեն կարող դիտվել որպես ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանության ու անմիջական ժողովրդավարության սահմանադրական սկզբունքի իրացման արգելք: Առավել ևս դա վերաբերում է ընտրական իրավունքի դատական պաշտպանությանը, ինչի առնչությամբ մտահոգություն են արտահայտել սահմանադրական դատարան դիմած պատգամավորները: Արդարադատության իրականացումը դատարաններին պարտավորեցնում է դատական ընդդատության շրջանակներում քննության առարկա դարձնել ցանկացած տեղեկատվություն, ինչն ունի ապացուցողական նշանակություն իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական առումով «հրապարակման ենթակա չեն» կամ «չպետք է հրապարակվի» արտահայտություններին ի-

րավակիրառական պրակտիկայում չի կարող այնպիսի տարածական մեկնաբանություն տրվել, ինչը կխոչընդոտի ազատ ընտրությունը կամ կարգելափակի ընտրողների ստորագրած ցուցակների ուսումնասիրության հնարավորությունը՝ ընտրական իրավունքի պաշտպանության համատեքստում, ինչպես նաև դրանց չհրապարակման սահմանափակումը որևէ կերպ տարածվի նման տեղեկությունները դատարաններին տրամադրելու վրա: Տվյալ արտահայտությունները վերաբերում են հրապարակային տպագրությանը՝ քվեարկության գաղտնիության երաշխավորման և ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների համատեքստում: Սակայն որևէ սահմանափակում չի կարող խոչընդոտել ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով սահմանված կարգով մասնակցող իրավասուբյեկտների գործունեությունը, ինչի արդյունավետ իրականացումով է մեծապես պայմանավորված հանրային վստահությունն ընտրական գործընթացի հանդեպ: Խնդիրն այն է, թե նրանք ինչպիսի իրավագիտակցությամբ ու արդյունավետությամբ են իրականացնում այդ առաքելությունը: Պրակտիկան վկայում է, որ հաճախ անվստահության պատճառը վերահսկողական գործառույթի ոչ պատշաճ կատարումն է, ինչին կոնկրետ օրինակներով անդրադարձել է սահմանադրական դատարանն իր նախորդ որոշումներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քվեարկության արդյունքների առնչությամբ վեճի շրջանակներում ստորագրված ընտրական ցուցակներին ծանոթանալը և համապատասխան քաղվածքներ կատարելն օրենքով նախատեսված սուբյեկտների, տվյալ դեպքում՝ դիտորդի, վստահված անձի, զանգվածային լրատվական միջոցի ներկայացուցչի ու դիմողի (համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 48-րդ հոդվածի 14-րդ մասի) իրավունքն է: Իսկ ներկայացված փաստերի հիման վրա այդ ցուցակներում տեղ գտած խախտումներին իրավական գնահատական տալը համապատասխան ընտրական հանձնաժողովների ու դատարանի պարտականությունն է: Հետևաբար, **ընտրական իրավունքի պաշտպանության օրենքով նախատեսված գործընթացների շրջանակներում վերահսկողական համապատասխան իրավասությամբ օժտված իրավասուբյեկտների համար ընտրական իրավունքի պաշտպանությանը վերաբերող որևէ տեղեկատվության մատչելիությունը չի կարող արգելափակվել՝ առավել ևս նման տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու անչությամբ:** Այս սկզբունքային մոտեցումն է դրված վեճի առարկա նորմերի իրավակարգավորման հիմքում և, մասնավորապես, անհիմն է այն պնդումը, որ «Օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դրույթներով նախատեսված արգելքը բացարձակ է, և այն տարածվում է նաև նման տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու վրա»:

Խնդիրն ընտրություններում քվեարկության գաղտնիության սկզբունքի և ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության իրավաչափ հավասարակշռության ապահովումն է: Դա հնարավոր է ու անհրաժեշտ, երբ ընտրախախտումների հայտնաբերման և ուսումնասիրման շրջանակներում ցանկացած իրավաչափ գործողության կատարման ընթացքում օրենքով սահմանված կարգով վերահսկման գործընթացին մասնակից իրավասուբյեկտների համար մատչելի են արդեն իսկ ստորագրված ընտրացուցակները: Դա ենթադրում է ոչ միայն իրենց իրավասությունների պատշաճ իմացությամբ դրանց ծանոթանալն ու քաղվածքներ կատարելը, ինչպես նախատեսված է ՀՀ ընտրական օրենսգրքի 31, 33 և 48-րդ հոդվածներով, այլև հնարավոր խախտումներ արձանագրելու դեպքում ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում քվեարկության արդյունքների հավաստիության վիճարկ-

ման հնարավորություն՝ ՀՀ ընտրական և վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով: Ուստի ընտրական հանձնաժողովների պարտականությունն է ընտրական գործընթացի վերահսկման օրենքով նախատեսված կարգով մասնակցող իրավասուբյեկտների համար ընտրական իրավունքների պաշտպանության շրջանակներում այդ ցուցակնե-րին լիարժեք ծանոթանալու պայմաններ ստեղծելը: Դա հատկապես անհրաժեշտ է դատական քննությունը ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածների պահանջներին համապատասխան երաշխավորելու ու հնարավոր ընտրախախտումները վերացնելու համար: Իսկ ընտրական գործընթացի վերահսկմանը մասնակցող իրավասուբյեկտների շրջանակի և նրանց գործունեության կարգի սահմանումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–56, 19 մայիսի, 1997 թ.

4. .... ընտրությունների մասին ՀՀ Սահմանադրության հիման վրա ընդունված օրենսդրությունը կարգավորում է պետաիրավական այնպիսի հարաբերություններ, որի նպատակն է ի կատարումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2, 3, 27, 50, 51, 68, 105, 110 հոդվածների, սահմանված ժամկետներում ձևավորել Հանրապետության իշխանությունների ընտրովի ինստիտուտները:

Սահմանադրության հիման վրա ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին ընդունված օրենքներն ունեն միասնական տրամաբանական հենք և ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ առաջացած վեճերով առաջին երկու դեպքում՝ ՀՀ սահմանադրական դատարանի, վերջին դեպքում՝ ՀՀ գերագույն դատարանի՝ կոլեգիալ կարգով ընդունած որոշումները վերջնական են:

ՍԴՈ–26 22 նոյեմբերի, 1996 թ.

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ չնայած ընտրությունների մասին օրենսդրության ակնհայտ բարելավմանը, ընտրությունների կազմակերպման, անցկացման և քվեարկությունների արդյունքների ամփոփման վրա լուրջ բացասական ազդեցություն են ունեցել «Հանրապետության Նախագահի ընտրության մասին» և «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում տեղ գտած թերություններն ու բացթողումները:

Սահմանադրական դատարանը համարում է, որ արդարացված չէ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7, 8, 9 և 10 հոդվածներով ամրագրված կուսակցական ներկայացուցչության սկզբունքի հիման վրա ընտրական հանձնաժողովների կազմավորման կարգը:

Թերի կամ ոչ լրիվ են լուծված զինվորականների քվեարկությունների կազմակերպման, քվեարկությունների արդյունքների ստուգումների, արձանագրությունների տվյալների անճշտությունների գնահատման հարցերը:

Պարզաբանման ու հստակեցման կարիք ունի քվեարկության արդյունքների ամփոփման և արձանագրությունների կազմման կարգը:

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳ

ՍԴՈ–810, 30 հունիսի, 2009 թ.

6. Միջազգային սահմանադրաիրավական պրակտիկան վկայում է, որ ընտրական օրենսդրությամբ նախատեսված համամասնական ընտրակարգը կարող է լինել նաև այնպիսին, որ ընտրողը ձայնը տալիս է որևէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնորոշումների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մոտեցումների հիման վրա՝ առանձին դիրքորոշում չարտահայտելով կուսակցության համամասնական ընտրական ցուցակներում ներկայացված անձանց վերաբերյալ: **Նման պարագայում քաղաքական ուժն է ժողովրդի կողմից պատվիրակված քաղաքական իշխանության կրողը՝ առանձին կամ քաղաքական կոալիցիա կազմելու ճանապարհով: Նման ընտրակարգում ժողովրդի վստահությունը ոչ թե անձի, այլ քաղաքական ուժի ու նրա կողմից ներկայացված ծրագրային մոտեցումների նկատմամբ է:** Այդ վստահությամբ է պայմանավորված նաև ընտրությունների ու դրա արդյունքում ձևավորվող իշխանության լեգիտիմությունը: Քաղաքական մշակույթն այն մակարդակին պետք է լինի, որ ընտրողը կարողանա կողմնորոշվել հենց նման ծրագրային մոտեցումներով: Նման ընտրակարգի պայմաններում համամասնական կարգով թեկնածու են գրանցվում կուսակցությունները կամ նրանց դաշինքները, որոնք նախընտրական քարոզչությունը վարում են այնպիսի ծրագրային մոտեցումների հիման վրա, որոնք ընտրողին պետք է կողմնորոշեն օրենսդիր պետաիշխանական գործառույթը տվյալ կուսակցությանը վստահելու կամ չվստահելու հարցում: Դրանով է նաև որոշվում քաղաքական ուժի իրական տեղն ու դերն օրենսդիր իշխանության համակարգում:

7. .... Միաժամանակ, Հայաստանում արմատավորված համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում ընտրողը ոչ թե մանդատը տալիս է կոնկրետ ներկայացուցչին, այլ արտահայտում է իր քաղաքական նախապատվությունը, ընտրում է այն քաղաքական ուժին, որին ինքը նախընտրում է: Հետևաբար, ընտրություններում ընտրողի կամքի արտահայտության արդյունքը պետք է հանդիսանա այն քաղաքական ուժի առկայությունը խորհրդարանում, որին ընտրողը տվել է իր քաղաքական նախապատվությունը, և հետագայում այդ կամքի արտահայտման արդյունքը պահպանելու միջոց կարող է հանդիսանալ խմբակցությունից կամավոր դուրս գալու հիմքով մանդատը վայր դնելը (երբ կուսակցության ցուցակի ձևավորման վրա ընտրողը որևէ ազդեցություն չունի կամ թեկնածուն ներկայացված չի եղել քվեաթերթիկում), քանզի նման գործընթացի լայնամասշտաբ ծավալների դեպքում ընտրողի կամքն այլևս արտահայտված չի լինի քաղաքական ուժերի խորհրդարանական հարաբերակցությունում, ավելին՝ տեղի կունենա ընտրողի կամքի աղավաղում և խեղաթյուրում:

.... այն, որ ինչպես մեծամասնական ընտրակարգով ընտրությունների, այնպես էլ համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում մանդատի աղբյուրը ժողովուրդն է, անվիճելի է: Սակայն հիմնախնդրի բուն էությունը և դրա իրավաչափությունը բացահայտելու համար հարկ է դրան մոտենալ ոչ միայն այն տեսանկյունից, թե ո՞րն է մանդատի աղբյուրը, այլ նաև՝ թե այդ աղբյուրը՝ ժողովուրդը, ու՞մ է պատվիրակել պետաիշխանական իր իրավունքի իրացումը և ի՞նչ նպատակով է պատվիրակել: Պատգամավորների լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքի իրավաչափությունը կարող է գնահատվել միայն վերոնշյալ երեք հարցերի պատասխանների եռամիասնության շրջանակներում: Այդ հարցերի պատասխանների արդյունքում պարզ կդառնա, որ պատգամավորի մանդատի գործողու-

թյան դադարեցման խնդրո առարկա հիմքը պատգամավորի՝ ոչ թե կուսակցությանը հաշվետու լինելու, այլ հենց իր մանդատի աղբյուրին՝ ժողովրդին հաշվետու լինելու դրսևորում է: Նման միջոցով ապահովվում է այն պատգամավորի քաղաքական պատասխանատվությունը ժողովրդի առջև, ով շեղվել է այն քաղաքական ուղեգծից, որի իրացման համար ժողովուրդը պատվիրակել էր նրան պետաիշխանական իր իրավունքի իրացումը: Կուսակցության կողմից ծրագրային ուղեգծից շեղվելու հանգամանքի վերաբերյալ ժողովուրդն իր դիրքորոշումն արտահայտում է հերթական ընտրությունների ժամանակ: Այս առումով սկզբունքային նշանակություն ունի նաև ընտրությունների պարբերականության ժամկետային սահմանների ճիշտ որոշումը:

.... Անհրաժեշտ է համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների տեղը թափուր մնալու ընթացակարգը և խմբակցությունը լքելուն վերաբերող նորմերը դիտարկել համակարգային փոխկապակցվածության մեջ: Համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների տեղը թափուր մնալու դեպքում այն լրացվում է նույն ցուցակի հաջորդ թեկնածուի կողմից: Ինչպես պատգամավորի թափուր տեղը լրացնելու այս կարգը, այնպես էլ կուսակցական պատկանելությունը փոխելու հիմքով մանդատի գործողության դադարեցումն այն հիմնական իրավական միջոցներն են, որոնք ապահովում են մինչև հաջորդ խորհրդարանական ընտրությունները խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցության պահպանումը, որն սկզբնապես ձևավորվել է ընտրություններում ժողովրդի կամքի արտահայտման արդյունքում: Խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցությունը, որը սահմանվում է ըստ ժողովրդի կամաարտահայտության, չի կարող փոփոխություն կրել տվյալ գումարման խորհրդարանի գործունեության ընթացքում: **Հետևաբար, պատգամավորի լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքն իրավաչափ միջոց է այդ նպատակն ապահովելու համար:** Այլապես նման հիմքի բացակայության պայմաններում կստացվի, որ քաղաքական կուսակցությունների գոյությունը, որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման միջոց, միանգամայն շինծու երևույթ է, քանի որ հենց ընտրություններից հետո կարող են տեղի ունենալ պատգամավորական խմբերի ու խմբակցությունների այնպիսի վերադասավորումներ, որ ընտրությունների արդյունքում ձևավորված օրենսդիր մարմինը չարտահայտի ժողովրդի կամքը: Այսինքն՝ ժողովրդի կամքի արտահայտությունը լինի որոշակի խորհրդարանական քաղաքական հարաբերակցություն, որը, սակայն, հակառակ ժողովրդի կամքի, վերածվի մեկ այլ հարաբերակցության, ինչի արդյունքում ձևավորվի օրենսդիր մարմին, որը չի արտացոլի ընտրությունների իրական արդյունքները: Մինչդեռ ընտրական համակարգի գլխավոր առաքելություններից մեկն այն է, որ կարողանա ապահովել ընտրովի մարմիններում քաղաքական ուժերի հարաբերակցությունը՝ ընտրողների իրական աջակցությանը համամասնորեն:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–1027, 5 մայիսի, 2012 թ.

5. Ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման սահմանափակումը բազմիցս քննարկման առարկա է դարձել միջազգային իրավական պրակտիկայում: Իրավակարգավորման հնարավոր տարբերակների ու սահմանափակման շրջանակների ընտրությունը համարվում է տվյալ երկրի օրենսդիր մարմնի իրավասությանը վերաբերող խնդիր: Առանձին երկրներում այդ ցուցակներում պարունակվող տեղեկատվությունը պաշտպանվում է անձնա-

կան տվյալների պաշտպանության մասին օրենքներով, կամ այն մատչելի է համարվում միայն ծառայողական նպատակներով օգտագործման համար: Կան նաև օրինակներ, երբ այդ ցուցակներից պատճենահանումն արգելվել է դատարանի որոշմամբ:

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական առումով «հրապարակման ենթակա չեն» կամ «չպետք է հրապարակվի» արտահայտություններին իրավակիրառական պրակտիկայում չի կարող այնպիսի տարածական մեկնաբանություն տրվել, ինչը կխոչընդոտի ազատ ընտրությունը կամ կարգելափակի ընտրողների ստորագրած ցուցակների ուսումնասիրության հնարավորությունը՝ ընտրական իրավունքի պաշտպանության համատեքստում, ինչպես նաև դրանց չհրապարակման սահմանափակումը որևէ կերպ տարածվի նման տեղեկությունները դատարաններին տրամադրելու վրա: Տվյալ արտահայտությունները վերաբերում են հրապարակային տպագրությանը՝ քվեարկության գաղտնիության երաշխավորման և ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների համատեքստում: Սակայն որևէ սահմանափակում չի կարող խոչընդոտել ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով սահմանված կարգով մասնակցող իրավասուբյեկտների գործունեությունը, ինչի արդյունավետ իրականացումով է մեծապես պայմանավորված հանրային վստահությունն ընտրական գործընթացի հանդեպ: Խնդիրն այն է, թե նրանք ինչպիսի իրավագիտակցությամբ ու արդյունավետությամբ են իրականացնում այդ առաքելությունը: Պրակտիկան վկայում է, որ հաճախ անվստահության պատճառը վերահսկողական գործառույթի ոչ պատշաճ կատարումն է, ինչին կոնկրետ օրինակներով անդրադարձել է սահմանադրական դատարանն իր նախորդ որոշումներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քվեարկության արդյունքների առնչությամբ վեճի շրջանակներում ստորագրված ընտրական ցուցակներին ծանոթանալը և համապատասխան քաղվածքներ կատարելն օրենքով նախատեսված սուբյեկտների, տվյալ դեպքում՝ դիտորդի, վստահված անձի, զանգվածային լրատվական միջոցի ներկայացուցչի ու դիմողի (համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 48-րդ հոդվածի 14-րդ մասի) իրավունքն է: Իսկ ներկայացված փաստերի հիման վրա այդ ցուցակներում տեղ գտած խախտումներին իրավական գնահատական տալը համապատասխան ընտրական հանձնաժողովների ու դատարանի պարտականությունն է: Հետևաբար, **ընտրական իրավունքի պաշտպանության օրենքով նախատեսված գործընթացների շրջանակներում վերահսկողական համապատասխան իրավասությամբ օժտված իրավասուբյեկտների համար ընտրական իրավունքի պաշտպանությանը վերաբերող որևէ տեղեկատվության մատչելիությունը չի կարող արգելափակվել՝ առավել ևս նման տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու անչությամբ:** Այս սկզբունքային մոտեցումն է դրված վեճի առարկա նորմերի իրավակարգավորման հիմքում և, մասնավորապես, անհիմն է այն պնդումը, որ «Օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դրույթներով նախատեսված արգելքը բացարձակ է, և այն տարածվում է նաև նման տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու վրա»:

Խնդիրն ընտրություններում քվեարկության գաղտնիության սկզբունքի և ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության իրավաչափ հավասարակշռության ապահովումն է: Դա հնարավոր է ու անհրաժեշտ, երբ ընտրախախտումների հայտնաբերման և ուսումնասիրման շրջանակներում ցանկացած իրավաչափ գործողության կատարման ընթացքում օրենքով սահմանված կարգով վերահսկման գործընթացին մասնակից իրավասուբյեկտների

համար մատչելի են արդեն իսկ ստորագրված ընտրացուցակները: Դա ենթադրում է ոչ միայն իրենց իրավասությունների պատշաճ իմացությամբ դրանց ծանոթանալն ու քաղվածքներ կատարելը, ինչպես նախատեսված է ՀՀ ընտրական օրենսգրքի 31, 33 և 48–րդ հոդվածներով, այլև հնարավոր խախտումներ արձանագրելու դեպքում ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում քվեարկության արդյունքների հավաստիության վիճարկման հնարավորություն՝ ՀՀ ընտրական և վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով: Ուստի ընտրական հանձնաժողովների պարտականությունն է ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով նախատեսված կարգով մասնակցող իրավասուբյեկտների համար ընտրական իրավունքների պաշտպանության շրջանակներում այդ ցուցակներին լիարժեք ծանոթանալու պայմաններ ստեղծելը: Դա հատկապես անհրաժեշտ է դատական քննությունը ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածների պահանջներին համապատասխան երաշխավորելու ու հնարավոր ընտրախախտումները վերացնելու համար: Իսկ ընտրական գործընթացի վերահսկմանը մասնակցող իրավասուբյեկտների շրջանակի և նրանց գործունեության կարգի սահմանումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–179, 16 հոկտեմբերի, 1999 թ.

8. Միջազգային պրակտիկան վկայում է, որ ոչ–քաղաքացիների ընտրական իրավունքի հարցում կա այն միտումը, որ տեղական ինքնակառավարման մակարդակում նման իրավունք վերապահվում է զգալի թվով երկրներում: Օրինակ, եվրոպական երկրներում տեղական մակարդակում ընտրական իրավունք տրվում է թե՛ Եվրոպական միության անդամ պետությունների և սկանդինավյան երկրների քաղաքացի հանդիսացող անձանց, և թե՛ տվյալ երկրում բնակվող այլ օտարերկրյա ռեզիդենտներին (տվյալ պետության քաղաքացի չհանդիսացող և այդ պետության տարածքում օրինական կարգով բնակվող անձ): Բնորոշն այն է, որ տեղական ինքնակառավարման ոլորտում ընտրական իրավունքը կապվում է բնակության ցենզի հետ:

....

9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ընտրական իրավունքին վերաբերող նորմերն ամրագրված են 2, 3, 27, 44, 50–53, 64, 110 հոդվածներում: Սահմանադրական ընդհանուր մոտեցումը՝ տվյալ հարցի առումով, այն է, որ՝

ա) Սահմանադրության հոդված 2–ն ամրագրում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով իր իշխանությունն իրականացնելու ժողովրդի իրավունքը,

բ) սահմանազատելով «տեղական ինքնակառավարում» և «պետական կառավարում» հասկացությունները (հոդվ. 105, 107), պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը վերապահվում է Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիներին (հոդվ. 27),

գ) տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման նպատակն է համարվում համայնքի սեփականության տնօրինումն ու համայնքային նշանակության հարցերի լուծումը (հոդվ. 105): Միաժամանակ, նախատեսվում են՝ սեփականատիրոջ իրավունքը՝ սեփականության տիրապետման, օգտագործման և տնօրինման հարցում (հոդվ. 8), ինչպես նաև սեփականության օտարման սահմանադրական երաշխիքները (հոդվ. 28),

դ) որևէ ուղղակի սահմանափակում չի դրվում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման և ինքնակառավարման գործառույթի իրականացմանը տվյալ համայնքում մշտական բնակվող՝ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց մասնակցության հարցում:

....

12. ՀՀ Սահմանադրությունը, ուղղակիորեն ամրագրելով իրենց ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիների մասնակցության իրավունքը և դրա սահմանափակման հնարավորությունները, միաժամանակ չի բացառում որոշակի կարգավիճակ ունեցող, Հայաստանում օրինական կարգով մշտապես բնակվող, ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց (փախստականներին կամ բռնագաղթվածներին) տեղական ինքնակառավարման մակարդակում ընտրական իրավունքով օժտելու հնարավորությունը: Ավելին, Սահմանադրության 2, 8, 43, 105 հոդվածների պահանջների լիարժեք իրացումը ենթադրում է Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած փախստականներին օրենսդրորեն նման իրավունքի վերապահում:

.... Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 110 հոդվածով սահմանված է, որ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգը, լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով»: Օրենսդիրին վերապահելով «ընտրության կարգը» սահմանելու իրավասությունը, Սահմանադրության ընդհանուր պահանջը նաև այն է, որ այն իրականացվի ՀՀ սահմանադրական կարգի հիմունքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, և ՀՀ Ազգային ժողովի իրավասությունն է սահմանելու այդ իրավունքի իրացման կարգն ու պայմանները, մասնավորապես՝ հստակեցնելով մոտեցումը բնակության ցենզի վերաբերյալ:

ՍԴՈ–803, 8 մայիսի, 2009 թ.

11. ՀՀ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1–ին մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ընտրական իրավունքով օժտված անձանց վրա»:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության մեջ, ինչպես նաև օրենսդրական ակտերում «**յուրաքանչյուր ոք**» եզրույթը չի նշանակում «**քաղաքացիություն չունեցող անձ**»: Այն միաժամանակ ենթադրում է թե՛ քաղաքացիներին և թե՛ քաղաքացիություն չունեցող անձանց: Ուստի, մի կողմից՝ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1–ին մասի առաջին դրույթը չի կարելի մեկնաբանել այնպես, որ դրա առաջին մասը վերաբերում է ՀՀ քաղաքացիներին, իսկ երկրորդ մասը՝ ոչ քաղաքացիներին: Սակայն, մյուս կողմից, օգտագործվում է «նաև» եզրույթը, որը տվյալ համատեքստում ենթադրում է. «բացի սահմանվածից՝ մյուսը»: Եթե դա համադրում ենք հոդվածի նույն մասի երկրորդ նախադասության մեջ օգտագործված «քաղաքացիություն չունեցող **ընտրական իրավունքով օժտված....**» արտահայտության հետ, ապա ակնհայտ է դառնում, որ տվյալ հոդվածում նկատի է առնվում, այսպես կոչված, «յուրաքանչյուր այլ ոք» հասկացությունը: Այս հարցում տա-

րակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար ելակետ պետք է ընդունել ընտրական իրավունքի և դրա սահմանափակման վերաբերյալ սահմանադրական մոտեցումները:

ՀՀ Սահմանադրությունը ճանաչելով 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիների **ընտրական իրավունքը** (հոդվ. 30), միաժամանակ, ինչպես նշել ենք, նախատեսել է, որ «Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը»: Օրենսդիրը, Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորության շրջանակներում, նախատեսել է, որ բացի 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներից՝ «....տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նման իրավունք ունի նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք» (ՀՀ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մաս):

Այս համադրումից հետևում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեն 18 տարին լրացած, տվյալ համայնքում հաշվառված **ՀՀ քաղաքացի հանդիսացող բնակիչները**, ինչպես նաև տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և **փաստացի բնակվող**, սակայն ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք: Նման իրավակարգավորումը բխում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 1999 թ. ՍԴՈ–179 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների տրամաբանությունից, որում, մասնավորապես, շեշտվեց, որ օրենսդրին վերապահելով «ընտրության կարգը» սահմանելու իրավասությունը, Սահմանադրության ընդհանուր պահանջը նաև այն է, որ այն իրականացվի ՀՀ սահմանադրական կարգի հիմունքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, և ՀՀ Ազգային ժողովի իրավասությունն է սահմանելու այդ իրավունքի իրացման կարգն ու պայմանները, մասնավորապես՝ հստակեցնելով մոտեցումը բնակության ցենզի վերաբերյալ:

Սահմանադրական դատարանի այդ որոշման հիման վրա փոփոխություններ կատարվեցին ՀՀ օրենսդրության մեջ և ընտրակարգում՝ թույլատրելով առնվազն մեկ տարի տվյալ համայնքում հաշվառված և բնակվող, սակայն ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

2005 թ. սահմանադրական փոփոխություններն այս հարցում ամրագրել են այնպիսի մոտեցում, որը սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից համահունչ է սահմանադրական դատարանի՝ տվյալ հարցի վերաբերյալ վերոհիշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՈՒ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ–1154, 10 հունիսի, 2014 թ.

5. .... Առաջադրված հիմնախնդիրների առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականությունը գնահատել.

– միջազգային իրավական նորմերի կիրառելիության սահմանադրաիրավական երաշխավորման տեսանկյունից,

– անձանց սոցիալական ապահովության իրավունքը (այդ թվում՝ արտոնությունները) իրականացնելու և պաշտպանելու պայմանների ու կարգի օրենսդրական երաշխավորման տեսանկյունից,

– միջազգային պայմանագրերի և օրենքների հիման վրա և դրանց կատարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից որոշումներ ընդունելու վերաբերյալ սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

6. Սույն գործի առարկայի շրջանակներում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների՝ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակների մակարդակի հետ կապված հարցերի, ինչպես նաև դրանց վերահաշվարկման հետ կապված հարաբերությունների միջազգային իրավական կարգավորումն իրականացվում է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների «Զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին» 1992 թվականի փետրվարի 14-ի և «Զինվորականների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագրերով (Հայաստանի Հանրապետության համար դրանք ուժի մեջ են մտել ստորագրման պահից):

Ընդ որում, այդ համաձայնագրերի համադրված վերլուծությունը վկայում է, մասնավորապես, հետևյալը՝

ա) ԽՍՀՄ նախկին զինված ուժերի զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է այն պետության օրենսդրությամբ սահմանված կամ սահմանվող պայմաններով, նորմերով և կարգով, որի տարածքում բնակվում են նշված զինծառայողները և նրանց ընտանիքները,

բ) զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության մակարդակը հաստատվում է մասնակից պետությունների օրենսդրությամբ, որը չի կարող ավելի ցածր լինել, քան ԽՍՀՄ օրենսդրությամբ և այլ նորմատիվ ակտերով ավելի վաղ հաստատված մակարդակը («Զինվորականների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագրի 1-ին հոդված):

ՀՀ սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է միջազգային պայմանագրերի՝ որպես Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասի կարևորության և դրանց՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անվերապահ կատարման անհրաժեշտությանը (ՍԴՈ–966, ՍԴՈ–1050 և այլն):

Վեճի առարկա իրավահարաբերությունների առնչությամբ օրենսդիրը, հաշվի առնելով նաև միջազգային վերոհիշյալ համաձայնագրերով ստանձնված պարտավորությունների կատարման պահանջը, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ ամրագրել է զինվորական պաշտոնների հավասարության պայմանները, որպիսիք են հանդիսանում զինվորական կոչումն ու պաշտոնային դրույքը:

Չնայած այն հանգամանքին, որ դիմողը նախկին և նոր զինվորական պաշտոնների համապատասխանության չափանիշների ոչ լիարժեքության վերաբերյալ արտահայտված դիրքորոշման մասով որևէ հիմնավորում չի ներկայացնում, իսկ նման լիազորություն վերապահված է բացառապես ՀՀ Ազգային ժողովին, այնուամենայնիվ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշատակված համաձայնագրերով Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնել նախկին և նոր զինվորական պաշտոնների համապարփակ ցանկ սահմանելու և դրանք համապատասխանեցնելու պարտավորությունը: Ստանձնած պարտավորությունը վերաբերում է համարժեք սոցիալական երաշխիքների ապահովմանը: Միաժամանակ, հաշվի առնելով զինվորական պաշտոնների բազմազանությունը և ժամանակի ընթացքում դրանց հաճախակի փոփոխելիությունը՝ ՀՀ կառավարությունն իր՝ 1993 թվականի ապրիլի 19-ի թիվ 170 և հաջորդող այլ որոշումներով սահմանել է նաև ԽՍՀՄ նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակների վերահաշվարկման կարգը, պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները և դրույքները, որոնք կոնկրետացվել են այդ որոշումների հիման վրա ընդունված ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով:

Բացի դրանից, սոցիալական ապահովության ծավալներն ու ձևերը Համաձայնագրի մասնակից երկրներում տարբեր են, հետևաբար, ենթադրվում է, որ տարբեր կարող են լինել նաև նախկին ԽՍՀՄ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության մակարդակները: Ուստի Համագործակցության մյուս որևէ պետության օրենսդրությամբ ավելի բարձր գործակից սահմանելու հանգամանքը չի վկայում այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար՝ նախկին օրենսդրությամբ նշանակված և 1992 թվականի փետրվարի 1-ից հետո կատարված վերահաշվարկով կենսաթոշակային ապահովության մակարդակն ավելի ցածր է, քան ԽՍՀՄ օրենսդրությամբ և այլ նորմատիվ ակտերով ավելի վաղ հաստատված մակարդակը:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, ըստ որի՝ զինվորական կենսաթոշակ նշանակելիս պետք է հաշվի առնվի նաև զինծառայողի զբաղեցրած պաշտոնը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ՝ թե՛ նախկին, թե՛ ներկա օրենսդրական կարգավորումների շրջանակում զինվորական վերջին պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարման գումարի չափը դիտարկվում է որպես ելակետային ցուցանիշ՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու կամ վերահաշվարկելու համար: Այդ սկզբունքը գործել է նաև նախկին՝ ԽՍՀՄ սոցիալական ապահովության օրենսդրությամբ:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ զինվորական կենսաթոշակի հաշվարկման համար հիմք է ընդունվում ոչ թե զինվորական պաշտոնը, այլ յուրաքանչյուր պաշտոնին համապատասխան դրամական բավարարման գումարի չափը, որը ձևավորվում է պաշտոնային դրույքաչափից ու ամսական հավելավճարներից:

7. .... Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ օրենսդիր մարմինը, օրենքով սահմանելով կենսաթոշակների ծավալներն ու ձևերը, միաժամանակ ՀՀ կառավարությանն է պատվիրակել սահմանելու զինծառայողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույքաչափերը, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկը: Հետևաբար, գործող օրենսդրությամբ հիշյալ դրույքաչափերի հետ կապված հարցե-

րը պետք է կարգավորվեն առնվազն ՀՀ կառավարության, այլ ոչ թե ՀՀ վարչապետի որոշմամբ:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԸ

ՍԴՈ–1142, 2 ապրիլի, 2014 թ.

8. .... Սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ սոցիալական ապահովության վճարը հարկով փոխարինելը՝ դրա օգտագործման հարցում էապես ընդլայնում է իշխանության հայեցողության սահմանները: Սոցիալական ապահովության վճարները ոչ միայն ունեն նպատակային հասցեագրում, այլև ընդհուպ գործատուի կողմից կատարվում են անհատականացման սկզբունքով՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար: ....

9 .... Այս հարցում կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45–րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության հստակ իրացման պահանջը: Համապետական խնդիրների լուծման, ինչպես նաև մարդկանց սոցիալական ապահովության նյութական երաշխիքներ ստեղծելու նպատակով Սահմանադրության հիշյալ հոդվածով սահմանված է, որ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»: Այդ նպատակն էին հետապնդում «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված իրավակարգավորումները, որոնք, ինչպես նշվեց, միատեղվեցին 2010 թ. դեկտեմբերին ընդունված «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45–րդ հոդվածի իրավական բովանդակության բացահայտման շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել 2008 թ. մայիսի 13–ի ՍԴՈ–753 որոշման մեջ, որին անդրադարձել է նաև դիմող կողմը: Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ «....հիշյալ հոդվածում նշված հարկերը և տուրքերը ևս պարտադիր վճարումներ են, և, հետևաբար, հիշյալ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները, հարկերից և տուրքերից տարբերվելով հանդերձ, վերջիններիս հետ պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ»:

9. .... Հարկային օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Սահմանադրության 45–րդ հոդվածում մատնանշված պարտադիր վճարները.

ա) կրում են հանրային իրավական բնույթ, այսինքն՝սահմանվում և վճարվում են հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում,

բ) նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելու համար»:

Այս ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ եթե պարտադիր կուտակային վճարները հանդես գային որպես սոցիալական վճարներ, խելամիտ հարաբերակցության մեջ դրվեին ոչ սոցիալական ապահովության նպատակ հետապնդող հարկային այլ վճարների հետ, փոխանցվեին պետական բյուջեի հատուկ հաշվին և պայմանագրային հիմունքներով կամ օրենքով նախատեսված հստակ երաշխիքներով ու պետության պատասխանատվությամբ տրվեին կառավարման, ապա.

ա) համակարգը, բյուջետային վերահսկողության շրջանակներում, կհայտնվեր նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ուղղակի վերահսկողության դաշտում, ինչը կմեծացներ միջոցների խելամիտ կառավարման և վերադարձնելիության երաշխավորման հուսալիությունը,

բ) առարկայական կլիներ Հայաստանի Հանրապետության կառավարության պարտավորությունը՝ արդյունավետ վերահսկողության և հանրային-իրավական պատասխանատվության առումով,

գ) զգալի չափով կմեծանար հանրային վստահությունը համակարգի հուսալիության նկատմամբ,

դ) նման համակարգը հնարավորություն կտար օրենքով խրախուսման լրացուցիչ մեխանիզմներ նախատեսել նաև կամավոր կուտակային բաղադրիչի մասնակիցների համար:

10. .... Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իրավասու չէ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանը կենսաթոշակային ֆոնդերի ձևավորման քանակական հարաբերակցության կոնկրետ լուծումներ առաջարկել, ինչը նրանց հայեցողության սահմաններում է: Սակայն միջազգային փորձը և մեր երկրի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ առանձնահատկությունները վկայում են, որ հնարավոր է սոցիալական ապահովության համակարգի բարեփոխումների գործընթացին օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում մասնակից դարձնելով բոլոր գործատուներին՝ գտնել այդ հարաբերակցությունը՝ թեթևացնելով աշխատողների անհատական մասնակցության բեռը:

11. Պարտադիր կուտակային բաղադրիչի մասով առկա օրենսդրական կարգավորումները հստակ չեն լուծում առանցքային կարևորության այն խնդիրը, թե ինչպես վարվել նվազագույն աշխատավարձ ստացողների պարագայում, ինչը կարևոր սահմանադրական խնդիր է: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նախատեսված է Սահմանադրության 32-րդ հոդվածով, օրենքով սահմանվում է նվազագույն աշխատավարձի չափը: .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ նվազագույն աշխատավարձի դեպքում պարտադիր կուտակային կենսաթոշակի վճարման խնդիրն օրենսդրական համարժեք լուծում չի ստացել:

12. Նկատի ունենալով կենսաթոշակային ոլորտի համակարգային բարդությունները և ժամանակի գործոնի ազդեցությունը, գրեթե բոլոր երկրներում բարեփոխումների հաջողության գրավական է դիտվել հանրային վստահությունն այդ համակարգի ու իրականացվող քայլերի նկատմամբ: Այդ վստահությունը վերացական լինել չի կարող: Այն ձևավորվում է համակարգի գործառութային ու կառուցակարգային գործունակության երաշխիքներով, վերահսկողական համակարգի հուսալիությամբ, թափանցիկությամբ, մարդկանց սպասելիքների կանխատեսելիության աստիճանով: Առաջին հերթին օրենսդրական կանոնակարգումը պետք է նման երաշխիքներ ամրագրի և այս հարցում նախատեսի նաև խորհրդարանական ու այլ վերահսկողական լծակների արդյունավետ գործադրում:

.... Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Հստակ է, որ սահմանադրական տվյալ դրույթը վերաբերում է անձանց բոլոր իրավունքներին: Դրա հետ մեկտեղ, ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքների 8-րդ հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Նկատի ունենալով, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սեփականության իրավունքն օրենքով չսահմանափակվող իրավունք է, ուստի առավել ևս դրա պաշտպանության պայմաններն ու կարգը միմիայն օրենքով կարող են սահմանվել:

13. Համակարգի հուսալիության կարևորագույն երաշխիքներից մեկն էլ ռիսկերի կառավարումն է: Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ֆոնդի ռիսկերի կառա-

վարման համակարգին ներկայացվող պահանջները ևս օրենքով չեն սահմանվել, այլ վերապահվել են բացառապես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հայեցողությանը:

....

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Ավելին, «Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «եթե Կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, Կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ»: Առավել ևս նման իրավակարգավորման պայմաններում կարևորվում է կենսաթոշակային ֆոնդերի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջների, հիմնական սկզբունքների, ինչպես նաև կուտակային ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումների հիմնական շրջանակի օրենքով կանոնակարգումը:

14. Կենսաթոշակային ֆոնդերի համար սկզբունքային նշանակություն ունի ֆոնդում առկա փայերի ինդեքսավորման կամ տարեկան գնաճով ճշգրտման խնդիրը: Միջազգային պրակտիկայում ի սկզբանե թոշակային համակարգի առանցքային խնդիր է համարվել այն, որ կենսաթոշակները չպետք է կորցնեն իրենց գնողունակությունը: Հարցն այն է, որ կենսաթոշակի համար անհրաժեշտ միջոցի ձևավորման և սոցիալական ապահովության իրավունքի իրացման միջև առկա է ժամանակի գործոնի ազդեցությունը: Այն հաշվի չառնելու դեպքում անհնարին կլինի համարժեք միջոցներ կուտակել և երաշխավորել մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի իրացումը: Բացի դրանից, կուտակային վճարների ամբողջ գումարի տարեկան գնաճով ճշգրտումն այդ գումարներն ամբողջությամբ հետ ստանալու իրավունքի պաշտպանության նպատակ է հետապնդում և օրենքի կարգավորման առարկա է: Միաժամանակ, այս հարցում օրենքով նախատեսված երաշխիքների առկայությունը համակարգի հուսալիության կարևորագույն գրավականներից է: ....

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը չի համապատասխանում նաև իրավական որոշակիության սկզբունքին: Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: ....

15. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքների և պարտականությունների հավասարակշռումը, պարտականությունների հարցում թերացման համար համարժեք պատասխանատվության սահմանումն իրավակարգավորման և օրինաստեղծ գործունեության կարևորագույն պայմաններից են և հետևողական իրացում են պահանջում:

16. Նկատի ունենալով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող իրավահարաբերությունների առանձնահատուկ բնույթն ու բարդության աստիճանը, հաշվի առնելով միայն տասնամյակների ընթացքում վերջնական արդյունքների ամբողջական գնահատման հնարավորությունը՝ մարդկանց սահմանադրական իրավունքների պաշտպանության համապատասխան երաշխիքներ ապահովելու առումով, անհրաժեշտ էր նախատեսել սույն օրենքի իրավակարգավորումներին բնորոշ իրավախախտումների համար իրավական պատասխանատվության (քրեական, քաղաքացիական, վարչական) կոնկրետ և տարբերակված մոտեցումներ: Միջազգային պրակտիկան վկայում է, որ ընդհանրապես մասնավոր թոշակային ֆոնդերի հանդեպ հանրային վստահության աստիճանը ցածր է: Եվրոպական միության առանձին երկրներում հանրային հարցումները վկայում են, որ այդ վստահության աստիճանը 5-8 տոկոսի սահմաններում է:

Նման վիճակը թելադրում է հատկապես իրավասու սուբյեկտների պատասխանատվության իրավական երաշխիքների ամրապնդման անհրաժեշտություն:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցերը չեն կարող ենթադասվել տեխնիկական ու կազմակերպչական ցանկացած բնույթի հանգամանքների, այլ այդ հարցերում իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրական նորմերի անմիջական գործողության և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներով:

ՍԴՈ-1224, 7 հուլիսի, 2015 թ.

6. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.04.2006 թվականի ՍԴՈ-630 որոշման մեջ ամրագրել է, որ «....որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»:

Իր մեկ այլ՝ 13.05.2008 թվականի ՍԴՈ-753 որոշմամբ սահմանադրական դատարանը սահմանել է նաև, որ «Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը»:

.... Այս առումով էական է նշել, որ ցանկացած օրենք ուղղված է հասարակական որոշակի հարաբերությունների կարգավորմանը՝ հիմքում ունենալով այն նպատակը, որը կիրականանա օրենքի իրացման արդյունքում: Այսինքն՝ հենց օրենքով տվյալ օրենքի նպատակը սահմանելն ուղենշում է այն ցանկալի արդյունքը և դրան հասնելու միջոցները, որին ձգտում է օրենսդիրը հասարակական տվյալ հարաբերություններն իրավակարգավորման ենթարկելիս: Հետևաբար, «հնարավորություն ստեղծելը», «հնարավորություն ընձեռելը» անհրաժեշտ է դիտարկել այս մոտեցման շրջանակներում՝ նկատի ունենալով նաև այն, որ տվյալ իրավական ակտով սահմանված իրավակարգավորումների իրացումն **այն անհրաժեշտ միջոցն է, որով որպես նպատակ նշված հանգամանքներն իրողություն կարող են դառնալ**:

15. Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր չի կարելի համարել պետության պոզիտիվ պարտավորությունն օտարելու և քաղաքացու համար անհամաչափ պարտավորություն սահմանելու վերաբերյալ փաստարկները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված ու երաշխավորված նպատակային սահմանադրաիրավական գործառույթ է: ՍԴՈ-1142 որոշման մեջ սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. սոցիալական ապահովության «իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ սահմանադրական դրույթի հիման վրա (հոդվ. 37) սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով: Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ ձևերի ընտրության խնդիրը: Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով»:

Հարկ է նկատի ունենալ, որ կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակներում մասնակիցների համար սահմանված պարտականությունների ծավալը որոշվում է ելնելով մի շարք հանգամանքներից. պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններից,

սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներից, կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի ընթացիկ և հեռանկարային կենսաապահովման միջև խելամիտ հարաբերակցությունից և այլն:

Բացի դրանից, վիճարկվող օրենքը նախատեսում է, որ պետությունը կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակներում կատարելով իր՝ անձի սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման պոզիտիվ պարտավորությունը, մինչև անձի կենսաթոշակային տարիքի լրանալը կատարում է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի օգտին/համար կենսաթոշակային հատկացումներ, դրա մասին է վկայում ՀՕ-244-Ն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ «Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված անձանց համար (օգտին) մինչև նրանց կենսաթոշակային տարիքը լրանալը կուտակային հատկացումները կատարվում են հետևյալ չափով.

1) ամսական համախառն եկամտի 10 տոկոսի չափով՝ ամսական համախառն եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների և 10 տոկոսը լրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների (առավելագույնը 25000 դրամ) հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն ամսական շեմի 10 տոկոսը.

2) ձեռնարկատիրական եկամտի 10 տոկոսի չափով՝ ձեռնարկատիրական եկամտից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների և 10 տոկոսը լրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող համապատասխան միջոցների (առավելագույնը 300 000 դրամ) հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն տարեկան շեմի 10 տոկոսը.

3) «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով՝ ամսական 10 000 դրամի չափով.

4) անձնավորված (պարզեցված) հաշվարկի հիման վրա ներկայացված՝ սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ համարվող՝ սույն մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով չնախատեսված եկամուտներից հաշվարկված սոցիալական վճարների չափով»:

....

19. Մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության համապատասխան երաշխիքներ ապահովելու առումով ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1142 որոշման մեջ անհրաժեշտ էր համարել ընդգծել, որ օրենքի իրավակարգավորումներին բնորոշ իրավախախտումների համար հարկ է ամրագրել իրավական պատասխանատվության (քրեական, քաղաքացիական, վարչական) կոնկրետ և տարբերակված մոտեցումներ: Դիմողն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել էր, որ քննության առարկա դարձած օրենքն այս հարցերին գլխավորապես անդրադարձել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերահսկողական լիազորությունների ապահովման շրջանակներում (հոդվածներ 77-84): Սակայն, օրենքի կիրարկման հետ մեկտեղ, համարժեք փոփոխություններ չեն կատարվել նաև իրավական պատասխանատվություն նախատեսող այլ իրավական ակտերում: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը գործնականում շրջանցել են այդ հիմնախնդիրը: Իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 968.9-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, որ «Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին պատճառած վնասները հատուցվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով», ավելի շատ ունի վերացական բնույթ: Այնինչ այս ոլորտում պատասխանատվու-

թյան հստակ կանոնակարգումը համակարգի նկատմամբ վստահության կարևոր երաշխիք կարող էր հանդիսանալ: Այս խնդրին նույնպես մեծ կարևորություն է տրվում միջազգային պրակտիկայում: Սա արձանագրվել է ՍԴՈ-1142 որոշմամբ, որով այս առնչությամբ սահմանադրական դատարանը նաև նշել է, որ «....ուշադրության են արժանի Սլովենիայի և Ռումինիայի օրինակները: Իսկ ԱՄՆ-ում թոշակային ֆոնդերի հետ կապված ֆինանսական իրավախախտումներն օրենքով համարվում են **առանձնապես ծանր հանցանք** և ազատազրկման ձևով պատիժ է սահմանվում 20 տարի և ավելի»: Հաշվի առնելով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, ըստ որի՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայը սոցիալական նպատակներով թողարկվող անվանական արժեթուղթ է, և նույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը, համաձայն որի՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը պետության կողմից դրանց ձեռքբերման պահից հանդիսանում են մասնակցի սեփականությունը, սահմանադրական դատարանը փաստում է, որ կենսաթոշակային ֆոնդերի փայերի նկատմամբ տարածվում են քաղաքացիական և քրեական օրենսդրությամբ նախատեսված սեփականության և արժեթղթերի պաշտպանությանն ուղղված ընդհանուր կառուցակարգերը: Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՍԴՈ-1142 որոշման մեջ սահմանադրական դատարանը մատնանշել է «պատասխանատվության կոնկրետ և տարբերակված միջոցներ» մշակելու նպատակահարմարությունը: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՍԴՈ-1142 որոշման մեջ արտահայտված վերոնշյալ իրավական դիրքորոշումները ՀՀ օրենսդրության շրջանակներում իրենց արտացոլումը գտել են մասամբ, ինչը, սակայն, չի հանգեցնում քննության առարկա օրենքների՝ ՀՀ Սահմանադրությանը հակասության, քանզի սահմանադրական դատարանի նշված իրավական դիրքորոշումների կատարումը պահանջում է համակարգային փոփոխություններ, որոնք իրենց տեղը պետք է գտնեն նաև քաղաքացիաիրավական, վարչաիրավական և քրեաիրավական բնագավառների համապատասխան իրավական ակտերում: Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումն ուղղված էր ՀՀ Ազգային ժողովին և կոչված էր համակարգային մոտեցմամբ ապահովելու կուտակային կենսաթոշակային համակարգի արդյունավետ գործողությունը: Այն դեռևս ամբողջությամբ չի իրացվել և պահպանում է իր հրատապությունը:

25. Վերոշարադրյալ դիրքորոշումները վերաբերում են դիմողի կողմից վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցերին: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նախորդ իրավակարգավորումների համեմատ որոշակի դրական տեղաշարժեր ապահովելով հանդերձ, նոր իրավակարգավորումներում սույն որոշման մեջ արձանագրված ոչ լիարժեք կարգավորումները նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1142 որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների դեռևս ոչ ամբողջական իրացման հետևանք են: **Օրենսդրական հետագա կարգավորումները համալիր բնույթ պետք է հաղորդեն խնդրի համակարգային լուծմանը**՝ հետևողականորեն հաշվի առնելով նաև տվյալ հիմնահարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1142 և սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ-1302, 16 սեպտեմբերի, 2016 թ.

6. «....Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սկզբունքորեն ստեղծված իրավիճակի հաղթահարման նպատակ է հետապնդել «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի լրացումը 21.06.2014 թ. ՀՕ-55-Ն ՀՀ օրենքով, որով լուծվում է հետևյալ խնդիրը. կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած դատավորների համար թույլ չտալ սոցիալական պաշտպանվածության երաշխիքների թուլացում և նրանց նկատմամբ չտարածել «Պետական պաշ-

տոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը»:

«.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորմամբ հանդերձ՝ առկախ մնացին որոշակի խնդիրներ՝ կապված առնվազն 10 և ավելի տարի ստաժ ունեցող դատավորների կենսաթոշակային հարցերի գործնական լուծման հետ: Մասնավորապես, օրենսդրի կողմից «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրվեց նաև հետևյալ դրույթը. «Եթե սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը նշանակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով»: ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **նախ՝** տվյալ դրույթը որոշակի անհամապատասխանության մեջ է գտնվում նույն մասում ամրագրված այն դրույթի հետ, համաձայն որի. «Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում»:

Երկրորդ՝ տվյալ դրույթն օրենսդրական փոփոխությունների ընդհանուր նպատակից բխող որևէ խնդիր չի լուծում և իրավակիրառ պրակտիկայում տարընթեռնումների տեղիք է տալիս:

Երրորդ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված հաշվարկները վկայում են, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ՀՀ վերաքննիչ ու ՀՀ վճռաբեկ, ինչպես նաև վարչական դատարանների դատավորների համար, ովքեր 2014 թ. հուլիսի 1-ի դրությամբ 10-ից ավելի տարի ստաժ ունեն, կախված այդ պաշտոնում աշխատանքային ստաժի տևողությունից նախկին և ներկա աշխատավարձերի հիմքով կենսաթոշակն հաշվարկելիս սոցիալական ապահովության երաշխիքների ոչ համաչափ տարբերակում է առաջանում:

Նման իրավիճակը պետք է հաղթահարվի, մասնավորապես՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում՝ նկատի ունենալով, որ այն անձանց համար, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում, կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվարկային հիմք է ընդունվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը՝ եթե այն ավելի մեծ է, քան «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը: Ընդ որում, ակնհայտ է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «սույն օրենքի» արտահայտությունը վերաբերում է հենց այդ օրենքին»:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-966, 3 հունիսի, 2011 թ.

6. Անդրադառնալով «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի խնդիրն է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում օրենքով նախատեսել անհրաժեշտ իրավակարգավորումներ՝ ապահովելու համար այդ պարտավորությունների կատարումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին, հետևաբար՝ նաև ՀՀ Սահմանադրության 9-

րդ հոդվածում ամրագրված սկզբունքին համապատասխան, որոնք միտված լինեն ոչ միայն պետությունների հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերություններ հաստատելու, այլև անձանց իրավունքները երաշխավորված պաշտպանելու նպատակին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված **համաձայնագրի դրույթների ոչ լիարժեք իրացումը պայմանավորված է ոչ թե վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրով, այլ իրավակիրառական պրակտիկայում այդ նույն օրենքի 3-րդ հոդվածի նորմատիվ պահանջի անտեսմամբ:**

....

7. ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշումներ՝ ապահովելու համար նաև միջազգային պայմանագրերի և օրենքների կատարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

.... ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում դիմող կողմի դիրքորոշումը՝ ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման սահմանադրականության վերաբերյալ, գտնելով, որ, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ (1-ին և 4-րդ մասեր), 42-րդ (1-ին մաս), 44-րդ, 85-րդ (2-րդ մաս) հոդվածներով, ինչպես նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ կառավարությունը պարտավոր էր իր որոշմամբ ապահովել Հայրենական մեծ պատերազմի վետերանների և նրանց հավասարեցված անձանց սոցիալ-տնտեսական արտոնությունների գործողությունը կամ դրանց դրամական փոխհատուցումը՝ նաև այն կատեգորիայի անձանց համար, որը նախատեսված է հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունն իր՝ 2011 թ. մայիսի 5-ի թիվ 672-Ն որոշմամբ սույն գործով վիճարկվող թիվ 207-Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչել: Իր՝ 2011 թ. մայիսի 5-ին ընդունված «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու և վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը վերակարգավորել է Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց և զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման և վճարման կարգի հետ կապված՝ 2011 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունները: Նման օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկվել են նաև «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված անձանց:

11. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ԳՆՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՍԴՈ–648, 26 սեպտեմբերի, 2006 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետը սահմանում է առուվաճառքի պայմանագրի հասկացությունը և կողմերի հիմնական պարտականությունները, սակայն դրանց կատարման պայմաններն առավել մանրամասնորեն կարգավորված են 470 հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ հոդվածներով, օրինակ՝ 472–474 հոդվածները նվիրված են պայմանագրի առարկան փոխանցելուն, 501–505 հոդվածները կարգավորում են պայմանագրով նախատեսված գումարը վճարելու հետ կապված հարաբերությունները և այլն: Մասնավորապես, 501 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Գնորդը պարտավոր է ապրանքի համար վճարել առուվաճառքի պայմանագրով նախատեսված գինը ....», իսկ համաձայն 502 հոդվածի՝ «Գնորդը պարտավոր է վճարել ապրանքի համար այն վաճառողից ստանալուց անմիջապես առաջ կամ հետո, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով, իրավական ակտերով կամ առուվաճառքի պայմանագրով և չի բխում պարտավորության էությունից»: Ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի դրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ հոդվածների համադրությամբ: Այս պարագայում, վիճարկվող հոդվածի 1-ին կետի դրույթները հստակ իրավական բովանդակություն են ստանում՝ սահմանելով առուվաճառքի պայմանագրի առարկան և կողմերի իրավական վիճակը:

Այս համատեքստում հստակ է նաև «գնորդ» հասկացության իրավական բովանդակությունը: Օրենսգրքի 470 հոդվածի 1-ին կետի դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրն այդ իմաստով գնորդ է համարում քաղաքացիական իրավունքի այն սուբյեկտին, որը միաժամանակ ապահովում է հետևյալ պայմանները.

ա) առուվաճառքի պայմանագրում նշված է որպես գնորդ,

բ) պարտավորվում է ընդունել պայմանագրով նախատեսված գույքը,

գ) պարտավորվում է վճարել պայմանագրով նախատեսված գույքի համար:

Գնորդի նման պարտականությունը սահմանված է նաև օրենսգրքի 500–502 հոդվածներով:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի դրույթներին համապատասխան իրականացված գործարքի արդյունքում «գնորդը» օրինական կարգով կարող է սեփականության իրավունք ձեռք բերել, և տվյալ պարագայում օրենսգրքի վիճարկվող հոդվածի և Սահմանադրության 3, 8 և 31 հոդվածների դրույթների միջև որևէ հակասություն չի կարող առաջանալ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–1197, 7 ապրիլի, 2015 թ.

8. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի սահմանադրականության հարցին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթում **առկա է սահմանադրականության խնդիր**, քանի որ դատարան դիմող սուբյեկտ-

ների շրջանակում բացակայում է սուբյեկտը, ով պետք է ճանաչվի գործունակ: Արդյունքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ գործունակ ճանաչված անձը զրկվում է սեփական գործունակությունը ճանաչելու վերաբերյալ լսվելու, դատական քննությանը մասնակցելու և դատական ակտի բողոքարկման իրավունքների իրականացման հնարավորությունից:

....

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, չնախատեսելով գործունակության ճանաչման համար տվյալ անձի լսվելու և դատաքննությանը մասնակցելու հնարավորություն, փաստացիորեն զրկում է այդ անձին ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների իրականացման հնարավորությունից:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կիրառվող «գործունակություն», «անգործունակություն» և «սահմանափակ գործունակություն» հասկացություններին:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հասկացությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածներում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է. «իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից»:

Նույն օրենսգրքի 31-րդ հոդվածը բացահայտում է անգործունակության հատկանիշները՝ ամրագրելով, որ «Քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածը, իր հերթին, անդրադարձ է կատարում «սահմանափակ գործունակություն» հասկացության սահմանմանը, մասնավորապես նշելով, որ «ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

....

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում **արձանագրել, որ հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում համապատասխան անդրադարձ պետք է լինի նաև այս խնդրին, ինչը թույլ կտա բացառել անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները՝ առավել ամբողջական դարձնելով անձին «անգործունակ» կամ «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը**:

ԳՐԱՎԸ

ՍԴՈ-1294, 19 հուլիսի, 2016 թ.

6. .... Գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու իրավահարաբերություններում գույքի սեփականատիրոջ կամքի և համաձայնության արտահայտման վերաբերյալ հարկ է արձանագրել հետևյալը.

նախ՝ կնքելով գրավի պայմանագիրը՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իրեն պատկանող գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հնարավոր դադարման վերաբերյալ,

երկրորդ՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում արտադատական կարգով գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորության վերաբերյալ: Ընդ որում, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ նման համաձայնությունը կարող է տրվել ինչպես գրավի պայմանագրով, այնպես էլ գրավատուի և գրավառուի միջև կնքված առանձին համաձայնությամբ,

երրորդ՝ գրավադրված գույքի վրա գրավառուի կողմից արտադատական կարգով բռնագանձում տարածելուց առաջ գրավատուն հնարավորություն ունի կա՛մ միջոցներ ձեռնարկել գրավով ապահովված պարտավորությունը կատարելու համար և դրանով կանխել գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորուստը, կա՛մ դատական կարգով վիճարկել արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը:

Վերոհիշյալ երեք հնարավոր իրավիճակներից առաջին երկուսում (որոնք կարող են համընկնել գրավի պայմանագրում արտադատական կարգով բռնագանձման պայման նախատեսվելու դեպքում) գրավադրվող գույքի սեփականատիրոջ կամաարտահայտությունը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ համապատասխան պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, և այդպիսի ակտիվ գործողությունների կատարումը պարտադիր պայման է: Երրորդում սեփականատիրոջ կամքը կարող է արտահայտվել պասիվ գործողությամբ, երբ տեղեկանալով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին՝ նա չի ձեռնարկում արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելուն ուղղված՝ օրենքով սահմանված որևէ գործողություն:

Վերջինիս դեպքում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն սեփականատիրոջ իրավունքների ապահովման և արդյունավետ պաշտպանության իրավակարգավորումները:

.... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող հոդվածի համատեքստում սեփականության իրավունքի պաշտպանությունը սերտորեն փոխկապակցված է դատական պաշտպանության իրավունքի հետ: Վերլուծելով վիճարկվող հոդվածի դրույթները՝ հարկ է առանձնացնել գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման հետևյալ իրավական երաշխիքները.

1) գրավատուի պատշաճ ծանուցումը գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու մասին (բռնագանձման ծանուցում),

2) արտադատական կարգով բռնագանձման օրինականության դատական վիճարկման հնարավորությունը,

3) գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելը գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո,

4) գրավառուի կողմից գրավի առարկայի իրացումը տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

Մյուս կողմից, օրենսգրքի 249-րդ հոդվածը սահմանում է գրավատուի մի շարք պարտականություններ, մասնավորապես՝ դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար»: Այս դրույթը, դիտարկելով ՀՀ Սահմանադրության 10-րդ (Սեփականության երաշխավորումը), 60-րդ (Սեփակա-

նության իրավունքը), ինչպես նաև 61-րդ (Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը) և 78-րդ (Համաչափության սկզբունքը) հոդվածների լույսի ներքո, Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն անհամաչափ ծանրաբեռնում է գրավատուի՝ արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելու հնարավորությունը, քանի որ կասեցնելու համար պարտավորեցնում է գրավատուին տրամադրել ապահովում ոչ թե գրավառուի հնարավոր վնասների, այլ գրավ դրված առարկայի արժեքի չափով: Մի շարք դեպքերում գրավադրված գույքի արժեքը մի քանի անգամ կարող է գերազանցել ոչ միայն գրավով ապահովված հիմնական պարտավորության, այլ՝ նաև գրավառուի հնարավոր վնասների չափը: Նման իրավակարգավորման պարագայում գրավատուի համար հիմնականում անիրագործելի է դառնում գրավի առարկայի բռնագանձման ընթացքը կասեցնելու վերաբերյալ օրենքով նախատեսված իրավունքի իրացումը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գրավառուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և հետապնդում է գրավատուի նաև այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ: Մասնավորապես, ծանուցման պահանջը կոչված է ապահովելու գրավատուի մեկ այլ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 252-րդ հոդվածով սահմանված իրավունքը, որի համաձայն՝ «պարտապանը կամ երրորդ անձ հանդիսացող գրավատուն իրավունք ունի, մինչև գրավի առարկան վաճառելը, ցանկացած ժամանակ դադարեցնել դրա վրա բռնագանձումը և դրա իրացումը՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է: Այդ իրավունքը սահմանափակող համաձայնությունն առոչինչ է»:

Բացի դրանից, օրենսդրի կողմից գրավառուի՝ գրավատուին պատշաճ կարգով ծանուցելու պարտականության ամրագրումը նպատակ է հետապնդում երաշխավորելու գրավատուի դատական պաշտպանության իրավունքը:

Այդ առումով, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է կիրառվի վերոնշյալ նորմերով նախատեսված՝ գրավատուի իրավունքների ապահովման համատեքստում, հակառակ դեպքում՝ օրենսդրությամբ գրավատուին ընձեռված՝ բռնագանձման օրինականությունը վիճարկելու կամ բռնագանձումը դադարեցնելու իրավունքների իրականացումն արդյունավետ չի լինի և չի բխի ՀՀ Սահմանադրության պահանջներից:

Մյուս կողմից, օրենսդիրը վիճարկվող հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններում որպես պատշաճ ծանուցման հասցեատեր դիտարկում է ոչ թե գրավատուին, այլ պարտապանին: Մասնավորապես՝ «Բռնագանձման ծանուցումը **պարտապանին** պատշաճ ձևով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաև խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար: Բռնագանձման ծանուցումը **պարտապանին** հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել»:

Ըստ վերոհիշյալ կարգավորման՝ գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում կատարելու մասին գրավառուն պատշաճ ձևով ծանուցում է և՛ գրավատուին, և՛ պարտապանին, սակայն միայն պարտապանին ծանուցելուց երկու ամիս հետո նա օրենքի ուժով իրավունք է ստանում իրացնելու գրավի առարկան:

.... Այդ առումով, օրենսդիրը հստակորեն և միանշանակ չի կարգավորել այն հարցերը, թե գրավատուին ինչ ժամկետում ծանուցելուց հետո գրավառուն կարող է իրացնել գրավի առարկան: Վիճարկվող հոդվածում որևէ խոսք չկա այն գրավատուի կամ գրավատուների մասին, որոնք պարտապան չեն հանդիսանում: Նման կարգավորումները մի շարք խնդիրներ կարող են առաջացնել մարդու սեփականության հիմնարար իրավունքի երաշխավորման տեսանկյունից: Մասնավորապես՝ այդ անորոշության հետևանքով պարտապան չհանդիսացող գրավատուները պարտապան հանդիսացող գրավատուների համեմատ չեն օգտվում իրենց սեփականության պաշտպանության հավասար պայմաններից: Գրավով ապահովված պարտավորությունը չկատարող կամ ոչ պատշաճ կատարող անբարեխիղճ պարտապան-գրավատուն պարտադիր կերպով ծանուցվում է բռնագանձման մասին, որից միայն երկու ամիս անց կարող է նրա գրավադրված գույքն իրացվել, իսկ պարտապան չհանդիսացող գրավատուին նման հնարավորություն կարող է և չտրվել, քանի որ վիճարկվող դրույթում ամրագրված երկամսյա ժամկետն առնչվում է պարտապանին, այլ ոչ թե գրավատուներին: Բացի դրանից, նման կարգավորումը երրորդ անձ հանդիսացող գրավատուին կարող է զրկել գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից, ինչպես նաև գործնականում կարող է խոչընդոտ հանդիսանալ նաև օրենսգրքի 252-րդ հոդվածում ամրագրված իրավունքի իրականացման համար:

8. .... Օրենսգրքի վիճարկվող 249-րդ հոդվածը նվիրված է գրավադրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգին, ինչը հանդիսանում է գրավի պայմանագրի միջոցով սեփականատիրոջ՝ օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգ: Սակայն նման ընթացակարգը պետք է լինի իրավաչափ, ինչպես նաև չխախտի օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Ինչպես վիճարկվող դրույթի, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, **որ օրենսդրական կարգավորման անորոշությունը հնարավորություն չի տալիս հստակ հասկանալու, թե պարտապան չհանդիսացող գրավատուն ինչ ընթացակարգային երաշխիքներից է օգտվում բռնագանձման ծանուցման առնչությամբ,** ինչն էլ վիճարկվող կարգավորումները երրորդ անձ հանդիսացող գրավատուի առնչությամբ դարձնում է ոչ արդյունավետ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «գրավատու» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ տվյալ իրավահարաբերություններում «գրավատու» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև այդ հարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններում «պարտապան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ «պարտապան» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

Խնդիրն այն է, որ «Բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո» ձևակերպման բովանդակային ծավալում այլ գրավատուներին չներառելով՝ օրենսդիրն երրորդ անձ հանդիսացող գրավատուի համար հստակ ու միանշանակ չի երաշխավորում այդ երկամսյա ժամկետը, ինչը խախտում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս ամենի արդյունքում երրորդ անձ հանդիսացող գրավատուն կարող է զրկվել ոչ միայն գրավադրված գույքի բռնագանձումը և դրա իրացումը դադարեցնելու իր իրավունքից՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է, այլ՝ նաև բռնագանձման օրինականությունը վիճարկելու իրավունքից:

ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ, ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐ

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

5. .... Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված վերոհիշյալ մոտեցումներից է նաև ելնում՝ գնահատելու համար դիմող կողմի փաստարկները վիճարկվող նորմերի **իրավական անորոշության** առնչությամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների առանձնահատկություններով (գնահատման ենթակա հանգամանքների բազմազանությամբ) է պայմանավորված հայեցողական որոշակի այն ազատությունը, որն օրենսդիրը տրամադրել է դատարաններին՝ վիճարկվող հոդվածի նորմերի կիրառմամբ որոշումներ կայացնելիս: Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ դատական հայեցողությունը՝ մանավանդ այնպիսի դեպքերում, երբ քննության առարկա է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության սահմանափակման հարցը, **պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի նորմերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան մեկնաբանությամբ կիրառելու պահանջով, այլև միջազգային պրակտիկայով, և հատկապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով:**

.... Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ թե՛ մեր երկրում և թե՛ եվրոպական մի շարք այլ երկրներում վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունների ու նոր իրավակարգավորման հիմնական տրամաբանությունը հենվում է ոչ թե մեղավորության կանխավարկածի վրա (նախատեսել պատիժ՝ արարքի համար), այլ անմեղության կանխավարկածի վրա (երաշխավորել անձի անմեղությունը՝ վերականգնելով նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը): Երբ անձի պատվի և արժանապատվության արատավորումը հետևանք է դիտավորության, չարամտորեն իրականացված գործողության, ունի շարունակական բնույթ ու առնչվում է լրատվամիջոցին, ապա խնդիրը տեղափոխվում է նաև իրավահարաբերությունների կարգավորման այլ հարթություն, և հարցը կարող է քննության առարկա դառնալ ընդհուպ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման տեսանկյունից: Միջազգային իրավական մոտեցումները ելնում են այն կանխավարկածից, որ լրատվության կարևորագույն առաքելություններից են՝ ասել միայն ճշմարտությունը և բարեխղճորեն ստուգել փաստերը: Անհավատարմությունն այս առաքելությանը, կեղծ փաստերով շահադիտական կամ կանխամտածված այլ նպատակներով անձին անվանարկելը, նրա՝ անմեղության կանխավարկածին վնաս հասցնելը կամ անձնական կյանքին միջամտելը պետք է համարժեք իրավական գնահատական ստանան: Իր հերթին, երաշխավորված ու պաշտպանված պետք է լինի խոսքի և արտահայտվելու ազատության իրավունքը, և պատասխանատու մամուլի կենսունակությունը չպետք է վտանգվի:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ, մի կողմից, տեղեկատվություն տարածելու և խոսքի ազատության, մյուս կողմից՝ անձի՝ իր հեղինակության նկատմամբ հարգանքի իրավունքի միջև փոխհարաբերությունը պետք է քննության առնվի ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածով սահմանված՝ մարդու արժանապատվության հարգման ու պաշտպանության և Սահմանադրության 27-րդ հոդվածով սահմանված՝ ժողովրդավարական պետությունում քաղաքական բազմակարծության անքակտելի տարր հանդիսացող՝ խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի հետ հարաբերակցության լույսի ներքո:

Բացի դրանից, քննության առարկա հոդվածի իրավակարգավորման շրջանակներում անհրաժեշտ է հաշվի առնել նաև սահմանադրական մի շարք այլ հիմնարար սկզբունքների

երաշխավորման անհրաժեշտությունը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է.

«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Համաձայն Սահմանադրության 14-րդ հոդվածի՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»: Իսկ Սահմանադրության 23-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը»:

Միաժամանակ, Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է»:

ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածների, ինչպես նաև 43-րդ և 47-րդ (1-ին մաս) հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ մարդու արժանապատվությունից՝ ներառյալ պատիվը, բարի համբավը և մասնավոր կյանքը, բխող իրավունքները և ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են արդարացնել արտահայտվելու ազատության սահմանափակումը միայն **իրավաչափ շրջանակներում**: Այդ մոտեցումն է դրված նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10.2-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 17 և 19.3-րդ, Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրի 12-րդ հոդվածների հիմքում:

.... Բերված մոտեցումների, ինչպես նաև եվրոպական երկրների տարբեր այլ դատարանների իրավական դիրքորոշումների համեմատական վերլուծությունը վկայում է, որ.

ա) սահմանադրական դատարանները խնդրին առաջին հերթին մոտենում են իրավունքների սահմանափակման թույլատրելիության տեսանկյունից: Այս առումով ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը, ի տարբերություն 27-րդ հոդվածի, Սահմանադրության 43-րդ հոդվածի հիմքով ենթակա չէ սահմանափակման,

բ) կարևորելով խոսքի ու արտահայտվելու ազատության իրավունքի երաշխավորումը ժողովրդավարական հասարակության համար, այն չի կարող անհամաչափորեն սահմանափակվել՝ վտանգելով սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ ու գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը,

գ) արտահայտվելու ազատության իրավունքը՝ այնքանով, որքանով կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով, կարող է պայմանավորվել օրենքով նախատեսված սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք, ի մասնավորի, անհրաժեշտ են այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու համար,

դ) գործնական խնդիրն առավելապես ոչ թե օրենքով իրավաչափ սահմանափակումների կամ պատասխանատվության միջոցների նախատեսման մեջ է, այլ վերաբերում է դրանց համաչափության ապահովմանն ու դատական պրակտիկայում դրա երաշխավորմանը՝ որպես պետության անմիջական պարտականություն: Վերջինս պետք է հենվի այն ելակետային սկզբունքի վրա, որ հանրային շահի գերակայության տեսանկյունից լրատվամիջոցի կանխարգելիչ ու հակակշռող նշանակությունն ավելին է, քան նյութական միջոցներով սխալն ուղղելու անհրաժեշտությունը: Այս հանգամանքը կոնկրետ իր արտացոլումն է գտել վեճի առարկա հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության և 5-րդ մասի 2-րդ կետի իրավակարգավորման շրջանակներում և պետք է համարժեք ձևով հաշվի առնվի դատական պրակտիկայում:

Սահմանադրաիրավական այս հիմնարար դրույթները քննության առարկա իրավահարաբերությունների շրջանակներում ունեն ելակետային ու բացարձակ նշանակություն ոչ միայն օրինաստեղծի, այլև իրավակիրառողի ու այդ հարաբերությունների մասնակիցների համար: Այդ դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում դրանք հիմնականում արտացոլված են համակարգային օրգանական կապի մեջ և ապահովում են իրավաչափ հավասարակշռություն իրավունքի ու դրա պաշտպանության երաշխիքների, հանրային ու անհատական շահերի, իրավական ու բարոյական չափորոշիչների միջև: Օրենքը սահմանադրական ճիշտ չափորոշիչներ է դրել տվյալ հիմնախնդրի իրավական կանոնակարգման հիմքում: **Դրանց համարժեք ընկալումը, իրավաչափ կիրառումը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ճշմարտության համակարգային բացահայտումը դատական պրակտիկայի խնդիրն է:**

Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը ելնում է նաև այն իրողությունից, որ Հայաստանի Հանրապետությունում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով: Այդ բնագավառի հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող հոդվածով, այլև տեղեկատվության ազատության, զանգվածային լրատվության իրավակարգավորման բնագավառի օրենսդրության ակտերով («Տեղեկատվության ազատության մասին» 2003 թ. սեպտեմբերի 23-ին, «Զանգվածային լրատվության մասին» 2003 թ. դեկտեմբերի 13-ին ընդունված օրենքներով և այլն):

Միաժամանակ, քննության առարկա դարձնելով վերոհիշյալ ազատությունների և օրենքով պաշտպանվող այլ շահերի միջև հավասարակշռության խնդիրը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ ազատությունները միշտ պետք է գերակայեն այն դեպքում, երբ տեղեկատվության բացահայտումն անհիմն չի եղել, հետապնդել է իրավաչափ նպատակ և տվյալ տեղեկատվությունը վերաբերում է հասարակական հետաքրքրություն ներկայացնող պետական գործերի և անձանց:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի քննության համար ելակետային նշանակություն ունի «զրպարտություն» և «վիրավորանք» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը դեռևս 2005 թվականին անդրադառնալով այդ հասկացությունների մեկնաբանմանը, առանձնացրել է երեք արտահայտություն՝ անվանարկում(defamation), գրավոր արտահայտություն, որը վնասում է անձին(libel), ինչպես նաև հայտարարություն կամ գործողություն, որ ասվել կամ արվել է այլ անձի **վիրավորելու նպատակով**(insult): Անվանարկումը լինելով երևույթի ընդհանրական բնութագրում՝ իրավական հստակության տեսանկյունից պահանջում է որոշակիաց-

նել դրա դրսևորումները՝ անցողիկ կամ մնայուն բնույթը, արտահայտման ձևը, դիտավորության ու կեղծ փաստի առկայությունը և այլն, ինչը կարևոր է փոխհատուցման կանոնակարգման առումով:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա հոդվածի նշված դրույթն արտացոլում է միջազգային պրակտիկայում ձևավորված՝ «ողջամիտ հրապարակումների» պաշտպանության սկզբունքը, որի համաձայն՝ անձն ազատվում է զրպարտություն համարվող տեղեկատվություն տարածելու համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխղճորեն՝ **առանց տուժողի հեղինակությանն ու պատվին վնաս պատճառելու դիտավորության:**

....

8. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով արարքի հրապարակայնության փաստի, հանգամանքների պարզումն իրավակիրառական պրակտիկայի խնդիր է: Այն չի կարող ընկալվել խիստ տարածական, քանի որ վիճարկվող հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում օրենսդիրը հստակեցրել է անձին «վիրավորանք» հասցնելու և (կամ) «զրպարտելու», այսինքն՝ որոշակի նպատակային գործողություններ կատարելու նորմատիվ-նկարագրական հատկանիշները, որոնցից միանշանակ բխում է, որ այդ գործողությունները պետք է կատարվեն իրականությանը չհամապատասխանող **փաստացի տվյալները**, կամ «խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու» նպատակ հետապնդող արտահայտությունը **հրապարակայնորեն,** այդ թվում՝ նաև լրատվության միջոցով ներկայացնելով: Ակնհայտ է, որ վեճի առարկա հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է միայն **հանրության առջև, առնվազն երրորդ անձի ներկայությամբ անձին հանիրավի անվանարկելու հետևանքների հաղթահարմանը:** Իր կարևորությամբ հանդերձ, վիճարկվող հոդվածի իրավակարգավորման շրջանակներից դուրս է մասնավոր-իրավական բնույթի հարաբերությունների կարգավորումը: Այդուհանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դա ոչ թե օրենսգրքի տվյալ հոդվածի, այլ ընդհանուր իրավակարգավորման բաց է, և այն հաղթահարելու համար ՀՀ Ազգային ժողովն իր իրավազորության շրջանակներում առանձին քննարկման առարկա պետք է դարձնի ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող հոդվածի վերոհիշյալ նորմերի սահմանադրականության գնահատման տեսանկյունից, դրանք իրենց ընդհանուր իրավակարգավորիչ բովանդակությանն ու նշանակությանը համապատասխան հետապնդում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում երաշխավորված՝ ազատ խոսքի իրավունքի իրացման ողջամիտ սահմանափակման նպատակ՝ այն շրջանակներում, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության 43 և 47-րդ հոդվածների պահանջներից: Սակայն իրավակիրառման խնդիրն է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այս կամ այն գործողությունը որպես «զրպարտություն» կամ «վիրավորանք» որակել նորմատիվ-նկարագրական այն հատկանիշների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի վերոհիշյալ նորմերում և բխում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջներից:

Վեճի առարկա հոդվածի նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման և իրավակիրառական պրակտիկայում դրանց միատեսակ ընկալման անհրաժեշտությունից ելնելով՝ սահմանադրական դատարանը կարևորում է ոչ միայն «զրպարտությունը» և (կամ) «վիրավորանքը» իրենց նորմատիվ նկարագրությանը համապատասխան մեկնաբանելը, այլև այդպիսի գործողությունների կատարման **միջոցների և ձևերի** ճշմարտացի՝ իրենց իրավական դրսևորմանը համապատասխանող գնահատումը: Մասնավորապես, ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ **փաստական** (կամ՝ փաստացի) **տվյալները,** դրանք **ներկայացնելու ձևերը** (հրապարակային կամ ոչ հրապարակային) և դրանց հիմնավորվածությունը գնահատելն անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության յուրաքանչյուր գործով ունի իրավական առանձնահատուկ կարևորություն՝ որոշելու համար, թե որոշակի գործողությունների արդյունքում խախտվե՞լ են, արդյոք, ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, և անհրաժե՞շտ է, արդյոք, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում կիրառել վիճարկվող հոդվածում պատասխանատվություն նախատեսող նորմերը:

Այս առումով, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կրկին ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր պրակտիկայում **հստակ տարբերակում է կատարել փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև:** Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միանշանակ պահանջն է, որ զրպարտությանն առնչվող իրավակարգավորումը **պետք է հստակ տարանջատում կատարի գնահատողական դատողության և փաստերի միջև,** որպեսզի բացառվի Կոնվենցիայի 10-րդ հոդվածին հակասող որոշումների ընդունումը:

Ելնելով վիճարկվող նորմերում արարքի, որպես «զրպարտություն» և (կամ) «վիրավորանք» որակելու (գնահատելու) վերաբերյալ վերոհիշյալ միջազգային իրավական չափորոշիչների բովանդակությունից և դրանց ճշգրիտ կիրառման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում դատարաններն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող գործողությունների փաստը քննելու յուրաքանչյուր գործով չպետք է կիրառեն նորմատիվ մեկնաբանության հայեցողական այնպիսի ազատություն, որի արդյունքում միակերպ չտարանջատվի **փաստը** (փաստացի տվյալը) և **գնահատողական դատողությունը**, հակառակ դեպքում չի կարող արդար, հիմնավոր և սահմանադրականության տեսանկյունից իրավական համարվել վիճարկվող հոդվածի նորմերի կիրառմամբ ազատ խոսքի ամեն մի սահմանափակում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ չնայած ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասի նորմատիվ պահանջից բխող պաշտպանության իրավունքն անվերապահ կիրառելի է բոլոր, այդ թվում հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ, այնուամենայնիվ, այդ անձինք, ինչպես նաև ՀՀ դատարանները պետք է ընդունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց անձնական իրավունքներն օբյեկտիվորեն ենթարկվում են խախտվելու ավելի մեծ ռիսկի, քան մասնավոր անձանց իրավունքները: Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը նվազ սահմանափակումներ է նախատեսում քաղաքական խոսքի և հանրային հետաքրքրության հարցերի շուրջ բանավեճի առնչությամբ: **Հասարակական և քաղաքական (հանրային) գործիչների դեմ ուղղված քննադատության սահմաններն առավել լայն են**, քան մասնավոր անձանց դեպքում: Ի տարբերություն վերջինների՝ հասարակական և քաղաքական գործիչների գործունեությունն ավելի հրապարակային է, ուստի ավելի մեծ հանդուրժողականություն է պահանջում: Դա բխում է նաև ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածների սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունից, քանի որ ժողովրդաիշխանությունն իրականացվում է նաև հանրային ծառայության միջոցով, և այդ ծառայությունը կրող անձանց հանրային և մասնավոր վարքագիծն օբյեկտիվորեն կարող է հասարակական քննարկման առարկա դառնալ:

Վիճարկվող հոդվածի սահմանադրականության գնահատման տեսանկյունից կարևոր է նաև դրանում կարգավորվող հարաբերությունների շրջանակներում բացահայտել անձի իրավական **պատասխանատվությունը բացառող հանգամանքների**, ինչպես նաև այդպիսի

պայմանների բացակայության դեպքում՝ հնարավոր **իրավական հետևանքների** որոշակիությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում սահմանված են այդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում քաղաքացիաիրավական պատասխանատվությունը բացառող հանգամանքները: Դրանց իրավական բովանդակության վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը «զրպարտություն» կամ «վիրավորանք» չի համարում այն փաստացի տվյալները, որոնք.

– տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտություններում կամ ապացույցներում,

– պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները,

– այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

Միաժամանակ, վերոհիշյալ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվամիջոցով տարածած տեղեկատվության, այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթի, հեղինակային որևէ այլ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են:

Վերոհիշյալ իրավապայմանների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ անձին զրպարտելու և (կամ) վիրավորելու հիմքով պատասխանատվությունը բացառվում է՝ ելնելով տվյալ գործի և փաստերի ներկայացման հանգամանքներից: Դրանք իրենց բնույթով սահմանադրականության խնդիր չեն հարուցում, սակայն իրավակիրառական պրակտիկայում ենթակա են հանգամանալի ուսումնասիրման և որպես այդպիսիք՝ գնահատման:

Անդրադառնալով **«գերակա հանրային շահ»**, ինչպես նաև տվյալների **«հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացում»** եզրույթների իրավական որոշակիության խնդրին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված գործի հանգամանքներից, պետք է որոշվի, թե արդյոք **հասարակության տեղեկացված լինելու շահը** գերակա է եղել տեղեկություն հայտնած անձի վրա դրված պարտականության ու պատասխանատվության համեմատ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ այսպիսի դեպքերում ազգային իշխանությունների հայեցողության շրջանակը սահմանափակված է ժողովրդավարական հասարակության շահով, որը կայանում է նրանում, որ մամուլին թույլատրվի կատարել «հասարակական վերահսկող օղակի» ("watchdog") իր գործառույթը և տեղեկատվություն տարածել հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ: Ըստ այդ դատարանի դիրքորոշման՝ իրավակիրառական պրակտիկայում առաջին հերթին պետք է գնահատվի այնպիսի **«անհետաձգելի հասարակական պահանջի»** առկայության փաստը, որն ունակ է արդարացնել այդ միջամտությունը **հավասարակշռված և բարեխղճորեն**՝ առանց չարամիտ, անձին անվանարկող դիտավորության:

9. Վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունը՝ անկախ դրա բնույթից ու չափից, **հանդիսանում է միջամտություն անձի արտահայտվելու ազատությանը:** Նման ձևով արտահայտվելու ազատությանը միջամտության և այդ միջամտությամբ հետապնդվող իրավաչափ նպատակի (տվյալ դեպքում՝ անձի պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակի) միջև արդարացի հավասարակշռությունը պայմանավորող գործոն է, ի թիվս այլնի, վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող պա-

տասխանատվության համաչափությունն անձի պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասին: Այս առնչությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պահանջում է, որպեսզի վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող փոխհատուցումը համաչափության ողջամիտ հարաբերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնասի հետ: **Արատավորող արտահայտության համար նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձին պատճառված գույքային վնասից**: Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել որպես հիմնավորված անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում:

Վիրավորանքի կամ զրպարտության համար սահմանվող փոխհատուցման չափի և անձի համբավին ու արժանապատվությանը պատճառված վնասի միջև համաչափության պահանջը հավասարապես ուղղված է և' օրենսդրին, և' իրավակիրառողին: Օրենսդրին այս պահանջն առաջադրում է համաչափության ապահովմանն ուղղված համապատասխան օրենսդրական երաշխիքներ սահմանելու խնդիր: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող հոդվածում նշված խնդրի լուծմանն են ուղղված առանձին դրույթներ: Մասնավորապես, օրենսդիրը բոլորովին այլ իրավահարաբերության հարթություն է տեղափոխել զրպարտության կամ վիրավորանքի հետևանքով պատճառված **գույքային վնասի** խնդիրը և դատարաններին իմպերատիվ պահանջ է ներկայացնում՝ **այն հաշվի չառնել վիճարկվող հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս (մաս 11):** Իրավակարգավորման հստակ տրամաբանությունն է, որ, մի կողմից, մարդու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու դիմաց փոխհատուցումն իրավակիրառական պրակտիկայում **չպետք է շփոթել գույքային վնասի հետ**, մյուս կողմից՝ **այդ փոխհատուցումը չպետք է դիտել որպես տույժի կամ տուգանքի ձևով սահմանվող պատիժ:** Հակառակ պարագայում, ինչպես նշվեց, կիմաստազրկվի զրպարտության ապաքրեականացման ամբողջ գաղափարը:

....

Այսպիսով, տարբեր են փոխհատուցման և գույքային վնասի հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման առարկան, սկզբունքներն ու նպատակները: Դրանք որոշակի են և իրենց իրավական բովանդակությամբ հետապնդում են իրավաչափ և սահմանադրորեն արդարացի նպատակներ՝ պաշտպանելու ՀՀ Սահմանադրության 14-րդ, 27-րդ և 47-րդ հոդվածներով երաշխավորված՝ անձի իրավունքներն ու ազատությունները ոչ իրավաչափ ոտնձգություններից և վերականգնելու դրանք:

Սահմանադրական դատարանը փոխհատուցման չափի համաչափությունն ապահովելու կարևոր երաշխիք է համարում նաև վիճարկվող հոդվածում փոխհատուցման նվազագույն չափի օրենսդրական ամրագրման բացակայության և առավելագույն չափի ամրագրման առկայության հանգամանքը: Առանձնապես կարևորվում է նաև այն հանգամանքը, որ վիճարկվող հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը, ի լրումն փոխհատուցման նյութական ձևի, նախատեսում են նաև փոխհատուցման ոչ նյութական ձևեր:

Ինչ վերաբերում է փոխհատուցման՝ վիճարկվող հոդվածով սահմանված առավելագույն չափին, ապա սահմանադրական դատարանն ընդգծելով, որ կոնկրետ չափի սահմանումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է, միաժամանակ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ Զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ 2007 թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1577(2007) բանաձևի առաջարկը՝ սահմանել ողջամիտ առավելագույն սահման զրպարտության գործերով վնասի փոխհատուցման գումարի չափի առումով, այնպես, որպեսզի չվտանգվի **պատասխանատու մամուլի** կենսունակությունը, **նպատակահարմար է համարում օրենսդրի կողմից քննարկելու առավելագույն սահմանի**

վերանայումը՝ նվազեցման միտումով, որպեսզի այն գործնականում բացառի արտահայտվելու ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակումը: Նման եզրահանգումը պայմանավորված է ոչ միայն իրավակիրառական պրակտիկայում տեղ գտած միտումներով, այլև այն իրողությամբ, որ Հայաստանում փոխհատուցման վերին սահմանի և բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի հարաբերակցությունն ավելի մեծ է, քան Եվրախորհրդի անդամ որոշ երկրներում, որոնք որդեգրեցին վիրավորանքի և զրպարտության ապաքրեականացման մոտեցումը: Ի դեպ, այդ երկրներում նույնպես, պրակտիկ փորձից ելնելով, օրենսդրական նոր հստակեցումներն օրակարգի հարց են դարձել: Մասնավորապես, Բուլղարիայում փորձ է արվում փոխհատուցման չափը հարաբերակցության մեջ դնել եկամուտների որոշակի սանդղակի հետ: Օրենսգրքի վեճի առարկա հոդվածի հետագա բարելավումները պետք է կարևորեն նաև դատական հայեցողության շրջանակներում փոխհատուցման չափը որոշող չափանիշների հնարավոր առավել հստակեցման անհրաժեշտությունը, նորմատիվ պահանջ առաջադրեն ոչ գույքային վնասի համար փոխհատուցման պահանջի չափը հիմնավորող փաստարկներ ներկայացնելուն, հաշվի առնեն այս հիմնահարցի իրավակարգավորման վերաբերյալ միջազգային զարգացումների արդի միտումները:

Անդրադառնալով վիճարկվող հոդվածով կարգավորվող հարաբերությունների շրջանակներում անձին իրավական պատասխանատվության ենթարկելու և դրա իրավական հետևանքների սահմանադրաիրավական որոշակիությանը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոթվարկյալ հանգամանքներն իրենց բնույթով հետապնդում են ողջամիտ և սահմանադրաիրավական նպատակ, քանի որ կոչված են երաշխավորելու.

– պատասխանատվության անխուսափելիությունը խոսքի ազատության անիրավաչափ չարաշահման դրսևորումների դեպքում,

– դատական քննության շրջանակներում պարտավորեցնում են հաշվի առնել իրավաբանորեն գնահատման ենթակա արարքի կատարման հանգամանքները, եղանակը, մեղավոր անձի գույքային դրությունը, ինչպես նաև այդ արարքի արդյունքում հասցված վնասի բնույթն ու չափը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող հոդվածի 11-րդ մասի դրույթների կիրառման խնդրում գործը քննող դատարանի հայեցողության շրջանակները բացարձակ չեն և սահմանափակված են հետևյալ նախապայմաններով.

– եթե անձը զրպարտվել կամ նրան վիրավորանք է հասցվել զանգվածային լրատվության միջոցի օգտագործմամբ, ապա խնդրի իրավական լուծումը պետք է երաշխավորվի խոսքի ազատության իրավունքի իրավաչափ իրացման սահմաններում,

– զրպարտության կամ վիրավորանքի համար սահմանված վնասի փոխհատուցումը պետք է լինի ողջամտորեն համաչափ՝ անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված վնասի համեմատ,

– կոնկրետ վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունից ելնելով դատական կարգով նյութական փոխհատուցման չափի սահմանման դեպքում պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ իր մեծությամբ այն չհանգեցնի մեղավոր անձի սնանկության կամ էականորեն չխաթարի նրա բնականոն գործունեությունը:

10. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ ընկալման ու դրանում ամրագրված նորմերի՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ կիրառումն ապահովելու նպատակով ՀՀ դատական պրակտիկայում պետք է առաջնորդվել նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով, համաձայն որի՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրո-

պական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Այս հարցում սկզբունքային նշանակություն ունեն նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 46-րդ հոդվածի պահանջներից բխող ՀՀ միջազգային պարտավորությունները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորության ճանաչման վերաբերյալ:

Նկատի ունենալով վերոնշյալը և կրկին կարևորելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ծանրակշիռ պրակտիկան քննության առարկա հիմնախնդրի առնչությամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանն սկզբունքային է համարում այդ դատարանի, մասնավորապես, ներքոհիշյալ նախադեպային դիրքորոշումները, որոնք իրավակիրառական պրակտիկայում հետևողականորեն հաշվի առնելու դեպքում կապահովվի վեճի առարկա հոդվածի դրույթների կիրառումը՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան: Դրանք են.

– «Արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքն է. համաձայն 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այն կիրառելի է ոչ միայն այն «տեղեկատվության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ և չեզոք, այլ նաև նրանց, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստություն պատճառում: Արտահայտվելու ազատությունը ենթակա է որոշակի բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանություն ստանան, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի» (Thorgier Thorgeirson v. Icland, 1992 թ. մայիսի 28-ի վճիռ, կետ 63):

– «....թեև զանգվածային լրատվամիջոցները չպետք է անցնեն այն սահմանները, որոնք դրվում են ի շահ մասնավոր անձանց հեղինակության պաշտպանության, նրանց վրա է դրված հասարակական հետաքրքրության հարցերի վերաբերյալ տեղեկատվություն և գաղափարներ տարածելու պարտականությունը: Մամուլը ոչ միայն ունի տեղեկատվություն և գաղափարներ տարածելու խնդիր, այլ նաև հասարակությունն ունի դրանք ստանալու իրավունք: Հետևաբար, որոշելու համար, թե արդյոք միջամտությունը հիմնվել է այնպիսի բավարար հիմքերի վրա, որոնք միջամտությունը դարձրել են «անհրաժեշտ», հարկ է հաշվի առնել գործի հանրային նշանակության հանգամանքը» (**Bladet Tromso and Stensaas v. Norway, 1999 թ. մայիսի 20-ի վճիռ, կետ 62**):

– «Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, այնուամենայնիվ, չի երաշխավորում ամբողջովին անսահմանափակ արտահայտվելու ազատություն նույնիսկ մամուլի այն հրապարակումների առնչությամբ, որոնք վերաբերում են լուրջ հանրային հետաքրքրության խնդրի: Ըստ 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այս իրավունքի իրացումը ենթադրում է «պարտավորություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև մամուլի նկատմամբ: Արտահայտվելու ազատությունն իրացնելիս «պարտավորությունները և պատասխանատվությունը» ենթադրում են, որ ընդհանուր հետաքրքրության խնդիրների մասին տեղեկություններ հայտնելու կապակցությամբ լրագրողներին 10-րդ հոդվածով տրամադրվող պաշտպանությունը ենթակա է այն նախապայմանին, որ լրագրողները գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու համար ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն՝ լրագրողական էթիկայի նորմերին համապատասխան» (նույն գործով, կետ 65):

– Անհրաժեշտ է ուշադիր տարբերակում կատարել փաստերի և գնահատողական դատողությունների միջև: Փաստերի գոյությունը կարող է հիմնավորվել, ապացուցվել, մինչդեռ գնահատողական դատողությունների ճշմարտացիությունը ենթակա չէ ապացուցման

(Lingens v. Austria, 1986 թ. հուլիսի 8-ի վճիռ, կետ 46): Անհնարին է իրականացնել գնահատողական դատողությունն ապացուցելու պահանջը, և վերջինս ինքնին խախտում է արտահայտվելու ազատությունը: Այնուամենայնիվ, նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կարող է կախված լինել նրանից, թե արդյոք առկա է բավարար փաստական հիմք տվյալ հայտարարության համար, քանզի նույնիսկ գնահատողական դատողությունն առանց փաստական հիմքի կարող է չափազանցված լինել (**Busuioc v. Moldova, 2004 թ. դեկտեմբերի 21-ի վճիռ, կետ 61**):

– Փաստերի քննադատական գնահատականը.... չի կարող բարոյական վնասի փոխհատուցման պահանջի բավարարման հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ արատավորող հայտարարությունը գնահատողական դատողություն է, դատարանը կարող է սահմանել ոչ նյութական վնասի փոխհատուցում **(Ukrainian Media Group v. Ukarine, 2005 թ. մարտի 29-ի վճիռ, կետ 61)**:

– «....Համաձայն Կոնվենցիայի՝ զրպարտության համար սահմանված փոխհատուցումը պետք է համամասնության ողջամիտ հարաբերակցություն ունենա անձի հեղինակությանը պատճառված վնասի հետ (Steel and Morris v. United Kingdom, 2005 թ. փետրվարի 15-ի վճիռ, կետ 96):

– «Զրպարտչական արտահայտությունների ճշմարտացիությունն ապացուցելու բեռը պատասխանողի վրա դնելն սկզբունքորեն անհամատեղելի չէ 10-րդ հոդվածի հետ: ....հատուկ հիմքեր են անհրաժեշտ լրատվամիջոցին, որպեսզի նա ազատվի փաստական տվյալների ստուգման պարտականությունից» (**Steel and Morris v. United Kingdom, 2005 թ. փետրվարի 15-ի վճիռ, կետ 93**):

11. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 14, 27, 43 և 47-րդ (1-ին մաս) հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիշյալ և մի շարք այլ վճիռների հիման վրա ձևավորված նախադեպային իրավունքի, այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1-րդ հոդվածների, «Զանգվածային լրատվության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների նորմերի համադրված վերլուծությունից հետևում է. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1-րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառումը երաշխավորելու համար անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնել միջազգային իրավական հետևյալ սկզբունքային մոտեցումները.

– նկատի ունենալով, որ զրպարտությանն առնչվող գործերով առաջանում է արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելը գնահատելու խնդիր, իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ **արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահի պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար,**

– վեճի առարկա հոդվածի իմաստով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, և «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,

– «զրպարտություն» և «վիրավորանք» եզրույթները պետք է դիտարկել դիտավորության, անձին անվանարկելու մտադրության առկայության համատեքստում,

– չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն

պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար և նպաստել հասարակության համար կարևոր հարցերի շուրջ քննարկումներին,

– մամուլի ներկայացուցիչների՝ պատասխանողի դերում հանդես գալու հանգամանքը չի կարող դիտվել որպես գործոն՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար,

– ներպետական մարմինների որոշումը պետք է հիմնված լինի գործի համար նշանակություն ունեցող փաստերի ընդունելի գնահատման վրա,

– պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից,

– նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը,

– արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար,

– վնասի փոխհատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն, հաշվի առնվի պատասխանողի եկամուտների չափը, չսահմանվի պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար,

– ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում պահանջող հայցվորը պետք է ապացուցի այդ վնասի առկայության փաստը,

– փոխհատուցման՝ օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելի է միայն առավել լուրջ ու ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերում,

– լոկ փաստերի քննադատական գնահատականը, որը չի պարունակում փաստական ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր է ապացուցել, չի կարող փոխհատուցման պահանջի հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը եղել է գնահատողական դատողություն, կարող է սահմանվել ոչ նյութական վնասի փոխհատուցում,

– փոխհատուցում սահմանելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են զգացմունքներին հասցված վնասը, ներողություն հայցելու պատրաստակամության բացակայությունը,

– լրագրողի՝ հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության գաղտնի աղբյուրները չբացահայտելու իրավունքից օգտվելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման

կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել և օգտագործվել են արտադատական հատուցման ձևերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները,

– պետք է պարտադիր կերպով կողմերին առաջարկվի հաշտության գալ և աջակցություն ցուցաբերվի այդ հարցում: Վնասը գնահատելիս հաշտեցման առաջարկը պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք,

– պետք է բացահայտ կերպով ճանաչվեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը և այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունից են բխում այս մոտեցումները, որոնք պետք է հետևողական ու համակարգային ընդգրկմամբ հաշվի առնվեն իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև դրվեն օրենսդրական հետագա զարգացումների հիմքում:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԴՈ–917, 18 սեպտեմբերի, 2010 թ.

6. ՀՀ սահմանադրական դատարանը կարևոր է համարում վեճի առարկա օրինադրույթի սահմանադրականության հարցի լուծման շրջանակներում պարզել «հարազատ քույր և եղբայր» և «ոչ հարազատ (համահայր կամ համամայր) քույր և եղբայր» եզրույթների սահմանադրաիրավական ընդհանրություններն ու տարբերությունները:

....

ՀՀ օրենսդրության համալիր ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ գործող տարբեր իրավական ակտերում տեղ են գտել հետևյալ երեք տարբեր հասկացությունները. **«քույրեր և եղբայրներ», «հարազատ քույրեր և եղբայրներ» և «ոչ հարազատ (համամայր կամ համահայր) քույրեր և եղբայրներ»**:

Այսպես, «**քույրեր և եղբայրներ**» ընդհանրական հասկացությունը, որն ըստ էության ներառում է ինչպես հարազատ, այնպես էլ ոչ հարազատ, համամայր կամ համահայր՝ քույրերին և եղբայրներին, տեղ է գտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (հոդվ. 1219), «Քաղաքացիական ծառայության մասին» (հոդվ. 24), «Օտարերկրացիների մասին» (հոդվածներ 8, 15), «Քաղաքացիական կացության ակտերի մասին» (հոդվ. 74.1), «Հայաստանի փրկարար ծառայության մասին» (հոդվածներ 39, 94), «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» (հոդվ. 16), «Զինապարտության մասին» (հոդվ. 11), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» (հոդվ. 24) և ՀՀ այլ օրենքներում:

....

7. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ժառանգության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, ինչպես նաև այն հարցի պարզաբանմանը, թե օրենսդրի կողմից հարազատ և համահայր կամ համամայր քույրերի և եղբայրների միջև տարանջատում կատարելու հայեցողությունն արդյո՞ք իրականացվել է բավարար առարկայական հիմնավորվածությամբ և հետևողականությամբ՝ հիմնվելով համակարգային ընդհանուր սկզբունքների վրա:

Այս նպատակով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել վի-

ճարկվող նորմը դրա հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի՝ տարբեր հերթի ժառանգների շրջանակը որոշող դրույթների հետ համադրության մեջ դիտարկելով միայն:

.... Ժառանգման իրավունքն ուղղակիորեն ամրագրված էր նաև ՀՀ Սահմանադրության նախորդ խմբագրությամբ տեքստի 28-րդ հոդվածում: Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ՝ «Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ»: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պետությունը ճանաչում է նաև ժառանգման իրավունքը, որը ներառում է ոչ միայն ժառանգություն տալու, այլ նաև ժառանգություն ստանալու իրավունքները:

Ժառանգական իրավունքն ապահովում է սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը նաև նրա մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավազորությունների հաջորդայնությունը: Միևնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրորեն պաշտպանված հնարավորություն: Ժառանգական սուբյեկտիվ իրավունքը, այսպիսով, պաշտպանում է թե՛ ժառանգություն տալու, թե՛ ժառանգություն ընդունելու (ստանալու) իրավունքները: Ըստ օրենքի՝ ժառանգումը հիմնված է այն ենթադրության վրա, որ ժառանգորդների շրջանակը, դրանց ժառանգության հրավիրելու հերթերը, ժառանգական գույքի չափը սահմանող օրենքը **համապատասխանում են ժառանգատուի կամքին**, որը չի ցանկացել կամ չի կարողացել արտահայտել իր կամքը այլ կերպ, օրինակ՝ կտակի միջոցով:

Սեփականությունն ըստ օրենքի ժառանգություն ընդունելու իրավունքը խարսխվում է, որպես կանոն, ժառանգատուի և ժառանգի միջև **ազգակցական կապի** կանխավարկածի վրա, չնայած որ ժառանգատուն ազատ է իր գույքը կտակելու ցանկացած անձի, այլ ոչ միայն իր ազգականներին: Սակայն ժառանգական իրավունքի գործառույթը կայանում է նաև նրանում, որ ապահովվի ժառանգատուի ընտանիքի անդամների տնտեսական զարգացման հնարավորությունը՝ առնվազն գոնե նրա հետ առավել սերտորեն փոխկապակցված ազգականների հարադրությամբ: Այս իմաստով ժառանգատուի ընտանիքը կազմում են ոչ միայն այն անձինք, որոնց նա իր կենդանության ժամանակ տրամադրել է ապրուստի միջոցներ, **այլև այն տնտեսական միավորումը, որն ունեցել է և ունի ժառանգական գույքով պայմանավորված տնտեսական և սոցիալական համատեղ շահեր:** Դրանով է կանխորոշվում ժառանգության ինստիտուտի բովանդակությունը:

Ժառանգատուի և ժառանգների միջև ազգակցական հարաբերություններում, իր հերթին, առաջանում է գենետիկ գործոններով պայմանավորված աստիճանակարգություն, որը ենթադրում է ժառանգման հարցում ժառանգատուի ուղղակի ժառանգների նախապատվությունն այլ ժառանգների համեմատ: Որքան ավելի մերձ է ժառանգատուի և ժառանգի ազգակցական կապը, այնքան ավելի մեծ է ըստ օրենքի ժառանգման առաջնահերթությունը տվյալ ժառանգի համար:

8. .... **Այս առումով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 72-րդ գլխում առկա է այնպիսի օրենսդրական բաց,** որը չի կարող լրացվել այլ իրավական երաշխիքներով և որի պայմաններում չի ապահովվում անձի ժառանգման իրավունքի իրացման հնարավորությունը: Նման օրենսդրական բացը հանգեցնում է արյունակցական ավելի թույլ կապի **պատկանող անձանց մի մասի իրավունքների արգելափակման, ինչը չի կարող օբյեկտիվորեն արդարացված նպատակ հետապնդել:**

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն իրավասու է հաշվի առնելով հարազատ և համահայր կամ համամայր քույրերի և եղբայրների միջև առկա օբյեկտիվ տարբերությունը՝ համահայր կամ համամայր քույրերին և եղբայրնե-

րին դասել մեկ այլ՝ հաջորդ հերթի ժառանգների թվին (ինչն ընդունված է մի շարք երկրների ժառանգական իրավունքում): Սակայն օրենսդիրն իրավասու չէ այդ տարբերությունն օգտագործել համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին ժառանգությունից օրենքի ուժով ընդհանրապես բացառելու համար: Այդչափ լայն սահմանափակումն օրենսգրքի՝ ըստ օրենքի ժառանգությանը վերաբերող գլխում **բավարար չափով** հիմնավորված չէ առարկայական չափանիշներով: Այն ժառանգություն ստանալու սահմանադրական իրավունքի **ոչ համաչափ** սահմանափակում է՝ Սահմանադրության 1-ին հոդվածից (իրավական պետության սկզբունք) բխող համաչափության սկզբունքի և իրավահավասարության սկզբունքի (Սահմանադրության 14.1-րդ հոդվ.) տեսանկյունից:

9. .... Հայ իրավունքում ևս, այդ թվում խորհրդային տարիների, ժառանգման իրավահարաբերություններում երբևէ տարբերակում չի դրվել հարազատ և համահայր ու համամայր քույրերի ու եղբայրների միջև: Դատական պրակտիկան նույնպես ընթացել է այս ճանապարհով: Նույնիսկ այն բանից հետո, երբ 1999 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածով ամրագրվեց «հարազատ եղբայրները և քույրերը» արտահայտությունը, դատական պրակտիկան շարունակեց ընթանալ ավանդաբար ձևավորված կարգով: Այդ մասին է վկայում նաև ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 2010 թ. հուլիսի 6-ին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված տեղեկանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի եզրահանգումն այն է, որ «.... ժառանգական իրավահարաբերություններում ժառանգատուի հարազատ եղբայրներին և քույրերին հավասարեցված են նաև ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրերը և եղբայրները»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշման մեջ հետևողականություն չի դրսևորել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների ապահովման առումով: Վերջինս, մասնավորապես, սահմանում է, որ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»:

ՍԴՈ-1167, 14 հոկտեմբերի, 2014 թ.

5. .... Ինչ վերաբերում է սույն գործով վիճարկվող իրավադրույթով կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման իրավունքի իրականացման իրավակարգավորմանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը 19.03.2012 թ. ՀՕ-100-Ն օրենքով սահմանում է նոր իրավապայման, որով ժառանգման իրավունքի իրականացումը պայմանավորվում է կենսաթոշակառուի մահվանից հետո՝ **տասներկու ամսվա ընթացքում** դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելով: Իսկ ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման: Տվյալ իրավակարգավորման պարագայում նոր՝ տասներկու ամսվա ժամկետային սահմանափակման, իրավապայմանը բացառում է այդ ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարն ստանալը: Օրենսդիրը նոր իրավապայման սահմանելով չի ամրագրում տասներկու ամսվա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հնարավորություն, այդ թվում՝ դատական կարգով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ **նման իրավակարգավորման բացակայությունը խոչընդոտում է սեփականության սահմանադրական իրավունքի լիարժեք իրականացմանը, մասնավորապես, այդ իրավունքի՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով սահմանված պաշտպանությանը՝ ժառանգության ընդունման ժամկետի հետ կապված հարաբերություններում:**

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով սեփականության իրավունքի, դրա սահմանափակման, իրականացման և պաշտպանության վերաբերյալ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի գրավոր բացատրության ուսումնասիրության արդյունքները, սահմանադրական դատարանը գտնում է, որ **վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված տասներկու ամսվա ժամկետային սահմանափակումը չի պայմանավորվում հանրային արժեքների պահպանման պահանջով և արդյունքում նպատակաուղղված չէ սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովմանը:** Նման սահմանափակման հիմնավորում կարող է լինել ժառանգության զանգվածի ճակատագրի հստակեցումը, որի իրավական կարգավորումը, սակայն, նախատեսվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

6. .... Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավադրույթն անտեսում է ոչ միայն ժառանգության ընդունման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված եղանակները, հնարավորություն չտալով ժառանգին փաստացի տիրապետման ուժով ստանալ նաև կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը, այլ նաև նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակում, որը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ժամկետներին:

ՍԴՈ–1270, 3 մայիսի, 2016 թ.

7. .... Վեճի առարկա իրավակարգավորումը համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1191-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման հետ՝ պետք է նշել, որ վերջինը նույնպես վերաբերում է անհատույց գույք ստացող անձի «անարժանությանը»: Այս դեպքում, սակայն, խոսքը վերաբերում է ժառանգությունից մեկուսացնելուն, որը քննարկման առարկա է դառնում միայն ժառանգատուի մահից հետո, և քանի որ մահվան փաստի ուժով նա չի կարող իրականացնել իր քաղաքացիական իրավունքները, օրենսդիրը սահմանել է, որ այդ դեպքում ժառանգությունից մեկուսացնելու համար հիմք են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը և (կամ) վճիռը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–1115, 24 սեպտեմբերի, 2013 թ.

5. .... **Հետևաբար՝ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:** Այդ է պատճառը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին պարբերությամբ օրենսդիրն ամրագրել է, որ տվյալ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալների վճիռների և Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը, իսկ նույն հոդվածի 2-րդ պարբերությամբ օրենսդիրը տվյալ օրենքի գործողությունը տարածել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիների և իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև դիտարկվող օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ սուբյեկտների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերին համապատասխան **հանդես են գալիս**

որպես կատարողական վարույթի կողմեր: Այսինքն՝ օրենքը համապատասխան սուբյեկտների շրջանակում հստակ ներառել է ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Օրենսդիրը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրելով «Ընդհանուր դրույթներ կատարողական թերթի մասին» վերտառությամբ գլուխը, իրավական կարգավորման է ենթարկել կատարողական թերթ տալու, կատարողական թերթ տալու հիմքերի, կատարողական թերթի բովանդակության, դատական ակտի կատարման հետաձգման, տարաժամկետման, կատարման եղանակի և կարգի փոփոխման, կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետի, վերջինիս վերականգնման, կատարողական թերթի կրկնօրինակ տալու, վճռի կատարման շրջադարձի հետ կապված հարաբերությունները: Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են՝ **պահանջատերը** և պարտապանը, 2-րդ պարբերության համաձայն՝ պահանջատերն այն **քաղաքացին կամ իրավաբանական անձն է,** Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը:

ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի հրապարակային քննություն»՝ որպես դատավարական գործընթացի փուլ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման շրջանակներում պահանջատիրոջը վերապահված իրավունքներն իրենց էությամբ կիրառելի են նաև իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության, համայնքի, օտարերկրյա պետության նկատմամբ:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համահունչ՝ օրենսդիրը դիտարկվող օրենքով սահմանել է պահանջատեր հանդիսացող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառելով **ոչ միայն քաղաքացուն, այլև իրավաբանական անձին:** Հետևողական մոտեցում ցուցաբերելով դիտարկվող օրենքի տրամաբանությանը՝ օրենսդիրն օրենքի, մասնավորապես, 22-րդ և 25-րդ հոդվածներում նույնպես կիրառել է «պահանջատեր» եզրույթը՝ տարբերակում չդնելով պահանջատեր հանդիսացող սուբյեկտների միջև:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից բխում է, որ հիշյալ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «պահանջատեր» եզրույթի ներքո անհրաժեշտ է նկատի ունենալ **ֆիզիկական և իրավաբանական անձանց,** այն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիներին և իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև քննության առնվող օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ սուբյեկտների, այն է՝ Հայաստանի Հանրապետությանը, համայնքներին, օտարերկրյա պետությանը:

Անդրադառնալով իրավակիրառական պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող դրույթի ձևակերպման ընկալումը և մեկնաբանությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցրել է նրան, որ էապես նեղացվել է ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական կարգավորման շրջանակը:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ իրավունքների ցանկացած սահմանափակում չի կարող հանգեցնել դրանց արգելափակմանը: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի պա-

հանջներով սահմանադրական դատարանը նաև իրավաբանական անձանց դիմումների հիման վրա բազմաթիվ գործեր է ընդունել քննության՝ ճանաչելով նրանց՝ դատարանի մատչելիության իրավունքը: Այդ իրավունքն ուղղակիորեն ամրագրված է նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի վերնագրում և այդ հոդվածի բոլոր դրույթներում, որոնցով սահմանվել է, որ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ է ֆիզիկական անձանց հետ մեկտեղ ճանաչվում նաև իրավաբանական անձը: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով չի կարող արգելափակվել իրավաբանական անձանց համար դատարանի մատչելիությունը կամ արդար դատաքննության իրավունքը:

ԼԻԱԶՈՐԱԳԻՐԸ

ՍԴՈ-1050, 2 հոկտեմբերի, 2012 թ.

6. Անդրադառնալով խնդրո առարկա իրավակարգավորումների շրջանակներում «լիազորագիր» ինստիտուտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ առկա նորմերի կիրառելիության խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասն առանձնացնում է այն սուբյեկտներին, որոնց կողմից տրված լիազորագրերը հավասարեցված են նոտարի կողմից հաստատվող լիազորագրերին: Ավելին, նույն հոդվածի 4-րդ մասը հատուկ իրավակարգավորում է նախատեսում որոշակի դեպքերի, այդ թվում՝ կենսաթոշակ ստանալու լիազորագրի վերաբերյալ: Համաձայն այդ նորմի՝ կենսաթոշակ ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ կենսաթոշակառուն աշխատում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը և այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սուբյեկտների կողմից հաստատվող լիազորագրերին, ապա «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասը հատուկ իրավակարգավորում է ամրագրում միայն քրեակատարողական հիմնարկի և հոգեբուժական հաստատության ղեկավարի վավերացրած լիազորագրի առնչությամբ՝ վերջինս հավասարեցնելով նոտարի հաստատած լիազորագրին: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը, որը սահմանում է, որ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին», ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ «Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին», գտնում է, որ **«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը կիրառելիս իրավակիրառական պրակտիկայում պետք է հիմք ընդունվի նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված սուբյեկտների կողմից հաստատված լիազորագրերը:**

ԿՏԱԿ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ1140, 25 փետրվարի, 2014 թ.

5. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասով, 14.1-րդ, 18-րդ, 19-րդ և 31-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքով սեփականության իրավունքի պաշտպանությունն ամեն տեսակ ոտնձգություններից (այդ թվում՝ արդար, արդյունավետ և մատչելի դատական պաշտ-

պանության միջոցով), ինչպես նաև սեփականատիրոջ անօտարելի իրավունքը՝ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրեն պատկանող գույքը: Միաժամանակ, որպես սահմանադրաիրավական երաշխիք, դատարանին է վերապահված՝ օրենքով նախատեսված հիմքերով անձին սեփականությունից զրկելու բացառիկ իրավասությունը:

.... Այսպիսով, կտակի հետ կապված հարաբերությունները կարգավորող վերոհիշյալ իրավանորմերի իրավաբովանդակային ընդհանուր վերլուծությունը փաստում է, որ օրենսդրությամբ նախատեսված են իրավակարգավորման համապատասխան սկզբունքներ, ընթացակարգեր, միջոցներ ու ձևեր, որոնք կոչված են ապահովելու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի և, մասնավորապես, սեփականատիրոջ՝ իր գույքը կտակելու իրավունքի պաշտպանությունը:

Այսպիսով, սահմանադրական դատարանը գտնում է, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի՝ սույն գործով վիճարկվող 67-րդ հոդվածի նորմերը տվյալ իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներում ինքնին սահմանադրականության խնդիր չեն առաջացնում և չեն առնչվում գործարքի բնույթ ունեցող իրավահարաբերություններին: Կտակի հետ կապված գործարքների առնչությամբ այն չի կարող կիրառվել նոտարների կողմից, քանի որ օրենքով հստակ ամրագրված է, որ հիշյալ հոդվածը վերաբերում է այն փաստաթղթերի վրա եղած ստորագրության իսկության վավերացմանը, որոնք չունեն գործարքի բնույթ: Օրենքի կիրառման համատեքստում այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, մի կողմից, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1ին մասի պահանջներին համապատասխան դիմողի նկատմամբ վերջնական դատական ակտով վեճի առարկա նորմն անմիջականորեն չի կիրառվել, մյուս կողմից՝ նույն դատական ակտում գործնականում անտեսվել է նոտարի կողմից գործարքի բնույթ ունեցող իրավահարաբերություններում օրենքի 67-րդ հոդվածի կիրառման փաստը:

ՍԴՈ-1270, 3 մայիսի. 2016 թ.

7. .... Ձևավորված դատական իրավակիրառական պրակտիկան վկայում է այն մասին, որ նվիրատվության պայմանագրի վերացումը հնարավոր է նաև առանց նվիրառուի կողմից նվիրատուի կամ նրա հարազատի կյանքի նկատմամբ ոտնձգության փաստը քրեական դատավարության կարգով հաստատված լինելու:

....

8. .... Նվիրատվությունը քաղաքացիաիրավական հարաբերություն է, որի հետ կապված վեճերը քննության կարող են առնվել միայն քաղաքացիական դատավարության կանոններով: Պետք է նշել, որ քաղաքացիական դատավարության կողմերը նույնպես օգտվում են որոշակի դատավարական իրավունքներից և երաշխիքներից, ինչը հնարավորություն է տալիս նրանց իրականացնել դատական պաշտպանության իրենց իրավունքը (դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա, քաղաքացիները կարող են դատարանում իրենց գործերը վարել անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով, քաղաքացիական գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը նույնպես առաջացնում է պատասխանատվություն և այլն):

Քաղաքացիական իրավահարաբերությունների ոլորտում նվիրատուի կարևորագույն իրավունքներից է նվիրատվության վերացումը, եթե նվիրառուն ոտնձգություն է կատարել նրա, նրա ընտանիքի անդամներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ կամ նվիրատուին դիտավորյալ պատճառել է մարմնական վնասվածքներ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մաս):

Նման իրավակարգավորումը բխում է նվիրատվության պայմանագրի՝ որպես անհատույց գործարքի բնույթից և ուղղված է նախևառաջ նվիրատուի իրավունքների **պաշտպանությանը** և պայմանագրի կողմերի շահերի միջև հավասարակշռության **ապահովմանը:**

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործ քննող դատարանի խնդիրն է գնահատել՝ արդյոք ոտնձգությունն առկա է, թե՝ ոչ, և յուրաքանչյուր գործով դատարանը պետք է դրսևորի անհատական մոտեցում՝ խուսափելով օրենքի մեխանիկական կիրառումից՝ ելնելով գործի փաստական հանգամանքներից և առաջնորդվելով ներքին համոզմամբ: Քաղաքացիական գործ քննող դատարանի խնդիրը չէ տալ այդ գործողությունների քրեաիրավական գնահատականը, այլ ներկայացված ապացույցների հիման վրա պարզել դրանց առկայությունը և համապատասխան քաղաքացիաիրավական հետևանքները:

ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–667, 21 նոյեմբերի, 2006 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձեռքբերման վաղեմությունը դասվում է սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների թվին: Ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար պահանջվում է այդ գույքի՝ որպես սեփական ունեցվածքի բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, տևական տիրապետում:

Այս նախապայմանները բացառում են ուրիշի գույքը որպես սեփականություն ձեռք բերելու հնարավորությունը, որին տիրապետողը տիրապետում և օգտագործում է, մասնավորապես, վարձակալության, պահատվության կամ այլ պայմանագրերի հիման վրա, թեկուզև բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ և երկարատև, սակայն իր պայմանագրային պարտավորությունների գիտակցմամբ այն համարելով ուրիշի գույք և այն տիրապետելով ոչ որպես սեփական գույք: Այն կոչված է պաշտպանելու գույքի բարեխիղճ տիրապետողի իրավունքները: ՀՀ քաղ. օր. 187 հոդվածը չի խոչընդոտում սեփականության իրավունքի ճանաչմանն ու պաշտպանությանը: Այն նախատեսում է դատական կարգով գույքի բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետողի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հնարավորություն:

Ձեռքբերման վաղեմության ինստիտուտի իրավական կարգավորումը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային այն առումով, որ այն նախապայմանները, որոնք սեփականության իրավունքի երաշխիք են հանդիսանում, ճանաչվում և գնահատվում են դատարանի կողմից: Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ այն ոլորտներում, որտեղ չարաշահումների պոտենցիալ հնարավորությունը մեծ է կոնկրետ իրավիճակներում, և դա կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ ընդհանրապես ժողովրդավարական հասարակության համար, սկզբունքորեն ցանկալի է, որպեսզի հսկողական գործառույթներն իրականացնի դատարանը:

ՍԴՈ–944, 4 մարտի, 2011 թ.

5. .... Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը որպես անշարժ գույքի նկատմամբ ցանկացած հիմքով սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176–րդ հոդվածը որպես պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը, եթե այդպիսի իրավունքն օրենքով ենթակա է գրանցման: Բացի գործարքից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11–րդ գլխի դրույթները որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման

հիմք են ճանաչում, ի թիվս այլնի, նաև անձի կողմից իր համար նոր անշարժ գույքի ստեղծումը (ՀՀ քաղ. օր. 173-րդ հոդված), ձեռքբերման վաղեմությունը (ՀՀ քաղ. օր. 187-րդ հոդված): Օրենսգրքի 173-րդ և 187-րդ հոդվածները համապատասխանաբար նշված հիմքերով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը ևս պայմանավորում են այդ իրավունքի պետական գրանցման պահով:

ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՅՑԸ

ՍԴՈ-864, 5 փետրվարի, 2010 թ.

5. .... Վարչական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը, մասնավորապես, օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված՝ օրենսգրքի իրավակարգավորման առարկայի, օրենսգրքով սահմանված՝ ընդհանուր և հատուկ վարույթների վերաբերյալ դրույթների, հայցատեսակների, օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված՝ վարչական դատարանի միջոցով անձի իրավունքների դատական պաշտպանության շրջանակների ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսգրքով սահմանված ողջ իրավակարգավորումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտը տարանջատված է անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտից: Այսինքն՝ օրենսգրքով օրենսդիրը սահմանել է իրավակարգավորման երկու՝ միմյանցից տարբերվող ուղղություն, որոնք վերաբերում են համապատասխանաբար՝ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտին և անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտին: Իր հերթին, նշված տրամաբանությունը բխում է այն օբյեկտիվ իրողությունից, որ առաջին դեպքում իրավախախտման աղբյուրը պետությունն է, մյուս դեպքում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

ՍԴՈ-942, 22 փետրվարի, 2011 թ.

5. .... Անդրադառնալով ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանության բացահայտմանը՝ սահմանադրական դատարանը, օրենսգրքի հոդվածների համակարգային վերլուծության հիման վրա, արձանագրում է, որ օրենսդիրը նպատակ է հետապնդել վարչական արդարադատության համակարգում սահմանելու այնպիսի իրավական կարգավորում, որը կերաշխավորի անձանց դատական պաշտպանության իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացումը **ոչ միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունվող վարչական և նորմատիվ ակտերի, նրանց գործողությունների,** այլև նրանց **անգործության** դեմ: Շարունակելով նշված տրամաբանության հետևողական իրացումը՝ օրենսդիրը, որպես օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածների արդյունավետ իրացումն ապահովող իրավական երաշխիք, օրենսգրքում ներառել է «Գործի քննությունը և լուծումը վարչական դատարանում» վերտառությամբ երկրորդ բաժինը և վերջինիս ներքո՝ «Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները» վերտառությամբ 11-րդ գլուխը: Այն նախատեսում է վարչական դատարան ներկայացվող հայցերի հետևյալ տեսակները՝ **վիճարկման** հայց (օրենսգրքի 65-րդ հոդված), **պարտավորեցման** հայց (օրենսգրքի 66-րդ հոդված), **գործողության** կատարման հայց (օրենսգրքի 67-րդ հոդված) և **ճանաչման** հայց (օրենսգրքի 68-րդ հոդված), որոնց միջոցով անձինք անմիջականորեն ձեռնամուխ են լինում իրենց խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությանը:

Նշված հայցատեսակների՝ օրենսգրքի 65-67-րդ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց

պաշտոնատար անձանց կողմից դրսևորվող **անգործության** արդյունքում անձանց խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը երաշխավորելուն է կոչված ինչպես պարտավորեցման, այնպես էլ գործողության կատարման հայցը: Ընդ որում՝ պարտավորեցման հայցի դեպքում դատական պաշտպանությունն իրականացվում է ընդդեմ այնպիսի անգործության, որն **առնչվում է վարչական ակտի ընդունմանը**, իսկ գործողության կատարման հայցի դեպքում՝ այնպիսի անգործությանը, որը **չի առնչվում վարչական ակտի ընդունմանը:**

Ավելին, վարչական դատավարության օրենսգրքի այն ընդհանուր տրամաբանությունը, որ վարչական արդարադատության շրջանակներում հավասարապես պետք է ապահովվի դատական պաշտպանությունը նաև ընդդեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց անգործության, իր հետևողական արտացոլումն է գտել նաև Վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածում, որտեղ օրենսդիրը «վարչական ակտ» և «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ օգտագործում է նաև **«անգործություն»** եզրույթը՝ այն տարածելով նաև **ճանաչման հայցի վրա:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի տարբերություն օրենսգրքի 1-ին, 3-րդ և 70-րդ հոդվածների, օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասում դրսևորվել է անհետևողական մոտեցում՝ «վարչական ակտ» և «գործողություն» եզրույթների հետ մեկտեղ չի շեշտվել «անգործություն» եզրույթը: Սակայն օրենսգրքի իրավակարգավորման տրամաբանությունից բխում է, որ այն իրավակիրառական պրակտիկայի կողմից չպետք է մեկնաբանվի ի վնաս մարդկանց իրավունքների պաշտպանության:

ՄԱՐԴՈՒ ՊԱՏԻՎԸ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԻ ՀԱՄԲԱՎԸ

ՍԴՈ-649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

VII. 1. Սոցիալական քարտի առկայությունը դարձնելով պարտադիր պայման օրենքի 11 հոդվածում թվարկված բոլոր գործառույթներում, ներառյալ կենսապահովման այնպիսի միջոցներ, որպիսիք են աշխատավարձը, կենսաթոշակը, նպաստը, հատուցումը, դրամական փոխանցման ստացումը, օրենքը մի շարք քաղաքացիների դրել է երկընտրանքի առջև. կամ զրկվել իրենց սոցիալական իրավունքների իրականացումից, կամ համոզմունք ունենալու և դրան հավատարիմ մնալու իրավունքից: Երկու դեպքում էլ դա առնչվում է մարդու արժանապատվությանը:

Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Սրանից էլ բխում է Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմը. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Հետևաբար, քննության առարկա օրենքի 11-րդ հոդվածից բխող իրավիճակը, որով քաղաքացիների որոշ կատեգորիաներ զրկվում են Սահմանադրությամբ չսահմանափակվող ճանաչված իրենց առանձին հիմնարար իրավունքների իրականացման հնարավորությունից, չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և անձի հիմ-

նարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև և չի բխում Սահմանադրության 3 հոդվածի պահանջներից:

ՍԴՈ–834, 20 հոկտեմբերի, 2009 թ.

5. .... Անձի իրավունքների դեմ անթույլատրելի ոտնձգությունը դեռևս բավարար չէ հետապնդման մասին խոսելու համար: Ավելի շուտ պահանջվում է իրավունքների խախտման այնպիսի սպառնալիք, որն իր ձևով ու ծանրությամբ կառաջացնի մարդու արժանապատվության ոտնահարում և տուժողին կդնի անելանելի դրության մեջ: Այն կարող է վնասել կյանքի բոլոր ոլորտները՝ կրոնական, մշակութային կամ տնտեսական: Նման իրավիճակն առկա է միշտ այն դեպքում, երբ վտանգված են, այսպես կոչված, հիմնարար արժեքները: Դրանց թվին են պատկանում կյանքի իրավունքը, ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, անձնական ու կրոնական ազատությունը, ինչպես նաև կեցության տնտեսական հիմքը:

ՍԴՈ–913, 14 սեպտեմբերի, 2010 թ.

4. .... Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն:

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ, մի կողմից, տեղեկատվություն տարածելու և խոսքի ազատության, մյուս կողմից՝ անձի՝ իր հեղինակության նկատմամբ հարգանքի իրավունքի միջև փոխհարաբերությունը պետք է քննության առնվի ՀՀ Սահմանադրության 14–րդ հոդվածով սահմանված՝ մարդու արժանապատվության հարգման ու պաշտպանության և Սահմանադրության 27–րդ հոդվածով սահմանված՝ ժողովրդավարական պետությունում քաղաքական բազմակարծության անքակտելի տարր հանդիսացող՝ խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի հետ հարաբերակցության լույսի ներքո:

.... Միաժամանակ, քննության առարկա դարձնելով վերոհիշյալ ազատությունների և օրենքով պաշտպանվող այլ շահերի միջև հավասարակշռության խնդիրը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ ազատությունները միշտ պետք է գերակայեն այն դեպքում, երբ տեղեկատվության բացահայտումն անհիմն չի եղել, հետապնդել է իրավաչափ նպատակ և տվյալ տեղեկատվությունը վերաբերում է հասարակական հետաքրքրություն ներկայացնող պետական գործերի և անձանց:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի քննության համար ելակետային նշանակություն ունի «զրպարտություն» և «վիրավորանք» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը դեռևս 2005 թվականին անդրադառնալով այդ հասկացությունների մեկնաբանմանը, առանձնացրել է երեք արտահայտություն՝ անվանարկում(defamation), գրավոր արտահայտություն, որը վնասում է անձին(libel), ինչպես նաև հայտարարություն կամ գործողություն, որ ասվել կամ արվել է այլ անձի **վիրավորելու նպատակով**(insult): Անվանարկումը լինելով երևույթի ընդհանրական բնութագրում՝ իրավական հստակության տեսանկյունից պահանջում է որոշակիացնել դրա դրսևորումները՝ անցողիկ կամ մնայուն բնույթը, արտահայտման ձևը, դիտավորու-

թյան ու կեղծ փաստի առկայությունը և այլն, ինչը կարևոր է փոխհատուցման կանոնակարգման առումով:

....

11. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 14, 27, 43 և 47–րդ (1–ին մաս) հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիշյալ և մի շարք այլ վճիռների հիման վրա ձևավորված նախադեպային իրավունքի, այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1–րդ հոդվածների, «Զանգվածային լրատվության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների նորմերի համադրված վերլուծությունից հետևում է. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1–րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառումը երաշխավորելու համար անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնել միջազգային իրավական հետևյալ սկզբունքային մոտեցումները.

– նկատի ունենալով, որ զրպարտությանն առնչվող գործերով առաջանում է արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելը գնահատելու խնդիր, իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ **արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահի պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար,**

– վեճի առարկա հոդվածի իմաստով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, և «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,

– «զրպարտություն» և «վիրավորանք» եզրույթները պետք է դիտարկել դիտավորության, անձին անվանարկելու մտադրության առկայության համատեքստում,

– չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար և նպաստել հասարակության համար կարևոր հարցերի շուրջ քննարկումներին,

– մամուլի ներկայացուցիչների՝ պատասխանողի դերում հանդես գալու հանգամանքը չի կարող դիտվել որպես գործոն՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար,

– ներպետական մարմինների որոշումը պետք է հիմնված լինի գործի համար նշանակություն ունեցող փաստերի ընդունելի գնահատման վրա,

– պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից,

– նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը,

– արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխ-

հատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար,

– վնասի փոխհատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն, հաշվի առնվի պատասխանողի եկամուտների չափը, չսահմանվի պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար,

– ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում պահանջող հայցվորը պետք է ապացուցի այդ վնասի առկայության փաստը,

– փոխհատուցման՝ օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելի է միայն առավել լուրջ ու ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերում,

– լոկ փաստերի քննադատական գնահատականը, որը չի պարունակում փաստական ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր է ապացուցել, չի կարող փոխհատուցման պահանջի հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը եղել է գնահատողական դատողություն, կարող է սահմանվել ոչ նյութական վնասի փոխհատուցում,

– փոխհատուցում սահմանելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են զգացմունքներին հասցված վնասը, ներողություն հայցելու պատրաստակամության բացակայությունը,

– լրագրողի՝ հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության գաղտնի աղբյուրները չբացահայտելու իրավունքից օգտվելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել և օգտագործվել են արտադատական հատուցման ձևերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները,

– պետք է պարտադիր կերպով կողմերին առաջարկվի հաշտության գալ և աջակցություն ցուցաբերվի այդ հարցում: Վնասը գնահատելիս հաշտեցման առաջարկը պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք,

– պետք է բացահայտ կերպով ճանաչվեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը և այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԴՈ–702, 15 մայիսի, 2007 թ.

8. Քաղաքացիաիրավական հարաբերություններում անձի հայեցողական ազատության և դրա՝ օրենքով նախանշված շրջանակներում իրականացնելու սկզբունքից է անմիջականորեն բխում պայմանագրերի և այլ գործարքների (բովանդակության, ձևի) նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ինչպես ընդհանուր (289–317, 436–469 հոդվածներ), այնպես էլ հատուկ կանոնները, որոնցից է գրավոր ձևով կնքվող գործարքների նոտարական վավերացումը (234, 263, 562, 572, 595, 610, 620, 678, 686, 959, 1203–1208, 1245

հոդվածներ): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296 և 299 հոդվածների համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումն ըստ ձևի կատարվում է գործարքի բովանդակությունն արտահայտող և գործարք կնքող անձանց (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ստորագրությունները պարունակող փաստաթղթի վրա նոտարի կամ նոտարական գործողության կատարման իրավունք ունեցող պաշտոնատար անձի կողմից վավերացնող մակագրությամբ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299 հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված դեպքերում, կամ կողմերից որևէ մեկի պահանջով, իսկ օրենսգրքի 300 հոդվածի 1–ին կետի համաձայն՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության և առոչինչ է:

.... Այսպիսով, գրավոր որոշ գործարքների նոտարական պարտադիր վավերացման ինստիտուտը և այդպիսի գործարքներից ծագող, փոփոխվող և դադարող իրավունքների պետական գրանցման օրենսդրական պահանջը՝ ելնելով նաև անձի իրավունքների և դրանց երաշխավորված իրացման վերաբերյալ սահմանադրական սկզբունքային դրույթների բովանդակությունից, քաղաքացիական իրավունքների իրականացման ազատության որոշակի սահմանափակում նախատեսելով հանդերձ, կարևոր երաշխիք է ինչպես անձանց իրավունքների (ներառյալ սեփականության իրավունքի) արդյունավետ իրացումն ու պաշտպանությունն ապահովելու, այնպես էլ պայմանագրի կողմերի ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման, հետևաբար, նաև քաղաքացիական (գույքային) շրջանառության երաշխավորված կայունությունն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը, միաժամանակ արձանագրում է, որ գործի նյութերի համաձայն կողմերի միջև կնքվել է ոչ թե առուվաճառքի, այլ՝ փոխառության պայմանագիր, որը պայմանագրային հարաբերությունների այլ ինստիտուտ է և կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքի 46 գլխի նորմերով:

ՍԴՈ–705, 3 հուլիսի, 2007 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 1–ին մասը սահմանում է գործարքի անվավերության այնպիսի հիմքեր, ինչպիսիք են խաբեությունը, բռնությունը, սպառնալիքը, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությունը կամ ծանր հանգամանքների բերումով անձի համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմանները:

Գործարքները քաղաքացիների կամ իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցմանը: Քաղաքացիական օրենսդրության կարևոր սկզբունքներից մեկն իրավահարաբերության մասնակիցների կամքի ազատ իրականացման սկզբունքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3 հոդվածի 2–րդ մասն ամրագրում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքներ ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: Քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների խախտված իրավունքների վերականգնումն ապահովելը, դրանց դատական պաշտպանությունը ևս օրենսդիրը դիտում է իբրև հիմնարար սկզբունք: Հենց այդ սկզբունքների իրագործմանն են նպատակաուղղված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5–րդ բաժնի 18–րդ գլխի «Գործարքների անվավերությունը» վերտառությամբ 2–րդ պարագրաֆի 303–317 հոդվածներում պարունակվող իրավանորմերը:

ՍԴՈ–714, 11 սեպտեմբերի, 2007 թ.

6. .... Այսպես, ՀՀ քաղ. օր. 438 հոդվածի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին: Քաղ. օր. 440 հոդվածի 1–ին մասը սահմանում է, որ. «1. Պայմանագրի կատարումը վճարվում է կողմերի համաձայնությամբ սահմանված գնով:

Օրենքով նախատեսված դեպքերում կիրառվում են լիազորված պետական մարմինների կողմից սահմանված կամ կարգավորված գները....»:

«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի 24.1. հոդվածի համաձայն՝ պետական գույքի մասնավորեցման մասին որոշումն ընդունում է ՀՀ կառավարությունը, իսկ նույն օրենքի 12 հոդվածի համաձայն, ի թիվս այլոց, հաստատում է «փոքր» օբյեկտների տարածքի մեկ քառակուսի մետրի արժեքը, նրա հաշվարկման ուղղիչ գործակիցների նվազագույն և առավելագույն չափերը: Իսկ Պետական գույքի կառավարման վարչությանը գնային քաղաքականության ոլորտում վերապահված է միայն «փոքր» օբյեկտների տարածքի արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցների հաստատման լիազորությունը՝ ելնելով ՀՀ կառավարության հաստատած մեկ քառակուսի մետրի արժեքից և այդ գործակիցների նվազագույն և առավելագույն չափերից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս ոլորտում պայմանագրի գնի որոշման հարցը կարգավորվում է ՀՀ քաղ. օր. 440 հոդվածի 1–ին մասի 2–րդ պարբերությամբ սահմանված կանոններով:

Իսկ պայմանագրի կնքումից հետո դրա գինը թույլատրվում է փոփոխել պայմանագրով կամ օրենքով նախատեսված դեպքերում և պայմաններով (համաձայն քաղ. օր. 440 հոդվածի 2–րդ մասի), և եթե ՀՀ քաղ. օր.–ով կամ որևէ այլ իրավական ակտով կողմերին հնարավորություն ընձեռվեր փոփոխել կամ նվազեցնել պայմանագրի գինը, ապա կողմերն այդ հնարավորությունից կարող էին օգտվել մինչև դատական ակտի ընդունումը՝ հաշվի առնելով ՀՀ քաղ. դատ. օր. «Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության հիման վրա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի վերանայման վարույթը» վերտառությամբ 36 գլխի 204 հոդվածի 2–րդ մասը, համաձայն որի՝ «դատարանը վերանայում է միայն կայացրած վճռի այն մասը, որը վերաբերում է կողմերի հաշտության համաձայնությամբ սահմանված կատարման եղանակին, ժամկետին և կարգին»:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունն առանձին երկրների օրենսդրական պրակտիկայում նկարագրվում է նաև թվային չափանիշների միջոցով: Սակայն նման մոտեցումն ունի նաև իր բարդությունները: ՀՀ օրենսդրության մեջ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունը թվային չափանիշների միջոցով արտահայտելը կստեղծի մի իրավիճակ, երբ, կախված գործի առանձնահատկություններից ու կոնկրետ հանգամանքներից, միևնույն թվաքանակով իրականացված գործարքները մի դեպքում կարող են համարվել ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում կատարված, մյուս դեպքում՝ ոչ:

ՍԴՈ–944, 4 մարտի, 2011 թ.

8. Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությամբ ստեղծված են կոնկրետ իրավական երաշխիքներ, որոնք կոչված են ապահովելու անշարժ

գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման գործընթացի անարգել իրականացումը: Մասնավորապես, նշված գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պահանջի կատարումը բացառապես պայմանավորված է գործարքի կողմերի կամաարտահայտությամբ և նրանց վարքագծով:

ՍԴՈ–975, 14 հունիսի, 2011 թ.

5. Սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու նպատակով սահմանադրական դատարանը նախ անհրաժեշտ է համարում դրանք դիտարկել քաղաքացիական օրենսդրությանը բնորոշ՝ պայմանագրի ազատության սկզբունքի համատեքստում:

.... Այսպիսով, պայմանագրի ազատության բովանդակությունը՝ պայմանագրի պայմանների բովանդակության ազատ ընտրության առումով հանգում է նրան, որ պայմանագրի կողմերն իրենց հայեցողությամբ սահմանում են պայմանագրի պայմանները՝ ստանձնելով փոխադարձ պարտավորություններ և ձեռք բերելով համապատասխան իրավունքներ: Պայմանագրի կողմերին ուղղված միակ պահանջն այն է, որ նրանց միջև փոխհամաձայնեցված պայմանի բովանդակությունը չհակասի օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանի բովանդակությանը: Մասնավորապես, կողմերը չեն կարող օժտվել հայեցողությամբ պայմանագրի այն պայմանի բովանդակությունը որոշելու հարցում, որի **բովանդակությունն** ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով, կամ սահմանել օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանին հակասող պայման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պայմանագրով սահմանված պայմանը նախատեսված կամ բացառված չէ օրենքով կամ այլ իրավական ակտով, ապա նշված դեպքերում քաղաքացիաիրավական պայմանագրի կողմերը կարող են կա՛մ պայմանագրով նախատեսել օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված ցանկացած պայման, կա՛մ դիսպոզիտիվ նորմով սահմանված լինելու դեպքում՝ սահմանել դիսպոզիտիվ նորմով նախատեսվածից այլ պայման:

Վերոշարադրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի խմբագրությամբ տեքստի 1003[1]–րդ հոդվածի 1–ին կետում առկա չէ օրենքի բաց, քանի որ անկախ նրանից, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]–րդ հոդվածի 1–ին կետը հղում կկատարի քաղաքացիաիրավական պայմանագրին, թե՝ ոչ, պայմանագրի կողմերը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437 և 438–րդ հոդվածների ուժով կարող են պայմանագրով նախատեսել օրենքով կամ այլ իրավական ակտով չնախատեսված ցանկացած պայման, այն վերապահումով, որ կողմերը չեն կարող հայեցողություն դրսևորել պայմանագրի այն պայմանի **բովանդակությունը** որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով: Ինչ վերաբերում է «Տրանսպորտային միջոցների ապահովագրության կանոնների»՝ սույն գործին առնչվող կետերին, ապա դրանցում տառացիորեն հղումը կատարվում է «ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնների» խախտմանը: ....

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ապահովագրական ընկերությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]–րդ հոդվածի 1–ին կետի 1–3–րդ ենթակետերով չնախատեսված՝ ապահովագրական հատուցումը նվազեցնելու և հատուցումը մերժելու վերաբերյալ ցանկացած այլ պայմանի ամրագրումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437–րդ հոդվածով նախատեսված՝ պայմանագրի ազատության սահմանափակման շրջանակներում է, եթե, նախ՝ **այդպիսի պայմանի բովանդակությունը չի փոխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]–րդ հոդվածի 1–ին կետի 1–3–րդ ենթակետերով սահմանված պայմանների բո-**

վանդակությունը, երկրորդ՝ այդպիսի պայմանը չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված պայմաններին:

ՍԴՈ-1038, 18 հուլիսի, 2012 թ.

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս 2007 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 3-1848/ՎԴ/ քաղաքացիական գործով ընդունված որոշմամբ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել աշխատանքային պայմանագրի հասարակ գրավոր ձևը չպահպանելու իրավական հետևանքների, մասնավորապես, օրենքով սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունն այլ ապացույցներով հիմնավորելու հնարավորության առնչությամբ: Այս որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը խնդրո առարկայի վերաբերյալ, մասնավորապես, նշել է. «....-ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի նկատմամբ կիրառելի են գործարքի ձևին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները»:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պրակտիկայի զարգացումը սույն իրավական դիրքորոշման հետևողական կիրառման ուղղությամբ կարող էր երաշխավորել ոչ միայն տարբեր պատճառներով գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի արդյունավետ պաշտպանությունը, այլև կապահովեր օրենսդրության պահանջների միատեսակ կիրառությունը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի ԵԿԴ/2228/02/10 քաղաքացիական գործով արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի՝ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությունն իր աշխատանքային պարտականությունների կատարմանը փաստացիորեն անցած անձին զրկում է ի հիմնավորումն փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության այլ ապացույցի հիման վրա իր իրավունքների պաշտպանությունից, այդ թվում՝ դատական պաշտպանության հնարավորությունից, ոչ միայն շեղում է ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման իրավական դիրքորոշումից, այլև հակասում է ՀՀ օրենսդրությամբ աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման՝ վերը բացահայտված ընդհանուր տրամաբանությանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մոտեցումը լուրջ վտանգ է ներկայացնում ինչպես իրավունքի պաշտպանության մերժման տեսանկյունից, այնպես էլ կարող է խթան հանդիսանալ գործատուների կողմից ապօրինի աշխատանքի շահագործման համար: Վերջինիս բացառմանն է, մասնավորապես, ուղղված նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում 1949 թ. հուլիսի 1-ին Ժնևում ստորագրված՝ Աշխատավարձի պաշտպանության մասին կոնվենցիան, ինչը ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է 2004 թ. հոկտեմբերի 25-ին: Ուստի օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի վեճի առարկա խնդրին համալիր և սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համարժեք իրավակարգավորում պետք է նախատեսի:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ

ՍԴՈ-714, 11 սեպտեմբերի, 2007 թ.

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանալով իշխանական լիազորություններով օժտված հանրային իրավունքի սուբյեկտ՝ այլ սուբյեկտներին համահավասար իրավասություններով մասնակցում է մասնա-

վոր իրավական հարաբերություններին: Պետությունը քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում է անմիջականորեն, այսինքն՝ որպես մեկ միասնական ամբողջություն, բայց որպես այդպիսին (որպես պետական կառույցների ամբողջություն) այն ի վիճակի չէ անմիջական գործողություններով ձեռք բերել և իրականացնել քաղաքացիական իրավունքներ, ինչպես նաև ստեղծել և կատարել պարտականություններ: Նրա լիազորությամբ գործում են իրավաբանական անձ հանդիսացող կամ այդպիսիք չհանդիսացող կազմակերպությունները:

Իսկ այն դեպքերում, երբ պետական մարմինը հանդես է գալիս ՀՀ անունից, այդ մարմնի ներկայացմամբ իրավահարաբերություններին մասնակցում է Հայաստանի Հանրապետությունը, և իրավունքներ ու պարտականություններ են առաջանում ոչ թե տվյալ մարմնի համար, այլ պետության համար:

Փաստորեն, դիմողի այն պնդումը, որ Պետական գույքի կառավարման վարչությունը հանդես գալով ՀՀ անունից՝ ունի քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների հետ հավասար իրավունքներ և պարտականություններ, հիմնավոր է: Սա համահունչ է նաև ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի այն դրույթին, համաձայն որի՝ ՀՀ կառավարությունն է կառավարում պետական սեփականությունը: Սակայն դիմողը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը որոշակի իմպերատիվ բնույթի սահմանափակումներ է նախատեսում քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ նաև պետական մարմինների համար:

ՍԵՐՎԻՏՈՒՏԸ

ՍԴՈ–901, 29 հունիսի, 2010 թ.

7. .... Այսպիսով, վերլուծելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի և վերջինիս իրացումը սերվիտուտի միջոցով կարգավորող քաղաքացիաիրավական նորմերի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սերվիտուտը որպես գույքային իրավունք.

– պայմանավորված է ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման թելադրված (անխուսափելի) անհրաժեշտությամբ, առանց որի սերվիտուտ պահանջող անձն անկարող է իրացնել (կամ լիարժեք իրացնել) սեփականության իր իրավունքը,

– նպատակաուղղված չէ անձին, որպես սերվիտուտով ծանրաբեռնված գույքի սեփականատիրոջ, իր իրավունքներից զրկելուն,

– ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի սահմանափակ օգտագործման իրավունք է, որի իրացմամբ սերվիտուտով ծանրաբեռնված գույքի սեփականատերը չի զրկվում այդ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իր սահմանադրական իրավունքներից,

– կոչված է ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի ոչ լիարժեք, սահմանափակ և թելադրված անհրաժեշտության նպատակով օգտագործմանը,

– չի կարող ինքնուրույն քաղաքացիաիրավական գործարքների առարկա լինել,

– որպես կանոն, իրականացվում է սերվիտուտ սահմանելու անհրաժեշտության հանգամանքների գոյության ժամկետով, և կարող է պահպանվել (փոխանցվել) իրավահաջորդության սկզբունքով,

– հասարակական կարիքների համար անվճար, հարկադիր և մշտական սերվիտուտ կարող է սահմանվել միայն օրենքով,

– ճանաչվում, երաշխավորվում և պաշտպանվում է պետության կողմից՝ ենթարկվելով պետական գրանցման՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով,

– օրենքով նախատեսված հիմքերով ենթակա է դադարման, այդ թվում՝ դատական կարգով, քաղաքացիական այլ իրավունքներին համարժեք ենթակա է հավասար իրավական պաշտպանության:

.... Գույքն իր **նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելը**, որպես գույքային իրավունքի իրականացման միջոց, իրավակարգավորման է ենթարկված ոչ թե սերվիտուտի հետ կապված իրավահարաբերությունների, այլ քաղաքացիական իրավունքների կարգավորման շրջանակներում, որպես քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների իրավաչափ վարքագիծ: Դա է վկայում մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 134, 202, 209, 884 և 889–րդ հոդվածների վերլուծությունը՝ հողային և փոխառության հետ կապված իրավակարգավորման առնչությամբ, որից հետևում է, որ քաղաքացիաիրավական հարաբերության օբյեկտ հանդիսացող ցանկացած գույք ենթակա է օգտագործման իր նպատակային նշանակությանը համապատասխան, ելնելով տվյալ գույքի սպառողական և այլ հատկանիշներից, որոնք յուրաքանչյուր դեպքում ենթակա են գնահատման ինչպես օրենքով սահմանված կարգով, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում: Տվյալ դեպքում հողամասերի նպատակային նշանակության, դրանց կատեգորիաների որոշման հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ հողային օրենսգրքով (օրենսգրքի 2, 5–8, 20, 22–23, 27, 29, 31, 34–36, 39, 41–43, 45, 49–50, 57, 62, 64–66–րդ և բազմաթիվ այլ հոդվածներ):

Վերոշարադրյալից հետևում է, որ սերվիտուտին առնչվող իրավահարաբերություններն անհրաժեշտ է դիտարկել իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ, ինչը չի արվել դիմողի կողմից:

9. Անդրադառնալով սեփականության իրավունքը սերվիտուտով սահմանափակելու իրավաչափության միջազգային իրավական գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել այն եվրոպական պետություններում այդ իրավունքի նորմատիվ կարգավորման պրակտիկայի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում:

.... Համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի մյուս նորմերը Եվրոպական դատարանի նախադեպային նշանակության իրավական մոտեցումների հետ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորումը նախատեսելիս օրենսդիրն առաջնորդվել է անհատի և հասարակության շահերի արդարացի հավասարակշռման սկզբունքով, մասնավորապես, սերվիտուտը դիտարկելով որպես անձանց սեփականատիրական իրավունքների և դրանցից բխող օրինական շահերի հնարավոր բախման կանխարգելման միջոց, միաժամանակ նախատեսելով սերվիտուտ սահմանելու հիմքերը և կարգը (այդ թվում՝ պետական գրանցման), դրա դատական պաշտպանության միջոցները, բացառել է ուրիշի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը վերոհիշյալ հիմքով կամայական օգտագործելու իրավական հնարավորությունը: Այս առումով վիճարկվող նորմում նախատեսված իրավակարգավորումը, որպես սեփականության իրավունքի հնարավոր սահմանափակման միջոց, հետապնդում է սահմանադրաիրավական, հետևաբար՝ նաև արդարացի նպատակ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սերվիտուտի նման իրավակարգավորումն ապահովում է ՀՀ Սահմանադրության 8 և 31–րդ հոդվածներով նախատեսված՝ անձի սեփականության իրավունքն ազատ և հայեցողաբար իրացնելու սահմանադրաիրավական սկզբունքի իրականացումը՝ այն սահմանափակումներով, որոնք իրավաչափ են ու պայմանավորված են այլ անձանց, հանրության և պետության իրավունքների ու օրինական շահերի հաշվառման անհրաժեշտությամբ:

ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-735, 25 փետրվարի, 2008 թ.

6. Սնանկության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը յուրաքանչյուր պետության տնտեսության կայունության ապահովման երաշխիքներից է: Հաշվի առնելով սնանկ ճանաչելու և սնանկության վարույթն իրականացնելու օրենսդրական հիմքերի միջազգային ներկա զարգացումները, Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովն ընդունել է «Անվճարունակության մասին օրենսդրության հարցերով օրենսդիր մարմինների ուղեցույց» (Ուղեցույց, 2005 թ.), որում ամրագրված սկզբունքներն իրենց արտացոլումն են գտել տարբեր պետությունների անվճարունակության մասին օրենսդրական ակտերում:

Համաձայն այդ Ուղեցույցի՝ անվճարունակության մասին օրենսդրության առանցքը կազմում է սնանկության վարույթն իրականացնելու չափորոշիչների սահմանումը: Այդ հիմքերի պահպանմամբ է հնարավոր դառնում սնանկության գործերով վարույթի իրականացումը, որն էլ հնարավորություն է ընձեռում սահմանել այն պարտապաններին, որոնց վրա կարող է տարածվել օրենսդրության պաշտպանական և ընթացակարգային կառուցակարգերի գործողությունը, ինչպես նաև այն կողմերին (պարտապան, պարտատեր կամ այլ կողմեր), որոնք կարող են սնանկության մասին գործի վարույթը հարուցել:

8. .... Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և **միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը:**

9. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող դրույթի որևէ այլ մեկնաբանություն ոչ միայն վեր կհանի վերոհիշյալ հակասությունները, այլ նաև կստեղծի սնանկ ճանաչված պարտապանի սեփականության իրավունքի խախտման իրական վտանգ: Նման պարագայում տեղի կունենա չարդարացված և չհիմնավորված միջամտություն պարտապանի սեփականության իրավունքին, պարտապանի համար կառաջանան այնպիսի բացասական և ծանր հետևանքներ, որոնք արդարացված չեն որևէ իրավաչափ նպատակով:

ՍԴՈ-932, 11 հունվարի, 2011 թ.

7. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող մի շարք առանձին վարույթների շարքում իրավաչափորեն առանցքային նշանակություն է վերապահել պարտապանին սնանկ ճանաչելու և սնանկության գործն ավարտելուն ուղղված վարույթներին: **Մնացած բոլոր վարույթները, այդ թվում՝ ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթները, հանդիսանում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետևանքները,** որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո **մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճռի կայացումը:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում այն դիրքորոշումը, համաձայն որի՝ ժողովի որոշումների բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտը հանդիսանում է վեճն ըստ էության լուծող դատական ակտ:

8. Ինչ վերաբերում է սնանկության գործի ընթացքում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանը, ապա օրենսդիրը, դարձյալ ելնելով սնանկության գործի մաս

կազմող առանձին վարույթների բնույթից, առանձնահատկություններից, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանից, սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միջանկյալ դատական ակտերի մի մասի համար է սահմանել բողոքարկման հնարավորություն:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմողի փաստարկներն առնչվում են ոչ միայն ժողովի որոշումների, այլ նաև սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող դատական ակտերին, ինչպես նաև այն հանգամանքը, որ նշված վարույթներով կայացված դատական ակտերը, համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ ենթակա չեն բողոքարկման, նշված դատական ակտերի վերջնական լինելու հանգամանքի գնահատման նպատակով սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում գնահատել, մասնավորապես, ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը: ....

9. Արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի տեսանկյունից հարկ է վեճի առարկա իրավունքների պաշտպանության երաշխիքները դիտարկել սնանկության վարույթին վերաբերող դատավարական այլ երաշխիքների համատեքստում, որոնք պետք է ուղղված լինեն սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը:

Այս առումով, սահմանադրական դատարանի 2007 թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման լույսի ներքո գնահատելով պարտատերերի ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պարտատերերի ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող որոշումներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում սնանկության գործի քննության հնարավորությունը, չեն խոչընդոտում դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, հետևաբար, ապահովում են նաև սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությունը:

Ինքնանպատակ չէ այն, որ օրենսդիրը սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող մի շարք միջանկյալ դատական ակտեր, ի տարբերություն մյուսների, համարում է բողոքարկելի դատական ակտեր: Դրանք իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոտել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը, այն է՝ դիմումի ընդունումը մերժելու (օրենքի 14-րդ հոդված), դիմումը վերադարձնելու (օրենքի 15-րդ հոդված), պարտապանի մոտ ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու (օրենքի 19-րդ հոդված), պահանջների վերջնական ցուցակը հաստատելու (օրենքի 20-րդ հոդված), պահանջի, պահանջի փոփոխության դեմ առարկությունները քննարկելու արդյունքում պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը որոշելու (օրենքի 46-րդ հոդված), սնանկ ճանաչված անձի գույքն օտարելու թույլտվություն տալու (օրենքի 50-րդ հոդված), պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու մասին (օրենքի 85-րդ հոդված) որոշումները:

Այսպիսի իրավակարգավորման պարագայում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ մոտեցում է ցուցաբերված օրենսդրի կողմից, երբ բողոքարկելի են համարվում սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը, քանի որ հակառակ մոտեցումը, երբ սկզբունքորեն

բողոքարկելի կարող են դիտարկվել սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող առանց բացառության բոլոր միջանկյալ դատական ակտերը, այդ թվում՝ նաև ժողովի որոշումները և կառավարչի գործողությունները վիճարկելու վարույթով կայացված որոշումները, կարող է վտանգել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը: Նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում ապահովել արդարադատության արդյունավետ իրականացումը՝ զերծ պահելով այն անհարկի ձգձգումներից:

Այն հանգամանքը, որ քաղաքացիական վեճերի լուծման ժամանակ, երբ առկա է նաև ժամանակի գործոնի ազդեցությունը, միջանկյալ ակտերով վերաքննություն չնախատեսելն ինքնին չի նշանակում, որ հնարավոր չէ ապահովել արդյունավետ դատավարություն միայն դատական մեկ ատյանում գործի քննության պայմաններում: Տվյալ կոնկրետ դեպքում կողմի իրավունքների դատական պաշտպանության խնդիրը կարող է վերաքննության առարկա դառնալ նաև **սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթի շրջանակներում**:

ՍԴՈ–954, 12 ապրիլի, 2011 թ.

8. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19–րդ հոդվածի 3–րդ մասի իրավակիրառական պրակտիկայի գնահատման շրջանակներում անդրադառնալով տվյալ գործով կայացված դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ տվյալ գործով դատական քննության արդյունքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19–րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին նախադասության դրույթին տրվել է լայն մեկնաբանություն, ինչի հետևանքով օրենքի վիճարկվող դրույթներում «լիազորությունները» բառն ընկալվել է համընդգրկուն իմաստով՝ ներառելով ընկերության մասնակցի՝ օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները, **ինչը, սակայն, պայմանավորված չէ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությամբ**:

ՍԴՈ–998, 22 նոյեմբերի, 2011 թ.

5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավական ակտերը չեն բացառում բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) հանդիսացող անձանց՝ ընկերության հետ պարտավորական իրավահարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքը և դրա վրա հիմնված՝ **մինչև լուծարման գործընթացի ավարտը** պահանջներ ներկայացնելու իրավունքը: Պարզապես տարբեր են պահանջների բնույթները. ի տարբերություն մյուս պարտատերերի, այս փուլում բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) հանդիսացող անձանց պահանջի իրավունքը սահմանափակված է, ի թիվս այլնի, շահութաբաժիններ ստանալուն, ընկերության կողմից վնաս պատճառելուց ծագող համապատասխան պահանջի բավարարմանը, պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունք ստանալուն ուղղված, ինչպես նաև բաժնետիրական ընկերության հիմնադրի (մասնակցի, բաժնետիրոջ, անդամի կամ գործընկերոջ) կողմից լուծարվող ընկերությանը վարկ կամ փոխառություն տրամադրելուց ծագող փոխադարձ իրավունքների և պարտականությունների շրջանակով:

Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում հետևյալ հանգամանքները.

ա) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345–րդ հոդվածի համաձայն. «Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից»,

բ) պարտավորությունների ծագման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված «այլ հիմքերից» մեկն էլ ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50–րդ հոդվածի 3–

րդ մասում, որի համաձայն. «Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները»,

գ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի և 72-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով բաժնետիրական ընկերությունները հանդիսանում են տնտեսական ընկերություններ, այսինքն՝ բաժնետիրական ընկերության հիմնադիրը (մասնակիցը, բաժնետերը, անդամը կամ գործընկերը) ունի ընկերության նկատմամբ պարտավորական իրավունքներ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ պարբերության ուժով մինչև լուծարման գործընթացի ավարտը նրանք մյուս պարտատերերի հետ մեկտեղ կարող են պահանջ ներկայացնել բաժնետիրական ընկերությանը,

դ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով բաժնետոմսն առաջացնում է ընկերության նկատմամբ բաժնետիրոջ **պարտավորական իրավունք**, իսկ նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «ժ» ենթակետերի և 40-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունից բխում է, որ այդ պարտավորական իրավունքը սահմանափակվում է, ի թիվս այլնի, շահութաբաժիններ ստանալուն, ընկերության կողմից վնաս պատճառելուց ծագող համապատասխան պահանջի բավարարմանը, պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունք ստանալուն ուղղված, ինչպես նաև բաժնետիրական ընկերության հիմնադրի (մասնակցի, բաժնետիրոջ, անդամի կամ գործընկերոջ) կողմից լուծարվող ընկերությանը վարկ կամ փոխառություն տրամադրելուց ծագող փոխադարձ իրավունքների և պարտականությունների շրջանակով:

....

6. .... Օրենքի վիճարկվող դրույթի հետևանքով սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընկերության բաժնետերերի կողմից ձեռք բերված բաժնետոմսերի համար վճարված գումարները, ինչպես նաև ընկերության հիմնադրման գործում ներդրված ավանդները հանդիսանում են ընկերության գույքի մաս, և ընկերության հիմնադիրը (մասնակիցը, բաժնետերը, անդամը կամ գործընկերը) այլևս չի հանդիսանում բաժնետոմսերի համար իր վճարած գումարների կամ իր ներդրած ավանդի սեփականատեր: Դրանով, ինչպես նաև պարտատերերի շահերի երաշխավորման սկզբունքով է պայմանավորված այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և «Սնանկության մասին» ՀՀ օրենքը բաժնետոմսերի համար վճարված գումարները կամ ներդրված ավանդը վերադարձնելու պահանջի իրավունքի իրացումը պայմանավորել են լուծարման գործընթացի ավարտով և այն էլ՝ ընկերության մնացած գույքով: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ տվյալ պարագայում առկա չէ պատճառահետևանքային կապ օրենքի վիճարկվող դրույթի և դիմողի սեփականության իրավունքի խախտման միջև, իսկ համապատասխան հիմքերի բացակայությունը դիմողին զրկում է սեփականության իրավունքի խախտումը հիմնավորելու հնարավորությունից:

ՍԴՈ-1106, 10 սեպտեմբերի, 2013 թ.

6. .... Սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ նշված ինստիտուտի նախատեսումը կարևոր կանխարգելիչ նշանակություն ունի և կոչված է ապահովելու տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությունն այն իրավիճակներում, երբ վերջիններս չեն կարողանում ժամանակին կատարել պետության առջև իրենց հարկային պարտավորությունները: Ըստ էության նշված ինստիտուտն այլընտրանք կարող է հանդիսանալ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 10-րդ հոդվածներով նախատե-

ված հարկատուի նկատմամբ հարկադրական սնանկության գործ նախաձեռնելու ինստիտուտին, որը կարող է հանգեցնել տնտեսվարող սուբյեկտի լուծարմանը:

ՍԴՈ–1189, 27 հունվարի, 2015 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ գործի նյութերի՝ դիմողի համար անբարենպաստ իրավական հետևանքներ է առաջացրել օրենքի վիճարկվող պարբերության՝ «....և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթի՝ նրա նկատմամբ կիրառումը:

Վերոնշյալ դրույթի սահմանադրականության հարցը պարզելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող կանոնակարգումը նախ դիտարկել ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրությամբ երաշխավորված անձի սեփականության իրավունքի լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև՝ նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, Trgo v. Croatia, 2009 թ. հունիսի 11-ի վճիռ):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումից և դիմումին կից ներկայացված նյութերից պարզ է դառնում, որ դիմողը սնանկության գործով պարտապանի հետ կնքել է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն պարտապանին մատուցել է տպագրական ծառայություններ, իսկ պարտապանը պարտավորվել է վճարել այդ ծառայությունների համար, սակայն ամբողջությամբ չի կատարել իր պարտավորությունները: Հետևաբար, դիմողն իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց համապատասխան նյութական միջոց ստանալու իրավաչափ ակնկալիք ուներ:

....

ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցերին: Մասնավորապես, ՍԴՈ–903, այնուհետև՝ ՍԴՈ–1073 որոշումներում դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31-րդ հոդվ., 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ., 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

«Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է ՍԴՈ–630 որոշման մեջ, որում սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Հաշվի առնելով նաև այդ բնութագրումը՝ սահմանադրական դատարա-

նը գտել է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետևյալ հիմնական պարտադիր տարրերը.

– սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,

– սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,

– սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավազորությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման:

Քննության առնելով դիմողի համար առաջացած ոչ բարենպաստ հետևանքները վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմը որևէ առնչություն չունի անձին պատասխանատվության ենթարկելու, հետևաբար՝ նաև սեփականազրկման հետ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–1073 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը պայմանավորում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու առաջնահերթ անհրաժեշտությամբ: Դրանք են՝ շրջակա միջավայրը, **այլ անձանց**, հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ:

Սահմանադրական դատարանն իր՝ 25.02.2008 թվականի ՍԴՈ–735 որոշման մեջ արտահայտել է նաև հետևյալ դիրքորոշումը. «Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և **միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը**»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող կանոնակարգումը կարող էր ուղղված լինել պարտապանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը միայն **սնանկության գործընթացում**, որը ներառում է նաև ֆինանսական առողջացումը՝ նպատակ ունենալով զերծ պահել պարտապան հանդիսացող սուբյեկտին պարտատերերի կողմից ներկայացվող պահանջներից, որպեսզի վերջինս ֆինանսապես վերականգնվի, վճարունակ դառնա, լիարժեք մասնակցի քաղաքացիական շրջանառությանը, ինչը չի կարող արդարացված լինել նույն նպատակներով սնանկության գործի ավարտից՝ նրա ֆինանսական առողջացումից հետո, երբ առողջացած կազմակերպությունը դառնում է քաղաքացիական շրջանառության և քաղաքացիաիրավական հարաբերությունների լիարժեք մասնակից: Դրա մասին է վկայում նաև օրենքում գործածվող «ֆինանսական առողջացման ծրագիր» հասկացության սահմանումը, որի համաձայն՝ ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող, օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի իրականացման դեպքում պարտապանը չի լուծարվելու կամ չի կայացվելու ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելու մասին վճիռ (հոդված 59):

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորումը ոչ միայն պարտատերերի իրավունքների ոտնահարման իրական վտանգ է պարունակում, այլև մեծ են նաև կոռուպցիոն ռիսկերը: Առաջին հերթին սնանկացման հայտ ներկայացնելիս պարտապանն է պարտավոր հստակ ներկայացնել իր պարտավորությունների իրական պատկե-

րը: Դա կբացառի նաև պարտատերերի կողմից գույքի թաքցնումը կամ անհիմն նվազեցումը, ինչի մասին շեշտվում է նաև Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում սնանկության խնդրի լուծման վերաբերյալ 2014 թ. ներկայացված զեկույցի համառոտագրի 9-րդ և հիմնական զեկույցի 36-րդ կետերում:

Նշված իրական պատկերին համապատասխան պետք է կազմվի պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ դրանում իրավունքի ուժով ներառելով պարտապանի կողմից իրավաբանորեն ճանաչված բոլոր պարտավորությունները՝ չբացարձականացնելով հայցողական մոտեցումը: Օրենսդրական կարգավորումն առավելապես պետք է հենվի այն մոտեցման վրա, որ սնանկության կառավարիչն առաջին հերթին պետք է գործի պարտապանի կողմից տրված տեղեկատվության հիման վրա, ինչը համապատասխան պարտավորվածություն կառաջացնի նաև պարտապանի համար: Բացի դրանից, **բոլոր այն պարտատերերը, ովքեր օբյեկտիվ պատճառներով չեն ծանոթացել** http://www.azdarar.am **հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությանը, հետագայում դատական կարգով իրենց իրավունքների պաշտպանության հնարավորություն պետք է ունենան:** Հակառակ պարագայում, ոչ միայն ոտնահարվում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով ամրագրված նրանց իրավունքները, այլև խախտվում են համամասնականության և համաչափության սահմանադրական սկզբունքները՝ օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված բացառությունների առումով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ շահագրգիռ սուբյեկտների կողմից սնանկության գործընթացի մասին պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության conditio sine qua non (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստիև ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն սնանկության գործընթացում գտնվող սուբյեկտի (պարտապանի) բոլոր պարտատերերի հայտնաբերմանը և վերջիններիս՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի պարտապանի **արդյունավետ ծանուցման և պարտավորությունների գրանցման ընթացակարգ**, որը գործնականում կբացառի սնանկության գործընթացի մասին շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները: Խնդիրն այն է, որ պարտատերը պատշաճ ծանուցում պետք է ստանա սնանկության վարույթի բացման և պահանջներ ներկայացնելու անհրաժեշտության մասին: Իսկ պարտապանը պետք է օրենքով սահմանված կարգով հստակ ու ամբողջական տեղեկատվություն ներկայացնի իր պարտավորությունների վերաբերյալ:

Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում նաև սնանկության գործընթացի շրջանակներում առողջ ճանաչված պարտապանին ընտրողաբար պարտավորություններից ազատելը, քանի որ վիճարկվող իրավակարգավորումը տարբերակված մոտեցում է նախատեսում հարկային պարտավորությունների պարտատեր հանդիսացող պետության և այլ տեսակի պարտավորությունների պարտատերեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ-947, 5 ապրիլի, 2011 թ.

6. .... Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունքների

վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականխիչ նշանակություն և քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները: Այդ է պատճառը նաև, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտը, որի միջոցով գործնականում ապահովվում է հանցագործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնումը:

Վերոգրյալից բխում է, որ կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական և քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, և դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ. քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը:

Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վտանգավորության գնահատումը և դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը և ելնելով վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից:

Օրենսդիրն իրավակիրառողին չի ընձեռում քաղաքացիական և քրեական պատասխանատվություն սահմանող նորմերի միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի վերաբերյալ գործերը հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջև: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է և պարտավոր է իմանալ, որ տվյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաև քրեական պատասխանատվություն:

12. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ՍԴՈ–944, 4 մարտի, 2011 թ.

5. .... Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը որպես անշարժ գույքի նկատմամբ ցանկացած հիմքով սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176–րդ հոդվածը որպես պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը, եթե այդպիսի իրավունքն օրենքով ենթակա է գրանցման: Բացի գործարքից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11–րդ գլխի դրույթները որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հիմք են ճանաչում, ի թիվս այլնի, նաև անձի կողմից իր համար նոր անշարժ գույքի ստեղծումը (ՀՀ քաղ. օր. 173–րդ հոդված), ձեռքբերման վաղեմությունը (ՀՀ քաղ. օր. 187–րդ հոդված): Օրենսգրքի 173–րդ և 187–րդ հոդվածները համապատասխանաբար նշված հիմքերով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը ևս պայմանավորում են այդ իրավունքի պետական գրանցման պահով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահը դիտում է որպես այդ իրավունքի ծագման նախապայման ոչ միայն սեփականության իրավունքի պարագայում, այլև անշարժ գույքի նկատմամբ ցանկացած այլ գույքային իրավունքի առնչությամբ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225–րդ և 235–րդ հոդվածներն իրավունքի պետական գրանցման պահով են պայմանավորում նաև համապատասխանաբար՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի և որոշ դեպքերում՝ գրավի իրավունքի ծագումը:

Վերոհիշյալը վկայում է, որ օրենսդիրը միանշանակորեն անշարժ գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այս կամ այն հիմքից բխող իրավունքների պետական գրանցման փաստին հաղորդել է միանգամայն որոշակի նշանակություն՝ քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների համար հստակ է, որ օրենսդիրն անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների ծագումը պայմանավորել է ոչ թե դրանց համար հիմք հանդիսացող հանգամանքների առկայությամբ, այլ այդ հանգամանքների առկայության պայմաններում համապատասխան գույքային իրավունքի պետական գրանցման՝ անշարժ գույքի հետ կապված գործարքներից բխող իրավունքների ու պարտականությունների ճանաչման փաստով:

6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վիճարկվող 10–րդ հոդվածի 2–րդ մասը նույնպես որպես գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման պահ է սահմանում դրանց գրանցման պահը: Օրենսգրքի 135–րդ հոդվածը սահմանում է պետական գրանցման ենթակա իրավունքների շրջանակը, այն է՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները՝ չբացառելով օրենքով պետական գրանցման ենթակա այլ իրավունքներ սահմանելու հնարավորությունը: Օրենսգրքի 301–րդ հոդվածն անշարժ գույքի հետ կատարվող գործարքի կողմերին պարտավորեցնում է գործարքից ծագող իրավունքները ենթարկել պետական գրանցման: Միաժամանակ, օրենսգրքի 302–րդ հոդվածը սահմանում է օրենքի նշված պահանջը չկատարելու իրավական հետևանքները, այն է՝ գործարքը, որից ծագող իրավունքներն օրենքով

սահմանված ժամկետում պետական գրանցում չեն ստանում, առռչինչ է՝ օրենքի ուժով գոյություն չունի: Նշված նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ **նախ՝** նման իրավակարգավորումը երաշխավորում է անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների ու պարտականությունների հավասարակշռումը՝ դրանով իսկ համապատասխան նախադրյալներ ստեղծելով իրավունքների պաշտպանության համար: **Երկրորդ՝** անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերություններում քաղաքացիաիրավական շրջանառության մասնակիցները լիարժեք հնարավորություն են ունենում կանխատեսելու իրենց համապատասխան վարքագծի իրավական հետևանքները: **Երրորդ՝** իրավական պայմաններ է ստեղծում պետության կողմից անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցելուն, գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելուն, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարաններին, իրավաբանական անձանց, բանկերին, քաղաքացիներին գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուն, ինչպես նաև այդպիսի տեղեկատվության մատչելիությունը, օբյեկտիվությունը և անընդհատությունն ապահովելուն, այսինքն՝ այնպիսի խնդիրներ և նպատակներ, որպիսիք միտված են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածից բխող՝ պետության պարտականությունների կատարման երաշխավորմանը:

Ինչ վերաբերում է դիմողի մատնանշած՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի և վիճարկվող դրույթների միջև ենթադրյալ հակասությանը, ինչը, ըստ դիմողի, վկայում է վերջիններիս անորոշության մասին, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք ունեն միմյանցից բովանդակային առումով տարբերվող իրավակարգավորման առարկաներ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների համար **հիմք հանդիսացող հանգամանքները**՝ վերջիններիս թվում մատնանշելով նաև պայմանագրերն ու գործարքները: Այդ նորմին համապատասխան՝ օրենսգրքի 289-րդ հոդվածը քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների սահմանման, դադարման և փոփոխման համար հիմք հանդիսացող «գործարք» եզրույթի քաղաքացիաիրավական բովանդակությունն է բացահայտում: Մինչդեռ օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է գույքային իրավունքների ծագման համար հիմք հանդիսացող այս կամ այն հանգամանքի առկայության պայմաններում գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման պահը: Ակնհայտ է, որ քաղաքացիական իրավունքների, այդ թվում՝ սեփականության, ու պարտականությունների **«ծագման հիմքերը»** և «**ծագման պահը»** միևնույն իրավական բովանդակությունը չունեն: Օրենքով նախատեսված հիմքերը, այդ թվում՝ գործարքը, անհրաժեշտ են, բայց ոչ բավարար սեփականության նկատմամբ իրավունքի իրացումը երաշխավորելու համար: Այն պետք է նաև օրենքով սահմանված կարգով իրավական ճանաչում ստանա: Սակայն այդ ճանաչումը չի կարող հայեցողական բնույթ ունենալ և անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում խոչընդոտել սեփականության իրավունքի իրացմանը: Բացի դրանից, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների բնույթից ու նշանակությունից ելնելով, հստակ տարանջատել է **անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում** գույքի նկատմամբ **իրավունքի ծագման** երեք պահ. գույքի **հանձնման պահից** (հոդվ. 176), գործարքի **նոտարական վավերացման պահից** (հոդվ. 299), գույքի նկատմամբ իրավունքի **պետական գրանցման պահից** (հոդվածներ 10, 176-ի 2-րդ մաս, 301):

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ վիճարկվող նորմերի մեկնաբանման և կիրառման պրակտիկայում դրանք ընկալվում են միանշանակ բովանդակությամբ, երկիմաստ, հայեցողական և հակասական մեկնաբանությունների հնարավորություն չեն ստեղծում:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթները ձևակերպված են հստակ և որևէ իրավական անորոշություն չեն առաջացնում:

7. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագումն այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահով պայմանավորելու իրավաչափության գնահատումը: Այդ նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը, դրա խնդիրներին, ինչպես նաև այդ ինստիտուտի վերաբերյալ իր՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտը կոչված է իրականացնելու անշարժ գույքի շրջանառության ոլորտում մասնավոր իրավական հարաբերությունների պետական կարգավորում: Այս ինստիտուտը հատուկ է բոլոր այն իրավակարգերին, որտեղ անշարժ գույքը հանդես է գալիս որպես քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի հիմնական իմաստն ու նպատակն անշարժ գույքի շրջանառության կայունության, անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունք ունեցող անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովումն է: Նշված նպատակն է արտացոլված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում: Վերջինս որպես անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հիմնական խնդիրներ է ամրագրում, մասնավորապես, պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը, աջակցությունն անշարժ գույքի շուկայի կայացմանը, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օբյեկտիվության և անընդհատության ապահովումը, պայմանավորված նաև այն խնդիրներով, որպիսիք թվարկված են սույն որոշման 6-րդ կետում:

Անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցումը ոչ այլ ինչ է, քան գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման ու պաշտպանության երաշխիք:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007 թ. մայիսի 15-ի ՍԴՈ-702 որոշման մեջ, գնահատելով առանձին գործարքների պարտադիր նոտարական վավերացման, ինչպես նաև դրանցից բխող իրավունքների պետական գրանցման պահանջի իրավաչափությունը, նշել է. «....գրավոր որոշ գործարքների նոտարական պարտադիր վավերացման ինստիտուտը և այդպիսի գործարքներից ծագող, փոփոխվող և դադարող իրավունքների պետական գրանցման պահանջը՝ ելնելով նաև անձի իրավունքների և դրանց երաշխավորված իրացման վերաբերյալ սահմանադրական սկզբունքային դրույթների բովանդակությունից, քաղաքացիական իրավունքների ազատության որոշակի սահմանափակում նախատեսելով հանդերձ, կարևոր երաշխիք է ինչպես անձանց իրավունքների (ներառյալ սեփականության իրավունքի) արդյունավետ իրացումն ու պաշտպանությունն ապահովելու, այնպես էլ պայմանագրի կողմերի ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման, հետևաբար, նաև քաղաքացիական (գույքային) շրջանառության երաշխավորված կայունությունն ապահովելու համար»:

Ելնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի իրավական բովանդակությունից ու խնդիրներից, ինչպես նաև հաշվի առնելով սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պարտականություն սահմանելով և պետական գրանցման ենթակա իրա-

վունքների ծագումն այդպիսի գրանցմամբ պայմանավորելով՝ օրենսդիրը հետապնդել է իրավաչափ նպատակ:

8. Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի դրույթների համալիր ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությամբ ստեղծված են կոնկրետ իրավական երաշխիքներ, որոնք կոչված են ապահովելու անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման գործընթացի անարգել իրականացումը: Մասնավորապես, նշված գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պահանջի կատարումը բացառապես պայմանավորված է գործարքի կողմերի կամաարտահայտությամբ և նրանց վարքագծով: Պետական գրանցում իրականացնող իրավասու մարմինը, այն է՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, գրանցման գործընթացում հայեցողություն դրսևորելու իրավական հնարավորություն չունի: Գրանցման գործընթացը մանրամասն կանոնակարգված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: Վերջինս սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ստորաբաժանումներ մուտքագրվող փաստաթղթերի ընդունման կարգը (հոդվ. 22), գրանցման համար դիմելու ժամկետը, գրանցումն իրականացնող ստորաբաժանումը (հոդվ. 23), պետական ռեգիստրի ստորաբաժանման կողմից գրանցումը կատարելու առավելագույն ժամկետը (հոդվ. 24): Ընդ որում, վերոհիշյալ օրենքով սահմանված փաստաթղթերի առկայության պայմաններում համապատասխան իրավասու ստորաբաժանման կողմից գրանցումն օրենքով սահմանված ժամկետում չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով, տվյալ գործարքի հիման վրա գույքային իրավունք ձեռք բերելու ակնկալիք ունեցող սուբյեկտը կարող է ձեռնամուխ լինել իր համապատասխան իրավունքի իրականացմանը:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է պաշտպանության միջոց նաև այն դեպքում, երբ գործարքից բխող իրավունքի գրանցմանը խոչընդոտում է գործարքի կողմերից մեկը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 302-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գործարքը կնքվել է պատշաճ ձևով, իսկ կողմերից մեկը հրաժարվում է գործարքից ծագող իրավունքների գրանցումից, դատարանն իրավունք ունի մյուս կողմի պահանջով վճիռ կայացնել այդ իրավունքների գրանցման մասին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումից անհիմն խուսափող կողմը պետք է մյուս կողմին հատուցի գրանցման ուշացման հետ կապված վնասները:

ՍԴՈ-1009, 24 փետրվարի, 2012 թ.

7. Վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև այդ նորմում «անհրաժեշտ լիազորություններ» ձևակերպման բովանդակության հստակեցումը: Մասնավորապես, այս առնչությամբ կարևորվում է հետևյալ հարցադրումը. արդյո՞ք օրենսդիրը «անհրաժեշտ լիազորություններ» ձևակերպման ներքո նկատի ունի մի համասեփականատիրոջ՝ մյուս համասեփականատերերի անունից գործարք կնքելու իրավունքի առկայությունը, թե՞ ընդհանուր գույքը տնօրինելու բոլոր համասեփականատերերի համաձայնության առկայությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ լիազորության բովանդակության առաջին հարցադրմամբ ընկալումն անխուսափելիորեն կհանգեցնի խնդրո առարկա հոդվածի 2-րդ մասում ամրագրված իմպերատիվ նորմի պահանջների անտեսմանը: Մինչդեռ անհրաժեշտ լիազորության առկայության պահանջն ինքնանպատակ չէ, այն պետք է երաշխիք հանդիսանա համասեփականատերերի հայեցողության իրացման համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի բազմաթիվ հոդվածների (մասնավորապես՝ 14-20) իրավական տրամաբանությունից բխում է, որ լիազորությունն իրավահարաբերության սուբյեկտին տրվող իրավունք ու պարտականություն է՝ օրենսդրությամբ նախատեսված իրավաչափ գործողություն կատարելու համար: Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով լիազորվողը նման լիազորությամբ **կարող է օժտվել օրենքի ուժով կամ իրավահարաբերությունների սուբյեկտների ինքնավար կամքի դրսևորմամբ:** Քաղաքացիաիրավական հարաբերություններում այն ենթադրում է նաև՝ լիազորել անձին լիազորողի (լիազորողների) անունից կատարել գործողություններ, որոնք վերջինիս (վերջիններիս) սուբյեկտիվ իրավունքների իրացման արդյունքում կարող են որոշակի իրավական հետևանքներ առաջացնել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ համատեղ սեփականության փաստն ինքնին չի կարող ենթադրել համասեփականատերերից յուրաքանչյուրի մոտ համատեղ գույքը հայեցողաբար տնօրինելու լիազորության առկայություն: Նման կանխավարկածը բոլոր այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով նախատեսված կարգին համապատասխան որոշված է համասեփականատերերի կոնկրետ շրջանակը, կամ նրանք որպես այդպիսին ճանաչվել են օրենքի ուժով, իրավակիրառական պրակտիկայում պետք է բացառել, նկատի ունենալով.

ա) նման կանխավարկածն առաջին հերթին հակասում է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուրի իրավունքն է **իր հայեցողությամբ** տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Այդ **հայեցողությունն** ունի սուբյեկտիվ բնույթ, պետք է դրսևորվի տվյալ անձի կամաարտահայտմամբ: Միաժամանակ, օրենքով են նախատեսվում սեփականության օտարման, սեփականությունից զրկելու և սեփականության իրավունքից օգտվելու բացառիկ այն դեպքերը, որոնք բխում են Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերից: Սեփականության իրավունքի իրացման այլ պայման նախատեսելը, քան նախատեսված է Սահմանադրության 31-րդ հոդվածում, անխուսափելիորեն կհանգեցնի այդ իրավունքի արգելափակման: Մյուս կողմից՝ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության պոզիտիվ պարտականությունն է երաշխավորել, ապահովել ու պաշտպանել սեփականության իրավունքը՝ դրա համար ստեղծելով իրավական անհրաժեշտ նախադրյալներ,

բ) վերոնշյալ սահմանադրաիրավական պահանջներից ելնելով է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ և թե՛ 3-րդ մասերում սեփականության իրավունքի իրավակարգավորման հիմքում **դրել է համատեղ սեփականության մասնակիցների կամաարտահայտությունը՝ նրանց համաձայնության առկայությունը**՝ նկատի ունենալով սեփականություն հանդիսացող գույքը երկու կամ ավելի անձանց ընդհանուր սեփականության իրավունքով պատկանելու իրավաբանական փաստը,

գ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ համատեղ սեփականությունն ընդհանուր սեփականության ձևերից մեկն է և «համատեղ սեփականության մասնակիցների համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատարանի վճռով, ընդհանուր գույքի նկատմամբ կարող է սահմանվել այդ անձանց բաժնային սեփականություն» (մաս 5-րդ): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ գլխի, մասնավորապես՝ 189 և 199-րդ հոդվածների, ինչպես նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ (5-րդ մաս), 27-րդ (4-րդ մասի 1-ին կետ), 35, 42, 43 և 46-րդ հոդվածների, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 41 և 64-րդ հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ՝

– գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքի պետական գրանցման գործընթացում սեփականության մասնակիցներից որևէ մեկի հանդես գալն իրավաբանորեն

անիրագործելի է մյուս մասնակիցների համաձայնության բացակայության դեպքում, և որ բոլոր դեպքերում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում նշվում են գրանցված իրավունքի բոլոր սուբյեկտների անունները (անվանումները)՝ որպես պետության կողմից այդ սուբյեկտների սեփականության իրավունքի ճանաչման, հետևաբար՝ նաև այն պաշտպանելու պոզիտիվ պարտականության ստանձնման իրավական փաստ,

– գույքի նկատմամբ համատեղ սեփականության մասնակիցներից որևէ մեկի իրավունքի դադարումը կարող է տեղի ունենալ **բացառապես նրա համաձայնությամբ** կամ, նրա մահվան դեպքում՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի՝ միմյանց հետ համակարգային ամբողջություն կազմող նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է, որ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ (եթե նրանց համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ) **բոլոր համասեփականատերերի կողմից իրենց հայեցողության իրացման արդյունքում տրված պոզիտիվ (կոնկրետ, առարկայական) համաձայնության առկայության պայմաններում**, երբ.

1) համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրավունքը հավաստող իրավական փաստաթղթում (գրանցման վկայականում) հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համատեղ սեփականության իրավունքով,

2) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

Եթե առկա չէ վերոհիշյալ դեպքերից որևէ մեկը, ապա **համատեղ սեփականատերերի խնդիրն է** նախապես հստակեցնել միմյանց միջև հարաբերությունները՝ ընդհանուր գույքի օտարման վերաբերյալ, նկատի ունենալով, որ սուբյեկտիվ իրավունքի իրացումն առաջին հերթին հիմնված է համապատասխան անձանց գործողությունների վրա: **Վերջինս ենթադրում է ինչպես համասեփականատերերի կողմից սեփականության իրավունքի հստակ պետական գրանցումը, անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուրի բաժնեմասի որոշակիացումը, այնպես էլ վեճի առարկա դրույթից ելնելով՝ համաձայնությամբ այլ բան նախատեսելը:** Նկատի պետք է ունենալ նաև այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ոչ միայն գույքի նկատմամբ **կարող է սահմանվել համատեղ սեփականության մասնակիցների բաժնային սեփականություն,** այլև օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցները, վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով, վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի»:

Համասեփականատերերի միջև հարաբերությունների հստակեցման արդյունքում է դրսևորվելու նրանց հայեցողական կամաարտահայտումն ընդհանուր սեփականության տնօրինման հարցում: Նման հայեցողության բացակայության պայմաններում է, որ պրակտիկայում այն սուբյեկտը, որի անվամբ ձևակերպված է եղել այդ սեփականությունը, կնքել է այն տնօրինելու գործարք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով: Նման վիճակի առկայությունից ելնելով է, թերևս, օրենսդիրը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում մասնավորապես նախատեսել, որ «եթե .... օտարվող սե-

փականության սեփականատերն իրեն հայտնի օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում չունեցող գույքային իրավունքներ ունեցողների մասին չի հայտնում ձեռքբերողին, ապա առանց այդ գույքային իրավունքներ ունեցողների մասնակցության սեփականության օտարման հետևանքով նրանց պատճառված վնասների համար պատասխանատվություն կրում է օտարվող սեփականության սեփականատերը»:

Հաշվի առնելով համատեղ սեփականության իրավունքի ծագման առանձնահատկություններն ու բնույթը, նկատի ունենալով, որ ընդհանուր սեփականությանը վերաբերող իրավանորմերը պետք է կարգավորեն ինչպես համասեփականատերերի՝ «բոլոր մասնակիցների» միմյանց միջև առաջացած հարաբերությունները, այնպես էլ համասեփականատերերի և երրորդ անձանց միջև առաջացող հարաբերությունները, օրենսդրի խնդիրն է համասեփականատերերի ինքնավար կամքի դրսևորման այնպիսի իրավակարգավորում նախատեսել, որպեսզի չխաթարվեն իրավահարաբերությունների որևէ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը: Դա անհրաժեշտ է նաև այն նպատակով, որպեսզի գույքը ծանրաբեռնված չլինի գործարքի կնքման պահին չբացահայտված այնպիսի պարտավորություններով, որոնք կխոչընդոտեն բարեխիղճ ձեռքբերողի սեփականության իրավունքի անարգել իրացմանը: Այս նպատակով եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում տնօրինման իրավունքը պայմանավորվում է հայեցողության դրսևորմամբ, ապա օրենսգրքի 192-րդ և 198-րդ հոդվածներում իրավակարգավորման առանցքը սեփականատերերի համաձայնությունն ու երրորդ կողմի շահերի հաշվառումն է:

Այսուհանդերձ, սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրաիրավական չափորոշիչները չեն կարող տարբեր լինել՝ կախված այն հանգամանքից, թե գույքը մեկ անձի կամ ընդհանուր (բաժնային կամ համատեղ) սեփականություն է: Սակայն չեն կարող անտեսվել նաև սեփականության իրավունքի իրացման՝ օրենքով նախատեսված ձևերի բազմազանությամբ պայմանավորված իրավակարգավորման առանձնահատկությունները: Այս հանգամանքը նկատի ունենալով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով (մասնավորապես՝ հոդվածներ 5 և 43) նախատեսվում է ինչպես պետական գրանցման բովանդակությունը, այնպես էլ համատեղ սեփականությունը որպես այդպիսին գրանցելու համապատասխան ընթացակարգ: Իսկ ահա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասում **իրավունքի ուժը ենթադասվում է համասեփականատերերի համաձայնությանը:**

Վեճի առարկա իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման առումով էական է նաև **բարեխիղճ ձեռքբերողի իրավունքների ու շահերի պաշտպանության համար իրավական համարժեք երաշխիքների ապահովումը:** Օրենսդիրը զարգացրել է այն հայեցակարգային մոտեցումը, համաձայն որի՝ համասեռ իրավահարաբերություններից բխող իրավունքների ու շահերի բախման դեպքում անձանց այդ իրավունքների դատական պաշտպանությունն առավել երաշխավորելի է ու արդյունավետ՝ այդ իրավունքների գործադրման՝ օրենքով նախատեսված բոլոր միջոցները լիարժեք իրացնելու, ինչպես նաև չլիազորված անձից բարեխիղճ ձեռքբերումը բացառելու պայմաններում: Նման մոտեցումն է հենց ընկած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի իրավակարգավորման հիմքում:

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ-903, 13 հուլիսի, 2010 թ.

6. .... Բաժնետիրական ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հավելյալ գույքային միջոցներ (շահութաբաժիններ) ստանալու մտադրությամբ միավորված անձանց կազմակերպություն ունի ոչ միայն առանձին բաժնետերերի մասնավոր

շահերի հավասարակշռման, այլև **ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր**: Հակառակ դեպքում ընկերության կառավարումը կդառնա անարդյունավետ, իսկ դա հետագա անդրադարձ կունենա հենց նույն բաժնետերերի սեփականության իրավունքի իրականացման արդյունավետության վրա:

Բաժնետիրական ընկերության ձեռնարկատիրական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ներառում է իր հայեցողությամբ բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու, այդ բաժնետոմսերի անվանական արժեքը որոշելու, իր կանոնադրական կապիտալը նվազեցնելու կամ ավելացնելու, բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու կամ մեծացնելու ազատությունը: Բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխությունը կարող է կատարվել ինչպես կանոնադրական կապիտալի ավելացմամբ, այնպես էլ առանց կանոնադրական կապիտալի չափի փոփոխության:

7. Բաժնետոմսերի համախմբումը երկու և ավելի բաժնետոմսերի փոխարկումն է ավելի մեծ անվանական արժեք ունեցող նույն տեսակի բաժնետոմսերի՝ առանց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխության: Որպես կանոն, բաժնետոմսերի համախմբում իրականացվում է, ի թիվս այլոց, մանր բաժնետերերի թվաքանակի կրճատման, հավանական ներդրողին հնարավորինս փոքր քանակով արժեթղթերի փաթեթ առաջարկելու նպատակով: Բաժնետոմսերի համախմբումը տնտեսապես արդարացված գործընթաց է, որը կազմում է բաժնետիրական ընկերության՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի, տնտեսական ազատության դրսևորումներից մեկը:

Ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ընդունված նշված գործընթացի օբյեկտիվ և անխուսափելի արդյունքն է կոտորակային բաժնետոմսերի առաջացումը: Սակայն նման բաժնետոմսերի առկայությունը նպատակահարմար չէ ինչպես արժեթղթերի շուկայի կայունության ապահովման նկատառումներից ելնելով, այնպես էլ բաժնետիրական ընկերության արդյունավետ կառավարման տեսանկյունից:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում որպես կոտորակային բաժնետոմսերի գոյությունը բացառելու միջոց է ընդունված կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնման ինստիտուտը: Այդ ինստիտուտն ամրագրված է մի շարք եվրոպական պետությունների օրենսդրություններում (Լեհաստան, Չեխիայի Հանրապետություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն և այլն): Փորձ է արվում՝ որպես կոտորակային բաժնետոմսերի գոյության վիճակը հաղթահարող միջոց կիրառել նաև կամավոր հետգնման ինստիտուտը, որը, սակայն, փակուղային վիճակ ստեղծելու վտանգ է պարունակում և լայն տարածում չունի:

Հաշվի առնելով, որ կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնման ինստիտուտը հանդիսանում է տնտեսապես արդարացված գործընթաց, ինչպես նաև նկատի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բաժնետերերի մեծամասնության որոշմամբ կոտորակային բաժնետոմսերի օրենքով նախատեսված պարտադիր հետգնման ինստիտուտն ինքնին իրավաչափ է: Սակայն հիմնական խնդիրն այն է, թե տնտեսավարման նման ինստիտուտի առկայության պայմաններում ինչպես են երաշխավորվում ու պաշտպանվում փոքրամասնության իրավունքներն ու օրինական շահերը:

8. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 56–րդ հոդվածն ամրագրում է ընկերության՝ տեղաբաշխված բաժնետոմսերը համախմբելու իրավունքը, և նախատեսելով այդ գործընթացի արդյունքում կոտորակային բաժնետոմսերի առաջացման հնարավորությունը, որպես այդ բաժնետոմսերի առկայությունը բացառող միջոց՝ ամրագրում է դրանց պարտադիր հետգնման՝ միջազգային պրակտիկայում կիրառելի ինստիտուտը:

Կոտորակային բաժնետոմսերի հետգնման բովանդակությունը հանգում է նրան, որ այդ գործընթացում մարվում են բաժնետերերի մոտ առաջացած կոտորակային բաժնետոմսերը և բաժնետիրական ընկերության մոտ ծագում է այդ բաժնետոմսերի դիմաց համապատասխան փոխհատուցում վճարելու պարտականություն:

....

Հիմք ընդունելով «սեփականությունից զրկում» հասկացության վերոհիշյալ սահմանադրաիրավական բովանդակությունը և հաշվի առնելով, որ կոտորակային բաժնետոմսերի **պարտադիր հետգնման պարագայում** դրանց սեփականատիրոջն օրենքով սահմանված կարգով վճարվում է բաժնետոմսի շուկայական արժեքը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ կոտորակային բաժնետոմսի հետգնմամբ սեփականությունից զրկում տեղի չի ունենում, և, հետևաբար, տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ սեփականության անձեռնմխելիության դատական երաշխիքը նույնաբովանդակ ձևով կիրառելի չէ:

9. Բաժնետիրական ընկերությունների բնույթն այնպիսին է, որ ընկերության գործունեության շրջանակներում բախվում են բաժնետերերի և ընկերության կառավարման մարմինների շահերը, բաժնետերերի տարբեր խմբերի շահերը: Վերջինս առավել ցայտուն դրսևորվում է խոշոր և մանր բաժնետերերի հարաբերություններում: Խոշոր բաժնետերերը հանդիսանում են ընկերության ռազմավարական ներդրողները, որոնք հնարավորություն ունեն կանխորոշելու ընկերության որոշումները: Նրանց հիմնական շահը կայանում է նրանում, որ նրանք ձգտում են ընկերության գործունեությունից ձեռք բերել որոշակի արդյունքներ՝ անհրաժեշտ կառավարչական որոշումներ ընդունելու միջոցով: Մանր բաժնետերը ներդրող է, ով չունի ընկերության որոշումները կանխորոշելու, ընկերության գործունեության վրա ազդելու հնարավորություն: Մանր բաժնետիրոջ հիմնական շահը կայանում է նրանում, որ ձգտում է հասնել բաժնետոմսերում իր ներդրած միջոցների որոշակի շահութաբերության:

Իրավական պետության կողմից ազատ տնտեսական գործունեության կարգավորումը, ի թիվս այլոց, պետք է նպատակ հետապնդի ապահովելու արդարացի հավասարակշռություն տնտեսական գործունեության մասնակիցների, տվյալ դեպքում՝ բաժնետիրական ընկերության խոշոր և մանր բաժնետերերի շահերի միջև: Այս նպատակն օրենսդրից պահանջում է նախատեսել պաշտպանության այնպիսի մեխանիզմ, որը կապահովի իրավական երաշխիքներ՝ բաժնետոմսերի համախմբման գործընթացում խոշոր բաժնետերերի կողմից կամայականության դրսևորումների դեմ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ այս առնչությամբ օրենսդրական կարգավորումը հիմնականում նպատակաուղղվել է ստեղծելու համապատասխան իրավական երաշխիքներ՝ ինչպես համախմբման որոշման կայացման գործընթացում, այնպես էլ վերջինիս նկատմամբ դատական վերահսկողության առումով:

Մասնավորապես, օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր ժողովը բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ որոշումն ընդունում է միայն ընկերության խորհրդի ներկայացմամբ: Հարկ է նկատել, որ բացի նշված որոշումից, խորհրդի ներկայացմամբ կայացվում են սահմանափակ թվով այնպիսի կարևոր որոշումներ, ինչպիսին է, օրինակ, ընկերության վերակազմակերպման մասին որոշումը:

Օրենքի 71-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է ընդհանուր ժողովի գումարման և օրակարգի մասին բաժնետերերին ծանուցելու կարգը՝ ըստ էության երաշխավորելով ժողովին բոլոր բաժնետերերի մասնակցության հնարավորությունը: Ընդ որում, ժողովի օրակարգը սահմանում է ընկերության խորհուրդը, և ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

Համաձայն օրենքի 77-րդ հոդվածի՝ ընդհանուր ժողովը կարող է բաժնետոմսերի համախմբման հարցը քննարկել, եթե ժողովին ներկա են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսից ավելիին համատեղ տիրապետող բաժնետերերը: Թեև բաժնետոմսերի համախմբման մասին որոշման կայացման համար ընդհանուր ժողովից պահանջվում է միայն ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությունը, ինչը նշանակում է, որ բաժնետոմսերի համախմբման գործընթացը կարող է տեղի ունենալ ընկերության բաժնետերերի փոքրամասնության կամքով, այնուամենայնիվ, ընդհանուր ժողովի գումարման և օրակարգի մասին բաժնետերերին ծանուցելու օրենքով սահմանված կարգը պոտենցիալ հնարավորություն է ստեղծում բոլոր բաժնետերերի համար իրենց մասնակցությունն ունենալ բաժնետոմսերի համախմբման որոշման կայացման գործընթացին, այդ գործընթացում ներկայացնել իրենց շահերը, արտահայտել իրենց կամքը:

Օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասով պահանջվում է ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները ներկայացնել բոլոր բաժնետերերին օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում: Նույն հոդվածի 13-րդ մասն ամրագրում է յուրաքանչյուր բաժնետիրոջ՝ ժողովի որոշումը դատական կարգով բողոքարկելու իրավունքը:

Օրենքի 59-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է հետգնվող բաժնետոմսի շուկայական արժեքի հաշվարկման գործընթացը, սահմանում է շուկայական արժեքի որոշման չափանիշները: Ընդհանուր կանոնի համաձայն՝ շուկայական արժեքը որոշվում է ընկերության խորհրդի որոշմամբ. խորհուրդը կարող է այդ նպատակով օգտվել նաև անկախ գնահատողի ծառայություններից:

Վերոթվարկյալ նորմերը հիմնականում թույլ են տալիս կոտորակային բաժնետոմսերի համախմբման գործընթացում հաշվի առնել կոտորակային բաժնետոմսեր ունեցող սեփականատերերի իրավունքներն ու օրինական շահերը՝ պատշաճ իրավաբանական ընթացակարգերի և որոշումների նկատմամբ դատական վերահսկողության կիրառմամբ:

10. Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի՝ «Ժողովի քվորումը» վերտառությամբ 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ժողովի կողմից բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ որոշման կայացման համար պահանջվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է դառնում խնդրո առարկա որոշման կայացումն ընկերության բաժնետերերի գրեթե մեկ քառորդի կողմից: Ավելին, հաշվի առնելով նաև, որ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժողովը չկայանալու դեպքում գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին, ապա գործնականում հնարավոր է դառնում խնդրո առարկա որոշման կայացումը նույնիսկ ընկերության բաժնետերերի 15%-ից քիչ ավելիի կողմից, որն էապես թուլացնում է նման որոշման լեգիտիմությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման ընթացակարգը ոչ միայն չի ապահովում ընկերության բաժնետերերի սեփականության իրավունքին առնչվող որոշումների կա-

յացումը ձայների այնպիսի հարաբերակցությամբ, որը հնարավորություն կտա ապահովել նման որոշումների լեգիտիմության ավելի մեծ աստիճան, այլ նաև նման որոշման կայացումը բաժնետերերի փոքրամասնության կողմից ներդաշնակ չէ բաժնետոմսերի համախմբման՝ որպես բաժնետերերի մեծամասնության շահերից բխող գործընթացի էությանն ու տրամաբանությանը: Հաշվի առնելով բաժնետոմսերի համախմբման գործընթացի էությունը, առանձնահատկություններն ու տնտեսական նշանակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ և 77-րդ հոդվածներն ունեն բարեփոխման անհրաժեշտություն՝ այն առումով, որպեսզի հատկապես սեփականության իրավունքին առնչվող հարցերում ապահովվի որոշման կայացումը բաժնետերերի մեծամասնության կողմից:

ՍԴՈ-998, 22 նոյեմբերի, 2011 թ.

5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավական ակտերը չեն բացառում բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) հանդիսացող անձանց՝ ընկերության հետ պարտավորական իրավահարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքը և դրա վրա հիմնված՝ **մինչև լուծարման գործընթացի ավարտը** պահանջներ ներկայացնելու իրավունքը: Պարզապես տարբեր են պահանջների բնույթները. ի տարբերություն մյուս պարտատերերի, այս փուլում բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) հանդիսացող անձանց պահանջի իրավունքը սահմանափակված է, ի թիվս այլնի, շահութաբաժիններ ստանալուն, ընկերության կողմից վնաս պատճառելուց ծագող համապատասխան պահանջի բավարարմանը, պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունք ստանալուն ուղղված, ինչպես նաև բաժնետիրական ընկերության հիմնադրի (մասնակցի, բաժնետիրոջ, անդամի կամ գործընկերոջ) կողմից լուծարվող ընկերությանը վարկ կամ փոխառություն տրամադրելուց ծագող փոխադարձ իրավունքների և պարտականությունների շրջանակով:

Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում հետևյալ հանգամանքները.

ա) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն. «Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից»,

բ) պարտավորությունների ծագման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված «այլ հիմքերից» մեկն էլ ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն. «Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները»,

գ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի և 72-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով բաժնետիրական ընկերությունները հանդիսանում են տնտեսական ընկերություններ, այսինքն՝ բաժնետիրական ընկերության հիմնադիրը (մասնակիցը, բաժնետերը, անդամը կամ գործընկերը) ունի ընկերության նկատմամբ պարտավորական իրավունքներ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ պարբերության ուժով մինչև լուծարման գործընթացի ավարտը նրանք մյուս պարտատերերի հետ մեկտեղ կարող են պահանջ ներկայացնել բաժնետիրական ընկերությանը,

դ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով բաժնետոմսն առաջացնում է ընկերության նկատմամբ բաժնետիրոջ **պարտավորական իրավունք**, իսկ նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «ժ» ենթակետերի և 40-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությունից բխում է, որ այդ պարտավորական իրավունքը

սահմանափակվում է, ի թիվս այլնի, շահութաբաժիններ ստանալուն, ընկերության կողմից վնաս պատճառելուց ծագող համապատասխան պահանջի բավարարմանը, պարտատոմսի անվանական արժեքից տոկոսադրույք կամ այլ գույքային իրավունք ստանալուն ուղղված, ինչպես նաև բաժնետիրական ընկերության հիմնադրի (մասնակցի, բաժնետիրոջ, անդամի կամ գործընկերոջ) կողմից լուծարվող ընկերությանը վարկ կամ փոխառություն տրամադրելուց ծագող փոխադարձ իրավունքների և պարտականությունների շրջանակով:

Այլ խնդիր է պահանջների բավարարման հերթականությունը: Բոլոր դեպքերում պահանջների բավարարման հերթականություն սահմանելիս օրենսդիրը որպես ելակետ է ընդունել հետևյալ հանգամանքները.

ա) ընկերության կանոնադրական կապիտալն ուղղված է ընկերության **պարտատերերի** շահերի երաշխավորմանը («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետ), այսինքն՝ նախ և առաջ, բաժնետիրական ընկերության հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր) **չհանդիսացող անձանց** շահերի երաշխավորմանը,

բ) ընկերության հիմնադիրը (մասնակիցը, բաժնետերը, անդամը կամ գործընկերը) իր ներդրած ավանդի սահմաններում կրում է ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկերը, այդ թվում՝ ընկերության սնանկության հետ կապված ռիսկերը,

գ) ընկերության մյուս պարտատերերը, ի տարբերություն ընկերության հիմնադրի (մասնակցի, բաժնետիրոջ, անդամի կամ գործընկերոջ), չեն հանդիսանում ընկերության կազմակերպակառուցվածքային տարր և պարտավորված չեն կրելու ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկերը, այդ թվում՝ ընկերության սնանկության հետ կապված ռիսկերը:

6. Անդրադառնալով դիմողի դիրքորոշումներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության և դրա արդյունքում՝ սեփականության իրավունքի խախտման հետ, սահմանադրական դատարանը դրանք հիմնավոր չի համարում այն պատճառաբանությամբ, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ, 44-րդ և 83-րդ հոդվածներով «ապահովված պահանջներ», «չապահովված պահանջներ» և «ստորադաս չապահովված պահանջներ» բառակապակցությունների սահմանումները, **պարտատիրոջ պահանջի, ինչպիսին էլ որ այն լինի, իրավունքը** և այդ պահանջի իրացման կարգն ամրագրված լինելու պարագայում չի առաջանում «Սնանկության մասին» ՀՀ օրենքում «պահանջներ» եզրույթի սահմանման անհրաժեշտություն, և դրա բացակայությունը որևէ իրավական հետևանք չի կարող առաջացնել:

Օրենքի վիճարկվող դրույթի հետևանքով սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընկերության բաժնետերերի կողմից ձեռք բերված բաժնետոմսերի համար վճարված գումարները, ինչպես նաև ընկերության հիմնադրման գործում ներդրված ավանդները հանդիսանում են ընկերության գույքի մաս, և ընկերության հիմնադիրը (մասնակիցը, բաժնետերը, անդամը կամ գործընկերը) այլևս չի հանդիսանում բաժնետոմսերի համար իր վճարած գումարների կամ իր ներդրած ավանդի սեփականատեր: Դրանով, ինչպես նաև պարտատերերի շահերի երաշխավորման սկզբունքով է պայմանավորված այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և «Սնանկության մասին» ՀՀ օրենքը բաժնետոմսերի համար վճարված գումարները կամ ներդրված ավանդը վերադարձնելու պահանջի իրավունքի իրացումը պայմանավորել են լուծարման գործընթացի ավարտով և այն էլ՝ ընկերության մնացած գույքով: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ տվյալ պարագայում առկա չէ պատճառահետևանքային կապ օրենքի վիճարկվող դրույթի և դիմողի սեփականու-

թյան իրավունքի խախտման միջև, իսկ համապատասխան հիմքերի բացակայությունը դիմողին զրկում է սեփականության իրավունքի խախտումը հիմնավորելու հնարավորությունից:

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

ՍԴՈ–702, 15 մայիսի, 2007 թ.

10. .... Ինչպես վկայում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառական պրակտիկան՝ կապված անձանց գույքային իրավունքների իրականացման բնագավառում պետության միջամտության թույլատրելիության շրջանակների հետ, ապա այդպիսին իրավաչափ է գնահատվում, եթե.

– իրականացվում է օրենքին համապատասխան,
– պայմանավորված է հանրային շահերով,
– ապահովում է մասնավոր և հանրային շահերի հավասարակշռություն:

ՍԴՈ–901, 29 հունիսի, 2010 թ.

7. .... Սեփականության իրավունքը, որպես գույքային իրավունք, կարող է ունենալ նաև սեփականատեր չհանդիսացող անձը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք նորմերով կարգավորվում են ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ սեփականատեր չհանդիսացող անձանց գույքային իրավունքները (դրանց ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու կարգը, ինչպես նաև այդ իրավունքների պաշտպանության միջոցները): ՀՀ Սահմանադրության 3–րդ, 18–րդ, 19–րդ և մի շարք այլ հոդվածներով երաշխավորված է անձի իրավունքների, այդ թվում՝ նաև գույքային իրավունքների պաշտպանությունը: Վերջինիս իրացմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1–ին, 170–րդ, 278–րդ և այլ հոդվածների համաձայն անձանց գույքային իրավունքները, այդ թվում՝ սեփականատեր չհանդիսացող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսված կարգով ենթակա են պաշտպանության:

Անձի գույքային իրավունքների (այդ թվում՝ սեփականության իրավունքի) իրացման շրջանակներում ծագող հարաբերությունների կարգավորման միջոց է հանդիսանում սերվիտուտը, որը ՀՀ իրավահամակարգում ներդրվել է նորանկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված՝ «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքով (ՀՕ–29, ընդունված՝ 27.12.1995 թ., ուժը կորցրել է 01.01.1999 թ.), համաձայն որի սահմանվում էր, որ սերվիտուտը (օգտակալությունը) ուրիշի սեփականության սահմանափակ օգտագործման իրավունքն է, որով կողմերից մեկը՝ սերվիտուտի (օգտակալության) տերը, իրավունք է ստանում այլ անձի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան հատուկ նպատակով օգտագործել կամ նրա իրավունքների նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել (2–րդ հոդված): Հիշյալ օրենքի 16–րդ հոդվածում նախատեսված էին սերվիտուտի (օգտակալության) բովանդակությունը, սերվիտուտով ծանրաբեռնված անշարժ գույքի (հողամաս, շենքեր, շինություններ և այլ ամրակայված գույք) սեփականատիրոջ իրավունքները, պայմանագրային ձևով սերվիտուտ սահմանելու, դրա շուրջ ծագած վեճերը լուծելու, սերվիտուտով ծանրաբեռնված գույքից օգտվելու դիմաց վճարելու կարգը:

....

Այսպիսով, վերլուծելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի և վերջինիս իրացումը սերվիտուտի միջոցով կարգավորող քաղաքացիաիրավական նորմերի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սերվիտուտը որպես գույքային իրավունք.

– պայմանավորված է ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման թելադրված (անխուսափելի) անհրաժեշտությամբ, առանց որի սերվիտուտ պահանջող անձն անկարող է իրացնել (կամ լիարժեք իրացնել) սեփականության իր իրավունքը,

– նպատակաուղղված չէ անձին, որպես սերվիտուտով ծանրաբեռնված գույքի սեփականատիրոջ, իր իրավունքներից զրկելուն,

– ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի սահմանափակ օգտագործման իրավունք է, որի իրացմամբ սերվիտուտով ծանրաբեռնված գույքի սեփականատերը չի զրկվում այդ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իր սահմանադրական իրավունքներից,

– կոչված է ուրիշի սեփականությունը հանդիսացող գույքի ոչ լիարժեք, սահմանափակ և թելադրված անհրաժեշտության նպատակով օգտագործմանը,

– չի կարող ինքնուրույն քաղաքացիաիրավական գործարքների առարկա լինել,

– որպես կանոն, իրականացվում է սերվիտուտ սահմանելու անհրաժեշտության հանգամանքների գոյության ժամկետով, և կարող է պահպանվել (փոխանցվել) իրավահաջորդության սկզբունքով,

– հասարակական կարիքների համար անվճար, հարկադիր և մշտական սերվիտուտ կարող է սահմանվել միայն օրենքով,

– ճանաչվում, երաշխավորվում և պաշտպանվում է պետության կողմից՝ ենթարկվելով պետական գրանցման՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով,

– օրենքով նախատեսված հիմքերով ենթակա է դադարման, այդ թվում՝ դատական կարգով, քաղաքացիական այլ իրավունքներին համարժեք ենթակա է հավասար իրավական պաշտպանության:

ՍԴՈ–902, 7 հուլիսի, 2010 թ.

6. Աշխատանքի իրավունքի իրացման հիմնական նպատակը վարձատրություն ստանալն է: Այդ նպատակն է շեշտադրված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թ. միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում, ըստ որի՝ աշխատանքի իրավունքը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է կամ որին նա ազատորեն համաձայնում է: Ասվածը նշանակում է, որ աշխատանքում վերականգնվելու հարցում անձի ունեցած անհատական շահն ունի տնտեսական, ֆինանսական արժեք, ինչը բավարար հիմք է, որ տվյալ դեպքում աշխատանքի իրավունքը պաշտպանվի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով: Ավելին, համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տե՛ս, մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, Trgo v. Croatia, 2009 թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44)՝ նշված կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը: Տվյալ դեպքում այն անձը, ով աշխատանքից ազատվել է անօրինական կարգով, ունի լեգիտիմ ակնկալիք շարունակելու ստանալ վարձատրություն իր աշխատանքի դիմաց: Հետևաբար, աշխատողին գործատուի կողմից անօրինականորեն աշխատանքից ազատելը հանդիսանում է նրա **գույքային իրավունքների խախտում**:

ՍԴՈ–920, 12 հոկտեմբերի, 2010 թ.

8. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձևավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատաս-

խանատվությունը և բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ որևէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, թույլ չի տալիս արդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը, այն է՝ ապահովել տնտեսավարող սուբյեկտի կողմից՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը:

ՍԴՈ-1120, 11 հոկտեմբերի, 2013 թ.

7. Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով սահմանված իրավակարգավորումն ինքնին չի առաջացնում հակասահմանադրական իրավիճակներ. այն կոչված է իր ամբողջության մեջ պաշտպանելու սեփականատիրոջ իրավունքները՝ առանց շոշափելու երրորդ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այլ խնդիր է իրավակիրառական պրակտիկայում օրենքի վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը: Այս կապակցությամբ դիմողի գործով դատական ակտերի ուսումնասիրության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանի կողմից օրենքի վիճարկվող դրույթներին տրված մեկնաբանությունը, **այն է՝ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ իրազեկվածության կանխավարկածից դրա հիմքում ընկած դատական ակտի գոյության մասին իրազեկվածության կանխավարկած բխեցնելը** ոչ միայն չի արտացոլում օրենսդրի կամքը, այլև չի բխում դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների սահմանադրաիրավական տրամաբանությունից՝ խաթարելով անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Իր հերթին, ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձնելով դիմողի վճռաբեկ բողոքը և **վերահաստատելով** տվյալ գործով ՀՀ վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումները՝ անուղղակիորեն արտահայտվել է նման իրավական մեկնաբանության իրավաչափության օգտին՝ կանխորոշելով վիճարկվող նորմի նման մեկնաբանությամբ կիրառման հնարավոր իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը:

ՍԴՈ-1137, 4 փետրվարի, 2014 թ.

6. .... Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող դրույթները նախատեսում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու երկու առանձին հիմքեր.

ա) իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, ինչը հանդիսանում է տվյալ վարչական ակտն առ ոչինչ համարելու հիմք,

բ) իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին, ինչը հանդիսանում է տվյալ վարչական ակտի անվավերության հիմք:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործընթացում Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից պետական գրանցման ենթակա իրավունք կամ սահմանափակում կիրառող վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքի ստուգումը և գնահատումը ոչ միայն իրավաչափ է, այլ նաև անհրաժեշտ և պարտադիր՝ պայմանավորված այլոց իրավունքներով և ազատություններով, ինչպես նաև առ ոչինչ վարչական ակտի կատարման կամ կիրառման համար օրենքով սահմանված պատասխանատվության չենթարկվելու հանգամանքով:

....

9. Սույն գործի շրջանակում Սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենքի վիճարկվող դրույթները դիտարկել նաև դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետով ամրագրված՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու հիմք հանդիսացած իրավակարգավորումների շրջանակներում՝ վերլուծելով նաև տվյալ հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի՝ ՀՀ հողային և քաղաքացիական օրենսգրքերում ամրագրված համապատասխան դրույթները:

Մասնավորապես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետը սահմանում է, որ՝ պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե առկա են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդպիսի հիմքեր կարող են հանդիսանալ, օրինակ, հողերի նպատակային և գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելը կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելը և այլն:

Մասնավորապես, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ հողերի նպատակային և գործառնական նշանակությունն ինքնակամ փոփոխելը հիմք է հանդիսանում ոչ միայն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը, ինչպես նաև դրանց հիման վրա հողամասերի առնչությամբ կնքված գործարքները դատական կարգով անվավեր ճանաչելու համար, այլև հողի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու համար:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրության շրջանակներում տարբեր իրավական ակտերով կարող են սահմանվել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժման տարատեսակ հիմքեր և հաշվի առնելով սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետում՝ «պարտավոր է մերժել» բառակապակցությունը չի կարող վերաբերել գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման մերժման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այնպիսի հիմքերին, որոնք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնի համար առաջացնում են իրավունք կամ իրավունքի սահմանափակում կիրառող անհատական իրավական ակտերի օրինականության ստուգման և գնահատման հնարավորություն ու անհրաժեշտություն:

ՇԱՀԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒՄԸ

ՍԴՈ-630, 18 ապրիլի, 2006 թ.

8. .... Պետությունը պարտավոր է օրենքի միջոցով սահմանել հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը հարկադիր օտարելու կարգը, ինչը պետք է ապահովի սեփականատիրոջ իրավունքը՝ նախապես իմանալու, թե ինչու է հարկադիր միջամտություն ցուցաբերվում սեփականության իր իրավունքին և ինչ կոնկրետ կարիքների համար է սեփականությունն օտարվում: Բոլոր դեպքերում իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը ենթադրում է արդարացի հավասարակշռություն հասարակության գերակա շահերի և մարդու հիմնարար իրավունքների ապահովման անհրաժեշտության միջև:

ՍԴՈ–649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

7. .... Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1–ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Սրանից էլ բխում է Սահմանադրության նույն հոդվածի 3–րդ մասով ամրագրված նորմը. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Հետևաբար, քննության առարկա օրենքի 11–րդ հոդվածից բխող իրավիճակը, որով քաղաքացիների որոշ կատեգորիաներ զրկվում են Սահմանադրությամբ չսահմանափակվող ճանաչված իրենց առանձին հիմնարար իրավունքների իրականացման հնարավորությունից, չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև և չի բխում Սահմանադրության 3 հոդվածի պահանջներից:

ՍԴՈ–690, 9 ապրիլի, 2007 թ.

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2–րդ կետի դրույթը՝ 10–օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2–րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

ՍԴՈ–702, 15 մայիսի, 2007 թ.

10. .... Ինչպես վկայում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառական պրակտիկան՝ կապված անձանց գույքային իրավունքների իրականացման բնագավառում պետության միջամտության թույլատրելիության շրջանակների հետ, ապա այդպիսին իրավաչափ է գնահատվում, եթե.

– իրականացվում է օրենքին համապատասխան,
– պայմանավորված է հանրային շահերով,
– ապահովվում է մասնավոր և հանրային շահերի հավասարակշռություն:

Սույն գործի շրջանակներում գնահատելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2–րդ կետի սահմանադրականությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցանկացած բնույթի՝ ներառյալ նոտարական վավերացում պահանջող գործարքների հետ

կապված քաղաքացիաիրավական վեճեր քննելիս, դատարանը՝ որպես պետական մարմին պարտադրված է, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, այդ վեճերը լուծել օրենքին համապատասխան, միաժամանակ անխուսափելիորեն պաշտպանելով ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ու պետական շահերը:

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

5. .... Հարկային իրավահարաբերությունների կանոնակարգումն իրականացվում է հարկային իրավահարաբերությունների մասնակիցների համար փոխադարձ իրավունքների և պարտականությունների սահմանմամբ, որոնք ուղղված են ոչ միայն անհատական, այլ նաև հանրային շահերի երաշխավորմանը: Վերջինս դրսևորվում է հարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետության ֆինանսական վերահսկողության գործառույթի իրականացման արդյունավետության ապահովմամբ, որն էլ, իր հերթին, ի թիվս այլոց, կարող է դրսևորվել հարկատուների նկատմամբ որոշակի պարտականությունների սահմանմամբ: Տվյալ դեպքում ՀՀ սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե հարկատուի համար որոշակի պարտականություն սահմանելիս արդյոք ապահովվել է տվյալ պարտականության իրավաչափությունը, ինչպես նաև ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների և հարկատուների պարտականությունների միջև հավասարակշռությունը՝ բացառելու հարկատուների համար անիրավաչափ պարտականություններ սահմանելը:

ՍԴՈ–890, 25 մայիսի, 2010 թ.

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

ՍԴՈ–901, 29 հունիսի, 2010 թ.

9. .... Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներով սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս հիմնվել է հետևյալ հիմնական սկզբունքների ու չափորոշիչների վրա.

– սեփականության իրավունքի սահմանափակումը համատեղելի է Կոնվենցիային կից առաջին արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունում ամրագրված ընդհանուր նորմի հետ, եթե ապահովված է «արդարացի հավասարակշռություն» հանրության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև,

.... Համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի մյուս նորմերը Եվրոպական դատարանի

նախադեպային նշանակության իրավական մոտեցումների հետ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորումը նախատեսելիս օրենսդիրն առաջնորդվել է անհատի և հասարակության շահերի արդարացի հավասարակշռման սկզբունքով, մասնավորապես, սերվիտուտը դիտարկելով որպես անձանց սեփականատիրական իրավունքների և դրանցից բխող օրինական շահերի հնարավոր բախման կանխարգելման միջոց, միաժամանակ նախատեսելով սերվիտուտ սահմանելու հիմքերը և կարգը (այդ թվում՝ պետական գրանցման), դրա դատական պաշտպանության միջոցները, բացառել է ուրիշի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը վերոհիշյալ հիմքով կամայական օգտագործելու իրավական հնարավորությունը: Այս առումով վիճարկվող նորմում նախատեսված իրավակարգավորումը, որպես սեփականության իրավունքի հնարավոր սահմանափակման միջոց, հետապնդում է սահմանադրաիրավական, հետևաբար՝ նաև արդարացի նպատակ:

ՍԴՈ–903, 13 հուլիսի, 2010 թ.

9. .... Իրավական պետության կողմից ազատ տնտեսական գործունեության կարգավորումը, ի թիվս այլոց, պետք է նպատակ հետապնդի ապահովելու արդարացի հավասարակշռություն տնտեսական գործունեության մասնակիցների, տվյալ դեպքում՝ բաժնետիրական ընկերության խոշոր և մանր բաժնետերերի շահերի միջև: Այս նպատակն օրենսդրից պահանջում է նախատեսել պաշտպանության այնպիսի մեխանիզմ, որը կապահովի իրավական երաշխիքներ՝ բաժնետոմսերի համախմբման գործընթացում խոշոր բաժնետերերի կողմից կամայականության դրսևորումների դեմ:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

7. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում և 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության բովանդակությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունը հղում կատարելով օրենքին՝ միաժամանակ առաջադրում է տուժողին փոխհատուցելու այնպիսի կարգ սահմանելու պահանջ, որը պետք է երաշխավորի գործուն մեխանիզմ խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացման համար: Նման մեխանիզմի գոյությունը կարող է ապահովվել նաև այն դեպքում, երբ հատուցման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված դատական կարգը պետական տուրքի վճարումից ազատելու արտոնության ձևով արդարացի պայմաններ ստեղծի այդ իրավունքի իրացման համար, և այնպիսի դեպքերում, երբ փոխհատուցման իրավունքն անվիճելի է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով նախօրոք հաստատված է պետական իրավասու մարմնի, պաշտոնատար անձի այն գործողության (անգործության) փաստը, որի արդյունքում անձին պատճառվել է վնաս: Հետևաբար, օրենսդիրը պետք է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում և 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով **սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ և գործուն համակարգ:**

ՍԴՈ–931, 28 դեկտեմբերի, 2010 թ.

8. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա ինստիտուտի գործող իրավակարգավորումը՝ դատական քննության ընդհանուր կարգից բացառություն հանդիսացող արագացված կարգի կիրառումը միայն դատավարության երկու կողմերի միաժամանակյա համաձայնության պայմաններում է ապահովում իրավաչափ հավասարակշռություն մեղադրանքի և պաշտպանության կողմերի իրավունքների և օրինական շահերի միջև: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ արագացված կարգ կիրա-

ռելու դեմ դատախազության (մեղադրող կողմի) առարկությունը չի կարող դիտվել որպես «բացարձակ վետոյի» իրավունք, այդ առարկությունը պետք է լինի փաստարկված:

ՍԴՈ–932, 11 հունվարի, 2011 թ.

9. Արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի տեսանկյունից հարկ է վեճի առարկա իրավունքների պաշտպանության երաշխիքները դիտարկել սնանկության վարույթին վերաբերող դատավարական այլ երաշխիքների համատեքստում, որոնք պետք է ուղղված լինեն սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությանը:

Այս առումով, սահմանադրական դատարանի 2007 թ. նոյեմբերի 28–ի ՍԴՈ–719 որոշման լույսի ներքո գնահատելով պարտատերերի ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթի բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պարտատերերի ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման արդյունքում կայացվող որոշումներն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում սնանկության գործի քննության հնարավորությունը, չեն խոչընդոտում դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, հետևաբար, ապահովում են նաև սնանկության վարույթում ներգրավված բոլոր մասնակիցների իրավունքների և շահերի համակողմանի և հավասարակշռված պաշտպանությունը:

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ

ՍԴՈ– 1093, 7 մայիսի, 2013 թ.

6. Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում բացահայտել պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օգտագործման տրամադրելու վերաբերյալ առկա իրավակարգավորումների բնույթը՝ խնդրո առարկա հարցը դիտարկելով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում:

Սահմանադրության 31–րդ հոդվածի 1–ին մասն ամրագրում է սեփականության իրավունքի բովանդակային ծավալում ներառվող երեք իրավազորությունները՝ տնօրինում, տիրապետում, օգտագործում, որոնք սեփականատերը, ըստ Սահմանադրության 31–րդ հոդվածի 1–ին մասի, իրականացնում է սեփական հայեցողությամբ: Ընդ որում, տնօրինման, տիրապետման, օգտագործման իրավազորությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը» վերտառությամբ 163–րդ հոդվածում: Նշված հոդվածի համաձայն՝

«1. Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

2. Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպան-

վող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

3. Սեփականատերը կարող է իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի դրույթների վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից իր՝ 2004 թ. հուլիսի 15-ի թիվ 1043-Ն որոշմամբ պետության սեփականությունը հանդիսացող հողամասը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ին անհատույց (մշտական) օգտագործման թողնելը, ինչպես նաև իր՝ 2005 թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշմամբ նույն հողամասը վարձակալական հիմունքներով «ԲԱՄՕ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրվող «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ին գնման նախապատվության իրավունքով տրամադրելը, հետևաբար նաև՝ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթը գտնվում են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ իր սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու իրավազորության բովանդակային ծավալում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն դիրքորոշումը, որ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 8 և 31-րդ հոդվածներին, քանի որ.

նախ, ըստ գործի նյութերի՝ դիմողը չի հանդիսանում իր կողմից օգտագործվող հողամասի սեփականատեր,

երկրորդ, իր սեփականությունը հանդիսացող գույքը վարձակալության տրամադրելը՝ անկախ այդ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ այլ անձանց իրավունքների առկայությունից, բխում է սեփականատիրոջ կողմից իր սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու սահմանադրական իրավազորությունից,

երրորդ, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական և հողային օրենսգրքերը թույլատրելի են համարում, մասնավորապես, սեփականատիրոջ կողմից իր գույքը վարձակալության հանձնելն այն դեպքում, երբ այդ գույքը կամ դրա մի մասը ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով՝ միաժամանակ երաշխավորելով տվյալ անձանց իրավունքները,

չորրորդ, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի նպատակը չէ երաշխավորելու պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալի իրավունքներն այն դեպքում, երբ նշված հողամասի նկատմամբ պետության և մեկ այլ սուբյեկտի միջև կնքվում է վարձակալության պայմանագիր,

հինգերորդ, վարձակալի և վարձակալության հանձնված գույքի նկատմամբ այլ անձանց իրավունքների երաշխավորմանն են նվիրված, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 206, 207, 627-րդ հոդվածները, ՀՀ հողային օրենսգրքի 47, 48, 49, 64, 66, 78 և 118-րդ հոդվածները:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ-92, 27 փետրվարի, 1998 թ.

5. Սահմանադրության 28 հոդվածը նախատեսում է սեփականատիրոջ իրավունքի դադարման երկու եղանակ:

Մի դեպքում սեփականատիրոջը սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում: Երկրորդ դեպքում սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Սահմանադրության 28 հոդվածի առաջին մասում նախատեսված սեփականության իրավունքի դադարեցումը՝ դրանից զրկելու ձևով, իրականացվում է որպես հարկադրական բնույթի գործողություն, որպես պատասխանատվություն:

6. Սահմանադրության 28 հոդվածով նախատեսված՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը սեփականության իրավունքի զրկումից տարբերվում է նրանով, որ տեղի է ունենում ոչ թե որպես սեփականազրկում՝ պատասխանատվության ենթարկելու միջոցով, այլ բարեխիղճ սեփականատերը պարտավոր է Սահմանադրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում, սահմանված երաշխիքների պահպանմամբ, սեփականության իր իրավունքը զիջել պետությանը:

Սահմանադրությունն ամրագրում է, որ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: Այսպիսով, որպես սեփականության օտարման հիմք է ճանաչվում «պետության և հասարակության կարիքները», իսկ օտարվող գույքի սեփականատիրոջ իրավունքների պաշտպանության երաշխիքներ են համարվում օտարումը՝ «միայն բացառիկ դեպքերում», օտարումը՝ «օրենքի հիման վրա», օտարումը՝ «օտարվող գույքի նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

.... Նախնական համարժեք փոխհատուցումը գործադիր մարմնի կողմից համապատասխան ֆինանսատնտեսական հաշվարկով հիմնավորված և սեփականատիրոջ հետ համաձայնեցվող գործողություն է, որը ենթակա է դատական վիճարկման:

ՍԴՈ–179, 16 հոկտեմբերի, 1999 թ.

7. ՀՀ Սահմանադրության 105 հոդվածում ամրագրված է, որ՝ «Համայնքի սեփականությունը տնօրինելու, համայնքային նշանակության հարցերը լուծելու համար երեք տարի ժամկետով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ....»: Բացի դրանից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ տեղական ինքնակառավարում հասկացության վերլուծությունը վկայում է, որ վերջինս ներկայացվում է որպես «.... բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ գործող տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի սեփականությունը տնօրինելու և համայնքային նշանակության հարցերը լուծելու իրավունք ու կարողություն» («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 3):

ՍԴՈ–630, 18 ապրիլի, 2006 թ.

8. .... Համաձայն Սահմանադրության 31 հոդվածի 1–ին մասի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը»: Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապես տարբեր այլ ինստիտուտ է և պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3–րդ մասի հիմքերով:

Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ.

– Սահմանադրությունը նախատեսում է սեփականատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակման և սեփականության հարկադիր օտարման հնարավորություն,

– վերջինս կարող է իրականացվել միակ նպատակի համար՝ երբ առկա է հասարակության և պետության կարիքը, որը պետք է լինի կոնկրետ և հստակորեն արտահայտված որոշակի սեփականության առնչությամբ, և որը պետությունը պարտավոր է, իր գործառույթներն իրականացնելիս, հաշվի առնել ու բավարարել,

– սակայն հասարակության և պետության ամեն մի կարիք սեփականության օտարման հիմք չի կարող հանդիսանալ, այդ կարիքները պետք է լինեն բացառիկ՝պայմանավորված գերակա հանրային շահով,

– սեփականության օտարման կարգը պետք է սահմանված լինի օրենքով (նման ձևակերպումը տեղ է գտել 2005 թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում, ընդ որում, օրենսդրի հայեցողությանն է թողնում, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որ մարմինն է իրավասու օրենքով սահմանված կարգով որոշում ընդունել սեփականության հարկադիր օտարման մասին),

– սեփականության օտարման դեպքում պետք է երաշխավորված լինի նախնական փոխհատուցումը,

– այդ փոխհատուցումը պետք է լինի համարժեք:

Սահմանադրական այս պահանջների մեջ բացառիկ՝ գերակա հանրային շահի ամրագրումը, մի կողմից սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիք է, քանի որ այլ դեպքերում սեփականության օտարումը կլինի հակասահմանադրական, մյուս կողմից՝ պետության համար սահմանափակում է օտարված սեփականությունն այլ նպատակով օգտագործելու հնարավորությունը:

Պետությունը պարտավոր է օրենքի միջոցով սահմանել հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը հարկադիր օտարելու կարգը, ինչը պետք է ապահովի սեփականատիրոջ իրավունքը՝ նախապես իմանալու, թե ինչու է հարկադիր միջամտություն ցուցաբերվում սեփականության իր իրավունքին և ինչ կոնկրետ կարիքների համար է սեփականությունն օտարվում: Բոլոր դեպքերում իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը ենթադրում է արդարացի հավասարակշռություն հասարակության գերակա շահերի և մարդու հիմնարար իրավունքների ապահովման անհրաժեշտության միջև:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարում է տեղի ունենում՝ առանց օրենսդրորեն հստակ սահմանելու և գործնականում հաշվի առնելու օտարման սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջները, ապա դա կլինի անհամաչափ միջամտություն սեփականության իրավունքին:

9. .... Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրել է մի կարևոր նորմ ևս՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները» (հոդվ. 43): Այս առնչությամբ ուշադրության արժանի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով մարդու իրավունքների վերաբերյալ սահմանադրական նորմ-սկզբունքների պահանջները, սեփականության իրավունքի պաշտպանության և հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարման հարցերով սահմանադրական և միջազգային իրավական նշված մոտեցումները, նկատի ունենալով սահմանադրական փոփոխությունների արդյունքում ձևավորված նոր իրավական պահանջները, գտնում է, որ կառավարությունը չի կարող իր որոշումներով սահմանել պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը, որն ուղղակիորեն առնչվում է սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին և պետք է լինի հանրային շահի ու անհատի սեփականության իրավունքի հավասարակշռության ապահովման երաշխիք:

Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի դրույթներից բխում է, որ Սահմանադրությունը տվյալ իրավահարաբերությունների համատեքստում որպես սեփականության հարկադիր օտարման հիմք է ճանաչում «հասարակության և պետության կարիքները», իսկ օտարվող գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ է համարում օտարումը՝ «միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում», օտարումը՝ «օրենքով սահմանված կարգով», օտարումը՝ «օտարվող գույքի նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

Սահմանադրությունն ուղղակի պահանջ է առաջադրում, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը սահմանվի օրենքով: Ընդ որում, այդ կարգը չի կարող անտեսել սեփականության իրավունքի պաշտպանության այն բոլոր երաշխիքները, որոնք նախատեսված են 31 հոդվածում:

Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ այդ խնդիրը դեռևս հստակ ու պատշաճ ձևով լուծված չէ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունը, Սահմանադրության 3, 5, 8, 31, 43, 83.5. հոդվածների պահանջներից ելնելով, պետք է օրենքով հստակ սահմանի հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում դա իրականացվում է Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին հատուկ օրենքով, որով սահմանվում են սեփականության օտարման հիմնական սկզբունքները, ընդհանուր պայմանները, հարկադիր օտարման իրավաչափությունը, իրավունքների պաշտպանության երաշխիքները, գործընթացի կազմակերպման ու իրականացման կարգը և այլն: Նման օրենքի ընդունումը մեր երկրում ներդաշնակ կլինի ՀՀ սահմանադրական վերջին զարգացումների տրամաբանությանը և սեփականության իրավունքի պաշտպանության կարևոր նախադրյալ կհանդիսանա:

10. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման օրենսդրորեն կարգավորումը պետք է պարտադիր կարգով հիմքում ունենա այն ելակետային դրույթը, որ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել միայն Սահմանադրության 31 հոդվածով նախատեսված դեպքերում՝ երաշխավորելով սահմանադրական հետևյալ պահանջների կատարումը.

ա) հասարակության և պետական կարիքների առկայության հիմնավորման պահանջի,

բ) բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության և դրա հիմնավորման պահանջի,

գ) գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակական և պետական կարիքի և անհատի սեփականության իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռության ապահովման պահանջի: Վերջինս ենթադրում է նաև սեփականության իր իրավունքին միջամտելու վերաբերյալ անձի պատշաճ և հիմնավոր տեղեկացվածություն և տարբեր շահերի համադրման համատեքստում իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորություն:

Օրենքը պետք է սահմանի հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը, որոշակիացնելով.

ա) օտարելու մասին որոշում կայացնող պետական մարմինը,

բ) օտարվող սեփականության դիմաց նախնական համարժեք (բնեղեն և/կամ դրամական) փոխհատուցման ապահովման կարգը,

գ) գույքն օտարելու մասին որոշման բողոքարկման, ինչպես նաև հատուցման գնի, ժամկետների, այլ համարժեք փոխհատուցում տալու և դրանց հետ կապված մյուս պայմանների շուրջ համաձայնության չգալու դեպքում գույքի օտարման կարգը,

դ) օտարվող գույքի սեփականատիրոջ իրավունքները, պարտականությունները, իրավունքի սահմանափակումները,

ե) հարկադիր օտարումից հետո սեփականության նոր իրավունքի ծագման և իրավական ձևակերպման կարգը,

զ) իրավաչափ նպատակի համար սեփականության տարբեր օբյեկտների օտարման առանձնահատկությունները և այլն:

Եթե սեփականությունն օտարվում է հասարակության կարիքների համար, անկախ նրանից, թե ինչ սուբյեկտի է (պետություն, համայնք, ֆիզիկական կամ իրավաբանական անձ) հետագայում օրենքով սահմանված կարգով անցնում գույքը, օրենքը պետք է սահմանի այնպիսի կարգավորում, որը երաշխավորի տվյալ գույքի օգտագործումը հասարակության այն կարիքների համար, որի հիմնավորմամբ կատարվել է օտարումը:

Օրենքը միաժամանակ պետք է նախատեսի, որ սեփականատիրոջ և պետության (ի դեմս նրա լիազոր մարմնի) միջև կնքվում է գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակության և պետության կարիքների համար գույքի օտարման և համարժեք փոխհատուցման պայմանագիր, որում պետք է հստակ շարադրված լինեն վերոհիշյալ պահանջներից բխող երկկողմ պարտավորությունները, ինչպես նաև այն պայմանը, որ նման պայմանագրով տրված փոխհատուցումը չի կարող դիտվել որպես հարկվող եկամուտ:

Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարմանը վերաբերող ցանկացած նորմատիվ իրավական ակտ չի կարող շրջանցել սահմանադրական պահանջները (մասնավորապես՝ 3, 5, 8, 31, 43, 83.5. հոդվածներ) և անտեսել Սահմանադրության 31 հոդվածի դրույթն այն մասին, որ միայն բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորմամբ ի հայտ եկած հասարակական և պետական կարիքի դեպքում կարող է սեփականության հարկադիր օտարման խնդիր առաջադրվել: Հակառակ մոտեցումը կհակասի սեփականության իրավունքի բուն էությանը:

ՍԴՈ–649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

2. .... Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործը): Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում դիտարկել օրենքի վիճարկվող դրույթները նաև Սահմանադրության 8 և 31 հոդվածների պահանջներից ելնելով, որոնցից առաջինը հռչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, իսկ երկրորդն ամրագրում է. «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»: ՀՀ օրենքներում չկա որևէ նորմ, որով նախատեսված լինի սոցիալական քարտերի բացակայությունը որպես սեփականությունից զրկելու հիմք: Մասնավորապես, այն բացակայում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին մասում, որտեղ, ինչպես նշվեց, սահմանվում են կենսաթոշակ վճարելը կասեցնելու հիմքերը, ինչպես նաև 2-րդ մասում, որը վերաբերում է կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմքերին:

ՍԴՈ–650, 10 հոկտեմբերի, 2006 թ.

5. .... Սեփականության իրավունքի օրենսդրական ապահովման միջազգային փորձի և ՀՀ օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ դատաքննության առարկայի տեսանկյունից հիմնական և ընդհանրական մոտեցումն այն է, որ.

1) սեփականության իրավունքից հրաժարվելը մարդու և քաղաքացու իրավունք է, որով անձը հրաժարվում է կոնկրետ գույքի նկատմամբ տիրապետման, տնօրինման և օգտագործման իր իրավունքից,

2) սեփականության իրավունքի պաշտպանվածության երաշխիքների առումով, ինչպես նաև նկատի ունենալով, որ սեփականության իրավունքից հրաժարումը կարող է շոշափել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, հրաժարումը պետք է օրենսդրորեն հստակ կանոնակարգված լինի,

3) հրաժարումը քաղաքացու կողմից պետք է օրենքով սահմանված կարգով հայտարարվի կամ այնպիսի գործողությունների հետևանք լինի, որոնք ակնհայտորեն վկայում են նման մտադրության մասին,

4) սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները դադարելու համար՝ մինչև այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը:

Այս ընդհանուր պայմաններն անհրաժեշտ ու բավարար են սեփականության իրավունքից հրաժարվելու՝ մարդու և քաղաքացու իրավունքը երաշխավորելու համար:

ՍԴՈ–669, 22 դեկտեմբերի, 2006 թ.

6. .... Օրենքի 31 հոդվածի վերլուծությունը վկայում է, որ, նախ՝ առկա են կուսակցությունների լուծարման մի շարք հիմքեր, որոնք գործում են անկախ սահմանադրական դատարանի միջամտությունից: Երկրորդ՝ եթե սահմանադրական դատարանի որոշմամբ կուսակցության գործունեության արգելման հետևանք է դրանց լուծարումը, ապա օրենքի 31 հոդվածի տրամաբանությամբ՝ կուսակցությունների գործունեության արգելումն է դառնում լուծարման հետևանք: Ընդ որում, լուծարումն իրականացնում են «պետական լիազորված մարմինը» և ընդհանուր իրավասության դատարանները: Երրորդ՝ համաձայն այս հոդվածի տրամաբանության, հասարակության և պետության քաղաքական կյանքին կուսակցության մասնակցությունը գործնականում հանգեցվում է միայն համամասնական ընտրակարգով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին պարտադիր մասնակցությանը: Չորրորդ՝ կուսակցության դատական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը, այսինքն՝ տեղի է ունենում սեփականությունից զրկելու գործընթաց, որը համահունչ չէ Սահմանադրության 31 հոդվածի պահանջներին, քանի որ խոսքը չի վերաբերում կուսակցության գործունեության արգելմանը և դատական կարգով պատասխանատվության ենթարկելուն:

ՍԴՈ–735, 25 փետրվարի, 2008 թ.

9. Օրենքի 3–րդ հոդվածի 2–րդ մասում «.... եթե նույնիսկ պարտապանն անվճարունակ չէ» բառակապակցության այնպիսի ընկալման դեպքում, երբ վճարունակությունը բացառապես վերաբերում է հաշվեկշռային վճարունակությանը, օրենքի ողջ իրավակարգավորման համատեքստում այդ բառակապակցությունը դառնում է ավելորդ, և այն ըստ էության սնանկության ինստիտուտի ընդհանուր իրավակարգավորման մեջ որևէ դերակատարություն չունի: Այդ բառակապակցության առկայությունը կամ բացակայությունը որևէ իրավական հետևանք չի առաջացնում:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավակիրառական պրակտիկայում օրենքի վիճարկվող դրույթը կարող է տարաբնույթ մեկնաբանություններ առաջացնել, սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վիճարկվող դրույթի՝ վերոհիշյալից տարբերվող որևէ այլ մեկնաբանության դեպքում, երբ այն կարող է կիրառվել **վիճելի վճարային պարտավորությունների առկայության դեպքում**, այդ դրույթը ներքին հակասության մեջ կմտնի ինչպես օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, այնպես էլ ողջ օրենքի և սնանկության ինստիտուտը կարգավորող այլ նորմատիվ ակտերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի դրույթների հետ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող դրույթի որևէ այլ մեկնաբանություն ոչ միայն վեր կհանի վերոհիշյալ հակասությունները, այլ նաև կստեղծի սնանկ ճանաչված պարտապանի սեփականության իրավունքի խախտման իրական վտանգ: Նման պարագայում տեղի կունենա չարդարացված և չհիմնավորված միջամտություն պարտապանի սեփականության իրավունքին, պարտապանի համար կառաջանան այնպիսի բացասական և ծանր հետևանքներ, որոնք արդարացված չեն որևէ իրավաչափ նպատակով:

ՍԴՈ–741, 18 մարտի, 2008 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1. հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

ՍԴՈ–804, 26 մայիսի, 2009 թ.

6. .... Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ սեփականատերերի կամքը և համաձայնությունը դրսևորվում է պարտադիր նորմերի կատարման ապահովման ողջ գործընթացում: Սեփականատերերն են ընտրում շենքի կառավարման մարմինը, նրանք են որոշում այն միջոցառումների և աշխատանքների շրջանակը, որոնք ենթակա են պարտադիր կատարման, սեփականատերերն են որոշում վճարների վճարման կարգն ու ժամկետները, և վերջապես սեփականատերերն ազատ են որոշելու պարտադիր նորմերի պահպանմանն իրենց մասնակցության ձևը՝ կամ վճարելով համապատասխան վճարը, կամ համապատասխան աշխատանքներն անձամբ կատարելով: Իսկ սեփականատերերի ընդհանուր ժողովին է պատկանում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում **ցանկացած հարցի լուծման իրավունքը**,

բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով համարվում են կառավարման մարմնի բացառիկ լիազորությունը (հոդվ. 11., կետ 1):

ՍԴՈ–815, 14 հուլիսի, 2009 թ.

7. Սեփականության իրավունքի հետ կապված սահմանադրաիրավական հարաբերությունների կարգավորման սկզբունքային նորմերը նախատեսված են ՀՀ Սահմանադրության 8 և 31 հոդվածներում, համաձայն որոնց՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը (իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու՝ սեփականատիրոջ իրավունքը), որից անձը կարող է զրկվել բացառապես դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում, իսկ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

ՍԴՈ–816, 18 հուլիսի, 2009 թ.

8. .... Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի 1–ին պարբերության, 83.5. հոդվածի 3–րդ կետի, 89 հոդվածի 4–րդ կետի դրույթների բովանդակությունը, ինչպես նաև սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25–ի ՍԴՈ–780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարները հաշվարկելուն ուղղված գործունեությունն իրենից ներկայացնում է **սեփականատիրոջ՝ պետության առջև տնտեսավարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովող գործունեություն,** որը չի ներառվում տնտեսավարող սուբյեկտի «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակային ծավալներում: Հետևաբար, բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունը, այն է՝ գույքի օգտագործման, ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ընթացքը և դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, այլ վերջինիս կողմից սեփականատիրոջ առջև ստանձնված **պայմանագրային պարտավորությունների կատարումը:** Ըստ այդմ էլ, Սահմանադրության 83.5. հոդվածի 3–րդ կետը չի պարտադրում, որ պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության և դրանց իրականացման համար անհրաժեշտ մյուս գործողությունների իրականացման կարգերը սահմանվեն օրենքով: Դրանք կարող են սահմանվել նաև կառավարության որոշմամբ:

ՍԴՈ–865, 10 փետրվարի, 2010 թ.

7. .... ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 4 հոկտեմբերի 2006 թ. ՍԴՈ–649 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է»: Նույն որոշման մեջ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ «Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի»: Հետևաբար, պատասխանող կողմի, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանում պատասխանողի ներկայացուցիչների բոլոր դատողություններն առ այն, որ անձը միայն մեկ անգամ իրավունք ունի կենսաթոշակի տեսակ ընտրել և այն հետագայում փոփոխման ենթակա չէ, սահմանադրական դատարանը համարում է ոչ հիմնավոր՝ դի-

մումատուի հայցապահանջը մերժելու տեսանկյունից: Դիմողի բարձրացրած հիմնախնդիրն ամենևին չի առնչվում վեճի առարկա հոդվածների դրույթներին, որոնք իրենց իրավակարգավորման շրջանակներում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում: Այն վերաբերում է կենսաթոշակների նշանակման հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից երկու ոչ միասեռ համակարգերն արհեստական ձևով միմյանց կապակցելուն:

ՍԴՈ–901, 29 հունիսի, 2010 թ.

7. Սեփականության իրավունքը ՀՀ–ում, որպես անձի հիմնական իրավունք, ճանաչվում և պաշտպանվում է պետության կողմից (ՀՀ Սահմ. 8 հոդված): Այդ իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է անձի կողմից սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելուն, օգտագործելուն, տնօրինելուն և կտակելուն, որը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը (ՀՀ Սահմ. 31 հոդվածի 1–ին մաս):

Սեփականության իրավունքը, որպես գույքային իրավունք, կարող է ունենալ նաև սեփականատեր չհանդիսացող անձը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք նորմերով կարգավորվում են ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ սեփականատեր չհանդիսացող անձանց գույքային իրավունքները (դրանց ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու կարգը, ինչպես նաև այդ իրավունքների պաշտպանության միջոցները): ՀՀ Սահմանադրության 3–րդ, 18–րդ, 19–րդ և մի շարք այլ հոդվածներով երաշխավորված է անձի իրավունքների, այդ թվում՝ նաև գույքային իրավունքների պաշտպանությունը: Վերջինիս իրացմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1–ին, 170–րդ, 278–րդ և այլ հոդվածների համաձայն անձանց գույքային իրավունքները, այդ թվում՝ սեփականատեր չհանդիսացող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսված կարգով ենթակա են պաշտպանության:

ՍԴՈ–903, 13 հուլիսի, 2010 թ.

10. Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի՝ «Ժողովի քվորումը» վերտառությամբ 77–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50–ից ավելի տոկոսին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի 68–րդ հոդվածի համաձայն՝ ժողովի կողմից բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ որոշման կայացման համար պահանջվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է դառնում խնդրո առարկա որոշման կայացումն ընկերության բաժնետերերի գրեթե մեկ քառորդի կողմից: Ավելին, հաշվի առնելով նաև, որ օրենքի 77–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ ժողովը չկայանալու դեպքում գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30–ից ավելի տոկոսին, ապա գործնականում հնարավոր է դառնում խնդրո առարկա որոշման կայացումը նույնիսկ ընկերության բաժնետերերի 15%–ից քիչ ավելիի կողմից, որն էապես թուլացնում է նման որոշման լեգիտիմությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման ընթացակարգը ոչ միայն չի ապահովում ընկերության բաժնետերերի սեփականության իրավունքին առնչվող որոշումների կայացումը ձայների այնպիսի հարաբերակցությամբ, որը հնարավորություն կտա ապահովել

նման որոշումների լեգիտիմության ավելի մեծ աստիճան, այլ նաև նման որոշման կայացումը բաժնետերերի փոքրամասնության կողմից ներդաշնակ չէ բաժնետոմսերի համախմբման՝ որպես բաժնետերերի մեծամասնության շահերից բխող գործընթացի էությանն ու տրամաբանությանը: Հաշվի առնելով բաժնետոմսերի համախմբման գործընթացի էությունը, առանձնահատկություններն ու տնտեսական նշանակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ և 77-րդ հոդվածներն ունեն բարեփոխման անհրաժեշտություն՝ այն առումով, որպեսզի հատկապես սեփականության իրավունքին առնչվող հարցերում ապահովվի որոշման կայացումը բաժնետերերի մեծամասնության կողմից:

ՍԴՈ-917, 18 սեպտեմբերի, 2010 թ.

7. .... Ժառանգական իրավունքն ապահովում է սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը նաև նրա մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավազորությունների հաջորդայնությունը: Միևնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրորեն պաշտպանված հնարավորություն: Ժառանգական սուբյեկտիվ իրավունքը, այսպիսով, պաշտպանում է թե ժառանգություն տալու, թե ժառանգություն ընդունելու (ստանալու) իրավունքները: Ըստ օրենքի՝ ժառանգումը հիմնված է այն ենթադրության վրա, որ ժառանգորդների շրջանակը, դրանց ժառանգության հրավիրելու հերթերը, ժառանգական գույքի չափը սահմանող օրենքը **համապատասխանում են ժառանգատուի կամքին**, որը չի ցանկացել կամ չի կարողացել արտահայտել իր կամքը այլ կերպ, օրինակ՝ կտակի միջոցով:

ՍԴՈ-983, 12 հուլիսի, 2011 թ.

7. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

9. .... Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ, և հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումն իրենց սահմանադրաիրավական բովանդակությամբ տարբեր ինստիտուտներ են՝ տարբեր խնդիրներով և նպատակներով: Բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի ինստիտուտը, որն անմիջականորեն ուղղված է դատապարտյալի սեփականության իրավունքի դեմ, բխում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասից, քանզի **այս դեպքում դատապարտյալի գույքի բռնագրավումը հանդես է գալիս որպես պատասխանատվությունից բխող հարկադրանքի միջոց՝ իրավաչափորեն սահմանափակելով դատապարտյալի սեփականության իրավունքը:** Մինչդեռ, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման նպատակը հանցավոր ճանապարհով ստացված գույքը դատապարտյալից հետ վերցնելն է, ինչի դեպքում դատապարտյալի սեփականության իրավունքի սահմանափակում տեղի չի ունենում: Հետևաբար, հաշվի առնելով, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը, այդ գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման հասկացության ընկալումը ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, այն է՝ որպես բռնագրավվող գույքի անհատույց անցում ի սեփականություն պետության՝ առանց տուժողի սեփականության իրավունքի վերականգնման, անթույլատրելի է, քանի որ նման ընկալման դեպքում բռնագրավման միջոցառումն անմիջականորեն ուղղվում է տուժողի սեփականության իրավունքի դեմ՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով նրա սեփականության իրավունքը: **Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ գույքն անհատույց պետության սեփականությանը հանձնելն արգելափակում է հանցավոր ճա-**

նապարհով ստացված գույքի հաշվին տուժողների գույքային շահերի բավարարման և խախտված սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը:

ՍԴՈ–990, 4 հոկտեմբերի, 2011 թ.

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «հեռակա կարգով քվեարկություն» հասկացության բովանդակությանը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե սեփականատերերի ժողովում, որպես շինությունների բոլոր սեփականատերերից կազմված մարմնում, քվեարկությունը շինությունների սեփականատերերի որոշումների ընդունման ընթացակարգ է, որը պահանջում է որոշում ընդունելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա ներկայությունը նախապես որոշված վայրում, ապա հեռակա կարգով քվեարկությունը **սեփականատերերի ժողովի որոշումների** ընդունման ընթացակարգ է, որը չի պահանջում որոշում ընդունելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա ներկայությունը նախապես որոշված վայրում: Այդուհանդերձ, այն իր էությամբ շարունակում է մնալ քվեարկություն, այսինքն՝ մի խումբ անձանց կողմից ազատ կամահայտնության միջոցով որոշումների ընդունման ձև: Միաժամանակ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քվեարկության գլխավոր հատկանիշը հենց ազատ կամահայտնության միջոցով որոշումների ընդունումն է՝ անկախ այն բանից, թե քվեարկելու իրավունք ունեցող անձինք իրենց կամքն արտահայտել են նախապես որոշված վայրում, **այսինքն՝ սեփականատերերի՝ որոշակի վայրում գումարված ժողովում,** թե քվեարկողներից յուրաքանչյուրի՝ իր գտնվելու վայրում: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ, նախ՝ քվեարկության վայրը չի հանդիսանում քվեարկության օրինականության հատկանիշը, հետևաբար՝ հեռակա կարգով քվեարկությունը՝ որպես որոշումների ընդունման ձև, ինքնին չի կարող խախտել մարդու սահմանադրական իրավունքները, երկրորդ՝ և՛ ժողովի գումարման, և՛ հարցման միջոցով առաջարկությունները բոլոր դեպքերում, համաձայն օրենքի 12–րդ հոդվածի 1–ին մասի և 13–րդ հոդվածի՝ ներկայացվում են ժողովի քննարկմանը, և բոլոր դեպքերում որոշումն ընդունվում է ժողովի կողմից:

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում օրենքով երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածին համապատասխան սեփականության իրավունքն իր հայեցողությամբ իրացնելու՝ սեփականատիրոջ (սեփականատերերի) իրավունքը՝ վերջինիս դրսևորման տարբեր ձևերի, այդ թվում՝ նաև սեփականությունն օգտագործելու վերաբերյալ որոշումների ընդունմանը սեփականատիրոջ կողմից անմիջական մասնակցություն ունենալու և իր կամաարտահայտությունը դրսևորելու միջոցով:

9. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները նախատեսում են բազմաբնակարան շենքում ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով որոշումների ընդունման տարբեր ընթացակարգեր՝ թույլ տալով սեփականատերերին իրենց կամահայտնությամբ ընտրել որոշումների ընդունման նախընտրելի ձևը: Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է կարգավորվող հասարակական հարաբերության բնույթով: Օրենքը, թույլ տալով կիրառել որոշումների ընդունման տարբեր ընթացակարգեր, միևնույն ժամանակ նախատեսում է բավականին հստակ պահանջներ յուրաքանչյուր ընթացակարգի վերաբերյալ, որոնք կոչված են ապահովելու անձի իրավունքը սեփական կամահայտնությամբ օգտագործելու, տիրապետելու, տնօրինելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման» մասին ՀՀ օրենքի վիճարկվող նորմերը որևէ արտոնություն կամ սահմանափակում չեն նախատեսում բազմաբնակարան շենքի ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի կառավարման առնչությամբ՝ ապահովելով հավասար պայմաններ բոլոր սեփականա-

տերերի համար: Իսկ սեփականության սահմանադրական իրավունքի ենթադրյալ սահմանափակման առնչությամբ դիմողը կամայական մեկնաբանություն է տվել Սահմանադրության 31-րդ հոդվածի երրորդ մասով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման վերաբերյալ սահմանված իրավակարգավորմանը և այն շփոթել օրենքի վիճարկվող դրույթներով նախատեսված իրավակարգավորման հետ:

ՍԴՈ-1009, 24 փետրվարի, 2012 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավազորությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն:**

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-630 որոշման մեջ անդրադառնալով սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակումներին՝ մասնավորապես նշել է. «Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապես տարբեր այլ ինստիտուտ է և պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով»:

Սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակման նշված երկու դեպքերի համար բնորոշ ընդհանրական տարրն այն է, որ երկու դեպքում էլ սեփականատիրոջ հայեցողությունը, կամքն այլևս առաջնային և վճռորոշ չեն, քանի որ այս դեպքերում առաջնայնություն են ստանում տվյալ իրավիճակում պաշտպանության նախապատվություն ունեցող այլ շահեր:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը թույլատրում է բացառապես երկու դեպք, այն է՝ 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերը, երբ սեփականատիրոջ կամքն առաջնային չէ, և սեփականության իրավունքի իրացումը չի բխում սեփականատիրոջ հայեցողությունից: Հետևաբար, ցանկացած այլ դեպքում սեփականության իրավունքի իրացման գործընթացում միջամտությունը սեփականատիրոջ հայեցողությանը, սեփականատիրոջ գույքի տնօրինումն առանց այդ հայեցողության հստակ արտահայտման և դրսևորման չի կարող համարվել իրավաչափ և կհանդիսանա սեփականության իրավունքի խախտում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը հավասար պաշտպանու-

թյուն է երաշխավորում սեփականության բոլոր տեսակների համար և վերաբերում է ինչպես գույքի նկատմամբ միանձնյա, այնպես էլ ընդհանուր սեփականության իրավունքին: Անշարժ գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքի բովանդակությունը պետք է մեկնաբանվի այնպես, որ դրա պաշտպանությունը համարժեք լինի անձի սեփականության իրավունքի պաշտպանության համար նախատեսված պաշտպանությանը: Ընդհանուր սեփականության (բաժնային և համատեղ) պարագայում համասեփականատերերից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես գույքային իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ՝ օժտված սեփականության սուբյեկտիվ իրավունքով և վերջինիս բովանդակությունը կազմող՝ **իր հայեցողությամբ** օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավազորությամբ: Հետևաբար, ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ տնօրինման, ինչպես և՝ օգտագործման և տիրապետման, իրավազորությունը կարող է իրացվել միայն բոլոր համասեփականատերերի փոխհամաձայնությամբ, յուրաքանչյուր համասեփականատիրոջ կամաարտահայտության հիման վրա:

6. .... **Տնօրինման իրավազորությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք:** Դա ոչ այլ ինչ է, քան **հայեցողություն** կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում և օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք դրսևորելու իրավունք**: Սակայն այդ կամքի ինքնավարությունը չի կարող անսահման լինել և չի կարող հակասել օրենքին, խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ օրենսդիրը նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասում առկա այն իրավակարգավորումը, ըստ որի՝ ընդհանուր գույքի տնօրինման գործարքը կարող է կնքել համասեփականատերերից յուրաքանչյուրը, 2-րդ մասում շեշտադրում է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է համասեփականատերերի համաձայնությամբ՝ **անկախ նրանից, թե գործարքը համասեփականատերերից ով է կնքում:** Նման շեշտադրումն ինքնանպատակ չէ և վկայում է ինչպես խնդրո առարկա հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համակարգային փոխկապակցվածության, այնպես էլ դրանց իրավակարգավորման առարկաների տարբերության մասին: Դրանով միաժամանակ կարևորվում են համատեղ սեփականության իրավունքի բովանդակային բաղադրատարրի՝ տնօրինման իրավակարգավորման առանձնահատկությունը, համատեղ սեփականություն հանդիսացող գույքի ճակատագիրը որոշելու իրավունքի իրացման կարգը և իրավական հնարավոր հետևանքները:

....

7. Վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև այդ նորմում «անհրաժեշտ լիազորություններ» ձևակերպման բովանդակության հստակեցումը: Մասնավորապես, այս առնչությամբ կարևորվում է հետևյալ հարցադրումը. արդյո՞ք օրենսդիրը «անհրաժեշտ լիազորություններ» ձևակերպման ներքո նկատի ունի մի համասեփականատիրոջ՝ մյուս համասեփականատերերի անունից գործարք կնքելու իրավունքի առկայությունը, թե՞ ընդհանուր գույքը տնօրինելու բոլոր համասեփականատերերի համաձայնության առկայությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ լիազորության բովանդակության առաջին հարցադրմամբ ընկալումն անխուսափելիորեն կհանգեցնի խնդրո առարկա հոդվածի 2-րդ մասում ամրագրված իմպերատիվ նորմի պահանջների անտեսմանը:

Մինչդեռ անհրաժեշտ լիազորության առկայության պահանջն ինքնանպատակ չէ, այն պետք է երաշխիք հանդիսանա համասեփականատերերի հայեցողության իրացման համար:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ համատեղ սեփականության փաստն ինքնին չի կարող ենթադրել համասեփականատերերից յուրաքանչյուրի մոտ համատեղ գույքը հայեցողաբար տնօրինելու լիազորության առկայություն: Նման կանխավարկածը բոլոր այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով նախատեսված կարգին համապատասխան որոշված է համասեփականատերերի կոնկրետ շրջանակը, կամ նրանք որպես այդպիսին ճանաչվել են օրենքի ուժով, իրավակիրառական պրակտիկայում պետք է բացառել, նկատի ունենալով.

ա) նման կանխավարկածն առաջին հերթին հակասում է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուրի իրավունքն է **իր հայեցողությամբ** տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Այդ **հայեցողությունն** ունի սուբյեկտիվ բնույթ, պետք է դրսևորվի տվյալ անձի կամաարտահայտմամբ: Միաժամանակ, օրենքով են նախատեսվում սեփականության օտարման, սեփականությունից զրկելու և սեփականության իրավունքից օգտվելու բացառիկ այն դեպքերը, որոնք բխում են Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերից: Սեփականության իրավունքի իրացման այլ պայման նախատեսելը, քան նախատեսված է Սահմանադրության 31-րդ հոդվածում, անխուսափելիորեն կհանգեցնի այդ իրավունքի արգելափակման: Մյուս կողմից՝ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության պոզիտիվ պարտականությունն է երաշխավորել, ապահովել ու պաշտպանել սեփականության իրավունքը՝ դրա համար ստեղծելով իրավական անհրաժեշտ նախադրյալներ,

բ) վերոնշյալ սահմանադրաիրավական պահանջներից ելնելով է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ և թե՛ 3-րդ մասերում սեփականության իրավունքի իրավակարգավորման հիմքում **դրել է համատեղ սեփականության մասնակիցների կամաարտահայտությունը՝ նրանց համաձայնության առկայությունը՝** նկատի ունենալով սեփականություն հանդիսացող գույքը երկու կամ ավելի անձանց ընդհանուր սեփականության իրավունքով պատկանելու իրավաբանական փաստը,

գ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ համատեղ սեփականությունն ընդհանուր սեփականության ձևերից մեկն է և «համատեղ սեփականության մասնակիցների համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատարանի վճռով, ընդհանուր գույքի նկատմամբ կարող է սահմանվել այդ անձանց բաժնային սեփականություն» (մաս 5-րդ): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ գլխի, մասնավորապես՝ 189 և 199-րդ հոդվածների, ինչպես նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ (5-րդ մաս), 27-րդ (4-րդ մասի 1-ին կետ), 35, 42, 43 և 46-րդ հոդվածների, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 41 և 64-րդ հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ՝

– գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքի պետական գրանցման գործընթացում սեփականության մասնակիցներից որևէ մեկի հանդես գալն իրավաբանորեն անիրագործելի է մյուս մասնակիցների համաձայնության բացակայության դեպքում, և որ բոլոր դեպքերում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում նշվում են գրանցված իրավունքի բոլոր սուբյեկտների անունները (անվանումները)՝ որպես պետության կողմից այդ սուբյեկտների սեփականության իրավունքի ճանաչման, հետևաբար՝ նաև այն պաշտպանելու պոզիտիվ պարտականության ստանձնման իրավական փաստ,

– գույքի նկատմամբ համատեղ սեփականության մասնակիցներից որևէ մեկի իրավունքի դադարումը կարող է տեղի ունենալ **բացառապես նրա համաձայնությամբ** կամ, նրա մահվան դեպքում՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի՝ միմյանց հետ համակարգային ամբողջություն կազմող նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է, որ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ (եթե նրանց համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ) **բոլոր համասեփականատերերի կողմից իրենց հայեցողության իրացման արդյունքում տրված պոզիտիվ (կոնկրետ, առարկայական) համաձայնության առկայության պայմաններում**, երբ.

3) համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրավունքը հավաստող իրավական փաստաթղթում (գրանցման վկայականում) հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համատեղ սեփականության իրավունքով,

4) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

Եթե առկա չէ վերոհիշյալ դեպքերից որևէ մեկը, ապա **համատեղ սեփականատերերի խնդիրն է** նախապես հստակեցնել միմյանց միջև հարաբերությունները՝ ընդհանուր գույքի օտարման վերաբերյալ, նկատի ունենալով, որ սուբյեկտիվ իրավունքի իրացումն առաջին հերթին հիմնված է համապատասխան անձանց գործողությունների վրա: **Վերջինս ենթադրում է ինչպես համասեփականատերերի կողմից սեփականության իրավունքի հստակ պետական գրանցումը, անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուրի բաժնեմասի որոշակիացումը, այնպես էլ վեճի առարկա դրույթից ելնելով՝ համաձայնությամբ այլ բան նախատեսելը:** Նկատի պետք է ունենալ նաև այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ոչ միայն գույքի նկատմամբ **կարող է սահմանվել համատեղ սեփականության մասնակիցների բաժնային սեփականություն,** այլև օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցները, վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով, վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի»:

Համասեփականատերերի միջև հարաբերությունների հստակեցման արդյունքում է դրսևորվելու նրանց հայեցողական կամաարտահայտումն ընդհանուր սեփականության տնօրինման հարցում: Նման հայեցողության բացակայության պայմաններում է, որ պրակտիկայում այն սուբյեկտը, որի անվամբ ձևակերպված է եղել այդ սեփականությունը, կնքել է այն տնօրինելու գործարք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով: Նման վիճակի առկայությունից ելնելով է, թերևս, օրենսդիրը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում մասնավորապես նախատեսել, որ «եթե .... օտարվող սեփականության սեփականատերն իրեն հայտնի օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում չունեցող գույքային իրավունքներ ունեցողների մասին չի հայտնում ձեռքբերողին, ապա առանց այդ գույքային իրավունքներ ունեցողների մասնակցության սեփականության օտարման հետևանքով նրանց պատճառված վնասների համար պատասխանատվություն կրում է օտարվող սեփականության սեփականատերը»:

....

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան:

.... Սակայն սեփականության տնօրինման իրավունքի հիմքում թե՛ Սահմանադրությամբ և թե՛ օրենքով, ինչպես նշվեց, դրված է սեփականատիրոջ **հայեցողությունը,** ինքնավար կամքի դրսևորումը: Ուստի երկրորդ դեպքում բերված ձևակերպումը թե՛ սահմանադրաիրավական բովանդակության և թե՛ դրա արտահայտման առումով խնդրահարույց է:

Սեփականության իրավունքի իրացման, մասնավորապես, գույքի տնօրինման իրավունքի առումով «անհամաձայնության բացակայությունը համաձայնություն է» արտահայտությունը տրամաբանորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի իրավական բովանդակությունից բխող «անձի հայեցողության» կամ այլ կերպ՝ «իրավահարաբերությունների սուբյեկտների ինքնավար կամքի դրսևորման» սկզբունքին, քանի որ այս դեպքում իրավական ելակետը ոչ թե համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու պայմաններում գործարք կնքելն **է, այլ սեփականության իրավունքի իրացման հարցում անձի հայեցողության կոնկրետ առկայությունն է:**

.... Նշված դեպքերում գույքի օտարումը կարող է տեղի ունենալ միայն համասեփականատերերից յուրաքանչյուրի **պոզիտիվ կամաարտահայտման պարագայում**՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի: Դրանք այն դեպքերն են, երբ գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների, դրանց ծագման, փոփոխման, փոխանցման և դադարման վերաբերյալ պետական գրանցում կամ նոտարական վավերացում իրականացնելիս արդեն իսկ հստակ է համասեփականատերերի սեփականության իրավունքի առկայության հանգամանքն ու անհրաժեշտ է նրանց հայեցողության կոնկրետ դրսևորումը, ինչը կփաստի նաև գործարք կնքողի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը:

ՍԴՈ-1038, 18 հուլիսի, 2012 թ.

7. .... **ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքերի վերաբերելի նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը, որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման միակ հիմք սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականությունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի, արդյունավետ պաշտպանության հնարավորությունը:** Տվյալ դեպքում առկա է իրավունքի պաշտպանության խնդիր և հարցի նկատմամբ չի կարող ձևական մոտեցում դրսևորվել: ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ **յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աշխատանքային պարտականությունների կատարման առկայության՝ հիմնավոր ապացույցներով փաստումը հիմք է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձին իր իրավունքների, այդ թվում՝ համարժեք հատուցման պահանջի իրավունքի պաշտպանություն տրամադրելու համար:** Սույն իրավական դիրքորոշումից շեղումը կհանգեցնի գործատուի պատասխանատվության անտեսման և աշխատողի իրավունքների ոտնահարման, քանի որ կատարած **փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հատուցում վճարելուց հրաժարվելը նաև անձի սեփականության իրավունքի ոտնահարում է:**

ՍԴՈ–1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում խնդրո առարկա իրավակարգավորումը դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածի երկրորդ պարբերության համատեքստում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անձի դրամական միջոցները հանդիսանում են անձի սեփականությունը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 31–րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ ամրագրված՝ անձին սեփականությունից **բացառապես դատական կարգով** զրկելու վերաբերյալ դրույթի իրացումը ենթադրում է համապատասխան դատավարական երաշխիքների առկայություն, որը հավասարապես տարածվում է նաև օրենսգրքի վիճարկվող նորմերի կիրառման նկատմամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով տուգանքի հնգապատիկի չափը դատական կարգով բռնագանձելը չպետք է լինի ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածի երկրորդ պարբերության **ձևական իրականացման գործիք:** Սեփականությունից զրկելու հետ կապված հարցը դատական կարգով քննելու սահմանադրական պահանջը նպատակ ունի ապահովելու գործի հանգամանքների համակողմանի քննությունը, երաշխավորելու կողմերի՝ դատարանի կողմից լսվելու իրավունքը, տվյալ պարագայում՝ տուգանքը ժամանակին չվճարելու մեջ անձի մեղավորության բացակայությունը կամ առկայությունը հիմնավորող ապացույցների ուսումնասիրությունն ու գնահատումը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի խնդիրը չէ սահմանելու համապատասխան ընթացակարգեր, քանի որ օրենսգիրքը կոչված է պահպանելու նյութաիրավական հարաբերությունները՝ քաղաքացիների իրավունքներ, բնակչության առողջություն, սեփականություն և այլն, իսկ վարչական իրավունքի շրջանակներում առաջացող հարաբերությունները կարգավորող, տվյալ դեպքում՝ պահպանող նյութաիրավական նորմերի իրացման ընթացակարգերը սահմանվում են ընթացակարգային օրենքներով, այն է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով:

ՍԴՈ–1102, 28 հունիսի, 2013 թ.

5. .... Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարևոր երաշխիք է ՀՀ Սահմանադրության ինչպես 8–րդ, 18–րդ և 19–րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով, և սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել, եթե օրենսդրությամբ նախատեսված է դրա իրացման արդյունավետ ընթացակարգ, մասնավորապես՝ անիրավաչափ դատական ակտի ի կատար ածման հետևանքով անձանց խախտված իրավունքների ու ազատությունների **արագ, լիարժեք ու արդյունավետ** վերականգնման հնարավորություն: Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և, մասնավորապես՝ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն գործով վեճի առարկայի վերաբերյալ դիմողների հարցադրումներն իրենց բովանդակությամբ պարունակում են **հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման** այդպիսի ընթացակարգերի երաշխավորման անհրաժեշտության փաստացի պահանջ, որը, ինչպես հետևում է գործում առկա դատավարական նախապատմությունից, չնայած անմիջականորեն կապված չի եղել քաղաքացիական գործով ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրի հետ, սակայն իրավակարգավորման ընդհանուր նպատակներով միտված է նաև այդ խնդրի լուծմանը: Հետևաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19–րդ հոդվածի պա-

հանջներով, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հանցագործությամբ անձանց պատճառված նյութական (գույքային) վնասի վերականգնման սահմանադրաիրավական սկզբունքների երաշխավորման, և հատկապես՝ իր նախորդ որոշումներով այդ հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության խնդրին:

ՍԴՈ–1142, 2 ապրիլի, 2014 թ.

6. .... Հանրագումարի բերելով ասվածը և սույն հարցի շրջանակներում գնահատելով դատաքննության մասնակիցների բացատրություններն ու պարզաբանումները՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը փաստում է.

նախ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8–րդ հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը», որից բխում է պետության հանրային–իրավական համարժեք պարտավորությունը:

Երկրորդ՝ այդ պարտավորության իրացման նախապայմանն այն է, որ համաձայն Սահմանադրության 31–րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը»:

Երրորդ՝ սահմանադրական այդ իրավունքը չի կարող օրենքով սահմանափակվել, քանի որ դրա համար անհրաժեշտ հիմքեր նախատեսված չեն Սահմանադրության 31, 43 և 44–րդ հոդվածներով:

Չորրորդ՝ սահմանադրական նման իրավակարգավորումների պայմաններում քննության առարկա օրենքի առանձին հոդվածներ (մասնավորապես՝ 5, 7, 13, 76) ուղղակի կամ անուղղակի նախատեսում են սեփականության իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31–րդ հոդվածի պահանջներին և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին չհամապատասխանող սահմանափակումներ:

Հինգերորդ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89–րդ հոդվածն իրավունք է վերապահում Հայաստանի Հանրապետության կառավարու–թյանը կառավարելու բացառապես պետական սեփականությունը: Անձանց կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականության կառավարումը որպես գործառույթ օրենքով չի կարող ընդգրկվել այդ իրավունքի իրացման շրջանակներում:

Վեցերորդ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները, մի կողմից, վկայում են դրանց հստակ ու հետևողական բնույթի մասին, որոնք հիմք են հանդիսացել նաև տարբեր իրավանորմեր Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու համար: Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ դրանք խորությամբ հաշվի չեն առնվել քննության առարկա օրենքի ընդունման ժամանակ: Դա այն դեպքում, երբ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9–րդ հոդվածի 2–րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին»:

12. .... Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 1–ին կետով սահմանված է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Հստակ է, որ սահմանադրական տվյալ դրույթը վերաբերում է անձանց բոլոր իրավունքներին: Դրա հետ մեկտեղ, ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքների 8–րդ հոդ-

վածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Նկատի ունենալով, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ սեփականության իրավունքն օրենքով չսահմանափակվող իրավունք է, ուստի առավել ևս դրա պաշտպանության պայմաններն ու կարգը միմիայն օրենքով կարող են սահմանվել:

18. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը սույն գործը քննության ընդունելուց հետո, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներից ելնելով, 2014 թ. հունվարի 24-ի ՍԴԱՈ-3 որոշմամբ՝ որպես դիմումի ապահովման միջոց, մինչև գործի դատաքննության ավարտը կասեցրեց քննության առարկա օրենքի 76-րդ հոդվածի և 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և պետական կառավարման տարբեր մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման տարաբնույթ մեկնաբանության փորձերը որոշ չափով նվազեցրին դիմումի ապահովման միջոցի արդյունավետությունը: Նկատի ունենալով, որ գործը դատաքննության նախապատրաստման փուլում էր և օրենքով սահմանադրական դատարանի որոշումների պարզաբանման ինստիտուտ նախատեսված չէ, սահմանադրական դատարանը 2014 թ. փետրվարի 11-ի ՍԴԱՈ-6 աշխատակարգային որոշմամբ արձանագրեց գործի դատաքննության շրջանակներում ստեղծված վիճակին անդրադառնալու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցերը չեն կարող ենթադասվել տեխնիկական ու կազմակերպչական ցանկացած բնույթի հանգամանքների, այլ այդ հարցերում իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրական նորմերի անմիջական գործողության և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներով:

ՍԴՈ-1167, 14 հոկտեմբերի, 2014 թ.

5. .... Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով սեփականության իրավունքի, դրա սահմանափակման, իրականացման և պաշտպանության վերաբերյալ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի գրավոր բացատրության ուսումնասիրության արդյունքները, սահմանադրական դատարանը գտնում է, որ **վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված տասներկու ամսվա ժամկետային սահմանափակումը չի պայմանավորվում հանրային արժեքների պահպանման պահանջով և արդյունքում նպատակաուղղված չէ սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովմանը:** Նման սահմանափակման հիմնավորում կարող է լինել ժառանգության զանգվածի ճակատագրի հստակեցումը, որի իրավական կարգավորումը, սակայն, նախատեսվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

6. .... Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավադրույթն անտեսում է ոչ միայն ժառանգության ընդունման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված եղանակները, հնարավորություն չտալով ժառանգին փաստացի տիրապետման ուժով ստանալ նաև կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը, այլ նաև նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակում, որը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ժամկետներին:

ՍԴՈ–1189, 27 հունվարի, 2015 թ.

5. .... ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հարցերին: Մասնավորապես, ՍԴՈ–903, այնուհետև՝ ՍԴՈ–1073 որոշումներում դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածը նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31–րդ հոդվ. 1–ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31–րդ հոդվ., 2–րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31–րդ հոդվ., 3–րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

«Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է ՍԴՈ–630 որոշման մեջ, որում սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Հաշվի առնելով նաև այդ բնութագրումը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետևյալ հիմնական պարտադիր տարրերը.

– սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում,

– սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,

– սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավազորությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ առանց շարունակականության երաշխավորման:

Քննության առնելով դիմողի համար առաջացած ոչ բարենպաստ հետևանքները վերոնշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմը որևէ առնչություն չունի անձին պատասխանատվության ենթարկելու, հետևաբար՝ նաև սեփականազրկման հետ:

ՍԴՈ–1203, 28 ապրիլի. 2015 թ.

5. Սեփականության իրավունքի և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի հետ կապված սահմանադրաիրավական կարգավորումներ են նախատեսված ՀՀ Սահմանադրության 31, 33.1 և 43–րդ հոդվածներում:

ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սակայն սեփականության իրավունքը բացարձակ չէ և վերոհիշյալ հոդվածի 1–ին մասի 2–րդ նախադասության իմաստով այն կարող է սահմանափակվել, եթե դրա իրականացումը կարող է վնաս պատճառել շրջակա միջավայրին, խախտել այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–1073 որոշման մեջ անդրադարձ է կատարել սեփականության իրավունքի սահմանափակման միջազգային իրավական փորձին և վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ սեփականության պաշտպանությանն ուղղված սահմանադրական և միջազգային իրավական դրույթները «.... այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է

համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Հարկը պետության գոյատևման անհրաժեշտ պայման է, և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այդ պարտականությունը վերաբերում է բոլոր հարկատուներին:

Հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների համար կամավորության հենքի վրա սահմանադրաիրավական պարտավորությունների չկատարումն ինքնին հանգեցնում է պետության կողմից դրանց՝ իրավական հարկադրանքի միջոցով գանձմանը, որը չի կարող դիտարկվել որպես սեփականությունից զրկում:

ՍԴՈ-1224, 7 հուլիսի, 2015 թ.

18. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի իրավասության շրջանակներում է այս կամ այն դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետի սահմանումը, սակայն օրենքի գործողության տարաժամկետումը չպետք է հանգեցնի անձի իրավունքների և ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակմանը: Ուստի այս կարգավորումները պետք է դիտարկել առաջին հերթին սեփականության իրավունքի սահմանափակման տեսանկյունից՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

.... Վիճարկվող նորմով նախատեսված սեփականության իրավունքի իրացման սահմանափակումն իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ. այդ իրավակարգավորումը ժամանակավորապես սահմանափակում է մասնակիցների սեփականության իրավունքի իրացումը՝ ելնելով կուտակային կենսաթոշակային համակարգի մյուս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, որոնք, հնարավոր է, որ ցանկություն չեն հայտնել հետ ստանալ իրենց կատարած կուտակային վճարները: Կենսաթոշակային ֆոնդերում հավաքագրված կուտակային վճարները ներդրվում են օրենքով նախատեսված ակտիվներում, օրինակ՝ ժամկետային ավանդներում կամ արժեթղթերում, և դրանց անմիջական իրացման դեպքում կենսաթոշակային համակարգի մյուս մասնակիցները զգալի վնասներ կկրեն, քանի որ ստիպված կլինեն ակտիվները վաճառել ակնկալվածից ավելի ցածր գնով կամ, օրինակ՝ ավանդների պարագայում կորցնել արդեն իսկ հաշվարկված ավանդային տոկոսները:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ նշված ժամանակահատվածի համար որևէ ողջամիտ փոխհատուցման բացակայության վերաբերյալ հարցին, հարկ է նշել, որ 2014 թվականի հուլիսի 1-ից 2015 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ժառանգման հարցեր առաջանալու դեպքում ժառանգներն իրենց հասանելիք գումարները կարող են ստանալ 2015 թվականի հուլիսի 1-ից սկսած, և այդ գումարները կներառեն նաև վերոնշյալ ժամանակահատվածի ընթացքում դրանց ներդրումից վաստակած եկամուտները, ինչը կարող է ողջամիտ փոխհատուցում համարվել այդ ժամանակահատվածի համար:

ՍԴՈ-1271, 10 մայիսի, 2016 թ.

7. .... ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նշված դրույթը յուրաքանչյուրի համար երաշխավորում է ոչ միայն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները, այլ նաև՝ օրինական հիմքով սեփականություն ձեռք բերելու իրավունքը, ինչը պետու-

թյունից պահանջում է օրինական հիմքն այնպես կարգավորել, որ դրանից անձը վնաս չկրի, այլ երաշխավորվի սեփականություն ձեռք բերելու իրավունքը:

Նշված իրավունքների իրականացման արդյունավետ իրավակազմակերպական կառուցակարգեր և համապատասխան ընթացակարգեր չնախատեսելու դեպքում անձին կարող է վնաս հասցվել:

.... Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել ՍԴՈ–983 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումն առ այն, որ «Հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության խնդիրը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականության անձեռնմխելիության սկզբունքը ոչ միայն նշանակում է, որ սեփականատերը՝ որպես սուբյեկտիվ իրավունքների կրող, իրավասու է պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև ենթադրում է պետության պարտականությունը՝ անձի սեփականությունը պաշտպանելու անօրինական ոտնձգություններից: Պետության այս պարտականությունը խնդրո առարկա իրավիճակում պահանջում է ապահովել արդյունավետ կառուցակարգ հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության և կրած վնասի վերականգնման համար»:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ամրագրվել է նոր դրույթ՝ ՀՀ Սահմանադրության 75–րդ հոդվածը, որն օրենսդրին ուղղակիորեն պարտավորեցնում է հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս սահմանել այնպիսի կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը:

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի նշված դրույթները, որոնք կարգավորում են նոտարի պատասխանատվության վերաբերյալ հարցերը, հաշվի չեն առնում հնարավոր իրավիճակների ամբողջ բազմազանությունը և բավարար կառուցակարգեր և ընթացակարգեր չեն սահմանում անձի խախտված սեփականության իրավունքի պաշտպանության համար, որպիսի պարտականություն ՀՀ Սահմանադրության 3–րդ և 75–րդ հոդվածների համաձայն կրում է պետությունը:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՈՒՄԸ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՐ

ՍԴՈ–630, 18 ապրիլի, 2006 թ.

11. ՀՀ Սահմանադրության նորմերի համեմատական վերլուծությունը, ինչպես նշվեց, վկայում է, որ միայն մեկ դեպքում է հնարավոր սեփականության հարկադիր օտարումը՝ երբ առկա է բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակական և պետական կարիքը: Այս դրույթը ՀՀ գործող օրենսդրության մեջ իր համարժեք իրացումը չի գտել: Ավելին, սույն գործով վեճի առարկա և մի շարք այլ իրավական ակտերում այն ներկայացվել է «պետության կամ համայնքի կարիքի (կարիքների) համար գույքը (հողամասը) վերցնել» դրույթով: Սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների համատեքստում «հասարակության և պետության կարիք» և «պետության կամ համայնքի կարիք» դրույթների թեկուզ քերականական մեկնաբանությունից և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 10–րդ կետում սահմանված՝ «և» շաղկապի ու «կամ» շաղկապի կիրառման կանոններից հետևում է, որ երկրորդ դեպքում «կամ» շաղկապով կապակցված են նախադասության երկու համազոր, սակայն միմյանցից անկախ հասկացություններ, որոնք ենթադրում են սեփականության օտարման երկու ինքնուրույն, միմյանցից անջատ նախադրյալ, երբ «այդ նորմի կիրառման համար բավական է թվարկված պայման-

ներից առնվազն մեկի առկայությունը»: Այս առումով, ինչպես նաև «հասարակություն» և «համայնք» հասկացությունների բովանդակային ընդգրկման տարբերություններից ելնելով, այդ երկու դրույթներն ամբողջությամբ նույնական կամ համազոր համարվել չեն կարող:

Բացի դրանից, այդ դրույթների սահմանադրաիրավական մեկնաբանության համար պետք է դրանք ներկայացնել իրենց իրավական բովանդակության ամբողջականության մեջ: Սահմանադրական դրույթի բովանդակությունն է՝ «սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար»: Գործող օրենքներում և կառավարության որոշումներում այն ներկայացվել է «հողամասը (գույքը) պետության կամ համայնքի (համայնքների) կարիքների համար վերցնել» դրույթով:

Սահմանադրական դրույթի իրավական բովանդակությունը հստակ է, և խոսքը վերաբերում է իրավաչափ նպատակի համար սեփականության հարկադիր օտարմանը: «Սեփականության օտարում» հասկացությունը, իր հերթին, սահմանադրական տվյալ դրույթի համատեքստից ելնելով, ենթադրում է Սահմանադրությամբ նախատեսված այդ նույն իրավաչափ նպատակի համար կոնկրետ օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակում կամ դադարում՝ պայմանով, որ այդ օբյեկտի դիմաց անձին նախապես տրվում է համարժեք այլ գույք կամ փոխհատուցում, որն էլ երաշխավորում է սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը:

Փաստորեն Սահմանադրության 31 հոդվածի նշված դրույթն ամբողջականանում է նույն հոդվածի այլ դրույթների հետ օրգանական փոխկապվածության համատեքստում: Դա ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն: Նման համադրման արդյունքում որևէ կոնկրետ սեփականության օբյեկտի նկատմամբ Սահմանադրությամբ նախատեսված հիմքերով իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել, եթե այն ծառայում է բացառիկ՝ գերակա հանրային շահի բավարարմանը:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ իրավական համակարգում օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից չեն ստեղծվել անհրաժեշտ ու բավարար նորմատիվային իրավական նախադրյալներ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի պահանջների իրականացման համար՝ այն իրավական բովանդակության ու նշանակության տեսանկյունից, ինչը դրված է սահմանադրական նորմի հիմքում: Պետությունը կամ համայնքը կարող են կողմերի ազատ կամքի դրսևորման հիման վրա իրենց կարիքների բավարարման համար քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում գնել անհրաժեշտ գույք: Սակայն երբ հարցն առնչվում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարմանը, ապա ցանկացած իրավական ակտի և համարժեք գործողության հիմքում պետք է դրվի Սահմանադրության 31 հոդվածի պահանջը և նկատի առնվի, որ մարդու սահմանադրական իրավունքները բարձրագույն արժեք են ու անմիջական գործող իրավունք:

12. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջազգային պրակտիկայում սեփականության օտարման համար հիմք են պետության և հասարակության այնպիսի կարիքները, ինչպիսիք են ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարերի, օդանավակայանների, հանրային տարաբնույթ նշանակության այլ ենթակառուցվածքների, պաշտպանական նշանակության օբյեկտների շինարարությունը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, պատմամշակութային հուշարձանների պաշտպանության, բնակավայրերի կառուցապատման և հասարակական ու պետական կարևորության տարբեր այլ ծրագրերի իրականացումը: Սակայն բոլոր պարագաներում իրավական խնդիրն այն է, որ օրենքով սահմանված կարգով ամեն մի կոնկրետ դեպքում հիմնավորվի ծրագրի այդպիսին լինելը և այդ

մասին ժամանակին ու պատշաճ ձևով տեղեկացվեն շահագրգիռ անձինք՝ ստանալով իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորություն:

ՍԴՈ–815, 14 հուլիսի, 2009 թ.

7. Սեփականության իրավունքի հետ կապված սահմանադրաիրավական հարաբերությունների կարգավորման սկզբունքային նորմերը նախատեսված են ՀՀ Սահմանադրության 8 և 31 հոդվածներում, համաձայն որոնց՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը (իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու՝ սեփականատիրոջ իրավունքը), որից անձը կարող է զրկվել բացառապես դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում, իսկ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածի համաձայն՝ այդ օրենքը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացությունը և դրա որոշման կարգը, այդպիսով՝ այն կոչված է նախատեսելու ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի իրագործման պայմանները:

Սահմանադրական դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ իր՝ 2006 թ. ապրիլի 18–ի ՍԴՈ–630 որոշմամբ մեկնաբանել է Սահմանադրության 31 հոդվածի 3–րդ մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը, հաշվի է առնում, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է նաև սահմանադրական դատարանի այդ որոշման դրույթների իրագործմամբ: Արձանագրելով, որ դիմողներն իրենց փաստարկների համար հիմք են ընդունում սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18–ի ՍԴՈ–630 որոշման միայն 9–րդ կետի 9–րդ պարբերությունում ամրագրված իրավական դիրքորոշումը, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությունը հարկ է գնահատել սահմանադրական դատարանի այդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների վերահաստատման և դրանց ամբողջության համադրության սկզբունքով:

Հաշվի առնելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի իրավական կարգավորման նպատակը (օրենքի 1 հոդված), բացահայտելով օրենսդրի կամքը, վերլուծելով օրենքի և, մասնավորապես՝ դրա 4, 5, 7, 8, 9, 10 և 16 հոդվածների իրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը փորձել է վերոհիշյալ օրենքում արտացոլել սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18–ի ՍԴՈ–630 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները և այդ դիրքորոշումների շրջանակներում սահմանել բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորման իրավական հիմքերը: Իսկ հասարակության և պետության կարիքների առկայությունը հիմնավորել է բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորման վերաբերյալ դրույթների շրջանակներում՝ հիմք ընդունելով սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18–ի ՍԴՈ–630 որոշման 10–րդ կետի 14–րդ պարբերությունում արտահայտած իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի՝ հասարակության և պետության կարիքն ի հայտ է գալիս բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության հիմնավորմամբ: Մասնավորապես, սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18–ի ՍԴՈ–630 որոշման 12–րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ «միջազգային պրակտիկայում սեփականության օտարման համար հիմք են պետության և

հասարակության այնպիսի կարիքները, ինչպիսիք են ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարերի, օդանավակայանների, հանրային տարաբնույթ նշանակության այլ ենթակառուցվածքների, պաշտպանական նշանակության օբյեկտների շինարարությունը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, պատմամշակութային հուշարձանների պաշտպանության, բնակավայրերի կառուցապատման և հասարակական ու պետական կարևորության տարբեր այլ ծրագրերի իրականացումը: Սակայն բոլոր պարագաներում իրավական խնդիրն այն է, որ օրենքով սահմանված կարգով ամեն մի կոնկրետ դեպքում հիմնավորվի ծրագրի այդպիսին լինելը և այդ մասին ժամանակին ու պատշաճ ձևով տեղեկացվեն շահագրգիռ անձինք՝ ստանալով իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորություն»:

....

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքում առկա են հասկացութային որոշ անհստակություններ: Մասնավորապես, օրենքի անվանման մեջ ու բազմաթիվ հոդվածներում (1, 3, 4, 6, 11, 14, 18) առանց երկիմաստության խոսքը վերաբերում է հասարակության և պետության **կարիքների համար** սեփականության օտարմանը: Դա միարժեք նշանակում է, որ հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի պահանջը, սեփականության օտարումը հնարավոր է միայն մեկ նպատակ իրականացնելու՝ հասարակության և պետության կարիքը բավարարելու համար: Սակայն, ինչպես ընդգծվել էր նաև ՍԴՈ-630 որոշման մեջ, հասարակության և պետության ոչ բոլոր կարիքները կարող են սեփականության օտարման հիմք հանդիսանալ: Սահմանադրությունը կոնկրետ պայման է առաջադրում՝ դրանք հասարակության և պետության այն **կարիքներն են**, որոնք միայն **պայմանավորված են բացառիկ՝ գերակա հանրային շահերով:** Նման հստակ սահմանադրաիրավական կարգավորման պայմաններում, օրենքի 7 հոդվածի 2-րդ մասի ա) կետում նշվում է, որ բացառիկ՝ գերակա հանրային **շահի համար** պետք է օտարվի սեփականությունը: Դա, իր հերթին, ելնում է օրենքի 4 հոդվածի 3-րդ մասի, 7 հոդվածի 2-րդ մասի ա) կետի այն ձևակերպումներից, որոնցում բացառիկ՝ գերակա հանրային **շահի** և, դրանով պայմանավորված, հասարակության և պետության **կարիքի** որոշ նույնականացում է նկատվում: Վերջինս, իր հերթին՝ **«դեպքում»** և **«համար»** եզրույթների ոչ համարժեք կիրառման արդյունք է:Այդուհանդերձ, օրենքի ու նաև նշված հոդվածների այլ դրույթների ընդհանուր տրամաբանությունն այն է, որ սեփականությունը կարող է օտարվել հասարակության և պետության կարիքների համար:

Հաշվի առնելով վերջին հանգամանքը, այս հարցի առնչությամբ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, օրենքի ցանկացած դրույթի իրավակիրառական պրակտիկան պետք է ելնի այն սկզբունքից, որ չնայած տվյալ իրավակարգավորման շրջանակներում «հասարակության և պետության կարիքը» և «բացառիկ՝ գերակա հանրային շահը» հանդես են գալիս օրգանական մեկ միասնականության մեջ, այսուհանդերձ, բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայությունն այն **պայմանն** է, որի պարագայում հնարավոր է դառնում սեփականության օտարումը **պետության և հասարակության կարիքների համար:** Նման մոտեցումը նախ և առաջ ելնում է ՀՀ Սահմանադրության 1 հոդվածի, 2 հոդվածի 1-ին մասի, 3 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից, որի հիմնարար նշանակությունը կայանում է պետության և հասարակության շահերի միասնության, և միայն այդ շահերով պայմանավորված նպատակային խնդիրներ լուծելու իրավական պայմաններ ստեղծելու, ինչպես նաև՝ պետության և հասարակության միջև ներդաշնակ գործակցություն ապահովելու մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի 4 հոդվածի 1-ին մասի ե) կետով, ինչպես նաև 9 հոդվածով նախատեսված հիմքերով դատական վեճի առկայության պայման-

ներում Սահմանադրության 6 հոդվածի 1-ին մասի, 31 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև 3 հոդվածի 3-րդ մասի պահանջներից ելնելով **դատարանը պարտավոր է** պատասխան տալ հետևյալ հարցերին. **նախ՝** տվյալ սեփականության օտարման առնչությամբ առկա՞ է հասարակության և պետության կարիքը, թե՝ ոչ, **երկրորդ՝** այդ կարիքը պայմանավորվա՞ծ է միայն բացառիկ՝ գերակա հանրային շահով, թե՝ ոչ: Այդ հարցերի պատասխանների առկայության պայմաններում կարող է հետագա գործընթացն օրենքով նախատեսված շարունակությունն ունենալ: Սահմանադրական դատարանն սկզբունքային է համարում նաև օրենքի 13 հոդվածի 4-րդ մասի երաշխիքային այն դրույթը, որ «....դատարանի վճռից ծագող պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ իրավունքները ծագում են միայն դրանց պետական գրանցման պահից»: Նման նորմատիվ պահանջի բացակայությունը նախկինում սեփականության իրավունքի խախտման լուրջ պատճառ էր դարձել:

8. .... ՀՀ Սահմանադրության 85 և 89 հոդվածներում սահմանված է ՀՀ կառավարության, որպես գործադիր իշխանության մարմնի, սահմանադրաիրավական կարգավիճակը, որի բովանդակությունից է անմիջականորեն բխում այն լիազորությունների շրջանակը, մասնավորապես՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բնագավառում, որը նախատեսված է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում:

9. .... Հաշվի առնելով, որ թեև վերոհիշյալ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության հիմնավորումն անմիջականորեն պայմանավորված չէ սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականության խնդրով, այնուամենայնիվ, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայի ուսումնասիրման արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ օրենքում սահմանադրական դատարանի 18.04.2006 թ. ՍԴՈ-630 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների ոչ ամբողջությամբ արտացոլված լինելու հանգամանքն իր արտացոլումն է գտնում իրավակիրառական պրակտիկայում ծագող տարաբնույթ վեճերում, որոնց հաղթահարումը հետագա օրենսդրական հստակեցումների անհրաժեշտություն ունի:

ՍԴՈ-903, 13 հուլիսի, 2010 թ.

8. .... Հաշվի առնելով, որ դիմողներն ըստ էության վիճարկվող ինստիտուտը դիտարկում են որպես սեփականությունից զրկում՝ առանց սեփականությունից դատական կարգով զրկելու սահմանադրական պահանջի ապահովման, սահմանադրական դատարանը անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականության հարցի որոշման նպատակով նախ բացահայտել «սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունն ու հիմնական բաղադրատարրերը և այդ համատեքստում պարզել, թե արդյո՞ք բաժնետոմսերի համախմբման արդյունքում օբյեկտիվորեն ձևավորվող կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնումը հավասարազոր և համարժեք է սեփականությունից զրկելուն:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է **սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման** միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ինչպես հետևում է նշված ա) ենթակետի բովանդակությունից, սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, **այլ անձանց,** հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ: Վերջինս առավել ևս վերաբերում է այն դեպքերին, երբ խոսքը ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեությամբ համախմբված անձանց մասին է: Դա, ինչպես շեշտել է ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006 թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի և սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն:

Միաժամանակ, Սահմանադրությամբ նախատեսված այդ նույն իրավաչափ նպատակի համար կոնկրետ օբյեկտի նկատմամբ **սեփականության իրավունքի սահմանափակում կարող է իրականացվել միայն անհրաժեշտ փոխհատուցման դեպքում, որը կերաշխավորի սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը:** Իրավակարգավորման գլխավոր խնդիրը, ինչպես վկայում է նաև միջազգային փորձը, համարժեք փոխհատուցման ապահովումն ու այդ շարունակականության երաշխավորումն է:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեփականության անձեռնմխելիության դատական երաշխիքը: Այդ դրույթում օգտագործված՝ «սեփականությունից զրկում» հասկացությունը սահմանադրաիրավական հարաբերությունների ոլորտում ունի ինքնավար բովանդակություն: «Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությանը սահմանադրական դատարանն անդրադարձել է նշված ՍԴՈ-630 որոշման մեջ, որում առանձնացնելով սեփականության իրավունքը սահմանափակելու՝ Սահմանադրությամբ թույլատրվող դեպքերը, սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Հաշվի առնելով նաև այդ բնութագրումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետևյալ հիմնական պարտադիր տարրերը.

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի **անհատույց դադարեցում**,
- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,
- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավազորությունների միաժամանակյա և լիակատար դադարում՝ **առանց շարունակականության երաշխավորման:**

Հիմք ընդունելով «սեփականությունից զրկում» հասկացության վերոհիշյալ սահմանադրաիրավական բովանդակությունը և հաշվի առնելով, որ կոտորակային բաժնետոմսերի **պարտադիր հետգնման պարագայում** դրանց սեփականատիրոջն օրենքով սահմանված կարգով վճարվում է բաժնետոմսի շուկայական արժեքը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ կոտորակային բաժնետոմսի հետգնմամբ սեփականությունից զրկում տեղի չի ունենում, և, հետևաբար, տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ սեփականության անձեռնմխելիության դատական երաշխիքը նույնաբովանդակ ձևով կիրառելի չէ:

ՍԴՈ-997, 15 նոյեմբերի, 2011 թ.

8. .... Անդրադառնալով **«գերակա հանրային շահ»**, ինչպես նաև տվյալների **«հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացում»** եզրույթների իրավական որոշակիության խնդրին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված գործի հանգամանքներից, պետք է որոշվի, թե արդյոք **հասարակության տեղեկացված լինելու շահը** գերակա է եղել տեղեկություն հայտնած անձի վրա դրված պարտականության ու պատասխանատվության համեմատ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ այսպիսի դեպքերում ազգային իշխանությունների հայեցողության շրջանակը սահմանափակված է ժողովրդավարական հասարակության շահով, որը կայանում է նրանում, որ մամուլին թույլատրվի կատարել «հասարակական վերահսկող օղակի» (“watchdog”) իր գործառույթը և տեղեկատվություն տարածել հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ: Ըստ այդ դատարանի դիրքորոշման՝ իրավակիրառական պրակտիկայում առաջին հերթին պետք է գնահատվի այնպիսի **«անհետաձգելի հասարակական պահանջի»** առկայության փաստը, որն ունակ է արդարացնել այդ միջամտությունը **հավասարակշռված և բարեխղճորեն**՝ առանց չարամիտ, անձին անվանարկող դիտավորության:

ՍԴՈ-1073, 30 հունվարի, 2013

5. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն, որպես սահմանադրական կարգի սկզբունք, Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44-րդ հոդվածներ, 83.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89-րդ հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1-րդ հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները և այդ իրավունքն իրականացնելու ու պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության միջոցները և այլն:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հատկապես կարևորում է Սահմանադրության 31-րդ հոդվածում ամրագրված սեփականության իրավունքի իրացման հիմնական սահմանադրաիրավական սկզբունքները, համաձայն որոնց՝ անձի բացառիկ իրավունքն է իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը՝ պայմանով, որ այդ իրավունքի իրացումը չխախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը, վնաս չպատճառի շրջակա միջավայրին: Իսկ որպես սեփականության անձեռնմխելիության ապահովման երաշխիք՝ սկզբունքային նշանակություն ունի նաև Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ մասում հաստատագրված սեփականազրկման՝ բացառությամբ դատական կարգով և օրենքով նախատեսված դեպքերում իրականացման սկզբունքը, որը, ի տարբերություն օտարման ընթացակարգի (ՀՀ Սահմ. 31-րդ հոդվածի 3-րդ մաս), ենթադրում է օրենքով սահմանված իրավական պատասխանատվության համապատասխան միջոցի կիրառում:

Այդպիսիք են այն բացառիկ իրավապայմանները, որոնց շրջանակներում է Հայաստանի Հանրապետությունում իրացվելի ու պաշտպանելի սեփականության իրավունքը: Այդ իրավապայմանների երաշխավորված գործադրմանն են կոչված ընթացիկ օրենսդրական կարգավորումները, այդ թվում՝ նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ոչ միայն հարկային իրավահարաբերությունների մասնակիցների վարքագծի կանոններն ու դրանց իրացման պայմանները, այլև, սույն գործով վեճի առարկայի իմաստով, կարգավորում է ան-

ծանց սեփականության տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից առաջացած հասույթներից պետական ու հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճարների գանձումն ապահովելու միջոցներն ու կարգը, այդ թվում՝ պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար:

Այսպիսով, արձանագրելով, մի դեպքում՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներն ու դրանց կիրառման օրենսդրական շրջանակները, մյուս դեպքում՝ օրենքով սահմանված հարկեր մուծելու՝ անձի սահմանադրական պարտականության կատարման անխուսափելիությունը, սահմանադրական դատարանը կարևորում է վերջինիս իրավակարգավորման այնպիսի միջոցների ու ձևերի սահմանումն ու կիրառումը, որոնց պարագայում իրավունքը չենթարկվի անիրավաչափ (անհամաչափ) սահմանափակման, իսկ օրենքով նախատեսված սահմանափակումները հետապնդեն սահմանադրորեն արդարացված նպատակ և որևէ կերպ չգերազանցեն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակները:

Վերոհիշյալ իրավապայմանների սահմանադրաիրավական բովանդակության և հասարակական հարաբերությունների կարգավորման բնագավառում դրանց գործադրման միջոցով իրավունքի գերակայության հաստատման գործում ունեցած սկզբունքային նշանակության վերաբերյալ սահմանադրական դատարանը մի շարք իրավական դիրքորոշումներ է արտահայտել իր որոշումներում: Մասնավորապես, ՍԴՈ–903 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «ՀՀ Սահմանադրության 31–րդ հոդվածը նախատեսում է **սեփականության իրավունքի իրականացման սահմանափակման** միմյանցից տարանջատվող չորս հանգամանք.

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառելու, այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելքով (31–րդ հոդվ. 1–ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31–րդ հոդվ. 2–րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության և պետության կարիքների համար (31–րդ հոդվ. 3–րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ինչպես հետևում է նշված ա) ենթակետի բովանդակությունից, սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, **այլ անձանց,** հանրության և պետության իրավունքները և օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռություն՝ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ»:

Սույն գործով առաջադրված խնդրի բացահայտման տեսանկյունից կարևոր է հատկապես արձանագրել, որ սահմանադրաիրավական նորմերն ընթացիկ օրենսդրական կարգավորումների միջոցով կիրառելը հատկապես երաշխավորելի է այնպիսի իրավաընկալման դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքն օրենքով նախանշված հիմքերով միջոց է հանդիսանում սահմանադրական պարտականության կատարումն ապահովելու համար: Այսինքն՝ իրավունքն ու պարտականությունը հանդես են գալիս ոչ միայն որպես անձի սուբյեկտիվ կարգավիճակը բնորոշող կամ հասարակական հարաբերություններում սուբյեկտիվ օրինաչափ հնարավորությունների ու ցանկությունների իրականացմանը կոչված և իրենց երկմիասնությամբ պայմանավորված իրավաբանորեն թույլատրելի միջոցներ, այլև իրավակարգավորման կարևոր բաղադրիչներ են, տվյալ դեպքում՝ անձի հարկային պարտավորության կատարումն ապահովելու միջոցով, պետական ու հասարակական կարիքների բավարարմանն ուղղված խնդիրներ լուծելու

նպատակով: Այս առումով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված կարգավորման որոշակիորեն արտահայտված իրավական կոնկրետ նպատակը պետական լիազոր մարմնի կողմից վերահսկվող անձի (ֆիզիկական և իրավաբանական) կողմից իր սուբյեկտիվ պարտականության կատարումն ապահովելն է, որն ունի սահմանադրորեն կանխորոշված հանրային-իրավական նշանակություն, քանի որ կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 45, 48, 83.5, 89 և 106-րդ հոդվածներում նախանշված պատվիրանների կատարումը: Այդ նպատակի իրականացման օրենքով թույլատրելի միջոցը, ըստ վիճարկվող նորմերի իրավական բովանդակության, անձի գույքային իրավունքների սահմանափակումն է, որը կարող է դրսևորվել անձի պարտավորությունների կատարմանը համարժեք գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու արգելքի ժամանակավոր կիրառմամբ: Այսինքն՝ սույն գործով վիճարկվող նորմերում ամրագրված իրավակարգավորման գլխավոր միջոցը (մեթոդը) իր պարտավորություններին համարժեք անձի սահմանադրական իրավունքի ժամանակավոր սահմանափակմամբ նրա սահմանադրական պարտականության կատարումն ապահովելն է:

Անդրադառնալով հիշյալ միջոցի կիրառման իրավաչափության գնահատման խնդրին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում հարցը դիտարկել ինչպես վիճարկվող, այնպես էլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի այլ նորմերի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ համապատասխան իրավակարգավորումներ նախատեսող նորմերի համալիր վերլուծության շրջանակներում, մասնավորապես պարզելու համար, թե համարժեքության առումով համադրելի՞ են, արդյոք, վիճարկվող նորմերը սեփականազրկման գործընթացի իրավակարգավորումների համատեքստում:

ՍԴՈ-1153, 3 հունիսի, 2014 թ.

6. .... Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապրանքներ վերցնելու ինստիտուտը կոչված է ապահովելու մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթի արդյունավետությունը, որը հնարավորություն է ընձեռում մաքսային մարմնին հայտնաբերելու և կանխելու մաքսային իրավախախտումները: Իսկ վերջինն այն հանրային շահն է, որն արդարացնում է ապրանքներ տեղափոխող անձանց իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող կանոնակարգումն ամրագրված է «Վերցված ապրանքները վերադարձնելու ժամկետը» վերտառությամբ հոդվածում, արձանագրում է, որ այս հոդվածի ենթադրյալ նպատակը պետք է ուղղված լիներ ապահովելու Մաքսային օրենսգրքով նախատեսված ապրանքների վերցման ինստիտուտի իրացման տրամաբանական զարգացումը՝ ապրանքները վերադարձնելու ժամկետներ սահմանելու միջոցով: Նման հետևությունը բխում է թե՛ վերաբերելի նորմերի համադրված վերլուծությունից, թե՛ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կանոնակարգման պահանջից, համաձայն որի՝ «....հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը....»: Այստեղից հետևում է, որ քննարկվող հոդվածի շրջանակներում տեղ են գտել ոչ միայն Մաքսային օրենսգրքի 212-րդ հոդվածով նախատեսված կանոնակարգման կիրառման արդյունքում ապրանքներ վերցնելու պարագայում դրանց վերադարձման ժամկետները, այլ նաև մեկ այլ ինստիտուտ՝ տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման համար ապրանքների վերցման ինստիտուտը, մինչդեռ որևէ այլ նորմ Մաքսային օրենսգրքում չի կանոնակարգում ո՛չ մաքսային մարմնի համապատասխան լիազորությունը, ո՛չ էլ այդ լիազորության իրացման ընթացակարգը: Արդյունքում՝ որոշակի կոնկրետ իրավահարաբերության կանոնակարգմանը նվիրված ընթացակարգային նորմ պարունակող հոդվածում տեղ է գտել մեկ այլ իրավահարաբերության կարգավորման ընթացակարգային նորմ՝ համապատասխան իրավահարաբերության նյութաիրավական կանոնա-

կարգման բացակայության պայմաններում, ինչի հետևանքով, մի կողմից, առաջ է եկել անձի սեփականության իրավունքին միջամտության իրավիճակ՝ առանց մաքսային մարմնի համապատասխան լիազորության, մյուս կողմից՝ այն իրացվում է անհրաժեշտ կառուցակարգերի բացակայության պայմաններում: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում անձն իր սեփականության իրավունքին միջամտության գործընթացում զրկվում է իր իրավունքն արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից:

7. .... Սեփականությունից զրկելու տեսանկյունից վիճարկվող դրույթի գնահատման համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթն ուսումնասիրել դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթների հետ, այդ թվում բացահայտել վիճարկվող դրույթը ներառող իրավանորմի հետապնդած նպատակը: Այսպես, Մաքսային օրենսգրքի՝ վիճարկվող խմբագրությամբ 224-րդ հոդվածը սահմանում է՝ անձը, որից սույն օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով կամ տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով վերցվել են ապրանքներ՝ անկախ սեփականության պատկանելությունից, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների և պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Վիճարկվող կանոնակարգման համատեքստում ապրանքների վերցման նպատակն ուղղակիորեն բխում է նույն այդ կանոնակարգումից, մասնավորապես՝ ապրանքները վերցվում են տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով: Նշված բնորոշումից ակնհայտ է, որ այն հանդես չի գալիս որպես պատասխանատվության միջոց, չնայած որ իրականացվում է անձի կամքին հակառակ՝ որպես հարկադիր գործողություն (այսինքն՝ պետության կողմից կիրառվող հարկադրանքի միջոց է), քանզի տարբեր են սեփականությունից զրկելու և քննարկվող ինստիտուտի նպատակները: Սեփականությունից զրկելը դիտվում է որպես պատասխանատվության միջոց, որն առաջացնում է անբարենպաստ հետևանքներ սեփականատեր անձի համար օրենքի պահանջներին չհամապատաս-խանող վարքագիծ դրսևորելու պարագայում, իսկ խնդրո առարկա իրավակար-գավորումը պատասխանատվության միջոց չէ, այլ միտված է ապահովելու անձի կողմից օրենքով նախատեսված պարտավորության կատարումը: Բացի դրանից, այն հանգամանքը, որ ապրանքների վերցնումն իրականացվում է պարտավորության կատարումն ապահովելու նպատակով, վկայում է, որ պարտավորության կատարման արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակումները վերանալու են, այսինքն՝ ապրանքների վերցման պարագայում երաշխավորվում է տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնումը, մինչդեռ սեփականությունից զրկելն անվերապահ է: Այս մասին է վկայում նաև Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածում ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ «....կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների և պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում»:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքին՝ խնդրո առարկա միջամտությունն իր բնույթով չի հանդիսանում սեփականությունից զրկում ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի իմաստով:

8. .... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև վիճարկվող դրույթի ուժով սեփականության զրկում տեղի չի ունենում, այնուհանդերձ, ի հայտ է գալիս անձի սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորություններից օգտվելու հնարավորությունների բացակայություն, քանի որ ակնհայտ է, որ վերցման ենթարկված գույքը, որոշակի ժամանակահատվածում որպես սեփականություն հանդիսացող օբյեկտ, սեփականատիրոջ կողմից տնօրինվել, օգտագործվել կամ կառավարվել չի կարող: Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել քննության առարկա կանոնակարգումը ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սեփականության իրավունքը շրջակա միջավայրի պաշտպանության, այլ անձանց, հանրության, պետու-

թյան իրավունքների և օրինական շահերի հետ ներդաշնակ իրականացնելու սահմանադրաիրավական սկզբունքի տրամաբանության լույսի ներքո: Ինչպես նշվեց, վիճարկվող կանոնակարգումը նպատակ է հետապնդում ապահովել մաքսային իրավահարաբերությունների շրջանակներում տուգանքի, մաքսային վճարների գանձումը, այսինքն՝ կոչված է ապահովելու համապատասխանաբար տուգանք վճարելու, մաքսային վճար կատարելու համար պատասխանատու անձի կողմից իր պարտավորության կատարումը: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1073 որոշմամբ, քննության առնելով հարկային իրավահարաբերությունների շրջանակներում կիրառվող արգելանքի ինստիտուտը, որը կոչված է ապահովելու անձի կողմից իր հարկային պարտավորությունների կատարումը, որոշակի իրավապայմանների առկայության պայմաններում իրավաչափ է համարել սեփականության իրավունքի սահմանափակումը՝ ի կատարումն ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված՝ անձի պարտավորության: Այդուհանդերձ, սույն գործով վիճարկվող դրույթը, նախատեսելով սեփականության իրավունքի սահմանափակում՝ առանց վերոնշյալ որոշման մեջ արձանագրված իրավապայմանների, միաժամանակ տարբերակում չի դնում իրավախախտում կատարած սուբյեկտի և այլ սուբյեկտների սեփականության հարցում: Եթե ՍԴՈ-1073 որոշմամբ քննության առնված սեփականության իրավունքի սահմանափակումն իրացվում է ի ապահովումն անձի կողմից իր պարտավորությունների կատարման՝ իր իսկ գույքի հաշվին, այն էլ ոչ ամբողջ, այլ միայն չկատարված պարտավորության չափով, ապա Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված կանոնակարգման պայմաններում ոչ միշտ է, որ անձի մեղքով օրենքի խախտման հետևանքով իր սեփականության իրավունքն է սահմանափակվում՝ որպես երաշխիք ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների կատարման: Քննարկվող կանոնակարգման պայմաններում հնարավոր է երկու իրավիճակ՝ առաջինը, երբ անձը ՀՀ մաքսային սահմանով տեղափոխում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, երկրորդ դեպքում՝ այլ անձի կամ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքը: Մասնավորապես, նման իրավիճակ է առաջանում, երբ ապրանք տեղափոխողն օգտվում է մաքսային բրոքերի (միջնորդ) ծառայություններից՝ քաղաքացիաիրավական պարտավորությունների շրջանակներում: Եթե առաջին դեպքում սեփականության իրավունքին միջամտությունը կարող է իրավաչափ համարվել, քանզի անձն իր իսկ մեղքով թույլ տրված խախտման համար ենթարկվում է վարչական տույժի, և որպես դրա կատարման երաշխիք՝ իր գույքի նկատմամբ նրա սեփականության իրավունքն է սահմանափակվում, ապա երկրորդ դեպքում անձը կրում է բացասական հետևանքներ՝ անկախ իր մեղքից, մեկ այլ անձի վարքագծի (գործողությունների կամ անգործության)՝ այսինքն, վերջինիս կողմից ստանձնված քաղաքացիաիրավական պարտականությունների ոչ պատշաճ կատարման պատճառով:

.... Զարգացնելով ՍԴՈ-920 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, քանի որ պատասխանատվության սուբյեկտ է համարվում անձը, ով թույլ է տվել օրենքի խախտումը, հետևապես՝ պարտավորության կատարումն ապահովելու միջոցները պետք է իրացվեն բացառապես իրավախախտում թույլ տված և պատասխանատվության ենթարկված անձի գույքի հաշվին: Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ եթե ապրանքների վերցման նպատակը տուգանքի վճարման, մաքսային վճարների կատարման պարտավորության ապահովումն է, ապա այն չի կարող իրացվել՝ անկախ վերցման ենթակա ապրանքի սեփականության պատկանելությունից, քանի որ իրավախախտը համապատասխան պարտավորությունը պատշաճ կատարելու շահագրգռվածություն կարող է ունենալ իր սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու և սեփական գույքի հանդեպ բացասական հետևանքներ կրելուց խուսափելու հեռանկարի պարագայում, մինչդեռ վիճարկվող կանոնակարգումը չի ապահովում պարտավորության կատարման շահագրգռվածության և սեփականության իրավունքի սահ-

մանափակման՝ որպես նպատակի և միջոցի հարաբերակցության տրամաբանական փոխպայմանավորվածությունը: Ավելին, հիշյալ իրավակարգավորմամբ գործնականում խախտվում են իրավական պատասխանատվության ինստիտուտի կիրառման հանրային-իրավական սկզբունքները (անհատականացում, մեղքի առկայություն և այլն), որի արդյունքում այն չի կարող արդյունավետորեն ծառայել դրանցով հետապնդվող նպատակներին:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ անձի ոչ իրավաչափ վարքագծով (գործողությունով կամ անգործությամբ) պայմանավորված անձի սեփականության իրավունքի սահմանափակումը՝ ապահովելու համար խախտումը թույլ տված անձի կողմից իր պարտավորության կատարումը, հանդես է գալիս որպես ոչ իրավաչափ միջամտություն իրավախախտում թույլ չտված անձի սեփականության իրավունքի նկատմամբ և աղերսներ չունի մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի բնականոն ընթացքի երաշխավորման անհրաժեշտության հետ:

9. .... Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ Մաքսային օրենսգրքի վիճարկվող դրույթից պարզ չի դառնում, թե տուգանք նշանակելու պարագայում գույքի սեփականատերը կարող է վճարել տուգանքն իրավախախտում կատարած սուբյեկտի փոխարեն, թե՝ ոչ: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման հնարավորության բացակայության պայմաններում մեծանում է անձի իրավունքների խախտման ռիսկը, քանի որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման վերացումը պայմանավորվում է մեկ այլ անձի վարքագծով, և գույքի սեփականատերը իրավախախտում կատարած սուբյեկտի կողմից երկարատև ժամանակահատվածում տուգանքը չվճարելու պարագայում կարող է կրել լուրջ ֆինանսական և այլ կորուստներ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ թեև սեփականության իրավունքի իրացումը կարող է ժամանակավորապես կասեցվել տուգանքների, մաքսային վճարների կատարման ապահովման նպատակով, սակայն այս հիմքով սեփականության իրավունքին միջամտության օրենսդրական կանոնակարգումը պետք է հնարավորություն ընձեռի անձին պաշտպանելու իր իրավունքը: Անձի սեփականության իրավունքին միջամտությունը պետք է բխի տվյալ անձի կողմից տուգանքի և մաքսային վճարի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, պետք է լինի բավարար և անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար, իրավասու մարմնի լիազորությունը և այդ լիազորության ընթացակարգը պետք է որոշակիորեն ամրագրված լինեն օրենսդրական մակարդակում՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտացոլված՝ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալին.

նախ՝ վեճի առարկա իրավակարգավորումը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (մասնավորապես՝ 41-րդ հոդվածի 1-ին մաս, 36-րդ հոդվածի 4-րդ մաս) պահանջներին,

երկրորդ՝ Մաքսային օրենսգրքով սահմանված չէ մաքսային տուգանքների և պարտավորությունների կատարման նպատակով ապրանքներ վերցնելու ընթացակարգ, իսկ 224-րդ հոդվածում «վերցնել» եզրույթը, ի տարբերություն 212-րդ հոդվածով նախատեսված՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտների առնչությամբ գործողության, վերաբերում է ոչ թե մաքսային իրավախախտումների բացահայտմանն ու կանխարգելմանը, այլ տուգանքի, մաքսային վճարների և պարտավորությունների կատարման ապահովմանը,

երրորդ՝ վեճի առարկա իրավադրույթի կիրառման պայմաններում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ վերցված ապրանքը հետագայում չի կարող դառնալ բռնագանձման առարկա, որի պարագայում այդ ապրանքը վերցնելը չի կարող նպատակ ունենալ ապահովելու մաքսային տուգանքների և վճարների կատարման պարտականությունը,

չորրորդ՝ վիճարկվող դրույթն այնքանով, որքանով տարբերակում չի դնում տարբեր սեփականատերերի գույքի միջև և առաջացնում է անբարենպաստ իրավական հետևանքներ այն սուբյեկտների համար, որոնց վարքագծով պայմանավորված չէ իրավախախտման փաստը, հանգեցնում է վերջիններիս սեփականության իրավունքի իրացման ոչ իրավաչափ միջամտության:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱԶԱՏ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–152, 27 հունվարի, 1999 թ.

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 հոդվածի երրորդ մասի համաձայն՝ պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը:

ՀՀ Սահմանադրության 4 հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Տնտեսական գործունեության ազատությունը բացարձակ ազատություն չէ և միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխան այն կարող է սահմանափակվել: Ընդ որում, սահմանափակման բնույթը հիմնավորում է օրենսդիրը՝ հաշվի առնելով, որ դա հնարավոր է միայն այլ անձանց իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչում ու հարգանք ապահովելու, բարոյականության, հասարակական կարգուկանոնի ու ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջները ժողովրդավարական հասարակարգում բավարարելու համար (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29 հոդվածի երկրորդ մաս, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12 հոդվածի 3–րդ կետ):

Ազատ տնտեսական մրցակցության սկզբունքն իր հերթին բխում է տնտեսական ազատության և հավասարության սկզբունքներից և նշանակում է շուկայական տնտեսության ներսում բոլոր տնտեսավարող սուբյեկտների հավասարություն, պետության կողմից նրանց համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության դրույթների, սահմանադրականության միջազգային սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ ազատ տնտեսական մրցակցությունը չի բացառում պետության ու հասարակության անվտանգության և օրինական շահերի, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով պետության կողմից արգելված, պետական լիցենզավորման ենթակա, բնական կամ պետական մենաշնորհի հանդիսացող կամ բացառիկ իրավունքներով կարգավորվող գործունեության տեսակների առկայությունը:

Նման ոլորտների հստակեցումը, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները սակայն կանոնակարգվում են Սահմանադրությամբ և օրենքներով՝ ապահովելու համար նաև հակամենաշնորհային այնպիսի քաղաքականության իրականացում, որը երաշխավորում է բարեխիղճ մրցակցություն և տնտեսական ու սոցիալական առաջընթաց:

Միայն օրենսդիր իշխանությունն է իրավասու որոշել այդ սահմանափակումների շրջանակներն ու բնույթը՝ որպես համընդհանուր պարտադիր վարքագծի կանոններ: Իսկ այն դեպքում, երբ առանձին իրավահարաբերություններ դեռևս օրենքով կարգավորված չեն, կառավարությունը այն կարող է լրացնել ոչ միայն որպես օրենսդրական նախաձեռնության սուբյեկտ, այլև Սահմանադրության 78 հոդվածի հիման վրա կառավարության գործունեու-

թյան ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությանն ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում և չեն կարող հակասել օրենքներին:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործի շրջանակներում էական է, նախ՝ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը: ՀՀ Սահմանադրության 33.1. հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք»: Այս ձևակերպումից հետևում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն անձի սահմանադրական իրավունքն է, և որ այդ գործունեության բովանդակությունը (հատկանիշները), իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի համաձայն երաշխավորվում է **տնտեսական գործունեության** ազատությունը, սակայն այդպիսի գործունեության հասկացության նորմատիվ-իրավական բնորոշումը (հատկանիշները) ընթացիկ օրենսդրությամբ լիարժեք չի հստակեցված: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս): Ձեռնարկատիրական գործունեության, որպես տնտեսական առանձին գործունեության, բովանդակության իրավական բնորոշումից բխում է, որ այն անձի՝ ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունն է, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է (ՀՀ քաղ. օրենսգրքի 2-րդ հոդված):

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը հնարավորինս ամրագրել է «ձեռնարկատիրական գործունեությունը» բնութագրող նվազագույն հատկանիշները՝ չբացառելով լրացուցիչ հատկանիշների ներառումը:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, գործելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իր սահմանադրաիրավական գործառույթի, այն է՝ **օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու** գործառույթի և այդ գործառույթն իրականացնելիս՝ **իրավունքի զարգացմանը նպաստելու** իրավասության շրջանակներում, իր թիվ 3-1161 (ՏԴ) որոշման մեջ մեկնաբանել է խնդրո առարկա հասկացության օրենսդրական բովանդակությունը՝ ըստ էության որոշակիացնելով դրա հատկանիշների շրջանակը:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունն առանձին երկրների օրենսդրական պրակտիկայում նկարագրվում է նաև թվային չափանիշների միջոցով: Սակայն նման մոտեցումն ունի նաև իր բարդությունները: ՀՀ օրենսդրության մեջ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունը թվային չափանիշների միջոցով արտահայտելը կստեղծի մի իրավիճակ, երբ, կախված գործի առանձնահատկություններից ու կոնկրետ հանգամանքներից, միևնույն թվաքանակով իրականացված գործարքները մի դեպքում կարող են համարվել ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում կատարված, մյուս դեպքում՝ ոչ:

Վիճարկվող օրենսդրական դրույթների և դրանց իրավակիրառական պրակտիկայի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանց բովանդակությունն այնպիսին է, որ հիմնականում չի առաջացնում իրավական անորոշություն, և դրանք իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս իրավասուբյեկտին կանխատեսելու իր վարքագծի իրավական հետևանքները: Այսուհանդերձ, ՀՀ սահմա-

նադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովը, հաշվի առնելով նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները, պետք է դատական պրակտիկան հաշվի առնելով առավել հստակություն մտցնի «ձեռնարկատիրական գործունեության» և «տնտեսական գործունեության» հասկացությունների՝ հատկապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առավել ամբողջական և միանական օրենսդրական ձևակերպման հարցում, հնարավորինս բացառելով տարաբնույթ մեկնաբանություններն ու կոռուպցիոն ռիսկը:

8. ՀՀ Սահմանադրության 33.1. հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Այդ իրավունքը ներառում է բոլոր իրավական հնարավորությունները, որոնք անհատի համար նախապայմաններ են ստեղծում ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու իր տնտեսական գործունեությանն առնչվող հարցերով: Այդ իրավունքը ենթադրում է արդարացի մրցակցության ազատություն, առանց սահմանափակումների տնտեսական կազմակերպություններ ձևավորելու, իր գործունեության բնույթն ու ձևը փոխելու, գոյություն ունեցող տնտեսական կազմակերպությունները լուծարելու, պայմանագրեր կնքելու հնարավորություններ: Ձեռնարկատիրական գործունեության իրավունքի անբաժանելի բաղադրատարրն է կազմում նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ցանկություն ունեցող անձի՝ առանց արհեստական խոչընդոտների շուկա մտնելու և, ցանկության դեպքում, այդ շուկայից դուրս գալու հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի պահանջները, որևէ կերպ չեն կարող խոչընդոտել ձեռնարկատիրական գործունեության սահմանադրական իրավունքի իրացմանը:

ՍԴՈ–816, 18 հուլիսի, 2009 թ.

8. .... Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետում «ձեռնարկատիրական գործունեությամբ» բառակապակցության առկայությունից բխում է, որ հոդվածում ամրագրված «գործունեության» բառը վերաբերում է նաև տնտեսավարող սուբյեկտների **ձեռնարկատիրական գործունեությանը**: Ինչ վերաբերում է «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակությանը, ապա այն մեկնաբանվել է սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ–780 որոշմամբ:

.... Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի 1-ին պարբերության, 83.5. հոդվածի 3-րդ կետի, 89 հոդվածի 4-րդ կետի դրույթների բովանդակությունը, ինչպես նաև սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ–780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից բնապահպանական և բնօգտագործման վճարների գումարները հաշվարկելուն ուղղված գործունեությունն իրենից ներկայացնում է **սեփականատիրոջ՝ պետության առջև տնտեսավարող սուբյեկտի պայմանագրային պարտավորությունների կատարումն ապահովող գործունեություն,** որը չի ներառվում տնտեսավարող սուբյեկտի «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակային ծավալներում: Հետևաբար, բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողների կողմից վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս հարկային մարմինը վերահսկում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունը, այն է՝ գույքի օգտագործման, ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ընթացքը և դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, այլ վերջինիս կողմից սեփականատիրոջ առջև ստանձնված **պայմանագրային պարտավորությունների կատարումը:** Ըստ այդմ էլ, Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ կետը չի պարտադրում, որ պայ-

մանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության և դրանց իրականացման համար անհրաժեշտ մյուս գործողությունների իրականացման կարգերը սահմանվեն օրենքով: Դրանք կարող են սահմանվել նաև կառավարության որոշմամբ:

Ինքնանպատակ չէ այն, որ ի տարբերություն հսկողական և վերահսկողական գործառույթների իրականացման գործընթացի փուլեր հանդիսացող վերստուգման, չափագրման, հսկիչ գնման, հարկվող օբյեկտների հաշվարկի և վերահաշվարկի (գնահատման և վերագնահատման) կարգերի, որոնք անմիջականորեն առնչվում են տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությանը և սահմանված են օրենքով, հսկողական և վերահսկողական գործառույթների իրականացման գործընթացի փուլեր հանդիսացող **հարկային պարտավորությունների** հաշվարկի և վերահաշվարկի (գնահատման և վերագնահատման), հարկային հաշվարկների ճշտման և հարկային պարտավորությունների ճշգրտման կարգերը, որոնք անմիջականորեն առնչվում են տնտեսավարող սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում պարտավորությունների կատարմանը, օրենքի հիման վրա սահմանված են կառավարության որոշմամբ:

ՍԴՈ–902, 7 հուլիսի, 2010 թ.

5. .... ՀՀ Սահմանադրության 8–րդ հոդվածով որպես սահմանադրական կարգի հիմունք հռչակված՝ տնտեսական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ենթադրում է գործատուին այնպիսի իրավազորությունների տրամադրում, որոնք նրան թույլ կտան տնտեսական գործունեության արդյունավետության և իր գույքի ռացիոնալ օգտագործման նպատակներից ելնելով ինքնուրույնաբար և իր ռիսկով ընդունել կազմակերպչական և կադրային քաղաքականությանն ուղղված որոշումներ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թ. փետրվարի 24–ի ՍԴՈ–792 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության պաշտպանության ներքո գտնվող վերոհիշյալ սահմանադրական ազատությունների փոխհարաբերակցությանը՝ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ աշխատանքի ընտրության ազատությունը պայմանավորված է, նախ՝ աշխատանքային հարաբերությունների հաստատման ու դադարման երկկողմ ազատ կամահայտնության ապահովման օրենսդրական հստակ երաշխիքների առկայությամբ, որոնք նաև անհրաժեշտ են ՀՀ Սահմանադրության ինչպես 32–րդ հոդվածում (1–ին մաս) նախատեսված անձի իրավունքի իրացման, այնպես էլ 8–րդ հոդվածում (2–րդ մաս) ամրագրված սկզբունքին համապատասխան տնտեսավարման շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ զարգացման համար:

....

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող իրավակարգավորումը բխում է այն իրողությունից, որ օբյեկտիվ իրականության մեջ կարող են առաջանալ իրավիճակներ, երբ աշխատանքում վերականգնումը գործնականում կլինի անհնարին, ինչպես նաև բխում է տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությունը երաշխավորելու իրավաչափ նպատակից, և նկատի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային իրավակարգավորումն ու միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **տնտեսական, տեխնոլոգիական և կազմակերպչական պատճառներով աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքերում աշխատողին աշխատանքում չվերականգնելու ինստիտուտն ինքնին իրավաչափ է:**

ՍԴՈ–903, 13 հուլիսի, 2010 թ.

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 և 33.1–րդ հոդվածներին համապատասխան՝ տնտեսական հարաբերությունների կանոնակարգման հիմքում, ի թիվս այ-

լոց, ընկած են տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության սահմանադրական սկզբունքները: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այն է՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Վերջինս հանդես է գալիս որպես տնտեսավարող սուբյեկտի ինքնուրույն, իր ռիսկով ու օրենքով սահմանված կարգով իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացվել օրենքով սահմանված՝ տարբեր կազմակերպաիրավական ձևերի շրջանակներում: Ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևը խոշոր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու առավել բարդ, բայց արդյունավետ եղանակն է:

Բաժնետիրական ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հավելյալ գույքային միջոցներ (շահութաբաժիններ) ստանալու մտադրությամբ միավորված անձանց կազմակերպություն ունի ոչ միայն առանձին բաժնետերերի մասնավոր շահերի հավասարակշռման, այլև **ընդհանուր կորպորատիվ շահերի ապահովման խնդիր**: Հակառակ դեպքում ընկերության կառավարումը կդառնա անարդյունավետ, իսկ դա հետագա անդրադարձ կունենա հենց նույն բաժնետերերի սեփականության իրավունքի իրականացման արդյունավետության վրա:

Բաժնետիրական ընկերության ձեռնարկատիրական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ներառում է իր հայեցողությամբ բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու, այդ բաժնետոմսերի անվանական արժեքը որոշելու, իր կանոնադրական կապիտալը նվազեցնելու կամ ավելացնելու, բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու կամ մեծացնելու ազատությունը: Բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխությունը կարող է կատարվել ինչպես կանոնադրական կապիտալի ավելացմամբ, այնպես էլ առանց կանոնադրական կապիտալի չափի փոփոխության:

7. Բաժնետոմսերի համախմբումը երկու և ավելի բաժնետոմսերի փոխարկումն է ավելի մեծ անվանական արժեք ունեցող նույն տեսակի բաժնետոմսերի՝ առանց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխության: Որպես կանոն, բաժնետոմսերի համախմբում իրականացվում է, ի թիվս այլոց, մանր բաժնետերերի թվաքանակի կրճատման, հավանական ներդրողին հնարավորինս փոքր քանակով արժեթղթերի փաթեթ առաջարկելու նպատակով: Բաժնետոմսերի համախմբումը տնտեսապես արդարացված գործընթաց է, որը կազմում է բաժնետիրական ընկերության՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի, տնտեսական ազատության դրսևորումներից մեկը:

Ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ընդունված նշված գործընթացի օբյեկտիվ և անխուսափելի արդյունքն է կոտորակային բաժնետոմսերի առաջացումը: Սակայն նման բաժնետոմսերի առկայությունը նպատակահարմար չէ ինչպես արժեթղթերի շուկայի կայունության ապահովման նկատառումներից ելնելով, այնպես էլ բաժնետիրական ընկերության արդյունավետ կառավարման տեսանկյունից:

9. .... Իրավական պետության կողմից ազատ տնտեսական գործունեության կարգավորումը, ի թիվս այլոց, պետք է նպատակ հետապնդի ապահովելու արդարացի հավասարակշռություն տնտեսական գործունեության մասնակիցների, տվյալ դեպքում՝ բաժնետիրական ընկերության խոշոր և մանր բաժնետերերի շահերի միջև: Այս նպատակն օրենսդրից պահանջում է նախատեսել պաշտպանության այնպիսի մեխանիզմ, որը կապահովի իրավական

երաշխիքներ՝ բաժնետոմսերի համախմբման գործընթացում խոշոր բաժնետերերի կողմից կամայականության դրսևորումների դեմ:

ՍԴՈ–991, 11 հոկտեմբերի, 2011 թ.

7. .... Հետևաբար, աշխատանքային հարաբերությունների այդպիսի իրավակարգավորումը համապատասխանում է աշխատանքի անխտրական և ազատ ընտրության սահմանադրաիրավական այն պայմաններին, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության 14.1–րդ, 32–րդ և 37–րդ հոդվածների պահանջներից, ՀՀ Սահմանադրության 48–րդ հոդվածի 2–րդ և 12–րդ կետերով նախատեսված՝ պետության հիմնական խնդիրներից, քանի որ.

– բացառում է տարիքային հիմքով գործատուի հայեցողական նախաձեռնությամբ միակողմ լուծել աշխատանքային պայմանագիրը,

– երաշխավորում է աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների ձևավորման ազատությունը, երկկողմ ազատ կամաարտահայտությունը,

նպաստում է.

– աշխատուժի շուկայի (զբաղվածության) և տնտեսական հարաբերությունների ազատ ձևավորմանն ու զարգացմանը,

– գործատուի և կենսաթոշակային տարիքի հասած աշխատողների իրավունքների և օրինական շահերի ներդաշնակմանը,

– սոցիալական ապահովության, աշխատանքային հարաբերությունների զարգացման և բնակչության զբաղվածության բնագավառներում պետության կողմից նպատակային ծրագրերի իրականացմանը:

ՍԴՈ–1007, 22 դեկտեմբերի, 2011 թ.

5. Քննության առարկա սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունը սահմանադրական մակարդակով երաշխավորելով տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը (հոդված 8), միաժամանակ սահմանադրական պահանջ է առաջադրում, որ՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ» (հոդված 45): Սահմանադրական նման իրավակարգավորումը երաշխիք է հանրային և մասնավոր շահերի ներդաշնակման, համապետական խնդիրների լուծման անհրաժեշտ նախադրյալների ստեղծման համար:

.... Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ քննության առարկա հոդվածով նախատեսված իրավակարգավորումը Հայաստանի Հանրապետությունում գործում է 1998 թվականից, հոդվածի իրավադրույթների հետագա փոփոխությունները իրավակարգավորման բնույթի ու բովանդակության էական վերանայումներ չեն նախատեսել: Քննության առարկա հիմնախնդրի շրջանակներում, թերևս, կարելի է առանձնացնել 2001 թ. դեկտեմբերի 14–ի ՀՕ–289 օրենքով կատարված փոփոխությունը, որով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28–րդ հոդվածում «տասնօրյա» բառը փոխարինվեց «երեսնօրյա» բառով՝ առավել նպաստավոր դարձնելով ձեռնարկատիրոջ համար իր պարտականությունների կատարումը:

ՍԴՈ–1139, 18 փետրվարի, 2014 թ.

5. ՀՀ Սահմանադրության 8–րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Այն իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն է ապահովում անձանց (տնտեսավարող սուբյեկտների) համար՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեություն

իրականացնելու համար: Միաժամանակ, այդ ազատության սկզբունքը բացարձակ չէ և ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների առջև դնում է կոնկրետ պարտականություններ: Այսպես, պետության հիմնական գործառույթն է ապահովել այդ ազատության երաշխավորման անհրաժեշտ իրավական և տնտեսական պայմաններ: Սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմի բովանդակությունից ուղղակիորեն բխում է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտաբար պետք է ստեղծվեն տնտեսական ողջ համակարգի կենսագործունեության առավել բարենպաստ պայմաններ՝ հիմնված ազատ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների կազմակերպման ու գործունեության ազատության, իրավահավասարության, այդ գործընթացում պետության դերի առավելագույնս հստակեցման սկզբունքների վրա:

ՍԴՈ–1203, 28 ապրիլի, 2015 թ.

5.... ՀՀ Սահմանադրության 33.1–րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք»:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–780 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ արդեն իսկ բացահայտել է «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը. «....ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն անձի սահմանադրական իրավունքն է, և որ այդ գործունեության բովանդակությունը (հատկանիշները), իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման»: Դատարանը վերահաստատում է իր այն մոտեցումը, որ «.... Այդ իրավունքը ներառում է բոլոր իրավական հնարավորությունները, որոնք անհատի համար նախապայմաններ են ստեղծում ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու իր տնտեսական գործունեությանն առնչվող հարցերով: Այդ իրավունքը ենթադրում է արդարացի մրցակցության ազատություն, առանց սահմանափակումների տնտեսական կազմակերպություններ ձևավորելու, իր գործունեության բնույթն ու ձևը փոխելու, գոյություն ունեցող տնտեսական կազմակերպությունները լուծարելու, պայմանագրեր կնքելու հնարավորություններ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը որևէ կերպ չի կարող խոչընդոտել ձեռնարկատիրական գործունեության սահմանադրական իրավունքի իրացմանը:

ՑԵՍԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՍԴՈ–1106, 10 սեպտեմբերի, 2013 թ.

5. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմերի սահմանադրականությունը պարզելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ դրանցով նախատեսված ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը և վերաբերելի օրենսդրական կարգավորումներին: Այսպես. պահանջի զիջման պայմանագրի (ցեսիայի) ինստիտուտը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք)՝ «Անձանց փոփոխվելը պարտավորության մեջ» վերտառությամբ 25–րդ գլխով, որի 397–րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է. «Պարտատիրոջը պարտավորության հիման վրա պատկանող իրավունքը (պահանջը) կարող է նրա կողմից այլ անձի փոխանցվել գործարքով (պահանջի զիջում) կամ անցնել այլ անձի՝ օրենքի հիման վրա»: **Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմում հիշատակված ցեսիայի պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագիր է, որի նկատմամբ կիրառելի են ցեսիայի ինստիտուտին վերաբերելի ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթները, իսկ տվյալ օրենսդրական դրույթների հիման վրա առաջացած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ,**

անկախ այն հանգամանքից, որ դրանք առնչվում են նաև հարկային իրավահարաբերությունները կանոնակարգող նորմերին: Ինչպես վկայում է օրենսգրքի կանոնակարգումը՝ ցեսիայի բովանդակությունը հանգում է որոշակի պարտավորության հիման վրա առկա իրավունքի կամ պահանջի անցմանն այլ անձի: Տվյալ պարագայում տեղի է ունենում պարտավորության մեջ պարտատիրոջ փոփոխություն. ցեսիայի պայմանագրով փոխանցվում է միայն պահանջի իրավունքը, բայց ոչ պարտքը: Պարտապանի փոփոխություն ցեսիայի միջոցով չի իրականացվում: Ընդ որում, պարտավորության մեջ պարտատիրոջ փոփոխության համար պարտապանի համաձայնությունն անհրաժեշտ չէ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 403-րդ հոդվածն էլ նախատեսում է, որ «Առանց պարտապանի համաձայնության պահանջի զիջումն այն պարտավորությամբ, որում պարտատիրոջ անձն էական նշանակություն ունի պարտապանի համար, չի թույլատրվում, բացառությամբ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի»:

Ցեսիայի պայմանագրի օբյեկտ կարող է լինել ցանկացած իրավունք կամ պահանջ, բացառությամբ «Պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքների՝ ներառյալ ալիմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջները» (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 398): Փոխանցվող իրավունքի ծավալի առնչությամբ օրենսգիրքը սահմանում է, որ «Սկզբնական պարտատիրոջ իրավունքը նոր պարտատիրոջն է անցնում իրավունքի անցման պահին գոյություն ունեցող ծավալով և պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Մասնավորապես, նոր պարտատիրոջն են անցնում պարտավորության կատարումն ապահովող, ինչպես նաև պահանջի հետ կապված այլ իրավունքները՝ ներառյալ չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքը» (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 399): Այս դրույթի տրամաբանությունից հետևում է նաև, որ հետագայում պարտավորությունը չկատարելու պարագայում կամ այն կետանցով կատարելու դեպքում **օրենքով նախատեսված տոկոսները (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդված**) պահանջելու իրավունքը ևս ծագում է նոր պարտատիրոջ մոտ. նման պահանջը ևս ուղղվում է ցեսիայի պայմանագրով որպես պարտապան հանդես եկող անձի դեմ, քանզի դառնում է սկզբնական պահանջի տրամաբանական շարունակությունը և կազմում դրա մի մասը:

Օրենսգիրքը կանոնակարգում է նաև սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության առնչությամբ ծագող հարաբերությունները: Մասնավորապես, օրենսգրքի 405-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նրան փոխանցված պահանջի անվավերության համար, սակայն պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից այդ պահանջը չկատարելու համար, բացի այն դեպքից, երբ սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև երաշխավորություն է ստանձնել պարտապանի համար»: Նշված դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսում է սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության երկու դեպք միայն, և չի նախատեսում այլ դեպքերի համար որևէ դիսպոզիտիվ կարգավորում, այսինքն՝ բացառում է սկզբնական պարտատիրոջ պատասխանատվության որևէ այլ դեպքի սահմանման հնարավորություն, **այդ թվում՝ կողմերի համաձայնությամբ,** քանզի օրենսգրքի 405-րդ հոդվածը նախատեսում է իմպերատիվ բնույթի իրավադրույթ: Այս առումով սահմանադրական դատարանը գտնում է, որ ցեսիայի ինստիտուտի առնչությամբ առկա չէ որևէ հակասություն, մի կողմից, հարկային օրենսդրության, մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումների միջև: Իր հերթին իրավակիրառ պրակտիկան այս ինստիտուտի կիրառման պա-

ռագայում պետք է առաջնորդվի դրա օրենսդրական համակարգային կանոնակարգման ամբողջական տրամաբանությամբ:

6. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկային իրավահարաբերություններում ցեսիայի պայմանագրի և դրա իրավական հետևանքների առանձնահատկություններն ի հայտ են գալիս հետևյալ հարցադրման շրջանակներում. արդյո՞ք ցեսիայի պայմանագրի կնքմամբ դադարում է ցեդենտի/հարկատուի հարկային պարտավորությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ հարկատուն հանդես է գալիս մի կողմից՝ որպես հարկատու՝ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում, և որպես ցեդենտ/սկզբնական պարտատեր՝ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակերում: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում հարկատուն/ցեդենտը պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից նոր պարտատիրոջ/ցեսիոնարի նկատմամբ ցեսիայի պայմանագրով պարտավորության կատարման համար, սակայն հարկային իրավահարաբերություններում շարունակում է կրել համապատասխան պարտավորությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային իրավահարաբերությունների շրջանակներում կնքված ցեսիայի պայմանագրով՝

ա) հետագայում պարտավորությունը չկատարելու կամ այն կետանցով կատարելու դեպքերում հարկային մարմնի մոտ ծագում է ցեսիայի պայմանագրով որպես պարտապան հանդես եկող անձից **օրենքով, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ** պահանջելու իրավունք,

բ) ցեսիայի պայմանագրի շրջանակներում պահանջի իրացման պահին վերահաշվարկ կատարելիս հարկային մարմնի մոտ ծագում է ցեդենտից/հարկատուից հարկային պարտավորությունը կետանցով կատարելու համար սահմանված տույժերի և տուգանքների գումարները պահանջելու իրավունք:

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ցեսիայի պայմանագրի հիման վրա դեբիտորական պարտքերի հաշվին հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու ինստիտուտն ավելի մեծ երաշխիքներ է ստեղծում իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության ու տնտեսավարման բնականոն պայմաններ երաշխավորելու առումով: Խնդիրն այն է, որ այդ ինստիտուտի կիրառումը բխի իրավակարգավորման բովանդակությունից և ոչ իրավաչափ վարչարարությամբ չոտնահարվեն տնտեսավարող սուբյեկտների իրավունքները:

.... Միաժամանակ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ վիճարկվող իրավանորմերի նպատակային կիրառումն զգալիորեն պայմանավորված է դրանց հիման վրա կնքված պայմանագրերի հստակ բովանդակությամբ և դրանցում կողմերի իրավունքների ու պարտականությունների հստակ կանոնակարգումով, ինչը թույլ կտա նվազագույնի հասցնել դրանց կիրառման արդյունքում առաջացող խնդիրները: Անթույլատրելի է նման կարգի պայմանագրերի նկատմամբ ձևական մոտեցումը, քանզի պայմանագրային հստակ, բազմակողմանի և մանրամասն կանոնակարգումներով է մեծապես պայմանավորված դրա կատարումը և վիճելի իրավիճակների հաղթահարումը:

13. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ–649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

7. .... Սահմանադրության 42 հոդվածի հետ օրենքը համադրելիս՝ կարևորվում է նաև այդ հոդվածի 3–րդ մասը, ըստ որի՝ «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»: Կատարված աշխատանքի վարձատրությունից զրկելը, նախկինում սոցիալական ապահովության պարտադիր վճարների կատարումով վաստակած կենսաթոշակի վճարման կասեցումը, ինչպես նաև մինչ օրենքի ընդունումը կայացած աշխատանքային պայմանագրերով չնախատեսված նոր պայման ավելացնելու պարտադրանքը նշանակում է՝ հակառակ սահմանադրական այս պահանջին, հետադարձ ուժ տալ օրենքին: Օրենքի հետադարձ գործողությունն առավել ցայտուն է այն բազմաթիվ դեպքերում, երբ աշխատավարձի կամ թոշակի վճարումների ուշացման հետևանքով քաղաքացին զրկվել է օրենքի ուժի մեջ մտնելուն նախորդող տարվա կենսաթոշակից կամ աշխատավարձից:

ՍԴՈ–792, 24 փետրվարի, 2009 թ.

5. ՀՀ Սահմանադրության 1, 3 և 14.1. հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհատի և պետության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը և, առաջին հերթին՝ պետության պարտականությունը՝ կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ և արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում: Այն երաշխավորված է նաև աշխատանքի բնագավառում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 32 հոդվածում (1–ին մաս), համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 48 հոդվածում որպես պետության հիմնական խնդիրներ են նախատեսված բնակչության զբաղվածությանը նպաստելը (2–րդ կետ), տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակ ապահովելը:

Աշխատանքի բնագավառում անհատի սահմանադրական իրավունքների ու ազատությունների անմիջական իրականացման և պաշտպանության խնդիրների կարգավորմանն է կոչված ՀՀ աշխատանքային օրենսդրությունը, որի նպատակն է սահմանել անձանց աշխատանքային իրավունքների և ազատությունների պետական երաշխիքները, պաշտպանել աշխատողների և գործատուների իրավունքներն ու շահերը (ՀՀ աշխ. օր. 2 հոդված), և որպես աշխատանքային հարաբերությունների կարգավորման սկզբունք է նախատեսված կողմերի իրավահավասարությունը՝ անկախ տարիքից, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից (ՀՀ աշխ. օր. 3 հոդվածի 3–րդ կետ):

....

6. Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը՝ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7–րդ մասի 3–րդ կետի պահանջներով, կարևորում է վիճարկվող և դրանց հետ փոխկապակցված վերոհիշյալ նորմերում մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, այդ իրավունքների սահմանափակումների թույլատրելիությունը՝ որպես այդ նորմերի սահմանադրականության գնահատման մեկնակետ: Այդ նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 32 հոդվածում երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անձանց անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատանքային հարաբերությունների հաստատման (պահպանման) խնդրում օրենքով կամ աշխատանքային պայմանագրով առանձին աշխատողների առնչությամբ սահմանային տարիք նախատեսելն արդարացված է, եթե այն հետապնդում է իրավաչափ նպատակներ, մասնավորապես պայմանավորված է կատարվող աշխատանքի բնույթով կամ առանձնահատկությամբ: Այս առումով, սահմանադրական դատարանն արդարացի է համարում հանրային (պետական և համայնքային) ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրության ակտերով ծառայողի պաշտոնավարման սահմանային տարիք նախատեսելուն զուգընթաց գործատուի և կենսաթոշակային տարիքի հասած ու աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի միջև երկկողմ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորության նախատեսումը և դրա հիման վրա աշխատանքային հարաբերությունների կայունությունն ապահովելը:

Աշխատանքի ընտրության ազատությունը պայմանավորված է, նախ՝ աշխատանքային հարաբերությունների հաստատման ու դադարման երկկողմ ազատ կամահայտնության ապահովման օրենսդրական հստակ երաշխիքների առկայությամբ, որոնք նաև անհրաժեշտ են ՀՀ Սահմանադրության ինչպես 32 հոդվածում (1–ին մաս) նախատեսված անձի իրավունքի իրացման, այնպես էլ 8 հոդվածում (2–րդ մաս) ամրագրված սկզբունքին համապատասխան տնտեսավարման շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ զարգացման համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 14.1. և 32 հոդվածների դրույթներին համապատասխան աշխատանքի իրավունքի ազատ և անխտրական իրացումն անհրաժեշտաբար պետք է երաշխավորելի լինի աշխատանքային հարաբերությունների բոլոր բնագավառներում:

9. ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2–րդ մասի համաձայն պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Անդրադառնալով աշխատանքի ազատ, անխտրական ընտրության և այդ իրավունքի իրացման միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ներպետական իրավակիրառական պրակտիկայում աշխատանքի նկատմամբ որևէ (այդ թվում՝ տարիքային) խտրականությունը, զբաղվածության ազատության ոչ իրավաչափ սահմանափակումները համատեղելի չեն իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության հիմնարար սկզբունքների հետ:

ՍԴՈ-902, 7 հուլիսի, 2010 թ.

5. .... Աշխատանքի ընտրության ազատությունը, որը ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված է որպես սոցիալական ազատություն, ներառում է, ի թիվս այլոց, աշխատանք փնտրելու իրավունքը, որի մեկնաբանությունից բխում է նաև արդեն **ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը**:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով որպես սահմանադրական կարգի հիմունք հռչակված՝ տնտեսական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ենթադրում է գործատուին այնպիսի իրավազորությունների տրամադրում, որոնք նրան թույլ կտան տնտեսական գործունեության արդյունավետության և իր գույքի ռացիոնալ օգտագործման նպատակներից ելնելով ինքնուրույնաբար և իր ռիսկով ընդունել կազմակերպչական և կադրային քաղաքականությանն ուղղված որոշումներ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-792 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության պաշտպանության ներքո գտնվող վերոհիշյալ սահմանադրական ազատությունների փոխհարաբերակցությանը՝ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ աշխատանքի ընտրության ազատությունը պայմանավորված է, նախ՝ աշխատանքային հարաբերությունների հաստատման ու դադարման երկկողմ ազատ կամահայտնության ապահովման օրենսդրական հստակ երաշխիքների առկայությամբ, որոնք նաև անհրաժեշտ են ՀՀ Սահմանադրության ինչպես 32-րդ հոդվածում (1-ին մաս) նախատեսված անձի իրավունքի իրացման, այնպես էլ 8-րդ հոդվածում (2-րդ մաս) ամրագրված սկզբունքին համապատասխան տնտեսավարման շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ զարգացման համար:

Վկայակոչելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը և ընդգծելով աշխատանքային հարաբերություններում գործատուի և աշխատողի իրավունքների ու օրինական շահերի միջև արդարացի հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ տնտեսական, կազմակերպչական և տեխնոլոգիական պատճառների առկայության դեպքում անձին աշխատանքում չվերականգնելն իրավաչափ է նաև անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ անձին աշխատանքում վերականգնելու օբյեկտիվ անհնարինության պայմաններում լուծվում է համարժեք փոխհատուցման խնդիրը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման իրավակարգավորումն ընդունված է նաև ինչպես Աշխատանքի միջազգային կազմակերպության միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների օրենսդրություններում: Մասնավորապես, Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված՝ Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածում նշված մարմինները փաստում են աշխատանքից ազատվելու անհիմն լինելը, և եթե նրանք ազգային օրենսդրությանը և պրակտիկային համապատասխան իրավասու չեն կամ գործնականում անհնար են համարում վերացնել աշխատանքից ազատելու մասին

հրամանը և(կամ) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու կարգադրություն կամ առաջարկ անելը, նրանք օժտվում են **համապատասխան փոխհատուցում** կամ նպատակահարմար համարվող այլ նպաստ վճարելու մասին կարգադրություն արձակելու իրավասությամբ»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող իրավակարգավորումը բխում է այն իրողությունից, որ օբյեկտիվ իրականության մեջ կարող են առաջանալ իրավիճակներ, երբ աշխատանքում վերականգնումը գործնականում կլինի անհնարին, ինչպես նաև բխում է տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությունը երաշխավորելու իրավաչափ նպատակից, և նկատի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային իրավակարգավորումն ու միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **տնտեսական, տեխնոլոգիական և կազմակերպչական պատճառներով աշխատանքում վերականգնելու անհնարինության դեպքերում աշխատողին աշխատանքում չվերականգնելու ինստիտուտն ինքնին իրավաչափ է:**

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի խնդիրն է արդարացի հավասարակշռություն ապահովել գործատուի շահերի և անօրինական կարգով աշխատանքից ազատված աշխատողի իրավունքների և օրինական շահերի միջև: Նշված հավասարակշռությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ աշխատանքում վերականգնելու **օբյեկտիվ անհնարինության դեպքերում** երաշխավորվի աշխատողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ և արդյունավետ մեխանիզմ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես առավել արդյունավետ և օպտիմալ պաշտպանության մեխանիզմ ընտրվել է աշխատողին չվերականգնելու դիմաց փոխհատուցում վճարելու ինստիտուտը:

7. Վիճարկվող դրույթի՝ իրավական օրենքին ներկայացվող պահանջներին, այն է՝ կանխատեսելիության, որոշակիության և հստակության պահանջներին համապատասխանությունը սահմանադրական դատարանը հարկ է համարում գնահատել նաև իրավակիրառական պրակտիկայի համատեքստում՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն բովանդակությունը, որն իրավակիրառական պրակտիկայում տրվել է «կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում» ձևակերպմանը:

.... Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության պատճառ դիտարկվում են այնպիսի հանգամանքներ, որոնք որևէ առնչակցություն չունեն տնտեսական, կազմակերպչական և տեխնոլոգիական պատճառների հետ: Մինչդեռ «կամ այլ պատճառներ» հասկացությունը ենթադրում է այնպիսի հանգամանքներ, որոնք իրենց բնույթով պետք է սերտորեն առնչվեն տնտեսական, կազմակերպչական կամ տեխնոլոգիական պատճառներին բնորոշ օբյեկտիվ հիմքերին: Դա է նաև թիվ 158 կոնվենցիայի պահանջը, որի 13-րդ հոդվածը թույլատրում է անօրինականորեն աշխատանքից ազատված անձանց չվերականգնել աշխատանքում, եթե աշխատանքում վերականգնելն անհնարին է տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական **կամ այլ նույնաբնույթ պատճառներով:**

Վիճարկվող դրույթի կիրառման պրակտիկայի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ այդ դրույթի իրավաչափ կիրառումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողից պահանջում է քննության առարկա դարձնել և ուսումնասիրել ազատման հիմքում ընկած տնտեսական, տեխնոլոգիական և կազմակերպչական պատճառները: Այս պահանջն է ներկայացնում իրավասու մարմիններին նաև Վերանայված

եվրոպական սոցիալական խարտիայի 25-րդ հոդվածին համապատասխան հիմնադրված Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն, ինչպես նաև ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը: Հարկ է ընդգծել նաև, որ որպես վիճարկվող դրույթի իրավաչափ կիրառման նախապայման նշված Կոնվենցիայի 9-րդ հոդվածն ամրագրում է նաև ազատման տնտեսական, տեխնոլոգիական և կազմակերպչական պատճառների առկայության ապացուցման բեռը գործատուին վերապահելը:

Հաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայի վերոհիշյալ այն առանձնահատկությունը, որ որպես աշխատանքի վերականգնման անհնարինության հիմնավորում են դիտարկվում անձին անօրինականորեն ազատելուց **հետո առաջացած** տնտեսական, տեխնոլոգիական կամ կազմակերպչական պատճառները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վիճարկվող դրույթը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պետք է գնահատի նաև, թե արդյո՞ք տվյալ պատճառը գործատուի կողմից արհեստականորեն չի ստեղծվում՝ կանխելու համար անօրինական ազատված աշխատողի՝ դատարանի վճռի հիման վրա հնարավոր վերականգնումը:

ՍԴՈ-991, 11 հոկտեմբերի, 2011 թ.

5. ՀՀ Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը նաև սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Միաժամանակ, Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրել է իրավակարգավորման այնպիսի սկզբունք, ինչպիսին օրենքի առջև բոլորի հավասարությունն է՝ ի թիվս այլ հանգամանքների՝ բացառելով նաև տարիքային հատկանիշի հիմքով խտրականության որևէ դրսևորում:

Քննելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի (2004 թ. նոյեմբերի 9-ի խմբագրությամբ) և 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի (2004 թ. նոյեմբերի 9-ի խմբագրությամբ) սահմանադրականության հարցը՝ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-792 որոշմամբ բացահայտելով աշխատանքային հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման բովանդակությունն ու առանձնահատկությունները, անդրադառնալով, մասնավորապես, անձի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով **գործատուի նախաձեռնությամբ մրցութային կարգով աշխատանքի ընդունված անձի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման իրավաչափության խնդրին,** համադրելով այդ իրավակարգավորումը համակարգային առումով փոխկապակցված ՀՀ աշխատանքային օրենսգրքի այլ նորմերի հետ, արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք իրավակարգավորիչ առանցքային նշանակություն ունեն նաև սույն գործով վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման և այդ նշանակությանը համապատասխան կիրառելու համար: Մասնավորապես.

– Սահմանադրության 32-րդ հոդվածում երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու և

պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում: Բացի դրանից, 2010 թ. մայիսի 4-ի ՍԴՈ-881 որոշման մեջ բացահայտելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը նշել է, որ խտրականության արգելքի սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարվում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված տարբերակված մոտեցումը,

– աշխատանքային հարաբերությունների հաստատման (պահպանման) խնդրում օրենքով կամ աշխատանքային պայմանագրով առանձին աշխատողների առնչությամբ **սահմանային տարիք նախատեսելն արդարացված է, եթե այն հետապնդում է իրավաչափ նպատակներ,** մասնավորապես պայմանավորված է կատարվող աշխատանքի բնույթով կամ առանձնահատկությամբ: Այս առումով, սահմանադրական դատարանն արդարացի է համարում հանրային (պետական և համայնքային) ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրության ակտերով ծառայողի պաշտոնավարման սահմանային տարիք նախատեսելուն զուգընթաց գործատուի և կենսաթոշակային տարիքի հասած ու աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի միջև երկկողմ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորության նախատեսումը և դրա հիման վրա աշխատանքային հարաբերությունների կայունությունն ապահովելը,

– աշխատանքով պայմանավորված հարաբերությունների կարգավորման պայմանագրային բնույթը միաժամանակ պահանջում է ոչ միայն իրավունքի իրացման, այլև պարտականության կատարման անհրաժեշտություն, և կողմերի, տվյալ դեպքում գործատուի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքի իրացումը **չպետք է պայմանավորված լինի նպատակահարմարությամբ կամ սուբյեկտիվ բնույթի այլ գործոնով**, այլ հետապնդի արդար, իրավաբանորեն ամրագրված որոշակի նպատակ՝ աշխատանքի իրավունքի իրացման սահմանադրորեն կանխորոշված սկզբունքներին համապատասխան:

Վերլուծելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածում (2004 թ. նոյեմբերի 9-ի խմբագրությամբ) սահմանված՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերը՝ կապված իրավաբանական այնպիսի փաստերի հետ, որոնց առկայությամբ օբյեկտիվորեն անհնարին է կամ բացահայտ անարդյունավետ է աշխատանքային հարաբերությունների շարունակումը, սահմանադրական դատարանը համարել է դրանք որպես կոնկրետ գնահատելի չափանիշներ, մինչդեռ աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու՝ հիշյալ օրենքով նախատեսված իրավունքը՝ բացառիկ հայեցողական, արձանագրելով, որ այդպիսի իրավակարգավորումը գործատուին լիազորում է աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու փաստի ուժով ընդհուպ մրցութային կարգով աշխատանքի ընդունված աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը միակողմ լուծելու հայեցողություն: Իսկ նույն օրենսգրքի 114-րդ հոդվածում (2004 թ. նոյեմբերի 9-ի խմբագրությամբ) նախատեսված արգելքը՝ կապված աշխատանքային հարաբերություններում տարիքային սահմանափակման հետ, գնահատվել է որպես իրավաչափ և ՀՀ Սահմանադրության 14.1-րդ և 32-րդ հոդվածների պահանջներին համապատասխանող:

Վերահաստատելով կենսաթոշակային տարիքի հասած աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորելու ընդհանուր սկզբունքների վերաբերյալ արտահայտված վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք կիրառելի են նաև սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման առնչությամբ: Օրենքով կամ իրավական այլ ակտով չի կարող սահմանվել իրավակարգավորման այնպիսի կանոն, որը կհակասի սահմանադրական դատարանի որոշմանը, կամ կի-

բառվող նորմին տրվի վերջինիս սահմանադրաիրավական բովանդակությանը չհամապատասխանող մեկնաբանություն կամ իմաստ:

Գործնական խնդիրները, որոնք առաջանում են աշխատանքային հարաբերությունների կարգավորման պրակտիկայում, սահմանադրական դատարանի գնահատմամբ պայմանավորված են իրավակարգավորման համակարգային մոտեցման թերացումներով, որոնք առնչվում են նաև աշխատանքային տարիքում և կենսաթոշակային տարիքում անձի սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները հետևողականորեն հաշվի չառնելուն:

Մասնավորապես, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ «կենսաթոշակային տարիք» հասկացությունն ունի կարևոր սոցիալ-իրավական բովանդակություն: Վերջինս դրսևորվում է նրանում, որ որոշակի տարիքում տեղի է ունենում անձի աշխատունակության որոշակի նվազում: Հետևաբար, օրենսդիրը, հիմք ընդունելով կոնկրետ աշխատանքի առանձնահատկությունը և բնույթը, երաշխավորելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ անձի սոցիալական իրավունքի իրացման հնարավորությունը, սահմանում է նվազագույն համապատասխան տարիք այդ իրավունքն իրացնելու համար, և դա ինքնանպատակ չէ: ՀՀ օրենսդրության ժամանակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը կենսաթոշակ սահմանելիս միշտ հիմք է ընդունել որոշակի տարիքային սահմանագիծ, որին հասնելով՝ տեղի է ունենում անձանց աշխատունակության ենթադրյալ էական նվազում:

Տվյալ հանգամանքը հաշվի առնելով և նկատի ունենալով, որ կենսաթոշակը սահմանվում է ոչ թե քաղաքացու՝ որոշակի տարիքի հասնելու հիմքով, այլ այդ տարիքով պայմանավորված՝ աշխատունակության հնարավոր սահմանափակման կամ լրիվ կորստի կապակցությամբ, ինչը չի կարող դիտարկվել որպես խտրականության արգելման սկզբունքի խախտում, օրենսդրորեն անհրաժեշտ է առավել հստակ տարբերակել **աշխատանքային պայմանագրի գործողության դադարման և դադարեցման** պայմաններն ու կարգը, դրան համապատասխան նախատեսել գործատուի իրավասությունն աշխատանքային պայմանագրի լուծման առնչությամբ:

6. Անորոշ և որոշակի ժամկետով աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների հաստատման գործող կարգի իրավաչափության գնահատման շրջանակներում, վերահաստատելով այդ խնդրի առնչությամբ 24.02.2009 թ. ՍԴՈ-792 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ աշխատանքային հարաբերությունների իրավաչափ կազմակերպման համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն նման հարաբերությունների հիմք հանդիսացող պայմանագրերի բնույթի ու սահմանադրաիրավական բովանդակության հստակ բացահայտումը և անհրաժեշտ նորմատիվ կարգավորումը: Որպես կանոն, այդ պայմանագրերն ունեն որոշակի ժամկետային կամ անժամկետ բնույթ: Որոշակի ժամկետով կնքված պայմանագրերը **պետք է դիտել որպես բացառության դրսևորում՝** պայմանավորված աշխատանքի բնույթով և առանձնահատկություններով (ընտրովի պաշտոն, սեզոնային աշխատանք, փորձաշրջան և այլն): Իրավական տրամաբանությունն այն է, որ այդ առանձնահատկությունները հստակ կանոնակարգվեն օրենքով, որպեսզի հակամարտություն չառաջանա աշխատողի իրավունքների ու գործատուի հայեցողական ազատության միջև: Առանձին երկրներում (Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Բուլղարիա, Խորվաթիա, Շվեդիա և այլն) օրենսդրորեն ընդհուպ նախատեսվում է, որ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է դառնալ անորոշ ժամկետով կնքված այն դեպքերում, երբ հանգամանքները, որոնց բերումով աշխատանքային պայմանագրի գործողության որոշակի

ժամկետ է սահմանվել, դադարում են գոյություն ունենալ աշխատանքային հարաբերությունների ընթացքում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այս հանգամանքն անհրաժեշտ խորությամբ արտացոլում չի գտել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 15-րդ գլխի իրավակարգավորման շրջանակներում:

Սույն գործով վիճարկվող նորմերի և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի 13-րդ և 15-րդ գլուխների նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ անհրաժեշտ է.

– առավել հստակեցնել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքերը և իրավական շարժառիթները,

– որպես անորոշ ժամկետով կնքված ճանաչել մեկ կամ մի քանի անգամ երկարաձգված որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը՝ այն դեպքերում, երբ վերանում են այդպիսին կնքելու հիմքերը,

– կենսաթոշակային տարիքի հասնելու փաստը սահմանել որպես իրավական հիմք՝ այդպիսի անձանց հետ որոշակի ժամկետով հետագա աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ լրացուցիչ իրավակարգավորումներն անհրաժեշտ են աշխատանքային իրավապայմանագրային հարաբերություններում իրավահավասարությունը և կենսաթոշակային տարիքի հասած անձանց իրավունքները և օրինական շահերը երաշխավորելու նկատառումներով:

Ինչ վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում նախատեսված բացառությանը, ապա ՍԴՈ-792 որոշմամբ սահմանադրական դատարանը գտել էր իրավաչափ՝ օրենքով առանձին դեպքերում (օրինակ՝ հանրային ծառայության բնագավառում, որոշակի բնույթի և առանձնահատկության աշխատանքների դեպքում և այլն) աշխատողների համար սահմանային տարիք նախատեսելը: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վերոհիշյալ նորմի մեկնաբանումը և կիրառումը ՍԴՈ-792 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

7. Սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմերի (24.06.2010 թ. խմբագրությամբ) սահմանադրականության գնահատման կոնկրետ խնդրի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում սահմանված նորմը, համաձայն որի՝ գործատուն իրավունք ունի աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում նրա հետ լուծելու անորոշ, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ **եթե աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չէ**, ստացել է սահմանադրաիրավական նոր բովանդակություն: Բանն այն է, որ ի տարբերություն նախկին իրավակարգավորման, այն աշխատանքային հարաբերությունների սուբյեկտներին իրավական կամընտրական հնարավորություն է ընձեռում՝ ազատ կամաարտահայտությամբ համաձայնելու վերոհիշյալ հիմքով պայմանագրային պարտավորությունները որոշակի պայմաններով (ժամկետով) շարունակելուն և աշխատանքային նոր պայմանագիր կնքելուն: **Դա իր հերթին նշանակում է, որ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով գործատուի կողմից միակողմանի լուծվել չի կարող, եթե դա նախատեսված չէ այդ պայմանագրով:** Սահմանադրական դատարանի

ՍԴՈ–792 որոշման պահանջներից ելնելով օրենսդրական այս փոփոխությունը երաշխավորում է հավասար և ոչ խտրական իրավապայմանագրային հարաբերություններ աշխատողի և գործատուի միջև:

Իր հերթին, օրենսգրքի 114–րդ հոդվածի 4–րդ մասի 5–րդ կետում նախատեսված տարիքային հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը կարևոր երաշխիք է վերոհիշյալ իրավապայմանի գործադրման համար:

Հետևաբար, աշխատանքային հարաբերությունների այդպիսի իրավակարգավորումը համապատասխանում է աշխատանքի անխտրական և ազատ ընտրության սահմանադրաիրավական այն պայմաններին, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության 14.1–րդ, 32–րդ և 37–րդ հոդվածների պահանջներից, ՀՀ Սահմանադրության 48–րդ հոդվածի 2–րդ և 12–րդ կետերով նախատեսված՝ պետության հիմնական խնդիրներից, քանի որ.

– բացառում է տարիքային հիմքով գործատուի հայեցողական նախաձեռնությամբ միակողմ լուծել աշխատանքային պայմանագիրը,

– երաշխավորում է աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների ձևավորման ազատությունը, երկկողմ ազատ կամաարտահայտությունը,

նպաստում է.

– աշխատուժի շուկայի (զբաղվածության) և տնտեսական հարաբերությունների ազատ ձևավորմանն ու զարգացմանը,

– գործատուի և կենսաթոշակային տարիքի հասած աշխատողների իրավունքների և օրինական շահերի ներդաշնակմանը,

– սոցիալական ապահովության, աշխատանքային հարաբերությունների զարգացման և բնակչության զբաղվածության բնագավառներում պետության կողմից նպատակային ծրագրերի իրականացմանը:

Միաժամանակ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113–րդ հոդվածի 1–ին մասի 11–րդ կետի իմաստից հետևում է, որ անձի կենսաթոշակային տարիքը լրանալու փաստը հիմք է նրա հետ աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման ժամկետին առնչվող պայմանի փոփոխման՝ անորոշ ժամկետով կնքված պայմանագրի գործողության դադարման և որոշակի ժամկետով պայմանագիր կնքելու համար (բացառությամբ ընտրովի պաշտոնների դեպքերում):

Աշխատանքային իրավահարաբերությունների նման կարգավորումը համապատասխանում է նաև սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ–792 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113–րդ հոդվածի 1–ին մասի 11–րդ կետի կիրառումն իր սահմանադրաիրավական վերոհիշյալ բովանդակությանը համապատասխան լիարժեք երաշխավորելի է այն դեպքում, երբ օրենսգրքով նախանշվեն ընթացակարգեր, որոնք կոչված լինեն գնահատելու կենսաթոշակային տարիքի հասած անձի աշխատունակությունը (աշխատանքային պիտանիությունը), հետևաբար՝ նաև աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի և գործատուի միջև երկկողմ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորություն կնախատեսեն՝ **բացառելով գործատուի սուբյեկտիվ հայեցողությունն այդ հարցում:**

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ կենսաթոշակը և աշխատանքը միտված են միևնույն նպատակին՝ գոյության միջոցների ապահովմանը, աշխատանքը՝ որպես կենսապահովման միջոց, գործում է անձի լրիվ աշխատունակության պայմաններում, իսկ կենսաթոշակը՝ աշխատունակության սահմանափակման կամ կորստի պայմաններում: Հետևա-

բար, կենսաթոշակի իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձը, որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այլևս չի կարող այդ նպատակն իրացնել աշխատանքի միջոցով: Կենսաթոշակի իրավունքի ծագումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների կրճատմամբ: Այսպիսով, կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ անձի հետ աշխատանքային հարաբերություններն օբյեկտիվորեն ենթակա են կարգավորման այլ սկզբունքներով և առաջնահերթ կարևորվում են նրա սոցիալական ապահովման խնդրի լուծումն ու որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված՝ աշխատանքի իրավունքի և կենսաթոշակի իրավունքի նման փոխհարաբերակցությունը, պայմանավորված լինելով դրանց սոցիալական բովանդակությամբ և առաքելությամբ, իր հիմքում ունի օբյեկտիվ արդարացում: Հետևաբար, աշխատանքային հարաբերությունների **դադարման** հնարավորությունը կենսաթոշակի իրավունքի ծագմամբ պայմանավորելն իրավաչափ է, քանի որ աշխատանքային հարաբերությունների դադարման հնարավորությունը հիմնվում է այնպիսի օբյեկտիվ չափանիշի վրա, ինչպիսին մարդու տարիքի փաստով պայմանավորված աշխատունակության չափանիշն է:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ կենսաթոշակային տարիքի հասած անձի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիրը լուծելիս և (կամ) որոշակի ժամկետով պայմանագիր կնքելիս ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսելի կարգով անհրաժեշտաբար պետք է երաշխավորվեն ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված նրա սոցիալական ապահովության իրավունքի իրացման բավարար պայմաններ՝ **կապված սոցիալական ապահովության հնարավոր ծավալի և ձևերի հետ**: Սահմանադրական դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ օրենքով աշխատողի համար սահմանային տարիք նախատեսելը նախ և առաջ հետապնդում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով նախատեսված՝ անձի սոցիալական ապահովության իրավունքը իրացնելու հնարավորությունը երաշխավորելու իրավաչափ նպատակ՝ կապված նրա աշխատունակության աստիճանի օբյեկտիվ փոփոխության հետ:

8. Անդրադառնալով կենսաթոշակային տարիքի հասած անձանց հետ աշխատանքային հարաբերությունների կարգավորման (հաստատման, դադարման) միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված միջազգային ակտերի, ինչպես նաև բազմաթիվ երկրների ներպետական օրենսդրության համաձայն աշխատողի հետ հաստատված աշխատանքային հարաբերությունները չպետք է դադարեցվեն, եթե դրա համար առկա չէ աշխատողի ունակությունների կամ վարքագծի հետ կապված, ինչպես նաև ծառայության կամ գործունեության գործառնական պահանջների վրա հիմնված իրավաչափ պատճառ: Նման վիճակներից խուսափելու հիմնական նախադրյալն **աշխատանքային պայմանագրերի կնքման հետ կապված հարաբերությունների հստակ իրավական կարգավորումն է:** Վերջինս պահանջում է տարբերակել այդ հարաբերությունների բնույթն ու աշխատողի իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովումը մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը և դրանց բնույթն ու առանձնահատկությունները **կենսաթոշակային տարիքում:** Բազմաթիվ երկրների աշխատանքային օրենսգրքերում կամ տվյալ իրավահարաբերությունները կանոնակարգող այլ ակտերում (Բուլղարիա, հոդվ. 72, Ֆինլանդիա, Աշխատանքային պայմանագրերի մասին ակտի բաժին 1/Ա(1030/2004), Խորվաթիա, հոդվ. 110, Հունգարիա, հոդվ. 87Ա, 89, Մակեդոնիա, հոդվ. 108, Ռումինիա, հոդվ. 56, Սերբիա, հոդվ. 175, Շվեդիա, Աշխատանքային իրավունքների պաշտպանության մասին ակտի բաժին 5Ա և այլն) հստակ սահման-

վում է, որ **անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրից բխող իրավահարաբերությունները վերաբերում են մինչկենսաթոշակային տարիքին:** Այս շրջանակներում է նաև դիտարկվում տարիքի հետ կապված խտրականության դրսևորման անթույլատրելիությունը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության աշխատանքային օրենսգրքի 59-րդ հոդվածը նախատեսում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքման 20-ից ավելի հնարավոր իրավիճակներ, որոնց թվում շեշտվում է, որ **կենսաթոշակային տարիքի անձանց հետ կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր**: Իսկ, օրինակ, Բուլղարիայի համանուն օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ «**Վաթսուն տարեկանը լրացած տղամարդ և հիսունհինգ տարեկանը լրացած կին կենսաթոշակառուի հետ աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամկետով՝ բայց ոչ ավելի, քան մեկ տարով**»: Հունգարիայի աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածն ընդհուպ նախատեսում է, որ՝ **«Գործատուն պարտավոր չէ ազատված աշխատողին բացատրել այդ ազատման պատճառը, եթե աշխատողը 87Ա բաժնի 1-ին ենթակետի իմաստով համարվում է թոշակառու»**:

Վերոնշյալ իրավակարգավորումների պայմաններում հստակ է հայեցակարգը՝ անորոշ ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրերը վերաբերում են մինչկենսաթոշակային տարիքին, և դրանց լուծումը տեղի է ունենում իրավունքի ուժով: Միաժամանակ, արդարացիորեն շեշտը դրվում է պայմանագրի բնույթի հստակեցման և կանխատեսելիության վրա, խնդիրը չի թողնվում գործատուի բացառիկ հայեցողությանը:

Միջազգային պրակտիկայում կարևորվում է նաև այն հանգամանքը, որ աշխատողի կենսաթոշակային տարիքի կապակցությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը պայմանավորվում է նրա սոցիալական ապահովության իրավունքի իրացումը երաշխավորելու հանգամանքով, այսինքն՝ անհրաժեշտ աշխատանքային ստաժի կամ օրենքով նախատեսված այլ բնույթի հանգամանքների առկայությամբ: Այն իր ամրագրումն է ստացել նաև Լյուքսեմբուրգի Արդարադատության եվրոպական դատարանի պրակտիկայում, համաձայն որի՝ կենսաթոշակային տարիքի կապակցությամբ աշխատանքային պայմանագրի լուծումն իրավաչափ է, եթե համապատասխանում է «....սոցիալական անվտանգության օրենսդրությամբ սահմանված պայմաններին» (Case C-411/05 Felix Palacios de la Villa v. Cortefiel Servicios SA, 16 October 2007):

Վեճի առարկա նորմերի առնչությամբ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր երկրների օրենսդրական ու իրավակիրառական փորձի ընդհանրացման արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը հանգում է հետևյալին.

– մինչկենսաթոշակային տարիքում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերի կնքումը բացառության դրսևորում է և պայմանավորված է աշխատանքի բնույթի որոշ առանձնահատկություններով, ինչը պետք է օրենքով առավել հստակ նախատեսված լինի և չթողնվի գործատուի սուբյեկտիվ հայեցողությանը,

– մինչկենսաթոշակային տարիքում կնքվող աշխատանքային պայմանագրի հիմնական ձևն անորոշ ժամկետով պայմանագիրն է, որի գործողության **դադարման հիմքերն ու կարգը** պետք է նախատեսվեն օրենքով և որոշվեն իրավունքի ուժով, **իսկ դադարեցումը** պետք է պայմանավորված լինի միայն իրավաչափ պատճառներով, ինչը, իր հերթին, հստակ պետք է նախատեսվի օրենքով,

– կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի հետ աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների կարգավորման բնույթը և պայմանները փոխվում են: Եթե մինչկենսաթոշակային տարիքում ելակետն աշխատանքի ընտրության ազատության սկզբունքի երաշխավորումն է, ապա կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կարևոր-

վում են անձի սոցիալական ապահովության խնդրի լուծումը և որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ մոտեցումներն իրավաչափ են, հստակեցնում են աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման սահմանադրաիրավական բնույթը և համակարգային մոտեցմամբ, հստակ հայեցակարգի հիման վրա, օրենսդրական անհրաժեշտ կարգավորում պետք է ստանան: Դրանք համահունչ են նաև ՀՀ Սահմանադրության 1-ին, 14.1-րդ, 32-րդ , 37-րդ և 48-րդ հոդվածների պահանջներին: Միաժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի օրենքով նորմատիվ կարգավորում ստանա նաև այն հարցը, թե որ դեպքերում է կենսաթոշակային տարիքի հասած անձանց հետ կնքվում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, այն իրականացվի ոչ թե գործատուի սուբյեկտիվ հայեցողությամբ, այլ տվյալ աշխատանքի կատարման հարցում կենսաթոշակային տարիքի հասած անձի կարողությունների օբյեկտիվ գնահատման արդյունքում:

ՍԴՈ-1038, 18 հուլիսի, 2012 թ.

6. ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմի բովանդակությունը հանգում է նրան, որ օրենսդիրը որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման իրավական հիմք է դիտարկում աշխատանքային պայմանագիրը: Ըստ այս նորմի՝ աշխատանքային պայմանագիրը հանդիսանում է իրավաբանական փաստ, որը բավարար և անհրաժեշտ նախադրյալ է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման համար: Օրենքով այս կամ այն իրավահարաբերության ծագման համար անհրաժեշտ և բավարար հիմքերի սահմանումը՝ ընդհանրապես, և տվյալ դեպքում աշխատանքային իրավահարաբերությունների համար՝ մասնավորապես, հետապնդում է իրավական կարգավորման ոլորտում որոշակիություն և կանխատեսելիություն ապահովելու իրավաչափ նպատակ:

Աշխատանքային իրավահարաբերությունների ծագման համար հիմք հանդիսացող՝ օրենքով նախատեսված իրավաբանական փաստի՝ աշխատանքային պայմանագրի բովանդակությունը բացահայտված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածում: Ըստ այդ հոդվածի (մինչև 24.06.2010 թ. խմբագրությամբ)՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք կամ մատուցել որոշակի ծառայություններ՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել ՀՀ օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ: Այսինքն՝ աշխատանքային պայմանագրի բովանդակությունը կազմում է աշխատողի աշխատանքային գործառույթի վերաբերյալ համաձայնությունը, այն է՝ համաձայնությունն աշխատողի կողմից որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք կատարելու կապակցությամբ: Աշխատանքային պայմանագրի հասկացության նման օրենսդրական սահմանումը վկայում է, որ յուրաքանչյուր աշխատանքային պայմանագրի հիմքը որոշակի պայմանների շուրջ կողմերի համաձայնությունն է:

7. Սույն գործի շրջանակներում կարևորվում է նշված համաձայնության ձևակերպման, աշխատանքային պայմանագրի ձևի, ինչպես նաև այդ ձևը չպահպանելու իրավական հետևանքների խնդիրը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ աշխատանքային պայմանագրի ձևի ընտրությունը, աշխատանքային պայմանագրերի ազատության սկզբունքին համապա-

տասխան, ազատ է և թողնված է կողմերի կամաարտահայտությանը, թեև առկա է նաև գրավոր ձևին նախապատվություն տալու միտումը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի, մասնավորապես վերջինիս 14-րդ և 85-րդ հոդվածների ուսումնասիրությունը՝ և՛ մինչև 2010 թ. հունիսի 24-ի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ, և՛ ներկայումս գործող խմբագրությամբ, վկայում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է աշխատանքային պայմանագրի գրավոր ձևը: Ընդ որում, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածին համապատասխան՝ առանց օրենսգրքով սահմանված, այն է՝ գրավոր աշխատանքային պայմանագրի կատարվող աշխատանքը համարվում է անօրինական աշխատանք, և անօրինական աշխատանք կատարելու թույլտվություն տված գործատուները պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Համապատասխան պատասխանատվությունը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածով: Բացի գործատուի համար պատասխանատվություն նախատեսելուց, ՀՀ աշխատանքային օրենսգիրքն աշխատանքային պայմանագրի գրավոր ձևը չպահպանելու դեպքում վրա հասնող իրավական հետևանքների վերաբերյալ, մասնավորապես՝ առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձի շահերի առնչությամբ, որևէ այլ իրավակարգավորում չի նախատեսում: Մինչդեռ նման իրավիճակում կարևորվում է ոչ միայն գործատուի պատասխանատվության խնդիրը, այլ նաև առաջնային նշանակություն ունի իրավախախտ գործատուի հետ փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ մտած անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Գործարքներ» վերտառությամբ գլխի նորմերը, և աշխատանքային պայմանագրի գրավոր ձևը չպահպանելու իրավական հետևանքները որոշվում են ըստ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերի:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու դրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Այս իրավակարգավորման տրամաբանությունն այն է, որ օրենքով պայմանագրի կնքման գրավոր ձևի սահմանումն ինքնանպատակ չէ. դրա նպատակն է, նախևառաջ, հեշտացնել կողմերի միջև համաձայնության առկայության փաստի ապացուցումը և համաձայնության պայմանների շուրջ գործարքի կողմերի կամքի բացահայտումը: Հետևաբար, հաշվի առնելով պայմանագրերի ազատության սկզբունքը, կողմերի միջև ձեռք բերված համաձայնության տեխնիկական ձևակերպման օրենսդրական պահանջը չպահպանելու դեպքում գործարքի կողմը մեխանիկորեն չի զրկվում վեճի պարագայում համաձայնության առկայության փաստը և պայմաններն այլ ապացույցների միջոցով հաստատելու հնարավորությունից, այլ պարզապես նման իրավիճակում դժվարանում է ապացուցման գործընթացը, ինչը հանդիսանում է այն բացասական հետևանքը, որը կրում են կողմերն օրենքի պահանջը չկատարելու արդյունքում: Նման իրավակարգավորումը բխում է քաղաքացիաիրավական շրջանառության սուբյեկտների օրինական շահերի պաշտպանության նպատակից և պայմանագրային հարաբերությունների տրամաբանությունից: Այս իրավակարգավորումը և դրա հիմքում ընկած տրամաբանությունը հավասարապես վերաբերելի են նաև աշխատանքային պայմանագրերին, քանի որ վերջիններս, իրենց բնորոշ բոլոր առանձնահատկություններով հանդերձ, ի-

րենց բովանդակության, ձևական բնութագրիչների տեսանկյունից, հանդես են գալիս որպես մասնավոր իրավունքի պայմանագրեր, և ինչպես քաղաքացիաիրավական պայմանագրերի, այնպես էլ աշխատանքային պայմանագրերի դեպքում առանցքային տարրը կողմերի ազատ կամաարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունն է:

ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսգրքերի վերաբերելի նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը, որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման միակ հիմք սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականությունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի, արդյունավետ պաշտպանության հնարավորությունը: Տվյալ դեպքում առկա է իրավունքի պաշտպանության խնդիր և հարցի նկատմամբ չի կարող ձևական մոտեցում դրսևորվել: ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ **յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աշխատանքային պարտականությունների կատարման առկայության՝ հիմնավոր ապացույցներով փաստումը հիմք է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձին իր իրավունքների, այդ թվում՝ համարժեք հատուցման պահանջի իրավունքի պաշտպանություն տրամադրելու համար:** Սույն իրավական դիրքորոշումից շեղումը կհանգեցնի գործատուի պատասխանատվության անտեսման և աշխատողի իրավունքների ոտնահարման, քանի որ կատարած **փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հատուցում վճարելուց հրաժարվելը նաև անձի սեփականության իրավունքի ոտնահարում է:**

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս 2007 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 3-1848/ՎԴ/ քաղաքացիական գործով ընդունված որոշմամբ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել աշխատանքային պայմանագրի հասարակ գրավոր ձևը չպահպանելու իրավական հետևանքների, մասնավորապես, օրենքով սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունն այլ ապացույցներով հիմնավորելու հնարավորության առնչությամբ: Այս որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը խնդրո առարկայի վերաբերյալ, մասնավորապես, նշել է. «....-ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի նկատմամբ կիրառելի են գործարքի ձևին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքերում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր կամ այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 23.12.2005 թվականին Բաբկեն Սահրադյանի և պատասխանողի միջև կնքված թիվ 55 պայմանագրի ձևը պահպանված չէ, քանի որ այն չի ստորագրվել պատասխանողի կողմից, ինչը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի ուղղակի պահանջն է: Սակայն, միևնույն ժամանակ ի հավաստումն այդ պայմանագրի և դրա պայմանների գոյության՝ դատավարության մասնակիցները կարող են ներկայացնել ցանկացած ապացույցներ, որոնք վկայի ցուցմունք չեն....»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պրակտիկայի զարգացումը սույն իրավական դիրքորոշման հետևողական կիրառման ուղղությամբ կարող էր երաշխավորել ոչ միայն տարբեր պատճառներով գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի արդյունավետ պաշտպանությունը, այլև կապահովեր օրենսդրության պահանջների միատեսակ կիրառությունը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի ԵԿԴ/2228/02/10 քաղաքացիական գործով արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի՝ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությունն իր աշխատանքային պարտականությունների կատարմանը փաստացիորեն անցած անձին զրկում է ի հիմնավորումն փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության այլ ապացույցի հիման վրա իր իրավունքների պաշտպանությունից, այդ թվում՝ դատական պաշտպանության հնարավորությունից, ոչ միայն շեղում է ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման իրավական դիրքորոշումից, այլև հակասում է ՀՀ օրենսդրությամբ աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման՝ վերը բացահայտված ընդհանուր տրամաբանությանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մոտեցումը լուրջ վտանգ է ներկայացնում ինչպես իրավունքի պաշտպանության մերժման տեսանկյունից, այնպես էլ կարող է խթան հանդիսանալ գործատուների կողմից ապօրինի աշխատանքի շահագործման համար: Վերջինիս բացառումն է, մասնավորապես, ուղղված նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում 1949 թ. հուլիսի 1-ին Ժնևում ստորագրված՝ Աշխատավարձի պաշտպանության մասին կոնվենցիան, ինչը ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է 2004 թ. հոկտեմբերի 25-ին: Ուստի օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի վեճի առարկա խնդրին համալիր և սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համարժեք իրավակարգավորում պետք է նախատեսի:

ՍԴՈ-1048, 19 սեպտեմբերի, 2012 թ.

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է.

– ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածով երաշխավորված արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակության բացահայտումը և այդ իրավունքի իրացումն երաշխավորող միջոցների բնութագիրը,

– անձի՝ աշխատավարձի իրավունքի խախտմանն ուղղված գործողությունների (անգործության) անիրավաչափության և դրանց իրավական հետևանքի սահմանման օրենսդրական կարգավորումը,

– վիճարկվող նորմում նախատեսված զանցանքի սուբյեկտի, սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերի առանձնահատկությունների բացահայտումը՝ ելնելով Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքով հարաբերությունների իրավակարգավորման ընդհանուր տրամաբանությունից:

Արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը որպես անձի՝ իր և իր ընտանիքի կենսագործունեությունն ապահովող սոցիալ-տնտեսական կարևոր միջոց, երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածով, ինչպես նաև միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով (ՄԱԿ-ի, Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում կնքված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային

դաշնագիր, Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիա, Նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին կոնվենցիա, Գյուղատնտեսության մեջ նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին կոնվենցիա և այլն), որոնց համաձայն յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք: Այն հիմնարար իրավունք է, որից սկզբունքորեն հետևում է, որ, նախ՝ աշխատավարձն արդարացիորեն պետք է համապատասխանի կատարված աշխատանքի ծավալին ու որակին (մասնագիտական համապատասխան չափանիշներին), և երկրորդ՝ ցածր չլինի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից: Վերջինիս դեպքում այդ չափի սահմանումը վերապահված է բացառապես օրենքին: Միաժամանակ, ներպետական օրենսդրության խնդիրն է նաև համապատասխան իրավակարգավորմամբ երաշխավորել նվազագույն աշխատավարձի իրավունքի գործադրման անհրաժեշտ պայմանները, այդ թվում՝ պաշտպանությունն ամեն տեսակ ոտնձգությունից:

Արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները ՀՀ-ում կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով (ՀՕ-124-Ն), «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-66-Ն), օրենսդրության այլ ակտերով, այդ թվում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով: Դրանցում նախատեսված են մի շարք իրավադրույթներ, որոնք կազմելով համակարգային ամբողջականություն՝ կոչված են ապահովելու ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմի երաշխավորված իրացումը, ինչպես նաև ստեղծելու կայուն սոցիալ-իրավական և տնտեսական նախապայմաններ անձի արժանապատիվ կենսագործունեության համար: Այդ իրավանորմերի համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի իրացման երաշխավորումը նաև սահմանադրաիրավական և միջազգային իրավական կարևոր նախապայման է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին համապատասխան անձի նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի և օրենքով նախատեսված աշխատանքային այլ իրավունքների երաշխավորված գործադրման, պաշտպանության, ինչպես նաև աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման բնագավառում իրավահավասարության, սոցիալական արդարության սկզբունքի հաստատման ու իրացման համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի իրացումն ըստ դրա սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակության՝ երաշխավորելի է մի շարք պարտադիր իրավապայմանների առկայության պայմաններում, մասնավորապես.

– աշխատավարձի ամսական նվազագույն չափը, ինչպես նաև աշխատանքի վարձատրության նվազագույն պայմանները պետք է սահմանվեն օրենքով, իսկ օրենքով նախանշված առանձին դեպքերում՝ նաև կոլեկտիվ պայմանագրով,

– յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքային պայմանագրով նախատեսված և օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից ոչ ցածր աշխատավարձի իրավունք,

– յուրաքանչյուր ոք ունի հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք,

– յուրաքանչյուր աշխատող ունի իր և իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիր գոյություն ապահովող արդար ու նպաստավոր վարձատրության իրավունք,

– յուրաքանչյուր աշխատող ոչ իր մեղքով առաջացած պարապուրդի ժամանակ վճարում ստանալու իրավունք ունի,

– գործատուի կողմից աշխատավարձի հաշվարկումն ու վճարումը կատարվում է օրենքով նախանշված սկզբունքներով որոշված ժամկետներում և կարգով,

– գործատուն պատասխանատու է աշխատավարձի ժամանակին և ամբողջությամբ վճարման, ինչպես նաև վերջինիս կետանցման համար,

– գործատուն պատասխանատու չէ, եթե աշխատավարձ չի վճարվել ոչ իր մեղքով:

Այսպիսով, արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը երաշխավորելի է, եթե գործատու իրավասուբյեկտների կողմից ապահովվեն վերոթվարկյալ իրավապայմանները (կատարվեն պարտականությունները), որոնցից շեղումն ըստ այդ իրավապայմանների կհանգեցնի պատասխանատվության: Այդ նպատակին են ծառայում, նախ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ, 179-րդ (3-րդ մաս) և 198-րդ հոդվածների դրույթները: Կարգավորելով աշխատանքի և նվազագույն աշխատավարձի իրավունքի իրացման հետ կապված հարաբերություններ՝ օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է «....տուգանք (տուժանք) բռնագանձելով», 179-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն աշխատողի ժամավճարի չափը կամ ամսական աշխատավարձը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի չափից, իսկ նույն օրենսգրքի 198-րդ հոդվածն աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարումների ժամկետանց վճարման դեպքերում նախատեսում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

Իրավակարգավորիչ նույնպիսի նպատակին է միտված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմը, համաձայն որի՝ վարչական պատասխանատվության են ենթակա գործատուի հետևյալ գործողությունները (անգործությունը).

– աշխատավարձ չհաշվարկելը և չվճարելը,

– ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը չվճարելը,

– նվազագույն աշխատավարձի չափից պակաս աշխատավարձ սահմանելը,

– նվազագույն աշխատավարձի մեծությանը գերազանցող չափով աշխատավարձը սխալ հաշվարկելը:

Միաժամանակ, գործատուն ազատվում է աշխատավարձ չվճարելու համար պատասխանատվությունից, եթե այն պայմանավորված է աշխատողի՝ օրենքով նախատեսված իր պարտականության չկատարմամբ, մասնավորապես, եթե աշխատավարձ ստացողը գործատուին օրենսդրությամբ սահմանված կարգով չի ներկայացրել իր սոցիալական ապահովության քարտը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսպիսով, ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոհիշյալ, այնպես էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող նորմերն իրենց իրավակարգավորման առարկայով կազմում են համակարգային ամբողջություն, որոնց բովանդակային վերլուծությունը վկայում է, որ արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորելիս օրենսդիրն ելել է իրավական այն մեկնակետից, համաձայն որի՝ աշխատավարձի հաշվարկման և վճարման հետ կապված գործատու-իրավասուբյեկտների վերոթվարկյալ գործողություններն (անգործությունը) իրենցից հասարակական վտանգավորություն են ներկայացնում, երբ խախտվում են Սահմանադրությամբ և միջազգային իրավունքով երաշխավորված՝ անձի աշխատանքային իրավունքները (աշխատավարձի իրավունքը), իսկ վտանգավորության աստիճանի տեսանկյունից ենթակա են վարչաիրավական ներգործության միջոցի: Այսպիսով, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի գործողություններն (անգործությունը) օրենսդրի կողմից իրավախախտում (ոչ իրավաչափ) որակելը հետապնդում է

արդարացի, հետևաբար՝ նաև սահմանադրաիրավական նպատակ, որն իր հերթին կոչված է նաև ապահովելու սահմանադրական օրինականության անխախտելիությունը:

6. Անդրադառնալով վիճարկվող նորմերի սահմանադրականության, դրանց իրավական միակերպ և որոշակի ընկալման վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեճի առարկա խնդիրը դիտարկել համակարգային իրավակարգավորման բովանդակային առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նվազագույն աշխատավարձի իրավունքի, դրա խախտման սուբյեկտիվ դրսևորումների, առաջացած իրավական հետևանքի և այդ իրավունքի պաշտպանության հետ կապված հարաբերությունները ՀՀ իրավական համակարգում ենթարկված են սահմանադրաիրավական և օրենսդրական համալիր կարգավորման (աշխատանքային, վարչաիրավական և վարչադատավարական): Մասնավորապես, եթե նվազագույն աշխատավարձի (աշխատավարձի) սահմանադրական իրավունքի իրացման հետ կապված գործատու-իրավասուբյեկտի և աշխատողի փոխադարձ իրավունքների իրականացման ու պարտականությունների կատարման ընդհանուր պայմանները կարգավորված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, իսկ նվազագույն աշխատավարձի չափը սահմանված է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով, ապա գործատուի կողմից աշխատողին աշխատավարձի հաշվարկման ու վճարման հետ կապված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում առաջացած հետևանքների իրավակարգավորման հարցերը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, իսկ այդ հետևանքներով պայմանավորված հարկադրանքի կիրառման դատական ընթացակարգը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Հետևաբար, իրավական այդ ակտերի համապատասխան նորմերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ է նաև պայմանավորված վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը:

Նկատի ունենալով սույն գործով վեճի առարկա խնդրում «գործատու», «մեղք» «տուգանք» եզրույթների իրավական բովանդակության բացահայտման և ճշգրիտ մեկնաբանման կարևորությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը»: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ «գործատու կարող է լինել աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպական-իրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից և տեսակից և ֆիզիկական անձը»: Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ գործատուներն իրենց աշխատանքային իրավունքները և պարտականություններն իրականացնում են «իրենց մարմինների միջոցով .... գործատուի կանոնադրության և նրա հաստատած (ընդունած) իրավական ակտերի հիման վրա»:

Այսպիսով, աշխատողի աշխատավարձի իրավունքի խախտման դեպքում առաջացած վարչական պատասխանատվության կամ զանցանքի սուբյեկտի իրավական ինքնությունը, զանցանքի սուբյեկտիվ կողմը որոշելու համար անհրաժեշտ է ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոհիշյալ նորմերը համադրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի սույն գործով վիճարկվող նորմի, ինչպես նաև օրենսգրքի 10-րդ և 11-րդ հոդվածների դրույթների հետ: Արդյունքում՝ ակնհայտ է, որ վերջիններում, որպես վարչական իրավախախտում կատարած անձի (կամ զանցանքի սուբյեկտի) օրենսդիրը նկատի ունի բացառապես գործատու-ֆիզիկական անձին, որը մի դեպքում՝ դիտավորությամբ, մեկ այլ դեպքում

անզգուշությամբ զանցանք կատարելիս **«գիտակցել է»**, **«կանխատեսել է»** իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը: Հետևաբար, անհիմն են դիմող կողմի պնդումներն այն մասին, թե որպես պատասխանատվության ենթակա գործատու պետք է հանդես գա իրավաբանական անձը: Ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքի (ընդունված՝ 06.12.1985 թ.)՝ իրավաբանական անձինք օժտված չեն վարչական զանցանքի սուբյեկտի հատկանիշներով: Հետևաբար, օրենսգրքի վիճարկվող նորմի իմաստով պատասխանատու սուբյեկտ հանդես գալ կարող է միայն ֆիզիկական այն անձը, ով իրավաբանական անձ հանդիսացող գործատուի կանոնադրության (իրավական այլ ակտի) հիման վրա իրականացնում է գործատուին բնորոշ աշխատանքային համապատասխան իրավունքներ ու պարտականություններ, այդ թվում՝ կապված աշխատավարձի հաշվարկման ու վճարման հետ:

Հատկանշական է, որ իրավաբանական անձ և ֆիզիկական անձ-գործատու սուբյեկտիվ հարաբերությունների իրավակարգավորման նույնպիսի սկզբունք է ամրագրված ՀՀ օրենսդրության այլ ակտերով, մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կարգավորող: Այսպես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-252) 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից, որի ներքո ըստ նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի՝ հասկացվում է գլխավոր տնօրենը, նախագահը և այլք: Մասնավորապես, գործադիր մարմինն է ընկերության անունից իրականացնում գործատուի աշխատանքային լիազորությունները (կնքում աշխատանքային պայմանագրեր և հսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ): Այսինքն՝ տվյալ դեպքում իրավաբանական անձի գլխավոր տնօրենն է (նախագահն է) պատասխանատվություն կրում ընկերության աշխատողների աշխատանքային իրավունքների (այդ թվում՝ աշխատավարձի իրավունքի) պահպանման համար:

Ինչ վերաբերում է դիմող կողմի առաջադրած զանցանքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի դրսևորման առանձնահատկություններին, ապա յուրաքանչյուր դեպքում աշխատանքային օրենսդրության կատարման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող մարմնի (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 34-րդ հոդված) խնդիրն է պարզել վարչաիրավական պատասխանատվության ենթակա իրավասու անձի մեղքը, դրա դրսևորման ձևը (դիտավորությունը կամ անզգուշությունը) և աստիճանը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32, 33 և 34-րդ հոդվածներ):

Անդրադառնալով վիճարկվող նորմի իմաստով կիրառման ենթակա վարչական տույժի տեսակին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «տուգանքը», որպես այդպիսին, նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածում (1-ին մասի 2-րդ կետ): Այն որպես հարկադրանքի միջոց նախատեսված է օրենսգրքի նորմերի ճնշող մեծամասնությունում, այդ թվում՝ վիճարկվող նորմում: Այդ նորմերի համադրված վերլուծությունը միանշանակ վկայում է, որ «տուգանքը» դրսևորվում է որպես պատասխանատու իրավասուբյեկտից հիշյալ օրենսգրքով սահմանված չափով (կայուն գումարի կամ նվազագույն աշխատավարձի հաշվարկային չափի նկատմամբ բազմապատիկ ցուցիչով արտահայտված) դրամական միջոցների (ՀՀ դրամով) հարկադիր բռնագանձմամբ: Ինքնին, պետական (վարչական) հարկադրանքի այդ տեսակի առկայությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում՝ սահմանադրականության խնդիր չի հարուցում: Տուգանքի այդպիսի տեսակը և չափը սահմանելն օրենսդիր մարմնի իրավասության խնդիրն է, իսկ դրա կիրառումը (բռնագանձումը)՝ որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության միջոց, իրականացնում է իրավասու դատարանը (ՀՀ աշ-

խատանքային օրենսգրքի 38-րդ հոդված, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված): Սահմանադրական դատարանը կարևորում է, որ անձի իրավունքների (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 2-րդ մասում երաշխավորված) պաշտպանության օրենքով սահմանված միջոցներով (ընթացակարգով) անվերապահ երաշխավորվի ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջների կատարումը, տվյալ դեպքում՝ ինչպես վարչական պատասխանատվության ենթարկված անձի, այնպես էլ անձի՝ աշխատավարձի իր խախտված իրավունքի պաշտպանության (վերականգնման) խնդրում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այդպիսի երաշխիքներն առկա են:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության և առկա իրավակարգավորման շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով **միջազգային ժամանակակից փործի ուսումնասիրման արդյունքներից**: Մասնավորապես, դա վերաբերում է իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականության և միասնականության երաշխավորմանը, վարչաիրավական հարաբերություններում իրավասուբյեկտության շրջանակների որոշակիացմանը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության՝ իրավական պատասխանատվության այլ տեսակներից (քաղաքացիական, քրեական) սահմանազատելու իրավական չափանիշների առավել հստակեցմանը և մի շարք այլ սկզբունքային՝ հայեցակարգային նշանակության հարցերին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՏԱԺԸ

ՍԴՈ-723, 15 հունվարի, 2008 թ.

5. .... Մինչդեռ, երկրորդ դեպքում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելիս նախկինում նշանակված կենսաթոշակն այդ օրենքով սահմանված նոր կարգով վերահաշվարկելիս այդ օրենքի հիման վրա է հաշվարկվում և՛ ստաժի այն հատվածը, որն արդեն հիմնավորված է գործում առկա փաստաթղթերով, և՛ լրացուցիչ փաստաթղթերով ներկայացված ստաժը: Իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի ապահովագրական ստաժ, բացառությամբ այդ օրենքի 48 հոդվածով սահմանված կարգի: Վերջինս էլ, իր հերթին, առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքը չի դիտում որպես ստաժի հաշվարկման առանձնահատկություն: Ուստի կենսաթոշակը նշված դրույթների հիման վրա վերահաշվարկելիս չի պահպանվում առանձնապես վնասակար և առանձնապես ծանր պայմաններում աշխատանքի ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկման կարգը:

Օրենսդիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման կարգավորման արդյունքում վերահաշվարկ կատարելիս մեծ մասամբ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ վերահաշվարկված գումարն ավելի նվազ լինի, քան նախկինում նշանակվածը, օրենքի 73 հոդվածի 3-րդ մասով նախատեսել է, որ եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Սակայն այս դրույթը լիովին չի լուծում քաղաքացու համար վերահաշվարկի արդյունքում ստեղծվող բացասական հետևանքները վերացնելու խնդիրը: Նման կարգավորման արդյունքում, թեև ապահովվում է նախկինում հաշվարկված կենսաթոշակի չափը, այնուամենայնիվ, կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանք կատարած անձի՝ լրացուցիչ փաստաթղթերով հիմնավորվող ստաժն ընդհանրապես անտեսվի և լրացուցիչ փաստաթղթերի ներկայացումն իմաստ չունենա, քանի որ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման դեպքում նոր կարգով վերահաշվարկելիս կենսաթոշակի նախկինում հաշվարկված չափը կարող է նվազել: ....

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը: Մինչդեռ, օրենքի վիճարկվող նորմն առնչվել է բազմաթիվ մարդկանց իրավունքներին: Միաժամանակ, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի ներկայացրած տեղեկանքի համաձայն՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո արտոնյալ պայմաններով կենսաթոշակների վերահաշվարկման արդյունքում ապահովագրական ստաժը պակասել է 14.826 տարով (ամսական 3.4 մլն դրամով):

ՍԴՈ–731, 29 հունվարի, 2008 թ.

6. Համաձայն օրենքի 12 հոդվածի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու նախապայման է հանդիսանում 25 տարվա ապահովագրական ստաժի (պահանջվող ստաժ) առկայությունը: Օրենքի 16 հոդվածի համաձայն՝ կենսաթոշակի չափը հաշվարկվում է կենսաթոշակի հիմնական և ապահովագրական մասերի գումարից: Կենսաթոշակի ապահովագրական մասը հաշվարկվում է մինչև անձնավորված հաշվառման ներդրումը ձեռք բերված ապահովագրական ստաժի և անձնավորված հաշվառման ներդրումից հետո անհատական ապահովագրական հաշիվներում արտացոլվող՝ կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների մասին տեղեկատվության հիման վրա: Օրենքի 16 հոդվածում տրվում է կենսաթոշակը հաշվարկելու բանաձևը:

Նշված բանաձևի վերլուծությունը վկայում է, որ կենսաթոշակի չափը որոշելիս էական նշանակություն ունի ոչ միայն պահանջվող ապահովագրական ստաժը, այլ՝ փաստացի ապահովագրական ստաժը:

....

7. Գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Ապահովագրական ստաժը հանդիսանում է այն իրավաբանական փաստը, որի հիման վրա ծագում է ապահովագրական կենսաթոշակի իրավունքը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34–րդ գլուխը նվիրված է իրավաբանական փաստերի հաստատման վերաբերյալ գործերի քննության կարգին: Նշված օրենսգրքի 189 հոդվածը սահմանում է այն իրավաբանական փաստերի ոչ սպառիչ ցանկը,

որոնք ենթակա են դատարանի կողմից հաստատման: Այդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ դատարանը, օրենքով նախատեսված դեպքերում, քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր: Ըստ քննության առարկա հանդիսացող նորմերի՝ օրենսդիրն աշխատանքային ստաժը հաստատելու իրավասությունը վերապահել է դատարանին, սակայն, միաժամանակ, վիճարկվող դրույթով այդ իրավասության իրականացումը ենթարկել է ձևական հիմքով սահմանափակումների՝ անձին զրկելով իր իրավունքի ծագման համար անհրաժեշտ իրավաբանական փաստը հաստատելու նպատակով դատարան դիմելու և դատարանին՝ իրեն օրենքով վերապահված իրավասությունն արդյունավետորեն և լիարժեքորեն իրականացնելու հնարավորությունից:

....

8. Օրենսդրությամբ թույլատրված է իրավաբանական փաստերը հաստատել ոչ միայն դատական կարգով, այլ նաև՝ վարչական, նոտարական կարգով և այլ մարմինների կողմից:

Վիճարկվող օրենքի 48 հոդվածը ևս նախատեսում է ապահովագրական ստաժի հաստատման վարչական կարգ: Այդ հոդվածի 5-րդ կետը, մասնավորապես, սահմանում է, որ պատերազմների, ռազմական գործողությունների, տարերային աղետների, վթարների, արհավիրքների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծում է ապահովագրական ստաժ սահմանող հանձնաժողովներ, որոնց կազմի մեջ մտնում են գործադիր իշխանությունների, գործատուների, արհմիությունների կամ աշխատողների կողմից լիազորված այլ ներկայացուցիչներ: Նման հանձնաժողով ստեղծվել է ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի թիվ 820-Ն՝ «1988 թվականի երկրաշարժի հետևանքով Սպիտակի նախկին վարչական շրջանի տարածքի քաղաքացիների ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության պատճառով ապահովագրական ստաժ սահմանող հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» որոշմամբ:

Օրենքի 48 հոդվածի 5-րդ կետի գործողության շրջանակը, սակայն, որոշակիորեն սահմանափակ է, այն է՝ այս դրույթն առնչվում է միայն այն դեպքերին, երբ փաստաթղթերը չեն պահպանվել այդ հոդվածում նշված արտակարգ (ֆորսմաժորային) հանգամանքների պատճառով:

Սակայն, նույնիսկ ապահովագրական ստաժի վերոհիշյալ վարչական կարգով հաստատման հնարավորության առկայությունը չպետք է անձանց զրկի իրավաբանական փաստերի հաստատման խնդրով դատարան դիմելու իրավունքից, քանզի ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը երաշխավորում է քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության չսահմանափակվող հնարավորություն:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ, ի տարբերություն ապահովագրական ստաժի դատական կարգով հաստատման, ապահովագրական ստաժի՝ վարչական կարգով հաստատման դեպքում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ապահովագրական ստաժի որևէ ժամկետային սահմանափակում, ինչը ոչ միայն չի ապահովում միևնույն հասարակական հարաբերության կարգավորման միասնականությունը, այլև անձի շահերի տեսանկյունից անիմաստ է դարձնում արտակարգ իրավիճակների հետևանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի կորստի դեպքում դատական պաշտպանության իրավունքից օգտվելը:

14. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԴՈ– 1081, 16 ապրիլի, 2013 թ.

5. Ինչպես սահմանադրական իրավունքի միջազգային պրակտիկայում, այնպես էլ մեր երկրում պետական իշխանության մարմնի իրավազորությունը պայմանավորվում է նրա կողմից գործառնական իրավասության իրացման կարողունակությամբ: Դա իր հերթին պայմանավորվում է քվորումի առկայությամբ: Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 49–րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված է, որ «Նախագահողը, նշանակված ժամին հավաստիանալով, որ նիստն իրավազոր է, բացում է այն և հայտարարում դատաքննության ենթակա գործը»: Տվյալ պարագայում նիստի իրավազորությունն անմիջականորեն պայմանավորված է քննության առարկա հարցով գործը քննելու և որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորումի առկայությամբ:

.... Որքանո՞վ է ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի գործունեության առնչությամբ ամրագրել օրենսդիր մարմնի իրավազորության սահմանները: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ հարցն ստացել է հստակ ու ամբողջական պատասխան: Այն արտահայտված է ՀՀ Սահմանադրության 71–րդ հոդվածում, համաձայն որի՝ «Օրենքները և Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին»:

Այս և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված մի շարք այլ հոդվածներից բխում է, որ.

ա) ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի համար **սահմանում է քվորումի ընդհանուր կանոն** և դրանից բացառություններ՝ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում (մասնավորապես՝ 72–րդ հոդվածի 1–ին մաս, 74–րդ հոդված, 79–րդ հոդվածի 1–ին մաս, 83.1–րդ հոդվածի 1–ին մաս, 84–րդ հոդվածի 1–ին մաս և այլն),

բ) տարբերակվում են նիստի իրավազորության և որոշում կայացնելու (օրենք ընդունելու) իրավազորության փոխկապակցված ինստիտուտները: Ազգային ժողովը կարող է ընդունել օրենք կամ որոշում քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, բայց պայմանով, որ այդ նիստն իրավազոր լինի ճանաչվելու որպես օրենսդիր իշխանության մարմնի նիստ: Իսկ դա առկա է այն դեպքում, երբ քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: **Բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված առանձին դեպքերի, պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելիի առկայությունն է ՀՀ Ազգային ժողովի իրավազորության սահմանը:** Դրանից պակաս պատգամավորների որևէ այլ թվի պարագայում, ըստ ՀՀ Սահմանադրության, Ազգային ժողովը՝ որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, հանդես գալու իրավազորություն չի կարող ունենալ,

գ) ՀՀ Սահմանադրության 71–րդ հոդվածը համակարգային առումով թղթակցում է նաև Սահմանադրության 74.1–րդ հոդվածի հետ, որում անդրադարձ է կատարվում օրենսդիր մարմնի անգործության այնպիսի դրսևորումներին, որոնք վերջինիս արձակման հիմք կարող են հանդիսանալ: Նման անգործությունը, մասնավորապես, կարող է դրսևորվել գործառույթն իրացնելու կամ որոշման կայացման համար անհրաժեշտ քվորում չապահովելու հետևանքով: Տվյալ դեպքում քվորումը հանդես է գալիս որպես Ազգային ժողովի իրավազորության իրացման բնութագրիչ:

Քննության առարկայի շրջանակներում ուշադրության են արժանի նաև ՀՀ Սահմանադրության մի շարք այլ դրույթներ: Մասնավորապես, Սահմանադրության 62-րդ հոդվածը (4-րդ մաս) սահմանում է, որ Ազգային ժողովի գործունեության կարգը սահմանվում է ոչ միայն Սահմանադրությամբ, **այլև Ազգային ժողովի կանոնակարգով**, որն օրենք է: Սա նշանակում է, որ սահմանադրական կանոնակարգման շրջանակներում **օրենսդիր մարմինն օժտվում է նաև որոշակի հայեցողությամբ՝ սահմանելու իր գործունեության կարգը**: Ինչ վերաբերում է Սահմանադրության 70-րդ հոդվածում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի ամրագրմանը, ապա տվյալ համատեքստում հստակեցվում է ոչ թե Ազգային ժողովի գործունեության կարգը, այլ լուծվում է իրավասուբյեկտության խնդիր՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին օժտելով Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի հրավիրում նախաձեռնելու իրավասությամբ: Նման իրավասություն ունեն նաև Հանրապետության Նախագահը և կառավարությունը:

Սահմանադրական նման լուծումների շրջանակներում պատգամավորների, այդ թվում՝ պատգամավորական փոքրամասնության իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներ են հանդիսանում, մասնավորապես.

ա) Ազգային ժողովի գործունեության երաշխավորումն իշխանությունների բաժանման և հավասարակշռման, իրավունքի գերակայության և ժողովրդաիշխանության ապահովման, իրավական և ժողովրդավարական պետության կայացման հիմնարար սկզբունքների հիման վրա,

բ) մշտական հիմունքներով ու ազատ մանդատի հիման վրա պատգամավորի լիազորությունների կատարման երաշխավորումը,

գ) Սահմանադրության 66-րդ հոդվածի հիման վրա պատգամավորի կարգավիճակին համապատասխան անձեռնմխելիության նախատեսումը,

դ) պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին սահմանադրական սուբյեկտ ճանաչելը և վերջինիս Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու նախաձեռնությամբ օժտելը,

ե) սահմանադրական մակարդակում Ազգային ժողովի պատգամավորի օրենսդրական նախաձեռնության իրավունքի ճանաչումը,

զ) պատգամավորներին սահմանադրական իրավասությամբ օժտելը՝ կառավարությանն ուղղելու գրավոր և բանավոր հարցեր կամ խմբերի ու խմբակցությունների միջոցով հանդես գալու հարցապնդմամբ:

Նման պարագայում հիմնական խնդիրն այն է, թե այս երաշխիքներն ինչպես են օրենսդրորեն ապահովվում և իրացվում:

6. .... Ինչ վերաբերում է վեճի առարկա դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, ապա.

նախ՝ տվյալ դրույթը **սահմանում է ընդհանուր կանոն** և վերաբերում է Ազգային ժողովի բոլոր նիստերին: Դա նկատի ունենալով՝ դիմողների կողմից հարց կարող էր բարձրացվել պատգամավորական փոքրամասնությանն առնչվող մասով լրացուցիչ իրավակարգավորման կամ իրավակարգավորման բացի հաղթահարման մասին, ինչն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է,

երկրորդ՝ ինչպես նշվեց, քվորումի ապահովումը տվյալ ինստիտուտի իրավազորության բնութագրիչն է և ՀՀ Սահմանադրության, մասնավորապես, 62, 67 և 71-րդ հոդվածների համաձայն քվեարկության ու դրան մասնակցելու միջոցով են իրացվում առանձին պատգամավորների ու օրենսդիր մարմնի գործառնական լիազորությունները,

երրորդ՝ ՀՀ Սահմանադրությունը և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը, այդ թվում՝ վերջինիս 5-րդ հոդվածը, **որևէ պատգամավորի իրավունք չեն վերապահում անհարգելի բացակայել Ազգային ժողովի նիստերից, խուսափել մշտական հիմունքներով**

իր լիազորությունները կատարելու սահմանադրական պահանջից: Ավելին, «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 6-րդ հոդվածը **պարտավորեցնում է** պատգամավորին մասնակցել Ազգային ժողովի նիստերին՝ առանց որևէ վերապահման,

չորրորդ՝ իրավական առումով անհիմն է Ազգային ժողովի նիստերից բացակայելը որպես «քաղաքական բոյկոտ» ներկայացնելը: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը սահմանել է քվեարկությանը չմասնակցելու միայն երկու հնարավոր ինստիտուտ, երբ, մի դեպքում, օրենքով սահմանված կարգով, համաձայն տվյալ օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի դ) կետի, Ազգային ժողովի նիստում պատգամավորը հանդես է գալիս տվյալ քվեարկությանը մասնակցելուց հրաժարվելու մասին հայտարարությամբ, մյուս դեպքում՝ նույն հոդվածի 3-րդ մասի ե) կետի հիմքով քվեարկությունից առաջ նման հայտարարությամբ հանդես է գալիս պատգամավորական խումբը կամ խմբակցությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը քաղաքական դրդապատճառներով **Ազգային ժողովի նիստերին չմասնակցելու** որևէ իրավական հիմք չի նախատեսում: Բացառությամբ Ազգային ժողովի նիստերից օրենքով նախատեսված հարգելի բացակայությունների սպառիչ ցանկի (ներառյալ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» և «ե» կետերով նշված հիմքերով քվեարկությունից պատգամավորի բացակայությունը), մյուս բոլոր բացակայություններն անհարգելի են և ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է առաջացնեն համարժեք իրավական հետևանքներ:

ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության խնդիրն իրոք առկա է, սակայն այն պայմանավորված է ոչ թե վեճի առարկա դրույթով, այլ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի իրավակարգավորումներով, որոնց ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներից ելնելով:

Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ անկախ այն բանից, թե ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվածում նախատեսված որ սուբյեկտի կողմից է նախաձեռնվել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի գումարումը, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներից ելնելով բոլոր պատգամավորները **պարտավոր են** մասնակցել Ազգային ժողովի նիստերին: Բացակայությունը կարող է հարգելի համարվել միայն օրենքով սահմանված կոնկրետ հիմքերի առկայության դեպքում: Այս սկզբունքից շեղվելու բոլոր դեպքերը կհանգեցնեն պատգամավորի ու օրենսդիր մարմնի անգործության՝ դրանից բխող համարժեք իրավական հետևանքներով:

Ամբողջ խնդիրն այն է, թե ինչպիսին են այդ հետևանքները և որքանով են դրանք երաշխավորում նաև պատգամավորական փոքրամասնության իրավունքների իրացումը: Օրենսդրական առկա կարգավորումների ուսումնասիրումը վկայում է, որ տեղ են գտել այնպիսի լուծումներ, որոնք ընդհուպ անիրագործելի են դարձնում ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի ուղղակի գործողությունը՝ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու դեպքում պատգամավորի լիազորությունների **դադարման** վերաբերյալ: Գործնականում, անկախ հարգելի բացակայությունների վերաբերյալ օրենքով նախատեսված հիմքերից, վերջին հաշվով Ազգային ժողովին է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածով իրավասություն վերապահվում որոշումով լուծելու բացակայությունները հարգելի կամ անհարգելի համարելու հարցը, ինչն ըստ էության դառնում է պատգամավորական մեծամասնության կամաարտահայտումը: Նման պայմաններում մեծ վերապահումով կարելի է խոսել պատգամավորական փոքրամասնության իրավունքների պաշտպանվածության կամ Սահմանադրության 67-րդ հոդվածի վերոհիշյալ դրույթի ուղղակի գործողության մասին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ տվյալ իրավակարգավորումը հետևանք է ՀՀ Սահմանադրության 62 և 67-րդ հոդվածների միջև առերևույթ անհամապատասխանության, ինչին դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ՝ առկա սահմանադրաիրավական խնդրի արդյունավետ լուծումը գտնելու տեսանկյունից:

ՍԴՈ-678, 16 փետրվարի, 2007 թ.

6. Քննության առարկա հարցի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիր մարմինն առանձնահատուկ դեր ունի յուրաքանչյուր երկրի ժողովրդավարական զարգացման համար: Պառլամենտարիզմի մշակույթը քաղաքակիրթ բազմակարծության և երկխոսության մշակույթ է: Այն առաջին հերթին դրսևորվում է ժողովրդի կողմից իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելիս: Հասարակական հարաբերությունների կանոնակարգման նկատմամբ դրսևորվող մոտեցումները և օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների թափանցիկ ու հրապարակային իրականացումը քաղաքացիական հասարակության ձևավորման կարևորագույն երաշխիքներից են: Մյուս կողմից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր տարբեր վճիռներում բազմիցս ընդգծել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ ժողովրդավարական համակարգերում իշխանությունների գործունեությունը պետք է ենթարկվի նաև հասարակական կարծիքի ուշադիր վերահսկողությանը: Հայաստանի Հանրապետությունում վերջին 15 տարիների ընթացքում ձևավորվել է նաև այնպիսի կայուն ավանդույթ, որ օրենսդիր մարմնի գործունեությունը եղել է առավել թափանցիկ ու հասու հանրության բոլոր շերտերին: Իր հերթին, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականը կարևորելով հանրային հեռարձակման անկախությունը, միաժամանակ բացատրական հուշագրի թիվ 21 ուղղորդիչ ցուցումով նախատեսում է, որ հանրային հեռարձակման խնդիրն է նաև ապահովել քաղաքական բազմակարծությունը՝ խորհրդարանական փոքրամասնությանը, տարբեր քաղաքական ուժերին իրենց տեսակետը ներկայացնելու համար տրամադրելով եթերաժամ:

ՍԴՈ-719, 27 նոյեմբերի, 2007 թ.

6. .... Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

ՍԴՈ-765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

20. .... Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի նման որոշման առկայության պայմաններում ՀՀ Ազգային ժողովն օժտված չէ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որևէ մեկը «արտոնյալ» վիճակում դնելու հայեցողությամբ, և չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է» ու դրա առկայության հիմնավորման կարիք չկա: Ուստի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճռաբեկ բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը և յուրաքանչյուրը ենթակա են պատճառաբանման:

ՍԴՈ-833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

8. .... Հետևաբար, սահմանադրական դատարանն ընդգծել է օրենսդրի պարտականությունը՝ սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը երաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդ-

վածի 6-րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը:

....

9. Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովն առայժմ չի անդրադարձել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական վերակարգավորման խնդրին, որն էական խոչընդոտ է նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում շահագրգիռ անձանց սահմանադրական իրավունքներն արդյունավետ պաշտպանելու համար:

ՍԴՈ-864, 5 փետրվարի, 2010 թ.

6. .... Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործուն կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնատար և այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ:

ՍԴՈ-866, 23 փետրվարի, 2010 թ.

3. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում վերոհիշյալ նորմերի իրավաբանական բովանդակությունից նաև բխում է, որ.

- սահմանադրական դատարանի որոշումը որևէ կերպ մեկնաբանման, վիճարկման ենթակա չէ,

- սահմանադրական դատարանի ՍԴՈ-758 որոշմանն անմիջականորեն պետք է հաջորդեր ՀՀ Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեությունը՝ կապված ոչ միայն «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքի (ՀՕ-277-Ն) 80 և 76-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2-րդ բաժնի 204.20 և 204.26-րդ հոդվածների համապատասխան նորմերը, այլև «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վերոհիշյալ օրենքի 72-րդ հոդվածում ընդգրկված 204.28-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու հետևանքով ուժը կորցրած ճա-

նաչելու և վերջինիս նախկին իրավակարգավորումը Սահմանադրությանը համապատասխանեցնելու հետ,

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

10. .... Վերոնշյալ սահմանադրական դրույթների պահանջներից ելնելով՝ օրենսդրի հայեցողությունն է սահմանելու իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը՝ ընտրություն կատարելով իրավունքների պաշտպանության դատական և արտադատարանական կարգերի իրացման ձևերի միջև՝ այդ հայեցողությունն իրականացնելիս միաժամանակ պահպանելով վերոնշյալ սկզբունքները:

ՍԴՈ–920, 12 հոկտեմբերի, 2010 թ.

5. ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ օրենսդրի բացառիկ իրավասությանն է վերապահված ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանումը: Իր այդ լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պատասխանատվության միջոցներն ու չափերը: Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով: Օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1–ին, 3–րդ և 43–րդ հոդվածներում:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

7. .... «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծության արդյունքում՝ սահմանադրական դատարանը, չբացառելով պետական տուրքի գծով արտոնություններ տրամադրելու՝ օրենսդրի հայեցողական ազատությունը, արձանագրում է, որ օրենքի 22–րդ հոդվածի 1–ին մասի դրույթները վերաբերում են ինչպես իրավապայմանագրային պարտավորություններով պայմանավորված, այնպես էլ՝ չպայմանավորված դեպքերին:

ՍԴՈ–947, 5 ապրիլի, 2011 թ.

6. .... Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վտանգավորության գնահատումը և դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը և ելնելով վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից:

Օրենսդիրն իրավակիրառողին չի ընձեռում քաղաքացիական և քրեական պատասխանատվություն սահմանող նորմերի միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված արարքի վերաբերյալ գործերը հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության են-

թարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջև: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է և պարտավոր է իմանալ, որ տվյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաև քրեական պատասխանատվություն:

ՍԴՈ–1000, 29 նոյեմբերի, 2011 թ.

5. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժի հանգամանքը պայմանավորված է Սահմանադրությամբ օժտված իրավունքի ուժով, ինչպես նաև ՀՀ միջազգային պարտավորություններով և օրենսդրի որևէ հայեցողություն չի ենթադրում:

....

ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի 4–րդ մասում ամրագրված նորմը սահմանադրական մակարդակով կարգավորում է ինչպես անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող օրենքների, այնպես էլ այլ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը, և, ըստ այդմ՝ այդ դրույթը հասցեագրված է ինչպես օրենսդրին, այնպես էլ **այլ իրավաստեղծ մարմիններին**: Այդ նորմի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այն իրավական **ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում** անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը (բնականաբար, հաշվի առնելով նաև Սահմանադրության 83.5–րդ հոդվածի պահանջները): Միաժամանակ այս նորմը սահմանում է այդ հայեցողությունն իրացնելու ընթացակարգը, այն է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտն ընդունող մարմինը, իրացնելով իրեն Սահմանադրությամբ տրված հայեցողական լիազորությունը, տվյալ իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու **նպատակահարմարության դեպքում տվյալ ակտում ամրագրում է այդ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ:** Նշված հայեցողությունն իրացնելու այս ընթացակարգն ինքնանպատակ չէ և տրամաբանորեն բխում է Սահմանադրությամբ՝ իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության կանոնակարգման ընդհանուր տրամաբանությունից:

7. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78–րդ հոդվածի 2–րդ մասով նախատեսված՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության վիճարկվող իրավակարգավորումն ընդունվել է մինչև 2005 թ. սահմանադրական փոփոխությունները, երբ, ի տարբերություն գործող Սահմանադրության, նշված իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողությունը կանոնակարգող սահմանադրական որևէ դրույթ չէր նախատեսվում: Սահմանադրությամբ խնդրո առարկա իրավահարաբերության կանոնակարգման բացակայության պայմաններում օրենսդիրն ազատ էր այդ իրավահարաբերության ինքնուրույն կանոնակարգում նախատեսելու հարցում, և օրենսդրի հայեցողությանն էր թողնված ընտրությունը՝ նշված ակտերի հետադարձ ուժի առկայության կամ բացակայության կանխավարկածների միջև:

ՍԴՈ–1007, 22 դեկտեմբերի, 2011 թ.

6. .... Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով իշխանության ճյուղերի համակարգում օրենսդիր իշխանության տեղը և դերը, նրա իրավասությունները, գտնում է, որ օրենսդիրն ազատ է վարչական իրավահարաբերությունների շրջանակներում սահմանելու պարտավոր անձի կողմից համապատասխան պարտականությունը չկատարվելու դեպքում հարկադրանքի միջոցներ նշանակելու վերաբերյալ ցանկացած իրավակարգավորում՝ կա՛մ նախատեսելով հարկադրանքի միջոցներ նշանակելու հատուկ ընթացակարգ, կա՛մ **անմիջականորեն** սահմանելով համապատասխան հարկադրանքի միջոցը՝

նախատեսելով այդպիսի միջոցի կիրառման դեպքը: Վերջին դեպքում հարկադրանքի միջոցը կիրառվում է օրենքի ուժով՝ առանց դրա համար որոշում կայացնելու հատուկ ընթացակարգերի:

ՍԴՈ–1020, 11 ապրիլի, 2012 թ.

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարությունում առկա է իրավակարգավորման բաց՝ կապված գրավոր ընթացակարգով դատավարության հատակ կարգի բացակայության հետ: Այդ բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է, որը կարող է իրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում գրավոր ընթացակարգի կանոններ նախատեսելով, այդ թվում՝

– գրավոր քննության նախապատրաստման և անցկացման կարգը,

– դատավարության մասնակիցների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով վերապահված իրավունքների իրացման կարգը (կապված **դատաքննության ողջ ընթացքում** գրավոր ապացույցների, լրացուցիչ նյութերի, բացատրությունների, փաստարկների (հակափաստարկների), միջնորդությունների և դրանց ներկայացման ժամկետների ու դատավարական այլ գործողությունների կատարման հետ),

– գրավոր քննության շրջանակներում դատական միջանկյալ ակտերի կայացման կարգը,

– գրավոր դատաքննության ընթացքում դատարանի անհրաժեշտ գործողությունների շրջանակը (կապված՝ մի կողմից, մասնակիցների, մյուս կողմից՝ մասնակիցների և դատարանի միջև փաստաթղթաշրջանառության կազմակերպման ու կարգի (ժամկետների) հետ),

– գրավոր քննության ընթացքի արձանագրման և դրան ծանոթանալու կարգը,

– գրավոր ընթացակարգով քննության արդյունքում գործով ըստ էության որոշման կայացման և հրապարակման կարգը:

Հետևաբար, ելնելով վիճարկվող նորմերի և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունից, համադրելով ՀՀ վարչական արդարադատության բնագավառում գրավոր քննության ընթացակարգի ընդհանուր իրավակարգավորումն արդար և հրապարակային դատաքննության իրավունքի ու դրա երաշխավորման ընթացակարգային ձևերի կիրառման միջազգային իրավական պրակտիկայում ամրագրված սկզբունքներին ու մոտեցումներին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 19–րդ հոդվածի նորմատիվ ընդհանուր բովանդակության հետ, միաժամանակ անհրաժեշտ համարելով օրենսդիր մարմնի կողմից ՀՀ վարչական դատավարությունում առկա բացի լուծումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138–րդ հոդվածն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

ՍԴՈ–1038, 18 հուլիսի, 2012 թ.

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս 2007 թ. դեկտեմբերի 25–ի թիվ 3–1848/ՎԴ/ քաղաքացիական գործով ընդունված որոշմամբ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել աշխատանքային պայմանագրի հասարակ գրավոր ձևը չպահպանելու իրավական հետևանքների, մասնավորապես, օրենքով սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունն այլ ապացույցներով հիմնավորելու հնարավորության առնչությամբ: Այս որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը խնդրո առարկայի վերաբերյալ, մասնավորապես, նշել է. «....-ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1–ին հոդվածի 4–րդ մասով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի նկատմամբ կիրառելի են գործարքի ձևին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները:

ՍԴՈ-1052, 17 հոկտեմբերի, 2012 թ.

10. Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված երկրորդ հարցին, որն առնչվում է վիճարկվող 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, սահմանադրական դատարանը գտնում է, որ հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձանց՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննելու լիազորությունը դատական ակտը կայացրած դատարանին վերապահելու իրավասությունն օրենսդրի հայեցողության շրջանակներում է: Այս իրավակարգավորման շրջանակներում էական երաշխիք է հանդիսանում վերը նշված միջնորդությունը մերժելու մասին որոշումը բողոքարկելու իրավունքը: Մասնավորապես, օրենսգրքի վիճարկվող 380-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ «Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը և քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382 հոդվածում և 383 հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները»:

Այլ խնդիր է, թե երբ է մեկնարկում օրենսգրքի վերը նշված նորմում սահմանված տասնհինգօրյա ժամկետը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասը պարունակում է իրավական անորոշություն. նորմում հստակ չի նշվում՝ դատական ակտի հրապարակման, թե դատական ակտի պատճենն ստանալու պահից սկսած տասնհինգօրյա ժամկետում կարող է տվյալ դատական ակտը բողոքարկվել վերաքննիչ դատարան: Հաշվի առնելով սույն որոշման 9-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ **սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տասնհինգօրյա ժամկետը մեկնարկում է համապատասխան դատական ակտը հասցեատիրոջ կողմից փաստացիորեն ստանալու կամ գործնականում օրենքով սահմանված կարգով նրան հասու լինելու պահից, և իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության այդպիսի ընկալմամբ:**

ՍԴՈ-1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... Սակայն ցանկացած իրավակարգավորում պետք է հետապնդի օրինաչափ նպատակ և նախատեսի այդ նպատակին հասնելու իրավաչափ երաշխիքներ: Այս տեսանկյունից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորման սահմանադրականության գնահատման խնդիրն ուղղակիորեն առնչվում է նաև չվճարված կենսաթոշակի գումարի վճարման ողջամիտ ժամկետի խնդրին, քանի որ ՀՕ-100-Ն օրենքով կատարված փոփոխության արդյունքում էապես փոխվել է չվճարված կենսաթոշակի գումարի վճարման ժամկետային պայմանը: Համաձայն դրա՝ կենսաթոշակի վճարումը վերսկսվում է դրա համար օրինական հիմքեր առաջանալու ամսվան նախորդող մեկ տարվա համար՝ նախկինում սահմանված երեք տարվա փոխարեն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված** և **համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

Տվյալ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու հստակ կանոնների պահպանումը՝ նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմանների երաշխավորման նպատակով: Դա առավել ևս կարևոր է այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների խստացմանը:

Քննության առարկա գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման փոփոխությունների գործադրումը պետք է զուգորդվի օրենքում այնպիսի իրավապայմանների սահմանմամբ, որոնք կերաշխավորեն, մասնավորապես, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց կողմից կենսաթոշակի ստացման իրավունքի անարգել իրականացումը և չեն խաթարի նրանց լեգիտիմ ակնկալիքները: Տվյալ պարագայում խնդիրն առնչվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից 19.03.2012 թ. ընդունված ՀՕ-100-Ն օրենքին: Բացի այն, որ այդ օրենքի ուժի մեջ մտնելու պայմանները (23-րդ հոդված) գլխավորապես տարածվել են ՀՀ երկքաղաքացիների նկատմամբ, չեն նախատեսվել նաև նոր իրավակարգավորումները գործադրելու ողջամիտ ժամկետներ՝ կապված անձանց հնարավոր գործողություններն այդ փոփոխություններով պայմանավորված պահանջներին համապատասխանեցնելու հետ: ՀՀ սահմանադրական դատարանը, հիմնվելով կենսաթոշակային հարաբերությունների իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ իր նախորդ որոշմամբ (ՍԴՈ-1050) արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, հատկապես կարևորում է կենսաթոշակի իրավունք ունեցող այն անձանց չվճարված կենսաթոշակի գումարի վճարման կայուն երաշխիքների առկայությունը, որոնք օրինական հիմքերով բացակայում են Հայաստանի Հանրապետությունից: Վերջիններիս առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածում առաջարկված փոփոխությունները «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով, «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005 թ. թիվ 1231-Ն որոշման 10-րդ կետով սահմանված կարգով օտարերկրյա պետություններում ՀՀ հյուպատոսական հիմնարկներում հաշվառված անձանց նկատմամբ համաչափ կիրառելու ողջամիտ նվազագույն ժամկետը՝ որպես օրենքի անցումային դրույթներով այդ նորմի ուժի մեջ մտնելու ժամկետ, կարող էր լինել առնվազն վեց ամիսը: Տվյալ ժամանակահատվածում պետությունը կարող էր իրացնել նաև իր պոզիտիվ պարտականությունը՝ համապատասխան հյուպատոսական ծառայությունների միջոցով կամ այլ կերպ իրազեկելով օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրներում հաշվառման կանգնած ՀՀ օրինապաշտ քաղաքացիներին՝ իրենց իրավունքների իրացմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների մասին, որպեսզի վերջիններս ի վիճակի լինեին ձևավորել օրենսդրական փոփոխություններին համարժեք լեգիտիմ ակնկալիքներ: Այսինքն՝ իրավունքի իրացման պայմանների փոփոխությունները կարող են լինել սկզբունքորեն իրավաչափ, եթե հետապնդում են օրինաչափ նպատակներ և իրացվում են այդ նպատակին համաչափ միջոցներով ու ձևերով: Ի դեպ, սույն գործով պատասխանող կողմը նույնպես ընդունում է օրենքի՝ վեճի առարկա նորմի կիրառման համար անցումային որոշակի ժամանակահատվածի անհրաժեշտությունը՝ մարդկանց իրավունքների պաշտպանության և սահմանադրականության խնդիր չառաջացնելու տեսանկյունից:

ՍԴՈ-1076, 5 մարտի, 2013 թ.

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում դիմողի հղումները Սահմանադրության 6, 14.1, 43, 50 և 51-րդ հոդված-

ներին կամ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին՝ ակնհայտ անհիմն են: ՀՀ ընտրական օրենսգրքի ողջ 15-րդ գլուխը, որով սահմանվում են Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրման իրավունքը և դրա իրացման կարգը, ընտրական գրավը, թեկնածուի գրանցման ու դրա ուժը կորցնելու կարգը, օրենսգրքի մյուս բոլոր դրույթների հետ մեկ միասնականության մեջ ներկայացնում է ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջի հիմքով նախագահի ընտրության՝ **օրենքով սահմանված կարգը**: Ի դեպ, երկրների գերակշիռ մասում սահմանադրաիրավական համանման իրավակարգավորումների պայմաններում նույն օրենքով սահմանված կարգի շրջանակներում, այսպես կոչված, «զուտ անձնական ցանկության վրա հիմնված» ինքնաառաջադրում չի նախատեսվում: Սահմանվում է, որ պասիվ ընտրական իրավունքն իրացնելի է միայն կուսակցությունների, որոշակի թվով ընտրողների կամ պատգամավորների կողմից թեկնածու առաջադրվելու պայմանով:

ՍԴՈ– 1081, 16 ապրիլի, 2013 թ.

5. Ինչպես սահմանադրական իրավունքի միջազգային պրակտիկայում, այնպես էլ մեր երկրում պետական իշխանության մարմնի իրավազորությունը պայմանավորվում է նրա կողմից գործառնական իրավասության իրացման կարողունակությամբ: Դա իր հերթին պայմանավորվում է քվորումի առկայությամբ: Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Նախագահողը, նշանակված ժամին հավաստիանալով, որ նիստն իրավազոր է, բացում է այն և հայտարարում դատաքննության ենթակա գործը»: Տվյալ պարագայում նիստի իրավազորությունն անմիջականորեն պայմանավորված է քննության առարկա հարցով գործը քննելու և որոշում կայացնելու համար անհրաժեշտ քվորումի առկայությամբ:

«Քվորում» եզրույթը լատիներեն ծագում ունի (quorum praesentia sufficit) և բառացի նշանակում է «որոնց ներկայությունը բավարար է»: Ներկայացուցչական մարմնի պարագայում **բավարար է այն ներկայությունը**, որի դեպքում տվյալ մարմինն իր սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխան գործունեություն իրականացնելու իրավասություն կունենա: **Քվորումի առկայությունն է տվյալ մարմնի իրավազորության վկայությունը և գործառույթների իրացման իրավաչափության երաշխիքը:** Քվորումն է այն չափորոշիչը, որը սահմանված թվով պատգամավորների առկայությանը տալիս է գործառնական բնույթի որակական բնութագրիչ՝ ճանաչելով այն որպես Ազգային ժողով:

Որքանո՞վ է ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի գործունեության առնչությամբ ամրագրել օրենսդիր մարմնի իրավազորության սահմանները: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ հարցն ստացել է հստակ ու ամբողջական պատասխան: Այն արտահայտված է ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Օրենքները և Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին»:

Այս և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված մի շարք այլ հոդվածներից բխում է, որ.

ա) ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի համար **սահմանում է քվորումի ընդհանուր կանոն** և դրանից բացառություններ՝ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում (մասնավորապես՝ 72-րդ հոդվածի 1-ին մաս, 74-րդ հոդված, 79-րդ հոդվածի 1-ին մաս, 83.1-րդ հոդվածի 1-ին մաս, 84-րդ հոդվածի 1-ին մաս և այլն),

բ) տարբերակվում են նիստի իրավազորության և որոշում կայացնելու (օրենք ընդունելու) իրավազորության փոխկապակցված ինստիտուտները: Ազգային ժողովը կարող է ընդունել

օրենք կամ որոշում քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, բայց պայմանով, որ այդ նիստն իրավազոր լինի ճանաչվելու որպես օրենսդիր իշխանության մարմնի նիստ: Իսկ դա առկա է այն դեպքում, երբ քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: **Բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված առանձին դեպքերի, պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելիի առկայությունն է ՀՀ Ազգային ժողովի իրավազորության սահմանը:** Դրանից պակաս պատգամավորների որևէ այլ թվի պարագայում, ըստ ՀՀ Սահմանադրության, Ազգային ժողովը՝ որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, հանդես գալու իրավազորություն չի կարող ունենալ,

գ) ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածը համակարգային առումով թղթակցում է նաև Սահմանադրության 74.1-րդ հոդվածի հետ, որում անդրադարձ է կատարվում օրենսդիր մարմնի անգործության այնպիսի դրսևորումներին, որոնք վերջինիս արձակման հիմք կարող են հանդիսանալ: Նման անգործությունը, մասնավորապես, կարող է դրսևորվել գործառույթն իրացնելու կամ որոշման կայացման համար անհրաժեշտ քվորում չապահովելու հետևանքով: Տվյալ դեպքում քվորումը հանդես է գալիս որպես Ազգային ժողովի իրավազորության իրացման բնութագրիչ:

Քննության առարկայի շրջանակներում ուշադրության են արժանի նաև ՀՀ Սահմանադրության մի շարք այլ դրույթներ: Մասնավորապես, Սահմանադրության 62-րդ հոդվածը (4-րդ մաս) սահմանում է, որ Ազգային ժողովի գործունեության կարգը սահմանվում է ոչ միայն Սահմանադրությամբ, **այլև Ազգային ժողովի կանոնակարգով**, որն օրենք է: Սա նշանակում է, որ սահմանադրական կանոնակարգման շրջանակներում **օրենսդիր մարմինն օժտվում է նաև որոշակի հայեցողությամբ՝ սահմանելու իր գործունեության կարգը**: Ինչ վերաբերում է Սահմանադրության 70-րդ հոդվածում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի ամրագրմանը, ապա տվյալ համատեքստում հստակեցվում է ոչ թե Ազգային ժողովի գործունեության կարգը, այլ լուծվում է իրավասուբյեկտության խնդիր՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին օժտելով Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի իրավիրում նախաձեռնելու իրավասությամբ: Նման իրավասություն ունեն նաև Հանրապետության Նախագահը և կառավարությունը:

Սահմանադրական նման լուծումների շրջանակներում պատգամավորների, այդ թվում՝ պատգամավորական փոքրամասնության իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներ են հանդիսանում, մասնավորապես.

ա) Ազգային ժողովի գործունեության երաշխավորումն իշխանությունների բաժանման և հավասարակշռման, իրավունքի գերակայության և ժողովրդաիշխանության ապահովման, իրավական և ժողովրդավարական պետության կայացման հիմնարար սկզբունքների հիման վրա,

բ) մշտական հիմունքներով ու ազատ մանդատի հիման վրա պատգամավորի լիազորությունների կատարման երաշխավորումը,

գ) Սահմանադրության 66-րդ հոդվածի հիման վրա պատգամավորի կարգավիճակին համապատասխան անձեռնմխելիության նախատեսումը,

դ) պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին սահմանադրական սուբյեկտ ճանաչելը և վերջինիս Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու նախաձեռնությամբ օժտելը,

ե) սահմանադրական մակարդակում Ազգային ժողովի պատգամավորի օրենսդրական նախաձեռնության իրավունքի ճանաչումը,

զ) պատգամավորներին սահմանադրական իրավասությամբ օժտելը՝ կառավարությանն ուղղելու գրավոր և բանավոր հարցեր կամ խմբերի ու խմբակցությունների միջոցով հանդես գալու հարցապնդմամբ:

Նման պարագայում հիմնական խնդիրն այն է, թե այս երաշխիքներն ինչպես են օրենսդրորեն ապահովվում և իրացվում:

....

7. ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը ոչ միայն ամրագրում է ՀՀ Ազգային ժողովի տեղն ու դերը պետական իշխանության համակարգում, այլև սահմանում է օրենսդիր իշխանության մարմնի գործունեության ընթացակարգային սահմանները: Վերջիններիս թվին են պատկանում նաև հարցերի այն շրջանակի որոշակիացումը, որոնց վերաբերյալ Ազգային ժողովն ընդունում է որոշումներ:

Վերոհիշյալ հոդվածում իրենց իրավական բնույթից ելնելով առկա են երկու տիպի իրավանորմեր՝ նյութական, որոնցով կանոնակարգվում են իրավահարաբերությունները, որոշակիացվում են օրենսդիր մարմնի իրավասության շրջանակները, երկրորդ՝ ընթացակարգային, որոնց միջոցով գործառույթի իրացման խնդիրն է լուծվում:

Եթե ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը» դրույթը սահմանում է օրենսդիր մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակը, ապա որոշումներ ընդունելու իրավասության իրացման շրջանակի հստակեցումն առաջին հերթին Ազգային ժողովի գործունեության կանոնակարգման նպատակ է հետապնդում: Ընդ որում, Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված բոլոր հոդվածներով, բացառությամբ 67-րդ հոդվածի (առանձին քննարկման առարկա կարող է լինել նաև 74.1-րդ հոդվածը), նախատեսված են Ազգային ժողովի կոնկրետ լիազորություններ, որոնց իրացման ձև է սահմանված որոշման ընդունումը: Այդ մասին է վկայում Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական բովանդակության համադրումը 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերի, 57, 59-րդ հոդվածների, 62-րդ հոդվածի 2-րդ մասի, 66, 69, 73, 74, 75, 77, 79-րդ հոդվածների, 80-րդ հոդվածի 2-րդ մասի, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածների, 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 103, 111 և 112-րդ հոդվածների իրավակարգավորումների հետ: Վերջիններով հստակ սահմանված են Ազգային ժողովի լիազորությունները տվյալ իրավակարգավորման շրջանակներում:

ՍԴՈ-1142, 2 ապրիլի, 2014 թ.

15. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքների և պարտականությունների հավասարակշռումը, պարտականությունների հարցում թերացման համար համարժեք պատասխանատվության սահմանումն իրավակարգավորման և օրինաստեղծ գործունեության կարևորագույն պայմաններից են և հետևողական իրացում են պահանջում:

18. .... Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված իրավասությունների և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված դատավարական նորմերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշում ընդունելուց հետո այդ որոշման պահանջների հաշվառմամբ քննության առարկա օրենքի հետագա համարժեք փոփոխությունների ու նաև կիրարկման հետ կապված բոլոր հարցերի լուծումը գտնվում է օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում:

ՍԴՈ-1224, 7 հուլիսի, 2015 թ.

6 .... Բացի դրանից, ցանկացած իրավունքի իրացում պետք է դիտարկել իրավունքների ու պարտականությունների միասնության ժողովրդավարական սկզբունքի տեսանկյունից, համաձայն որի՝ Սահմանադրությամբ և օրենքներով անձանց համար երաշխավորված իրավունքներն ու դրանց համարժեք պարտականությունները ենթադրում են, որ պետությունը միաժամանակ ստանձնում է դրանց իրացումն ապահովելուն կոչված մի շարք պարտակա-

նություններ, այդ թվում՝ իրավական, սոցիալական և այլ պայմանների ապահովման բնագավառում: Անձանց, պետության իրավունքներն ու պարտականությունները փոխկապակցված են, միասնական, պայմանավորված՝ հասարակական տվյալ հարաբերության բովանդակությամբ ու առանձնահատկությամբ: Այդպիսի միասնությունն արդյունավետ իրավակարգավորման ոչ միայն պայման է, այլև էական երաշխիք: Տվյալ դեպքում, Սահմանադրության 37–րդ հոդվածով սահմանված սոցիալական ապահովության իրավունքը տվյալ իրավունքն ապահովելու համար պետության պոզիտիվ պարտականությունից զատ տվյալ իրավունքի հասցեատիրոջ համար պարտադիր ենթադրում է նաև համապատասխան պարտականություն, այն է՝ նպատակային սոցիալական վճար վճարելու պարտականություն, որի արդյունքում ձևավորվում է այն գումարը, որը որպես լրացուցիչ կենսաթոշակային գումար տրամադրվելու է սոցիալական ապահովության իրավունքի սուբյեկտին:

Միաժամանակ, նպատակային սոցիալական վճար վճարելու պարտականությունը միանգամայն համատեղելի է Սահմանադրության 37–րդ հոդվածի այն դրույթի համատեքստում, համաձայն որի՝ սոցիալական ապահովության ծավալը և ձևերը սահմանվում են օրենքով: Տվյալ դեպքում օրենսդրի հայեցողությանն է վերապահված սոցիալական ապահովության ծավալի ու ձևերի ընտրությունը, և որ տվյալ ոլորտում համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ–տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:

ՍԴՈ–1256, 23 փետրվարի, 2016 թ.

7. .... Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ տեղեկատվության վճարի սահմանման չափը թեև գտնվում է օրենսդրի լիազորությունների շրջանակներում, այնուամենայնիվ, այն պետք է համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78–րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՄԱՆԴԱՏ, ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

ՍԴՈ–810, 30 հունիսի, 2009 թ.

5. .... Միաժամանակ, միջազգային պրակտիկայում առկա է մեկ այլ ինստիտուտ, որը՝ առնչվելով հրամայական մանդատի ինստիտուտին, այնուամենայնիվ, տարբեր իրավական բովանդակություն ունի: Դա **մանդատի գործողության դադարեցումն է կուսակցական պատկանելության փոփոխության հետևանքով:** Այս ինստիտուտը վերաբերում է համամասնական ընտրական համակարգին և տարբեր դրսևորումներ ունի՝ կապված բուն ընտրական համակարգի առանձնահատկությունների հետ: Այն երկրներում, որտեղ գործում է մեծամասնական–համամասնական խառն ընտրական համակարգ ու որոնցում առկա է կայուն և զարգացած քաղաքական կառուցակարգ, ազատ մանդատի սկզբունքը տարածվում է բոլոր պատգամավորների վրա և կուսակցական պատկանելության փոփոխությունը նման խնդիր չի հարուցում: Խնդիրն առկա է այն պարագայում, երբ պատգամավորության թեկնածուն ընտրական քվեաթերթիկում ներկայացված չէ, և ընտրողը նրա վերաբերյալ որևէ դիրքորոշում չի արտահայտել:

7. .... այն, որ ինչպես մեծամասնական ընտրակարգով ընտրությունների, այնպես էլ համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում մանդատի աղբյուրը ժողովուրդն է, անվիճելի է: Սակայն հիմնախնդրի բուն էությունը և դրա իրավաչափությունը բացահայ-

տելու համար հարկ է դրան մոտենալ ոչ միայն այն տեսանկյունից, թե ո՞րն է մանդատի աղբյուրը, այլ նաև՝ թե այդ աղբյուրը՝ ժողովուրդը, ու՞մ է պատվիրակել պետաիշխանական իր իրավունքի իրացումը և ի՞նչ նպատակով է պատվիրակել: Պատգամավորների լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքի իրավաչափությունը կարող է գնահատվել միայն վերոնշյալ երեք հարցերի պատասխանների եռամիասնության շրջանակներում: Այդ հարցերի պատասխանների արդյունքում պարզ կդառնա, որ պատգամավորի մանդատի գործողության դադարեցման խնդրո առարկա հիմքը պատգամավորի՝ ոչ թե կուսակցությանը հաշվետու լինելու, այլ հենց իր մանդատի աղբյուրին՝ ժողովրդին հաշվետու լինելու դրսևորում է: Նման միջոցով ապահովվում է այն պատգամավորի քաղաքական պատասխանատվությունը ժողովրդի առջև, ով շեղվել է այն քաղաքական ուղեգծից, որի իրացման համար ժողովուրդը պատվիրակել էր նրան պետաիշխանական իր իրավունքի իրացումը: Կուսակցության կողմից ծրագրային ուղեգծից շեղվելու հանգամանքի վերաբերյալ ժողովուրդն իր դիրքորոշումն արտահայտում է հերթական ընտրությունների ժամանակ: Այս առումով սկզբունքային նշանակություն ունի նաև ընտրությունների պարբերականության ժամկետային սահմանների ճիշտ որոշումը:

....

Անհրաժեշտ է համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների տեղը թափուր մնալու ընթացակարգը և խմբակցությունը լքելուն վերաբերող նորմերը դիտարկել համակարգային փոխկապակցվածության մեջ: Համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների տեղը թափուր մնալու դեպքում այն լրացվում է նույն ցուցակի հաջորդ թեկնածուի կողմից: Ինչպես պատգամավորի թափուր տեղը լրացնելու այս կարգը, այնպես էլ կուսակցական պատկանելությունը փոխելու հիմքով մանդատի գործողության դադարեցումն այն հիմնական իրավական միջոցներն են, որոնք ապահովում են մինչև հաջորդ խորհրդարանական ընտրությունները խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցության պահպանումը, որն սկզբնապես ձևավորվել է ընտրություններում ժողովրդի կամքի արտահայտման արդյունքում: Խորհրդարանում քաղաքական այն հարաբերակցությունը, որը սահմանվում է ըստ ժողովրդի կամաարտահայտության, չի կարող փոփոխություն կրել տվյալ գումարման խորհրդարանի գործունեության ընթացքում**: Հետևաբար, պատգամավորի լիազորությունների դադարեցման խնդրո առարկա հիմքն իրավաչափ միջոց է այդ նպատակն ապահովելու համար:** Այլապես նման հիմքի բացակայության պայմաններում կստացվի, որ քաղաքական կուսակցությունների գոյությունը, որպես ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման միջոց, միանգամայն շինծու երևույթ է, քանի որ հենց ընտրություններից հետո կարող են տեղի ունենալ պատգամավորական խմբերի ու խմբակցությունների այնպիսի վերադասավորումներ, որ ընտրությունների արդյունքում ձևավորված օրենսդիր մարմինը չարտահայտի ժողովրդի կամքը: Այսինքն՝ ժողովրդի կամքի արտահայտությունը լինի որոշակի խորհրդարանական քաղաքական հարաբերակցություն, որը, սակայն, հակառակ ժողովրդի կամքի, վերածվի մեկ այլ հարաբերակցության, ինչի արդյունքում ձևավորվի օրենսդիր մարմին, որը չի արտացոլի ընտրությունների իրական արդյունքները: Մինչդեռ ընտրական համակարգի գլխավոր առաքելություններից մեկն այն է, որ կարողանա ապահովել ընտրովի մարմիններում քաղաքական ուժերի հարաբերակցությունը՝ ընտրողների իրական աջակցությանը համամասնորեն:

Վեցերորդ՝ կուսակցական պատկանելությունը փոխելու հիմքով մանդատի գործողության դադարեցման ինստիտուտի էության և բովանդակության պատմական զարգացումը.

միջազգային պրակտիկան վկայում է, որ, այսպես կոչված, կուսակցությունների դասալքումը բավականին տարածված և խնդրահարույց պրոբլեմ է: Օրինակ, ըստ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի փորձագետների վերլուծության, Իտալիայում 1996–2001 թթ.

պատգամավորների 10 տոկոսը փոխել են իրենց կուսակցությունը: Ռուսաստանի Պետական դումայում 1993–1995 թթ. այդ թիվն հասել է 31 տոկոսի, Չեխիայի պառլամենտում 1992–1996 թթ. այն կազմել է 40 տոկոս: Հնդկաստանում 1967–73 թթ. 2700 պատգամավոր է փոխել կուսակցությունը, որոնցից 212–ը նոր կուսակցությունում դարձել են նախարարներ: Ուկրաինայում 1998–2006 թթ. պատգամավորների 60 տոկոսն առնվազն մեկ անգամ փոխել է կուսակցությունը, իսկ առանձին պատգամավորներ փոխել են իրենց խմբակցությունը մինչև 10 անգամ:

Հայաստանում մինչև 1997 թ. մայիս ամիսը ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգը նախատեսում էր նորմ, համաձայն որի պատգամավորը կարող էր դուրս գալ խմբակցությունից, եթե նա կամովին հրաժարվում է պատգամավորական լիազորություններից (հոդվ. 29): 1997 թ. մայիսի 27–ի օրենսդրական փոփոխության արդյունքում այդ նորմը փոխարինվեց հետևյալ դրույթով. «Պատգամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցությանը և Ազգային ժողովի նախագահին, որն այդ մասին հայտարարություն է անում Ազգային ժողովի առաջիկա նիստում»: Նման փոփոխությունն սկիզբ դրեց մամուլում լայն արձագանք ստացած, այսպես կոչված, «առնետավազքին»: 1997–2007 թթ. ընթացքում Հայաստանի Ազգային ժողովի թվով 85 պատգամավոր փոխել է պատգամավորական խմբակցությունը:

9. ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մի շարք սկզբունքներ, որոնք Հայաստանի Հանրապետությանը հաղորդում են ժողովրդավարական պետության որակներ: Դրանք ընտրակարգի հիմնարար սկզբունքներն են, մասնավորապես, ընտրությունների **պարտադրականության և պարբերականության** սկզբունքները (Սահմանադրության 2 հոդված՝ փոխկապակցված 1–ին հոդվածի՝ «ժողովրդավարական» սահմանադրաիրավական բնութագրիչի հետ, ինչպես նաև 4, 30 հոդվածների հետ), **բազմակարծության ու բազմակուսակցության** սկզբունքները (Սահմ. 7 հոդված), **խոսքի, միավորումների և ժողովների ազատությունը** (Սահմ. 27, 28 և 29 հոդվածներ), **հանրագրեր ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունքը** (Սահմ. 27.1. հոդված) և այլն:

Այս ընդհանուր սկզբունքներից բացի, հարկ է առանձնացնել նաև երկու կառուցվածքային սկզբունքներ, որոնք պայմանավորում են Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական հաստատությունների բուն էությունը.

նախ՝ **ազատ մանդատի սկզբունքը**՝ Ազգային ժողովի պատգամավորի **անկախությունը** որևէ ցուցումից, պատվիրանից և նրա ենթարկվելը բացառապես իր խղճին և համոզմունքներին (Սահմ. 66 հոդվածի 1–ին մաս): Ազատ մանդատի ուժով պատգամավորը կաշկանդված չէ անգամ ընտրողների կամքով, նա ազատ է իր պատգամավորական գործունեության մեջ, ներառյալ քվեարկությունը խորհրդարանում: Ազատ մանդատի սկզբունքը պատգամավորի սահմանադրական կարգավիճակը պայմանավորող այլ առանցքային երաշխիքների հետ մեկտեղ (ինդեմնիտետ՝ Սահմ. 66 հոդվածի 2–րդ մաս, անձեռնմխելիություն՝ Սահմ. 66 հոդվածի 3–րդ և 4–րդ մասեր) հնարավորություն է տալիս ձևավորելու այլ իշխանության ճյուղերից **անկախ օրենսդիր իշխանություն**՝ Ազգային ժողով, և պատգամավորներին դիտարկել որպես ***ամբողջ ժողովրդի***, այլ ոչ թե իրենց ընտրողների կամ թեկուզև ամբողջ ընտրազանգվածի ներկայացուցիչներ, ապահովելով խորհրդարանի համախմբող գործառույթը:

Ազատ մանդատի սկզբունքը՝ որպես **ներկայացուցչական ժողովրդավարության** հիմքերից մեկը, հնարավոր է դարձնում կարծիքների բախումը խորհրդարանում և ապահովում Ազգային ժողովի՝ փոխհամաձայնության հանգելու ունակությունը: Հետևապես, ազատ մանդատի շնորհիվ է խորհրդարանում ապահովվում հավասարակշռությունը տարբեր մասնակի (քաղաքական) շահերի միջև, որով պայմանավորված է բարձրագույն սահմանադրական

մարմիններից մեկի գործունակությունը՝ ընդունելու օրենքներ, կայացնելու որոշումներ և իրականացնելու իր այլ լիազորությունները:

ՍԴՈ- 1081, 16 ապրիլի, 2013 թ.

7. .... Սահմանադրության 67-րդ հոդվածով ամբողջությամբ կանոնակարգված են հանրային բնույթի նյութաիրավական հարաբերություններ, սահմանված են այն բոլոր ու նաև սպառիչ դեպքերը, երբ **դադարում են** Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները: Ընդ որում, այդ դեպքերը ներկայացվում են թվարկումով՝ առանց որևէ առանձնահատուկ բնութագրիչների ու բացառությունների: Այս թվարկումների մեջ, թերևս, առանձնահատուկ մոտեցում է պահանջում Սահմանադրության 65-րդ հոդվածին կատարվող հղումը, որը ենթադրում է, որ տվյալ դրույթի օրենսդրական իրացումը պետք է հստակ թղթակցի Սահմանադրության 65-րդ հոդվածի պահանջների կատարումն օրենսդրորեն երաշխավորելու հետ:

Ներկայացված համատեքստում ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածում ամրագրված **«դադարում» եզրույթը** սահմանադրաիրավական այն բնույթն ունի, որ հետևանքն առաջանում է իրավունքի ուժով (ex jure), **երբ առկա է փաստը:** Մասնավորապես, Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտը կամ Ազգային ժողովի արձակումն իրավունքի ուժով հանգեցնում է պատգամավորի լիազորությունների դադարման: Որևէ որոշմամբ կամ նույնիսկ օրենքով սահմանադրական տվյալ նորմի գործողությունն արգելափակել հնարավոր չէ, քանի որ դա անմիջականորեն կհակասի Սահմանադրության 6-րդ հոդվածի (1-ին և 2-րդ մասեր) պահանջներին:

Սահմանադրության 67-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ նման մոտեցումը հավասարապես վերաբերում է նաև մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայությանը և չի նախատեսվում լիազորությունների **դադարեցման** կոնկրետ իրավասություն:

Սահմանադրական տարբեր հոդվածների համադրված վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ստեղծված իրավիճակի հաղթահարման համար հիմք պետք է ընդունել սահմանադրական իրավունքի երկու հիմնարար սկզբունք:

Առաջին՝ Սահմանադրությունն ինքնաբավ է և տեքստային առերևույթ անհամապատասխանությունները կարող են հաղթահարվել Սահմանադրության արժեբանության ու հիմնարար սկզբունքների վրա հենվելով: Տվյալ պարագայում էական է այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի **անմիջական գործողության ապահովումը**, դրա համար անհրաժեշտ իրավական նախադրյալների ստեղծումը երկրում ժողովրդաիշխանության ամրապնդման, ներկայացուցչական ժողովրդավարության արդյունավետ իրացման, օրենսդիր իշխանության գործունակության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկն է:

Երկրորդ՝ իրավունքի ընթացակարգային նորմը չի կարող նյութական նորմի ամբողջական ու լիարժեք իրացման խոչընդոտ հանդիսանալ: Այս առումով ՀՀ Ազգային ժողովը Սահմանադրության 67-րդ հոդվածի պահանջների իրացման շրջանակներում վեճի առարկա դրույթի մասով կարող է միայն «**ի գիտություն ընդունել**» իրավական փաստի ու դրանից բխող հետևանքի առկայությունը, իրավասություն չունենալով քվեարկությամբ կասեցնել սահմանադրական նորմի գործողությունը և **«դադարում» եզրույթը գործնականում փոխակերպել «դադարեցում» եզրույթով**, երբ վերջինս ենթադրում է հստակ ու համարժեք լիազորության առկայություն: Դրա մասին է վկայում նաև ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածում, 55-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ պարբերության մեջ ու 83-րդ հոդվածի 3-րդ կետում **«դադարում» և «դադարեցում»** եզրույթների սահմանադրաիրավական բովանդակության համադրված վերլուծությունը: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը սահմանում է, որ «Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ»: Իսկ

Սահմանադրությունը մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայության պարագայում ՀՀ Ազգային ժողովին պատգամավորի լիազորությունների **դադարեցման** իրավասությամբ չի օժտել, այն էլ՝ որոշման միջոցով:

Հետևությունն այն է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի, մասնավորապես, 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերի դրույթները, Ազգային ժողովի պատգամավորի բացակայության քննարկման և **քվեարկությամբ** այն հարգելի կամ անհարգելի համարելու վերաբերյալ որոշում կայացնելու մասով, փոխում են սահմանադրական նորմի իրավական բովանդակությունը, **իրավունքի ուժով լիազորությունների դադարումը փոխակերպում են դրանց դադարեցման գործընթացի**: Եթե դադարման ինստիտուտի պարագայում երաշխավորվում են նաև խորհրդարանական փոքրամասնության իրավունքները, ապա դադարեցումը պայմանավորվում է խորհրդարանական մեծամասնության կամաարտահայտմամբ և ընդհուպ կորցնում է իր կանխարգելիչ նշանակությունը: ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի պահանջներից ելնելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերը պետք է իրավակարգավորման այնպիսի հնարավորություն նախատեսեն, որի պայմաններում **օրենքով նախատեսված իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ընդունելով ի գիտություն՝** կազմվի արձանագրություն պատգամավորի **լիազորությունները՝ իրավունքի ուժով** (ex jure) **դադարելու** վերաբերյալ:

Անհրաժեշտ է նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 6-րդ և 99-րդ հոդվածներում փոխհամաձայնեցված հաշվի առնել այն հանգամանքը, որ պատգամավորի բացակայությունը կարող է հարգելի համարվել **միայն օրենքով նախատեսված կոնկրետ հիմքերի առկայության դեպքում** ու կարգով, և այն չի կարող հայեցողական գնահատման արդյունք լինել: Սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխան փոփոխությունների անհրաժեշտություն ունի նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը:

15. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–630, 18 ապրիլի, 2006 թ.

9. .... Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով մարդու իրավունքների վերաբերյալ սահմանադրական նորմ–սկզբունքների պահանջները, սեփականության իրավունքի պաշտպանության և հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարման հարցերով սահմանադրական և միջազգային իրավական նշված մոտեցումները, նկատի ունենալով սահմանադրական փոփոխությունների արդյունքում ձևավորված նոր իրավական պահանջները, գտնում է, որ կառավարությունը չի կարող իր որոշումներով սահմանել պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը, որն ուղղակիորեն առնչվում է սեփականության իրավունքի սահմանափակման հիմնախնդրին և պետք է լինի հանրային շահի ու անհատի սեփականության իրավունքի հավասարակշռության ապահովման երաշխիք:

....

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ իրավական համակարգում օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից չեն ստեղծվել անհրաժեշտ ու բավարար նորմատիվային իրավական նախադրյալներ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 3–րդ մասի պահանջների իրականացման համար՝ այն իրավական բովանդակության ու նշանակության տեսանկյունից, ինչը դրված է սահմանադրական նորմի հիմքում: Պետությունը կամ համայնքը կարող են կողմերի ազատ կամքի դրսևորման հիման վրա իրենց կարիքների բավարարման համար քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում գնել անհրաժեշտ գույք: Սակայն երբ հարցն առնչվում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարմանը, ապա ցանկացած իրավական ակտի և համարժեք գործողության հիմքում պետք է դրվի Սահմանադրության 31 հոդվածի պահանջը և նկատի առնվի, որ մարդու սահմանադրական իրավունքները բարձրագույն արժեք են ու անմիջական գործող իրավունք:

ՍԴՈ–815, 14 հուլիսի, 2009 թ.

8. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4 հոդվածի 1–ին և 2–րդ մասերի և 7 հոդվածի 2–րդ մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ դիմողների փաստարկների առնչությամբ սահմանադրական դատարանը վերահաստատելով հիմք է ընդունում իր 2006 թ. ապրիլի 18–ի ՍԴՈ–630 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, մասնավորապես, «բացառիկ», «գերակա» և «հանրային շահ» հասկացությունների բովանդակությունը բացահայտված է սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18–ի ՍԴՈ–630 որոշման 12–րդ կետի 2–րդ պարբերությունում:

Գերակա բնույթ ունեցող հանրային շահերի առաջնայնության որակների հստակեցման և հիմնավորման համար չափանիշներն ու սկզբունքները սահմանված են վերոնշյալ օրենքի 4 և 7 հոդվածներում, որպիսիք իրենց իրավական բովանդակությամբ համապատասխանում են սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ–630 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

ՀՀ կառավարության «Երևան քաղաքի վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման կարգը և նկարագրության արձանագրության օրինակելի ձևը հաստատելու մասին» 25.01.2007 թ. թիվ 108-Ն, ինչպես նաև «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» 20.11.2008 թ. թիվ 1405-Ն որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ առաջնորդվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4 հոդվածում ամրագրված սկզբունքներով՝ ՀՀ կառավարությունը ոչ միայն որոշում է սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահը, այլև մատնանշում այն հետապնդող նպատակները:

Հասարակության և պետության կարիքների համար օտարվող գույքի սեփականատիրոջ՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանության ապահովման տեսանկյունից սահմանադրական դատարանը կարևորում է օրենքի 4 հոդվածի 1-ին մասի «ե» կետում և 9 հոդվածում բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության փաստի, հետևաբար, բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման՝ դատական կարգով բողոքարկման և առաջացած վեճերը դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելու իրավական հնարավորությունը, որը կարևոր երաշխիք է նաև ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված անձի իրավունքների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրության 85 և 89 հոդվածներում սահմանված է ՀՀ կառավարության, որպես գործադիր իշխանության մարմնի, սահմանադրաիրավական կարգավիճակը, որի բովանդակությունից է անմիջականորեն բխում այն լիազորությունների շրջանակը, մասնավորապես՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բնագավառում, որը նախատեսված է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում:

ՍԴՈ-816, 18 հուլիսի, 2009 թ.

8. .... ՀՀ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ կետի դրույթներից բխում է, որ կառավարությունը ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրեն վերապահված գործառույթն իրականացնելիս կարող է՝ բացառապես Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, սահմանել իրավակարգավորման ընթացակարգեր: Բնապահպանության և բնօգտագործման բնագավառում ՀՀ կառավարության, ինչպես նաև պետական կառավարման մյուս մարմինների (այդ թվում՝ հարկային) ընդհանուր լիազորությունները սահմանված են ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 5-6 հոդվածներում՝ այնքանով, որքանով այդ օրենսգրքով են սահմանվում ՀՀ տարածքում ընդերքից օգտվելու **սկզբունքները**, կարգը, ընդերքօգտագործման հետ կապված հարաբերությունները:

ՍԴՈ-913, 14 սեպտեմբերի, 2010 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ կառավարությունը չկատարելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2004 թ. ապրիլի 8-ի՝ «Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 541-Ն որոշման պահանջները, 2002 թվականի ապրիլի 16-ից մինչ օրս չի ընդունել քննության առարկա օրենքով ի-

րեն պատվիրակված բոլոր որոշումները՝ օրենքի կիրարկումն ապահովելու համար: Անցած ութ տարիների ընթացքում տվյալ օրենքի գործողության համար անհրաժեշտ և բավարար ենթաօրենսդրական երաշխիքներ չեն ստեղծվել, մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից դեռևս չեն սահմանվել.

– օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման և օգտագործման կարգը (օրենքի 2.1–րդ հոդված), այդ թվում՝ ՀՀ վարչապետի 2009 թ. մայիսի 18–ի թիվ 397–Ն որոշումից բխող,

– արհեստական և կենդանիներից վերցված օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման կարգը, պայմանները և սահմանափակումները (**օրենքի 3–րդ հոդված**),

– փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները, ինչպես նաև փոխպատվաստումն իրականացնելու կարգը (**օրենքի 4–րդ հոդված),**

– դիակից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու թույլտվության կարգը և պայմանները:

ՍԴՈ–966, 3 հունիսի, 2011 թ.

7. ՀՀ Սահմանադրության 85–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշումներ՝ ապահովելու համար նաև միջազգային պայմանագրերի և օրենքների կատարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ կառավարության սահմանադրական պարտականությունն է իր որոշմամբ սահմանել «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15–ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրի, ինչպես նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի դրույթների կատարման կարգն ու պայմանները՝ այնպիսի ծավալով ու բովանդակությամբ, ինչպիսին անմիջականորեն բխում է այդ ակտերից և Սահմանադրությամբ ու օրենքներով իրեն վերապահված լիազորություններից՝ հաշվի առնելով նաև սահմանադրական դատարանի ՍԴՈ–668 որոշման 5–րդ կետում արտահայտված դիրքորոշումը:

Վերոհիշյալ համաձայնագրի և օրենքի, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության այլ ակտերի դրույթների համադրված վերլուծությունը վկայում է, որ 2004 թվականի փետրվարի 5–ի թիվ 207–Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը լիարժեք պայմաններ չի նախատեսել Հայրենական մեծ պատերազմի վետերանների, նրանց հավասարեցված անձանց, զոհված զինծառայողների ընտանիքների՝ ՀՀ միջազգային պայմանագրով և «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների և երաշխիքների ամբողջական իրացումն ապահովելու համար: ՀՀ կառավարությունը չի անդրադարձել նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ–668 որոշման կատարման ապահովմանը: Մասնավորապես՝ կառավարության հիշյալ որոշման իրավակարգավորման շրջանակներից դուրս են թողնվել ՀՀ միջազգային համաձայնագրով պատերազմի հաշմանդամ համարվող որոշակի թվով անձինք (հիշյալ համաձայնագրի 1–ին հավելվածի 2.3 կետ), որոնք նախկինում օգտվել են պատերազմի հաշմանդամների համար նախատեսված արտոնություններից: ՀՀ կառավարության 05.02.2004 թ. թիվ 207–Ն որոշմամբ նախկին որոշումները ուժը կորցրած ճանաչելով և հիշյալ անձանց համար դրամական փոխհատուցում չնախատեսելով՝ տեղի է ունեցել նրանց՝ ՀՀ միջազգային պարտավորություններով նախատեսված իրավունքի արգելափակում: Ընդ որում, ՀՀ դատական պրակտիկան նույնպես փաստել է, որ պատերազմի հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ քաղաքացիների պահանջը հստակ իր լուծումն է ստացել «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և

հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրում, սակայն հենվելով ՀՀ կառավարության՝ սույն գործով վեճի առարկա որոշման վրա՝ չի բավարարվել քաղաքացիների հայցադիմումը՝ իրենց արտոնությունները պահպանելու կամ դրամական փոխհատուցում տալու հարցով:

ՀՀ սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում դիմող կողմի դիրքորոշումը՝ ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման սահմանադրականության վերաբերյալ, գտնելով, որ, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ (1-ին և 4-րդ մասեր), 42-րդ (1-ին մաս), 44-րդ, 85-րդ (2-րդ մաս) հոդվածներով, ինչպես նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ կառավարությունը պարտավոր էր իր որոշմամբ ապահովել Հայրենական մեծ պատերազմի վետերանների և նրանց հավասարեցված անձանց սոցիալ-տնտեսական արտոնությունների գործողությունը կամ դրանց դրամական փոխհատուցումը՝ նաև այն կատեգորիայի անձանց համար, որը նախատեսված է հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ-1142, 2 ապրիլի, 2014 թ.

13. Համակարգի հուսալիության կարևորագույն երաշխիքներից մեկն էլ ռիսկերի կառավարումն է: Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ֆոնդի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները ևս օրենքով չեն սահմանվել, այլ վերապահվել են բացառապես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հայեցողությանը: «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով սահմանված է. «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով»: Բացի դրանից, նույն օրենքի 25-րդ հոդվածը, որը վերնագրված է «Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ պահանջներն ու սահմանափակումները», սահմանում է, որ «Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ գործում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ներդրումային ֆոնդերի կառավարիչների նկատմամբ սահմանված պահանջներն ու սահմանափակումները, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենքով»: «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլուխն է (հոդվածներ 35-37) նվիրված տվյալ իրավահարաբերություններին, որում օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ. «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանում է Կենտրոնական բանկը»: Բացի դրանից, տվյալ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «Սույն օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի գործիքներում ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 324-Ն որոշմամբ սահմանվել է «Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» (կանոնակարգ 10/16): Անկախ այն հանգամանքից, որ օրենքով նախատեսված «պահանջները» ենթաօրենսդրական ակտով սահմանափակվել են «նվազագույն պահանջների» շրջանակով, բովանդակային առումով նույնպես փաստաթուղթը հեռու է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, մասնավորապես՝ դրա 45-րդ հոդվածի պահանջ-

ներից, կառուցված է «պետք է», «անհրաժեշտ է» դարձվածքներից բխող ցանկությունների վրա և համակարգի հուսալիության ապահովման կոնկրետ երաշխիքներ չի բովանդակում:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Ավելին, «Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Եթե Կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, Կենտրոնական բանկն առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ»: Առավել ևս նման իրավակարգավորման պայմաններում կարևորվում է կենսաթոշակային ֆոնդերի ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջների, հիմնական սկզբունքների, ինչպես նաև կուտակային ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումների հիմնական շրջանակի օրենքով կանոնակարգումը:

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վերապահելով նորմաստեղծ, վերահսկողական և կազմակերպական լայն լիազորություններ, չի նախատեսել համակարգի բնականոն գործունեության երաշխավորման համար կենտրոնական բանկի համարժեք հանրային-իրավական պատասխանատվության որևէ միջոց:

Օրենքով հստակեցված չեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի այն գործառույթի իրականացման կարգն ու պայմանները, համաձայն որի վերջինս՝ «....մշակում և ապահովում է կուտակային կենսաթոշակային բաղադրիչի միասնական քաղաքականությունը» (հոդվ. 17, մաս 1, կետ 3):

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ-673, 16 հունվարի 2007 թ.

5. Հանրային ծառայությունների կարգավորումը պետական կառավարման գործառույթ է, որը բխում է պետության՝ ՀՀ Սահմանադրության 31.1. հոդվածում նախատեսված խնդիրներից, համաձայն որի՝ պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

Սահմանադրական այդ նորմն իրացվել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում, որի 2, 4, 5 և 6 հոդվածների համաձայն պետության անունից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն է իրավասու սակագնային քաղաքականություն իրականացնելու և լիցենզավորելու (գործունեության թույլտվություն տրամադրելու) միջոցով հանրային ծառայությունների ոլորտում իրականացնել պետական քաղաքականություն, որի նպատակն է՝ սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռումը, կարգավորվող անձանց համար գործունեության միատեսակ պայմանների ստեղծումը, մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը նպաստելը և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խթանելը:

6. ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի համաձայն պետական իշխանությունն իրականացվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա, պետական մարմինների՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների շրջանակում:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով հստակեցված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավական կարգավիճակը, ըստ որի՝ հանձնաժողովն անկախ է իր իրավասության շրջանակներում և օժտված հանրային ծառայությունների սակագներ սահմանելու (կարգավորելու) բացառիկ լիազորությամբ:

Հանձնաժողովին օրենքի ուժով այդպիսի կարգավիճակ տրամադրելու առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ իշխանությունների բաժանման հիման վրա պետական իշխանության կազմակերպման սահմանադրաիրավական սկզբունքն ունենալով հիմնարար նշանակություն, միաժամանակ չի բացառում տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության պայմաններում կառավարման այնպիսի գործառույթի առկայությունը պետական իշխանության բնագավառում, ինչպիսին անկախ կարգավորումն է, որը բխում է ՀՀ Սահմանադրության ինչպես 83.2., 83.3. հոդվածների, այնպես էլ 83.5. հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի իրավական բովանդակությունից: Որպես պետական կառավարման գործառույթ, ՀՀ Սահմանադրության 5 հոդվածին համապատասխան, այն ենթակա է հավասարակշռման պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործառնական, հակակշռող և զսպող լիազորությունների շրջանակներում: Սահմանադրաիրավական այդ սկզբունքն իր որոշակիությունն է ստացել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 13, 14, 16 և 19 հոդվածներում, որոնցում նախատեսված են օրենսդիր և գործադիր մարմինների հետ հանձնաժողովի գործառնական փոխհարաբերությունների, իսկ 12 հոդվածում՝ գործունեության դատական վերահսկողության շրջանակները:

7. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի համաձայն կարգավորվող ոլորտն ընդգրկում է էներգետիկայի, հեռահաղորդակցության բնագավառները և ջրային համակարգը: Այդ բնագավառներում հանձնաժողովի լիազորությունները և իրականացվող պետական քաղաքականության սկզբունքները նախատեսված են նաև «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքներով և ՀՀ ջրային օրենսգրքով:

Վերոհիշյալ բնագավառներում իրականացնելով սակագնային քաղաքականություն և լիցենզավորող (գործունեության թույլտվություն տրամադրող) գործունեություն, հանձնաժողովը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 5, 11 հոդվածներին, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4, 18 հոդվածներին և օրենսդրության այլ ակտերին համապատասխան ընդունում է նորմատիվ իրավական ակտեր՝ որոշումներ, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և սահմանված կարգով ենթակա պետական իրավական փորձաքննության, պետական գրանցման և պաշտոնական հրապարակման:

Կազմակերպական հարցերով հանձնաժողովն իրավասու է ընդունել նաև անհատական իրավական ակտի ուժ ունեցող որոշումներ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածին համապատասխան: Նույն հոդվածում սահմանված են նաև հանձնաժողովի որոշումների ընդունման կարգն ու պայմանները:

Հանձնաժողովի իրավաստեղծ գործունեության վերլուծությունը վկայում է, որ նորմատիվ իրավական ակտերով սահմանվել և գործողության մեջ են դրվել կարգավորվող բնագավառներում մատուցվող ծառայությունների սակագները, դրանց սահմանման ու վերանայման կարգը, հաշվարկման մեթոդիկան, անհրաժեշտ ցուցանիշները, կարգավորվող անձանց կողմից հանձնաժողովին հաշվետվություն և տեղեկատվություն ներկայացնելու կարգը և այլն:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–278, 11 հունվարի, 2001 թ.

6. Համաձայն ՀՀ Սահմանադրության 76 հոդվածի՝ «Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն», իսկ 89 հոդվածի 2–րդ կետի՝ կառավարությունը «Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողովին»:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 21 հոդվածի համաձայն պետական կառավարման մարմիններն իրենց և համակարգի բյուջետային ֆինանսավորման հայտերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց կցելով նախատեսվող ծախսերի նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումով: Ներկայացված հայտերի ուսումնասիրությունից և դրանց հետ կապված տարաձայնությունները համաձայնեցնելուց հետո պետական բյուջեի վերջնական նախագիծը կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողով:

9. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գլուխ V–ը նվիրված է Հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովի՝ որպես անկախ պետական մարմնի, հիմնադրման, իրավասության և գործունեության կազմակերպման հարցերին: Ընդ որում, համաձայն օրենքի 37 հոդվածի՝ Ազգային հանձնաժողովի գործունեությունն առնչվում է միայն մասնավոր հեռուստառադիոընկերությունների արտոնագրման և վերահսկողության հետ:

Նման հանձնաժողովների ստեղծումը նպատակ է հետապնդում ոչ միայն սահմանափակել տվյալ ոլորտի նկատմամբ վարչակառավարչական ներազդեցության հնարավորությունները և պետական կառավարման գործառույթը փոխարինել կարգավորման գործառույթով, այլև օրենքով երաշխավորել համակարգի գործունեության անկախությունն ու դրա սուբյեկտների հավասար իրավական պաշտպանվածությունը: Օրենքի բազմաթիվ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ տվյալ խնդիրը դեռևս հստակ և ամբողջական լուծում չի ստացել:

Ինչ վերաբերում է Ազգային հանձնաժողովին առնչվող, վիճարկվող դրույթներին, ապա քննարկվող օրենքով Ազգային ժողովին տրված են Հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովի ինչպես հիմնադրման, այնպես էլ վերահսկման հարցերին վերաբերող մի շարք լիազորություններ:

ՍԴՈ–678, 16 փետրվարի, 2007 թ.

4. Քննության առնվող հարցի առնչությամբ սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ Սահմանադրության 27 հոդվածը, մի կողմից, երաշխավորում է յուրաքանչյուրի համար կարծիքի ազատ արտահայտման, խոսքի ազատության (ներառյալ տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության) իրավունքը, մյուս կողմից՝ կարևորում է լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը՝ որպես հիշյալ իրավունքների ապահովման երաշխիք: Այս ենթատեքստում առանձնակի շեշտվում է, որ «Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

Զանգվածային լրատվամիջոցի անկախությունը, մասնավորապես, ենթադրում է ծրագրային քաղաքականության, հաղորդացանկի կազմման, հաղորդումների ուղղվածության որոշման գործընթացներում ինքնուրույնություն ու ազատություն, այդ գործընթացների վրա

իշխանությունների որևէ ազդեցության բացառում: Այդ նկատառումներից ելնելով էր նաև, որ ՀՀ սահմանադրական փոփոխություններով հեռարձակվող լրատվամիջոցների գործունեության կարգավորումը ՀՀ միջազգային պարտավորությունների շրջանակներում ճանաչվեց որպես սահմանադրաիրավական գործառույթ և Սահմանադրության 83.2. հոդվածով նախատեսվեց. «Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին....»:

Ինչպես ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի դրույթները, այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Հանրային հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ թիվ R (96) 10 հանձնարարականը տեղեկատվության ազատության և հանրային հեռարձակման անկախության ապահովման խնդիրների լուծումը տեսնում են օրգանական կապի մեջ: Եվրախորհրդի Նախարարների կոմիտեն հիշյալ փաստաթղթում, մասնավորապես, շեշտելով մամուլի ազատության հիմնարար սկզբունքի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում, առաջարկում է Եվրախորհրդի անդամ երկրներին օրենսդրությամբ երաշխավորել հանրային հեռարձակումների անկախությունը, որը ենթադրում է ծրագրային, խմբագրական ու կառուցակարգային ինքնուրույնություն: Միաժամանակ, Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի բացատրական հուշագրի նախաբանի 3-րդ մասում շեշտվում է, որ հանրային հեռարձակման կազմակերպումը տարբերվում է պետական նախատիպերից հենց նրանով, որ այն իրականացվում է անկախ և առանց իշխանության մարմինների որևէ միջամտության: Այդ հաղորդումները կազմակերպող մարմինների անկախության երաշխավորումը դիտարկվում է որպես հիմնարար սկզբունք: Շեշտվում է նաև, որ նույնիսկ պետական ֆինանսավորումը չի կարող միջոց դառնալ այդ մարմինների խմբագրական անկախության կամ կառուցակարգային ինքնուրույնության վրա ուղղակի կամ անուղղակի ճնշում գործադրելու համար (Հանձնարարականի 5-րդ մաս): Հանրային հեռարձակման անկախությունը նշված Հանձնարարականով ճանաչելով որպես հիմնարար սկզբունք, պահանջ է առաջադրվում, որ այն պետք է զերծ լինի տնտեսական, քաղաքական կամ վարչական ներազդեցությունից և ծառայի ողջ հանրությանը:

.... Հայաստանի Հանրապետությունը, 2000 թ. դեկտեմբերին վավերացնելով Եվրախորհրդի կանոնադրությունը, պարտավորվել է առաջնորդվել վերջինիս դրույթներով, հաշվի առնել Նախարարների կոմիտեի և Խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները և անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել դրանց իրականացման համար:

....

6. Քննության առարկա հարցի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիր մարմինն առանձնահատուկ դեր ունի յուրաքանչյուր երկրի ժողովրդավարական զարգացման համար: Պառլամենտարիզմի մշակույթը քաղաքակիրթ բազմակարծության և երկխոսության մշակույթ է: Այն առաջին հերթին դրսևորվում է ժողովրդի կողմից իր իշխանությունը ներկայացուցչական մարմինների միջոցով իրականացնելիս: Հասարակական հարաբերությունների կանոնակարգման նկատմամբ դրսևորվող մոտեցումները և օրենսդիր մարմնի վերահսկողական լիազորությունների թափանցիկ ու հրապարակային իրականացումը քաղաքացիական հասարակության ձևավորման կարևորագույն երաշխիքներից են: ....

ՀՀ Ազգային ժողովի, նրա մարմինների ու առանձին պատգամավորների գործունեության լայն հրապարակայնության երաշխավորումը, այդ թվում ներկայումս գոյություն ունեցող և ավանդույթ դարձած ձևերի շրջանակներում, բխում է իրավական, ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքներից և պետք է ապահոված լինի օրենսդրական ու կազմակերպչական անհրաժեշտ հիմքերով: Միաժամանակ, այդ հիմքերը պետք է լինեն իրավաչափ, բխեն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադ-

րական սկզբունքի պահանջներից, չխախտեն սահմանադրական ինստիտուտների գործառնական ու կառուցակարգային անկախության պահանջները: Այդ հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումն արտահայտել է 11.01.2001 թ. ՍԴՈ–278 որոշմամբ: Դրա հետ մեկտեղ, ՀՀ սահմանադրական փոփոխությունները նոր պահանջներ առաջադրեցին լրատվամիջոցների ազատության ու անկախ գործունեության երաշխավորման համար: Վերջինիս ապահովումը ՀՀ Ազգային ժողովի առջև, մասնավորապես, խնդիր է դնում փոխկապվածության մեջ վերանայել և Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնել 2000 թ. հոկտեմբերի 9–ին ընդունված՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», 2003 թ. դեկտեմբերի 13–ին ընդունված՝ «Զանգվածային լրատվության մասին» օրենքների, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի, ինչպես նաև տվյալ խնդրին առնչվող այլ օրենքների համապատասխան դրույթները: Հիշյալ օրենքների դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան Հանրային հեռուստառադիոընկերություն ստեղծելու իրավական երաշխիքները դեռևս լիարժեք ու ամբողջական չեն: Խնդիրը շտապ համակարգային լուծում է պահանջում, և հիմնախնդրին առնչվող որևէ օրենքի այս կամ այն դրույթի սահմանադրականության գնահատմամբ հարցն ամբողջությամբ չի սպառվում: Մասնավորապես, քննության առարկայի առնչությամբ միջազգային պրակտիկան վկայում է, որ հարցի սկզբունքային լուծման բանաձևն օրենսդիր մարմնի գործունեության առավելագույն հրապարակայնության ապահովումն է՝ լրատվամիջոցների, այդ թվում հանրային, գործառնական ու կառուցակարգային անկախության երաշխավորման պայմաններում: Ինչ վերաբերում է իրավաչափ ձևի ընտրությանը, ապա դա օրենսդիր մարմնի խնդիրն է: Բոլոր դեպքերում, միջազգային պրակտիկայում առկա ցանկացած ձևի ընտրության պարագայում, պետք է իրավական երաշխիքներ ստեղծվեն, որպեսզի հանրային հեռարձակման պրակտիկայում օրենսդիր մարմնի գործունեության լայն հրապարակայնության և քաղաքական բազմակարծության ապահովումը չվտանգվեն: Տվյալ խնդրի լուծման ժամանակ, ելնելով նաև ՀՀ միջազգային պարտավորություններից, ՀՀ Ազգային ժողովն առաջին հերթին պետք է առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 27, 83.2 հոդվածների, ինչպես նաև Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի, դրա բացատրական հուշագրի, Խորհրդարանական վեհաժողովի՝ Հանրային հեռարձակում թիվ 1641 (2004) 1 հանձնարարականի դրույթներով:

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԹԵՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–753, 13 մայիսի, 2008 թ.

5. Քննության առարկա դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրության 45 հոդվածում մատնանշված «պարտադիր վճար» հասկացության բովանդակությանը, ինչպես նաև օրենքի վիճարկվող դրույթում օգտագործված «եթերավճար» հասկացության բովանդակությանն ու էությանը:

Սահմանադրության 45 հոդվածում «այլ» բառի առկայությունից բխում է, որ հիշյալ հոդվածում նշված հարկերը և տուրքերը ևս պարտադիր վճարումներ են, և, հետևաբար, հիշյալ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները, հարկերից և տուրքերից տարբերվելով հանդերձ, վերջիններիս հետ պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ:

7. Վերոհիշյալ իրավակարգավորման վերլուծությունը վկայում է, որ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի հաստատման և գանձման գործընթացի ամբողջական և լիարժեք կարգավորումը թույլ է տալիս բացահայտել այդ վճարի բնույթն ու բովանդակությունը: Նշված իրավակարգավորման համատեքստում ռադիոհաճախականությունների օգ-

տագործման վճարը, հանդիսանալով գույքի օգտագործման դիմաց գանձվող վճար, իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր, և որպես այդպիսին նման գումարի գանձման համար իրավական հիմք է հանդիսանում ռադիոհաճախականությունների սեփականատիրոջ, այն է՝ պետության, որն այդ իրավահարաբերություններում գործում է Հանձնաժողովի միջոցով, և ռադիոհաճախականությունն օգտագործողի միջև **կնքված համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիրը**:

Այսպիսով, էլեկտրոնային հաղորդակցության որևէ ցանցի շահագործման կամ ծառայություն մատուցելու համար ռադիոհաճախականությունների օգտագործման անհրաժեշտություն ունեցող անձը, դիմելով ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստանալու համար, համաձայնում է հրապարակային պայմանագիր հանդիսացող թույլտվության պայմաններին և պայմանագրերի ազատության սկզբունքին համապատասխան ըստ էության մտնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ՝ իր ազատ կամքով ի թիվս այլ պարտավորությունների՝ ստանձնելով նաև օգտագործման վճար մուծելու պարտավորություն:

Մինչդեռ հեռուստառադիոընկերությունների պարագայում նույնատիպ վճարի սահմանման և գանձման գործընթացն ստացել է այնպիսի անորոշ և հակասական կարգավորում, որ հնարավոր չէ հստակ հետևություն անել ո՛չ այդ վճարի գանձման նպատակի, ո՛չ այդ վճարի բնույթի ու բովանդակության մասին:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հարցը կանոնակարգելիս օրենսդրությունը տարբերակված մոտեցում չի դրսևորել նաև առանձին ոլորտները կարգավորող անկախ հանձնաժողովների ու կոնկրետ նախարարության պետաիրավական կարգավիճակների հարցում՝ գործնականում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը վերապահելով անկախ հանձնաժողովի իրավասություն:

8. Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, եթե օրենսդիրն օրենքի 53 հոդվածի 3-րդ մասով եթերավճար սահմանելիս՝ այն դիտարկել է որպես պետության սեփականությունը հանդիսացող սահմանափակ ռեսուրսի՝ ռադիոհաճախականությունների օգտագործման դիմաց տրվող վարձավճար, ապա վերջինիս վճարման հետ կապված իրավահարաբերությունները պետք է ստանային քաղաքացիաիրավական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորում, որտեղ խնդրո առարկա վճարը պետք է դիտարկվեր որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարր: Նույն մոտեցումը պետք է լիներ նաև այն պարագայում, եթե խնդրո առարկա եթերավճարը դիտարկվեր որպես սպասարկման վճար: Մինչդեռ առկա իրավակարգավորման վերլուծությունը վկայում է, որ, ի տարբերություն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող տնտեսավարողների, հեռուստառադիոընկերությունների կողմից վճարվող եթերավճարի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումը կրում է ոչ թե քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ հատկանիշներ, այլ հանրային իրավական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ հատկանիշներ, այն է՝ խնդրո առարկա եթերավճարը սահմանվել է հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում և 2007 թվականից համարվել է պետական մարմինների լիազորություններով պայմանավորված ծառայությունների մատուցման (հեռարձակման հաճախության սպասարկման) համար որպես պետական բյուջե մուտքագրվելու համար նախատեսված վճար, ինչի արդյունքում այն ձեռք է բերում պարտադիր վճարի հատկանիշներ՝ մասնավորապես համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի: Իսկ եթերավճարն օրենսդրի կողմից որպես պարտադիր վճար դիտարկվելու դեպքում իրավակարգավորումը պետք է համապատասխաներ ՀՀ Սահմանադրության 45 հոդվածի և 83.5. հոդվածի 2-րդ կետի պահանջներին:

9. Հեռուստառադիոընկերությունների՝ եթերավճար վճարելու պարտավորության կապակցությամբ առկա ոչ լիարժեք, անհստակ, հակասական իրավակարգավորման և իրավակիրառական պրակտիկայի պայմաններում, երբ տվյալ տնտեսավարող սուբյեկտի համար որոշակիացված չեն ո՛չ եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, ո՛չ գանձման նպատակը, ո՛չ գանձող մարմինը, ո՛չ գանձման ընթացակարգը, ձևավորվում է իրավական անորոշության և անկանխատեսելիության մի վիճակ, որը կասկածի է ենթարկում եթերավճարի գանձման իրավաչափությունը՝ հիմքեր ստեղծելով օրենքով նախատեսված պարտականությունը չկատարելու համար:

.... Հաշվի առնելով միևնույն սահմանափակ ռեսուրսի, այն է՝ ռադիոհաճախականությունների օգտագործման իրավակարգավորման հակասականությունը, օրենքի վիճարկվող դրույթի անորոշությունը, այդ անորոշությունից բխող՝ օրենքի դրույթի սխալ մեկնաբանության վրա հիմնված իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը տնտեսավարող սուբյեկտի համար հստակ կանխատեսելի չի դարձնում եթերավճարի գանձման նպատակը, իրավական մեխանիզմները, եթերավճարի բնույթն ու բովանդակությունը, այդ եթերավճարը վճարելու՝ տնտեսավարող սուբյեկտի պարտականության իրավաչափությունը:

16. ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ– 924, 16 նոյեմբերի, 2010 թ.

6. Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող հիմնադրույթներն ամրագրված են մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 142–րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում Հայաստանի Հանրապետության դրամն անվանական արժեքով պարտադիր ընդունման համար օրինական վճարամիջոց է: Նույն օրենսգրքի 356–րդ հոդվածը պարտավորեցնում է դրամական պարտավորություններն արտահայտել Հայաստանի Հանրապետության դրամով:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. նոյեմբերի 24–ին ընդունված՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածը կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության արժույթով գործարքների իրականացումը: Այդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման դրամական (փողային) գնանշումներն իրականացվում են, Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման դիմաց փողային վճարումներն ընդունվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ նշված օրենքով նախատեսված դեպքերի: Հիշյալ օրենքի 10–րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում դրանում նշված սուբյեկտների կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների խախտման համար, իսկ, այդ սուբյեկտներից բացի, ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ անձանց կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջների խախտումների առնչությամբ հղում է կատարում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքին:

Վերոհիշյալ իրավանորմերի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165–րդ հոդվածի համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի 165–րդ հոդվածի հիմնական նպատակն է ստեղծել իրավական երաշխիք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ դրույթների և «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող արժութային քաղաքականության կատարումն ապահովելու համար:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում՝ ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ ազգային արժույթի՝ դրամի կայունությունը և ձևավորել դրամի նկատմամբ վստահություն ներքին արժութային շուկայում:

Ազգային արժույթի առկայությունը պետական ինքնիշխանության հատկանիշներից մեկն է, իսկ ազգային արժույթի կայունության ապահովվածությունը՝ պետական իշխանության արդյունավետության չափանիշներից մեկը: Հիշյալ նպատակին պետությունը հասնում է իրականացվող դրամավարկային քաղաքականության և դրա շրջանակներում իրականացվող արժութային կարգավորման, այսինքն՝ արժույթով կատարվող գործարքների պայմանների և կարգի սահմանմամբ և այդ կարգի պահպանման նկատմամբ հսկողություն և վերահսկողու-

թյուն իրականացնելու միջոցով: Արժութային կարգավորման նպատակն է ապահովել ոչ միայն տնտեսական աճ, այլև պետության տնտեսական անվտանգությունը:

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՍԴՈ–804, 26 մայիսի, 2009 թ.

5. Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելու նպատակով սահմանադրական դատարանը նախ հարկ է համարում բացահայտել պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարի իրավական բնույթն ու բովանդակությունը, ինչն իր հերթին պայմանավորված է «պարտադիր նորմ» հասկացության բովանդակությամբ:

«Պարտադիր նորմ» հասկացության իրավական բովանդակությունը բացահայտված է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 1-ին կետում, ըստ որի՝ պարտադիր նորմերը սեփականության պահպանման այն պահանջները և պարտադիր միջոցառումներն ու աշխատանքներն են, որոնց չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին: Ընդ որում, 10 հոդվածն ամբողջությամբ վերաբերում է ընդհանուր բաժնային սեփականության պահպանմանը: Այդ նպատակին ծառայող պարտադիր նորմերի մեջ, ըստ նույն հոդվածի 2-րդ կետի, ներառվում են հակահրդեհային, սանիտարական, քաղաքաշինական, կոմունալ սպասարկման և այլ միջոցառումներ: Համաձայն նույն կետի՝ պարտադիր նորմերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ի կատարումն օրենքի նշված դրույթի՝ ՀՀ կառավարությունն ընդունել է 04.10.2007 թ. «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» թիվ 1161-Ն որոշումը: Վերջինիս համաձայն՝ պարտադիր նորմերը ներառում են այնպիսի նվազագույն ծավալի պարտադիր իրականացման ենթակա կազմակերպական և տեխնիկական համալիր միջոցառումներ ու աշխատանքներ, որոնց ժամանակին չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին: Կառավարության որոշմամբ սպառիչ կերպով սահմանված են բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը, բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները և դրանց ապահովմանն ուղղված վերանորոգման աշխատանքների և կանխարգելիչ միջոցառումների իրականացման առավելագույն ժամկետները:

Կառավարությունն իր այս որոշմամբ հանձնարարել է նաև ՀՀ քաղաքաշինության նախարարին եռամսյա ժամկետում մշակել և հաստատել այդ որոշմամբ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման սահմանված նորմերի շրջանակներում պարտադիր իրականացման ենթակա միջոցառումների և աշխատանքների համար անհրաժեշտ խոշորացված ծախսերի հաշվարկման մեթոդական ցուցումներ: Ի պատասխան սահմանադրական դատարանի պահանջած տեղեկատվության՝ ՀՀ քաղաքաշինության նախարարը 15.05.09 թ. գրությամբ հայտնել է, որ նշված ցուցումների մշակման աշխատանքները նախատեսվում էր իրականացնել ՀՀ 2008 թ. պետական բյուջեի «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում» ծախսային ծրագրով նախարարությանը հատկացված միջոցների սահմաններում: Հաշվի առնելով, որ 2008-2009 թթ. պետական բյուջեներով այդ ուղղությամբ միջոցներ չեն նախատեսվել, նշված մեթոդական ցուցումները դեռևս չեն մշակվել: Ըստ քաղաքաշինության նախարարի՝ մեթոդական ցուցումների բացակայությունը, սակայն, չի խոչընդոտում շենքի կառավարման մարմնի՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 1-ին կետով սահմանված՝ պարտադիր նոր-

մերի կատարման համար նախատեսված աշխատանքների նախահաշիվ կազմելու բացառիկ լիազորության իրականացմանը, և այդ նախահաշիվները կարող են ուղեցույց հանդիսանալ բազմաբնակարան շենքի պահպանման համար պարտադիր իրականացման ենթակա միջոցառումների և աշխատանքների համար անհրաժեշտ խոշորացված ծախսերի հաշվարկման ժամանակ, ցուցումները չեն պարունակելու պարտադիր իրականացման հանձնարարականներ:

6. Խնդրո առարկա վճարի բնույթն ու բովանդակությունը պայմանավորող գործոն են նաև հիշյալ վճարների սահմանման և գանձման ընթացակարգը, ինչպես նաև գանձման նպատակը:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածն ամրագրում է ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատիրոջ պարտականությունը՝ սեփականության իր բաժնին համաչափորեն մասնակցելու պարտադիր նորմերի պահանջների, այն է՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված պարտադիր իրականացման ենթակա միջոցառումների և աշխատանքների կատարմանը: Օրենքի 10 հոդվածի 3-րդ կետում ամրագրված՝ վիճարկվող դրույթը սահմանում է սեփականատերերի նշված պարտականության կատարման ձևերը, այն է՝ համապատասխան վճարումների կատարում կամ պարտադիր նորմերի պահանջների իրականացում իրենց ուժերով ու միջոցներով: Նույն հոդվածի 4-րդ կետով սահմանված է հստակ չափանիշ այդ վճարի չափը որոշելու համար. վճարի չափը յուրաքանչյուր սեփականատիրոջ համար սահմանվում է՝ ելնելով շենքի բաժնային սեփականության մեջ նրա բաժնի չափից:

Ելնելով «պարտադիր նորմ» հասկացության բովանդակությունից և խնդրո առարկա վճարների գանձման նպատակաուղղվածությունից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ վճարը բազմաբնակարան շենքի **ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներին և աշխատանքներին սեփականատերերի համաչափ մասնակցության ձև է**: Ընդ որում, սեփականատերն ազատ է մասնակցության ձևերի միջև ընտրություն կատարելու հարցում: Վճարն այն այլընտրանքային ձևն է, որը փոխարինում է անհրաժեշտ աշխատանքները սեփական ծախսերով և միջոցներով կատարելուն:

7. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածը, որն սպառիչ կերպով սահմանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնի, այն է՝ բազմաբնակարան շենքի սեփականատերերի ժողովի լիազորությունները, ի թիվս այլոց, ժողովին լիազորում է ընտրել բազմաբնակարան շենքի կառավարման ձևը և կառավարման մարմինը: Այս լիազորությանը համապատասխան՝ օրենքի 17 հոդվածը սահմանում է, որ **պարտադիր նորմերի պահպանման հարցերում** ընդհանուր բաժնային գույքի կառավարման համար բազմաբնակարան շենքի սեփականատերերը կարող են ընտրել շենքի կառավարման մարմին: Շինությունների սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույն ընտրել ընդհանուր բաժնային սեփականության կառավարման մարմնի ձևը: Ընդ որում, մինչև 4 սեփականատեր ունեցող շենքերում պարտադիր նորմերի ապահովումը կարող է իրականացվել նաև ժողովի միջոցով: Համաձայն օրենքի 17 հոդվածի 3-րդ կետի՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը կարող է իրականացվել կամ շինության սեփականատերերի կողմից ստեղծված իրավաբանական անձի՝ համատիրության միջոցով, կամ լիազորագրային կառավարչի (ներկայացուցչության) միջոցով, կամ հավատարմագրային կառավարչի միջոցով: Բազմաբնակարան շենքի կառավարումը կարող է իրականացվել նաև համայնքի ղեկավարի կողմից, քանզի բոլոր այն դեպքերում, երբ օրենքի անցումային դրույթների համաձայն՝ օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից 6-ամսյա ժամկետում շենքի կառավարման մարմին չի ձևավորվում,

շենքի կառավարման մարմնի համապատասխան լիազորություններն անցնում են համայնքի ղեկավարին:

Օրենքի 18 հոդվածի 3-րդ կետի պահանջն է, որ համատիրության ստեղծման մասին **որոշման մեջ արտացոլվի պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը**: Նույն պահանջը վերաբերում է նաև լիազորագրային կառավարչին տրվող լիազորագրին կամ նրա հետ կնքվող պայմանագրին, ինչպես նաև հավատարմագրային կառավարչի հետ կնքվող պայմանագրին: Ինչպես լիազորագրային կառավարչին շենքի սեփականատերերի կողմից տրվող լիազորագրում կամ նրանց միջև կնքված պայմանագրում, այնպես էլ հավատարմագրային կառավարչի և սեփականատերերի միջև կնքված պայմանագրում **պետք է արտացոլվի պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը** (հոդված 19, 3-րդ կետ, հոդված 20, 3-րդ կետ):

Շենքի սեփականատերերի՝ կառավարման մարմին ընտրելու լիազորության, բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերի ապահովման հիմնական նպատակով ստեղծվող կառավարման մարմնի ձևավորման համար իրավական հիմք հանդիսացող փաստաթղթում **պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը ներառելու պարտադիր պահանջի** համադրված վերլուծությունը վկայում է, որ շենքի սեփականատերերը կառավարման մարմին ձևավորելիս դրա ձևավորման համար հիմք հանդիսացող համապատասխան փաստաթղթում պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ցանկը ներառելով՝ այդպիսով ըստ էության հաստատում են տվյալ բազմաբնակարան շենքի համար անհրաժեշտ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքների ցանկը: Օրենքի 10 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր նորմերը սահմանում է ՀՀ կառավարությունը, մինչդեռ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի սեփականատերերը, հաշվի առնելով տվյալ շենքի առանձնահատկություններն ու կարիքները, որոշում են այն կոնկրետ աշխատանքները, որոնք ենթակա են իրականացման կառավարության կողմից սահմանված՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի շրջանակներում՝ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները բավարարելու նպատակով:

8. Ինչպես պնդում է դիմողը, վիճարկվող դրույթում իրավական անորոշությունը դրսևորվում է նաև նրանում, որ պարզ չէ, թե որ սուբյեկտն է իրավասու որոշելու խնդրո առարկա վճարների չափը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ վճարների բնույթն ու բովանդակությունը որոշակիորեն պայմանավորում են պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների որոշման և սահմանման առանձնահատկությունները:

Հաշվի առնելով, որ խնդրո առարկա վճարն ընդհանուր բաժնային սեփականության պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներին և աշխատանքներին սեփականատերերի համաչափ մասնակցության ձև է՝ յուրաքանչյուր սեփականատիրոջ կողմից վճարվող վճարի չափը տվյալ միջոցառման կամ աշխատանքի արժեքի այն հատվածն է, որը համաչափ է բաժնային սեփականության մեջ տվյալ սեփականատիրոջ ունեցած բաժնեմասին: Հետևաբար, վճարի չափը պայմանավորված է տվյալ միջոցառման կամ աշխատանքի ընդհանուր արժեքով:

Ըստ համապատասխան իրավակարգավորման՝ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը ձևավորվում է հետևյալ գործընթացի և հետևյալ նորմերի գործողության արդյունքում: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ **շենքի կառավարման մարմինը կազմում և շինության սեփականատերերի քննարկմանն է ներկայացնում պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների նախահաշիվ:**

«Համատիրության մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ համատիրության ընդհանուր ժողովը հաստատում է համատիրության տարեկան հաշվեկշիռը: Նույն օրենքի 27 հոդվածի համաձայն՝ համատիրության տարեկան հաշվեկշիռը և բազմաբնակարան շենքի տարեկան բյուջեն հաստատվում է ընդհանուր ժողովում մեկ տարվա համար՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը, և կարող է տարվա ընթացքում փոխվել միայն ընդհանուր ժողովի որոշմամբ: Բազմաբնակարան շենքի տարեկան բյուջեն կազմելիս և հաստատելիս հաշվի են առնվում շենքի ընդհանուր սեփականության շահագործման, սպասարկման, պահպանման և նորոգման անհրաժեշտությունը, ինչպես նաև համատիրության գործունեության ապահովման խնդիրները:

Նշված նորմերի գործողության արդյունքում ձևավորվել է հետևյալ իրավակիրառական պրակտիկան: Մինչ պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքներ կատարելը բազմաբնակարան շենքի կառավարման մարմինը կազմում է ընթացիկ տարում շենքում կատարվող աշխատանքների վերաբերյալ ակտ, այնուհետև՝ նախահաշիվ, և նախահաշվային գումարն ընդգրկվում է շենքի տարեկան բյուջեի մեջ: Այն քննարկվում և հաստատվում է ընդհանուր ժողովում: Բյուջեի հաստատումից հետո, դրա ծախսային մասը բաժանվում է սեփականատերերի վրա՝ ըստ ընդհանուր բաժնային սեփականության մեջ նրանց բաժնեմասի չափի: Այս փաստն արձանագրվում է համատիրության ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշմամբ, որում սահմանվում է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը:

Ինչպես վերոհիշյալ իրավակարգավորումը, այնպես էլ դրա հիման վրա ձևավորված իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ շենքի կառավարման մարմինը ոչ թե վերացականորեն որոշում և սահմանում է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների չափը, այլ որոշակի օբյեկտիվ նախադրյալներից, մասնավորապես, արդեն կանխորոշված աշխատանքների նախահաշվից ելնելով՝ այդ աշխատանքների արժեքն օրենքով սահմանված սկզբունքին համապատասխան բաշխում է սեփականատերերի միջև:

Նկատի ունենալով, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 4-րդ կետը սահմանում է վճարի չափը հաշվարկելու ելակետային սկզբունքը, որ պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված յուրաքանչյուր կոնկրետ աշխատանքի համար կազմվում է նախահաշիվ, և առանձին աշխատանքների նախահաշվային գումարներն ընդգրկվում են համատիրության ընդհանուր ժողովի կողմից հաստատվող՝ շենքի տարեկան բյուջեի մեջ, ինչպես նաև հաշվի առնելով այդ միջոցառումների ու աշխատանքների իրականացման ապահովմանն ուղղված վճարի բնույթն ու բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված գործոնների համադրությամբ արդեն իսկ կանխորոշվում է խնդրո առարկա վճարի չափը: Այսինքն՝ մի կողմից առկա է կառավարության կողմից սահմանված պարտադիր նորմերի ընդհանուր շրջանակ և այդ շրջանակից կոնկրետ բազմաբնակարան շենքի սեփականատերերը հաստատում են նրանք, որոնք համապատասխանում են իրենց շենքի առանձնահատկություններին և կարիքներին, մյուս կողմից՝ պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված յուրաքանչյուր կոնկրետ աշխատանքի համար կազմվում և սեփականատերերի քննարկմանն է ներկայացվում նախահաշիվ, նախահաշվային գումարներն ընդգրկվում են շենքի տարեկան բյուջեում, և միաժամանակ հստակեցված է այդ միջոցառումներին և աշխատանքներին սեփականատերերի մասնակցության չափը հաշվարկելու ելակետային սկզբունքը: Նշված գործոններն իրենց համադրության մեջ արդեն իսկ ենթադրում են խնդրո առարկա վճարի չափը:

Պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարների բնույթով պայմանավորված՝ այդ վճարների չափը չի կարող սահմանվել վերացականորեն: Այդ չափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշվի կոնկրետ բազմաբնակարան շենքի համար կոնկրետ աշխատանքների նախահաշվից ելնելով: Այս տրամաբանությունից շեղումը կհակասի պարտադիր նոր-

մերի կատարմանն ուղղված՝ սեփականատերերի կողմից վճարվող վճարների՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների տարրի, բնույթին և բովանդակությանը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ սեփականատերերի կամքը և համաձայնությունը դրսևորվում է պարտադիր նորմերի կատարման ապահովման ողջ գործընթացում: Սեփականատերերն են ընտրում շենքի կառավարման մարմինը, նրանք են որոշում այն միջոցառումների և աշխատանքների շրջանակը, որոնք ենթակա են պարտադիր կատարման, սեփականատերերն են որոշում վճարների վճարման կարգն ու ժամկետները, և վերջապես սեփականատերերն ազատ են որոշելու պարտադիր նորմերի պահպանմանն իրենց մասնակցության ձևը՝ կամ վճարելով համապատասխան վճարը, կամ համապատասխան աշխատանքներն անձամբ կատարելով: Իսկ սեփականատերերի ընդհանուր ժողովին է պատկանում բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում **ցանկացած հարցի լուծման իրավունքը**, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով համարվում են կառավարման մարմնի բացառիկ լիազորությունը (հոդվ. 11., կետ 1):

Օրենքի դրույթի որոշակիության և կանխատեսելիության գնահատականը կարող է տրվել միայն տվյալ դրույթը ողջ իրավակարգավորման համատեքստում դիտարկելու դեպքում: Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթը դիտարկելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի ողջ իրավակարգավորման համատեքստում՝ գտնում է, որ այն բավարարում է օրենքի որոշակիությանը և կանխատեսելիությանը ներկայացվող պահանջները: Միաժամանակ, վիճարկվող 10 հոդվածի 3-րդ մասում ներառված միջանկյալ դարձվածքը՝ «.... շինության սեփականատերերի ժողովի կողմից սույն օրենքով սահմանված կարգով հաստատված նորմերից ելնելով,», խմբագրական հստակեցման անհրաժեշտություն ունի:

9. Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրության մեջ հետևողականություն չի դրսևորվել «պարտադիր վճարներ» և «պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարներ» հասկացությունների օգտագործման հարցում՝ մի դեպքում միևնույն վճարը հիշատակելով որպես պարտադիր վճար, մեկ այլ դեպքում՝ որպես պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճար: Այսպես, օրենքի 9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության յուրաքանչյուր սեփականատեր պարտավոր է իր բաժնին համաչափորեն մասնակցել պարտադիր նորմերի պահանջների կատարմանն ուղղված ծախսերին, հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման և շահագործման այլ ծախսերին: Օրենքի 10 հոդվածի 3-րդ մասում ամրագրված է. «Շինության բոլոր սեփականատերերը պարտավոր են, շինության սեփականատերերի ժողովի կողմից սույն օրենքով սահմանված կարգով հաստատված նորմերից ելնելով, կատարել համապատասխան վճարումներ կամ իրենց ուժերով ու միջոցներով իրականացնել պարտադիր նորմերի պահանջները»: Օրենքի 11 հոդվածի 7-րդ մասի ժդ) և ժե) կետերում որպես շինությունների սեփականատերերի ընդհանուր ժողովի լիազորություններ մատնանշված են պարտադիր նորմերի գծով շինությունների սեփականատերերից գանձվող պարտադիր վճարների վճարման կարգի և ժամկետների սահմանումը և պարտադիր վճարներից դուրս շինությունների սեփականատերերից գանձվող վճարների չափի, վճարման կարգի և ժամկետների սահմանումը: Օրենքի 15 հոդվածի 2-րդ մասի ա) կետի համաձայն՝ շինության սեփականատերերը պարտավոր են կատարել սահմանված պարտադիր վճարները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաստատված այլ վճարները: «Համատիրության մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի համաձայն՝ համատիրության անդամները պարտավոր են օրենքով և համատիրության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել պարտադիր նորմերի կատարմանն ուղղված վճարներ և այլ վճարներ:

ՍԴՈ-990, 4 հոկտեմբերի, 2011 թ.

5. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմերն ուսումնասիրել օրենքի մյուս դրույթների հետ համակարգային փոխկապվածության մեջ:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը նվիրված է բազմաբնակարան շենքերում ընդհանուր սեփականության կառավարման հետ կապված իրավահարաբերություններին: Օրենքն ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմին է ճանաչում **սեփականատերերի ժողովը,** որն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում բնութագրվում է որպես **շինությունների բոլոր սեփականատերերից կազմված մարմին:** Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ յուրաքանչյուր սեփականատեր ժողովում օժտված է իր բաժնին հավասար ձայների քանակով: Օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված է, որ ժողովն իրավասու է, եթե դրան ներկա են այնքան սեփականատերեր կամ նրանց ներկայացուցիչներ, որոնց պատկանում է **սեփականատերերի ընդհանուր ձայների թվի կեսից ավելին:** Սեփականատերերի ժողովի իրավասությանը վերապահված է ընդհանուր բաժնային սեփականության կառավարման հետ կապված ցանկացած հարցի լուծում, բացառությամբ օրենքով նախատեսված հարցերի: Օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «թ» կետով սեփականատերերի ժողովի իրավասությանն է վերապահված նաև **ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին որոշման ընդունումը:** Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը ժողով հրավիրելու իրավունք է վերապահում **սեփականատերերից յուրաքանչյուրին:** Օրենքը նաև հստակ սահմանում է, թե սեփականատերերի ժողովի իրավասությանը վերապահված հարցերից յուրաքանչյուրի վերաբերյալ սեփականատերերի ձայների ինչ քանակով է հնարավոր որոշում ընդունել:

Օրենքի 11-րդ հոդվածի մասերի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին որոշումը կարող է ընդունվել **սեփականատերերի ձայների կեսից ավելիով:** Օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող 11-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է սեփականատերերի ժողովի անցկացման՝ օրենքով թույլատրելի ընթացակարգերը և, մասնավորապես, սահմանում է, որ ժողովի որոշումները կարող են ընդունվել ժողովի գումարման, **հարցման (հեռակա կարգով քվեարկության),** ինչպես նաև իրազեկման միջոցով: Նշված ընթացակարգերի առանձնահատկությունների իրավական կարգավորումը նվիրված են օրենքի առանձին հոդվածներ, սակայն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված իրավական կարգավորումներն ընդհանուր են և վերաբերում են բոլոր ընթացակարգերին: Ինչ վերաբերում է հարցման (հեռակա կարգով քվեարկության) միջոցով որոշումների ընդունման առանձնահատկություններին, ապա դրանք սահմանված են օրենքի վիճարկվող 13-րդ հոդվածով:

6. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «հեռակա կարգով քվեարկություն» հասկացության բովանդակությանը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե սեփականատերերի ժողովում, որպես շինությունների բոլոր սեփականատերերից կազմված մարմնում, քվեարկությունը շինությունների սեփականատերերի որոշումների ընդունման ընթացակարգ է, որը պահանջում է որոշում ընդունելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա ներկայությունը նախապես որոշված վայրում, ապա հեռակա կարգով քվեարկությունը **սեփականատերերի ժողովի որոշումների** ընդունման ընթացակարգ է, որը չի պահանջում որոշում ընդունելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա ներկայությունը նախապես որոշված վայրում: Այդուհանդերձ, այն իր էությամբ շարունակում է մնալ քվեարկություն, այ-

սինքն՝ մի խումբ անձանց կողմից ազատ կամահայտնության միջոցով որոշումների ընդունման ձև: Միաժամանակ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քվեարկության գլխավոր հատկանիշը հենց ազատ կամահայտնության միջոցով որոշումների ընդունումն է՝ անկախ այն բանից, թե քվեարկելու իրավունք ունեցող անձինք իրենց կամքն արտահայտել են նախապես որոշված վայրում, **այսինքն՝ սեփականատերերի՝ որոշակի վայրում գումարված ժողովում,** թե քվեարկողներից յուրաքանչյուրի՝ իր գտնվելու վայրում: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ, նախ՝ քվեարկության վայրը չի հանդիսանում քվեարկության օրինականության հատկանիշը, հետևաբար՝ հեռակա կարգով քվեարկությունը՝ որպես որոշումների ընդունման ձև, ինքնին չի կարող խախտել մարդու սահմանադրական իրավունքները, երկրորդ՝ և՛ ժողովի գումարման, և՛ հարցման միջոցով առաջարկությունները բոլոր դեպքերում, համաձայն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի՝ ներկայացվում են ժողովի քննարկմանը, և բոլոր դեպքերում որոշումն ընդունվում է ժողովի կողմից:

7. Անդրադառնալով հարցման (հեռակա կարգով քվեարկության) ինստիտուտի վերաբերյալ միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտարկվող ինստիտուտը գործում է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև այն լայնորեն տարածված է այլ պետություններում: Ընդ որում, նշված ինստիտուտը կիրառվում է ոչ միայն բազմաբնակարան շենքերի սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության տնօրինման հետ կապված իրավահարաբերություններում, այլ նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության բնակարանային օրենսգրքի 47-րդ հոդվածը նախատեսում է, որ սեփականատերերի ժողովը կարող է որոշումներ ընդունել նաև հարցման (հեռակա կարգով քվեարկության) միջոցով:

ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշումների ընդունման նշված ինստիտուտը կիրառվում է նաև բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի կողմից որոշումներ ընդունելիս: Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով (նման կարգ է գործում նաև բազմաթիվ այլ երկրներում): Ընդ որում, տարբեր ոլորտներում հարցման (հեռակա կարգով քվեարկության) միջոցով որոշումներ ընդունելու ընթացակարգերը նույնն են՝ որոշ տեխնիկական առանձնահատկություններով:

8. Դիմողը, վիճարկելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասը և 13-րդ հոդվածը, որևէ հիմնավորում չի ներկայացնում հարցման (հեռակա կարգով քվեարկության)՝ որպես որոշումների ընդունման ձևի՝ Սահմանադրությանը հակասության վերաբերյալ: Դիմողի փաստարկներն ուղղված են հարցման (հեռակա կարգով քվեարկության)՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգին, որը, ըստ դիմողի՝ «անորոշ է, անհավասար պայմաններ է ստեղծում սեփականատերերի համար, զրկում է սեփականատերերին իրենց գույքն օգտագործելու հնարավորությունից, պայմաններ է ստեղծում, որ առանց սեփականատերերի համաձայնության ընդհանուր սեփականություն հանդիսացող տարածքը օգտագործվի և ձևափոխվի»:

Հիմք ընդունելով սույն որոշման 6-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն փաստարկը, որ օրենքով նախատեսված հարցման ընթացակարգն անորոշ է, ինչի արդյունքում խախտվում են սեփականատերերի շահերը: Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 13-րդ հոդվածները հանգամանորեն կարգավորում են ինչպես սեփականատերերի ժողովի կարգավիճակը, այնպես էլ ժողովի կողմից որոշումների ընդունման ընթացակարգերը, այդ թվում՝

հարցման միջոցով որոշումների ընդունման ընթացակարգը: Նշված հոդվածներով սահմանվում են քվեարկության կազմակերպման կարգը, սեփականատերերին ներկայացվող փաստաթղթերը, որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակը: Ընդ որում, օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարցման միջոցով որոշումների ընդունման նախաձեռնող է հանդիսանում, ի թիվս այլոց, **շինության յուրաքանչյուր սեփականատեր,** որը պարտավոր է ժողովի որոշման նախագիծը ներկայացնել ստորագրման կամ դրա պատճենն ուղարկել **շինության յուրաքանչյուր սեփականատիրոջ:**

Ավելին, կոնկրետ դեպքում, որը վերաբերում է ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին որոշման ընդունմանը, օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «ե» ենթակետի և նույն հոդվածի 8-րդ մասի ուժով, նախ և առաջ, հարկ է որոշում ընդունել ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մի մասի **առանձնացման** վերաբերյալ, որը կարող է ընդունվել բոլոր սեփականատերերի կողմից **միաձայն,** հետո միայն կարող է որոշում ընդունվել վերը նշված առանձնացված մասի՝ հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին, որն օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասի ուժով կարող է ընդունվել սեփականատերերի ձայների կեսից ավելիով: Այսինքն՝ օրենքը նախատեսել է բավարար երաշխիքներ, որպեսզի ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին շինության սեփականատերերը ոչ միայն նախապես տեղեկացված լինեն, այլև նրանցից թեկուզև մեկի կողմից «դեմ» կամ «ձեռնպահ» քվեարկելու դեպքում նման որոշում չընդունվի:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում օրենքով երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին համապատասխան սեփականության իրավունքն իր հայեցողությամբ իրացնելու՝ սեփականատիրոջ (սեփականատերերի) իրավունքը՝ վերջինիս դրսևորման տարբեր ձևերի, այդ թվում՝ նաև սեփականությունն օգտագործելու վերաբերյալ որոշումների ընդունմանը սեփականատիրոջ կողմից անմիջական մասնակցություն ունենալու և իր կամաարտահայտությունը դրսևորելու միջոցով:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև դիմողի այն փաստարկը, որ օրենքով նախատեսված ընթացակարգն անհավասար պայմաններ է ստեղծում սեփականատերերի համար: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ օրենքի 11-րդ և 13-րդ հոդվածները հնարավորություն են ընձեռում բոլոր սեփականատերերին՝ թե՛ նախաձեռնելու հեռակա կարգով քվեարկություն, թե՛ մասնակցելու քվեարկությանը: Բացի դրանից, օրենքի 13-րդ հոդվածը նախատեսում է, թե քվեարկության հետ կապված ինչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն սեփականատերերին, և սահմանում, որ դրանք **պետք է ուղարկվեն բոլոր սեփականատերերին**, հետևաբար՝ թե՛ քվեարկություն նախաձեռնելիս, թե՛ այդ քվեարկությանը մասնակցելիս բոլոր սեփականատերերը գտնվում են հավասար պայմաններում:

Հիմնավորված չէ նաև դիմողի այն պնդումը, թե օրենքի վիճարկվող նորմերով նախատեսված ընթացակարգը թույլ է տալիս առանց սեփականատերերի համաձայնության օգտագործել և ձևափոխել ընդհանուր սեփականություն հանդիսացող տարածքը: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի՝ վիճարկվող նորմերի հետ համակարգային փոխկապվածության մեջ գտնվող 11-րդ հոդվածի 7-րդ մասը հստակ նախատեսում է սեփականատերերի ժողովի լիազորությունները՝ ժողովին վերապահելով ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման, օգտագործման և տիրապետման հետ կապված հարցերի լուծումը: Ավելին, օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «թ» կետը սահմանում է, որ ժողովի իրավասությանն է վերապահված ընդհանուր բաժնային սեփականության անշարժ գույքի առանձնացված մասի հատուցմամբ օգտագործման տրամադրելու մասին որոշման ընդունումը («առանց սեփականատերերի համաձայնության գույքը օգտագործել» արտահայ-

տության ներքո դիմողը նկատի ունի հենց վերոնշյալ լիազորությունը, քանի որ վեճը ծագել է հատուցման դիմաց ընդհանուր սեփականություն հանդիսացող տարածքն այլ անձի օգտագործման իրավունքով տրամադրելու արդյունքում): Բացի դրանից, օրենքի 11-րդ հոդվածով հստակ նախատեսվում է ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման, օգտագործման, տիրապետման հետ կապված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման համար սեփականատերերի ձայների անհրաժեշտ քանակը: Վերոհիշյալից բխում է, որ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքն օգտագործելիս հնարավոր չէ շրջանցել սեփականատերերի կամքը:

9. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները նախատեսում են բազմաբնակարան շենքում ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով որոշումների ընդունման տարբեր ընթացակարգեր՝ թույլ տալով սեփականատերերին իրենց կամահայտնությամբ ընտրել որոշումների ընդունման նախընտրելի ձևը: Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է կարգավորվող հասարակական հարաբերության բնույթով: Օրենքը, թույլ տալով կիրառել որոշումների ընդունման տարբեր ընթացակարգեր, միևնույն ժամանակ նախատեսում է բավականին հստակ պահանջներ յուրաքանչյուր ընթացակարգի վերաբերյալ, որոնք կոչված են ապահովելու անձի իրավունքը սեփական կամահայտնությամբ օգտագործելու, տիրապետելու, տնօրինելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման» մասին ՀՀ օրենքի վիճարկվող նորմերը որևէ արտոնություն կամ սահմանափակում չեն նախատեսում բազմաբնակարան շենքի ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի կառավարման առնչությամբ՝ ապահովելով հավասար պայմաններ բոլոր սեփականատերերի համար: Իսկ սեփականության սահմանադրական իրավունքի ենթադրյալ սահմանափակման առնչությամբ դիմողը կամայական մեկնաբանություն է տվել Սահմանադրության 31-րդ հոդվածի երրորդ մասով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման վերաբերյալ սահմանված իրավակարգավորմանը և այն շփոթել օրենքի վիճարկվող դրույթներով նախատեսված իրավակարգավորման հետ:

10. Անդրադառնալով դիմողի մյուս փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթների և Սահմանադրության 14, 18, 19 և 48-րդ հոդվածների միջև ենթադրյալ հակասության հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը:

Դիմողն օրենքի վիճարկվող դրույթների և Սահմանադրության 14-րդ հոդվածի միջև ենթադրյալ հակասությունը փաստարկում է սեփականության և իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքների ենթադրյալ խախտման և Սահմանադրության 48-րդ հոդվածի համատեքստում և գտնում, որ օրենքի վիճարկվող դրույթների հետևանքով սեփականության և իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքների խախտման արդյունքում խախտվում է նաև մարդու արժանապատվությունը, որն իրավունքի գերակայության բաղադրատարր է: Հիմք ընդունելով օրենքի վիճարկվող դրույթներով հարցման միջոցով որոշումների ընդունման արդյունքում սեփականության իրավունքի երաշխավորվածության վերաբերյալ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի փաստարկները վեճի առարկա հոդվածները ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին հակասելու առնչությամբ:

Անդրադառնալով օրենքի վիճարկվող դրույթների և Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների միջև ենթադրյալ հակասության վերաբերյալ դիմողի դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ առնչությամբ դիմողի ներկայացրած փաստարկները վերաբերում են ոչ թե ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորմանը, այլ դատական ակտերի օրինականության վիճարկմանը: Իսկ օրենքի վիճարկվող

դրույթների իրավակարգավորման նպատակը և բովանդակությունը չեն բացառում դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումները պայմանավորված չեն օրենքի վիճարկվող նորմերի սահմանադրականությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՍԴՈ–966, 3 հունիսի, 2011 թ.

7. ՀՀ Սահմանադրության 85–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունն ընդունում է որոշումներ՝ ապահովելու համար նաև միջազգային պայմանագրերի և օրենքների կատարումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

10. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ ընկալման ու դրանում ամրագրված նորմերի՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ կիրառումն ապահովելու նպատակով ՀՀ դատական պրակտիկայում պետք է առաջնորդվել նաև ՀՀ դատական օրենսգրքի 15–րդ հոդվածի 4–րդ մասի պահանջով, համաձայն որի՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Այս հարցում սկզբունքային նշանակություն ունեն նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 46–րդ հոդվածի պահանջներից բխող ՀՀ միջազգային պարտավորությունները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորության ճանաչման վերաբերյալ:

Նկատի ունենալով վերոնշյալը և կրկին կարևորելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ծանրակշիռ պրակտիկան քննության առարկա հիմնախնդրի առնչությամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանն սկզբունքային է համարում այդ դատարանի, մասնավորապես, ներքոհիշյալ նախադեպային դիրքորոշումները, որոնք իրավակիրառական պրակտիկայում հետևողականորեն հաշվի առնելու դեպքում կապահովվի վեճի առարկա հոդվածի դրույթների կիրառումը՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան:

ՍԴՈ–1050, 2 հոկտեմբերի, 2012 թ.

7. Հարցին անհրաժեշտ է անդրադառնալ նաև խնդրո առարկա իրավահարաբերությունների նկատմամբ համապատասխան ՀՀ միջազգային պայմանագրերում ամրագրված նորմերի կիրառելիության շրջանակի համատեքստում և այն դիտարկել «կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում բնակվող կենսաթոշակառու և «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաագայի 1961 թ. հոկտեմբերի 5–ի կոնվենցիայի մասնակից պետությունում կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակար-

գող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից պետություններում բնակվող կենսաթոշակառու» փոխհարաբերությունների տեսանկյունից: Այդ առումով սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-966 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի բովանդակությանը, մասնավորապես նշել է. «.... ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սուբյեկտների համար վարքագծի պարտադիր կանոններ, ունեն ՀՀ օրենքներից և իրավական այլ ակտերից առավել բարձր իրավաբանական ուժ, ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ ողջ տարածքում»:

.... **Սահմանադրական դատարանը կարևորում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անվերապահ կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումը:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ պահանջների կատարումը խնդրո առարկա իրավիճակում կբացառի, մի կողմից, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում բնակվող կենսաթոշակառուների, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին 1961 թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի, ինչպես նաև օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից պետություններում բնակվող կենսաթոշակառուների միջև փաստացիորեն ստեղծված տարբերակված մոտեցումը՝ կապված վերջիններիս՝ կենսաթոշակը ստանալու համար Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտության հետ:

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված տարբերակված մոտեցումը չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով սահմանված՝ խտրականության արգելման սկզբունքին, քանի որ դիտարկվող մոտեցումն առաջացել է **բացառապես իրավակիրառ պրակտիկայում համապատասխան իրավասու մարմինների կողմից ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջների չկատարման հետևանքով,** որպիսի հանգամանքը փաստվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի՝ վերը հիշատակված թիվ ԱԳԳ/ՍՍ-1-1/1013-12 17.02.2012 թ. գրությամբ, որով հավաստվում է, որ, մասնավորապես, Քիշնևի և Հաագայի՝ վերը հիշատակված կոնվենցիաների անդամ պետությունների վավերացրած լիազորագրի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի գումար **չի վճարվում:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած խնդիրը պայմանավորված է ոչ թե օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, այլ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անտեսմամբ:

ՆՈՏԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ

ՍԴՈ-1271, 10 մայիսի, 2016 թ.

8. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, **որը Հայաստանի Հանրապետության անունից**, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է այդ օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ, այդ թվում՝ փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու միջոցով:

....

Օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների իրականացումը պատվիրակել է նոտարին: Ընդ որում, նոտարին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տալիս է Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա նշված են «Հայաստանի Հանրապետություն» բառերը, և որով վավերացվում են համապատասխան փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալն ընդգծում է տվյալ գործառույթի կարևորությունը հանրային կյանքի կազմակերպման տեսանկյունից: Ուստի նոտարը չի կարող պարզապես համարվել որպես իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր, ինչպես ներկայացվում է պատասխանողի կողմից:

Միաժամանակ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարական գործողությունների կամ նոտարի մատուցած վճարովի ծառայությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/5014/05/09 վարչական գործով ընդունված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ նոտարի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում ունի երկակի՝ հանրային-իրավական և մասնավոր-իրավական բնույթ:

Վերլուծելով նոտարի իրավական կարգավիճակի սահմանադրաիրավական բնույթը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «Նոտարիատի մասին» առանձին օրենքով օրենսդիրը կարգավորել է նոտարների գործունեությունը, հետևաբար՝ վարչական մարմինների ցանկում նոտարներին չընդգրկելն **օրենսդրական բաց** համարվել չի կարող: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ նոտարների նկատմամբ, այն վերաբերում է միայն վարչարարություն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց գործունեության իրավական հիմքերն այլ են:

ՀՀ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում նաև, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է գտնվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-902-24.11.2015-ՊԻ-010/0) օրենսդրական նախաձեռնություն:

....

Սահմանադրական դատարանը կարևորում է այնպիսի իրավակարգավորումների անհրաժեշտությունը, որոնց շրջանակներում իր որոշ վարչական լիազորություններ մասնավոր անձանց փոխանցելու միջոցով պետությունը չի կարող հրաժարվել այդ լիազորությունների ոչ արդյունավետ իրականացման համար պատասխանատվությունից:

9. .... Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա օրենսդրական ընթացակարգերը **չեն երաշխավորում** նոտարի կողմից Հայաստանի

Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի **իրավաչափ հատուցումը և անձի սահմանադրական իրավունքների երաշխավորված պաշտպանությունը**:

Ինչ վերաբերում է պատճառված վնասի համար պետության պատասխանատվությանը, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն որևէ կերպ չի նշանակում, որ վնասի հատուցումը պարտադիր պետք է տեղի ունենա բացառապես պետական միջոցների հաշվին: Տվյալ դեպքում պետության գույքային պատասխանատվությունը կարող է բացառվել, եթե **պետության կողմից ստեղծված կառուցակարգերը և ընթացակարգերը երաշխավորեն Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի ամբողջական հատուցում:**

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

ՍԴՈ-832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

5. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «գ» կետի սահմանադրականության հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշված հարցը դիտարկել պետության գործառույթների, անձ-պետություն փոխհարաբերությունների համատեքստում:

Պետության ֆինանսական վերահսկողության գործառույթը փոխկապակցված է պետության տնտեսական և սոցիալական գործառույթների հետ և վերջիններիս հետ մեկտեղ ուղղված է պետության խնդիրների լուծմանն ու պետության առջև Սահմանադրությամբ առաջադրված նպատակներին հասնելուն: Վերջիններս ներառում են համընդհանուր բարօրությունը, անհատի բարոյական, նյութական, ֆիզիկական բարեկեցությունը, սոցիալական առավելագույն պաշտպանվածությունը: Հարկային իրավահարաբերությունների՝ որպես հանրային բնույթի իրավահարաբերությունների, նկատմամբ մասնավորապես պետական վերահսկողության գործառույթի միջոցով է, որ պետությանը հնարավորություն է ընձեռվում առավել արդյունավետ կերպով հասնելու վերը նշված նպատակներին: Հարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետական վերահսկողության գործառույթի միջոցով ապահովվում է հարկերի հավաքագրման և բյուջեի մուտքերի ապահովման արդյունավետությունը և թափանցիկությունը, պետության տնտեսական կայունությունը:

Հարկային իրավահարաբերությունների կանոնակարգումն իրականացվում է հարկային իրավահարաբերությունների մասնակիցների համար փոխադարձ իրավունքների և պարտականությունների սահմանմամբ, որոնք ուղղված են ոչ միայն անհատական, այլ նաև հանրային շահերի երաշխավորմանը: Վերջինս դրսևորվում է հարկային իրավահարաբերությունների նկատմամբ պետության ֆինանսական վերահսկողության գործառույթի իրականացման արդյունավետության ապահովմամբ, որն էլ, իր հերթին, ի թիվս այլոց, կարող է դրսևորվել հարկատուների նկատմամբ որոշակի պարտականությունների սահմանմամբ: Տվյալ դեպքում ՀՀ սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե հարկատուի համար որոշակի պարտականություն սահմանելիս արդյոք ապահովվել է տվյալ պարտականության իրավաչափությունը, ինչպես նաև ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների և հարկատուների պարտականությունների միջև հավասարակշռությունը՝ բացառելու հարկատուների համար անիրավաչափ պարտականություններ սահմանելը:

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի «գ» կետով սահմանված պարտականությունը, որպես հարկային արտոնությունից օգտվելու սուբյեկտիվ իրավունք, հետևաբար՝ հարկերի վճարման պարտականության իրականացման կարգի տարր, ապահովվելով պետության ֆինանսական վերահսկողության գոր-

ծառույթի արդյունավետ իրականացումը՝ հետապնդում է իրավաչափ նպատակ և չի կարող դիտարկվել որպես հարկատուի վրա դրված անիրավաչափ պարտականություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԸ

ՍԴՈ–1051, 9 հոկտեմբերի, 2012 թ.

6. .... Համաձայն վեճի առարկա օրենքի՝ Հաշտարարն իրավասու է քննել Հաճախորդների կողմից Կազմակերպությունների դեմ ներկայացված այն պահանջները, որոնք կապված են Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

Հաշվի առնելով վերոհիշյալ նպատակները և դրանց կենսագործման անհրաժեշտությունը՝ սահմանադրական դատարանը կարևորում է Հաշտարարի ինստիտուտի դերը և նշանակությունը անձանց իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման և վեճերի լուծման գործում՝ որպես ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումն ապահովող **այլընտրանքային, իրավական հնարավորություն**:

7. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է Հաշտարարին ուղղված պահանջի քննության ընթացակարգի մասնակիցների (Հաճախորդի և Կազմակերպության) կարգավիճակների վերլուծությունը՝ Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշման բողոքարկման ինստիտուտի իրացման արդյունավետության տեսանկյունից, և հարկ է համարում վիճարկվող դրույթը դիտարկել օրենքի այլ դրույթների (մասնավորապես՝ 4, 12, 16 և 18–րդ հոդվածների) հետ համակարգային ամբողջականության տեսանկյունից:

Օրենքի դրույթների համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հաճախորդի համար Հաշտարարի հետ համագործակցելն օրենսդիրն ամրագրել է **որպես իրավունք**, մասնավորապես սահմանելով, որ Հաճախորդն իրավունք ունի դիմելու Հաշտարարին՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք Հաճախորդի և Կազմակերպության միջև կնքված պայմանագրով նախատեսված է, թե՝ ոչ: Ավելին, օրենսդիրը հստակ սահմանել է, որ Հաշտարարին դիմելու՝ Հաճախորդի իրավունքը սահմանափակող համաձայնությունը կամ պայմանն առոչինչ է: Հաշտարարի կողմից պահանջն ընդունելու, քննելու և որոշում կայացնելու կապակցությամբ Հաճախորդից որևէ վճար չի գանձվում:

Ինչ վերաբերում է Հաշտարարի հետ Կազմակերպության համագործակցությանը, ապա Կազմակերպությունը պարտավոր է համագործակցել Հաշտարարի հետ՝ վերջինիս պահանջով օրենքով սահմանված ժամկետում, իսկ նման ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ ողջամիտ ժամկետում ներկայացնել փաստաթղթեր, տալ բացատրություններ ու պարզաբանումներ, Հաշտարարին տրամադրել պահանջին առնչվող այն նյութերը, որոնք գտնվում են իր մոտ, եթե անգամ դրանք պարունակում են բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք (12–րդ հոդվածի 1–ին մաս): Ավելին, Հաշտարարը կարող է որոշում կայացնել իր հետ բավականաչափ չհամագործակցող Կազմակերպությանը նախազգուշացնելու մասին, և եթե նման նախազգուշացում ստացած Կազմակերպությունը շարունակում է չհամագործակցել կամ բավականաչափ չհամագործակցել Հաշտարարի հետ, վերջինս կարող է որոշում կայացնել Կազմակերպությանը չհամագործակցող ճանաչելու մասին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջին դեպքում սույն գործով քննության առարկա օրենքը չի սահմանում կոնկրետ հետևանք:

8. Վեճի առարկա օրենքը կանոնակարգելով Հաճախորդի պահանջը քննության առնելու և դրա հիման վրա որոշում կայացնելու հարաբերությունները՝ սահմանել է, որ այն դեպքում, երբ Հաշտարարի որոշումն առաքելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում **Հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ,** վերջինս կողմերի համար դառնում է **պարտադիր**: Նշված դրույթից բխում է, որ Հաշտարարի կողմից ընդունված որոշումն ի սկզբանե միայն Հաշտարարի կողմից այն ընդունելու փաստի ուժով կողմերի համար ձեռք չի բերում իմպերատիվ նշանակություն, և միայն Հաճախորդի կողմից այն ընդունելու դեպքում է որոշումը դառնում պարտադիր: Այստեղից հետևում է, որ մինչև անվերապահորեն և գրավոր ձևով որոշմանը համաձայնելը կամ որոշմանը չհամաձայնելու դեպքում ինչպես Հաճախորդը, այնպես էլ Կազմակերպությունը կարող են դիմել դատարան և պահանջել գործի ըստ էության քննություն: Ինչն էլ փաստում է, որ այդ դեպքերում Հաճախորդը և Կազմակերպությունը չեն զրկվում ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրենց իրավունքների իրացման հնարավորությունից: Այդ է վկայում նաև այն հանգամանքը, որ օրենսդիրը որպես պահանջի քննության դադարեցման հիմք, ի թիվս այլնի, նախատեսել է նաև, որ եթե պահանջի քննության ընթացքում պարզվում է, որ պահանջի առարկայի վերաբերյալ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, կամ պահանջի քննության ընթացքում պարզվում է, որ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում քննվում է Հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի վերաբերյալ գործ, ապա Հաշտարարն իր որոշմամբ **դադարեցնում է պահանջի քննությունը**: Այս կանոնակարգումից հետևում է, որ օրենսդիրը բացառում է ֆինանսական ոլորտում օրենքով նախատեսված շրջանակներում գույքային պահանջի քննության կառուցակարգային անարդյունավետության դրսևորում:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հաշտարարի որոշումը միայն Հաճախորդի կողմից այն ընդունելու պարագայում դառնում է պարտադիր ոչ միայն իր, այլև մյուս կողմի՝ Կազմակերպության համար, և վերջինս արդեն այդ որոշումը կարող է վիճարկել դատական կարգով՝ բացառապես սույն գործով քննության առարկա հոդվածում ամրագրված հիմքերի շրջանակներում, եթե, իհարկե, նա Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

«Սպառողների վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմինների վրա տարածվող սկզբունքների մասին» Եվրոպական հանձնաժողովի 1998 թվականի մարտի 30-ի թիվ 98/257/EC հանձնարարականով սահմանված վեճերի լուծման արտադատական մարմինների, այդ թվում՝ օմբուդսմենների (հաշտարարների) գործունեության սկզբունքներից ազատության սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին՝ որոշումը կողմերի համար կարող է դառնալ պարտադիր միայն այն դեպքում, երբ կողմերը նախապես տեղյակ են եղել որոշման պարտադիր բնույթի մասին և **հատուկ ընդունել են այն:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ հարցով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներն ուղղակի նախատեսում են Հաճախորդի ազատ կամահայտնությունը: Օրենքում առկա չէ որևէ դրույթ, որն ուղղակիորեն կվերաբերի Հաշտարարի որոշումը Կազմակերպության կողմից «հատուկ ընդունելուն», սակայն օրենքը նախատեսում է դրույթ, համաձայն որի՝ Կազմակերպությունը կարող է Հաշտարարի գրասենյակի հետ կնքել գրավոր համաձայնագիր Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ (մասնավորապես՝ հոդվածներ 7 և 16): Վերջինս, հանդիսանալով Կազմակերպության ազատ կամահայտնության արդյունք, ըստ էության հավասարազոր է Հաճախորդի կողմից անվերապահորեն և գրավոր ձևով Հաշտարարի որոշումներին համաձայնելուն, այսինքն՝ այդ դեպքում **կողմերը կամավոր սահմանափակում են ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով սահմանված իրենց իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունը:**

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ **իր ազատ կամահայտնությամբ,** հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը: Իսկ մարդու և քաղաքացու հիշյալ իրավունքներն ու ազատությունները, ինչպես և սահմանված է ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածով, տարածվում են իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ: Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևոր է համարում շեշտել, որ այդ իրավունքների ու ազատությունների՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի լինելու իրավակարգավորիչ դերը երաշխավորում է ոչ միայն իրավաբանական անձանց, այլև դրանցում միավորված ֆիզիկական անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության իրավական հնարավորություն:

Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-954 և մի շարք այլ որոշումներում անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, մասնավորապես, իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն է նաև իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումը: **Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ:**

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե անձն իր իրավունքների պաշտպանության համար կամովի չի դիմել դատարան, այլ ընտրել է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ օրենքով նախատեսված արտադատական միջոց և ազատ կամահայտնությամբ ի կատարումն ընդունել արտադատական միջոցով կայացված որոշումը, նման իրավակարգավորումը չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների սահմանափակման:

17. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–782, 2 դեկտեմբերի, 2008 թ.

6. .... ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11–րդ կետի և 95 հոդվածի պահանջները հաշվի առնելով, նկատի ունենալով, որ դատավորը ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկությամբ ՀՀ Նախագահի կողմից նշանակվում է որպես **կոնկրետ դատարանի դատավոր,** տվյալ դատարանում նրա լիազորությունների ժամանակավոր կասեցմամբ այլ դատարան բացառիկ անհրաժեշտությունից ելնելով գործուղման խնդիրը կարող էր լուծվել միմիայն դատավորի պաշտոնում նշանակման գործընթացի տրամաբանության սահմաններում: Օրենքը չի կարող վճռաբեկ դատարանի նախագահին լիազորել կասեցնել ՀՀ Նախագահի հրամանագրի գործողությունը՝ թեկուզ ժամանակավորապես: Օրենքով նրան վերապահված նման լիազորությունը չի բխում ՀՀ Սահմանադրության 1–ին, 6, 49, 55 և 95 հոդվածների դրույթներից: Իրականում նման մոտեցում արտահայտված է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի՝ վեճի առարկա 3–րդ մասում և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 5–րդ մասում: Վերջինս նախատեսում է, որ «Այն դեպքում, երբ տվյալ դատարանում քննվող գործերի ծավալը փոքր է տվյալ դատարանում աշխատող դատավորների թվի համեմատ, այդ դատարանի դատավորը կարող է վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ մինչև 6 ամիս ժամկետով գործուղվել այլ դատարան՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ դատավորի վարույթում գտնվող գործի քննությունը չի ավարտվել մինչև համապատասխան գործի քննության ավարտը: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

18. ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

ՍԴՈ–967, 7 հունիսի, 2011 թ.

6. .... Նշված իրավական դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ իրավական տեխնիկայի առումով թույլատրելի է այն դեպքը, երբ իրավաստեղծ մարմինը տվյալ իրավահարաբերության կարգավորման համար հատուկ նորմեր սահմանելու փոխարեն հղում կատարի մեկ այլ նմանատիպ իրավահարաբերություն կարգավորող նորմերին՝ դրանով իսկ վերջիններս կիրառելի դարձնելով առաջին իրավահարաբերության կարգավորման համար: Տվյալ դեպքում օրենքի (մինչև 09.01.2009 թ. խմբագրությամբ) 57–րդ հոդվածի 3–րդ կետը, ի թիվս այլնի, հղում էր կատարում օրենքի՝ մեկ այլ նմանատիպ իրավահարաբերություն կարգավորող 61–րդ հոդվածի 1–ին կետին, որն էլ, իր հերթին, հղում էր կատարում օրենքի՝ դարձյալ մեկ այլ իրավահարաբերություն կարգավորող 33–րդ հոդվածին՝ վերջիններս կիրառելի դարձնելով Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտների առնչությամբ՝ հարկային գործակալի բացակայության դեպքում: Հիմք ընդունելով վերոգրյալը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի (մինչև 09.01.2009 թ. խմբագրությամբ) 33–րդ հոդվածով **ռեզիդենտների** համար սահմանված դրույքաչափը, ինչպես նաև օրենքի (մինչև 09.01.2009 թ. խմբագրությամբ) 61–րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր **ունեցող** ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի վերաբերյալ դրույթները կիրառելի էին նաև Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանում կամ վայր **չունեցող** ոչ ռեզիդենտների առնչությամբ՝ հարկային գործակալի բացակայության դեպքում, և իրավակիրառողն առաջնորդվել է այդպիսի դիրքորոշմամբ:

ՍԴՈ–1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված** և **համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

Տվյալ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու հստակ կանոնների պահպանումը՝ նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմանների երաշխավորման նպատակով: Դա առավել ևս կարևոր է այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների խստացմանը:

ՍԴՈ–1224, 7 հուլիսի, 2015 թ.

20. Դիմողը գտնում է, որ վիճարկվող ակտերը բազմաթիվ դեպքերում չեն համապատասխանում նաև օրենսդրական տեխնիկայի կանոններին: Դիմողը, մասնավորապես,

նշում է փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մեկ իրավական ակտով սկզբունքորեն նոր օրենք ընդունելու փաստը, ինչպես նաև այն հանգամանքը, որ փոփոխությունների արդյունքում մի շարք նորմեր փոփոխվել են, սակայն պահպանել են նույն համարները: Դիմողը նաև գտնում է, որ այս փաստարկների ուժով առաջ է գալիս իրավական անորոշության հիմնահարց:

Վերը նշվածի կապակցությամբ անհրաժեշտ է փաստել, որ հոդվածի համարը պահպանվում է իրավական ակտում այն դեպքում, երբ այդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվում: Սակայն, երբ այն փոփոխվում է, այս պարագայում ոչ թե նախկինն է ուժը կորցրած ճանաչվում և մեկ այլ հոդված ամրագրվում, այլ նախկին հոդվածը փոփոխվում է: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի՝ բարձրացված հիմնախնդրին վերաբերող պահանջները վերաբերում են գործողությունը դադարեցրած բաժիններին, գլուխներին, հոդվածներին, հոդվածների մասերին, կետերին, ենթակետերին: Հետևաբար, դիմողի այն պնդումները, որ փոփոխություններ կատարելիս ևս պետք է նախկին խմբագրության հոդվածի համարը նույնը մնա, և նոր խմբագրությունն այլ՝ լրացուցիչ հոդվածով ամրագրվի, իրավական տեխնիկայի գոյություն ունեցող կանոնների շրջանակներում հիմնավոր չէ: Նույնը կարելի է ասել նաև դիմողի այն փաստարկի վերաբերյալ, ըստ որի՝ վիճարկվող ակտը պետք է ոչ թե փոփոխվեր, այլ նոր օրենք ընդունվեր: Այս առնչությամբ հարկ է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում որևէ սահմանափակում իրավական ակտում կատարվող փոփոխությունների ծավալի առնչությամբ, ուստիև միայն այն փաստը, որ վիճարկվող օրենքը ենթարկվել է մեծ ծավալով փոփոխությունների, չի կարող հանգեցնել օրենսդրական տեխնիկայի խախտման, առավել ևս՝ այդ իրավական ակտի հակասահմանադրականության: Բացի դրանից, տվյալ դեպքում օրենսդրական տեխնիկայի կանոնները բովանդակային առումով չեն հանգեցնում իրավական անորոշության, այսինքն՝ չեն զրկում անձին իր վարքագիծը կանխատեսելու հնարավորությունից և չեն հանգեցնում սահմանադրաիրավական հետևանքներ առաջացնող հակասությունների:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ

ՍԴՈ-649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

VII. 3. ....Սահմանադրության 42 հոդվածի հետ օրենքը համադրելիս՝ կարևորվում է նաև այդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»: Կատարված աշխատանքի վարձատրությունից զրկելը, նախկինում սոցիալական ապահովության պարտադիր վճարների կատարումով վաստակած կենսաթոշակի վճարման կասեցումը, ինչպես նաև մինչ օրենքի ընդունումը կայացած աշխատանքային պայմանագրերով չնախատեսված նոր պայման ավելացնելու պարտադրանքը նշանակում է՝ հակառակ սահմանադրական այս պահանջին, հետադարձ ուժ տալ օրենքին: Օրենքի հետադարձ գործողությունն առավել ցայտուն է այն բազմաթիվ դեպքերում, երբ աշխատավարձի կամ թոշակի վճարումների ուշացման հետևանքով քաղաքացին զրկվել է օրենքի ուժի մեջ մտնելուն նախորդող տարվա կենսաթոշակից կամ աշխատավարձից:

ՍԴՈ-723, 15 հունվարի, 2008 թ.

4. ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասն ամրագրում է անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի մերժման սկզբունքը: Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի

հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

15. .... Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներն ստացել են այնպիսի մեկնաբանություն, որ այդ դրույթների հիման վրա վճռաբեկ բողոքն ստացած համապատասխան առաջին ատյանի դատարանը կիրառում է նոր իրավակարգավորումը՝ մերժելով վերադաս ատյանների դատական ակտերը վերանայելու խնդրանքը՝ դրանով իսկ, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի, հետադարձ ուժ տալով անձի վիճակը վատթարացնող օրենքին:

ՍԴՈ–881, 4 մայիսի, 2010 թ.

5. .... Ավելին, օրենքի հետադարձ ուժի մերժման և լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքները պահպանելու անհրաժեշտությամբ թելադրված՝ օրենսդիրը «Դատախազության մասին» գործող օրենքն ընդունելիս «դատախազ» եզրույթում ներառել է նաև դատախազի նախկին ավագ օգնականներին և օգնականներին, որոնց պաշտոնները վերանվանվել են որպես համապատասխան դատախազության դատախազներ և ավագ դատախազներ: Օրենսդիրը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ 2007 թվականի դեկտեմբերի 1-ից դատախազության քննիչների ինստիտուտը դատախազության համակարգից հանվել է:

....

7. Հիմք ընդունելով դիմումում բարձրացված հարցադրումները՝ կապված օրենքի հետադարձ ուժի արգելման սկզբունքի հետ, սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի 2008 թ. հունվարի 15-ի ՍԴՈ–723 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են սույն գործի նկատմամբ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. հունվարի 15-ի ՍԴՈ–723 որոշման 8-րդ կետում գտել է, որ՝ «....օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ **լեգիտիմ ակնկալիքների** հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:....»:

Սույն գործի քննության շրջանակներում զարգացնելով իր՝ 2008 թ. հունվարի 15-ի ՍԴՈ–723 որոշման 8-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքի տեսանկյունից սահմանադրական դատարանի վերը նշված որոշման մեջ ամրագրված հինգ պայմաններից չորսը՝ կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի չափը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակային իրավունքի պարտադիր տարրեր են: Ընդ որում, ՍԴՈ–723 որոշման 8-րդ կետում ամրագրված՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանների ներքո սահմանադրական դատարանը նկատի է ունեցել կենսաթոշակի ձեռքբերման արտոնյալ պայմանները: Ինչ վերաբերում է վերջին տարրին՝ կենսաթոշակի վճարման պայմաններին, ապա այն ֆակուլտատիվ

տարր է և կախված է կենսաթոշակի նախկինում սահմանված կամ նշանակված չափից: Այսինքն՝ այդ տարրը կարող է դառնալ պարտադիր տարր միայն այն դեպքում, երբ կենսաթոշակային իրավահարաբերությունների նոր համակարգ սահմանելիս նվազեցվում է նախկինում սահմանված կամ նշանակված կենսաթոշակի չափը:

ՍԴՈ–1000, 29 նոյեմբերի, 2011 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ քննության առարկա իրավադրույթների սահմանադրականության վերաբերյալ վեճը՝ որպես այդպիսին, բացակայում է դիմող և պատասխանող կողմերի միջև, որոնք գրեթե նույն փաստարկներով արձանագրում են օրենքի նշված դրույթների անհամապատասխանությունը Սահմանադրությանը: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործի քննությունը ոչ միայն էական նշանակություն կունենա ժամանակի մեջ իրավական ակտի գործողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու իրավական հստակության ապահովման տեսանկյունից, այլև դատական պրակտիկայի համար առավել մատչելի կդարձնի սահմանադրական նորմերի անմիջական կիրառման ինստիտուտի էությունը:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-6-րդ մասերի, ինչպես նաև 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն **ընդհանուր կանոն է,** իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ **բացառություն ընդհանուր կանոնից**: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից: Նշված ընդհանուր կանոնին համապատասխան՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն արգելում են արարքի պատժելիություն սահմանող և պատիժը խստացնող օրենքի հետադարձ ուժով գործողությունը: Նույն հոդվածի 6-րդ մասն արգելում է պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքի հետադարձ ուժով գործողությունը: Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հետադարձ ուժ չունեն նաև անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներն ու այլ իրավական ակտերը:

Նշված ընդհանուր կանոնից բացառություն են Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասում և 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմերը: Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ, տվյալ հոդվածի իրավակարգավորման տրամաբանության ու առարկայի շրջանակներում վերաբերելի է միայն արարքի համար պատիժ սահմանող օրենքներին, և շեղում է ընդհանուր կանոնից:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող հարաբերությունները կարգավորող սահմանադրական նորմերը և դրանցում ամրագրված մոտեցումները համահունչ են միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված դրույթներին: Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ քրեական հանցագործության համար՝ կապված ցանկացած գործողության կամ անգործության հետ, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»: Միաժամանակ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդվ. 15), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվեն-

ցիայում (հոդվ. 7, մաս 1) և միջազգային իրավական այլ փաստաթղթերում ևս անդրադարձ է արվել խնդրո առարկա հարցերի կարգավորմանը՝ նախատեսելով, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող **քրեական օրենքն** ունի հետադարձ ուժ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժի հանգամանքը պայմանավորված է Սահմանադրությամբ օժտված իրավունքի ուժով, ինչպես նաև ՀՀ միջազգային պարտավորություններով և օրենսդրի որևէ հայեցողություն չի ենթադրում:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բացառությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ դա հանդես է գալիս որպես առավել ընդհանուր կանոն, չի վերաբերում Սահմանադրության 22-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորմանը, պայմանավորված է օրենսդրի հայեցողությամբ: Վերջինս իր հերթին կարող է դրսևորվել բացառապես միայն տվյալ ակտով կանոնակարգվող իրավահարաբերությունների շրջանակներում:

ՍԴՈ-1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված** և **համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման:

Տվյալ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու հստակ կանոնների պահպանումը՝ նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմանների երաշխավորման նպատակով: Դա առավել ևս կարևոր է այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների խստացմանը:

ՍԴՈ-1224, 7 հուլիսի, 2015 թ.

17. .... Այդ անձանց նկատմամբ օրենքի դրույթների հետադարձ կիրառման վերաբերյալ փաստարկների առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հետադարձ ուժի արգելման սկզբունքը վերաբերելի է միմիայն այն դեպքերին, եթե անձը գտնվելով արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների մեջ, ունենալով որոշակի իրավունքներ և պարտականություններ, օրենքի փոփոխման պատճառով նրա իրավական վիճակը վատթարանում է, նա զրկվում է իրավունքներից կամ սահմանափակվում է այդ իրավահարաբերությունների ուժով նրա իրավունքի իրացումը:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ-701, 11 մայիսի, 2007 թ.

6. .... Այսուհանդերձ, ինչպես վկայում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճանաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի

դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի և ծանր հետևանքներ հանրության և պետության համար, ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավասուտեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները: Հետևաբար, հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում:

ՍԴՈ-751, 15 ապրիլի, 2008 թ.

10. .... Վիճարկվող դրույթների և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3^2 բաժնի (մասնավորապես՝ 204^{20} հոդվածի) դրույթների համակարգային վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման արդյունավետության տեսանկյունից կարևորում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի կարգի սահմանումը, որը, նախ՝ չի խաթարի երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, ինչպես նաև լիարժեք հնարավորություն կտա անձին սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերականգնելու հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում խախտված իր իրավունքը: Բացի վերոշարադրյալից, խնդիրը վերաբերում է նաև այն բանին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան բաժնի նոր խմբագրությամբ (204^{22} հոդված) սահմանադրական դատարանի որոշման հիմքով փաստորեն վերանայման ենթակա են բոլոր այն դատական ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 20 տարուց ոչ վաղ: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանադրական դատարանի որոշման ուժը տարածում է 20-ամյա վաղեմությամբ իրավահարաբերությունների վրա: Ակնհայտ է, որ նշված նորմը հակասում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին, իսկ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ կետի՝ «2. Իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին»:

....

Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3^2 բաժնում համապատասխան փոփոխությունների միջոցով պարտավոր է կարգավորել նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման գործող կարգը՝ այն հաշվով, որպեսզի չխաթարվի իրավական անվտանգությունը, և քաղաքացիները լիարժեքորեն կարողանան վերականգնել հակասահմանադրական նորմի կիրառման հետևանքով խախտված իրենց իրավունքները:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

14. Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներկայումս սահմանված իրավակարգավորման արդյունք կարող է հանդիսանալ այն, որ անհնարին կդառնա վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելը: Նման իրավիճակում գործնականում դատական ակտի վերանայման ինստիտուտը դադարում է գործել ընդհանրապես՝ հնարավորություն չտալով վերականգնել անձի խախտված իրավունքը՝ ինչն առկա է սույն գործով դիմողի առնչությամբ:

.... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթներն անձին զրկում են նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միջոցով իր խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունից՝ խաթարելով երկրի իրավական անվտանգությունն ու քաղաքացիական շրջանառության կայունությունը, մեծացնելով կոռուպցիոն ռիսկը, թույլ չտալով Հայաստանի Հանրապետությանը լիարժեք և բարեխղճորեն կատարելու ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

14. .... Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաև խախտում է իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով իմաստազրկվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու և դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

....

17. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական և սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 և 94-րդ հոդվածների պահանջներից և երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

8. .... Վերահաստատելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա համանման գործերով դատական ակտերի նոր հանգամանքներով վերանայման հնարավորությունը պետք է քննարկվի, մի կողմից՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետության ապահովման, մյուս կողմից՝ իրավական որոշակիության և իրավական

անվտանգության սկզբունքների երաշխավորման անհրաժեշտության տեսանկյունից, որոնք պահանջում են սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման հնարավորության իրացման ժամկետային որոշակի սահմանափակում:

ՍԴՈ–1059, 23 նոյեմբերի, 2012 թ.

6. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առկա են բազմաթիվ հոդվածներ, որոնք շարունակում են հղում կատարել ԽՍՀՄ օրենսդրությանը, օգտագործել «ԽՍՀՄ տարածք», «պատգամավորների տեղական խորհուրդներ», «սոցիալիստական սեփականություն», «սոցիալիստական օրինականություն», «ներքին գործերի մարմիններ» եզրույթները, սահմանել վարչական իրավախախտումների մասին օրենսդրության բնագավառում ԽՍՀՄ իրավասությանը ենթակա հարցերը և այլն, ինչն առաջացնում է իրավական պետությանն անհարիր **իրավական վտանգ**, և դա այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության (27.11.2005 թ. փոփոխություններով տեքստի) 117–րդ հոդվածի 1–ին կետը սահմանում է. «Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո .... Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին»: Ընդ որում, Սահմանադրության ընդունումից հետո օրենսգրքի մի շարք հոդվածներում նախկինում կատարված փոփոխությունների արդյունքում «ԽՍՀՄ» հապավումը փոխարինվել է «ՀՀ» հապավումով, իսկ մյուս հոդվածներում, այդ թվում՝ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 262–րդ հոդվածում, որում վերջին անգամ փոփոխություն է կատարվել ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.12.2004 թ. ընդունված ՀՕ–68–Ն օրենքով, «ԽՍՀՄ» հապավումը շարունակում է պահպանվել:

ԻՐԱՎԱԿԱՆ ՎԱԿՈՒՈՒՄ

ՍԴՈ–665, 16 նոյեմբերի, 2006 թ.

5. ՀՀ քաղ. օր. 14 և 15 հոդվածների համապատասխան դրույթների և ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1–ին կետի բովանդակության համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը փորձելով ՀՀ քաղ. օր. 14 և 15 հոդվածներում նշված դրույթների պահանջներին համարժեք ձևավորել դրանց դատավարական լուծման ընթացակարգը, ստեղծել է, սակայն, այնպիսի իրավիճակ, երբ դատավարական իրավունքի նորմն արգելք է դարձել նյութական իրավունքի նորմի իրականացմանը: Օրենսդիրը՝ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1–ին կետի առաջին մասում ամրագրելով քաղաքացիական և տնտեսական գործեր քննող դատարանների պարտավորությունը՝ ընդունել և քննել պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումը, երկրորդ պարբերությամբ առանձնացնում է իրավական ակտերի խումբ, որոնց՝ օրենքին համապատասխանության հարցի քննությունը գործնականում դուրս է բերվել դատական վերահսկողության ոլորտից:

ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1–ին կետի 2–րդ պարբերությունն այն մասին, որ «Դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է», ձևակերպված է իրավաբանորեն ոչ հստակ: Ինչպես վկայում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վճռաբեկ դատարանների կայացրած որոշումների ուսումնասիրությունը, այդ դատական ատյանները ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1–ին կետի 2–րդ պարբերությունում տեղ գտած ձևակերպումը մեկնաբանել են առանց հաշվի առնելու ՀՀ քաղ. օր. 14 և 15 հոդվածների և ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1–ին կետի պահանջները: Եթե ընդհանուր

իրավասության դատարանները փորձել են ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության դիսպոզիցիան զուգորդել ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի բովանդակության հետ, ապա ակնհայտ է, որ սահմանադրական այդ նորմը չի պարունակում այնպիսի դրույթ, որը կարող էր հիմք ծառայել քաղաքացու դիմումը մերժելու համար: Նման մերժումը կարող էր արդարացվել միայն այն դեպքում, եթե Սահմանադրությամբ սահմանադրական դատարանին վերապահված լիներ ՀՀ քաղ. դատ. օր. 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունում վկայակոչվող իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի որոշման իրավասությունը, ինչն առկա է շատ երկրներում: Սակայն ՀՀ օրենսդրությունն այդ իրավասությունը վերապահել է ընդհանուր իրավասության դատարաններին: Հետևաբար, դատավարական նորմերը դատարանների լիազորությունների իրացման երաշխիք պետք է ապահովեն, այլ ոչ թե խոչընդոտեն դրանց իրականացմանը՝ ստեղծելով իրավական վակուում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑ

ՍԴՈ-864, 5 փետրվարի, 2010 թ.

6. .... Իրավակարգավորման նշված բացը, սակայն, պայմանավորված է ոչ թե ինքնին օրենսգրքի վիճարկվող դրույթներով, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտի ոչ ամբողջական իրավակարգավորմամբ, որի հաղթահարումը ՀՀ Ազգային ժողովի իրավասության հարցն է: Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է լրացնել նշված իրավունքի բացը՝ ապահովելով օրենքի իրացման գործուն կառուցակարգ, վարչական իրավախախտումների համար պաշտոնատար և այլ անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի գործադրման իրական երաշխիքներ:

ՍԴՈ-914, 14 սեպտեմբերի, 2010 թ.

7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը

հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը:

ՍԴՈ–917, 18 սեպտեմբերի, 2010 թ.

8. .... **Այս առումով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 72–րդ գլխում առկա է այնպիսի օրենսդրական բաց,** որը չի կարող լրացվել այլ իրավական երաշխիքներով և որի պայմաններում չի ապահովվում անձի ժառանգման իրավունքի իրացման հնարավորությունը: Նման օրենսդրական բացը հանգեցնում է արյունակցական ավելի թույլ կապի **պատկանող անձանց մի մասի իրավունքների արգելափակման, ինչը չի կարող օբյեկտիվորեն արդարացված նպատակ հետապնդել:**

ՍԴՈ–922, 2 նոյեմբերի, 2010 թ.

6. .... Սահմանադրական դատարանն անընդունելի է համարում դիմողի պնդումն առ այն, որ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման անբողոքարկելիության առումով առկա է **օրենքի բաց**, որը խոչընդոտում է դատական պաշտպանության իրավունքի իրացմանը: Սահմանադրական դատարանն իր առանձին որոշումներում անդրադառնալով «օրենքի բաց» հասկացության բովանդակությանը՝ նշել է, որ օրենքի բացն իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: Հիմք ընդունելով նշված սահմանումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրավակարգավորման առնչությամբ օրենքի բաց առկա չէ, քանի որ օրենսդիրը հետևողականորեն և ամբողջությամբ կանոնակարգել է միջանկյալ դատական ակտերի, այդ թվում՝ գործի վարույթը վերսկսելու մասին որոշման բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունները:

ՍԴՈ–933, 25 հունվարի, 2011 թ.

6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ գործը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանից առաջին ատյանի դատարան ուղարկելու առանձին ընթացակարգ: Դա վերաբերում է նաև հիշյալ դատարաններից գործն առաջին ատյանի դատարան ուղարկելու հստակ ժամկետներին, որով անմիջականորեն պայմանավորված են մի շարք պատժամիջոցների հաշվարկման ժամկետները:

Սակայն հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման նպատակն ու առարկան՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված բացը պայմանավորված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի առկա ձևակերպմամբ:

ՍԴՈ-1020, 11 ապրիլի, 2012 թ.

11. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև գրավոր սկզբունքով քննվող գործերով դատավարության մասնակիցների իրավունքների երաշխավորման խնդիրը դիտարկել այդ իրավունքների իրականացման առանձնահատկությունների և դատական հայեցողության շրջանակներում դրանց դրսևորման հնարավորությունների համատեքստում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ, ի տարբերություն բանավոր ընթացակարգի (օրենսգրքի 16-րդ գլուխ), ինչպես նաև ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկայի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում որոշակիացված և համակարգված չեն գրավոր քննության կանոնները: Դրանց բացակայությունը, թեև սահմանադրականության խնդիր անմիջականորեն չի առաջացնում, սակայն անձանց իրավունքների, ինչպես նաև արդար և հրապարակային դատաքննության երաշխավորմանն արգելք կարող է հանդիսանալ: Այդպիսի քննության շրջանակներում անձանց՝ օրենսգրքով երաշխավորված դատավարական իրավունքների իրականացման իրավական հնարավոր (հստակ կանխատեսելի) միջոցներն անորոշ են և կարող են ըստ էության լուծվել դատարանի բացարձակ հայեցողության շրջանակներում:

ՍԴՈ-1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

6. .... Սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակները, երբ անձը, որի նկատմամբ նշանակված է վարչական տույժ՝ տուգանք, տարբեր օբյեկտիվ պատճառներով, ներառյալ՝ անհաղթահարելի ուժի առկայությունը, չկարողանա օրենքով սահմանված ժամկետներում վճարել տուգանքը: Այս դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով, այսինքն՝ իրավունքի ուժով, նշանակված տուգանքի չափն ինքնաբերաբար բազմապատկվում է, որպիսի պայմաններում անձին չի տրվում հնարավորություն ապացուցելու իր պարտավորությունների չկատարման պատճառների՝ իր կամքից անկախ լինելը:

.... Վերոշարադրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթները սահմանադրականության խնդիր չեն առաջացնում, իսկ դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը՝ կապված նշանակված տուգանքը պարտավոր անձից անկախ պատճառներով օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետ, պայմանավորված է ոչ թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, **այլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան իրավակարգավորման բացակայության հետ, որի քննությունը դուրս է ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակից:**

ՍԴՈ-1143, 8 ապրիլի, 2014 թ.

6. .... Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել օրենսդրական բացի և իրավական եզրույթների սահմանումների օրենս-դրական ամրագրման բացակայության հարաբերակցությունը: Նշվածի կապակցու-թյամբ ՀՀ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձա-նագրել, որ օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սոսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարա-

գայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը: Մինչդեռ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի տեքստում տևող և շարունակվող իրավախախտումների սահմանումների բացակայությունն իրավական հասկացության օրենսդրական կանոնակարգման բացակայություն է:

ՍԴՈ–1154, 10 հունիսի, 2014 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի ապրիլի 8-ի ՍԴՈ–1143 որոշմամբ միմյանցից հստակ սահմանազատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

.... Հաշվի առնելով այս դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի կողմից բարձրացված իրավական վեճը չի առնչվում «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության սահմանադրաիրավական բովանդակությանը, ինչն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում:

ՍԴՈ– 1255, 16 փետրվարի, 2016 թ.

6. Սահմանադրական դատարանը դիմումի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթի հնարավոր հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկները գլխավորապես հանգում են օրենսդրական կարգավորումների ենթադրաբար ոչ լիարժեք լինելու խնդրին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, մասնավորապես, 2014 թվականի ապրիլի 8-ի ՍԴՈ–1143 որոշմամբ միմյանցից հստակ սահմանազատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՍԴՈ–722, 21 դեկտեմբերի, 2007 թ.

6. .... Այսպիսով, անձանց և հանրային իշխանության մարմինների միջև ՀՀ Սահմանադրության 27.1. հոդվածի դրույթներից բխող հարաբերությունների օրենսդրական կարգավորման հիմքում ՀՀ սահմանադրական դատարանը կարևորում է սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների փոխադարձության և դրանց ներդաշնակեցման միասնական իրավական սկզբունքի կիրառման առկայությունը՝ որպես սահմանադրական վերոհիշյալ նորմերի արդյունավետ իրացման նախապայման: ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ հանրային իրավական (սահմանադրաիրավական) հարաբերություններում այդ սկզբունքի արդյունավետ գործադրման գրավականը ոչ միայն սուբյեկտիվ իրավունքների իրականացման պայմանների իրավական կարգավորումն է, այլև իրավունքի նորմերին համապատասխան սուբյեկտիվ վարքագիծ դրսևորելը:

ՍԴՈ–919, 5 հոկտեմբերի, 2010 թ.

7. .... Վերոգրյալի, ինչպես նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների տրամաբանության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը

բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

ՍԴՈ–966, 3 հունիսի, 2011 թ.

5. ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Սահմանադրաիրավական այդ նորմի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սուբյեկտների համար վարքագծի պարտադիր կանոններ, ունեն ՀՀ օրենքներից և իրավական այլ ակտերից առավել բարձր իրավաբանական ուժ, ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ ողջ տարածքում:

Օրենքի նկատմամբ ՀՀ միջազգային պայմանագրերի գերակայության սահմանադրական սկզբունքն ամրագրված է ՀՀ գործող օրենսդրության բազմաթիվ ակտերում, այդ թվում՝ նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածում, որն ուղղակիորեն սահմանել է, որ «**եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսվում են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:**

ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմատիվ դրույթի բովանդակությունից ոչ միայն բխում է անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության հետ կապված հարաբերությունները հատկապես օրենքով կարգավորելու, այլև այդ հարաբերությունները լիարժեք և, առաջին հերթին՝ **իրավունքի սկզբունքներին համապատասխան կարգավորելու** սահմանադրաիրավական պահանջ:

ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի համաձայն Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ: ՀՀ Սահմանադրության 44–րդ հոդվածի համաձայն հիշյալ իրավակարգավորումը սահմանափակման ենթակա չէ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավունքներից և ազատություններից (այդ թվում՝ արտոնություններից) օգտվելը նույնպես անձի իրավունք է, որը ենթակա է երաշխավորման ու պաշտպանության ներպետական օրենսդրությամբ: **Միաժամանակ, օրենքով և իրավական այլ ակտերով չեն կարող բացառվել միջազգային որևէ պայմանագրով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (այդ թվում՝ արտոնություններ) կամ սահմանափակվել այդպիսիք:**

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման և իրավակիրառական պրակտիկայում դրանց միակերպ ընկալումն ապահովելու անհրաժեշտության հետ միաժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է նաև Սահմանադրության նորմերի անմիջական գործողության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի 1–ին մասի սկզբունքային պահանջը և դրա անվերապահ կատարման անհրաժեշտությունը:

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–668, 28 նոյեմբերի, 2006 թ.

5. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքը սահմանելով «Հայրենական մեծ պատերազմի վետերաններ» հասկացությունը, չի անդրադարձել Համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետում նշված անձանց: Սակայն նույն օրենքի հոդված 3–ը սահմանում է, որ «Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսվում են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»: Հետևաբար, իրավակիրառական պրակտիկայում «պատերազմի վետերաններ» հասկացությունը մեկնաբանելիս՝ անվերապահորեն պետք է հիմք ընդունել նաև Համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետի դրույթները:

ՍԴՈ–966, 3 հունիսի, 2011 թ.

5. ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի 4–րդ մասի համաձայն միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Սահմանադրաիրավական այդ նորմի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սուբյեկտների համար վարքագծի պարտադիր կանոններ, ունեն ՀՀ օրենքներից և իրավական այլ ակտերից առավել բարձր իրավաբանական ուժ, ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ ողջ տարածքում:

Օրենքի նկատմամբ ՀՀ միջազգային պայմանագրերի գերակայության սահմանադրական սկզբունքն ամրագրված է ՀՀ գործող օրենսդրության բազմաթիվ ակտերում, այդ թվում՝ նաև «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածում, որն ուղղակիորեն սահմանել է, որ «**եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսվում են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը**»:

ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմատիվ դրույթի բովանդակությունից ոչ միայն բխում է անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության հետ կապված հարաբերությունները հատկապես օրենքով կարգավորելու, այլև այդ հարաբերությունները լիարժեք և, առաջին հերթին՝ **իրավունքի սկզբունքներին համապատասխան կարգավորելու** սահմանադրաիրավական պահանջ:

ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի համաձայն Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ: ՀՀ Սահմանադրության 44–րդ հոդվածի համաձայն հիշյալ իրավակարգավորումը սահմանափակման ենթակա չէ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավունքներից և ազատություններից (այդ թվում՝ արտոնություններից) օգտվելը նույնպես անձի իրավունք է, որը ենթակա է երաշխավորման ու պաշտպանության ներպետական օրենսդրությամբ: **Միաժամանակ, օրենքով և իրավական այլ ակտերով չեն կարող բացառվել միջազգային որևէ պայմանագրով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (այդ թվում՝ արտոնություններ) կամ սահմանափակվել այդպիսիք:**

ՆՈՐՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–630, 18 ապրիլի, 2006 թ.

11. .... Բացի դրանից, այդ դրույթների սահմանադրաիրավական մեկնաբանության համար պետք է դրանք ներկայացնել իրենց իրավական բովանդակության ամբողջականության մեջ:

ՍԴՈ–678, 16 փետրվարի, 2007 թ.

5. .... Փաստորեն, օրենքի վիճարկվող դրույթները, մասնավորապես, օրենքի 49 հոդվածի «ե» կետի իրավական բովանդակության շրջանակներում, ՀՀ Ազգային ժողովի գործունեության կազմակերպման առարկա են դարձրել նաև այլ մարմինների հետ փոխհարաբերությունների միակողմանի իրավակարգավորման հարցը, կամ ստեղծում են դրանց գործունեությանը միջամտելու հնարավորություն, որը չի բխում ՀՀ Սահմանադրության 27 և 62 հոդվածների պահանջներից: Ելակետն այն է, որ տվյալ դեպքում օրենսդիրն օրենքի նորմի միջոցով մեկնաբանել է Սահմանադրության 62 հոդվածի 1–ին մասում ամրագրված՝ «իր գործունեության կազմակերպման հարցերով» հասկացության բովանդակությունը: Դիտարկելով այս մեկնաբանությունը Սահմանադրության 5 հոդվածի, 6 հոդվածի 2–րդ մասի, 62 հոդվածի ողջ բովանդակության իմաստով, հարկ է նկատել, որ մեկնաբանությունը ոչ իրավաչափ է, քանի որ այլ մարմինների հետ իրավահարաբերությունների շրջանակներում Ազգային ժողովի՝ որոշումներ ընդունելու լիազորությունն սպառիչ կերպով սահմանված է Սահմանադրությամբ: «Իր գործունեության կազմակերպման հարցերով» բառակապակցությունը տվյալ դեպքում չի կարող և պետք չէ ներառի Հանրային հեռուստառադիոընկերության համար պարտականություն սահմանելու հնարավորություն (Կանոնակարգի 49 հոդվածի «ե» կետ) կամ Հանրային ռադիոընկերությանն օրենքով սահմանված պարտականությունից ազատելու հնարավորություն (Կանոնակարգի 112 հոդվածի 2–րդ կետ):

ՍԴՈ–766, 14 հոկտեմբերի, 2008 թ.

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործի շրջանակներում առաջնային խնդիրը վեճի առարկա նորմի պատշաճ իրավական մեկնաբանման և կիրառման երաշխավորումն է: Դրա ապահովման իրավական պարտավորությունը, ՀՀ Սահմանադրությանը համապատասխան, կրում է ՀՀ վճռաբեկ դատարանը:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

12. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև նշված հանձնարարականը չի ճշգրտում երկաստիճան վարույթի բաղկացուցիչ տարրերը՝ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյանների միջև ընտրության հարցի լուծումը թողնելով անդամ պետությունների հայեցողությանը, այնուամենայնիվ, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հետևողականորեն կիրառվող՝ իրավունքների արդյունավետ մեկնաբանության սկզբունքը, այնպես էլ հանձնարարականի նպատակն ու առարկան ուղղված են նրան, որ վարչական արդարադատության ոլորտում դատական երկաստիճան համակարգը լինի այնքան կենսունակ և արդյունավետ, որ կարողանա ապահովել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը և նվազագույնի հասցնի դատական սխալների հավանականությունը:

ՍԴՈ–1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

5. .... Միաժամանակ, պարզելով, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14–րդ և 29–րդ հոդվածներում նախատեսված վիճարկվող իրավակարգավորումները սահմանվել և գործողության մեջ են դրվել «Պետական կենսաթոշակների մասին» դեռևս նախ-

կին ՀՀ օրենքի (ՀՕ–519–Ն) փոփոխությունների արդյունքում (26.12.2008 թ. ՀՕ–35–Ն օրենք), և հետագայում իրենց արտացոլումն են գտել «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թ. ընդունված ՀՀ օրենքում, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի կողմից այդ նորմերի հետադարձ ուժով կիրառման հանգամանքի շեշտադրումը՝ դրանց սահմանադրականության խնդրի առաջադրման առումով, հիմնավոր չէ: Ինչ վերաբերում է չորս տարուց ավելի գործող իրավանորմի ոչ իրավաչափ կիրառմանը վարչական մարմնի կողմից, ապա դա, ինչպես նշվեց, կարող էր քննության առարկա դառնալ համապատասխան իրավասությամբ օժտված ընդհանուր իրավասության կամ վարչական դատարանում՝ բացահայտելու համար նաև կոնկրետ գործի փաստական հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60–րդ հոդվածի 1–ին կետով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14–րդ և 29–րդ հոդվածների վերոհիշյալ իրավակարգավորումների մասով գործի վարույթը կարճելու հիմքեր:

ՍԴՈ– 1253, 2 փետրվարի, 2016

6. Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ անդրադառնալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների սահմանադրաիրավական բովանդակությանը՝ նկատի ունենալով, որ դրանց կատարվող հղումներն են հիմք ծառայել վեճի առարկա նորմերն իրավակիրառ պրակտիկայում տարակերպ մեկնաբանելու հարցում:

....

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ օրենսդրության մեջ, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, առկա են «և» շաղկապով տարանջատված տարաբնույթ իրավական նորմեր, որոնցից ոչ բոլորն են ամրագրում տվյալ նորմի կիրառման միաժամանակյա անհրաժեշտ պայմանները: Դրանք կարող են, ի թիվս այլնի, լինել նորմ–սկզբունքներ, նորմ–նպատակներ, նորմ–խնդիրներ, ինչպես նաև կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող այնպիսի նորմեր, որոնք չեն ամրագրում որևէ պայման, կամ որ նույնն է՝ տվյալ նորմի կիրառումը չեն պայմանավորում պայմանների համակցությամբ: Այդպիսի կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող նորմերից է, օրինակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52–րդ հոդվածի 1–ին մասի նորմը, որը, ի թիվս այլնի, պարունակում է հետևյալ դրույթները. «հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ», «բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները»:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–652, 18 հոկտեմբերի, 2006 թ.

5. .... Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 93 հոդվածը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է: Իր հերթին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածը պարտավորեցնում է սահմանադրական դատարանին՝ ապահովել ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: Դա իրականացնելու համար սահմանադրական դատավա-

րության հիմնական սկզբունքներից մեկն է համարվում գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում ամրագրված է, որ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով իր որոշումներն ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ինչպես նաև Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ քննության առարկա գործի հանգամանքների՝ գործնականում չի ապահովվել ու պաշտպանվել քաղաքացու՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով ամրագրված իրավունքները:

ՍԴՈ-674, 30 հունվարի, 2007 թ.

5. .... Առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջներով՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը Սահմանադրությամբ և օրենքով լիազորված չլինելով մեկ դատավորի կազմով կայացնելու որոշում բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ, 03.05.2006 թ. կայացրել է նման որոշում: Մյուս կողմից, այդ պահին գործել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին կամ վերաքննիչ դատարան»: Տվյալ դեպքում բողոքը ներկայացնելու համար օրենքով ժամկետային որևէ սահմանափակում չի նախատեսվել, որը փաստեց նաև պատասխանող կողմը: Լիազորված չլինելով գնահատելու ընդհանուր իրավասության դատարանի ակտերի սահմանադրականությունը, միաժամանակ կոչված լինելով ապահովելու ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հարցն ուղղակիորեն առնչվում է մարդկանց սահմանադրական իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանը, միայն դատական սխալի հաղթահարման և գործի հանգամանքների համակողմանի քննության արդյունքում է հնարավոր ստեղծել անհրաժեշտ արդարադատական նախադեպ և երաշխավորել Սահմանադրության 1, 3, 5, 6, 14 և մի շարք այլ հոդվածների պահանջների հետևողական կատարումը:

ՍԴՈ-751, 15 ապրիլի, 2008 թ.

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածն ունի այն բնորոշ առանձնահատկությունը, որ դրանով կանոնակարգվում են իրավական նորմերի վերացական սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները: Անհատական դիմումների քննությանը կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգվում են օրենքի 69 հոդվածով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ 69 հոդվածի 11-րդ մասի հղումն օրենքի 68 հոդվածի 6-17-րդ մասերին խորությամբ հաշվի չի առել վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, դա վերաբերում է սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտի առանձնահատկություններին՝ վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության պարագաներում: Եթե նախնական և հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության

դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Հետևաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջները հաշվի առնելով, սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել միայն անձի նյութական և դատավարական իրավունքների պաշտպանության տեսանկյունից վիճարկվող դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11 և 12-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3^2 բաժնի (մասնավորապես՝ 204^{20} հոդվածի) դրույթների հետ համադրության մեջ դիտարկելով միայն:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

17. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական և սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 և 94-րդ հոդվածների պահանջներից և երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում:

ՍԴՈ–943, 25 փետրվարի, 2011 թ.

8. ՀՀ սահմանադրական դատարանն օժտված է սահմանադրաիրավական առանձնահատուկ կարգավիճակով, որը պայմանավորված է պետական իշխանության մարմինների համակարգում իր ունեցած տեղով, դերով և դրան համապատասխան լիազորություններով (ՀՀ Սահմանադրության 92 և 100-րդ հոդվածներ): Որպես դատական մարմին բացառապես սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված իրականացնել սահմանադրական արդարադատություն (ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդված): Սահմանադրական դատարանը կոչված է ապահովելու ՀՀ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, որի արդյունքում ընդունում է որոշումներ (եզրակացություններ): Այդ ակտերը ՀՀ իրավական համակարգում ունեն իրենց առանձնահատուկ տեղն ու դերը՝ թե՛ բովանդակությամբ, իրավակարգավորիչ նշանակությամբ և թե՛ ունեցած իրավական հետևանքների առումներով: Դրանցով կարգավորվող հարաբերությունները վերաբերում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին և իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտներին: Սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են կատարման անհապաղ (կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և ենթակա չեն քննարկման (վիճարկման, քննության) պետական, տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի, կազմակերպության կամ անհատի կողմից:

....

11. .... Այդուհանդերձ, անվերապահորեն ընդունելով, որ եթե օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից **որևէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**, ապա սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով խնդիրն այլ լուծում ունի:

Նախ. փաստն այն է, որ դատական պրակտիկան, օրենսդրական առկա ձևակերպումներից ելնելով, նոր հանգամանք չճանաչելով սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում նորմը ճանաչ-

վել է սահմանադրական, հնարավորություն չի ստեղծում անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման ու պաշտպանության համար: **Երկրորդ՝** փակուղի է մտնում իրավունքի գերակայության, հետևաբար՝ և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: **Երրորդ՝** նման իրավիճակը ոչ միայն դատավարական օրենսգրքերի, այլև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների անկատարությամբ է պայմանավորված:

ՍԴՈ–966, 3 հունիսի, 2011 թ.

5. .... ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման և իրավակիրառական պրակտիկայում դրանց միակերպ ընկալումն ապահովելու անհրաժեշտության հետ միաժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է նաև Սահմանադրության նորմերի անմիջական գործողության վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի սկզբունքային պահանջը և դրա անվերապահ կատարման անհրաժեշտությունը:

ՍԴՈ–984, 15 հուլիսի, 2011 թ.

8. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտը վերանայման արդյունքում ուժի մեջ թողնելը չի երաշխավորում դատական ակտերի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորություն՝ թույլ չտալով նաև դատական ակտերի վերանայման նպատակի ու խնդիրների իրացում, և միաժամանակ արգելափակելով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Տվյալ իրավիճակում չի ապահովվում նաև իրավունքի գերակայության, հետևաբար՝ և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը:

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

7. Նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանը, ինչպես նշվեց, բազմիցս անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով գործի քննության ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը, կարևոր է համարում նաև 2005 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո մեր երկրում անհատական դիմումների ներդրման իրավական պրակտիկային անդրադարձը՝ սույն գործով առաջ քաշված խնդիրներին ամբողջական ու հստակ պատասխան տալու համար: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի ընդունած վերջին տարիների թվով շուրջ 150 որոշումների համակողմանի ուսումնասիրությունից հետևում է, որ քննած գործերի 92.3 տոկոսի դեպքում պարզապես մերժվել է նոր հանգամանքների հիմքով գործի քննությունը և բողոքները վերադարձվել են: Միայն 7.7 տոկոսի դեպքում է նոր հանգամանքների հիմքով բողոքները բավարարվել՝ դրանց քննության ընդունումը մերժելու վերաբերյալ նախկինում կայացված դատական ակտերը վերանայելու գործընթաց սկսելու առումով: Սակայն բոլոր դեպքերում որևէ գործով վերջնական դատական ակտը չի վերանայվել: Դա այն դեպքում, երբ սույն գործով վեճի առարկա հոդվածով (2-րդ մաս) հստակ սահմանված է, որ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում միայն ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ դատարանը կարող է **վերանայված դատական ակտի** եզրափակիչ մասը չփոփոխել: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ համատեքստում խոսքը վերաբերում է միայն **վերանայված դատական ակտին, ինչին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում դատական պրակտիկայում:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ուսումնասիրված որոշումների կեսից ավելին Սահմանադրության գերակայության երաշխավորման առումով խնդրահարույց է և ձևավորել է իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքին ոչ համարժեք իրավակիրառական պրակտիկա, ուստի դրանց՝ իրավակիրառական պրակտիկայի գնահատման տեսանկյունից, առանձին անդրադարձ է անհրաժեշտ:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ–851, 14 հունվարի, 2010 թ.

6. .... Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 16.12.2005 թ. ՀՕ–33–Ն ՀՀ օրենքի և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 16.12.2005 թ. ՀՕ–32–Ն ՀՀ օրենքի ընդունման գործընթացին: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68–րդ հոդվածի 7–րդ մասի պահանջներից ելնելով օրենսդրական փոփոխության ընթացակարգի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ Ազգային ժողովում նման փոփոխության հիմնավորումն ու փաստացի փոփոխությունը համաչափելի չեն, չկա սուբյեկտների կազմի փոփոխության որևէ հիմնավորում, չի ապահովվել միևնույն հոդվածի (343–րդ հոդված) տարբեր մասերի համակարգային առումով փոխկապակցվածությունը: Այդ օրենքների նախագծերի քննարկումների և ընդունման անհրաժեշտության հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ օրենքներով կատարված փոփոխությունները հիմնավորվել են բացառապես վարչական կալանքի ինստիտուտի վերացման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 16, 32–րդ հոդվածների պահանջները: Սակայն այդ և հետագայում կատարված փոփոխությունների համադրումից հետևում է, որ վերոհիշյալ օրենսդրական լուծումները պարունակում են ներքին հակասություններ, քանի որ դրանց ընդունման արդյունքում՝ մի կողմից արարքը քրեականացվել է որոշակի սուբյեկտների նկատմամբ, մյուս կողմից՝ դադարել է, թեկուզ որոշ ժամանակահատվածում, հանրորեն վտանգավոր համարվել այլ սուբյեկտների առնչությամբ: Չի դրսևորվել նաև համակարգված մոտեցում, մասնավորապես՝ հաշվի առնելու, օրինակ, դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու դեպքում հարկադրանքի կիրառման հնարավորությունը, միևնույն արարքը կրկնվելու դեպքում այլ սանկցիա կիրառելու անհրաժեշտությունը և այլն:

ՍԴՈ–1176, 2 դեկտեմբերի, 2014 թ.

6. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում կարևորում է նաև վեճի առարկա հոդվածների և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ մաքսային օրենսգրքի այլ հոդվածների համադրված վերլուծության անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև դրանց հաճախակի փոփոխման հանգամանքը: Ի դեպ, ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում առավել հաճախակի փոփոխվող օրենքներից են հատկապես մաքսային և հարկային իրավահարաբերությունները կարգավորող օրենքները: Այսպես, օրինակ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը 06.07.1998 թվականից մինչև 05.12.2013 թվականը փոփոխվել կամ լրացվել է 43 անգամ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը 19.06.1998 թվականից մինչև 21.06.2014 թվականը՝ 152 անգամ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը 08.09.1997 թվականից մինչև 21.06.2014 թվականը՝ 70 անգամ և այլն: Սույն գործի շրջանակներում վիճարկման առարկա դարձած ՀՀ մաքսային օրենսգիրքը 26.12.2000 թվականից մինչև 21.06.2014 թվականը փոփոխվել և լրացվել է 40 տարբեր օրենքներով:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությունն ստատիկ երևույթ չէ, այն կարող է և պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում: Մասնավորապես, սահմանադրական դատարանը կարևորում է սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների փոփոխության, լրացման համատեքստում օրենսդրական նորմերի հստակության ու որոշակիության ապահովումը՝ հայտարարատուի կողմից մաքսային արժեքի հայտարարագրման համար ներկայացվող հայտարարագրի, մաքսային մարմիններից խորհրդատվական բնույթի տեղեկատվության ստացման, մաքսային մարմինների կայացրած ակտերի բողոքարկելիության դեպքերի, հիմքերի և կարգի կանոնակարգման հարցում:

ՍԴՈ– 1252, 26 հունվարի, 2016

5. .... Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից, հետագա օրենսդրական զարգացումների ընթացքում, սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի քրեականացման քաղաքականության պահպանման դեպքում, տարաբնույթ մեկնաբանությունները բացառելու համար անհրաժեշտ կլինի է՛լ ավելի բարձրացնել իրավակարգավորման իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության մակարդակը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

16. Դիմողի պնդմամբ՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 80 հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ նշված օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից, խախտում է ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի՝ օրենքներն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո: Նշված խախտումը, ըստ դիմողի՝ դրսևորվել է նրանում, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի պահանջներին համապատասխան նշված օրենքը պետք է ուժի մեջ մտներ պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, սակայն պաշտոնական տեղեկագրում հրապարակվելով 26.12.2007 թ.՝ ուժի մեջ է մտել օրենքով սահմանված տասնօրյա ժամկետից շուտ, այն է՝ 2008 թ. հունվարի 1-ից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նման ժամկետ սահմանել է՝ ելնելով օրենքի ուժի մեջ մտնելու համար օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգի տարբեր փուլերի համար սահմանված և անհրաժեշտ ժամկետների ողջամիտ հաշվարկից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը նկատի է ունեցել նաև այն պարագան, որ տարբեր տեխնիկական հանգամանքների բերումով իրավական ակտը կարող է պաշտոնապես հրապարակվել նաև ավելի ուշ, քան տվյալ իրավական ակտով սահմանված՝ դրա ուժի մեջ մտնելու օրը: Մասնավորապես, 62 հոդվածի 6-րդ մասում ամրագրված է, որ «Եթե նոր-

մատիվ իրավական ակտը չի հրապարակվել այնտեղ նշված իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, ապա իրավական ակտն ուժի մեջ մտնելու օր է համարվում դրա հրապարակմանը հաջորդող օրը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր կոնկրետ դեպքերում իրավակիրառ սուբյեկտներն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի առնչությամբ պետք է առաջնորդվեն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ–747, 4 ապրիլի, 2008 թ.

7. .... Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

7. .... Միաժամանակ, օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության և դրան բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը:

ՍԴՈ–891, 1 հունիսի, 2010 թ.

6. Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր ՍԴՈ–747 և ՍԴՈ–780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113–րդ հոդվածի առաջին մասի 3–րդ կետի ձևակերպումների և 113–րդ հոդվածի երրորդ մասում օգտագործված՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» և «գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» բառակապակցությունների և դրանց բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված ձևակերպումները և բառակապակցությունները գնահատման ենթակա ձևակերպումներ և բառակապակցություններ են: Դրանք ենթակա են գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը, կոնկրետ դեպքում՝ գործատուն, ցուցաբերել է կամայականություն:

ՍԴՈ–896, 15 հունիսի, 2010 թ.

6. Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր ՍԴՈ–747 և ՍԴՈ–780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221–րդ հոդվածի երկրորդ

մասի 3-րդ կետում օգտագործված՝ «կամայականություն դրսևորելը» բառակապակցության և դրան բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը:

ՍԴՈ-919, 5 հոկտեմբերի, 2010 թ.

6. .... Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր ՍԴՈ-747 և ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով ևս ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված՝ «երեխաների շահեր» հասկացությանը և դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

ՍԴՈ-947, 5 ապրիլի, 2011 թ.

8. Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ ՍԴՈ-747 և ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» բառակապակցության և դրա բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված բառակապակցությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը, կոնկրետ դեպքում՝ փոխառուն, գտնվել է ծանր կացության մեջ: Ինչ վերաբերում է օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կատարվել է որպես արհեստ» բառակապակցության վերաբերյալ դիմողի հարցադրմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է իրավունքի կիրառման հարց:

ՍԴՈ-967, 7 հունիսի, 2011 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենքի առանձին հասկացությունների բովանդակությունը չի կարող ինքնաբավ լինել: Դրանք պետք է դիտարկել ընդհանուր իրավակարգավորման համակարգային ամբողջականության մեջ:

19. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ-1063, 18 դեկտեմբերի, 2012 թ.

6. Դիմողների կողմից բարձրացված մյուս հիմնահարցերի առնչությամբ սույն գործի փաստարկների շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել.

– արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը,

– ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «գործում է որպես դատարան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը.

– որպես դատարան գործելիս արդարադատության խորհրդի որոշումների վերջնական, բողոքարկման ոչ ենթակա լինելու իրավաչափությունը՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացումն ապահովելու համատեքստում:

ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ թե' դիմողների և թե' պատասխանողի մոտ քննության առարկա հիմնահարցին առնչվող որոշ անհստակություններ պայմանավորված են իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական մակարդակում իրացման խնդիրներով, ՀՀ Սահմանադրության կառուցվածքը միասնական մոտեցում չի դրսևորել իշխանությունների գործառնական կամ կառուցակարգային տարանջատման հարցում: Այն դեպքում, երբ օրենսդիր և գործադիր իշխանությունները ներկայացված են որպես կառուցակարգային ինստիտուտներ, ապա դատական իշխանությունն առանձնացվել է իր գործառնական դերով: Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում ՀՀ արդարադատության խորհուրդը դիտվում է որպես **այդ համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ:**

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ 2005 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանում զգալի չափով ամրապնդվել են արդարադատության խորհրդի անկախության գործառնական ու կառուցակարգային երաշխիքները, չնայած այս հարցում որոշ հիմնախնդիրներ սահմանադրական մակարդակում հետագա լուծումների անհրաժեշտություն ունեն, որոնք սույն գործի շրջանակներում քննության առարկա չեն:

Սահմանադրական ներկա իրավակարգավորումները լրացվել են նաև արդարադատության խորհրդի գործունեության ընթացակարգային օրենսդրական լուծումներով, ինչի հիմքում դրվել են հարցերի քննարկման դատավարական մոտեցումները, մասնավորապես, վարչական դատավարության կանոնակարգերը՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են արդարադատության խորհրդի սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացման համար:

Էական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությունն արդարադատության խորհրդի գործառույթները դասակարգում է երկու խմբի՝ միջանկյալ և վերջնական լուծում տվող գործառույթների: Համաձայն ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի՝ վերջնական լուծում բովանդակող գործառույթը միայն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելն է: Մյուս բոլոր դեպքերում արդարադատության խորհուրդը ՀՀ Նախագահի լուծման ենթակա հարցերի վերաբերյալ տալիս է առաջարկություններ կամ ներկայացնում է եզրակացություն: Ինչ վերաբերում է դատավորի լիազորությունների դադարեցման մասին ՀՀ Նախագահին առաջարկ ներկայացնելուն, ապա **իր բնույթով պաշտոնանկու-**

թյան այս ընթացակարգը ենթադրում է հարցի քննարկման երեք փուլ՝ վարույթ հարուցող սուբյեկտ, արդարադատության խորհուրդ, Հանրապետության Նախագահ: Նրանցից յուրաքանչյուրը կոչված է բացահայտելու իրավական ճշմարտությունը և արդարադատության համակարգի արդյունավետ գործունեության շահերից ելնելով՝ օրենքով նախատեսված առիթի ու հիմքերի շրջանակներում, սահմանված կարգով **վերաբերմունք արտահայտել դատավորի կողմից իր պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարման վերաբերյալ:** Մեթոդաբանական նշանակության կարևոր հանգամանքն այն է, որ առավելապես գործող դատավորներից ու նաև գիտնական իրավաբաններից կազմված այդ մարմինը սահմանադրական իր իրավասության շրջանակներում ու օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում **գնահատում է, թե իր իսկ կողմից դատավորի պարտականությունների համար լիազորված պաշտոնատար անձը որքանով է հավատարիմ իր երդմանը և ինչպես է կատարում պաշտոնական պարտականությունները:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս համակարգն ամբողջական է՝ իր գործառույթների կատարումը ներհամակարգային կայունության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից երաշխավորելու հարցում: **Այն դուրս չի գալիս դատավորի պաշտոնական պարտականությունների կատարումը, նրա ծառայողական պիտանելիությունը գնահատելու սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներից, ինչն այս մարմնի բացառիկ իրավասությունն է:** Այս հարցում դատարաններին վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստազրկեր արդարադատության խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ մարմնի:

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասի այն սահմանմանը, համաձայն որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ **արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը:** Վերջինս փաստվում է նաև ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում անմիջապես հաջորդող այն կանոնակարգմամբ, համաձայն որի՝ «Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական զարգացումները, ելնելով նաև սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, կարող են առավել հստակ դարձնել «գործում է որպես դատարան» եզրույթը՝ նկատի ունենալով, որ որպես անկախ մարմին, որի գործառույթները կանխորոշված են սահմանադրական մակարդակով, դատավորի պաշտոնական պարտականության կատարմանն առնչվող հարցերը քննության առնելիս նրա իսկ իրավունքների պաշտպանության երաշխիքներից ելնելով **արդարադատության խորհուրդը գործում է հարցի քննարկման դատարանին բնորոշ ընթացակարգով: Օրենսդիրը կարող է նաև քննության առարկա դարձնել այդ մարմնի գործունեության առանձին կանոնակարգման խնդիրը՝ ուշադրություն դարձնելով վերջինիս սահմանադրական գործառույթներին ներդաշնակ հարցերի քննարկման կանոնակարգային լուծումներին՝ նկատի ունենալով, որ արդարադատության խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելի չեն: Էական է նաև կարգապահական հանձնաժողովի և արդարադատության խորհրդի հայեցողության սահմանների օրենսդրական առավել հստակեցումը:**

7. Հաշվի առնելով ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկման արգելքը, բացի վերոնշյալ սկզբունքային մոտեցումներից, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել նաև, թե արդյո՞ք օրենսդրորեն նախատեսված են բավարար երաշխիքներ, որոնց պայմաններում կարող է իրավաչափ համարվել ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ վեճի առարկա դրույթը: Ընդ որում, հարկ է, որպեսզի վերը նշված երաշխիքներն առկա լինեն թե' արդարադատության խորհրդի ձևավորման, լիազորությունների և թե' նրա գործունեության սկզբունքների և ընթացակարգերի տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության և ՀՀ դատական օրենսգրքի վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ օրենսդրական երաշխիքներն առկա են: Մասնավորապես, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա) արդարադատության խորհուրդն ունի ձևավորման սահմանադրաիրավական հիմք: ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդ,

բ) արդարադատության խորհրդի գործառույթների կոնկրետ շրջանակը հստակ սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդարադատության խորհրդի առջև սահմանադիրը դրել է նպատակ՝ իր գործունեությամբ և բացառիկ լիազորությունների պատշաճ իրականացմամբ արդյունավետորեն կազմակերպել ՀՀ դատարանների, բացի սահմանադրական դատարանից, բնականոն գործունեությունը, որի տարրերից է նաև արդարադատություն իրականացնողների գործառնական պարտականությունների պատշաճ կատարումը,

գ) արդարադատության խորհրդի գործունեության սկզբունքներից են անկախությունը և անկողմնակալությունը: ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի՝ որպես անկախ մարմին լինելն ուղղակի սահմանված է նաև ՀՀ դատական օրենսգրքի 97-րդ հոդվածով: Դրա հետ մեկտեղ, ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Արդարադատություն և **օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորն անկախ է»:** Վերը նշված դրույթում «օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս» եզրույթը վերաբերում է նաև այն դատավորներին, որոնք արդարադատության խորհրդի կազմում իրականացնում են կոնկրետ լիազորություններ, ինչը ներառում է նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությանը մասնակցելը:

Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմում գործող դատավորի անկողմնակալությանը, ապա այդ հանգամանքն առավելապես առնչվում է գործի քննության ընթացակարգերին, որպիսիք, ինչպես արդեն վերը նշվել է, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում ՀՀ դատական օրենսգրքի նորմերին: Բացի դրանից, որպես անկողմնակալության երաշխիք է հանդիսանում ՀՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածը, որը սահմանում է արդարադատության խորհրդի անդամների՝ որոշումների կայացմանը մասնակցության դեպքերը: Մասնավորապես, արդարադատության խորհրդի անդամը չի մասնակցում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացմանը, եթե արդարադատության խորհրդի անդամը հանդիսանում է այն կարգապահական հանձնաժողովի անդամ, որի կողմից հարուցված կարգապահական վա-

րույթի հիման վրա է արդարադատության խորհուրդը քննարկում հարցը: Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմում Հանրապետության Նախագահի և ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվող իրավաբան-գիտնականներին, ապա նրանց թվաքանակն զգալիորեն զիջում է արդարադատության խորհրդի կազմում դատավորների թվաքանակին, ինչը ոչ միայն չի կարող ազդեցություն ունենալ արդարադատության խորհրդի անկախության և անկողմնակալության վրա, այլև հանդես է գալիս որպես վերջիններիս համար հակակշռող նշանակություն ունեցող լրացուցիչ երաշխիք,

դ) ընթացակարգերի իմաստով արդարադատության խորհուրդն իրականացնում է գործի արդար, հրապարակային և ողջամիտ ժամկետներում քննություն: Ինչպես արդեն վերը նշվեց՝ ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում ՀՀ դատական օրենսգրքի նորմերին: **Նման կանոնակարգմամբ, ըստ էության, օրենսդիրն արդարադատության խորհրդի գործունեության հիմքում դնում է արդար քննության համար անհրաժեշտ երաշխիքներ՝ ուղղված ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը:** Արդար քննության շրջանակներում, մրցակցային գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննելիս տվյալ դատավորը, ՀՀ դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, իրավունք ունի՝ ծանոթանալու արդարադատության խորհրդում հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները, հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ անելու, ապացույցներ ներկայացնելու և մասնակցելու դրանց հետազոտմանը, մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ կամ փաստաբանի միջոցով: Օրենսդիրը նախատեսել է մեկ կարևոր երաշխիք ևս. ՀՀ դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 19-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից»: Արդար քննության շրջանակներում հիշյալ օրենսգրքով ամրագրված է նաև, որ արդարադատության խորհրդի որոշումները պետք է պատճառաբանված լինեն: ՀՀ դատական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով արդարադատության խորհրդի որոշումը պետք է պարունակի նաև արդարադատության խորհրդի պատճառաբանված եզրակացությունը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ: Հրապարակային քննության շրջանակներում ևս օրենսդիրն ամրագրել է մի շարք պահանջներ: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջով իր գործի քննությունն անցկացվում է հրապարակային: Նույն օրենսգրքի 111-րդ և 163-րդ հոդվածների համաձայն՝ արդարադատության խորհրդի որոշումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Ինչ վերաբերում է ողջամիտ քննությանը, ապա ՀՀ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կարգապահական վարույթի տևողությունը չի կարող 6 շաբաթից ավելի լինել, բացառությամբ դատավորի բացակայության դեպքերի, իսկ նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով արդարադատության խորհուր-

դը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը քննում է ողջամիտ ժամկետում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված երաշխիքների առկայության պայմաններում և արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդարադատության խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման արգելքն իրավաչափ է:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև իր՝ 28.11.2007 թ. ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմանը, երբ վկայակոչելով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրների վերաբերյալ իր մի շարք որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ կապված Եվրոպայի խորհրդի առջև ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտության հետ, միաժամանակ կարևորել է այդ պարտավորություններից բխող **ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:** Հարկ է նկատել, որ ներպետական հայեցողության վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ **CASE OF OLUJIĆ v. CROATIA** գործով (Application no. 22330/05, JUDGMENT 5 February 2009, FINAL 05/05/2009), ըստ որի՝ «Դատարանը ճանաչում է պետության շահը վերահսկելու դատարանի մատչելիությունը, երբ հարցը վերաբերում է որոշակի խմբի հարցերի: Այնուամենայնիվ, Պայմանավորվող Պետությունների, մասնավորապես՝ իրավասու ազգային օրենսդրի, այլ ոչ թե Դատարանի խնդիրն է հստակ սահմանել հանրային ծառայության այն ոլորտները՝ ներառելով պետական ինքնիշխանությանն բնորոշ հայեցողական լիազորությունների իրականացումը, որտեղ անհատի շահերը պետք է ստորադասվեն: ....Եթե ազգային համակարգն արգելափակում է դատարանի մատչելիությունը, Դատարանը կհաստատի, որ վեճն իրականում այնպիսին է, որ արդարացվում է Հոդված 6-ով նախատեսված երաշխիքների նկատմամբ բացառության կիրառումը: Եթե վեճն այդպիսին չէ, որևէ խնդիր չկա և 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը կկիրառվի»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բարձրացված հիմնահարցին հարկ է անդրադառնալ նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ դատական համակարգի աստիճանակարգության տեսանկյունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ներկա դատական համակարգի պայմաններում նման որոշումների դատական կարգով բողոքարկումն օրենսդրորեն ամրագրված առկա շրջանակներից դուրս կարող է աղերսներ ունենալ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների հետ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ արդարադատության խորհրդի կազմի մեջ ներառված են հիմնականում գործող դատավորներ ՀՀ դատական համակարգի տարբեր օղակներից, ներառյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը: Նման պայմաններում ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների համակարգում նախատեսված չէ այնպիսի դատական ատյան, որի դատավորներն իրենց կարգավիճակով ավելի բարձր կլինեն ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորներից: Այս կապակցությամբ սույն գործով սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել նաև իր՝ 28.11.2007 թ. ՍԴՈ-719 որոշման 5-րդ կետը, որտեղ սահմանադրական դատարանն անընդունելի է համարել հավասար կամ ցածր պետաիշխանական մակարդակի վրա գտնվող դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ վերադաս ատյանի դատարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբերյալ դիմումները քննության առնելու հնարավորությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դիրքորոշումը

հավասարապես կիրառելի է նաև արդարադատության խորհրդի խնդրո առարկա որոշումների նկատմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ արդարադատության խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելը բխում է առկա սահմանադրական իրավակարգավորումների տրամաբանությունից: Այն չի խախտում իր կամքի ազատ արտահայտմամբ ու հատուկ երդմամբ պաշտոնական պարտականություններ իրականացնող դատավորի իրավունքները՝ այդ պարտականությունների կատարման համար նրան երաշխավորած մարմնի կողմից դրանց պատշաճ կատարումը գնահատելու առումով՝ հաշվի առնելով արդարադատության խորհրդի ձևավորման, նրա բացառիկ սահմանադրական լիազորությունների, գործունեության սկզբունքների և ատիճանակարգված ընթացակարգերի արդյունավետ իրացման համար նախատեսված օրենսդրական երաշխիքների առկայությունը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

4. .... Դատական ակտերի, դատարանների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) նկատմամբ բողոքարկման այն նույն կարգի կիրառումը, որը գործում է այլ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերը վիճարկելու համար, կդանդաղեցնի դատական քննության գործընթացը՝ դրանով ստեղծելով դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու՝ արդարադատության իրականացման երաշխիքի խախտման վտանգ: Դատական իշխանության ներսում դատարանների և դրանց պաշտոնատար անձանց ակտերի բողոքարկումը պետք է իրականացվի հատուկ դատավարական կարգով՝ այն հաշվով, որ վերջինս չխոչընդոտի դատաքննության բնականոն ընթացքը, չվտանգի դրա արդյունավետությունը:

Հաշվի առնելով պետական իշխանության համակարգում գործադիր և դատական մարմինների դերը և նշանակությունը, արդարադատության և կառավարման գործառույթների էությունը, դրանց առանձնահատկությունները, չի կարող իրավակարգավորման միևնույն ձևը կիրառվել դատական իշխանության կողմից ներհամակարգային վերահսկողության և գործադիր մարմինների գործունեության դատական վերահսկողության պարագաներում:

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–647, 20 սեպտեմբերի, 2006 թ.

11. Սույն որոշման 8-րդ կետում հստակեցված վեճի առարկայի տեսանկյունից անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի իրավական բովանդակությանը: Այդ դրույթը սահմանում է. «Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով»: Վերջինս ենթադրում է, որ Սահմանադրությամբ և օրենքներով անհրաժեշտ սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է ստեղծվեն դատարանների անկախության ապահովման համար: Իր հերթին, դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար:

ՀՀ Սահմանադրության 5, 91, 94, 97 հոդվածների դրույթները հիմնարար սահմանադրական սկզբունքներ են, որոնք ամրագրում են դատարանների՝ որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն թևի՝ դատական իշխանության, և դատավորների՝ որպես դատական իշխանության միակ կրողների, սահմանադրական կարգավիճակը՝ սահմանադրորեն երաշխավորելով նրանց անկախությունը: Օրենքները կոչված են իրավական լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու այդ անկախության ամրապնդման համար: Այս առումով, դատավորների համար բարձր կենսաթոշակի սահմանումը ոչ թե նրանց տրվող արտոնություն է, այլ հանրային և, առաջին հերթին՝ արդարադատության շահերի պաշտպանության միջոց, նրանց անկախության սոցիալական երաշխիք:

2002 թ. սեպտեմբերի 26–ին անդրադառնալով Հայաստանի կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանը՝ Վեհաժողովը, ի թիվս այլ հարցերի, հատուկ կարևորեց դատաիրավական բարեփոխումներին հետամուտ լինելու անհրաժեշտությունը, մասնավորապես շեշտելով՝ «....երաշխավորել դատավորների լիակատար անկախությունը՝ Եվրոպայի խորհրդի չափանիշների համաձայն»:

ՍԴՈ–664, 7 նոյեմբերի, 2006 թ.

7. .... Չափազանց կարևորելով անկախ ու անկողմնակալ ընտրական հանձնաժողովների դերը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անցումային երկրներում նույնքան կարևոր է նաև անկախ դատական իշխանության կայացումը, որի շահերից ելնելով է, որ ՀՀ Սահմանադրության 98 հոդվածն անթույլատրելի է համարում դատավորի կողմից իր պարտականությունների հետ չկապված որևէ պաշտոն զբաղեցնելը: Դատավորներին՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով ու ծավալով ընտրական հանձնաժողովներում ընդգրկելը չի բխում դատական իշխանության անկախության ապահովման և արդարադատության իրականացման շահերից, մեծանում է արդարադատության և այլ շահերի բախման հնարավորությունը, վտանգվում է դատարանների և դատավորների անաչառությունն ընտրական վեճեր լուծելիս:

ՍԴՈ–690, 9 ապրիլի, 2007 թ.

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

ա) ՀՀ Սահմանադրությամբ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատական գործառույթները տարանջատված են սահմանադրական արդարադատական գործառույթից, դրանց իրացումը նախատեսում է կառուցակարգային տարբեր լուծումներ և համարժեք լիազորություններ,

բ) ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները, վճռաբեկ դատարանը, ինչպես նաև մասնագիտացված դատարանները՝ դատական իշխանության շրջանակներում կազմում են գործառնական համակարգային ամբողջություն: Այդ համակարգը կառուցված է գործառնական աստիճանակարգման և արդարադատական գործառույթների ներհամակարգային տարանջատման սկզբունքներով, ներքևից վերև, ընդ որում, այդ աստիճանակարգում բարձրագույն դատական ատյանը ՀՀ վճռաբեկ դատարանն է, որն ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայող դատարան է,

....

11. .... Այսուհանդերձ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համակարգային բարեփոխումների ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև անցումային համակարգերին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են իրավագիտակցության դեռևս ցածր մակարդակը, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման անբավարար աստիճանը, համակարգային անկատարությունները, կոռուպցիոն

ռիսկը և այլն: Հետևաբար, իրավակարգավորման առանցքային խնդիրներից են, մասնավորապես, Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական, իրավական պետության կայացման նախադրյալների ապահովումը, սահմանադրական ժողովրդավարության ամրապնդումը, Սահմանադրության հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքների ստեղծումը, դատական իշխանության անկախության ու անկողմնակալության նկատմամբ հասարակության անդամների վստահության ամրապնդումը և այլն:

ՍԴՈ-719, 28 նոյեմբերի, 2007 թ.

6. .... Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

....

7. .... Նկատի ունենալով, որ դատական իշխանության համակարգում արդարադատական գործընթացի բոլոր փուլերն օրենքով կանոնակարգված են, որոշակիացված են բողոքարկման ընթացակարգերը, նախատեսված են դատական իշխանության բնականոն գոր-

ծունեության որոշակի երաշխիքներ, այսուհանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական իշխանության պաշտոնատար անձանց անգործության վերացման արդյունավետ ձևերի հարցն օրենսդրական լրացուցիչ կանոնակարգման խնդիր ունի:

....

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական վերջին զարգացումները մասնակիորեն են լուծում քննության առարկա խնդիրը (հանձին նաև կարգապահական վարույթի ինստիտուտի (համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 155 հոդվածի)): Բացի դրանից, դատարանի բնականոն գործունեության ապահովման տեսակետից օրենքը որոշակի պարտավորություններ է դնում նաև դատարանների նախագահների խորհրդի վրա (մասնավորապես, ՀՀ դատական օրենսգիրք, հոդվ. 72): Այսուհանդերձ, հաշվի առնելով նաև ձևավորված իրավակիրառական պրակտիկան, ելնելով ՀՀ քաղ. դատ. օր. 91 հոդվածի 2-րդ կետի իմպերատիվ պահանջից՝ հայցադիմումն ստանալու պահից դրա մերժման վերաբերյալ եռօրյա ժամկետում որոշում կայացնելու վերաբերյալ, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական իշխանության մարմիններում անգործության պարագան անձի արդարադատության մատչելիության իրավունքի սահմանափակման պատճառ է դառնում, սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ. ՀՀ վճռաբեկ դատարանը կարող էր, օրենսդրության տարակերպ ընկալման ու մեկնաբանման պայմաններում, երաշխավորել մարդու արդարադատության մատչելիության իրավունքը՝ օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու միջոցով: Սակայն խնդիրը միայն օրենքի մեկնաբանման ճանապարհով արդյունավետ չի կարող լուծվել: ՀՀ Ազգային ժողովն առավել հստակ պետք է սահմանի դատարանների, նրանց պաշտոնատար անձանց անգործության հետևանքով անձի խախտված իրավունքները դատավարական ողջամիտ ժամկետում վերականգնելու և պատճառված վնասը փոխհատուցելու արդյունավետ ընթացակարգեր, որոնց բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել նաև արդարադատության մատչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի իմաստից: Իսկ այդ խնդիրը դուրս է ՀՀ քաղ. դատ. օր. 26-րդ գլխի գործող նորմերի իրավակարգավորման շրջանակներից:

ՍԴՈ-765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

21. .... Սահմանադրական դատարանը հատուկ կարևորում է **վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի** անխախտելիության ապահովումն ինչպես ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի վիճարկվող նորմում, այնպես էլ օրենսդրության՝ այլ, այդ թվում նաև քրեաիրավական նորմերում, դիտարկելով այն որպես ՀՀ Սահմանադրության 5, 94 և 97 հոդվածներում ամրագրված **դատական իշխանության անկախության սկզբունքի** իրականացման կարևոր երաշխիք: Դատական ակտի իրավական գնահատականը կարող է տրվել միմիայն արդարադատական ընթացակարգով այն քննության առարկա դարձնելու արդյունքում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սկզբունքը չի ենթադրում, որ դատավորը ենթակա չէ պատասխանատվության, այդ թվում քրեորեն պատժելի արարքի համար: Այդ իրավահարաբերություններն օրենսդրորեն պետք է կանոնակարգվեն ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթների շրջանակներում: Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետն իրավակիրառական պրակտիկայում չի կարող մեկնաբանվել այն բովանդակությամբ, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով անհնարին դարձվի դատական ակտերի բողոքարկումը դատախազության կողմից՝ ՀՀ Սահ-

մանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով վերապահված լիազորության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի անկախության և օրենքի առջև դատավորի պատասխանատվության միջև խելամիտ հավասարակշռությունը խախտվել է մասնավորապես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2007 թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքով կատարված փոփոխությունների 426.1. հոդվածով նախատեսված իրավակարգավորման արդյունքում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համանման նորմերի առնչությամբ իր իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանն արտահայտել է 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ: Այդ դիրքորոշումներն օրենսդրի կողմից հաշվի պետք է առնվեն նշված հավասարակշռությունը երաշխավորելու համար:

ՍԴՈ-782, 2 հոկտեմբերի, 2008 թ.

8. .... Նկատի պետք է ունենալ նաև, որ ԵԽ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին No. R (94) 12 հանձնարարականի՝ «Դատավորների անկախության ընդհանուր սկզբունքները» մասի 2-րդ կետի c. ենթակետի համաձայն՝ դատավորների պրոֆեսիոնալ մասնագիտացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, դատավորների ընտրությունը և մասնագիտացումը պետք է հիմնված լինի այն հատկանիշի վրա, որը կապված է որակավորման, ազնվության, ունակության և արդյունավետության հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասում **«նույն ատյան» բառակապակցությունը տվյալ օրենքով նախատեսված իրավակարգավորման շրջանակներում կիրառելի է միայն կառուցակարգային և գործառնական նույնաբնույթ կարգավիճակ ունեցող դատարանների առնչությամբ:** Դա չի կարող մեկնաբանվել այնպես, որ նույն հարթության վրա դրվեն գործառնական տարբեր իրավասություն ունեցող ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանները: Այստեղ նույնպես հիմնական խնդիրը վերաբերում է առաջին ատյանում դատարանների նման մասնագիտացման հիմնավորվածությանը, և կասկած չի կարող առաջանալ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իրականացված արդարադատության իրավաչափության առումով:

ՍԴՈ-844, 7 դեկտեմբերի, 2009 թ.

5. .... Սույն գործով դիմող կողմի ներկայացրած փաստարկների տեսանկյունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարևորել այդ նորմերով կարգավորվող քրեադատավարական հարաբերությունների ինչպես սուբյեկտների շրջանակը, այնպես էլ՝ **օբյեկտը**, ելնելով վերոհիշյալ հոդվածի և օրենսգրքի այլ նորմերի համակարգային բովանդակությունից, ինչպես նաև քրեական գործով արդարադատություն իրականացնելիս դատարանի ընդհանուր լիազորություններից (ՀՀ քր. դատ. օրենսգրքի 41 հոդված): Մասնավորապես, վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ **որոշումներով և գործողություններով**: Հիշյալ հոդվածի նույն մասի համաձայն քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական

գործողություններ իրականացնող մարմինների՝ **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները**, այսինքն՝ այնպիսի **որոշումներ ու գործողություններ**, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը նվիրված 39-րդ գլխի 278 հոդվածը (որը վերաբերում է դատական վերահսկողության ոլորտին) սահմանում է (մաս 2), որ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների **որոշումների և գործողությունների** օրինականության վերաբերյալ բողոքները:

Նշվածին զուգահեռ, օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը նախատեսում է նաև հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազի դատական բողոքարկման ենթակա լրացուցիչ այլ գործողություններ ու որոշումներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ բաժնի («Քրեական գործով մինչդատական վարույթ») հոդվածների, 290 հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի վիճարկվող 290 հոդվածի 1-ին մասի իմաստով մինչդատական վարույթում դատական բողոքարկման ենթակա են իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց այն **որոշումները և գործողությունները**, որպիսիք կայացվել են այդ սուբյեկտների՝ օրենսգրքի 53, 55 և 56 հոդվածներում նախատեսված իրենց ընդհանուր լիազորությունների շրջանակներում: Իսկ օրենսգրքի 290 հոդվածի 2-րդ մասը որպես առանձնահատուկ իրավակարգավորում սահմանում է, որ. «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի **հրաժարվելը**, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերումե:

Այսուհանդերձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի համաձայն դատարանը, ի թիվս քրեական գործերով ընդհանուր այլ լիազորությունների, իրավասու է «....քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների **(անգործության)** դեմ բողոքներըե: Այսպիսով, մինչդատական վարույթում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների և գործողությունների օրինականության, այլև՝ **անգործության** վերաբերյալ բողոքները, իսկ «....և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը բացառապես վերաբերում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների **որոշումներին ու գործողություններին**, հետևաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման շրջանակներում չէր կարող վերագրվել նաև հիշյալ մարմինների **անգործությանը**:

....

8. .... ՀՀ Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան ՀՀ-ում դատական իշխանությունն ու դատախազությունը սահմանադրաիրավական ինստիտուցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, և գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

....

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ օրենսդրական զարգացումների ընդհանուր տրամաբանությունը (մասնավորապես՝ արտահայտված ՀՀ սահմանադրա-

կան դատարանի 16 հունվարի 2007 թ. ՍԴՈ–673 որոշման մեջ, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3–րդ մասում), գտնում է, որ այն դեպքում, երբ պետական մարմինը (տվյալ դեպքում քրեական վարույթ իրականացնող) կամ պաշտոնատար անձն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դատարանը ստուգում է, թե արդյո՞ք տվյալ մարմնի կողմից ակտն ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողությունը կատարելը կամ անգործություն դրսևորելն իրականացվել են օրենսդրությանը համապատասխան:

ՍԴՈ–845, 8 դեկտեմբերի, 2009 թ.

7. .... Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա է դատարանի կողմից որոշվում ապացուցման ենթակա հանգամանքների ծավալը: Ընդ որում, նման որոշումը կայացվում է ապացուցման գործընթացի առաջին՝ ապացույցների հավաքման փուլում և նպատակ է հետապնդում ապահովելու դատավարության արդյունավետությունը:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը դատարանի կողմից ամենևին էլ չի նշանակում կողմերի իրավահավասարության կամ մրցակցության սկզբունքների խախտում, առավել ևս կողմերի միջև ապացուցման պարտականության անհավասար բաշխում: Ընդհակառակը, դրանով դատարանը կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կհաստատեն իրենց պահանջներն ու առարկությունները, հետևաբար, փաստական հիմք կստեղծեն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու համար:

Վերոշարադրյալից հետևում է, որ.

– դատարանն ապացույցներ չի հավաքում (ներկայացնում), այլ դատավարական պայմաններ (հնարավորություններ) է ստեղծում դրանք ժամանակին և անկաշկանդ ներկայացնելու համար,

– կողմերը (գործին մասնակցող անձինք) իրենք են ապացուցում այն, ինչ պնդում կամ առարկում են,

– ապացուցման գործընթացը, որպես քաղաքացիական գործով ըստ էության օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու առանձնահատուկ երաշխիք, որպես կանոն, տեղի է ունենում առաջին ատյանի դատարանում,

– գործով ներկայացված ապացույցների գնահատման կամ գործով արդարացի, հիմնավոր վճիռ (որոշում) կայացնելու հիմքում այս կամ այն ապացույցի նշանակությունը գնահատելու բացառիկ լիազորությունը պատկանում է դատարանին,

– ապացուցման գործընթացը (այդ ինստիտուտի իրավակարգավորումը) առանձնահատուկ է հանրային–իրավական վեճերով, պայմանավորված՝ մասնավոր–իրավական շահերի նկատմամբ հանրային շահի գերակայությամբ, հետևաբար՝ մրցակցության սկզբունքի դրսևորման առանձնահատկությամբ:

8. Ապացույցները ներկայացվելուց հետո է միայն դատարանն անցնում դրանց գնահատմանը, որտեղ որոշվում է ձեռք բերված ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը: Օրենսգրքի 51 հոդվածը վերաբերում է ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության սկզբունքներին: Նշված երկու սկզբունքները բացառում են օրենքով սահմանված ապացույցներից դուրս այլ ապացույցներ դատարանին ներկայացնելու հնարավորությունը (թույլատրելիություն), ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերին չվերաբերող անհարկի և ավելորդ ապացույցներով դատարանին ծանրաբեռնելու հնարավորությունը (վերաբերելիություն): Միաժամանակ, նշված սկզբունքները կոչված են ապահովելու արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի իրացումը:

....

Բոլոր այն դեպքերում, երբ դատարանն իր ներքին համոզմամբ գտնում է, որ **կողմերի ներկայացրած ապացույցներն անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար կամ դրանք ուղղված են այնպիսի փաստերի ապացուցմանը, որոնք շեղվում են գործից** և **առնչություն չունեն վերջինիս հետ, կամ ներկայացված են տվյալ գործի քննության համար օրենքով չնախատեսված ապացույցներ,** օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի վիճարկվող բառակապակցության ուժով դատարանին հնարավորություն է ընձեռվում դուրս թողնել դրանք ապացուցման առարկայի շրջանակներից: **Դատարանին վերապահված՝ վերը նշված իրավասությունն իրավաչափ է** և **բխում է արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի էությունից:**

ՍԴՈ-872, 2 ապրիլի, 2010 թ.

6. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի տարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք անմիջականորեն ուղղված են դատարանում մեղադրանքը փոփոխելուն, այդպիսի նպատակով դատարանի նախաձեռնության հնարավոր դրսևորումն ուղղակիորեն կարող է վերաբերել մեղադրական եզրակացությունը վերահաստատելու վերաբերյալ մեղադրողին առաջարկություն անելուն: Ընդ որում, ի տարբերություն մեղադրողի միջնորդության երկու հնարավոր դեպքերի, որոնք վերաբերում են մեղադրանքի փոփոխմանը թե՛ խստացման, թե՛ մեղմացման առումներով, դատարանի նախաձեռնությունը կարող է վերաբերել մեղադրանքի փոփոխմանը միայն խստացման առումով, այսինքն՝ դատարանը «հուշում է» մեղադրողին կատարել մեղադրանքը **խստացման** առումով փոփոխելու համար անհրաժեշտ գործողություններ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս պարագայում լիարժեք հաշվի չի առնվել այն կարևոր սկզբունքի պահպանումը, համաձայն որի՝ դատարանը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը (ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդված)՝ սկզբունք, որը նպատակաուղղված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի անկախության և անկողմնակալության, ինչպես նաև մրցակցային դատավարության և կողմերի հավասարության սկզբունքների ապահովմանը:

....

9. .... **Երկրորդ՝** այդ մասով օրենսդրական լրացման ընդհանուր տրամաբանության մեջ նկատելի է դատարանի՝ մեղադրական գործառույթից ձերբազատված չլինելու հանգամանքը: Վերջինս չի բխում մրցակցային դատավարության եվրոպական արդի զարգացումների հիմնական միտումներից: Մասնավորապես, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն իր՝ 2010 թ. մարտի 12-13-ի 82-րդ լիագումար նիստում հաստատեց «Դատական համակարգի անկախության մասին» չափորոշիչները, որում հատուկ շեշտվում է, որ դատական իշխանության անկախությունը չի կարող դիտարկվել միայն զուտ իշխանությունների տարանջատման տեսանկյունից: Այդ անկախությունն առաջին հերթին միջոց ու հնարավորություն է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար, որը և հանդիսանում է դատական իշխանության հիմնական առաքելությունը: Այս տրամաբանությանն ամենևին համահունչ չէ օրենսդրական այն դրույթը, համաձայն որի՝ դատավորը մեղադրողի վերադասի կարծիքը լրացուցիչ ճշտելուց հետո միայն կարող է իրավունքի պաշտպանություն երաշխավորել: Այն չի բխում նաև 1985 թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքների պահանջներից:

ՍԴՈ-891, 1 հունիսի, 2010 թ.

6. Սահմանադրական դատարանը՝ վերահաստատելով իր ՍԴՈ-747 և ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի ձևակերպումների և 113-րդ հոդվածի երրորդ մասում օգտագործված՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» և «գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» բառակապակցությունների և դրանց բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված ձևակերպումները և բառակապակցությունները գնահատման ենթակա ձևակերպումներ և բառակապակցություններ են: Դրանք ենթակա են գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը, կոնկրետ դեպքում՝ գործատուն, ցուցաբերել է կամայականություն:

ՍԴՈ-918, 28 սեպտեմբերի, 2010 թ.

5. .... Ինքնաբացարկը ՀՀ իրավահամակարգում հանդիսանում է այնպիսի ինստիտուտ, որը կոչված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ և անաչառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս, և կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը:

ՍԴՈ-942, 22 փետրվարի, 2011 թ.

5. .... Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, արձանագրում է, որ դատարանների համար օրենքներով սահմանված համապատասխան լիազորությունների առկայությամբ և դրանց իրացմամբ է, որ հնարավոր է դառնում երաշխավորել անձանց՝ դատարանի մատչելիության, արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

ՍԴՈ-1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

5. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դեպքում վերոհիշյալ նորմերի իրավաչափ կիրառման և դրա հետ ուղղակիորեն առնչվող անձանց իրավունքների պաշտպանության հարցերը կարող էին օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում ստանալ ընդհանուր իրավասության կամ վարչական դատարանում: Բանն այն է, որ վարչական մարմինն իրավասու չէ ի պաշտոնե մեկնաբանել օրենքի նորմը և ձևավորել լեգիտիմ իրավակիրառական պրակտիկա, **դա բացառապես դատական իշխանության իրավասության շրջանակներում է:** Գործում առկա չէ որևէ օրինակ, որ օրենքի նորմի հետադարձությամբ կիրառումը պայմանավորվել է դատարանի կողմից տվյալ նորմին տրված մեկնաբանությամբ: **Դիմողի բոլոր փաստարկները վերաբերում են վարչական մարմնի գործողության իրավաչափության խնդրին:**

Միաժամանակ, պարզելով, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 29-րդ հոդվածներում նախատեսված վիճարկվող իրավակարգավորումները սահմանվել և գործողության մեջ են դրվել «Պետական կենսաթոշակների մասին» դեռևս նախկին ՀՀ օրենքի (ՀՕ-519-Ն) փոփոխությունների արդյունքում (26.12.2008 թ. ՀՕ-35-Ն օրենք), և հե-

տագայում իրենց արտացոլումն են գտել «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թ. ընդունված ՀՀ օրենքում, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի կողմից այդ նորմերի հետադարձ ուժով կիրառման հանգամանքի շեշտադրումը՝ դրանց սահմանադրականության խնդրի առաջադրման առումով, հիմնավոր չէ: Ինչ վերաբերում է չորս տարուց ավելի գործող իրավանորմի ոչ իրավաչափ կիրառմանը վարչական մարմնի կողմից, ապա դա, ինչպես նշվեց, կարող էր քննության առարկա դառնալ համապատասխան իրավասությամբ օժտված ընդհանուր իրավասության կամ վարչական դատարանում՝ բացահայտելու համար նաև կոնկրետ գործի փաստական հանգամանքները:

ՍԴՈ–1063, 18 դեկտեմբերի, 2012 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ թե' դիմողների և թե' պատասխանողի մոտ քննության առարկա հիմնահարցին առնչվող որոշ անհստակություններ պայմանավորված են իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական մակարդակում իրացման խնդիրներով, ՀՀ Սահմանադրության կառուցվածքը միասնական մոտեցում չի դրսևորել իշխանությունների գործառնական կամ կառուցակարգային տարանջատման հարցում: Այն դեպքում, երբ օրենսդիր և գործադիր իշխանությունները ներկայացված են որպես կառուցակարգային ինստիտուտներ, ապա դատական իշխանությունն առանձնացվել է իր գործառնական դերով: Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում ՀՀ արդարադատության խորհուրդը դիտվում է որպես **այդ համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ:**

ՍԴՈ–1213, 9 հունիսի, 2015 թ.

9. .... Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանն իր՝ 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, ամրագրել է, որ «....օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «քրեադատավարական օրենքի էական խախտում» եզրույթը հանդես է գալիս որպես հակասահմանադրական ճանաչված դրույթների ամբողջականության բաղադրատարր, որն օրենսդրի կողմից համապատասխան օրենսդրական փոփոխությամբ չի շտկվել:

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն էական է համարում շեշտադրել, որ խնդիրը ո՛չ այնքան և ո՛չ միայն վերոնշյալի մեջ է, այլ նրա, որ **գործը դատական քննության նախապատրաստելիս** դատարանի խնդիրը չէ մինչդատական վարույթում թույլ տրված քրեադատավարական օրենքի էական խախտումներ բացահայտելը և հենց այդ փուլում

գնահատելը: Նման մոտեցումն ինքնին կհակասեր քրեադատավարական տվյալ փուլի ողջ տրամաբանությանը և կպարունակեր ինչպես քրեադատավարական մի շարք սկզբունքներից բխող պահանջների, այնպես էլ արդար դատաքննության տարրերից մեկի՝ դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի խախտման վտանգ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե մինչդատական վարույթում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, ապա դրանք դատական քննության ժամանակ կարող են և պետք է դառնան համարժեք գնահատման առարկա:

ՍԴՌ– 1253, 2 փետրվարի, 2016

6. .... Վերը նշված երկրորդ դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը պարտադիր չի համարում, որ կոնկրետ քրեական գործով առաջին ատյանի դատարանը միաժամանակ կայացնի և՛ դատավճիռ, և՛ այլ վերջնական որոշում: Ընդհանուր կանոնն այն է, որ կոնկրետ քրեական գործով առաջին ատյանի դատարանը կայացնում է դատավճիռ, իսկ վերադաս դատարանները՝ որոշում (միաժամանակ և՛ դատավճիռ, և՛ այլ վերջնական որոշում կայացնելու դեպքը նախատեսված է օրենսգրքի 360.1 հոդվածով և վերաբերում է դատարանի լրացուցիչ որոշմանը, որը կայացվում է դատավճռի կամ որոշման հետ միաժամանակ):

ՍԴՌ– 996, 18 հոկտեմբերի, 2011 թ.

5. Սահմանադրական դատարանը, քննության առնելով կողմերի դիրքորոշումները, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ պարզելով գործի բոլոր հանգամանքները, գտնում է, որ վեճի առարկա իրավադրույթն ընթացակարգային բնույթի դրույթ է և կոչված է, մի կողմից, կանոնակարգելու դատական ծառայության պաշտոնում նշանակման կարգը, մյուս կողմից՝ լրացուցիչ երաշխիք ստեղծել դատավորի անկախ ու արդյունավետ գործունեության համար: Դատավորին կցված դատական ծառայության պաշտոններում նշանակումը և պաշտոնից ազատումը՝ տվյալ դատավորի ներկայացմամբ, դրույթը միանշանակ է, ունի իմպերատիվ բնույթ, չի բովանդակում օրենքի բաց կամ անորոշություն, հստակ սահմանում է իրավակարգավորման պայման: Վերջինս հանգում է նրան, որ այդ նշանակումը և ազատումը պետք է տեղի ունենան տվյալ դատավորի ներկայացմամբ: Ինչ վերաբերում է դատական հայեցողությանը, ապա այն ունի իր սահմանները և չի կարող փոխել իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել դրա նպատակահարմարության խնդիրը: Դատական հայեցողությունն ընտրություն կատարելու իրավասություն է՝ այնպիսի հնարավոր տարբերակների միջև, որոնք բոլորն էլ օրինական են: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»: Հստակ սահմանված է նաև, որ իրավական ակտի մեկնաբանությունը չպետք է փոխի դրա իմաստը:

Նկատի ունենալով, որ վեճի առարկա նորմի իմաստը հստակ է ու միանշանակ, այն ենթադրում է, որ դատավորին կցված դատական ծառայության պաշտոններում նշանակումը և պաշտոնից ազատումը **պետք է տեղի ունենա տվյալ դատավորի ներկայացմամբ,** ինչպես նաև հաշվի առնելով, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ նպաստելու դատավորի անկախությանը և գործունեության արդյունավետությանը, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ նորմի իրավական բովանդակության և հստակության առումով առկա չէ սահմանադրաիրավական բնույթի վեճ: Ընդ որում, այդ դրույթը խելամտության կանխավարկածով կիրառելու դեպքում Սահմանադրությամբ ամրագրված որևէ իրավունքի ոտնահարման պատճառ չի կարող դառնալ:

6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև արձանագրել. օրենքի համակարգային վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը դատավորի վճռորոշ մասնակցության սկզբունքը տարածել է նաև դատավորին կցված դատական ծառայության պաշտոնում նշանակման ընդհանուր կարգի վրա: Մասնավորապես, օրենսդիրն օրենքի 12 և 13-րդ հոդվածներում նախատեսում է համապատասխանաբար այն անձանց, ովքեր ունեն դատական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք, և այն անձանց, ովքեր չունեն նման իրավունք: Այդ պահանջներն ընդհանուր են բոլոր դատական ծառայողների համար: Սակայն բովանդակային առումով դրանք նույնական չեն, քանի որ պաշտոնի անձնագրով նախատեսված պահանջները կարող են տարբեր լինել: Միայն նշված պահանջները բավարարելուց հետո անձը կարող է օրենքով սահմանված կարգով նշանակվել դատական ծառայության թափուր պաշտոնում: Այդ կարգն ամրագրված է օրենքի 15-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ «Դատական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցութային կարգով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի»: Վերը նշված՝ ընդհանուր կարգից բացառություն կազմող կարգն ամրագրված է օրենքի նույն հոդվածի 3-րդ մասում և վերաբերում է բացառապես դատավորին կցված դատական ծառայության թափուր պաշտոնում նշանակմանը: Նշված նորմի համաձայն՝ «Դատավորին կցված դատական ծառայության թափուր պաշտոնում նշանակումը կատարվում է դատավորի ներկայացմամբ, առանց մրցույթի: Դատավորին կցվող դատական ծառայության թափուր պաշտոնում նշանակվող անձը պետք է համապատասխանի տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված պահանջներին»: Վերջինիս հետ մեկտեղ, օրենսդիրն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրել է դատավորի ևս մեկ հայեցողական լիազորություն, համաձայն որի՝ դատավորի առաջարկությամբ իրեն կցվող դատական ծառայության թափուր պաշտոնը կարող է զբաղեցվել օրենքով նախատեսված մրցութային կարգով: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձը նշանակվում է թափուր պաշտոնում՝ օրենքով նախատեսված կարգով:

Միաժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը հանդիսանում է դատավորին կցված դատական ծառայության պաշտոնում նշանակելու և այդ պաշտոնից ազատելու կարգ սահմանող իմպերատիվ նորմ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի վիճարկվող նորմի դիսպոզիցիան դատավորի համար նախատեսում է նաև պարտականություն՝ դատավորին կցված դատական ծառայողին պաշտոնից ազատելու համապատասխան հիմքի առկայության դեպքում տվյալ դատական ծառայողին ներկայացնել ազատման: Այլ խնդիր է՝ դատավորի կողմից նշված պարտականության կատարումից տարաբնույթ պատճառներով հնարավոր հրաժարվելու հանգամանքը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ հարցի առավել մանրամասն իրավակարգավորման նպատակահարմարության խնդիրը կարող է քննության առարկա դառնալ օրենսդիր մարմնի իրավազորության շրջանակներում:

ՍԴՈ-782, 2 դեկտեմբերի, 2008 թ.

6. ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի վիճարկվող դրույթի իրավակարգավորումն ունի երկու բաղադրիչ.

ա) դատավորի գործուղման իրավակարգավորումը տարածվում է նույն ատյանի դատավորի «այդ դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա» գործուղելու նկատմամբ,

բ) նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Վերը նշված իրավակարգավորման վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործուղման իրավակարգավորման խնդիրը մի դատավորին մեկ այլ դատավորով ժամանակավորապես փոխարինելն է կամ դատական ծանրաբեռնվա-

ծության հաղթահարումը՝ ողջամիտ ժամկետում գործերի քննության համար, ինչը, իր հերթին, նպատակաուղղված է դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացման ապահովմանը, **որով հետապնդվում է իրավաչափ նպատակ**:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետը վերաբերում է դատարանների՝ որպես **պետական իշխանության մարմինների** կազմավորմանը: Մինչդեռ վիճարկվող դրույթը վերաբերում է բացառիկ դեպքերում, իրավաչափ նպատակով պայմանավորված **օրենքի հիման վրա ստեղծված դատարանում այլ դատարանի դատավորի (դատավորների) ընդգրկմամբ դատական կազմի ձևավորմանը:** Հետևաբար՝ նման լուծումները չեն կարող հանգեցնել դատարանի՝ որպես առանձին **պետական իշխանության մարմնի** ստեղծման: Տվյալ դեպքում գործուղվող դատավորի լիազորությունները դադարեցվել կամ դադարել չեն կարող, առկա չէ տվյալ դատարանի դատավորների՝ օրենքով սահմանված թվակազմի նվազում, **առկա չէ դատավորի թափուր պաշտոն, հետևաբար՝ դատարանի կազմավորման կարգով դատական կազմ ձևավորելու պահանջ**: Փոխարինվող դատավորը՝ ՀՀ Նախագահի կողմից նշանակված լինելով տվյալ դատարանի դատավոր, պարտավոր է շարունակել մնալ այդպիսին, ընդգրկված մնալ տվյալ դատարանի դատավորների՝ օրենքով սահմանված թվակազմում՝ իր լիազորությունների ողջ ծավալով, գործուղման ժամանակ գործուղված դատավորի լիազորությունների որևէ ձևով դադարեցում տեղի չի կարող ունենալ: Հետևաբար, գործուղման հիման վրա ձևավորված դատական կազմերի միջոցով գործի քննությունը միանգամայն իրավաչափ է և իրականացվել է դատավարական պատշաճ ընթացակարգով:

Հիմնական խնդիրն այն է, որ վեճի առարկա դրույթում «իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա» արտահայտությունը որոշակի շփոթ է առաջացրել: Անորոշ է մնացել, թե տվյալ իրավակարգավորման շրջանակներում որո՞նք են հիմնական և ոչ հիմնական լիազորությունները: Ի՞նչ տարբերակում է դրված «լիազորությունների իրականացման կասեցում» և «լիազորությունների կասեցում» հասկացությունների միջև: Առկա իրավակարգավորումը կարող է ենթադրել նաև, որ փաստորեն վճռաբեկ դատարանի նախագահը նոր, ժամանակավոր նշանակում է կատարում՝ կասեցնելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները, նրան ժամանակավորապես նշանակելով մասնագիտացված դատարանի դատավոր: Այնինչ, ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետը և 95 հոդվածը դատավորների նշանակման և լիազորությունների դադարեցման միանգամայն այլ ընթացակարգեր են սահմանել, և որևէ բացառություն նախատեսված չէ:

ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի և 95 հոդվածի պահանջները հաշվի առնելով, նկատի ունենալով, որ դատավորը ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկությամբ ՀՀ Նախագահի կողմից նշանակվում է որպես **կոնկրետ դատարանի դատավոր,** տվյալ դատարանում նրա լիազորությունների ժամանակավոր կասեցմամբ այլ դատարան բացառիկ անհրաժեշտությունից ելնելով գործուղման խնդիրը կարող էր լուծվել միմիայն դատավորի պաշտոնում նշանակման գործընթացի տրամաբանության սահմաններում: Օրենքը չի կարող վճռաբեկ դատարանի նախագահին լիազորել կասեցնել ՀՀ Նախագահի հրամանագրի գործողությունը՝ թեկուզ ժամանակավորապես: Օրենքով նրան վերապահված նման լիազորությունը չի բխում ՀՀ Սահմանադրության 1-ին, 6, 49, 55 և 95 հոդվածների դրույթներից: Իրականում նման մոտեցում արտահայտված է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի՝ վեճի առարկա 3-րդ մասում և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 5-րդ մասում: Վերջինս նախատեսում է, որ «Այն դեպքում, երբ տվյալ դատարանում քննվող գործերի ծավալը փոքր է տվյալ դատարանում աշխատող դատավորների թվի համեմատ, այդ դատարանի դատավորը կարող է վճռաբեկ դատարանի նախագահի ո-

րոշմամբ մինչև 6 ամիս ժամկետով գործուղվել այլ դատարան՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ դատավորի վարույթում գտնվող գործի քննությունը չի ավարտվել մինչև համապատասխան գործի քննության ավարտը: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

7. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դատավորի գործուղման վերաբերյալ վիճարկվող իրավակարգավորումը դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով սահմանված՝ դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքե: Դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները նախատեսված են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 և 13 հոդվածներով:

Պետությունը պարտավոր է համապատասխան իրավական, կազմակերպչական, ինստիտուցիոնալ երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ իրավունքներն իրականացնելու ուղղությամբ:

Նման իրավական երաշխիք է տվյալ դատարանում դատավորների թվի անբավարարության հետևանքով գործի քննության անհնարինության դեպքում նույն ատյանի դատարանի դատավորին նույն ատյանի դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ գործուղելու իրավական հնարավորությունը՝ նախատեսված ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով:

Անդրադառնալով դատավորի գործուղման իրավաչափությանը նրա կարգավիճակից բխող գործունեության անթույլատրելիության տեսանկյունից՝ սահմանադրական դատարանը, սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, հիմք ընդունելով նաև ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի առաջին մասը և ՀՀ դատական օրենսգրքի 4 հոդվածի 2-րդ մասը, որոնց համաձայն դատավորն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքում՝ վիճարկվող դրույթի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի այլ դրույթներով սահմանված **գործուղման հնարավորության նախատեսումն ինքնին իրավաչափ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ տվյալ դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով գործի քննության անհնարինության հետևանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:**

Այս ինստիտուտի անհրաժեշտությունը թելադրված է անձի դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների ապահովմամբ և հիմնավորված է նաև Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիայում:

Այլ խնդիր է, թե որքանով են գործուղման փաստացի իրավակարգավորումներն ու դրանից բխող իրավակիրառական պրակտիկան ապահովել արդարադատության իրականացման սահմանադրական պահանջները, այդ ոլորտում մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, դատական պաշտպանության արդյունավետությունը:

8. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում նշված խնդիրը դիտարկել նաև «նույն ատյան» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, ինչպես նաև դատավորների գործուղման գործընթացի իրավակարգավորման լիարժեքության տեսանկյուններից:

ՀՀ Սահմանադրությունը, սահմանելով ՀՀ դատական համակարգի կառուցվածքը, միևնույն ժամանակ հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձևավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև դրանց առավել բարդ իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի առավել խոր մասնագիտական մոտեցում և լուծումներ: ՀՀ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաև օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն: Սահմանադրական նորմի բովանդակության նորմատիվ տարրն է կազմում այն պահանջը, համաձայն որի՝ նման դատարանը պետք է իրականացնի արդարադատություն որոշակի իրավազորության շրջանակներում. դա այդ մարմնի բացառիկ իրավասությունն է, այլ դատարան իրավասու չէ քննել նման գործեր, ինչպես նաև մասնագիտացված դատարանն իրավասու չէ քննել այլ դատարանի իրավասությանը վերապահված գործեր: Նույն կերպ, մասնագիտացված դատարանի դատավորը, որն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, որպես մասնագիտացված դատարանում դատավորի պաշտոն զբաղեցնող անձ կոչված է իրականացնելու արդարադատություն՝ բացառապես իրավունքի այդ կոնկրետ բնագավառում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքով այս խնդիրը կանոնակարգելիս հետևողականություն չի դրսևորել ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի պահանջները լիարժեք հաշվի առնելու հարցում: Այդ մասին սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղծելու՝ սահմանադրական նորմի տված հնարավորության իմաստը ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է տարբեր դատարանների միջև, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որտեղ գործերի բաշխումը տարբեր իրավասությամբ օժտված դատարանների միջև կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն:

Այդ պահանջից ելնելով է, որ գործող օրենսդրությունը որոշակի տարբերակում է դրել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների միջև: Մասնավորապես, դա վերաբերում է թե՛ այդ դատարանների քննությանը ենթակա գործերի բնույթին ու շրջանակներին և թե՛ դատավորների նշանակման ու առաջխաղացման կարգերին: Օրինակ, ՀՀ դատական օրենսգրքի 22 հոդվածը սահմանել է, որ «Ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, **բացառությամբ քաղաքացիական, քրեական և վարչական դատարանների ենթակայությանը վերապահված գործերի**»: Միարժեքորեն օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքի 22, 27, 31 և 35 հոդվածների 1-ին մասերով տարբերակել է ՀՀ դատական օրենսգրքով ձևավորված մասնագիտացված դատարաններին և ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի շրջանակները: Դրանով իսկ այդ դատարանները գործառութային առումով չեն կարող դիտվել որպես նույն ատյանի համասեռ

դատարաններ: Բացի դրանից, ՀՀ դատական օրենսգրքի 122, 123, 126 և 127 հոդվածները սահմանում են ընդհանուր իրավասության դատարանների դատավորի թափուր տեղի համար թեկնածու առաջարկելու, դրանց կողմից առաջարկն ընդունելու կարգի և չընդունելու հետևանքների, թափուր պաշտոնում դատավոր նշանակելու, դատավորների պաշտոնների փոխանակման այնպիսի կարգեր, որոնք նույնական չեն նույն օրենսգրքի 128, 129, 130, 131, 133 և 134 հոդվածներով առաջին ատյանի մասնագիտացված դատարանների դատավորների առնչությամբ նախատեսված կարգերի հետ: Ավելին, նույն օրենսգրքի 135 հոդվածը, սահմանելով դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի կազմման, դատարանի նախագահի, **առաջին ատյանի մասնագիտացված**, վերաքննիչ դատարանի դատավորի, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և նախագահի նշանակման հետ կապված՝ քվեաթերթիկներով քվեարկության ժամանակ հաշվի առնվող հատկանիշները, այս ցանկում բնականորեն չի ներառում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորներին:

Դատական օրենսգրքի նշված և մի շարք այլ հոդվածների (մասնավորապես՝ 3–6–րդ գլուխների և 136 ու 137 հոդվածների) համալիր վերլուծությունից հետևում է, որ իրավակարգավորման տարբեր մոտեցումներ են դրսևորվում ընդհանուր իրավասության առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների հանդեպ:

Նկատի պետք է ունենալ նաև, որ ԵԽ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին No. R (94) 12 հանձնարարականի՝ «Դատավորների անկախության ընդհանուր սկզբունքները» մասի 2–րդ կետի c. ենթակետի համաձայն՝ դատավորների պրոֆեսիոնալ մասնագիտացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, դատավորների ընտրությունը և մասնագիտացումը պետք է հիմնված լինի այն հատկանիշի վրա, որը կապված է որակավորման, ազնվության, ունակության և արդյունավետության հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3–րդ մասում **«նույն ատյան» բառակապակցությունը տվյալ օրենքով նախատեսված իրավակարգավորման շրջանակներում կիրառելի է միայն կառուցակարգային և գործառնական նույնաբնույթ կարգավիճակ ունեցող դատարանների առնչությամբ:** Դա չի կարող մեկնաբանվել այնպես, որ նույն հարթության վրա դրվեն գործառնական տարբեր իրավասություն ունեցող ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանները: Այստեղ նույնպես հիմնական խնդիրը վերաբերում է առաջին ատյանում դատարանների նման մասնագիտացման հիմնավորվածությանը, և կասկած չի կարող առաջանալ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իրականացված արդարադատության իրավաչափության առումով:

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ բացառված չեն այնպիսի իրավիճակները, երբ անհրաժեշտություն առաջանա կառուցակարգային և գործառնական նույնաբնույթ որևէ ատյանի դատարանի դատավորի գործուղումը նույն ատյանի մեկ այլ դատարան՝ ողջամիտ ժամկետներում և արդյունավետ արդարադատություն իրականացնելու նպատակով: Ինչպես նշվեց, գործուղման ինստիտուտի գոյությունն ինքնին իրավաչափ է: Սակայն, մյուս կողմից, այդպիսի գործուղումները պետք է լինեն բացառություն և ոչ թե դառնան ընդհանուր կանոն կամ իրականացվեն գործառնական տարբեր իրավազորություն ունեցող դատարանների միջև:

ՀՀ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունից հետևում է, որ միայն 2008 թ. փետրվար–սեպտեմբեր ամիսներին Հարավային քրեական դատարան են գործուղվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների՝ 5, իսկ Հյուսիսային քրեական դատարան՝ 14 դատավոր: Վերջիններիս թիվն ավելի քան չորս անգամ գերազանցում է Հյուսիսային քրեական դատարանի դատավորների թիվը: Որպես կանոն, գործուղվել է երկուա-

կան դատավոր, և մասնագիտացված դատարանի մեկ դատավորի հետ ձևավորվել է դատարան՝ դրան վերապահելով առանձնապես ծանր քրեական գործի քննության իրավասություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման վիճակի պատճառը նաև ոչ հիմնավոր մոտեցումն է Հյուսիսային և Հարավային քրեական դատարանների կազմավորմանը: Մի դեպքում՝ նախագահի և երեք դատավորի, մյուս դեպքում նախագահի և երկու դատավորի կազմով ստեղծված դատարանները փաստորեն ի սկզբանե ձևական բնույթ են կրել: Օրինակ, Հարավային քրեական դատարանը՝ նախագահի և երկու դատավորի կազմով, միայն դատավորների օրինական արձակուրդի դեպքում գրեթե չորս ամիս չէր կարող դատական կազմ ձևավորել՝ ՀՀ դատական օրենսգրքի 18 հոդվածի 3–րդ մասի հիմքով գործ քննելու համար: Իսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է երեք դատավորի կազմով գործ քննել, ապա 4–5 ամիս անհնարին կլինի որևէ այլ գործ քննել: Դա այն դեպքում, երբ 2008 թվականի հունվար–նոյեմբեր ամիսներին այդ դատարանում մուտքագրվել է 202 գործ, իսկ 2007 թվականի նույն ժամանակահատվածում այդ դատարանի սպասարկման դատական տարածքում մուտքագրված է եղել 227 գործ:

Դատարանակազմական ոչ հիմնավոր լուծումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճռաբեկ դատարանի նախագահը ձևավորել է մասնագիտացված քրեական դատարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընտրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից, իրավաչափ չէ ու նաև կոռուպցիոն ռիսկ է պարունակում:

ՍԴՈ–786, 23 դեկտեմբերի, 2008 թ.

7. Հիմք ընդունելով այն եզրահանգումը, որ ինչպես գործուղման հնարավորության սահմանումը՝ ընդհանրապես, այնպես էլ ռեզերվային դատավորների գործուղման հնարավորության սահմանումը՝ մասնավորապես, ինքնին իրավաչափ են, միաժամանակ հաշվի առնելով, որ ռեզերվային դատավորների գործուղման կապակցությամբ իրավակիրառական պրակտիկա դեռևս ձևավորված չէ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ռեզերվային դատավորների գործուղման իրավաչափությունն իրավակիրառական պրակտիկայում կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ գործուղման գործընթացն իրականացվի ինչպես վերոհիշյալ, այնպես էլ սահմանադրական դատարանի ՍԴՈ–782 որոշման մեջ նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–563, 6 մայիսի, 2005 թ.

5. Դատավորների անկախության սկզբունքն ամրագրված է նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության 1985 թ. Դատական համակարգի անկախության հիմնական սկզբունքներում նշվում է, որ «....Կառավարական և այլ հաստատությունների պարտականությունն է հարգել և պահպանել դատական մարմինների անկախությունը»:

Նույն սկզբունքն է ամրագրված նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և դերի մասին 1994 թ. հոկտեմբերի 13–ի թիվ (94) 12 հանձնարարականում: Հանձնարարականի առաջին Սկզբունքի 2–րդ կետի (d) ենթակետում նշվում է, որ «Դատավորները պետք է ունենան անսահմանափակ ազատություն՝ անաչառորեն ընդունելու որոշումներ՝ ղեկավարվելով իրենց խղ-

ճով, փաստերի իրենց մեկնաբանությամբ և գործող իրավանորմերով: Դատավորները իրենց գործերի էության վերաբերյալ չպետք է տեղեկատվություն տրամադրեն դատական համակարգից դուրս գտնվող որևէ անձի»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ դատավորի անկախության բաղադրատարրերից է, inter alia, արտաքին ազդեցությունը բացառող երաշխիքների առկայությունը:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան նմանատիպ հարցերի առնչությամբ մասնավորապես վկայում է, որ «անկախ դատական համակարգը սահմանադրորեն պաշտպանված է ընդդեմ ցանկացած արտաքին միջամտության, ուստի և Օմբուդսմենին դատարաններին վերահսկելու որևէ գործառույթի վերապահումը անհամատեղելի է իշխանությունների տարանջատման և դատարանների անկախության սկզբունքի հետ»: Նման իրավական դիրքորոշում է արտահայտվել Հունգարիայի սահմանադրական դատարանի 29.03.1994 թ. որոշման մեջ:

....

13. Օրենքի վիճարկվող դրույթի տառացի իմաստի և ձևավորված իրավակիրառական պրակտիկայի գնահատման հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային պրակտիկան, սահմանադրական դատարանը գտնում է, որ.

ա) հետևողականություն չի դրսևորվել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը մշակելիս, որի արդյունքում տեղ են գտել ներօրենսդրական հակասություններ՝ ստեղծելով նաև հակասական իրավակիրառական պրակտիկա: Մասնավորապես դա վերաբերում է, մի կողմից, հիշյալ օրենքի 2 հոդվածին, 7 հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության առաջին նախադասության մեջ ամրագրված դրույթին, 10 հոդվածի 1-ին կետին, 12 հոդվածի 1-ին կետի 3-րդ և 5-րդ ենթակետերին, 13 և 15 հոդվածներին, 17 հոդվածի 1-ին կետին, մյուս կողմից՝ 7 հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասության մեջ ամրագրված դրույթներին,

բ) օրենքի վիճարկվող դրույթը՝ Պաշտպանի՝ դատարաններից տեղեկություններ պահանջելու մասով, կարող է ազդել դատական մարմինների անկախության վրա կամ վտանգել դատավորի անկախությունը՝ այդ գործառույթի այնպիսի կիրառման դեպքում, երբ վիճարկվող դրույթում «տեղեկություններ» եզրույթին տրվում է լայն և օրենքի ընդհանուր տրամաբանությունից կտրված մեկնաբանություն,

գ) օրենքի վիճարկվող դրույթը՝ Պաշտպանի կողմից դատարաններին առաջարկներ ներկայացնելու մասով, կարող է ազդել դատական մարմինների անկախության վրա, քանի որ կարող է խոչընդոտել դատավորի և դատարանի կողմից միայն գործի փաստերի ու հանգամանքների գնահատման և օրենքի սեփական ըմբռնման հիման վրա որոշումներ կայացնելու գործնական հնարավորությունների իրականացմանը:

ՍԴՈ–647, 20 սեպտեմբերի, 2006 թ.

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկայի տեսանկյունից կարևոր է միջազգային պրակտիկայի կողմից ճանաչված և 1998 թ. ընդունված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայում հատուկ կարևորված՝ դատավորի անկախության սոցիալական երաշխիքների ապահովման մասին 6.4. կետում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Կարգավիճակը, մասնավորապես, դատավորներին ապահովում է .... ծերության թոշակով, որի չափը պետք է հնարավորինս մոտ լինի դատական համակարգում ստացած նրա վերջին աշխատավարձին»: Նշված պահանջին լիովին համահունչ էր «Դատավորի կարգավիճակի մասին» 1998 թ. հունիսի 6-ին ընդունված ՀՀ օրենքի 18 հոդվածի դրույթը, համաձայն որի՝ դատավորն իրավունք ուներ ստանալ աշխատանքային կենսաթոշակ «....իր վերջին զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված աշխա-

տավարձի 75 տոկոսի չափով»: 2004 թ. մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությունը, համաձայն որի կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարի որոշման համար հիմք է հանդիսանում ոչ թե ամբողջ աշխատավարձի, այլ պաշտոնային դրույքաչափի 75 տոկոսը, չի բխում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների էությունից և չի նպաստում դատավորի անկախության երաշխիքների ամրապնդմանը:

Պետությունը, թերևս, կարող է իր հնարավորությունների սահմանափակման որոշակի իրավիճակների պայմաններում նման քայլ կատարել, երբ պետության մեջ հատուկ իրավիճակ է ծագում կամ անհրաժեշտ է պաշտպանել այլ սահմանադրական արժեքներ: Սակայն 2004 թվականին և հետագայում Հայաստանը շարունակել է երկնիշ թվերով տնտեսական աճ արձանագրել, հարաճուն մեծացել է երկրի պետական բյուջեն և օբյեկտիվ նախադրյալներ չեն եղել դատավորի աշխատավարձի ու կենսաթոշակի միջև խզումը մեծացնելու համար:

Դատավորի անկախության սոցիալական երաշխիքների թուլացման հիմք չէր կարող հանդիսանալ նաև 2002 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով դատավորների աշխատավարձի բարձրացման հանգամանքը, քանի որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի և դատարանների անկախության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլ այն ամրապնդելու առումով: Միաժամանակ աշխատավարձի տվյալ բարձրացումը ներառել է պետական իշխանության ամբողջ համակարգը և չի վերաբերել միայն դատավորներին: Այն դեպքում, երբ դատավորի աշխատավարձը և աշխատանքային կենսաթոշակը, բացի նրա համար որոշակի կենսապայմաններ ապահովելու գործառույթից, նաև, ինչպես նշվեց, դատավորի կողմից անկախ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման ստեղծելու հատուկ գործառույթ ունեն: Դրա համար էլ, մասնավորապես, «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով նախատեսվում է, բացի պետական ընդհանուր կենսաթոշակից, պետական բյուջեի միջոցների հաշվին դատավորի կենսաթոշակին հավելավճար սահմանել:

ՍԴՈ-664, 7 նոյեմբերի, 2006 թ.

VII. .... Նկատի ունենալով Հայաստանում դատավորների սահմանափակ թվաքանակը, ընտրական հանձնաժողովներում ընդգրկվող և չընդգրկվող դատավորների հարաբերակցության՝ ընտրական օրենսգրքով նախատեսվող տարբեր իրավիճակները, ընտրական վեճերի լուծման առանձնահատկություններն ու ժամկետային սահմանափակումները, ակնհայտ է դառնում, որ անխուսափելի է հակադրությունը, մի կողմից՝ անկախ ընտրական հանձնաժողովների ձևավորման և, մյուս կողմից՝ արդյունավետ ու անկողմնակալ արդարադատության իրականացման շահերի միջև: Այս առումով է, որ վտանգվում է նաև

Սահմանադրության 19 հոդվածով ամրագրված իրավունքների ապահովումը:

Չափազանց կարևորելով անկախ ու անկողմնակալ ընտրական հանձնաժողովների դերը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անցումային երկրներում նույնքան կարևոր է նաև անկախ դատական իշխանության կայացումը, որի շահերից ելնելով է, որ ՀՀ Սահմանադրության 98 հոդվածն անթույլատրելի է համարում դատավորի կողմից իր պարտականությունների հետ չկապված որևէ պաշտոն զբաղեցնելը: Դատավորներին՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով ու ծավալով ընտրական հանձնաժողովներում ընդգրկելը չի բխում դատական իշխանության անկախության ապահովման և արդարադատության իրականացման շահերից, մեծանում է արդարադատության և այլ շահերի բախման հնարավորու-

թյունը, վտանգվում է դատարանների և դատավորների անաչառությունն ընտրական վեճեր լուծելիս:

ՍԴՈ–719, 27 նոյեմբերի, 2007 թ.

7. .... ՀՀ դատական օրենսգրքի 89, 90 հոդվածներով սահմանված են դատավորի պաշտոն զբաղեցնող անձանց պարտադիր վարքագծի կանոնները: Նույն օրենսգրքի մի շարք այլ հոդվածների համաձայն ընդհանուր իրավասության, քաղաքացիական, քրեական, վարչական, վերաքննիչ դատարանների նախագահների, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի անմիջական պարտականությունն այդ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելը և դատավորի կողմից նրա անմիջական պարտականությունների կատարմանը հետևելն է (25, 30, 34, 38, 49 և 61 հոդվածներ), ընդ որում, դատարանների նախագահների այդ պարտականության ոչ պատշաճ իրականացումը նույն օրենսգրքի 165 հոդվածի 1-ին մասի համաձայն նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

21. Անդրադառնալով դիմողներ Բաբայանների կողմից վիճարկվող՝ ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետի դրույթների սահմանադրականության խնդրին, սահմանադրական դատարանը նշում է, որ օրենսգրքի՝ «Դատավորի անձեռնմխելիությունը» վերտառությամբ 13 հոդվածում կարևոր երաշխիքներ են նախատեսված ապահովելու համար ինչպես դատավորի անկախությունը, այնպես էլ արդարադատության արդյունավետությունը: Համանման երաշխիքներ են նախատեսված դատավորների անկախությունն ու անձեռնմխելիությունը կանոնակարգող ՀՀ օրենսդրության՝ այլ, ինչպես նաև միջազգային իրավական նորմերում: Որպես այդպիսի երաշխիք՝ օրենսգրքի վերոհիշյալ 6-րդ կետը նախատեսում է **վերադասության կարգով դատական ակտի նախապես բեկանման պարտադիր սկզբունք**՝ շահադիտական կամ անձնական այլ դրդումներով այդպիսի ակտ դատավորի կողմից կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում հարուցելու համար:

Սահմանադրական դատարանը հատուկ կարևորում է **վերադասության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի** անխախտելիության ապահովումն ինչպես ՀՀ դատական օրենսգրքի 13 հոդվածի վիճարկվող նորմում, այնպես էլ օրենսդրության՝ այլ, այդ թվում նաև քրեաիրավական նորմերում, դիտարկելով այն որպես ՀՀ Սահմանադրության 5, 94 և 97 հոդվածներում ամրագրված **դատական իշխանության անկախության սկզբունքի** իրականացման կարևոր երաշխիք: Դատական ակտի իրավական գնահատականը կարող է տրվել միմիայն արդարադատական ընթացակարգով այն քննության առարկա դարձնելու արդյունքում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ սկզբունքը չի ենթադրում, որ դատավորը ենթակա չէ պատասխանատվության, այդ թվում քրեորեն պատժելի արարքի համար: Այդ իրավահարաբերություններն օրենսդրորեն պետք է կանոնակարգվեն ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթների շրջանակներում: Դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետն իրավակիրառական պրակտիկայում չի կարող մեկնաբանվել այն բովանդակությամբ, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով անհնարին դարձվի դատական ակտերի բողոքարկումը դատախազության կողմից՝ ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով վերապահված լիազորության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի անկախության և օրենքի առջև դատավորի պատասխանատվության միջև խելամիտ հավասարակշռությունը խախտվել է մասնավորապես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2007 թ. նոյեմբերի 28-ի ՀՕ–270–Ն օրենքով կատարված փոփոխությունների 426.1. հոդվածով նախատեսված

իրավակարգավորման արդյունքում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համանման նորմերի առնչությամբ իր իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանն արտահայտել է 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ: Այդ դիրքորոշումներն օրենսդրի կողմից հաշվի պետք է առնվեն նշված հավասարակշռությունը երաշխավորելու համար:

ՍԴՈ-782, 2 դեկտեմբերի, 2008 թ.

7. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դատավորի գործուղման վերաբերյալ վիճարկվող իրավակարգավորումը դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով սահմանված՝ դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները նախատեսված են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 և 13 հոդվածներով:

Պետությունը պարտավոր է համապատասխան իրավական, կազմակերպչական, ինստիտուցիոնալ երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ իրավունքներն իրականացնելու ուղղությամբ:

Նման իրավական երաշխիք է տվյալ դատարանում դատավորների թվի անբավարարության հետևանքով գործի քննության անհնարինության դեպքում նույն ատյանի դատարանի դատավորին նույն ատյանի դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ գործուղելու իրավական հնարավորությունը՝ նախատեսված ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով:

Անդրադառնալով դատավորի գործուղման իրավաչափությանը նրա կարգավիճակից բխող գործունեության անթույլատրելիության տեսանկյունից՝ սահմանադրական դատարանը, սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, հիմք ընդունելով նաև ՀՀ Սահմանադրության 97 հոդվածի առաջին մասը և ՀՀ դատական օրենսգրքի 4 հոդվածի 2-րդ մասը, որոնց համաձայն դատավորն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքում՝ վիճարկվող դրույթի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի այլ դրույթներով սահմանված **գործուղման հնարավորության նախատեսումն ինքնին իրավաչափ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ տվյալ դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով գործի քննության անհնարինության հետևանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:**

Այս ինստիտուտի անհրաժեշտությունը թելադրված է անձի դատական պաշտպանության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների ապահովմամբ և հիմնավորված է նաև Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիայում:

Այլ խնդիր է, թե որքանով են գործուղման փաստացի իրավակարգավորումներն ու դրանից բխող իրավակիրառական պրակտիկան ապահովել արդարադատության իրականաց-

ման սահմանադրական պահանջները, այդ ոլորտում մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, դատական պաշտպանության արդյունավետությունը:

ՍԴՈ–931, 28 դեկտեմբերի, 2010 թ.

11. .... Քրեական դատավարությունում դատարանին պատկանում է գործի լուծման գործառույթը, որի շրջանակներում էլ իրացվում է դատավորի անկախության սկզբունքը: Դատարանի անկախության սկզբունքը չի կարող դրսևորվել դատավարության կողմերի՝ մեղադրանքի կամ պաշտպանության կողմի գործառույթի տիրույթում: Դատական քննության արագացված կարգի՝ որպես տարբերակված դատավարական ձևի ինստիտուտի բովանդակությունից բխում է, որ նման կարգի կիրառման շուրջ համաձայնության կայացումը մեղադրանքի և պաշտպանության գործառույթների շրջանակում է, հետևաբար, դատարանը կաշկանդված է այդ կարգը կիրառելու դեմ կողմերից յուրաքանչյուրի առարկությամբ:

Դատարանի դատավարական անկախությունը դատավորի անկողմնակալ և օբյեկտիվ վերաբերմունքն է կողմերի նկատմամբ, ինչպես նաև նրա կողմից ապացույցների անկողմնակալ և օբյեկտիվ գնահատականը՝ ելնելով միայն իր ներքին համոզմունքից: Դատական քննության արագացված կարգ կիրառելու հարցի լուծման, ամբաստանյալի միջնորդության առնչությամբ որոշում կայացնելու գործընթացում դատարանի դատավարական անկախությունը դրսևորվում է **նման կարգ կիրառելու վերաբերյալ դատավարության երկու կողմերի փոխադարձ համաձայնության պայմաններում** դատական քննության արագացված կարգ կիրառելու՝ **օրենքով նախատեսված պայմանների առկայությունը գնահատելիս:** Այսինքն՝ դատարանն ամբաստանյալի միջնորդության քննարկմանը ձեռնամուխ է լինում միայն դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ դատավարության կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում և անկախության սկզբունքի հիման վրա լուծում է ամբաստանյալի միջնորդությունը բավարարելու հարցը՝ պարզելով դատական քննության արագացված կարգ կիրառելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1–րդ հոդվածով նախատեսված պայմանների առկայությունը:

ՍԴՈ–934, 4 փետրվարի, 2011 թ.

7. .... **Հինգերորդ**՝ վերահաստատելով ՍԴՈ–872 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքի փոփոխումը ոչ թե պետք է հիմք կամ պատճառ հանդիսանա լրացուցիչ նախաքննության (ինչը կիակասի ՍԴՈ–710 որոշմանը), այլ պետք է դատարանում հետազոտված և գործում առկա այլ ապացույցների համալիր վերլուծության արդյունք (հետևանք) լինի: Սակայն, եթե որոշակի բացառիկ դեպքերում մեղադրանքի փոփոխությունը (լրացումը) պահանջի նոր ապացույցների ձեռքբերում, ապա դրա համար մեղադրողի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ (դատավարության բոլոր մասնակիցների կարծիքները լսելուց հետո) կարող են օգտագործվել բացառապես գործի դատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոցներ (նոր վկաների կանչ, փորձաքննությունների նշանակում, ապացույցների հետազոտում կամ փաստաթղթերի և այլ նյութերի պահանջում և այլն): Այսինքն՝ մեղադրանքի փոփոխությանը նախորդող գործընթացը պետք է լինի հրապարակային դատաքննության շրջանակներում և դուրս չգա դատական վերահսկողությունից: Հակառակ դեպքում կնսեմացվի անկախ, անկողմնակալ և մրցակցային դատարանի սահմանադրաիրավական դերը:

ՍԴՈ– 996, 18 հոկտեմբերի, 2011 թ.

5. Սահմանադրական դատարանը, քննության առնելով կողմերի դիրքորոշումները, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19–րդ հոդվածի պահանջներից ելնե-

լով՝ պարզելով գործի բոլոր հանգամանքները, գտնում է, որ վեճի առարկա իրավադրույթն ընթացակարգային բնույթի դրույթ է և կոչված է, մի կողմից, կանոնակարգելու դատական ծառայության պաշտոնում նշանակման կարգը, մյուս կողմից՝ լրացուցիչ երաշխիք ստեղծել դատավորի անկախ ու արդյունավետ գործունեության համար: Դատավորին կցված դատական ծառայության պաշտոններում նշանակումը և պաշտոնից ազատումը՝ տվյալ դատավորի ներկայացմամբ, դրույթը միանշանակ է, ունի իմպերատիվ բնույթ, չի բովանդակում օրենքի բաց կամ անորոշություն, հստակ սահմանում է իրավակարգավորման պայման: Վերջինս հանգում է նրան, որ այդ նշանակումը և ազատումը պետք է տեղի ունենան տվյալ դատավորի ներկայացմամբ: Ինչ վերաբերում է դատական հայեցողությանը, ապա այն ունի իր սահմանները և չի կարող փոխել իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել դրա նպատակահարմարության խնդիրը: Դատական հայեցողությունն ընտրություն կատարելու իրավասություն է՝ այնպիսի հնարավոր տարբերակների միջև, որոնք բոլորն էլ օրինական են: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»: Հստակ սահմանված է նաև, որ իրավական ակտի մեկնաբանությունը չպետք է փոխի դրա իմաստը:

ՍԴՈ-997, 15 նոյեմբերի, 2011 թ.

5. Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված վերոհիշյալ մոտեցումներից է նաև ելնում՝ գնահատելու համար դիմող կողմի փաստարկները վիճարկվող նորմերի **իրավական անորոշության** առնչությամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների առանձնահատկություններով (գնահատման ենթակա հանգամանքների բազմազանությամբ) է պայմանավորված հայեցողական որոշակի այն ազատությունը, որն օրենսդիրը տրամադրել է դատարաններին՝ վիճարկվող հոդվածի նորմերի կիրառմամբ որոշումներ կայացնելիս: Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ դատական հայեցողությունը՝ մանավանդ այնպիսի դեպքերում, երբ քննության առարկա է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության սահմանափակման հարցը, **պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի նորմերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան մեկնաբանությամբ կիրառելու պահանջով, այլև միջազգային պրակտիկայով, և հատկապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով:**

....

9. .... Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող հոդվածի 11-րդ մասի դրույթների կիրառման խնդրում գործը քննող դատարանի հայեցողության շրջանակները բացարձակ չեն և սահմանափակված են հետևյալ նախապայմաններով.

– եթե անձը զրպարտվել կամ նրան վիրավորանք է հասցվել զանգվածային լրատվության միջոցի օգտագործմամբ, ապա խնդրի իրավական լուծումը պետք է երաշխավորվի խոսքի ազատության իրավունքի իրավաչափ իրացման սահմաններում,

– զրպարտության կամ վիրավորանքի համար սահմանված վնասի փոխհատուցումը պետք է լինի ողջամտորեն համաչափ՝ անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված վնասի համեմատ,

– կոնկրետ վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունից ելնելով դատական կարգով նյութական փոխհատուցման չափի սահմանման դեպքում պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ իր մեծությամբ այն չհանգեցնի մեղավոր անձի սնանկության կամ էականորեն չխաթարի նրա բնականոն գործունեությունը:

ՍԴՈ–1052, 17 հոկտեմբերի, 2012 թ.

7. ՀՀ սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք, ի թիվս այլնի, առնչվում են նաև դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը: Դատարանն իր՝ 28.11.2007 թ. ՍԴՈ–719 որոշմամբ, մասնավորապես, ամրագրել է, որ. «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ **ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս**: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: .... Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ»:

Անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում **դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել**: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2006 թ. հոկտեմբերի 18–ի ՍԴՈ–652, 2006 թ. նոյեմբերի 16–ի ՍԴՈ–665, 2007 թ. ապրիլի 9–ի ՍԴՈ–690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Իր՝ 09.04.2007 թ. ՍԴՈ–690 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի բողոքարկման խնդրին, ամրագրել է, որ. «**նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ:** Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ

բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն: Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաև կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը»:

9. Օրենսդիրն ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համար որպես երաշխիք ամրագրել է նաև օրենսգրքի 380-րդ հոդվածը, որը վերաբերում է բողոքարկման համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելուն: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեքորեն ապահովում է անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Սույն գործով հաստատված համարելով, որ բողոքարկվող դատական ակտի հրապարակումից հետո մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն անցել է որոշակի ժամանակահատված, ՀՀ դատարանները, այնուամենայնիվ, հարգելի չեն համարել բաց թողնված ժամկետը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բողոքարկվող դատական ակտը փաստացիորեն ստանալուց հետո մինչև բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտը մնացել է 6 օր, ինչը, ըստ ՀՀ դատարանների, բավարար ժամանակ է փաստելու համար, որ բողոքաբերն իրական հնարավորություն է ունեցել սահմանված ժամկետում ներկայացնելու վերաքննիչ բողոք:

Վերոնշյալի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է լայն հայեցողական լիազորությամբ՝ հարգելի համարելու կամ չհամարելու ժամկետների բացթողումը: Այս կապակցությամբ, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ, հիմք ընդունելով իր՝ ՍԴՈ-690 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ «վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեք չի երաշխավորում ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումն այն պատճառաբանությամբ, որ նշված հայեցողական լիազորությունների իրականացումը հանգեցնում է անորոշության: Օրինակ՝ պարզ չէ, թե կոնկրետ գործերով ինչ մոտեցում կցուցաբերեն դատարանները, եթե բողոքարկվող դատական ակտը փաստացիորեն ստանալուց հետո մինչև բողոքարկման ժամկետի ավարտը մնա ոչ թե 6 օր, ինչպես սույն գործով դիմողի դեպքում է, այլ 5 օր կամ դրանից պակաս: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ ստանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, կոնկրետ դեպքում՝ հնգօրյա և տասնօրյա ժամկետները, ապա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական

հնարավորության առաջացման պահից, առավել ևս, որ օրենսդիրը մի շարք դեպքերում ոչ միայն չի բացառում, այլև որպես դատական ակտի բողոքարկման ժամկետի մեկնարկի սկիզբ ուղղակիորեն նախատեսում է տվյալ դատական ակտը հասցեատիրոջ կողմից ստանալու պահը:

Այս առումով, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63–րդ հոդվածի 1–ին մասի պահանջը՝ սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև ՀՀ դատական պրակտիկայում ստեղծված ընդհանուր վիճակին անդրադարձը: Այդ առումով հատկանշական է հատկապես ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000 թ. դեկտեմբերի 22–ի թիվ 36 որոշմամբ ամրագրված այն իրողությունը, որ կան դեպքեր, երբ «....դատարանները օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ՝ ուշացումով են դատավճիռները, վճիռները և որոշումները հանձնում բողոքարկման իրավունք ունեցող անձանց, որպիսի հանգամանքը վերջիններիս զրկում է օրենքով նախատեսված ժամկետներում վերադաս դատարաններին բողոքներ ներկայացնելու հնարավորությունից»: Իրավիճակի՝ նման կերպ գնահատումից ելնելով դատարանների նախագահների խորհուրդը գտել է, որ բոլոր այն դեպքերում, **երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով,** դատարանների կողմից ժամկետի բացթողումը **պետք է ճանաչել հարգելի**: Մասնավորապես դա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենն օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ կողմին **հանձնելու** պատճառով:

Այսուհանդերձ, նման դիրքորոշման առկայության պայմաններում խնդիրը ոչ թե օրենսդրական կարգավորում է ստացել, այլ դարձյալ թողնվել է դատարանների հայեցողությանը: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով (ex jure) պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

ՍԴՈ–1063, 18 դեկտեմբերի, 2012 թ.

7. .... Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմում գործող դատավորի անկողմնակալությանը, ապա այդ հանգամանքն առավելապես առնչվում է գործի քննության ընթացակարգերին, որպիսիք, ինչպես արդեն վերը նշվել է, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում ՀՀ դատական օրենսգրքի նորմերին: Բացի դրանից, որպես անկողմնակալության երաշխիք է հանդիսանում ՀՀ դատական օրենսգրքի 104–րդ հոդվածը, որը սահմանում է արդարադատության խորհրդի անդամների՝ որոշումների կայացմանը մասնակցության դեպքերը: Մասնավորապես, արդարադատության խորհրդի անդամը չի մասնակցում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացմանը, եթե արդարադատության խորհրդի անդամը հանդիսանում է այն կարգապահական հանձնաժողովի անդամ, որի կողմից հարուցված կարգապահական վարույթի հիման վրա է արդարադատության խորհուրդը քննարկում հարցը: Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմում Հանրապետության Նախագահի և ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվող իրավաբան–գիտնականներին, ապա նրանց թվաքանակն զգալիորեն զիջում է արդարադատության խորհրդի կազմում դատավորների թվաքանակին, ինչը ոչ միայն չի կարող ազդեցություն ունենալ արդարադատության խորհրդի անկախության և անկողմնակալության վրա, այլև հանդես է գալիս որպես վերջիններիս համար հակակշռող նշանակություն ունեցող լրացուցիչ երաշխիք,

ՍԴՈ–1115, 24 սեպտեմբերի, 2013 թ.

6. Միևնույն ժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարևորում է այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք դատարանի իրավունքն է ոչ միայն կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքի հաստատումը, այլև բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու պարագայում նաև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Այսպես. օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավունքը տվել է դատարանին, ինչն իրավաչափ է: Դատարանը, քննելով դիմումը, անդրադառնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչելու նպատակով պահանջատիրոջ ներկայացրած պատճառների հիմնավորվածությանը: Այսինքն՝ դատական նիստ հրավիրելու մասին օրենքի պահանջի տրամաբանությունը պահանջատիրոջ կողմից դատարան ներկայացված պատճառները հարգելի լինելու հանգամանքի մասին դատարանի կողմից պատճառաբանված գնահատական տալն է: Հետևաբար, այն պարագայում, երբ դատարանը հարգելի է համարում ներկայացված պատճառները, ապա վերականգնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը: Մինչդեռ վիճարկվող նորմում օրենսդիրն օգտագործել է «դատարանը կարող է» հասկացությունը, այսինքն՝ դատարանի հայեցողությանն է թողել դատարանի կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու հիմքում ընկած պատճառները հարգելի ճանաչելուց հետո բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Վերը նշվածից բխում է, որ վիճարկվող հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է հայեցողական լիազորությամբ՝ ժամկետների բացթողումը հարգելի ճանաչելուց բացի, **վերականգնել կամ չվերականգնել** ժամկետների բացթողումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դրվում դատական հայեցողությունից՝ ներկայացված պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքից զատ նաև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծման առումով, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված դատական հայեցողությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ խաթարվի այլոց իրավունքների և ազատությունների, ներառյալ՝ դրանց պաշտպանության իրավունքի էությունը կամ անհարկի սահմանափակվի դրանց իրացումը:

Դատական հայեցողության վերաբերյալ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ (ՍԴՈ–996, ՍԴՈ–997): Մասնավորապես, 18.10.2011 թ. ՍԴՈ–996 որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝ «.... Ինչ վերաբերում է դատական հայեցողությանը, ապա այն ունի իր սահմանները և չի կարող փոխել իրավանորմի բնույթը կամ քննարկման առարկա դարձնել դրա նպատակահարմարության խնդիրը: Դատական հայեցողությունն ընտրություն կատարելու իրավասություն է՝ այնպիսի հնարավոր տարբերակների միջև, որոնք բոլորն էլ օրինական են»: Սույն գործով սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավանորմի դեպքում պետք է ապահովվի հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումը, այն պետք է լինի հստակ, միակերպ ընկալելի իրավահարաբերության կողմերի համար:

ՍԴՈ–1141, 18 մարտի, 2014 թ.

4. Դիմումում բարձրացվող իրավական որոշակիության խնդիրը դիմողը պայմանավորում է վեճի առարկա դրույթի շրջանակներում դատարանին վերապահված հնարավոր «բացարձակ» հայեցողության առկայությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա իրավահարաբերություններում դատական հայեցողությունը պետք է դիտարկել ոչ թե որպես սուբյեկտիվ կամքի

դրսևորում, այլ օրինական տարբերակներից մեկի իրավաչափ ընտրության հնարավորություն: Դատարանը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի՝ վեճի առարկա դրույթի, նախ՝ գործ ունի անձի հետ, ով ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանք է կատարել: Օրենսգրքի բազմաթիվ հոդվածներով կանոնակարգվում են ցմահ ազատազրկման հետ կապված իրավահարաբերությունները (հոդվածներ՝ 19/5, 49/10, 50/1, 60, 66/4, 67/6, 76/5,7, 81/4, 104/2, 305, 387 և այլն): Երկրորդ՝ օրենսգրքի այլ հոդվածների հետ համադրված վերլուծության արդյունքում, գործի փաստական հանգամանքները քննության առնելու հիման վրա դատարանին տրվում է օրենքով նախատեսված երկու հնարավորություններից մեկի ընտրության իրավասություն՝ հնարավոր գտնել վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին ազատ արձակելը կամ, եթե դատարանը դա հնարավոր չի գտնում, ապա չկիրառել ցմահ ազատազրկում: Սա ոչ թե դատավորի սուբյեկտիվ կամքի արտահայտություն է, այլ օրենքով նախատեսված արդարադատական օբյեկտիվ գործընթացի արդյունք: Նույն տրամաբանությունից է բխում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումը: Նկատի ունենալով, որ ցմահ ազատազրկման հիմքերը կարող են տարբեր լինել, ապա տվյալ իրավակարգավորումների պայմաններում դատարանին հնարավորություն է տրվում օրենքով նախատեսված իրավաչափ տարբերակների միջև ընտրություն կատարել՝ գործի փաստական հանգա-մանքների դատաքննության հիման վրա:

.... Ինչ վերաբերում է դիմողի այն փաստարկին, որ վիճարկվող նորմը չի սահմանել հստակ և կանխատեսելի չափանիշներ, որոնցով դատարանը պետք է առաջնորդվի, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե վիճարկվող նորմն ընկալվում է որպես առանձին, քրեական օրենսգրքի ընդհանուր կարգավորման տրամաբանությունից դուրս դրույթ, ապա կարող է առաջանալ թյուր ընկալում դատարաններին վերապահած «բացարձակ» հայեցողական լիազորությունների վերաբերյալ: Այնինչ, ճիշտ այնպես, ինչպես հանցանք կատարած անձի նկատմամբ տասը կամ ավելի տարի, կամ ցմահ ազատազրկման ժամկետով պատիժ նշանակելու ժամանակ, դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր սկզբունքներով և, մասնավորապես, 60-63-րդ հոդվածների պահանջներով: Բացի դրանից, վեճի առարկա դրույթը լուծում է կարևոր մի խնդիր ևս, անկախ այն բանից, որ անձը ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանք է կատարել և դատարանը հնարավոր չի գտնում վաղեմության ժամկետն անցնելուց հետո անձին ազատ արձակել, ապա, ըստ վեճի առարկա դրույթի և օրենսգրքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի՝ չի կարող նաև ցմահ ազատազրկում կիրառել: Այսպիսի կարգավորումն իրավունքների պաշտպանության օրենսդրական մոտեցում է:

ՍԴՈ-1191, 24 փետրվարի, 2015 թ.

6. .... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ինչպես քննության առարկա, այնպես էլ համանման իրավահարաբերություններ կարգավորող այլ նորմերի (9-րդ հոդվածի 2-րդ մաս, 314-րդ հոդված) բովանդակությունից նաև հետևում է, որ դատավարական հարկադրանքի միջոցներ դատարանը կիրառում է միայն այն դեպքում, երբ այդպիսի որոշման անհրաժեշտությունը հիմնավորված է պատշաճ իրավական ընթացակարգով: Սակայն դատական նիստի սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում՝ այդ կարգի խախտման փաստով պայմանավորված, հարկադրանքի միջոցներ դատարանը կիրառում է իր նախաձեռնությամբ՝ ելնելով դատական նիստի կարգի խախտման հետ կապված հանգամանքների իր հայեցողական գնահատականներից: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում դատական հայեցողությունից դուրս են դատավարական հարկադրանքի վերոթվարկյալ միջոցները կոնկրետ (դատավարությանը մասնակցող և

դատական նիստին ներկա գտնվող) անձանց նկատմամբ կիրառելու իրավապայմանները: Մասնավորապես, դատարանի նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող վկայի նկատմամբ: Դատական տուգանքը կարող է կիրառվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ: Ամբաստանյալի կողմից դատական նիստի կարգը խախտելու և նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու կամ նախագահող դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու դեպքում դատարանը կարող է կիրառել նախազգուշացում, կամ նա կարող է հեռացվել նիստերի դահլիճից: Միաժամանակ, գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող են կիրառվել վիճարկվող հոդվածի առաջին մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված սանկցիաները (գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը), որն իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Դատական սանկցիաների վերաբերյալ դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից (314.1-րդ հոդվածի 8-րդ մաս):

ՍԴՈ-1234, 20 հոկտեմբերի, 2015 թ.

7. .... Գործի հանգամանքների և ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ վեճի առարկա իրավանորմը կիրառվել է այլ մեկնաբանությամբ՝ հիմնական շեշտադրումը կատարելով ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման անհրաժեշտության վրա, առանց հիմնավոր անդրադարձ կատարելու իրավաչափ նպատակի գերակայության բացահայտմանը՝ յուրաքանչյուր կոնկրետ գործով տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահի գերակա համարվելն այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ դիտարկելով որպես դատավորի բացարձակ հայեցողություն: Մինչդեռ դատարանի հայեցողությունն իրավաչափ տարբերակներից ընտրություն կատարելու հնարավորություն է: Իսկ ընտրության չափանիշները հստակ են ու ըստ էության սահմանափակվում են վերոթվարկյալ երեք հանգամանքներով՝ անձի կյանքի պաշտպանություն, ծանր հանցագործության կանխում, ծանր հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանություն:

ՍԴՈ-1249, 22 դեկտեմբեր 2015

9. Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ, մի կողմից, օրենսդրորեն օբյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դատական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն ամրագրել: Այս համատեքստում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչը՝ նշելով, որ «.... ոչ միանական կամ հնարավոր հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպատակավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար անհրաժեշտ այն չափանիշները կամ դատավարական ժամկետի վերականգնման հիմքերի այն մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որոնք յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանան ժամկետի բացթողնման հարգելիությունը գնահատելիս»:

Հետևաբար, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի տվյալ իրավահարաբերության արդյունավետության, ինչպես նաև դատա-

րանների հանրային-իրավական վարքագծի կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը:

ՍԴՈ-1251, 19 հունվարի, 2016

8. Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթին համանման իրավակարգավորում է նախատեսված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածներով:

Բոլոր դեպքերում դատարանի իրավասությանն է վերապահված գնահատելու, թե արդյոք հնարավոր է տվյալ գործի քննությունը մինչև այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Սակայն գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքի վերանալու հարցը պարզելիս բոլոր ատյանների դատարաններն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են ոչ միայն **ստուգել** սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշման կայացված կամ դեռևս չկայացված լինելը, այլ նաև այդ որոշման բացակայության պայմաններում գործի վարույթը վերսկսելու հնարավորության հարցը, ինչը կնպաստի անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքների երաշխավորմանը:

ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ-758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածը նախատեսում է ընդհանուր իրավասության դատարանների՝ ստորադասության վրա հիմնված եռաստիճան համակարգ, որում հստակեցված է նաև վճռաբեկ դատարանի ֆունկցիոնալ դերը՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու առումով: Այդ համակարգին բնորոշ է տարբեր ատյանի դատարանների միջև եղած գործառնական կապը: Տարբեր ատյանների միջև եղած կապը նպատակ է հետապնդում ապահովել դատարանների կողմից կայացվող դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը, վերացնել օրենքի խախտումները և վերականգնել դատավարության մասնակիցների խախտված իրավունքները:

Տարբեր ատյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական ատյանի իրավասությունների և գործառույթների կրողը: Հետևաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթի իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում:

Այսպես, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունների ուսումնասիրությունը վկայում է, որ, ընդհանուր առմամբ, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն իրենց լիազորությունների շրջանակներում արդարադատություն իրականացնելիս.

– մերժում են վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ. ընդ որում, այն դեպքում երբ բողոքարկվող ակտը պատճառաբանված է թերի կամ սխալ, կամ ընդհանրապես պատճառաբանված չէ, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը պատճառաբանում է ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը,

– բեկանում են դատական ակտը և գործն ուղարկում համապատասխան ստորադաս դատարան,

– բեկանում և փոփոխում են ստորադաս դատարանի դատական ակտը:

Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունների բնույթից բխում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերանայելիս, հատկապես այն դեպքում, երբ վերադաս դատական ատյանը փոփոխում է ստորադաս դատական ատյանի ակտը, վերադաս դատական ատյանների դատական ակտերը հանդես են գալիս որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նոր և ինքնուրույն արդյունք՝ ըստ էության ազդելով ստորադաս դատարանի դատական ակտի բովանդակության վրա և դատավարության կողմերի համար առաջացնելով նոր իրավական հետևանքներ:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման իրավակարգավորումը շեղվել է վերոհիշյալ տրամաբանությունից՝ աղճատելով ստորադասության վրա հիմնված դատական եռաստիճան համակարգի էությունն ու բովանդակությունը, դատական երեք ատյանների միջև ֆունկցիոնալ կապը՝ հաշվի չառնելով դատական երեք ատյանների գործառույթների առանձնահատկությունները:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6–րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

Այն հանգամանքը, թե 6–րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների առնչությամբ, կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից, դիտարկվելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը (տես՝ Սիալկովսկան ընդդեմ Լեհաստանի գործով (Sialkowska v. Poland) 2007 թ. մարտի 22–ի վճիռը):

ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարան–ները և վճռաբեկ դատարանը: Նույն հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներն ամրագրում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, այդ թվում՝ նաև արդարադատության մատչելիության իրավունքը: Նշված սահմանադրական դրույթների համադրված մեկնաբանությունը՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո, թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող դատական պաշտպանության իրավունքը ներառում է նաև վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, որն իր հերթին ներառում է վճռաբեկ ատյանի մատչելիության իրավունքը, որը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով վճռա-

բեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները մանրամասնված են սահմանադրական դատարանի 2007 թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից:

ՍԴՈ-780, 25 նոյեմբերի, 2008 թ.

12. ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածին, մասնավորապես նշել է, որ օրենսդիրն ազատ է մասնագիտացված դատարանների պարագայում սահմանելու վերաքննիչ ատյան: Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում Սահմանադրության 92 հոդվածի նշված մեկնաբանությունը դիտարկել ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներում ամրագրված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների համատեքստում: Այս սահմանադրական դրույթների համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդրի հայեցողությանն է թողնված վարչական արդարադատության շրջանակներում վերաքննիչ ատյանի ստեղծման հարցի լուծումը, այնուամենայնիվ, օրենսդիրն իր այս հայեցողությունն իրացնելիս պետք է առաջնորդվի մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ պաշտպանության և այդ իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի՝ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետևողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծել են, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ Եվրոպական դատարանի կողմից կիրառվող՝ Կոնվենցիայի մեկնաբանության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ Կոնվենցիայի արդյունավետ մեկնաբանության սկզբունքն իր հերթին պահանջում է, որ յուրաքանչյուր իրավունք մեկնաբանվի և կիրառվի այնպես, որ դրանք լինեն ոչ թե տեսական կամ երևակայական, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ: Այս սկզբունքային դիրքորոշումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտահայտված է Եվրոպական դատարանի բազմաթիվ վճիռներում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, իր հերթին, մեծապես կարևորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004 թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը: Վերջինս իր 4-րդ (i) կետում ամրագրում է. «Վարչական ակտը վերանայող դատարա-

նի որոշումը պետք է, գոնե կարևոր գործերում, ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ուղղակիորեն տրվում է վերադաս ատյանին»: Հանձնարարականը նաև ամրագրում է.

– Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը և դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,

ՍԴՈ–782, 2 դեկտեմբերի,, 2008 թ.

8. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում նշված խնդիրը դիտարկել նաև «նույն ատյան» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, ինչպես նաև դատավորների գործուղման գործընթացի իրավակարգավորման լիարժեքության տեսանկյուններից:

ՀՀ Սահմանադրությունը, սահմանելով ՀՀ դատական համակարգի կառուցվածքը, միևնույն ժամանակ հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձևավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև դրանց առավել բարդ իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի առավել խոր մասնագիտական մոտեցում և լուծումներ: ՀՀ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաև օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն: Սահմանադրական նորմի բովանդակության նորմատիվ տարրն է կազմում այն պահանջը, համաձայն որի՝ նման դատարանը պետք է իրականացնի արդարադատություն որոշակի իրավազորության շրջանակներում. դա այդ մարմնի բացառիկ իրավասությունն է, այլ դատարան իրավասու չէ քննել նման գործեր, ինչպես նաև մասնագիտացված դատարանն իրավասու չէ քննել այլ դատարանի իրավասությանը վերապահված գործեր: Նույն կերպ, մասնագիտացված դատարանի դատավորը, որն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, որպես մասնագիտացված դատարանում դատավորի պաշտոն զբաղեցնող անձ կոչված է իրականացնելու արդարադատություն՝ բացառապես իրավունքի այդ կոնկրետ բնագավառում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքով այս խնդիրը կանոնակարգելիս հետևողականություն չի դրսևորել ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի պահանջները լիարժեք հաշվի առնելու հարցում: Այդ մասին սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև 2008 թ. սեպտեմբերի 9–ի ՍԴՈ–758 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղծելու՝ սահմանադրական նորմի տված հնարավորության իմաստը ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է տարբեր դատարանների միջև, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որտեղ գործերի բաշխումը տարբեր իրավասությամբ օժտված դատարանների միջև կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն:

….

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ բացառված չեն այնպիսի իրավիճակները, երբ անհրաժեշտություն առաջանա կառուցակարգային և գործառնական նույնաբնույթ որևէ ատյանի դատարանի դատավորի գործուղումը նույն ատյանի մեկ այլ դատարան՝ ողջամիտ ժամկետներում և արդյունավետ արդարադատություն իրականացնելու նպատակով: Ինչպես նշվեց, գործուղման ինստիտուտի գոյությունն ինքնին իրավաչափ է: Սակայն, մյուս կողմից, այդպիսի գործուղումները պետք է լինեն բացառություն և ոչ թե դառնան ընդհանուր կանոն կամ իրականացվեն գործառնական տարբեր իրավազորություն ունեցող դատարանների միջև:

ՀՀ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունից հետևում է, որ միայն 2008 թ. փետրվար–սեպտեմբեր ամիսներին Հարավային քրեական դատարան են գործուղվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների՝ 5, իսկ Հյուսիսային քրեական դատարան՝ 14 դատավոր: Վերջիններիս թիվն ավելի քան չորս անգամ գերազանցում է Հյուսիսային քրեական դատարանի դատավորների թիվը: Որպես կանոն, գործուղվել է երկուական դատավոր, և մասնագիտացված դատարանի մեկ դատավորի հետ ձևավորվել է դատարան՝ դրան վերապահելով առանձնապես ծանր քրեական գործի քննության իրավասություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման վիճակի պատճառը նաև ոչ հիմնավոր մոտեցումն է Հյուսիսային և Հարավային քրեական դատարանների կազմավորմանը: Մի դեպքում՝ նախագահի և երեք դատավորի, մյուս դեպքում նախագահի և երկու դատավորի կազմով ստեղծված դատարանները փաստորեն ի սկզբանե ձևական բնույթ են կրել: Օրինակ, Հարավային քրեական դատարանը՝ նախագահի և երկու դատավորի կազմով, միայն դատավորների օրինական արձակուրդի դեպքում գրեթե չորս ամիս չէր կարող դատական կազմ ձևավորել՝ ՀՀ դատական օրենսգրքի 18 հոդվածի 3–րդ մասի հիմքով գործ քննելու համար: Իսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է երեք դատավորի կազմով գործ քննել, ապա 4–5 ամիս անհնարին կլինի որևէ այլ գործ քննել: Դա այն դեպքում, երբ 2008 թվականի հունվար–նոյեմբեր ամիսներին այդ դատարանում մուտքագրվել է 202 գործ, իսկ 2007 թվականի նույն ժամանակահատվածում այդ դատարանի սպասարկման դատական տարածքում մուտքագրված է եղել 227 գործ:

Դատարանակազմական ոչ հիմնավոր լուծումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճռաբեկ դատարանի նախագահը ձևավորել է մասնագիտացված քրեական դատարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընտրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից, իրավաչափ չէ ու նաև կոռուպցիոն ռիսկ է պարունակում:

ՍԴՈ–849, 22 դեկտեմբերի, 2009 թ.

5. .... Դատական ակտերի նման հաջորդականությամբ վերանայումն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 1–ին մասով սահմանված հիերարխիայով, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը,....»: Այս դրույթով Սահմանադրությունն ամրագրել է ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան համակարգը:

Ըստ Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականների՝ տարբեր մոտեցում է ցուցաբերվում դատական տարբեր ատյանների իրավասությունների սահմանմանն ու դրանց իրականացման կարգերին, ընդ որում, երրորդ ատյանի դատարան բողոքներ պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնաբանմանը:

Այս մոտեցումները բխում են նաև ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, որի շրջանակներում է, որ օրենսդիրը հնարավորություն է տվել ՀՀ վճռաբեկ դատարանին ոչ բոլոր գործերը քննության ընդունել:

Այնուհանդերձ, վճռաբեկ դատարանի հայեցողական լիազորությունների շրջանակները չեն կարող անսահմանափակ լինել, և օրենքն այնպես պետք է կարգավորի հարցը, որպեսզի չխախտվեն անձի սահմանադրական իրավունքները: Այլապես դա ոչ միայն չի նպաստի արդարադատության իրականացմանը, այլև հնարավորինս կխոչընդոտի սահմանադրական նորմերի անմիջականորեն գործելուն և կխաթարի խախտված իրավունքները վերականգնելու ինստիտուտը՝ անձին զրկելով իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

ՍԴՈ–873, 13 ապրիլի, 2010 թ.

7. Վիճարկվող 118.6–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերում տեղ են գտել քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգին բնորոշ իրավակարգավորումներ, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ներկայումս գործող **երկաստիճան համակարգում** վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն **վճռաբեկ դատարանի մատչելիության** և **արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման** երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի, կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ: Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 92–րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով: Ուստի նրա որևէ կառուցակարգային կարգավիճակ չի կարող լիազորության լիարժեք կատարման խոչընդոտ հանդիսանալ: Միաժամանակ, սահմանադրական իրավակարգավորման առանցքային խնդիրներից մեկը հենց այն է, որպեսզի երաշխավորվի «գործառույթ–ինստիտուտ–լիազորություն» շղթայի օրգանական ամբողջականությունն ու լիարժեքությունը: Եթե օրենսդիրն անհրաժեշտ է համարել Հայաստանում ձևավորել մասնագիտացված վարչական դատարան՝ միայն դատական մեկ աստիճանով, իսկ վերջինիս ակտերի բողոքարկման իրավասությունը վերապահել վճռաբեկ դատարանին, ապա բողոքարկման համակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը նույնպես պետք է երաշխավորվի այս կառուցակարգային լուծումների շրջանակներում: Մասնավորապես, դա վերաբերում է նաև բողոքների ընդունման ու դրանց ըստ էության քննության առանձնահատկություններին:

Հետևաբար, վիճարկվող դրույթում վճռաբեկ դատարանի կարգավիճակի վկայակոչմամբ բողոքի ընդունելիության այնպիսի պայմաններ չեն կարող սահմանվել, ինչը կարող է արդյունավետ չդարձնել ու սահմանափակել անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակը, այդ հնարավորության ապահովման անհրաժեշտությունից թելադրված պետք է փնտրվեն ու գտնվեն դատարանակազմական լուծումները:

Մասնավորապես, վարչական դատարանի ակտերի վերաբերյալ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքում պետք է դրվի ոչ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233–րդ հոդվածի, այլև՝ 213–րդ հոդվածի իրավակարգավորման տրամաբանությունը՝ նախատեսելով դրա իրացման համապատասխան երաշխիքներ:

ՍԴՈ–1231, 6 հոկտեմբերի, 2015 թ.

5. .... Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Հայաստանում գործում է եռաստիճան դատական համակարգ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

Դատական ատյանների աստիճանակարգությունն առաջին հերթին կոչված է ապահովելու դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության վերահսկողությունը վերադաս դատարանների կողմից, դատական սխալների ժամանակին ուղղումը, որն էլ երաշխավորում է ֆիզիկական և իրավաբանական անձանց օրինական շահերի և իրավունքների առավել պաշտպանությունը:

ԴԱՏԱՎՈՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլև պարտականություն: Առանց դրա, մի կողմից՝ նորմի սահմանադրականության վերաբերյալ մտահոգությունը չի կարող փարատվել հայեցողական մոտեցմամբ, որովհետև այն պահանջում է «գնահատման» դատավարական համապատասխան ընթացակարգ և դրա իրականացման սահմանադրական լիազորություն, մյուս կողմից՝ մարդկանց իրավունքները պաշտպանելու փոխարեն հնարավոր հակասահմանադրական նորմի կիրառմամբ կխախտվեն այդ իրավունքները: Դատական պրակտիկան նաև ցույց է տալիս, որ դրանց հետագա վերականգնումը դառնում է ավելի դժվար ու հաճախ անհնարին՝ հանգեցնելով արդարադատության նկատմամբ վստահության կորստի: Ուստի խնդիրը ոչ միայն նոր հանգամանքների ինստիտուտի գործունակության ու արդյունավետության հետագա բարձրացումն է, այլև, առաջնորդվելով իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի անշեղ իրացման պահանջով, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետով ՀՀ դատարաններին վերապահված հնարավորության խելամիտ իրացումը: Իսկ դա կարող է երաշխավորվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք: Այնինչ «գնահատումը» ենթադրում է համապատասխան դատավարական ընթացակարգ ու դրա իրականացման համարժեք լիազորություն:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՍԴՈ–665, 16 նոյեմբերի, 2006 թ.

6. Դատարանների կողմից նորմատիվ ակտի բովանդակության տարբեր կերպ ընկալումը և կիրառումը կարող են ունենալ օբյեկտիվ հիմքեր: Դա է պատճառը, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87 հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ «Իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթների հակասության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, իրավական ակ-

տի ուժի մեջ մտնելու ժամկետի որոշման, իրավաբանական ուժ ունենալու հարցերի պարզաբանման, ինչպես նաև իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տրվում է իրավական ակտի պարզաբանում»:

Համաձայն նշված հոդվածի 5-րդ կետի՝ «Դատարանների նախագահների խորհուրդը դատական պրակտիկայի ամփոփման հիման վրա տալիս է օրենքների կիրառման խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանումներ: Դատարանների նախագահների խորհրդի օրենքների կիրառման պարզաբանումները ենթակա են հրապարակման»: Համաձայն օրենքի՝ նշված պաշտոնական պարզաբանումները պարտադիր բնույթ չունեն, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում անձինք իրավունք ունեն առաջնորդվել պաշտոնական պարզաբանումներով ¥հոդված 87, կետ 6¤:

ՍԴՈ-719, 28 նոյեմբերի, 2007 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական վերջին զարգացումները մասնակիորեն են լուծում քննության առարկա խնդիրը (հանձին նաև կարգապահական վարույթի ինստիտուտի (համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 155 հոդվածի)): Բացի դրանից, դատարանի բնականոն գործունեության ապահովման տեսակետից օրենքը որոշակի պարտավորություններ է դնում նաև դատարանների նախագահների խորհրդի վրա (մասնավորապես, ՀՀ դատական օրենսգիրք, հոդվ. 72):

ՍԴՈ-782, 2 դեկտեմբերի, 2008 թ.

11. Բացի դրանից, ՀՀ դատական օրենսգրքի 70 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը և Դատարանների նախագահների խորհուրդը հանդիսանում են դատական իշխանության ինքնակառավարման մարմիններ, որոնց ՀՀ դատական օրենսգրքի համապատասխանաբար՝ 71 և 72 հոդվածների 3-րդ մասերի 1-ին կետերով վերապահված է նաև դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկման իրավասություն: Դրանով հանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված նորմերում նույնպես «դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկում» բառակապակցությունը չի կարող ենթադրել «ցանկացած հարցի լուծում», առավել ևս՝ այնպիսի հարցերի, որոնք ՀՀ Սահմանադրությամբ վերապահված են պետաիշխանական լիազորություններով օժտված այլ մարմինների իրավասությանը:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-1063, 18 դեկտեմբերի, 2012 թ.

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմող Գ. Գյոզալյանը նախ բարձրացնում է արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականություն օրենսդրորեն չնախատեսելու խնդիրը:

Անդրադառնալով այդ հիմնահարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առաջ քաշված խնդիրն ուղղակիորեն չի վերաբերում ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի դրույթին, քանի որ վերջինս, և ընդհանրապես նշված հոդվածի ողջ 5-րդ մասը, սահմանում է կարգապահական վարույթ հարուցելու առիթները, այլ ոչ թե այդ վարույթի հարուցումը մերժելու կարգը կամ հնարավորությունը: Այսուամենայնիվ, իրավունք վերապահելով անձին իր դիմումով կարգապահական վարույթ հարուցելու առիթ տալ՝ օրենսդիրը նույնիսկ նույն հոդվածի 7-րդ մասի հիմքով (որում առանձին առիթների դեպքում նախատեսվում է պատասխանը չհիմնավորելու հնարավորություն) չի նախատեսել

անձի դիմումի առիթով վարույթ չհարուցելու դեպքում նրան պատճառաբանված պատասխան չտալու իրավունք: Հակառակը, տվյալ հոդվածի իրավական տրամաբանությունից բխում է անձի դիմումով վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականությունը: Հակառակ դեպքում այդ առիթը նույնպես կներառվեր հոդվածի 7-րդ մասում: Դատական պրակտիկայում է փորձ արվել ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի դրույթներին տալ այնպիսի մեկնաբանություն, որից բխեցվել է դիմողի հարցադրումը՝ վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականություն չնախատեսելու առնչությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ, **նախ՝** ինքնին խնդրահարույց է ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը: Այն չունի պատշաճ իրավական հիմնավորվածություն՝ այդ մասի համատեքստում վարույթի հարուցումը մերժելիս դրա պատճառների մասին հիմնավորումներ չտալու դրույթ նախատեսելու առումով: **Երկրորդ՝** երբ օրենսգիրքը նախատեսել է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթը նաև անձի դիմումն է, և այս առիթն ընդհուպ չի ներառել հիշյալ հոդվածի 7-րդ մասում, ապա այդ դիմումը չի կարող մնալ անպատասխան կամ այն մերժելու դեպքում չտրվի մերժման համապատասխան հիմնավորում: Հակառակ դեպքում խախտվում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածով նախատեսված իրավունքը, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»: **Իրավական պրակտիկան պետք է անվերապահորեն հիմք ընդունի անձի՝ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու սահմանադրական իրավունքի ապահովման անհրաժեշտությունը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:** Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրորեն ամրագրված «պատշաճ պատասխան» եզրույթը չի ենթադրում միայն պատասխանի ձևը կամ առկայությունն ընդհանրապես: Այն բովանդակային առումով նշանակում է, որ պատասխանը պետք է լինի իրավաչափ ու անհրաժեշտ հիմնավորումներով: Իրավական պետությունում այս պահանջը չի կարող շրջանցել որևէ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմին կամ պաշտոնատար անձ, այդ թվում՝ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը: **Սահմանադրական հիշյալ պահանջը չկատարելն արդարացնող ցանկացած պատճառաբանություն, այդ թվում՝ օրենքին կատարվող հղում, անհիմն է, քանի որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:**

6. .... Էական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությունն արդարադատության խորհրդի գործառույթները դասակարգում է երկու խմբի՝ միջանկյալ և վերջնական լուծում տվող գործառույթների: Համաձայն ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի՝ վերջնական լուծում բովանդակող գործառույթը միայն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելն է: Մյուս բոլոր դեպքերում արդարադատության խորհուրդը ՀՀ Նախագահի լուծման ենթակա հարցերի վերաբերյալ տալիս է առաջարկություններ կամ ներկայացնում է եզրակացություն: Ինչ վերաբերում է դատավորի լիազորությունների դադարեցման մասին ՀՀ Նախագահին առաջարկ ներկայացնելուն, ապա **իր բնույթով պաշտոնանկության այս ընթացակարգը ենթադրում է հարցի քննարկման երեք փուլ՝ վարույթ հարուցող սուբյեկտ, արդարադատության խորհուրդ, Հանրապետության Նախագահ:** Նրանցից յուրաքանչյուրը կոչված է բացահայտելու իրավական ճշմարտությունը և արդարադատության համակարգի արդյունավետ գործունեության շահերից ելնելով՝ օրենքով նախատեսված առիթի ու հիմքերի շրջանակներում, սահմանված կարգով **վերաբերմունք արտահայտել դատավորի կողմից իր պաշտոնական պարտականությունների պատշաճ կա-**

տարման վերաբերյալ: Մեթոդաբանական նշանակության կարևոր հանգամանքն այն է, որ առավելապես գործող դատավորներից ու նաև գիտնական իրավաբաններից կազմված այդ մարմինը սահմանադրական իր իրավասության շրջանակներում ու օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում **գնահատում է, թե իր իսկ կողմից դատավորի պարտականությունների համար լիազորված պաշտոնատար անձը որքանով է հավատարիմ իր երդմանը և ինչպես է կատարում պաշտոնական պարտականությունները:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս համակարգն ամբողջական է՝ իր գործառույթների կատարումը ներհամակարգային կայունության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից երաշխավորելու հարցում: **Այն դուրս չի գալիս դատավորի պաշտոնական պարտականությունների կատարումը, նրա ծառայողական պիտանելիությունը գնահատելու սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներից, ինչն այս մարմնի բացառիկ իրավասությունն է:** Այս հարցում դատարաններին վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստազրկեր արդարադատության խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ մարմնի:

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 158–րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1–ին մասի այն սահմանմանը, համաձայն որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ **արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը:** Վերջինս փաստվում է նաև ՀՀ դատական օրենսգրքի 158–րդ հոդվածի 1–ին մասում անմիջապես հաջորդող այն կանոնակարգմամբ, համաձայն որի՝ «Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական զարգացումները, ելնելով նաև սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, կարող են առավել հստակ դարձնել «գործում է որպես դատարան» եզրույթը՝ նկատի ունենալով, որ որպես անկախ մարմին, որի գործառույթները կանխորոշված են սահմանադրական մակարդակով, դատավորի պաշտոնական պարտականության կատարմանն առնչվող հարցերը քննության առնելիս նրա իսկ իրավունքների պաշտպանության երաշխիքներից ելնելով **արդարադատության խորհուրդը գործում է հարցի քննարկման դատարանին բնորոշ ընթացակարգով: Օրենսդիրը կարող է նաև քննության առարկա դարձնել այդ մարմնի գործունեության առանձին կանոնակարգման խնդիրը՝ ուշադրություն դարձնելով վերջինիս սահմանադրական գործառույթներին ներդաշնակ հարցերի քննարկման կանոնակարգային լուծումներին՝ նկատի ունենալով, որ արդարադատության խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելի չեն: Էական է նաև կարգապահական հանձնաժողովի և արդարադատության խորհրդի հայեցողության սահմանների օրենսդրական առավել հստակեցումը:**

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

7. .... ՀՀ դատական օրենսգրքի 89, 90 հոդվածներով սահմանված են դատավորի պաշտոն զբաղեցնող անձանց պարտադիր վարքագծի կանոնները: Նույն օրենսգրքի մի շարք

այլ հոդվածների համաձայն ընդհանուր իրավասության, քաղաքացիական, քրեական, վարչական, վերաքննիչ դատարանների նախագահների, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի անմիջական պարտականությունն այդ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելը և դատավորի կողմից նրա անմիջական պարտականությունների կատարմանը հետևելն է (25, 30, 34, 38, 49 և 61 հոդվածներ), ընդ որում, դատարանների նախագահների այդ պարտականության ոչ պատշաճ իրականացումը նույն օրենսգրքի 165 հոդվածի 1-ին մասի համաձայն նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

ՍԴՈ-765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

11. .... 2007 թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը՝ հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի դրույթները, կայացրել է N-79Ա հրամանը, որով որոշվել է 2007 թ. ապրիլի 7-ին ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների հավատարմագրերի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2009 թ. հունվարի 10-ը: Վճռաբեկ դատարանի նախագահի այս հրամանի օրինականությունը վիճարկվել է ՀՀ վարչական դատարանում: Վերջինս 07.04.2008 թ. իր վճռով մերժել է նշված հրամանն առոչինչ ճանաչելու վերաբերյալ պահանջը: Վճռի պատճառաբանությունը հիմնականում հանգում է նրան, որ «Դատարանը .... հիմք ընդունելով, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29.1. հոդվածի համաձայն՝ փաստաբաններին հավատարմագիր տրամադրելը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունն է, գտնում է, որ հավատարմագրերի տրամադրումը որոշակի ժամկետով չի բացառում դրա գործողության ժամկետի երկարաձգումը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից»: Դատարանի նշված իրավական դիրքորոշումը վկայում է այն մասին, որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի՝ փաստաբաններին հավատարմագրեր տրամադրելու լիազորությունը մեկնաբանվել և կիրառվել է որպես հայեցողական լիազորություն: Վարչական դատարանի այս վճիռը, որի դեմ վճռաբեկ բողոքի քննության ընդունումը մերժվել է, իրավական հիմք է ստեղծում հետագայում ևս վճռաբեկ դատարանի նախագահի կողմից հավատարմագրերի գործողության ժամկետն իր հայեցողությամբ և ցանկացած ժամկետով երկարաձգելու համար: Նման մոտեցման արդյունքում, սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտվում են փաստաբանի ինստիտուտի գործունեության հիմքում ընկած այնպիսի կարևորագույն սկզբունքներ, ինչպիսիք են փաստաբանի անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքները:

ՍԴՈ-782, 2 դեկտեմբերի, 2008 թ.

9. .... Դատարանակազմական ոչ հիմնավոր լուծումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճռաբեկ դատարանի նախագահը ձևավորել է մասնագիտացված քրեական դատարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընտրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից, իրավաչափ չէ ու նաև կոռուպցիոն ռիսկ է պարունակում:

11. ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Վճռաբեկ դատարանի նախագահը ապահովում է վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն. «Վճռաբեկ դատարանի նախագահը իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»: Նշված երկու նորմերի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով վճռաբեկ դատարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն

հակասում օրենքով և, մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված՝ դատավորներին գործուղելու վերաբերյալ լիազորությունը չի բխում նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից:

ՍԴՈ-786, 23 դեկտեմբերի, 2008 թ.

5. .... Սահմանադրական դատարանն իր նշված որոշման մեջ նաև նշել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով վճռաբեկ դատարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով և, մասնավորապես, օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին: Սահմանադրական դատարանը գտել է նաև, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված՝ դատավորներին գործուղելու վերաբերյալ լիազորությունը չի բխում նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից:

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ-563, 6 մայիսի, 2005 թ.

9. .... Ի տարբերություն վարչական մարմինների՝ դատական մարմինների կողմից անձի դատավարական կամ նյութական իրավունքի խախտումը կարող է վերացվել միայն վերաքննիչ դատարանի կամ վճռաբեկ դատարանի կողմից, համապատասխանաբար՝ վերաքննիչ բողոքի կամ վճռաբեկ բողոքի հիման վրա: ՀՀ գործող օրենսդրությամբ վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն միայն գործին մասնակցող անձինք:

ՍԴՈ-690, 9 ապրիլի, 2007 թ.

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

ա) ՀՀ Սահմանադրությամբ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատական գործառույթները տարանջատված են սահմանադրական արդարադատական գործառույթից, դրանց իրացումը նախատեսում է կառուցակարգային տարբեր լուծումներ և համարժեք լիազորություններ,

բ) ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները, վճռաբեկ դատարանը, ինչպես նաև մասնագիտացված դատարանները՝ դատական իշխանության շրջանակներում կազմում են գործառնական համակարգային ամբողջություն: Այդ համակարգը կառուցված է գործառնական աստիճանակարգման և արդարադատական գործառույթների ներհամակարգային տարանջատման սկզբունքներով, ներքևից վերև, ընդ որում, այդ աստիճանակարգում բարձրագույն դատական ատյանը ՀՀ վճռաբեկ դատարանն է, որն ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայող դատարան է,

գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները,

դ) ՀՀ վճռաբեկ դատարանի արդարադատական գործառույթը վճռաբեկության կարգով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելն է, այսինքն.

– այն պետք է առաջին հերթին իրականացվի օրենքների և դրանց կատարումն ապահովող նորմատիվ այլ այնպիսի ակտերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ, որոնք

ստորադաս դատարանների կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց տարաբնույթ իրավաընկալման արդյունքում,

– վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառույթի իրականացմամբ, ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելիս և դատական սխալներն ուղղելիս վճռաբեկ դատարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր,

– որպես սահմանադրորեն նախատեսված շրջանակներում բարձրագույն դատական ատյան՝ վճռաբեկ դատարանը, իր լիազորություններին համապատասխան, կոչված է երաշխավորելու ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարաններում մարդու իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների, արդարության, հավասարության պայմաններում և ողջամիտ ժամկետում դատաքննության՝ անձի սահմանադրական իրավունքների անմիջական գործադրումը,

– վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից է անմիջականորեն բխում ոչ միայն ընդհանուր և մասնագիտացված ստորադաս դատարանների թույլ տված դատական սխալներն իր իրավասության շրջանակներում ուղղելը, այլև այդ դատարանների կողմից կիրառված նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արտահայտելը:

7. Ելնելով վերոհիշյալ հետևություններից և գործի հանգամանքներից, սահմանադրական դատարանը կարևորում է, թե կառուցակարգային ինչպիսի երաշխիքներ և ընթացակարգեր են նախատեսված գործող օրենսդրության ակտերում ապահովվելու համար վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթի իրականացումը, բացահայտել քննության առարկայի շրջանակներում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման երաշխավորվածությունը քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման գործող օրենսդրական կարգում:

....

10. .... Այսպիսով, օրենսդրորեն հստակեցված են իրավական այն պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն իրավասու սուբյեկտի (այդ թվում՝ քաղաքացու) դիմումը (վճռաբեկ բողոքը) ճանաչվում իրավաչափ, և այն սահմանված կարգով ներկայացվելու ձևով դրսևորված կամաարտահայտման արդյունքում է միայն ՀՀ վճռաբեկ դատարանն իրավասու գործադրել սահմանադրաիրավական կարգավիճակից բխող օրենսդրական իր լիազորությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի վերոհիշյալ նորմատիվ պայմանները սահմանադրական դատարանի գնահատմամբ նպատակ ունեն ոչ թե անձանց ծանրաբեռնել ձևական պահանջներով, այլ պայմանավորված են վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթով:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան պարզել ու գնահատել բողոքատու անձանց փաստարկների բնույթը, իրավական նշանակությունը և կայացնել պատճառաբանված որոշում: Վճռաբեկ վարույթում բողոքատու անձանց առջև ՀՀ վճռաբեկ դատարանի կարգավիճակով պայմանավորված իրավական պահանջների առաջադրումը՝ կապված բողոքի բովանդակության, դրա հիմնավորման և ներկայացման կարգի հետ, իրենց հիմնական բովանդակությամբ տարբերվում են վերաքննիչ վարույթում գործող կարգից: Այդ պահանջներն առնչվում են իրավունքի, դրա մեկնաբանման ու իրացման, այլ ոչ թե փաստերի ձեռքբերման, նախնական հետազոտման ու գնահատման հետ: Ուստի վճռաբեկ դատարանի կողմից «էական նշանակություն», «ծանր հետևանք» և «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած դատական ակտ» արտահայտությունների՝ դատական գործերի հան-

գամանքներից բխող բովանդակային հստակեցումը, մեկնաբանումը, պատճառաբանումը պայման է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետում և 231.2. հոդվածի 1-ին կետում նախանշված հիմքերին համապատասխան՝ վճռաբեկ վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը կանխատեսելի դարձնելու համար:

ՍԴՈ-691, 11 ապրիլի, 2007 թ.

7. .... Այդ հայեցակարգային մոտեցումով են պայմանավորված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 422 հոդվածում 2006 թ. մայիսի 25-ին և հուլիսի 7-ին կատարված փոփոխությունները, որոնցով, նույնիսկ օրենսգրքի 103 հոդվածի 10-րդ կետի առկայության պայմաններում, վճռաբեկ դատարանի որոշումներին ներկայացվող պահանջները վերապահվեցին միայն գործի քննության արդյունքներով կայացված որոշմանը, իսկ այդ հոդվածի 3-րդ մասում ամրագրվեց. «Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, ապահովի օրենքի ճիշտ մեկնաբանությունը, նպաստի իրավունքի զարգացմանը»:

Միաժամանակ, քրեական դատավարության օրենսգիրքը, ինչպես նշվեց, դարձյալ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակից ելնելով, 07.07.2006 թ. լրացվեց նոր՝ 414.1. հոդվածով՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին: Սակայն տվյալ հոդվածում վճռաբեկ բողոքը վերադարձնելու որոշման պատճառաբանման պահանջ չդրվեց:

....

Սահմանադրական դատարանն ընդունում է, որ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք: Սակայն օրենքը պետք է հաշվի առնի, որ ելնելով վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթից, նա իր լիազորություններն առավել ամբողջական կկատարի, եթե վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանմանն օրենսդրական պահանջ ներկայացվի: Նման մոտեցումը ոչ միայն լուրջ ներդրում կլինի դատական տվյալ ատյանի կողմից առավել ամբողջական նախադեպի ձևավորման հարցում, այլ նաև էապես կնվազեցնի չհիմնավորված բողոքների քանակը և կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը:

ՍԴՈ-709, 20 հուլիսի, 2007 թ.

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշվում է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝ «վերանայվող դատական ակտը հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշմանը»: Այս դրույթը վճռաբեկ դատարանի կողմից օրենքների միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրականացման գործուն միջոցներից է: Այն հնարավորություն է տալիս վճռաբեկ դատարանին հետևողական լինել ստորադաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարման նկատմամբ: Վճռաբեկ դատարանի նշված լիազորությունը կոչված է նաև որոշակիորեն ապահովելու արդարադատության ոլորտում իրավական կանխատեսելիության և անձի իրավունքների պաշտպանության սկզբունքները:

ՍԴՈ-720, 11 դեկտեմբերի, 2007 թ.

5. ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և դատական համակարգում նրա դերով են պայմանավորված դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում 2006 թվականի հուլիսի 7-ի օրենսդրական փոփոխությունները, որի արդյունքում վճռաբեկ դատարանին, ի լրումն այլ լիազորությունների, իրավունք է վերապահվում օրինական ուժ տալ ստորադաս դատարանների դատական ակտերից մեկին, որը հիմնավոր կհամարվի՝ դրանով իսկ եզրափակելով տվյալ գործով քննությունն ընդհանուր իրավասության դատարաններում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի նախորդ խմբագրությունը հանգեցնում էր նրան, որ երբեմն պրակտիկայում հնարավոր չէր լինում խուսափել այնպիսի դեպքերից, երբ գործի քննությունն ընկնում էր շրջապտույտի մեջ և դատական քաշքշուկի պատճառով ստեղծվում էր ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով, Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով և մի շարք այլ իրավական ակտերով երաշխավորված՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի խախտման վտանգ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 3, 4 և 6 կետերով նախատեսված լիազորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանին նման լիազորություններ վերապահելը նպատակ է հետապնդել կանխելու այն դատական շրջապտույտը, որը գոյություն է ունեցել մինչ այդ: Այդ լիազորությունների միջոցով դատական շրջապտույտի կանխումն իր հերթին հնարավորություն է ընձեռում երաշխավորել դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու սահմանադրաիրավական պահանջի իրացումը, ինչպես նաև ապահովել իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

7. Սահմանադրական դատարանը միաժամանակ ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետով նախատեսված լիազորությունը ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքները չեն փոխվում և՛ առաջին ատյանի դատարանի, և՛ վերաքննիչ դատարանի դատաքննության արդյունքում, և դատավճիռներով հաստատված միևնույն փաստը տարբեր դատարանների կողմից տարբեր քրեաիրավական գնահատականի է արժանանում: Նման գործը վճռաբեկության կարգով վերանայելիս ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է ուժի մեջ թողնել իրար հակասող դատական ակտերից մեկը: Այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն որևէ ատյանի դատարանի կողմից քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը:

ՍԴՈ-754, 27 մայիսի, 2008 թ.

5. Դիմողի փաստարկները հիմնականում առնչվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության վերաբերյալ դրույթին, որի սահմանադրականության հարցն արդեն իսկ քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանում:

Սահմանադրական դատարանը իր՝ 2007 թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ առանձնակիորեն կարևորել է այն իրավական երաշխիքներն օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտությունը, որոնք կոչված են ապահովելու վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումը: Մասնավորապես, սահմանադրական դատարանն իր որոշման 11-րդ կետում շեշտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ կետում կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ըմբռնելի բովանդակությունը սահմանելը, բողոքատու անձանց կողմից վճռաբեկ բողոքն օրենսգրքի 230 հոդվածի պահանջներին ըստ ձևի համապատասխանեցնելու պայմանները, կարգը և ժամկետն օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա վճռաբեկ վարույթում առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանն իր նշված որոշման եզրակափակիչ մասի 3-րդ կետում ամրագրել է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը (2006 թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) .... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման **պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու**, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել Հայաստանի Հանրա-

պետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»: Այսինքն՝ վճռաբեկ դատարանի կողմից՝ նշված հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումն ապահովող կարևոր իրավական երաշխիք պետք է հանդիսանար նաև վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պարտադիր պայմանն օրենքով հստակ սահմանելը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական դատարանի նշված որոշման ընդունումից ի վեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում վերոհիշյալ իրավական երաշխիքները լիարժեքորեն չեն ապահովվել:

Այսպես՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թ. նոյեմբերի 28-ի օրենքի 75 հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233 հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, բացառությամբ սույն օրենսգրքի 234 հոդվածի 1 կետի 1-ին ենթակետի բացակայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքերի»: Նույնաբովանդակ դրույթ է ըստ էության ամրագրված նաև ՀՀ դատական օրենսգրքի 50 հոդվածի 4-րդ մասում. վերջինս ևս վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պահանջը չի տարածում այն որոշումների վրա, որոնցում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքն այն է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նման բացառություն սահմանելով, լիարժեքորեն չի ապահովել սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման կատարումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրը դեռևս չի սահմանել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 3-րդ մասում (գործող օրենսգրքի 233 հոդվածի 3-րդ մաս) կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ըմբռնելի բովանդակությունը:

Վճռաբեկ բողոքի թերությունները վերացնելու համար վճռաբեկ դատարանի կողմից ժամկետ սահմանելու հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացման ապահովմանը միտված անհրաժեշտ իրավական երաշխիքներն օրենսդրորեն ոչ լիարժեքորեն ամրագրելու պայմաններում «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.02.2007 թ. ՀՕ-98-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածը (07.07.2006 թ. խմբագրությամբ) լրացվել է վիճարկվող դրույթով:

Փաստորեն, մի կողմից՝ չեն ստեղծվել վերոհիշյալ հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ, մյուս կողմից՝ վիճարկվող դրույթով բացառվել է կրկին վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունն այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը չի սահմանում բողոքի թերությունները շտկելու համար ժամկետ: Այսինքն՝ բացակայում են ինչպես հայեցողական լիազորության կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այնպես էլ այդ հայեցողական լիազորության ոչ իրավաչափ իրականացումը հաղթահարելու միջոցը:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

12. .... ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարան-ները և վճռաբեկ դատարանը: Նույն հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներն ամրագրում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, այդ թվում՝ նաև արդարադատության մատչելիության իրավունքը: Նշված սահմանադրական դրույթների համադրված մեկնաբանությունը՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո, թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող դատական պաշտպանության իրավունքը ներառում է նաև վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, որն իր հերթին ներառում է վճռաբեկ ատյանի մատչելիության իրավունքը, որը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները մանրամասնված են սահմանադրական դատարանի 2007 թ. ապրիլի 9-ի ՍԴՈ–690 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից:

ՍԴՈ–818, 28 հուլիսի, 2009 թ.

6. .... ՀՀ վճռաբեկ դատարանը, գործելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իր սահմանադրաիրավական գործառույթի, այն է՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի և այդ գործառույթն իրականացնելիս՝ իրավունքի զարգացմանը նպաստելու իրավասության շրջանակներում, պարտավոր է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ մեկնաբանել խնդրո առարկա հասկացությունների օրենսդրական բովանդակությունը՝ հնարավորություն տալով իրավունքի համապատասխան սուբյեկտներին կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները: Վճռաբեկ դատարանի այս պարտավորությունը շեշտադրված է նաև սահմանադրական դատարանի ՍԴՈ–690 որոշման 10-րդ կետում:

ՍԴՈ–849, 22 դեկտեմբերի, 2009 թ.

5. .... Այս մոտեցումները բխում են նաև ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի դրույթներից, որի շրջանակներում է, որ օրենսդիրը հնարավորություն է տվել ՀՀ վճռաբեկ դատարանին ոչ բոլոր գործերը քննության ընդունել:

Այնուհանդերձ, վճռաբեկ դատարանի հայեցողական լիազորությունների շրջանակները չեն կարող անսահմանափակ լինել, և օրենքն այնպես պետք է կարգավորի հարցը, որպեսզի չխախտվեն անձի սահմանադրական իրավունքները: Այլապես դա ոչ միայն չի նպաստի արդարադատության իրականացմանը, այլև հնարավորինս կխոչընդոտի սահմանադրական նորմերի անմիջականորեն գործելուն և կխաթարի խախտված իրավունքները վերականգնելու ինստիտուտը՝ անձին զրկելով իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

.... 7. Օրենսգրքի վիճարկվող հոդվածի 2-րդ մասի իրավական բովանդակությունից բխում է, որ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության քննող դատարան չէ, այլ ստուգում է դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, հետևաբար՝ անձը չի կարող

վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե դատական ակտը նույն հիմքերով չի բողոքարկել վերաքննիչ դատարանում: Այսինքն՝ բողոքում նշված հիմքի (հիմքերի) վերաբերյալ ստորադաս դատական ատյաններում քննություն չի կատարվել, ապացույցներ չեն հավաքվել, հետազոտվել ու գնահատվել, որը վճռաբեկ դատարանին հնարավորություն կտար ստուգելու տվյալ դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

ՍԴՈ–852, 19 հունվարի, 2010 թ.

7. .... Ինչ վերաբերում է վճռաբեկության կարգով վերաքննիչ դատական ակտերի վերանայմանը, ապա վերջինս հանդես է գալիս որպես վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը շտկելու դատավարական երաշխիք, որի միջոցով վճռաբեկ դատարանն իրացնում է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթը, և վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման դեպքում վերանայման իրավունքի իրացման հնարավորությունն իրավաչափորեն սահմանափակվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և գործառնական դերով:

ՍԴՈ–873, 13 ապրիլի, 2010 թ.

7. Վիճարկվող 118.6–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերում տեղ են գտել քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգին բնորոշ իրավակարգավորումներ, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ներկայումս գործող **երկաստիճան համակարգում** վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն **վճռաբեկ դատարանի մատչելիության** և **արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման** երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի, կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ: Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 92–րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով: Ուստի նրա որևէ կառուցակարգային կարգավիճակ չի կարող լիազորության լիարժեք կատարման խոչընդոտ հանդիսանալ: Միաժամանակ, սահմանադրական իրավակարգավորման առանցքային խնդիրներից մեկը հենց այն է, որպեսզի երաշխավորվի «գործառույթ–ինստիտուտ–լիազորություն» շղթայի օրգանական ամբողջականությունն ու լիարժեքությունը: Եթե օրենսդիրն անհրաժեշտ է համարել Հայաստանում ձևավորել մասնագիտացված վարչական դատարան՝ միայն դատական մեկ աստիճանով, իսկ վերջինիս ակտերի բողոքարկման իրավասությունը վերապահել վճռաբեկ դատարանին, ապա բողոքարկման համակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը նույնպես պետք է երաշխավորվի այս կառուցակարգային լուծումների շրջանակներում: Մասնավորապես, դա վերաբերում է նաև բողոքների ընդունման ու դրանց ըստ էության քննության առանձնահատկություններին:

Հետևաբար, վիճարկվող դրույթում վճռաբեկ դատարանի կարգավիճակի վկայակոչմամբ բողոքի ընդունելիության այնպիսի պայմաններ չեն կարող սահմանվել, ինչը կարող է արդյունավետ չդարձնել ու սահմանափակել անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակը, այդ հնարավորության ապահովման անհրաժեշտությունից թելադրված պետք է փնտրվեն ու գտնվեն դատարանակազմական լուծումները:

Մասնավորապես, վարչական դատարանի ակտերի վերաբերյալ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքում պետք է դրվի ոչ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օ-

րենսգրքի 233–րդ հոդվածի, այլև՝ 213–րդ հոդվածի իրավակարգավորման տրամաբանությունը՝ նախատեսելով դրա իրացման համապատասխան երաշխիքներ:

ՍԴՈ–1099, 31 մայիսի, 2013 թ.

6. .... Ներկա պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ նպատակ է հետապնդում վճռի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում **ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ:** Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաև այլ հոդվածներում (մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8–րդ հոդվածի 4–րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38–րդ հոդվածի 2–րդ մաս), ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին:

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

10. Սահմանադրական դատարանն էական է համարում նաև այն հանգամանքը, որ գործի քննության ընդունման փուլում վճռաբեկ դատարանը հաճախ իրականացնում է գործն ըստ էության լուծելու գործառույթ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությամբ առավել հստակ պետք է սահմանազատվեն վճռաբեկ դատարանի կողմից գործը քննության ընդունելու և գործով ըստ էության որոշում կայացնելու դատավարական ընթացակարգերն ու ընդունվող որոշումներին ներկայացվող պահանջները: Անհրաժեշտ հստակեցման կարիք ունի նաև «վերջնական դատական ակտ» հասկացությունը: Այն հաճախ շփոթում են վերադաս դատարանի կողմից կայացված ակտի հետ: Եթե քաղաքացին դիմել է վճռաբեկ դատարան և վերջինս մերժել է նրա դիմումը քննության ընդունել, դա չի նշանակում, որ այդ որոշումն է վերջնական դատական ակտ, ինչպիսի մեկնաբանության հանդիպում ենք ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի առանձին որոշումներում, ինչը փաստվեց նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցչի պարզաբանումներում:

ՍԴՈ–1192, 3 մարտի, 2015 թ.

7. Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: **Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները:** Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ:

ՀՀ վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի նախատեսումը լիարժեքորեն կայացած և գործուն փաստաբանական համակարգի պարագայում կոչված կլինի նպաստելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացմանը: Նման մոտեցման պարագայում ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյանում ևս՝ **ինչպես վարչական, այնպես էլ քաղաքացիական իրավահարաբերություններից բխող բողոքների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել անձի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների անտեսմամբ կամ անհամաչափ սահմանափակմամբ:** Այսինքն, նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Այս համատեքստում սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանն իր ՍԴՈ-1167 որոշման մեջ ամրագրել է. «.... ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման»: Նշվածի համատեքստում սահմանադրական դատարանն էական է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ, օրինակ, սահմանադրական արդարադատության մարմնում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կողմերը սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ և (կամ) ներկայացուցիչների միջոցով:

20. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–652, 18 հոկտեմբերի, 2006 թ.

5. .... Գործի հանգամանքների պարզման արդյունքում արձանագրելով այս իրողությունները, սահմանադրական դատարանը, այնուամենայնիվ, Սահմանադրությամբ լիազորված չէ գնահատել հետաքննության մարմնի, դատախազի կամ ընդհանուր իրավասության դատարանների որոշումների ու վճիռների սահմանադրականությունը: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 93 հոդվածը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է: Իր հերթին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը պարտավորեցնում է սահմանադրական դատարանին՝ ապահովել ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: Դա իրականացնելու համար սահմանադրական դատավարության հիմնական սկզբունքներից մեկն է համարվում գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում ամրագրված է, որ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով իր որոշումներն ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ինչպես նաև Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ քննության առարկա գործի հանգամանքների՝ գործնականում չի ապահովվել ու պաշտպանվել քաղաքացու՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով ամրագրված իրավունքները:

ՍԴՈ–668, 28 նոյեմբերի, 2006 թ.

6. Գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ քաղ. դատ. օր. 218 հոդվածի՝ դիմողի կողմից վիճարկվող նորմի և ՀՀ Սահմանադրության նորմերի միջև առկա չէ որևէ անորոշություն: Դիմողը նորմի հակասահմանադրականության որևէ փաստարկ չի ներկայացնում, այլ առաջ է քաշում այդ նորմի կիրառման պարագայում դատարանների վճիռների հիմնավորվածության խնդիրը, որի գնահատումը սահմանադրական դատարանի իրավասության մեջ չի մտնում: Ընդհանուր իրավասության դատարանների իրավասության ենթակա քաղաքացիաիրավական վեճերը լուծելու հարցը չի կարող դառնալ սահմանադրական արդարադատության առարկա, որի միջոցները տվյալ համատեքստում չեն կարող համարժեք լինել դիմողի շահերի պաշտպանության համար:

ՍԴՈ–690, 9 ապրիլի, 2007 թ.

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

ա) ՀՀ Սահմանադրությամբ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատական գործառույթները տարանջատված են սահմանադրական արդարադատական գործառույթից, դրանց իրացումը նախատեսում է կառուցակարգային տարբեր լուծումներ և համարժեք լիազորություններ,

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

17. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական և սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 և 94–րդ հոդվածների պահանջներից և երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում:

ՍԴՈ–851, 14 հունվարի, 2010 թ.

6. .... Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար պատասխանատվություն սահմանող նախկին և գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է նաև, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1–րդ հոդվածի ուժը կորցնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 343–րդ հոդվածի 1–ին մասում վիճարկվող դրույթի ամրագրման արդյունքում վերջինում նշված սահմանափակ թվով սուբյեկտների շրջանակից դուրս գտնվող սուբյեկտների նկատմամբ տևական ժամանակ պատասխանատվության որևէ միջոց ընդհանրապես նախատեսված չի եղել: Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.1–րդ հոդվածն ուժը կորցրել է 2006 թ. փետրվարի 4–ին, նույն օրն ընդունված քրեական օրենսգրքի հոդվածով՝ նախատեսված արարքի դեպքում կիրառելի է համարվել քրեական պատասխանատվություն միայն վկայի, տուժողի և պաշտպանի նկատմամբ: Սկսած 2007 թ. մարտի 7–ից, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում (համապատասխանաբար՝ 314.1 և 115–րդ հոդվածներ) կատարված փոփոխությունների արդյունքում ամրագրվել է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորող անձանց պատասխանատվության ենթարկելու դատարանի լիազորությունը: Իսկ ՀՀ դատական օրենսգիրքը, որի 63–րդ հոդվածով սահմանվեցին դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար դատական սանկցիաները՝ գրեթե բառացիորեն կրկնելով քրեական դատավարության օրենսգրքի դրույթները, ուժի մեջ է մտել 2007 թ. մայիսի 18–ին: Բացի դրանից, եթե ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխությունների արդյունքում հետագայում նախատեսվեց պատասխանատվություն քաղաքացիական և քրեական դատավարության շրջանակներում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար, ապա նույն արարքը, որը դրսևորվում է սահմանադրական դատավարության շրջանակներում, օրենքով պատասխանատվության որևէ միջոց նախատեսված չէ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 50–րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստում կարգը խախտելու դեպքում սահմանադրական դատարանն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում նշանակելու տուգանք՝ օրենքով սահմանված կարգով և չափով, ինչը, սակայն, որևէ օրենքով նախատեսված չէ:

ՍԴՈ–906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

6. .... Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված նաև սահմանադրական արդարադատության բնագավառում, որտեղ, կոնկրետ վերահսկողությունից զատ, նախատեսված է նաև վե-

րացական վերահսկողության ինստիտուտը, որի շրջանակներում ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, առավել ևս՝ առաջին մասի 8-րդ կետերում նշված սուբյեկտները, իրավական նորմերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելիս հանդես են գալիս ոչ միայն հանրային շահերի, այլ նաև տվյալ իրավանորմի կիրառման արդյունքում տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանը՝ «Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով»: Միաժամանակ, սահմանադրական արդարադատության բնագավառում գործում է նաև կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նկատառումներով այլ սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, որն իրացվում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ և 8-րդ կետերին համապատասխան:

ՍԴՈ-943, 25 փետրվարի, 2011 թ.

11. .... Սահմանադրական դատարանը ելնում է այն հիմնարար դրույթից, որ սահմանադրական արդարադատության իմաստը սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորումն է, և ոչ մի ընթացակարգային նորմ կամ դրա ոչ հստակ ձևակերպում չի կարող սահմանադրական գործառույթի իրացման խոչընդոտ հանդիսանալ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՆԳԱՏԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՍԴՈ-747, 4 ապրիլի, 2008 թ.

5. .... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասին և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության կողմ հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 և 32-րդ հոդվածներին համապատասխան՝ գործի քննությունը ենթակա է կարճման, եթե դիմումը չի համապատասխանում նշված պահանջներին:

ՍԴՈ-751, 15 ապրիլի, 2008 թ.

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ օրենքի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը, այդ հոդվածին համապատասխան, հարկ է համարում անդրադառնալ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի սահմանադրականության հարցին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ այս դրույթի հիման վրա դատարանների կողմից վերանայվում են միայն այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա սահմանադրական դատարանն ընդունել է օրենքի

կիրառված դրույթի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում:

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը երաշխավորում է անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, օրենքով այդ իրավունքն իրացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, սակայն, գործնականում ստեղծվում է մի այնպիսի իրավիճակ, երբ մեկ այլ անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելը խոչընդոտում է անձին իրացնելու իր՝ սահմանադրական դատարան դիմելու սահմանադրական իրավունքը: Այսինքն՝ մի անձի իրավունքի իրացումը կանխվում է մեկ այլ անձի կողմից իր իրավունքի իրացման փաստով, ինչի արդյունքում նրանց միջև ստեղծվում է նաև անհավասար վիճակ:

Սահմանադրական իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելու՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի այդ իրավունքի իրացումը կախվածության մեջ չդրվի տվյալ անձի կամքից անկախ առաջացած որևէ հանգամանքից: Հետևաբար, յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում օգտվելու սահմանադրական դատարանի միջոցով տրամադրվող իրավական պաշտպանությունից: Նման հնարավորությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաև այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարան դիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: Դա նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջն է, քանի որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3^2 բաժնում սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը կերաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես

նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը: Անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասերի ուժով: Այլապես, սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանության իրավունքը կդառնան անիրական և երևութական՝ զուրկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից:

ՍԴՈ-758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

11. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման միջոցով անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է բացառապես վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների ակտերի վերանայում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկվել **դատարանի վերջնական ակտով** կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհատական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի **վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը**, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում. օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետը հնարավոր է համարում սահմանադրական դատարանում այնպիսի օրենքի դրույթի սահմանադրականության վիճարկում, որը կիրառվել է որպես վերջնական դատական ակտ հանդիսացող՝ վճռաբեկ դատարանի կամ վերաքննիչ դատարանի ակտով, սակայն չի կիրառվել առաջին ատյանի դատարանի ակտով: Նման իրավիճակում, այս կամ այն օրենքի դրույթը սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու դեպքում սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայումը դառնում է անիմաստ և անհնարին. սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է միայն վերջնական դատական ակտի վերանայում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ անհատական դիմումների քննության ընդունման առնչությամբ սահմանադրական դատարանում արդեն ձևավորված է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի վերոհիշյալ մեկնաբանությանը համապատասխան իրավակիրառական պրակտիկա:

Բացի դրանից, սահմանադրական դատարանում կարող են վիճարկման առարկա դառնալ նաև այն դատավարական նորմերը, որոնք կանոնակարգում են վարույթի կոնկրետ ձևերը, այն է՝ վարույթն առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ դատարանում կամ վճռաբեկ դատարանում: Նման նորմերը կիրառելի են միայն տվյալ դատական ատյանի դատական ակտով:

Ավելին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ և՛ վերաքննիչ դատարանը, և՛ վճռաբեկ դատարանն ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանում է այդ ակտը, եթե գտնում է, որ այն թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ: Այս դեպքում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը կարող են կիրառել օրենքի դրույթներ, որոնք ստորին ատյանի դատարանի կողմից չեն կիրառվել:

Միաժամանակ, նոր հանգամանքների հիման վրա վերանայման են ենթակա ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը: Իսկ միջանկյալ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն իրավասու են կայացնելու նոր դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս դեպքում ավելի քան ակնհայտ է, որ միայն առաջին ատյանի դատարանի միջանկյալ ակտի՝ նոր հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը բացառում է վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից միջանկյալ դատական ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կայացված նոր դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման առկա իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպատակ և ոչ արդյունավետ:

ՍԴՈ–817, 21 հուլիսի, 2009 թ.

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3–րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե օրենքի 68–75–րդ և 77–րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1–ին կետի համաձայն. «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը .... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32–րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»: Այս դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թ. մարտի 17–ի ՍԴԱՈ–21 աշխատակարգային որոշման մեջ ամրագրել է, որ «Այս դրույթը վկայում է, որ հնարավոր են այդպիսի դեպքեր, և սահմանադրական դատարանը կարող է տվյալ հարցին անդրադառնալ գործի քննության ցանկացած փուլում՝ հաշվի առնելով գրավոր ընթացակարգով գործի քննության առանձնահատկությունները»:

ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1–ին մասի համաձայն՝ սահմանադրական դատարան ներկայացված դիմումում անձը կարող է վիճարկել միայն կոնկրետ գործով իր նկատմամբ կիրառված օրենքի սահմանադրականությունը: Նշված իրավակարգավորմանը համապատասխան դիմողը կարող է վիճարկել տվյալ օրինադրույթի տեքստն այն խմբագրությամբ, որն առկա է եղել իր նկատմամբ կիրառվելու պահին: Տվյալ դեպքում, նշված պահանջին համապատասխան՝ դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233 հոդվածի 2–րդ մասի՝ 2007 թ. նոյեմբերի 28–ի խմբագրությամբ տեքստի սահմանադրականությունը:

Հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանն իր 2008 թ. հոկտեմբերի 8–ի ՍԴՈ–765 որոշմամբ քննության է առել և լուծել վիճարկվող նորմի միևնույն, 2007 թ. նոյեմբերի 28–ի խմբագրությամբ տեքստի սահմանադրականության հարցը, սահմանադրական դա-

տարանը գտնում է, որ դիմումում բարձրացված հարցի վերաբերյալ արդեն իսկ առկա է սահմանադրական դատարանի ՍԴՈ–765 որոշումը:

7. Սահմանադրական դատարանը դիմումի ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է նաև, որ դիմողի հիմնական փաստարկները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին: Մասնավորապես, այդ մասին են վկայում դիմողի հետևյալ փաստարկները. «Երկու նույնական փաստական հիմքերով և իրավական հիմնավորումներով վճիռների դեմ նույն փաստաբանի կողմից բառացիորեն նույն տեքստով կազմված վճռաբեկ բողոքներից մեկն ընդունվում է վարույթ, պատճառաբանությամբ, որ վճռաբեկ բողոքը համապատասխանում է ՀՀ քաղ. դատ. օր. 231 և 234 հոդվածների պահանջներին, ինչպես նաև բողոքը բավարարվում է, ... իսկ մյուսը վերադարձվում է: ....վիճարկվող դրույթի պրակտիկայում կիրառմամբ գործ ունենք նաև ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով երաշխավորված՝ օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի, ինչպես նաև օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դատարանի ֆունկցիայի խախտման հետ»: Բացի դրանից, դիմողն իրավամբ ընդունելով, որ վիճարկվող դրույթում վճռաբեկ բողոքը պատճառաբանված որոշմամբ վերադարձնելու օրենսդրական պահանջի ամրագրումը սահմանադրական դատարանի ՍԴՈ–690 որոշման արդյունք է, միաժամանակ նշում է, որ «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները բովանդակային առումով չեն տարբերվում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 09.04.2007 թվականի ՍԴՈ–690 որոշման ընդունման ժամանակ հետազոտված որոշումներից»:

Վերոհիշյալի արդյունքում, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը սահմանադրական դատարանին ներկայացնելով վիճարկվող դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, Սահմանադրությանը հակասող ճանաչելու խնդրանք՝ միայն ձևականորեն է բարձրացնում օրենքի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնելով այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել իր՝ 2009 թ. մարտի 17–ի ՍԴԱՈ–21 որոշման մեջ ամրագրված այն իրավական դիրքորոշումը, որ. «....բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց...., ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1–ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

ՍԴՈ–836, 27 հոկտեմբերի, 2009 թ.

6. .... Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի 5–րդ մասին համապատասխան սահմանադրական դատարանին ուղղված դիմումում դատարանը, ի թիվս այլոց, պետք է հիմնավորի այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանին ուղղված դիմումում նշված պահանջը ոչ միայն բավարարված չէ, այլ նաև, ինչպես նշվեց, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը գործի նոր քննության համար կիրառելի չեն, իսկ դիմող կողմի հարցադրումները տվյալ օրենքների առնչությամբ դուրս են գալիս նորմատիվ բնույթ ունեցող իրավական ակտի դրույթի/դրույթների սահմանադրականության գնահատման շրջանակներից:

ՍԴՈ–839, 24 նոյեմբերի, 2009 թ.

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4–րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7–րդ մասում նշված որևէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտը, որն անվավեր ճանաչելու պահանջը մերժվել է պաշտպանության արժանի վստահության իրավունքի առկայության հիմնավորմամբ, ընդունվել է ի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի: Կատարողական վարույթը, որի նպատակը դատական ակտի կատարումն է, ըստ էության հանդիսանում է անձի խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ փուլ: Այս մոտեցումն է ամրագրված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Հետևաբար, կատարողական վարույթում ընդունված՝ կատարողական թերթի պահանջի իրացմանն ուղղված վարչական ակտի իրավական հետևանքներն ածանցյալ են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետևանքներից, նման վարչական ակտն ինքնուրույն իրավական հետևանքներ չի առաջացնում: Անկախ խնդրո առարկա վարչական ակտն օրենքի ձևական պահանջների խախտմամբ կամ պահպանմամբ ընդունվելու հանգամանքից՝ այն դիմողի համար առաջացնելու էր միևնույն իրավական հետևանքները: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանության արժանի վստահության իրավունքը տվյալ դեպքում կարող էր ծագել ոչ թե վարչական ակտի, այլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առնչությամբ:

.... Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթի միջև որևէ պատճառահետևանքային կապ առկա չէ, դիմողը ձևական առումով առաջադրելով օրենքի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում է վարչական ակտով իրեն վնաս պատճառելու հանգամանքի գնահատման իրավաչափության խնդիրը:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7–րդ մասի՝ անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

ՍԴՈ–870, 23 մարտի, 2010 թ.

6. ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել առ այն, որ. ««Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4–րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68 հոդվածի 7–րդ մասում նշված որևէ հատկանիշով»:

ՍԴՈ–927, 30 նոյեմբերի, 2010 թ.

6. Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. ապրիլի 15–ի ՍԴՈ–751 որոշման մեջ անդրադառնալով սահմանադրական կոնկրետ վերահսկողության առանձնահատկություններին՝ նշել է. «Եթե նախնական և հետագա վերացական սահմանադրական վերահսկողու-

թյան դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, **մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը**: .... Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև **անհատական շահերի պաշտպանության խնդիրը**»:

ՍԴՈ–946, 29 մարտի, 2011 թ.

5. Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից սահմանադրական դատարան դիմելու կարգը սահմանված է ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69–րդ հոդվածով:

ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետի համաձայն. Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել «....յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ **առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները** և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն. «Սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69–րդ հոդվածի 1–ին և 7–րդ մասերով սահմանված իրավակարգավորումը խարսխված է այն տրամաբանության վրա, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց խախտված իրավունքները, նախևառաջ, պետք է պաշտպանեն ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում: Ըստ այդմ, ՀՀ օրենսդրությունը որպես սահմանադրական դատարան դիմելու նախապայման սահմանել է **դատական պաշտպանության միջոցներն սպառելու պարտականություն և վերջնական դատական ակտի առկայության պահանջ:**

ՍԴՈ–983, 12 հուլիսի, 2011 թ.

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ **գործը լուծող վերջնական դատական ակտով** կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

ՍԴՈ–984, 15 հուլիսի, 2011 թ.

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63–րդ հոդվածի 1–ին մասի պահանջներին համապատասխան՝ վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրակա-

նությունը որոշելիս կարևոր նշանակություն ունի վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, քանի որ **իրավանորմի սահմանադրականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե ինչպես է այն շարադրված իրավական ակտում, այլև նրանով, թե ինչպես է այն ընկալվում ու կիրառվում իրավակիրառ պրակտիկայում**:

....

11. .... Անհատական սահմանադրական գանգատի հիմքում ընկած են անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գաղափարն ու նպատակը: Այս նպատակի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանավորված անհատական սահմանադրական գանգատի այս կամ այն մոդելի ընտրությամբ և առանձնահատկություններով՝ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների հիման վրա՝ խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման մեխանիզմները տարբեր են: Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտ ունեցող երկրներում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումն իրականացվում է հենց սահմանադրական դատարանի կողմից, որը, հակասահմանադրական ճանաչելով վիճարկվող նորմը կամ նորմի կիրառումը, միաժամանակ վերացնում է նաև հակասահմանադրական նորմ կիրառած կամ անձի սահմանադրական իրավունքը խախտած դատական ակտը: Նման մեխանիզմի դեպքում պետությունն ինքն է ապահովում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումը սահմանադրական արդարադատության շրջանակներում՝ կատարելով քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության իր պարտավորությունը: Այն երկրներում, որտեղ սահմանադրական վերահսկողության օբյեկտ են հանդիսանում միայն դատական ակտերով կիրառված օրինադրույթները, խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը երաշխավորվում է սահմանադրական դատարանների որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով:

ՍԴՈ–990, 4 հոկտեմբերի, 2011 թ.

.... 10. Անդրադառնալով դիմողի մյուս փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթների և Սահմանադրության 14, 18, 19 և 48-րդ հոդվածների միջև ենթադրյալ հակասության հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը:

Դիմողն օրենքի վիճարկվող դրույթների և Սահմանադրության 14-րդ հոդվածի միջև ենթադրյալ հակասությունը փաստարկում է սեփականության և իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքների ենթադրյալ խախտման և Սահմանադրության 48-րդ հոդվածի համատեքստում և գտնում, որ օրենքի վիճարկվող դրույթների հետևանքով սեփականության և իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքների խախտման արդյունքում խախտվում է նաև մարդու արժանապատվությունը, որն իրավունքի գերակայության բաղադրատարր է: Հիմք ընդունելով օրենքի վիճարկվող դրույթներով հարցման միջոցով որոշումների ընդունման արդյունքում սեփականության իրավունքի երաշխավորվածության վերաբերյալ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի փաստարկները վեճի առարկա հոդվածները ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին հակասելու առնչությամբ:

Անդրադառնալով օրենքի վիճարկվող դրույթների և Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների միջև ենթադրյալ հակասության վերաբերյալ դիմողի դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ առնչությամբ դիմողի ներկայացրած փաստարկները վերաբերում են ոչ թե ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորմա-

նը, այլ դատական ակտերի օրինականության վիճարկմանը: Իսկ օրենքի վիճարկվող դրույթների իրավակարգավորման նպատակը և բովանդակությունը չեն բացառում դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումները պայմանավորված չեն օրենքի վիճարկվող նորմերի սահմանադրականությամբ:

ՍԴՈ–998, 22 նոյեմբերի, 2011 թ.

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, ձևականորեն վիճարկելով նորմի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Դիմողը փորձել է դատական համապատասխան ակտերի իրավական հետևանքները վերագրել խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականության խնդրին, հետևաբար՝ նման դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32–րդ հոդվածի 1–ին կետի հիմքով համարվում է սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հարց չառաջադրող դիմում:

ՍԴՈ–1004, 6 դեկտեմբերի, 2011 թ.

7. Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873–րդ հոդվածի 2–րդ մասին, ապա այս դրույթի առնչությամբ դիմողի ներկայացրած փաստարկները հանգում են միայն նրան, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, կիրառելով այդ դրույթը, ըստ էության չի մեկնաբանել այն՝ կանխելու համար այդ դրույթի տարակերպ մեկնաբանությունները, ինչպես նաև, որ դրա կիրառումը կարող է դատական շրջապտույտի առիթ հանդիսանալ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69–րդ հոդվածի 4–րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող նորմի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68–րդ հոդվածի 7–րդ մասում նշված որևէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69–րդ հոդվածի 7–րդ մասի՝ անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը .... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32–րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Դիմումում ներկայացված վերոհիշյալ փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 873–րդ հոդվածի 2–րդ մասում ամրագրված դրույթի սահմանադրականությունը փորձում է վիճարկել ոչ թե խնդրո առարկա նորմի ենթադրյալ հակասահմանադրականության պատճառով իր սահմանադրական իրավունքների խախտման կոնկրետ փաստով, այլ այդ դրույթով սահմանված իրավակարգավորման աննպատակահարմարության արդյունքում հնարավոր բացասական հետևանքներով:

ՍԴՈ–1059, 23 նոյեմբերի, 2012 թ.

6. .... Միաժամանակ, ելնելով պետական իշխանության մարմինների գործառույթների արդյունավետ իրականացման և ընդհանրապես սահմանադրական վերահսկողության հա-

մակարգի գործունեության արդյունավետության ապահովման անհրաժեշտությունից՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործով կողմերի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ սահմանադրական դատարան դիմելու անհրաժեշտությունը պետք է պայմանավորված լինի սահմանադրաիրավական իրական վեճի առկայությամբ: Եթե դիմող և պատասխանող կողմերը համակարծիք են իրավական ակտի, տվյալ դեպքում՝ օրենքի այս կամ այն դրույթի և Սահմանադրության նորմերի միջև ենթադրյալ հակասության վերաբերյալ, ապա տվյալ դեպքում նշված հակասությունն անհրաժեշտ է վերացնել իրավական ակտն ընդունած մարմնի իրավասությունների շրջանակներում, ինչը պարզապես սահմանադրական պահանջ է:

ՍԴՈ–1065, 22 հունվարի, 2013 թ.

7. Վերը նշված՝ պարզման ենթակա երկրորդ և երրորդ հարցադրումների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը դիմումի և գործում եղած նյութերի ուսումնասիրության հիման վրա արձանագրում է, որ պարզեցված հարկով հարկվելու նպատակով դիմող ընկերությունը **կամավոր է** մտել իրավահարաբերությունների մեջ, և որ դրա հետևանքները նշված ընկերության համար եղել են **կանխատեսելի,** ինչը հիմք է հանդիսանում պնդելու, որ **տվյալ դեպքում բացակայում է սահմանադրաիրավական վեճը.** կանխատեսելով հայտարարագիր ներկայացնելու հետևանքները և իր կամքի ազատ արտահայտմամբ նման հայտարարագիր ներկայացնելով հանդերձ՝ դիմող ընկերությունն օրենքի պահանջները հաշվի չառնելով մտել է այլ իրավահարաբերությունների դաշտ և ներկա պարագայում փորձ է անում ակնհայտ անհիմն սահմանադրաիրավական վեճ ներկայացնելով՝ վիճարկել ավելի քան չորս տարի առաջ ուժը կորցրած օրենքի դրույթը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում սահմանադրաիրավական վեճի բացակայությամբ սահմանադրական դատարան դիմելն անհիմն է դարձնում նման դիմումը, որը ենթակա է մերժման, իսկ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վեճի առարկա նորմի սահմանադրականության խնդրով:

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

8. .... Նման պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանը նոր հանգամանքների հիմքով որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժել է՝ գտնելով, որ սահմանադրական դատարանն իր որոշումը չի տարածել «....այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա»: Ակնհայտ է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68–րդ հոդվածի՝ մասնավորապես 10, 12 և 13–րդ մասերի պահանջների մեկնաբանության շրջանակներում չեն կարող անտեսվել նույն օրենքի 69–րդ հոդվածի 12 և 13–րդ մասերի պահանջները: Սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտն առաջին հերթին վերաբերում է վերացական սահմանադրական վերահսկողությանը, իսկ անհատական դիմումների հիման վրա կոնկրետ սահմանադրական վերահսկողության դատավարական ընթացակարգերն ու առանձնահատկությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69–րդ հոդվածով: Վերջինիս 11–րդ մասը հղում է կատարում նաև օրենքի 68–րդ հոդվածի 6–17–րդ մասերին՝ շեշտելով, որ տվյալ հոդվածով նշված գործերին առնչվող **բոլոր այլ հանգամանքների** քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառելի են օրենքի 68–րդ հոդվածի նշված մասերի կանոնները: Սակայն, դրանով հանդերձ, անհատական դիմումներով սահմանադրական դատարանի որոշման վերաբերելիության առումով կանոնները հստակ ու իրավական որոշակիության սկզբունքին համահունչ սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69–րդ հոդվածի 12 և 13–րդ մասերով: Իրավական երկու ինստիտուտների (սահմանադրական դատարանի որոշման հետադարձության և անհատական գանգատի միջոցով սահմա-

նադրական իրավունքների պաշտպանության) իրավական էության ոչ ճիշտ մեկնաբանման արդյունքում սահմանափակվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12 և 13-րդ մասերով նախատեսված իրավասուբյեկտների իրավունքները դատական կարգով պաշտպանելու հնարավորությունը:

ՍԴՈ-1251, 19 հունվարի, 2016

6. ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

«.... յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունըե:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԸ

ՍԴՈ-1142, 2 ապրիլի, 2014 թ.

18. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը սույն գործը քննության ընդունելուց հետո, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներից ելնելով, 2014 թ. հունվարի 24-ի ՍԴԱՈ-3 որոշմամբ՝ որպես դիմումի ապահովման միջոց, մինչև գործի դատաքննության ավարտը կասեցրեց քննության առարկա օրենքի 76-րդ հոդվածի և 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և պետական կառավարման տարբեր մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատա-րանի որոշման տարաբնույթ մեկնաբանության փորձերը որոշ չափով նվազեցրին դիմումի ապահովման միջոցի արդյունավետությունը: Նկատի ունենալով, որ գործը դատաքննության նախապատրաստման փուլում էր և օրենքով սահմանադրական դատարանի որոշումների պարզաբանման ինստիտուտ նախատեսված չէ, սահմանադրական դատարանը 2014 թ. փետրվարի 11-ի ՍԴԱՈ-6 աշխատակարգային որոշմամբ արձանագրեց գործի դատաքննության շրջանակներում ստեղծված վիճակին անդրադառնալու անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցերը չեն կարող ենթադասվել տեխնիկական ու կազմակերպչական ցանկացած բնույթի հանգամանքների, այլ այդ հարցերում իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրական նորմերի անմիջական գործողության և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներով:

Միաժամանակ, հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության Սահ-մանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Անձի իրավական

վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով», անհրաժեշտ է, որպեսզի սույն որոշման պահանջներից ու սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից բխող նոր իրավակարգավորումները սահմանադրական հիշյալ դրույթի շրջանակներում տարածվեն քննության առարկա օրենքին առնչվող իրավահարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների վրա՝ առանց ժամկետային սահմանափակման:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–652, 18 հոկտեմբերի, 2006 թ.

5. .... Գործի հանգամանքների պարզման արդյունքում արձանագրելով այս իրողությունները, սահմանադրական դատարանը, այնուամենայնիվ, Սահմանադրությամբ լիազորված չէ գնահատել հետաքննության մարմնի, դատախազի կամ ընդհանուր իրավասության դատարանների որոշումների ու վճիռների սահմանադրականությունը: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 93 հոդվածը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է: Իր հերթին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը պարտավորեցնում է սահմանադրական դատարանին՝ ապահովել ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: Դա իրականացնելու համար սահմանադրական դատավարության հիմնական սկզբունքներից մեկն է համարվում գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասում ամրագրված է, որ նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցերով իր որոշումներն ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ինչպես նաև Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ քննության առարկա գործի հանգամանքների՝ գործնականում չի ապահովվել ու պաշտպանվել քաղաքացու՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով ամրագրված իրավունքները:

ՍԴՈ–674, 30 հունվարի, 2007 թ.

5. .... Սահմանադրական դատարանը միաժամանակ սույն գործի շրջանակներում ուշադրություն է հրավիրում իր այն իրավական դիրքորոշումների վրա, որոնք արտահայտվել են դատարանի 18 հոկտեմբերի 2006 թ. ՍԴՈ–652 որոշման պատճառաբանական մասում և վերաբերում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի սահմանադրականության գնահատմանը:

ՍԴՈ–701, 11 մայիսի, 2007 թ.

6. .... Այսուհանդերձ, ինչպես վկայում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճա-

նաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի և ծանր հետևանքներ հանրության և պետության համար, ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները: Հետևաբար, հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում:

ՍԴՈ-765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

21. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի անկախության և օրենքի առջև դատավորի պատասխանատվության միջև խելամիտ հավասարակշռությունը խախտվել է մասնավորապես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2007 թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքով կատարված փոփոխությունների 426.1. հոդվածով նախատեսված իրավակարգավորման արդյունքում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համանման նորմերի առնչությամբ իր իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանն արտահայտել է 2008 թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ: Այդ դիրքորոշումներն օրենսդրի կողմից հաշվի պետք է առնվեն նշված հավասարակշռությունը երաշխավորելու համար:

ՍԴՈ-815, 14 հուլիսի, 2009 թ.

9. .... Հաշվի առնելով, որ թեև վերոհիշյալ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության հիմնավորումն անմիջականորեն պայմանավորված չէ սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականության խնդրով, այնուամենայնիվ, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկայի ուսումնասիրման արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ օրենքում սահմանադրական դատարանի 18.04.2006 թ. ՍԴՈ-630 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների ոչ ամբողջությամբ արտացոլված լինելու հանգամանքն իր արտացոլումն է գտնում իրավակիրառական պրակտիկայում ծագող տարաբնույթ վեճերում, որոնց հաղթահարումը հետագա օրենսդրական հստակեցումների անհրաժեշտություն ունի:

ՍԴՈ-817, 21 հուլիսի, 2009 թ.

5. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ի կատարումն սահմանադրական դատարանի նշված որոշման և հաշվի առնելով այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2008 թ. դեկտեմբերի 26-ի օրենքի 17 հոդ-

վածի համաձայն՝ օրենսգրքի 233 հոդվածի 2-րդ մասում խնդրո առարկա դրույթը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված»: Այսինքն՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 և ՍԴՈ-765 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ օրենսդրորեն ամրագրվել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը՝ առանց որևէ բացառության, պատճառաբանելու պահանջը՝ որպես դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիք:

ՍԴՈ-833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

9. .... Սահմանադրական դատարանը մատնանշում է նաև ՍԴՈ-751 որոշման պահանջների, դրանում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացման անհրաժեշտությունը դատական պրակտիկայում: Դատարանների իրավակիրառական համապատասխան պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա առավելապես վերանայվում են այն անձանց վերաբերյալ կայացված դատական ակտերը, որոնց դիմումի հիման վրա կայացվել է սահմանադրական դատարանի՝ նոր հանգամանք հանդիսացող որոշում:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան միարժեք վկայում է, որ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումներում սահմանադրության կամ օրենքի նորմի իրավական բովանդակության բացահայտման (մեկնաբանման) միջոցով արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր բնույթ ունեն ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար:

....

11. .... Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-758 որոշմամբ արձանագրել է, որ «.... Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ ուղենիշ (ղեկավար) վճիռների ինստիտուտը .... Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները և ելնելով ուղենիշ վճիռների հիման վրա ներպետական մակարդակում Եվրոպական դատարան դիմած քաղաքացիների իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՍԴՈ-758 որոշմամբ արտահայտված իրավական վերոհիշյալ դիրքորոշումները դեռևս մնացել են անհետևանք:

ՍԴՈ-873, 13 ապրիլի, 2010 թ.

5. .... Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող իրավանորմերն ընդունվել են ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման արդյունքում՝ սահմանադրական դատարանը կարևոր է համարում պարզել, թե որքանո՞վ են հաշվի առնվել ՍԴՈ-780 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն օրենսդրական փոփոխությունները կատարելիս, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում կատարված փոփոխություններն ու լրացումները որքանո՞վ են նպաստել վարչական արդարադատության երկաստիճան համակարգում վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետության ապահովմանը:

....

9. Վարչական դատարանի վճռի դեմ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում կատարված փոփոխություններից և լրացումներից հետո էլ վճռաբեկ դատարանը շարունակում է վարչական գործերով վճռաբեկ վարույթի նկատմամբ կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը,

անկախ նրանից, դրանք **դուրս են գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից, թե՝ ոչ:** Ավելին, վճռաբեկ դատարանը՝ կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերը սահմանող 118.3-րդ հոդվածը և բողոքի ընդունելիության պայմանները սահմանող 118.6-րդ հոդվածը, զուգահեռաբար կիրառում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համարժեք 226 և 234-րդ հոդվածները, այդ թվում վճռաբեկ բողոքի ընդունելիության այն պայմանները, որոնք սահմանված են 234-րդ հոդվածի 1-ին մասում:

Նման իրավիճակի առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրացված չէ սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածում «**mutatis mutandis» վերապահումը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման նկատմամբ ամբողջությամբ կիրառվեն քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:**

....

10. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման ինստիտուտի լիարժեքությունն օրենսդրորեն ապահովված չէ: Այս հարցում իրավական անորոշությունը հաղթահարելու և իրավակարգավորման բացը լրացնելու համար էական նշանակություն կարող է ունենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հստակ իրավակարգավորումը՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-780 որոշման և սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով:

ՍԴՈ-936, 8 փետրվարի, 2011 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած, ի կատարումն ՍԴՈ-780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ-ում վարչական արդարադատության համակարգը համալրվեց և ներդրվեց դատական բողոքարկման նոր համակարգ, այնուամենայնիվ, բողոքարկման գործող ընթացակարգը, մասնավորապես՝ հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, չենթարկվեց համապատասխան փոփոխությունների, որի արդյունքում սահմանափակվեց այդպիսի գործերով արդար, մատչելի և արդյունավետ դատական պաշտպանության՝ անձանց սահմանադրական իրավունքը: Սույն գործով պատասխանող կողմի դիրքորոշումն այն մասին, թե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական նորմերի նշանակությունն ու կարևորությունը դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանում է երկրորդական նշանակություն, չի բխում արդարադատության սահմանադրաիրավական բովանդակությունից, սահմանադրական դատարանի որոշումներից, ինչպես նաև ՀՀ իրավահամակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման ընդհանուր հայեցակարգից: Դատարանի՝ դատավարական կարգի խախտումով ընդունած որոշումը չի կարող համարվել լեգիտիմ ու արդարադատության պահանջներին համապատասխանող:

ՍԴՈ-943, 25 փետրվարի, 2011 թ.

9. .... Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օբյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրա-

գործմանն են միտված հատկապես սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական-պատճառաբանական մասում արտահայտված **իրավական դիրքորոշումները**, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անտեսման դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով հստակ բացահայտված չէ «իրավական դիրքորոշում» եզրույթի բովանդակությունը: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման, դրա իրավաբանական ուժի, իրավահամակարգում ունեցած դերի և նորմաստեղծ նշանակության խնդիրներն օրենքով դեռևս լիարժեք կարգավորման չեն ենթարկվել: Սահմանադրական դատարանն իր ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում կարևորել է իրավակիրառող սուբյեկտների կողմից սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր հաշվի առնելու հանգամանքը, որպես նաև սահմանադրական արդարադատական միջազգային պրակտիկայում հաստատված կանոն: Այնուամենայնիվ, որպես հանրային-իրավական հարաբերությունների կարգավորման միջոց՝ իրավական դիրքորոշման ինստիտուտը ներդրված է ՀՀ իրավահամակարգում, մասնավորապես՝ վարչական արդարադատության բնագավառում (Վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մաս) և կիրառվում է ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայում հատկապես անհատական դիմումի ինստիտուտի ներդրման արդյունքում (2006 թ. հուլիսի 1-ից): Ներկայումս ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավական բնույթը որոշ հստակեցում է ստացել նաև ՀՀ Ազգային ժողովի որոշումներում, երբ միջազգային պայմանագրերը վավերացվում են ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի ամեն մի կոնկրետ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-652, ՍԴՈ-701, ՍԴՈ-833) անդրադարձել է իր որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների իրավաբանական բնույթին, մասնավորապես նշելով, որ «Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավունք վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է», «....հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում»: Շեշտվել է նաև, որ «....սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան միարժեք վկայում է, որ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումներում Սահմանադրության կամ օրենքի նորմի իրավական բովանդակության բացահայտման (մեկնաբանման) միջոցով արտահայտված իրավական դիրքորոշումները պարտադիր բնույթ ունեն ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար»:

ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկան վկայում է, որ իրավական դիրքորոշումներ դատարանն արտահայտում է գործով ըստ էության կայացված, ինչպես նաև գործի

քննությունը մերժելու կամ գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներով («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 60–րդ հոդվածների հիման վրա): Դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որպես կանոն, բովանդակում են տվյալ գործի լուծման հիմքում դրված իրավական այնպիսի չափորոշիչներ, որոնք վերաբերում են.

– ՀՀ Սահմանադրության նորմերի, միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների, օրենքների, ինչպես նաև օրենսդրության այլ ակտերի (ՀՀ Սահմ. 100–րդ հոդվածի 1–ին և 2–րդ կետեր) սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, դրանց սահմանադրական արժեբանությունից բխող ընկալմանն ու կիրառմանը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորմանը, այդ ամենի արդյունքում՝ վիճարկվող նորմի (իրավական ակտի) սահմանադրականությունը գնահատելուն,

– իրավակիրառական (այդ թվում՝ արդարադատական) պրակտիկան գնահատելուն և այդ պրակտիկայում ՀՀ Սահմանադրության նորմերը, օրենքները և իրավական այլ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառելու անհրաժեշտությանը,

– սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանն ու փաստերին գնահատական տալուն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կոչված են իրավակիրառական պրակտիկայում ապահովելու ՀՀ Սահմանադրության առավել ամբողջական և միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու և կիրառելու ուղղությամբ: Որպես սահմանադրական իրավունքի կարևոր աղբյուր՝ դրանք սկզբունքային նշանակություն ունեն սահմանադրական դատարանի որոշումներից բխող օրինաստեղծ (նորմաստեղծ) գործունեության համար: Իր որոշումներում բացահայտելով օրենքի (դրա առանձին դրույթների) կամ այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արտահայտում է իրավական դիրքորոշումներ, որոնց հիման վրա էլ որոշում է տվյալ նորմերի կամ իրավական ակտի իրավաբանական ուժի հարցը՝ Սահմանադրությանը հակասելու դեպքում ճանաչելով այն անվավեր: Դրանով պայմանավորված՝ նաև առաջանում է այդ ակտով (նորմերով) նախկինում կարգավորվող իրավահարաբերության հետագա կարգավորման, հետևաբար՝ հանրային իշխանության իրավասու մարմնի իրավաստեղծ (օրինաստեղծ) գործունեության անհրաժեշտություն:

Ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի ու իր կողմից ընդունվող որոշումների իրավաբանական ուժի և բնույթի առանձնահատկություններից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները.

ա) անմիջականորեն բխում են սահմանադրական դատարանի լիազորություններից, հետևաբար՝ կրում են պաշտոնական բնույթ,

բ) ունեն կոնկրետ իրավական հետևանք, հասցեագրված են ինչպես տվյալ գործով կոնկրետ, այնպես էլ հանրային–իրավական հարաբերությունների բոլոր սուբյեկտներին (համընդգրկուն են),

գ) ունեն գործողության անսահմանափակ ժամկետ, կարող են փոփոխվել միայն սահմանադրական դատարանի որոշումներով,

դ) կոչված են ՀՀ իրավահամակարգում և իրավակիրառական պրակտիկայում նպաստելու իրավական անորոշության վերացմանը, դրվում են իրավահարաբերությունների սահմանադրականացման հիմքում, ունեն նախադեպային բնույթ,

ե) մինչև վեճի առարկա հարաբերության նորմատիվ կարգավորումը, որոշ դեպքերում նաև իրավակարգավորման ժամանակավոր միջոց են,

զ) ՀՀ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ են:

10. Միջազգային պրակտիկան նույնպես միարժեք վկայում է, որ իրավունքի գերակայության, հետևաբար և՝ Սահմանադրության գերակայության, երաշխավորման գլխավոր նախապայմանը համապարտադիր, վերջնական և erga omnes բնույթ ունեցող դատական ակտերի կատարման երաշխավորումն է, ակտեր, որոնք իրավական բովանդակությունից զրկվում են առանց դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելու:

.... Իրավական նորմերի սահմանադրականության որոշման գործերով (վերացական, ինչպես նաև անհատական դիմումներով) սահմանադրական դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին,

2) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:

Ելնելով սահմանադրական դատարան ներկայացված դիմումի ընդունելիության, բարձրացված հարցերի ընդդատության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ հանգամանքներից՝ սահմանադրական դատարանը վերոհիշյալ գործերով ընդունում է նաև որոշումներ՝ գործի քննությունը մերժելու կամ վարույթը կարճելու վերաբերյալ:

.... Սահմանադրական դատարանը ելնում է այն հիմնարար դրույթից, որ սահմանադրական արդարադատության իմաստը սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորումն է, և ոչ մի ընթացակարգային նորմ կամ դրա ոչ հստակ ձևակերպում չի կարող սահմանադրական գործառույթի իրացման խոչընդոտ հանդիսանալ:

Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր են դիմող կողմի այն պնդումները, համաձայն որի՝ իրավական դիրքորոշումների շրջանակում **սահմանադրական ճանաչված նորմը չի կարող կիրառվել սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունից տարբերվող բովանդակությամբ**: Հակառակ դեպքում իրավասու պետական մարմնի, այդ թվում՝ դատարանի, գործողություններն ու ակտերն ակնհայտ կհակասեն ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ և մի շարք այլ հոդվածներով երաշխավորված սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներին: ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանները պարտավոր են ըստ էության գործի քննության, ինչպես նաև դատական բողոքարկման շրջանակներում նորմատիվ իրավական ակտերը կիրառելիս հաշվի առնել դրանց վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, գործող դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով **դատական սխալի փաստը գնահատելիս**, եթե կոնկրետ գործով անձանց նկատմամբ կիրառված նյութական կամ դատավարական այս կամ այն նորմի սահմանադրաիրավաընկալման վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը: Այդպիսի հիմնավորմամբ դատական ակտերը վերանայելու պահանջով շահագրգիռ անձանց դիմումները պետք է քննության առնվեն իրավասու դատարանների կողմից, իսկ առանց հիմնավոր պատճառաբանման այդպիսի դիմումի քննությունը մերժելն անձին հնարավորություն կընձեռի իր իրավունքների և ազատությունների միջազգային-արդարադատական պաշտպանության համար: Իսկ այդպիսի շարունակական պրակտիկան կհակասի ոչ միայն ՀՀ սահմանադրական կարգի հիմնական սկզբունքներին, այլև՝ ՀՀ ստանձնած միջազգային մի շարք պարտավորությունների:

.... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի սահմանադրականության որոշման վերաբերյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետևաբար՝ նաև սահմանադրաիրավական պահանջ:

Այդուհանդերձ, անվերապահորեն ընդունելով, որ եթե օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից **որևէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**, ապա սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով խնդիրն այլ լուծում ունի:

Նախ. փաստն այն է, որ դատական պրակտիկան, օրենսդրական առկա ձևակերպումներից ելնելով, նոր հանգամանք չճանաչելով սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում նորմը ճանաչվել է սահմանադրական, հնարավորություն չի ստեղծում անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման ու պաշտպանության համար: **Երկրորդ՝** փակուղի է մտնում իրավունքի գերակայության, հետևաբար՝ և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: **Երրորդ՝** նման իրավիճակը ոչ միայն դատավարական օրենսգրքերի, այլև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների անկատարությամբ է պայմանավորված:

Ակնհայտ է, որ առկա իրավակարգավորումն ու իրավակիրառական պրակտիկան հակասության մեջ են մտնում ՀՀ Սահմանադրության 1–ին, 3, 6, 18, 19, 92, 93–րդ և մի շարք այլ հոդվածների պահանջների հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների կողմից որպես նոր հանգամանք ճանաչելու հարցը թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական և թե՛ վարչական դատավարությունում **համալիր ու անհետաձգելի** կարգավորման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ–966, 3 հունիսի, 2011 թ.

6. .... Անդրադառնալով պատասխանող կողմի (ՀՀ կառավարություն) հայտնած այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «ՀՀ Սահմանադրական դատարանի 28.11.2006 թ. թիվ ՍԴՈ–668 որոշման 5–րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները նորից հաշվի առնելու անհրաժեշտություն չկա», սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, վերահաստատելով ՍԴՈ–943 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, իրավակիրառական պրակտիկան պարտավոր է հաշվի առնել իրավական ակտերի (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ պրակտիկայի ձևավորումը կհակասի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին:

ՍԴՈ–1192, 3 մարտի, 2015 թ.

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վճռաբեկ բողոք բերելու՝ տվյալ դեպքում միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտի կանոնակարգումների ժամանակ օրենսդրի կողմից ամբողջապես հաշվի չեն առնվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները: Օրենսդիրն անհրաժեշտ հետևողականություն

չի ցուցաբերել քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումները սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին ներդաշնակ և համահունչ զարգացնելու առումով: Մասնավորապես, օրենսդրորեն համարժեքորեն չեն լուծվել գույքային խտրականության հետ կապված հարցերը, ընդ որում՝ խնդիրն առկա է ինչպես վարչական դատավարության, այնպես էլ վճռաբեկ բողոք ներկայացնելու նախապայմանների օրենսդրական միասնական քաղաքականության շրջանակներում, ինչն ըստ էության նպաստավոր պայմաններ է ստեղծում խտրական վերաբերմունքի ցուցաբերման հնարավոր դրսևորումների համար՝ պայմանավորված անձի գույքային դրության հիմքով: Այս հանգամանքը փաստվում է ելնելով նրանից, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը միանշանակ սահմանում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», իսկ վերջիններս իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են **իրավունքի աղբյուր** իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: **Սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենսդրական զարգացումների համար կարևոր աղբյուր են:**

Քննության առարկա հիմնահարցը վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով՝ սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ վիճարկվող դրույթով՝ միայն փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու պահանջի ամրագրումը, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացմանը նպաստելու իրավաչափ նպատակ հետապնդելով հանդերձ, փաստացի հանգեցրել է հենց այդ իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակմանը, անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման հնարավորության և դատարանի մատչելիության իրավունքի ոչ համարժեք սահմանափակմանը:

Ի դեպ, նման եզրահանգում է կատարել նաև ՀՀ փաստաբանների պալատը (ըստ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ ՀՀ սահմանադրական դատարանին 27.02.2015 թ. թիվ Ն/202 նամակով հասցեագրված մեկնաբանությունների):

ՍԴՈ-1254, 9 փետրվարի, 2016

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դիմողներից Վարտգեզ Գասպարին վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է նաև բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը հավաստող, վկայող ապացույց (համապատասխան ուղեկցական գրությանը կից փոստային հավաստագիրը), որով հավաստվել է, որ Վարտգեզ Գասպարին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշումն ստացել է 2015 թվականի ապրիլի 10-ին: Դա փաստվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը 2015 թվականի հունիսի 3-ին թիվ ՎԴ/0277/05/14 վարչական գործով կայացրել է որոշում «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին»՝ նշելով, որ «.... բողոք բերած անձի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու վերաբերյալ **Վարտգեզ Գասպարի-ի ներկայացուցչի փաստարկը հիմնավոր չէ, մասնավորապես՝ 10.04.2014 թվականից մինչև 11.05.2015 թվականը ժամանակահատվածի համար որևէ պատճառաբանություն չպարունակելու պատճառով**»: Անհասկանալի է նման եզրահանգումը, եթե նկատի ունենանք, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումն ընդունվել է 07.04.2015 թվականին:

Հիշատակված որոշման կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել՝ չնայած այն հանգամանքին, որ նշված որոշման մեջ թվով 6 դեպքերում

«2015 թվականի» փոխարեն թվագրվել է «2014 թվականը», այդուհանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես հավաստում է, որ ներկայացվել է դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը հավաստող, վկայող ապացույցը՝ համապատասխան ուղեկցական գրությանը կից փոստային հավաստագիր: Միաժամանակ արձանագրվել է, որ այդ հավաստագրի համաձայն՝ դիմողը «Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել է 10.04.2014 թվականին, մինչդեռ վճռաբեկ բողոքը ներկայացվել է 11.05.2015 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված վճռաբեկ բողոք բերելու ժամկետի ավարտից հետո: Սակայն հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ 2015 թվականի մայիսի 10-ը եղել է ոչ աշխատանքային օր, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի **52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝** «Այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտման օրը դրան հաջորդող աշխատանքային օրն է:

Գործի նյութերը վկայում են, որ այս նորմի կիրառման հարցում դատական պրակտիկայում տեղ են գտել տարակերպ մոտեցումներ և չի երաշխավորված օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական պահանջը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ տվյալ գործի քննության շրջանակներում հետևողականորեն հաշվի չեն առնվել նաև հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի վերոնշյալ՝ ՍԴՈ-1052 և ՍԴՈ-1062 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԸ ԿԱՄ ԴՐԱ ՆՈՐՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՏԱՐԱԺԱՄԿԵՏՈՒՄԸ

ՍԴՈ-701, 11 մայիսի, 2007 թ.

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի դրույթները, համակարգային առումով փոխկապակցված լինելով նույն հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի դրույթների հետ, երաշխավորում են Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարումը: Սահմանադրությունը լիազորում է սահմանադրական դատարանին Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանել: Այս դրույթի՝ թեկուզ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանությունից բխում է, որ եթե սահմանվել է ավելի ուշ ժամկետ, ապա սահմանադրական դատարանի որոշման ընդունման և հրապարակման պահից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտը (դրույթը) իրավական ուժը չի կորցնում: Հակառակ պարագայում, ինչպես ցույց է տալիս նաև միջազգային պրակտիկան, սահմանադրական դատարանի նման լիազորությունը կիմաստազրկվեր: Սահմանադրորեն կարևորելով սահմանադրական դատարանի որոշման հետևանքով առաջացող հնարավոր իրավիճակների սահմանադրականությունը, նկատի ունենալով, որ հասարակական հարաբերությունների դինամիկ գործընթացում իրավակարգավորման կտրուկ փոփոխությունները կարող են առաջացնել տարաբնույթ հակասահմանադրական իրավիճակներ, դրանք հաղթահարելու համար նախատեսելով սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կամ դրա մի մասի ուժը կորցնելու տարաժամկետման հնարավորություն, միաժամանակ օրենսդիրը խստորեն սահմանափակել է սահմանադրական դատարանի հայեցողական մոտեցման շրջանակները: Սահմանադրության 100 հոդվածում հստակ ամրագրելով, որ սահմանադրական դատարանն իր լիազորություններն իրականացնում է օրենքով սահմանված կարգով, օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասում ամրագրել

է, որ. «Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության և պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը:

Այդ դեպքում մինչև ակտի իրավաբանական ուժը կորցնելն ակտը համարվում է Սահմանադրությանը համապատասխանող»:

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ մասը նախատեսում է, որ. «Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները կանխելուն ուղղված միջոցառումները»: Բացի դրանից, նույն հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ «Հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որպեսզի դրանով իրապես կանխվեն անխուսափելի և ծանր հետևանքները հանրության և պետության համար, և ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին»:

Այս համատեքստում, հակասահմանադրական ճանաչված իրավական ակտը կամ դրա դրույթը շարունակում է գործել սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության 102 հոդվածի հիմքով դրանց գործողությունը հիմնավորված կերպով տարաժամկետելու շնորհիվ: Ուստի, վիճարկվող դրույթի իրավական բովանդակությունն ածանցյալ է և անհրաժեշտաբար բխում է Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթներից: Հետևաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի ձևակերպումն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի համատեքստում, որ Սահմանադրությունը հնարավոր է դարձնում սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ժամանակավորապես կիրառումը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով:

Այսուհանդերձ, ինչպես վկայում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճանաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի և ծանր հետևանքներ հանրության և պետության համար, ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օ-

րենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները: Հետևաբար, հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում:

ՍԴՈ-984, 15 հուլիսի, 2011 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման իրավակիրառական պրակտիկայի արդյունքում, վերանայման պահանջների բավարարման նույնիսկ վերոհիշյալ սակավաթիվ գործերի, առանձին դեպքերում ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմերի կիրառմամբ ընդունված դատական ակտերը շարունակում են մնալ օրինական ուժի մեջ և դիմողների համար իրենց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից վերանայման արդյունքում որևէ իրավական հետևանք չի առաջանում: Ընդ որում, առկա են դեպքեր, երբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի կիրառմամբ ընդունված դատական ակտի վերանայման պահանջի առնչությամբ նույնիսկ մերժվում է վերանայման վարույթ հարուցելու պահանջը և կայացվում վերանայման վերաբերյալ բողոքը վերադարձնելու մասին որոշում: Ընդ որում, դեպքերի գերակշիռ մասում այդ պահանջը, ինչպես նշվեց, մերժվում է այն պատճառաբանությամբ, որ սահմանադրական դատարանը, դատարանների կողմից կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող ճանաչելով՝ տարաժամկետել է հակասահմանադրական ճանաչված նորմի ուժը կորցնելը, և բողոք բերող անձը նման պայմաններում չի ապացուցել և հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը: Ավելին, այն դեպքում, երբ բողոքը ներկայացվում է տարաժամկետման ավարտից հետո, բողոքը վերադարձվում է այն պատճառաբանությամբ, որ բաց է թողնված բողոք բերելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը:

Այս առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական պրակտիկան զարգացել է հակառակ սահմանադրական դատարանի 2007 թ. մայիսի 11-ի ՍԴՈ-701 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների: Այդ որոշման մեջ սահմանադրական դատարանը մասնավորապես նշել է. «Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով:

Այսուհանդերձ, ինչպես վկայում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճանաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի և ծանր հետևանքներ հանրության և պետության համար, ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օ-

րենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները: Հետևաբար, հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում»:

Սահմանադրական դատարանը վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով միաժամանակ գտնում է, որ այդ պրակտիկան արդյունք է «վերանայման վարույթ», «դատական ակտի վերանայում» հասկացությունների ոչ ճիշտ ընկալման ու կիրառման:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՍԴՈ-701, 11 մայիսի, 2007 թ.

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի դրույթները, համակարգային առումով փոխկապակցված լինելով նույն հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի դրույթների հետ, երաշխավորում են Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարումը: Սահմանադրությունը լիազորում է սահմանադրական դատարանին Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանել: Այս դրույթի՝ թեկուզ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանությունից բխում է, որ եթե սահմանվել է ավելի ուշ ժամկետ, ապա սահմանադրական դատարանի որոշման ընդունման և հրապարակման պահից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտը (դրույթը) իրավական ուժը չի կորցնում: Հակառակ պարագայում, ինչպես ցույց է տալիս նաև միջազգային պրակտիկան, սահմանադրական դատարանի նման լիազորությունը կիմաստազրկվեր: Սահմանադրորեն կարևորելով սահմանադրական դատարանի որոշման հետևանքով առաջացող հնարավոր իրավիճակների սահմանադրականությունը, նկատի ունենալով, որ հասարակական հարաբերությունների դինամիկ գործընթացում իրավակարգավորման կտրուկ փոփոխությունները կարող են առաջացնել տարաբնույթ հակասահմանադրական իրավիճակներ, դրանք հաղթահարելու համար նախատեսելով սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կամ դրա մի մասի ուժը կորցնելու տարաժամկետման հնարավորություն, միաժամանակ օրենսդիրը խստորեն սահմանափակել է սահմանադրական դատարանի հայեցողական մոտեցման շրջանակները: Սահմանադրության 100 հոդվածում հստակ ամրագրելով, որ սահմանադրական դատարանն իր լիազորություններն իրականացնում է օրենքով սահմանված կարգով, օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասում ամրագրել է, որ. «Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության և պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը:

Այդ դեպքում մինչև ակտի իրավաբանական ուժը կորցնելն ակտը համարվում է Սահմանադրությանը համապատասխանող»:

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ մասը նախատեսում է, որ. «Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները կանխելուն ուղղված միջոցառումները»: Բացի դրանից, նույն հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ «Հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որպեսզի դրանով իրապես կանխվեն անխուսափելի և ծանր հետևանքները հանրության և պետության համար, և ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին»:

Այս համատեքստում, հակասահմանադրական ճանաչված իրավական ակտը կամ դրա դրույթը շարունակում է գործել սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության 102 հոդվածի հիմքով դրանց գործողությունը հիմնավորված կերպով տարաժամկետելու շնորհիվ: Ուստի, վիճարկվող դրույթի իրավական բովանդակությունն ածանցյալ է և անհրաժեշտաբար բխում է Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթներից: Հետևաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի ձևակերպումն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի համատեքստում, որ Սահմանադրությունը հնարավոր է դարձնում սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ժամանակավորապես կիրառումը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով:

Այսուհանդերձ, ինչպես վկայում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ և 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճանաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի և ծանր հետևանքներ հանրության և պետության համար, ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները: Հետևաբար, հակասահմանադրական ճանաչված և տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում:

ՍԴՈ–751, 15 ապրիլի, 2008 թ.

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս կամ այն վիճարկվող ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ իր որոշման իրավական հետևանքները կապվում են ոչ միայն տվյալ ակտի, այլ նաև դրա հիման վրա կայացված դատական կամ վարչական ակտերի իրավական հետևանքների, այդ ակտերի հիման վրա մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշտպանության հետ՝ որպես անմիջական գործող իրավունք: Հետևաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10–րդ մասի 2–րդ պարբերությունում և 12–րդ ու 13–րդ մասերում ամրագրված դրույթներով կանոնակարգվել են սահմանադրական դատարանի՝ նման որոշումների իրավական հետևանքերն այն դատական և վարչական ակտերի համար, որոնք կայացվել են մինչև սահմանադրական դատարանի համապատասխան որոշման ընդունումը: Ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10–րդ մասի 2–րդ պարբերության՝ սահմանադրական դատարանի որոշումները, որպես ընդհանուր կանոն, չունեն հետադարձ ուժ և չեն տարածվում մինչ սահմանադրական դատարանի որոշման ընդունումը ծագած և դատական կամ վարչական ակտերով կարգավորված իրավահարաբերությունների վրա: Ընդ որում, եթե կատարված դատական կամ վարչական ակտերը վերանայման ենթակա չեն, ապա չկատարված վարչական կամ դատական ակտերը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10–րդ մասի 3–րդ պարբերության՝ ենթակա չեն կատարման և դրանց կատարումն անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12–րդ և 13–րդ մասերը նախատեսում են վերոհիշյալ ընդհանուր կանոնից բացառություններ՝ տարբերակված մոտեցում դրսևորելով քաղաքացիաիրավական և քրեաիրավական հարաբերություններին: Օրենքի 68 հոդվածի 12–րդ մասով նախատեսված բացառության համաձայն՝ սահմանադրական դատարանի հայեցողությանն է թողնված իր որոշումներին հետադարձ ուժ տալու հարցը: Նույն մասը որոշակի սահմաններ է նախատեսում սահմանադրական դատարանի այդ հայեցողության իրացման համար, այն է՝ սահմանադրական դատարանը կարող է իր այս հայեցողությունից օգտվել այն դեպքում, երբ իր որոշմանը հետադարձ ուժ չտալը հանրության կամ պետության համար կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Ինչպես նաև սահմանադրական դատարանի նման որոշման հիման վրա վերանայման ենթակա են այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող միայն երեք տարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը:

Նույն հոդվածի 13–րդ մասով նախատեսված բացառությունը վերաբերում է սահմանադրական դատարանի այն որոշումների հետադարձ ուժին, որոնք Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչում քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը: Այս բացառությունը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ քրեական և վարչական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն: Մասնավորապես, այս դեպքում հաշվի է առնվել անձի նկատմամբ քրեական օրենսգրքով կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքով հարկադրանքի միջոց կիրառելու և դրանից բխող հետևանքների առկայությունը և դրանց վերացման իրական հնարավորությունը:

....

9. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետը երաշխավորում է անձի՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, օրենքով այդ իրավունքն իրացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, սա-

կայն, գործնականում ստեղծվում է մի այնպիսի իրավիճակ, երբ մեկ այլ անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելը խոչընդոտում է անձին իրացնելու իր՝ սահմանադրական դատարան դիմելու սահմանադրական իրավունքը: Այսինքն՝ մի անձի իրավունքի իրացումը կանխվում է մեկ այլ անձի կողմից իր իրավունքի իրացման փաստով, ինչի արդյունքում նրանց միջև ստեղծվում է նաև անհավասար վիճակ:

Սահմանադրական իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելու՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի այդ իրավունքի իրացումը կախվածության մեջ չդրվի տվյալ անձի կամքից անկախ առաջացած որևէ հանգամանքից: Հետևաբար, յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում օգտվելու սահմանադրական դատարանի միջոցով տրամադրվող իրավական պաշտպանությունից: Նման հնարավորությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաև այն անձանց անչությամբ կայացված դատական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետով երաշխավորված՝ սահմանադրական դատարան դիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: Դա նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջն է, քանի որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առնվեն նաև մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

ՍԴՈ-758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

11. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման առկա իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպատակ և ոչ արդյունավետ:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

8. .... Հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայումը՝ որպես անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության միջոց, սահմանադրական դատարան դիմելու (ՀՀ Սահմ. 101 հոդվածի 6–րդ կետ) միջոցով անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության իրավունքի բաղադրատարրն է, սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձինք իրենց նկատմամբ կայացված դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու իրավունքից կարող են օգտվել, **եթե իրացրել են սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը (այսինքն՝ առկա է սահմանադրական դատարանի որոշումը՝ անձանց նկատմամբ կիրառված օրենքը Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ) կամ սահմանադրական դատարանի նոր հանգամանք հանդիսացող որոշման կայացման պահին (կամ նույն հարցով այլ դիմումների հիման վրա դատաքննությունն սկսելու օրվա դրությամբ) ունեցել են այդպիսի իրավունքն օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու պոտենցիալ հնարավորություն:**

ՍԴՈ–866, 23 փետրվարի, 2010 թ.

3. ՀՀ Սահմանադրության 102–րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 65–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները դրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են դատավարության կողմերին, պետական իշխանության համապատասխան մարմիններին, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողով և ՀՀ վճռաբեկ դատարան, հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում և սահմանադրական դատարանի տեղեկագրում: Իսկ նույն օրենքի 61–րդ հոդվածի 5–րդ մասի և 66–րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց համար:

.... Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքներում դեռևս նախատեսված չէ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 100–րդ հոդվածի 1–ին կետի հիմքով օրենքը (վերջինիս դրույթը), ՀՀ Ազգային ժողովի որոշումը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու դեպքում ՀՀ Ազգային ժողովի կողմից սահմանադրական դատարանի այդպիսի որոշումից բխող անհրաժեշտ իրավակարգավորում, որպիսի հանգամանքը կարևորվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի ամփոփման վերաբերյալ 2008 և 2009 թվականների տարեկան հաղորդումներով:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ, ինչպես վկայում է դատական պրակտիկան, հաճախ օրենքի այս կամ այն դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներից կամ իրավակարգավորման ընդհանուր անհրաժեշտությունից բխող օրենսդրական փոփոխությունների և լրացումների հետ կապված իրավատեխնիկական խնդիրների (այդ փոփոխությունները, լրացումները օրենքում ներառելու (ինկորպորացնելու)) ոչ լիարժեք լուծումը հանգեցնում է ոչ թե փոփոխված (լրացված) օրենքի, այլ դրանում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ օրենքի կիրառմանը, որը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից և իրավակիրառական պրակտիկայում առաջացնում է անհստակություն:

ՍԴՈ–936, 8 փետրվարի, 2011 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած, ի կատարումն ՍԴՈ–780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ–ում վարչական արդարադատության համակարգը համալրվեց և ներդրվեց դատական բողոքարկման նոր համակարգ, այնուամենայնիվ, բողոքարկման գործող ընթացակարգը, մասնավորապես՝ հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, չենթարկվեց համապատասխան փոփոխությունների, որի արդյունքում սահմանափակվեց այդպիսի գործերով արդար, մատչելի և արդյունավետ դատական պաշտպանության՝ անձանց սահմանադրական իրավունքը: Սույն գործով պատասխանող կողմի դիրքորոշումն այն մասին, թե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական նորմերի նշանակությունն ու կարևորությունը դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանում է երկրորդական նշանակություն, չի բխում արդարադատության սահմանադրաիրավական բովանդակությունից, սահմանադրական դատարանի որոշումներից, ինչպես նաև ՀՀ իրավահամակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման ընդհանուր հայեցակարգից: Դատարանի՝ դատավարական կարգի խախտումով ընդունած որոշումը չի կարող համարվել լեգիտիմ ու արդարադատության պահանջներին համապատասխանող:

ՍԴՈ–943, 25 փետրվարի, 2011 թ.

8. .... Սահմանադրական դատարանը կոչված է ապահովելու ՀՀ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, որի արդյունքում ընդունում է որոշումներ (եզրակացություններ): Այդ ակտերը ՀՀ իրավական համակարգում ունեն իրենց առանձնահատուկ տեղն ու դերը՝ թե՛ բովանդակությամբ, իրավակարգավորիչ նշանակությամբ և թե՛ ունեցած իրավական հետևանքների առումներով: Դրանցով կարգավորվող հարաբերությունները վերաբերում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին և իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտներին: Սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են կատարման անհապաղ (կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և ենթակա չեն քննարկման (վիճարկման, քննության) պետական, տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի, կազմակերպության կամ անհատի կողմից:

Սահմանադրական դատարանի որոշումն իրենից ներկայացնում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակներում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն, սահմանափակումներ, իրավաբանական տեսակետից անվիճարկելի (վերանայման ոչ ենթակա), առանց նախապայմանների, անվերապահ և անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել) կատարման ենթակա նորմատիվ կանոններ, այսինքն՝ **վարքագծի կանոններ**: Դրանով է պայմանավորված սահմանադրական դատարանի որոշումների նորմատիվ բնույթը, ինչպես նաև այդ ակտերին անմիջականորեն հաջորդող իրավական առանձնահատուկ հետևանքները՝ կապված հակասահմանադրական ճանաչված իրավանորմի իրավաբանական ուժը կորցնելու, սահմանադրական նորմերի մեկնաբանման (իրավական դիրքորոշումների) շրջանակներում իրավանորմը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու, ինչպես նաև սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրներին լուծում ու փաստերին գնահատական տալու հետ (ՀՀ Սահմ. 100–րդ հոդվածի 3–9–րդ կետեր):

Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը՝ **ՀՀ իրավահամակարգում** այդ ակտերի տեղի և դերի իմաստավորման տեսանկյունից, կայանում է հետևյալում.

– ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները ՀՀ իրավական ակտերի ստորադասության համակարգում դասված են Սահմանադրությունից և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքից հետո, այդպիսով որոշվում է նաև այդ ակտերի իրավաբանական ուժը: Օրենքները, ինչպես նաև ՀՀ օրենսդրության այլ ակտերը չպետք է հակասեն սահմանադրական դատարանի որոշումներին («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9, 12, 13, 13.1, 14, 15, 16, 17, 18, 19 և 20–րդ հոդվածներ), հետևաբար՝ սահմանադրական դատարանի որոշումներն իրավական ցանկացած այլ ակտի նկատմամբ ունեն իրավաբանական առավել բարձր ուժ,

– այդ որոշումները որպես դատարանի վերջնական ակտեր ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից, որոնց կատարումը (որպես իրավական ակտ) երաշխավորված է օրենքով և ապահովված է պետական հարկադրանքի ուժով («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66–րդ հոդված),

– սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են ՀՀ բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61–րդ հոդված):

Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթն առանձնահատուկ է նաև **ՀՀ ընդհանուր և մասնագիտացված դատարանների ակտերի համակարգում**: Սահմանադրական դատարանի որոշումների և դատական այլ ակտերի բնույթի, բովանդակության և դրանց իրավաբանական ուժի համեմատական վերլուծությունը վկայում է, որ.

– սահմանադրական արդարադատություն իրականացնելը և այդ գործառույթի շրջանակներում գործով ըստ էության որոշում կայացնելը, ինչպես նշվեց, ՀՀ սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է (ՀՀ Սահմանադրության 92–րդ հոդվածի երկրորդ մաս և 93–րդ հոդված),

– քննելով սահմանադրական (հանրային–իրավական բնույթի) գործեր՝ սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման դատական համակարգի մյուս մարմինների՝ ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարանների կողմից,

– իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 և 63–րդ հոդվածների պահանջներից, սահմանադրական դատարանը գնահատում է նաև արդարադատական (ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների) պրակտիկան, բացահայտելով նաև կիրառվող (այդ թվում՝ դատական պրակտիկայում) օրենքների (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակությունը՝ զարգացնելով ինչպես սահմանադրական, այնպես էլ ճյուղային իրավունքը,

– իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետևանքներ (նոր հանգամանքներ), որոնք պարտադիր հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն,

– սահմանադրական դատարանն իր որոշումներով ըստ էության մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը,

– սահմանադրական դատարանի որոշումները վիճարկման ենթակա չեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային որևէ դատարանում:

Վերոհիշյալ առանձնահատկությունները պայմանավորված են նաև սահմանադրական դատարանի ակտերով կարգավորվող հարաբերությունների սահմանադրաիրավական բովանդակությամբ: Այդ ակտերի՝ հրապարակման պահից ուժի մեջ մտնելը, ինչպես նաև դրանցում ամրագրված նորմերի երաշխավորված անփոփոխելիությունը (վերջնական լինելը, որպես կանոն՝ վերանայելի չլինելը) ՀՀ Սահմանադրությամբ նախատեսելը (102-րդ հոդված) կարևորվում է հետևյալ հիմնավորումներով.

– սահմանադրական դատարանի որոշումներով լուծվում են հանրային-իրավական կարևորություն ունեցող այնպիսի գործեր, որոնք անմիջականորեն կապված են ՀՀ Սահմանադրության նորմերի մեկնաբանման ու կիրառման, իրավական, քաղաքական անվտանգության, հանրային իշխանության անընդհատության (հաջորդայնության), այդ իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրենց սահմանադրական գործառույթների անվերապահ կատարման, ինչպես նաև օրենքով նրանց վերապահված լիազորությունների սահմանադրականության որոշման հետ, հետևաբար՝ այդ ակտերում ամրագրված նորմերը ենթակա են անվիճելի և անհապաղ կատարման,

– առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքներով՝ սահմանադրական դատարանն իր որոշումներով և իր իրավասության շրջանակներում ապահովում է ինչպես անձանց (ֆիզիկական, իրավաբանական) խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը, այդ իրավունքներով պետության սահմանափակումը (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված), այնպես էլ սահմանադրական կարգի հիմունքների կայունությունը (սահմանադրական օրինականությունը), որով պարտավորեցնում է հանրային իշխանության բոլոր մարմիններին ու պաշտոնատար անձանց ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ կատարելու սահմանադրական դատարանի որոշումների պահանջները, այդ թվում ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններին՝ մեկնաբանելու և կիրառելու օրենքներն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան, ինչպես նաև նոր հանգամանքների հիմքով վերանայելու անձանց նկատմամբ կայացված դատական ակտերը:

9. Ելնելով ՀՀ սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի, իր կողմից ընդունվող որոշումների իրավաբանական բնույթի և դրանով պայմանավորված իրավական հետևանքների վերոհիշյալ առանձնահատկություններից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր կողմից ընդունված ակտերը, դրանց բնույթն ու իրավաբանական ուժը պետք է ընկալվեն և գնահատվեն, ինչպես և նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն ունեցող ցանկացած այլ պետական մարմնի պարագայում, **«գործառնական և կառուցակարգային կարգավիճակ»** համադրության և միասնության մեջ, տվյալ դեպքում՝ ՀՀ Սահմանադրության 92-րդ (2-րդ մաս), 93-րդ, 94-րդ (3-րդ մաս), 100-րդ և 102-րդ հոդվածներում ամրագրված նորմերի և սույն որոշման 8-րդ կետում տրված դրանց մեկնաբանությունների շրջանակներում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանի որոշումը, ինչպես և ցանկացած իրավական ակտ, ենթակա է իրավական տեխնիկայի միասնական կանոններին՝ այն առանձնահատկություններով, որոնք սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով, որի նպատակը նաև դրանց միակերպ, ամբողջական ընկալման ապահովումն է անձանց և իրավակիրառող սուբյեկտների կողմից (այդ հիմնախնդրին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում՝ ՍԴՈ-630, ՍԴՈ-720, ՍԴՈ-723, ՍԴՈ-780 և այլն):

Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օբյեկտիվ

և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական–պատճառաբանական մասում արտահայտված **իրավական դիրքորոշումները**, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անտեսման դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը:

....

10. .... Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշումները սահմանադրական–արդարադատական մարմինների կառուցակարգային դերի և ընդունած որոշումների իրավաբանական բնույթի վերաբերյալ՝ հանգեցնում են այն եզրակացությանը, որ անհատական դիմումների ազգային համակարգը պետք է լինի լիարժեք ու ամբողջական, ներառի բոլոր իրավական ակտերը, այդ դիմումներով ընդունված որոշումները պետք է արդյունավետ ազդակ հանդիսանան ընդհանուր իրավասության դատարաններում անձանց նկատմամբ գործերի վարույթը նորոգելու կամ սկսված վարույթը կարճելու համար, ինչպես նաև պետք է նախատեսվեն իրավական գործուն միջոցներ՝ այդպիսի որոշումներով պատասխանող կողմից արդարացի հատուցում պահանջելու ուղղությամբ (Cocchiarella judgment (ECtHR, GC, Cocchiarella v. Italy, 29 March 2006, պարագրաֆներ 76–80 և 93–97, ON INDIVIDUAL ACCESS TO CONSTITUTIONAL JUSTICE. Adopted by the Venice Commission at its 85th Plenary Session (Venice, 17–18 December 2010), պարագրաֆներ 79, 94):

ՍԴՈ–984, 15 հուլիսի, 2011 թ.

6. ....Գնահատելով վերոհիշյալ իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջին պարագայում հաշվի չի առնվել ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թ. սեպտեմբերի 9–ի ՍԴՈ–758 որոշման 13–րդ կետում արտահայտված և 2010 թ. փետրվարի 23–ի ՍԴՈ–866 որոշման մեջ վերահաստատված այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ այն դեպքում, երբ դատական ակտի վերանայման համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը, **ապա գործնականում վերանայված ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետև արդարադատության հիմքում դրվել է ու կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմը:**

....

7. .... Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ **տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը:**

ՍԴՈ–1142, 2 ապրիլի, 2014 թ.

18. .... Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թ. հունիսի 14–ի ՀՕ–58 Հայաստանի Հանրապետության օրենքի 68–րդ հոդվածի 8–րդ մասն իմպերատիվ պահանջ է առաջադրում սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի վերաբերյալ: Դրա էությունը կայանում է նրանում, որ օրենքի կամ դրա առանձին դրույթների սահմանադրականության հարցով գործի դատաքննության արդյունքում սահմանադրական դատարանն իրավասու է միայն ընդունել որոշում՝

1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

2) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դա–տարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

3) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ (վիճարկվող նորմերի շրջանակներում) Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

11. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտի վերանայման միջոցով անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է բացառապես վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների ակտերի վերանայում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետի համաձայն՝ անհատական դիմումի շրջանակներում սահմանադրական դատարանում կարող են վիճարկվել **դատարանի վերջնական ակտով** կիրառված օրենքի դրույթները: Որպես վերջնական դատական ակտ առանձին դեպքերում կարող են հանդես գալ տարբեր ատյանի՝ առաջին ատյանի, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի դատական ակտերը: Առավել հաճախ վերջնական դատական ակտը վճռաբեկ դատարանի ակտն է, որը կայացվել է ի սպառումն պաշտպանության բոլոր միջոցների: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ սահմանադրական նշված դրույթը որպես անհատական դիմումի ընդունելիության պայման ամրագրում է վիճարկվող օրենքի դրույթի **վերջնական դատական ակտով կիրառված լինելու պահանջը**, ինչը չի նշանակում, որ վերջնական դատական ակտով կիրառված դրույթը պետք է պարտադիր կերպով կիրառված լինի նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում. օրենքի դրույթի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու համար բավական է միայն այդ դրույթի կիրառումը վերջնական դատական ակտով: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետը հնարավոր է համարում սահմանադրական դատարանում այնպիսի օրենքի դրույթի սահմանադրականության վիճարկում, որը կիրառվել է որպես վերջնական դատական ակտ հանդիսացող՝ վճռաբեկ դատարանի կամ վերաքննիչ դատարանի ակտով, սակայն չի կիրառվել առաջին ատյանի դատարանի ակտով: Նման իրավիճակում, այս կամ այն օրենքի դրույթը սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու դեպքում սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից առաջին ատյանի դատարանի դատական ակտի վերանայումը դառնում է անիմաստ

և անհնարին. սահմանադրական դատարանի որոշման հիման վրա անձի խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է միայն վերջնական դատական ակտի վերանայում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ անհատական դիմումների քննության ընդունման առնչությամբ սահմանադրական դատարանում արդեն ձևավորված է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6–րդ կետի վերոհիշյալ մեկնաբանությանը համապատասխան իրավակիրառական պրակտիկա:

Բացի դրանից, սահմանադրական դատարանում կարող են վիճարկման առարկա դառնալ նաև այն դատավարական նորմերը, որոնք կանոնակարգում են վարույթի կոնկրետ ձևերը, այն է՝ վարույթն առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ դատարանում կամ վճռաբեկ դատարանում: Նման նորմերը կիրառելի են միայն տվյալ դատական ատյանի դատական ակտով:

Ավելին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ և՛ վերաքննիչ դատարանը, և՛ վճռաբեկ դատարանն ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանում է այդ ակտը, եթե գտնում է, որ այն թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ: Այս դեպքում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը կարող են կիրառել օրենքի դրույթներ, որոնք ստորին ատյանի դատարանի կողմից չեն կիրառվել:

Միաժամանակ, նոր հանգամանքների հիման վրա վերանայման են ենթակա ոչ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այլ նաև միջանկյալ դատական ակտերը: Իսկ միջանկյալ ակտերի բողոքարկման արդյունքում վերաքննիչ և վճռաբեկ դատարաններն իրավասու են կայացնելու նոր դատական ակտեր, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այս դեպքում ավելի քան ակնհայտ է, որ միայն առաջին ատյանի դատարանի միջանկյալ ակտի՝ նոր հանգամանքների հիմքով վերանայման հնարավորությունը բացառում է վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից միջանկյալ դատական ակտերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս կայացված նոր դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման առկա իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպատակ և ոչ արդյունավետ:

ՍԴՈ–817, 21 հուլիսի, 2009 թ.

5. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ի կատարումն սահմանադրական դատարանի նշված որոշման և հաշվի առնելով այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2008 թ. դեկտեմբերի 26–ի օրենքի 17 հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 233 հոդվածի 2–րդ մասում խնդրո առարկա դրույթը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված»: Այսինքն՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ–690 և ՍԴՈ–765 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ օրենսդրորեն ամրագրվել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը՝ առանց որևէ բացառության, պատճառաբանելու պահանջը՝ որպես դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիք:

ՍԴՈ-866, 23 փետրվարի, 2010 թ.

3. ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանադրական դատարանի որոշումները դրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են դատավարության կողմերին, պետական իշխանության համապատասխան մարմիններին, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողով և ՀՀ վճռաբեկ դատարան, հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում և սահմանադրական դատարանի տեղեկագրում: Իսկ նույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի և 66-րդ հոդվածի համաձայն սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց համար:

.... Միաժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ, ինչպես վկայում է դատական պրակտիկան, հաճախ օրենքի այս կամ այն դրույթը ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներից կամ իրավակարգավորման ընդհանուր անհրաժեշտությունից բխող օրենսդրական փոփոխությունների և լրացումների հետ կապված իրավատեխնիկական խնդիրների (այդ փոփոխությունները, լրացումները օրենքում ներառելու (ինկորպորացնելու)) ոչ լիարժեք լուծումը հանգեցնում է ոչ թե փոփոխված (լրացված) օրենքի, այլ դրանում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ օրենքի կիրառմանը, որը չի բխում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից և իրավակիրառական պրակտիկայում առաջացնում է անհստակություն:

ՍԴՈ-936, 8 փետրվարի, 2011 թ.

7. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած, ի կատարումն ՍԴՈ-780 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ-ում վարչական արդարադատության համակարգը համալրվեց և ներդրվեց դատական բողոքարկման նոր համակարգ, այնուամենայնիվ, բողոքարկման գործող ընթացակարգը, մասնավորապես՝ հատուկ վարույթի կարգով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով, չենթարկվեց համապատասխան փոփոխությունների, որի արդյունքում սահմանափակվեց այդպիսի գործերով արդար, մատչելի և արդյունավետ դատական պաշտպանության՝ անձանց սահմանադրական իրավունքը: Սույն գործով պատասխանող կողմի դիրքորոշումն այն մասին, թե նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատավարական նորմերի նշանակությունն ու կարևորությունը դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ստանում է երկրորդական նշանակություն, չի բխում արդարադատության սահմանադրաիրավական բովանդակությունից, սահմանադրական դատարանի որոշումներից, ինչպես նաև ՀՀ իրավահամակարգում օրենքով ներդրված դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման ընդհանուր հայեցակարգից: Դատարանի՝ դատավարական կարգի խախտումով ընդունած որոշումը չի կարող համարվել լեգիտիմ ու արդարադատության պահանջներին համապատասխանող:

ՍԴՈ- 1224, 7 հուլիսի, 2015 թ.

25. Վերոշարադրյալ դիրքորոշումները վերաբերում են դիմողի կողմից վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցերին: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նախորդ իրավակարգավորումների համեմատ որոշակի դրական տեղաշարժեր ապահովելով հանդերձ, նոր իրավակարգավորումներում սույն որոշման մեջ արձանագրված ոչ լիարժեք կարգավորումները նաև ՀՀ սահմանադրական դատարանի

ՍԴՈ–1142 որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների դեռևս ոչ ամբողջական իրացման հետևանք են: **Օրենսդրական հետագա կարգավորումները համալիր բնույթ պետք է հաղորդեն խնդրի համակարգային լուծմանը**՝ հետևողականորեն հաշվի առնելով նաև տվյալ հիմնահարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ–1142 և սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ–1254, 9 փետրվարի, 2016

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՍԴՈ–1052, ՍԴՈ–1062 և ՍԴՈ–1249 որոշումների ընդունումից հետո դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը համապատասխան օրենսդրական համալիր կանոնակարգումների չի ենթարկվել՝ դրանով իսկ չեն իրացվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումներն անհրաժեշտ են, մասնավորապես, քրեական դատավարական, քաղաքացիական դատավարական և վարչական դատավարական միասնական քաղաքականության շրջանակներում դատական ակտերի վերաբերյալ բողոք ներկայացնելու նախապայմանների մասով համարժեք լուծումներ գտնելու նպատակով:

Այս հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», ինչը ենթադրում է, որ սահմանադրական դատարանի որոշումներն իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են իրավունքի աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով նույն որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այս համատեքստում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև սույն գործի շրջանակում 2015 թվականի նոյեմբերի 30–ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված բացատրության շրջանակներում պատասխանող կողմի պաշտոնական ներկայացուցչի այն պնդումը, որ «.... ոչ միասնական կամ հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բաց թողնման հարգելիության այն չափանիշները կամ հիմքերի մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որը յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանա բաց թողնված ժամկետի հարգելիությունը գնահատելիս»:

ՎԵՐԱՑԱԿԱՆ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–751, 15 ապրիլի, 2008 թ.

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածն ունի այն բնորոշ առանձնահատկությունը, որ դրանով կանոնակարգվում են իրավական նորմերի վերացական սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները: Անհատական դիմումների քննությանը կամ կոնկրետ սահմանադրական վերահսկողությանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգվում են օրենքի 69 հոդվածով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ 69 հոդվածի 11–րդ մասի հղումն օրենքի 68 հոդվածի 6–17–րդ մասերին խորությամբ հաշվի չի առել վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, դա վերաբերում է սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտի առանձնահատկություններին՝ վերացական ու կոնկրետ սահմանադրական վերահսկողության պարա-

գաներում: Եթե նախնական և հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Հետևաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածի պահանջները հաշվի առնելով, սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել միայն անձի նյութական և դատավարական իրավունքների պաշտպանության տեսանկյունից վիճարկվող դրույթները «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11 և 12-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3^{2} բաժնի (մասնավորապես՝ 204^{20} հոդվածի) դրույթների հետ համադրության մեջ դիտարկելով միայն:

6. Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը: Այս բնորոշ գծերին համահունչ՝ ՀՀ ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն և արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների, պաշտպանությանը: Մասնավորապես, օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը նախատեսում է դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով վերանայելու հնարավորությունը: ՀՀ քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածներով սահմանված է սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման կարգը:

....

7. Վերացական և կոնկրետ սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններով է պայմանավորված նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 10-րդ և 69 հոդվածի 12-րդ մասերի միջև եղած «անհամապատասխանությունը»: Մասնավորապես, օրենքի 68 հոդվածի 10-րդ մասը սահմանում է ընդհանուր կանոն, որից բացառություն է անում նույն հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով նախատեսված դեպքերում միայն, այդ ցանկում չներառելով օրենքի 69 հոդվածի 12-րդ մասը: Մինչդեռ օրենքի 69 հոդվածի նշված մասն ամրագրում է, որ օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման: Այսինքն՝ այս նորմը ևս բացառություն է օրենքի 68 հոդվածի 10-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնից, բնորոշ է կոնկրետ վերահսկողությանը, որի մասին, բնականաբար, հիշատակում չէր կարող լինել 68 հոդվածում, որն էլ իր հերթին տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորություն է տալիս: Եվ եթե ձևավորված իրավակիրառական պրակտիկայի արդյունքում ընդհանուր իրավասության դատարանների կողմից շարունակվի նախապատվությունը տալ օրենքի 68 հոդվածի 10-րդ մասին՝ անտեսե-

լով 69 հոդվածի 12–րդ մասի պահանջը, ապա ընդհանրապես անիմաստ կդառնա սահմանադրական դատարան անհատական դիմումներ ներկայացնելը:

ՍԴՈ–836, 27 հոկտեմբերի, 2009 թ.

6. ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1–ին մասի 7–րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի համաձայն դատարանները հանդիսանում են կոնկրետ սահմանադրական վերահսկողության սուբյեկտ: Դատարանների դիմումների հիման վրա կոնկրետ վերահսկողության նպատակն է կանխել դատարանի կողմից կոնկրետ վեճի լուծումը ենթադրյալ հակասահմանադրական օրենքի հիման վրա: Ըստ այդմ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71 հոդվածի 1–ին մասի համաձայն՝ դատարանները կարող են սահմանադրական դատարանում վիճարկել ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1–ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված այն իրավական ակտերի սահմանադրականությունը, որոնք **ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով**: Այլապես, դատարանների դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ սահմանադրական վերահսկողությունը չի ծառայի իր հիմնական նպատակին:

ՍԴՈ–906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

6. .... Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված նաև սահմանադրական արդարադատության բնագավառում, որտեղ, կոնկրետ վերահսկողությունից զատ, նախատեսված է նաև վերացական վերահսկողության ինստիտուտը, որի շրջանակներում ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի առաջին մասի 1–ին, 3–րդ, առավել ևս՝ առաջին մասի 8–րդ կետերում նշված սուբյեկտները, իրավական նորմերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելիս հանդես են գալիս ոչ միայն հանրային շահերի, այլ նաև տվյալ իրավանորմի կիրառման արդյունքում տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետը սահմանում է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանը՝ «Սահմանադրության 100–րդ հոդվածի 1–ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2–րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով»: Միաժամանակ, սահմանադրական արդարադատության բնագավառում գործում է նաև կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նկատառումներով այլ սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, որն իրացվում է ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի առաջին մասի 7–րդ և 8–րդ կետերին համապատասխան:

ՍԴՈ–927, 30 նոյեմբերի, 2010 թ.

6. Սահմանադրական դատարանն իր՝ 2008 թ. ապրիլի 15–ի ՍԴՈ–751 որոշման մեջ անդրադառնալով սահմանադրական կոնկրետ վերահսկողության առանձնահատկություններին՝ նշել է. «Եթե նախնական և հետագա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, **մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը**: .... Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև **անհատական շահերի պաշտպանության խնդիրը**»:

Միաժամանակ, 2010 թ. հոկտեմբերի 19-ի ՍԴՈ-921 որոշման մեջ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում տվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով:

ՍԴՈ-934, 4 փետրվարի, 2011 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **կոնկրետ դատական սահմանադրական վերահսկողության ձևի կիրառման շրջանակներում** ՀՀ Սահմանադրությունը ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ ճանաչելով ՀՀ գլխավոր դատախազին՝ առաջին հերթին հաշվի է առել Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը»: Ուստի սահմանադրաիրավական առումով «գլխավոր դատախազի վարույթ» հասկացությունը համարժեք է «ՀՀ դատախազության վարույթ» հասկացությանը:

ՍԴՈ-1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

7. .... Բանն այն է, որ կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտը համակարգային առումով փոխկապակցված է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտի հետ, որոնց էությունը կայանում է նրանում, որ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա կոնկրետ դատական ակտի վերանայման արդյունքում համապատասխան հիմքերի առկայության պարագայում տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործով կայացվում է նոր դատական ակտ, որը տարբերվում է տվյալ գործով նախկինում՝ մինչև սահմանադրական դատարանի որոշումը կայացված դատական ակտից: Այս համատեքստում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հարկ է տարբերակել «նոր հանգամանքների հիմքով վերանայման վարույթի հարուցում» և «նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայում» եզրույթները: Այսպես. նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի հարուցումը տեղի է ունենում նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման բողոքի ընդունելիության հարցը լուծելիս, որի ընթացքում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33, 204.36 և 204.37-րդ հոդվածները, չի կարող գնահատվել դիմողին առնչվող գործով կիրառված հակասահմանադրական նորմի ազդեցությունը դատարանի եզրահանգման վրա: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների ուժով, եթե առկա չեն բողոքը վերադարձնելու հիմքեր, ապա դատական ակտը վերանայող դատարանը պարտավոր է **ոչ միայն հարուցել վերանայման վարույթ, այլև դրա արդյունքում բեկանել վերանայվող դատական ակտը,** այլապես դատական ակտի հիմքում կշարունակվի մնալ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված կամ սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառված իրավական նորմը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայմանը, **ապա այն վերանայվող դատական ակտի բեկանումից հետո տեղի ունեցող ընթացակարգ է, որի ընթացքում միայն կարող է գնահատվել նոր հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա,** ինչով էլ պայմանավորված է վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը փոփոխելու կամ չփոփոխելու անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում կխաթարվի կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտների էությունը: Ընդ որում, ինչպես արձանագրված է ՍԴՈ-984 որոշման մեջ, դատական ակտը վե-

րանայող՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրավասու են կա՛մ վերանայվող դատական ակտը բեկանել և գործն ուղարկել նոր քննության, կա՛մ վերանայվող դատական ակտը բեկանել և փոփոխել:

8. .... Նման պարագայում ՀՀ վճռաբեկ դատարանը նոր հանգամանքների հիմքով որոշման վերանայման վարույթի հարուցումը մերժել է՝ գտնելով, որ սահմանադրական դատարանն իր որոշումը չի տարածել «....այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա»: Ակնհայտ է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի՝ մասնավորապես 10, 12 և 13-րդ մասերի պահանջների մեկնաբանության շրջանակներում չեն կարող անտեսվել նույն օրենքի 69-րդ հոդվածի 12 և 13-րդ մասերի պահանջները: Սահմանադրական դատարանի որոշման հետադարձության ինստիտուտն առաջին հերթին վերաբերում է վերացական սահմանադրական վերահսկողությանը, իսկ անհատական դիմումների հիման վրա կոնկրետ սահմանադրական վերահսկողության դատավարական ընթացակարգերն ու առանձնահատկությունները սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով: Վերջինիս 11-րդ մասը հղում է կատարում նաև օրենքի 68-րդ հոդվածի 6-17-րդ մասերին՝ շեշտելով, որ տվյալ հոդվածով նշված գործերին առնչվող **բոլոր այլ հանգամանքների** քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառելի են օրենքի 68-րդ հոդվածի նշված մասերի կանոնները: Սակայն, դրանով հանդերձ, անհատական դիմումներով սահմանադրական դատարանի որոշման վերաբերելիության առումով կանոնները հստակ ու իրավական որոշակիության սկզբունքին համահունչ սահմանված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12 և 13-րդ մասերով: Իրավական երկու ինստիտուտների (սահմանադրական դատարանի որոշման հետադարձության և անհատական գանգատի միջոցով սահմանադրական իրավունքների պաշտպանության) իրավական էության ոչ ճիշտ մեկնաբանման արդյունքում սահմանափակվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12 և 13-րդ մասերով նախատեսված իրավասուբյեկտների իրավունքները դատական կարգով պաշտպանելու հնարավորությունը:

21. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՍԴՈ–934, 4 փետրվարի, 2011 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեադատավարական առումով ՀՀ օրենսդրությունը չի հստակեցրել «ՀՀ գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» հասկացությունը: Վերջին երեք տարվա օրենսդրական փոփոխություններն այս հարցում վիճակն ավելի են խճճել: Գործնականում, թե՛ հետաքննության փուլում, թե՛ նախաքննության փուլում գործի վարույթն իրականացնում են հետաքննության ու նախաքննության մարմինները, դատական փուլում՝ դատարանը: Ուստի «գլխավոր դատախազի վարույթում գտնվող կոնկրետ գործ» սահմանադրական դրույթը չի կարող մեկնաբանվել ճյուղային–իրավական մեթոդաբանության կիրառման հիման վրա: Անհրաժեշտ է այն մեկնաբանել դրա սահմանադրական նշանակությանը համապատասխան՝ ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների շրջանակներում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **կոնկրետ դատական սահմանադրական վերահսկողության ձևի կիրառման շրջանակներում** ՀՀ Սահմանադրությունը ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ ճանաչելով ՀՀ գլխավոր դատախազին՝ առաջին հերթին հաշվի է առել Սահմանադրության 103–րդ հոդվածի 1–ին մասի այն դրույթը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը»: Ուստի սահմանադրաիրավական առումով «գլխավոր դատախազի վարույթ» հասկացությունը համարժեք է «ՀՀ դատախազության վարույթ» հասկացությանը:

Պարզաբանման անհրաժեշտություն ունի նաև «**իր վարույթ**» հասկացությունը: Գործող օրենսդրության համաձայն մինչդատական վարույթն իրականացնում են հետաքննության և նախաքննության մարմինները, իսկ դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Դատական քննության փուլում վարույթն իրականացնում է դատարանը, իսկ դատախազությունը դատարանում պաշտպանում է մեղադրանքը: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28–ի ՀՕ–270–Ն օրենքի հիման վրա դատախազն այլևս նախաքննություն իրականացնելու իրավասություն չունի, ուստի այս իմաստով չի կարող որևէ գործ իր վարույթ ընդունել կամ իրականացնել: Եթե ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունն ընկալվի զուտ դրա քրեադատավարական իմաստով, ապա կստացվի, որ ՀՀ գլխավոր դատախազի այս լիազորության իրականացումը դառնում է անհնարին, քանի որ այդ լիազորության իրականացման համար ՀՀ գլխավոր դատախազը տվյալ գործը պետք է ընդունի իր վարույթ և հանդես գա որպես վարույթն իրականացնող մարմին, որի իրավասությունը չունի: Համանման իրավակարգավորում է պահպանվել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71–րդ հոդվածում (2006 թ. հունիսի 1–ի խմբագրությամբ):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունը մեկնաբանելիս պետք է հիմք ընդունել այդ հասկացության սահմանադրաիրավական նշանակությունը՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 103–րդ հոդվածում նախատեսված ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների բովանդակությունից: **«Իր վարույթ» հասկացության առավել լայն մեկնաբանությունը ենթադրում է, որ վերջինս վե-**

ռաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տվյալ փուլում այդ գործով վերջնական իրավական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված է հենց այդ մարմինը: ՀՀ Սահմանադրությունը ՀՀ գլխավոր դատախազին ճանաչելով որպես կոնկրետ վերահսկողության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ՝ սահմանադրաիրավական իմաստով «կոնկրետ գործը» դիտարկում է դատախազության լիազորությունների իրականացում բոլոր այն դեպքերում, **երբ այդ մարմինն իր սահմանադրական գործառույթների շրջանակներում իրավասու է կայացնելու վերջնական որոշում:**

Վերահաստատելով ՍԴՈ–844 որոշմամբ ՀՀ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի ու լիազորությունների վերաբերյալ արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ **ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետի իմաստով «գլխավոր դատախազի վարույթ» հասկացությունը վերաբերում է ՀՀ դատախազության՝ ՀՀ Սահմանադրության 103–րդ հոդվածով նախատեսված բոլոր գործառույթների իրականացմանը**: Այդ գործառույթներից յուրաքանչյուրն իրականացնելիս, եթե ի հայտ է եկել դատախազության պաշտոնատար անձի կողմից կոնկրետ գործով **իր իրավասության շրջանակներում կայացվելիք որոշման հիմքում դրվող նորմատիվ ակտի դրույթի սահմանադրականության գնահատման հարց** և այդ հարցի բարձրացումը չի խոչընդոտում պետական իշխանության այլ մարմնի լիազորությունների բնականոն իրացմանը, ապա այդ հարցով ՀՀ գլխավոր դատախազն իրավասու է դիմել ՀՀ սահմանադրական դատարան: Այլապես, ՀՀ գլխավոր դատախազը կզրկվի սահմանադրական դատարան դիմելու իր սահմանադրական լիազորությունն իրականացնելու հնարավորությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը՝ ՀՀ Սահմանադրության 101–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետի ընդհանուր տրամաբանության շրջանակներում, առաջին հերթին վերաբերում է մինչդատական վարույթի փուլին, քանի որ այս փուլում իրականացվող գործողությունների օրինականության ապահովումն ամբողջությամբ ՀՀ դատախազության սահմանադրական պարտականությունն է:

Դատական քննության փուլում մեղադրանքը պաշտպանելու՝ դատախազության սահմանադրական գործառույթն իրականացվում է արդարադատության ընդհանուր սկզբունքների, մասնավորապես՝ մրցակցության սկզբունքի շրջանակներում, և վերջնական որոշում կայացնելու իրավասությամբ օժտված է դատարանը: Ուստի այս փուլում կոնկրետ գործը գտնվում է դատարանի վարույթում, և վերջինս է ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ: Այս ընդհանուր կանոնից կարող են առանձնացվել միայն այն դեպքերը, երբ դատախազը գործի դատական քննության փուլում ինքնուրույն որոշում կայացնելու իրավասությամբ է օժտված: Դա կարող է լինել, օրինակ, մեղադրանքից հրաժարվելիս կամ մեղադրանքը փոխելիս: Օրենսդրորեն այս հանգամանքը հաշվի առնելը հնարավորություն կտա առավել արդյունավետ ու ամբողջական իրականացնել ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71–րդ հոդվածում սահմանադրական արդարադատության բնագավառում ՀՀ գլխավոր դատախազի իրավասուբյեկտության խնդրին հետևողական և համակարգային լուծում չի տրված: Հիմնախնդիրն օրենսդրական լրացուցիչ կանոնակարգման անհրաժեշտություն ունի: Համապատասխան օրենսդրական կարգավորումները պետք է հաշվի առնեն, որ ընդհանուր իրավասության դատարանում գտնվող կոնկրետ գործով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ ՀՀ գլխավոր դատախազի լիազորությունը կանոնակարգելով հանդերձ, այն պետք է սահմանափակվի երկու պայմանով. 1) դատարանի վարույթում գտնվող գործով ՀՀ գլխավոր դատախազը կարող է դիմել ՀՀ սահմանադրական դա-

տարան միայն այն դեպքում, երբ վիճարկվող նորմն ուղղակիորեն առնչվում է դատախազի՝ մեղադրանքի պաշտպանության շրջանակներում իր իսկ սահմանադրական գործառույթի իրականացմամբ պայմանավորված ինքնուրույն որոշման կայացմանը, 2) եթե այդ նորմի վիճարկումն անխուսափելիորեն չի պահանջում կոնկրետ գործով վարույթի կասեցում:

Ներկա իրավակարգավորման շրջանակներում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասում հստակ սահմանված է, որ «Դատարանները կարող են դիմել սահմանադրական դատարան համապատասխան գործով վարույթը սկսելուց մինչև այդ գործով ըստ էության որոշում ընդունելու պահը, **իսկ գլխավոր դատախազը՝ տվյալ գործն իր վարույթ ընդունելուց հետո՝ մինչև այն օրենքով սահմանված կարգով իրավասու դատարան ուղարկելը**»:

ՍԴՈ-1236, 17 նոյեմբերի, 2015 թ.

6. .... ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու պարտականությունն է **հսկող դատախազի վերը նշված լիազորության կատարումից կամ այդ լիազորության կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում** և օրենքով նախանշված ժամկետում ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեական հետապնդման մարմնի անօրինական որոշումը: Տվյալ դեպքում՝ **«քրեական հետապնդման մարմին»** եզրույթի ներքո պետք է հասկանալ տվյալ գործով նախաքննություն իրականացնող քննիչ, հսկող դատախազ (ՀՀ քր.դատ.օր. 21-րդ հոդվածի 4-րդ մաս, 35-րդ հոդվածի 3-րդ մաս, 53-րդ հոդված): Ընդ որում, ելնելով գլխավոր դատախազի իրավական կարգավիճակի առանձնահատկությունից, քրեական հետապնդման մարմնի հիշյալ որոշումը վերացնելու մասին գլխավոր դատախազի որոշումը մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված լինելու կամ չլինելու հանգամանքի հետ: Դատախազական հսկողության այդ փուլում գլխավոր դատախազն իր սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխան իրավասու է իրականացնել հսկողություն ինչպես մինչդատական վարույթի նկատմամբ, այնպես էլ գերատեսչական հսկողություն ստորադաս (հսկող) դատախազի նկատմամբ:** Հաշվի պետք է առնել նաև այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով դատախազին վերապահված բոլոր լիազորությունները, այդ թվում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի և քննիչի որոշումը վերացնելու մասին, հավասարապես վերաբերում են նաև գլխավոր դատախազին: ՀՀ դատական պրակտիկան ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի և 53-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական այս բովանդակության հետևողական իրացում չի երաշխավորել:

7. .... Իրավակիրառ պրակտիկայում տարակերպ է մեկնաբանվում նաև հսկող դատախազի կողմից քննիչից քրեական գործի նյութերը պահանջելու և **ստանալու դրույթը:** Քիչ չեն դեպքերը, երբ նման պահանջի կատարումն իրականացվում է փոստով նյութերն ուղարկելու ճանապարհով, ինչը երբեմն օրենքով նախատեսված 7 օրից ավելի ժամանակ է պահանջում և մարդու խախտված իրավունքների արագ վերականգնմանը կարող է խոչընդոտ հանդիսանալ, ինչպես նաև վտանգում է հսկող դատախազի կողմից վեճի առարկա նորմով նախատեսված ժամկետում իրականացվելիք սահմանադրական գործառույթի իրականացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ իրավահարաբերության շրջանակներում գործի նյութերի վերաբերյալ պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ**՝ չխոչընդոտելով դատախազական հսկողության իրականացմանը, ինչպես նաև

մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների արագ և արդյունավետ պաշտպանությանը:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազին բացառիկ իրավունք է վերապահված վերոհիշյալ որոշումների օրինականության վերաբերյալ կայացնելու **վերջնական որոշում,** որն իրավական լուրջ երաշխիք է մինչդատական վարույթի շրջանակներում թե՛ այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու, ծագած իրավական այս կամ այն խնդիրը վերջնական հանգուցալուծելու և թե՛անձանց իրավունքները ողջամիտ ժամկետներում պաշտպանելու ուղղությամբ: Հետևաբար, վիճարկվող նորմերը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում ընկալվելու, մեկնաբանվելու և կիրառվելու դեպքում չեն կարող հանգեցնել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտմանը և դատախազական հսկողության խոչընդոտմանը:

ՍԴՈ–691, 11 ապրիլի, 2007 թ.

6. .... Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թ. հոկտեմբերի 6–ին ընդունված՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի վերաբերյալ» թիվ R(2000)19 հանձնարարականում դատախազի կողմից դատարանի որոշման բողոքարկման առնչությամբ նշվում է, որ «.... դատարանի որոշման բողոքարկման իրավունքը սերտորեն կապված է դատախազների ընդհանուր առաքելության հետ, որովհետև դա հանդիսանում է իրավունքի կիրառումն ապահովող միջոցներից մեկը, միաժամանակ դրանով նպաստելով համակարգի արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես դատական որոշումների համաձայնեցվածության վերաբերյալ իրավունքի՝ լայն իմաստով իրացմանը: Այս տեսանկյունից, Կոմիտեն կցանկանար, որպեսզի դատախազները բողոքարկելու համար օժտված լինեին նշանակալի հնարավորություններով, որը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի որոշ երկրների իրավական համակարգի շրջանակներում ոչ միշտ տեղ ունի»:

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ նշում է, որ չնայած արդարադատության իրականացման հարցում դատախազության կարևոր դերակատարությանը, այդուհանդերձ, ելնելով կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների պահանջից, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը վճռաբեկ դատարանին որևէ կերպ չի պարտավորեցնում տարբերակում դնել քաղաքացիներից և դատախազությունից ստացված վճռաբեկ բողոքների գնահատման հարցում: Օրենսգրքի 407, 414.1. և 414.2. հոդվածները վճռաբեկ բողոք բերելու հիմքերի, վճռաբեկ բողոքը վերադարձնելու և այն վարույթ ընդունելու համար բոլոր դիմող սուբյեկտների համար նախատեսում են միևնույն պայմանները: Իսկ դատախազությունն իր սահմանադրական իրավասությունը պետք է իրականացնի, ինչպես նշված է ՀՀ Սահմանադրության 103 հոդվածում, «....օրենքով նախատեսված դեպքերում և կարգով»:

ՍԴՈ–844, 7 դեկտեմբերի, 2009 թ.

8. .... ՀՀ Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան ՀՀ–ում դատական իշխանությունն ու դատախազությունը սահմանադրաիրավական ինստիտուցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, և գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

....

ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4–րդ մասի 2–րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Քրեական գործերով մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դա-

տավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի ապահովումն սահմանադրական վերոհիշյալ պարտականության կատարման, մինչդատական վարույթում հսկողություն իրականացնելիս դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են ղեկավարելու (ուղղորդելու) հետաքննության մարմնի, քննիչի **դատավարական գործունեությունը**, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, «**բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին**» (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ): Վերոթվարկյալ գործառույթները դատախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախատեսված իր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինախախտումները վերացնելու նպատակով ղեկավար ցուցումներ և այլ հանձնարարություններ տալով հետաքննության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում **վերացնելով նաև վերջիններիս որոշումները**:

ՍԴՈ-872, 2 ապրիլի, 2010 թ.

9. .... **Երրորդ՝** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի համաձայն. «Մեղադրողը կարող է մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրանքը, այդ թվում նաև՝ խստացման առումով, եթե դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները անհերքելիորեն վկայում են, որ ամբաստանյալը կատարել է այլ հանցանք, քան այն, որը նրան մեղսագրվում է»: Հիշյալ դրույթը գրեթե նույնությամբ ամրագրված է մի շարք այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում (Էստոնիա՝ հոդվ. 215, Լեհաստան՝ 398, Լատվիա՝ 461-462, Սերբիա՝ 341, Ուկրաինա՝ 277, Ղազախստան՝ 320, Մոլդովա՝ 326, Բուլղարիա՝ 287 և այլն): Սակայն որն է էական տարբերությունը Հայաստանի համեմատությամբ: Դա առաջին հերթին վերաբերում է դատավարության կողմերի, մասնավորապես՝ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությանը: Այս երկրներում դատախազությունը ոչ միայն հարուցում, այլև իրականացնում է քրեական հետապնդում: Հայաստանի Հանրապետության դատախազությանը, որը ՀՀ Սահմանադրության վեցերորդ գլխում ներկայացված է որպես դատական իշխանության մարմին, քրեական գործի նախաքննության փուլում վերապահելով միայն վերահսկողական գործառույթ գործադիր իշխանության ինստիտուտների քննություն իրականացնելու գործառույթի նկատմամբ, նույն կարգավիճակի մեջ է դրվել նաև դատաքննության փուլում: Դրանից բխեցվում է, որ եթե նոր ի հայտ եկած հանգամանքների հիմքով պետք է քննչական և այլ բնույթի գործողություններ իրականացվեն, ապա ամբաստանյալը կրկին պետք է հայտնվի մեղադրյալի կարգավիճակում, որպեսզի համարժեք գործողությունների դեպքում ի վիճակի լինի պաշտպանել իր իրավունքները: Սակայն օրենսդրությունը կարգավիճակի նման փոփոխության ինստիտուտ չի նախատեսել, և դա նաև կհակասեր սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշմանը: Արդյունքում՝ քողարկված ձևով գործադրվում է գործը լրացուցիչ քննության վերադարձնելու պրակտիկան, որը չի բխում նաև ՀՀ քր. դատ. օր. վիճարկվող նորմերի դրույթներից, սակայն հարուցել է դիմողի ներկայացուցիչների արդարացի դժգոհությունը: Ուստի սահմանադրական դատարանը վիճարկվող հոդվածի սահմանադրականությունը գնահատում է դրանում բովանդակվող բոլոր մասերի համակարգային ամբողջականության մեջ՝ նաև դրանից բխող իրավական հետևանքների առումով:

ՍԴՈ–881, 4 մայիսի, 2010 թ.

5. .... Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել, թե արդյոք դատախազներին դասային աստիճանի համար տրվող հավելավճարը հաշվարկելիս տվյալ դատախազի կողմից նախկինում որպես դատավոր աշխատած տարիները հաշվի առնելն ունի օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ: Այդ կապակցությամբ հարկ է պարզել դասային աստիճանի բնույթը և նպատակը:

Դատախազներին շնորհվող դասային աստիճանը ցույց է տալիս դատախազի որակավորման աստիճանը: Որակավորումը, իր հերթին, բնութագրում է դատախազի՝ տվյալ բնագավառում աշխատանքային փորձը և հմտությունները, որից էլ կախված է դատախազի աշխատանքի վարձատրության չափը: Հետևաբար, դատախազներին դասային աստիճանի համար տրվող հավելավճարը հաշվարկելիս միայն որպես դատախազ աշխատած տարիները հաշվի առնելն ունի օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է հավելավճարը հաշվարկելիս նաև որպես դատախազության քննիչ աշխատած տարիները հաշվի առնելուն, որը սահմանված է վիճարկվող դրույթով, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի պահանջը ևս ունի օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ: Դա պայմանավորված է օրենքի հետադարձ ուժի մերժման և լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքներով: Նշված սկզբունքները պահպանելու անհրաժեշտությամբ թելադրված՝ օրենսդիրը «Դատախազության մասին» գործող օրենքն ընդունելիս հաշվի է առել այն հանգամանքները, որ «Դատախազության մասին» նախկին օրենքով.

– դատախազության քննիչի և դատախազի պաշտոնները վերաբերել են միևնույն բնագավառին՝ դատախազական գործունեությանը,

– դատախազության քննիչին և դատախազին շնորհվել են միևնույն դասային աստիճանները.

– վերը նշված հանգամանքներով պայմանավորված՝ դատախազության քննիչի և դատախազի պաշտոնները գործառնական առումով համակարգային ընդհանրություն ունեցող պաշտոններ են:

Ավելին, օրենքի հետադարձ ուժի մերժման և լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի սկզբունքները պահպանելու անհրաժեշտությամբ թելադրված՝ օրենսդիրը «Դատախազության մասին» գործող օրենքն ընդունելիս «դատախազ» եզրույթում ներառել է նաև դատախազի նախկին ավագ օգնականներին և օգնականներին, որոնց պաշտոնները վերանվանվել են որպես համապատասխան դատախազության դատախազներ և ավագ դատախազներ: Օրենսդիրը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ 2007 թվականի դեկտեմբերի 1-ից դատախազության քննիչների ինստիտուտը դատախազության համակարգից հանվել է:

Ինչ վերաբերում է դատախազին դասային աստիճանի համար տրվող հավելավճարը հաշվարկելիս որպես դատավոր աշխատած տարիները հաշվի առնելու հիմքի օբյեկտիվությանը և նպատակի իրավաչափությանը, սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտել, որ որակավորման առումով դատավորի և դատախազի պաշտոններին օրենսդրորեն ներկայացվում են գրեթե համանման պահանջներ, որոնք զգալիորեն տարբերվում են ընդհանրապես իրավաբանի մասնագիտությանը ներկայացվող պահանջներից: Բացի դրանից, նոր իրավակարգավորման ժամանակ նախկին իրավակարգավորմամբ սահմանված սուբյեկտների կազմը չի նեղացվել, իսկ դրա ընդլայնման կարգի ու շրջանակների որոշումն օրենսդրի իրավասության հարցն է: Անհիմն է դիմողի դիրքորոշումը նաև այն առնչությամբ, որ վիճարկվող դրույթի առկա ձևակերպումը թույլ է տալիս աշխատանքային ստաժի նկատմամբ ցուցաբերել երկակի մոտեցում: Աշխատավարձը և կենսաթոշակը փոխկապակցված, սակայն տարբեր ինստիտուտներ են, որոնց իրավակարգավորման չափանիշները նույնպես

կարող են տարբեր լինել: Դրանով են պայմանավորված նաև կենսաթոշակի նշանակման տարբերակված մոտեցումները տարբեր մասնագիտությունների համար:

Իսկ ինչ վերաբերում է դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ դատախազի, դատավորի և դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիներից ելնելով հավելավճարի սահմանմանը, ապա դա հենց այս պաշտոնների համար նախատեսված սոցիալական անկախության երաշխիք է և որևէ առնչություն չունի Սահմանադրության 14.1-րդ հոդվածի առաջին մասով սահմանված՝ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն:

ՍԴՈ-906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

6. Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը: Ընդ որում, ՀՀ օրենսդրությունը սահմանում է այդ հնարավորության դրսևորման տարբեր ձևեր: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի չորրորդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Տվյալ դեպքում վկայակոչված գործառույթի միջոցով դատախազը ոչ միայն հանդես է գալիս հանրային շահերի, այլ նաև հանցագործության հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով:

ՍԴՈ-931, 28 դեկտեմբերի, 2010 թ.

8. .... Դատական քննության արագացված կարգը հանդիսանում է քրեական դատավարությունում դիսպոզիտիվության դրսևորում: Իր հերթին, քրեական դատավարությունում դիսպոզիտիվությունը հանդիսանում է իրավական ազատության, հավասարության, դատավարության կողմերի՝ իրենց նյութական և դատավարական իրավունքները տնօրինելու ազատության դրսևորում: Դիսպոզիտիվության սուբյեկտները դատավարության կողմերն են՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերը: Մեղադրանքի կողմում **որպես դիսպոզիտիվության լիիրավ սուբյեկտ հանդես է գալիս դատախազը,** քանի որ նրան են պատկանում քրեական հետապնդման օրինականությունը երաշխավորելու լիազորությունները:

Արագացված կարգով դատական քննության բովանդակությունից ու էությունից բխում է, որ այս ինստիտուտի իրավակարգավորման շրջանակներում անհրաժեշտ է ապահովել հավասարակշռություն դատավարության կողմերի իրավունքների և օրինական շահերի միջև:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա ինստիտուտի գործող իրավակարգավորումը՝ դատական քննության ընդհանուր կարգից բացառություն հանդիսացող արագացված կարգի կիրառումը միայն դատավարության երկու կողմերի միաժամանակյա համաձայնության պայմաններում է ապահովում իրավաչափ հավասարակշռություն մեղադրանքի և պաշտպանության կողմերի իրավունքների և օրինական շահերի միջև: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ արագացված կարգ կիրառելու

դեմ դատախազության (մեղադրող կողմի) առարկությունը չի կարող դիտվել որպես «բացարձակ վետոյի» իրավունք, այդ առարկությունը պետք է լինի փաստարկված:

9. ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում ամրագրված է դատախազի՝ մեղադրանքի պաշտպանության գործառույթը: Այս գործառույթի շրջանակներում դատախազն իր հայեցողությամբ տնօրինում է ինչպես մեղադրանքի, այնպես էլ մեղադրանքի պաշտպանության ծավալները: Դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ դատախազի փաստարկված առարկությունը նշանակում է, որ դատախազը տվյալ գործով նախընտրում է մեղադրանքի պաշտպանության սահմանադրական իր լիազորությունն իրականացնել ողջ ծավալով:

Մրցակցային դատավարությունում մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման գործառույթների տարանջատման պայմաններում դատարանը՝ որպես գործի լուծման գործառույթը կրող սուբյեկտ, գործը քննում է ըստ ներկայացված մեղադրանքի և իրավասու չէ դուրս գալու մեղադրանքի շրջանակներից:

Ինչպես մեղադրանքի, այնպես էլ դրա պաշտպանության ծավալների վերաբերյալ մեղադրողի՝ որպես պետության անունից քրեական հետապնդում իրականացնող դատավարական սուբյեկտի դիրքորոշումը պետաիշխանական ակտ է, որը պարտադիր է դատավարության մյուս սուբյեկտների համար: Այդ պարտադիրությունը դրսևորված է, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասում, որի համաձայն՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ:

ՍԴՈ-934, 4 փետրվարի, 2011 թ.

6. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի ընդհանուր տրամաբանության շրջանակներում, առաջին հերթին վերաբերում է մինչդատական վարույթի փուլին, քանի որ այս փուլում իրականացվող գործողությունների օրինականության ապահովումն ամբողջությամբ ՀՀ դատախազության սահմանադրական պարտականությունն է:

Դատական քննության փուլում մեղադրանքը պաշտպանելու՝ դատախազության սահմանադրական գործառույթն իրականացվում է արդարադատության ընդհանուր սկզբունքների, մասնավորապես՝ մրցակցության սկզբունքի շրջանակներում, և վերջնական որոշում կայացնելու իրավասությամբ օժտված է դատարանը: Ուստի այս փուլում կոնկրետ գործը գտնվում է դատարանի վարույթում, և վերջինս է ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ: Այս ընդհանուր կանոնից կարող են առանձնացվել միայն այն դեպքերը, երբ դատախազը գործի դատական քննության փուլում ինքնուրույն որոշում կայացնելու իրավասությամբ է օժտված: Դա կարող է լինել, օրինակ, մեղադրանքից հրաժարվելիս կամ մեղադրանքը փոխելիս: Օրենսդրորեն այս հանգամանքը հաշվի առնելը հնարավորություն կտա առավել արդյունավետ ու ամբողջական իրականացնել ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը:

ՍԴՈ-1059, 23 նոյեմբերի, 2012 թ.

5. Անդրադառնալով օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությանը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված մասի դրույթները հանգում են հետևյալին.

ա) վարչական ձերբակալման ընդհանուր ժամկետը՝ որպես ընդհանուր բնույթի կանոն, սահմանված է **3 ժամ**, իսկ բացառիկ դեպքերում՝ հատուկ անհրաժեշտության կապակցությամբ առկա է նաև հիշյալ ընդհանուր ժամկետը փոփոխելու հնարավորություն,

բ) ՀՀ սահմանային ռեժիմը խախտող անձինք կարող են ձերբակալվել մինչև **3 ժամ** տևողությամբ՝ արձանագրություն կազմելու համար, մինչև **3 օր** ժամանակով՝ անձը և իրավախախտման հանգամանքները պարզելու համար՝ ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում այդ մասին գրավոր հաղորդելով դատախազին, **մինչև 10 օր ժամանակով՝ դատախազի սանկցիայով,** եթե իրավախախտողները չունեն անձը հաստատող փաստաթղթեր:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետը սահմանում է. «Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով .... հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ «Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը» վերտառությամբ 29-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի իմաստով հարկադրանքի այլ միջոց է համարվում Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված դեպքերում ազատությունից զրկումը, ինչպես նաև հատուկ ծառայությունների կողմից ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցների գործադրումը»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերը թույլատրում են օրենքով ազատությունից զրկելու հետևյալ դեպքերի նախատեսումը՝ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով և Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ «սահմանային ռեժիմի խախտում» ձևակերպման իրավական բովանդակությունը նույնպես ներառվում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերով նախատեսված վերոհիշյալ դեպքերի բովանդակային ծավալում:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազի իրավունքները, որոնք ներառում են, մասնավորապես, հետևյալները.

– ցանկացած ժամանակ անարգել այցելել այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք,

– ծանոթանալ այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների,

– անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի տուգանային և կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 16 և 103-րդ հոդվածներով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով ձերբակալման առավելագույն ժամկետը 72 ժամ է, այլ ոչ թե 3 օր, և դատախազը չունի վարչական ձերբակալման ժամկետը երկարաձգելու իրավասություն: Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատախազությունն իրավասու է իրականացնելու հսկողություն վարչական ձերբակալման օրինականության նկատմամբ, ներառյալ՝ վարչական ձերբակալման ենթարկված անձանց՝ անազատության մեջ մնալու ժամկետների պահպանման նկատմամբ հսկողությունը, որի իրավական բովանդակային ծավալը չի կարող ներառել ձերբակալման ժամկետների երկարաձգումը:

ՍԴՈ–1191, 24 փետրվարի, 2015 թ.

6. .... Այսպիսով, վիճարկվող իրավակարգավորման վերլուծությունից հետևում է, որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառելիության հարցում օրենսդիրն առաջնորդվել է անձանց (դատավարությանը մասնակցող և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց) **տարբերակման սկզբունքով**, բացառելով դատավարությանը մասնակցող և դատավարական (իրավական) առանձնահատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտների՝ դատախազի, պաշտպանի (փաստաբանի, կողմի ներկայացուցչի) նկատմամբ դատական նիստերի դահլիճից հեռացնելը որպես սանկցիա կիրառելը: Այն ունի իրավական հիմնավորում: Ինչպես դատախազը (գործով պետական մեղադրողը), այնպես էլ պաշտպանը (փաստաբանը, կողմի ներկայացուցիչը) ՀՀ Սահմանադրության 103–րդ, 20–րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների, ՀՀ օրենսդրության այլ ակտերի հիմքերով կատարում են սահմանադրաիրավական գործառույթներ՝ կապված համապատասխանաբար՝ դատարանում մեղադրանքի պաշտպանման և անձանց իրավաբանական օգնության տրամադրման հետ, որպիսիք միտված են ինչպես անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման, այնպես էլ վերջինիս հետ շաղկապված՝ անկախ, արդար, անկողմնակալ, մրցակցային արդարադատության իրականացման՝ Սահմանադրությամբ հաստատագրված նպատակների իրագործմանը: Այսպիսով, դատավարության մասնակից հանդիսացող վերոհիշյալ սուբյեկտների իրավական (դատավարական) կարգավիճակի առանձնահատկությունը, համաձայն որի՝ նրանք ենթակա չեն դատարանի կողմից անմիջականորեն կիրառման ենթակա որոշ սանկցիաների (նիստերի դահլիճից հեռացում, դատական տուգանք), ուղղակիորեն պայմանավորված է քրեադատավարական հարաբերություններում օրենքով նրանց ունեցած իրավունքների ու պարտականությունների բնույթով:

ՍԴՈ–1225, 28 հուլիսի, 2015 թ.

6. .... «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան:

Սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 17–ով թվագրված եզրակացության վերլուծությունից հետևում է, որ բացակայում է նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ միասնական իրավակիրառ պրակտիկան, ավելին, ձևավորվել է նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ տարբեր մոտեցումներ, որոնք պայմանականորեն դասակարգվել են երեք խմբի.

– նախաքննության ժամկետը երկարացվում է քրեական վարույթ իրականացնող քննիչի՝ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդության մասին որոշման վերին աջ անկյունում տպագրված նշագրման ազատ հատվածում դատախազի ստորագրություն դնելով,

– հսկողություն իրականացնող դատախազը համապատասխան միջնորդություն պարունակող որոշման վրա՝ վերին մասում կամ որոշման եզրափակիչ մասից հետո ձեռագիր կերպով երկարացնում կամ չի երկարացնում նախաքննության ժամկետը, ընդ որում, որոշ դեպքերում համապատասխան գրառման բացակայության պատճառով պարզ չի լինում, թե ինչ ժամանակով է երկարացվել նախաքննության ժամկետը,

– հսկողություն իրականացնող դատախազը համապատասխան միջնորդություն պարունակող որոշման հիման վրա կայացնում է առանձին դատավարական ակտ:

Նման իրավիճակը կարող է հաղթահարվել օրենսդրական կարգավորումների հստակեցման, ինչպես նաև դատախազական հսկողության իրականացման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջի ամրագրման պայմաններում: Սակայն առկա վի-

ճակը պայմանավորված չէ վեճի առարկա դրույթների սահմանադրականությամբ: Վերջիններիս իրավական բովանդակության հիմնական բաղադրատարրերն են.

– դատախազի վերահսկողական լիազորության ամրագրումը՝ նախաքննության ժամկետը երկարացնելու կապակցությամբ,

– քննիչի կողմից դատախազին պատճառաբանված որոշում ներկայացնելու պարտավորության ամրագրումը,

– նման որոշում ներկայացնելու վերաբերյալ ժամկետի հստակ սահմանումը:

Նման բոլոր իրավակարգավորումները սահմանադրականության տեսանկյունից հետապնդում են իրավաչափ նպատակ և խնդրահարույց չեն:

Միաժամանակ, հստակ է նաև, որ դատախազն օժտված չէ նախաքննության ժամկետը երկարացնելու ինքնուրույն լիազորությամբ:

Տվյալ դեպքում դատախազը՝ հանդես գալով որպես հսկողություն իրականացնող սուբյեկտ, կարող է ստուգել քննիչի որոշման պատճառաբանվածությունը և հաշվի առնելով քրեական գործերով նախաքննության օրինականության, լրիվության, բազմակողմանիության և արդյունավետության սկզբունքները՝ հաստատել կամ չհաստատել քննիչի համապատասխան դատավարական ակտը:

ՍԴՈ–1236, 17 նոյեմբերի, 2015 թ.

5. ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դատախազության առջև դրված են մի շարք սահմանադրաիրավական բացառիկ գործառույթներ, այդ թվում՝ մինչդատական վարույթի շրջանակներում՝ քրեական հետապնդման հարուցումը, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության սահմանումը, իսկ քրեական գործերով դատաքննության փուլում՝ մեղադրանքի պաշտպանությունը: Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազությունն իր գործառույթներն իրականացնում է օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

Սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի անմիջական իրացմանն են միտված «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որոնք ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային նորմերով կոչված են սահմանելու դատախազության, գլխավոր դատախազի սահմանադրական գործառույթներից անմիջականորեն բխող լիազորությունների շրջանակը, այդ լիազորությունների իրականացման կարգն ու պայմանները՝ դատախազական հսկողության ձևերն ու մեթոդները, ինչպես նաև պետական, այդ թվում՝ հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց հետ դատախազության, գլխավոր դատախազի գործառութային ու կառուցակարգային հարաբերությունների շրջանակը:

Չնայած Սահմանադրության 103-րդ հոդվածի նորմերի անմիջական գործողությանը, դրանք սահմանադրաիրավական նշանակություն ունեցող և, հատկապես՝ օրենքով կարգավորման ենթակա խնդիրներ են, որոնց նորմատիվ հաստատագրմամբ է նաև պայմանավորված ինչպես դատախազության, այնպես էլ գլխավոր դատախազի իրավական կարգավիճակի առանձնահատկությունը: Այս առումով, վերոհիշյալ իրավական ակտերը կոչված են ապահովելու նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 5-րդ մասի, Սահմանադրության 2-րդ գլխում ամփոփված բազմաթիվ այլ նորմերի, ինչպես նաև 83.5-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերի նորմատիվ պահանջների կատարումը:

Ելնելով Սահմանադրության վերոհիշյալ նորմերի, դատախազության գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերի համակարգային վերլուծությունից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դատախազության՝ որպես պետա-

րավական միասնական ինստիտուտի (մարմնի) կարգավիճակի առանձնահատկությունը ոչ միայն պայմանավորված է սահմանադրական գործառույթների բացառիկությամբ, այլև դրանց սոցիալ-իրավական նշանակությամբ, որից բխում է, որ այդ մարմնի գործունեության նպատակն է նաև հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Այս համատեքստում բացահայտելով վեճի առարկա իրավանորմերի բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմերն իրենց իրավական բովանդակությամբ կոչված են ոչ միայն սահմանելու մինչդատական վարույթում դատախազի (գլխավոր դատախազի) սահմանադրական գործառույթներից բխող կոնկրետ լիազորություններն ու դրանց իրականացման կարգը (կապված հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմնի, ինչպես նաև գլխավոր դատախազի կողմից կոնկրետ գործի շրջանակներում ստորադաս դատախազի գործողությունների օրինականության ու հիմնավորվածության նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ), այլև երաշխավորել, որպեսզի՝

– քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում ու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի,

– ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի,

– ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդվ. 2):

Այսպիսով, վեճի առարկա իրավակարգավորմամբ հետապնդվող վերոհիշյալ նպատակներն ունեն սահմանադրական հիմնավորում, քանի որ հետաքննություն, նախաքննություն իրականացնող մարմինների՝ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները վերացնելու լիազորության նախատեսմամբ ոչ միայն երաշխավորվում են դատախազության սահմանադրական կոնկրետ գործառույթի իրականացման կարգն ու պայմանները, այլև ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Հետևաբար, **հետապնդվող այդպիսի նպատակների առումով** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերը սահմանադրականության խնդիր չեն հարուցում:

Բացահայտելով վեճի առարկա իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև գնահատել վերոհիշյալ հոդվածի վերտառության («**Կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը**») իրավական իմաստը, համաձայն որի՝ վեճի առարկա նորմերն ինքնին կոչված են դատախազական հսկողության միջոցով երաշխավորելու կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սահմանադրական սկզբունքի (ՀՀ Սահմ. 22-րդ հոդվածի 7-րդ մաս) պահպանումը քրեական գործերով մինչդատական վարույթում: Այսինքն՝ օրենսդիրն ի սկզբանե կանխորոշել է վիճարկվող նորմի կարգավորման բնագավառը (առարկան)՝ առաջին պլան մղելով ոչ թե տարբեր ինստիտուտների գործառութային ու կառուցակարգային փոխհարաբերությունների խնդիրը, այլ կողմնորոշել է իրավակիրառ սուբյեկտներին՝ ղեկավարվել բացառապես իրավակարգավորման այն խնդիրներով ու նպատակներով, որոնք բխում են օրենսգրքի 21-րդ հոդվածի նորմատիվ կանոններից՝ **դրանք դասելով քրեադատավարական սկզբունքների շարքին** (ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, գլուխ 2): Հետևաբար, վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը պետք է դիտարկել, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 22 և 103-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21 և 53-րդ հոդված-

ների համակարգային կապի շրջանակներում, ինչի վերաբերյալ իրավակիրառական պրակտիկայում առկա չէ միասնական մոտեցում:

6. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորմամբ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի ապահովման, ինչպես նաև պետական իրավասու մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանների երաշխավորման խնդրին՝ սահմանադրական դատարանը ելնում է այն իրողությունից, որ սույն գործով քննության առարկա իրավակարգավորման շրջանակներում սահմանադրական վեճ ծագել է հենց այդ խնդրի տարակերպ ըմբռնման ու մեկնաբանման շուրջ, հետևաբար՝ անհրաժեշտ է, մասնավորապես, պարզել, թե՝

– որո՞նք են մինչդատական վարույթում հետաքննության և նախաքննության մարմինների կողմից քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ կայացված որոշումների օրինականության նկատմամբ դատախազական հսկողության էությունն ու բովանդակությունը, ինչպես նաև սահմանները,

– ինչպիսի՞ք են քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու հետ կապված հարաբերություններում, մի կողմից, հետաքննության մարմնի, քննիչի, և մյուս կողմից՝ հսկող դատախազի (գլխավոր դատախազի) լիազորությունները, դրանց իրականացման կարգն ու պայմանները (թույլատրելի սահմանները):

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի, «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան նորմերի համակարգային վերլուծությունը և ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի, 103-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության հետ համադրումը (նկատի ունենալով նաև, որ վեճի առարկա իրավակարգավորումը համակարգային առումով փոխկապակցված է վերոթվարկյալ իրավական ակտերով կարգավորվող համանման հարաբերությունների հետ) վկայում են, որ սահմանադրական մակարդակով հստակ տարանջատված են հասարակական կարգի պահպանության, օրինականության պահպանման, հանցավորության դեմ պայքարի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ դատախազության և այլ մարմինների սահմանադրական գործառույթները: Միաժամանակ, օրենքով հստակեցված են քննչական մարմինների (ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ քննչական կոմիտե) լիազորությունների իրականացման կարգն ու պայմանները, որոնցից, հաշվի առնելով սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման առանձնահատկությունները, հետևում է, որ.

Ա) դատախազը.

– իր գործունեությունն իրականացնելիս **անկախ է** և **ենթարկվում է միայն օրենքին,** այդ գործունեությանն օրենքով չնախատեսված միջամտությունն **արգելվում է**,

– իր լիազորություններն իրականացնելիս **ինքնուրույն է** որոշումներ ընդունում՝ հիմնվելով օրենքների և ներքին համոզմունքի վրա և **պատասխանատու է** այդ որոշումների համար,

– քրեական հետապնդման հարուցումը նրա **բացառիկ լիազորությունն է**,

– ՀՀ դատախազությունը՝ գլխավոր դատախազի ղեկավարմամբ, **հսկողություն է իրականացնում** հետաքննության և նախաքննության (**անկախ գերատեսչական ենթակայությունից**) օրինականության նկատմամբ, իսկ մինչդատական վարույթում՝ իրականացնում է **դատավարական ղեկավարում**, որը դատախազի բացառիկ լիազորությունն է,

– **պատասխանատու է** հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար,

– իրավասու է **վերացնել** հետաքննության մարմնի և քննիչի կայացրած որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և **հարուցել** քրեական գործ, ինչպես նաև **իր նա-**

խաձեռնությամբ հարուցել քրեական գործ, **վերացնել** հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին,

– քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում, իսկ դրանից հետո քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը **կարող է վերացվել** մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում,

– հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին իրավասու է **հանձնարարել** նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար,

– իրավասու է հետաքննության մարմնին և քննիչին **հանձնարարել** կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ,

– հետաքննության մարմնին, քննիչին գրավոր **ցուցումներ է** տալիս քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու վերաբերյալ,

– նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս իրավասու է **պահանջել** փաստաթղթեր, նյութեր և գործեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքերի և դրանց առնչվող անձանց մասին,

– օրենքով նախատեսված դեպքերում իրավունք ունի **որոշում կայացնելու հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձին վարույթից հեռացնելու վերաբերյալ**,

– **հրաժարվում է** մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց, **կարճում է** քրեական գործով վարույթը կամ **դադարեցնում** քրեական հետապնդումը:

Բ) <u>քննիչը</u>.

– իր իրավասության շրջանակներում **իրականացնում է** քրեական գործով նախաքննություն, **լիազորված է** հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ, ինչպես նաև **մերժել** քրեական գործի հարուցումը և այդ մասին կայացված որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում **ուղարկում է** դատախազին՝ որոշման օրինականությունն ստուգելու նպատակով,

– **պատասխանատվություն է** կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական կարգով ու ժամանակին կատարելու համար,

– **լիազորված է** կարճել քրեական գործով վարույթը, դադարեցնել քրեական հետապնդումը և **պարտավոր է** այդ մասին կայացրած որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկել դատախազին՝ որոշման օրինականությունն ստուգելու նպատակով,

– **պարտավոր է կատարել դատախազի օրինական ցուցումները**:

Գ) հետաքննության մարմինը.

– **հարուցում է** քրեական գործ կամ **մերժում է** քրեական գործ հարուցելը, որոնց վերաբերյալ կայացրած որոշումների պատճենները 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին՝ դրանց օրինականությունն ստուգելու նպատակով,

– քրեական գործ հարուցելուց հետո **կատարում է** քննչական անհետաձգելի գործողություններ,

– քրեական գործ հարուցելու պահից տասն օրվա ընթացքում, իսկ որոշ դեպքերում՝ անհապաղ, գործը **հանձնում է** քննիչին,

– քննիչի վարույթում գտնվող հանցագործությունների վերաբերյալ գործերով **կատարում է** քննիչի, **դատախազի հանձնարարությունները** և վերջինիս **ցուցումները**,

– **հնարավորություն է ընձեռում դատախազին**՝ իր լիազորությունների շրջանակում ստուգելու հետաքննության մարմնի գործունեությունը,

– դատախազին **տրամադրում է** իր լիազորությունների շրջանակում պահանջած անհրաժեշտ տեղեկությունները,

– **պարտադիր կատարում է** դատախազի՝ օրենքին համապատասխան տված ցուցումները:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ակնհայտ է գործող օրենսդրությամբ, մի կողմից, հետաքննության, նախաքննության մարմինների, մյուս կողմից՝ դատախազության գործառութային լիազորությունների տարանջատումը՝ սույն գործով վեճի առարկա և դրա հետ կապված իրավակարգավորումներում: Ընդ որում, եթե հետաքննության, նախաքննության իրականացումը պետական իրավասու մարմինների՝ **օրենքով նախատեսված** բացառիկ լիազորությունն է, ապա այդ գործունեության նկատմամբ հսկողության (դատավարական հսկողության) իրականացումը դատախազության **սահմանադրական գործառույթն ու պարտականությունն է**: Վերջինիս դեպքում օրենսդիրը նկատի է ունեցել, որ հետաքննության և նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության գործառույթը **ոչ թե գերատեսչական հսկողության բովանդակություն ունի, այլ կոչված է օրենքով նախատեսված միջոցներով ապահովելու քրեական գործերով վարույթի օրինականությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված լիազորությունների շրջանակներում**: Նկատի է առնվում նաև, որ քրեական գործով դատաքննության փուլում պետական մեղադրանքի պաշտպանության սահմանադրական գործառույթի իրականացման բացառիկ իրավունքը նույնպես վերապահված է դատախազին, ով **պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար**, ինչն էլ իրավական կարևոր նախադրյալ է այդ մեղադրանքը դատարանում արդյունավետ պաշտպանելու և քրեական գործով արդար դատաքննություն իրականացնելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործառութային այդպիսի տարանջատումը համահունչ է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի, 89-րդ հոդվածի 7-րդ կետի և 103-րդ հոդվածի պահանջներին և կարևոր երաշխիք է հանցավոր ոտնձգություններից մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված գործառույթները (**քրեական հետապնդման հարուցում, հետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն, դատարանում մեղադրանքի պաշտպանություն**) իրավակիրառական պրակտիկայում պետք է ընկալվեն, մեկնաբանվեն ու կիրառվեն ելնելով դրանց սահմանադրաիրավական **փոխկապակցվածությունից**: Մասնավորապես, վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերը չեն կարող մեկնաբանվել հայեցողաբար, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (53-րդ հոդված), նաև՝ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքների համապատասխան փոխկապակցված նորմերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության համատեքստից դուրս: Այն անխուսափելիորեն կհանգեցնի ինչպես դատախազության սահմանադրական գործառույթների իմաստազրկմանը, այնպես էլ կվտանգի մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը՝ ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթի շրջանակներում: Արդյունքում՝ կխախտվի սահմանադրական օրինականությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմատիվ կարգավորման շրջանակներում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի

սահմանադրական լիազորություններից անմիջականորեն բխող **իրավունքն ու պարտականությունն է**, անհրաժեշտ իրավական հիմքերի առկայության պայմաններում՝

– վերացնել քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը՝ օրենքով սահմանված ժամկետում ու կարգով (որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում, ՀՀ քր.դատ.օր. 21-րդ հոդվածի 4-րդ մաս),

– հիշյալ որոշման օրինականությունը (հիմնավորվածությունը) ստուգելու համար օրենքով նախատեսված ողջամիտ ժամկետում հետաքննության մարմնից, քննիչից պահանջել և **ստանալ** դեպքի առիթով նախապատրաստված նյութերը, քրեական գործի նյութերը (քրեական գործը) և դրանց առնչվող այլ տեղեկատվություն (ՀՀ քր.դատ.օր. 21-րդ հոդվածի 4-րդ մաս, 53-րդ հոդված),

– ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավունքն ու պարտականությունն է **հսկող դատախազի վերը նշված լիազորության կատարումից կամ այդ լիազորության կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո ծագած իրավահարաբերությունների շրջանակներում** և օրենքով նախանշված ժամկետում ու կարգով վերացնել գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին քրեական հետապնդման մարմնի անօրինական որոշումը: Տվյալ դեպքում՝ **«քրեական հետապնդման մարմին»** եզրույթի ներքո պետք է հասկանալ տվյալ գործով նախաքննություն իրականացնող քննիչ, հսկող դատախազ (ՀՀ քր.դատ.օր. 21-րդ հոդվածի 4-րդ մաս, 35-րդ հոդվածի 3-րդ մաս, 53-րդ հոդված): Ընդ որում, ելնելով գլխավոր դատախազի իրավական կարգավիճակի առանձնահատկությունից, քրեական հետապնդման մարմնի հիշյալ որոշումը վերացնելու մասին գլխավոր դատախազի որոշումը մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չդնել հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված լինելու կամ չլինելու հանգամանքի հետ: Դատախազական հսկողության այդ փուլում գլխավոր դատախազն իր սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխան իրավասու է իրականացնել հսկողություն ինչպես մինչդատական վարույթի նկատմամբ, այնպես էլ գերատեսչական հսկողություն ստորադաս (հսկող) դատախազի նկատմամբ:** Հաշվի պետք է առնել նաև այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով դատախազին վերապահված բոլոր լիազորությունները, այդ թվում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի և քննիչի որոշումը վերացնելու մասին, հավասարապես վերաբերում են նաև գլխավոր դատախազին: ՀՀ դատական պրակտիկան ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի և 53-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական այս բովանդակության հետևողական իրացում չի երաշխավորել:

Անդրադառնալով քրեական գործով մինչդատական վարույթի շրջանակներում դատախազական հսկողության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման խնդրին՝ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-935 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ «քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների վերանայումը դատախազի կողմից՝ հանդիսանում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության առանձին տարատեսակ, առնչվում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված՝ քրեական հետապնդում հարուցելու և հանցագործությունը բացահայտելու՝ դատախազի պարտականության իրականացմանը, հանդիսանում է ինքնուրույն վարույթ և, հետևաբար, ունի որոշակի առանձնահատկություններ:

Վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ առանձնահատկության համատեքստում պետք է նաև դիտարկել մինչդատական վարույթի շրջանակներում հսկող դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումից բխող վերոթվարկյալ լիազորությունները:

Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ վիճելի իրավակարգավորման շրջանակներում սահմանադրական օրինականության տեսանկյունից անթույլատրելի է միևնույն հիմքերով քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի՝ մեկից ավելի որոշումների կայացումը, մասնավորապես՝ այդպիսի որոշումները վերացնելու մասին իրավասու դատախազի որոշմանը հաջորդող հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի՝ միևնույն հիմքերով նոր որոշումներ ընդունելը: Մինչդատական վարույթում այդպիսի, թեկուզ տեսական հնարավորության առկայությունը, լուրջ նախադրյալներ է պարունակում իմաստազրկելու ոչ միայն հետաքննության, նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրավական բովանդակությունը, այլև վտանգելու հատկապես մարդու խախտված իրավունքներն ու ազատություններն արդյունավետ միջոցներով պաշտպանելու սահմանադրական իրավունքի իրացումը (ՀՀ Սահմ. 18-րդ հոդված): Ինչպես վկայում է իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը, եզակի չեն այն դեպքերը, երբ քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու՝ հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի որոշում մեկից ավելի անգամ է ընդունվում ու ապա վերացվում իրավասու դատախազի կողմից:

Միջազգային պրակտիկայում առավել տարածված է այն իրավակարգավորումը, երբ ընդհանրապես քրեական վարույթը կարճելու մասին **որոշումը ենթակա է հաստատման դատախազի կողմից**: ՀՀ օրենսդրական կարգավորումների համադրված վերլուծությունից բխում է, որ հատկապես այն դեպքերում, երբ հսկող դատախազը վերացրել է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում տվել է կոնկրետ ցուցումներ կամ հանձնարարականներ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին նոր որոշում հնարավոր է կայացվել է միայն իրավասու դատախազի կողմից տրված ցուցումների կամ հանձնարարականների պարտադիր կատարման պարագայում: Հակառակ դեպքում կիմաստազրկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ որպես քրեական դատավարության կարևոր սկզբունքի բաղադրատարրի իրավական բովանդակությունը:

7. Անդրադառնալով վիճարկվող նորմերի իրավակարգավորման շրջանակներում կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել իր՝ ՍԴՈ-1139 որոշմամբ այդ սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «....Այդ սկզբունքն իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելը, դատելը և քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրաիրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեաիրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել: Այդ սկզբունքը նաև բացառում է միևնույն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, արգելում է նաև միևնույն հանգամանքը հաշվի առնել ինչպես հանցանքը որակելիս, այնպես էլ պատժի տեսակն ու չափն ընտրելիս (ՀՀ քր.օր.-ի 10, 63, 104-րդ հոդվածներ): Այսպիսով, նախկինում

հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն դատվել է, չի կարող նրա հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ, «բացառությամբ այն դեպքերի», ինչպես վճռել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել արդյունքի վրա» (Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի գործով 2004 թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ, գանգատ թիվ 50178/99)»:

Վերոհիշյալ սկզբունքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերի՝ սույն որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության համադրված վերլուծությունը վկայում է, որ վիճելի իրավակարգավորման առարկան հենց այդ սկզբունքի պահպանումն է, որի համար օրենքով նախատեսված են դատախազական հսկողության կոնկրետ միջոցներ (քրեական գործը կարճելը, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու՝ հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի որոշման վերացումը, նյութեր պահանջելն ու ցուցումներ տալը և այլն)՝ բացառելու համար միևնույն հիմքերով նման որոշման մեկից ավելի անգամ կայացումը:

Իրավակիրառ պրակտիկայում տարակերպ է մեկնաբանվում նաև հսկող դատախազի կողմից քննիչից քրեական գործի նյութերը պահանջելու և **ստանալու դրույթը:** Քիչ չեն դեպքերը, երբ նման պահանջի կատարումն իրականացվում է փոստով նյութերն ուղարկելու ճանապարհով, ինչը երբեմն օրենքով նախատեսված 7 օրից ավելի ժամանակ է պահանջում և մարդու խախտված իրավունքների արագ վերականգնմանը կարող է խոչընդոտ հանդիսանալ, ինչպես նաև վտանգում է հսկող դատախազի կողմից վեճի առարկա նորմով նախատեսված ժամկետում իրականացվելիք սահմանադրական գործառույթի իրականացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ իրավահարաբերության շրջանակներում գործի նյութերի վերաբերյալ պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ**՝ չխոչընդոտելով դատախազական հսկողության իրականացմանը, ինչպես նաև մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների արագ և արդյունավետ պաշտպանությանը:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազին բացառիկ իրավունք է վերապահված վերոհիշյալ որոշումների օրինականության վերաբերյալ կայացնելու **վերջնական որոշում,** որն իրավական լուրջ երաշխիք է մինչդատական վարույթի շրջանակներում թե՛ այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու, ծագած իրավական այս կամ այն խնդիրը վերջնական հանգուցալուծելու և թե՛անձանց իրավունքները ողջամիտ ժամկետներում պաշտպանելու ուղղությամբ: Հետևաբար, վիճարկվող նորմերը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում ընկալվելու, մեկնաբանվելու և կիրառվելու դեպքում չեն կարող հանգեցնել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտմանը և դատախազական հսկողության խոչընդոտմանը:

8. Դատախազի՝ մինչդատական վարույթի շրջանակներում հսկողական լիազորությունների իրականացման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի շրջանակներում (ԵԽ Նախարարների կոմիտեի հանձնարարական REC(2000)19 Քրեական դատավարության համակարգում հանրային դատախազության դերի վերաբերյալ (ընդունված՝ 2000 թ. հոկտեմբերի 6-ին) միջազգային փորձի ուսումնասիրումը վկայում է, որ.

– դատախազները հանրային մարմիններ են, որոնք, հասարակության անունից և ի շահ հանրության, ապահովում են օրենքի կիրառությունը, որոշում են հարուցել քրեական հետապնդում կամ դադարեցնել այն, ինչպես նաև իրականացնում, ուղղորդում կամ վերահսկում են քրեական գործերով հետաքննությունը,

– ընդհանուր առմամբ, հանրային դատախազները պետք է վերահսկեն ոստիկանության կողմից իրականացվող հետաքննության օրինականությունը՝ ոչ ուշ, քան քրեական հե-

տապնդում հարուցելու կամ այն շարունակելու վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում: Այս առումով, հանրային դատախազները պետք է հետևեն նաև ոստիկանության կողմից մարդու իրավունքների պահպանմանը,

– դատախազները պետք է իրականացնեն հսկողություն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իրենց ցուցումներին և օրենքին համապատասխանությունը դիտարկելու համար:

Միացյալ ազգերի՝ Հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով կոնգրեսի կողմից ընդունված՝ դատախազների դերի վերաբերյալ ուղեցույցի (Հավանա, Կուբա, 27 օգոստոս–7 սեպտեմբեր 1990 թ.) համաձայն.

– դատախազները պետք է ակտիվ դեր կատարեն քրեական գործի վարույթում, ներառյալ քրեական հետապնդման հարուցումը,

– դատախազները պետք է արդար, հետևողականորեն և անհապաղ իրականացնեն իրենց պարտականություններն օրենքով սահմանված կարգով, հարգեն ու պաշտպանեն մարդու արժանապատվությունը և պաշտպանեն մարդու իրավունքները՝ նպաստելով քրեական արդարադատության համակարգի անխափան գործունեության և պատշաճ ընթացակարգի ապահովմանը,

– եթե անկողմնակալ հետաքննությունը ցույց է տալիս, որ մեղադրանքն անհիմն է, դատախազները չպետք է հարուցեն քրեական հետապնդում կամ շարունակեն այդպիսի հետապնդումը, այլ պետք է գործադրեն բոլոր ջանքերը վարույթը դադարեցնելու համար:

Դատախազների միջազգային ընկերակցության կողմից 1999 թ. ապրիլի 23-ին ընդունված՝ դատախազների հիմնական պարտականությունների և իրավունքների ձևակերպման և մասնագիտական պատասխանատվության վերաբերյալ չափանիշների համաձայն.

– քրեական վարույթ հարուցելիս դատախազները պետք է գործին ընթացք տան միայն դրա՝ ողջամտորեն արժանահավատ և ընդունելի համարվող ապացույցներով հիմնավորված լինելու դեպքում և չպետք է շարունակեն հետապնդումն այդպիսի ապացույցների բացակայության դեպքում, վարույթի ողջ ընթացքում գործը պետք է վարեն հաստատակամորեն, բայց արդարացի ձևով՝ դուրս չգալով ապացույցներով նախասահմանված շրջանակներից:

Դատական համակարգի անկախության վերաբերյալ եվրոպական չափանիշների մասին Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի զեկույցի համաձայն (CDL-AD(2010)040).

– հետաքննության նկատմամբ դատախազական հսկողությունը համարվում է նորմալ և ընդունելի: Դատախազի և քննիչի առանձնացվածությունը դրական առումով նվազեցնում է մեկ ինստիտուտի կողմից իր լիազորությունների չարաշահման ռիսկը:

9. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, ելնելով նաև վերը փաստված միջազգային փորձի ուսումնասիրությունից, օրենսդրական կարգավորումների շրջանակներում նախատեսել լրացուցիչ երաշխիքներ՝ բացառելու համար մինչդատական վարույթում սույն գործով քննության առարկա դատախազական հսկողության արդյունքում կայացված որոշումների շրջանցման (չկատարման) կամ հետաքննության մարմնի, քննիչի կողմից միևնույն հիմքերով մեկից ավելի նման որոշումներ կայացնելու որևէ հնարավորություն: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատախազի **համաձայնությամբ** հետաքննության մարմնի, քննիչի կողմից քրեական վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման ինստիտուտի ներդրումն առավելապես կհամապատասխաներ վիճելի իրավահարաբերության՝ միջազգային կարգավորման փորձին, կներդաշնակեցներ մինչդատական վարույթում, մի կողմից, հետաքննության մարմնի, քննիչի, և մյուս կողմից՝ դատախազի գործառութային դերը: Այս առումով, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանող կողմի իրազեկումն այն մասին, որ «իրավակիրառական պրակտիկայում առաջացած խնդիրը շտկելու համար ՀՀ Ազգային ժողովում պատրաստվում է օրենքի նախագիծ» և շրջանառության մեջ է դրված նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որում համարժեք լուծումներ նախատեսված են:

ՍԴՈ– 1253, 2 փետրվարի, 2016

6. .... Վերը նշված առաջին և երկրորդ դրույթների առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դրանք սահմանում են համապատասխանաբար՝ դատախազական հսկողության և դատախազի այլ գործառույթների բնագավառները և դատախազի լիազորությունների իրականացումը պայմանավորում են համապատասխան դեպքի, փաստի կամ իրադարձության առկայությամբ: Այդ դրույթներից յուրաքանչյուրում «և» շաղկապից առաջ և հետո ամրագրված են երկու համազոր, սակայն միմյանցից անկախ հասկացություններ, որոնք ենթադրում են դատախազի լիազորությունների իրականացման երկու ինքնուրույն, միմյանցից անջատ նախադրյալներ, երբ դիտարկվող դրույթների կիրառման համար բավական է «և» շաղկապից առաջ և հետո ամրագրված դեպքերից առնվազն մեկի առկայությունը: Այսինքն՝ վերը նշված օրինակում, եթե տվյալ կոնկրետ գործով ընթանում է հետաքննություն, ապա դատախազը հսկողություն է իրականացնում հետաքննության նկատմամբ, եթե ընթանում է նախաքննություն, ապա դատախազը հսկողություն է իրականացնում նախաքննության նկատմամբ, եթե տվյալ կոնկրետ գործով առկա է միայն դատավճիռ, այլ ոչ թե բողոքարկման ենթակա այլ վերջնական դատական ակտ, ապա դատախազն իրավասու է բողոքարկել դատավճիռը, անկախ նրանից, թե տվյալ գործով առկա է, արդյոք, բողոքարկման ենթակա այլ վերջնական դատական ակտ, թե՝ ոչ:

Իրավական նորմի մեկնաբանությունը պետք է շաղկապել ինքնուրույն գործառույթի առկայության և դրա իրացման պայմանների հետ, այլ ոչ թե դրսևորել մեխանիկական մոտեցում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ «.... դատախազի բացառիկ լիազորությունն է՝.... ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից»: Ինքնուրույն լիազորության իրականացումը չի կարող պայմանավորվել այլ լիազորությամբ պայմանավորված իրավակարգավորման օբյեկտի միաժամանակյա առկայությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կանոնները կիրառելի չեն ինքնուրույն իրավակարգավորման օբյեկտների թվարկումների նկատմամբ և վեճի առարկա դրույթում ներկայացված չէ կոնկրետ իրավահարաբերությանը վերաբերող երկու միաժամանակյա անհրաժեշտ պայմանների առկայության պահանջ: Նույնը վերաբերում է նաև օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դրույթին (վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին): Որպես օրինակ կարող է ծառայել նաև օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը (քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ): Այս դեպքում, ըստ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ քննիչը չի կարող հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր, քանի դեռ տվյալ հանցագործության առիթով առկա չէ հարուցված քրեական գործ, կամ քննիչը պարտավոր է հանցագործության դեպքով նախապատրաստված նյութերի հիման վրա անպայման հարուցել քրեական գործ՝ անկախ նրանից, որ առկա են քրեական գործի հարուցումը մերժելու հիմքեր:

Բացի դրանից, օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման համար պետք է այն ներկայացնել իր իրավական բովանդակության ամբողջականության մեջ, դիտարկել օրենսգրքի այլ դրույթների հետ օրգանական փոխկապվածության համատեքստում: Խոսքը վերաբերում է օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերին, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին: Դրան-

ցով սահմանված լիազորությունները ենթադրում են կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների և այլ դեպքերի մասին անհապաղ դատախազին տեղյակ պահելու՝ հետաքննության մարմնի պարտականության կատարում՝ անկախ տվյալ գործով հետաքննություն սկսելու կամ չսկսելու հանգամանքից: Դիտարկվող պարտականությունը չկատարելը կամ այդ պարտականությունը գործով հետաքննություն սկսելու հանգամանքով պայմանավորելը կխաթարի հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դատախազական հսկողության էությունը, կխոչընդոտի դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված լիազորությունների իրականացմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա դրույթներն իրավակիրառական պրակտիկայում սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա մեկնաբանելու և կիրառելու պայմաններում կարող են ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածին համահունչ լիարժեք երաշխավորել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին հետաքննության մարմնի կողմից օրենքի պահանջների կատարման ստուգման ՝ դատախազի լիազորությունների բնականոն և արդյունավետ իրականացումը, և նման պարագայում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-844, 7 դեկտեմբերի, 2009 թ.

8. .... ՀՀ Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան ՀՀ-ում դատական իշխանությունն ու դատախազությունը սահմանադրաիրավական ինստիտուցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, և գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

....

ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Քրեական գործերով մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի ապահովումն սահմանադրական վերոհիշյալ պարտականության կատարման, մինչդատական վարույթում հսկողություն իրականացնելիս դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են ղեկավարելու (ուղղորդելու) հետաքննության մարմնի, քննիչի **դատավարական գործունեությունը**, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, «**բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին**» (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ): Վերոթվարկյալ գործառույթները դատախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախատեսված իր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինախախտումները վերացնելու նպատակով ղեկավար ցուցումներ և այլ հանձնարարու-

թյուններ տալով հետաքննության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում **վերացնելով նաև վերջիններիս որոշումները**:

.... Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ օրենսդրական զարգացումների ընդհանուր տրամաբանությունը (մասնավորապես՝ արտահայտված ՀՀ սահմանադրական դատարանի 16 հունվարի 2007 թ. ՍԴՈ-673 որոշման մեջ, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասում), գտնում է, որ այն դեպքում, երբ պետական մարմինը (տվյալ դեպքում քրեական վարույթ իրականացնող) կամ պաշտոնատար անձն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, դատարանը ստուգում է, թե արդյո՞ք տվյալ մարմնի կողմից ակտն ընդունելը կամ այն ընդունելը մերժելը, գործողությունը կատարելը կամ անգործություն դրսևորելն իրականացվել են օրենսդրությանը համապատասխան:

Այսպիսով, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների **ընդհանուր նպատակի** (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարբեր առանձնահատկությունների մասին, հետևաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «....և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից և այդ գործառույթների սահմանադրաիրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրաիրավական բովանդակությամբ և երաշխիք է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

ՍԴՈ-934, 4 փետրվարի, 2011 թ.

7\. .... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում մեղադրանքի ինստիտուտը կարգավորող նորմերի համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ անձի կողմից հանցավոր արարքի կատարման հիմնավորումը մինչդատական, իսկ որոշ դեպքերում էլ՝ դատական վարույթներում ներկայացվում է պաշտոնական փաստաթղթերի՝ որոշման (մեղադրանք առաջադրելու, այն փոփոխելու, լրացնելու, նոր մեղադրանք առաջադրելու մասին) և մեղադրական եզրակացության ձևով: Ընդ որում, եթե մեղադրանք առաջադրելու (փոփոխելու, լրացնելու, նոր մեղադրանք առաջադրելու) վերաբերյալ որոշումը (իրենց լիազորությունների շրջանակներում՝ քննիչի, դատախազի կողմից) կարող է կայացվել մինչդատական, դատական վարույթներում, ապա մեղադրական եզրակացությունը՝ որպես քրեական գործով նախաքննության արդյունքներն ամփոփող, ձեռք բերված ապացույցների շրջանակներում անձի (կամ անձանց) մեղավորությունը հիմնավորող պաշտոնական փաստաթուղթ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ գլխի նորմերին համապատասխան, **առանց բացառության, կազմվում է քննիչի և հաստատվում՝ նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից՝ մինչդատական վարույթում,** որի հիման վրա էլ դատախազը դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Վերջինս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով կարող է

լրացվել կամ փոփոխվել՝ նոր մեղադրանք առաջադրելու վերաբերյալ դատախազի պատճառաբանված որոշմամբ, որը ձեռք բերված նյութերի (ապացույցների) հետ ներկայացվում է դատարան (նույն հոդվածի 2–րդ և 3–րդ մասեր):

.... դ) հաստատելով քննիչի կողմից կազմված մեղադրական եզրակացությունը՝ դատախազն իր սահմանադրաիրավական կարգավիճակին և օրենքով նախատեսված լիազորություններին համապատասխան **հանդես է գալիս որպես հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող, ինչպես նաև մեղադրական եզրակացությամբ հիմնավորված մեղադրանքը դատարանում պաշտպանող իրավասու սուբյեկտ:**

ՍԴՈ–1225, 28 հուլիսի, 2015 թ.

6. Սահմանադրության 103–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ:

Վերոնշյալ սահմանադրաիրավական դրույթն իր արտացոլումն է գտել, ի թիվս այլնի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197–րդ հոդվածի վիճարկվող մասերում, որոնց համաձայն՝ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար դատախազը լուծում է նախաքննության ժամկետի երկարացման հարցը՝ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծության արդյունքում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը քրեական գործերով որպես նախաքննության իրականացման առավելագույն ժամկետ է սահմանել երկամսյա ժամկետը: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը (հոդվ. 197, մաս 2):

.... Տվյալ դեպքում դատախազը՝ հանդես գալով որպես հսկողություն իրականացնող սուբյեկտ, կարող է ստուգել քննիչի որոշման պատճառաբանվածությունը և հաշվի առնելով քրեական գործերով նախաքննության օրինականության, լրիվության, բազմակողմանիության և արդյունավետության սկզբունքները՝ հաստատել կամ չհաստատել քննիչի համապատասխան դատավարական ակտը:

ՍԴՈ–1236, 17 նոյեմբերի, 2015 թ.

5. ՀՀ Սահմանադրության 103–րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Դատախազության առջև դրված են մի շարք սահմանադրաիրավական բացառիկ գործառույթներ, այդ թվում՝ մինչդատական վարույթի շրջանակներում՝ քրեական հետապնդման հարուցումը, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության սահմանումը, իսկ քրեական գործերով դատաքննության փուլում՝ մեղադրանքի պաշտպանությունը: Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ դատախազությունն իր գործառույթներն իրականացնում է օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

Սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի անմիջական իրացմանն են միտված «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որոնք ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային նորմերով կոչված են սահմանելու դատախազության, գլխավոր դատախազի սահմանադրական գործառույթներից անմիջականորեն բխող լիազորությունների շրջանակը, այդ լիազորությունների իրականացման կարգն ու պայմանները՝ դատախազական հսկողության ձևերն ու մեթոդները, ինչպես նաև պետական, այդ թվում՝ հետաքննություն և նախաքննություն իրականացնող մար-

մինների ու պաշտոնատար անձանց հետ դատախազության, գլխավոր դատախազի գործառութային ու կառուցակարգային հարաբերությունների շրջանակը:

Չնայած Սահմանադրության 103-րդ հոդվածի նորմերի անմիջական գործողությանը, դրանք սահմանադրաիրավական նշանակություն ունեցող և, հատկապես՝ օրենքով կարգավորման ենթակա խնդիրներ են, որոնց նորմատիվ հաստատագրմամբ է նաև պայմանավորված ինչպես դատախազության, այնպես էլ գլխավոր դատախազի իրավական կարգավիճակի առանձնահատկությունը: Այս առումով, վերոհիշյալ իրավական ակտերը կոչված են ապահովելու նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 5-րդ մասի, Սահմանադրության 2-րդ գլխում ամփոփված բազմաթիվ այլ նորմերի, ինչպես նաև 83.5-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերի նորմատիվ պահանջների կատարումը:

.... Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ վիճելի իրավակարգավորման շրջանակներում սահմանադրական օրինականության տեսանկյունից անթույլատրելի է միևնույն հիմքերով քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի՝ մեկից ավելի որոշումների կայացումը, մասնավորապես՝ այդպիսի որոշումները վերացնելու մասին իրավասու դատախազի որոշմանը հաջորդող հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի՝ միևնույն հիմքերով նոր որոշումներ ընդունելը: Մինչդատական վարույթում այդպիսի, թեկուզ տեսական հնարավորության առկայությունը, լուրջ նախադրյալներ է պարունակում իմաստազրկելու ոչ միայն հետաքննության, նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրավական բովանդակությունը, այլև վտանգելու հատկապես մարդու խախտված իրավունքներն ու ազատություններն արդյունավետ միջոցներով պաշտպանելու սահմանադրական իրավունքի իրացումը (ՀՀ Սահմ. 18-րդ հոդված): Ինչպես վկայում է իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը, եզակի չեն այն դեպքերը, երբ քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու՝ հետաքննության կամ քրեական հետապնդման մարմնի որոշում մեկից ավելի անգամ է ընդունվում ու ապա վերացվում իրավասու դատախազի կողմից:

7. Անդրադառնալով վիճարկվող նորմերի իրավակարգավորման շրջանակներում կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել իր՝ ՍԴՈ-1139 որոշմամբ այդ սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «....Այդ սկզբունքն իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելը, դատելը և քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրաիրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեաիրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել: Այդ սկզբունքը նաև բացառում է միևնույն հանցագործության որակումը քրեական օրենսգրքի մեկից ավելի հոդվածներով, արգելում է նաև միևնույն հանգամանքը հաշվի առնել ինչպես հանցանքը որակելիս, այնպես էլ պատժի տեսակն ու չափն ընտրելիս (ՀՀ քր.օր.-ի 10, 63, 104-րդ հոդվածներ): Այսպիսով, նախկինում հանցանք կատարած լինելու փաստը, եթե անձը դրա համար արդեն դատվել է, չի կարող նրա հետագա վարքագծի քրեաիրավական գնահատականի հիմք հանդիսանալ, «բացառությամբ այն դեպքերի», ինչպես վճռել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել արդյունքի վրա» (Նի-

կիտինն ընդդեմ Ռուսաստանի գործով 2004 թ. հուլիսի 20-ի վճռի 45-րդ կետ, գանգատ թիվ 50178/99)»:

.... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ իրավահարաբերության շրջանակներում գործի նյութերի վերաբերյալ պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ**՝ չխոչընդոտելով դատախազական հսկողության իրականացմանը, ինչպես նաև մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների արագ և արդյունավետ պաշտպանությանը:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազին բացառիկ իրավունք է վերապահված վերոհիշյալ որոշումների օրինականության վերաբերյալ կայացնելու **վերջնական որոշում,** որն իրավական լուրջ երաշխիք է մինչդատական վարույթի շրջանակներում թե՛ այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու, ծագած իրավական այս կամ այն խնդիրը վերջնական հանգուցալուծելու և թե՛անձանց իրավունքները ողջամիտ ժամկետներում պաշտպանելու ուղղությամբ: Հետևաբար, վիճարկվող նորմերը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում ընկալվելու, մեկնաբանվելու և կիրառվելու դեպքում չեն կարող հանգեցնել կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտմանը և դատախազական հսկողության խոչընդոտմանը:

9. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, ելնելով նաև վերը փաստված միջազգային փորձի ուսումնասիրությունից, օրենսդրական կարգավորումների շրջանակներում նախատեսել լրացուցիչ երաշխիքներ՝ բացառելու համար մինչդատական վարույթում սույն գործով քննության առարկա դատախազական հսկողության արդյունքում կայացված որոշումների շրջանցման (չկատարման) կամ հետաքննության մարմնի, քննիչի կողմից միևնույն հիմքերով մեկից ավելի նման որոշումներ կայացնելու որևէ հնարավորություն: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատախազի **համաձայնությամբ** հետաքննության մարմնի, քննիչի կողմից քրեական վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման ինստիտուտի ներդրումն առավելապես կհամապատասխաներ վիճելի իրավահարաբերության՝ միջազգային կարգավորման փորձին, կներդաշնակեցներ մինչդատական վարույթում, մի կողմից, հետաքննության մարմնի, քննիչի, և մյուս կողմից՝ դատախազի գործառութային դերը: Այս առումով, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանող կողմի իրազեկումն այն մասին, որ «իրավակիրառական պրակտիկայում առաջացած խնդիրը շտկելու համար ՀՀ Ազգային ժողովում պատրաստվում է օրենքի նախագիծ» և շրջանառության մեջ է դրված նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որում համարժեք լուծումներ նախատեսված են:

ՍԴՈ- 1253, 2 փետրվարի, 2016

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կանոնները կիրառելի չեն ինքնուրույն իրավակարգավորման օբյեկտների թվարկումների նկատմամբ և վեճի առարկա դրույթում ներկայացված չէ կոնկրետ իրավահարաբերությանը վերաբերող երկու միաժամանակյա անհրաժեշտ պայմանների առկայության պահանջ: Նույնը վերաբերում է նաև օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դրույթին (վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին): Որպես օրինակ կարող է ծառայել նաև օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը (քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ): Այս դեպքում, ըստ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ քննիչը չի կարող հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր, քանի դեռ տվյալ հանցագործության առիթով առկա չէ հարուցված քրեական գործ, կամ քննիչը պարտավոր է հանցագործության դեպքով նախապատրաստված նյութերի հիման վրա անպայման հարու-

ցել քրեական գործ՝ անկախ նրանից, որ առկա են քրեական գործի հարուցումը մերժելու հիմքեր:

Բացի դրանից, օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման համար պետք է այն ներկայացնել իր իրավական բովանդակության ամբողջականության մեջ, դիտարկել օրենսգրքի այլ դրույթների հետ օրգանական փոխկապվածության համատեքստում: Խոսքը վերաբերում է օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերին, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին: Դրանցով սահմանված լիազորությունները ենթադրում են կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների և այլ դեպքերի մասին անհապաղ դատախազին տեղյակ պահելու՝ հետաքննության մարմնի պարտականության կատարում՝ անկախ տվյալ գործով հետաքննություն սկսելու կամ չսկսելու հանգամանքից: Դիտարկվող պարտականությունը չկատարելը կամ այդ պարտականությունը գործով հետաքննություն սկսելու հանգամանքով պայմանավորելը կխաթարի հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դատախազական հսկողության էությունը, կխոչընդոտի դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված լիազորությունների իրականացմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա դրույթներն իրավակիրառական պրակտիկայում սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա մեկնաբանելու և կիրառելու պայմաններում կարող են ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածին համահունչ լիարժեք երաշխավորել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին հետաքննության մարմնի կողմից օրենքի պահանջների կատարման ստուգման ՝ դատախազի լիազորությունների բնականոն և արդյունավետ իրականացումը, և նման պարագայում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

22. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ

ՍԴՈ–179, 16 հոկտեմբերի, 1999 թ.

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հստակ տարանջատում է «տեղական ինքնակառավարում» և «պետական կառավարում» հասկացությունները: Սահմանադրության 105 հոդվածում ամրագրված է, որ՝ «Համայնքներում իրականացվում է տեղական ինքնակառավարում», իսկ 107 հոդվածում՝ «Մարզերում իրականացվում է պետական կառավարում»: Բացի դրանից, Սահմանադրության հոդված 2–ում սահմանված է, որ՝ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: Նման ձևակերպումը հստակ սահմանազատում է իշխանության իրականացման գործառնական և ինստիտուցիոնալ տարբեր համակարգերը: Պետությունը, ճանաչելով տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդաիշխանության հատուկ մակարդակ, երաշխավորում է համայնքի իրավունքը՝ ինքնուրույն և իր պատասխանատվությամբ, տեղական ինքնակառավարման ընտրովի մարմինների միջոցով տնօրինելու համայնքի սեփականությունը, լուծելու համայնքային նշանակության հարցերը:

ՍԴՈ–721, 18 դեկտեմբերի, 2007 թ.

6. ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 5, 11.2., 30, 43, 104, 107 և այլ հոդվածներում ամրագրված են ժողովրդաիշխանության և դրա իրականացման երաշխավորման, անձանց՝ որպես այդ իշխանության անմիջական կրողների, իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում՝ նաև տեղական (համայնքային) նշանակության հարցեր լուծելու հետ կապված հարաբերությունների կարգավորման բնագավառում:

Որպես ժողովրդաիշխանության իրականացման ձև՝ տեղական հանրաքվեների կազմակերպման ու անցկացման սկզբունքային խնդիրները նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրության 2–րդ հոդվածի համաձայն՝ ժողովրդաիշխանությունն իրականացվում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Տեղական հանրաքվեն, ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 4–րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով համայնքի գործերի կառավարմանը համայնքի անդամների ուղղակի մասնակցության ձևն է, որը կոչված է լուծելու համայնքային նշանակության հարցերը:

....

7. Ելնելով դիմող կողմի հարցադրումներից՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 104 հոդվածի 2–րդ մասի, 105 հոդվածի 1–ին և 2–րդ մասերի, 107 հոդվածի 4–րդ մասի բովանդակությունը, անդրադառնալ նախ՝ «համայնքային նշանակության հարցեր» արտահայտության իրավավերլուծական խնդրին՝ այնքանով, որքանով այն առնչվում է տեղական հանրաքվեի ենթակա հարցերի շրջանակին:

....

8. Անդրադառնալով տեղական հանրաքվեներում քննարկման ենթակա հարցերի շրջանակին և դրանց բովանդակությանը, ելնելով «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր նորմերից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կարևորել օրենքի 1-ին հոդվածի բնորոշումն այն մասին, որ «տեղական հանրաքվեն տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության **կարևոր** հարցերով քվեարկությունն է», այսինքն՝ համայնքներում քվեարկության ենթակա տեղական նշանակության հարցերի առարկայական շրջանակը սահմանափակ է: Մյուս կողմից, օրենքի վերոհիշյալ նորմը զարգացվել է 5 հոդվածի 1-ին կետում, համաձայն որի՝ տեղական հանրաքվեի կարող են դրվել հարցեր, որոնք նախատեսված են.

ա) Սահմանադրությամբ,

բ) օրենքով,

գ) վերապահված են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը:

ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մասում նախատեսված է համայնքային (տեղական) նշանակության հարցերը տեղական հանրաքվեով և օրենքով սահմանված կարգով լուծելու իրավունք, իսկ 110 հոդվածում նախատեսված է տեղական հանրաքվեի անցկացում՝ համայնքները միմյանց միացնելու կամ առանձնացնելու նպատակներով: Տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավար, ավագանի) իրավասությանը ենթակա հարցերը նախատեսված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, իսկ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 2-րդ կետում թվարկված բացառություններով փաստորեն սահմանափակվում է տեղական հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը:

Այսպիսով, համայնքային (տեղական) նշանակության հարցերի, հավասարապես՝ նաև տեղական հանրաքվեի դրվող հարցերի, առարկայական շրջանակը սահմանադրորեն չկանխորոշելու, և տեղական հանրաքվեների, դրանց կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման օրենսդրական պարտադիր կանոնակարգումը որպես սահմանադրական սկզբունք հաստատագրելու պայմաններում (ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 7-րդ կետ), տեղական հանրաքվեի դրվող հարցերի **սահմանափակումն** իրավաչափ է և բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերից, այնպես էլ ՀՀ-ում սահմանադրական կարգի հաստատագրված այն սկզբունքից, համաձայն որի՝ հանրաքվեն, ազատ ընտրությունները և ընտրովի մարմինների միջոցով տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության իրականացման ինքնուրույն ձևեր են (ՀՀ Սահմանադրության 2 հոդված):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ լինելով ժողովրդաիշխանության իրականացման (տեղական բնակչության կամքի արտահայտման) սահմանադրորեն որոշված ինքնուրույն ձև, հանրաքվեն չի կարող փոխարինել այդպիսի իշխանության այլ ձևերին այնպես, ինչպես վերջիններս՝ հանրաքվեին: Տեղական հանրաքվեն և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները համայնքի բնակիչների ազատ կամքի արտահայտման (ինքնակառավարման իրավունքի իրականացման) բարձրագույն ձևեր են և անփոխարինելի՝ լուծվող խնդիրների շրջանակներով, իրավական կարգավորմամբ: Եթե առաջինի դեպքում քվեարկության են դրվում համայնքային նշանակության կարևոր հարցեր, ապա երկրորդի դեպքում կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմիններ (համայնքի ղեկավար և ավագանի), որոնց միջոցով (համայնքի անդամների անուղղակի մասնակցությամբ), օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք) նույնպես լուծվում են համայնքային (տեղական) նշանակության հարցեր: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 107 հոդվածի 1-ին և 4-րդ մասերի բովանդակությունից միանշանակ հետևում է, որ տեղական հանրաքվեն համայնքի անդամների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցելու ձև է:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է ինչպես պարտադիր իրավական հետևանքներ առաջացնող, այնպես

էլ նման հետևանքներ չառաջացնող հանրաքվեի ինստիտուտ (մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 110 հոդվածի 1-ին մաս): Օրենսդրական ճանապարհով համայնքային նշանակության հարցերի լուծման ժամանակ պարտադիր հետևանքներ չառաջացնող հանրաքվեների ինստիտուտի ավելի լայն արմատավորումը մեծապես կարող էր նպաստել տեղական ինքնակառավարման մակարդակում ժողովրդավարական գործընթացների զարգացմանը, որը կբխեր նաև ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1121 (1997) բանաձևի դրույթներից:

10. .... Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ համայնքի բնակչության անմիջական նախաձեռնությամբ (հանրաքվեով) համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման (հետկանչման) ինստիտուտի բացակայությամբ ամենևին չի սահմանափակվում մարդու և քաղաքացու (համայնքի անդամների)՝ համայնքի գործերի կառավարմանը մասնակցելու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը: Բացի դրանից, անմիջական ժողովրդավարության դրսևորման ձևերից բացի, գործող օրենսդրությամբ նախատեսված է համայնքի ղեկավարի գործունեության երաշխավորված վերահսկման (համայնքի գործերի կառավարմանը բնակչության մասնակցության) այլ միջոցներ, մասնավորապես՝ համայնքի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու միջոցով («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11, 16, 17, 19, 20 և այլ հոդվածներ), ընդհուպ նաև ավագանու միջոցով համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկության նախաձեռնումը ՀՀ կառավարման համապատասխան մարմնի (մարզպետի, Երևանի քաղաքապետի) առջև:

Ուստի տեղական հանրաքվեն օրենքով թույլատրելի քննարկման հարցերի շրջանակով, և որպես համայնքային նշանակության հարցերի լուծման միջոց, տեղական ինքնակառավարման գործունեության վերահսկման ապահովման նույնքան կարևոր երաշխիք է, որքան պետական և հասարակական վերահսկողության՝ օրենքով նախատեսված մյուս ձևերը, որոնք ամբողջությամբ կոչված են համայնքներում ապահովելու մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների անխախտելիությունը: Բացի դրանից, ՀՀ սահմանադրական փոփոխություններով պայմանավորված (ՀՀ Սահմ. 108.1. հոդված)՝ օրենքով հստակեցվել են՝ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ իրավական (վարչական) հսկողություն իրականացնելու, ինչպես նաև այդ մարմինների գործողությունները (անգործությունը) դատական կարգով բողոքարկելու կարգն ու ձևերը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7.1 գլուխ), իսկ ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 8-րդ կետի, 101 հոդվածի 4-րդ կետի շրջանակներում՝ նաև սահմանադրական վերահսկողության իրականացման երաշխիքները: Ուստի իրավական կարգավորման հիմնական խնդիրն է ելնել համայնքի արդյունավետ կառավարման նպատակով պետական և հասարակական վերահսկողության բոլոր ձևերի ու միջոցների ներդաշնակ և ամբողջական գործադրման անհրաժեշտությունից, որը համահունչ է ինչպես ՀՀ Սահմանադրության 1, 2, 3 և 5 հոդվածներում ամրագրված սահմանադրական կարգի սկզբունքներին և Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության հետագա զարգացման նպատակներին, այնպես էլ Եվրոպայի խորհրդի շրջանակներում հաստատված իրավակիրառական պրակտիկային:

ՍԴՈ-714, 18 մարտի, 2008 թ.

6. .... Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1. հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կար-

գավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

.... ՀՀ օրենսդրության վերոհիշյալ վերլուծության հիման վրա կարելի է արձանագրել, որ գույքը, տվյալ դեպքում՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելը ՀՀ Սահմանադրության 8 հոդվածին համահունչ հանդիսանում է պետության և համայնքների սեփականության իրավունքի իրացման ձևերից մեկը, որի իրացմանն էլ ուղղված է ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության վիճարկվող դրույթը:

ՍԴՈ-803, 8 մայիսի, 2009 թ.

6. ՀՀ Սահմանադրության 30 հոդվածը սահմանում է երկու սկզբունքային դրույթ: Նախ. «**Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք**»: Երկրորդ՝ «**Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը**»:

Ակնհայտ է, որ Սահմանադրությունը ճանաչում է ինչպես ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքը, այնպես էլ տեղական ինքնակառավարման մակարդակում ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց համար օրենքով նման իրավունքի նախատեսման հնարավորությունը:

Սահմանադրորեն նախատեսված այդ հնարավորությունից ելնելով ՀՀ ընտրական օրենսգիրքը (հոդվ. 2) սահմանել է նման իրավունք ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձանց համար, ովքեր համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեն և փաստացի բնակվում են այդտեղ:

ՀՀ Սահմանադրությունը սահմանում է նաև, որ. «Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում» (հոդվ. 104): Ընդ որում, **տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն** է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:

Սահմանադրության 104.1. հոդվածի համաձայն՝ **համայնքը** մեկ կամ մի քանի բնակավայրերի **բնակչության հանրությունն** է: Համայնքի սեփականությունը կառավարելու և տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու և համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ (հոդվ. 105):

Այսպիսով, «տեղական ինքնակառավարում» և «համայնք» հասկացությունները փոխպայմանավորված են: Համայնքը նույն բնակավայրում ապրող բնակչության հանրություն է: Հետևաբար, **նույն բնակավայրում ապրող բնակչության կողմից** իր սեփականությունը կառավարելը և տնօրինելը, համայնքային նշանակության, ինչպես նաև իրենց պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ հարցերի լուծումը կազմում է տեղական ինքնակառավարման բովանդակությունը:

Տեղական ինքնակառավարման մակարդակում ընտրական իրավունքն ինքնակառավարման իրականացմանը մասնակցելու համայնքի բնակչի իրավունքն ու հնարավորությունն է, ինչը կոչված է նրան մասնակից դարձնելու համայնքի սեփականության կառավարմանը և տնօրինմանը, համայնքային նշանակության հարցերի լուծմանը և համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունների իրականացմանը:

Սահմանադրության «Տեղական ինքնակառավարումը» գլխում շեշտվում են «բնակիչ» (հոդվ. 104, 104.1.) և «համայնքի անդամ» (հոդվ. 107) հասկացությունները: Ընդ որում, Սահմանադրության 107 հոդվածի առաջին մասի համաձայն՝ **տեղական ինքնակառավարման իրավունքը պատկանում է համայնքին,** այսինքն՝ **տվյալ բնակավայրի բնակչության հանրությանը:**

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում բնակչության մասնակցությունը ժողովրդավարության ինքնուրույն ու առանձնահատուկ այն ձևն է, երբ մարդիկ ընդհանուր շահերից ելնելով համատեղ են լուծում իրենց կյանքին առնչվող տեղական խնդիրները: Դրան մասնակցելու իրավունքը ձեռք է բերվում **տվյալ բնակավայրի բնակիչ լինելու հանգամանքով:** Տեղական ինքնակառավարման եվրոպական պրակտիկան նույնպես վկայում է այդ հանգամանքի կարևորության մասին: Նման մոտեցումը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ համայնքի բնակիչն է մուծում տեղական հարկեր ու տուրքեր, մասնակցում է համայնքային սեփականության ձևավորմանը:

ՍԴՈ–1137, 4 փետրվարի, 2014 թ.

7. .... բ) Սահմանադրության 11.2–րդ հոդվածի և 105–րդ հոդվածի 1–ին մասի համադրված վերլուծությունը վկայում է, որ երաշխավորելով տեղական ինքնակառավարումը, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում համայնքի սեփականությունն ինքնուրույնաբար կառավարելուն ու տնօրինելուն ուղղված որոշակի գործողությունների կատարման և կամահայտնության դրսևորումների միջոցով, պետությունը, միաժամանակ, ստանձնում է համարժեք պարտականություն՝ Սահմանադրության 108.1–րդ հոդվածով ամրագրված՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով օրենքով սահմանված կարգով իրականացվող իրավական հսկողության իրավակարգավորման շրջանակում: Այսինքն՝ տեղական ինքնակառավարման համակարգում սահմանադրական օրինականության սկզբունքի իրացումն ուղղված է պետության կողմից ոչ միայն տեղական ինքնակառավարման երաշխավորմանը, այլև այդ համակարգում օրինականության պահպանմանը:

Տեղական ինքնակառավարման ինքնուրույնության և անկախության երաշխավորմանն է ուղղված նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 100–րդ հոդվածի 1–ին կետում ամրագրված լիազորությունը՝ օրենքով սահմանված կարգով որոշել նաև տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Տվյալ լիազորությունը կոչված է երաշխավորելու տեղական ինքնակառավարման մարմինների իրավաստեղծ գործունեության սահմանադրականությունը և կանխարգելելու պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների իրավաստեղծ գործունեությանն անհարկի միջամտությունը: Առավել ևս՝ նման իրավակարգավորումների պարագայում տեղական ինքնակառավարման մարմինների ակտերի օրինականության հարցը կարող է քննության առարկա լինել բացառապես դատական կարգով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերի շրջանակներում:

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև դիմողի այն փաստարկին, որ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն օրենսդրորեն օժտված չլինելով արտագերատեսչական վերահսկողության գործառույթներով՝ վերահսկողություն է իրականացրել կառուցվածքային առումով իր ստորադասը չհանդիսացող հանրային իշխա-

նության այլ մարմնի՝ տեղական ինքնակառավարման մարմնի նկատմամբ՝պետական գրանցման ենթակա իրավունք կիրառող վարչական ակտն անուղղակիորեն ճանաչելով ոչ իրավաչափ:

.... Սահմանադրական կարգավորումների շրջանակում և ի կատարումն ՀՀ Սահմանադրության 108.1-րդ հոդվածի պահանջների՝ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների համապատասխանաբար՝ 7.1-րդ և 7-րդ գլուխներով իրավական հսկողութուն իրականացնող մարմինների ցանկում չի ներառվել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, ինչը ենթադրում է ՀՀ հողային օրենսգրքում և «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համակարգում «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթների բովանդակության ու սահմանների հստակեցմանն ուղղված համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտություն: Դրանց առանցքը պետք է լինի այն, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ պետական հսկողությունը, դրա իրականացման ձևերը, մեխանիզմները, կարգը չեն կարող խախտել տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը և դրա մարմինների անկախությունը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ-179, 16 հոկտեմբերի, 1999 թ.

9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ընտրական իրավունքին վերաբերող նորմերն ամրագրված են 2, 3, 27, 44, 50-53, 64, 110 հոդվածներում: Սահմանադրական ընդհանուր մոտեցումը՝ տվյալ հարցի առումով, այն է, որ՝

ա) Սահմանադրության հոդված 2-ն ամրագրում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով իր իշխանությունն իրականացնելու ժողովրդի իրավունքը,

բ) սահմանազատելով «տեղական ինքնակառավարում» և «պետական կառավարում» հասկացությունները (հոդվ. 105, 107), պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը վերապահվում է Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիներին (հոդվ. 27),

գ) տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման նպատակն է համարվում համայնքի սեփականության տնօրինումն ու համայնքային նշանակության հարցերի լուծումը (հոդվ. 105): Միաժամանակ, նախատեսվում են՝ սեփականատիրոջ իրավունքը՝ սեփականության տիրապետման, օգտագործման և տնօրինման հարցում (հոդվ. 8), ինչպես նաև սեփականության օտարման սահմանադրական երաշխիքները (հոդվ. 28),

դ) որևէ ուղղակի սահմանափակում չի դրվում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման և ինքնակառավարման գործառույթի իրականացմանը տվյալ համայնքում մշտական բնակվող՝ ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց մասնակցության հարցում:

ՍԴՈ-803, 8 մայիսի, 2009 թ.

5. Սույն գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը կարևոր է համարում անդրադարձը տեղական ինքնակառավարման մակարդակում անձանց ընտրական իրավունքի իրացման հիմնախնդրին առնչվող մի շարք հիմնարար հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությանը: Դրանք են, մասնավորապես, «ընտրական իրավունք», «տեղական ինքնակառավարում», «համայնք», «քաղաքացի», «յուրաքանչյուր ոք», «համայնքի բնակիչ», «բնակիչների հաշվառում», «մշտական բնակության վայր», «համայնքի ընտրողների ցուցակ», «համապետական ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակ», «տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ

կազմվող ընտրողների ցուցակ» հասկացությունները, որոնց վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ առկա են որոշակի հասկացութային հստակեցումներ:

6. ՀՀ Սահմանադրության 30 հոդվածը սահմանում է երկու սկզբունքային դրույթ: Նախ. «**Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք**»: Երկրորդ՝ «**Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը**»:

Ակնհայտ է, որ Սահմանադրությունը ճանաչում է ինչպես ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքը, այնպես էլ տեղական ինքնակառավարման մակարդակում ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց համար օրենքով նման իրավունքի նախատեսման հնարավորությունը:

Սահմանադրորեն նախատեսված այդ հնարավորությունից ելնելով ՀՀ ընտրական օրենսգիրքը (հոդվ. 2) սահմանել է նման իրավունք ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձանց համար, ովքեր համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեն և փաստացի բնակվում են այդտեղ:

.... Այսպիսով, «տեղական ինքնակառավարում» և «համայնք» հասկացությունները փոխպայմանավորված են: Համայնքը նույն բնակավայրում ապրող բնակչության հանրություն է: Հետևաբար, **նույն բնակավայրում ապրող բնակչության կողմից** իր սեփականությունը կառավարելը և տնօրինելը, համայնքային նշանակության, ինչպես նաև իրենց պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ հարցերի լուծումը կազմում է տեղական ինքնակառավարման բովանդակությունը:

Տեղական ինքնակառավարման մակարդակում ընտրական իրավունքն ինքնակառավարման իրականացմանը մասնակցելու համայնքի բնակչի իրավունքն ու հնարավորությունն է, ինչը կոչված է նրան մասնակից դարձնելու համայնքի սեփականության կառավարմանը և տնօրինմանը, համայնքային նշանակության հարցերի լուծմանը և համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունների իրականացմանը:

Սահմանադրության «Տեղական ինքնակառավարումը» գլխում շեշտվում են «բնակիչ» (հոդվ. 104, 104.1.) և «համայնքի անդամ» (հոդվ. 107) հասկացությունները: Ընդ որում, Սահմանադրության 107 հոդվածի առաջին մասի համաձայն՝ **տեղական ինքնակառավարման իրավունքը պատկանում է համայնքին,** այսինքն՝ **տվյալ բնակավայրի բնակչության հանրությանը:**

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում բնակչության մասնակցությունը ժողովրդավարության ինքնուրույն ու առանձնահատուկ այն ձևն է, երբ մարդիկ ընդհանուր շահերից ելնելով համատեղ են լուծում իրենց կյանքին առնչվող տեղական խնդիրները: Դրան մասնակցելու իրավունքը ծեռք է բերվում **տվյալ բնակավայրի բնակիչ լինելու հանգամանքով:** Տեղական ինքնակառավարման եվրոպական պրակտիկան նույնպես վկայում է այդ հանգամանքի կարևորության մասին: Նման մոտեցումը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ համայնքի բնակիչն է մուծում տեղական հարկեր ու տուրքեր, մասնակցում է համայնքային սեփականության ձևավորմանը:

7. .... Օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառման համակարգի ներդրմամբ միաժամանակ սահմանվել է հաշվառման այնպիսի ընթացակարգ, որն ապահովում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր անձի հաշվառումը՝ միտում ունենալով բացառել հաշվառում չունեցող անձանց առկայությունը Հայաստանի Հանրապետությունում: Չհաշվառված անձի առկայությունը

գործնականում հնարավոր է միայն տվյալ անձի կողմից՝ նշված օրենքով սահմանված իր պարտավորությունը չկատարելու դեպքում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ իրավակիրառական պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար, մասնավորապես, կարևոր է տարբեր օրենսդրական ակտերով «բնակչության հաշվառում» հասկացության առնչությամբ միասնական մոտեցման ապահովումը, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների համակարգված իրականացումը:

8. ՀՀ օրենսդրության վերոհիշյալ դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ **համայնքի ընտրողների ցուցակում** կարող են ընդգրկվել միայն տվյալ համայնքի՝ 18 տարին լրացած **ընտրական իրավունք ունեցող բնակիչները**, այսինքն՝ այն անձինք, որոնց մշտական բնակության վայրը տվյալ համայնքն է, և որոնք օրենքով նախատեսված ու ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հաշվառված են այդ համայնքում: Համապետական ընտրությունների ժամանակ այդ ցուցակներում կարող են ընդգրկվել նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասում նախատեսված ընտրական իրավունք ունեցող՝ տվյալ համայնքում չհաշվառված քաղաքացիները: Պատահական չէ, որ հիշյալ 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության մեջ չհաշվառված անձանց առումով խոսքը վերաբերում է ոչ թե «յուրաքանչյուր ոք»-ին, այլ «**քաղաքացիներ»**-ին, որոնք համապետական ընտրությունների ժամանակ ընտրական իրավահարաբերությունների միակ սուբյեկտն են: Իսկ Հայաստանի Հանրապետության **քաղաքացի** են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած անձինք:

....

10. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի օրենսդրական կարգավորման փոփոխությունների ընդհանուր տրամաբանության վերլուծությանը: Ինչպես նշվեց, 1999 թ. փետրվարի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ ընտրական օրենսգիրքն ընդունվելուց հետո դրա 10-րդ հոդվածը փոփոխվել է վեց անգամ (13.10.1999 թ. ՀՕ-2, 05.04.2000 թ. ՀՕ-47, 03.07.2002 թ. ՀՕ-406-Ն, 19.05.2005 թ. ՀՕ-101-Ն, 22.12.2006 թ. ՀՕ-1-Ն, 16.11.2007 թ. ՀՕ-219-Ն օրենքներ): Մինչև 2000 թվականի ապրիլի 5-ի փոփոխությունները տվյալ հոդվածում առանձին դրույթ նախատեսված չի եղել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներ կազմելու առանձնահատկության վերաբերյալ:

.... Այսպիսով, ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի բոլոր փոփոխությունների համադրված վերլուծությունը նույնպես վկայում է, որ 10 հոդվածի 3-րդ մասի դրույթներն ըստ էության բովանդակում են ընդհանուր դրույթներ և կանոնակարգում են համապետական ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների կազմման հետ կապված իրավահարաբերությունները:

11. ՀՀ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ սույն օրենսգրքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ընտրական իրավունքով օժտված անձանց վրա»:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության մեջ, ինչպես նաև օրենսդրական ակտերում «**յուրաքանչյուր ոք**» եզրույթը չի նշանակում

«**քաղաքացիություն չունեցող անձ**»: Այն միաժամանակ ենթադրում է թե՛ քաղաքացիներին և թե՛ քաղաքացիություն չունեցող անձանց: Ուստի, մի կողմից՝ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մասի առաջին դրույթը չի կարելի մեկնաբանել այնպես, որ դրա առաջին մասը վերաբերում է ՀՀ քաղաքացիներին, իսկ երկրորդ մասը՝ ոչ քաղաքացիներին: Սակայն, մյուս կողմից, օգտագործվում է «նաև» եզրույթը, որը տվյալ համատեքստում ենթադրում է. «բացի սահմանվածից՝ մյուսը»: Եթե դա համադրում ենք հոդվածի նույն մասի երկրորդ նախադասության մեջ օգտագործված «քաղաքացիություն չունեցող **ընտրական իրավունքով օժտված....»** արտահայտության հետ, ապա ակնհայտ է դառնում, որ տվյալ հոդվածում նկատի է առնվում, այսպես կոչված, «յուրաքանչյուր այլ ոք» հասկացությունը: Այս հարցում տարակարծիք մեկնաբանություններից խուսափելու համար ելակետ պետք է ընդունել ընտրական իրավունքի և դրա սահմանափակման վերաբերյալ սահմանադրական մոտեցումները:

ՀՀ Սահմանադրությունը ճանաչելով 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիների **ընտրական իրավունքը** (հոդվ. 30), միաժամանակ, ինչպես նշել ենք, նախատեսել է, որ «Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը»: Օրենսդիրը, Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորության շրջանակներում, նախատեսել է, որ բացի 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներից՝ «....տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նման իրավունք ունի նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք» (ՀՀ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին մաս):

Այս համադրումից հետևում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեն 18 տարին լրացած, տվյալ համայնքում հաշվառված **ՀՀ քաղաքացի հանդիսացող բնակիչները**, ինչպես նաև տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և **փաստացի բնակվող**, սակայն ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք: Նման իրավակարգավորումը բխում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 1999 թ. ՍԴՈ-179 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների տրամաբանությունից, որում, մասնավորապես, շեշտվեց, որ օրենսդրին վերապահելով «ընտրության կարգը» սահմանելու իրավասությունը, Սահմանադրության ընդհանուր պահանջը նաև այն է, որ այն իրականացվի ՀՀ սահմանադրական կարգի հիմունքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, և ՀՀ Ազգային ժողովի իրավասությունն է սահմանելու այդ իրավունքի իրացման կարգն ու պայմանները, մասնավորապես՝ հստակեցնելով մոտեցումը բնակության ցենզի վերաբերյալ:

Սահմանադրական դատարանի այդ որոշման հիման վրա փոփոխություններ կատարվեցին ՀՀ օրենսդրության մեջ և ընտրակարգում՝ թույլատրելով առնվազն մեկ տարի տվյալ համայնքում հաշվառված և բնակվող, սակայն ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

2005 թ. սահմանադրական փոփոխություններն այս հարցում ամրագրել են այնպիսի մոտեցում, որը սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից համահունչ է սահմանադրական դատարանի՝ տվյալ հարցի վերաբերյալ վերոհիշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

12. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությանը տրվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կազմվող ընտրողների ցուցակներում կարող են ընդգրկվել նաև տվյալ համայնքի բնակիչ չհանդիսացող անձինք: Սա չի բխում տեղական ինքնակառավարման սահմանադրաիրավական բովանդակությունից: Հիշյալ նորմը կիրառելի է միայն համապե-

տական ընտրությունների ժամանակ ըստ համայնքների ընտրողների ցուցակներ կազմելիս, և վերջինիս առումով սահմանադրականության որևէ խնդիր չի առաջացնում:

ՀՀ քաղաքացու, հավասարապես նաև ՀՀ-ում կեցության այլ կարգավիճակ ունեցող անձանց ընտրական իրավունքի օրինաչափ իրացման կարևորագույն նախապայմաններից է **«մեկ ընտրող՝ մեկ ձայն»** սկզբունքը, որից հետևում է նաև անձանց՝ **տեղամասային միայն մեկ ցուցակում ընդգրկվելու միակ հնարավորությունը** (ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 2-րդ մաս), որը որպես իրավաբանորեն ամրագրված պարտականություն հստակ և հետևողականորեն պետք է երաշխավորվի ինչպես ՀՀ ընտրական օրենսգրքում, այնպես էլ՝ իրավակիրառական պրակտիկայում, որպեսզի մեկ անձն ընտրողների մեկից ավելի ցուցակներում չընդգրկվի: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ երաշխիքի առկայությամբ է նաև մեծապես պայմանավորված ՀՀ-ում ընտրությունների (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների) և հանրաքվեների հետագա ժողովրդավարացումը: Իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում համայնքների ընտրողների ցուցակների կազմման (վարման) գլխավոր խնդիրը տվյալ համայնքի ընտրական իրավունք ունեցող բնակիչների ընտրական իրավունքի իրացման երաշխավորումն է: Այդ խնդրի արդյունավետ լուծմանը կարող էր նպաստել ոչ միայն իրավասու պետական մարմինների կողմից «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2005 թ. հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշման պահանջների հստակ կատարումը, այլև համայնքների բնակիչների հաշվառման ու ընտրացուցակների կազմման առանձնահատկությունների հետ կապված իրավակարգավորման մանրամասները ՀՀ ընտրական օրենսգրքում նախատեսելը՝ ելնելով այդ օրենսգրքի կառուցվածքային ընդհանուր տրամաբանությունից:

23. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԻՆՔՆԻՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

9. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլև պարտականություն: Առանց դրա, մի կողմից՝ նորմի սահմանադրականության վերաբերյալ մտահոգությունը չի կարող փարատվել հայեցողական մոտեցմամբ, որովհետև այն պահանջում է «գնահատման» դատավարական համապատասխան ընթացակարգ և դրա իրականացման սահմանադրական լիազորություն, մյուս կողմից՝ մարդկանց իրավունքները պաշտպանելու փոխարեն հնարավոր հակասահմանադրական նորմի կիրառմամբ կխախտվեն այդ իրավունքները: Դատական պրակտիկան նաև ցույց է տալիս, որ դրանց հետագա վերականգնումը դառնում է ավելի դժվար ու հաճախ անհնարին՝ հանգեցնելով արդարադատության նկատմամբ վստահության կորստի: Ուստի խնդիրը ոչ միայն նոր հանգամանքների ինստիտուտի գործունակության ու արդյունավետության հետագա բարձրացումն է, այլև, առաջնորդվելով իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի անշեղ իրացման պահանջով, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետով ՀՀ դատարաններին վերապահված հնարավորության խելամիտ իրացումը: Իսկ դա կարող է երաշխավորվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք: Այնինչ «գնահատումը» ենթադրում է համապատասխան դատավարական ընթացակարգ ու դրա իրականացման համարժեք լիազորություն:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԴՈ–920, 12 հոկտեմբերի, 2010 թ.

5. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենսդրի բացառիկ իրավասությանն է վերապահված ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանումը: Իր այդ լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պատասխանատվության միջոցներն ու չափերը: Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով: Օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ և 43-րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկա-

յում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես իրավաբանական պատասխանատվության և, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը, որի ապահովման տեսանկյունից էլ նախևառաջ անհրաժեշտ է գնահատել վիճարկվող նորմի սահմանադրականությունը:

Խնդրո առարկա սահմանադրաիրավական վեճի համատեքստում համաչափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև:

Տվյալ դեպքում վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում ապահովել ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված՝ տուրքեր մուծելու՝ անձանց սահմանադրական պարտականության կատարումը:

ՍԴՈ-924, 16 նոյեմբերի, 2010 թ.

5. Սահմանադրական դատարանն իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքի բովանդակությանն անդրադարձել է իր՝ 2010 թ. հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ: Մասնավորապես, անդրադառնալով պատասխանատվության տեսակները, չափերն ու հարկադրանքի միջոցները սահմանելու՝ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված լիազորությունն իրականացնելիս օրենսդրի հայեցողության շրջանակներին՝ սահմանադրական դատարանը նշել է, որ՝ օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ և 43-րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ հասարակական հարաբերությունների կարգավորման համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է նաև իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը....: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նաև նշել է, որ «համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև»:

....

7. Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից: Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն ընձեռի որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից:

Վիճարկվող դրույթի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրն իր հայեցողության շրջանակներում պատասխանատվության չափի տարբերակման պահանջին համապատաս-

խան սահմանել է տուգանքի նվազագույն չափ՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, և առավելագույն չափ՝ խախտման գումարի չափով: Այդպիսով՝ օրենսդիրը տարբերակել է պատասխանատվության չափը՝ իրավակիրառողին հնարավորություն տալով ըստ արարքի վտանգավորության աստիճանի և պատճառված վնասի չափի՝ ապահովել համաչափություն կատարված արարքի և նշանակվող տուգանքի չափի միջև այն դեպքում, երբ խախտման գումարը գերազանցում է օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուգանքի նվազագույն չափը:

ՍԴՈ-997, 15 նոյեմբերի, 2011 թ.

8. .... Վիճարկվող հոդվածի սահմանադրականության գնահատման տեսանկյունից կարևոր է նաև դրանում կարգավորվող հարաբերությունների շրջանակներում բացահայտել անձի իրավական **պատասխանատվությունը բացառող հանգամանքների**, ինչպես նաև այդպիսի պայմանների բացակայության դեպքում՝ հնարավոր **իրավական հետևանքների** որոշակիությունը:

11. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 14, 27, 43 և 47-րդ (1-ին մաս) հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիշյալ և մի շարք այլ վճիռների հիման վրա ձևավորված նախադեպային իրավունքի, այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1-րդ հոդվածների, «Զանգվածային լրատվության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների նորմերի համադրված վերլուծությունից հետևում է. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 և 1087.1-րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառումը երաշխավորելու համար անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնել միջազգային իրավական հետևյալ սկզբունքային մոտեցումները.

....

– վեճի առարկա հոդվածի իմաստով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, և «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,

– «զրպարտություն» և «վիրավորանք» եզրույթները պետք է դիտարկել դիտավորության, անձին անվանարկելու մտադրության առկայության համատեքստում,

– չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար և նպաստել հասարակության համար կարևոր հարցերի շուրջ քննարկումներին,

– մամուլի ներկայացուցիչների՝ պատասխանողի դերում հանդես գալու հանգամանքը չի կարող դիտվել որպես գործոն՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար,

– ներպետական մարմինների որոշումը պետք է հիմնված լինի գործի համար նշանակություն ունեցող փաստերի ընդունելի գնահատման վրա,

– պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից,

– նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը,

– արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, և նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար,

– վնասի փոխհատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն, հաշվի առնվի պատասխանողի եկամուտների չափը, չսահմանվի պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար,

– ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում պահանջող հայցվորը պետք է ապացուցի այդ վնասի առկայության փաստը,

– փոխհատուցման՝ օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելի է միայն առավել լուրջ ու ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերում,

– լոկ փաստերի քննադատական գնահատականը, որը չի պարունակում փաստական ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր է ապացուցել, չի կարող փոխհատուցման պահանջի հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը եղել է գնահատողական դատողություն, կարող է սահմանվել ոչ նյութական վնասի փոխհատուցում,

– փոխհատուցում սահմանելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են զգացմունքներին հասցված վնասը, ներողություն հայցելու պատրաստակամության բացակայությունը,

– լրագրողի՝ հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության գաղտնի աղբյուրները չբացահայտելու իրավունքից օգտվելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,

– անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել և օգտագործվել են արտադատական հատուցման ձևերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները,

– պետք է պարտադիր կերպով կողմերին առաջարկվի հաշտության գալ և աջակցություն ցուցաբերվի այդ հարցում: Վնասը գնահատելիս հաշտեցման առաջարկը պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք,

– պետք է բացահայտ կերպով ճանաչվեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը և այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

ՍԴՈ–1139, 18 փետրվարի, 2014 թ.

.... Ելնելով վերոշարադրյալից՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, առաջնորդվելով իր հայեցողական լիազորություններով, տարանջատել է հար-

կային և վարչական պատասխանատվության բնագավառները՝ նկատի ունենալով հարկային հարաբերությունների կարգավորման սահմանադրաիրավական առանձնահատուկ կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ սահմանադրական կարգի ու օրինականության պահպանման համատեքստում: Այդ տարանջատումն ինքնին հետապնդում է իրավական որոշակի նպատակ և սահմանադրականության խնդիր չի հարուցում:

ՍԴՈ–1203, 28 ապրիլի, 2015 թ.

8. Դիմողը թեև նշում է, որ իրավակիրառ պրակտիկայում նորմին տրվում է այլ մեկնաբանություն, որը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներով նախատեսված իրավակարգավորումների տեսանկյունից, այնուամենայնիվ, չի վկայակոչում որևէ դատական ակտ, որի շրջանակներում վիճարկվող նորմին կտրվեր այդպիսի մեկնաբանություն: Դիմողը միայն ներկայացնում է մեկ դատական գործի դատավարական նախապատմությունը, որն իր փաստական հանգամանքներով էապես տարբերվում է դիմողի կողմից ներկայացված **non bis in idem** սկզբունքի ենթադրյալ խախտման հակասահմանադրական իրավիճակներից:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–1139 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հասարակության և պետության համար իրենց ոչ բարենպաստ հետևանքներ առաջացնելու ծանրությամբ, պահպանվող հասարակական հարաբերություններին պատճառվելիք վնասով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ հարկային իրավախախտումներ սահմանող նորմերն իրենց ամրագրումն են գտել ոչ միայն հարկային օրենսդրության մեջ, այլև վարչական իրավախախտումների վերաբերյալ, ինչպես նաև քրեական օրենսգրքերում: Բացի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմերով նախատեսված վարչական պատասխանատվությունից, ՀՀ քրեական օրենսգրքի 189–րդ, 205–րդ և 328–րդ հոդվածներով նախատեսված են կոնկրետ հանցակազմեր և համապատասխան պատժամիջոցներ՝ հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերում: Այսպիսով, նպատակ ունենալով երաշխավորել հարկեր և տուրքեր վճարելու՝ անձանց սահմանադրական պարտականության կատարումը, օրենսդիրը նախատեսել է իրավական պատասխանատվության կոնկրետ տեսակներ (հարկային, վարչական, քրեական), որոնց խստությունը, կիրառման իրավական հետևանքներն անմիջականորեն պայմանավորված են հարկային այս կամ այն պարտավորության չկատարման (ոչ պատշաճ կատարման) հասարակական վտանգավորության աստիճանով: Մասնավորապես, եթե «Հարկերի մասին» ՀՀ օրենքով կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հարկային պարտավորության չկատարումը (ոչ պատշաճ կատարումը) առաջացնում է նյութական պատասխանատվություն (համապատասխանաբար՝ հարկային և վարչական պատասխանատվություն), ապա նույն արարքը, ըստ սուբյեկտիվ հատկանիշի, քրեորեն պատժելի է չարամտության դրսևորման կամ ծանրացուցիչ այլ հանգամանքների առկայության դեպքերում: Հետևաբար, իր բնույթով ու բովանդակությամբ հարկային պարտավորությունից խուսափելն անհարիր է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 45–րդ հոդվածում, այլ, նախ և առաջ՝ Սահմանադրության 1–ին, 3–րդ և այլ հոդվածներում ամրագրված իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքներին, ուստի այդ արարքի՝ օրենքով նախատեսված պատժելիությունը հետապնդում է իրավաչափ նպատակ»:

.... ՀՀ սահմանադրական դատարանն իր վերոնշյալ որոշմամբ արձանագրել է, որ «օրենսդիրը, առաջնորդվելով իր հայեցողական լիազորություններով, տարանջատել է հարկային և վարչական պատասխանատվության բնագավառները՝ նկատի ունենալով հարկային հարաբերությունների կարգավորման սահմանադրաիրավական առանձնահատուկ կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ սահմանադրական կարգի ու օրինականության պահպան-

ման համատեքստում: Այդ տարանջատումն ինքնին հետապնդում է իրավական որոշակի նպատակ և սահմանադրականության խնդիր չի հարուցում»:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՅԵԿՏ

ՍԴՈ–851, 14 հունվարի, 2010 թ.

5. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում վեճի առարկան դիտարկել նաև հանցագործության հատուկ սուբյեկտի հասկացության, հատուկ սուբյեկտի որոշման հիմքում ընկած չափանիշների տեսանկյունից: ՀՀ քրեական օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ հատուկ սուբյեկտի որոշումն արտահայտում է կոնկրետ տեսակի հանցագործությունների առանձնահատկությունները, դրանց հանրորեն վտանգավորության աստիճանը: Այս կամ այն անձին որպես տվյալ հանցագործության հատուկ սուբյեկտ ճանաչելը պայմանավորվում է նրանով, որ իրենց պաշտոնական կամ այլ դրության հիմքով նրանք կարող են կատարել հանցագործություններ, որոնք այլ անձինք կատարել չեն կարող: Այսինքն՝ տվյալ հանցագործության բնույթը և այն կատարելու հնարավորությունն են այն չափանիշները, որոնք օբյեկտիվորեն, անկախ օրենսդրի կամքից, կանխորոշում են հատուկ սուբյեկտի շրջանակը: Այս չափանիշները ենթադրում են, որ տվյալ հանցակազմի հատուկ սուբյեկտի շրջանակն անխուսափելիորեն պետք է համընկնի բոլոր այն անձանց շրջանակի հետ, ովքեր իրենց պաշտոնական կամ այլ դրության ուժով ունակ են կատարել տվյալ արարքը: Մասնավորապես, առանձնացվում են հատուկ սուբյեկտի որոշման հետևյալ հատկանիշները. իրավական կարգավիճակը, ժողովրդագրական հատկանիշը, մասնագիտական պարտականությունները, կատարած աշխատանքի բնույթը, արդարադատության բնագավառում պետության և քաղաքացիների միջև հարաբերությունները և այլն:

ՍԴՈ–882, 11 մայիսի, 2010 թ.

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգիրքը հանցակազմի ընդհանուր սուբյեկտներից առանձնացնում է **հատուկ սուբյեկտներին**: Սուբյեկտի այս տեսակը, բացի երեք պարտադիր հատկանիշներից (ֆիզիկական անձ, մեղսունակություն և քրեական պատասխանատվության ենթարկելու տարիք), բնութագրվում է նաև ոչ պարտադիր հատկանիշներով, որոնք նախատեսված են օրենսգրքի Հատուկ մասի նորմերով: Սուբյեկտի ոչ պարտադիր հատկանիշները կամ ուղղակի նախատեսված են համապատասխան հանցակազմի դիսպոզիցիայում, կամ սահմանվում են մեկնաբանության միջոցով (օր.՝ պաշտոնատար անձի հասկացությունը՝ 308–րդ հոդվածի 3–րդ մասում): Հատուկ սուբյեկտն իր պաշտոնեական, ծառայողական կամ մասնագիտական գործունեության բերումով հանրորեն վտանգավոր այնպիսի գործողություն (անգործություն) կատարող անձն է (օր.՝ պաշտոնատար անձը, զինծառայողը, բժիշկը, դատավորը, դատախազը և այլն), որպիսին չեն կարող կատարել այլ անձինք: Այդպիսի անձանց հատուկ սուբյեկտներ ճանաչելը բխում է ոչ թե նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից, որը կհակասեր օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 14.1–րդ հոդվածի 1–ին մաս և օրենսգրքի 6–րդ հոդված), այլ, որովհետև հանրորեն վտանգավոր նման արարքները կարող են կատարվել միայն այդ անձանց կողմից:

Քրեական իրավունքի տեսությունը հատուկ սուբյեկտների շարքին է դասում նաև կրկնահանցագործներին և ռեցիդիվիստներին, քանի որ նրանք իրենց իրավական կարգավիճակով առանձնանում են առաջին անգամ հանցանք կատարած անձանցից: Նման տեսական հետևությունից բխեցվում է օրենսդրական համարժեք կարգավորում: Հանցագործու-

թյունների կրկնակիության և ռեցիդիվի հասկացությունները տրված են օրենսգրքի 21 և 22–րդ հոդվածներում: Օրենսգրքի 21–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ հանցագործությունների կրկնակիություն է համարվում օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը: Նույն հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը կրկնակի է համարվում միայն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում:

Հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունն իր օրենսդրական ձևակերպումն է ստացել օրենսգրքի 22–րդ հոդվածի 1–ին մասում, ըստ որի՝ ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար: Հոդվածի 2–րդ և 3–րդ մասերում տրված են վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի բնորոշումները: Հոդվածի 4–րդ մասը **բացառում է ռեցիդիվի առկայությունն այն դեպքերում, երբ նախկինում կատարած հանցանքների համար դատվածությունը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով,** ինչպես նաև, երբ անձը հանցանքներ է կատարել մինչև 18 տարին լրանալը: Նույն կերպ **կրկնակիությունը բացակայում է, եթե նախկինում կատարած հանցանքի համար անձը քրեական պատասխանատվությունից ազատվել է օրենքով սահմանված հիմքերով, կամ այդ հանցանքի համար դատվածությունը մարվել կամ հանվել է** (օրենսգրքի 21–րդ հոդվածի 4–րդ մաս):

ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐՐԵՐԸ

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

8. Հայտնի է, որ քրեական իրավունքում «հանցակազմ» հասկացությունը բնորոշվում է որպես հանրորեն վտանգավոր արարքի՝ քրեական օրենսգրքով սահմանված հատկանիշների համակցություն: Այսինքն, որպեսզի անձը քրեական պատասխանատվության ենթարկվի, նրա արարքը պետք է որակվի հանրորեն վտանգավոր՝ որում առկա են քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ արարքի բոլոր հատկանիշները: «Հանցակազմի բացակայություն» եզրույթը նշանակում է արարքի առկայություն, սակայն այն չի բնորոշվում որպես քրեական օրենսգրքով նախատեսված հատկանիշներ պարունակող հանրորեն վտանգավոր արարք, այլ կերպ՝ հանցագործություն: Հետևաբար, հանցագործության յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է իր կոնկրետ հանցակազմը, որի հիմնական տարրերն են օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Այս տարրերից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է հանցակազմի, հետևաբար և՝ հանցագործության բացակայության մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35–րդ հոդվածի 2–րդ մասի հիմքով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե.

ա) առկա է հանցագործությունը,

բ) կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չէ,

գ) սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Այստեղ հիմնական հանգամանքն այն է, որ «առկա է հանցագործությունը» եզրույթն արդեն իսկ վկայում է հանցակազմի առկայության մասին, սակայն այն առարկայացված չէ կոնկրետ սուբյեկտի առնչությամբ: Ըստ էության հանցակազմը հանցագործության իրավաբանական բնորոշումն է: Եթե առկա է հանցագործությունը՝ հանցակազմի բոլոր տարրերի առկայությամբ, ապա չի կարող հանցակազմի բացակայության հիմքով գործի վարույթը կարճվել, որովհետև դա ուղղակիորեն կխախտի տուժող կողմի իրավունքները: Իսկ քրեա-

կան հետապնդումը կարող է դադարեցվել կասկածյալի կամ մեղադրյալի անձի առնչությամբ:

ՍԴՈ–882, 11 մայիսի, 2010 թ.

6. .... Օրենսգրքի Ընդհանուր մասի վերոհիշյալ հոդվածներում պատժի տեսակն ու չափը որոշելիս, ի թիվս այլ հանգամանքների, կարևորվում է հանցավորի անձը բնութագրող տվյալների (այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների), ինչպես նաև հանցավորին ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար պատժի անհրաժեշտ ու բավարար լինելու գնահատումը: Միայն նման գնահատման պայմաններում է հնարավոր ապահովել պատասխանատվության և պատժի անհատականացման օրենսդրական սկզբունքը: Այդ առումով էլ՝ ինչպես օրենսդիրն օրենսգրքի Հատուկ մասում, այնպես էլ դատարանը կոնկրետ գործով պատժատեսակ ու պատժաչափ որոշելիս հանցակազմի մյուս բաղադրատարրերի հետ մեկտեղ պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն հանցավորի՝ հանցակազմի սուբյեկտի անձնավորությանը:

8. Օրենսգրքի 84–րդ հոդվածի 1–ին մասով սահմանված է, որ անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը: Դատվածությունն օրենսգրքի 84–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն հանդիսանում է պարտադիր պայման հանցագործության ռեցիդիվը ճանաչելու և պատիժ նշանակելիս դա հաշվի առնելու համար: Դատվածությունը փաստորեն անձի յուրահատուկ իրավական դրությունն է, որն առաջանում է մեղադրական դատավճռով պատժի նշանակման արդյունքում: Դրա առանձնահատկությունն այն է, որ դատվածություն ունեցող անձի համար կարող են ծագել օրենսգրքով նախատեսված քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ: Սակայն քրեաիրավական հետևանքները ծագում են միայն այդ անձի կողմից **նոր հանցանք** կատարելու դեպքում: Օրենսգրքի 84–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ դատվածության քրեաիրավական հետևանքներն են. դատվածությունը որպես քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք հաշվի առնելը, որոշ հանցակազմերում այն որակյալ դարձնող հատկանիշ նախատեսելը (օր.՝ հափշտակությունների դեպքում), ուղղիչ հիմնարկի տեսակի ընտրությունը, դատվածությունը ռեցիդիվի այս կամ այն տեսակի առկայությունը որոշելիս հաշվի առնելը: Ընդ որում, դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները (օրենսգրքի 84–րդ հոդվածի 8–րդ մաս): Դատվածություն չունեցող են համարվում նաև այն անձինք, ովքեր դատարանի դատավճռով դատապարտվել են առանց պատիժ նշանակելու կամ դատարանի դատավճռով ազատվել են պատիժը կրելուց կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով (օրենսգրքի 84–րդ հոդվածի 3–րդ մաս):

....

Դատվածության ինստիտուտը՝ և՛ որպես որակյալ հանցակազմի տարր, և՛ որպես պատժի նշանակման ժամանակ հաշվի առնվող հանգամանք, իրավաչափ նպատակ է հետապնդում, և դրա տարբեր ձևերի կիրառումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է:

ՊԱՏԺԱՏԵՍԱԿԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

ՍԴՈ– 983, 12 հուլիսի, 2011 թ.

9. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հատկապես կարևորում է, մի կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի 55–րդ հոդվածի 1–ին մասի իմաստով գույքի բռնագրավման՝ որպես պատժատեսակի, ինստիտուտի, մյուս կողմից՝ հանցավոր ճանապարհով

ստացված գույքի բռնագրավման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը:

.... Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, կանոնակարգելով գույքի բռնագրավման հետ կապված հարաբերությունները և բռնագրավման կարգի առնչությամբ հղում կատարելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 39-րդ հոդված), նկատի ունի բացառապես գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ: Մասնավորապես, այդ օրենսգրքի 40-րդ հոդվածը, ճշգրտելով բռնագրավման ենթակա գույքի շրջանակները, ամրագրում է, որ բռնագրավման ենթակա գույքը ներառում է դատապարտված **անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը**:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի, և նույն հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտները միմյանցից էապես տարբերվում են և դրանց շրջանակներում բռնագրավման ենթակա գույքը հստակ տարանջատված է՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս երկու ինստիտուտների զուգահեռաբար կիրառման դեպքում դատապարտյալի գույքի բռնագրավման և հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պահանջների բավարարման կապակցությամբ օբյեկտիվորեն չի կարող իրավական բախում («կոլիզիա») կամ իրավակիրառման առաջնահերթության խնդիր առաջանալ, քանզի մի դեպքում բռնագրավման օբյեկտը դատապարտյալի գույքն է, մյուս դեպքում՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պատժատեսակ, և հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումն իրենց սահմանադրաիրավական բովանդակությամբ տարբեր ինստիտուտներ են՝ տարբեր խնդիրներով և նպատակներով: Բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի ինստիտուտը, որն անմիջականորեն ուղղված է դատապարտյալի սեփականության իրավունքի դեմ, բխում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասից, քանզի **այս դեպքում դատապարտյալի գույքի բռնագրավումը հանդես է գալիս որպես պատասխանատվությունից բխող հարկադրանքի միջոց՝ իրավաչափորեն սահմանափակելով դատապարտյալի սեփականության իրավունքը:** Մինչդեռ, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման նպատակը հանցավոր ճանապարհով ստացված գույքը դատապարտյալից հետ վերցնելն է, ինչի դեպքում դատապարտյալի սեփականության իրավունքի սահմանափակում տեղի չի ունենում: Հետևաբար, հաշվի առնելով, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը, այդ գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման հասկացության ընկալումը ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, այն է՝ որպես բռնագրավվող գույքի անհատույց անցում ի սեփականություն պետության՝ առանց տուժողի սեփականության իրավունքի վերականգնման, անթույլատրելի է, քանի որ նման ընկալման դեպքում բռնագրավման միջոցառումն անմիջականորեն ուղղվում է տուժողի սեփականության իրավունքի դեմ՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով նրա սեփականության իրավունքը: **Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ գույքն անհատույց պետության սեփականությանը հանձնելն արգելափակում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի հաշվին տուժողների գույքային շահերի բավարարման և խախտված սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը:**

ՍԴՈ– 1082, 23 ապրիլի, 2013 թ.

5. .... Հանրային աշխատանքները դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է: Այն որպես հիմնական պատիժ կարող է նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ, որպես ազատազրկմանն այլընտրանքային պատժատեսակ՝ ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու կարգադրությունն ստանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում՝ դատապարտյալի գրավոր դիմումի հիման վրա, ինչպես նաև որպես տուգանքին փոխարինող պատժատեսակ՝ օրենսգրքի 51–րդ հոդվածի 4–րդ մասում նախատեսված կարգով:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես տուգանքը, այնպես էլ հանրային աշխատանքները, ՀՀ քրեական օրենսգրքի 48–րդ հոդվածի բնորոշմամբ, **պետական հարկադրանքի (իրավական պատասխանատվության) միջոցներ** են, որոնք պետության անունից նշանակվում են հանցավոր արարքի համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում են այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված կարգով զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ, հետևաբար՝ բխում են ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 2–րդ կետով նախանշված իրավակարգավորման անհրաժեշտությունից: Այդ միջոցները, ի թիվս օրենքով նախատեսված հարկադրանքի այլ միջոցների, կիրառվելով իրավասու դատարանի որոշմամբ, հետապնդում են հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների ու ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության նպատակներ, հետևաբար՝ իրավաչափ են, միտված են սահմանադրական կարգի հիմունքների և օրինականության պահպանմանը:

Անդրադառնալով տուգանքն ու հանրային աշխատանքներն այլ պատժատեսակներով փոխարինելու ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն իրենից սահմանադրական և իրավունքի այլ ճյուղերի (քրեական, քրեադատավարական, քրեակատարողական) նորմերի համակարգված ամբողջություն է, որը կոչված է օրենքով որոշված դեպքերում ու կարգով պատժի կատարման շրջանակներում ապահովելու հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի փոխարինումը մեկ այլ՝ օրենքով նախատեսված համապատասխան պատժով: Ըստ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների բովանդակության՝ պատժի փոխարինման անհրաժեշտությունը պայմանավորված է այնպիսի հանգամանքների (իրավապայմանների) առկայությամբ, որպիսիք խոչընդոտում են նախկինում նշանակված պատժի կատարմանը:

.... Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ օրենսգրքի 51–րդ հոդվածի 4–րդ մասի վերոհիշյալ իրավակարգավորման շրջանակներում տուգանքը վճարելու «անհնարինության» իրավական բովանդակության բացակայությունն իրավակիրառական պրակտիկայում կարող է հանգեցնել տարակերպ մեկնաբանման: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջինս ՀՀ քրեական օրենսգրքում բացահայտված չի եղել նաև վիճարկվող իրավակարգավորման նախորդ՝ փոփոխված շարադրանքում: Մասնավորապես, տարբերակված չեն տուգանք վճարելու անհնարինության և տուգանքը չվճարելու (վճարումից խուսափելու) հնարավոր հանգամանքները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ պատժատեսակի փոխարինման (տուգանքը՝ հանրային աշխատանքներով) ինստիտուտի կիրառումն ինքնին հետապնդում է իրավաչափ նպատակ, սակայն այն պահանջում է նաև տարբերակված մոտեցում՝ ելնելով փոխարինման դրդապատճառներից: Հետևաբար, օրենսգրքի 51–րդ հոդվածի 4–րդ մասի իրավակարգավորման շրջանակներում տու-

գանքի վճարումից խուսափելու հնարավոր հանգամանքները չնախատեսելը կարող է գործնականում սահմանադրականության խնդիր առաջացնել:

....

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որոշակի հստակ իրավապայման է նախատեսված հանրային աշխատանքները՝ որպես պատժատեսակ, հարկադրանքի այլ միջոցներով փոխարինելու դեպքում: Մասնավորապես, օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ, երբ **դատապարտյալը հանրային աշխատանքների կատարումից չարամտորեն խուսափում է:** Այսինքն, չարամտությունը՝ որպես քրեորեն դատապարտելի սուբյեկտիվ գործոն և հասարակական առավել վտանգավոր երևույթ, օբյեկտիվորեն հանգեցնում է փոխարինվող պատժի խստացմանը (ազատազրկման հետ կապված պատժի փոխարինմանն ու կիրառմանը), հետևաբար՝ նաև իրավակարգավորման արդյունավետ միջոցի գործադրմանը: Դրանով նպատակ է հետապնդվում վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները, այսինքն՝ երաշխավորել սահմանադրական կարգի հիմունքների պահպանումը:

Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական հետևանքի առումով օրենսդիրը վերոհիշյալ դեպքում պահպանել է հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցների համարժեքության սկզբունքը:

Գնահատելով վերոհիշյալ իրավակարգավորումը պատժի անխուսափելիության, պատասխանատվության և անհատականացման սկզբունքների իրավաչափ կիրառման, ինչպես նաև պատիժը փոխարինելու ինստիտուտի արդյունավետության և մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու և իրավունքի գերակայության ապահովվածության տեսանկյուններից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի նորմերով առկա են բավարար երաշխիքներ ինչպես պատժի արդյունավետ և ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածում, 14.1-րդ հոդվածի առաջին մասում, 16-րդ և այլ հոդվածներում ամրագրված սկզբունքներին համապատասխան կիրառման, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին և 20-րդ հոդվածի երրորդ մասին համապատասխան անձի իրավունքների դատական պաշտպանության ապահովման համար, ինչը լիարժեք երաշխավորված չէ օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված իրավակարգավորման շրջանակներում:

ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼԸ

ՍԴՈ-733, 5 փետրվարի, 2008 թ.

5. Մարդասիրության սկզբունքի դրսևորման ձևերից է նաև դատապարտյալին **պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտը**: Այդ ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ հանցագործության համար դատապարտված անձը, **քրեական օրենքով նախատեսված հիմքերով,** կարող է դատարանի կողմից փաստացիորեն ազատվել պատժի հետագա կրումից: Պատժից ազատելու համար նյութական հիմք է հանդիսանում պատիժը կրելու աննպատակահարմարությունը կամ անհնարինությունը, հաշվի առնելով տվյալ դատապարտյալի՝ հանրորեն վտանգավոր լինելու հանգամանքի վերացումը, դատապարտյալի առողջական վիճակի վատթարացման փաստը կամ քրեական իրավունքի փոփոխությունը: Պատժից ազատելու ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ թույլ տալով անտեսել քրեական հարկադրանքի միջոցները, խթանում է դատապարտյալի վերադաստիարակումը, նպաստում է նրա ընտելացմանն իրավակարգի պահանջներին, սոցիալական վարքագծի

կանոններին, ինչպես նաև բացառում է պատժի կիրառումն այն դեպքերում, երբ պատժի կիրառման նպատակներին հասնելը դառնում է ոչ իրական:

.... Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն պատժից ազատելու մնացած ձևերի, պատժից ազատելու խնդրո առարկա ձևն իր բնույթով հանդիսանում է **պայմանական**, քանի որ պատժից ազատվող դատապարտյալը գտնվում է վերահսկողության ներքո, նրա վրա դրվում են որոշակի պարտականություններ, որոնք չկատարելու դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին:

Պատժից ազատելու պայմանական բնույթը պայմանավորում է մեկ այլ առանձնահատկություն ևս (այս առանձնահատկությունը վերաբերում է նաև ՔՕ 78 հոդվածով նախատեսված՝ պատժից ազատելու ձևին), այն է՝ եթե պատժից ազատելու մյուս ձևերի կիրառման արդյունքում վերացվում են կատարված հանցագործության բոլոր հետևանքները, ապա պատժից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալը մինչև դատարանի կողմից նշանակված պատժաժամկետի ավարտը շարունակում է համարվել դատվածություն ունեցող, ինչը հաշվի է առնվում փորձաշրջանում հանցագործություն կատարելու դեպքում պատիժ նշանակելիս (պատիժ նշանակվում է դատավճիռների համակցությամբ (ՔՕ հոդված 67)):

6. Ներման ինստիտուտի և պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտի, այդ թվում՝ նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակության վերլուծությունը վկայում է, որ այդ երկու ինստիտուտների միջև հիմնական բովանդակային սկզբունքային տարբերությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն ներման ինստիտուտի, պատժից ազատելու ինստիտուտի դրսևորման բոլոր ձևերի, այդ թվում՝ նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կիրառման համար նախատեսված են որոշակի պայմաններ և հիմքեր, որոնք սահմանափակում են այդ ձևերից օգտվելու հնարավորություն ունեցող դատապարտյալների շրջանակը, ինչի արդյունքում նման հնարավորությունը չի տարածվում **յուրաքանչյուր դատապարտյալի** վրա: Մինչդեռ ներում հայցելու իրավունքի իրացումը որևէ նախապայմանով պայմանավորված չէ, ինչի արդյունքում որևէ կերպ չի սահմանափակվում ներում հայցելու իրավունք ունեցող դատապարտյալների շրջանակը՝ անկախ պատիժը կրելու ժամկետից, և, հետևաբար, **այդ իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դատապարտյալ**:

Ելնելով վերոշարադրյալից, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում կիրառված՝ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթի այնպիսի մեկնաբանությունը, որի դեպքում այդ եզրույթը ներառում է նաև պատժից ազատելու ինստիտուտը, անհամատեղելի է այդ դրույթի բովանդակության հետ և դուրս է այդ դրույթի տրամաբանության շրջանակներից: Պատժից ազատելու ինստիտուտի ողջ տրամաբանությունը հանգում է նրան, որ այն գործում է միայն որոշակի պայմանների և հիմքերի առկայության դեպքում, հետևաբար՝ նաև դատապարտյալների որոշակի շրջանակի համար: Ուստի պատժից ազատելու ինստիտուտի և դրա առանձին դրսևորումների տրամաբանությունն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթի հետ, որտեղ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթն օգտագործված է և ենթակա է ընկալման **մասնակի (պատիժը մեղմացնող) ներում իմաստով**, ինչպես այն ներկայացված է ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածում:

Ավելին, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում օրենքը նախատեսում է նաև այն վերացնելու հնարավորություն: Պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը ենթադրում է, որ այդ խնդրանքի բավարարումը պետք է լինի վերացման ոչ ենթակա:

Ուստի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտն այս առումով ևս անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4–րդ մասի տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ներման և պատժից ազատելու ինստիտուտների, դրանց բովանդակության, էության, սոցիալական նշանակության և նպատակների միջև առկա սկզբունքային և անհամատեղելի առանձնահատկություններն ու տարբերությունները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4–րդ մասում խոսքը վերաբերում է ոչ թե ներման և պատժից ազատելու տարաբնույթ երկու առանձին ինստիտուտներին, այլ ներման ինստիտուտի գործադրման երկու տարատեսակներին՝ **ներման լրիվ և մասնակի ձևերին**:

....

8. Պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականը պարունակում է մի շարք սկզբունքային դրույթներ, որոնք էական նշանակություն ունեն իրավական պետությունում պայմանական վաղաժամկետ ազատման այս կամ այն մոդելի ընտրության հարցում: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս բազմաթիվ այլ երկրների, որդեգրել է «հայեցողական ազատման» համակարգը, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ համաձայն վերոհիշյալ Հանձնարարականի՝ հայեցողական ազատման համակարգի դեպքում.

ա) նվազագույն ժամկետը, որը բանտարկյալները պետք է կրեն պայմանական վաղաժամկետ ազատվելուն ենթակա լինելու համար, պետք է սահմանված լինի օրենքով,

բ) պետք է ձգտել որոշումը կայացնել բանտարկյալի կողմից նվազագույն ժամկետը կրելուց հետո որքան հնարավոր է շուտ,

գ) պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները պետք է լինեն պարզորոշ և հստակ: Դրանք պետք է լինեն նաև իրական՝ այն իմաստով, որ պետք է հաշվի առնեն բանտարկյալների անձը, սոցիալական և տնտեսական հանգամանքները, ինչպես նաև վերաբնակեցման ծրագրերի առկայությունը,

դ) պայմանական վաղաժամկետ ազատելուց հետո աշխատանքի հնարավորությունների բացակայությունը կամ մշտական ապրելավայր ունենալու բացակայության հանգամանքը չպետք է հիմք հանդիսանան այն մերժելու կամ հետաձգելու համար,

ե) պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի ազատման թույլտվություն տրվի բոլոր այն բանտարկյալներին, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին: Միաժամանակ, իշխանությունները պարտավոր են ցույց տալ, որ բանտարկյալը չի համապատասխանում այդ չափանիշներին,

զ) եթե որոշում կայացնող մարմինը որոշում է մերժել պայմանական վաղաժամկետ ազատելը, այն պետք է սահմանի հարցը վերանայելու օր: Բոլոր դեպքերում, բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան կրկին դիմել որոշում կայացնող մարմնին՝ այն պահից, երբ իրենց իրավիճակն էականորեն փոխվել է հօգուտ իրենց:

ՀՀ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հստակ սահմանված չեն պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դատավարության օրենսգրքի ու քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ իրավաչափ կլիներ, որպեսզի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկետները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը և հայեցական լիազորությունների շրջանակը)՝

ՀՀ կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հստակ սահմանվեր օրենսդրությամբ:

10. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված հանձնաժողովին առնչվող հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումը պետք է լինի, այլ նրա որոշումների՝ օրենսդրությանը համապատասխանելը վերահսկելը: ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի իմպերատիվ պահանջն է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»: Միայն դատարանը կարող է որոշել իրավական ակտը համապատասխանում է օրենքին, թե՝ ոչ: Սակայն դատարանը չի կարող իրացնել օրենքով անկախ հանձնաժողովին վերապահված լիազորությունը: Տվյալ պարագայում պետք է գործի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի օրենսդրական կարգավորման այն տրամաբանությունը, որ երբ անկախ հանձնաժողովն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, և դատարանը հանգում է այն հետևությանը, որ հանձնաժողովի հայեցողական լիազորություններն իրականացվել են օրենսդրությանը ոչ համապատասխան, ապա դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է սահմանի հանձնաժողովի պատասխանատվությունը՝ իր որոշումն ընդունել կամ կատարել գործողություն՝ հիմք ունենալով դատարանի իրավական դիրքորոշումը և ապահովել կայացվող որոշման իրավաչափությունը՝ այն համապատասխանեցնելով օրենքի պահանջներին:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի վիճարկվող հոդվածում ամրագրված այն դրույթը, որը նախատեսում է պատիժ կրող հիմնարկի վարչակազմի որոշումները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, իսկ անկախ հանձնաժողովի որոշումների դատական բողոքարկման հնարավորություն նախատեսում է միայն այն դեպքերում, երբ այդ որոշումը կայացվել է ՀՀ Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ և բացառում է նաև այդ որոշման դատական կարգով բողոքարկումը, եթե այն հակասում է օրենքին, ոչ հետևողական լուծում է և չի երաշխավորում միջազգայնորեն ընդունված և ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կարգի արմատավորում ՀՀ իրավական համակարգում:

ՎԱՇԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ-947, 5 ապրիլի, 2011 թ.

5. .... Վաշխառության հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է երկու արարքով, որոնցից թեկուզև մեկի կատարումը բավական է արարքը հանցագործություն որակելու համար: Այն է՝ առաջին՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, և երկրորդ՝ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ:

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների, այսինքն՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված վաշխառության վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր:

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԶԱՆՑԱՆՔԸ

ՍԴՈ-1304, 20 սեպտեմբերի, 2016 թ.

6. «.... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է ...., որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով ամրագրված են ոստիկանության խնդիրները, այդ թվում՝ հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունն օրենքին համապատասխան ապահովելը (4-րդ կետ): Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանությունն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, լիազորությունների իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ (2-րդ մաս): Ոստիկանության հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր (3-րդ հոդվածի 3-րդ մաս)»:

«....Ոստիկանությունն օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը, իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը հանցավոր և այլ ոտնձգություններից:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողի օրինական պահանջների կատարումը պարտադիր է բոլոր քաղաքացիների և պաշտոնատար անձանց համար: Դրանք չկատարելը կամ ոստիկանության ծառայողի պարտականությունների կատարմանը խոչընդոտող գործողություններն առաջացնում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

– ոստիկանությունն իր լիազորություններն իրականացնելիս կաշկանդված է մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներով և ազատություններով,

– անձն ազատ է հավաքներին մասնակցելու իրավունքի իրացման տեսանկյունից, սակայն հավասարակշռվածություն պետք է լինի անձի այդ իրավունքի և այլոց իրավունքների ու ազատությունների իրացման միջև: Այդ հավասարակշռվածության ապահովման պարտականությունը, մի կողմից, կրում է պետությունը, որը համապատասխան մարմինների (ոստիկանության) միջոցով ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, մյուս կողմից՝ հավաքին մասնակցող անձը, ով պետք է դրսևորի այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտող վարքագիծ,

– ոստիկանության պահանջի օրինականությունը գնահատման ենթակա է հանրային իրավահարաբերություններում վերջիններիս մասնակցությունը և լիազորությունները սահմանող իրավադրույթների և փաստացի դրսևորված վարքագծի իրավահամեմատության հիման վրա, ինչը կարող է բացահայտվել կոնկրետ դատաքննության շրջանակներում՝ գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում,

– յուրաքանչյուր կոնկրետ գործով իրավակիրառողի կողմից պետք է գնահատվի՝ արդյո՞ք արարքը կոպտորեն խախտում է հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, և որքանո՞վ են իշխանությունները որոշակի աստիճանի հանդուրժողականություն ցուցաբերել խաղաղ հավաքների նկատմամբ, որպեսզի ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված՝ հավաքների ազատության սկզբունքը չիմաստազրկվի»:

ՍԴՈ-864, 5 փետրվարի, 2010 թ.

5. Սույն գործի քննության շրջանակներում հարկ է պարզել, թե արդյո՞ք անձի իրավունքները խախտած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը հանդիսանում է անձի իրավունքի դատական պաշտպանության բաղադրատարր: Այս կապակցությամբ հարկ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածները դիտարկել վարչական պատասխանատվության նպատակի, օրենսգրքով նախատեսված ողջ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, ինչպես նաև «անձի խախտված իրավունքների վերականգնում» հասկացության բովանդակության համատեքստում:

Նման համադրումը վկայում է, որ վարչական պատասխանատվությունը՝ ընդհանրապես, և վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող վարչական տույժը՝ մասնավորապես, հետապնդում են այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի դատական կարգով վերականգնումն է: Վարչական պատասխանատվության նպատակն առավելապես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պատասխանատվություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջև, վարչական պատասխանատվությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին: Իսկ հանրային իրավահարաբերությունների ոլորտում մասնավոր շահերի պաշտպանության նպատակով սահմանված է այլ կարգ՝ հաշվի առնելով վարչադատավարական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վարչաիրավական հարաբերությունների հետևանքով խախտված իրավունքների վերականգնման կարգի առանձնահատկությունները, խախտված իրավունքների փաստացի վերականգնելիության հնարավորությունն ու աստիճանը:

.... Ելնելով վերոշարադրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական կարգով անձանց, այդ թվում՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր և, հետևաբար, անձանց՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով դատարան դիմելու իրավասություն չվերապահելը չի կարող խոչընդոտել այդ անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացմանը, և խնդրո առարկա հարցով դատարան դիմելու իրավասությունը բացառապես վարչական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց վերապահելն իրավաչափ է ու օրենսգրքի իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության շրջանակներում է:

Նման դիրքորոշման մասին կարող է վկայել նաև այն փաստը, որ եվրոպական երկրներում կամ նախատեսված է վարչական պատասխանատվության միայն արտադատարանական կարգ, կամ առկա է դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտից հրաժարվելու միտում:

6. Նկատի ունենալով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի հարաբերակցությունը հանրային շահերի պաշտպանության խնդրի հետ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթները, սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում

նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել հանրային շահերի պաշտպանության և իրավական անվտանգության տեսանկյունից: Այս կապակցությամբ հարկ է վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս հոդվածների, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հետ համակարգային փոխկապակցության մեջ:

.... Հաշվի առնելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ **ՀՀ իրավական համակարգում առկա է իրավակարգավորման բաց,** ինչը թույլ չի տալիս պետությանն իրականացնել վարչական իրավահարաբերությունների ոլորտում օրինականության նկատմամբ վերահսկողության և հանրային շահերի պաշտպանության իր գործառույթները, ապահովել առանձին վարչական իրավախախտումների համար ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության անխուսափելիությունը, դրանով իսկ երաշխավորելու նաև իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ չնայած 1995–2007 թվականներին ավելի քան 10 անգամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223–րդ հոդվածում փոփոխություններ են կատարվել, սակայն մինչ օրս շարունակում է տեղ գտնել «**ՀՀ գերագույն դատարանի դատավորները քննում են**....» դրույթը:

ՍԴՈ–920, 12 հոկտեմբերի, 2010 թ.

5. ՀՀ Սահմանադրության 83.5–րդ հոդվածի 2–րդ կետի համաձայն՝ օրենսդրի բացառիկ իրավասությանն է վերապահված ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակների, չափերի ու հարկադրանքի միջոցների սահմանումը: Իր այդ լիազորությունն իրականացնելիս օրենսդիրն ինքնուրույնաբար որոշում է, մասնավորապես, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակը, սահմանում է վարչական պատասխանատվության միջոցներն ու չափերը: Նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը, սակայն, ունի իր սահմանադրական շրջանակները, և օրենսդիրն իր նշված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով: Օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1–ին, 3–րդ և 43–րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է ընդհանրապես իրավաբանական պատասխանատվության և, մասնավորապես՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը, որի ապահովման տեսանկյունից էլ նախևառաջ անհրաժեշտ է գնահատել վիճարկվող նորմի սահմանադրականությունը:

7. .... Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 200–204–րդ հոդվածների սահմանմամբ օրենսդրի նպատակը վարչական պատասխանատվություն սահմանելն է ոչ թե Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների չհայտարարագրման դրսևորման բոլոր դեպքերի համար, այլ միայն այն դեպքերի, որոնց հետևանքով չի ապահովվում կոնկրետ ապրանքի և տրանսպորտային միջոցի կամ դրանց առանձին խմբաքանակի՝ այդ չափով մաքսատուրքերի գծով պետական բյուջեի մուտքերը: Քննության առարկա գործի շրջանակներում 1.461.176 ԱՄՆ դոլար գումարի ապրանքաբեռի փոխարեն մաքսատուրք է վճարվել 194.823 ԱՄՆ դոլար ապրանքաբեռի դիմաց: Սահմանադրաիրավական ա-

ռումով համոզիչ չէ այն հանգամանքը, որ այս հարցում բացառվել են հանցակազմի հատկանիշները և պահանջներ չեն ներկայացվել իրավաբանական անձին:

.... Միաժամանակ, նկատի ունենալով, որ վիճարկվող նորմում՝ «այսինքն՝ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը» արտահայտությունը կարող է թույլ տալ նորմի այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վիճարկվող նորմով նախատեսված պատասխանատվությունը կարող է կիրառվել նաև հայտարարագրման սահմանված կարգից ցանկացած շեղման դեպքում՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով նախատեսված արարքի համար անձի վարչական պատասխանատվությունն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ այդ պատասխանատվությունը նպատակաուղղված է մաքսային պարտավորությունների կատարումն ապահովելու՝ վերը նշված իրավաչափ նպատակին հասնելուն: Հետևաբար, այն դեպքում, երբ տեղափոխվող ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելը չի հանգեցրել ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի նվազեցմանը և ըստ այդմ չի հանգեցրել օրենքով սահմանված կարգով և չափով մաքսատուրք վճարելու սահմանադրական պարտականության ոչ պատշաճ կատարմանը, նշված արարքի համար պատասխանատվությունը՝ վիճարկվող նորմով սահմանված չափով, դառնում է ինքնանպատակ և չի բխում վիճարկվող նորմի ընդհանուր իրավակարգավորման առարկայից:

8. .... Հետևաբար՝ **մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր,** հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն անձը ենթակա է պատասխանատվության միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմը կիրառելիս յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի և տեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պատասխանատու սուբյեկտին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորված անձը գործում է տեղափոխողի անունից և ի շահ վերջինիս՝ համապատասխան ակտի հիման վրա տրամադրված լիազորությունների շրջանակներում, և հայտարարագրումն իրականացնում է տեղափոխողի տրամադրած տեղեկատվության հիման վրա՝ այդ լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա տեղափոխողը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձևավորված իրավակիրառական այն պրակտիկան, երբ չապահովելով իրավախախտման համար մեղավորի պատասխանատվությունը և բոլոր դեպքերում որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելով տեղափոխվող ապրանքների կամ տրանսպորտային միջոցի նկատմամբ որևէ գույքային իրավունք չունեցող լիազորված անձին, թույլ չի տալիս արդյունավետորեն իրացնել վիճարկվող նորմով սահմանված պատասխանատվության իրավաչափ նպատակը, այն է՝ ապահովել տնտեսավարող սուբյեկտի կողմից՝ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված պարտականության իրական կատարումը:

Այս խնդրի իրավակարգավորումը հետագա համակարգային բարեփոխման անհրաժեշտություն ունի:

ՍԴՈ-924, 16 նոյեմբերի, 2010 թ.

5. Սահմանադրական դատարանն իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադ-

րական սկզբունքի բովանդակությանն անդրադարձել է իր՝ 2010 թ. հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ: Մասնավորապես, անդրադառնալով պատասխանատվության տեսակները, չափերն ու հարկադրանքի միջոցները սահմանելու՝ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված լիազորությունն իրականացնելիս օրենսդրի հայեցողության շրջանակներին՝ սահմանադրական դատարանը նշել է, որ՝ օրենսդրի հայեցողության ազատության սահմանները նախանշված են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ և 43-րդ հոդվածներում: Սահմանադրության նշված հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ դրանց իրավական բովանդակությունը, ի թիվս այլոց, հանգում է նրան, որ հանրային իշխանության իրականացումը նախևառաջ սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ հասարակական հարաբերությունների կարգավորման համաչափության ընդհանուր սկզբունքով: Այս սկզբունքը հանդիսանում է նաև իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը....: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նաև նշել է, որ «համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև»:

....

6. .... Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող նորմով սահմանված վարչական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում՝ ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ ազգային արժույթի՝ դրամի կայունությունը և ձևավորել դրամի նկատմամբ վստահություն ներքին արժութային շուկայում:

.... Ինչ վերաբերում է դիմողի կողմից՝ վիճարկվող դրույթով սահմանված տուգանքի մեծության անհամաչափությունը ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված տուգանքի վճարման կարգի ու տուգանքի չափերի և վիճարկվող նորմով սահմանված տուգանքի չափի և օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված՝ տուգանք վճարելու կարգի միջև համեմատության միջոցով փաստարկելուն՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի մատնանշած հանգամանքները վերաբերելի չեն՝ վիճարկվող նորմով սահմանված տուգանքի մեծության համաչափությունը գնահատելու տեսանկյունից: Քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժաչափերն ունեն վարչական պատասխանատվությունից որակապես տարբերվող նպատակներ և առաջացնում են իրավական տարբեր հետևանքներ:

ՍԴՈ-1048, 19 սեպտեմբերի, 2012 թ.

6. .... Հատկանշական է, որ իրավաբանական անձ և ֆիզիկական անձ-գործատու սուբյեկտիվ հարաբերությունների իրավակարգավորման նույնպիսի սկզբունք է ամրագրված ՀՀ օրենսդրության այլ ակտերով, մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կարգավորող: Այսպես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-252) 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից, որի ներքո ըստ նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի՝ հասկացվում է գլխավոր տնօրենը, նախագահը և այլք: Մասնավորապես, գործադիր մարմինն է ընկերության անունից իրականացնում գործատուի աշխատանքային լիազորությունները (կնքում աշխատանքային պայմանագրեր և հսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ): Այսինքն՝ տվյալ դեպքում իրավաբանական անձի գլխավոր տնօրենն է (նախագահն է) պատասխանատվություն կրում ընկերության աշխատողների աշխատանքային իրավունքների (այդ թվում՝ աշխատավարձի իրավունքի) պահպանման համար:

.... Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության և առկա իրավակարգավորման շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով **միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից**: Մասնավորապես, դա վերաբերում է իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականության և միասնականության երաշխավորմանը, վարչաիրավական հարաբերություններում իրավասուբյեկտության շրջանակների որոշակիացմանը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության՝ իրավական պատասխանատվության այլ տեսակներից (քաղաքացիական, քրեական) սահմանազատելու իրավական չափանիշների առավել հստակեցմանը և մի շարք այլ սկզբունքային՝ հայեցակարգային նշանակության հարցերին:

ՍԴՈ–1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

6. .... Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում հարկ է համարում նաև վկայակոչել իր՝ 20.12.2011 թ. ՍԴՈ–1007 որոշման 6–րդ կետի 10–րդ պարբերության մեջ արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև դիմողի դիրքորոշումը՝ կապված օրենքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության հետ, քանի որ, նախ՝ օրենքը հստակ սահմանել է տուգանքի գումարը երեսնօրյա ժամկետում չմուծելու դեպքում նշված գումարի կրկնապատկման կարգը, երկրորդ՝ նշված կարգը սահմանված է օրենքով, որպես համապատասխան վիճակը վրա հասնելու դեպքում ինքնաբերաբար, իրավունքի ուժով գործող կանոն և դրա համար լրացուցիչ չի պահանջվում համապատասխան վարչական ակտի ընդունում»:

Վերահաստատելով ՍԴՈ–1007 որոշման մեջ արտահայտված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք կիրառելի են նաև սույն գործով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն պնդումները, համաձայն որոնց՝ տուգանքի չափի եռապատկման և հնգապատկման յուրաքանչյուր դեպքը պետք է դիտել որպես նոր պատժամիջոց, և յուրաքանչյուր դեպքում պետք է վարչական վարույթի շրջանակներում ընդունվի վարչական ակտ՝ որոշում: Այլ խնդիր է, թե որքանով են երաշխավորված անձի իրավունքներն այն հնարավոր իրավիճակներում, երբ առկա է նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում վճարելու օբյեկտիվ անհնարինություն: Տվյալ դեպքում բարձրացված հիմնախնդիրը կարող է աղերսներ ունենալ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածի, Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների հետ:

Սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակները, երբ անձը, որի նկատմամբ նշանակված է վարչական տույժ՝ տուգանք, տարբեր օբյեկտիվ պատճառներով, ներառյալ՝ անհաղթահարելի ուժի առկայությունը, չկարողանա օրենքով սահմանված ժամկետներում վճարել տուգանքը: Այս դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով, այսինքն՝ իրավունքի ուժով, նշանակված տուգանքի չափն ինքնաբերաբար բազմապատկվում է, որպիսի պայմաններում անձին չի տրվում հնարավորություն ապացուցելու իր պարտավորությունների չկատարման պատճառների՝ իր կամքից անկախ լինելը:

.... Ելնելով ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման, ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանու-

թյան արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանն իրավական պետությանն անհարիր է համարում վերը նշված իրավիճակը և գտնում, որ դրա պատճառն իրավական բացն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարաններում օրենսգրքի վիճարկվող նորմերով նախատեսված տուգանքի հնգապատիկի չափը բռնագանձելու մասին հայցի քննության ժամանակ անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պետք է քննարկման առարկա դարձնի և գնահատի նրա ներկայացրած հիմնավորումներն այն մասին, թե արդյոք առկա են եղել արտակարգ և անհաղթահարելի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են անձին ժամանակին կատարելու իր պարտավորությունները պետության առջև, կամ արդյոք անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը կատարելու համար և այդպիսի հանգամանքների առկայությունը հաստատելու պարագայում հարգելի համարի բաց թողնված ժամկետները: **Ընդ որում, նման իրավակարգավորում նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ:**

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև պատասխանող կողմի բացատրություններում տեղ գտած առանձին փաստարկների, քանի որ պատասխանող կողմը, **չբացառելով նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում անձի մեղավորության բացահայտման, ներառյալ՝ նշված տուգանքը չվճարելու պատճառները հաշվի առնելու անհրաժեշտությունը,** գտնում է, որ, ինչպես արդեն արձանագրվել է, դիմողի բարձրացրած հիմնախնդրի լուծումն առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասում, որով նախատեսված է նշանակված տուգանքի վճարումը տարաժամկետելու ինստիտուտ: **Պատասխանողի** կարծիքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթները բավարար են տուգանքի չվճարման անբարենպաստ հետևանքներից խուսափելու համար:

ՍԴՈ-1059, 23 նոյեմբերի, 2012 թ.

4. .... ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ հիշատակված իրավունքի իրացումը չի կրում միջնորդավորված բնույթ, կախվածության մեջ չի դրվում որևէ պաշտոնատար անձի հայեցողությունից, ուղղակիորեն վերապահված է ձերբակալվածին: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ազատությունից զրկված անձի համար ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված իրավունքն անձն իրականացնում է **անձամբ և անմիջականորեն,** իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործով վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ազատությունից զրկված անձին ապահովել քաղաքացիական շրջանառության մեջ գտնվող բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, որոնք նախատեսված են անձանց հաղորդակցման համար: Միևնույն ժամանակ, պաշտպանին՝ իր ձերբակալման մասին տեղեկացնելը, հանդիսանում է Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու և պաշտպան ունենալու իրավունքների բաղադրատարր, որի նպատակն այլ է, քան Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված՝ իր ձերբակալման մասին իր կողմից ընտրված անձին տեղեկացնելու իրավունքի իրավական բովանդակությունը:

5. Անդրադառնալով օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությանը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված մասի դրույթները հանգում են հետևյալին.

ա) վարչական ձերբակալման ընդհանուր ժամկետը՝ որպես ընդհանուր բնույթի կանոն, սահմանված է **3 ժամ**, իսկ բացառիկ դեպքերում՝ հատուկ անհրաժեշտության կապակցությամբ առկա է նաև հիշյալ ընդհանուր ժամկետը փոփոխելու հնարավորություն,

բ) ՀՀ սահմանային ռեժիմը խախտող անձինք կարող են ձերբակալվել մինչև **3 ժամ** տևողությամբ՝ արձանագրություն կազմելու համար, մինչև **3 օր** ժամանակով՝ անձը և իրավախախտման հանգամանքները պարզելու համար՝ ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում այդ մասին գրավոր հաղորդելով դատախազին, **մինչև 10 օր ժամանակով՝ դատախազի սանկցիայով,** եթե իրավախախտողները չունեն անձը հաստատող փաստաթղթեր:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետը սահմանում է. «Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով .... հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ «Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը» վերտառությամբ 29-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի իմաստով հարկադրանքի այլ միջոց է համարվում Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված դեպքերում ազատությունից զրկումը, ինչպես նաև հատուկ ծառայությունների կողմից ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցների գործադրումը»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերը թույլատրում են օրենքով ազատությունից զրկելու հետևյալ դեպքերի նախատեսումը՝ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով և Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ «սահմանային ռեժիմի խախտում» ձևակերպման իրավական բովանդակությունը նույնպես ներառվում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերով նախատեսված վերոհիշյալ դեպքերի բովանդակային ծավալում:

ՍԴՈ-1139, 18 փետրվարի, 2014 թ.

6. .... Այդպիսով, վարչական իրավահարաբերության սուբյեկտներից «Հարկերի մասին» ՀՀ օրենքով տարանջատված են հանրային-ֆինանսական (հարկային) հարաբերության մասնակիցները, որոնք պետության և հասարակության առջև կրում են առանձնահատուկ սահմանադրաիրավական պարտականություններ, հետևաբար, ենթակա են պատասխանատվության ոչ թե ընդհանուր հիմունք-ներով, այլ խիստ որոշակի բնույթի իրավախախտում թույլ տալու դեպքերում:

Ելնելով վերոշարադրյալից՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, առաջնորդվելով իր հայեցողական լիազորություններով, տարանջատել է հարկային և վարչական պատասխանատվության բնագավառները՝ նկատի ունենալով հարկային հարաբերությունների կարգավորման սահմանադրաիրավական առանձնահատուկ կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ սահմանադրական կարգի ու օրինականության պահպանման համատեքստում: Այդ տարանջատումն ինքնին հետապնդում է իրավական որոշակի նպատակ և սահմանադրականության խնդիր չի հարուցում:

Ինչ վերաբերում է վիճարկվող իրավակարգավորումներով նախատեսված արարքների («հարկերը ժամանակին չվճարելը» և «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելը») օբյեկտիվ կողմի հատկանիշների համեմատական գնահատմանը, ապա չնայած ձևական առումով դրանք կարող են մեկնաբանվել որպես նույնաբնույթ, այնուհանդերձ, այդ արարքները, ինչպես և սահմանված պատասխանատվության միջոցներն ըստ առկա իրավակարգավորումների իրավաբանորեն տարբեր են թե՛ նպատակի և թե՛ հատկանիշների առումներով: Եթե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1703-րդ

հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հարկերը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում՝ փաստի ուժով դիտարկելով այն որպես ավարտված զանցանք, ապա «Հարկերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմի նկարագրական մասում նկատի է առնվում հարկի վճարման ուշացման փաստը, որը շարունակական բնույթ է կրում՝ նախատեսելով ժամկետանց յուրաքանչյուր օրվա դիմաց տույժի վճարում՝ մինչև հարկային պարտավորության լիարժեք կատարման ավարտը:

Դրանով իսկ փորձ է արվել օրենսդրորեն լուծել իրավակարգավորման հետևյալ խնդիրները. նախ կանխել նման իրավախախտումները, ապահովել հարկերի վճարման ուշացման հետևանքով պետական բյուջեին հասցված նյութական վնասի հատուցումը, ինչպես նաև պարտադրել իրավախախտ սուբյեկտին անհապաղ միջոցներ ձեռնարկել կատարելու հարկային պարտավորությունը:

7. .... Վերոհիշյալ սկզբունքի և սույն գործով վիճարկվող նորմերի իրավական բովանդակության համադրված վերլուծությունը, ինչպես նաև դիմող կողմի հարցադրումները վկայում են, որ, այնուամենայնիվ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ դեռևս գործող օրենսգրքի նորմատիվ համապատասխան կարգավորումները թույլ չեն տալիս միանշանակ (թեկուզ՝ տեսականորեն) բացառել հարկային պարտավորությունների բնագավառում միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության (հարկային և վարչական) ենթարկվելու հնարավորությունը (հատկապես անհատ ձեռնարկատեր հանդիսացող սուբյեկտի օրինակով), չնայած այն հանգամանքին, որ դիմող կողմը չի ներկայացրել դիմումում բերված իրավական ակտերում ու դատական պրակտիկայում ամրագրված չափանիշներով կրկնակի պատասխանատվության որևէ փաստ և իր հիմնավորումները կառուցել է հնարավոր «ռիսկերի» շրջանակներում: Դիմումում բերված այն փաստարկը, ըստ որի՝ պատասխանատվության ենթակա սուբյեկտների տարանջատման հարցը «առհասարակ հստակեցված չէ թե՛ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և թե՛ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով», հիմնավորված է այն նկատառումներից ելնելով, որ տվյալ օրենսգրքի ողջ իրավական հայեցակարգը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալական, տնտեսական և օրենսդրության զարգացումների ընդհանուր տրամաբանությանը, ինչը փաստվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ–1059 որոշմամբ: Բացի դրանից, եթե մի կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սպառիչ տրված են պատասխանատվության ենթակա սուբյեկտների շրջանակները, ապա մյուս կողմից հստակեցված չեն իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունները՝ կապված հարկային կամ վարչաիրավական այս կամ այն իրավախախտման հատկանիշներ պարունակող որևէ արարքի գնահատման հետ: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ չնայած իրենց իրավակարգավորման առարկայով հարկային և վարչական պատասխանատվության բնագավառներն օրենքով օբյեկտիվորեն տարբերակ–ված են (թե՛ նպատակի և թե՛ իրավակարգավորման մեթոդների առումներով), այնուհանդերձ, դրանք հարկային իրավախախտումների կանխարգելման (բյուջետային կարգապահության հաստատման), կիրառվող պատասխանատվության միջոցների իրավական հետևանքների տեսանկյունից գտնվում են փոխադարձ սերտ կապի մեջ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հարկային, ինչպես նաև վարչաիրավական հարաբերություններում իրավասու սուբյեկտները, ելնելով այդ հարաբերությունների բովանդակությունից ու առանձնահատկություններից, անհրաժեշտաբար (օբյեկտիվորեն) կարող են հանդես գալ իրավական մի քանի կարգավիճակներով՝ միաժամանակ հանդես գալով թե՛ որպես հարկային և թե՛ վարչաիրավական հարաբերության սուբյեկտներ, և որոնց նկատմամբ միաժամանակ հարկային և վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը կարող է մեկնաբանվել որպես միևնույն արարքի համար իրավական կրկնակի պատասխանատվություն: Մասնավորապես, եթե անհատ ձեռնարկատերն իր գործունեությու-

նից բխող հարկերը հաշվարկելու և պետբյուջե փոխանցելու իր պարտականությունն օրենսդրությամբ նախատեսված կարգով պատվիրակել է պատասխանատու այլ անձի, ապա այդ ձեռնարկատերը վարչական պատասխանատվություն կարող է կրել միայն որպես իրավաբանական անձին հավասարեցված իրավունքի սուբյեկտ, մինչդեռ այլ իրավական կարգավորում է նախատեսված այն դեպքերում, երբ անհատ ձեռնարկատերը միաժամանակ ստանձնել է իր գործունեությամբ պայմանավորված հարկերը հաշվարկելու և վճարելու պարտականությունը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^{3}–րդ հոդվածի իմաստով պատասխանատվության ենթակա սուբյեկտ կարող է լինել միայն այն անհատ ձեռնարկատերը, որն օրենքով սահմանված կարգով անձամբ է իրականացնում հարկերը հաշվարկելու և փոխանցելու պարտականություն, հակառակ դեպքում, երբ այդ պարտականությունը վերապահված է այլ անձի, պատասխանատվություն կկրի միայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածի հիման վրա:

ՍԴՈ–1282, 21 հունիսի, 2016 թ.

7. .... Համադրելով վերոգրյալը սույն գործով դիմողի եզրահանգումների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ բացարձականացնել այն հանգամանքը, որ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերն անվերապահորեն «համապատասխանում են քրեական մեղադրանք հասկացությանը՝ առավել ևս այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է կողմերի փոխպայմանավորված ու կանխատեսելի վարքագծի հիման վրա կատարված գործողությունների արդյունք հանդիսացող ու քրեորեն ոչ պատժելի վարչական իրավախախտումներին, ինչպիսին, մասնավորապես, սույն գործով վեճի առարկան է:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԴՈ–947, 5 ապրիլի, 2011 թ.

5. Վիճարկվող հոդվածը զետեղված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 22–րդ գլխում: Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հանրային վտանգավորությունը՝ հատկապես վերափոխվող տնտեսական համակարգերի համար, դրսևորվում է նրանում, որ դրանք խախտում են տնտեսության ոլորտի իրավակարգը, տնտեսական շրջանառության առանձին մասնակիցների, հասարակության, պետության տնտեսական շահերը, գույքային վնաս են պատճառում տնտեսավարող սուբյեկտներին և առանձին քաղաքացիների:

ՏՈՒԺՈՂԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՆՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ թե՛ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22–րդ հոդվածի վերոնշյալ առաջին մասի հատկապես «ե» կետի դրույթը և թե՛ սույն գործով դիմող կողմի վարույթում գտնվող կոնկրետ գործի փաստական հանգամանքներն առնչվում են նյութական վնաս կրած անձին, կամ որ նույնն է՝ տուժողին, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 4–րդ մասն ամրագրում է անձի իրավունքը՝ ազատությունից ապօրինի զրկման դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու պատճառված վնասի հատուցում: Դատարանը, միաժամանակ, հարկ է համարում պարզել Սահմանադրության

20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված՝ «տուժող» հասկացության և «օրենքով սահման-ված կարգով» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունը:

ՄԱԿ–ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29–ին ընդունված՝ «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատու-թյան հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձևի «Ա» բաժնի 2–րդ կետում բացահայտված է «տուժող»–ի, որպես հանցագործության զոհի, հաս-կացության միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործու-թյան զոհ է (են) համարվում այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշ-խանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով: Այդպիսով, անօրի-նական գործողությունների՝ հանցագործության և իշխանության չարաշահման արդյունքում վնաս կրած անձինք իրենց կարգավիճակով նույնացվում են և նրանց նկատմամբ պահանջ-վում է համարժեք վերաբերմունք:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև միջազգային իրավունքում առկա նման մոտեցումը, գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամ-րագրված «տուժող» հասկացությունն ունի ընդգրկուն բովանդակություն և ներառում է ոչ մի-այն քրեական, այլև քրեադատավարական, վարչական, քաղաքացիաիրավական ու այլ հա-րաբերություններից և իրենց կամքից անկախ տուժած ֆիզիկական և իրավաբանական ան-ձանց: Ուստի ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 5–րդ մասում ամրագրված «տուժող» հասկացությունը նշանակում է նաև **հանրային իշխանության մարմինների ու պաշտոնա-տար անձանց գործողություններից (անգործությունից) վնաս կրած անձ**:

Ընդ որում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օ-րենսգրքի համաձայն՝ անձը տուժողի դատավարական կարգավիճակ է ձեռք բերում որպես այդպիսին ճանաչվելու փաստով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահ-մանադրության նշված դրույթի իմաստով տուժողին հասցված վնասի հատուցման իրավուն-քը ենթադրում է նաև արդարացված անձի կրած վնասի հատուցման հարցով քրեական դա-տավարությունից դուրս քաղաքացիական դատավարության կարգով համապատասխան հայց հարուցելու իրավունք:

ՍԴՈ–935, 4 փետրվարի, 2011 թ.

6. .... Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործնականում առաջին հերթին հանցագործության հետևանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության խախտում պետք է դիտարկվի այն, որ օրենսդրության մեջ բացակայում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով քրեական գործի մինչդատական վարույթի ընթաց-քում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշումների վերանայման մե-խանիզմը:

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ

ՍԴՈ–733, 5 փետրվարի, 2008 թ.

5. .... Պատժից ազատելու պայմանական բնույթը պայմանավորում է մեկ այլ առանձնա-հատկություն ևս (այս առանձնահատկությունը վերաբերում է նաև ՔՕ 78 հոդվածով նախա-տեսված՝ պատժից ազատելու ձևին), այն է՝ եթե պատժից ազատելու մյուս ձևերի կիրառման արդյունքում վերացվում են կատարված հանցագործության բոլոր հետևանքները, ապա պատժից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալը մինչև դատարանի

կողմից նշանակված պատժաժամկետի ավարտը շարունակում է համարվել դատվածություն ունեցող, ինչը հաշվի է առնվում փորձաշրջանում հանցագործություն կատարելու դեպքում պատիժ նշանակելիս (պատիժ նշանակվում է դատավճիռների համակցությամբ (ՔՕ հոդված 67)):

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

8. Հայտնի է, որ քրեական իրավունքում «հանցակազմ» հասկացությունը բնորոշվում է որպես հանրորեն վտանգավոր արարքի՝ քրեական օրենսգրքով սահմանված հատկանիշների համակցություն: Այսինքն, որպեսզի անձը քրեական պատասխանատվության ենթարկվի, նրա արարքը պետք է որակվի հանրորեն վտանգավոր՝ որում առկա են քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ արարքի բոլոր հատկանիշները: «Հանցակազմի բացակայություն» եզրույթը նշանակում է արարքի առկայություն, սակայն այն չի բնորոշվում որպես քրեական օրենսգրքով նախատեսված հատկանիշներ պարունակող հանրորեն վտանգավոր արարք, այլ կերպ՝ հանցագործություն: Հետևաբար, հանցագործության յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է իր կոնկրետ հանցակազմը, որի հիմնական տարրերն են օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Այս տարրերից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է հանցակազմի, հետևաբար և՝ հանցագործության բացակայության մասին:

ՍԴՈ–882, 11 մայիսի, 2010 թ.

8. .... Դատվածության ինստիտուտը՝ և՛ որպես որակյալ հանցակազմի տարր, և՛ որպես պատժի նշանակման ժամանակ հաշվի առնվող հանգամանք, իրավաչափ նպատակ է հետապնդում, և դրա տարբեր ձևերի կիրառումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նույն արարքի համար կրկին անգամ դատվելը բացառելու սկզբունքն այն ձևով, ինչպես սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ և կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքով, բացառում է անձին կրկնակի դատապարտելն ու պատժելը միևնույն հանցագործության համար, ինչպես նաև միևնույն հանցավոր արարքի որակումն օրենսգրքի մի քանի հոդվածով, եթե դրանցում պարունակվող նորմերը հարաբերակցվում են որպես Ընդհանուր և Հատուկ մասերի նորմեր կամ մաս և ամբողջություն:

9. Նույն արարքի համար անձին կրկին անգամ դատելու սահմանադրական արգելքին և նույն արգելքն ամրագրած՝ ՀՀ ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող համապատասխան միջազգային պայմանագրերին համահունչ է օրենսգրքում ամրագրված այն սկզբունքը, ըստ որի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար (հոդված 10):

Դա նշանակում է, որ հիշյալ սկզբունքը չի արգելում ինչպես օրենսդրին՝ ՀՀ քրեական օրենսդրությունում ամրագրել դատվածության և դրա հետ կապված կրկնակիության ու ռեցիդիվի ինստիտուտները՝ քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքներով հանդերձ, այնպես էլ դատարանին՝ հանցանք կատարած անձի պատժի տեսակն ու չափը սահմանված ձևով որոշելու գործընթացում հաշվի առնել հանցագործության բնույթը, դրա հասարակական վտանգավորությունը, հաճախականությունը, դրդապատճառները և այլ հանգամանքները, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող տվյալները:

Այսպիսով, **չհանված կամ չմարված դատվածություն ունեցող անձի կողմից** նոր նույնաբնույթ հանցագործություն կատարելը որպես արարքը որակյալ դարձնող կամ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դիտելը չի կարող համարվել նախ-

կինում կատարած արարքի համար «կրկին անգամ դատվել», ինչպես նաև օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում: Առավել ևս, կրկնակիության առնչվող բոլոր այն դեպքերը, որոնք կապված չեն դատվածության հետ, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

.... Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման տեսանկյունից հանրապետությունում օրենսդրական զարգացումները պետք է ընթանան այն ուղղությամբ, որ շեշտը դնելով ոչ թե հանցանքի որակման, այլ պատժի տարրերի վրա՝ կատարելագործվեն ռեցիդիվի ինստիտուտը կանոնակարգող իրավանորմերը՝ իրենցում ներառելով նաև նախկին դատվածությանն առնչվող քրեաիրավական հետևանքները:

ՍԴՈ–929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

7. .... Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը:

ՍԴՈ–947, 5 ապրիլի, 2011 թ.

6. .... Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3–րդ հոդվածի 1–ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունքների վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2–րդ հոդվածի 1–ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականխիչ նշանակություն և քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները: Այդ է պատճառը նաև, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել է քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտը, որի միջոցով գործնականում ապահովվում է հանցագործության հետևանքով խախտված իրավունքների վերականգնումը:

Վերոգրյալից բխում է, որ կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական և քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, և դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ. քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը:

Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վտանգավորության գնահատումը և դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը և ելնելով վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից:

Օրենսդիրն իրավակիրառողին չի ընձեռում քաղաքացիական և քրեական պատասխանատվություն սահմանող նորմերի միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված արարքի վերաբերյալ գործերը հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պա-

տասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջև: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է և պարտավոր է իմանալ, որ տվյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաև քրեական պատասխանատվություն:

ՍԴՈ– 1252, 26 հունվարի, 2016 թ.

5. .... Վերոհիշյալի վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելը պայմանավորված է ճանապարհային երթևեկության մասնակիցների, մասնավորապես, տուժած անձանց շահերի պաշտպանության, ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն սահմանելով՝ պետությունն իրացնում է, մասնավորապես, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության իր սահմանադրական պարտականությունը:

24. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՍԴՈ– 56, 19 մայիսի, 1997 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրել է, որ «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17–րդ հոդվածն ամբողջությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Միաժամանակ պետք է նկատել, որ սահմանադրական դատարանի նշված որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների ամփոփման հետ կապված վեճերով իրավակիրառական պրակտիկան պետք է համապատասխանի «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածում ամրագրված՝ գերագույն դատարանի կոլեգիալ կարգով կայացրած որոշումների վերջնական լինենլու մասին դրույթին: Ներկայում այդ վեճերը քննվում են ՀՀ վարչական դատարանի կողմից:

ՍԴՈ–92, 27 փետրվարի, 1998 թ.

Որոշումն ընդունվել է 1998 թ. փետրվարի 27–ին, որով արձանագրվել են վերը նշված օրենքի 22–րդ հոդվածի 4–րդ և 5–րդ մասերի անհամապատասխանությունը գործող Սահմանադրությանը: Սակայն 1999 թ. հունիսի 17–ին ընդունվել է «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքը (ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ է դրվել 1999 թ. հունվարի 1–ից), որի 2–րդ հոդվածի 8–րդ կետի համաձայն ամբողջությամբ ուժը կորցրած է ճանաչվել «Անշարժ գույքի մասին» օրենքը: Ի կատարումն ՍԴ որոշման՝ ուժը կորցրած են ճանաչվել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 219 (Պետության կամ համայնքի կարիքների համար վերցվող հողամասի հատուցման գինը), 220 (Հողամասը, պետության կամ համայնքի կարիքների համար դատարանի վճռով վերցնելը), 221 (Պետության կամ համայնքի կարիքների համար վերցնելու ենթակա հողամասի սեփականատիրոջ իրավունքները) հոդվածները: Ի կատարումն ՍԴ որոշման՝ 2005 թ. հոկտեմբերի 4–ին Ազգային ժողովն ընդունել է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքը: Իրավակիրառ պրակտիկայում պետական կարիքների համար օտարման ենթակա ցանկացած գույքի վերաբերյալ պետք է ընդունվի առանձին օրենք, որում օտարման ենթակա անշարժ գույքի գնահատման կանոնակարգը կիրացվի վերոնշյալ օրենքի հիման վրա:

ՍԴՈ–138, 13 նոյեմբերի, 1998 թ.

Դատարանի որոշմամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71–րդ հոդվածի 8–րդ կետի նախապայմաններ սահմանող՝ «նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշման դեմ է քվեարկել» դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող: Որոշման հիման վրա վերը նշված օրենքի 71–րդ հոդվածի 8–րդ կետը ամբողջությամբ հանվել է: Իրավակիրառ պրակտիկայում այլևս վերը նշված նախապայմանը չի գործում:

ՍԴՈ–152, 27 հունվարի, 1999 թ.

«Հեռահաղորդակցցության մասին» ՀՀ օրենքը ուժը կորցրել է 2005 թվականի փետրվարի 3–ից՝ համաձայն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի, որում ամբողջովին արտացոլվել են դատարանի դիրքորոշումները:

ՍԴՈ–179, 16 հոկտեմբերի, 1999 թ.

Դատարանի որոշման հիման վրա «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 3–րդ հոդվածի 2–րդ մասը չի փոխվել, սակայն 21.06.2002 թ. Օրենքն ամբողջությամբ ուժը կորցրել է և նույն օրը ուժի մեջ է մտել 05. 07. 2002 թ. Ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենքը, որով համայնքի բնակիչ է ճանաչվել այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքում (5–րդ հոդվ.): Որոշման հիման վրա 2000 թ. ապրիլի 5–ին ՀՀ Ընտրական օրենսգրքում կատարվել են համապատասխան փոփոխություններ, համաձայն որի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2–րդ հոդվածի 1–ին կետում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք տրվել է նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող կամ սահմանված կարգով տրված փախստականի ընտանիքի վկայականում նշված՝ 18 տարին լրացած յուրաքանչյուր անձի:

Պետք է նշել, որ հետագայում ընդունվել է ինչպես նոր Ընտրական օրենսգիրք, այնպես էլ նոր՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենք, որոնցում հստակ արտացոլվել է սահմանադրական դատարանի որոշումը:

ՍԴՈ–278, 11 հունվարի, 2001 թ.

Դատարանի որոշման հիման վրա 2001 սեպտեմբերի 11–ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքում փոփոխումներ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով փոփոխվել և Սահմանադրությանը համապատասխան վերաշարադրվել են.

Օրենքի 28–րդ հոդվածը.

«Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը մշակում է Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգն օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ կից ներկայացնելով իր եզրակացությունը: Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հաստատում է օրենքով:

32 հոդվածի գ կետը «մշակում և կառավարություն է ներկայացնում Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգը»:

36–րդ հոդվածը. «Խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1–ը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռուստառադիոընկերության նախորդ տարվա գործունեության (այդ թվում՝ ծրագրային և ֆինանսական) մասին հաղորդում»:

40–րդ հոդվածը. «Ազգային հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1–ը Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում: Ազգային հանձնաժողովն իր հաղորդումը հրապարակում է մամուլում»:

Օրենքի 42–րդ հոդվածի երկրորդ մասը.

«Ազգային հանձնաժողովը մշակում է Ազգային հանձնաժողովի կանոնակարգը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն: Հայաստանի Հանրապետության կառավարությունն Ազգային հանձնաժողովի կանոնակարգը օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ կից ներկայացնելով իր եզրակացությունը: Ազգային հանձնաժողովի կանոնակարգը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հաստատում է օրենքով»:

59–րդ հոդվածի երրորդ մասը.«Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կառավարությունը Հանրային հեռուստառադիոընկերության և Ազգային հանձնաժողովի կանոնակարգերը և դրանց վերաբերյալ իր եզրակացությունները ներկայացնում է Ազգային ժողով»:

ՍԴՈ–389, 1 հոկտեմբերի, 2002 թ.

Դատարանի որոշման հիման վրա 2005 թ. մայիսի 19–ին կատարվել են փոփոխություններ ՀՀ Ընտրական օրենսգրքում, որով ՀՀ սահմանադրությանը համապատասխանեցվել է 14 –րդ հոդվածը հետևյալ խմբագրությամբ՝ «Ընտրողների ցուցակներում անճշտությունների վերաբերյալ վեճերը կարող են բողոքարկվել առաջին ատյանի դատարան: Դատարանը եռօրյա ժամկետում կայացնում է վճիռ, որը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ»: Իրավակիրառ պրակտիկան հիմնվել է այդ փոփոխության վրա:

ՍԴՈ–563, 6 մայիսի, 2005 թ.

Որոշման հիման վրա 01.06.06 թ. փոփոխվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 7–րդ հոդվածի առաջին կետի երրորդ պարբերությունը և շարադրվել. «Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Նա կարող է տեղեկություններ պահանջել դատարաններից՝ կապված սույն օրենքի 10–րդ հոդվածի 1–ին կետի, 12–րդ հոդվածի 1–ին կետի 5–րդ ենթակետի և 17–րդ հոդվածի 1–ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ: Պաշտպանն իրավասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ»:

Փոփոխվել է նաև օրենքի 12 Հոդվածը, որը Պաշտպանին իրավունք չի վերապահում քննարկել այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան: Իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցվել է օրենքի փոփոխություններին: 2015 թ. դեկտեմբերի 6–ի սահմանադրական փոփոխություններից հետո մշակվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» նոր օրենքի նախագիծ:

ՍԴՈ–630, 18 ապրիլի, 2006 թ.

Դատարանի որոշման հիման վրա ՀՀ Հողային օրենսգրքի 104–րդ հոդվածը 27. 11. 06 թ. փոփոխվել և խմբագրվել է հետևյալ կերպ. «Հողամասի օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ»: Միաժամանակ որոշման հիման վրա Հողային օրենսգրքից դուրս են եկել 106–րդ և 108–րդ հոդվածները: Կառավարության վերը նշված որոշման ուժը կորցնելուց հետո դադարեցվել է այդ ընթացակարգով պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարումը:

ՍԴՈ–647, 20 սեպտեմբերի, 2006 թ.

Դատարանի որոշման հիման վրա օրենքի նշված դրույթը ուժը կորցրել է: Սակայն հետագայում «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքն ամբողջությամբ ուժը կորցրել է և ընդունվել է ՀՀ Դատական օրենսգիրքը: Պետք է նշել, որ ներկայում դատավորների կենսաթոշակի դրույքաչափին առնչվող բոլոր խնդիրները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» 2014 թ. փետրվարի 4–ին ընդունված ՀՀ օրենքով:

ՍԴՈ–648, 26 սեպտեմբերի, 2006 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470–րդ հոդվածի 1–ին կետի դրույթները ամբողջությամբ համապատասխանում են միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխան՝ իրավական որոշակիության չափանիշներին:

ՍԴՈ–649, 4 հոկտեմբերի, 2006 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է, որ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի Սահմանադրությանը հակասող ճանաչված 11–րդ հոդվածի 2–րդ մասը իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է մարդու իրավունքների անհամաչափ սահմանափակման: Միաժամանակ պետք է նշել, որ 2012 թ. հունիսի 1–ից վերը նշված օրենքն ամբողջությամբ դադարել է գործել:

ՍԴՈ–650, 10 հոկտեմբերի, 2006 թ.

Դատարանի որոշման հիման վրա իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել այն հանգամանքով, որ սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները դադարելու համար՝ մինչև այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը: Միաժամանակ պետք է նշել, որ դատարանը փաստել է, որ ՀՀ օրենսդրության մեջ պատշաճ կերպով գործում են սեփականության իրավունքից հրաժարվելու իրավական բոլոր կառուցակարգերը:

ՍԴՈ–652, 18 հոկտեմբերի, 2006 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ իրավասու մարմնի, պաշտոնատար անձի կողմից դիմողին՝ իր դատավարական իրավունքները բացատրելը դիմողի կարգավիճակով հանդես եկող անձի մասով օրենսգրքի որևէ նորմով հստակ նախատեսված չէ: Միաժամանակ պետք է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով սահմանադրական դատարանի դիրքորոշումների հիման վրա դեռևս հստակեցումներ չեն կատարվել:

ՍԴՈ–664, 7 նոյեմբերի, 2006 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ դատավորները չեն կարող լինել Կենտրոնական և ընտրատարածքային հանձնաժողովի անդամներ: Միաժամանակ պետք է նշել, որ 2015 թ. Փոփոխված սահմանադրությամբ և 2016 թ. մայիսի 25–ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի 42–րդ և 43–րդ հոդվածներով ամրագրված է կենտրոնական և ընտրատարածքային հանձնաժողովների կազմավորման կարգը, որում հաշվի է առնվել դատարանի որոշումը:

ՍԴՈ–665, 16 նոյեմբերի, 2006 թ.

Դատարանի որոշման հիման վրա 28.11.2007 թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածն ուժը կորցրել է: Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ գործող օրենսդրությամբ ՀՀ Ազգային ժողովի որոշումների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ օրենքին համապատասխանության հարցի որոշումը վերապահված է ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններին, որով իրավակիրառ պրակտիկայում վերջ է դրվել քաղաքացիների իրավունքների պաշտպանության կառուցակարգերի սահմանափակումներին:

ՍԴՈ–667, 21 նոյեմբերի, 2006 թ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի համակարգային վերլուծության արդյունքում արդեն գոյություն ունի (ՍԴՈ–560, 5–րդ կետ և 6–րդ կետի 2–րդ ենթակետ) որոշում: Միաժամանակ դատարանն արձանագրել է, որ ձեռքբերման վաղեմությունը դասվում է սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների թվին: Ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար իրավակիրառ պրակտիկան պետք է հաշվի առնի այդ գույքի՝ որպես սեփական ունեցվածքի բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, տևական տիրապետումը:

ՍԴՈ–668, 28 նոյեմբերի, 2006 թ.

Սահմանադրական դատարանի որոշմամբ փաստվել է, որ իրավակիրառ պրակտիկայում ընդհանուր իրավասության դատարանների իրավասության ենթակա քաղաքացիական վեճերը լուծելու հարցը չի կարող դառնալ սահմանադրական արդարադատության առարկա: Այսինքն, սահմանադրական դատարանի իրավասությանը ենթակա է կիրառված օրենքի, այլ ոչ թե ընդհանուր իրավասության դատարանի ակտի սահմանադրականության հարցը:

ՍԴՈ–669, 22 դեկտեմբերի, 2006 թ.

Օրենքի նշված դրույթները հակասահմանադրական ճանաչելով՝ դատարանը փաստել է, որ կուսակցության լուծարումն ունի ինքնակամ բնույթ, իսկ հարկադիր լուծարման իրավասությունը բացառապես պատկանում է սահմանադրական դատարանին: Դատարանի որոշման հիման վրա օրենքից դուրս են հանվել ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին չմասնակցելու հիմքով կուսակցության լուծարման վերաբերյալ դրույթները:

ՍԴՈ–673, 16 հունվարի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագների մեծությունները փոփոխման կարող են ենթարկվել միայն հանձնաժողովի կողմից: Իսկ իրավակիրառ պրակտիկայում Հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությունը դատական կարգով կարող է բողոքարկվել սակագնի մեծությունը սահմանող հանձնաժողովի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից՝ 7–օրյա ժամկետում: Ընդ որում դատական կարգով բողոքարկումը չի կասեցնում սակագնի մեծությունը սահմանող հանձնաժողովի իրավական ակտի գործողությունը:

ՍԴՈ–674, 30 հունվարի, 2007 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ իրավասու մարմնի, պաշտոնատար անձի կողմից դիմողին՝ իր դատավարական իրավունքները բացատրելը դիմողի կարգավիճակով հանդես եկող անձի մասով օրենսգրքի որևէ նորմով հստակ ամրագրված չէ: Միաժամանակ պետք է նկատել, որ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի և գլխավոր դատախազության կողմից այդ առնչությամբ համապատասխան պարզաբանումներ չեն տրվել:

ՍԴՈ–677, 7 փետրվարի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա վերացվել են գործադուլի իրավունքի սահմանափակումները: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73–րդ հոդվածի (20.05.09 թ. խմբագրմամբ) համաձայն՝ գործադուլը կոլեկտիվ աշխատանքային վեճի լուծման նպատակով մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է: Այսինքն այդ իրավունքը

գործում է ինչպես կոլեկտիվ պայմանագրի բանակցությունների, կնքման, այնպես էլ այդ գործընթացներից հետո:

ՍԴՌ–678, 16 փետրվարի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա 26.02. 07 թ. «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքը խմբագրվել է, որով սահմանվել է, որ ԱԺ չորսօրյա նիստերի չորեքշաբթի ժամը 17.30–ի պատգամավորներ հայտարարությունների տեսագրությունը ցուցադրվելու է ոչ թե հանրային հեռուստատեսության, այլ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքով սահմանված կարգով՝ մրցույթում հաղթած հեռուստաընկերության կողմից: Միաժամանակ պետք է նկատել, որ «Ազգային ժողովի Կանոնակարգ» օրենքում ամրագրվել է դրույթ, համաձայն որի՝ 3 րոպեանոց հայտարարություններով սկզբում կարող են հանդես գալ երեքական ընդդիմադիր պատգամավորներ:

ՍԴՌ–690, 9 ապրիլի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա 2007 թ. նոյեմբերի 28–ին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը խմբագրվել է, որով սահմանվել է, որ Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված:

ՍԴՌ–691, 11 ապրիլի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21.02.07 թ. խմբագրմամբ սահմանվել է, որ Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 2–րդ մասի 1–4–րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

ՍԴՌ–700, 8 մայիսի, 2007 թ.

Թեպետ սահմանադրական դատարանի որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24–րդ գլխի դրույթները ճանաչվել են սահմանադրությանը համապատասխանող, սակայն 21.18.07 թ. ուժը կորցրել են: Նշված ոլորտի իրավահարաբերությունների հետ կապված վեճերի լուծման իրավունքը ընդհանուր իրավասության դատարաններից փոխանցվել է վարչական դատարաններին, և համապատասխանաբար սահմանադրական դատարանի դիրքորոշումների հաշվառմամբ՝ ամրագրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում (28–րդ գլուխ):

ՍԴՌ–701, 11 մայիսի, 2007 թ.

Դատարանի որոշմամբ փաստվել է, որ հակասահմանադրական ճանաչվելուց հետո տարաժամկետված իրավական նորմի կիրառումը նշանակում է, որ այն համարվում է սահմանադրությանը համապատասխանող մինչև սահմանադրական դատարանի կողմից սահմանված ժամկետում իրավաբանական ուժը կորցնելը: Իրավակիրառ պրակտիկայում պետական մարմինները պարտավոր են ձեռնպահ մնալ հակասահմանադրական ճանաչված նորմերի վերարտադրությունից:

ՍԴՈ–702,15 մայիսի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածների սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը:

ՍԴՈ–705, 3 հուլիսի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Իրավակիրառ պրակտիկայում «ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով գործարքների կնքումը» եզրույթի գնահատումը թողնվում է դատարանների հայեցողությանը, քանզի դրա սպառիչ հիմքերը օրենքով օբյեկտիվորեն հնարավոր չէ ամրագրել:

ՍԴՈ–709, 20 հուլիսի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Դատարանները պետք է առաջնորդվեն միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, ինչպես նաև պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ ամրագրված սկզբունքով՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը»:

ՍԴՈ–710, 24 հուլիսի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա դատական համակարգի բոլոր ատյաններին արգելվել է իրենց վարույթում քննվող քրեական գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության: Միաժամանակ պետք է նկատել, որ 28.11.07 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությամբ՝ քրեական գործը կարող է ուղարկվել լրացուցիչ նախաքննության բացառապես գործը դատական քննության նախապատրաստելիս:

ՍԴՈ–714, 11 սեպտեմբերի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Այն պետք է իրականացվի սահմանադրական դատարանի դիրքորոշումների հիման վրա:

ՍԴՈ–716, 23 հոկտեմբերի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Այն պետք է իրականացվի սահմանադրական դատարանի դիրքորոշումների հիման վրա:

ՍԴՈ–719, 28 նոյեմբերի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը, ինչն ապահովվում է ՀՀ դատական օրենսգրքով:

ՍԴՈ–720, 11 դեկտեմբերի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Դատարանի որոշման հիման վրա իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող

դրույթը ՀՀ վճռաբեկ դատարանը կարող է կիրառել բոլոր այն դեպքերում, երբ գործի փաստական հանգամանքները չեն փոխվում և՛ առաջին ատյանի դատարանի, և՛ վերաքննիչ դատարանի դատաքննության արդյունքում, և դատավճիռներով հաստատված միևնույն փաստը տարբեր դատարանների կողմից տարբեր քրեաիրավական գնահատականի է արժանանում:

ՍԴՈ–721, 18 դեկտեմբերի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ դատարանն արձանագրել է, որ գործող օրենսդրությունը պարունակում է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու համարժեք այլ ընթացակարգեր՝ ավագանու միջոցով համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու առաջարկության նախաձեռնումը ՀՀ կառավարման համապատասխան մարմնի (մարզպետի, Երևանի քաղաքապետի) առջև:

ՍԴՈ–722, 21 դեկտեմբերի, 2007 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը: Միաժամանակ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ է լայնորեն կյանքի կոչել «Էլեկտրոնային փաստաթղթի թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված էլեկտրոնային ստորագրության համակարգը:

ՍԴՈ–723, 15 հունվարի, 2008 թ.

Վիճարկվող դրույթը հակասահմանադրական ճանաչվելուց զատ դատարանի կողմից օրենսդիր իշխանության մարմնին առաջարկվել է մշակել և ընդունել կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Արդյունքում 22.12.2010 թ. ընդունվել է «Պետական կենսաթոշակների մասին» նոր օրենք:

ՍԴՈ–731, 29 հունվարի, 2008 թ.

Վիճարկվող դրույթը հակասահմանադրական ճանաչվելուց զատ դատարանի կողմից օրենսդիր իշխանության մարմնին առաջարկվել է մշակել և ընդունել կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Արդյունքում 22.12.2010 թ. ընդունվել է «Պետական կենսաթոշակների մասին» նոր օրենք, որում պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունը պետք է լինի այնպիսի պայմանների ապահովումը, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները: Միաժամանակ, դատարանի դիրքորոշման համաձայն՝ պետության հայեցողությամբ պետք է սահմանվեն կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման, կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել այդ սկզբունքները:

ՍԴՈ–733, 5 փետրվարի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 20.05.09 թ. խմբագրությամբ սահմանվել է, որ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ օ-

րենքին հակասելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ ընդունվելու դեպքերի:

ՍԴՈ–735, 25 փետրվարի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա վիճարկվող դրույթը ճանաչվել է սահմանադրությանը հակասող և անվավեր: Միաժամանակ դատարանն արձանագրվել է, որ սնանկ ճանաչելու հիմք է դիտարկվում ոչ թե ընդհանրապես վճարային պարտավորությունը, այլ անվիճելի վճարային պարտավորությունը: Այս դիրքորոշումը պետք է լինի իրավակիրառ պրակտիկայի հիմքը:

ՍԴՈ–741, 18 մարտի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է վիճարկվող հոդվածի սահմանադրության համապատասխանությունը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը, որը պետք է հաշվի առնի սահմանադրական դատարանի դիրքորոշումները:

ՍԴՈ–747, 4 ապրիլի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է վիճարկվող դրույթների սահմանադրության համապատասխանությունը, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը, որը պետք է հաշվի առնի սահմանադրական դատարանի դիրքորոշումները:

ՍԴՈ–751, 15 ապրիլի, 2008 թ.

Դատարանի որոշմամբ վիճարկվող դրույթը հակասահմանադրական ճանաչելու արդյունքում՝ Սահմանադրական դատարանի որոշման, որպես նոր երևան եկած հանգամանքի, կիրառման ժամկետների սահմանափակումները հանվել են:

ՍԴՈ–752, 22 ապրիլի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է ինչպես վիճարկվող հոդվածների սահմանադրության համապատասխանությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Այն պետք է իրականացվի սահմանադրական դատարանի դիրքորոշումներին համապատասխան:

ՍԴՈ–753, 13 մայիսի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա վիճարկվող դրույթը համապատասխանեցվել է իրավական որոշակիության չափանիշներին և վերշարադրվել հետևյալ բովանդակությամբ. «Արտոնատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձին Ազգային հանձնաժողովն հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման արտոնագիր (լիցենզիա) է տալիս օրենքով սահմանված կարգով պետական տուրք մուծելուց հետո՝ 10–օրյա ժամկետում»:

ՍԴՈ–754, 27 մայիսի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26.12.2008 թ. խմբագրությամբ սահմանվել է հետևյալը. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին»: Ընդ որում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

ՍԴՈ–758, 9 սեպտեմբերի, 2008 թ.

Դատարանի որոշմամբ վիճարկվող դրույթը ճանաչվել է սահմանադրությանը հակասող և անվավեր, միաժամանակ, արձանագրվել է, որ իրավակիրառ պրակտիկայում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ատյանների ակտերի վերանայման հնարավորությունը, բացառելով ստորադաս դատարանների կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը:

ՍԴՈ–765, 8 հոկտեմբերի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա վերացել է վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը, ինչը իրավակիրառ պրակտիկայում ոտնահարում էր խախտված իրավունքների դատական պաշտպանության մատչելիությունը:

ՍԴՈ–766, 14 հոկտեմբերի, 2008 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է ինչպես վիճարկվող դրույթի սահամանադրականությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը, ինչը ճանաչվել է համահունչ մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներին:

ՍԴՈ–767, 21 հոկտեմբերի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա քրեական դատավարության օրենսգրքի 26.12.2008 թ. խմբագրությամբ՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը: Ընդ որում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատական ակտը վերանայվում է վերաքննիչ դատարանի, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններինը՝ վճռաբեկ դատարանի կողմից:

ՍԴՈ–780, 25 նոյեմբերի, 2008 թ.

Դատարաի որոշման հիման վրա վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխության հիման վրա՝ Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ այդ օրենսգրքով:

ՍԴՈ–782, 2 դեկտեմբերի, 2008 թ.

Դատարանի որոշման հիման վրա Դատական օրենսգրքի 07.04.09 թ. խմբագրման համաձայն՝ այն դեպքում, երբ տվյալ դատարանում գործը չի կարող քննվել դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով, Դատարանների նախագահների խորհրդի որոշմամբ դատավորը կարող է մինչև 6 ամիս ժամկետով գործուղվել նույն ատյանի դատարան: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն մինչև դատավորի վարույթում գտնվող գործի քննության ավարտը: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

ՍԴՈ–786, 23 դեկտեմբերի, 2008 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է ինչպես վիճարկվող դրույթի սահմանադրականությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ փաստելով, որ գործուղման հնարավորության նախատեսումն ինքնին իրավաչափ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ տվյալ դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետևանքով գործի քննության անհնարինության հետևանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:

ՍԴՈ–792, 24 փետրվարի, 2009 թ.

Դատարանի որոշման հիման վրա Աշխատանքային օրենսգիրքը 24.06.10 թ. խմբագրությամբ ամրագրել է որպես գործատուի կողմից իր նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծարման հիմք անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալը: Միաժամանակ որոշման հիման վրա օրենսգիրքը սահմանել է, որ աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել տարիքը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՍԴՈ–787, 3 փետրվարի, 2009 թ.

Դատարանի որոշման հիման վրա Վարչական դատավարության օրենսգրքում հստակեցվել է վարչական դատարանում գործերի ընդդատությունը: Մասնավորապես, վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր վեճերը, ներառյալ.

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը:

ՍԴՈ–803, 8 մայիսի, 2009 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է ինչպես վիճարկվող դրույթի սահմանադրականությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ, ելնելով «մեկ ընտրող՝ մեկ ձայն» սկզբունքից, արձանագրվել է, որ մարդու ընտրելու իրավունքի իրականացման միակ հնարավորությունը տեղամասային մեկ ցուցակում ընդգրկվելն է:

ՍԴՈ–804, 26 մայիսի, 2009 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է ինչպես վիճարկվող դրույթի սահմանադրականությունը, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Այն իրականացվում է սահմանադրական դատարանի դիրքորոշումներին համապատասխան:

ՍԴՈ–810, 30 հունիսի, 2009 թ.

Դատարանի որոշման հիման վրա համամասնական ընտրական համակարգով ընտրված պատգամավորները զրկվել են իրենց համապատասխան խմբակցությունից ազատորեն դուրս գալու իրավունքից: Դատարանի որոշմամբ նշված սահմանափակումը տարածվում է բացառապես համամասնական ընտրական համակարգով ընտրված պատգամավորների վրա, քանի որ ընտրությունների ժամանակ ընտրողն իր ձայնը տալիս է ոչ թե վերջիններիս, այլ քաղաքական կուսակցությանը, իսկ պատգամավորների տեղը որոշում է հենց կուսակցությունը: Արդյունքում համամասնական ընտրական համակարգով ընտրված պատգամավորը խմբակցությունից դուրս գալիս մեխանիկորեն զրկվում է պատգամավորական մանդատից: Միաժամանակ պետք է նշել, որ 2015 թ. դեկտեմբերի 6–ի սահմանադրական փոփոխություններից հետո 2017 թ–ից ՀՀ Ազգային ժողովն ընտրվելու է բացառապես համամասնական ընտրական համակարգով: Քանզի նոր ընդունվելիք ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը նույնպես պարտավոր է հաշվի առնել սահմանադրական դատարանի որոշումն ու այդ կապակցությամբ ներկայացրած դիրքորոշումները:

ՍԴՈ–811, 7 հուլիսի, 2009 թ.

Նկատի ունենալով, որ վեճի առարկա հոդվածի իրավադրույթներն ամբողջապես վերարտադրում են «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածի նորմերը, իսկ այդ օրենքն ուժը կորցրել է «ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքի 2–րդ հոդվածի 1–ին կետով, ինչպես նաև արձանագրելով, որ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածի սահմանադրականության հարցը քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանում՝ հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 10–րդ հոդվածի պահանջները (20.09.2006 թ. ՍԴՈ–647 որոշում), սահմանադրական դատարանի կողմից կարճվել է գործի վարույթը:

ՍԴՈ–815, 14 հուլիսի, 2009 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է վիճարկվող դրույթների սահամանադրականությունը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը ՍԴՈ 630 որոշման դիրքորոշումների շրջանակներում: (Տե'ս ՍԴՈ 630 որոշման ծանուցումը):

ՍԴՈ–816, 18 հուլիսի, 2009 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ իրավակիրառ պրակտիկայում բնօգտագործման վճարները տարբեր պետական մարմինների կողմից դիտարկվել են որպես պարտադիր վճարներ: Մինչդեռ դրանք չեն հանդիսանում պարտադիր վճարներ և, հետևաբար ենթակա են կարգավորման քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում:

ՍԴՈ–817, 21 հուլիսի, 2009 թ.

Դատարանի ՍԴՈ 765 որոշմամբ լուծում է ստացել վիճարկվող դրույթի հետ կապված հարցը: Այն է՝ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը ետ վերադարձնելը առանց որևէ բացառության պետք է լինի պատճառաբանված:

ՍԴՈ–818, 28 հուլիսի, 2009 թ.

Դատարանի որոշման հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը խմբագրվել է և սահմանել, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 414.2 հոդվածի 2–րդ մասի 1–4–րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

ՍԴՈ–827, 12 սեպտեմբերի, 2009 թ.

Դատարանի որոշմամբ փաստվել է վիճարկվող դրույթի սահմանադրականությունը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ, դատարանն արձանագրել է որ իրավունքի իրավաչափ սահմանափակումը չի կարող հանդիսանալ որպես այդ իրավունքի ոտնահարում:

ՍԴՈ–832, 22 սեպտեմբերի, 2009 թ.

Դատարանը արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հարկային արտոնությունների իրավունքը, ինչպես նաև առհասարակ հարկային պարտավորությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունն ամբողջությամբ բխում է հարկ մուծելու սահմանադրական պարտականությունից և ուղղված է այդ պարտականության բարեխիղճ կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

ՍԴՈ–833, 13 հոկտեմբերի, 2009 թ.

Դատարանի որոշման հիման վրա. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 20.05.2010 թ. խմբագրությամբ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունքի առումով վերացել է փաստաբանների մենաշնորհը: Միաժամանակ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

ՍԴՈ–834, 20 հոկտեմբերի, 2009 թ.

Թեպետ դատարանի որոշմամբ վիճարկվող դրույթը ճանաչվել է սահմանադրությանը համապատասխանող, ՀՀ Ազգային ժողովը 27.11.2008 թ. Ընդունել է Նոր ՀՀ օրենք՝ «Փախստականների և ապաստանի մասին», որը լիովին համապատասխանում է սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումներին:

ՍԴՈ–836, 27 հոկտեմբերի, 2009 թ.

Դատարանի կողմից վիճարկվող դրույթը ճանաչվել է սահմանադրությանը համապատասխանող: Միաժամանակ, դատարանի դիրքորոշմամբ փաստվել է, որ վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողությունների կատարում պահանջելու քննիչի լիազորությունը բխում է գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելուն ուղղված գործողությունից:

ՍԴՈ–839, 24 նոյեմբերի, 2009 թ.

Դատարանի որոշմամբ գործի վարույթը կարճվել է, միաժամանակ արձանագրվել է, որ կատարողական վարույթում ընդունված կատարողական թերթի պահանջի իրացմանն ուղղված վարչական ակտի իրավական հետևանքներն ածանցյալ են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետևանքներից և նման վարչական ակտն ինքնուրույն իրավական հետևանքներ չի կարող առաջացնել:

ՍԴՈ–844, 7 դեկտեմբերի, 2009 թ.

Դատարանի որոշմամբ փաստվել է, որ դատական վերահսկողությունն իրականացվում է անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականության մասին որոշման կայացմամբ: Հետևաբար իրավակիրառ պրակտիկայում բողոք քննելու արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե հետաքննության մարմնին, քննիչին և օպերատիվ–հետախուզական գործողություններ իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես տեղի ունի դատախազական հսկողության դեպքում, այլ այդ մարմինների ու պաշտոնատար անձի կողմից թույլ տրված օրինախախտումը վերացնելը և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը պարտավորեցնելով:

ՍԴՈ–845, 8 դեկտեմբերի, 2009 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է վիճարկվող դրույթի համապատասխանությունը սահմանադրությանը իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա

փաստերի որոշումը դատարանի կողմից կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կհաստատեն իրենց պահանջներն ու առարկությունները:

ՍԴՈ–849, 22 դեկտեմբերի, 2009 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է ոչ միայն վիճարկվող դրույթի համապատասխանությունը սահմանադրությանը, այլ իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Ուստի ընդհանուր իրավասության դատարանի ակտերը ենթակա են բողոքարկման միայն վերաքննության կարգով:

ՍԴՈ–851, 14 հունվարի, 2010 թ.

Դատարանի որոշման հիման վրա հակասահմանադրական և անվավեր են ճանաչվել վիճարկվող դրույթները, որի արդյունքում վերացվել է խտրական վերաբերմունքը դատավարության մասնակիցներից վկայի տուժողի կամ պաշտպանի նկատմամբ: Արդյունքում քրեական պատասխանատվության սուբյեկտ դարձել են դատավարության բոլոր մասնակիցները:

ՍԴՈ–852, 19 հունվարի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթի համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ փաստվել է, որ քրեական մեղադրանքի որոշումը չի կարող սահմանափակվել միայն մեկ ատյանի դատարանի կողմից գործի քննության շրջանակներով:

ՍԴՈ–864, 5 փետրվարի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթի համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրատիկայի համարժեքությունը: Միաժամանակ փաստվել է, որ դատական կարգով անձանց, այդ թվում՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր և չի ոտնահարում դատական պաշտպանության մատչելիության իրավունքը:

ՍԴՈ–865, 10 փետրվարի, 2010 թ.

Դատարանի որոշման հիման վրա «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 19. 03. 2012 թ. խմբագրությամբ՝ պետական բյուջեից ֆինանսավորվող տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձն ունի մեկ կենսաթոշակ ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ: Միաժամանակ, օրենքով կենսաթոշակը նշանակելուց հետո չի հստակեցվել անձի՝ կենսաթոշակի ձևի վերընտրության իրավունքը:

ՍԴՈ–866, 23 փետրվարի, 2010 թ.

Սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդող ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովը 2008 թ. դեկտեմբերի 26–ին ընդունած ՀՕ–233–Ն օրենքով փոփոխություններ և լրացումներ է կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2–րդ բաժնում՝ կապված նոր հանգամանքներով վերանայման ենթակա դատական ակտերի տեսակները, դատական ակտերը վերանայելու իրավասություն ունեցող դատարանների կազմն ընդլայնելու հետ, սակայն 204.28–րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու խնդրին չի անդրադարձել, ինչի արդյունքում դատական պրակտիկայում կիրառվել է հակասահմանադրական ճանաչված այդ նորմը:

Դատարանի որոշման հիման վրա 20.05.2010 թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

ՍԴՈ–870, 23 մարտի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթի սահմանադրականությունը վիճարկող որևէ փաստարկ չի ներկայացվել, որի հիման վրա կարճվել է գործի վարույթը:

ՍԴՈ–871, 30 մարտի, 2010 թ.

Դատարանի որոշման հիման վրա արձանագրվել է, որ իրավակիրառ պրակտիկայում «կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում….» դրույթը անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե «չմասնակցությունը, դա չապացուցված մասնակցությունն է», այլ «հանցագործության կատարմանը անձի ապացուցված չմասնակցելն է»:

ՍԴՈ–872, 2 ապրիլի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է դատավարության ընթացքում ամբաստանյալի դատավարական կարգավիճակի անփոփոխելիությունը: Միաժամանակ, մեղադրողն իր սահմանադրական իրավասությամբ դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթը պետք է իրականացնի ամբողջական ու արդյունավետ՝ երաշխավորելով դատական քննության շրջանակներում գործի վերջնական հանգուցալուծումը:

ՍԴՈ–873, 13 ապրիլի, 2010 թ.

Դատարանի որոշումից հետո 2013 թ. դեկտեմբերի 5-ին ընդունվել է ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգիրք, որում արդեն դատարանի որոշման հիման վրա վիճարկվող դրույթի իրավակարգավորման համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե դատարանը հանգում է այն եզրակացության, որ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

ՍԴՈ–881, 4 մայիսի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթի սահմանադրության համապատասխանությունը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ փաստվել է, որ իրավաբանի մասնագիտական ստաժն ավելի լայն հասկացություն է, իսկ քննիչի, դատախազի և դատավորի գործունեությունն այլ հատուկ մասնագիտական որակներ է պահանջում, քանզի ընդհանուր իրավաբանի ստաժը չի կարող համարվել դատախազի, դատավորի կամ քննիչի ստաժ:

ՍԴՈ–882, 11 մայիսի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթի սահմանադրության համապատասխանությունը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ փաստվել է, որ քրեաիրավական հետևանքները ծագում են ոչ թե նույն արարքի համար, այլ այդ անձի կողմից նոր հանցանք կատարելու դեպքում:

ՍԴՈ–890, 25 մայիսի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթի համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրատիկայի համարժեքությունը: Միաժամանակ դատարանը փաստել է, որ վիճարկվող դրույթի պահանջը ոչ թե այլընտրանքային գույքային

պահանջներից յուրաքանչյուրի համար պետական տուրքի միաժամանակյա վճարումն է, այլ այն վերաբերում է գույքային և ոչ գույքային պահանջներին:

ՍԴՈ–891, 1 հունիսի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթի համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113–րդ հոդվածի երրորդ մասում օգտագործված՝ «եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» և «գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում» ձևակերպումները ենթակա են գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

ՍԴՈ–896, 15 հունիսի, 2010 թ.

Թեև դատարանի որոշմամբ հակասահմանադրական է ճանաչվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 221 հոդվածի առաջին մասի առաջին կետը՝ «կամ պատճառաբանված չէ» մասով, 24.06.2010 թ. խմբագրությամբ հոդվածն ամբողջությամբ ուժը կորցրել է: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 08.02.2011 թ. խմբագրությամբ հանվել է «կամ պատճառաբանված չէ» արտահայտությունը:

ՍԴՈ–901, 29 հունիսի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթների համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ դատարանի կողմից համակարգային ամբողջականությամբ պարզաբանվել է սերվիտուտի իրավական բովանդակությունը:

ՍԴՈ–902, 7 հուլիսի, 2010 թ.

Դատարանի որոշման հիման վրա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 12.03.14 թ. Խմբագրությամբ 265 հոդվածի 2–րդ մասից հանվել է «կամ այլ» արտահայտությունը: Միաժամանակ դատարանը արձանագրել է, որ անօրինական աշխատանքից ազատված անձանց աշխատանքում չվերականգնելը թույլատրելի է, եթե աշխատանքում վերականգնելն անհնարին է տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ նույնաբնույթ պատճառներով:

ՍԴՈ–903, 13 հուլիսի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթների համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ, 22.12.2010 թ. և 21.12.2015 թ. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68–րդ հոդվածը խմբագրվել է և համապատասխանեցվել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

ՍԴՈ–906, 7 սեպտեմբերի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթների համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ, դատարանը փաստել է, որ, որպես շահագրգիռ կողմ, դատարան դիմելու իրավունք պետք է ստանան միայն այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակների մեջ են մտնում կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

ՍԴՈ–913, 14 սեպտեմբերի, 2010 թ.

Դատարանի որոշման հիման վրա օրենքի վիճարկվող դրույթը խմբագրվել և բերվել է դատարանի դիրքորոշման տրամաբանությանը, համաձայն որի՝ փոխպատվաստման նպատակով դիակից օրգաններ և (կամ) հյուսվածքներ կարող են վերցվել միայն այն դեպքում, երբ տվյալ անձն այդ մասին իր կենդանության օրոք, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, տվել է գրավոր համաձայնություն:

ՍԴՈ–914, 14 սեպտեմբերի, 2010 թ.

Թեև դատարանի կողմից գործի վարույթը կարճվել է, այդուհանդերձ դատարանի դիրքորոշումների հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի բացը լրացվել է և վճռի բեկանման հիմքերին ավելացվել է նաև «դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին» դրույթը:

ՍԴՈ–917, 18 սեպտեմբերի, 2010 թ.

Դատարանի որոշման հիման վրա ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը 08.02.11 թ. խմբագրվել է և համապատասխանեցվել դատարանի դիրքորոշումներին: Մասնավորապես երկրորդ հերթի ժառանգներ են համարվել ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը: Ընդ որում ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՍԴՈ–918, 28 սեպտեմբերի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթների համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ, դատարանն արձանագրել է, որ ինքնաբացարկի որոշումը պարտադիր ենթակա է բողոքարկման, սակայն ինքնաբացարկի մերժման մասին որոշման բողոքարկման բացակայությունը նպաստում է ողջամիտ ժամկետներում գործերի քննությանը:

ՍԴՈ–919, 5 հոկտեմբերի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ հաստատվել է վիճարկվող դրույթների համապատասխանությունը սահմանադրությանը և իրավակիրառ պրակտիկայի համարժեքությունը: Միաժամանակ «երեխայի շահ» հասկացությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից:

ՍԴՈ–9212, 19 հոկտեմբերի, 2010 թ.

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսանում են տվյալ կոնկրետ գործով օբյեկտիվ իրավունքների պաշտպանության հարցերը: Մինչդեռ համաներման մասին որոշումն առնչվում է կոնկրետ անձանց ու կոնկրետ իրավիճակների և սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության խնդիրներ չի լուծում:

ՍԴՈ–920, 12 հոկտեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 12.10.2010 թ. ՍԴՈ–920 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203–րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Այսպիսով, ՀՀ մաքսային օրենսգրքի 203–րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել,

սակայն հոդվածը պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի 203–րդ հոդվածը կիրառելիս՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավակիրառողը պարտավոր է, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, պարզել լիազորված անձի, լիազորողի և տեղափոխողի մեղքի առկայությունը՝ ըստ այդմ որոշելով պատասխանատու սուբյեկտին: Բացի այդ, սույն որոշման համաձայն՝ համապատասխան ակտի հիման վրա տրամադրված լիազորությունների շրջանակներում կատարած ցանկացած գործողության համար վիճարկվող դրույթով սահմանված պատասխանատվության սուբյեկտ իրավակիրառողը պետք է դիտարկի տեղափոխողին, քանի որ հայտարարագրումն իրականացնում է տեղափոխողի տրամադրած տեղեկատվության հիման վրա:

ՍԴՈ–922, 02 նոյեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանը, 2007 թ. նոյեմբերի 28–ի ՍԴՈ–719 և 2010 թ. սեպտեմբերի 28–ի ՍԴՈ–918 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո, իր 02.11.2010՝ ՍԴՈ–922 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108–րդ հոդվածը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108–րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն հոդվածը պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Մասնավորապես, իրավակիրառական պրակտիկայում գործի վարույթը վերսկսելու մասին որոշման բողոքարկումը առաջարկվել է իրականացվել ըստ էության դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

ՍԴՈ–923, 09 նոյեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանը 09.11.2010՝ ՍԴՈ–923 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի 7–րդ մասը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի 7–րդ մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Մասնավորապես, իրավակիրառական պրակտիայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221–րդ հոդվածի 7–րդ մասում ամրագրված՝ «անհրաժեշտության դեպքում» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի՝ ելակետ ընդունելով քրեական գործի քննության ընթացքում տարբեր փաստական հանգամանքների ուժով համապատասխան անձին ընդհանուր կարգով ճանաչման ներկայացնելու անհնարինության պայմաններում վերջինիս վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաստիությունն ստուգելու անհրաժեշտությունը: Վերջինս պետք է պատշաճ ձևով հիմնավորվի՝ կամայականությունների տեղիք չտալու համար:

ՍԴՈ–924, 16 նոյեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 16.11.2010՝ ՍԴՈ–924 որոշմամբ արձանագրվել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165–րդ հոդվածի 1–ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Այսպիսով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-926, 23 նոյեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 23.11.2010՝ ՍԴՈ-926 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 23.11.2010՝ ՍԴՈ-926 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում, այսինքն դատարանի որոշման առկայությունը դիտել որպես պարտադիր պայման նաև սույն հոդվածի 1-ին մասում որպես բացառություն նշված այն դեպքերում, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել:

ՍԴՈ-927, 30 նոյեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 30.11.2010՝ ՍԴՈ-927 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է այն հիմնավորմամբ, որ սույն գործով դիմող ֆիզիկական անձը սահմանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտ չէ, քանի որ օրենքի վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանների ընդունած դատական ակտով:

ՍԴՈ-929, 14 դեկտեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2010՝ ՍԴՈ-929 որոշմամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը այնքանով, որքանով չի սահմանում, այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր:

Վերոհիշյալ որոշման հիման վրա 2011 թվականի հոկտեմբերի 25-ի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով «Պետական տուրքի մասին» ՀՀ 1997 թվականի դեկտեմբերի 27-ի օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց է հետևյալ բովանդակությամբ «է.1», «է.2», «է.3» և «է.4» կետերով.

«է.1) արդարացվածները՝ իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով.

է.2) արդարացվածները՝ նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում) վերականգնման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք աշխատանք (պաշտոն) ստանալու կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցման հայցերով.

է.3) արդարացվածները՝ ազատազրկման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձևով պատիժը կրելու, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու հայցերով.

է.4) արդարացվածները՝ նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը հետ ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակմակերեսով և գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածք ստանալու հայցերով.»:

ՍԴՈ–930, 21 դեկտեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 21.12.2010՝ ՍԴՈ–930 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263–րդ հոդվածի 2–րդ մասում ամրագրված՝ «Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան» դրույթը՝ նույն օրենսգրքի 290–րդ հոդվածի 3–րդ մասի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում և սույն գործով դատական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածին հակասող և անվավեր:

Սույն որոշման հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 21.12.2010՝ ՍԴՈ–930 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–931, 28 դեկտեմբերի, 2010 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 28.12.2010՝ ՍԴՈ–931 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ....», ինչպես նաև «Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում» դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված համապատասխան դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Այսուհետ իրավակիրառական պրակտիկայում, սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն, դատական քննության արագացված կարգի կիրառման հնարավորությունը մեղադրանքի և պաշտպանության կողմերի փոխադարձ համաձայնության առկայությամբ պայմանավորելն պետք է դիտարկել իրավաչափ և համահունչ մրցակցային դատավարության պահանջներին:

ՍԴՈ–932, 11 հունվարի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 11.01.2011՝ ՍԴՈ–932 որոշմամբ արձանագրվել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20–րդ հոդվածի 5–րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Այսպիսով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20–րդ հոդվածի 5–րդ մասի դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման

արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Մասնավորապես, առաջարկվել է իրավակիրառական պրակտիկայում բողոքում բարձրացված խնդիրը վերաքննության առարկա դարձնել սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթի շրջանակներում:

ՍԴՈ–933, 25 հունվարի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 25.01.2011՝ ՍԴՈ–933 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427–րդ հոդվածի երկրորդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, իսկ 429–րդ և 430–րդ հոդվածների մասով գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–934, 04 փետրվարի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 04.02.2011՝ ՍԴՈ–934 որոշմամբ կարճել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1–րդ հոդվածի 3–րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը:

Միևնույն ժամանակ սույն որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1–րդ հոդվածի 3–րդ մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունն անհրաժեշտ է իրացնել ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–935, 04 փետրվարի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 04.02.2011՝ ՍԴՈ–935 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1–րդ հոդվածի 1–ին մասի «միայն» արտահայտությունը՝ այնքանով, որքանով բացառում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով այլ վերջնական իրավական ակտերի օրենքով սահմանված կարգով վերանայումը՝ դրանով իսկ վտանգելով անձի՝ մասնավորապես, մինչդատական վարույթում պետական իրավասու մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածի 1–ին մասի պահանջներին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1–րդ հոդվածի 1–ին մասի բովանդակությունն անհրաժեշտ է իրացնել սույն որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–936, 08 փետրվարի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 08.02.2011՝ ՍԴՈ–936 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141–րդ հոդվածի 1–ին մասն այն մասով, որով արգելափակվում է անձի իրավունքը՝ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3–րդ, 18–րդ և 19–րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Անհրաժեշտ է նշել, որ 2007 թվականի նոյեմբերի 28–ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն 2013 թվականի դեկտեմբերի 5–ին ընդունված ՀՀ վարչական դատավարության նոր և ներկայումս գործող օրենսգիրքը այլև չի պարունակում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից հա-

կասահմանադրական ճանաչած դրույթը, ըստ որի նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը վիճարկելու հիմք կարող էր հանդիսանալ միայն նյութական իրավունքի խախտումը:

ՍԴՈ–942, 22 փետրվարի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 22.02.2011՝ ՍԴՈ–942 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68–րդ հոդվածի 3–րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Միևնույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68–րդ հոդվածի 3–րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ կետն այն մասով, որը վարչական ակտի հետ մեկտեղ չի ներառում վարչական մարմնի գործողությունը և անգործությունը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Անհրաժեշտ է նշել, որ 2007 թվականի նոյեմբերի 28–ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն ՀՀ սահմանադրական դատարանի 22.02.2011՝ ՍԴՈ–942 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը հաշվի է առնվել 2013 թվականի դեկտեմբերի 5–ին ընդունված ՀՀ վարչական դատավարության նոր և ներկայումս գործող օրենսգրքում:

ՍԴՈ–943, 25 փետրվարի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2011՝ ՍԴՈ–943 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ կետը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Միևնույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի (իրավական այլ նորմի) կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով, վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19, 93–րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Վերոհիշյալ որոշման հիման վրա 2011 թվականի հոկտեմբերի 26–ի «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1998 թվականի հուլիսի 1–ի օրենսգրքի 426.4–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«1) ՀՀ սահմանադրական դատարանը տվյալ քրեական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.»:

ՍԴՈ–944, 04 մարտի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 04.03.2011՝ ՍԴՈ–944 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10–րդ հոդվածի 2–րդ մասը և 302–րդ հոդվածի 1–ին մասը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10–րդ հոդվածի 2–րդ մասը և 302–րդ հոդվածի 1–ին մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–945, 15 մարտի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 15.03.2011՝ ՍԴՈ–945 որոշմամբ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածի 5–րդ մասը և ՀՀ օրենքի 13.1–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ պարբերությունը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Միևնույն ժամանակ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 24–րդ հոդվածի 2–րդ մասի 3–րդ և 4–րդ կետերի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածի 5–րդ մասը և ՀՀ օրենքի 13.1–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ պարբերությունը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–946, 29 մարտի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 29.03.2011՝ ՍԴՈ–946 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճվել է, քանի որ սույն գործը քննության ընդունելու համար հիմք հանդիսացած վերջնական դատական ակտի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2010 թ. որոշման վերանայման և իրավական ուժը կորցնելու պայմաններում այլևս առկա չէ սահմանադրական դատարանում գործի քննության համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող վերջնական դատական ակտը, դրանով իսկ դիմողի համար դեռևս չեն սպառվել դատական պաշտպանության միջոցները:

ՍԴՈ–947, 05 ապրիլի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 05.04.2011՝ ՍԴՈ–947 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213–րդ հոդվածի 1–ին մասի, 2–րդ մասի 1–ին և 2–րդ կետերի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 213–րդ հոդվածի 1–ին մասի, 2–րդ մասի 1–ին և 2–րդ կետերի դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Միևնույն ժամանակ գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 213–րդ հոդվածի 2–րդ մասի 3–րդ կետի մասով, կարճվել է՝ որպես տվյալ կոնկրետ իրավանորմի սահմանադրականության հարցով ոչ իրավասու սուբյեկտի կողմից ներկայացված դիմումի հիման վրա քննության ընդունված գործ:

ՍԴՈ–954, 12 ապրիլի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 12.04.2011՝ ՍԴՈ–954 որոշմամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19–րդ հոդվածի 3–րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19–րդ հոդվածի 3–րդ մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–966, 03 հունիսի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 03.06.2011՝ ՍԴՈ–966 որոշման համաձայն՝ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի 1–ին և 4–րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածին (2–րդ մաս), 85–րդ հոդվածին (2–րդ մաս), 43–րդ հոդվածին (2–րդ մաս) հակասող է ճանաչվել ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 5–ի թիվ 207–Ն որոշումը՝ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15–ին ԱՊՀ շրջանակներում կնքված և ՀՀ համար 1996 թվականի փետրվարի 26–ից ուժի մեջ մտած համաձայնագրի 1–ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացման կարգ չնախատեսելու և այդ իրավունքներն արգելափակելու մասով՝ հաշվի առնելով սույն որոշման պատճառաբանական մասի 6–րդ և 7–րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները և ի գիտություն ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5–ի թիվ 668–Ն որոշումը:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարությունն իր՝ 2011 թ. մայիսի 5–ի թիվ 672–Ն որոշմամբ սույն գործով վիճարկվող թիվ 207–Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչվել: Իր՝ 2011 թ. մայիսի 5–ին ընդունված «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու և վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668–Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը արդեն վերակարգավորել է Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, նրանց հավասարեցված անձանց և զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման և վճարման կարգի հետ կապված՝ 2011 թվականի հունվարի 1–ից հետո ծագած հարաբերությունները: Նման օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկել են նաև «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված անձանց:

ՍԴՈ–967, 07 հունիսի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 07.06.2011՝ ՍԴՈ–967 որոշմամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57–րդ հոդվածի 3–րդ կետը (մինչև 09.01.2009 թ. խմբագրությամբ) ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57–րդ հոդվածի 3–րդ կետը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյուն-

քում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–975, 14 հունիսի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 14.06.2011՝ ՍԴՈ–975 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]–րդ հոդվածի 1–ին կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003[1]–րդ հոդվածի 1–ին կետը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Միևնույն ժամանակ իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է նկատի ունենալ, ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի 2–րդ մասի և 83.5–րդ հոդվածի 2–րդ կետի իմաստով «պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն, իսկ «պարտավորություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է իրավունքի ուժով կամ իր ազատ կամարտահայտմամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնած համապատասխան վարքագիծ: Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:

ՍԴՈ–980, 21 հունիսի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 21.06.2011՝ ՍԴՈ–980 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230–րդ հոդվածի 3–րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230–րդ հոդվածի 3–րդ մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–983, 12 հուլիսի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 12.07.2011՝ ՍԴՈ–983 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55–րդ հոդվածի 4–րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթն իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի (օրինական տիրապետողի) գույքային շահերի և սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 20–րդ հոդվածի 5–րդ մասի և 31–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

Վերոհիշյալ որոշման հիման վրա 2014 թվականի հունիսի 21–ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով 2003 թվականի ապրիլի 18–ի ՀՀ քրեական օրենսգրքի 55–րդ հոդվածի 4–րդ մասը ուժը կորցրած է ճանաչվել:

ՍԴՈ–984, 15 հուլիսի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 15.07.2011՝ ՍԴՈ–984 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9–րդ հոդվածի 1–ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավա-

րության օրենսգրքի 204.38–րդ հոդվածը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Միևնույն ժամանակ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9–րդ հոդվածի 1–ին մասը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38–րդ հոդվածը չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը:

Սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33–րդ հոդվածի 1–ին մասը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով, համաձայն որի՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի նորմի կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով վերականգնելու հնարավորություն չի ընձեռում, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19, 93–րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Ի կատարումն վերոհիշյալ որոշման՝ 2011 թվականի հոկտեմբերի 26–ի «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17–ի օրենսգրքի 204.33–րդ հոդվածի 1–ին կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«1) ՀՀ սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.»:

ՍԴՈ–990, 04 հոկտեմբերի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 04.10.2011՝ ՍԴՈ–990 որոշմամբ արձանագրվել է, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 6–րդ կետը և 13–րդ հոդվածը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Այսպիսով, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 6–րդ կետը և 13–րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–991, 11 հոկտեմբերի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 11.10.2011՝ ՍԴՈ–991 որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113–րդ հոդվածի 1–ին մասի 11–րդ կետը, 114–րդ հոդվածի 4–րդ մասի 5–րդ կետը՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113–րդ հոդվածի 1–ին մասի 11–րդ կետը և 114–րդ հոդվածի 4–րդ մասի 5–րդ կետը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–996, 18 հոկտեմբերի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 18.10.2011՝ ՍԴՈ–996 որոշմամբ արձանագրվել է, որ «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14–րդ հոդվածի 3–րդ մասի 4–րդ կետը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, նկատի ունենալով, որ նման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ նպաստելու դատավորի անկախությանը և գործունեության արդյունավետությանը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Այսպիսով, «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14–րդ հոդվածի 3–րդ մասի 4–րդ կետը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–997, 15 նոյեմբերի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2011՝ ՍԴՈ–997 որոշմամբ արձանագրվել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից բխող սահմանադրաիրավական բովանդակության և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1–րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1000, 29 նոյեմբերի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 29.11.2011՝ ՍԴՈ–1000 որոշման համաձայն՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78–րդ հոդվածի 3–րդ մասի 3–րդ պարբերությունը, սույն որոշման հիման վրա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78–րդ հոդվածի 2–րդ մասի ուժը կորցնելու պայմաններում, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Միևնույն ժամանակ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78–րդ հոդվածի 2–րդ մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42–րդ հոդվածի 4–րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78–րդ հոդվածի 2–րդ մասում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 29.11.2011՝ ՍԴՈ–1000 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1004, 06 դեկտեմբերի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 06.12.2011՝ ՍԴՈ–1004 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208–րդ հոդվածի 3–րդ մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208–րդ հոդվածի 3–րդ մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1007, 20 դեկտեմբերի, 2011 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 20.12.2011՝ ՍԴՈ–1007 որոշմամբ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28–րդ հոդվածի 1–ին պարբերության վերջին նախադասությունը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28–րդ հոդվածի 1–ին պարբերության վերջին նախադասությունը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1008, 20 հունվարի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 20.01.2012՝ ՍԴՈ–1008 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59–րդ հոդվածի 1–ին մասի 9–րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59–րդ հոդվածի 1–ին մասի 9–րդ կետի համապատասխան դրույթը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1009, 24 փետրվարի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012՝ ՍԴՈ–1009 որոշման համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198–րդ հոդվածի 3–րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը:

Վերոհիշյալ որոշման հիման վրա իրավակիրառական պրակտիկայում որպես այդպիսի դեպքեր պետք է դիտել՝

ա) երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել և սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ) երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա և ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

ՍԴՈ–1010, 06 մարտի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 06.03.2012՝ ՍԴՈ–1010 որոշմամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8–րդ հոդվածի 4–րդ մասի «գ» ենթակետը և 12–րդ հոդվածի 6–րդ մասը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությա-

նը համապատասխանող, իսկ նույն օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին և 83.5 հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերին համապատասխանող»:

Միևնույն ժամանակ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, նույն որոշմամբ ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են և հրապարակման ենթակա չեն» դրույթում դեռևս համապատասխան փոփոխություններ չեն կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 06.03.2012՝ ՍԴՈ-1010 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1020, 11 ապրիլի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 11.04.2012՝ ՍԴՈ-1020 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1022, 17 ապրիլի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 17.04.2012՝ ՍԴՈ-1022 որոշման համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում այն չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստատելու՝ օրենքով նախատեսված պահանջ կամ հայտեցողություն:

ՍԴՈ-1037, 18 հուլիսի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2012՝ ՍԴՈ-1037 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ այնքանով, որքանով չի նախատեսում բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, մասնավորապես, երբ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքները:

Պետք է նշել, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի

18.07.2012՝ ՍԴՈ–1037 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1038, 18 հուլիսի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2012՝ ՍԴՈ–1038 որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14–րդ հոդվածը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Սույն որոշման համաձայն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14–րդ և 102–րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1–ին հոդվածի 4–րդ մասի, 298–րդ հոդվածի 1–ին մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունից բխում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14–րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը սույն գործի շրջանակներում այդ նորմի կիրառման պահին չի բացառել աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում, սակայն համապատասխան ապացույցների առկայության դեպքում աշխատողի՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը:

ՍԴՈ–1048, 19 սեպտեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 19.09.2012՝ ՍԴՈ–1048 որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8–րդ հոդվածը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

ՍԴՈ–1049, 28 սեպտեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 28.09.2012՝ ՍԴՈ–1049 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32–րդ հոդվածի 1–ին կետը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

ՍԴՈ–1050, 02 հոկտեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 02.10.2012՝ ՍԴՈ–1050 որոշման համաձայն՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 6–րդ մասի 1–ին պարբերության և 9–րդ մասի 1–ին պարբերության, 41–րդ հոդվածի 2–րդ մասի 3–րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1051, 09 հոկտեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 09.10.2012՝ ՍԴՈ–1051 որոշման համաձայն՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի, ինչպես նաև այդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 18–րդ հոդվածի դրույթներով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը միայն այն իրավակարգավորման շրջանակներում, երբ Կազմակերպությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովի հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:

ՍԴՈ–1052, 16 հոկտեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 16.10.2012՝ ՍԴՈ–1052 որոշման համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379–րդ հոդվածի 1–ին մասի 3–րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

Սույն գործով վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402–րդ հոդվածի դրույթները նույնպես ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն համապատասխանում են այնքանով, որքանով հոդվածի 2–րդ մասի «ուղարկվում է» եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի տրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սուբյեկտներին:

Միևնույն ժամանակ նույն որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի:

Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերում դեռևս համապատասխան փոփոխություններ չեն կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 16.10.2012՝ ՍԴՈ–1052 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1054, 30 հոկտեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 30.10.2012՝ ՍԴՈ–1054 որոշմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1056, 13 նոյեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 13.11.2012՝ ՍԴՈ–1056 որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305–րդ հոդվածի 3–րդ և 4–րդ մասերի դրույթները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305–րդ հոդվածի 3–րդ և 4–րդ մասերը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1059, 23 նոյեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 23.11.2012՝ ՍԴՈ–1059 որոշման համաձայն՝

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260–րդ հոդվածի 3–րդ մասի՝ «Վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի ադմինիստրացիան» դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 2–րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթները ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 16–րդ հոդվածի 3–րդ մասի և 103–րդ հոդվածի 4–րդ և 5–րդ մասերի պահանջներին հակասող և անվավեր:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի 262–րդ հոդվածի 3–րդ մասի դրույթները ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3–րդ հոդվածի 2–րդ մասի և 16–րդ հոդվածի 3–րդ մասի պահանջներին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260–րդ հոդվածի 3–րդ մասում, 262–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերում դեռևս համապատասխան փոփոխություններ չեն կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 23.11.2012՝ ՍԴՈ–1059 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1061, 14 դեկտեմբերի, 2012 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 14.12.2012՝ ՍԴՈ–1061 որոշման համաձայն՝

1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ պարբերության մասով գործի վարույթը կարճվել է:

2. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 29–րդ հոդվածի 2–րդ մասի 6–րդ կետի մասով գործի վարույթը կարճվել է:

3. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, և այն ընդունման պահից վեց ամսվա ընթացքում չէր կարող կիրառվել Հայաստանի Հանրապետությունից ժամանակավոր բացակայած՝ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24–րդ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 3–րդ հոդվածներով, «ՀՀ–ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005 թ. թիվ 1231–Ն որոշման 10–րդ կետով սահմանված կարգով օտարերկրյա պետություններում հյուպատոսական հաշվառման են կանգնած եղել:

4. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

ՍԴՈ–1062, 18 դեկտեմբերի 2012 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանը 18.12.2012 թ. ՍԴՈ–1062 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412–րդ հոդվածի 1–ին մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնքանով, որքանով ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ–1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ

պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

ՍԴՈ–1063, 18 դեկտեմբերի, 2012 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 18.12.2012 թ. ՍԴՈ–1063 որոշմամբ ՀՀ դատական օրենսգրքի 111–րդ հոդվածի 6–րդ մասը և 158–րդ հոդվածի 1–ին մասը ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող:

ՀՀ դատական օրենսգրքի 155–րդ հոդվածի 5–րդ մասի 2–րդ կետը ճանաչվել է համապատասխանող ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները:

ՍԴՈ–1064, 25 դեկտեմբերի, 2012 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 25.12.2012՝ ՍԴՈ–1064 որոշմամբ ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 74 և 105–րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–1073, 30 հունվարի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 30.01.2013 թ. ՍԴՈ–1073 որոշմամբ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2–րդ հոդվածի 1–ին, 2–րդ և 5–րդ մասերը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է հաշվի առնել նույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ–1074, 05 փետրվարի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 05.02.2013 թ. ՍԴՈ–1074 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113–րդ հոդվածի 2–րդ և 3–րդ մասերը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1076, 05 մարտի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանը 05.03.2013 թ. ՍԴՈ–1076 որոշմամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 23–րդ հոդվածի 3–րդ մասը, 24–րդ հոդվածը, 38–րդ հոդվածի 7–րդ մասը, 79–րդ հոդվածի 4–րդ մասի 2–րդ կետը և 80–րդ հոդվածը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 23–րդ հոդվածի 3–րդ մասը, 24–րդ հոդվածը, 38–րդ հոդվածի 7–րդ մասը, 79–րդ հոդվածի 4–րդ մասի 2–րդ կետը և 80–րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1081, 16 ապրիլի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 16.04.2013 թ. ՍԴՈ–1081 որոշման համաձայն՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 44–րդ հոդվածի 4–րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Նույն գործով վեճի առարկա դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99–րդ հոդվածի 4–8–րդ մասերի դրույթները, այն մասով, որով առկա ընթացակարգերը պատգամավորի «լիազորությունների դադարում» սահմանադրական ինստիտուտը գործնականում փոխակերպում են ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ նրա «լիազորությունների դադարեցման» ինստիտուտի, ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 67–րդ հոդվածին հակասող և անվավեր:

Անհրաժեշտ է նշել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99–րդ հոդվածի 4–8–րդ մասերում դեռևս համապատասխան փոփոխություններ չեն կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել սույն որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1082, 23 ապրիլի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 23.04.2013 թ. ՍԴՈ–1082 որոշման համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 54–րդ հոդվածի 5–րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով նույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միևնույն ժամանակ սույն որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 51–րդ հոդվածի 4–րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տևողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18–րդ հոդվածին հակասող և անվավեր:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 51–րդ հոդվածի 4–րդ մասում դեռևս չեն կատարվել համապատասխան փոփոխություններ, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել սույն որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1099, 31 մայիսի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ–701[9], ՍԴՈ–751[10], ՍԴՈ–758[11], ՍԴՈ–767[12], ՍԴՈ–833[13], ՍԴՈ–866[14], ՍԴՈ–871[15], ՍԴՈ–935[16], ՍԴՈ–943, ՍԴՈ–984 որոշումների լույսի ներքո 31.05.2013 թ. ՍԴՈ–1099 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9–րդ հոդվածի 2–րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով, ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող, հաշվի առնելով, որ վերանայման վարույթի արդյունքում ընդունված նոր դատական ակտի եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9–րդ հոդվածի 2–րդ մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման

արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1102, 28 հունիսի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 28.06.2016 թ. ՍԴՈ–1102 որոշմամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26–րդ հոդվածի առաջին մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ հաշվի առնելով նույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ–1105, 16 հուլիսի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանը 16.07.2013 թ. ՍԴՈ–1105 որոշմամբ ՀՀ ընտրական օրենսգրքի 18–րդ հոդվածի 5–րդ մասի և 26–րդ հոդվածի 2–րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է: ՀՀ Սահմանադրական դատարանը գտել է, որ քննարկման առարկան ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականությանն է առնչվում, այլ իրավակարգավորման շրջանակների ու իրավակիրառման խնդիր է:

ՍԴՈ–1106, 10 սեպտեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 10.09.2013 թ. ՍԴՈ–1106 որոշմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2–րդ հոդվածի 18 և 19–րդ մասերը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2–րդ հոդվածի 18 և 19–րդ մասերը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1114, 18 սեպտեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 18.09.2013 թ. ՍԴՈ–1114 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38–րդ հոդվածի 2–րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող: Սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ.

ա) նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto (փաստի ուժով) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի և /կամ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը,

բ) վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը – վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: Իսկ վերջինիս եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

ՍԴՈ–1115, 24 սեպտեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 24.09.2013 թ. ՍԴՈ–1115 որոշման համաձայն՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24–րդ հոդվածի 1–ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սահմանադրական դատարանի կողմից

դրա սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման հիման վրա ներկայացված հետևյալ մեկնաբանությամբ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանել և կիրառել ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է նաև իրավաբանական անձանց, քանի որ այն իր էությամբ կիրառելի է վերջիններիս նկատմամբ:

ՍԴՈ-1119, 08 հոկտեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 08.10.2013 թ. ՍԴՈ-1119 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ դրանում ամրագրված՝ «քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ» և «եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ գործողությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը» ձևակերպումների մասով ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթին և 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին հակասող և անվավեր:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում դեռևս չեն կատարվել համապատասխան փոփոխություններ, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել սույն որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1120, 11 հոկտեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 11.10.2013 թ. ՍԴՈ-1120 որոշման համաձայն՝

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկացված լինելու կանխավարկածը չի ներառում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած և երրորդ անձի իրավունքներին անմիջականորեն առնչվող դատական ակտերի գոյության մասին տեղեկացված լինելու կանխավարկածը և չի հանդիսանում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար իրավական հիմք հանդիսացած դատական ակտի բողոքարկման համար դատավարական օրենսգրքերով սահմանված ժամկետների հաշվարկման հիմք:

ՍԴՈ-1121, 05 նոյեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 05.11.2013 թ. ՍԴՈ-1121 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

Ի կատարում սույն որոշման՝ 2014 թվականի մայիսի 19-ի «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով ՀՀ 1998

թվականի մայիսի 5-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«2. Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:».

Միաժամանակ նույն հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:»:

ՍԴՈ–1124, 19 նոյեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 19.11.2013 թ. ՍԴՈ–1124 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 311–րդ հոդվածի 1–ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–1127, 10 դեկտեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 10.12.2013 թ. ՍԴՈ–1127 որոշման համաձայն՝

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ կետը՝ «ստանալը հավաստող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի մասով ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18–րդ հոդվածի 1–ին մասին հակասող և անվավեր:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73–րդ հոդվածի 1–ին մասի 6–րդ և 7–րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետի մասով կարճվել է:

Անհրաժեշտ է նշել, որ 2013 թվականի դեկտեմբերի 5–ին ընդունված ՀՀ վարչական դատավարության նոր և ներկայումս գործող օրենսգիրքը այլև չի պարունակում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչած «ստանալը հավաստող փաստաթղթեր» դրույթը: Դրա փոխարեն ՀՀ վարչական դատավարության նոր օրենսգրքի 74–րդ հոդվածի 6–րդ մասը հայցադիմումին կցվող փաստաթղթերի շարքում նշվել է հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և երրորդ անձանց ուղարկելը հավաստող ապացույցները:

ՍԴՈ–1130, 17 դեկտեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 17.12.2013 թ. ՍԴՈ–1130 որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3–րդ հոդվածը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Այսպիսով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.3–րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն հոդվածը պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1134, 24 դեկտեմբերի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 24.12.2013 թ. ՍԴՈ–1134 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9–րդ հոդվածի 1–ին մասի դրույթը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9–րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմա-

նադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթների մասով, կարճվել է:

ՍԴՈ–1135, 14 հունվարի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 14.01.2014 թ. ՍԴՈ–1135 որոշմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5–րդ հոդվածի 3–րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–1065, 22 հունվարի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 22.01.2013 թ. ՍԴՈ–1065 որոշմամբ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 16–րդ հոդվածի 3–րդ մասի «ա» կետը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–1136, 24 հունվարի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 24.01.2014 թ. ՍԴՈ–1136 որոշման համաձայն՝

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքի 15–րդ հոդվածի 1–ին մասը և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14–րդ հոդվածի 5–րդ մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26–ի թիվ 597–Ն որոշումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:
2. «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5–րդ հոդվածը և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետի դրույթները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1137, 04 փետրվարի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 04.02.2014 թ. ՍԴՈ–1137 որոշման համաձայն՝

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ ենթակետում ամրագրված՝ «իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից» դրույթը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում:
2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ ենթակետի՝ «....կամ իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին» դրույթը, այնքանով, որքանով այն կիրառվում է առանց օրենքով սահմանված դատական կամ արտադատական կարգով տվյալ ակտի անվավեր ճանաչման, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1–ին, 5–րդ, 91–րդ և 108.1–րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30–րդ հոդվածի 1–ին մասի 5–րդ ենթակետը դեռևս չի վերանայվել, սակայն իրավա-

կիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Սահմանադրական դատարանի 04.02.2014՝ ՍԴՈ–1137 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1139, 18 փետրվարի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 18.02.2014 թ. ՍԴՈ–1139 որոշման համաձայն՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 1703–րդ հոդվածը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1075, 22 փետրվարի, 2013 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 22.02.2013 թ. ՍԴՈ–1075 որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26–ի թիվ 554–Ն որոշումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ–1140, 25 փետրվարի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 25.02.2014 թ. ՍԴՈ–1140 որոշմամբ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–1141, 18 փետրվարի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 18.03.2014 թ. ՍԴՈ–1141 որոշման համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75–րդ հոդվածի 5–րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 75–րդ հոդվածի 5–րդ մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1142, 02 ապրիլի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 02.04.2014 թ. ՍԴՈ–1142 որոշման համաձայն՝

1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5–րդ հոդվածի 1–ին մասը, 7–րդ հոդվածի 1–ին և 11–րդ մասերը, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13–րդ հոդվածի 2–րդ մասի դրույթները՝ այն մասով, որով չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը և հանգեցնում են մարդու կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման, ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8–րդ հոդվածի 1–ին մասի, 31 և 43–րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

2. Իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների պահանջներին համարժեք իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ չամրագրելու և տվյալ իրավահարաբերություններում գործադիր իշխանության հայեցողության սահմանները չհստակեցնելու հանգամանքից ելնելով՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49–րդ հոդվածի 1–ին մասը ճանաչվել է Հայաստանի

Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:

3. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «....որի տնօրինման .... կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» դրույթը և 44-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:

4. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով» դրույթը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող և անվավեր:

5. Վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գույքի արգելանքի միջոցով վարչական ակտի հիման վրա սեփականության իրավունքը սահմանափակող դրույթը՝ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման սահմանափակման միջոցով, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31 և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր՝ հաշվի առնելով նաև, որ տվյալ դրույթին առնչվող իրավահարաբերությունները չեն վերաբերում քննության առարկա օրենքի իմաստով պարտադիր կուտակային վճար կատարողի (հարկային գործակալի) անմիջական հարկային պարտավորությունների կատարմանը:

6. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի և 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դրանցով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել և կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:

7. Հաշվի առնելով, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես՝ սույն որոշման եզրափակիչ մասի 1-5 կետերով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցված են Հայաստանի Հանրապետության շուրջ 50 օրենքներով և ութ տասնյակից ավելի այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումների հետ, որոնց շատ դրույթներ սույն որոշման հիման վրա օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի պահանջը՝ համակարգային առումով իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահ-

մանել 2014 թվականի սեպտեմբերի 30-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

Անհրաժեշտ է նշել, որ 2014 թվականի հունիսի 21-ի ««Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ, որում հաշվի են առնվել ՀՀ Սահմանադրական դատարանի 02.04.2014 թ. ՍԴՈ-1142 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՍԴՈ-1143, 08 ապրիլի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 08.04.2014 թ. ՍԴՈ-1143 որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ-1144, 15 ապրիլի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 15.04.2014 թ. ՍԴՈ-1144 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ-1148, 18 ապրիլի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2014 թ. ՍԴՈ-1148 որոշման համաձայն՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասը՝ այն մասով ու մեկնաբանությամբ, որով արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական համարժեք որակավորում ունեցող անձի՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ, 43-րդ (2-րդ մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2014 թ. ՍԴՈ-1148 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1153, 03 հունիսի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 03.06.2014 թ. ՍԴՈ-1153 որոշման համաձայն՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ «անկախ սեփականության պատկանելությունից» դրույթը չի վերանայվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Սահմանադրական դատարանի 03.06.2014՝ ՍԴՈ-1153 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1157, 03 հուլիսի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 03.07.2014 թ. ՍԴՈ–1157 որոշման համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (28.11.2007 թ.) 139–րդ հոդվածի 2–րդ մասը և 140–րդ հոդվածի 1–3–րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–1163, 16 սեպտեմբերի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 16.09.2014 թ. ՍԴՈ–1163 որոշման համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^{2}–րդ հոդվածի 4–րդ ենթակետի և 426^{4}–րդ հոդվածի 3–րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–1167, 14 հոկտեմբերի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 14.10.2014 թ. ՍԴՈ–1167 որոշման համաձայն՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36–րդ հոդվածի 3–րդ մասի 2–րդ պարբերության՝ «եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում դրույթը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18, 19 և 31–րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Ի կատարում վերոհիշյալ որոշման՝ 2015 թվականի դեկտեմբերի 21–ի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22–ի օրենքի 36–րդ հոդվածի 3–րդ մասի երկրորդ պարբերությունից հանվել է «եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում» բառերը: Հոդվածի 3–րդ մասի 2–րդ պարբերությունը խմբագրվել է հետևյալ ձևով. «Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման»:

ՍԴՈ–1174, 04 նոյեմբերի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 04.11.2014 թ. ՍԴՈ–1174 որոշման համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309–րդ հոդվածի 2–րդ մասը և 315–րդ հոդվածի 1–ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 309–րդ հոդվածի 2–րդ մասը և 315–րդ հոդվածի 1–ին մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չեն ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չեն կորցրել, սակայն դրանք պետք է կիրառվեն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1176, 02 դեկտեմբերի, 2014 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 02.12.2014 թ. ՍԴՈ–1176 որոշման համաձայն՝

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 95–րդ հոդվածի 1–ին մասի և 96–րդ հոդվածի 2–րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95–րդ հոդվածի 1–ին մասի դրույթի մասով կարճվել է:

2. ՀՀ մաքսային օրենսգրքի 96–րդ հոդվածի 2–րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1189, 27 հունվարի, 2015 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 27.01.2015 թ. ՍԴՈ–1189 որոշման համաձայն՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ պարբերության «....և այդ պարտատերերը զրկվում են հետագայում առողջացած անձի նկատմամբ պահանջներ ներկայացնելու իրավունքից, բացառությամբ սույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերով նախատեսված դեպքերի» դրույթը՝ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 4–րդ մասի հետ, այն մասով, որով դատարանի կողմից հարգելի ճանաչված դեպքերում բացառություն չի նախատեսում նաև ավարտված սնանկության գործի շրջանակներում պահանջ չներկայացրած պարտատերերի համար, նրանց նկատմամբ սահմանելով իրավունքի պաշտպանության ոչ համաչափ սահմանափակում, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18–րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

Միաժամանակ պետք է նկատել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 90–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ պարբերությունում դեռևս փոփոխություններ չեն կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1190, 10 փետրվարի, 2015 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 10.02.2015 թ. ՍԴՈ–1190 որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131–րդ հոդվածի 1–ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ գործի վարույթը կարճելու մասին վարչական դատարանի որոշման բողոքարկման վերաբերյալ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1191, 24 փետրվարի, 2015 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 24.02.2015 թ. ՍԴՈ–1191 որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 314.1–րդ հոդվածի 8–րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 314.1–րդ հոդվածի 8–րդ մասը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել և վերոհիշյալ որոշման արդյունքում ուժը չի կորցրել, սակայն այն պետք է կիրառվի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1192, 03 մարտի, 2015 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 03.03.2015 թ. ՍԴՈ–1192 որոշման համաձայն՝

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158–րդ հոդվածի 5–րդ մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154–րդ հոդվածի 4–րդ մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1–րդ հոդվածին, 18–րդ հոդվածի 1–ին մասին, 19–րդ հոդվածի 1–ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսա-

կան հնարավորություններից, չապահովելով նաև անձի արդար դատաքննության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

Միաժամանակ պետք է նկատել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154–րդ հոդվածի 4–րդ մասում դեռևս փոփոխություններ չեն կատարվել, ուստի իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1196, 17 մարտի, 2015 թ.

ՀՀ Սահմանադրական դատարանի 17.03.2015 թ. ՍԴՈ–1196 որոշման համաձայն՝

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407–րդ հոդվածի 5–րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում ամրագրված դրույթները՝ վճռաբեկ բողոքը ստորագրելու պահին պաշտպան չունեցող և օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորություն չստացած դատավարության մասնակիցների մասով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18–րդ հոդվածի 1–ին մասին, 19–րդ հոդվածի 1–ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում բացառում է նշված անձանց կողմից իրենց օրինական շահերը ներկայացնելու համատեքստում վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը:

2. Միաժամանակ պետք է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407–րդ հոդվածի 5–րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում ամրագրված դրույթներում դեռևս փոփոխություններ չեն կատարվել, ուստի իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407–րդ հոդվածի 5–րդ մասի երրորդ նախադասությունում ամրագրված՝ «Վճռաբեկ բողոքին կցվում է նաև վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» դրույթը և 414.1–րդ հոդվածի 2–րդ մասի 2–րդ կետը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ ՀՀ սահմանադրական ատարանի ՍԴՈ–1192 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1251, 11 հունվարի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 11.01.2016՝ ՍԴՈ–1251 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95–րդ հոդվածի 1–ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

Իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1252, 26 հունվարի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 26.01.2016՝ ՍԴՈ–1252 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 244–րդ հոդվածը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1253, 02 փետրվարի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 02.02.2016՝ ՍԴՈ-1253 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի լիազորությունները» վերտառությամբ 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «Հետաքննության մարմինը՝.... հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից ելնելով այն իրավակիրառ պրակտիկայում չի կարող մեկնաբանվել որպես «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» եզրույթների՝ «և» շաղկապով տարանջատված միաժամանակյա անհրաժեշտ պայմանների ամրագրում՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության իրավակարգավորումը:

ՍԴՈ-1254, 09 փետրվարի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը....» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 և ՍԴՈ-1062 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

Ըստ նույն որոշման՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1249 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը:

Միևնույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի:

Պետք է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1255, 16 փետրվարի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանը 16.02.2016՝ ՍԴՈ–1255 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 376.1–րդ հոդվածի 4–րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճվել է:

ՍԴՈ–1256, 23 փետրվարի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 23.02.2016՝ ՍԴՈ–1256 որոշմամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71–րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 32–րդ հոդվածի 2–րդ մասը ճանաչվել է Հանրապետության Սահմանադրության 34, 51, 78, 79 և 80–րդ հոդվածներին հակասող, այնքանով, որ տարբերակված մոտեցում չեն սահմանում, երբ տեղեկատվությունը վերաբերում է անձի՝ իր մասին հայցվող տեղեկությանը, ինչպես նաև տեղեկատվության ազատության՝ օրենքով սահմանված երաշխիքների իրացմանը:

Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102–րդ հոդվածի 3–րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68–րդ հոդվածի 15–րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանվել է 2016 թվականի նոյեմբերի 1–ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին՝ հաշվի առնելով իրավունքների սահմանափակման առնչությամբ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրված նոր հստակեցումները:

Պետք է նշել, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71–րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 32–րդ հոդվածի 2–րդ մասում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Միաժամանակ պետք է նկատել, որ սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2016 թվականի նոյեմբերի 1–ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու որոշման պահանջներին՝ հաշվի առնելով իրավունքների սահմանափակման առնչությամբ 2015 թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրված նոր հստակեցումները:

ՍԴՈ–1257, 10 մարտի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 10.03.2016՝ ՍԴՈ–1257 որոշմամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 76–րդ հոդվածի 6–րդ մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1262, 22 մարտի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 22.03.2016՝ ՍԴՈ–1262 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2477–րդ հոդվածի 2–րդ կետում, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23–րդ հոդվածի 1–ին մասի 1–ին և 2–րդ կետերում ամրագրված դրույթները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:

Իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1263, 05 ապրիլի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 05.04.2016՝ ՍԴՈ–1263 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40–րդ հոդվածի 1–ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5–րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1270, 03 մայիսի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 03.05.2016՝ ՍԴՈ–1270 որոշման համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601–րդ հոդվածի 1–ին մասում ամրագրված դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ–1271, 10 մայիսի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 10.05.2016՝ ՍԴՈ–1271 որոշմամբ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ պարբերությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 1–ին մասի 1–ին պարբերությունը ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102–րդ հոդվածի 3–րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68–րդ հոդվածի 15–րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի

ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2016 թվականի հոկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

Ըստ նույն որոշման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Պետք է նշել, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Միաժամանակ պետք է նկատել, որ սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2016 թվականի հոկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

ՍԴՈ-1275, 31 մայիսի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 31.05.2016՝ ՍԴՈ-1275 որոշման համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1282, 21 հունիսի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 21.06.2016՝ ՍԴՈ-1282 որոշման համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1290, 28 հունիսի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 28.06.2016՝ ՍԴՈ-1290 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի մասով կարճվել է:

Ըստ նույն որոշման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1254 և ՍԴՈ-1268 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոքներ կայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը մասում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 29.11.2011՝ ՍԴՈ-1000 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1291, 08 հուլիսի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 08.07.2016՝ ՍԴՈ-1291 որոշման համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1293, 12 հուլիսի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի12.07.2016՝ ՍԴՈ-1293 որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝ վճռաբեկ բողոքին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջի մասով, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի, 78-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառական պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՍԴՈ-1294, 19 հուլիսի, 2016 թ.

ՀՀ սահմանադրական դատարանի 19.07.2016՝ ՍԴՈ-1294 որոշման համաձայն՝ այաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Ըստ նույն որոշման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ տվյալ պարբերությունում «գրավատու» եզրույթի

այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «գրավատու» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ տվյալ պարբերություններում «պարտապան» եզրույթի այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «պարտապան» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

Նույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում» բառակապակցությունը՝ այն մասով, որով գրավատուին կարող է պարտադրվել գրավառուի հնարավոր վնասների չափից ավելի ապահովման տրամադրում, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում» բառակապակցությունը՝ այն մասով, որով գրավատուին կարող է պարտադրվել գրավառուի հնարավոր վնասների չափից ավելի ապահովման տրամադրում մասով՝ դեռևս համապատասխան փոփոխություն չի կատարվել, սակայն իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 29.11.2011՝ ՍԴՈ-1000 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՈՒՄԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑ-ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՏՈՐ 1

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/8: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 118 տպ. մամուլ: Տառատեսակը՝ GHEA Grapalat:
Տպաքանակը՝ 1500:

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ տպարանում

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak